

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԳՈՐԾԵՐՈՎ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2017

**ՀԱՏՈՐ XI**

ԵՐԵՎԱՆ



2018

ՀՏԴ 347.9  
ԳՄԴ 67.410  
Հ 247

- Կազմողներ՝** Աշխեն Ղարսլյան, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական, իրավագիտության թեկնածու
- Կարեն Հակոբյան, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական
- Նանե Սահակյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության ավագ մասնագետ
- Սարգիս Իսոյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության ավագ մասնագետ
- Օքսանա Դիլբանդյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության կրկուսեր մասնագետ

Հ 247 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ: ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2017.-ԵՐ.: Տիգրան Մեծ, 2018. ՀԱՏՈՐ XI.- 1004 էջ:

ՀՏԴ 347.9  
ԳՄԴ 67.410

ISBN 978-99941-0-856-5

© Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան, 2018



german  
cooperation

DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:

**giz** Deutsche Gesellschaft  
für Internationale  
Zusammenarbeit (GIZ) GmbH

«Հարավային Կովկասում իրավական և դատական  
բարեփոխումների համար խորհրդատվություն»  
ծրագիր

### Programm “Rechts-und Justizreformberatung im südkaukasus“

Սույն ընտրանին հրատարակվել է Գերմանիայի միջազգային  
համագործակցության ընկերության (GIZ)  
օժանդակությամբ

Սույն ընտրանում արտահայտված տեսակետները պարտադիր չէ,  
որ արտացոլեն ԳԴՀ կառավարության տեսակետները

## ՆԱԽԱԲԱՆ

Ժամանակակից իրավական պետության հիմքում ընկած է այն գաղափարը, որ մարդը բարձրագույն արժեք է, իսկ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով: Անվիճելի է, որ մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները չեն կարող երաշխավորված իրացվել, եթե պետության իրավական համակարգում առկա չեն դրանց դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ: Մարդու իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության այդպիսի միջոցներից մեկը վճռաբեկության եղանակով ստորադաս դատարանների դատական ակտերի վերանայումն է՝ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու, ինչպես նաև իրավական նորմերի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով:

Վճռաբեկության եղանակով ստորադաս դատարանների դատական ակտերի վերանայման գործառնության նշանակությունն առավել ամբողջական տեսքով արտահայտվում է վճռաբեկ ատյանի՝ իրավունքի զարգացմանը նպաստելու առաքելությամբ: Բանն այն է, որ ժամանակի ընթացքում հասարակական հարաբերությունները զարգանում են, փոփոխվում և կատարելագործվում: Մինչդեռ օրենսդրական փոփոխությունները միշտ չէ, որ ի վիճակի են ապահովել հարափոփոխ հասարակական հարաբերությունների համապարփակ իրավական կարգավորումը: Այս առումով կարևորվում են օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանման միջոցով իրավական բացերի և տարբեր վարքագծի կանոնների միջև առկա հակասությունների հաղթահարումը, ինչպես նաև այս կամ այն պատճառով հաճախակի ծագող խրթին իրավական խնդիրների արդյունավետ լուծումը: Այս գործառնությամբ Հայաստանի Հանրապետությունում դրված է ՀՀ վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) վրա, որն իր գործառնություններն իրականացնելիս գնահատման առարկա է դարձնում իր առջև բարձրացված վիճելի իրավահարաբերությունը և ապահովում է սմանաբնույթ իրավահարաբերությունների առնչությամբ իրավակիրառ պրակտիկայի միասնականությունը:

Իր դիրքորոշումներով Վճռաբեկ դատարանն ուղղորդում է դատական պրակտիկան՝ ձգտելով ոչ միայն պատասխանել քաղաքացիական և վարչական գործերով ներկայացված բողոքում վեր հանված կոնկրետ հարցադրումներին, այլև հիմք ստեղծել քաղաքացիական և վարչական գործերով կանխատեսելի արդարադատության ձևավորման համար:

Վերոգրյալով է պայմանավորված Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների ինչպես իրավաբանական հանրությանը, այնպես էլ հասարակության լայն շրջանակներին հասու դարձնելու կարևորությունն ու անհրաժեշտությունը, որի արդյունքում բարձրանում է նաև հասարակության վստահության մակարդակն արդարադատության նկատմամբ: Այս հարցում կարևոր նշանակություն ունեն Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշումների ընտրանիները, որոնք հրատարակվում են յուրաքանչյուր տարի: Ընտրանիները ներառում են քաղաքացիական և վարչական գործերով Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ տարվա ընթացքում կայացված այն որոշումները, որոնք ելակետային նշանակություն ունեն նույնաման փաստական հանգամանքներով դատական գործերի քննության և լուծման համար:

Ձևավորված ավանդույթի շարունակությունն է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով որոշումների ընտրանու թվով 11-րդը հանդիսացող սույն ժողովածուն: Ժողովածուն ընդգրկում է 2017 թվականին Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կայացրած նախադեպային որոշումները: Մասնավորապես, սույն ընտրանին բովանդակում է ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ՝ միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացրած որոշումները և այդ որոշումների համառոտագրերը:

Եվ այսպես, ինչ նախադեպային դիրքորոշումներով նշանավորվեց 2017 թվականը:

Վճռաբեկ դատարանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած իրավական չափանիշների հիման վրա նախադեպային դիրքորոշումներ է արտահայտել ընդհանուր սեփականության, ապահովագրության, ոչ նյութական վնասի հատուցման, սնանկության վարույթի, ժառանգման ինստիտուտի և մի շարք այլ խնդրահարույց հարցերի վերաբերյալ: Այսպես, գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը

բաժանելը կամ դրանից բաժին առանձնացնելը համարվում է սեփականության իրավունքի տնօրինման իրավագործության դրսևորում, և հնարավոր է արդյոք ընդհանուր գույքը բաժանելու կամ բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել այն դեպքում, երբ ընդհանուր սեփականությունն հանդիսացող գույքի գրավի պայմանագրով նախատեսված է առանց գրավառուի համաձայնության գրավի առարկան տնօրինելու կամ դրա փոփոխությանը հանգեցնող ցանկացած գործողություն իրականացնելու արգելք: Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով այն, որ անձի սահմանադրական իրավունքն հանդիսացող սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող տնօրինման իրավագործությունը ենթադրում է սեփականատիրոջ կողմից սեփական կամքով և հայեցողությամբ գույքի իրավական և փաստացի ճակատագիրը որոշելու հնարավորություն, գտել է, որ ընդհանուր սեփականությունն հանդիսացող գույքի տնօրինման դրսևորում է հանդիսանում նաև գույքի բաժանումը և գույքից բաժին առանձնացնելը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընդհանուր սեփականությունն հանդիսացող գույքը բաժանելիս այն դադարում է ընդհանուր սեփականություն հանդիսանալ, և յուրաքանչյուր մասնակից դառնում է գույքի բաժանված մասի միակ սեփականատերը: Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ գրավ դրված գույքի տնօրինման իրավունքը ենթակա է որոշ սահմանափակումների, ինչպես օրենքով, այնպես էլ գրավի պայմանագրով: Ընդ որում, նշված հետևությունը կիրառելի է գրավի առարկա հանդիսացող ցանկացած գույքի, այդ թվում՝ ընդհանուր սեփականությունն հանդիսացող գույքի նկատմամբ: Ուստի Վճռաբեկ դատարանը, կարևորելով ընդհանուր սեփականության յուրաքանչյուր մասնակցի իրավունքը՝ ներկայացնել գույքից բնեղենով իր բաժինն առանձնացնելու պահանջ, հարկ է համարել արձանագրել, որ եթե տվյալ գույքը կրում է օրենքով սահմանված կամ կամովին ստանձնած ծանրաբեռնվածություններ, օրինակ՝ գրավ, որն արգելք է հանդիսանում գույքի տնօրինման համար, ապա գույքի տնօրինումը կարող է կատարվել համապատասխան ծանրաբեռնվածությունների վերացումից հետո:

Հատկանշական են ապահովագրության ինստիտուտի առանձին վիճահարույց հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Ուշադրության արժանի է այն որոշումը, որի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք ապահովագրական պատահարի մասին սահմանված ժամկետում ապահովագրական ընկերությանը չտեղեկացնելու հիմքով ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի (սուբրոգացիա) իրավունքն առկա է այն դեպքում, երբ գործով չի ապացուցվում ապահովագրական պատահարի հստակ ժամանակը: Ջարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ծանուցման ժամկետի անհապաղությունը (ողջամտությունը) պարզելու համար էական նշանակություն ունի պատահարի հստակ ժամանակահատվածն այն դեպքերում, երբ պատահարի և տեղեկացման ժամանակահատվածի միջև տևողությունը երկար չէ: Այլ կերպ ասած՝ եթե պատահարից հետո մինչև ապահովագրական ընկերությանը տեղեկացնելը չի անցել շատ երկար ժամանակ (օրինակ՝ օրեր), ապա միայն պատահարի ժամանակահատվածի հստակ լինելու պայմաններում է հնարավոր եզրահանգում անել ծանուցման ժամկետի ողջամտության մասին (օրինակ՝ եթե ծանուցումը կատարվել է ենթադրաբար 1-1,5 ժամվա ընթացքում):

Ուշագրավ է նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին անհապաղ (ողջամիտ ժամկետում) տեղեկացնելու առանձնահատկություններին՝ վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վնաս պատճառած անձը կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը թեև պարտականություն են կրում ապահովագրական պատահարի տեղի ունենալն իրենց հայտնի դառնալուց հետո անհապաղ (ողջամիտ ժամկետում) տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին, այնուամենայնիվ առաջին իսկ հնարավորության դեպքում ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու հնարավորությունը կարող է պայմանավորվել մի շարք հանգամանքներով, քանի որ ապահովագրական պատահարի հետևանքով կարող է ստեղծվել այնպիսի իրադրություն, որի ազդեցությունն օբյեկտիվորեն կարող է հիմք հանդիսանալ վնաս պատճառած անձի կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ համար հապաղելու օրենքով և ապահովագրության պայմանագրով ստանձնած պարտավորությունը կատարելուց: Հետևաբար, յուրաքանչյուր

դեպքում գնահատման պետք է արժանացնել ոչ միայն ապահովագրողին տեղեկացնելու անհապաղ հնարավորությունը, այլ նաև առաջին իսկ արդարացված հնարավորությունը: Տեղեկացման հապաղումը ողջամտորեն արդարացված կարող է համարվել նաև այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, ինչպիսիք են՝ պատահարի բարդ մեխանիզմը, պատահարի գիշերային ժամը, անմարդաբնակ վայրը և (կամ) պատահարի մասնակիցների համար կապի միջոցների անհասանելիությունը, ինչպես նաև ցանկացած այլ օբյեկտիվ հանգամանքի առկայության դեպքում, որը թույլ կտա առանց ողջամիտ կասկածների եզրակացնել, որ նույնպիսի իրավիճակում հայտնված յուրաքանչյուր բարեխիղճ անձ տեղեկացման պարտավորությունը կկատարեր նույն կամ գրեթե նույն հապաղմամբ: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ որոշակի ողջամիտ տևողությամբ հապաղումը ցանկացած պատահարի դեպքում պետք է համարել ոչ միայն բնական, այլև անվիճարկելի՝ պատահարի մասնակիցների իրավունքների անհարկի սահմանափակումներն ու հնարավոր վնասները բացառելու կամ առնվազն նվազագույնի հասցնելու նպատակով՝ յուրաքանչյուր դեպքում գնահատման արժանացնելով պատահարի մասին ապահովագրողին տեղեկացնելու՝ ողջամիտ ժամկետում արդարացված հնարավորությունը:

Հիշատակման է արժանի այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել ապօրինի դատապարտման արդյունքում կրած ոչ նյութական վնասի հատուցման պայմանների վերաբերյալ: «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 19.05.2014 թվականին ընդունված և 01.11.2014 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-21-Ն ՀՀ օրենքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրվեց նոր խմբագրությամբ՝ «վնաս» եզրույթի մեջ ներառելով նաև ոչ նյութական վնասը, միաժամանակ սահմանվեց ոչ նյութական վնասի հատուցման կառուցակարգը, որը լրացվեց «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 21.12.2015 թվականին ընդունված և 01.01.2016 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-184-Ն ՀՀ օրենքով: Հարկ է նաև նշել, որ 2017 թվականը նշանավորվեց *Մամիկոն Սյրեփայանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության թիվ ԵԿԴ/3296/02/14* քաղաքացիական գործով կայացված որոշմամբ, որը հանդիսանում է գործն ըստ էության լուծող առաջին որոշումը ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտի վերաբերյալ: Մասնավորապես, սույն որոշմամբ անդրադարձ է կատարվել այն խնդրին, թե արդյոք անձը կարող է պահանջել ապօրինի դատապարտման արդյունքում կրած ոչ նյութական վնասի հատուցում և ի՞նչ պայմանների առկայության դեպքում նման պահանջը կարող է բավարարվել: Միաժամանակ նշված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև այն խնդրին, թե արդյոք արդարացվածը որպես հատուցում կարող է պահանջել ճանապարհածախսի և օրապահիկի գումարները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ոչ նյութական վնասի հատուցման հիմք հանդիսացող տառապանքի, մասնավորապես՝ հոգեկան տառապանքի հաստատման համար պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նման տառապանքը հաստատելու համար ուղղակի ապացույցներ (օրինակ՝ բժշկական փաստաթղթեր, փորձագետի եզրակացություն) կարող են և չներկայացվել: Տառապանքի առկայությունը կարող է հաստատվել ցանկացած ապացույցով, այդ թվում՝ կողմի, նրա հարազատների ցուցումներով: Այլ կերպ ասած՝ հոգեկան տառապանքի առկայությունը հիմնավորելու համար չափից ավելի ֆորմալ պահանջները չեն բխի հոգեկան տառապանքի առանձնահատկություններից: Վճռաբեկ դատարանը նաև նշել է, որ արդարացվածն ունի օրապահիկի և ճանապարհածախսի հատուցում ստանալու իրավունք՝ այդ իրավունքի էությունը բացահայտելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2335-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգին» համապատասխան: Ինչ վերաբերում է այդ հատուցման չափերին, ապա Վճռաբեկ դատարանը փաստել է, որ կատարված ծախսերը պետք է լինեն իրական, անհրաժեշտ և ողջամիտ, որոնց վերաբերյալ անձը պետք է ներկայացնի ողջամիտ ապացույցներ:

Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել ժառանգման ինստիտուտի որոշ խնդրահարույց հարցերի վերաբերյալ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք կարելի է պահանջ ներկայացնել ժառանգին՝ ժառանգությունն ընդունելու վերաբերյալ և ինչպես է իրացվում անձի՝ ժառանգելու սահմանադր-

րական իրավունքը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք ժառանգները կրում են ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելու պարտականություն այն դեպքում, երբ նրանք ժառանգական գույքի փաստացի տիրապետմամբ ընդունել են ժառանգությունը, և արդյոք պարտատերը ցանկացած ժամանակ կարող է պարտքը մարելու պահանջ ներկայացնել ժառանգներին: Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ անձն ինքն է որոշում ընդունել ժառանգությունը, թե՛ ոչ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձին չի կարելի պարտադրել ընդունել ժառանգությունը, այդ թվում՝ ժառանգին չի կարող ներկայացվել ժառանգությունն ընդունելու պահանջ: Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ այն դեպքերում, երբ ժառանգը որոշում է օգտվել իր իրավունքից և ընդունել ժառանգությունը, ապա այդ իրավունքն իրացվում է օրենքով սահմանված եղանակներից որևէ մեկով՝ կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, կամ ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի տիրապետելով կամ կառավարելով: Վճռաբեկ դատարանը գտել է, որ ժառանգությունն ընդունած ժառանգներն օրենքով սահմանված կարգով և չափով պատասխանատու են ժառանգի՝ իրավահաջորդություն թույլ տվող պարտավորությունների համար՝ անկախ այն հանգամանքից, թե ժառանգության ընդունումը ժառանգության իրավունքի վկայագրով ձևակերպվել է, թե՛ ոչ:

Ուշադրության են արժանի նաև այն որոշումները, որոնց շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է աշխատանքային իրավունքի հարցերին: Մասնավորապես, գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցադրմանը, թե ինչ պատասխանատվություն է ծագում սահմանված ժամկետում աշխատավարձը չվճարելու դեպքում, և արդյոք աշխատավարձը չվճարելու դեպքում կետանցված աշխատավարձի նկատմամբ կարող են հաշվարկվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները: Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ աշխատավարձը չվճարելու համար ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանվել է պատասխանատվության հատուկ կանոն: Այսինքն՝ չվճարված աշխատավարձը բռնագանձելիս որպես պատասխանատվություն կիրառվում է օրական 0,15 տոկոսի չափով տուժանք, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա աշխատավարձի չափը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել առանձնացնել նաև այն դեպքերը, երբ աշխատողի ներկայացրած հայցի հիման վրա առկա է աշխատավարձի բռնագանձման վճիռ, որը չի կատարվել: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ այն դեպքերում, երբ արդեն իսկ առկա է նման վճիռ, այդ գումարը դադարում է պարզապես չվճարված աշխատավարձ դիտարկվելուց, այն դառնում է աշխատողի օգտին բռնագանձման ենթակա գումար, որը չվճարելու դեպքում գործատուն արդեն խախտում է վճիռ պարտադիրության և կատարելիության հատկանիշները: Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման պայմաններում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը, այն է՝ դրամական պարտավորությունը խախտելու համար պատասխանատվությունը, քանի որ նման պայմաններում գործատունն ոչ թե պարզապես աշխատավարձը չի վճարում, այլ խախտում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով իր վրա դրված դրամական պարտավորությունը:

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք աշխատողին աշխատանքից ազատելու մասին անհատական իրավական ակտը ենթակա է անվավեր ճանաչման, եթե այն ուժի մեջ չի մտել, և արդյոք աշխատողը կարող է վերականգնվել իր նախկին աշխատանքում, եթե վեճը լուծելու պահին լրացել է գործատուի և աշխատողի միջև կնքված որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարաններն աշխատողների իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացնեն ոչ թե ուժի մեջ չմտած անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելով, այլ պարզապես այդ իրավական ակտը չկիրառելով, ինչը կառաջացնի աշխատողի ակնկալած բարենպաստ իրավական հետևանքը: Հետևաբար իրավաբանական ուժ չունեցող անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու պահանջը բավարարվել չի կարող: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ աշխատանքային պայմանագիրը կնքելիս կողմերը գիտակցում են, որ եթե պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո երկու կողմն էլ աշխատանքային հարաբերությունները շարուն-

նակելու միասնական կամք չդրսևորեն, ապա այդ հարաբերությունները սահմանափակվելու են պայմանագրով որոշված ժամկետով, և չեն կարող օրինական ակնկալիք ունենալ, որ որոշված ժամկետից հետո աշխատանքային հարաբերություններն անպայման շարունակվելու են: Ուստի, եթե կողմերը պայմանագիր կնքելիս պայմանավորվել են իրենց աշխատանքային հարաբերությունները սահմանափակել որոշակի ժամկետով, ապա դատարանն իրավասու չէ կողմերից մեկի կամքին հակառակ փոփոխելու աշխատանքային պայմանագրի պայմանները՝ գործատուի համար առաջացնելով սպասվածից անբարենպաստ, իսկ աշխատողի համար՝ առանց պայմանագրային հիմքի առավել բարենպաստ հետևանքներ:

Ուղղորդող նշանակություն ունեն հաշվետու տարվա ընթացքում սնանկության վարույթի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Հարկ է առանձնացնել այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է երաշխավորի պատասխանատվության առանձնահատկությանը: Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով երաշխավորի դեմ սնանկության վարույթից դուրս պահանջ ներկայացնելու հնարավորությանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի վերլուծության արդյունքում գտել է, որ նման պահանջ ներկայացնելու իրավունքը չի ներառում հիմնական պարտապանի հետ միաժամանակ երաշխավորին սնանկ ճանաչելու հնարավորությունը: Այսինքն՝ հիմնական պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում երաշխավորի դեմ պահանջ ներկայացնելու հնարավորությունը վերաբերում է միայն հայցային վարույթի կարգով գույքային պահանջ ներկայացնելուն, այլ ոչ թե նաև վերջինիս սնանկ ճանաչելուն: Արդյունքում՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ երաշխավորը, անկախ նրանից՝ վերջինս համապարտ պարտավորություն է ստանձնել, թե ոչ, միևնույն պայմանագրի հիմքով՝ պարտապանի հետ միաժամանակ չի կարող սնանկ ճանաչվել:

Հատկանշական է նաև այն որոշումը, որով Վճռաբեկ դատարանն անդրադարձել է պարտապանի կողմից իր հետ փոխկապակցված կամ երրորդ անձանց կատարած անհատույց փոխանցումները որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու մտադրությամբ կատարված ակնհայտորեն վկայող փոխանցումներ գնահատելու խնդրին: Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 31.01.2017 թվականի թիվ ՄԴՈ-1340 որոշմամբ արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ սնանկության գործով կառավարիչը կարող է դատական կարգով հետ ստանալ միայն պարտապանի կատարած այն անհատույց փոխանցումները, որոնք դատարանի կողմից կցնահատվեն որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին ակնհայտորեն վկայող փոխանցումներ, կիրառելի է նաև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի նկատմամբ:

Հարկ է առանձնացնել նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք սնանկ ճանաչված պարտապանի հետ պարտավորական հարաբերությունների մեջ գտնվող անձի՝ պարտապանի կողմից ի կատարումն նշված պարտավորության սնանկ ճանաչված պարտապանի պարտատիրոջը վճարում կատարելը կարող է համարվել առանց դատարանի որոշման սնանկ ճանաչված պարտապանի կողմից պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալ՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի իմաստով: Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում կայացրած որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները և հարկ է համարել հավելել, որ սնանկության վարույթի առանձնահատկություններով, սնանկության նպատակներով պայմանավորված՝ պարտապանի նկատմամբ կիրառվում են մի շարք սահմանափակումներ՝ սկսած պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմումը վարույթ ընդունելու պահից: Եթե սնանկ ճանաչված պարտապանն ունի իր օգտին կատարման ենթակա պարտավորություններ, այսինքն՝ տվյալ պարտավորություններով պարտատեր է, ապա պարտավորությունների կատարումը հնարավոր է միայն սնանկության վարույթի շրջանակներում, այլ կերպ ասած՝ պարտավորության կատարման արդյունքը պետք է կենտրոնանա սնանկության վարույթում, որպեսզի հետագայում բաշխվի պարտատերերի միջև: Նույն տրամաբանությամբ սնանկ ճանաչված պարտապանի պարտապաններն իրենց պարտավորությունները չեն կարող կատարել հօգուտ սնանկ ճանաչված պարտապանի պարտատերերի՝ շրջանցելով սնանկության վարույթը: Այլ կերպ ասած՝ չի թույլատրվում սնանկ ճանաչված պարտապանի պարտատիրոջն անմիջականորեն բավարարում տալը սնանկ ճանաչված պար-



տապանի հետ պարտավորական հարաբերությունների մեջ գտնվող պարտապանի կողմից:

2017 թվականը հատկանշական էր նաև վարչական գործերով ընդունված որոշումների նշանակությամբ: Իրավակիրառ պրակտիկայի համար ուղղորդող նշանակություն ունի այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք անձը ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, եթե ինքնակամ շինարարական աշխատանքների համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո շարունակել է կատարել այնպիսի շինարարական աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են ինքնակամ շինությունն ավարտին հասցնելուն և դրա բնականոն շահագործումն ապահովելուն: Վճռաբեկ դատարանը գտել է, որ ինքնակամ շինարարական աշխատանքների համար վարչական պատասխանատվության ենթարկված լինելուց հետո այնպիսի շինարարական աշխատանքի կատարումը, որն ուղղված է տվյալ ինքնակամ շինությունն ավարտական տեսքի բերելուն և շահագործման համար պիտանի դարձնելուն, պետք է որակվի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ օրենսդիրը վարչական պատասխանատվություն է նախատեսել նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքների, այդ թվում՝ նաև՝ շենքեր և շինություններ ինքնակամ կառուցման կատարումը շարունակելու համար՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով տուգանք նշանակելուց հետո:

Ուշագրավ է նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք անձը կարող է տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի արդյունքում ենթարկվել վարչական պատասխանատվության թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջների խախտման համար, եթե այդ վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված տեսանյութում կամ լուսանկարում տվյալ ճանապարհային նշանը տեսանելի չէ, և վարչական վարույթն ընթացել է միայն եզրափակիչ փուլով: Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ այն բոլոր դեպքերում, երբ վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարով կամ տեսանյութով ամրագրված արարքի հատկանիշների և թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած է հարուցում, ապա վարչական մարմինը պարտավոր է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վարչական վարույթի ընթացիկ փուլի շրջանակներում լրիվ և բազմակողմանիորեն պարզել ենթադրյալ իրավախախտման առկայությունը և միայն այդ դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով անձին ենթարկել վարչական պատասխանատվության թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար:

Առանձնահատուկ նշանակություն ունի գործերից մեկով կայացված որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վարչական պատասխանատվության ճանապարհային գծանշման պահանջների՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված խախտման համար անձի պատասխանատվության հարցին, երբ արարքի կատարման վայրում և պահին տվյալ գծանշման պահանջները ողջամտորեն հնարավոր չէր պահպանել: Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ ճանապարհային գծանշման պահանջները ողջամտորեն հնարավոր չէ կատարել բնականոն երթևեկության պայմաններում, ապա երթևեկության մասնակիցը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության այդ գծանշման պահանջները չկատարելու համար: Հետևաբար տրանսպորտային միջոցների վարորդների կատարած զանցանքների համար պատասխանատվություն կրող սուբյեկտները թիվ 1.3 գծանշման պահանջը չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով կարող են ենթարկվել պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ գծանշման պահանջները հնարավոր է ողջամտորեն կատարել ճանապարհի տվյալ հատվածում:

Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է արտահայտել նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող տրանսպորտային միջոցներով կատարված և տեսանկարահանմամբ կամ լուսանկարահանմամբ հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության կիրառման կառուցա-

կարգերի վերաբերյալ: Որոշումներից մեկով Վճռաբեկ դատարանը նշել է, որ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի համաձայն՝ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթակա է տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, քանի դեռ չի ապացուցվել, որ տվյալ իրավախախտումը կատարել է այլ անձ: Ըստ Վճռաբեկ դատարանի եզրահանգման՝ նշված կանխավարկածը հաղթահարելու համար տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը պարտավոր է իրավասու մարմնին (վարչական մարմին կամ դատարան) հայտնել իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարած անձի ինքնությունը և ապացուցել, որ իրավախախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տրանսպորտային միջոցը: Իսկ մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մինչև 11.01.2016 թվականը գործող օրենսդրական կարգավորումների համաձայն՝ իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թույլ տրված ու տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցն ամրացնելու իրավասություն ունեցող անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը կարող է վարչական կամ դատական կարգով վերացվել այն դեպքում, երբ վերջինս ապացուցի, որ ստանալով վարչական մարմնի՝ օրենքով նախատեսված հարցումը և ողջամտորեն հնարավորություն ունենալով պատասխանել դրան՝ այդ հարցմանն ի պատասխան վարչական մարմնին հայտնել է այն անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը և բնակության վայրը, ում ամրացված է տվյալ տրանսպորտային միջոցը: Նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում ներկայումս գործում է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատեր իրավաբանական անձի ղեկավարի պատասխանատվության կանխավարկածը: Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ մանրամասն նկարագրել է այդ կանխավարկածի հաղթահարման համար անհրաժեշտ ապացուցման բեռի բովանդակությունը՝ ընդգծելով, որ քննարկվող կանխավարկածի հաղթահարման վարչական բողոքարկման եղանակը ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից կարող է առավել արդյունավետ կերպով ապահովել անձի խախտված իրավունքների գործնական վերականգնումը, քան դատական բողոքարկման եղանակը:

Ուշադրության է արժանի նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք կարող է դատարանը կարճել գործի վարույթը վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը լրանալու հիմքով այն պայմաններում, երբ հայցվոր կողմը չի ներկայացրել դատարան դիմելու համար օրենքով սահմանված և բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական դատավարության բոլոր փուլերում վարչական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի իրավակարգավորմանը համապատասխան պարտավոր է կատարել մատնանշման իր պարտականությունը, այդ թվում նաև՝ մատնանշելով կողմերին դատավարական ժամկետների բացթողնման դեպքում դրանք վերականգնելու նպատակով միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ: Այնուամենայնիվ, եթե դատավարության որոշակի փուլում վարչական դատարանը մատնանշման իր պարտականությունը չի կատարել, ապա նա զրկված չէ իր այդ պարտականությունը կատարելու հնարավորությունից դատավարության հետագա փուլերում՝ գործին մասնակցող անձանց միջնորդությունների և ներկայացրած նոր ապացույցների հիման վրա, իսկ այդ պարտականության կատարման պարագայում դատավարության մասնակցի կողմից բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելու դեպքում կիրառվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական հետևանքը, այն է՝ դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը:

Ուղղորդող նշանակություն ունեն նաև հաշվետու տարվա ընթացքում դատական ծախսերի վերաբերյալ կայացված որոշումները, որոնցում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցերին, թե վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի վարույթը վեճն ըստ էության

թյան սպառվելու հիմքով կարճվելու և վիճարկման հայցի բավարարման դեպքում հայցվորի կրած դատական ծախսերի, մասնավորապես՝ ներկայացուցչին վճարված գումարի հատուցման պարտականությունը պատասխանողի վրա դնելիս ի՞նչ չափանիշներով պետք է որոշվի այդ դատական ծախսի հատուցման ողջամիտ չափը: Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ վիճարկման հայցի բավարարման դեպքում դատական ծախսերի հատուցման հարցի լուծման համար դատարանը պետք է հաշվի առնի հետևյալ չափորոշիչները՝ փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը, գործի բարդությունը, նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ներկայացուցչին վճարված գումարի և վիճարկվող վարչական ակտով առաջադրված գումարի չափի հարաբերակցությունը և անձի կողմից փաստացի կատարված ծախսերի այն ծավալը, որն անհրաժեշտ է եղել դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար: Մյուս որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ի լրումն նշված չափորոշիչների, վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի վարույթը վեճն ըստ էության սպառվելու հիմքով կարճվելու դեպքում, ներկայացուցչին վճարված գումարի հատուցման պարտականությունը պատասխանողի վրա դնելիս, պետք է հաշվի առնել նաև վեճն ըստ էության սպառվելու իրադրության առաջացման հարցում վարչական մարմնի գործողությունների ազդեցությունը:

Միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումներում նույնպես արտահայտվել են մի շարք առանցքային դիրքորոշումներ: Մասնավորապես, քաղաքացիական գործերով կայացված որոշումներից մեկով անդրադառնալով ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի՝ տվյալ գործի շրջանակներում հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորությանը, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը գործի քննության ընթացքում որևէ նյութաիրավական պահանջ՝ կապված վեճի առարկայի հետ, ներկայացնել չի կարող: Դա վերաբերում է նաև հակընդդեմ հայցին, քանի որ հակընդդեմ հայցը հայցվորին ուղղված նյութաիրավական պահանջ է, որն ընդունվում է միայն օրենսդրի կողմից սահմանված հստակ դեպքերում, այն է՝ սկզբնական և հակընդդեմ պահանջների միջև հաշվանցի հնարավորություն, հակընդդեմ հայցով սկզբնական հայցի լրիվ կամ մասնակի բացառում, երկու հայցապահանջների միջև փոխադարձ կապ: Մեկ այլ որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 25.10.1980 թվականի Հաագայի կոնվենցիայով նախատեսված՝ երեխային իրեն վերադարձնելու ծնողի իրավունքի դատական պաշտպանության հարցին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը տարածվում է նաև ծնողի՝ իր երեխայի հետ վերամիավորվելու իրավունքի վերաբերյալ վեճերի վրա, ինչը ևս նշանակում է, որ այդպիսի վեճերի առկայության դեպքում անձը պետք է ունենա արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Հիշատակման է արժանի նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք վերաքննիչ բողոքում ՀՀ օրենսդրությամբ վերաքննիչ դատարանին վերապահված լիազորություններին համապատասխան ամբողջական պահանջ չներկայացնելը հիմք է վերաքննիչ բողոքը վերադարձնելու համար, եթե բողոք բերող անձը վերաքննիչ բողոքում նշել է միայն ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու պահանջը: Վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքին ներկայացվող՝ 17.06.1998 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված պայմանը պահպանված կարող է համարվել նաև այն դեպքում, երբ բողոք բերող անձը միայն ներկայացնի ստորադաս դատարանի դատական ակտը լրիվ կամ մասնակիորեն բեկանելու պահանջ՝ առանց հայցելու 17.06.1998 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածով սահմանված լիազորություններից որևէ մեկը:

Վարչական գործերով ևս միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումներում արտահայտվել են մի շարք ելակետային իրավական դիրքորոշումներ: Մասնավորապես, որոշումներից մեկում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք իրավաչափ է վերաքննիչ բողոքը վերադարձնելու դեպքում այն կրկին

ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետը հաշվարկել ոչ թե բողոք բերած անձանց, այլ նրանց ներկայացուցչի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից այն պարագայում, երբ առկա չէ միայն ներկայացուցչին ծանուցելու վերաբերյալ միջնորդություն: Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքում առկա թերությունները վերացնելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված տասնհինգօրյա ժամկետը չի կարող հաշվարկվել բողոք բերած անձանց ներկայացուցչի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից, եթե առկա չէ միայն ներկայացուցչին ծանուցելու վերաբերյալ միջնորդություն:

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթ տրամադրելու վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու ընդդատության հարցին: Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը տրամադրելու վերաբերյալ հայցապահանջը բխում է հանրային իրավահարաբերություններից և ընդդատյա է վարչական դատարանի քննությանը:

Հարկ է առանձնացնել նաև վարչական գործերով միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե վիճարկման հայցով դատարան դիմելիս կամ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնելիս անհրաժեշտ է արդյոք վճարել պետական տուրք նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջի համար, եթե այդ պահանջն իրավունքի ուժով ներառված է վիճարկման հայցում: Վճռաբեկ դատարանը գտել է, որ վիճարկման հայցով դատարան դիմելիս կամ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնելիս վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջի՝ որպես ոչ գույքային պահանջի համար պետական տուրք վճարելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ այդ պահանջն իրավունքի ուժով ներառված է վիճարկման հայցում՝ անկախ հայցվորի կողմից ներկայացված լինելու կամ չլինելու հանգամանքից: Իհարկե, վերոնշյալ որոշումները ամբողջը չեն, և առկա են մի շարք այլ գործեր, որոնցով արտահայտած իրավական դիրքորոշումները ևս առանցքային նշանակություն ունեն դատական պրակտիկայի ձևավորման համար:

Ընտրանին ներառում է նաև լազերային սկավառակ, որում ամրագրված է գրքի էլեկտրոնային տարբերակը:

Հուսով եմ, որ սույն ընտրանին, ինչպես և նախորդները, արժանանալու է իրավաբանական հանրության դրական գնահատականին, նպաստելու է կայացված նախադեպային որոշումների հասանելիության և կիրառության ապահովմանը, խթանելու է դատավորների և դատական ծառայողների, փաստաբանների, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների դասախոսների, իրավակիրառ հանրության այլ ներկայացուցիչների գործունեության արդյունավետության բարձրացմանը, դատական իշխանության նկատմամբ հասարակական վստահության ամրապնդմանը:

**ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և  
վարչական պալատի նախագահ  
Ե. Հ. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

Թիվ 11

Հունվար-դեկտեմբեր 2017

**ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ  
ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Իրավաբանական անձինք .....	1
Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ.....	24
Սեփականության իրավունք ձեռք բերելը .....	24
Ընդհանուր սեփականություն .....	33
<b>Գործարքներ</b> .....	51
<b>Հայցային վաղեմություն</b> .....	61
<b>Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին</b> .....	85
Պարտավորությունների կատարման ապահովում .....	85
Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար.....	106
<b>Պայմանագրերից ծագող պարտավորություններ</b> .....	115
Ծառայությունների վճարովի մատուցում .....	115
Պահատվություն.....	124
Փոխառություն .....	145
Վարկ .....	153
Ապահովագրություն .....	161
<b>Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ</b> .....	209
Ժառանգման իրավունք .....	230
<b>ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ</b> .....	244
<b>ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ</b> .....	277
<b>ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ</b> .....	344

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Քաղաքացիական գործերի առարկայական ընդդատությունը ..... 351  
Ապացույցներ և ապացուցում ..... 372  
Վարույթը վերաքննիչ դատարանում ..... 393  
Դատական ակտերի հարկադիր կատարում ..... 408

**ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Վարչական պատասխանատվություն ..... 416  
Վարչարարություն և վարչական վարույթ ..... 509  
Հարկային իրավունք ..... 524  
Սոցիալական ապահովություն ..... 609

**ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Վարույթը վարչական դատարանում ..... 621  
Դատական ծախսեր ..... 662

**ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ  
ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

Դատական ծախսեր ..... 683  
Հայց հարուցելու իրավունք ..... 689  
Վարույթը վերաքննիչ դատարանում ..... 718

**ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

Դատավարական ժամկետներ ..... 731  
Վարույթը վարչական դատարանում ..... 760  
Հանրային իրավական դրամական պահանջի  
հարկադիր կատարման վարույթը ..... 804

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

### ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ

07.04.2017թ.

1. «Արֆարմացիա» ՓԲԸ v. «Անի-96» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵՄԳ/3367/02/15

Էջ  
1-11

**Խնդիր.** Արդյո՞ք իրավաբանական անձի կողմից կնքված և դատարանի վճռով հաստատված հաշտության համաձայնությունը, որն ուղղված է իրավաբանական անձի պարտավորությունների կատարմանը, կարող է խախտել այդ իրավաբանական անձի մասնակցի (մասնակիցների) իրավունքներն ու օրինական շահերն այն դեպքում, երբ առկա է տվյալ իրավաբանական անձի (ընկերության) ընդհանուր ժողովի որոշում:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի, 205-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, իրավունք վերապահելով կողմերին դատավարության ցանկացած փուլում կնքելու հաշտության համաձայնություն, միաժամանակ սահմանել է այն պայմանները, որոնց առկայության դեպքում հաշտության համաձայնությունը ենթակա չէ հաստատման: Դրանք են, մասնավորապես, եթե հաշտության համաձայնությունը հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը հաստատելիս դատարանը պարտավոր է պարզել այդպիսի հաստատումը բացառող՝ վերը նշված պայմանների բացակայությունը: Այլ կերպ ասած՝ օրենսդրեն ամրագրվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելը բացառելու երկու հիմք՝ օրենքին (այլ իրավական ակտերին) հակասելը կամ այլ անձանց իրավունքները և օրինական շահերը խախտելը, և կախված այն հանգամանքից, թե որ հիմքով է բողոքարկվում տվյալ դատական ակտը, տարբերվում է նաև բողոք բերած անձանց շրջանակը: Այսպես, օրինակ, այն դեպքում, երբ կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը խախտում է այն անձանց իրավունքները և օրինական շահերը, ովքեր գործին մասնակից չեն դարձվել, վերջիններս կարող են իրենց իրավունքների դատական պաշտպանությունն իրականացնել՝ որպես գործին մասնակից չդարձված անձ հաշտության համաձայնությունը հաստատող դատական ակտը բողոքարկելով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ այն դեպքում, երբ դատական ակտը, որով հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը, բողոքարկվել է գործին մասնակից չդարձված անձանց կողմից, ապա վերադաս դատական ատյանները պետք է հաշվի առնեն, թե որքանով է այդ հաշտության համաձայնությունն առնչվում բողոք բերած անձի (անձանց) իրավունքներին և շոշափում նրանց օրինական շահերը, այսինքն՝ որքանով են այդ անձինք շահագրգիռ՝ կողմերի միջև կնքված և դատարանի կողմից հաստատված հաշտության համաձայնությունը վիճարկելու առումով:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է գործին մասնակից չդարձած անձանց իրավունքներին և պարտականություններին և նշել է, որ օրենսդիրը գործին մասնակից չդարձված անձանց վերապահում է գործին մասնակցող անձանց իրավունքներ և նրանց համար սահմանում պարտականություններ միայն այն դեպքում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացվել է նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ (յո՛ւն, ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի գյուղապետարանն ընդդեմ Լարիսա Եղիազարյանի, Գագիկ Մայիսյանի թիվ ԱՐԱԳ/0242/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ գործին մասնակից չդարձած անձանց դատավարական գործողություններն ուղղակիորեն պայմանավորված են նրանց դատավարական կարգավիճակով և ուղղված են վիճելի նյութական իրավահարաբե-

րության կարգավորման կապակցությամբ թույլ տրված այնպիսի վխալի վերացմանը, որն իրավահարաբերության ոչ բոլոր մասնակիցներին գործին մասնակից դարձնելու արդյունք է: Հետևաբար գործին մասնակից չդարձված անձը, որի իրավունքների և օրինական շահերի վերաբերյալ կայացվել է դատական ակտ, պետք է իր խախտված իրավունքներն արդյունավետ միջոցներով վերականգնելու հնարավորություն ունենա (դեռ, «Հայր և որդի Աղայաններ» ՄՊԸ-ն ընդդեմ «Հինգերորդ Ապրիլ» ՄՊԸ-ի թիվ ԵԱԳԿ/0199/02/11 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին կետի, 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 95-րդ հոդվածի 1-ին կետի, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի, 5-րդ հոդվածի 1-ին կետի, 12-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի, 35-րդ հոդվածի 1-ին կետի, 36-րդ հոդվածի 2-րդ կետի, 40-րդ հոդվածի 1-ին կետի, 45-րդ հոդվածի 1-ին կետի բովանդակությանը, արձանագրել է, որ իրավաբանական անձին (տվյալ պարագայում՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը)՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտի, բնորոշ են հետևյալ հատկանիշները՝ կազմակերպական միասնությունը, **գույքային առանձնացվածությունը**, քաղաքացիական շրջանառությունում իր անունից հանդես գալու իրավունքը և **ինքնուրույն գույքային պատասխանատվությունը**: Ընդ որում, գույքային առանձնացվածությունը և ինքնուրույն գույքային պատասխանատվությունն անմիջականորեն փոխկապակցված են և իրենց բովանդակությամբ հանգում են հետևյալին. իրավաբանական անձի գույքն առանձնացված է իր հիմնադիրների կամ մասնակիցների գույքից և իրավաբանական անձն իր պարտավորությունների համար պատասխանատու է միայն այդ գույքով: Այլ կերպ ասած՝ իրավաբանական անձը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար, իսկ իրավաբանական անձի մասնակիցները պատասխանատու չեն վերջինիս պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդի արժեքի սահմաններում կրում են իրավաբանական անձի գործունեության հետ կապված վնասների ռիսկը: Բացառություն կարող են կազմել միայն այն դեպքերը, երբ համապատասխան պատասխանատվությունը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ:

Սույն գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում վեճը վերաբերում է երկու իրավաբանական անձանց միջև ծագած պայմանագրային պարտավորություններին: Հետևաբար «Անի-96» ՄՊԸ-ն այդ պարտավորություններով ծագած հարաբերություններում հանդես է եկել որպես ինքնուրույն սուբյեկտ՝ իր գույքով պատասխանատվություն կրելով իր պարտավորությունների համար: Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ սույն գործով գործարքին ընդհանուր համաձայնությանը, հավանություն է տրվել «Անի-96» ՄՊԸ-ի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից, որի բացառիկ իրավասությանն է պատկանել գույքի տնօրինման գործարքի կնքումը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ մասնակիցների կողմից օտարման գործարքին դեմ քվեարկելու հանգամանքն ինքնին չի խախտում «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված ընկերության մասնակիցների որևէ իրավունք կամ օրինական շահ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ հաշտության համաձայնությունը հաստատող դատարանի վճիռը որևէ կերպ չի առնչվում ընկերության մասնակիցների՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-13-րդ հոդվածներով սահմանված իրավունքներին և պարտականություններին:

27.12.2017թ.

2. «Արմենայ Սերվիս» ՄՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյան v. «Ռուսալ Արմենալ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԱԲԿ/2005/02/12

Էջ  
12-23

**Խնդիր.** Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով դուստր ընկերության սնանկության դեպքում նրա պարտքերի համար հիմնական ընկերության (ընկերակցության)՝ սուբսիդիար պատասխանատվություն կրելու խնդրին այն դեպքում, երբ երկու ընկերություններն էլ, ըստ էության, ղեկավարվում են սույն սեփականատիրոջ ցուցումներով:



**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետը, 10-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության 8-րդ ենթակետը, 51-րդ հոդվածի 2-րդ կետը, 72-րդ հոդվածի 2-րդ կետը, 75-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ կետերը, 106-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին պարբերությունը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դուստր ընկերությունն իրավաբանական անձի ինքնուրույն կազմակերպարարական ձև չէ, այլ այդ հասկացությամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել պաշտպանելու այլ ընկերության կամ ընկերակցություն ցուցումներով կաշկանդված ընկերության, դրա պարտատերերի և մասնակիցների շահերը: Դուստր ընկերության ինքնավար կամք դրսևորելու հնարավորությունը սահմանափակված է մեկ այլ՝ հիմնական ընկերությունից (ընկերակցությունից) ունեցած տնտեսական կախվածության պատճառով: Դուստր ընկերություն կարող է լինել ինչպես բաժնետիրական, այնպես էլ սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունը: Ընդ որում, դուստր ընկերության հանդեպ հիմնական կարող է լինել ինչպես այլ տնտեսական ընկերություն, այնպես էլ ընկերակցություն: Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդիրը չի հստակեցրել, թե որ տեսակի ընկերություններն ու ընկերակցությունները կարող են լինել հիմնական, Վճռաբեկ դատարանը գտել է, որ դուստր ընկերության հանդեպ որպես հիմնական կարող են հանդես գալ ինչպես բոլոր տեսակի տնտեսական ընկերությունները, այնպես էլ ընկերակցությունները:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընկերության՝ դուստր համարվելու վերաբերյալ իրավակարգավորումներ առկա են ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, այնպես էլ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված իրավանորմերի կառուցվածքային վերլուծությունից բխում է, որ ընկերությունը կարող է համարվել դուստր հետևյալ դեպքերում.

1. այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն կամ ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով հնարավորություն ունի կանխորոշելու նման ընկերության որոշումները,

2. այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն կամ ընկերություն, նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ հնարավորություն ունի կանխորոշելու նման ընկերության որոշումները:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում արտացոլված է այն տրամաբանությունը, ըստ որի՝ ընկերության դուստր լինելու համար էական է, որ մեկ այլ ընկերություն (ընկերակցություն) հնարավորություն ունենա կանխորոշելու տվյալ ընկերության որոշումները, և դրանով պայմանավորված՝ օրենսդիրը նախատեսել է հիմնական ընկերության՝ դուստր ընկերության գործունեությունից բխող հետևանքների համար պատասխանատվություն կրելու որոշակի դեպքեր: Այսինքն՝ դուստր ընկերության իրավական կարգավիճակի առանձնահատուկ կարգավորման անհրաժեշտությունը թելադրված է վերջինիս որոշումները մեկ այլ ընկերության (ընկերակցության) կողմից կանխորոշելու հնարավորությամբ՝ պայմանավորված տվյալ ընկերությունների միջև ձևավորված փոխհարաբերությունների բնույթով և դրանից բխող պատասխանատվության առանձնահատկություններով: Ընդ որում, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսել է նաև, թե ինչ ձևերով պետք է հիմնական ընկերությունը մեկ այլ ընկերության որոշումները կանխորոշելու հնարավորություն ունենա, որպեսզի վերջինս համարվի դուստր: Մասնավորապես՝ այդ ձևերն են դուստր ընկերության կանոնադրական կապիտալում գերակշռող մասնակցության առկայությունը կամ ընկերությունների միջև կնքված պայմանագիրը:

Շարունակելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի տրամաբանությունն առ այն, որ ընկերությունը դուստր ճանաչելու համար հատկապես կարևոր է վերջինիս որոշումներն այլ ընկերության կողմից կանխորոշվելու հնարավորության առկայությունը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, ի հավելումս վերոնշյալ երկու ձևերի, սահմանում է, որ ընկերությունը կարող է համարվել դուստր նաև, եթե **մեկ այլ ընկերության օրենքով չարգելված որևէ այլ ձևով հնարավորություն ունի կանխորոշելու ԳՄԿՅ ընկերության որոշումները:** Ընդ որում, հիմնական ընկերությունը դուստր ընկերության որոշումների վրա կարող է ազդել, օրինակ, դուստր ընկերության գույքը գրավ վերցնելու, փոխառություն տրամադրելու, իր ներկայացուցիչներին դուստր ընկերության կառավարման մարմիններում ընդգրկելու և այլ եղանակներով: Հետևաբար վերոնշյալ իրա-

վանորմերի համակարգային վերլուծության արդյունքում, հաշվի առնելով նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընկերությունը դուստր ձևնաչելու համար բավարար է միայն հետևյալ փաստերի հաստատումը.

ա) որևէ ընկերության որոշումները կանխորոշելու հնարավորություն ունի մեկ այլ՝ հիմնական ընկերություն (ընկերակցություն),

բ) հիմնական ընկերության (ընկերակցության)՝ դուստր ընկերության որոշումները կանխորոշելու հնարավորությունը պայմանավորված է օրենքով չարգելված որևէ կառուցակարգի առկայությամբ:

Անդրադառնալով դուստր ընկերության սնանկության դեպքում հիմնական ընկերության պատասխանատվության առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այնպես էլ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով այդ կապակցությամբ սահմանված են նույնաբնույթ իրավակարգավորումներ: Մասնավորապես՝ երկու իրավական ակտերով էլ նախատեսված է, որ հիմնական ընկերությունը դուստր ընկերության սնանկության դեպքում կրում է սուբսիդիար պատասխանատվություն վերջինիս պարտքերի համար, և պատասխանատվությունն առաջանում է միայն այն դեպքում, երբ դուստր ընկերության սնանկությունն առաջացել է հիմնական ընկերության մեղքով: Այսինքն՝ հիմնական և դուստր ընկերությունների առկայությունը դեռևս բավարար չէ՝ վերջինիս սնանկության դեպքում հիմնական ընկերության սուբսիդիար պատասխանատվության առաջացման համար, այլ պատասխանատվությունն առաջանում է միայն հիմնական ընկերության մեղավորության փաստը հաստատվելու դեպքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և թե՛ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ դուստր ընկերության սնանկությունը համարվում է հիմնական ընկերության մեղքով առաջացած, եթե դա տեղի է ունեցել հիմնական ընկերության՝ պարտադիր կատարման ենթակա ցուցումներին հետևելու արդյունքում: Հետևաբար նախ պետք է պարզել, թե արդյոք հիմնական ընկերությունը դուստր ընկերությանը պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու իրավունք ունեցել է, թե՛ ոչ, այնուհետև պարզել դուստր ընկերության սնանկության և հիմնական ընկերության ցուցումների միջև առկա պատճառահետևանքային կապը:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հիմնական ընկերության՝ վերոնշյալ իրավանորմերով ամրագրված՝ դուստր ընկերությանը պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու իրավունքին, արձանագրել է, որ այդ իրավունքն ինքնին չի ենթադրվում, և միայն հիմնական ու դուստր ընկերության առկայությունը դեռևս բավարար չէ հիմնական ընկերության՝ պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու իրավունքի վերաբերյալ եզրահանգում կատարելու համար: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետի բովանդակության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու հիմնական ընկերության իրավունքը կարող է ծագել ոչ միայն ընկերությունների միջև կնքված պայմանագրից, այլև օրենքով չարգելված որևէ այլ ձևով: Ավելին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը նաև հավելում է, որ հիմնական ընկերությունը (ընկերակցությունը) ենթակա է սուբսիդիար պատասխանատվության, եթե նա գիտեր կամ կարող էր իմանալ համապատասխան հետևանքների (տվյալ դեպքում՝ դուստր ընկերության սնանկության) առաջացման մասին:

Ընդհանրացնելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով դուստր ընկերության սնանկության դեպքում նրա պարտքերի համար հիմնական ընկերության (ընկերակցության) սուբսիդիար պատասխանատվություն կրելու համար անհրաժեշտ է հետևյալ փաստերի միաժամանակյա առկայությունը.

ա) հիմնական ընկերության առկայությունը,

բ) դուստր ընկերության առկայությունը,

գ) հիմնական ընկերության՝ դուստր ընկերությանը պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու իրավունքի առկայությունը,

դ) դուստր ընկերության սնանկ լինելը,

ե) հիմնական ընկերության մեղքի առկայությունը դուստր ընկերության սնանկու-

թյան հարցում, որը պետք է պայմանավորված լինի պարտադիր ցուցումների կատարման հետևանքով սնանկության առաջացմամբ,

զ) այն հանգամանքի առկայությունը, որ հիմնական ընկերությունը գիտեր կամ կարող էր իմանալ սնանկության առաջացման մասին:

## ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

### Սեփականության իրավունք ձեռք բերելը

07.04.2017թ.

3. ՀՀ ֆինանսների նախարարություն, երրորդ անձ Արտաշես Թառումյան, Եջ քաղ. գործ թիվ ԵԿԳ/0395/02/15

Եջ 24-32

**Խնդիր.** Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե մաքսային հսկողությունից թաքցված և մաքսային մարմինների կողմից վերցված գույքը կարող է արդյոք տվյալ փաստի առթիվ քրեական գործ հարուցված չլինելու և քրեական հետապնդում չիրականացվելու դեպքում դատական կարգով ճանաչվել տիրագուրկ այն պայմաններում, երբ գործի քննությամբ չի հաստատվում այն տիրագուրկ ճանաչելու իրավական և փաստական հիմքերի առկայությունը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին կետի, 179-րդ հոդվածի 1-ին կետի, 279-րդ հոդվածի 1-ին կետի, 280-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 187-րդ, 188-րդ հոդվածների վերլուծություն հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գույքի նկատմամբ անձի սեփականության սուբյեկտիվ իրավունքը ծագում է օրենքով նախատեսված իրավաբանական փաստերի ուժով, որոնք հիմք են հանդիսանում սեփականության իրավունքի առաջացման համար: Սեփականության իրավունքի ծագման նշված հիմքերից մեկը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 179-րդ հոդվածով, որը սահմանում է լքյալ (դեռ նետված) գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման պայմաններն ու կարգը: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 179-րդ, 279-րդ և 280-րդ հոդվածների իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ անձը կարող է սկզբնական եղանակով սեփականության իրավունք ձեռք բերել լքյալ (դեռ նետված) շարժական գույքի նկատմամբ, շարժական գույքը համարվում է լքյալ (դեռ նետված), եթե սեփականատերը լքել է այն կամ այլ կերպ թողել է այն՝ դրա նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու նպատակով: Ընդ որում, ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից որևէ գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելը, որը կատարվում է այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության, համարվում է այդ անձի սեփականության իրավունքի դադարման հիմք և հանդիսանում է նույն գույքի՝ որպես լքյալ (դեռ նետված) գույքի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքի առաջացման նախադրյալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ գույքը դատական կարգով տիրագուրկ ճանաչելու կարգը սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, որի 187-րդ և 188-րդ հոդվածների համակարգային վերլուծության համաձայն՝ գույքը տիրագուրկ ճանաչելու պահանջով դատարան դիմած անձը պետք է ներկայացնի ապացույցներ, որոնք կհաստատեն հետևյալ փաստական հանգամանքների առկայությունը.

1) տիրագուրկ ճանաչելու պահանջի առարկա գույքը գտնվում է դատարան դիմած անձի տիրապետության ներքո,

2) գույքը չունի սեփականատեր կամ տվյալ գույքի սեփականատերը լքել է այն՝ առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության:

Ընդ որում, դատարանը կարող է գույքը տիրագուրկ ճանաչելու և տիրապետող անձի սեփականությանն այն հանձնելու մասին վճիռ կայացնել միայն այն դեպքում, երբ գործի քննությամբ հաստատվի, որ գույքը չունի սեփականատեր, կամ այն թողնվել է

սեփականատիրոջ կողմից՝ առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պահանջի առարկա հանդիսացող շարժական գույքը դուրս է եկել Արտաշես Թառույանի տիրապետությունից իրենից անկախ հանգամանքներում, քանի որ այդ գույքը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 264-րդ հոդվածի կիրառմամբ վերցվել է Արտաշես Թառույանից ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության վարչության «Զվարթնոց» բաժնի աշխատակիցների կողմից և հետագայում ի պահ է հանձնվել մաքսային պահեստ: Տվյալ դեպքում ՀՀ մաքսային սահմանը հատելիս Արտաշես Թառույանի մոտ մաքսային հսկողությունից թաքցված իրեր հայտնաբերելու փաստի առթիվ քրեական գործ կամ վարչական վարույթ չի հարուցվել, մինչդեռ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 264-րդ հոդվածի հիմքով վերջինիցս վերցված գույքը վարչական մարմինն առանց որևէ իրավական հիմքի շարունակել է պահել իր տիրապետության ներքո և ոչ իրավաչափորեն չի վերադարձրել այն անձին, որից այդ գույքը վերցվել է, այսինքն՝ Արտաշես Թառույանին:

Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 264-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ Արտաշես Թառույանից վերցված իրերը գործը քննելուց հետո պետք է վերադարձվեին տիրոջը, տվյալ դեպքում՝ Արտաշես Թառույանին, քանի որ տվյալ դեպքում վերջինից վերցված գույքի բռնագրավման որևէ իրավական հիմք առկա չէ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ մաքսային մարմինների կողմից հայտնաբերված մշակութային արժեքներն Արտաշես Թառույանի տիրապետումից դուրս են եկել իրենից անկախ հանգամանքներում և վերոհիշյալ գույքի՝ մաքսային պահեստում ի պահ հանձնույն չէր կարող վկայել գույքը լքելու կամ դրանից հրաժարվելու մասին: Հետևաբար վերջինիս կողմից իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից հրաժարվելու մասին վկայող գործողությունների բացակայության պայմաններում, որոնք ակնհայտ կդարձնեին գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից մեկուսանալու և այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք չպահպանելու մտադրությունը, առկա չեն բավարար հիմքեր եզրակացնելու, որ Արտաշես Թառույանը հրաժարվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից:

### Ընդհանուր սեփականություն

20.07.2017թ.

4. **Ղուկաս Ավագյան v. Հայկ Միրզախանի Մալխասյան, քաղ. գործ թիվ** Էջ 33-50  
**ԱՐԳ/0303/02/15**

*Խնդիր.* 1) Արդյո՞ք ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը բաժանելը կամ դրանից բաժին առանձնացնելը համարվում է սեփականության իրավունքի տնօրինման իրավագործության դրսևորում, և հնարավոր է արդյո՞ք ընդհանուր գույքը բաժանելու կամ բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել այն դեպքում, երբ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի գրավի պայմանագրով նախատեսված է առանց գրավառուի համաձայնության գրավի առարկան տնօրինելու կամ դրա փոփոխությանը հանգեցնող ցանկացած գործողություն իրականացնելու արգելք,

2) արդյո՞ք փորձագետի եզրակացությունը կարող է համարվել պատշաճ ապացույց այն դեպքում, երբ չի պարունակում նշում կիրառված մեթոդների մասին:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության՝ 61-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի<sup>2</sup> թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետը, 163-րդ հոդվածի 1-ին կետը, 192-րդ հոդվածի 1-ին կետը, 197-րդ հոդվածի 1-3-րդ կետերը, 260-րդ հոդվածը, 226-րդ հոդվա-

1 ՀՀ Սահմանադրությունը վկայակոչված է 2015 թվականի փոփոխություններով:

2 Այսուհետ՝ Կոնվենցիա:

ծի 1-ին և 5-րդ կետերը, 228-րդ հոդվածի 1-ին կետը, 229-րդ հոդվածը, 230-րդ հոդվածը, 231-րդ հոդվածի 1-ին կետը, 238-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձի սահմանադրական իրավունք հանդիսացող սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող տնօրինման իրավագործությունը ենթադրում է սեփականատիրոջ կողմից սեփական կամքով և հայեցողությամբ գույքի իրավական և փաստացի ճակատագիրը որոշելու հնարավորություն: Գույքի տնօրինման իրավունքը ենթադրում է ինչպես օրենքով նախատեսված, այնպես էլ օրենքով չարգելված եղանակներով գույքի հետագա ճակատագիրը որոշելու իրավունք, այդ թվում նաև՝ գույքի փաստացի նկարագիրը փոփոխելու կամ գույքի տնօրինման գործարքներ կնքելու եղանակով: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ նշված կարգավորումը կիրառելի է ինչպես միանձնյա, այնպես էլ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման դրսևորում է հանդիսանում նաև գույքի բաժանումը և գույքից բաժին առանձնացնելը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը բաժանելիս այն դադարում է ընդհանուր սեփականություն հանդիսանալ, և յուրաքանչյուր մասնակից դառնում է գույքի բաժանված մասի միակ սեփականատերը: Գույքից բաժին առանձնացնելիս առանձնացող սեփականատերը դառնում է միակ սեփականատեր առանձնացված բաժնի նկատմամբ, իսկ գույքի մնացած մասի նկատմամբ պահպանվում է չառանձնացած մասնակիցների ընդհանուր սեփականությունը: Հետևաբար, ընդհանուր գույքը բաժանելիս կամ դրանից բաժին առանձնացնելիս ոչ միայն փոփոխվում է գույքի փաստացի վիճակը (մասնավորապես՝ օբյեկտիվ իրականության մեջ այն շարունակում է գոյություն ունենալ այլ անհատականացնող տվյալներով, այլ մակերեսով, այլ արժեքով), այլ նաև իրավական վիճակը, քանի որ մասնավորապես փոփոխվում է սեփականության տեսակը և գույքային միավորների քանակը: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի կարգավորումը ոչ այլ ինչ է, քան տնօրինման իրավագործության դրսևորում:

Վերահաստատելով նախկին գործերով արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ գույքի տնօրինման իրավագործության դրսևորում հանդիսացող՝ գույքի բաժանման կամ առանձնացման իրավունքն իրացնելիս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածով սահմանված պահանջները պահպանելը պարտադիր է:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նաև նշել, որ գույքի տնօրինում է նաև գույքը գրավ դնելը:

Վերահաստատելով «Սելվր» ՍՊԸ-ն ընդդեմ Նշան Ալեքսանյանի գործով սահմանված գրավի իրավունքին բնորոշ առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ ոչ միայն գույքը գրավ դնելն է հանդիսանում սեփականության իրավունքի տնօրինման իրավագործության դրսևորում, այլ նաև գրավառուն գրավի իրավունք ձեռք բերելուց հետո օգտվում է սեփականության իրավունքի պաշտպանության համար սեփականատիրոջը տրված երաշխիքներից: Ընդ որում, եթե սեփականատիրոջը տրված երաշխիքները սահմանվում են օրենքով, գրավի պայմանագրով կողմերը կարող են նախատեսել նաև այլ երաշխիքներ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 238-րդ հոդվածի ուժով կողմերը կարող են սահմանափակել գրավատուի կողմից գույքի տնօրինման իրավունքը: Նման կարգավորման նպատակը սեփականատիրոջ և գրավառուի՝ որպես գրավ դրված գույքի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող սուբյեկտների շահերի հավասարակշռումն է: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ գրավ դրված գույքի տնօրինման իրավունքը սահմանափակ չէ, այլ կարող է սահմանափակվել ինչպես օրենքով, այնպես էլ գրավի պայմանագրով: Ընդ որում, նշված հետևությունը կիրառելի է գրավի առարկա հանդիսացող ցանկացած գույքի, այդ թվում՝ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ:

Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել մեջբերել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության թույլատրելի սահմանների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի<sup>3</sup> կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքը, որի համաձայն՝ գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

3 Այսուհետ՝ Եվրոպական դատարան:

- 1) միջամտությունը նախատեսված է օրենքով,
- 2) միջամտությունը բխում է հանրային շահից,
- 3) միջամտությունը բավարարում է համաչափության պահանջներին:

Մեջբերելով սեփականության իրավունքի իրականացման միջամտության իրավաչափության պայմանների վերաբերյալ Եվրոպական դատարանի դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 238-րդ հոդվածով նախատեսված տնօրինման իրավագործության սահմանափակումը նպատակ ունի ապահովելու հավասարակշռություն գույքային իրավունքի իրավատերեր հանդիսացող սեփականատիրոջ և գրավառուի շահերի միջև: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված սահմանափակումը տեղավորվում է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության թույլատրելի սահմաններում:

Ուստի Վճռաբեկ դատարանը, կարևորելով ընդհանուր սեփականության յուրաքանչյուր մասնակցի իրավունքը՝ ներկայացնել գույքից բնեղենով իր բաժինն առանձնացնելու պահանջ, հարկ է համարել արձանագրել, որ եթե տվյալ գույքը կրում է օրենքով սահմանված կամ կամովին ստանձնած ծանրաբեռնվածություններ, օրինակ՝ գրավ, որն արգելք է հանդիսանում գույքի տնօրինման համար, ապա գույքի տնօրինումը կարող է կատարվել համապատասխան ծանրաբեռնվածությունների վերացումից հետո: Հակառակ եզրահանգման պայմաններում գրավի առկայությունը որևէ կերպ չէր ապահովվի այն պարտավորությունները, որոնցում առկա է ընդհանուր, չբաժանված սեփականություն, մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ գրավը կարգավորող նորմերը կիրառելի են ինչպես միաձյա, այնպես էլ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը գրավ դնելիս: Ուստի Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ գրավատուն, պայմանագրի ազատության սկզբունքից ելնելով գրավի պայմանագիր կնքելով, որում մասնավորապես նախատեսված է նման սահմանափակում, համաձայնում և ընդունում է, որ ժամանակավորապես զրկվում է իր որոշ իրավունքներն իրականացնելու հնարավորությունից:

Երկրորդ հարցադրման կապակցությամբ վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետը, 53-րդ հոդվածի 1-ին կետը, 60-րդ հոդվածի 1-ին կետը, 62-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը, զարգացնելով նախկինում արտահայտված դիրքորոշումները, փաստել է, որ փորձագետի եզրակացությունը վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից արդյունավետ գնահատելու համար էական է հենց փորձագետի եզրակացության բովանդակությունը: Փորձագետի եզրակացության բովանդակությունը կազմող ներածական տվյալների միջոցով հնարավոր է լինում տեղեկություն ստանալ փորձաքննության տեսակի, այն կատարող փորձագետի, փորձաքննություն անցկացնելու հիմքի և նման այլ տվյալների վերաբերյալ: Փորձագետի եզրակացության հետազոտական (սկզբագրական) և եզրափակիչ մասերին ներկայացվող պահանջները սահմանվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Ընդ որում, նման պահանջներն օրենքով սահմանելն օրենսդրի կողմից ինքնանպատակ չի արվել: Եզրակացության հետազոտական մասում ներկայացվում են կատարված հետազոտության ընթացքը և դրա արդյունքները մանրամասն նկարագրվում են նաև հետազոտության ընթացքում փորձագետի կիրառած մեթոդները: Նշված մասում պետք է արտացոլվի հետազոտությունների ողջ ընթացքը և փորձագետի եզրահանգումների պատճառաբանությունը: Հետազոտական մասի հիմնավորվածության և պատճառաբանվածության տրամաբանական հետևությունը պետք է արտացոլվի եզրակացության եզրափակիչ մասում՝ առաջադրված հարցերին պատասխանելու միջոցով: Հետևաբար, փորձագետի եզրակացությունը պետք է բավարարի օրենսդրի կողմից սահմանված պահանջներին՝ պարունակելով առնվազն այն տվյալները, որոնք պարտադիր են համարվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Նշված պահանջներից մեկն էլ վերաբերում է կիրառված մեթոդների մասին տեղեկություններ պարունակելուն: Փորձագետի եզրակացությունը պետք է նշում պարունակի կիրառված մեթոդների վերաբերյալ, որպեսզի՝ մասնավորապես կողմերը և դատարանը հնարավորություն ունենան գնահատելու եզրակացությունն արժանահավատության, հիմնավորվածության, ամբողջականության տեսանկյունից՝ անհրաժեշտության դեպքում բարձրացնելով լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելու հարցը: Փորձագետի եզրակացության մեջ կիրառված մեթոդները նշելով՝ փորձագետը

հնարավորություն է տալիս այլ անձանց՝ պատկերացում կազմելու իր կազմած եզրակացության մասնագիտական հիմնավորվածության վերաբերյալ: Իրագեկվելով, թե ինչ մեթոդներ են կիրառվել փորձաքննություն իրականացնելիս՝ կողմերը և դատարանը հնարավորություն են ունենում, օրինակ, բացահայտելու փորձաքննության ընթացքում անթույլատրելի մեթոդների կիրառման դեպքերը: Ուստի Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ եթե փորձագետի եզրակացությունը չի պարունակում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով պարտադիր համարվող պահանջները, այդ թվում՝ չի պարունակում նշում կիրառված մեթոդների մասին, ապա նման եզրակացությունը չի կարող համարվել պատշաճ ապացույց՝ մասնավորապես դրա արժանահավատության տեսանկյունից:

### ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

07.04.2017թ.

5. Զարուհի Հայրապետյան և Գայանե Ղազարյան v. «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0556/02/14 Էջ 51-60

*Խնդիր.* Արդյո՞ք գործարքի գրավոր ձևը պահպանված չլինելու դեպքում այդ գործարքից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են իրականացման, եթե առկա են այլ ապացույցներ, որոնք վկայում են տվյալ գործարքի կնքման մասին:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածը, 290-րդ հոդվածի 1-ին կետը, 294-րդ հոդվածի 1-ին կետը, 295-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 296-րդ հոդվածի 1-ին կետը, 298-րդ հոդվածի 1-ին կետը, 436-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 777-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ պայմանագիրը՝ որպես գործարք, կարող է կնքվել բանավոր կամ գրավոր ձևով: Պայմանագրի ձևի վերաբերյալ օրենսդրական կարգավորման նպատակը պայմանագրի հիման վրա ծագող հարաբերություններն ավելի հստակ դարձնելն է, քաղաքացիական շրջանառության կայունությունն ապահովելը, պայմանավորված պայմանագրի տվյալ տեսակի բնույթով՝ ապագայում հնարավոր վեճերի կանխումը: Մասնավորապես՝ պայմանագրի կնքման բանավոր ձև նախատեսելու միջոցով քաղաքացիական շրջանառությունը չի ծանրաբեռնվում (օրինակ՝ կնքման պահին կատարվող գործարքները, որոնց համար հատուկ կարգավորում նախատեսված չէ, կարող են կնքվել բանավոր ձևով): Ինչ վերաբերում է գրավոր ձևով կնքվող գործարքներին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործարքների որոշ տեսակների համար հստակ նախատեսվող գրավոր ձև՝ օրենսդիրը կարևորել է այդ պայմանագրերը կնքված համարվելու համար որոշակի պահանջների պահպանումը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետ, 450-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետեր): Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ սահմանելով գործարքի կնքման գրավոր ձև՝ օրենսդիրը նախատեսել է այդ ձևը չպահպանելու երկու հնարավոր հետևանք.

1) գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին գրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից՝ չգրկելով գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից,

2) օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ օրենսդրի կողմից պայմանագրի տվյալ ձևի համար սահմանված է գրավոր ձև՝ առանց ձևը չպահպանելու հետևանքները նշելու (օրինակ՝ կապալի պայմանագիր, հանձնարարության պայմանագիր, կոմիսիայի պայմանագիր և այլն), ապա գործում է վերը նշված 1-ին կանոնը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ վերը նշված իրավական հետևանքը կիրառվում է բացառապես վեճի առկայության դեպքում: Այսինքն՝ այն դեպքերում, երբ տվյալ գործարքը կնքված լինելու փաստը կողմերի կողմից չի վիճարկվում, ապա գործարքի հասարակ գրավոր ձևը պահպանված չլինելու հանգամանքն ինքնին որևէ իրավական հետևանքներ չի առաջացնում: Հետևաբար նշված հետևանքը դատավարական բնույթի է: Այն դեպքերում, երբ օրենքով կամ պայմանագրով հստակ նախատեսված է, ապա պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է անվավերության (օրինակ՝ փոխառության պայմանագիր, վարկային պայմանագիր, բանկային ավանդի պայմանագիր և այլն):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը՝ որպես այն կնքող անձանց համաձայնեցված կամքի արտահայտություն, ուղղված է որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի գործունեություն իրականացնելու արդյունքում քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն: Նկատի ունենալով, որ օրենսդիրն այս պայմանագրի համար սահմանել է գրավոր ձևով կնքելու պահանջ, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը պետք է կնքվի գրավոր գործարքին ներկայացվող պահանջներին համապատասխան: Այն դեպքերում, երբ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի գրավոր ձևը չի պահպանվում, ապա կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կանոնը, այն է՝ կողմերը զրկվում են ի հաստատում գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից՝ այդուհանդերձ պահպանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքը, որոնք ենթակա են գնահատման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կանոններով:

### ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ

07.04.2017թ.

**6. «Գորխի «Միկրոշարժիչ»» ԲԲԸ v. «Ջերմուկ Ինթերնեյշլ Պեպսի-Կոլա Բոթլեր» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԱՎԳ-3/0787/02/14**

Էջ  
61-73

**Խնդիր.** Արդյո՞ք պարտապանի կողմից պարտավորության մի մասի կատարումը համարվում է պարտավոր անձի կողմից ամբողջ պարտավորության ճանաչումը վկայող գործողություն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատելով ողջ պարտավորության համար, այն պարագայում, երբ պարտավորությունը կրում է շարունակական բնույթ և ենթադրում է պարբերական կատարում:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածը, 332-րդ հոդվածը, 333-րդ հոդվածի 1-ին կետը, 335-րդ հոդվածի 2-րդ կետը, 337-րդ հոդվածի 1-ին կետը, 340-րդ հոդվածի 1-ին կետը և վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, նշել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*յրեն, օրինակ, Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասաբոյլյանի թիվ ԵԷԴ/0723/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*): Միաժամանակ, օրենսդիր կողմից ամրագրվել են նաև այն դեպքերը, որոնց առկայության պայմաններում հայցային վաղեմության ժամկետն ընդհատվում է: Ընդ որում, հայցային վաղեմության ժամկետի ընդհատման հիմք կարող է հանդիսանալ սահմանված կարգով հայցի հարուցումը, ինչպես նաև պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություններ կատարելը (*յրեն, Արմեն Ավագյանն ընդդեմ Արտավազդ Խաչատրյանի թիվ ԵՔԴ/0365/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 14.10.2011 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ հայցային վաղեմության ընթացքի ընդհատման էությունը կայանում է նրանում, որ օրենքով մատնանշված հիմքերի առկայության դեպքում հայցային վաղեմության արդեն իսկ անցած ժամանակահատվածն այլևս հաշվի չի առնվում և հայցային վաղեմության ժամկետը սկսում է հոսել վերստին: Ընդ որում, օրենսդիր կողմից նախատեսված հայցային վաղեմության ժամկետի ընդհատման հիմքերից է պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություններ կատարելը: Այլ կերպ ասած՝ ինչպիսի ձևով էլ պարտապանն ընդունի իր պարտքը, պարտքի ընդունման օրվանից տեղի է ունենում հայցային վաղեմության ընդհատում, և հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում է նորից: Միևնույն ժամանակ, հայցային վաղեմության ժամկետի ընդհատման հիմք կարող է հանդիսանալ պարտավոր անձի այն գործողությունը, որը կարարվել է հայցային վաղեմության ժամկետում:



Միաժամանակ անդրադառնալով մատակարարման հարաբերությունների ինստիտուտին և վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 347-րդ, 408-րդ հոդվածները, 521-րդ հոդվածի 1-ին կետը, 531-րդ հոդվածի 1-ին կետը, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մատակարարման հարաբերություններին, որպես կանոն, բնորոշ են կողմերի միջև ձևավորվող տևական կապերը, և մատակարարման պայմանագիրը հաճախ կնքվում է երկարատև ժամանակահատվածի ընթացքում պարտավորությունը մաս-մաս կատարելու համար: Այդ պատճառով մատակարարման պայմանագրով հաճախ նախատեսվում է պայմանագրի կատարման ժամկետների բազմազանություն կամ իրերը որոշակի խմբաքանակներով և ժամկետներում հանձնելու պարտականություն, որը բխում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 521-րդ հոդվածից, ըստ որի՝ մատակարարը պարտավորվում է ապրանքը գնորդին հանձնել որոշակի ժամկետում կամ ժամկետներում: Նման պարագայում հայցային վաղեմության ժամկետի ընթացքում մատակարարման պայմանագրով պարտապանի կողմից պայմանագրի կատարմանն ուղղված գործողությունը դիտվում է որպես ամբողջ պայմանագրի՝ ընդհանուր պարտավորության ձանաչմանն ուղղված գործողություն, ոչ թե միայն պարտավորության կոնկրետ մատով նախատեսված պարտքի ընդունում: Այսինքն՝ այն դեպքում, երբ պարտավորության ծագման հիմքը մեկն է, պարտապանի կողմից տվյալ պարտավորության կատարմանն ուղղված գործողությունը հանգեցնում է այդ պարտավորությամբ առաջացած ամբողջ պարտքի ձանաչման, անգամ երբ պայմանագրով նախատեսված է դրա մաս-մաս կատարում և պարտապանի գործողություններից հստակ չի երևում, թե պարտավորության որ մասի կատարմանն են ուղղված վերջինիս գործողությունները:

27.12.2017թ.

**7. Հայկանուշ Օհանյան v. Սուսաննա Եղիազարյան, քաղ. գործ թիվ ԵՉ ԽԿԳ-0349/02/16**

**ԵՉ  
74-84**

**Խնդիր.** Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է փոխառության պայմանագրում դրա կատարման ժամկետը նշված չլինելու դեպքում հայցային վաղեմության ժամկետի ընթացքը որոշելու առանձնահատկություններին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 877-րդ հոդվածի 1-ին կետը, 878-րդ հոդվածի 1-ին կետը, 880-րդ հոդվածի 1-ին կետը, արձանագրել է, որ փոխառության պայմանագիրը գրավոր ձևով կնքվող գործարք է, որի ուժով փոխառուն փոխառուի սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով փոխառուին վերադարձնել փոխառության գումարը կամ փոխառուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Ընդ որում, երբ փոխառության գումարը վերադարձնելու ժամկետը պայմանագրով որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, ապա փոխառուն այն պետք է վերադարձնի այդ մասին փոխառուի պահանջը ներկայացնելու օրվանից երեսնօրյա ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ փոխառության պայմանագրում փոխառության գումարի վերադարձման ժամկետի վերաբերյալ պայմանի շուրջ կողմերի կամահայտնությունը պետք է լինի հնարավորինս հստակ ձևակերպված, այսինքն՝ լինի որոշակի և չպարունակի անորոշ ձևակերպումներ, որն իր հերթին հնարավորություն կտա հնարավորինս ճշգրիտ հաշվարկելու փոխառուի՝ գումարը վերադարձնելու պարտականության կատարման ծագման պահը: Ըստ այդմ, այն դեպքում, երբ փոխառության պայմանագրում փոխառությամբ վերցված գումարը վերադարձնելու ժամկետի վերաբերյալ պայմանը ձևակերպվել է անորոշ, որը հնարավորություն չի տալիս այն մեկնաբանելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի կանոններին համապատասխան, ապա կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված կանոնակարգումը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ փոխառությամբ տրված գումարը բոլոր դեպքերում ենթակա է վերադարձման փոխառուին, և փոխառության պայմանագրում փոխառության գումարը վերադարձնելու ժամկետի վերաբերյալ պայմանի վրա հասնելը չի կարող ուղղակի կախվածության մեջ դրվել փոխառուի կողմից որևէ գործողության կատարումից կամ պայմանավորվել վերջինիս ան-

գործությամբ: Հակառակ պարագայում փոխառուի՝ փոխառությամբ վերցված գումարը վերադարձնելու պարտականությունը հնարավոր է, որ երբևէ չծագի, ինչն անթույլատրելի է փոխառության իրավահարաբերությունների պայմաններում:

Սույն գործի փաստերի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փոխառության պայմանագրով, ըստ էության, որոշված չէ փոխառության գումարը վերադարձնելու ժամկետը, որի դեպքում ստացված փոխառության գումարը պարտապանը պետք է վերադարձնել այդ մասին իրեն պահանջ ներկայացվելու օրվանից երեսուօրյա ժամկետում: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում պարտատերը պարտապանին իր պահանջը պետք է ներկայացնի այնպիսի եղանակով, որով հնարավոր է ապացուցել պարտապանին իր պարտավորությունների վերաբերյալ տեղեկացնելու փաստը: Նման պահանջ պարտատերը կարող է ներկայացնել նաև դատարան հայց հարուցելու միջոցով: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է հայցի ինստիտուտի էությունից, մասնավորապես՝ հայցը նյութաիրավական և դատավարական հասկացություն է, որի նյութաիրավական կողմն արտահայտվում է հայցվորի կողմից պատասխանողին ներկայացվող իրավական պահանջի մեջ, իսկ դատավարական կողմը դատարանին հասցեագրված պահանջն է՝ քննել և լուծել կողմերի միջև ծագած վեճը:

Սույն գործով պարտատերը փոխառության գումարը վերադարձնելու պահանջը պարտապանին ներկայացրել է դատարան մուտքագրված հայցադիմումով: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն այդպես էլ չի սկսվել, քանի որ պարտատերը հայցադիմումով ներկայացրել է և՛ իր խախտված իրավունքները վերականգնելու՝ դատարանին հասցեագրված պահանջ, և՛ փոխառության գումարը վերադարձնելու՝ պարտապանին հասցեագրված պահանջ:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### Պարտավորությունների կապարման ապահովում

07.04.2017թ.

8. «Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ v. Էջ Երայիկ Մելքունյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2680/02/15 85-93

*Խնդիր.* 1) Արդյո՞ք դատարանն իրավասու է իր նախաձեռնությամբ պակասեցնել տուժանքը,

2) արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավասու է անդրադառնալ և քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքի այն փաստարկը, որն առաջին ատյանի դատարանում քննության առարկա չի դարձվել:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ, 372-րդ հոդվածները, ինչպես նաև նախկինում արտահայտված իր իրավական դիրքորոշումները, նշել է, որ սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության կամ ողջամիտ հարաբերակցության ապահովման նպատակով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածով սահմանված դրույթը կիրառելու դատարանի լիազորությունն անմիջականորեն պայմանավորված է բացառապես առաջին ատյանի դատարանում պատասխանողի (պարտապանի) կողմից վճարման ենթակա տուժանքը պարտավորության խախտման հետևանքներին ակնհայտորեն անհամաչափ լինելու վերաբերյալ դիրքորոշում հայտնելու կամ համապատասխան միջնորդություն կամ դիմում ներկայացնելու հետ հետևյալ պատճառարանությամբ:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետը, 6-րդ հոդվածը, 11-րդ հոդվածի 1-ին կետը, 13-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերին համապատասխան՝ քաղաքացիական դատավարության հիմնարար սկզբունքների կիրառմամբ: Ընդ որում՝ գործին

մասնակցող անձինք իրենք են ընտրում իրենց իրավունքների պաշտպանության եղանակները, որոշում դրանց իրականացման ձևերը և միջոցները:

Կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներով պայմանավորված՝ դատարանը հանդես է գալիս միայն որպես վեճը լուծող մարմին և կաշկանդված է որոշակի դատավարական գործողություններ սեփական հայեցողությամբ իրականացնելու արգելքով:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ այս կան այն հայեցողական լիազորությունն իրականացնելու դատարանի իրավունքը բացարձակ բնույթ չի կրում, և դրա իրականացման նպատակահարմարության հարցն անհրաժեշտ է որոշել՝ ելնելով դատավարության մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքների էությունից (*Կլեն, Գյունրու քաղաքապետարանն ընդդեմ «Չայ» ՄՊԸ-ի թիվ 0351/02/08-(ՇԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 31.10.2008 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, նշված դիրքորոշումների համատեքստում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը նաև մեկնաբանելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ, արձանագրել է, որ եթե պատասխանողը (պարտապանը) որպես իր իրավունքների պաշտպանության եղանակ չի ընտրել տուժանքը պակասեցնելու մասին դիրքորոշմամբ հանդես գալը, ապա դատարանը՝ որպես վեճը լուծող մարմին, ելնելով դատավարության մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքների էությունից, կաշկանդված է պաշտպանության այդ եղանակով և սեփական հայեցողությամբ տուժանքը պակասեցնելու իր իրավունքը չի կարող իրականացնել: Այսինքն՝ նման պայմաններում դատարանի այդ հայեցողությունը բացարձակ չէ: Հակառակ դեպքում, եթե դատարանը, առանց պատասխանողի (պարտապանի) միջնորդության, իր հայեցողությամբ է պակասեցնում տուժանքի չափը, ապա, ըստ էության, իրացնում է դատավարության մասնակցի՝ իր հայեցողությամբ իր իրավունքների պաշտպանության եղանակներն ընտրելու, դրանց իրականացման ձևերն ու միջոցները որոշելու սուբյեկտիվ իրավունքը, որի արդյունքում կարող է առաջանալ կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների խախտման վտանգ: Ավելին, եթե դատարանը, առանց պատասխանողի (պարտապանի) միջնորդության, իր հայեցողությամբ է պակասեցնում տուժանքի չափը, ըստ էության, գրկում է հայցվոր կողմին՝ սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության կամ ողջամիտ հարաբերակցության վերաբերյալ փաստարկներ և դրանք հիմնավորող ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից, որի արդյունքում ևս կարող է առաջանալ կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների խախտման վտանգ: Վճռաբեկ դատարանի վերը նշված եզրահանգումը բխում է նաև Կոնվենցիայիով երաշխավորված յուրաքանչյուրի՝ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից:

Ամփոփելով վերը շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածով սահմանված լիազորության կիրառման հարցին պետք է անդրադառնա միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձն է հայցադիմումի պատասխանով, դիմումով, իր առարկություններով կամ միջնորդությամբ հայցում տուժանքի չափի պակասեցում (*Կլեն, նաև թիվ ԵԿԴ/0930/02/13 և թիվ ԵՄԴ/0492/02/14 քաղաքացիական գործերի փաստական հանգամանքներն ու նշված գործերով Վճռաբեկ դատարանի համապարասխանաբար 18.07.2014 թվականի և 27.11.2015 թվականի որոշումների իրավական հիմնավորումները*):

Երկրորդ հարցադրման կապակցությամբ վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, 208-րդ հոդվածի 3-րդ կետը, 210-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը, 219-րդ հոդվածի 1-ին կետը և վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում առաջին ատյանի դատական ակտը վերանայելիս հայտնաբերվում է, որ կողմը վերաքննիչ բողոքում նշված փաստարկի վերաբերյալ առաջին ատյանի դատարանում որևէ դիրքորոշում չի հայտնել և չի փաստարկել դրա չհայտնելու անհնարիությունը, ապա վերաքննիչ դատարանն իրավատու չէ քննության առնելու նշված փաստարկի վերաբերյալ վերաքննիչ բողոքի հիմքը և հիմնավորումը:

Նման սահմանափակումը պայմանավորված է ոչ լրիվ վերաքննության ինստիտուտի առաձնահատկություններով: Մասնավորապես՝ ոչ լրիվ վերաքննության պարագայում վերաքննիչ դատարանը վերանայում է առաջին ատյանի դատական ակտը, այլ ոչ թե՛ գործն ընդհանրապես: Ըստ այդմ էլ, եթե ստորադաս դատարանը որևէ պահանջով վերջնական եզրահանգում չի կատարել, կամ կողմը վերաքննիչ բողոքում նշված փաստարկի վերաբերյալ որևէ դիրքորոշում չի հայտնել առաջին ատյանի դատարանում, ապա վերաքննության օբյեկտը բացակայում է:

07.04.2017թ.

**9. «Յունիբանկ» ՓԲԸ (ներկայումս՝ «Յունիբանկ» ԲԲԸ) v. Էդիկ Մարկոսյան, Էջերրորդ անձ «Հրաշք Ապագա» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԱՐԱԿ/0591/02/14**

Էջ 94–105

*Խնդիր.* Արդյո՞ք սուբսիդիար պատասխանատվություն ստանձնած երաշխավորի դեմ կարող է պահանջ ներկայացվել այն դեպքում, երբ թեև լրացել է պարտատիրոջ և հիմնական պարտապանի միջև կնքված և պարբերական կատարում ենթադրող հաշտության համաձայնությունը հաստատող օրինական ուժի մեջ մտած դատական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու՝ օրենքով սահմանված մեկամյա ժամկետը, սակայն հաշտության համաձայնությամբ սահմանվել են պարտավորության կատարման՝ վերոնշյալ ժամկետից ավելի երկար ժամկետներ:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին կետի, 375-րդ հոդվածի 1-ին կետի, 377-րդ հոդվածի 1-ին կետի, 382-րդ հոդվածի, 415-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծություն հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքերում, երբ օրենքով կամ պայմանագրով նախատեսվում է երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն, վերջինիս դեմ պարտատերը կարող է պահանջ ներկայացնել միայն այն պարագայում, երբ հիմնական պարտապանից պահանջի բավարարում չի ստանում: Սուբսիդիար պատասխանատվության դեպքում, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 415-րդ հոդվածով, մինչև երաշխավորի դեմ պահանջ ներկայացնելը պարտատերը պետք է պահանջ ներկայացնի հիմնական պարտապանի դեմ, և միայն այն դեպքում, երբ հիմնական պարտապանը հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց, կամ պարտատերը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը, ապա այդ պահանջը կարող է ներկայացվել երաշխավորին: Այսինքն՝ նման գործերով երաշխավորի դեմ պահանջի բավարարման համար անհրաժեշտ է ապացուցել նաև հիմնական պարտապանին պահանջ ներկայացրած լինելու և պահանջի բավարարում ստացված չլինելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ նշված պահանջը կարող է ներկայացվել ինչպես արտադատական, այնպես էլ դատական կարգով: Այսինքն՝ պարտատերը կարող է, օրինակ, արտադատական կարգով նախապահանջ ուղարկել հիմնական պարտապանին կամ վերջինիս դեմ հայց ներկայացնել դատարան: Երկու պարագայում էլ առկա կլինի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 415-րդ հոդվածով նախատեսված՝ հիմնական պարտապանին պահանջ ներկայացնելու պայմանը:

Անդրադառնալով երաշխավորության դադարման հիմքերին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ բացի պարտավորությունների դադարման ընդհանուր հիմքերից, երաշխավորությունը դադարում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում: Նման հիմքերից մեկն էլ **հիմնական պարտավորության դադարումն է**, որպիսի հիմքի առկայությունը պայմանավորված է երաշխավորության լրացուցիչ բնույթով, այն է՝ առանց հիմնական պարտավորության երաշխավորությունը գոյություն ունենալ չի կարող:

Նկատի ունենալով, որ վերոնշյալ կարգավորումն ունի առանձնահատկություններ պարբերական վճարում ենթադրող պարտավորությունների կատարման դեպքում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ նշված պարտավորությունների **հարկադիր կատարման առանձնահատկություններին**՝ բացահայտելու համար նման պարտավորությունների դադարման պահն այն դեպքում, երբ լրացել է այն դատական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու մեկամյա ժամկետը, որով նախատեսվել են պարբերական վճարումներ:

Վճռաբեկ դատարանը, սույն որոշմամբ վերահաստատելով ՀՀ Արմավիրի մարզի Արաքս գյուղի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային

բաժնի Էջմիածնի բաժանմանը թիվ ՎԴ4/0104/05/09 վարչական գործով 02.04.2010 թվականի, «Յունիբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի թիվ ԼԴ/0039/04/14 քաղաքացիական գործով 22.07.2016 թվականի և քաղ «Ինելոբանկ» ՓԲԸ-ի դիմումի թիվ ԵԱԲԴ/0515/02/10 քաղաքացիական գործով 02.12.2016 թվականի որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները, փաստել է, որ «Յունիբանկ» ՓԲԸ-ի և «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի միջև հաստատվել է պարբերական վճարումներ ենթադրող պարտավորություն, իսկ պարտավորությունների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2018 թվականի հուլիս ամիսը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով Էդիկ Մարկոսյանի դեմ ներկայացված պահանջի բավարարումը կախված է այն հանգամանքից, թե «Յունիբանկ» ՓԲԸ-ի կողմից դատական կարգով հիմնական պարտապան «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի դեմ պահանջն ինչ լուծում է ստացել: Այլ կերպ ասած՝ քանի դեռ սույն գործով պարզված չէ հիմնական պարտապանից՝ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ից «Յունիբանկ» ՓԲԸ-ի կողմից պահանջի բավարարում ստացած լինելու հանգամանքը, Էդիկ Մարկոսյանի դեմ պահանջը բավարարվել չի կարող:

Միաժամանակ «Արդշիրան» ԲԲԸ-ն ընդդեմ «Արոր-Բագրայր» արտադրական կոոպերատիվի թիվ ՀԲԴ4/0024/04/08 քաղաքացիական գործով 18.09.2009 թվականի որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված մեկ տարվա ընթացքում կատարման չներկայացնելով՝ պարտատերը գրկվում է այդ իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից, իսկ պարտապանն ազատվում է նույն վճռով սահմանված պարտավորությունից: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ վերոնշյալ որոշման հիմքում ընկած է միանվագ կատարում ենթադրող պարտավորություն, իսկ սույն գործով էական նշանակություն ունի այն, որ հիմնական պարտապանի ստանձնած պարտավորությունը ենթադրում է **պարբերական կատարում**, իսկ պարտավորության կատարման վերջնաժամկետը դեռևս չի լրացել, Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով անհրաժեշտ է պարզել, թե արդյոք վերացած չէ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի դեմ «Յունիբանկ» ՓԲԸ-ի պահանջի բավարարման հնարավորությունը, և արդյոք «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի բավարարել է «Յունիբանկ» ՓԲԸ-ի պահանջը:

**Պատասխանատվությունը պարտավորությունները  
խախտելու համար**

27.12.2017թ.

10. Ստեփան Մեսրոպյան v. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ Էջ ԵԿԴ/5067/02/15 106-114

**Խնդիր.** Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանք կիրառելու արդյունքում վերադարձման ենթակա գումարը չվերադարձնելու դեպքում դրամական պարտավորությունը չկատարելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության ընդհանուր կանոնին՝ միաժամանակ վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ դրամական պարտավորությունը չկատարելու համար գումարին տոկոսներ վճարելու պարտավորության ծագման հիմքն ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելն է (*տես, օրինակ, Արամ Հայրապետյանն ընդդեմ Նորիկ Գզիրյանի և մյուսների թիվ 3-502/ՎԴ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 26.09.2008 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը վրա է հասնում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում, և
- եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ

պայմանագրով կամ օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար:

Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տոկոսները ենթակա են հաշվեգրման և բռնագանձման, եթե առկա է դրամային պարտավորություն, որի կատարումը խախտվել է, կամ այն չի կատարվել (*դրև*, «Գազարին» սերմնաբուծական սպառողական կոոպերատիվն ընդդեմ «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պարասխանապովոյթյանը ընկերության թիվ ԵԿԴ/0735/02/15 քաղաքացիական գործով Վճռաբեկ դապարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու արդյունքում նման դատական ակտի հիման վրա վերադարձման ենթակա գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կիրառման հնարավորությանը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ վերը նշված պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու դեպքերում ապրանքի համար վճարված գումարը հետ ստանալը գնորդի իրավունքն է: Ընդ որում, օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից ձեռք է բերում պարտադիրության և կատարելիության հատկանիշ, և եթե վաճառողն այն չի կատարում, այսինքն՝ տվյալ դեպքում գումարը չի վերադարձնում գնորդին, ապա վերջինս իրավունք ունի դատական կարգով պահանջելու բռնագանձել չվերադարձված գումարը: Այս դեպքում, երբ արդեն իսկ առկա է նման վճիռ, այդ գումարը դառնում է գնորդի օգտին բռնագանձման ենթակա գումար, որը չվերադարձնելու դեպքում վաճառողն արդեն խախտում է վճռի պարտադիրության և կատարելիության հատկանիշները: Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման պայմաններում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ դատական ակտով բռնագանձման ենթակա և չվերադարձված գումարի նկատմամբ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կետանցի պահից մինչև պարտավորության փաստացի կատարումը ենթակա են վճարման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանը տվյալ դեպքում կարևորել է դատական ակտի առկայությունը՝ նկատի ունենալով, որ քանի դեռ դատական ակտով վիճահարույց գործարքն անվավեր չի ճանաչվել, այն օրինական գործարք է, ուստի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կիրառման պայմանը՝ առանց օրինական հիմքի դրամական միջոցները պահելը (վերադարձնելուց խուսափելը, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելը, այլ անձի հաշվին անհիմն ստանալը կամ խնայելը), առկա չէ: Այլ կերպ ասած՝ քանի դեռ գործարքը վավեր է, գնորդի կողմից վճարված դրամական միջոցները վաճառողի մոտ գտնվում են օրինական հիմքով: Հետևաբար որպես գործարքի անվավերության հետևանք վճարման ենթակա դրամական միջոցների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները կարող են հաշվարկվել միայն գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո առաջացող կետանցի պահից սկսած:

Ինչ վերաբերում է տվյալ դեպքում կետանցի պահը որոշելուն, ապա Վճռաբեկ դատարանը տվյալ հարցն անհրաժեշտ է համարել քննարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին կետի կարգավորման շրջանակներում:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին կետի իրավական վերլուծությանը, նշել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը (*դրև*, «Արդշինին-վեարանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/0595/04/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դապարանի 17.04.2009 թվականի որոշումը):

Տվյալ դեպքում գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտի առկայության պայմաններում անհրաժեշտ է, որ հաստատվի պայմանագրի հիման վրա գնորդից ստացված գումարը դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վաճառողի կողմից գնորդին անհապաղ չվերադարձնելու փաստը, քանի որ միայն այդ դեպքում կրնանարկվի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելու հանգա-

մանքը: Նկատի ունենալով, որ տվյալ պարագայում քննարկման է ենթակա դրամական պարտավորությունը չկատարելու համար պատասխանատվությունը, իսկ պատասխանատվության պարտադիր պայման է պարտավորությունը խախտած անձի մեղքը, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել պարզել մեղքի ծագման պահը, այսինքն՝ որ պահից անձը մեղավոր կհամարվի նշված պարտավորությունը չկատարելու մեջ:

Հաշվի առնելով, որ մեղքն անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարվող իրավախախտման և դրա հետևանքների նկատմամբ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ իրավախախտման համար մեղքը կարող է առկա լինել միայն այն պահից սկսած, երբ անձին հայտնի է դարձել իր ունեցած դրամական պարտավորության մասին: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելու արդյունքում որպես պատասխանատվության միջոց տուկոսներ հաշվարկելիս դատարանները պետք է հաշվի առնեն, թե որ պահից է տեղի ունեցել իրավախախտումը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ պահը համընկնում է վերջնական դատական ակտը պարտապանին հասու լինելու պահի հետ, այսինքն՝ թե որ պահից է պարտապանն իմացել կամ իրական հնարավորություն ունեցել իմանալու, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ունի դրամական պարտավորություն:

## ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Ծառայությունների վճարովի մատուցում

20.07.2017թ.

11. Արշակ Միրզոյան v. «ԱՐԳՈՏՈՒՐ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԿԳ/5402/02/14

Էջ  
115–123

**Խնդիր.** Արդյո՞ք իրավաչափ է գրավոր պայմանագրի բացակայության պայմաններում, օտար լեզվով կազմված գրավոր փաստաթղթի հիման վրա՝ առանց դրա պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանության, եզրահանգում կատարել կողմերի միջև, տվյալ դեպքում, զբոսաշրջային փաթեթի ծառայություն մատուցելու նպատակով ծագած իրավահարաբերության առկայության վերաբերյալ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածը, 294-րդ հոդվածի 1-ին կետը, 296-րդ հոդվածի 1-ին կետը, 298-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 2-րդ հոդվածները, 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 16-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության բնագավառին առնչվող հարաբերությունները, ինչպես նաև զբոսաշրջային գործունեության բնագավառում ծագող այն հարաբերությունները, որոնք ի հայտ են գալիս քաղաքացիների հանգստի, շրջագայության, ազատ տեղաշարժման իրավունքների իրականացման գործընթացում՝ նպատակ ունենալով ապահովելու, *inter alia*, քաղաքացիների՝ զբոսաշրջության ընթացքում ծագած իրավունքների արդյունավետ իրացումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտները սպառողի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքում են գրավոր պայմանագիր: Ընդ որում, նրանց միջև պայմանագիր կնքելը պարտադիր է այն դեպքում, երբ տրամադրվում է զբոսաշրջային ծառայությունների ամբողջական համալիր: Զբոսաշրջային ծառայություններն իրենց մեջ նաև ներառում են զբոսաշրջիկներին մատուցվող **հյուրանոցային և տրանսպորտային տեղափոխման** ծառայությունները, իսկ զբոսաշրջային փաթեթն իր մեջ **զբոսաշրջային ծառայությունների մատուցման առնվազն երկու գործառույթ** (օրինակ, հյուրանոցային և տրանսպորտային տեղափոխման ծառայությունները) **ընդգրկող** համալիր է, որով մատուցված ծառայությունների տևողությունը պետք է գերազանցի 24 ժամը կամ ներառի առնվազն մեկ գիշերակաց: Այսինքն՝ որպեսզի զբոսաշրջային գործունեություն իրականացնող սուբյեկտի մոտ ծագի զբոսաշրջային փաթեթ կազմելու պարտականություն, անհրաժեշտ է, որ նրա կողմից միաժամանակ՝ մեկ գործարքից բխող իրավահարաբերությունների շրջանակներում, մատուցվեն առնվազն երկու զբոսաշրջային ծառայություններ՝ 24 ժամը

գերազանցող տևողությամբ, կամ դրանք ներառեն առնվազն մեկ գիշերակաց:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախնառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: Հետևաբար Վճռաբեկ դատարանը հարկ է համարել բացահայտել նշված հասկացությունների բովանդակությունը: «Կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց **ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է (տրեն, Նելլի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Համխաչ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԳ/1013/02/13 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):**

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից սպառողին երկու ծառայություն տրամադրելը բավարար չէ այն զբոսաշրջային փաթեթ գնահատելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ միայն այն փաստը, որ ծառայությունները մատուցվել են տարբեր օրեր, դեռևս չի նշանակում, որ առկա չէ զբոսաշրջային փաթեթի ծառայություն: Զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից տրամադրված առնվազն երկու գործառնայթ ընդգրկող համալիրը կլինի մեկ գործարքից բխող իրավահարաբերությունների շրջանակներում կատարված այն դեպքում, երբ գործարքի կողմերն ի սկզբանե ունեցել են առնվազն երկու զբոսաշրջային ծառայությունների մատուցման մտադրություն: Այսինքն՝ տվյալ դեպքում հատկապես կարևորվում է գործարքի սուբյեկտի կողմը՝ իրավահարաբերության մասնակիցների կամքի ուղղվածությունը՝ կապված զբոսաշրջային սուբյեկտի կողմից առնվազն երկու գործառնայթ ընդգրկող զբոսաշրջային ծառայություն մատուցելու, իսկ սպառողի կողմից այն ստանալու հետ: Ընդ որում, այդ դեպքում է ծագում զբոսաշրջային գործունեություն իրականացնող սուբյեկտի՝ մինչև զբոսաշրջիկի հետ պայմանագիր կնքելը նրան զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ժամանման կամ տարանցիկ երկրների անձնագրային, մուտքի և ելքի պահանջների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը:

Ընդհանրացնելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից սպառողին զբոսաշրջային փաթեթի ծառայություն մատուցվում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից մատուցվում է առնվազն երկու գործառնայթ ընդգրկող զբոսաշրջային ծառայությունների համալիր,
2. այդ ծառայությունները մատուցվում են մեկ գործարքից բխող իրավահարաբերությունների շրջանակներում, այսինքն՝ զբոսաշրջային սուբյեկտն ի սկզբանե ունեցել է առնվազն երկու գործառնայթ ընդգրկող զբոսաշրջային ծառայություն մատուցելու, իսկ սպառողը՝ այն ստանալու մտադրություն,
3. զբոսաշրջային ծառայությունները ներառում են առնվազն մեկ գիշերակաց կամ դրանց տևողությունը գերազանցում է 24 ժամը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում կարող է հաստատված համարվել զբոսաշրջային փաթեթի տրամադրման փաստը, հետևաբար նաև զբոսաշրջային գործունեության սուբյեկտի՝ մինչև զբոսաշրջիկի հետ պայմանագիր կնքելը նրան զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ժամանման կամ տարանցիկ երկրների անձնագրային, մուտքի և ելքի պահանջների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու պարտականության առկայությունը:

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը զբոսաշրջային փաթեթ կազմելու դեպքում նախատեսել է գրավոր ձևով պայմանագիր կնքելու պարտականություն, որը պետք է կնքվի գրավոր գործարքին ներկայացվող պահանջներին համապատասխան: Միաժամանակ օրենսդիրը չի նշել, որ այդ գործարքի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Հետևաբար զբոսաշրջային փաթեթ տրամադրելու կապակցությամբ կողմերի միջև գրավոր ձևով կնքված պայմանագրի բացակայությունը չի բացառում փաստացի նման գործարք կնքված լինելու հնարավոր



րությունը, քանի որ այդ դեպքում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կանոնը, այն է՝ կողմերը գրկվում են ի հաստատում գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից՝ այդուհանդերձ պահպանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքը, որոնք ենթակա են գնահատման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կանոններով (*լրևս, mutatis mutandis, Զարուհի Հայրապետյանը և Գայանե Ղազարյանն ընդդեմ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի, երրորդ անձ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակի թիվ ԵԿԳ/0556/02/14 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Վերլուծելով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածը, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածը, 47-րդ հոդվածի 1-ին կետը, 51-րդ հոդվածի 1-ին կետը, 54-րդ հոդվածի 1-ին կետը, 55-րդ հոդվածը, ինչպես նաև վկայակոչելով նախկինում արտահայտված դիրքորոշումները և ընդհանրացնելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ զբոսաշրջային գործունեություն իրականացնող սուբյեկտի կողմից սպառողին միաժամանակ՝ մեկ գործարքից բխող իրավահարաբերությունների շրջանակներում, առնվազն երկու գործառույթ ընդգրկող զբոսաշրջային ծառայություններ են մատուցվում, որոնց տևողությունը գերազանցում է 24 ժամը կամ ներառում է առնվազն մեկ գիշերակաց, ապա զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտավոր է սպառողի հետ կնքել գրավոր պայմանագիր և մինչև պայմանագրի կնքելը նրան տրամադրել զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ժամանակն ամսական կամ տարանցիկ երկրների անձնագրային, մուտքի և ելքի պահանջների վերաբերյալ տեղեկատվություն: Մինչդեռ այն դեպքում, երբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի և սպառողի միջև զբոսաշրջային փաթեթի կապակցությամբ առկա չէ գրավոր ձևով կնքված պայմանագիր, ապա այդպիսի գործարքը փաստացի կնքված լինելը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված ապացույցներով՝ բացառությամբ վկաների ցուցմունքների: Ընդ որում, ի հավաստումն զբոսաշրջային փաթեթի և դրանով պայմանավորված պայմանագրի առկայության՝ օտար լեզվով կազմված փաստաթղթեր ներկայացնելու դեպքում ապացուցման պարտականություն ունեցող դատավարության մասնակցի կողմից պետք է ներկայացվի նաև այդ փաստաթղթի պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանությունը:

**Պահապվություն**

**20.07.2017թ.**

**12. «Մուշ-Մէդա» ՍՊԸ v. «Հալսվերդյան Շինմոնտաժ» ԲԲԸ, քաղ. գործ թիվ ԵՃԲԳ/0520/02/11**

**Էջ 124-144**

**Խնդիր.** Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ հարցադրումներին

- 1) ո՞ր դեպքերում պահատուն իրավունք ունի պահանջել հատուցելու ի պահ հանձնված գույքի արժեքը,
- 2) նման դեպքերում ի՞նչ հանգամանքների հաշվառմամբ և ո՞ր պահի դրությամբ է որոշվում գույքի արժեքը,

3) պայմանագրում հատուկ նշում առկա չլինելու դեպքում ի՞նչ հանգամանքների հաշվառմամբ է որոշվում գույքի՝ ի պահ հանձնելու պահի դրությամբ ունեցած վիճակը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 816-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 817-րդ հոդվածը, 818-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը, 819-րդ հոդվածը, 820-րդ հոդվածի 2-րդ կետը, 822-րդ հոդվածը, 826-րդ հոդվածի 2-րդ կետը, 827-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 828-րդ հոդվածի 1-ին կետը, 829-րդ հոդվածը, անդրադարձել է պահատվության պայմանագրի հիմնական առանձնահատկություններին: Այսպես, պահատվության պայմանագրի կողմերը պահատուն և պահառուն են: Պահատվության պայմանագրի առարկան գույքը պահելու ծառայությունն է, պայմանագրի օբյեկտը՝ ի պահ հանձնված գույքը: Պահատվության օբյեկտ կարող են լինել ինչպես անհատապես, այնպես էլ տեսականիշով որոշվող

իրերը: Պահատվության օբյեկտի տեսակը կարող է պայմանավորել նաև պահատվության տեսակը՝ նկատի ունենալով, որ պահառուն պարտավոր է պահատուին կամ նրա կողմից որպես ստացող նշված անձին վերադարձնել **հենց այն գույքը, որը հանձնված է եղել իրեն ի պահ**, եթե պայմանագրում նախատեսված չէ դիմազրկմամբ պահատվություն: Հետևաբար, որպես կանոն, պահառուն պարտավոր է վերադարձնել հենց նույն գույքը, որը նշված է պահատվության պայմանագրում:

Պահատվության պայմանագրի գործողության ընթացքում պահառուն պարտավոր է ապահովել գույքի ամբողջականությունը, պահպանվածությունը՝ ձեռնարկելով սահմանված համապատասխան միջոցները: Նկատի ունենալով, որ պահատվության դեպքում պահառուին փոխանցվում է միայն տիրապետման իրավագործություն, պահառուն իրավունք չունի օգտվել իրեն ի պահ հանձնված գույքից կամ տնօրինել այն՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Վճարելի դատարանը կարևորել է նաև այն հանգամանքը, որ օրենսդիրն արգելում է պահառուին գույքն ի պահ հանձնել այլ անձի՝ առանց պահատուի համաձայնության, բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 822-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Նշված նորմը նույնպես բխում է ի պահ հանձնված գույքի պահպանվածության ապահովման՝ պահառուի պարտականությունից, ուստի պատահական չէ, որ գույքը երրորդ անձին ի պահ հանձնելու դեպքում սկզբնական պահառուն պատասխանատվություն է կրում երրորդ անձի, որին նա ի պահ է հանձնել գույքը, գործողությունների համար, ինչպես իր սեփականի: Ընդ որում, գույքի կորստի, պակասորդի կամ վնասվածքի համար պահառուն կրում է պատասխանատվություն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածին համապատասխան:

Ամփոփելով վերը նշված վերլուծությունները՝ Վճարելի դատարանն արձանագրել է, որ պահառուի հիմնական պարտականություններն են՝ պահատվության ընթացքում ապահովել գույքի պահպանվածությունը՝ հոգ տանելով դրա մասին, չօգտվելով դրանից, պահատվության պարտականությունը կատարել անձամբ, ինչպես նաև պահատուին վերադարձնել ի պահ հանձնված գույքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված նորմերի վերլուծության արդյունքում անդրադառնալով գույքը վերադարձնելու պահառուի պարտականությանը՝ Վճարելի դատարանն արձանագրել է հետևյալը.

1. որպես կանոն, պահառուն պարտավոր է վերադարձնել նույն գույքը,
2. դիմազրկմամբ պահատվության դեպքում պահառուն պարտավոր է վերադարձնել նույն տեսակի և որակի գույք,
3. պահառուն գույքը պետք է վերադարձնի սկզբնական վիճակով՝ հաշվի առնելով դրա բնական վատթարացումը, նվազելը կամ գույքի բնական հատկությունների հետևանքներով առաջացած այլ փոփոխություններ,
4. ի պահ հանձնված գույքի կորստի, պակասորդի կամ վնասվածքի համար պատասխանատվություն է կրում պահառուն և պարտավոր է պահատուին հատուցել պատճառված վնասները (այդ թվում՝ բաց թողնված օգուտը)՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 409-րդ հոդվածի հաշվառմամբ, եթե պահատվությունը հատուցելի է,
5. անհատույց պահատվության դեպքում գույքի կորստի, պակասորդի կամ վնասվածքի հետևանքով պահատուին պատճառված վնասները հատուցվում են՝

1) գույքի կորստի կամ պակասորդի համար՝ կորած կամ պակասած գույքի արժեքի չափով.

2) գույքի վնասվածքի համար՝ դրա արժեքի նվազած մասի չափով,

6. այն դեպքում, երբ վնասվածքի հետևանքով, որի համար պատասխանատվություն է կրում պահառուն, գույքի որակն այնքան է փոխվել, որ այն չի կարող օգտագործվել իր սկզբնական նշանակությանը համապատասխան, պահատուին իրավունք ունի հրաժարվել գույքից և պահառուից պահանջել այդ գույքի արժեքը, ինչպես նաև հատուցելու այլ վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պահատվության պայմանագրով:

Վերոշարադրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում անդրադառնալով նշված վերջին իրավիճակին՝ Վճարելի դատարանը հարկ է համարել արձանագրել, որ որպես պարտավորությունը բնեղենով կատարելու սկզբունքի դրսևորում (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 412-րդ հոդված)՝ ի պահ հանձնված գույքը միշտ պետք է վերադարձվի պահատուին՝ անհրաժեշտության դեպքում հատուցելով պատճառված վնասները: Այդուհանդերձ, օրենսդիրը բացառություն է նախատեսել այն դեպքի համար, երբ

գույքը վնասվածքի հետևանքով այնքան է փոխվել, որ չի կարող օգտագործվել իր սկզբնական նշանակությանը համապատասխան:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ այն դեպքերին, երբ պահատվության պայմանագրով ի պահ հանձնված գույքը վերադարձնելու պահի դրությամբ գույքն ընդհանրապես առկա չէ կամ վիճելի է գույքի փաստացի առկայությունը:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով օրենսդրի տրամաբանությունը՝ մասնավորապես այն հանգամանքը, որ գույքի կորստի դեպքում վնասները հատուցվում են ամսվազն գույքի արժեքի չափով (հատուցելի պահատվության դեպքում կարող են հատուցվել նաև այլ վնասներ), ինչպես նաև հաշվի առնելով պահատուին տրված իրավունքը՝ հրաժարվել գույքից, գտնում է, որ ոչ միայն այն դեպքերում, երբ գույքը փաստացի առկա է, սակայն էականորեն վնասված է, կամ ապացուցված է, որ պահառուի վարքագիծը հանգեցրել է գույքի կորստի, այլ նաև այն դեպքերում, երբ վիճելի է մնում ի պահ հանձնված գույքի՝ վերադարձնելու պարտականության ծագման պահի դրությամբ փաստացի գոյությունը, ապա պահատուն իրավունք ունի նաև նշված դեպքում հրաժարվել գույքը վերադարձնելու պահանջից և պահանջել հատուցել գույքի վնասները՝ մասնավորապես գույքի արժեքը:

Անդրադառնալով գույքի արժեքը որոշելու հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

**ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 827-րդ հոդվածին համապատասխան նույն վիճակով** գույքը վերադարձնելու պահառուի պարտականությունը կատարած լինելը գնահատելիս հաշվի է առնվում գույքի **բնականոն վառթարացումը, նվազելը կամ գույքի բնական հատկությունների հետևանքներով առաջացած այլ փոփոխություններ:**

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 820-րդ և 826-րդ հոդվածները պահառուին իրավունք են վերապահում վաճառել ի պահ հանձնված գույքը համապատասխան հանգամանքներն ի հայտ գալու դեպքում **պահատվության վայրում գոյություն ունեցող գնով:** Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պահատուին գույքի արժեքը հատուցելիս պետք է հաշվի առնվի նման պահանջի պահին, այլ ոչ թե պայմանագրի կնքման պահին գոյություն ունեցող գինը՝ նկատի ունենալով, որ եթե օրինակ պահառուն բարեխղճորեն կատարեր իր պարտականությունը, գույքն ամբողջական վիճակով վերադարձներ պահատուին, ապա պահատուի կողմից այդ գույքն օտարելիս պետք է հիմք ընդունվեր հենց տվյալ պահի դրությամբ գույքի շուկայական արժեքը: Ուստի, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն դեպքում, երբ պահատուն իրավունք ունի հրաժարվել գույքն ընդունելուց, նրան պետք է հատուցվի գույքի արժեքը պահատուի պահանջի պահի դրությամբ, եթե իհարկե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ գույքի վիճակի՝ մասնավորապես նախկինում օգտագործված լինելու կամ չլինելու վերաբերյալ վեճ առաջանալու այն դեպքերին, երբ հստակ չէ գույքի նախնական վիճակը: Նման վեճ հնարավոր է այն դեպքում, երբ պահատվության պայմանագրում նշում չկա գույքի անհատականացնող տվյալների՝ մասնավորապես գույքի վիճակի մասին:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե պայմանագրով չի անհատականացվել գույքը, այդ թվում՝ չի նշվել գույքի նախնական վիճակը, ինչպես նաև այն հնարավոր չի որոշել պայմանագրի մեկնաբանման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով սահմանված կանոններից ելնելով, ապա պետք է գործի ի պահ հանձնված գույքը պատշաճ վիճակում գտնված լինելու կանխավարկածը՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նաև այլ պայմանագրային հարաբերությունները կարգավորող նորմերում առկա այն տրամաբանությունը, որ գույքը մյուս կողմին հանձնվում է պատշաճ վիճակում (օրինակ՝ վարձատու, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 613-րդ հոդվածի համաձայն, պարտավոր է գույքը տրամադրել գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում, նույն օրենսգրքի 665-րդ հոդվածի համաձայն՝ բնակության համար պիտանի վիճակում, նույն օրենսգրքի 689-րդ հոդվածի համաձայն՝ փոխատուն նույնպես պարտավոր է գույքը տրամադրել գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում և այլն): Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր պայմանագրի դեպքում գույքի վիճակի պատշաճությունը գնահատվում է տվյալ պայմանագրի տեսակի առանձնահատկության հաշվառմամբ: Ընդ որում, եթե գույքի հանձնելու վերաբերյալ այլ պայմանագրերի դեպքում գույքի պատշաճ վիճակը պայմանավորված է նաև նրանով, որ որպես կանոն մյուս կողմին փոխանցվում է նաև գույքն օգտագործելու իրավագործությունը,

պահատվության դեպքում գույքի վիճակի պատշաճությունը կարևորվում է հետագայում գույքը վերադարձնելիս վեճ առաջանալու հանգամանքով:

Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է նաև ի պահ հանձնված գույքը պահպանելու պարտականության և չպահպանելու հետևանքների վերաբերյալ սույն որոշմամբ արդեն իսկ քննարկված հստակ կարգավորումների առկայությամբ՝ նկատի ունենալով, որ օրենսդիրը կարևորել է պահառուի՝ ի պահ հանձնված գույքի պահպանվածության պարտականության կատարումը պահատվության պայմանագրի գործողության ընթացքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պահատվության պայմանագրում այլ բան նախատեսված չլինելու պարագայում գործում է ի պահ հանձնված գույքն ի սկզբանե պատշաճ վիճակում հանձնված լինելու կանխավարկածը:

### Փոխառություն

27.12.2017թ.

**13. Ժիրայր Հակոբյան v. Ռուզաննա Վարդանյան, քաղ. գործ թիվ ԵՁ ԵԷԳ/0313/02/16**

Էջ  
145-152

*Խնդիր.* Արդյո՞ք միայն քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումները կամ այդ ընթացքում անձանց տված բացատրությունները պահանջվող գումարի հանձնման վերաբերյալ այլ վերաբերելի գրավոր ապացույցի բացակայության պայմաններում կարող են դիտվել բավարար փոխառության իրավահարաբերության առկայության փաստը հաստատված որակելու համար:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածը, 290-րդ հոդվածի 1-ին կետը, 294-րդ հոդվածի 1-ին կետը, 298-րդ հոդվածի 2-րդ կետը, 448-րդ հոդվածի 1-ին կետը, 449-րդ հոդվածի 2-րդ կետը, 877-րդ հոդվածի 1-ին կետը, 878-րդ հոդվածը, ինչպես նաև նախկինում արտահայտած իր դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով փոխառության իրավահարաբերությունների առանձնահատկությունները, ինչպես նաև դատական պրակտիկայի միտումները, կարևորել է այն խնդրի պարզաբանումը, թե արդյո՞ք միայն քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումները բավարար են փոխառության իրավահարաբերության ծագումը հաստատված համարելու համար:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ ինչպես ցանկացած պայմանագիր, փոխառության պայմանագիրը ևս կամային ակտ է: Այսինքն՝ փոխառության իրավահարաբերության առաջացման համար անհրաժեշտ է, որ պայմանագրի կողմերը՝ փոխառուն և փոխատուն, հստակորեն դրսևորեն իրենց կամահայտնությունը փոխառության պայմանագիր կնքելու վերաբերյալ, և այդ կամքն ուղղված լինի փոխատուի դեպքում՝ փոխառուին դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք հանձնելուն, իսկ փոխառուի դեպքում՝ փոխատուից ստացված գումարը կամ փոխառուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք վերադարձնելուն: Նման կամքի դրսևորումը և դրա իրականացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների իրականացումը, սակայն, դեռևս բավարար չէ փոխառության իրավահարաբերության ծագումն արձանագրելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է, որ կողմերի կամահայտնությունն ամրապնդված և ձևակերպված լինի ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ գործարքի տվյալ տեսակի համար սահմանված կարգով: Ընդ որում, քանի որ կամահայտնությունը կամքի արտահայտման արտաքին դրսևորումն է, հաշվի առնելով փոխառության իրավահարաբերությունների առանձնահատկությունները, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ժամանակագրական առումով դրանք պետք է համընկնեն: Այսպես, փոխառության պայմանագիրը ռեալ գործարք է, այսինքն՝ կնքված է համարվում դրամը կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույքը հանձնելու պահից, ինչը նշանակում է, որ մինչ փոխառության առարկայի փոխանցումը կամ դրանից անմիջապես հետո արդեն իսկ օրենքով սահմանված ձևով պետք է ձևակերպված լինի փոխառության պայմանագիրը կամ փոխառության առարկայի փոխանցումը հավաստող գրավոր այլ փաստաթուղթ: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նաև օրենսդրական այն կարգավորմամբ, համաձայն որի՝ փոխառության պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է այդ պայմանագրի անվավերության, նման պայմանագիրն առոչինչ է:

Փոխառության իրավահարաբերությունների առանձնահատկությունների վերաբերյալ արտահայտված դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումներով, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով կամ ցուցմունքներով չի կարող հիմնավորվել փոխառության իրավահարաբերության ծագման հանգամանքը, քանի որ նախ՝ նման ապացույցները ժամանակագրական առումով ձևավորվում են փոխառության առարկայի ենթադրաբար փոխանցումից ավելի ուշ, հետևաբար գործարքի գրավոր ձևը պահպանված չլինելու հիմքով ենթադրյալ փոխառության գործարքն առաջին չէ: Բացի այդ, դրանք կամային ակտ որակվել չեն կարող, քանի որ ուղղված չեն կողմերի համար փոխադարձ իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, այլ քրեադատավարական վարույթի շրջանակներում դրանով կանխորոշված նպատակների իրականացմանն ուղղված գործողություններ են:

Վերոգրյալ ընդհանուր կանոնից բացառություն կարող է կազմել այն դեպքը, երբ ենթադրյալ փոխառության երկու կողմերն էլ հետաքննության կամ նախաքննության ընթացքում իրենց տված բացատրություններով կամ ցուցմունքներով ընդունել են միմյանց միջև փոխառության իրավահարաբերության գոյության փաստը և հետագայում այդ իրավահարաբերությունից բխող վեճով հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում տվյալ փաստը չի վիճարկվել ենթադրյալ փոխառուի կողմից կամ չի հերքվել այդ գործի շրջանակներում ձեռք բերված ապացույցներով:

**Վարկ**

**27.12.2017թ.**

**14. «Անելիք Բանկ» ՓԲԸ v. Արամ Աղաբեկյան, քաղ. գործ թիվ ԵԱԲԳ/2723/02/15 Էջ 153-160**

**Խնդիր.** Արդյո՞ք վարկատուի կողմից սպառողական վարկի փոխանցումը մատակարարին վարկի գումարի տրամադրման պարտավորության պատշաճ կատարում չէ վարկառուի հանդեպ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետը, 877-րդ հոդվածի 1-ին կետը, 882-րդ հոդվածի 1-ին կետը, 887-րդ հոդվածի 1-ին կետը, արձանագել է, որ վարկային պայմանագրով վարկատուն ստանձնում է վարկառուին դրամական միջոցներ տրամադրելու պարտականություն, ինչպես նաև ձեռք է բերում իրավունք՝ պահանջելու հետ վերադարձնել այդ դրամական միջոցները և տոկոսներ վճարել դրանցից, իսկ վարկառուն, իր հերթին, ձեռք է բերում այդ միջոցներն ստանալու իրավունք և ստանձնում վարկատուին տոկոսներ վճարելու ու ստացված միջոցները վերադարձնելու պարտականություն: Միաժամանակ, նշված հոդվածով ամրագրվել է, որ վարկային հարաբերությունների նկատմամբ փոխառության հարաբերությունները կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը կիրառելի են, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող նորմերով և բուն վարկային պայմանագրով: Այսինքն՝ վարկային հարաբերությունները կարգավորելու առումով օրենսդիրը նախապատվությունը տվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող նորմերին և վարկային պայմանագրին, որոնցով այլ բան նախատեսված չլինելու դեպքում միայն տվյալ հարաբերությունների նկատմամբ կարող են գործել փոխառության հարաբերությունները կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ վարկային պայմանագիրը, որպես փոխառության պայմանագրի տեսակ, այդուհանդերձ, որոշակի հատկանիշներով տարբերվում է փոխառության պայմանագրից: Մասնավորապես, եթե փոխառության պայմանագրի դեպքում փոխառության առարկան պետք է փաստացի հանձնված լինի **փոխառուին**, ապա վարկային պայմանագրի դեպքում վարկի տրամադրման պարտականությունը համարվում է կատարված վարկի գումարն ինչպես անմիջականորեն վարկառուին, այնպես էլ այն պայմանագրով նախատեսված մատակարարին հանձնվելու, այն է՝ վարկառուի որոշակի կարիքների բավարարման նպատակով նրա օգտագործման համար հասանելի դառնալու պարագայում: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ-ում 23.01.2009 թվականից գործում է քաղաքացիական իրավունքի նորմեր

պարունակող «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքը: Նշված օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները: 1) **կրեդիտ**՝ պարտավորության տարածակետ վճարման իրավունք, վարկ, փոխառություն, ֆինանսական վարձակալություն (լիզինգ) կամ որևէ այլ համաձայնություն կամ պայմանավորվածություն, որի նպատակը ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերումը ֆինանսավորելն է: 2) **կրեդիտավորող**՝ բանկ, օտարերկրյա բանկի մասնաճյուղ, վարկային կազմակերպություն կամ գրավատուն, որը տրամադրում է կրեդիտ: 3) **կրեդիտավորման պայմանագիր**՝ գործարք, որով կրեդիտավորողն սպառողին տրամադրում կամ խոստանում է տրամադրել կրեդիտ: 4) **մատակարար**՝ ապրանքները վաճառող կամ ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող ֆիզիկական կամ իրավաբանական անձ. ... 6) **սպառող** (այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության կրեդիտ ստացող)՝ բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության կրեդիտների), ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման նպատակով կրեդիտ ստացող քաղաքացի...:

Վերոշարադրյալից հետևում է, որ «կրեդիտ» հասկացությունը, ի թիվս այլնի, սահմանվում է որպես վարկ, որի նպատակը սպառողի կողմից ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերումը ֆինանսավորելն է: Ընդ որում, սպառողական կրեդիտին կամ սպառողական վարկին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝

1) հատուկ նպատակի առկայությունը, ինչը նշանակում է, որ վարկի գումարը փոխառուի կողմից կարող է օգտագործվել միայն այնպիսի ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերման համար, որոնք անհրաժեշտ են իր անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար, կապված չեն ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ,

2) հատուկ սուբյեկտային կազմը, մասնավորապես՝ որպես փոխառու-սպառող կարող են հանդես գալ միայն ֆիզիկական անձինք:

Փաստորեն, սպառողական վարկը ձեռք բերված ապրանքի, ծառայության կամ աշխատանքի դիմաց վճարման միջոց է և որպես այդպիսին կարող է անմիջականորեն փոխանցվել նաև վկայակոչված օրենքի իմաստով մատակարար հանդիսացող սուբյեկտին (օրինակ՝ երբ սպառողական վարկը տրամադրվում է արդեն իսկ ընտրված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար և մատակարարը վարկի տրամադրման պահին հայտնի է): Ավելին, ձևավորված գործարար շրջանառության սովորույթը վկայում է, որ սպառողական վարկի ձևակերպումը գերակշռող դեպքերում իրականացվում է մատակարարից ապրանքի, ծառայության կամ աշխատանքի ձեռքբերման պահին, իսկ վարկի գումարը փոխանցվում է մատակարարին, այդուհանդերձ, անմիջականորեն վարկային հարաբերություններ առաջացնելով վարկատուի և սպառողի միջև:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ վարկի գումարը, որպես սպառողական կրեդիտ, փոխանցվել է մատակարարին, վարկատուի՝ վարկ տրամադրելու պարտականությունը համարվում է պատշաճ կարգով կատարված, իսկ սպառողը՝ փոխառուն, կրում է դրանից բխող իրավունքները և պարտականությունները: Մասնավորապես՝ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն իրավունք է վերապահում սպառողին պահանջները ներկայացնելու անմիջապես կրեդիտավորողին այն դեպքում, երբ կրեդիտավորման պայմանագրով կամ այդ պայմանագրի հիման վրա տրամադրված կրեդիտի միջոցով գնված ապրանքները, ծառայությունները կամ աշխատանքները չեն ստացվել (մատուցվել) կամ մասնակի են ստացվել (մատուցվել) կամ չեն համապատասխանում օրենքով և (կամ) ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների գնումն ապահովող գործարքով սահմանված պահանջներին, կամ նույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սպառողն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու կրեդիտավորման պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ): Սպառողի կողմից վերը նշված իրավունքները չիրացվելու դեպքում վերջինս կրում է վարկի գումարը և դրան հաշվեգրված տոկոսները վերադարձնելու՝ փոխառուի հիմնական պարտականությունը:

**Ապահովագրություն**

07.04.2017թ.

**15. «Ինսեկորանկ» ՓԲԸ v. Մարինե Ալավերդյան, քաղ. գործ թիվ ԼԳ/0647/02/13**

Էջ  
**161-171**

**Խնդիր.** Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը անդրադարձել է այն հարցադրմանը, թե վարկային հարաբերություններից ծագող ռիսկերի ապահովագրության դեպքում վարկատուի ունեցած պահանջն ինչ պայմանների առկայության դեպքում կարող է անցնել ապահովագրական ընկերությանը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին կետը, 402-րդ հոդվածի 4-րդ կետը, 887-րդ հոդվածի 1-ին կետը, 983-րդ հոդվածի 1-ին կետը, 996-րդ հոդվածի 1-3-րդ կետը, 983-րդ հոդվածի 9-րդ կետը, 1021-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ նշել է, որ վարկային պայմանագրով վարկատուն ստանձնում է վարկառուին դրամական միջոցներ տրամադրելու պարտականություն, ինչպես նաև ձեռք է բերում իրավունք՝ պահանջելու հետ վերադարձնել այդ դրամական միջոցները և տոկոսներ վճարել դրանցից, իսկ վարկառուն, իր հերթին, ձեռք է բերում այդ միջոցները ստանալու իրավունք և ստանձնում վարկատուին տոկոսներ վճարելու ու ստացված միջոցները վերադարձնելու պարտականություն (լրե՛ս, «ՓԼԵՅ ԳՈՈՒԴ» ՍՊԸ-ն ընդդեմ «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/4072/02/14 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարկային պայմանագրից բխող պահանջների դեպքում ապացուցման առարկայի մեջ է մտնում վարկային հարաբերությունների (վարկային պայմանագրի) առկայությունը, վարկատուի կողմից վարկի գումարը փոխառուին տրամադրած լինելը, փոխառուի կողմից պարտավորության կետանց թույլ տալը, ինչպես նաև փոխառուի մեղքի առկայությունը, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի ուժով ենթադրվում է, եթե փոխառուն չապացուցի իր մեղքի բացակայությունը:

Նկատի ունենալով, որ վարկային պայմանագրով որպես վարկատու հանդես են գալիս բանկերը և այլ վարկային կազմակերպությունները, որոնք ռիսկային ֆինանսական գործունեություն իրականացնող սուբյեկտներ են, վերջիններս հնարավորություն ունեն ապահովագրելու վարկային հարաբերություններից ծագող որոշակի ռիսկեր: Ընդ որում, որոշ դեպքերում ապահովագրման պահանջը սահմանվում է օրենքով: Այսպես, օրինակ, այն դեպքում, երբ վարկային պայմանագրի կատարումն ապահովված է գրավով, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գրավատուն կամ գրավառուն, կախված այն բանից, թե նրանցից ում մոտ է գտնվում գրավ դրված գույքը, պարտավոր է գրավ դրված գույքն ապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից: Այնիսն՝ վարկային հարաբերությունների շրջանակում հնարավոր է ապահովագրության հարաբերությունների ծագում:

Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վարկային հարաբերություններից ծագող որոշակի ռիսկեր ապահովագրելիս ապահովագրական հատուցում վճարելուց հետո վարկային հարաբերություններից բխող պահանջն օրենքի ուժով անցնում է ապահովագրական ընկերությանը: Ընդ որում, պահանջի զիջման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը (եթե այլ բան նախատեսված չլինի ապահովագրության պայմանագրով):

1. ապահովագրության հարաբերությունների առկայությունը, ընդ որում, նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 996-րդ հոդվածի պահանջը՝ տվյալ փաստն ապացուցող **միակ թույլատրելի ապացույցն** ապահովագրության պայմանագիրն է կամ ապահովագրական վկայագիրը, եթե վերջինս պարունակում է ապահովագրության պայմանագրի՝ օրենքով սահմանված բոլոր էական պայմանները,

2. ապահովագրական պատահարի առկայությունը. ապահովագրական պատահարը պետք է ծագի ապահովագրական պայմանագրով նախատեսված իրավաբանական փաստերի ուժով, որպիսի պարագայում ապահովագրողը պարտավոր է ապահովադրին կամ շահառուին վճարել ապահովագրական հատուցում,

3. ապահովագրական հատուցում վճարած լինելն ապահովադրին կամ շահառուին:

20.07.2017թ.

**16. «Ռուսգոստորախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ v. Էդգար և Վաղարշակ Սաղաթելյաններ, քաղ. գործ թիվ ԵՄԴ/3378/02/15**

Էջ  
172-179

**Խնդիր.** Արդյո՞ք ապահովագրական պատահարի մասին սահմանված ժամկետում ապահովագրական ընկերությանը չտեղեկացնելու հիմքով ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի (սուբրոգացիա) իրավունքն առկա է այն դեպքում, երբ գործով չի ապացուցվում ապահովագրական պատահարի հստակ ժամանակը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1017-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությունը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետը, նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետը՝ Վճռաբեկ դատարանը *«Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ն ընդդեմ Վաչագան Խաչատրյանի և Անդրանիկ Գուլբանյանի գործով* գտել է, որ վնաս պատճառած անձը կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը պարտականություն են կրում ապահովագրական պատահարի տեղի ունենալն իրենց հայտնի դառնալուց հետո **անհապաղ (ողջամիտ ժամկետում)** տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին: Նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանված բացառություններին (*տե՛ս, «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ն ընդդեմ Վաչագան Խաչատրյանի և Անդրանիկ Գուլբանյանի թիվ ՏԳ3/0222/02/13 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Ջարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքի ծագման հիմքերից մեկն էլ այն է, երբ ապահովագրական ընկերությունը պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով չի տեղեկացվում պատահարի մասին: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման իրավունքի առկայությունը գնահատելիս նախ անհրաժեշտ է պարզել ապահովագրական ընկերությանը պատահարի մասին տեղեկացնելու փաստը, այսինքն՝ արդյո՞ք ապահովագրական ընկերությունն ընդհանրապես տեղեկացվել է պատահարի մասին: Այնուհետև գնահատման է ենթակա տեղեկացման ժամանակի և կարգի համապատասխանությունը ապահովագրական պայմանագրով սահմանված ժամանակին և կարգին: Այն դեպքում, երբ պատահարի մասին ծանուցումը եղել է այլ պայմաններում, քան սահմանված է պայմանագրով, մասնավորապես՝ պատահարի մասին ապահովագրողը ծանուցվել է ավելի ուշ, քան սահմանված է պայմանագրով, ապա գնահատման է ենթակա ծանուցման ժամկետի ողջամտությունը՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համատեքստում՝ *«Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ն ընդդեմ Վաչագան Խաչատրյանի և Անդրանիկ Գուլբանյանի գործով* Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ ծանուցման ժամկետի անհապաղությունը (ողջամտությունը) պարզելու համար էական նշանակություն ունի պատահարի հստակ ժամանակահատվածն այն դեպքերում, երբ պատահարի և տեղեկացման ժամանակահատվածի միջև տևողությունը երկար չէ: Այլ կերպ ասած՝ եթե պատահարից հետո մինչև ապահովագրական ընկերությանը տեղեկացնելը չի անցել շատ երկար ժամանակ (օրինակ՝ օրեր), ապա միայն պատահարի ժամանակահատվածի հստակ լինելու պայմաններում է հնարավոր եզրահանգում անել ծանուցման ժամկետի ողջամտության մասին (օրինակ՝ եթե ծանուցումը կատարվել է ենթադրաբար 1-1,5 ժամվա ընթացքում): Այսինքն՝ որքան կարճատև է պատահարի մասին ապահովագրական ընկերությանը տեղեկացնելու հապաղումը, այնքան ավելի է կարևորվում պատահարի ժամանակի հստակությունը:



20.07.2017թ.

**17. «Նաիրի Ինչորանս» ապահովագրական ՍՊԸ v. Արմեն Ստեփանյան, քաղ. գործ թիվ ԿԳ1/1999/02/14**

Էջ  
180-187

**Խնդիր.** Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին անհապաղ (ողջամիտ ժամկետում) տեղեկացնելու առանձնահատկություններին՝ վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1017-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությունը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետը, նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վնաս պատճառած անձը կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը պարտականություն են կրում ապահովագրական պատահարի տեղի ունենալի իրենց հայտնի դառնալուց հետո **անհապաղ (ողջամիտ ժամկետում)** տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, հարկ համարելով անդրադառնալ օրենսդրի կողմից նախատեսված՝ ապահովագրական ընկերությանն ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու պարտականության կատարման «անհապաղության» եզրույթի ընկալմանն ու մեկնաբանմանը, արձանագրել է, որ այն ունի հետևյալ բովանդակությունը. «անհապաղ» նշանակում է առանց հապաղելու, անմիջապես, նույն պահին, հնարավորինս արագ, առավելագույնս սեղմ ժամկետում: Մինևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը, սահմանելով «անհապաղության» եզրույթը, այն չի դիտել որպես բացարձակ պայման, քանի որ իրավանորմի հետագա շարադրանքում կիրառել է նաև «ողջամիտ ժամկետում» հասկացությունը: Իսկ ողջամիտ կարող է գնահատվել այն ժամանակահատվածը, որն **օբյեկտիվորեն անհրաժեշտ է որևէ կոնկրետ գործողության իրականացման համար:** Հետևաբար յուրաքանչյուր դեպքում «անհապաղության» պարտադիր պայմանի գնահատումն իրականացնելիս դատարանները ոչ միայն պետք է հաշվի առնեն ծանուցման անմիջապես, նույն պահին իրականացված լինելու փաստը, այլև՝ դրա իրականացման՝ առաջին իսկ օբյեկտիվ, **արդարացված հնարավորությունը:**

Ընդ որում, եթե տեղի է ունենում ապահովագրական պատահար, ապա ապահովադրին պատճառված վնասից բխող նրա կամ շահառուի պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մատով: Սակայն, ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք է ձեռք բերում վնաս պատճառած անձի և (կամ) վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ, եթե ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով, այսինքն՝ անհապաղ (ողջամիտ ժամկետում) կամ օբյեկտիվորեն առաջին իսկ հնարավորության ամբողջական պարագայում) ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ ապահովագրական պատահարի մասին հայտնելու պարտականության կատարման հարցում բացառություններ են համարվում հետևյալ դեպքերը.

1. երբ ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պատահարի հետևանքով հայտնվել են **անգիտակից վիճակում,**
2. հայտնվել են այնպիսի իրավիճակում, որ **անհնարին էր** ապահովագրական ընկերությանը պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելը,
3. ապահովադիրը **տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել** ապահովագրական պատահարի մասին՝ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի կողմից նրան չտեղեկացնելու կամ այլ պատճառով (*պեն,* «Արմենիա Ինչորանս» *ապահովագրական ՍՊԸ-ն ընդդեմ Վաչագան Խաչատրյանի և Անդրանիկ Գույրանյանի թիվ S՝Գ3/0222/02/13 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Վերահաստատելով և զարգացնելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վնաս պատճառած անձը կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը թեև պարտականություն են կրում ապահովագրական պատահարի տեղի ունենալն իրենց հայտնի դառնալուց հետո **անհապաղ (ողջամիտ ժամկետում)** տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին, այնուամենայնիվ **առաջին իսկ հնարավորության դեպքում ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու հնարավորությունը կարող է պայմանավորվել մի շարք հանգամանքներով, քանի որ ապահովագրական պատահարի հետևանքով կարող է ստեղծվել այնպիսի իրադրություն, որի ազդեցությունն օբյեկտիվորեն կարող է հիմք հանդիսանալ վնաս պատճառած անձի կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ համար հապաղելու օրենքով և ապահովագրության պայմանագրով ստանձնած պարտավորությունը կատարելուց:** Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում գնահատման պետք է արժանացնել ոչ միայն ապահովագրողին տեղեկացնելու անհապաղ հնարավորությունը, այլ նաև առաջին իսկ **արդարացված** հնարավորությունը:

Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ ապահովագրի կողմից **որոշակի միջավայրում հայտնվելը (օրինակ՝ պատահարի պատճառով կողմերի միջև հնարավոր վեճ)** օբյեկտիվորեն կարող է ազդել ապահովագրի գործողությունների վրա՝ ըստ էության երկարացնելով ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին անհապաղ (ողջամիտ ժամկետում) տեղեկացնելու ողջամիտ ժամանակահատվածը: Տեղեկացման հապաղումը ողջամտորեն արդարացված կարող է համարվել նաև այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, ինչպիսիք են՝ պատահարի բարդ մեխանիզմը, պատահարի գիշերային ժամը, անմարդաբնակ վայրը և (կամ) պատահարի մասնակիցների համար կապի միջոցների անհասանելիությունը, ինչպես նաև ցանկացած այլ օբյեկտիվ հանգամանքի առկայության դեպքում, որը թույլ կտա առանց ողջամիտ կասկածների եզրակացնել, որ նույնպիսի իրավիճակում հայտնված յուրաքանչյուր բարեխիղճ անձ տեղեկացման պարտավորությունը կկատարեր նույն կամ գրեթե նույն հապաղմամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ անկախ պատահարի կոնկրետ հանգամանքներից՝ ցանկացած պատահարի մասին տեղեկացման՝ որոշակի տևողությամբ հապաղումը **ողջամտորեն արդարացված** և անհապաղ տեղեկացմանը համարժեք համարելու համար բավարար հիմք կարող են հանդիսանալ նաև այն դեպքերը, երբ պատահարի հետևանքով ստացվել են մարմնական վնասվածքներ, որոնց հետևանքով թեև անձը չի հայտնվել անգիտակից վիճակում, սակայն ստեղծվել է օբյեկտիվ իրավիճակ, որն անհնար է դարձրել ապահովագրական ընկերությանը պատահարի մասին տեղեկացնելը: Ընդ որում, վնասվածքները կարող են լինել նաև այնպիսիսին, որոնց առկայությունը կարող է չբացահայտվել սովորական արտաքին գննությամբ (օրինակ՝ ներքին օրգանների վնասվածքների դեպքում): Բացի այդ, պատահարի մասնակցի մոտ կարող է ծագել լրացուցիչ միջամտություն կիրառելու կամ այդպիսի միջամտության աղբյուրներ որոնելու անհրաժեշտություն (օրինակ՝ ավտոմեքենաների բախման հետևանքով ավելի մեծ ծավալի վնասների ծագումը կանխելու համար միջոցներ ձեռնարկելը՝ մասնավորապես հնարավոր հրդեհը կանխելու նպատակով), որպիսի գործոնները իրավիճակով թելադրված լրացուցիչ գործողություններ կատարելու (այդ թվում՝ ապահովագրողից առաջ այլ անձանց զանգահարելու) անհրաժեշտություն են առաջացնում: Ուստի որոշակի **ողջամիտ տևողությամբ հապաղումը** ցանկացած պատահարի դեպքում պետք է համարել ոչ միայն բնական, այլև անվիճարկելի՝ պատահարի մասնակիցների իրավունքների անհարկի սահմանափակումներն ու հնարավոր վնասները բացառելու կամ առնվազն նվազագույնի հասցնելու նպատակով՝ յուրաքանչյուր դեպքում գնահատման արժանացնելով պատահարի մասին ապահովագրողին տեղեկացնելու՝ **ողջամիտ ժամկետում արդարացված հնարավորությունը:**

20.07.2017թ.

18. «ՌԵՍՈ» ԱՓՖԸ v. Վարդգես Սարգսյան և Հակոբ Հակոբյան, քաղ. գործ թիվ ԱՐԱԿ/0072/02/15

Էջ 188-198

*Խնդիր.* Արդյո՞ք ապահովագրական ընկերությունը վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի լիազոր տիրապետողի նկատմամբ ունի հետադարձ պահանջի իրավունք այն հիմքով, որ վերջինս ապահովագրական պատահարի պահին չի ունեցել

ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք, եթե ապահովագրական ընկերությունն ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս տեղեկացված է եղել լիազոր տիրապետողի՝ տվյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու համապատասխան կարգ չունենալու մասին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-ին կետը, 983<sup>1</sup>-րդ հոդվածի 6-րդ կետը, 996-րդ հոդվածի 1-ին կետը, 998-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը, 1021-րդ հոդվածի 1-ին կետը, 1025-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, 1058-րդ հոդվածի 1-ին կետը, 1072-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետը՝ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ սեփականատերը, իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրելով, փաստացի հնարավորություն է ստանում ապահովագրավճարի դիմաց ապահովագրողին փոխանցելու վնասը (որը կարող է պատճառված լինել ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ ավտոմեքենայի լիազորված տիրապետողի կողմից) հատուցելու իր պարտականությունը: Ապահովագրողն էլ օրենքով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում հնարավորություն ունի հետադարձ պահանջի միջոցով հետ ստանալու իր կողմից կատարված հատուցումը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի իրավակարգավորումը վերաբերում է ավտոմեքենայի սեփականատիրոջ և տուժողի իրավահարաբերություններին՝ մասնավորապես նախատեսելով սեփականատիրոջ պատասխանատվության պայմանները և այն բացառող դեպքերը, ապա «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը վերաբերում է ավտոմեքենայի սեփականատիրոջ և ապահովագրական ընկերության միջև ծագած իրավահարաբերություններին՝ մասնավորապես ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքին:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքը նախատեսված է *վնաս պարձառողի, վնաս պարձառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) և (կամ) օրենքով սահմանված այլ անձանց նկատմամբ*: Վճռաբեկ դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ *սեփականատիրոջ (ապահովադրի)* պատասխանատվության հիմքերը հստակ և սպառիչ սահմանված են նույն հոդվածով, հետևաբար սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ այլ հիմքերով հետադարձ պահանջ չի կարող ներկայացվել: Ուստի այն դեպքերում, երբ ավտոմեքենայի սեփականատերն ապահովագրել է իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը, ապա ապահովագրական ընկերության կողմից տուժող կողմին հատուցում վճարելու դեպքում ապահովագրական ընկերությունը սեփականատիրոջ դեմ հետադարձ պահանջ կարող է ներկայացնել միայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով թվարկված դեպքերում (*տես, «ՌԵՍՈ» պահովագրական ՓԲԸ-ի ընդդեմ «ՍՄԱՐՏՈՎԹ» ՍՊԸ-ի թիվ ԿԳՆ/2015/02/14 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

Վերահաստատելով և զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով հստակ և սպառիչ սահմանված են նաև *վնաս պարձառած անձի* պատասխանատվության հիմքերը: Հետևաբար տուժող կողմին ապահովագրական ընկերության կողմից հատուցում վճարելու դեպքում վերջինս վնաս պատճառած անձի դեմ հետադարձ պահանջ կարող է ներկայացնել բացառապես «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով թվարկված դեպքերում, որոնք վնաս պատճառած անձի դեմ հետադարձ պահանջով դիմելու իրավունք ձեռք բերելու հիմքերի մեջ, *inter alia*, ներառում են ապահովագրական պատահարի պահին վնաս պատճառած անձի՝ ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք չունենալը:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվո-

թյան պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի, իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 13.09.2010 թվականի խմբագրությամբ Բյուրոյի կողմից հաստատված «ԱՊՊԱ պայմանագիր կնքելու ժամանակ պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը» վերտառությամբ թիվ RL 1-007 կանոնների (այսուհետ՝ Թիվ RL 1-007 կանոններ) 1-ին կետի 1-ին ենթակետի, իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 23.09.2011 թվականի խմբագրությամբ Բյուրոյի կողմից հաստատված «ԱՊՊԱ վկայագիրը կազմելու և լրացնելու հրահանգ» վերտառությամբ թիվ RL 1-002 կանոնների (այսուհետ՝ Թիվ RL 1-002 կանոններ) 2-րդ գլխի 18-րդ կետի 1-ին ենթակետի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

13.09.2010 թվականի խմբագրությամբ Թիվ RL 1-007 կանոնների համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու համար ապահովադիրից պահանջվող փաստաթղթերի մեջ նշված է վարորդական իրավունքի վկայականի պատճենը՝ միայն դրա առկայության դեպքում, իսկ լիազորված տիրապետողների վերաբերյալ պահանջվող փաստաթղթերի համար հղում է կատարված ապահովադիրից պահանջվող նույն փաստաթղթերի ցանկին, սակայն վարորդական իրավունքի վկայականի բացակայության կամ այն չներկայացնելու դեպքում վրա հասնող իրավական հետևանքները բացահայտվել են Թիվ RL 1-002 կանոններում: Ընդ որում, այդ կանոնների վերլուծությունից պարզ է դառնում, որ ԱՊՊԱ վկայագրի 6-րդ՝ «Լիազորված տիրապետողներ» դաշտում լրացվող տեղեկատվությանը ներկայացվել են խիստ որոշակի պահանջներ: Մասնավորապես՝ այն դեպքում, երբ լիազորված տիրապետող պետք է համարվեր միայն տվյալ ԱՊՊԱ վկայագրով նախատեսված ապահովադիրը, ապա «Ապահովադիր» դաշտում պարտադիր էր ապահովադրի վարորդական վկայականի վերաբերյալ տվյալները լրացնելը: Ավելին՝ ապահովադրի վարորդական վկայականի վերաբերյալ տեղեկատվության լրացման դեպքում ապահովադիրն ինքնաշխատ կերպով դառնում էր լիազորված տիրապետող, իսկ եթե ապահովադիրն ուներ վարորդական վկայական և չէր ցանկանում հանդես գալ որպես լիազորված տիրապետող, ապա ԱՊՊԱ վկայագրի ապահովադիր դաշտում վարորդական վկայականի վերաբերյալ որևէ նշում չպետք է կատարվեր: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրությամբ որպես լիազորված տիրապետողներ կարող էին հանդես գալ միայն այն անձինք, որոնց վարորդական վկայականի վերաբերյալ տվյալները լրացված էին ԱՊՊԱ վկայագրում:

Այսինքն՝ ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովագրական ընկերությունը ֆիզիկական անձ ապահովադրից պետք է պահանջեր, *inter alia*, վարորդական իրավունքի վկայական՝ միայն առկայության դեպքում, մինչդեռ լիազորված տիրապետողից պարտադիր էր վարորդական իրավունքի վկայականի պատճենը պահանջելը, իսկ վարորդական իրավունքի վկայական չլինելու դեպքում անձը չէր կարող նշվել որպես ավտոտրանսպորտային միջոցի լիազորված տիրապետող: Ավելին, ապահովադիրը ևս չէր կարող հանդես գալ որպես ավտոտրանսպորտային միջոցի լիազորված տիրապետող, եթե չուներ կամ չէր ներկայացրել վարորդական իրավունքի վկայականի պատճենը:

Բացի այդ, իրավահարաբերության ծագման պահին գործող Թիվ RL 1-002 կանոնների բովանդակությունից հետևում է, որ ԱՊՊԱ վկայագրի «Լիազորված տիրապետողներ» դաշտում նշվում էին այն անձանց ցանկը, ում ապահովադիրը նախատեսում էր **վարելու նպատակով** տրամադրել ավտոտրանսպորտային միջոցը: Հետևաբար ավտոտրանսպորտային միջոցը վարելու նպատակով կարող էր տրամադրվել միայն այն անձին, ով օրենքով սահմանված կարգով ուներ տվյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք: Ընդ որում, ըստ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը ծագում է վարորդական իրավունքի վկայականն ստանալու պահից, իսկ վարորդական իրավունքի վկայականում նշվում է, թե որ կարգ(եր)ի ավտոտրանսպորտային միջոց վարելու իրավունք է տրամադրվում տվյալ վկայականով:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրության իմաստով լիազորված տիրապետողներն այն անձինք են, ում ապահովադիրը նախատեսում էր վարելու նպատակով տրամադրել ավտոտրանսպորտային միջոցը, իսկ վարելու իրա-

վունք անձը ձեռք է բերում վարորդական իրավունքի վկայականն ստանալու պահից: Մինևնայն ժամանակ ԱՊՊԱ վկայագրով որպես լիազորված տիրապետողներ կարող էին հանդես գալ միայն այն անձինք, որոնց վարորդական իրավունքի վկայականի վերաբերյալ տվյալները լրացված էին ԱՊՊԱ վկայագրում: Ընդ որում, ԱՊՊԱ վկայագիրը լրացնելիս վարորդական իրավունքի վկայականի վերաբերյալ տվյալները նշելու իրավական պահանջն ինքնանպատակ չէր, և դրա միջոցով ապահովագրական ընկերությունը պետք է ստուգեր այն անձի մոտ ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունքի առկայությունը, ում ապահովագրիչը ցանկանում էր տրամադրել ավտոտրանսպորտային միջոցը՝ վարելու նպատակով: Հետևաբար ապահովագրողը պարտավոր էր ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս հավաստիանալ, որ լիազորված տիրապետողն առնվազն այդ պահի դրությամբ ուներ խնդրո առարկա ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք:

Վճռաբեկ դատարանը, ընդհանրացնելով վերոգրյալը, արձանագրել է, որ ապահովագրական ընկերությունն ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս ավտոտրանսպորտային միջոցի լիազորված տիրապետող պետք է նշեր նրանց, ովքեր պայմանագիրը կնքելիս ունեին տվյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք, իսկ այդ հարցը պարզելու համար ապահովագրական ընկերությունը պետք է պահանջեր նրանց վարորդական իրավունքի վկայականը, որի վերաբերյալ տվյալները պարտադիր կերպով պետք է ներառեր ԱՊՊԱ վկայագրում լրացվող տեղեկատվության մեջ:

Անդրադառնալով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետի կիրառմանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն ղեկավարում, երբ ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովագրողին տրամադրվել են լիազորված տիրապետողի բոլոր այն տվյալները, որոնք անհրաժեշտ և բավարար են պայմանագիր կնքելու հարցը լուծելու համար, այդ թվում՝ լիազորված տիրապետողի վարորդական իրավունքի վկայականը, ապա ապահովագրողը չի կարող հետագայում օգտվել վերոգրյալ ենթակետով նախատեսված սուբրոգացիայի իրավունքից, եթե ապահովագրության պայմանագրում լրացված են լիազորված տիրապետողի վարորդական իրավունքի վկայականի տվյալները, և դրանցից բխում է, որ վերջինս պայմանագրի կնքման պահին չի ունեցել խնդրո առարկա ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք, սակայն ապահովագրողը, անտեսելով այդ հանգամանքը, կնքել է ապահովագրության պայմանագիր՝ օգտվելով դրանից բխող իրավունքներից և ստանձնելով դրանից բխող պարտավորություններ:

**27.12.2017թ.**

**19. «Ռուսոգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ v. Գառնիկ Պողոսյան, քաղ. գործ թիվ ԱԳԿ/3075/02/15**

Էջ  
199-208

**Խնդիր.** Արդյո՞ք վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովագրի) նկատմամբ ապահովագրական ընկերությունն ունի հետադարձ պահանջի իրավունք, եթե ամկա չեն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1025-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, 1058-րդ հոդվածի 1-ին կետը, 1072-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի վերլուծությանը, արձանագրել է, որ տրանսպորտային միջոցով վնաս պատճառելիս այդ միջոցի սեփականատերը միայն այն դեպքում պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրի պատճառած վնասի համար, երբ ապացուցում է, որ

1. առավել վտանգի աղբյուրն օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) փոխանցվել է այլ անձի տիրապետմանը, կամ
2. առավել վտանգի աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով, և միայն այդ դեպքում է, որ տրանսպորտային միջոցի պատճառած վնասի համար պատասխանատվությունը կրում են տրանսպորտային

միջոցն ապօրինի տիրապետած անձինք (տե՛ս, Տիգրան Քոչարյանն ընդդեմ Աշուր և Արթուր Քոչարյանների թիվ ԵԱԲԴ/0610/02/10 քաղաքացիական գործով Վճարել դատարանի 14.10.2011 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ Վճարել դատարանը հավելել է, որ սեփականատերը, իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրելով, փաստացի հնարավորություն է ստանում ապահովագրավճարի դիմաց ապահովագրողին փոխանցելու վնասը (որը կարող է պատճառված լինել ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ ավտոմեքենայի լիազորված տիրապետողի կողմից) հատուցելու իր պարտականությունը: Ապահովագրողն էլ օրենքով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում հնարավորություն ունի հետադարձ պահանջի միջոցով հետ ստանալու իր կողմից կատարված հատուցումը: Ընդ որում, եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի իրավակարգավորումը վերաբերում է ավտոմեքենայի սեփականատիրոջ և տուժողի իրավահարաբերություններին՝ մասնավորապես նախատեսելով սեփականատիրոջ պատասխանատվության պայմանները և այն բացառող դեպքերը, ապա «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը վերաբերում է ավտոմեքենայի սեփականատիրոջ և ապահովագրական ընկերության միջև ծագած իրավահարաբերություններին, մասնավորապես՝ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքին:

Միաժամանակ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճարել դատարանն արձանագրել է, որ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքը նախատեսված է վնաս պատճառողի, վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) և (կամ) օրենքով սահմանված այլ անձանց նկատմամբ: Ընդ որում՝ սեփականատիրոջ (ապահովադրի) պատասխանատվության հիմքերը հստակ և սպառիչ սահմանված են նույն հոդվածով, հետևաբար սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ այլ հիմքերով հետադարձ պահանջ չի կարող ներկայացվել: Ուստի այն դեպքերում, երբ ավտոմեքենայի սեփականատերն ապահովագրել է իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը, ապա ապահովագրական ընկերության կողմից տուժող կողմին հատուցում վճարելու դեպքում ապահովագրական ընկերությունը սեփականատիրոջ դեմ հետադարձ պահանջ կարող է ներկայացնել միայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով թվարկված դեպքերում (տե՛ս, «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ի ընդդեմ «ՍՄԸ-ԲՏՍՈՎԹ» ՍՊԸ-ի և Սարգիս Գրիգորյանի թիվ ԿԴԻ/2015/02/14 քաղաքացիական գործով Վճարել դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 23.09.2011 թվականի խմբագրությամբ Բյուրոյի կողմից հաստատված «ԱԳՊԱ վկայագիրը կազմելու և լրացնելու հրահանգ» վերտառությամբ թիվ RL 1-002 կանոնների 2-րդ գլխի 18-րդ կետի 1-ին ենթակետի վերլուծության արդյունքում Վճարել դատարանը փաստել է, որ ԱԳՊԱ վկայագրի «Լիազորված տիրապետողներ» դաշտում նշվում էր այն անձանց ցանկը, ում ապահովադիրը նախատեսում էր վարելու նպատակով տրամադրել ավտոտրանսպորտային միջոցը: Վերոգրյալից հետևում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրության իմաստով լիազորված տիրապետողներն այն անձինք են, ում ապահովադիրը նախատեսում էր վարելու նպատակով տրամադրել ավտոտրանսպորտային միջոցը:

Միաժամանակ Վճարել դատարանն արձանագրել է, որ ավտոմեքենայի՝ որպես մեխանիկական տրանսպորտային միջոցի, բնականոն շահագործումն ապահովելու նպատակով կարող է առաջանալ այն տեխնիկական սպասարկման և վերանորոգման ներկայացնելու օբյեկտիվ անհրաժեշտություն, ինչն իրականացվում է ավտոմեքենան որոշակի ժամանակահատվածով համապատասխան մասնագետներին հանձնելու եղանակով: Ընդ որում, նման իրավիճակում ավտոմեքենայի հանձնումը որևէ կերպ չի կարող ենթադրել վարելու լիազորության փոխանցում՝ հաշվի առնելով մատուցվող ծառայությունների բնույթը, այն է՝ վերացնել ավտոմեքենայի տեխնիկական անսարքությունները կամ մատուցել նմանատիպ այլ ծառայություններ: Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, իրավահարաբերության ծագման պահին գործող կարգավորման հիմքով լիազորված տիրա-

պետողներն այն անձինք են, ում ապահովադիրը նախատեսում էր վարելու նպատակով տրամադրել ավտոտրանսպորտային միջոցը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող կարգավորմամբ նախատեսված «լիազորված տիրապետողները» և ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ մատուցող մասնագետները, իրենց գործառնությունների նպատակաուղղվածությունից ելնելով, որևէ կերպ չեն կարող նույնացվել, որպիսի պարագայում ավտոմեքենայի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի մոտ չէր կարող ծագել նշված անձանց մասին տեղեկություններ տրամադրելու և նրանց՝ որպես «լիազորված տիրապետողների» ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության վկայագրերում ներառելու պարտականություն, որի չիրականացումն էլ կարող է որակվել որպես «ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» պայմանագիրը կնքելիս ակնհայտ սուտ տեղեկության տրամադրում ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ:

**ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ  
ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

27.12.2017թ.

**20. Մամիկոն Ստեփանյան v. Հայաստանի Հանրապետություն, քաղ. գործ թիվ ԵԿԳ/3296/02/14**

Էջ  
209-229

*Խնդիր.* Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրումներին՝

- 1) արդյո՞ք անձը կարող է պահանջել ապօրինի դատապարտման արդյունքում կրած ոչ նյութական վնասի հատուցում և ի՞նչ պայմանների առկայության դեպքում նման պահանջը կարող է բավարարվել,
- 2) արդյո՞ք արդարացվածը որպես հատուցում կարող է պահանջել ճանապարհա-ծախսի և օրապահիկի գումարները:

*\* Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք փաստաբանին վճարված գումարները Հայաստանի Հանրապետության կողմից ենթակա են փոխհատուցման լրիվ ծավալով:*

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասը, 18-րդ հոդվածի 1-ին մասը, 19-րդ հոդվածի 1-ին մասը, 20-րդ հոդվածի 5-րդ մասը, ՀՀ Սահմանադրության 61-րդ, 62-րդ և 63-րդ հոդվածները, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետը, 13-րդ հոդվածը, Կոնվենցիայի կից թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 5-րդ մասը, 14-րդ հոդվածի 6-րդ մասը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 66-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին կետը, ինչպես նաև անդրադառնալով ՀՀ սահմանադրական դատարանը 14.12.2010 թվականի թիվ ՍԳՌ-929 որոշմանը՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ հարկ է համարել անդրադառնալ *Գոգո* և *Վալի Անոյաններն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության* գործի շրջանակներում արդարացվածի՝ **նյութական վնասների հատուցում պահանջելու իրավունքի** ծագման և իրացման հիմնախնդիրներին: Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ հատուցման ենթակա են միայն այն վնասները, որոնք ապօրինի դատապարտելու հետևանք են: Ընդ որում, համանման իրավական դիրքորոշում արտահայտել է նաև Եվրոպական դատարանը: Եվրոպական դատարանը թեև ճանաչել է ապօրինի դատապարտված անձանց կրած վնասների փոխհատուցման իրավունքը, սակայն միաժամանակ նշել է, որ Կոնվենցիան չի խոչընդոտում պայմանավորված պետություններին հատուցել վնասը, միայն այն դեպքում, երբ տուժած անձը կկարողանա ապացուցել, որ իրեն պատճառված վնասն ուղղակիորեն կապված է իր իրավունքների խախտման հետ (*յրեն, Շիլանն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով Եվրոպական դատարանի 06.10.2005 թվականի վճիռը, կետ 20*):

Վճռաբեկ դատարանը նաև գտել է, որ ապօրինի դատապարտման արդյունքում նյութական վնասի հատուցման իրավունքի իրացման հիմնախնդիրն անհրաժեշտ է դիտարկել նաև իրավունքների չարաշահման արգելքի համաիրավական սկզբունքի լույսի ներքո և արձանագրել է, որ անձին ապօրինի դատապարտման արդյունքում պատճառված նյութական վնասի հատուցման իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացում իրավական պետությունում հնարավոր է միայն այն պայմաններում, եթե չի ապացուցվում, որ այն հանգամանքների ժամանակին բացահայտումը, որոնք հիմնավորել են անձի ապօրինի դատապարտումը, լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ ապօրինի դատապարտման արդյունքում նյութական վնասների հատուցում պահանջելու իրավունքը ծագում է միայն անձի արդարացվածի կարգավիճակ ձեռք բերելուց հետո և համապատասխան սուբյեկտները կարող են իրացնել իրենց վնասի հատուցման իրավունքը, եթե ապացուցեն, որ իրենց վնասը պատճառվել է ապօրինի դատապարտման արդյունքում և չապացուցվի, որ այդ հանգամանքների ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից (տե՛ս, թիվ ԵԿԴ/3025/02/11 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Վերահաստատելով նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներն արդարացվածի կարգավիճակի, պետությունից ապօրինի դատապարտման արդյունքում իր կրած վնասի, մասնավորապես՝ նյութական վնասի հատուցում ստանալու իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացման պայմանների վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը քննարկվող որոշման շրջանակներում հարկ է համարել անդրադառնալ արդարացվածի՝ ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու իրավունքին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ մինչև 19.05.2014 թվականը գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

ՀՀ սահմանադրական դատարանը 05.11.2013 թվականի թիվ ՍԴՈ-1121 որոշմամբ, անդրադառնալով նշված խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի սահմանադրականության հարցին, վկայակոչված իրավադրույթն այնքանով, որքանով **բարոյական վնասը** չի դիտում որպես վնասի տարատեսակ և չի ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն՝ արգելափակելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, միաժամանակ խոչընդոտելով Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարմանը, ձանաչել է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 16-րդ հոդվածի 4-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր:

Արդյունքում՝ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 19.05.2014 թվականին ընդունված և 01.11.2014 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-21-Ն ՀՀ օրենքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրվեց նոր խմբագրությամբ՝ «վնաս» եզրույթի մեջ ներառելով նաև ոչ նյութական վնասը, միաժամանակ սահմանվեց ոչ նյութական վնասի հատուցման կառուցակարգը, որը լրացվեց «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 21.12.2015 թվականին ընդունված և 01.01.2016 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-184-Ն ՀՀ օրենքով:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ, 1087.2-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 19.05.2014 թվականի խմբագրությամբ 162.1-րդ հոդվածի 2-րդ մասը, 1087.2-րդ հոդվածի 7-րդ և 9-րդ մասերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում նախատեսվում է ոչ նյութական վնասի հատուցման հնարավորություն **միայն** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ հոդվածներով սահմանված որոշակի պայմանների պահպանման դեպքում՝ հաշվի առնելով նույն հոդվածներով սահմանված սահմանափակումները, որոնց վերլուծությունը հանգում է հետևյալին.

*ա) ոչ նյութական վնասի հարստման համար հիմք հանդիսացող խախտված իրավունքների շրջանակը.*



Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 162.1-րդ հոդվածը ոչ նյութական վնասի հատուցման իրավունք նախատեսում էր միայն Կոնվենցիայի 2-րդ (կյանքի իրավունք), 3-րդ (խոշտանգումների արգելում), 5-րդ (ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք) հոդվածներով սահմանված իրավունքների խախտման համար, իսկ նույն հոդվածի գործող խմբագրությամբ այդ իրավունքների շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները՝ կյանքի իրավունքը, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, հավաքների և միավորման ազատության իրավունքը, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, սեփականության իրավունքը:

Ոչ նյութական վնասի հատուցում նախատեսվում է նաև դատապարտյալի համար, եթե վերջինս արդարացվել է Կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածի պայմաններում (փոխհատուցումը սխալ դատապարտման դեպքում): Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե առկա չեն նշված արձանագրությամբ սահմանված պայմանները, ապա արդարացված անձն ընդհանուր հիմունքներով իրավունք ունի պահանջել ոչ նյութական վնասի հատուցում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ոչ նյութական վնասի հատուցում կարելի է պահանջել միայն վերոգրյալ իրավունքներից որևէ մեկի կամ միաժամանակ մի քանիսի խախտման դեպքում:

*բ) վերոնշյալ իրավունքները խախտած անձանց շրջանակը.*

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում հատուցման է ենթակա միայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից պատժառված ոչ նյութական վնասը: Ընդ որում, վերոնշյալ անձանց կողմից կատարված խախտումը չպետք է լինի ենթադրյալ խախտում: Այդ խախտումը պետք է հաստատված լինի դատարանի կամ քրեական հետապնդման մարմնի կողմից: Միաժամանակ նշված սուբյեկտների կողմից կատարված խախտումը հաստատելիս հատուցման համար նշանակություն չունի համապատասխան պաշտոնատար անձի մեղքը, քանի որ ոչ նյութական վնասի հատուցման համար օրենսդիրը որդեգրել է առանց մեղքի պատասխանատվության սկզբունքը՝ սահմանելով, որ այն ենթակա է հատուցման՝ անկախ պաշտոնատար անձի մեղքից: Այդուհանդերձ, պաշտոնատար անձի դեմ պետության կամ համայնքի կողմից հետադարձ պահանջ ներկայացնելիս արդեն կարողվում է պաշտոնատար անձի մեղքի առկայությունը:

*գ) ոչ նյութական վնասի հատուցման հիմքը և հատուցման չափը.*

Ոչ նյութական վնասի հատուցման համար հիմք է հանդիսանում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքը: Ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի առկայությունը հիմնավորելու հարցը Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել քննարկել Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո: Այսպես, Եվրոպական դատարանը, *Dzhabarov and Others v. Bulgaria* գործով 31.03.2016 թվականի վճռով արձանագրելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, հայտնել է այն իրավական դիրքորոշումը, որ ընդհանուր կանոնն այն է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված հատուցման տրամադրումը կախված է համապատասխան անձի կողմից նույն հոդվածի նախորդ կետերի խախտմամբ իրեն պատժառված վնասը հիմնավորելու հանգամանքից (*յուեն, նասլ Wassink v. the Netherlands գործով (զանգալր թիվ 12535/86) Եվրոպական դատարանի 27.09.1990 թվականի վճիռ, կետ 38, Pavletic v. Slovakia գործով (զանգալր թիվ 39359/98) Եվրոպական դատարանի 22.06.2004 թվականի վճիռ, կետ 95, Włoch v. Poland (no. 2) գործով (զանգալր թիվ 33475/08) Եվրոպական դատարանի 10.05.2011 թվականի վճիռ, կետ 32*):

Այդուհանդերձ, Եվրոպական դատարանը գտել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտման արդյունքում հոգեկան տառապանքի հետևանքով ոչ նյութական վնասն ունի որոշ առանձնահատկություններ: Գործում է այն կանխավարկյալը (որը կարող է հերքվել), որ նշված հոդվածի խախտմամբ ձերբակալումն անձին պատճառում է որոշ հոգեբանական տառապանքներ ոչ միայն ձերբակալման ընթացքում, այլ նաև դրանից հետո: Նման տառապանքները, որոնք պարտադիր չէ, որ հասնեն հոգեկան

խանգարումների մակարդակի կամ արտահայտվեն արտաքին ախտանիշներով, անխուսափելիորեն չեն պահանջում այնպիսի բացառիկ ապացույցների միջոցով հաստատում, ինչպիսիք են հոգեբուժական կամ բժշկական փաստաթղթերը (*յրեն, Dzhavarov and Others v. Bulgaria գործով (զանգապներ թիվ 6095/11, 74091/11և 75583/11) Եվրոպական դատարանի 31.03.2016 թվականի վճիռ, կետ 84*): Եվրոպական դատարանը նաև արձանագրել է, որ անօրինական կերպով ձերբակալված անձին որևէ փոխհատուցման տրամադրման մերժումն այն հիմքով, որ վերջինիս չի ներկայացրել նմանատիպ ապացույցներ, ինքնին խիստ ձևականացված է և համարվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում (*յրեն, Danev v. Bulgaria գործով (զանգապ թիվ 9411/05) Եվրոպական դատարանի 02.09.2010 թվականի վճիռը, կետեր 34-35*):

Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ոչ նյութական վնասի հատուցման հիմք հանդիսացող տառապանքի, մասնավորապես՝ հոգեկան տառապանքի հաստատման համար պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նման տառապանքը հաստատելու համար ուղղակի ապացույցներ (օրինակ՝ բժշկական փաստաթղթեր, փորձագետի եզրակացությունը) կարող են և չենրկայացվել: Տառապանքի առկայությունը կարող է հաստատվել ցանկացած ապացույցով, այդ թվում՝ կողմի, նրա հարազատների ցուցմունքներով: Այլ կերպ ասած՝ հոգեկան տառապանքի առկայությունը հիմնավորելու համար չափից ավելի ֆորմալ պահանջները չեն բխի հոգեկան տառապանքի առանձնահատկություններից: Ուստի ցանկացած ապացույց, որը կարող է վկայել հոգեկան տառապանքի առկայության մասին (օրինակ՝ ձերբակալվածին պահելու պայմանները, տևողությունը, անձի անհատական հատկանիշները՝ դյուրազգիռությունը, ներշնչվողականությունը և այլն), պետք է գնահատվի դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ոչ նյութական վնասի հատուցման համար սահմանված են առավելագույն չափեր, որոնք կարող են գերազանցվել բացառիկ դեպքերում, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ (օրինակ՝ առողջությանը ծանր վնաս): Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարացիության (equitableness) և համաչափության սկզբունքներին համապատասխան՝ հաշվի առնելով ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վնասի չափը որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն, որ ոչ նյութական վնասի հատուցումը չպետք է ուղղված լինի տուժող կողմի «հարստացմանը»՝ նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված իրավունքների չարաշահման արգելքը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը, Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո, հարկ է համարել արձանագրել, որ ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս դատարանները պետք է օժտված լինեն ձկունությունը՝ մասնավորապես հաշվի առնելով, որ իր բնույթով պայմանավորված՝ ոչ նյութական վնասը հաշվարկի կամ հստակ քանակական գնահատման ենթակա չէ (*յրեն, օրինակ, Nagmetov v. Russia (զանգապ թիվ 35589/08) գործով Եվրոպական դատարանի 30.03.2017 թվականի վճիռը, կետեր 72-73, Varnava and Others v. Turkey (զանգապներ թիվ 16064/90, 16065/90, 16066/90, 16068/90, 16069/90, 16070/90, 16071/90, 16072/90 և 16073/90) գործով Եվրոպական դատարանի 18.09.2009 թվականի վճիռը, կետ 224*): Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ ոչ նյութական վնասի չափը որոշելիս դատարանները պետք է առաջնորդվեն ողջամտության, արդարացիության և համաչափության սկզբունքներով՝ հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ և հայցվորի, և պատասխանողի փաստարկները:

Մյուս հարցադրման կապակցությամբ վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասը, 4-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերը, 67-րդ հոդվածի 3-րդ մասը, 167-րդ հոդվածի 1-ին մասը, 168-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր վեհաժողովի կողմից 29.11.1985 թվականին ընդունված «Հանցագործությունների և իշխանության չարաշահման գոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիր» վերտառությամբ թիվ 40/34 բանաձևի «Ա» բաժնի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ արձանագրել է, որ անօրինական գործողությունների, հանցագործության և իշխանության

չարաշահման արդյունքում վնաս կրած անձինք իրենց կարգավիճակով նույնացվում են, և նրանց նկատմամբ պահանջվում է համարժեք վերաբերմունք:

ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով միջազգային իրավունքում առկա վերը նշված մոտեցումները, 14.12.2010 թվականի թիվ ՍԴՌ-929 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «տուժող» հասկացությունն ունի ընդգրկուն բովանդակություն և ներառում է ոչ միայն քրեական, այլև քրեադատավարական, վարչական, քաղաքացիաիրավական ու այլ հարաբերություններից և իրենց կամքից անկախ տուժած ֆիզիկական և իրավաբանական անձանց: Ուստի, 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «տուժող» հասկացությունը նշանակում է նաև **հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործողություններից (անգործությունից) վնաս կրած անձ:**

Ընդ որում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ անձը տուժողի դատավարական կարգավիճակ է ձեռք բերում որպես այդպիսին ճանաչվելու փաստով, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության նշված դրույթի իմաստով տուժողին հասցված վնասի հատուցման իրավունքը ենթադրում է նաև **արդարացված անձի կրած վնասի հատուցման հարցով** քրեական դատավարությունից դուրս քաղաքացիական դատավարության կարգով համապատասխան հայց հարուցելու իրավունք:

Անդրադառնալով արդարացվածի կատարած դատական ծախսերի հատուցման հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ արդարացվածը, որպես վնասի հատուցում, քաղաքացիական դատավարության կարգով իրավունք ունի ստանալ նաև ճանապարհածախսի և օրապահիկի գումարների հատուցում՝ նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ արդարացվածը, որպես վնասի գույքային հատուցում, իրավունք ունի ստանալ նաև իր կատարած դատական ծախսերը: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ թեև քրեական դատավարության օրենսդրությամբ ճանապարհածախսը և օրապահիկը, որպես դատական ծախս, նախատեսված են տուժողի, մասնագետի, փորձագետի և վկայի համար, սակայն արդարացվածը միջազգային և սահմանադրական իրավական նորմերի տեսանկյունից նույնպես կարող է դիտվել որպես տուժող պետության հետ փոխհարաբերություններում, բացի այդ, վերջինս տվյալ դատական ծախսերը քաղաքացիական դատավարության կարգով պահանջում է որպես իր կրած գույքային վնասների հատուցում, որը ենթակա է հատուցման ամբողջ ծավալով: Ուստի, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ արդարացվածին հատուցման ենթակա գույքային վնասը ներառում է քրեական դատավարության կարգով կատարված բոլոր ծախսերը՝ ներառյալ օրապահիկը և ճանապարհածախսը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրապահիկի և ճանապարհածախսի հատուցման իրավունք անձը կարող է ձեռք բերել միայն այն նույն պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, որը սահմանվել է *Գոգո* և *Վայի Անոյաններն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության* գործով Վճռաբեկ դատարանի՝ վերը նշված որոշմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ արդարացվածն ունի օրապահիկի և ճանապարհածախսի հատուցում ստանալու իրավունք: Ինչ վերաբերում է այդ հատուցման չափերին, ապա Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ինչպես Վճռաբեկ դատարանը, այնպես էլ Եվրոպական դատարանը բազմիցս նշել են, որ կատարված ծախսերը պետք է լինեն իրական, անհրաժեշտ և ողջամիտ: Վերահաստատելով նախկինում արտահայտված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ արդարացվածին հատուցման ենթակա օրապահիկը և ճանապարհածախսը պետք է լինեն իրական, այսինքն՝ իրականում կատարված լինեն, որի վերաբերյալ անձը պետք է ներկայացնի ողջամիտ ապացույցներ: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ դրանք կարող են լինել ինչպես ուղղակի ապացույցներ (օրինակ՝ վճարման անդորրագրեր), այնպես էլ անուղղակի ապացույցներ (օրինակ՝ ապացույց այն մասին, որ անձն իր բնակության վայրից դուրս մասնակցել է դատական նիստերի): Այդ ծախսերը պետք է լինեն անհրաժեշտ, այսինքն՝ արդարացվածը պետք է ապացուցի, որ առանց այդ ծախսերի իր իրավունքների պատշաճ պաշտպանություն իրականացվել չէր կարող: Եվ վերջապես այդ ծախսերը պետք է լինեն ողջամիտ: Ողջամտության չափը որոշելու կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածում սահմանված՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց ծախսերի հատուցման վերաբերյալ կարգավորմամբ մասնավորապես նախատեսված է, որ հատուցման ենթակա բնակատարածության վարձակալության արժեքը որոշվում է ծառայողական գործուղումների վճարման համար ընդունված նորմերով, իսկ ճանապարհածախսի կապակցությամբ սահմանված է, որ ըստ էության այն հատուցվում է հասարակական տրանսպորտի երթևեկության արժեքին համաչափ: Ինչ վերաբերում է օրապահիկի գումարին, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին այս կապակցությամբ հատուկ կարգավորում չի նախատեսում:

Նկատի ունենալով նաև այն, որ ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը բնակատարածության վարձակալության արժեքի, այնպես էլ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը (59-րդ հոդվածի 8-րդ մաս՝ վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին օրապահիկի, գիշերավարձի և ճանապարհածախսի վճարումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ծառայողական գործուղման ծախսերի առավելագույն չափերը) օրապահիկի, գիշերավարձի և ճանապարհածախսի վճարումների չափը որոշելու կապակցությամբ հղում են կատարում ծառայողական գործուղման ծախսերին, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, մասնավորապես՝ օրապահիկի կապակցությամբ հատուկ կարգավորում նախատեսված չլինելու պարագայում անհրաժեշտ է դրա բնույթը բացահայտել «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման, օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գինծառայողի և նրա ընտանիքի անդամների, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունում բնակելի տարածության վարձակալության համար դրամական փոխհատուցման կարգերն ու չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2335-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգին» համապատասխան:

Վկայակոչելով նշված կարգի 7-րդ և 21-րդ կետերը և նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով բացահայտված չէ օրապահիկի գումարի ողջամիտ չափը, իսկ ճանապարհածախսի չափը որոշելու կարգը մանրամասնեցված չէ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ արդարացվածին հատուցման ենթակա օրապահիկի և ճանապարհածախսի ողջամտությունը որոշելիս, որպես կանոն, ուղենշային պետք է լինի գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգավորումը:

**ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԲ**

**07.04.2017թ.**

**21. «Յունիբանկ» ԲԲԸ v. Անիկ Ստեփանյանի իրավահաջորդ Սիմոն Արզումանյան, քաղ. գործ թիվ ԵԱԲԳ/2190/02/15**

Էջ  
**230-243**

**Խնդիր.** Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրումներին.

- 1) արդյո՞ք կարելի է պահանջ ներկայացնել ժառանգին՝ ժառանգությունն ընդունելու վերաբերյալ,
- 2) ինչպե՞ս է իրացվում անձի՝ ժառանգելու սահմանադրական իրավունքը,
- 3) արդյո՞ք ժառանգները կրում են ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելու պարտականություն այն դեպքում, երբ նրանք ժառանգական գույքի փաստացի տիրապետմամբ ընդունել են ժառանգությունը, և արդյո՞ք պարտաւտերը ցանկացած ժամանակ կարող է պարտքը մարելու պահանջ ներկայացնել ժառանգներին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի, 1184-րդ հոդվածի 1-ին կետի, 1186-րդ հոդվածի 1-ին կետի, 1225-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ կետերի, 1230-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հիմնվում է, մասնավորապես, իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքների վրա: Նշված սկզբունքներից կամքի ինքնավարության սկզբունքը ենթադրում է քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների իրավունքը՝ իրենց հայեցողությամբ և իրենց շահերին համապատասխան ընտրելու համապատասխան վարքագծի թույլատրելի տարբերակներից մեկը: Մասնակիցներն առավելապես իրենք են որոշում՝ մտնել որևէ քաղաքացիաիրավական հարաբերության մեջ, թե՛ ոչ, օգտվել իրենց իրավունքից, թե՛ ոչ, պահանջել իրենց օգտին պարտավորության կատարում, թե՛ ոչ և այլն: Ընդ որում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իրավունքից չօգտվելը չի հանգեցնում այդ իրավունքի դատարան: Ուստի, վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական իրավահարաբերության մասնակիցները գործում են ինքնուրույն, սեփական կամքով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել նաև, որ սեփականության սահմանադրական իրավունքի տարր հանդիսացող ժառանգման իրավունքի հետ կապված հարցերն առավելապես կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, հետևաբար նշված հարաբերություններին նույնպես բնորոշ են վերը նշված առանձնահատկությունները:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգությունը ժառանգը ձեռք է բերում միայն այն ընդունելու դեպքում: Որպես կամքի ինքնավարության սկզբունքի դրսևորում՝ ժառանգն ինքն է որոշում՝ ընդունել ժառանգությունը, թե՛ ոչ: Ընդ որում, ժառանգությունը ձեռք բերելու իրավունքից օգտվելու դեպքում գործում է, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ինստիտուտի այն նորմը, որ ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, որը ներառում է նաև ժառանգատուի պարտականությունները: Այլ կերպ ասած, եթե ժառանգը որոշում է ընդունել ժառանգությունը, ապա չի կարող հրաժարվել դրա արդյունքում վրա հասնող պարտադիր համարվող վարքագծից՝ ժառանգատուի պարտականությունն ընդունելուց: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ ժառանգը, որպես կամքի ինքնավարության դրսևորում, կարող է չընդունել ժառանգությունը կամ հրաժարվել արդեն ընդունած ժառանգությունից՝ իր համար չառաջացնելով որևէ իրավունք կամ պարտականություն: Այդուհանդերձ, նշված կանոնից օրենսդրի կողմից սահմանվել է բացառություն, որի համաձայն՝ սնանկ ձանաչված ժառանգը, փաստորեն, չի կարող հրաժարվել ժառանգությունից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ անձն ինքն է որոշում ընդունել ժառանգությունը, թե՛ ոչ: Ընդ որում, ժառանգությունն ընդունվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կանոնների պահպանմամբ, որոնք մասնավորապես վերաբերում են ժառանգությունն ընդունելու եղանակներին, ժամկետներին և կարգին: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձին չի կարելի պարտադրել ընդունել ժառանգությունը, այդ թվում՝ ժառանգին չի կարող ներկայացվել ժառանգությունն ընդունելու պահանջ:

Երկրորդ հարցադրման կապակցությամբ վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածը, 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը, 1227-րդ հոդվածի 1-ին կետը, ինչպես նաև վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ այն դեպքերում, երբ ժառանգը որոշում է օգտվել իր իրավունքից և ընդունել ժառանգությունը, ապա այդ իրավունքն իրացվում է վերը նշված եղանակներից որևէ մեկով՝ կամ ժառանգությունն ընդունելու, կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նտարին հանձնելով, կամ ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի տիրապետելով կամ կառավարելով: Հետևաբար, եթե ժառանգը սահմանված ժամկետում դիմում է ներկայացնում նտարին կամ սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը՝ իրականացնելով, մասնավորապես, վերը թվարկված գործողություններից որևէ մեկը, ապա համարվում է, որ ժառանգն օգտվել է

իր իրավունքից, որը հանգեցնում է դրանից անմիջականորեն բխող պարտադիր վարքագծի դրսևորման անհրաժեշտության՝ կապված հատկապես ժառանգատուի պարտատերերի առջև պատասխանատվության հետ:

Անդրադառնալով երրորդ հարցադրմանը և վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետը, 1188-րդ հոդվածի 1-ին կետը, 1227-րդ հոդվածի 1-ին կետը, 1242-րդ հոդվածի 1-ին կետը, 1243-րդ հոդվածի 1-ին կետը և 1244-րդ հոդվածի 1-ին կետը, ինչպես նաև վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետի սահմանափակում դնելը նպատակաուղղված է ժառանգի կողմից ժառանգությունն ընդունելու իր իրավունքի իրացման համար բավարար հստակություն և որոշակիություն մտցնելուն, որպեսզի սահմանված ժամկետի ընթացքում ժառանգը հնարավորություն ունենա որոշել ընդունել ժառանգությունը, թե՛ ոչ, կամ օրինակ՝ պարտատերերի կողմից նշված ժամկետում պահանջ ներկայացվելու դեպքում հրաժարվել ժառանգությունից, թե՛ ոչ: Ընդ որում, նման կարգավորումը կիրառելի է ինչպես նոտարին դիմում ներկայացնելու, այնպես էլ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգությունն ընդունելու պարագայում: Երկու դեպքում էլ ժառանգը պետք է իրական պատկերացում ունենա ժառանգության գանգվածի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ նաև ժառանգության հետ կապված ծախսերի, մասնավորապես՝ ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները բավարարելու ժառանգների պարտականությանը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետի այն կարգավորման լույսի ներքո, համաձայն որի՝ ժառանգները հատուցում են այդ ծախսերը ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տվյալ դեպքում «ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո» արտահայտությամբ օրենսդիրը նպատակ է ունեցել ընդգծելու, որ քննարկվող ծախսերը հատուցվում են ժառանգության ընդունման համար օրենքով սահմանված վեցամսյա ժամկետն անցնելուց և ժառանգների կազմը հայտնի դառնալուց հետո: Ուստի, նախքան նշված ժամկետի ավարտը (բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1246-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքի) չի կարող պահանջ ներկայացվել ծախսերը նշված ժամկետից ավելի վաղ հատուցելու մասին՝ նկատի ունենալով այն, որ մինչ այդ պարզված չի լինում ժառանգությունն ընդունած ժառանգների կազմը: Բանն այն է, որ թե՛ ժառանգությունն ընդունելու, թե՛ դրանից հրաժարվելու համար օրենսդիրը սահմանել է վեցամսյա ժամկետ, և միայն այդ ժամկետն անցնելուց հետո է պարզ դառնում, թե՛ ժառանգներից ով կամ ովքեր են ընդունել ժառանգությունը, ով կամ ովքեր են հրաժարվել դրանից և ում պետք է տրվի ժառանգության իրավունքի վկայագիր: Բացառությամբ այն պարտավորությունների, որոնք չեն կարող կատարվել առանց ժառանգատուի անձնական մասնակցության, ժառանգատուի մյուս բոլոր պարտավորությունները նրա մահվամբ չեն դադարում, և դրանք, օրենքով սահմանված ժամկետում և կարգով պահանջ ներկայացված լինելու դեպքում, պարտավոր են կատարել ժառանգությունն ընդունած ժառանգները՝ իրենց անցած գույքի արժեքի սահմաններում: Վճռաբեկ դատարանի նման մեկնաբանությունը պայմանավորված է ժառանգների (այդ թվում՝ ժառանգությունը փաստացի տիրապետմամբ կամ կառավարմամբ ընդունած) և ժառանգատուի պարտատերերի շահերի հավասարակշռման անհրաժեշտությամբ՝ կանխելու համար ժառանգների կողմից իրավունքի չարաշահման դրսևորումները: Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի այլ մեկնաբանությունը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, որ իրականում ընդունելով ժառանգությունը՝ ժառանգները կարող են խուսափել ժառանգատուի պարտքերով պարտատերերի առջև պատասխանատվությունից՝ պարզապես չստանալով ժառանգության իրավունքի վկայագիր, այսինքն՝ չձևակերպելով ժառանգության ընդունումը: Նման մոտեցումն ամբողջությամբ կհակասի ժառանգված գույքը փաստացի տիրապետմամբ կամ կառավարմամբ ընդունելու հնարավորության վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված իրավակարգավորմանը, կստեղծի ժառանգության ընդունումն անհամաչափ ձևականություններով պայմանավորելու իրական վտանգ, ինչն իր հերթին կխախտի ժառանգության ընդունման իրավահարաբերությունների կայունությունը: Մյուս կողմից նման մեկնաբանությունը կհիմաստագրվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի այն ընդհանուր իրավակարգավորումը, համաձայն որի՝ ժառանգներն իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են նույն օրենսգրքի 1242-րդ հոդվածում

նշված ծախսերը, և այդ հարցում նրանք կրում են համապարտ պատասխանատվություն: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ժառանգությունն ընդունած ժառանգներն օրենքով սահմանված կարգով և չափով պատասխանատու են ժառանգի՝ իրավահաջորդություն թույլ տվող պարտավորությունների համար՝ անկախ այն հանգամանքից, թե ժառանգության ընդունումը ժառանգության իրավունքի վկայագրով ձևակերպվել է, թե՛ ոչ: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է նաև նրանով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածը մեկնաբանելով ժառանգման ինստիտուտը կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ նորմերի համակցությունից առանձին և ժառանգների կողմից ժառանգատուի պարտքերի մարումը պայմանավորելով միայն ժառանգության իրավունքի վկայագիր ստանալով՝ անտեսվում է ժառանգությունը փաստացի տիրապետմամբ կամ կառավարմամբ ընդունելու եղանակը, որի արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ փաստացի ընդունելով ժառանգությունը՝ ժառանգները խուսափում են ժառանգատուի պարտքերը մարելուց: Նման մոտեցումը չի բխում իրավունքների չարաշահման արգելքից և քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների իրավահավասարության սկզբունքից: Վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումը հիմնավորվում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ կետի իրավակարգավորմամբ, համաձայն որի՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

07.04.2017թ.

22. Ռազմիկ Ուզունյան v. «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԿԳ/3908/02/14

Էջ 244–256

**Խնդիր.** 1) Ի՞նչ պատասխանատվություն է ծագում սահմանված ժամկետում աշխատավարձը չվճարելու դեպքում,

2) արդյո՞ք աշխատավարձը չվճարելու դեպքում կետանցված աշխատավարձի նկատմամբ կարող են հաշվարկվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները,

3) այն դեպքերում, երբ առկա է չվճարված աշխատավարձը բռնագանձելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած և չկատարված դատական ակտ, արդյո՞ք դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի նկատմամբ կարող են հաշվարկվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետը և վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները, նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգավորումը դրամական պարտավորությունը խախտելու համար նախատեսված պատասխանատվության ընդհանուր կանոն է: Այսինքն՝ նշված կարգավորումը գործում է դրամական պարտավորությունների խախտման բոլոր այն դեպքերում, երբ այլ կարգավորում նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Ընդ որում, եթե այլ կարգավորում նախատեսված է կոնկրետ ժամանակահատվածի համար, ապա այդ ժամանակահատվածի ավարտից հետո նույնպես գործում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության ընդհանուր կանոնը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգավորումը՝ որպես ընդհանուր կանոն, չի գործում այն դեպքերում, երբ պատասխանատվության հստակ չափ և կարգավորում նախատեսվում է օրենքով կամ պայմանագրով՝ որպես հատուկ կանոն:

Անդրադառնալով երկրորդ հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ, 192-րդ հոդվածները, 198-րդ հոդվածի 1-ին մասը, «Աշխատավարձի պաշտպանության մասին» կոնվենցիայի 1-ին, 6-րդ հոդվածները, 12-րդ հոդվածի 1-ին կետը, վերահաստատելով աշխատավարձի հիմնական հատկանիշների վերաբերյալ նախկինում արտահայտած իր դիրքորոշումը, արձանագրել է, որ աշխա-

տավարձի՝ որպես կատարված աշխատանքի դիմաց հատուցման վճարման և չվճարելու համար պատասխանատվության կարգը սահմանված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերոնշյալ հոդվածներով: Այսպես՝ ընդհանուր կանոնի համաձայն՝ աշխատավարձը վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը: Նշված պարտականությունը չկատարելու համար ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն՝ օրական 0,15 տոկոսի չափով տուժանքի չափով: Ընդ որում, օրենսդրի կողմից սահմանափակվել է այդ պատասխանատվության՝ տուժանքի չափը, այն չի կարող գերազանցել վճարման ենթակա գումարի չափը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերը նշված իրավակարգավորումը, ըստ էության, գործատուի պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որը երաշխավորում է աշխատողների՝ օրենքով սահմանված ժամկետում իրենց հասանելիք աշխատավարձն ստանալու իրավունքի իրականացումը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ աշխատավարձը չվճարելու համար ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանվել է պատասխանատվության հատուկ կանոն: Նման պայմաններում, հաշվի առնելով ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի իրավակարգավորումը, այնպես էլ այն հանգամանքը, որ նույն օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ աշխատանքային օրենսդրությամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ աշխատավարձը չվճարելու համար ենթակա է կիրառման ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը: Այսինքն՝ չվճարված աշխատավարձը բռնագանձելիս որպես պատասխանատվություն կիրառվում է օրական 0,15 տոկոսի չափով տուժանք, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա աշխատավարձի չափը:

Երրորդ հարցադրման կապակցությամբ հարկ համարելով անդրադառնալ պատասխանատվության այն դեպքերին, երբ չվճարված աշխատավարձը բռնագանձելու վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որը չի կատարվել, վկայակոչելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը, վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ աշխատավարձ ստանալն աշխատողի իրավունքն է, և եթե գործատուն սահմանված ժամկետում աշխատավարձ չի վճարում, աշխատողն իրավունք ունի դատական կարգով պահանջելու բռնագանձել չվճարված աշխատավարձը, ինչպես նաև դրա նկատմամբ հաշվարկված՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված տուժանքը: Նման գործերի քննության ժամանակ հայցի փաստական և իրավական հիմքերը վերաբերում են աշխատանքային հարաբերություններից ծագող փաստական հանգամանքներին և աշխատանքային օրենսդրությամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել առանձնացնել այն դեպքերը, երբ աշխատողի ներկայացրած հայցի հիման վրա առկա է աշխատավարձի բռնագանձման վճիռ, որը չի կատարվել: Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքերում, երբ արդեն իսկ առկա է նման վճիռ, այդ գումարը դադարում է պարզապես չվճարված աշխատավարձ դիտարկվելուց, այն դառնում է աշխատողի օգտին բռնագանձման ենթակա գումար, որը չվճարելու դեպքում գործատուն արդեն խախտում է վճռի պարտադիրության և կատարելիության հատկանիշները: Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման պայմաններում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը, այն է՝ դրամական պարտավորությունը խախտելու համար պատասխանատվությունը, քանի որ նման պայմաններում գործատուն ոչ թե պարզապես աշխատավարձը չի վճարում, այլ խախտում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով իր վրա դրված դրամական պարտավորությունը: Նշված մտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրամական պարտավորությունը խախտելու համար նախատեսված տոկոսների բռնագանձման հայց ներկայացնելիս այլևս չի քննարկվում տվյալ գումարի՝ որպես չկատարված դրամական պարտավորության ծագման հիմքը, այլ քննարկվում է միայն դատական ակտով հաստատված հստակ դրամական պարտավորությունը, որը չի կատարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ դատական ակտով բռնագանձման ենթակա, չվճարված աշխատավարձի գումարի նկատմամբ կետանցի պահից մինչև պարտավորության փաստացի կատարումը ենթակա են վճարման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները:



Ինչ վերաբերում է տվյալ դեպքում կետանցի պահը որոշելուն, ապա Վճռաբեկ դատարանը տվյալ հարցն անհրաժեշտ է համարել քննարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին կետի կարգավորման շրջանակներում:

Տվյալ դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված դրամական պարտավորությունը չկատարելու դեպքում անհրաժեշտ է, որ աշխատավարձի չվճարման հանգամանքը և աշխատավարձի չափը հաստատվի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, քանի որ միայն այդ դեպքում կքննարկվի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելու հանգամանքը: Նկատի ունենալով, որ տվյալ պարագայում քննարկման է ենթակա դրամական պարտավորությունը չկատարելու համար պատասխանատվությունը, իսկ պատասխանատվության պարտադիր պայման է պարտավորությունը խախտած անձի մեղքը, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել պարզել մեղքի ծագման պահը, այսինքն՝ որ պահից անձը մեղավոր կհամարվի նշված պարտավորությունը չկատարելու մեջ:

Հաշվի առնելով, որ մեղքն անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարվող իրավախախտման և դրա հետևանքների նկատմամբ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ իրավախախտման համար մեղքը կարող է առկա լինել միայն այն պահից սկսած, երբ անձին հայտնի է դարձել իր ունեցած դրամական պարտավորության մասին: Հետևաբար չնայած այն հանգամանքին, որ դրամական պարտավորությունը հաստատվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, օրինական ուժի մեջ մտնելու պահը կարող է չհամընկնել մեղքի ծագման պահի հետ: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելու արդյունքում որպես պատասխանատվության միջոց տոկոսներ հաշվարկելիս դատարանները պետք է հաշվի առնեն, թե որ պահից է փաստացի սկսել իրավախախտումը, այսինքն՝ որ պահից է անձը մեղավոր իրավախախտման համար: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ պահը համընկնում է վերջնական դատական ակտը պարտապահին հասու լինելու պահի հետ, այսինքն՝ թե որ պահից է պարտապահն իմացել կամ իրական հնարավորություն ունեցել իմանալու, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ունի դրամական պարտավորություն:

**20.07.2017թ.**

**23. Խորեն Նասիբյան v. «Ինտերակո» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԿԳ/3295/02/15** Էջ

**257–276**

**Խնդիր.** Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրումներին.

1) արդյո՞ք աշխատողին աշխատանքից ազատելու մասին անհատական իրավական ակտը ենթակա է անվավեր ճանաչման, եթե այն ուժի մեջ չի մտել,

2) արդյո՞ք աշխատողը կարող է վերականգնվել իր նախկին աշխատանքում, եթե վեճը լուծելու պահին լրացել է գործատուի և աշխատողի միջև կնքված որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը: Այդ դեպքում երբևիցե պետք է աշխատանքային պայմանագիրը համարվի լուծված: Արդյո՞ք որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու պատճառով գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում գործատուն պարտավոր է հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերը, 60-րդ հոդվածի 1-ին մասը, 61-րդ հոդվածի 2-րդ մասը, 61.1-րդ հոդվածի 1-ին մասը, 68-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերը, 38-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ իրավական ակտերի՝ մասնավորապես անհատական իրավական ակտերի կատարման կամ կիրառման հնարավորությունն օրենսդիրը պայմանավորել է դրանց ուժի մեջ մտնելու հանգամանքով, այսինքն՝ եթե այդ իրավական ակտերն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով ուժի մեջ չեն մտել, ապա դրանք ի սկզբանե առոչինչ են, իրավական առումով գոյություն չունեն և կատարման կամ կիրառման ենթակա չեն: Ավելին, առոչինչ իրավական ակտերի կատարման կամ կիրառման համար օրենսդիրը սահմանել է պատասխանատվություն:

Դա նշանակում է, որ ուժի մեջ չմտած իրավական ակտերը որևէ իրավական հետևանք չեն կարող առաջացնել իրավական ակտերի հասցեատերերի, ինչպես նաև այլ իրավակիրառողների համար, բացի դրանց կատարման կամ կիրառման համար պատասխանատվությունից: Ընդ որում, նման կարգավորումը կիրառելի է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի տեսանկյունից գործատու հանդիսացող իրավաբանական անձի ընդունած ակտերի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի եզրահանգմամբ գործատուի՝ օրենքին կամ այլ իրավական ակտերին չհամապատասխանող անհատական իրավական ակտի վիճարկման համար նախ անհրաժեշտ է, որպեսզի այդ իրավական ակտն իրավաբանական ուժի մեջ մտած լինի: Իրավական ակտի հասցեատիրոջ պահանջով ակտն անվավեր ճանաչելը վերջինիս համար իրավական նշանակություն ունի այն դեպքում, երբ վիճարկվող ակտի կատարմամբ կամ կիրառմամբ խախտվել են կամ կարող են խախտվել նրա իրավունքներն ու օրինական շահերը, իսկ դա կարող է առկա լինել միայն իրավաբանական ուժի մեջ մտած ակտի պարագայում՝ նկատի ունենալով, որ եթե անհատական իրավական ակտի մասին հասցեատերը սահմանված կարգով չի իրազեկվել, ապա անկախ այն հանգամանքից՝ այդ իրավական ակտն իր բովանդակությամբ համապատասխանում է օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին, թե՛ ոչ, այդ իրավաբանական ակտն ուժի մեջ չմտնելու հետևանքով ենթակա չէ կատարման կամ կիրառման: Նման դեպքում դատարաններն աշխատողների իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացնեն ոչ թե ուժի մեջ չմտած անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելով, այլ պարզապես այդ իրավական ակտը չկիրառելով, ինչը կառաջացնի աշխատողի ակնկալած բարենպաստ իրավական հետևանքը: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ի սկզբանե գոյություն չունեցող, իրավաբանական ուժ չստացած իրավական ակտն անվավեր ճանաչելու պահանջն առարկայագուրկ է, այսինքն՝ չի կարող վիճարկվել իրավական առումով գոյություն չունեցող ակտը: Հետևաբար իրավաբանական ուժ չունեցող անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու պահանջը բավարարվել չի կարող:

Վերլուծելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածը, 14-րդ հոդվածի 1-ին մասը, 83-րդ հոդվածը, 94-րդ հոդվածը, 95-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 3-րդ մասի 2-րդ կետը, 96-րդ, 109-րդ հոդվածները, 111-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ մասերը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են, որպես կանոն, անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով՝ նկատի ունենալով աշխատանքային հարաբերությունների կայուն և կատարվող աշխատանքի մշտական բնույթ ունենալը: Երաշխավորված աշխատանքի ապահովման և աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքն առավել արտահայտվում է հենց անորոշ ժամկետով աշխատանքային հարաբերություններում: Ուստի, դա է պատճառը, որ օրենսդիրը սահմանափակել է աշխատանքային պայմանագրեր կնքելիս անորոշ ժամկետով կամ որոշակի ժամկետով պայմանագրի տեսակն ընտրելու՝ կողմերի կամքի ազատությունը՝ սահմանելով, որ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր է կնքվում, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ գործատուի և աշխատողի միջև որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելիս նրանց միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի սկզբից և տևում մինչև դրա գործողության ժամկետի ավարտը: Աշխատանքային իրավահարաբերությունները՝ որպես կամային հասարակական հարաբերություններ, ծագում, փոփոխվում և դադարում են աշխատանքային իրավունքի սուբյեկտների կամքի ազատ արտահայտության արդյունքում: Եթե աշխատանքային պայմանագրի կողմերն օրենքին համապատասխան որոշում են կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր, ապա նրանք կամովին իրենց աշխատանքային հարաբերությունները սահմանափակում են պայմանագրով որոշված ժամկետով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով նախատեսվում է գործողության ժամկետը լրանալու հիմքով որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի լուծման մեխանիզմը՝ առանձնացնելով նման պայմանագրի լուծման հնարավոր տարբերակները:

Այսպես, ընդհանուր կանոնն այն է, որ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո գործատուի և աշխատողի միջև աշխատանքային

հարաբերությունները դադարում են: Օրենսդիրը նշված կարգից սահմանել է մեկ բացառություն, այն է՝ եթե որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը չի լուծվում օրենքով սահմանված կարգով, և աշխատանքային հարաբերությունները շարունակվում են, ապա պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով: Նման իրավակարգավորումից բխում է, որ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի լրանալն ինքնին չի հանգեցնում աշխատանքային պայմանագրի դադարման, **եթե պայմանագրի երկու կողմերն էլ դրսևորում են աշխատանքային հարաբերությունները շարունակելու կամք**, այսինքն՝ աշխատողը շարունակում է աշխատանքը, իսկ գործատուն՝ ընդունում նրա աշխատանքի արդյունքը, ինչպես նաև կողմերը շարունակում են իրացնել աշխատանքային պայմանագրով նախատեսված իրենց իրավունքներն ու պարտականությունները: Ուստի, այն դեպքերում, երբ որոշակի ժամկետով կնքված **աշխատանքային պայմանագրով սահմանված ժամկետը լրանալուց հետո** աշխատողը փաստացի շարունակում է աշխատել և աշխատանքային պայմանագիրը չի լուծվում, ապա աշխատանքային պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով, որից հետո աշխատանքային պայմանագիրն արդեն չի կարող լուծվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 111-րդ հոդվածով սահմանված՝ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով: Նման դեպքերում աշխատանքային պայմանագիրը, համարվելով անորոշ ժամկետով կնքված պայմանագիր, կարող է լուծվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածով նախատեսված այլ հիմքերով:

Մյուս բոլոր դեպքերում որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը ենթակա է լուծման կամ գործատուի (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն), կամ աշխատողի (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն) կողմից՝ այդ մասին մյուս կողմին ծանուցելով առնվազն տասն օր առաջ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը լիարժեք կարգավորում չի նախատեսել այն դեպքերի համար, երբ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում այս կամ այն (օրինակ՝ կողմերի միջև աշխատանքային վեճի առկայության) պատճառով աշխատանքային հարաբերությունները չեն շարունակվում, իսկ կողմերն էլ օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիրը չեն լուծում՝ դրա գործողության ժամկետը լրանալու հիմքով:

Նման դեպքերի մի մասի համար օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորմամբ նախատեսել է, որ աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված, **եթե աշխատողը չի պահպանել** պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո պայմանագրի լուծման մասին ծանուցման պահանջը, ինչպես նաև պայմանագրով նախատեսված վերջին աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը դուրս չի եկել աշխատանքի: Նման դեպքում փաստորեն պայմանագիրը **համարվում է լուծված օրենքի ուժով**:

Ինչ վերաբերում է գործատուի կողմից որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցման պահանջը չպահպանելուն, ապա օրենսդիրը դրա հետ կապված որևէ իրավական հետևանք, մասնավորապես՝ օրենքի ուժով պայմանագրի դադարում կամ լուծում չի նախատեսել: Ստացվում է, որ գործատուի կողմից աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու կամքի առկայության պայմաններում միայն գրավոր ծանուցման պահանջը չպահպանելն այն դեպքերում, երբ աշխատողը ցանկություն չունի երկարաձգելու աշխատանքային հարաբերությունները, չի հանգեցնում պայմանագրի լուծման կամ աշխատանքային հարաբերությունների դադարման, և այդ պարագայում էլ աշխատողը չի կարող օգտվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված իր խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից՝ պահանջելով, օրինակ, ձևակերպել աշխատանքային հարաբերությունների դադարումը, կատարել վերջնահաշվարկ և այլն, քանի որ ըստ այդ հոդվածի ձևակերպման՝ աշխատողն իրավունք ունի դիմելու դատարան «գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում»: Մինչդեռ, եթե կողմերի միջև աշխատանքային հարաբերությունները չեն շարունակվում, իսկ գործատուն էլ չի դադարեցնում կամ լուծում աշխատանքային պայմանագիրը, աշխատողը հայտնվում է անորոշ իրավական վիճակում, իսկ դա նրա համար առաջացնում է իրավունքների խախտման վտանգ:

Վճռաբեկ դատարանի եզրահանգմամբ տվյալ դեպքում, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ենթակա է կիրառման օրենքի անալոգիա, այն է՝ եթե աշխատանքային հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով, ապա նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող աշխատանքային օրենսդրության նորմերը: Քանի որ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու հավասար հնարավորություններ ունեն և աշխատողը, և գործատունը, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերջինիս կողմից աշխատանքային հարաբերությունները չշարունակելու կամքի դրսևորման պայմաններում պայմանագրի լուծման ծանուցման պահանջը չպահպանելու դեպքում պայմանագիրը պետք է համարվի լուծված պայմանագրով սահմանված ժամկետը լրանալու հաջորդ օրը, եթե աշխատանքային հարաբերությունները չեն շարունակվել, մասնավորապես, եթե գործատուն աշխատողին թույլ չի տվել շարունակելու աշխատանքը: Բարձրագույն խնդրի նմանատիպ կարգավորումը համապատասխանում է աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարության (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության հիման վրա աշխատանքային իրավահարաբերությունների պայմանագրային կարգով կարգավորման (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 6-րդ և 13-րդ հոդվածներ), աշխատանքային իրավունքների և պարտականությունների օրինական, բարեխիղճ և ողջամիտ իրականացման (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 37-րդ հոդված) սկզբունքներին և կիրառելի է այն դեպքում, եթե կողմերի միջև կնքված պայմանագրով այլ բան սահմանված չէ: Պայմանագրով այլ բան սահմանված լինելու դեպքում, եթե պայմանագիրը չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին, գործում է պայմանագիրը:

Վերլուծելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը և զարգացնելով նշված հոդվածի կիրառման վերաբերյալ նախկինում արտահայտված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ նշված հոդվածով օրենսդիրը, անդրադառնալով աշխատանքային պայմանագրի վերաբերյալ վեճերին, կարգավորել է աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում աշխատողների խախտված իրավունքների վերականգման դեպքերը՝ առանձնացնելով երկու խումբ իրավիճակներ.

1. աշխատողը վերականգնվում է իր նախկին աշխատանքում՝ ստանալով հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ,

2. աշխատողը չի վերականգնվում նախկին աշխատանքում՝ ստանալով հատուցումներ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի, ինչպես նաև աշխատանքում չվերականգնվելու դիմաց:

Վերոնշյալ երկրորդ իրավիճակը հնարավոր է հետևյալ դեպքերում.

1. Առկա են տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներ: Մասնավորապես, նման իրավիճակ հնարավոր է այն դեպքում, երբ գործատուի վարչակազմակերպչական կառուցվածքում գոյություն չունի այնպիսի հաստիքային միավոր, որտեղ նախկինում աշխատել է աշխատողը, և առկա չէ աշխատողի մասնագիտական պատրաստվածությունը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք (յրեն, օրինակ, *Անասպաս Գիշյանը, Նոյրայր Եղիկյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/0605/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 06.11.2009 թվականի որոշումը*):

2. Գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունները վերականգնելն անհնարին է այլ պատճառներով: Ընդ որում, նշված հիմքի կիրառման համար օրենսդիրը կոնկրետ դեպքեր չի նախատեսել՝ հնարավորություն տալով դատարաններին յուրաքանչյուր դեպքում գործի փաստական հանգամանքների շրջանակներում գնահատել աշխատանքում աշխատողի վերականգնման անհնարինությունը:

Այսպիսով, վերլուծելով նշված հոդվածով սահմանված իրավակարգավորումները, Վճռաբեկ դատարանը գտել է, որ դրանով օրենսդիրը նպատակ է հետապնդել համապարփակ կերպով կարգավորելու աշխատանքային պայմանագրի վերաբերյալ վեճերը, մասնավորապես՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու և լուծելու հետ կապված բոլոր վեճերը՝ որպես աշխատողի խախտված իրավունքների վերականգնման եղանակներ սահմանելով ինչպես աշխատողի վերականգնումը՝ նախկին աշխատանքում, այնպես էլ դրա անհնարինության դեպքում աշխատողին փոխհատուցումներ վճարելու գործատուի պարտականությունը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված հողվածի իրավակարգավորումները կիրառելի են գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու և լուծելու վերաբերյալ բոլոր վեճերով՝ անկախ պայմանագիրը դադարեցնելու կամ լուծելու հիմքից, այսպես աշխատանքային վեճերի մի մասը դուրս կմնա օրենսդրական կարգավորման ոլորտից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ նշված հողվածով սահմանված իրավակարգավորումները կրում են ընդհանուր բնույթ, դրանով մասնավորապես, սահմանված չեն գործատուի նախաձեռնությամբ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի դադարեցման կամ լուծման դեպքում աշխատողի խախտված իրավունքների վերականգնման եղանակների որոշակի առանձնահատկություններ, մինչդեռ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ աշխատանքային հարաբերությունների դադարումը կախման մեջ են դնում որոշակի իրադարձությունից, այն է՝ ժամկետը լրանալու հանգամանքից: Այսինքն՝ դեռևս աշխատանքային պայմանագիրը կնքելիս կողմերը գիտակցում են, որ եթե պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո երկու կողմն էլ աշխատանքային հարաբերությունները շարունակելու միասնական կամք չդրսևորեն, ապա այդ հարաբերությունները սահմանափակվելու են պայմանագրով որոշված ժամկետով, և չեն կարող օրինական ակնկալիք ունենալ, որ որոշված ժամկետից հետո աշխատանքային հարաբերություններն անպայման շարունակվելու են: Դրանից տրամաբանորեն հետևում է, որ եթե առկա չէ կողմերից մեկի ազատ կամքը, պայմանագրի մյուս կողմը կամ որևէ այլ անձ չի կարող հարկադրել շարունակելու աշխատանքային հարաբերությունները պայմանագրի ժամկետը լրանալուց հետո, քանի որ նման հարկադրանքը կհակասի ինչպես կողմերի նախապես արտահայտած կամքին, այնպես էլ պայմանագրի կողմերի հավասարության սկզբունքին:

Վերը շարադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե գործատուի նախաձեռնությամբ ցանկացած հիմքով աշխատանքային պայմանագրի դադարեցման կամ լուծման վերաբերյալ վեճը լուծելու պահին լրացել է գործատուի և աշխատողի միջև կնքված որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը, ապա նույնիսկ գործատուի կողմից որոշակի ժամկետով կնքված պայմանագիրը լուծելու մասին ծանուցման օրենսդրական պահանջը չկատարելու պարագայում աշխատողը չի կարող վերականգնվել իր նախկին աշխատանքում՝ անկախ պայմանագիրը լուծելու հիմքի և կարգի օրինականությունից, քանի որ կողմերը պայմանագիր կնքելիս իրենց ազատ կամքով նման հնարավորություն չեն սահմանել և նման օրինական ակնկալիք չեն ունեցել: Այլ կերպ ասած, եթե գործատուն որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում այլ հիմքով լուծում է աշխատանքային պայմանագիրը, որից հետո աշխատողը վիճարկում է պայմանագրի լուծման օրինականությունը, և եթե դատարանի վճռի կայացման պահի դրությամբ արդեն իսկ լրացել է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը, ապա աշխատողն աշխատանքում վերականգնվել չի կարող՝ անկախ պայմանագրի լուծման օրինականությունից և այն հանգամանքից, որ աշխատողը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի հիման վրա գործատուի կողմից չի ծանուցվել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ:

Հետևաբար առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում այդ պայմանագրով սահմանված ժամկետը վեճը լուծելու ժամանակ լրացած լինելու և գործատուի կողմից աշխատանքային հարաբերությունները չշարունակելու կամք դրսևորելու պայմաններում առկա է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի իմաստով գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինություն՝ կապված կողմերի կնքած աշխատանքային պայմանագրի պայմանների կատարման հետ: Ուստի, եթե կողմերը պայմանագիր կնքելիս պայմանավորվել են իրենց աշխատանքային հարաբերությունները սահմանափակել որոշակի ժամկետով, ապա դատարանն իրավասու չէ կողմերից մեկի կամքին հակառակ փոփոխելու աշխատանքային պայմանագրի պայմանները՝ գործատուի համար առաջացնելով սպասվածից անբարենպաստ, իսկ աշխատողի համար՝ առանց պայմանագրային հիմքի առավել բարենպաստ հետևանքներ:

Նման պայմաններում, եթե աշխատողին աշխատանքից ազատելն անօրինական է,

կիրառելի է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը, ընդ որում՝ աշխատանքային պայմանագրի լուծման օրվա և հատուցումների հարցերը լուծելիս ևս դատարանները պետք է հաշվի առնեն որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի վերոշարադրյալ առանձնահատկությունները: Մասնավորապես, որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը պետք է համարվի լուծված պայմանագրով որոշված ժամկետի հաջորդ օրը, իսկ հարկադիր պարապուրդի գումարն էլ կարող է բռնագանձվել մինչև պայմանագրով որոշված ժամկետի ավարտը, քանի որ այդ ժամկետը կողմերի նախապես դրսևորած կամքին համապատասխան ընդգրկում է հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածը:

### ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

07.04.2017թ.

24. «ԱՌԷԿՍԻՄԲԵԼՆԿ-ԳԼՋՊՐՈՄԲԵԼՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ v. Հարություն Վարդանյան, քաղ. գործ թիվ ԵՄԳ/0049/04/15

Էջ 277-289

**Խնդիր.** 1) Ո՞րն է երաշխավորի պատասխանատվության առանձնահատկությունը, 2) որո՞նք են հարկադրված դիմումի հիման վրա պարտապանին սնանկ ճանաչելու պայմանները և հետևանքները

3) արդյո՞ք հիմնական պարտավորության պարտատերը կարող է ներկայացնել այդ պարտավորության կատարումն ապահովող երաշխավորին սնանկ ճանաչելու պահանջ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Անդրադառնալով երաշխավորի պատասխանատվության ընդհանուր բնույթագրին և վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը, 364-րդ հոդվածի 1-ին կետը, 375-րդ հոդվածի 1-ի կետը, 377-րդ հոդվածի 1-ին կետը, 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 399-րդ հոդվածը, 415-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ երաշխավորը, կնքելով երաշխավորության պայմանագիր, իր վրա է վերցնում պարտապանի կողմից պարտավորությունը որևէ հիմքով խախտելու արդյունքում բացասական հետևանքներ կրելու ռիսկը: Դա, մասնավորապես, դրսևորվում է պարտավորության խախտման դեպքում երաշխավորի՝ պարտավորության ամբողջ ծավալով համապարտ պատասխանատվությամբ:

Նախկինում կայացված որոշումներից մեկով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն ամրագրել է երաշխավորի համապարտ պատասխանատվության կանխավարկածը, ինչը ենթադրում է, որ պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտատերն իրավունք ունի կատարման պահանջ ներկայացնելու ինչպես պարտապանին և երաշխավորին միասին, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրին ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

Երաշխավորի սուբսիդիար պատասխանատվությունը կարող է նախատեսվել միայն օրենքով կամ պայմանագրով: Պայմանագրով երաշխավորի պատասխանատվությունը կրում է սուբսիդիար բնույթ, եթե այդ մասին ուղղակիորեն սահմանված է պայմանագրում կամ երաշխավորին պահանջի ներկայացման ընթացակարգի վերաբերյալ պայմանագրային դրույթների կարգավորումից հետևում է, որ այն այդպիսին է:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ պարտատերը սուբսիդիար պատասխանատվություն ստանձնած անձին պարտավորության կատարման պահանջ կարող է ներկայացնել միայն հիմնական պարտապանին այդպիսի պահանջ ներկայացնելուց հետո և միայն այն չափով, որ չափով պարտավորությունը չի կատարվել վերջինիս կողմից: Այսինքն՝ սուբսիդիար պատասխանատվություն կրող անձին պահանջը կարող է ներկայացվել, եթե

- հիմնական պարտապանը հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց, կամ
- պարտատերը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը:

Վճռաբեկ դատարանը, նույն որոշմամբ վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածի 1-ին կետը, նշել է, որ գործում է երաշխավորի լրիվ ծավալով պատասխանատվության սկզբունքը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության

պայմանագրով (տե՛ս, «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Մարինե Նազարյանի և մյուսների թիվ ԵՇԴ/0700/02/12 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականի Վճռաբեկ դատարանի որոշումը):

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ երաշխավորությունը՝ որպես պարտավորության կատարման ապահովման միջոց, լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն է, այսինքն՝ առանց հիմնական պարտավորության՝ գոյություն ունենալ չի կարող: Այլ կերպ ասած՝ երաշխավորությունը միշտ լրացուցիչ պարտավորություն է, ինչը նշանակում է, որ հիմնական պարտապանի կողմից պարտավորությունը խախտելուց հետո միայն պարտատերը կարող է պահանջ ներկայացնել երաշխավորի դեմ, ընդ որում՝ պահանջ ներկայացնելն ունի առանձնահատկություն՝ կապված նրանից, թե երաշխավորի պատասխանատվությունը համապարտ է, թե սուբսիդիար: Եթե համապարտ պատասխանատվության դեպքում պարտատերն իր հայեցողությամբ կարող է պահանջ ներկայացնել ինչպես հիմնական պարտապանին, այնպես էլ՝ երաշխավորին, ապա սուբսիդիար պատասխանատվության դեպքում, դեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 415-րդ հոդվածով, մինչև երաշխավորի դեմ պահանջ ներկայացնելը պարտատերը պետք է պահանջ ներկայացնի հիմնական պարտապանին, և միայն այն դեպքում, եթե հիմնական պարտապանը հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց, կամ պարտատերը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը, ապա այդ պահանջը կարող է ներկայացվել երաշխավորին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նաև հավելել, որ երաշխավորը պարտապանի կողմից պարտավորությունը խախտելու դեպքում պարտատիրոջ առջև պարտապանի հետ միասին պատասխանատվություն կրող անձն է: Նկատի ունենալով, որ երաշխավորը հիմնական պարտավորության պարտապանը չէ, երաշխավորի կողմից հիմնական պարտավորությունը կատարելու դեպքում օրենսդիրը երաշխավորին տվել է իրավունք հիմնական պարտապանի նկատմամբ ձեռք բերել պահանջի իրավունք՝ իր կողմից կատարած պարտավորության չափով: Այլ կերպ ասած՝ այն դեպքերում, երբ երաշխավորը հիմնական պարտավորության պարտապանի փոխարեն կատարում է պարտավորությունը, ապա հիմնական պարտավորության պարտատիրոջ փոխարեն սկսում է հանդես գալ որպես պարտատեր:

Անդրադառնալով հարկադրված դիմումի հիման վրա պարտապանին սնանկ ճանաչելու պայմաններին ու հետևանքներին և վկայակոչելով «Մանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտապանին սնանկ ճանաչելու հիմքը նրա անվճարունակությունն է, որը հարկադրված սնանկության դեպքում դրսևորվում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանցի առկայության և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվելու հանգամանքով: Ընդ որում, անձին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է՝ այդ շրջանառության անվճարունակ մասնակիցներին ֆինանսապես առողջացնելու կամ նրանց քաղաքացիական շրջանառությունից դուրս մղելու նպատակով, որպեսզի վերջիններիս անվճարունակության հետևանքով չտուճահարվեն նաև քաղաքացիական շրջանառության մնացած մասնակիցների շահերը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ պարտապանին սնանկ ճանաչելը պարտավորությունը ոչ պատշաճ կատարած պարտապանի նկատմամբ դատական այնպիսի միջամտություն է, որի պայմաններում սահմանափակվում է պարտապանի գործողությունների շրջանակը մինչև սնանկության վարույթի ավարտը, որպիսի կարգավորման նպատակը պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովելն է:

Երաշխավորին սնանկ ճանաչելու հնարավորության կապակցությամբ վերլուծելով «Մանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետը, 43-րդ, 44-րդ հոդվածները, վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 23.06.2011 թվականի խմբագրությամբ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը երաշխավորությամբ ապահովված պահանջը դիտարկել է որպես ապահովված պահանջ: Նկատի ունենալով, որ օրենսդիրն ապահովված պահանջների համար նախատեսել է հատուկ կարգավորում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ըստ վերոնշյալ կարգավորման՝ մասնավորապես «Մանկության մասին»

ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ երաշխավորությամբ ապահովված պարտատերը կարող է երաշխավորությամբ ապահովված իր պահանջն ուղղակիորեն ներկայացնել երաշխավորին սնանկության վարույթից առանձին, իսկ նման պահանջը ներկայացնելու կամ պահանջը լրիվ չբավարարվելու դեպքում այդ պահանջը ներկայացնել սնանկության վարույթում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ այն դեպքում, երբ երաշխավորությամբ ապահովված պարտավորության պարտատերն իր պահանջն ուղղակիորեն ներկայացնում է սնանկության վարույթում՝ ընդգրկվելով պարտատերերի ցուցակում, ապա այդ դեպքում պարտատերը համարվում է ապահովված պարտատեր: Հաշվի առնելով, որ ապահովված պարտատեր համարվելը չի կարող լինել ինքնանպատակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ նման դեպքում պարտատիրոջ պահանջը բավարարվում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածին համապատասխան (*Ապահովված պահանջները և դրանց բավարարումը*): Ընդ որում, նման դեպքում պարտատիրոջ պահանջները՝ որպես ապահովված պահանջ, սնանկության վարույթի շրջանակներում կարող են բավարարվել երաշխավորի միջոցների հաշվին: Այսպես՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերը շարադրված հիմնավորումները, օրենսդրի տրամաբանությունը, մասնավորապես՝ երաշխավորությամբ ապահովված պահանջն ապահովված պահանջների և դրանց բավարարման վերաբերյալ նշված օրենքի 43-րդ հոդվածում ներառելիս, գտել է, որ օրենսդիրը չի բացառում, որ երաշխավորության հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջները կարող են բավարարվել երաշխավորի գույքի իրացման արդյունքում: Ուստի Վճռաբեկ դատարանը գտել է, որ սնանկության գործով կառավարիչը՝ որպես սնանկության վարույթում պարտավորյալի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովող հիմնական անձ, երաշխավորության հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար կարող է հայցով դիմել դատարան երաշխավորի դեմ՝ ստացված գումարն ուղղելով ապահովված պահանջատիրոջ պահանջների բավարարմանը: Ստացված միջոցներն անբավարար լինելու դեպքում պարտատերը մնացած պահանջի մասով համարվում է չապահովված պարտատեր՝ հետագա բավարարում ստանալով արդեն ըստ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված առաջնահերթության:

Ինչ վերաբերում է երաշխավորի դեմ սնանկության վարույթից դուրս պահանջ ներկայացնելու հնարավորությանը, ապա Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում գտել է, որ նման պահանջ ներկայացնելու իրավունքը չի ներառում հիմնական պարտավորյալի հետ միաժամանակ երաշխավորին սնանկ ձևանալու հնարավորությունը: Այսինքն՝ հիմնական պարտավորյալի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում երաշխավորի դեմ պահանջ ներկայացնելու հնարավորությունը վերաբերում է միայն հայցային վարույթի կարգով գույքային պահանջ ներկայացնելուն, այլ ոչ թե նաև վերջինիս սնանկ ձևանալուն: Այսպիսով, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ դրույթներից բխում է, որ երաշխավորը, անկախ նրանից՝ վերջինս համապարտ պարտավորություն է ստանձնել, թե ոչ, միևնույն պայմանագրի հիմքով՝ պարտավորյալի հետ միաժամանակ չի կարող սնանկ ձևանալ:

Հետևաբար հիմնական պարտավորյալին սնանկ ձևանալուց հետո վերջինիս սնանկության վարույթում պարտատիրոջ պահանջը երաշխավորության հիմքով կհամարվի ապահովված պահանջ, իսկ պահանջի բավարարումն արդեն կիրականացվի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանի նման մոտեցումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ զուգահեռ ընթացող հիմնական պարտավորյալի և երաշխավորի սնանկության վարույթներից մեկով պարտատերը կարող է ստանալ իր պահանջի ամբողջական բավարարում, սակայն սնանկության հետևանքով կտուժեն քաղաքացիական շրջանառության մնացած մասնակիցները, քանի որ նույն պարտավորության համար մի քանի սուբյեկտ կձանաչվեն սնանկ՝ դրանից բխող հետևանքներով, ընդ որում այն դեպքում, երբ պարտատերն իր պահանջի բավարարում կարող էր ստանալ միայն հիմնական պարտավորյալին սնանկ ձևանալով: Նման պարագայում սնանկության մյուս վարույթը կվերածվի ինքնանպատակ գործընթացի՝ հանգեցնելով երաշխավորի իրավունքների անհարկի սահմանափակման: Այլ կերպ ասած՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ երաշխավորը, անկախ վերջինիս պատասխանատվության համապարտ կամ սուբսիդիար լինելուց, պարտավորյալի հետ միաժամանակ սնանկ ձևանալով չի կարող: Ուս-



տի Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով օրենսդրի տրամաբանությունը, կարևորելով քաղաքացիական շրջանառության կայունությունն ապահովելը, գտել է, որ հիմնական պարտապահի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում պարտատիրոջ կողմից երաշխավորին սնանկ ճանաչելու պահանջ չի կարող ներկայացվել:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ նաև երաշխավորության հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջների բավարարման ընթացակարգերին: Ի տարբերություն գրավով ապահովված պահանջատիրոջ պահանջների, որոնց համար «Մասնկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված են գրավադրված գույքի, ինչպես արտադատական, այնպես էլ դատական կարգով իրացման ընթացակարգեր, ապա նույն օրենքը չի նախատեսում երաշխավորի գույքի իրացման ընթացակարգ: Փաստորեն, օրենքը երաշխավորության հիմքով պարտատիրոջ պահանջը համարելով ապահովված, համենայնդեպս չի նախատեսում ապահովված պահանջի բավարարման կամ գույքի իրացման ընթացակարգ:

Սակայն, Վճռաբեկ դատարանը հիմք ընդունելով վերը շարադրված հիմնավորումները, գտել է, որ օրենսդիրը չի բացառում, որ երաշխավորության հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջները կարող են բավարարվել երաշխավորի գույքի իրացման արդյունքում: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտել է, որ սնանկության գործով կառավարիչը երաշխավորության հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար կարող է հայցով դիմել դատարան՝ երաշխավորի գույքի հաշվին ապահովված պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար: Հակառակ դեպքում, ստացվում է, որ օրենսդիրը երաշխավորության հիմքով նախատեսելով պարտատիրոջ պահանջների ապահովված լինելը, սակայն չի նախատեսում նույն հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջների բավարարման ընթացակարգ:

**07.04.2017թ.**

**25. Երևան համայնք v. Արմեն Ստամբոլյան, քաղ. գործ թիվ ԵԷԳ/0053/04/14 Էջ**

**290-298**

**Խնդիր.** Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հարկադրված սնանկության դիմումի հիմունք վրա հարուցված վարույթի մասին պարտապահի պատշաճ ծանուցման հարցին, ինչպես նաև վերջինիս պատշաճ չծանուցելու դեպքում՝ կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտման իրավական խնդրին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերլուծելով 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը, 19-րդ հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը, 103-րդ հոդվածի 1-3-րդ մասերը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը, 6-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սնանկության վարույթի մասին պարտապահին ծանուցելը պայմանավորված է սնանկության վարույթի առանձնահատկությամբ և նպատակ ունի ապահովելու սնանկ ճանաչվող պարտապահի մասնակցությունը սնանկության վարույթին՝ դրանով իսկ երաշխավորելով սնանկության վարույթի ընթացքում սնանկ ճանաչվող պարտապահի՝ օրենքով սահմանված իրավունքների լիարժեք իրականացումը (օրինակ՝ վիճարկելու սնանկության հիմքերը, ներկայացնելու անհրաժեշտ ապացույցներ և այլն): Նման անհրաժեշտությունը բխում է նաև դատավարությունում, այդ թվում՝ սնանկության վարույթի ողջ ընթացքում կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքները պահպանելու սահմանադրաիրավական և կոնվենցիոն դրույթներից:

Վճռաբեկ դատարանը, **Վերգուշ Վարդանյանն ընդդեմ Եղիշ Թորոսյանի** թիվ 3-19(ՎԴ) քաղաքացիական գործով 01.02.2008 թվականի որոշմամբ անդրադառնալով դատավարությունում կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներին, ինչպես նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իրավական վերլուծությանը, արձանագրել է, որ Սարգոյ իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն դիրքորոշումը, որ «հավասարության» սկզբունքը՝ կողմերի միջև «արդար հավասարակշռության» իմաստով պահանջում է, որ յուրաքանչյուր կողմ ունենա ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի նվազ բարենպաստ վիճա-

կում: Միջակցային դատաքննության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ունենա գործում եղած կամ լրացուցիչ ներկայացված ապացույցների մասին տեղեկանալու և դրանց մասին մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն (*տես, Անկերյն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի վճիռը, կետ 38*): Թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ուղղակիորեն նշված չէ, սակայն Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում (*Կոլոցան ընդդեմ Իտալիայի գործով 12.02.1985 թվականի վճիռի 28-րդ կետը*) արտահայտել է այն դիրքորոշումը, որ Պայմանավորվող պետությունները ոչ միայն պետք է ամրագրեն քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանության իրավունքը, այլև **կոնկրետ գործով պետք է ապահովեն** անձի կողմից այդ իրավունքի իրականացման իրական հնարավորությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ սնանկության վարույթի ընթացքում սնանկ ճանաչված պարտապանի նկատմամբ, ըստ էության, կիրառելի են որոշակի սահմանափակումներ (օրինակ՝ մորատորիումը և այլն), միաժամանակ հաշվի առնելով այն, որ սնանկության վարույթը կարող է հանգեցնել սնանկ ճանաչվող պարտապանի՝ քաղաքացիաիրավական շրջանառությունից դուրս գալուն, «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանել է սնանկության վարույթի մասին պարտապանին ծանուցելու ընթացակարգը: Այսպես՝ հարկադրված սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու հաջորդ օրը դատարանը պարտապանին է ուղարկում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը՝ կցելով դիմումի պատճենը:

Օրենսդիրը միաժամանակ պարտապանի կողմից իր սնանկությունը չվիճարկելու դեպքերի համար սնանկ ճանաչելու հարցի լուծման համար նախատեսել է հետևյալ ընթացակարգերը.

ա) **ընդհանուր կարգը, երբ պարտապանը, ստանալով իր սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը**, դրան հաջորդող 15 օրվա ընթացքում գրավոր չի վիճարկում իր սնանկությունը, ապա 16-րդ օրը դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու մասին, եթե պարտապանն անվճարունակ է կամ առկա են «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերը,

բ) **պարզեցված կարգը**, երբ պարտապանը բացակայում է, և նրա գտնվելու (բնակության) վայրը բացահայտել հնարավոր չէ (այսուհետ՝ բացակայող պարտապան), ապա դատարանն իր նախաձեռնությամբ հետախուզում է հայտարարում պարտապանի (պարտապանի ղեկավարի) և նրա գույքի, ինչպես նաև հաշվապահական և այլ փաստաթղթերի նկատմամբ: Ընդ որում, բացակայող պարտապանի նկատմամբ հայտարարված հետախուզման վարույթի ավարտից հետո, եթե չի հայտնաբերվում պարտապանի որևէ ներկայացուցիչ, ապա դատարանը ծանուցում է բացակայող պարտապանին նրա վերջին հայտնի՝ գտնվելու կամ բնակության վայրի հասցեով: Հատկանշական է, որ դատավորը 10-րդ օրը, առանց դատական նիստ հրավիրելու, վճիռ է կայացնում բացակայող պարտապանին սնանկ ճանաչելու մասին՝ «Մասնկության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հատկանիշների առկայության դեպքում, քանի որ նշված հասցեով ծանուցումը բավարար է գործի վարույթը շարունակելու համար, եթե ծանուցումն ուղարկելուց հետո՝ 9 օրվա ընթացքում, պարտապանը գրավոր չի վիճարկում իր սնանկությունը:

20.07.2017թ.

26. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ v. «Գլենդել Հիլզ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԿԳ/0078/04/15

ԷԶ  
299-307

*Խնդիր.* Արդյո՞ք մինչև «Մասնկության մասին» ՀՀ օրենքում 17.06.2016 թվականի ՀՕ-105-Ն օրենքով փոփոխություններ և լրացումներ կատարելն ապահովված պարտատիրոջ կողմից մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելու դեպքում դատարանն իրավասու էր այդ հարցի վերաբերյալ որոշում կայացնել:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վկայակոչելով 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը, 19-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը, նույն հոդ-

վածի՝ իրավահարերության ծագման պահին գործող խմբագրության 3-րդ մասը, իրավահարերության ծագման պահին գործող խմբագրությանը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը, 3-րդ մասի «գ» կետը, 43-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 47-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում արտահայտած իր դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Կայաչ» ՍՊԸ-ի և Միլվա Համբարձումյանի թիվ ԵԿԴ/0469/02/14 քաղաքացիական գործով 17.07.2015 թվականին կայացրած որոշմամբ, անդրադառնալով իրավահարաբերության ծագման պահին գործող վերը նշված հոդվածների վերլուծությանը, արձանագրել է, որ գրավով ապահովված պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության կատարման համար գրավադրված գույքը չի ընդգրկվում սնանկ ձանաչված պարտապանի գույքի կազմում և ապահովված պարտատերը կարող է այդ գույքից իր պահանջների բավարարում ստանալ սնանկության վարույթից դուրս ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, սակայն միայն այն դեպքում, երբ տեղեկանալով պարտապանի սնանկ ձանաչվելու վերաբերյալ՝ ապահովված պարտատերը ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու մասին:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը վկայակոչված կարգավորումների վերաբերյալ մեկ այլ որոշմամբ նշել է, որ օրենսդիրը պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջ համար նախատեսել է իր բավարարումը ստանալու երկու այլընտրանքային եղանակ՝ սնանկության վարույթից դուրս և սնանկության վարույթի շրջանակներում՝ նշված երկու եղանակներից որևէ մեկի ընտրության հնարավորությունը թողնելով պարտատիրոջ հայեցողությանը: Այսպես, եթե գրավով ապահովված պարտավորության պարտատերն ընտրում է սնանկության գործով վարույթը շրջանցելու միջոցով իր պահանջները բավարարելու եղանակը, ապա վերջինս բավարարում կարող է ստանալ բացառապես գրավադրված գույքի հաշվին, և անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ: Ընդ որում այն դեպքում, երբ գրավով ապահովված պահանջի պարտատերն օգտվում է իր պահանջի բավարարումը սնանկության վարույթի շրջանակներից դուրս ստանալու՝ օրենքով իրեն վերապահված իրավունքից, վերջինս հնարավորություն ունի գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածել և իրացնել այն ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ գրավադրված գույքի իրացման կանոններին համապատասխան: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ օրենսդրի կողմից նման տարբերակված կարգավորում սահմանելու նպատակն է սնանկության վարույթի առկայության պայմաններում երաշխավորել գրավով ապահովված պարտատերերի և մյուս պարտատերերի իրավունքների և օրինական շահերի միջև ողջամիտ հավասարակշռությունը (յուև, «Էջ-Էս-Բի-Մի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն ընդդեմ «ԱՍՏԷ» ՓԲԸ-ի և մյուսների թիվ ԵԿԴ/1873/02/14 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավակարգավորումների՝ ապահովված պարտատերը, ծանուցելով դատարանին ապահովված իրավունքի առարկայի նկատմամբ մորատորիումի գործողությունը չտարածելու մասին, ակնկալում էր նյութական և դատավարական առումով որոշակի իրավական հետևանքների առաջացում, այն է՝ ապահովված իրավունքի առարկան սնանկ ձանաչված պարտապանի գույքի կազմից դուրս բերում, դրա նկատմամբ կիրառված սահմանափակումների վերացում և սնանկության վարույթից դուրս արտադատական կամ դատական կարգով դրա իրացում:

Ընդ որում, ապահովված իրավունքի առարկան սնանկ ձանաչված պարտապանի գույքի կազմից դուրս բերումը և դրա իրացումը որոշակի դեպքերում կարող էր առաջ բերել ինչպես պարտապանի գույքային գանգվածի փոփոխություն, այնպես էլ շոշափել երրորդ անձանց իրավունքները (օրինակ՝ այն դեպքում, երբ օրենքով սահմանված կարգով գրավի առարկան հաջորդող գրավի առարկա է): Այսինքն՝ նման դեպքերում դատարան ներկայացված՝ մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցումն իրավական հետևանքներ կարող էր առաջացնել նաև երրորդ անձանց համար, որպիսի

պարագայում վերջիններս ձեռք էին բերում իրավական շահագրգռվածություն մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցմամբ պայմանավորված հետևանքների նկատմամբ, որոնք կարող էին շոշափել վերջիններիս՝ Կոնվենցիայով և դրան կից թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված՝ համապատասխանաբար արդար դատաքննության և անձի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքները: Հետևաբար վերջիններս իրավաչափորեն ակնկալում էին դատարանի կողմից որոշման կայացում, որի հետ համաձայն չլինելու պարագայում կունենային այն բողոքարկելու հնարավորություն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի նշված իրավակարգավորումների պայմաններում յուրաքանչյուր դեպքում առաջանում էր մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցման առնչությամբ դատական ակտ կայացնելու իրավական անհրաժեշտություն, քանի որ նախ՝ այդպիսի ծանուցմամբ անձն ակնկալում էր որոշակի իրավական և փաստական հետևանքների առաջացում, որոնք ինքնին, միայն դատարանին ծանուցելու փաստի ուժով չէին կարող առաջանալ, քանի որ առկա էր դրանց իրավաչափության գնահատման և արդյունքում մերժման կամ բավարարման մասին որոշման կայացման անհրաժեշտություն: Եվ երկրորդ՝ սնանկության վարչաթի առանձնահատկությամբ պայմանավորված, մորատորիումի գործողությունը չտարածելու մասին դատարանին ծանուցած պարտատերն ակնկալում էր նաև ապահովված առարկայի նկատմամբ կիրառված սահմանափակումների վերացում, եթե այդպիսիք կիրառվել են, որն էլ իր հերթին կրկին ենթադրում է դատական ակտի կայացում՝ որոշման ձևով:

Բացի այդ, նշված եզրահանգումն առավել կարևորվում է այն պարագայում, երբ մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցմամբ ակնկալվող հետևանքները շոշափում էին երրորդ անձանց իրավունքները, քանի որ այդ դեպքում առաջանում էր տարբեր անձանց իրավունքների և իրավական շահերի միջև հավասարակշռության ապահովման խնդիր, որն առանց դատական ակտի կայացման հնարավոր չէ իրականացնել: Այդ իսկ պատճառով օրենսդիրը սահմանել է մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցումը դատարանին ներկայացնելու պարտականություն: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված կարգավորումը չէր կարող ինքնանպատակ լինել և դատարանի դերն այդ հարցում չէր կարող սահմանափակվել միայն ծանուցումն ի գիտություն ընդունելով, այլ դատարանը պետք է մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցման վերաբերյալ կայացնել դատական ակտ՝ ապահովելով անձի արդար դատաքննության իրավունքի իրացումը: Այսինքն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի հիման վրա դատարան ներկայացված մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցման իրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այն օրենքից բխող հետևանքներն առաջացնելու պահանջով դատարան ներկայացված միջնորդություն է, որի ուսումնասիրության արդյունքում դատարանը պետք է կայացնել համապատասխան որոշում:

Վկայակոչելով Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում եզրահանգել է, որ ապահովված պարտատիրոջ՝ մորատորիումի գործողությունը չտարածելու վերաբերյալ ծանուցումը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ դատարանի կողմից համապատասխան դատական ակտ կայացնելու լիազորությունը բխում է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքի էությունից, ինչպես նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից, այն է՝ անձը դատարանի առջև իր կողմից բարձրացրած յուրաքանչյուր հարցի վերաբերյալ պետք է ունենա որոշակի հաստատուն որոշում ստանալու իրավունք կապված իր հարցի լուծման հետ, որն էլ իր հերթին սերտորեն կապված է յուրաքանչյուր անձի՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքի իրականացման հետ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ 17.06.2016 թվականին ընդունված ՀՕ-105 օրենքով, որն ուժի մեջ է մտել 23.07.2016 թվականին, «Մասնկության մասին» ՀՀ օրենքը լրացվել է նոր՝ 39.1-րդ (ապահովված իրավունքի առարկայի իրացման մասին դիմումը) և 39.2-րդ (ապահովված իրավունքի առարկայի իրացման և ապահովված պահանջի չափը հաստատելու մասին դիմումի քննության կարգը) հոդվածներով:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն ուղղակիորեն անբազրել է դատարանի լիազորությունն ապահովված իրավունքի առարկայի վրա մո-

րատորիումի գործողությունը չտարածելու վերաբերյալ դատարանի կողմից համապատասխան դատական ակտի՝ որոշման կայացման մասին այն դեպքում, երբ ապահովված իրավունք ունեցող պարտատերը դիմել է դատարանին:

Այսինքն՝ եթե նախկին իրավակարգավորման պայմաններում մորատորում չտարածելու ծանուցման վերաբերյալ դատական ակտ կայացնելու դատարանի լիազորությունն ուղղակիորեն ամրագրված չէր, սակայն բխում էր ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքի էությունից, և որին համահունչ էլ ընթացել էր դատական պրակտիկան, ապա արդեն գործող իրավակարգավորման պայմաններում նման լիազորությունն ուղղակիորեն ամրագրված է գործող օրենսդրությամբ:

**27.12.2017թ.**

**27. «Հինգերորդ աստղ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԱՐԱԳ/0043/04/13**

Էջ  
308–314

**Խնդիր.** Արդյո՞ք դատարանն իրավասու է որոշում կայացնել ֆինանսական առողջացման ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու վերաբերյալ, եթե սնանկության վարույթի մասնակիցները միջնորդել են կասեցնել կամ առանց քննության թողնել ֆինանսական առողջացման ծրագրի կատարման վերաբերյալ սնանկության գործով կառավարչի հաշվետվության քննարկումը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 64-րդ հոդվածի 1-ին մասի, 65-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 69-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ մասի 1-ին պարբերության, 4-րդ մասի, 70-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սնանկության վարույթում պարտապանի ֆինանսական առողջացումը սնանկության վարույթի առանցքային տարրերից է, որը պայմանավորված է սնանկության վարույթի առանձնահատկությամբ, այն է՝ հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին հաղթահարել ֆինանսական դժվարությունները, վերականգնել իր բնականոն գործունեությունը՝ մինևույն ժամանակ ապահովելով պարտատերերի շահերի պաշտպանությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ պարտապանի ֆինանսական առողջացումը տեղի է ունենում օրենքով սահմանված որոշակի ընթացակարգով, որի սկզբնակետը ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացումն է: Ֆինանսական առողջացման ծրագիրը, լինելով պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող՝ օրենքով չարգելված միջոցառումների համալիր, ընդունվում է պարտատերերի ժողովի կողմից որոշակի ժամկետով (առավելագույնը՝ 36 ամիս, եթե այն չի երարաձգվել) և ենթակա է հաստատման դատարանի կողմից: Ընդ որում, դատարանի կողմից հաստատվելու դեպքում պարտապանի գործունեությունն իրականացվում է միայն այդ ծրագրի շրջանակներում, իսկ պարտատերերի պահանջների բավարարումը՝ ծրագրով սահմանված կարգով: Այսինքն՝ պարտապանը պարտավոր է կատարել ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները, որոնց նկատմամբ վերահսկողություն է իրականացվում ինչպես կառավարչի, այնպես էլ դատարանի կողմից: Նշվածով պայմանավորված՝ ֆինանսական առողջացման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 15 օր առաջ կառավարիչը պետք է դատարան ներկայացնի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվություն:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը պարտապանի ֆինանսական առողջացման մասին ամփոփ տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ է, որն արտացոլում է պարտապանի՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական դրությունը, պարտապանի ֆինանսական առողջացման ուղղված և իրականացված միջոցառումների նկարագիրը, պարտատերերի պահանջների բավարարված լինելու կամ չլինելու հանգամանքը և այլ տեղեկություններ: Այլ կերպ ասած՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության ներկայացումը պարտապանի ֆինանսական առողջացման գործընթացի ավարտին ուղղված ընթացակարգ է, քանի որ այդ փաստաթղթի քննարկման արդյունքներով է որոշվում՝ պարտապանը վերջնականապես առողջացել է, թե՛ ոչ: Այսպիսով ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության ներկայացումը դատարանին, դատարանի կողմից դրա քննարկումը և արդյունքում հա-

մապատասխան դատական ակտի կայացումը վկայում են այն մասին, որ պարտապանի ֆինանսական առողջացման նկատմամբ իրականացվում է նաև դատական վերահսկողություն: Ըստ այդմ էլ՝ դատարանը, ստանալով ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը, այն քննարկելու համար նշանակում է դատական նիստ, որի վերաբերյալ պատշաճ ձևով տեղեկացվում են պարտապանը, կառավարիչը և պարտատերերը: Ընդ որում, դատարանը հաշվետվության քննարկման արդյունքներով, հաշվի առնելով նաև պարտատերերի առարկությունները՝ կայացնում է

ա) վճիռ՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվությունը հաստատելու և սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարվել են, կամ

բ) որոշում՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարված չեն:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրի կողմից ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության քննարկման արդյունքում դատարանի կողմից կայացվող դատական ակտերի տեսակների սպառիչ սահմանումս ինքնանպատակ չէ, այլ կոչված է սնանկության վարույթում ապահովելու բոլոր պարտատերերի շահերի պաշտպանությունը և դրանց միջև հավասարակշռությունը: Ըստ այդմ՝ այն դեպքում, երբ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության քննարկման արդյունքներով պարզվում է, որ բոլոր պարտատերերի պահանջները բավարարվել են, դատարանը հաստատում է ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը և վճիռ է կայացնում սնանկության գործն ավարտելու մասին, մինչդեռ այն դեպքում, երբ պարզվում է, որ բոլոր պարտատերերի պահանջները բավարարված չեն, դատարանը որոշում է կայացնում ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու մասին:

Անդրադառնալով սնանկության վարույթում կասեցման հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Մանկության մասին» ՀՀ օրենքի՝ «Մանկության գործով առանձին պահանջների քննության կասեցման հիմքերը և կարգը» վերառությամբ 20.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործի վարույթն առանձին պարտատերերի պահանջների մատվ կարող է կասեցվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ կասեցման հիմքերի առկայության դեպքում, եթե այդ իրավակարգավորումները կիրառելի են սնանկության վարույթում առանձին պահանջների քննության նկատմամբ:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի վարույթի կասեցումը գործի քննության ընթացքում այնպիսի հանգամանքի ի հայտ գալն է, որն ըստ էության արգելակում է գործի հետագա ընթացքը: Օրենսդիրը, հաշվի առնելով սնանկության վարույթի առանձնահատկությունը (սնանկության վարույթը բաղկացած է որոշակի փուլերից և ընթանում է յուրաքանչյուր փուլին համապատասխան օրենքով սահմանված ընթացակարգով), այդ վարույթի արդյունավետությունն ապահովելու նկատառումով «Մանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածով կարգավորել է կասեցման ընթացակարգի կիրառման հնարավորությունը: Օրենսդիրը վարույթի կասեցման կարգ նախատեսել է առանձին պարտատերերի պահանջների մատվ և այն պայմանով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կասեցման հիմքը (հիմքերը) կիրառելի լինի այդ իրավահարաբերության նկատմամբ: Ընդ որում, առանձին պահանջների մատվ վարույթի կասեցումը չի ընդհատում սնանկության վարույթի ընթացքը, ինչը նշանակում է, որ օրենքով սահմանված կարգով առանձին պարտատերերի պահանջների մատվ սնանկության գործի վարույթի կասեցման դեպքում սնանկության վարույթի մյուս փուլերը պետք է ընթանան օրենքով նախատեսված ընթացակարգով:

Այսպիսով օրենսդիրը սնանկության վարույթում կասեցման հնարավորությունն նախատեսել է միայն առանձին պարտատերերի պահանջների մատվ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածը, որը սահմանում է դատարանի կողմից ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության քննարկման կարգը, այդ հաշվետվության քննության կասեցման կարգ չի նախատեսում: Նշված հոդվածը չի սահմանում նաև այդպիսի հաշվետվությունն առանց քննության թողնելու կարգ:

27.12.2017թ.

**28. Արթուր Բաղայանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյան Էջ  
v. Սեդա Մելիք-Թանգյան, բաղ. գործ թիվ ԵԿԳ/0598/02/16 315–325**

**Խնդիր.** Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է պարտապանի կողմից իր հետ փոխկապակցված կամ երրորդ անձանց կատարած անհատույց փոխանցումները որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու մտադրությամբ կատարված ակնհայտորեն վկայող փոխանցումներ գնահատելու խնդրին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ Եվրոպական դատարանի դիրքորոշումներին: Մասնավորապես Եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, հռչակելով սեփականության իրավունքը, միաժամանակ նախատեսում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն ի շահ հանրության, եթե այդ սահմանափակումը նախատեսված է օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով, և ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար: Եվրոպական դատարանը նշել է նաև, որ ինչ հիմքով էլ, որ տեղի ունենա միջամտությունը սեփականության իրավունքին, դա կարող է արդարացված համարվել բացառապես այն դեպքում, երբ այն տեղի է ունեցել ի շահ հանրության և հետապնդել է իրավաչափ նպատակ (...) (*յրև. Sporrang and Lonroth v. Sweden գործով Եվրոպական դատարանի 23.09.1982 թվականի վճիռը, կետ 61, Mkhchyan v. Russia գործով Եվրոպական դատարանի 07.02.2017 թվականի վճիռը, կետեր 65–67, Barcza and Others v. Hungary գործով Եվրոպական դատարանի 11.10.2016 թվականի վճիռը, կետեր 41–45*):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել արձանագրել, որ 17.06.2016 թվականին ընդունված և 23.07.2016 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-105-Ն ՀՀ օրենքով խմբագրվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի նախաբանը: Կատարված փոփոխությունը վերաբերում է սնանկության գործով կառավարչի կողմից դատարան դիմելու համար սահմանված մեկամյա ժամկետի հաշվարկման սկիզբը որոշելուն: Մասնավորապես՝ մինչև նշված օրենքով կատարված փոփոխությունը, մեկամյա ժամկետի հաշվարկման սկիզբը սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելու պահին էր, իսկ փոփոխությունից հետո՝ ներկայիս խմբագրությամբ, մեկամյա ժամկետի հաշվարկման սկիզբը պարտապանին սնանկ ձանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահին է:

Վկայակոչելով նախկինում կայացրած որոշումներով արտահայտած իր դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ նաև ՀՀ սահմանադրական դատարանի 31.01.2017 թվականի թիվ ՍԴՈ-1340 որոշմանը: ՀՀ սահմանադրական դատարանը, քննելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, գտել է, որ այն համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ձանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դիմել և դատական կարգով հետ ստանալ պարտապանին սնանկ ձանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում պարտապանի հետ փոխկապակցված անձանց պարտապանի կատարած այն անհատույց փոխանցումները, որոնք դատարանի կողմից կգնահատվեն որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին ակնհայտորեն վկայող փոխանցումներ:

Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «... օրենքի վիճարկվող դրույթով սահմանված պայմաններին համապատասխանող փոխանցումներն ինքնին չեն կարող վկայել պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մա-

սին: Նման դիրքորոշման համար հիմք են հանդիսանում այն հանգամանքները, որ, նախ՝ նման մտադրության առկայությունը կամ բացակայությունը գնահատման ենթակա հանգամանքներ են, որոնք կարող են հաստատվել դատարանի կողմից գործի կոնկրետ հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրման և գնահատման արդյունքում, երկրորդ՝ նշված պայմաններին համապատասխանող ոչ բոլոր փոխանցումները կարող են վկայել պարտապանի ոչ իրավաչափ մտադրության մասին: Եթե պարտապան ֆիզիկական անձը որևէ անհատույց փոխանցում է կատարել իր հետ փոխկապակցված անձի, որից միայն երեք կամ չորս տարի հետո է ստանձնել որևէ պարտավորություն և դրանից կարճ ժամանակ անց սնանկ է ճանաչվել, շատ դժվար կլինի նման փոխանցումը դիտարկել որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին ակնհայտորեն վկայող փոխանցում:

Վերոնշյալ իրավական դիրքորոշման համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ նման դեպքերը, թեև համապատասխանում են վիճարկվող դրույթի սահմանած պայմաններին, սակայն չեն կարող ծառայել վիճարկվող դրույթի՝ օրենսդրի կողմից սահմանված և ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող նպատակին, և գտել է, որ դատարանները վիճարկվող կիրառելիս դրա գործողության շրջանակից պետք է բացառեն այն անհատույց փոխանցումները, որոնք ակնհայտորեն չեն վկայում պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին: Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթում սահմանված պայմանները բավարարող բացառապես բոլոր փոխանցումները հետ ստանալը, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ դրանցից ոչ բոլորը կարող են ակնհայտորեն վկայել պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին, չի կարող դիտարկվել որպես ՀՀ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար անհրաժեշտ միջոց: Նման մոտեցումը կխախտի ոչ միայն անձի սեփականության իրավունքը, այլև հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության սահմանադրական իրավունքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի իրավակարգավորումը՝ սնանկության գործով կառավարչի՝ պարտապանի կողմից իրեն **փոխկապակցված անձանց** կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով դատարան դիմելու իրավունքի վերաբերյալ, ընդհանուր առմամբ համադրելի է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի իրավակարգավորմանը, որով նախատեսված է սնանկության գործով կառավարչի՝ պարտապանի կողմից **երրորդ անձանց** կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով դատարան դիմելու իրավունքը: Մասնավորապես՝ նշված իրավանորմերի համեմատական վերլուծությունից բխում է, որ երկու իրավակարգավորումներն էլ վերաբերում են պարտապանի կատարած անհատույց փոխանցումները հետ ստանալու պահանջով դատարան դիմելու՝ սնանկության գործով կառավարչի իրավունքին: Ընդ որում, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը սահմանում է պարտապանին փոխկապակցված անձանց, իսկ նույն մասի «բ» կետը՝ երրորդ անձանց կատարված անհատույց փոխանցումները հետ ստանալու պահանջով դատարան դիմելու իրավունքը: Ըստ այդմ, առաջին իրավանորմով սահմանված է նախկին 5 տարվա, իսկ երկրորդով՝ 3 տարվա ընթացքում պարտապանի կատարած փոխանցումները հետ ստանալու հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով նշված իրավակարգավորումների՝ անհատույց գործարքներով կատարված փոխանցումները հետ ստանալու իրավական հնարավորության մասով բովանդակային համարժեքությունը, գտել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 31.01.2017 թվականի թիվ ՍԴՈ-1340 որոշմամբ արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ սնանկության գործով կառավարիչը կարող է դատական կարգով հետ ստանալ միայն պարտապանի կատարած այն անհատույց փոխանցումները, որոնք դատարանի կողմից կգնահատվեն որպես **պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին ակնհայտորեն վկայող փոխանցումներ**, կիրառելի է նաև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի նկատմամբ: Այսինքն՝ դատարանները «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի ինչպես «ա», այնպես էլ «բ» կետը կիրառելիս դրանց գործողության շրջանակից պետք է բացառեն այն անհատույց



փոխանցումները, որոնք ակնհայտորեն չեն վկայում պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին:

Ընդհանրացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճառելի դատարանն արձանագրել է հետևյալը.

1. յուրաքանչյուր դեպքում, երբ առկա է սեփականության իրավունքի սահմանափակում, մասնավորապես՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով սեփականության իրավունքի նկատմամբ միջանտություն, ապա սեփականության հիմնարար իրավունքի պաշտպանությունից բխում է, որ այդ սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ: Ընդ որում, սեփականության իրավունքի սահմանափակման և հետապնդվող նպատակի միջև պետք է ապահովվի որջամիտ հավասարակշռություն,

2. պարտապանի՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերով նախատեսված անձանց կատարած անհատույց փոխանցումները սնանկության գործով կառավարչի կողմից հետ ստանալու՝ օրենքով սահմանված հնարավորությունը Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով միջանտություն է սեփականության իրավունքին,

3. այդ միջանտությունը, այն է՝ կատարված անհատույց փոխանցումները հետ ստանալը, հետապնդում է պարտատերերի նկատմամբ պարտավորության կատարումից չարամտորեն խուսափելը կանխելու նպատակ, որով պետությունն ապահովում է պարտատերերի հիմնական իրավունքների պաշտպանությունը: Ընդ որում, այդ նպատակով սեփականության իրավունքի սահմանափակումը, ըստ ՀՀ սահմանադրական դատարանի, համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Հետևաբար կատարված անհատույց փոխանցումներն իրավաչափ կերպով հետ ստանալու համար անհրաժեշտ է, որ պարտապանը գործարքը կնքած լինի պարտատիրոջ նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու մտադրությամբ,

4. «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կամ «բ» կետերով նախատեսված պայմաններին համապատասխանող պահանջ ներկայացնելն ինքնին բավարար չէ պարտապանի՝ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու մտադրության մասին եզրահանգում կատարելու համար: Հետևաբար այդ նորմերի տառացի կիրառումը որոշակի դեպքերում կհանգեցնի պարտապանի ունեցած ոչ իրավաչափ մտադրության մասին սխալ ենթադրության,

5. նման մտադրության առկայությունը կամ բացակայությունը գնահատման ենթակա հանգամանքներ են, որոնք կախված են կոնկրետ գործի հանգամանքներից և դատարանի կողմից կարող են հաստատվել միայն դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրման և գնահատման արդյունքում,

6. պարտատերերի իրավունքների և անձի սեփականության իրավունքի միջև որջամիտ հավասարակշռություն ապահովելու համար դատարանները խնդրո առարկա իրավանորմերը կիրառելիս դրանց գործողության շրջանակից պետք է բացառեն այն անհատույց փոխանցումները, որոնք ակնհայտորեն չեն վկայում պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին, և այդ դեպքում կապահովվի սեփականության սահմանադրական իրավունքի սահմանափակման և դրանով հետապնդվող նպատակի համաչափությունը: Այսինքն՝ խնդրո առարկա իրավակարգավորումների տեսանկյունից անհատույց փոխանցումն անվավեր գործարք կարող է համարվել միայն, այն դեպքում երբ, ի թիվս այլ հանգամանքների, ապացուցված է պարտապանի ոչ իրավաչափ մտադրության առկայությունը:

**27.12.2017թ.**

**29. «Գոն-Ալֆոն» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Յուրիկ Օհանյան v. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԱԲԳ/0254/02/16**

Էջ  
326–335

*Խնդիր.* Արդյո՞ք սնանկ ճանաչված պարտապանի հետ պարտավորական հարաբերությունների մեջ գտնվող անձի՝ պարտապանի կողմից ի կատարումն նշված պարտավորության սնանկ ճանաչված պարտապանի պարտատիրոջը վճարում կատարելը կարող է համարվել առանց դատարանի որոշման սնանկ ճանաչված պարտապանի կողմից պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալ՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի իմաստով:

*Վճառելի դատարանի դիրքորոշումը.* Վկայակոչելով «Մասնկության մասին» ՀՀ

օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետը, 29-րդ հոդվածի 1-ին մասը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խնդրաբարությանը 39-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, 47-րդ հոդվածի 1-ին մասը, 56-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 78-րդ հոդվածը, 80-րդ հոդվածի 1-ին մասը, 82-րդ հոդվածը, 84-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում կայացրած որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները և հարկ է համարել հավելել, որ սնանկության վարույթի առանձնահատկություններով, սնանկության նպատակներով պայմանավորված՝ պարտապանի նկատմամբ կիրառվում են մի շարք սահմանափակումներ՝ սկսած պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմումը վարույթ ընդունելու պահից: Մասնավորապես՝ արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի պարտավորություններով պարտատիրոջը դրամական կամ այլ բավարարում տալը («Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և 2-րդ մասի 2-րդ կետեր), պարտապանի գույքը տնօրինելը («Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետ), պարտատիրոջն արգելվում է մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմում ներկայացնելը պարտապանի նկատմամբ ստանձնած ցանկացած պարտավորության հաշվանցը պարտապանի նկատմամբ ունեցած իր պահանջի հետ («Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետ) և այլն: Նշված սահմանափակումներն ինքնանպատակ չեն, այլ ուղղված են սնանկության գործընթացում պարտապանի գույքի ամբողջականության ապահովմանը՝ նպատակ ունենալով ապահովելու պարտատերերի պահանջների՝ օրենքով սահմանված հերթականությամբ համաչափ բավարարումը: Պարտատերերի պահանջների բավարարման ստեղծումը միաժամանակ ուղղված է նաև պարտապանի շահերի բավարարմանը՝ նկատի ունենալով, որ պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է դատարանի հսկողությամբ, մասնավորապես՝ միջանկյալ բաշխման ծրագրին կամ ֆինանսական առողջացման ծրագրին համապատասխան: Այսպես, օրինակ, ֆինանսական առողջացման ծրագրով սահմանվում է պարտատերերի պարտավորությունների մարման ժամանակացույցը, նրանց պահանջների դիմաց վճարումներ կատարելու կարգը, ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում կարող է իրականացվել պարտապանի ամբողջ գույքի կամ դրա մի մասի վաճառք կամ պարտապանի գույքը պարտատերերին հաշվանցով փոխանցում և այլն: Այսինքն՝ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է այնպես, որ հնարավոր լինի ֆինանսապես առողջացնել սնանկ ճանաչված պարտապանին: Հետևաբար պարտատերերի պահանջների բավարարման ստեղծման նպատակը մի կողմից բոլոր պարտատերերի շահերի ապահովումն է, որպեսզի որևէ պարտատեր օրենքով սահմանված առաջնահերթության խախտմամբ բավարարում չստանա, մյուս կողմից պարտապանի շահերի ապահովումն է՝ նկատի ունենալով, որ պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է օրենքով սահմանված ընթացակարգի հստակ պահպանմամբ՝ նպատակ ունենալով հնարավորինս ապահովելու նաև պարտապանի գործունեությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտապանին սնանկ ճանաչելու պահից պարտապանի պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատիրոջը դրամական կամ այլ բավարարում տալու արգելքը վերաբերում է ոչ միայն ուղղակիորեն սնանկ ճանաչված պարտապանի կողմից, այլ նաև վերջինիս պարտապան հանդիսացող անձանց կողմից, ի կատարումն սնանկ ճանաչված պարտապանի հանդեպ ունեցած պարտավորության, սնանկ ճանաչված պարտապանի պարտատիրոջը դրամական կամ այլ բավարարում տալուն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ պարտավորությունները կենտրոնանում են սնանկության վարույթում: Այդ իսկ նկատառումով «Մասնկության մասին» ՀՀ օրենքում 17.06.2016 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում: Նույն տրամաբանությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարգվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում

գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում: Բացի այդ, նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի կողմից սնանկությունը ճանաչելու դիմումին կից ներկայացվում է նաև վերջինիս պարտատերերի և պարտապանների ցուցակը: Մասնկության վարույթում սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ պարտավորությունների կենտրոնացմամբ հնարավորություն է ստեղծվում ապահովելու վերջինիս ակտիվների հավաքագրումը և դրանց հիման վրա **բոլոր** պարտատերերի շահերի ապահովումը՝ օրենքով սահմանված առաջնահերթությամբ վերջիններիս պահանջների բավարարմամբ: Հետևաբար, եթե սնանկ ճանաչված պարտապանն ունի իր օգտին կատարման ենթակա պարտավորություններ, այսինքն՝ տվյալ պարտավորություններով պարտատեր է, ապա պարտավորությունների կատարումը հնարավոր է **միայն** սնանկության վարույթի շրջանակներում, այլ կերպ ասած՝ պարտավորության կատարման արդյունքը պետք է կենտրոնանա սնանկության վարույթում, որպեսզի հետագայում բաշխվի պարտատերերի միջև: Նույն տրամաբանությամբ սնանկ ճանաչված պարտապանի պարտապաններն իրենց պարտավորությունները չեն կարող կատարել հօգուտ սնանկ ճանաչված պարտապանի պարտատերերի՝ շրջանցելով սնանկության վարույթը: Այլ կերպ ասած՝ չի թույլատրվում սնանկ ճանաչված պարտապանի պարտատիրոջն անմիջապես նորոգել բավարարում տալը սնանկ ճանաչված պարտապանի հետ պարտավորական հարաբերությունների մեջ գտնվող պարտապանի կողմից:

Վճռաբեկ դատարանը նաև փաստել է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ օրենսդրի կողմից սահմանված արգելքը վերաբերում է **պարտապանի կողմից** պարտատիրոջը բավարարում տալուն: Այդուհանդերձ, հաշվի առնելով նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի այն պահանջը, որ իրավական ակտի մեկնաբանությունը չպետք է փոխի դրա իմաստը, ինչպես նաև հաշվի առնելով նույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ սնանկության գործընթացի որոշակիությունն ու կանխատեսելիությունն ապահովվելու, ինչպես նաև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ և 84-րդ հոդվածներով սահմանված՝ պարտատերերի պահանջների բավարարման հերթականությունն ու կարգը պահպանելու նպատակով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «ա» կետով և գործող խմբագրությամբ 2-րդ կետով ամրագրված իրավանորմը ենթակա է ավելի լայն մեկնաբանման՝ այն համադրելով նշված օրենքի այլ պահանջների հետ, այսպես նշված նորմի ոչ համակարգային մեկնաբանումը տվյալ դեպքում կխախտի իրավական ակտի իմաստը: Ուստի Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ պարտատերերի պահանջների բավարարման սառեցման (մորատորիումի) ընթացքում պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալու արգելքը վերաբերում է նաև պարտապանի հետ պարտավորական հարաբերությունների մեջ գտնվող այլ անձանց՝ սնանկ ճանաչված պարտապանի պարտապան հանդիսացող անձանց կողմից սնանկության վարույթը շրջանցելով սնանկ ճանաչված պարտապանի պարտատիրոջը դրամական կամ այլ բավարարում տալուն:

27.12.2017թ.

30. «Ամերիաբանկ» ՓԲԸ v. «Գամմա Կրեդիտ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ Էջ ԵՃ ԵԶ 336-343  
 ԵԿԳ/0062/04/16

**Խնդիր.** Արդյո՞ք այլ քաղաքացիական գործով ցանկացած հիմքով նյութաիրավական վեժի առկայությունը բացառում է սնանկության գործով պարտավորության անվիճելիությունը և ըստ այդմ՝ պարտապանին սնանկ ճանաչելու հնարավորությունը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերլուծել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը և 2-րդ մասի 1-ին կետը:

ՀՀ սահմանադրական դատարանը 25.02.2008 թվականի թիվ ՍԴԴ-735 որոշմամբ արձանագրել է, որ եթե առկա է վճարային պարտավորությունների վերաբերյալ վեժ, ապա պարտապանը պետք է հնարավորություն ունենա այդ վեժը լիարժեք դատական քննության առարկա դարձնել, որից հետո միայն կարող է հարց դրվել նրա անվիճել-

լի վճարային պարտավորությունների կատարման մասին: ՀՀ սահմանադրական դատարանը նաև նշել է, որ «պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր» ձևակերպումը ենթադրում է, որ խոսքը վերաբերվում է ոչ թե պարտապանի պարտավորության կամ կետանցի բացակայության փաստն ապացուցող հիմքերին, այլ նյութաիրավական վեճի առկայությանը, այն է՝ պարտավորության վիճելիությունը հավաստող հիմքերին:

Վճռաբեկ դատարանը *«Լեռնամերայուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սիփսան 1» ՍՊԸ-ի* գործով արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունը վկայում է, որ վճարային պարտավորությունները, որոնց կետանց է թույլ տվել պարտապանը, հիմք են դատարանի վճռով պարտապանին սնանկ ճանաչելու համար, եթե դրանք անվիճելի են, իսկ նշված դրույթը չի բացառում վճարային պարտավորությունների հիմքում դրված գործարքների վերաբերյալ վեճի քննությունն այլ վարույթի շրջանակներում: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել նաև այն հանգամանքը, որ նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ սնանկ ճանաչելու հիմք է ոչ թե վճարային պարտավորության, այլ **անվիճելի** վճարային պարտավորության առկայությունը: «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի հիմքով վճարային պարտավորությունների անվիճելի լինելը կասկածի տակ առնելու համար բավարար է ոչ միայն պարտապանի պարտավորության կամ կետանցի բացակայության փաստն ապացուցող հիմքերի առկայությունը, այլ նյութաիրավական վեճի առկայությունը, որն ինքնին պարտավորության վիճելիությունը հավաստող հիմք է: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ «պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր» ձևակերպումը ներառում է նաև պարտավորության հիմքերի հետ կապված նյութաիրավական վեճի առկայությունը (*տե՛ս, թիվ ԵԿԴ/0074/04/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը կարգավորում է նաև այն դեպքերը, երբ պարտապանը վիճարկում է պարտավորության անվիճելի լինելու փաստը, այլ կերպ ասած՝ առարկում է իրեն սնանկ ճանաչելու պահանջի դեմ, և այդ առարկությունները վերաբերում է վճարային պարտավորությանը (այլ ոչ թե կետանցին կամ կետանցի շարունակվելուն): Նման պայմաններում վերը հիշատակված հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի **«անվիճելի վճարային պարտավորություն» եզրույթի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է այն դիտարկել նույն կետի «բ» ենթակետի համատեքստում**: Մասնավորապես՝ այն պարտավորությունը, որը վիճարկվում է պարտապանի կողմից կամ որի դեմ պարտապանը ներկայացրել է առարկություն, անվիճելի է, եթե այդպիսի առարկությունն ուղղված է պահանջի մի մասի դեմ, իսկ մնացած մասը չի վիճարկվում: Այլ կերպ՝ չվիճարկվող մասը, եթե այն գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, անվիճելի է դարձնում պարտավորությունն առնվազն այդ մասով (*տե՛ս, «Յունիքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Գևորգ Հարոյանի թիվ ԵՇԴ/0009/04/12 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Զարգացնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված «անվիճելի վճարային պարտավորությունն» առկա է, մասնավորապես, այն դեպքում, երբ պարտապանն առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և **պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի** (ներառյալ՝ պահանջի հաշվանցը): Հետևաբար, օրենսդիրը կարևորել է, որ վճարային պարտավորության անվիճելիությունը կասկածի տակ դնելու համար պարտապանը **պետք է ներկայացնի բավարար ապացույցներ** իր առարկության հիմնավորման համար: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման ապացույցը պետք է լինի այնպիսին, որ առերևույթ կասկածի տակ դնի պարտատիրոջ պահանջի հիմնավորվածությունը, անվիճելիությունը (օրինակ, վկայի պարտավորության կատարումից ընդհանրապես հրաժարվելու հնարավորության մասին, ինչպես որ առկա է եղել վերոնշյալ թիվ ԵԿԴ/0074/04/09 քաղաքացիական գործի պայմաններում): Ընդ որում, եթե անգամ առարկությունը հիմնավոր լինելու պայմաններում այդուհանդերձ առկա է լինում նաև չվիճարկվող պահանջ, որի չափը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, ապա պարտապանին սնանկ ճանաչելը չի բացառվում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ պահանջի դեմ առարկություն ներկայացնելը կարող է վերաբերել պարտավորության հիմքերին, պահանջն արդեն կատարված լինելուն, պահանջի չափին և այլն: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նյութափրավական վեճի առկայությունը, որը խոչընդոտ չի հանդիսանալու սնանկության վարույթում ներկայացված և օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող պահանջի բավարարմանը, այլ կերպ ասած՝ ամեն դեպքում առկա է լինելու նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող պահանջ՝ անկախ նյութափրավական վեճի ելքից, չի կարող արգելք հանդիսանալ պարտավորությունն անվիճելի դիտելու համար: Նման հետևությունը պայմանավորված է նրանով, որ օրենսդրի կողմից պարտավորության անվիճելիությունն ինքնապատակ չի սահմանվել, և ցանկացած նյութափրավական վեճի առկայության դեպքում սնանկ ճանաչելու հնարավորությունը բացառելը կարծեզրկի նման նորմի նպատակը, այն է՝ բացառել անձին սնանկ ճանաչելը, մասնավորապես, այնպիսի պարտավորությունների վրա հիմնված պահանջով, որը հետագայում կարող է վերանալ մեկ այլ գործի շրջանակներում կայացված ակտի հիման վրա: Այսինքն՝ նյութափրավական վեճը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն ստեղծի պարտապահի կողմից ընդհանրապես չկատարել պարտատիրոջ պահանջը՝ անկախ նյութափրավական վեճի հիմքից:

### ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

07.04.2017թ.

31. Ղազար Գեորգես (Ղազար Զորջ) v. Մարալ Քեշիշոյյան, քաղ. գործ թիվ ԵԱԳԿ/0473/02/13

Էջ 344–350

**Խնդիր.** Արդյո՞ք ալիմենտ վճարողի կողմից արտարժույթով կանոնավոր եկամուտ ստանալու պարագայում դատարանը կարող է սահմանել կայուն դրամական գումարով ալիմենտի ամենամյա չափ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասը, 71-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, արձանագրել է, որ դատարանը երեխայի ծնողից ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ գործեր քննելիս բռնագանձման ենթակա ալիմենտի չափը որոշելու համար նախ-և առաջ պետք է պարզի և գնահատման առարկա դարձնի ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի առկայությունը և դրա չափը: Այսինքն՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ալիմենտի չափի որոշման կանոնը կիրառվում է այն բոլոր դեպքերում, երբ դատարանի կողմից հաստատվում է ծնողի վաստակի և (կամ) այլ եկամտի կամ դրանցից որևէ մեկի առկայությունը, իսկ կայուն դրամական գումարով ալիմենտի բռնագանձման հնարավորությունը նախատեսվում է **բացառիկ դեպքերում**, այն է՝ եթե այդ ծնողների վաստակից և (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն անհնար կամ դժվար է կամ էլ էականորեն վնասում է ստացողներից որևէ մեկի շահերին, ինչպես նաև, երբ երեխաների համար ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը՝

- ստանում է ոչ կանոնավոր կամ փոփոխվող վաստակ և (կամ) այլ եկամուտ,
- վաստակ և (կամ) այլ եկամուտ ստանում է բնամթերքի տեսքով կամ արտարժույթով,

- վաստակ և (կամ) այլ եկամուտ չի ստանում կամ չունի (*զրեն, Գոհար Կիրակոսյանն ընդդեմ Լևոն Զազյանի թիվ ԵԱՆԿ/2775/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ ծնողների վաստակից և (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի չափը որոշելը հանդիսանում է երեխայի ապրուստի միջոցի սահմանման հիմնական և առավել տարածված եղանակն այն դեպքերում, երբ ծնողներն ունեն կայուն վաստակ (եկամուտ): Ի տարբերություն բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի չափը սահմանելուն՝ կայուն դրամական գումարի չափը դատարանը որոշում է՝ ելնելով երեխայի նախկին կենսապահովման մակարդակի առավելագույն պահպանման հնարավորությունից: Կայուն դրամական գումարով ալիմենտի բռնագանձման չափը սահմանելիս դատարանների կողմից պետք է հաշվի առնվի ալիմենտ վճարող ծնողի **իրական գույքային հնարավորությունները**,

ինչպես նաև ուշադրության արժանի այլ հանգամանքներ կամ շահեր (օրինակ՝ ընտանիքի անդամի անաշխատունակությունը, որին ալիմենտ վճարող կողմը պարտավոր է տրամադրել ապրուստի միջոց, հաշմանդամության ձեռքբերումը կամ երեխայի կողմից աշխատանքի անցնելը կամ ձեռնարկատիրությամբ զբաղվելը), որոնք նաև անհրաժեշտ են ալիմենտ վճարող ծնողի և նրա ընտանիքի մյուս անդամների գոյության նվազագույն պայմաններն ապահովելու համար: Ընդ որում, նման գործերով կողմերի գույքային դրությունը պարզելու համար դատարանները պետք է միաժամանակ հաշվի առնեն բոլոր աղբյուրները, որոնցից գոյանում է անձի ընդհանուր եկամուտը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե բաժնային հարաբերակցությամբ ալիմենտ սահմանելիս դատարանը հիմք է ընդունում միայն օրենսդրի կողմից սահմանված բաժնային չափը, ապա կայուն դրամական գումարով ալիմենտ սահմանելիս հաշվի են առնվում մի շարք գործոններ, ընդ որում, ինչպես երեխայի լավագույն շահը, այնպես էլ ալիմենտ վճարող անձի բավարար կենսամակարդակն ապահովելու անհրաժեշտությունը: Հաշվի առնելով կայուն դրամական գումարով ալիմենտ սահմանելիս գումարի չափը որոշելու նշված առանձնահատկությունը՝ օրենսդիրը որոշ դեպքերում հնարավորություն է տվել կանոնավոր վաստակ և (կամ) այլ եկամուտ ստանալու պայմաններում նույնպես սահմանելու կայուն դրամական գումարի չափով ալիմենտ: Մասնավորապես՝ այդ դեպքերից է, երբ ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը ստանում է **ալիմենտ արտարժույթով**, կամ եթե բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն **անհնար կամ դժվար է** կամ էլ էականորեն վնասում է ստացողներից որևէ մեկի շահերին: Նման կարգավորման նպատակն անձանց բավարար կենսամակարդակի ապահովումն է, երեխայի լավագույն շահի և ալիմենտ վճարող ծնողի ուշադրության արժանի շահերի հավասարակշռությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողի կողմից կայուն վաստակի և (կամ) այլ եկամտի առկայության պայմաններում օրենսդիրը հնարավորություն է տալիս բռնագանձելու ալիմենտ նաև կայուն դրամական գումարով, որի դեպքում դատարանը պետք է հաշվի առնի կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը: Ընդ որում, նման հանգամանքները կարող են բացահայտվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցներով:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

20.07.2017թ.

**32. Տարիել Հակոբյան և Անահիտ Բաղիրյան v. Էմմա Մինքաշիրովա և մյուսներ, քաղ. գործ թիվ ԼԳ/2540/02/14**

Էջ  
351-371

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե սեփականության իրավունքի պետական գրանցումը և ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ հիմնական հայցապահանջները կարող են արդյո՞ք ընդդատյալ լինել ընդհանուր իրավասության դատարանին:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վկայակոչելով 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը, 19-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին և 63-րդ հոդվածի 1-ին մասերը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասը, 35-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետը, 86-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը, 109-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասը, 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է մի քանի փոխկապակցված հայցապահանջների հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության որոշման, այդ թվում՝ հանրային և մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերի ընդդատության տարանջատման և դրա հիման վրա դատական այս կամ այն գործի ընդդատության որոշման իրավական խնդրի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանը նախ և առաջ փաստել է, որ սույն գործով ներկայացված անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցումն անվավեր ճանաչելու և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու հայցապահանջները հիմնական են:

Անդրադառնալով սույն գործով ներկայացված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու հայցապահանջի բնույթին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

1) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ վեճի կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն,

2) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը,

3) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունն ուղղված է հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը. այն ծագել է պետության կողմից անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների ճանաչման, երաշխավորման և պաշտպանության ապահովման հանրային շահի իրացման կապակցությամբ:

Ավելին, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթի իրավական հիմքերը սահմանող օրենսդրական կարգավորումների և իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ: Հատկանշական է, որ նմանատիպ իրավական դիրքորոշում Վճռաբեկ

դատարանը հայտնել է *Միսիանի քաղաքապետարանն ընդդեմ Շահեն Սարգսյանի թիվ 3-1920(ՎԴ) քաղաքացիական գործով* դեռևս 26.10.2006 թվականին կայացված որոշմամբ՝ նշելով, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ անշարժ գույքի գրանցամատյանում կատարված գրանցումը (գրառումը) վարչական ակտ է: Հետևաբար, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը վերացնելու (անվավեր ճանաչելու) պահանջը հանդիսանում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վիճարկման հայցի առարկա և որպես հիմնական հայցապահանջ՝ ենթակա է քննության վարչադատավարական կարգով:

Այսպիսով, վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ սույն գործով ներկայացված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու հայցապահանջները բխում են ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից ծագող վեճից:

Սույն գործով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադարձ կատարել նաև ժառանգության իրավունքի վկայագիրը դատական կարգով վիճարկելու իրավական կառուցակարգի բովանդակությամբ:

Այսպես, Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել ժառանգության իրավունքի վկայագիրը վարչական դատարանում վիճարկելու իրավական հնարավորության վերաբերյալ՝ նշելով, որ նոտարի կողմից տրամադրված ժառանգության իրավունքի վկայագիրը ՀՀ իրավական համակարգում վարչական ակտ է: Հետևաբար անձն իրավունք չունի պահանջել վիճարկման հայցով վերացնել իր ենթադրյալ իրավունքները և ազատությունները խախտող ժառանգության իրավունքի վկայագիրը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումների համաձայն՝ վիճարկման հայցն օրենսդրի կողմից նախատեսված հայցի տեսակ է, որն ուղղված է դատական ակտով միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելուն: Նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջը չի կարող դիտարկվել նաև որպես նոտարական գործողությունը վիճարկելու պահանջ, եթե ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված չէ նոտարական գործողությունների վիճարկումը (*զրեն, Սերժիկ Պողոսյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաքոյանի թիվ ՎԴ/4901/05/11 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ անդրադարձել է նաև ժառանգության իրավունքի վկայագիրն ընդհանուր իրավասության դատարանում վիճարկելու իրավական հնարավորությանը՝ գտնելով, որ եթե ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված չէ նոտարական գործողությունների վիճարկումը, ապա այդ գործը չի ծագում հանրային իրավահարաբերություններից, այն ծագում է մասնավոր իրավահարաբերություններից, հետևաբար ընդդատյա է ընդհանուր իրավասության դատարանին (*զրեն, Հուսիկ Թադևոսյանն ընդդեմ Արմեն Արիսրակեայանի և ՀՀ Արմավիրի նոտարական տարածքի նոտար Անժելա Ցականյանի թիվ ԱԴԴ-1/0019/02/13 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, գտել է, որ ժառանգության իրավունքի վկայագրի վիճարկման հայցապահանջի ընդդատությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե այդ պահանջի հիմքում ընկած է արդյոք նոտարական գործողությունների վիճարկման փաստարկը, թե՛ ոչ: Այլ կերպ ասած, այն դեպքում, երբ ժառանգության իրավունքի վիճարկման հայցապահանջի հիմքում ընկած է նոտարական գործողությունների վիճարկումը, ապա այդ հայցապահանջը ծագում է հանրային իրավահարաբերություններից բխող վեճից և ընդդատյա է վարչական դատարանին, իսկ այն դեպքում, երբ ժառանգության իրավունքի վիճարկման հայցապահանջի հիմքում ընկած չէ նոտարական գործողությունների վիճարկումը, ապա այդ հայցապահանջը ծագում է մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճից և ընդդատյա է ընդհանուր իրավասության դատարանին:



**ԱՊԱՅՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԱՊԱՅՈՒՅՈՒՄ**

07.04.2017թ.

**33. Խաչիկ Աշուղյան և մյուսներ v. Գոռ Նիկողոսյան, քաղ. գործ թիվ ԷԶ ԵՉ 372-382**

**Խնդիր.** Արդյո՞ք նույն գործով վերաքննիչ դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով (որով բեկանվել է առաջին ատյանի դատարանի վճիռը, և գործն ուղարկվել է նոր քննության) հաստատված փաստերը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով ունեն նախադատելի նշանակություն տվյալ գործի նոր քննության ժամանակ ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելիս:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետը և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները նախադատելիության հարցի վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ նախադատելիությունը, բացի օբյեկտիվ ու սուբյեկտիվ սահմաններից, ունի նաև ժամանակային գործողության և առարկայական կիրառելիության սահմաններ:

Այսպես, դատական ակտի նախադատելիությունը սահմանափակված է օրինական ուժ ստացած դատական ակտի գործողության ժամկետով, այսինքն՝ նախադատելի են միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Բացի այդ, այն դեպքերում, երբ օրինական ուժ ստացած դատական ակտը վերանայվում է նոր կամ նոր երևան եկած հանգամանքների ուժով, այն կորցնում է իր նախադատելիությունը: Ուստի նախադատելիության ժամանակային գործողության սահմանը դատական ակտի օրինական ուժի մեջ գտնվելու ժամանակահատվածն է:

Նախադատելիության մյուս սահմանը վերաբերում է առարկայական կիրառելիությանը: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծությունից հետևում է, որ նախադատելիությունը վերաբերում է **տարբեր** քաղաքացիական գործերի՝ նկատի ունենալով, որ օրենսդրի կողմից օգտագործվում են «նախկինում քննված քաղաքացիական գործ» և «այլ գործ» արտահայտությունները: Հետևաբար երկու դատական ակտերի միջև նախադատելիության կապն առաջանում է այն դեպքում, երբ նախադատելի դատական ակտը կայացվել է մի գործի քննության արդյունքում, իսկ մեկ այլ դատական ակտը, որի համար առաջինը նախադատելի է, կայացվում է այլ գործի քննության արդյունքում: Ուստի նախադատելիության ընդհանուր կանոնի համաձայն՝ երկու տարբեր դատական ակտերի միջև նախադատելիությունն առաջանում է այն դեպքում, երբ այդ դատական ակտերը կայացվել են տարբեր գործերի քննության արդյունքներում: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ «նախկինում քննված քաղաքացիական գործ» արտահայտությունը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ քննվող քաղաքացիական գործի շրջանակներում վերադաս դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վճիռը մի մասով թողնվել է օրինական ուժի մեջ կամ փոփոխվել է, իսկ մյուս մասով բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության: Նման դեպքերում օրինական ուժի մեջ թողնված կամ փոփոխված վճիռի մասով քաղաքացիական գործը նոր քննության ուղարկված մասով քաղաքացիական գործի նկատմամբ պետք է գնահատվի որպես նախկինում քննված այլ գործ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ այն դեպքերում, երբ վերադաս դատարանն օրինական ուժի մեջ է թողնում առաջին ատյանի դատարանի վճիռը՝ անհրաժեշտության դեպքում պատճառաբանելով այն, վերադաս դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշումները դառնում են վճիռի բաղկացուցիչ մաս: Հետևաբար տվյալ գործի մյուս մասով նոր քննության ընթացքում օրինական ուժի մեջ թողնված վճիռը՝ այդ թվում վերադաս դատարանի պատճառաբանություններով, դառնում է նախադատելի: Նույն կարգավորումը գործում է նաև այն դեպքերում, երբ վերադաս դատարանը փոփոխում է դատարանի վճիռը՝ հաշվի առնելով, որ տվյալ դեպքում վճիռը գոյություն է ունենում վերադաս դատարանի կողմից փոփոխված տեսքով: Հետևաբար այս դեպքում նույնպես առաջին ատյանի դատարանի վճիռը վերադաս դատարանի կողմից փոփոխված տեսքով դառնում է նախադատելի: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է

նաև նրանով, որ եթե նույն անձանց միջև մեկ այլ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը նախադատելի է, ապա անտրամաբանական է նույն քաղաքացիական գործի որևէ մասով վերադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ փոփոխված կամ օրինական ուժի մեջ թողնված վճիռը նախադատելի չհամարելը՝ նկատի ունենալով նախադատելիության ինստիտուտի նշանակությունը դատական խնայողության սկզբունքի ապահովման և դատական ակտերի միջև անհաղթահարելի հակասությունների կանխարգելման առումով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ այն դեպքերում, երբ վերադաս դատարանը գործն ուղարկում է նոր քննության՝ բեկանելով առաջին ատյանի դատարանի վճիռը, ապա այս դեպքում վճիռն իրավական առումով այլևս գոյություն չունի: Նման դեպքերում նախադատելիության մասին խոսք գնալ չի կարող՝ հաշվի առնելով վճռի՝ իրավական առումով բացակայությունը:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ նախադատելիությունը բացարձակ չէ, այն ունի օբյեկտիվ, սուբյեկտիվ, ժամանակային գործողության և առարկայական կիրառելիության սահմաններ:

**07.04.2017թ.**

**34. Սուսաննա Յազիչյան v. Սվետլանա Նալբանդյան, քաղ. գործ թիվ ԵՃ ԵԿԳ/2524/02/10**

Էջ  
383-392

**Խնդիր.** Արդյո՞ք դատարանն իրավասու է գործի քննությունը դատաքննության նախապատրաստական փուլով իրականացնելու պայմաններում դատաքննության փուլում որոշում կայացնել իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու մասին:

*\* Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք դատարանը կարող է նախկինում քննված գործով փաստաբանի ծառայությունների համար կադրաված վճարումներն առանձին հայցով բռնագանձելու պահանջը բավարարել՝ առանց պարզելու փաստաբանի մատուցած ծառայությունների համար կադրաված կամ կադրավելիք վճարումը հավասարող ապացույցն այդ գործի քննության ընթացքում ներկայացված լինելու փաստը:*

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետը, 48-րդ հոդվածի 2-րդ կետը, 53-րդ հոդվածի 1-ին կետը, 60-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, 149<sup>5</sup>-րդ հոդվածը, 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետը՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ վերահաստատել է նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները նշված իրավանորմների վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի և 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի համադրված վերլուծությունը վկայում է այն մասին, որ օրենսդրական կարգավորման տեսանկյունից քաղաքացիական դատավարությունում փորձաքննություն կարող է նշանակվել ինչպես գործը դատաքննության նախապատրաստելու, այնպես էլ դատաքննության փուլում:

Վճռաբեկ դատարանը, ելնելով փորձաքննության ինստիտուտի, ինչպես նաև գործը դատաքննության նախապատրաստելու փուլի էության, նպատակի և խնդիրների վերաբերյալ վերոգրյալ իրավական դիրքորոշումներից, գտել է, որ փորձաքննություն նշանակելու հարցը, որպես կանոն, պետք է լուծվի գործը դատաքննության նախապատրաստելու փուլում, քանի որ փորձաքննություն նշանակելը գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու դատավարական միջոց է: Հետևաբար փորձաքննությունը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում նշանակելու կառուցակարգը համահունչ է քաղաքացիական դատավարության նշված փուլին բնորոշ նպատակին՝ քաղաքացիական գործի արդյունավետ քննության ապահովմանը և այդ փուլի առջև դրված խնդիրներին, հատկապես՝ ապացույցների բավարար համակցության ձևավորման (ապացույցների կենտրոնացման) ապահովմանը:

Այսպիսով, ընդհանուր կանոնի համաձայն՝ փորձաքննությունը պետք է նշանակվի մինչև գործը դատաքննության նշանակելու մասին որոշում կայացնելը: Նման մոտեցումը հետապնդում է նաև գործով դատաքննությունը մեկ դատական նիստով ավարտելու հա-

մար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու, գործի քննության հետաձգումը կամ վարույթի կասեցումը հնարավորինս բացառելու, գործը դատաքննության նախապատրաստելիս կողմերի դատավարական պարտականությունների պատշաճ կատարմանը նպաստելու և դատավարական իրավունքների չարաշահումը բացառելու նպատակ: Այլ կերպ ասած, որպես ընդհանուր կանոն, քաղաքացիական դատավարությունում փորձաքննություն նշանակելու նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտները՝ կողմերը և դատարանը, պետք է իրենց այդ նախաձեռնությունը ցուցաբերեն ոչ թե դատաքննության, այլ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ փորձաքննություն նշանակելու հարցը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում լուծելու ընդհանուր կանոնն ունի որոշ բացառություններ: Այսինքն՝ որոշ դեպքերում օբյեկտիվ անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանը կարող է շեղվել ընդհանուր կանոնից և փորձաքննություն նշանակել դատաքննության ընթացքում: Ասվածը վերաբերում է այն դեպքերին, երբ փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունն օբյեկտիվորեն ծագում է դատաքննության ընթացքում, մասնավորապես՝ ապացույցները հետազոտելու ժամանակ:

**ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

07.04.2017թ.

**35. Արա Բաղդասարյան v. Նարինե Հակոբյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵՃԳ/0985/02/14**

Էջ  
393–407

*Խնդիր.* 1) Արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավասու է բեկանել վճիռն այն անձանց մասով, որոնք վերաքննիչ բողոք չեն ներկայացրել:

2) արդյո՞ք գործին մասնակցող անձը կրում է այն փաստերն ապացուցելու պարտականությունը, որոնք գործին մասնակցող մյուս անձինք ընդունում են դատարան ներկայացված դատավարական փաստաթղթերով, այլ ապացույցներով և իրենց դիրքորոշմամբ.

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Անդրադառնալով վերը նշված առաջին հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարությունում գործում է տնօրինչականության սկզբունքը, համաձայն որի՝ գործին մասնակցող անձն օրենքով սահմանված կարգով սեփական հայեցողությամբ է տնօրինում իր նյութական և դատավարական իրավունքները և որոշում իր իրավունքների պաշտպանության միջոցներն ու եղանակները: Դրան համապատասխան էլ դատարաններն իրականացնում են արդարադատություն՝ հարուցում են քաղաքացիական գործ, քննում և լուծում այն, ինչպես նաև քննում և լուծում են դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքները: Ընդ որում, ինչպես գործին մասնակցող անձինք, այնպես էլ դատարանները պարտավոր են պահպանել օրենքով սահմանված կարգը: Ըստ այդմ՝ գործին մասնակցող անձանց համար օրենքով սահմանված են բողոքարկման, իսկ վերադաս դատական ատյանների համար՝ բողոքների քննության որոշակի սահմաններ: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ վերաքննիչ բողոք բերելու սահմանափակումներին և վերաքննության սահմաններին՝ նպատակ ունենալով նպաստել այդ բնագավառում իրավունքի զարգացմանը:

«Վճռաբեկ բողոք բերելու սահմանափակումները» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ: Թեև «վարույթը վերաքննիչ դատարանում» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի չորրորդ բաժինը նույնաբովանդակ իրավակարգավորում չի նախատեսում վերաքննիչ վարույթի համար, սակայն դատական պրակտիկայում վճռաբեկ բողոք բերելու նման սահմանափակումը կիրառվում է նաև վերաքննիչ բողոքների համար, քանի որ դա բխում է տնօրինչականության սկզբունքից: Ընդ որում, դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ բողոք բերելու սահմանափակումն ունի կրկնակի բովանդակային նշանակություն՝

1) անձը չի կարող բողոք բերել դատական ակտի՝ իր համար բարենպաստ մասի դեմ,

2) անձը չի կարող բողոք բերել դատական ակտի՝ այլ անձանց համար անբարենպաստ մասի դեմ:

Եթե անձի կողմից դատական ակտի՝ իր համար բարենպաստ մասի դեմ բողոք բերելը տրամաբանական չէ, ապա անձի կողմից այլ անձանց շահերի պաշտպանության համար բողոք ներկայացնելը այն պայմաններում, երբ այդ անձինք դատական ակտը չեն բողոքարկել (բացառությամբ օրենքով թույլատրված դեպքերի), կհակասի տնօրինչականության սկզբունքին: Դրան համապատասխան էլ վերաքննիչ դատարանը չի կարող քննել և լուծել ինչպես դատական ակտի՝ անձի համար բարենպաստ մասի դեմ բերված բողոքը, այնպես էլ անձի կողմից այլ անձանց իրավունքներին ու պարտականություններին առնչվող մասով բերված վերաքննիչ բողոքը: Եթե անձը, ի խախտումն տնօրինչականության սկզբունքի, ներկայացրել է վերաքննիչ բողոք, որով վիճարկում է դատական ակտի ոչ միայն իր, այլև այլ անձանց համար անբարենպաստ մասը, ապա վերաքննիչ դատարանն իրավասու է քննելու և լուծելու միայն բողոք բերած անձի իրավունքներին ու պարտականություններին վերաբերող մասով բերված բողոքը և ըստ այդմ էլ քննության ընթացքում համապատասխան հետևության գալով՝ իրավասու է բեկանել միայն դատական ակտի՝ բողոք բերած անձի համար անբարենպաստ մասը:

Մյուս հարցադրման կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով ապացուցելուց ազատվելու հիմքերի վերաբերյալ նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները, հարկ է համարել անդրադառնալ անվիճելի փաստերի ապացուցման անհրաժեշտությանը՝ այդպիսով նպաստելով այդ հարցով իրավունքի զարգացմանը:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ քաղաքացիական գործի քննության արդյունավետությունը մեծապես կախված է այն բանից, թե որքանով է պարզ և հստակ ապացուցման գործընթացը: Այդ գործընթացը հնարավորինս պարզեցնելու, գործին մասնակցող անձանց և դատարանին անհարկի չձանրաբեռնելու նպատակով օրենսդիրը սահմանել է դեպքեր, երբ գործի քննության ընթացքում որոշակի փաստեր որոշակի հանգամանքներում անհրաժեշտ չէ ապացուցել: Դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև օրենսդրի կողմից իբրև ապացուցելուց ազատվելու հիմքեր սահմանված են հանրահայտ, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով և դատավճռով հաստատված փաստերը, սակայն դատարաններն իրավացիորեն ապացուցման կարիք չունեցող փաստերի շարքին են դասում նաև այսպես կոչված «անվիճելի փաստերը»: Դրանք գործին մասնակցող անձանց կողմից վկայակոչված, գործի լուծման համար նշանակություն ունեցող այն փաստերն են, որոնք գործին մասնակցող մյուս անձինք ընդունում են դատարան ներկայացված դատավարական փաստաթղթերով, դատական նիստի ընթացքում արված հայտարարությամբ, դիրքորոշում հայտնելու կամ ցուցմունք տալու ընթացքում: Գործին մասնակցող անձանց կողմից գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ընդունումը կրճատում է ապացուցման ենթակա փաստերի շրջանակը և դատարանին հնարավորություն է տալիս կենտրոնանալու վիճելի փաստերի ապացուցման գործընթացի վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված են որոշակի կանոններ, որոնց պահպանմամբ միայն դատարանները կարող են անվիճելի փաստերը համարել հաստատված և գործին մասնակցող անձանց ազատել ապացուցման պարտականությունից: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձի կողմից այն փաստն ընդունելը, որի միջոցով մյուս անձը հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները, պարտադիր չէ դատարանի համար: Դատարանը կարող է ընդունված փաստը համարել հաստատված, եթե կասկածներ չկան, որ դա համապատասխանում է գործի հանգամանքներին, և կողմն այն չի ընդունել խաբեության, բռնության, սպառնալիքի, մոլորության ազդեցության տակ, մեկ կողմի ներկայացուցչի հետ մյուս կողմի չարամիտ համաձայնության հետևանքով կամ ճշմարտությունը թաքցնելու նպատակով: Վճռաբեկ դատարանի կարծիքով գործին մասնակցող անձինք չեն կարող ազատվել անվիճելի փաստերն ապացուցելու պարտականությունից նաև այն դեպքերում, երբ այդ փաստերը կարող են հաստատվել միայն ապացույցի որոշակի տեսակներով և նման ապացույցներ գործում առկա չեն, ինչպես նաև այն դեպքերում, երբ այդ փաստերի հաստատումը, բացի անվիճելի փաստերը վկայակոչած և դրանք ընդունած գործին մասնակցող անձանցից, կարող է ազդել նաև այլ անձանց իրավունքների և պարտականությունների վրա: Հարկ

է նշել, որ բոլոր դեպքերում գործի փաստերն անվիճելիների շարքին դասելու, դրանք ապացուցման առարկայից հանելու և ի վերջո՝ հաստատված համարելու և գնահատելու գործառնությունները բացառապես վերապահված են դատարանին, որը դրանք պետք է իրականացնի սահմանված դատավարական իրավակարգավորումներին համապատասխան: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոշարադրյալ դատավարական կանոնների պահպանմամբ դատարանը գործին մասնակցող անձանց կարող է ազատել գործին մասնակցող մյուս անձանց կողմից չվիճարկվող փաստերն ապացուցելու պարտականությունից և այդ փաստերը համարել ապացուցված:

### ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԳԻՐ ԿԱՏԱՐՈՒՄ

07.04.2017թ.

**36. Արփինե Հարությունյան v. «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի օգգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ, քաղ. գործ թիվ ԵԿԳ/5066/02/14** Էջ  
408-415

*Խնդիր.* Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն իրավական խնդրին, թե դատավարական ինչ պահանջների պետք է համապատասխանի կատարողական թերթի պարզաբանման մասին որոշումը:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության հիման վրա, վկայակոչելով վճռի պարզաբանման վերաբերյալ նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած իր դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը չի պարունակում կատարողական թերթի պարզաբանմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ դրույթներ, սակայն շարադրված իրավադրույթների վերլուծությունից բխում է, որ վճռի կատարողական թերթում նշվում է վճռի եզրափակիչ մասը, հետևաբար կատարողական թերթի պարզաբանման նկատմամբ լիովին կիրառելի են վճռի պարզաբանման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումները, ինչպես նաև դրանց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Մասնավորապես՝ կատարողական թերթի պարզաբանմամբ վերացվում են վճռի եզրափակիչ մասում տեղ գտած այն անհստակություններն ու երկիմաստությունները, որոնք ոչ միանշանակ մեկնաբանության տեղիք են տալիս կամ դժվարացնում են դատական ակտի կատարումը կատարողական վարույթի ընթացքում: Այլ կերպ ասած, կատարողական թերթի պարզաբանումն ըստ էության վճռի եզրափակիչ մասի պարզաբանումն է, որի մեկնաբանման և կատարման կապակցությամբ անորոշություն է առաջացել դատական ակտի հարկադիր կատարման ընթացքում:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ կետը, 130.1-րդ հոդվածը, 132-րդ հոդվածի 4-րդ կետի 6-րդ ենթակետը, 5-րդ կետի 1-ին ենթակետը, 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերը, 220.1-րդ հոդվածի 1-ին կետը, Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումներն իրավական որոշակիության հարցի վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել հետևյալը.

Դատարանի վճիռը գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտն է, վեճի վերաբերյալ դատարանի վերջնական որոշումը, այդ պատճառով էլ օրենսդիրն առավել մանրամասնորեն է կարգավորել վճռին ներկայացվող օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջները: Օրենսդրի կողմից դատարանի այլ ակտերին ներկայացվող պահանջների վերաբերյալ նույն մանրամասնությամբ իրավակարգավորումներ չսահմանելը չի նշանակում, որ այդ որոշումները կարող են լինել ոչ բավարար չափով օրինական, հիմնավորված և պատճառաբանված: Պարզապես գործի քննության արդյունավետության շահերից ելնելով՝ չի պահանջվում, որ դատարանն իր յուրաքանչյուր որոշումը հիմնավորի և պատճառաբանի նույն մանրամասնությամբ, ինչ որ գործով կայացվող վերջնական դատական ակտը: Այսպիսով, վճռի օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության վերաբերյալ դատավարական պահանջները որոշակիորեն վերաբերում են նաև դատարանի կողմից կայացվող որոշում-

ներին, այսինքն՝ դատարանի յուրաքանչյուր որոշում պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված:

Կատարողական թերթի պարզաբանման մասին որոշումը դատարանի կողմից կայացվող դատական ակտերից մեկն է, որով վերացվում է վերջնական դատական ակտում ամկա անորոշությունը, իսկ դատական ակտի անորոշությունը վերացնող դատական ակտն իր հերթին պետք է լինի օրինական, հիմնավորված, պատճառաբանված և չի կարող պարունակել անորոշություն: Մասնավորապես՝ այդ ակտի պատճառաբանական և եզրափակիչ մասերը պետք է համապատասխանեն միմյանց, ակտի եզրափակիչ մասը պետք է բխի դրա պատճառաբանական մասում կատարված եզրահանգումներից, իսկ ակտի եզրափակիչ մասում կատարված եզրակացությունը չի կարող կասկածի տակ դրվել նույն ակտի պատճառաբանական մասում կատարված այլ եզրահանգումներով: Հակառակ դեպքում անորոշությունը վերացնող դատական ակտը ոչ միայն չի ծառայի օրենսդրությամբ սահմանված նպատակներին, այլև իր հերթին կառաջացնի նոր անորոշություն և դատական ակտի կատարման նոր դժվարություններ:

**ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**  
**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**  
**ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

20.07.2017թ.

**37. Գևորգ Շահինյան v. ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԳ/4093/05/15** **Էջ 416-425**

*Խնդիր.* Արդյո՞ք անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկան բույսերի և բուսական արտադրանքի (բուսական ծագման սննդամթերքի) որակի ստուգման նպատակով անհրաժեշտ սարքավորումներով հագեցված լաբորատորիայով չապահովելու համար:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասում վարչական պատասխանատվություն է նախատեսել գյուղատնտեսական արտադրանքի շուկաները փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայով չապահովելու համար: Նշված վարչական իրավախախտումն ուղղված է սննդամթերքի առևտրի բնագավառում պետական կառավարման հիմքերի դեմ, իսկ դրա կատարման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է սահմանել տուգանքը՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասում ամրագրված իրավանորմի դիսպոզիցիայի բովանդակությունից հետևում է, որ նշված իրավադրույթով նախատեսված զանցակազմը բնորոշվում է, ի թիվս այլնի, հետևյալ հատկանիշներով.

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասում նախատեսված զանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվում է անգործությամբ՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկայում փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայի առկայությունն ապահովելու պարտականությունը կատարելուց ձեռնպահ մնալով,

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասում նախատեսված զանցանքի սուբյեկտն այն տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձն է, որի վրա օրենքով դրված է գյուղատնտեսական արտադրանքի շուկայում փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայի առկայությունն ապահովելու պարտականությունը:

Փաստորեն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվությունը կարող է վրա հասնել միայն այն դեպքում, երբ գյուղատնտեսական արտադրանքի շուկան ապահովված չէ այնպիսի գյուղատնտեսական արտադրանքի որակը ստուգելու համար անհրաժեշտ լաբորատորիայով, որը պահանջում է փորձաքննություն: Այսինքն՝ քննարկվող վարչական պատասխանատվությունն առաջանում է այն դեպքում, երբ տվյալ գյուղատնտեսական արտադրանքի շուկայում բացակայում է համապատասխան սարքավորումներով հագեցված այն լաբորատորիան, որն անհրաժեշտ է ոչ թե ցանկացած տեսակի գյուղատնտեսական արտադրանքի, այլ միայն փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում առևտրի ոլորտի պետական կառավարման հիմքերը կարգավորվում են «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով, որն ուղղված է այդ ոլորտում իրականաց-

վող գործունեության կանոնակարգմանը, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության ապահովմանը: Նշված օրենքի 2-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել է գյուղատնտեսական արտադրանքի շուկայի հասկացությունը, որը բնորոշվում է որպես կենդանական ծագում ունեցող մթերքի, բույսերի, բուսական արտադրանքի և սննդամթերքի առևտրի իրականացման վայր: Փաստորեն, գյուղատնտեսական արտադրանքի շուկան առևտրի իրականացման վայրի տեսակ է, որի աշխատանքը կազմակերպվում է առևտրի իրականացման վայրի կազմակերպման իրավունք ունեցող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ գյուղատնտեսական արտադրանքի շուկայում փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայի առկայությունն ապահովելու պարտականությունը «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով դրված է գյուղատնտեսական արտադրանքի շուկայի՝ որպես առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ հանդիսացող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ վրա: Հետևաբար, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված վարչական իրավախախտման սուբյեկտն այն անհատ ձեռնարկատերն է կամ այն իրավաբանական անձի համապատասխան պաշտոնատար անձն է, որը հանդիսանում է տվյալ գյուղատնտեսական արտադրանքի շուկայի կազմակերպիչ:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկայում իրականացվում է գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի առուվաճառք, իսկ գյուղատնտեսական արտադրանքն օրենսդրի տեսանկյունից իր մեջ ներառում է՝ (1) կենդանական ծագում ունեցող մթերքը, (2) բույսերը և (3) բուսական արտադրանքը: Գյուղատնտեսական արտադրանքի շուկայում առևտուր իրականացնելիս գյուղատնտեսական արտադրանքի թվարկված տեսակների՝ պարտադիր փորձաքննության ենթակա լինելու կամ չլինելու հարցը պարզելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքին, որը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում կարգավորում է առևտրի ոլորտում սննդամթերքի անվտանգությանն առնչվող հարաբերությունները և ամրագրում է պետության կողմից նախատեսվող մարդու առողջության պաշտպանության երաշխիքները սննդամթերքի վնասակար ու վտանգավոր ազդեցությունից: Այսպես, նշված օրենսդրական ակտի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում իրացվող գյուղատնտեսական արտադրանքի տեսակներից պարտադիր փորձաքննության ենթակա է միայն (1) կենդանական ծագման մթերքը, իսկ գյուղատնտեսական արտադրանքի մյուս տեսակների՝ (2) բույսերի և (3) բուսական արտադրանքի համար օրենսդիրը նման պահանջ չի սահմանել: Փաստորեն, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքը գյուղատնտեսական արտադրանքի շուկայում բուսական ծագման սննդամթերքի՝ (2) բույսերի և (3) բուսական արտադրանքի որակի ստուգման համար համապատասխան սարքավորումներով հագեցած լաբորատորիայի առկայության պահանջ չի նախատեսում:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ գյուղատնտեսական արտադրանքի շուկայի՝ որպես առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ հանդիսացող անհատ ձեռնարկատերը կամ նույն առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ հանդիսացող իրավաբանական անձի համապատասխան պաշտոնատար անձը չի կարող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով ենթարկվել վարչական պատասխանատվության տվյալ գյուղատնտեսական արտադրանքի շուկան (2) բույսերի և (3) բուսական արտադրանքի (բուսական ծագման սննդամթերքի) որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայով չապահովվելու համար, քանի որ առևտրի ոլորտում գյուղատնտեսական արտադրանքի նշված տեսակների համար պարտադիր փորձաքննության պահանջ օրենսդրությամբ նախատեսված չէ:



20.07.2017թ.

**38. Անդրանիկ Զաքարյան v. Երևանի քաղաքապետարան, վարչ. գործ թիվ ՎԳ/4546/05/14**

Էջ  
426–436

**Խնդիր.** Արդյոք անձին սեփականության իրավունքով պատկանող տարածքին կից՝ համայնքին պատկանող հողամասի վրա կառուցված քարե պարսպի և մետաղյա դարպասի առկայության փաստն ինքնին բավարար է եզրահանգելու համար, որ դրանք կառուցվել են տվյալ անձի կողմից, և հիմք է վերջինիս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկելու համար:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտումը հակաիրավական, մեղավոր այնպիսի գործողություն կամ անգործություն է, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն, իսկ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածով վարչական պատասխանատվություն է նախատեսել պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնական զավթելու և դրա հետևանքները չվերացնելու համար: Ընդ որում, այդ իրավանորմի կառուցվածքային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դրանով սահմանված զանցակազմն ունի հետևյալ դրսևորումները.

- 1) պետական սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնական զավթելը և դրա հետևանքները չվերացնելը,
- 2) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնական զավթելը և դրա հետևանքները չվերացնելը:

Ըստ այդմ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219<sup>1</sup>-րդ հոդվածը, inter alia, սահմանում է նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի հիման վրա վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը քննելու տարածքային ենթակայության կանոնները, որոնց վերլուծությունից բխում է, որ պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնական զավթելու և դրա հետևանքները չվերացնելու կապակցությամբ վարչական վարույթ իրականացնելու լիազորությունը պատկանում է տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմիններին՝ յուրաքանչյուրին իր տնօրինության ներքո գտնվող հողերի մասով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված իրավանորմով սահմանված զանցանքի ոտնձգության օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք ոտնահարվում են իրավախախտի կողմից, այն է՝ պետությանը և համայնքին պատկանող հողամասերի սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները: Ընդ որում, այդ զանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր տարրերն են հետևյալ արարքները.

- պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնական զավթելը և
- պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնական զավթելու հետևանքները չվերացնելը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածը մեկնաբանելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված այն կանոնի լույսի ներքո, ըստ որի՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ խնդրո առարկա իրավանորմով նախատեսված պատասխանատվության առաջացման համար անհրաժեշտ է զանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող վերոգրյալ երկու արարքների միաժամանակյա առկայությունը, քանի որ պատասխանատվություն նախատեսող նորմի կիրառումը պայմանավորված է «և» շաղկապով բաժանված պայմաններով:

Անդրադառնալով խնդրո առարկա զանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր տարր հանդիսացող պայմաններից առաջինին, այն է՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնական զավթելուն, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն բաղկացած է միմյանց հետ փոխկապակցված երկու պայմանից.

- պետք է կատարված լինի պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի զավթում,

- հողամասի գավթումը պետք է լինի ինքնակամ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ գավթումը դրսևորվում է որոշակի գործողություններ կատարելով, որոնք մատնանշում և հաստատում են անձի կողմից հողամասի փաստացի սահմանագատումը և տիրապետումը: Այլ կերպ՝ գավթումն առկա է, երբ անձը պետությանը կամ համայնքին պատկանող հողամասը որևէ կերպ առանձնացրել է (օրինակ՝ պարսպապատել կամ ցանկապատել է) և պահում է իր տիրապետության ներքո: Հետևաբար գավթումը կարող է դրսևորվել միայն գործողությամբ, իսկ անգործությամբ գավթում չի կարող իրականացվել: Ընդ որում, օրենքն արգելում է միայն ինքնակամ գավթումը, այսինքն՝ պատասխանատվություն առաջացնելու համար պետք է բացակայի պետությանը կամ համայնքին պատկանող հողամասն անձի սեփականությանը, տիրապետմանը կամ օգտագործմանն օրենքով նախատեսված որևէ հիմքով անցնելու փաստը:

Անդրադառնալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող երկրորդ պարտադիր տարրին՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ գավթելու հետևանքները չվերացնելուն, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ պատասխանատվության առաջացման համար միայն հողամասի ինքնակամ գավթումը բավարար չէ, այլ անհրաժեշտ է, որ անձը վարչական պատասխանատվության ենթարկվելու պահի դրությամբ վերացրած չլինի հողամասը գավթելու հետևանքները, այսինքն՝ դադարեցրած չլինի դրա սահմանագատումն ու տիրապետումը: Հետևաբար, եթե անձը պետությանը կամ համայնքին պատկանող հողամասի ինքնակամ գավթում իրականացնելուց հետո մինչև պատասխանատվության ենթարկվելը, կվերացնի դրա հետևանքները (օրինակ՝ կքանդի կառուցած պարիսպը կամ ցանկապատը), ապա չի կարող ենթարկվել նշված իրավանորմով նախատեսված վարչական պատասխանատվության:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ խնդրո առարկա իրավախախտման սուբյեկտը հակաիրավական, մեղավոր արարքը կատարած անձն է, տվյալ դեպքում՝ պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ գավթած և դրա հետևանքները չվերացրած անձը: Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավախախտման համար վարչական պատասխանատվության ենթարկվում է զանցակազմի օբյեկտիվ կողմն իրականացրած անձը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման համար վարչական պատասխանատվությունն առաջանալու համար անհրաժեշտ է, որ զանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող երկու արարքներն էլ կատարվեն միևնույն սուբյեկտի կողմից, այսինքն՝ նույն անձը պետք է ինքնակամ գավթի պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և պատասխանատվության ենթարկվելու պահի դրությամբ վերացրած չլինի դրա հետևանքները:

Ինչ վերաբերում է զանցակազմի սուբյեկտիվ կողմին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն իրավախախտի հոգեբանական վերաբերմունքն է հակաիրավական արարքի և դրա հետևանքների նկատմամբ, որը, որպես ընդհանուր կանոն, կարող է արտահայտվել մեղքի երկու ձևով էլ, ինչպես դիտավորության, այնպես էլ անզգուշության: Վարչական իրավախախտման փաստակազմից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է հենց իրավախախտման փաստի բացակայությանը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրենսդիրը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողատարածքների ապօրինի հողօգտագործումը կասեցնելու և վերացնելու լիազորությունը վերապահել է տվյալ համայնքի ղեկավարին, իսկ Երևան քաղաքում՝ համապատասխան վարչական շրջանի ղեկավարին: Ընդ որում, Երևան քաղաքում ապօրինի հողօգտագործման կասեցման և վերացման ուղղությամբ վարչական շրջանի ղեկավարների կողմից կատարվող աշխատանքները կազմակերպվում են Երևանի քաղաքապետի կողմից:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ համայնքի ղեկավարը (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարը), իրացնելով համայնքի վարչական սահմաններում ապօրինի հողօգտագործումը կասեցնելու և վերացնելու՝ օրենսդրի կողմից իրեն վերապահված լիազորությունը, կարող է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ տիրապետող անձին նախագգուշացնել իր կողմից թույլ տրվող ապօրինի հողօգտագործման մասին և առաջարկել վերջինիս՝ վերացնել տվյալ հողա-

մասի ինքնակամ գավթման հետևանքները: Նման պայմաններում համայնքի վարչական սահմաններում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող գավթված հողամասն ինքնակամ տիրապետող անձի կողմից տվյալ հողամասի ինքնակամ գավթման հետևանքները չվերացնելու դեպքում վերջինս ենթակա կլինի պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման համար՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ հողամասի ինքնակամ գավթումն ի սկզբանե կատարվել է համայնքի ղեկավարի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարի) նախագգուշացման պահին այն փաստացի տիրապետող անձի, թե այլ անձի կողմից:

Ընդհանրացնելով վերագրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումն առկա է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) տեղի է ունեցել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի գավթում՝ պետությանը կամ համայնքին պատկանող հողամասը որևէ անձի կողմից առանձնացվել է և գտնվում է նրա տիրապետության ներքո,

2) հողամասի գավթումն ինքնակամ է՝ առկա է դրա տիրապետման օրինական հիմք,

3) պատասխանատվության ենթարկելու պահի դրությամբ ինքնակամ գավթում իրականացրած անձը չի վերացրել դրա հետևանքները,

4) ինքնակամ գավթումն իրականացրել է և դրա հետևանքները չի վերացրել միևնույն սուբյեկտը,

5) վերոնշյալ արարքները կատարելիս անձը գործել է մեղավորությամբ:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ համայնքի վարչական սահմաններում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը փաստացի ապօրինի տիրապետող անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման կատարման համար նաև հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) համայնքի վարչական սահմաններում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը փաստացի ապօրինի տիրապետող անձը համայնքի ղեկավարի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարի) կողմից նախագգուշացվել է տվյալ հողամասի ինքնակամ գավթման հետևանքները վերացնելու անհրաժեշտության մասին,

2) համայնքի վարչական սահմաններում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը փաստացի ապօրինի տիրապետող անձն այդ նախագգուշացումից հետո չի վերացրել տվյալ հողամասի ինքնակամ գավթման հետևանքները՝ անկախ այն հանգամանքից, որ ի սկզբանե ինքնակամ գավթումն իրականացրած անձը և հողամասը փաստացի տիրապետող և իրավասու մարմնի առաջարկով դրա հետևանքները չվերացրած անձը տարբերվում են միմյանցից:

**27.12.2017թ.**

**39. Արսյոմ Խոշոյան v. Գյումրու քաղաքապետարան, վարչ. գործ թիվ ԷՁ ՎԳ5/0137/05/ 15 437-447**

**Խնդիր.** Արդյո՞ք անձը ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, եթե ինքնակամ շինարարական աշխատանքների համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո շարունակել է կատարել այնպիսի շինարարական աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են ինքնակամ շինությունն ավարտին հասցնելուն և դրա բնականոն շահագործումն ապահովելուն:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում վարչական պատասխանատվություն է նախատեսել, ի թիվ այլևի, նաև շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար: Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը վարչական պատասխանատվություն է նախատեսել նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված

արարքների, այդ թվում նաև՝ շենքեր և շինություններ ինքնական կառուցման կատարումը շարունակելու համար՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով տուգանք նշանակելուց հետո:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նկարագրված զանցանքի ոտնձգության օբյեկտը քաղաքաշինության բնագավառում օրենսդրությամբ սահմանված իրավակարգի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Իսկ քննարկվող վարչական իրավախախտումն օբյեկտիվ կողմից դրսևորվում է հետևյալ արարքով. շենքեր և շինություններ ինքնական կառուցելու համար վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո անձը շարունակում է կատարել այն նույն ինքնական շինարարությունը, որի համար նախկինում ենթարկվել է վարչական պատասխանատվության: Փաստորեն, օրենսդիրը նախատեսել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվության առաջացման համար անհրաժեշտ պայմանն ինքնական շինարարական աշխատանքների համար վարչական պատասխանատվության ենթարկված լինելու և վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո դրանց կատարումը շարունակելու փաստական հանգամանքների միաժամանակյա առկայությունն է:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված վարչական իրավախախտման հասարակական վտանգավորությունը գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ ինքնական շինարարական աշխատանքների համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո անձը շարունակում է նույն օբյեկտի շինարարությունը՝ նպատակ ունենալով այն ավարտին հասցնել և ապահովել այդ ինքնական կառույցի շահագործման հնարավորությունը, ինչը քաղաքաշինական տեսանկյունից կարող է լուրջ սպառնալիքներ առաջացնել մարդկանց կյանքի և առողջության համար: Հետևաբար քննարկվող արարքի օբյեկտիվ կողմի բովանդակությունը պետք է պայմանավորել ինքնական կառուցված շինությունն ավարտին հասցնելու, ավարտական տեսքի բերելու հակահրավական նպատակի իրագործմամբ: Այլ կերպ ասած՝ ինքնական շինարարական աշխատանքների համար վարչական պատասխանատվության ենթարկված լինելուց հետո այնպիսի շինարարական աշխատանքի կատարում, որն ուղղված է տվյալ ինքնական շինությունն ավարտական տեսքի բերելուն և շահագործման համար պիտանի դարձնելուն, պետք է որակվի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով: Փաստորեն, անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով պատասխանատվության ենթարկելիս, ի թիվս այլնի, էական նշանակություն ունի նաև այն հարցը, թե արդյոք ինքնական շինարարական աշխատանքների համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո անձը շարունակել է կատարել այնպիսի շինարարական աշխատանքներ, որոնք իրենց բնույթով նպատակաուղղված են ինքնական շինությունն ավարտական տեսքի բերելուն և դրա բնականոն շահագործումն ապահովելուն, թե՛ ոչ: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ այն բոլոր դեպքերում, երբ անձն ինքնական շինարարական աշխատանքների համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո շարունակել է կատարել այդպիսի շինարարական աշխատանքներ, ապա վերջինս ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված արարքի կատարման համար:

20.07.2017թ.

40. Ալբերտ Թուլումբաջյան v. ՀՀ ֆինանսների նախարարություն, վարչ. գործ թիվ ՎԳ/2632/05/15

Էջ 448-459

*Խնդիր.* Արդյոք անձը ենթակա է վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով՝ իր անվամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված և մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցն ապօրինի կերպով հանձնելու համար, եթե տրանսպորտային միջոցը հանձնվել է այդ անձի ներկայացուցչին ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատան կողմից:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով վարչական պատասխանատվություն է նախատեսել մաքսային այն կանոնների խախտման համար, որոնք կապված են մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների նկատմամբ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 128-րդ հոդվածի ուժով գործող սահմանափակումների հետ և չեն առնչվում պետության ֆինանսական շահերին, մաքսային վճարների վճարման պարտականության կատարմանը, ինչպես նաև այդպիսի պարտականության կատարման ապահովմանը: Քննարկվող վարչական իրավախախտումն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողության սահմանված կարգի դեմ և դրսևորվում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելու, օտարելու, ոչնչացնելու կամ կորցնելու եղանակով: Նշված արարքների կատարման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է սահմանել տուգանքը՝ առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնված, օտարված, ոչնչացված կամ կորցված ապրանքի մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով (*յրե՛ս, Հոսիկ Սարգսյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/10555/05/13 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի մեկնաբանությանը, նշել է, որ առանց մաքսային մարմնի թույլտվության մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները կամ տրանսպորտային միջոցները մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը կամ կորցնելը որակվում է որպես մաքսային կանոնների խախտում, որի համար մեղավոր անձը ենթակա է պատասխանատվության՝ նշված ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով տուգանքի տեսքով: Այսինքն՝ նշված իրավախախտման սուբյեկտ է համարվում այն անձը, որն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնում կամ օտարում կամ ոչնչացնում կամ կորցնում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները կամ տրանսպորտային միջոցները (*յրեն, ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Վարդան Գիժյարյանի թիվ ՎԴ/2/0278/05/09 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 25.06.2010 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածում ամրագրված արարքը կատարվում է այնպիսի գործողություններով, որոնցով որոշվում է մաքսային հսկողության ներքո գտնվող գույքի ճակատագիրը, և որոնց հետևանքով ապրանքները և տրանսպորտային միջոցները դուրս են գալիս անձի փաստացի տիրապետումից, այդպիսիք են ապրանքների և տրանսպորտային միջոցների հանձնումն այլ անձի, ապրանքների և տրանսպորտային միջոցների օտարմանն ուղղված գործարքների կնքումը, դրանք ոչնչացնելը կամ կորցնելը (*յրե՛ս, Հայկ Սարգսյանն ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/3932/05/09 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Մինչդեռ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելու համար ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվություն չի կարող առաջանալ, եթե մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը հանձնվում է տեխնիկական սպասարկման, ավտովացման կամ վերանորոգման կետերի աշխատակիցներին կամ ավտոկայանատեղիի պահակին (ֆիզիկական հանձնում), քանի որ նման գործողություններով ավտոմեքենան չի հանձնվում այլ անձի տիրապետմանը և օգտագործմանը (*յրե՛ս, Ալեքսանդր Դերձակյանն ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/3633/05/09 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանի 12.10.2010 թվականի թիվ ՍԴԳ-920 որոշմամբ և Վճռաբեկ դատարանի վերը նշված որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի հատկանիշները հանգում են, ի թիվս այլնի, հետևյալին.

1. ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցանքի առարկան մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն են:

2. ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է այդ ապրանքների ու տրանսպորտային միջոցների փաստական և իրավաբանական ճակատագիրը կանխորոշող հետևյալ արարքներից որևէ մեկով.

- մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների հանձնում,
- մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների օտարում,
- մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների ոչնչացում,
- մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների կորուստ:

Ընդ որում, հարկ է նշել, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև այն, որ վերը նշված արարքները կատարվում են մաքսային մարմնի թույլտվության բացակայության պայմաններում:

3. ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը մեղքի առկայությունն է, որը դրսևորվում է դիտավորությամբ կամ անզգուշությամբ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ անձի կողմից թույլ տրված արարքում վերոգրյալ հատկանիշներից որևէ մեկի բացակայությունը բացառում է ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության առաջացումը: Մասնավորապես՝ հանձնված, օտարված, ոչնչացված կամ կորսված տրանսպորտային միջոցները մաքսային հսկողության ներքո չգտնվելու կամ այդ տրանսպորտային միջոցների հանձնումը, օտարումը կամ ոչնչացումը մաքսային մարմնի թույլտվությամբ կատարվելու կամ այդ արարքներում անձի մեղքի բացակայության դեպքում անձը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցանքի կատարման համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը տիրապետելու իրավունք ունեցող անձից բացի այն փաստացի այլ անձի տիրապետման տակ գտնվելը ոչ բոլոր դեպքերում է նշանակում, որ առկա է «հանձնում»՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի իմաստով: Նշված հոդվածով նախատեսված արարքի՝ տրանսպորտային միջոցը հանձնելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար վարչական վարույթի ընթացքում պետք է ձեռք բերվեն բավարար և անհերքելի ապացույցներ հետևյալի մասին.

ա) փաստացի այլ անձի տիրապետման տակ գտնվող տրանսպորտային միջոցը գտնվում է մաքսային հսկողության ներքո,

բ) տրանսպորտային միջոցն այլ անձի տիրապետման տակ է հայտնվել առանց մաքսային մարմնի թույլտվության,

գ) տրանսպորտային միջոցն այլ անձի տիրապետման տակ է հայտնվել տվյալ տրանսպորտային միջոցը մաքսային հսկողության ներքո գտնվելու ժամանակահատվածում տիրապետելու իրավունք ունեցող անձի կողմից դիտավորությամբ կամ անզգուշությամբ կատարված և այդ տրանսպորտային միջոցի փաստական և իրավաբանական ճակատագիրը կանխորոշող ակտիվ գործողությունների արդյունքում, այսինքն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը հայտնվել է այլ անձի փաստացի տիրապետման տակ այն տիրապետելու իրավունք ունեցող անձի մեղքով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ իրավախախտման փաստի հաստատված լինելու հարցը վարչական դատարանը պարտավոր է լուծել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված ապացույցների ազատ գնահատման միջոցով, այն է՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները:

27.12.2017թ.

**41. Վահե Մնացականյան v. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԳ/1897/05/15**

Էջ  
460-469

**Խնդիր.** Կարող է արդյոք անձը տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի արդյունքում ենթարկվել վարչական պատասխանատվության թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջների խախտման համար, եթե այդ վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված տեսանյութում կամ լուսանկարում տվյալ ճանապարհային նշանը տեսանելի չէ, և վարչական վարույթն ընթացել է միայն եզրափակիչ փուլով:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը նշել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը տրանսպորտային միջոցների վարորդների համար վարչական պատասխանատվություն է նախատեսել հետևյալ արարքների՝ (1) ճանապարհային նշանների պահանջները չկատարելու, կամ (2) ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելու համար: Ընդ որում, նշված գանգառների համար օրենսդիրը որպես վարչական տույժի միջոց է ընտրել տուգանքը՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային երթևեկության կանոնները սահմանելու լիազորությունն օրենսդիրը վերապահել է ՀՀ կառավարությանը: Վերջինս, հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված լիազորությունը, 28.06.2007 թվականին ընդունել է «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշումը, որի թիվ 1 հավելվածի թիվ 1 Ձևի 3-րդ գլխի համաձայն՝ արգելող նշանները մտցնում կամ վերացնում են երթևեկության որոշակի սահմանափակումներ. դրանցից է թիվ 3.27. «Կանգառն արգելվում է» նշանը, որը նշանակում է, որ արգելվում են տրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված արգելող ճանապարհային նշաններից մեկը թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» նշանն է, որը սահմանում է երթևեկության որոշակի սահմանափակում. այն է՝ արգելում է իր գործողության տիրույթում գտնվող տրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումը: Ընդ որում, նշված ճանապարհային նշանի գործողությունը տարածվում է ճանապարհի միայն այն կողմի վրա, որտեղ այն տեղադրված է: Փաստորեն, տրանսպորտային միջոցների վարորդները կարող են պատասխանատվության ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով նաև թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար, եթե այդ նշանի գործողության տարածքում կատարել են իրենց տրանսպորտային միջոցների կանգառ կամ կայանում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ճանապարհային երթևեկության կանոնների նշված խախտումը հաճախ հայտնաբերվում է տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով: Հաշվի առնելով «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով հայտնաբերված թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու փաստը կարող է հաստատված համարվել միայն այն դեպքում, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Այսինքն՝ այն դեպքում, երբ թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու փաստը հայտնաբերվում է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա ըստ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրության՝

այդ արարքի կատարման համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայմանն այն է, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը որևէ կասկած չհարուցի:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այս կամ այն տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու փաստի առկայությունը տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի ընթացքում կարող է կասկած չհարուցել միայն այն պարագայում, երբ վարչական մարմնի կողմից ձեռք բերված լուսանկարը կամ տեսանյութը պարունակում է միանշանակ տվյալներ այն մասին, որ տվյալ տրանսպորտային միջոցի վարորդը թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի գործողության տարածքում կատարել է իր տրանսպորտային միջոցի կանգառ կամ կայանում: Այլ կերպ ասած, քննարկվող իրավիճակում վարչական մարմնի կողմից ձեռք բերված լուսանկարը կամ տեսանյութը պետք է բովանդակի այնպիսի տեղեկություններ, որոնք անառարկելիորեն վկայում են այն մասին, որ թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջները ենթադրյալ իրավախախտման կատարման պահին տարածվել են տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի վրա, և վերջինս չի կատարել այդ նշանի պահանջները:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտով անձը կարող է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ենթարկվել վարչական պատասխանատվության թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար, եթե այդ վարչական վարույթում ձեռք բերված միակ թույլատրելի ապացույցը՝ իրավախախտումն ամրագրած տեսանյութը կամ լուսանկարը, պարունակում է նշված ճանապարհային նշանի պատկերը, հստակ պատկերացում է տալիս այդ նշանի գործողության տարածքի մասին, իսկ տրանսպորտային միջոցի կայանման վայրի և թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» նշանի համադրման միջոցով հնարավոր է անկասկած հետևություն անել տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տվյալ նշանի պահանջները չկատարելու փաստի առկայության մասին:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար վարչական պատասխանատվության ենթարկված անձի տրանսպորտային միջոցի կայանման վայրում քննարկվող ճանապարհային նշանի առկա լինելու և այդ նշանի գործողությունը տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի վրա տարածվելու փաստական հանգամանքները թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում ևս կարող են հաստատվել բացառապես իրավախախտումն ամրագրած տեսանյութով կամ լուսանկարով: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն իրավաբանական իրողությունը, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ուժով օրենսդիրը տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի ընթացքում իրավախախտման հատկանիշների պարզման համար միակ թույլատրելի ապացուցման միջոց է համարել իրավախախտումն ամրագրած տեսանյութը կամ լուսանկարը, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտում-



ների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի արդյունքում թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտ ընդունելու իրավական նախադրյալն այն է, որ այդ վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարով կամ տեսանյութով ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում: Վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարով կամ տեսանյութով ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը տվյալ դեպքում նշանակում է, որ նշված լուսանկարի կամ տեսանյութի միջոցով անառարկելիորեն ապացուցվում են, ի թիվս այլնի, հետևյալ փաստերը.

տրանսպորտային միջոցի կայանման վայրում թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի առկայությունը,

տրանսպորտային միջոցի վարորդի վրա թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի գործողության տարածումը,

տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջների չկատարումը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն բոլոր դեպքերում, երբ վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարով կամ տեսանյութով ամրագրված արարքի հատկանիշների և թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած է հարուցում, ապա վարչական մարմինը պարտավոր է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վարչական վարույթի ընթացիկ փուլի շրջանակներում լրիվ և բազմակողմանիորեն պարզել ենթադրյալ իրավախախտման առկայությունը և միայն այդ դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով անձին ենթարկել վարչական պատասխանատվության թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար:

**27.12.2017թ.**

**42. Հարություն Սարգսյան v. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԳ/5620/05/15**

Էջ  
470-479

*Խնդիր.* Արդյո՞ք անձը ենթակա է վարչական պատասխանատվության ճանապարհային գծանշման պահանջների՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված խախտման համար, եթե արարքի կատարման վայրում և պահին տվյալ գծանշման պահանջները ողջամտորեն հնարավոր չէր պահպանել:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը նշել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը վարչական պատասխանատվություն է նախատեսել տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող գծանշումների պահանջները չկատարելու համար: Ընդ որում, նշված գանցանքների համար օրենսդիրը որպես վարչական տույժի միջոց է ընտրել տուգանքը՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող «Ճանապարհային երթևեկության մասին» Վիեննայի 08.11.1968 թվականի կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 08.02.2006 թվականին) 4-րդ հոդվածի «ա» կետը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային գծանշումները պետք է կատարվեն այնպես, որ ճանապարհային երթևեկության մասնակիցները հեշտությամբ դրանք ընկալելու հնարավորություն ունենան: Այլ կերպ ասած՝ ճանապարհային գծանշումների պահանջները պետք է ողջամտորեն ընկալելի լինեն ճանապարհային երթևեկության մասնակիցներին, ինչն էլ հանդիսանում է այդ պահանջների կատարման անհրաժեշտ նախադրյալը: Փաստորեն, ճանապարհային գծանշումները՝ որպես ճանապարհային երթևեկությունը կարգավորող կարևոր միջոցներ, պետք է օժտված լինեն ընկալելիության և կատարելիության բավարար մակարդակով:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող գծանշումներից է թիվ 1.3 հորիզոնական գիծը, որը

սահմանում է երթևեկության որոշակի ռեժիմ և կարգ. այն է՝ բաժանում է չորս և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհների հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը: Ընդ որում՝ տրանսպորտային միջոցների վարորդներին արգելված է հատել այդ հորիզոնական գիծը: Փաստորեն, տրանսպորտային միջոցների վարորդների կատարած զանցանքների համար պատասխանատվություն կրող սուբյեկտները կարող են պատասխանատվության ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նաև թիվ 1.3 գծանշման պահանջները չկատարելու, այսինքն՝ չորս և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհների հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը միմյանցից բաժանող գիծը հատելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ ճանապարհային գծանշման պահանջները ողջամտորեն հնարավոր չէ կատարել բնականոն երթևեկության պայմաններում, ապա երթևեկության մասնակիցը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության այդ գծանշման պահանջները չկատարելու համար: Հետևաբար տրանսպորտային միջոցների վարորդների կատարած զանցանքների համար պատասխանատվություն կրող սուբյեկտները թիվ 1.3 գծանշման պահանջը չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով կարող են ենթարկվել պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ գծանշման պահանջները հնարավոր է ողջամտորեն կատարել ճանապարհի տվյալ հատվածում: Այլ կերպ ասած՝ տրանսպորտային միջոցների վարորդների կատարած զանցանքների համար պատասխանատվություն կրող սուբյեկտները չորս և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհների հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը միմյանցից բաժանող գիծը հատելու համար չեն կարող ենթարկվել պատասխանատվության, եթե այդ գիծը ճանապարհի տվյալ հատվածում և երթևեկության տվյալ պայմաններում ողջամտորեն հնարավոր չէր չհատել:

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ դատողությունները բխում են նաև իրավունքի գերակայության հիմքում ընկած իրավական որոշակիության հանրաձայն սկզբունքի էությունից, որի համաձայն՝ իրավունքի նորմերը պետք է օժտված լինեն հստակությամբ, հասանելիությամբ, կանխատեսելիության որակական հատկանիշներով, ինչի շնորհիվ այդ կանոնի կարգավորման տիրույթում հայտնվող յուրաքանչյուր սուբյեկտ պետք է ի վիճակի լինի իր վարքագիծը համապատասխանեցնել տվյալ նորմի պահանջներին: Այն բոլոր դեպքերում, երբ թիվ 1.3 գծանշման պահանջները ողջամտորեն հնարավոր չէ կատարել, ապա այդ գծանշման պահանջների խախտման համար պատասխանատվություն նախատեսող օրենքի դրույթը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմը, չի կարող կիրառվել. հակառակ պարագայում կառուցված իրավական որոշակիության սկզբունքի խախտում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ճանապարհային երթևեկության կանոնների քննարկվող խախտումը հաճախ հայտնաբերվում է տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով: Վերահաստատելով «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող թիվ 1.3 գծանշման պահանջը չկատարելը տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված լինելու դեպքում տվյալ տրանսպորտային միջոցով կատարված իրավախախտման համար պատասխանատվություն կրող սուբյեկտը կարող է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով ենթարկվել վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ տեսանյութում կամ լուսանկարում անրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի արդյունքում թիվ 1.3 գծանշման պահանջները չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտ ընդունելու

իրավական նախադրյալից մեկն այն է, որ տվյալ իրավիճակում տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող թիվ 1.3 գծանշման պահանջը կատարելու օրյեկտիվ հնարավորությունը ողջամտորեն կասկած չի հարուցում: Այսինքն՝ վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարի կամ տեսանյութի ուսումնասիրությունից չպետք է կասկած հարուցի նաև այն հանգամանքը, որ տվյալ իրավիճակում տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող թիվ 1.3 գծանշման պահանջը ողջամտորեն հնարավոր էր կատարել:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն բոլոր դեպքերում, երբ վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարով կամ տեսանյութով ամրագրված արարքի հատկանիշների ուսումնասիրության արդյունքում տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թիվ 1.3 գծանշման պահանջները կատարելու հնարավորությունը ողջամտորեն կասկած է հարուցում, ապա վարչական մարմինը պարտավոր է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վարչական վարույթի ընթացիկ փուլի շրջանակներում լրիվ և բազմակողմանիորեն պարզել չորս և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհների հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը միմյանցից բաժանող գիծը չհատելու օրյեկտիվ հնարավորությունը և միայն այդ դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով անձին ենթարկել վարչական պատասխանատվության թիվ 1.3 գծանշման պահանջները չկատարելու համար:

**27.12.2017թ.**

**43. Արսեն Խաչատրյան v. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԳ/4936/05/14**

Էջ  
**480-492**

*Խնդիր.* Տեսանկարահանմամբ կամ լուսանկարահանմամբ հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը կարող է արդյո՞ք անվավեր ճանաչվել այն հիմքով, որ իրավախախտումը կատարել է տրանսպորտային միջոցի սեփականատիրոջից տարբերվող այլ անձ, եթե տրանսպորտային միջոցի սեփականատերը դատարանին չի հայտնել իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարած անձի ինքնությունը և չի ապացուցել, որ իրավախախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տվյալ տրանսպորտային միջոցը (տրանսպորտային միջոցը սեփականատիրոջ կամ քից անկախ հանգամանքներում վերջինիս տիրապետությունից դուրս եկած չլինելու դեպքում):

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը նշել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական պատասխանատվության ոլորտում գործում են «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» կարևորագույն սկզբունքները: Անձնական պատասխանատվության սկզբունքը նշանակում է, որ անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության միայն անձամբ իր կողմից կատարված զանցանքի համար: Իսկ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգուշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին: Նմանատիպ իրավական դիրքորոշում արտահայտել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ 12.10.2010 թվականի թիվ ՍԳՌ-920 որոշմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը վարչական պատասխանատվության վերոնշյալ սկզբունքներից կատարել է բացառություն, որը վերաբերում է տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտին:

Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ ճանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա Վարչական

իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի սեփականություն, ապա այն անձը, որին ամրացված է տրանսպորտային միջոցը կամ տրանսպորտային միջոցն ամրացնելու իրավասություն ունեցող անձը, եթե չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 01.03.2016 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ ճանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա նույն օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ սեփականություն, ապա՝ համապատասխանաբար իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը, եթե չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ:

Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի վկայակոչված խմբագրությունները, ըստ էության, նախատեսում են միևնույն իրավակարգավորումները, իսկ դրանց միջև առկա տարբերությունը վերաբերում է այն դեպքին, երբ տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով պատկանում է ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձի: Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարել իրավական դիրքորոշումներ ձևավորել այն իրավիճակի վերաբերյալ, երբ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկված՝ տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը վարչական կամ դատական կարգով վիճարկում է իրեն վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը՝ իր վարչական բողոքի կամ հայցի հիմքում դնելով այն հանգամանքը, որ իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ: Ընդ որում, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները վերաբերում են միայն այն դեպքին, երբ տրանսպորտային միջոցը դուրս չի եկել սեփականատիրոջ տիրապետությունից վերջինիս կամքից անկախ հանգամանքներում:

Վճարելի դատարանը գտել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնի՝ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով բացահայտված խախտման համար պատասխանատվության ենթակա սուբյեկտի հարցում որոշակիորեն շեղվել է «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» սկզբունքներից և ամրագրել է այն կանխավարկածը, որ քննարկվող դեպքում, ընդհանուր կանոնի համաձայն, վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտը տրանսպորտային միջոցի սեփականատերն է, եթե վերջինս հանդիսանում է ֆիզիկական անձ:

Անդրադառնալով տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածին՝ Վճարելի դատարանը հարկ է համարել նշել, որ առհասարակ իրավաբանական կանխավարկածն իրավական նորմերով հաստատված այն կանոնն է, որի համաձայն՝ որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը: Ըստ այդմ, տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի էությունը հանգում է հետևյալին. տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթակա է տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, քանի դեռ չի ապացուցվել, որ տվյալ իրավախախտումը կատարել է այլ անձ:

Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրել է, որ ելնելով «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» վերոհիշյալ սկզբունքներից՝ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով այդ կանխավարկածը հաղթահարելի է համարել այն դեպքում, երբ

ապացուցվում է, որ իրավախախտումը կատարել է այլ անձ: Ընդ որում, տվյալ դեպքում մեղազգրվող իրավախախտումն այլ անձի կողմից կատարված լինելու փաստի ապացուցման բեռը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, որն իրավասու մարմնի կողմից ենթարկվել է վարչական պատասխանատվության տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար:

Հաշվի առնելով քննարկվող հարցի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի (*զին, ՀՀ սահմանադրական դատարանի 21.06.2016 թվականի թիվ ՍԴՌ-1282 որոշումը*) և Եվրոպական դատարանի (*զին, O'Halloran and Francis v. The United Kingdom (15809/02, 25624/02) գործով Եվրոպական դատարանի 29.06.2007 թվականի վճիռը, կետեր 52-63*) իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարել այն մոտեցումը, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման համար անհրաժեշտ իրավաբանական փաստի ապացուցման պարտականությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը: Այլ կերպ ասած, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավական նորմը պետք է մեկնաբանվի և կիրառվի հետևյալ կերպ. եթե (1) տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թույլ տրված ու տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար և (2) վարչական կամ դատական կարգով վիճարկում է իրեն վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտն այն հիմքով, որ իրավախախտման կատարման պահին տվյալ տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ, ապա այդ վարչական ակտը կարող է վերացվել միայն այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձն ապացուցի, որ տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ:

Մինչև ժամանակ տյուր որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել իրավակիրառ պրակտիկայում միատեսակ ընկալում ձևավորել այն փաստական հանգամանքների բովանդակության վերաբերյալ, որոնք տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը պարտավոր է ապացուցել տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածը հաղթահարելու համար:

Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված կանխավարկածի հաղթահարման համար ապացուցման ենթակա փաստական հանգամանքների բովանդակությունն օրենսդիրը սահմանել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում, մասնավորապես՝ հետևյալ դրույթի միջոցով. «(...) *եթե չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ (...)*»: Նշված իրավական նորմի բովանդակությունից հետևում է, որ տվյալ դեպքում օրենսդրի կողմից կանխորոշված ապացուցման ենթակա փաստական հանգամանքը տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցն այլ անձի կողմից վարելն է: Փաստորեն, քննարկվող իրավիճակում անհրաժեշտ է ապացուցել ոչ թե այն հանգամանքը, որ իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը չի վարել տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, այլ այն հանգամանքը, որ իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ:

Վերոգրյալից ուղղակիորեն հետևում է, որ խնդրո առարկա հասարակական հարաբերությունների կարգավորման հարցում օրենսդրի կամքը հանգում է հետևյալին. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման համար անհրաժեշտ է ոչ թե ապացուցել այն փաստը, որ իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը չի վարել տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, այլ բացահայտել այն հանգամանքը, թե կոնկրետ ով է վարել տրանսպորտային միջոցը, այսինքն՝ թե կոնկրետ որ ֆիզիկական անձն է կատարել տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված իրավախախտումը, և ապացուցել այդ հանգամանքի առկայությունը: Հետևաբար Վարչական իրավախախ-

տումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ապացուցման բեռը կրող սուբյեկտը՝ տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, չի կարող բավարարվել միայն այն փաստի վկայակոչմամբ, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված իրավախախտման կատարման պահին ինքը չի վարել տվյալ տրանսպորտային միջոցը, և պարտավոր է հայտնել, թե իրավախախտման կատարման պահին ով է վարել տվյալ տրանսպորտային միջոցը՝ նշելով այդ անձին նույնականացնելու համար անհրաժեշտ և բավարար տվյալներ (առնվազն վերջինիս անունը և հասցեն): Ընդ որում, տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, մատնացույց անելով որևէ մեկին՝ որպես իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարած անձի, պարտավոր է ապացուցել, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տվյալ տրանսպորտային միջոցը:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձի կողմից վկայակոչված կոնկրետ անձի կողմից իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարելու փաստը վարչական կամ դատական ընթացակարգերի շրջանակներում չհաստատվելու (ապացուցված չհամարվելու) դեպքում տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձի վրա օրենքով դրված ապացուցման պարտականությունը համարվում է չկատարված, ինչն էլ հանգեցնում է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վերջինիս պատասխանատվության իրավաչափության հաստատմանը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման մասին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավակարգավորման բովանդակությունը հանգում է հետևյալին. տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը պարտավոր է իրավասու մարմին (վարչական մարմին կամ դատարան) հայտնել իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարած անձի ինքնությունը և ապացուցել, որ իրավախախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տրանսպորտային միջոցը: Հակառակ պարագայում տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածը համարվում է չհաղթահարված, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով վարչական պատասխանատվության ենթակա պատշաճ սուբյեկտ է դիտարկվում տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, և վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտը չի կարող վերացվել այն հիմքով, որ իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում մեխանիկական տրանսպորտային միջոցներով կատարված և տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները կարգավորվում են «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենսդրական ակտում 21.12.2015 թվականին ընդունված և 11.01.2016 թվականից ուժի մեջ մտած թիվ ՀՕ-179-Ն օրենքով կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, որոնք ևս վկայում են այն մասին, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման համար տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը պարտավոր է իրավասու մարմին (վարչական մարմին կամ դատարան) հայտնել իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարած անձի ինքնությունը և ապացուցել, որ իրավախախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տրանսպորտային միջոցը:

Այսպես, օրենսդիրը 11.01.2016 թվականից գործող իրավակարգավորումների միջոցով սահմանել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման, այսինքն՝ տվյալ իրավախախտումը փաստացի չկատարած տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ վարչական պատասխանատվության բացառման և տվյալ իրավախախտման իրական կատարողին պատասխանատվության ենթարկելու պայմաններն ու կարգը: Ըստ այդ իրավակարգավորումների՝ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկված տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը կարող է հասնել իր նկատմամբ ընդունված վարչական ակտի վերացմանը թե՛ վարչական, թե՛ դատական կարգով այդ վարչական ակտը վիճարկելու միջոցով՝ իր բողոքի կամ հայցի հիմքում դնելով այն փաստական հանգամանքը, որ իրավախախտման կատարման պահին տվյալ տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ: Ընդ որում, վարչական կամ դատական կարգով բողոքարկելով տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը՝ վերջինս պարտավոր է վարչական բողոքը քննող վարչական մարմնին կամ դատարանին ներկայացնել, ի թիվս այլ հանգամանքների, հետևյալ տվյալները (փաստաթղթերը)՝

- 1) իրավախախտումը կատարած անձի անունը և ազգանունը,
- 2) իրավախախտումը կատարած անձի վարորդական վկայականի սերիան և համարը, բնակության վայրը,
- 3) տրանսպորտային միջոցն իրավախախտումը կատարած անձի կողմից օգտագործվելու հիմք հանդիսացող գրավոր պայմանագիրը (առկայության դեպքում):

Փաստորեն, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ 11.01.2016 թվականից գործող խմբագրությամբ 7-րդ հոդվածով սահմանված իրավական նորմերով օրենսդիրը տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձի վրա դրել է պարտականություն վարչական բողոքը քննող վարչական մարմնին կամ դատարանին հայտնել որոշակի տեղեկություններ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման կատարման պահին տվյալ տրանսպորտային միջոցը վարած անձի և այդ անձի կողմից տրանսպորտային միջոցն օգտագործելու հիմքերի վերաբերյալ:

Անփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ օրենսդիրը տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման հարցում դրսևորել է հստակ մոտեցում առ այն, որ նշված կանխավարկածի հաղթահարման համար անհրաժեշտ ապացուցման բեռի բովանդակությունը հանգում է հետևյալին. տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը պարտավոր է իրավասու մարմնին (վարչական մարմին կամ դատարան) հայտնել իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարած անձի ինքնությունը և ապացուցել, որ իրավախախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տրանսպորտային միջոցը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման համար բավարար հիմքերի առկայության պայմաններում տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու որոշումը վարչական բողոքարկման եղանակով վիճարկելու կառուցակարգը ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից կարող է առավել արդյունավետ կերպով ապահովել անձի խախտված իրավունքների գործնական վերականգնումը, քան քննարկվող կանխավարկածի հաղթահարումը՝ նույն վարչական ակտը դատական կարգով բողոքարկելու և դատական գործ հարուցելու միջոցով:

27.12.2017թ.

**44. Հայկ Ղազարյան v. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԳ/0446/05/16**

Էջ  
493-508

**Խնդիր.** (1) Ո՞վ է ենթակա վարչական պատասխանատվության իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանմամբ կամ լուսանկարահանմամբ հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար, (2) ինչպիսիք իրավական կառուցակարգի միջոցով կարող է հաղթահարվել տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել իրավական դիրքորոշումներ ձևավորել այն իրավիճակի վերաբերյալ, երբ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկված տրանսպորտային միջոցի սեփականատեր իրավաբանական անձի տնօրենը վարչական կամ դատական կարգով վիճարկում է իրեն վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը՝ իր վարչական բողոքի կամ հայցի հիմքում դնելով այն հանգամանքը, որ իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ: Ընդ որում, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները վերաբերում են միայն այն դեպքին, երբ տրանսպորտային միջոցը դուրս չի եկել սեփականատիրոջ տիրապետությունից վերջինիս կամքից անկախ հանգամանքներում:

Վճռաբեկ դատարանը նախևառաջ անհրաժեշտ է համարել անդրադառնալ մինչև 11.01.2016 թվականը գործող այն օրենսդրական կարգավորումների վերլուծությանը, որոնք վերաբերում են իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար պատասխանատվության ենթակա սուբյեկտին որոշելու կառուցակարգին:

Այսպես, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող իրավակարգավորումների համաձայն՝ իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար պատասխանատվության ենթակա սուբյեկտին որոշելու հարցը լուծելու համար վարչական մարմինը պարտավոր էր գրավոր հարցում ուղարկել տվյալ իրավաբանական անձին, իսկ վերջինս էլ իր հեթին պարտավոր էր հնգօրյա ժամկետում վարչական մարմնին տրամադրել հարցմամբ պահանջվող տեղեկությունները, մասնավորապես՝ այն անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, բնակության վայրը, ում ամրացված է տվյալ տրանսպորտային միջոցը:

Վերոգրյալ իրավական նորմերը համադրելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ մինչև 01.03.2016 թվականը գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավադրույթների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարցման միջոցով վարչական մարմնին առաջին հերթին պարտավոր էր պարզել այն անձին, ով ենթակա է վարչական պատասխանատվության իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված իրավախախտման համար: Փաստորեն, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարցումով վարչական մարմինը պարզում էր, թե իրավաբանական անձին պատկանող այն տրանսպորտային միջոցը, որի միջոցով կատարվել է տեսանկարահանման կամ լու-



սանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտում, ամրացված է արդյո՞ք որևէ ֆիզիկական անձի, և որո՞նք են այդ անձին նույնականացնող տվյալները: Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավաբանական անձին ուղղված քննարկվող հարցման միջոցով վերոգրյալ հանգամանքների պարզումն ապահովում էր իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված իրավախախտման համար վարչական պատասխանատվության կիրառումը պատշաճ սուբյեկտի (այն անձի, որին ամրացված է տվյալ տրանսպորտային միջոցը) նկատմամբ: Ընդ որում, տվյալ դեպքում իրավաբանական անձի կողմից վարչական մարմնի հարցմանը տրվող պատասխանի բովանդակությունն օրենսդիրը սահմանել էր սպառիչ կերպով. իրավաբանական անձը պարտավոր էր օրենքով սահմանված ժամկետում վարչական մարմնին հայտնել այն անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը և բնակության վայրը, ում ամրացված է տվյալ տրանսպորտային միջոցը: Իրավաբանական անձից ստացած տեղեկությունների հիման վրա պարզելով այն անձի տվյալները, ում ամրացված է տվյալ տրանսպորտային միջոցը, վարչական մարմինը պետք է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկեր այդ անձին:

Անվտփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ մինչև 01.03.2016 թվականը գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավական նորմը պետք է մեկնաբանվի և կիրառվի հետևյալ կերպ. եթե (1) իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցն ամրացնելու իրավասություն ունեցող անձը ենթարկվել էր վարչական պատասխանատվության՝ տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թույլ տրված ու տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար և (2) վարչական կամ դատական կարգով վիճարկում է իրեն վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտն այն հիմքով, որ իրավախախտման կատարման պահին տվյալ տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ, ապա այդ վարչական ակտը կարող է վերացվել միայն այն դեպքում, երբ վարչական պատասխանատվության ենթարկված անձն ապացուցի, որ ինքը պատշաճորեն կատարել է «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականությունը: Ավանդ վերաբերում է այն դեպքին, երբ իրավաբանական անձը ստացել է «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարցումը և ողջամտորեն հնարավորություն է ունեցել պատասխանալու դրան: Այսինքն՝ իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցն ամրացնելու իրավասություն ունեցող անձը պարտավոր էր ապացուցել, որ ստանալով վերոհիշյալ հարցումը և ողջամտորեն հնարավորություն ունենալով պատասխանել դրան, այդ հարցմանն ի պատասխան վարչական մարմնին հայտնել է այն անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը և բնակության վայրը, ում ամրացված է տվյալ տրանսպորտային միջոցը: Ընդ որում, այն դեպքում, երբ իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցն ամրացնելու իրավասություն ունեցող անձի կողմից վերոգրյալ պարտականության պատշաճ կատարման փաստը չի հաստատվում, ապա դա հանգեցնում է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցն ամրացնելու իրավասություն ունեցող անձի պատասխանատվության իրավաչափության հաստատմանը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ համապատասխան հարցման միջոցով իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար պատասխանատվության ենթակա սուբյեկտին որոշելու հարցը լուծելու վերաբերյալ վերը նշված իրավակարգավորումները գործել են մինչև 11.01.2016 թվականը, իսկ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապար-

հային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ 11.01.2016 թվականից գործող խմբագրությունն այլևս նման կառուցակարգ չի նախատեսում: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 01.03.2016 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տվյալ իրավաբանական անձի ղեկավարի պատասխանատվության կանխավարկածի էությունը և դրա հաղթահարման կառուցակարգին: Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնի՝ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով բացահայտված խախտման համար պատասխանատվության ենթակա սուբյեկտի հարցում որոշակիորեն շեղվել է «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» սկզբունքներից՝ ամբողջությամբ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածը:

Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 01.03.2016 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով պատկանում է իրավաբանական անձի, ընդհանուր կանոնի համաձայն, տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով բացահայտված ճանապարհային երթևեկության կանոնի խախտման համար վարչական պատասխանատվության է ենթակա տվյալ իրավաբանական անձի ղեկավարը: Փաստորեն, 01.03.2016 թվականից գործող կարգավորումների ուժով օրենսդիրը սահմանել է, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի էությունը հանգում է հետևյալին. տրանսպորտային միջոցն իրավաբանական անձի պատկանելու դեպքում տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթակա է տվյալ իրավաբանական անձի ղեկավարը, քանի դեռ չի ապացուցվել, որ տվյալ իրավախախտումը կատարել է այլ անձ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ելնելով «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» վերոհիշյալ սկզբունքներից՝ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով այդ կանխավարկածը հաղթահարելի է համարել այն դեպքում, երբ ապացուցվում է, որ իրավախախտումը կատարել է այլ անձ: Ընդ որում, հաշվի առնելով քննարկվող հարցի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարել այն մոտեցումը, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման համար անհրաժեշտ իրավաբանական փաստի ապացուցման պարտականությունը կրում է այն անձը, ով տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի ուժով իրավասու մարմնի կողմից ենթարկվել է վարչական պատասխանատվության տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար, այսինքն՝ իրավաբանական անձի ղեկավարը:

Այլ կերպ ասած, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 01.03.2016 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավական նորմը պետք է մեկնաբանվի և կիրառվի հետևյալ կերպ. եթե (1) տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով պատկանում է իրավաբանական անձի և իրավաբանական անձի ղեկավարը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թույլ տրված ու տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբեր-

ված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար և (2) վարչական կամ դատական կարգով վիճարկում է իրեն վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտն այն հիմքով, որ իրավախախտման կատարման պահին տվյալ տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ, ապա այդ վարչական ակտը կարող է վերացվել միայն այն դեպքում, երբ վարչական պատասխանատվության ենթարկված անձն ապացուցի, որ տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ օրենսդիրը տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման հարցում դրսևորել է հստակ մոտեցում՝ առ այն, որ նշված կանխավարկածի հաղթահարման համար անհրաժեշտ ապացուցման բեռն բովանդակությունը հանգում է հետևյալին. տրանսպորտային միջոցն իրավաբանական անձի պատկանելու դեպքում տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկված անձը՝ իրավաբանական անձի ղեկավարը, պարտավոր է իրավասու մարմնին (վարչական մարմին կամ դատարան) հայտնել իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարած անձի ինքնությունը և ապացուցել, որ իրավախախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տրանսպորտային միջոցը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման համար բավարար հիմքերի առկայության պայմաններում տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու որոշումը վարչական բողոքարկման եղանակով վիճարկելու կառուցակարգը ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից կարող է առավել արդյունավետ կերպով ապահովել անձի խախտված իրավունքների գործնական վերականգնումը, քան քննարկվող կանխավարկածի հաղթահարումը նույն վարչական ակտը դատական կարգով բողոքարկելու և դատական գործ հարուցելու միջոցով:

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ**

20.07.2017թ.

**45. Սարգիս Խաչատրյան v. ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի Շենգավիթի հարկային տեսչության, վարչ. գործ թիվ ԳԿ-7107/05/14** Էջ 509-523

*Խնդիր.* Արդյո՞ք վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի տևողությունը եռօրյա ժամկետը չգերազանցելն ինքնին իրավաչափ հիմք է հանդիսանում այդ վարույթի ընթացքում լուսանկարահանման չանցկացնելու համար:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով և Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված մարդու՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը ներառում է նաև վարչական վարույթի ընթացքում լաված լինելու իրավունքը, որի ապահովման պարտականությունն օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով դրել է վարույթն իրականացնող վարչական մարմնի վրա: Իսկ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով վարչական վարույթի ընթացքում լաված լինելու իրավունքը բարձրացվել է սահմանադրական մակարդակի. 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածում, որպես պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր, ամրագրված է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական վարույթի մասնակիցների՝ ընդունվելիք վարչական ակտի հասցեատիրոջ և երրորդ անձանց, լաված լինելու իրավունքի իրացման միջոցով վերջիններս հնարավորություն են ստանում արդյունավետ կերպով պաշտպանելու և իրականացնելու իրենց այն իրավունքներն ու շահերը, որոնց վերաբե-

րում է տվյալ վարչական վարույթը: Այդ իրավունքի պատշաճ կենսագործման շնորհիվ վարչական վարույթի մասնակիցներն իրագեկվում են իրենց իրավական և փաստական վիճակի վրա ազդող վարչական վարույթի հարուցման և դրա արդյունքում արձակվելիք վարչական ակտի հիմքում դրվող փաստական և իրավական հանգամանքների վերաբերյալ՝ հնարավորություն ունենալով վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողություններ կատարելու միջոցով ազդելու վարչական մարմնի վերջնական որոշման վրա: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ վարչական մարմինը լսի, ի գիտությունը ընդունի և գնահատի վարույթի մասնակիցների դիրքորոշումները: Վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցների ներկայությունն ապահովելու վարչական մարմնի պարտականությունը կարևոր երաշխիք է հանդիսանում վարույթի մասնակցի՝ իրեն ընձեռված իրավունքներն իրացնելու և պաշտպանության միջոցներից օգտվելու համար: Ընդ որում, այդ իրավունքի իրացմանը խոչընդոտելը, այդ իրավունքի իրացման համար լիարժեք հնարավորություն չապահովելը կամ անհիմն՝ ոչ ռոջամիտ սահմանափակումներ ստեղծելն անթույլատրելի է:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ օրենսդրի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի պարտականության նպատակը չի սահմանափակվում միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովելով, դրանով մասնակիցները նաև նպաստում են գործի փաստական հանգամանքները պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը: Այսպիսով, իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքը գործնականում իրացնելը (*լրեն, Տիգրան Աբաղյանն ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի՝ թիվ ՎՂ/5539/05/11 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*): Այդ նպատակին հասնելու համար օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում սահմանել է վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը:

Այսպես, նախևառաջ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին լսելու վարչական մարմնի պարտականությունը, որի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է վերջիններին հնարավորություն տալ արտահայտվելու տվյալ վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքի գործնական իրացումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի ընթացիկ փուլում, երբ վարչական մարմինն իրականացնում է գործի փաստերի ուսումնասիրություն և պարզում է կիրառման ենթակա իրավական ակտերը, այս փուլում կատարվում են վարչական ակտ ընդունելուն ուղղված հիմնական գործողությունները, մասնավորապես՝ վարչական գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին ամրապահման հանգամանքների բացահայտումը, անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումը և գնահատումը, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Բացի այդ, վարույթի ընթացիկ փուլում լուծումները պետք է իրականացվեն այն հաշվառմամբ, որ վարույթի մասնակիցները դեռ հնարավորություն ունենան իրենց դիրքորոշմամբ ազդելու վարչական մարմնի որոշման վրա:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում օրենսդիրը նախատեսել է վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքից որոշ բացառություններ: Ընդ որում նշված հոդվածի 2-րդ մասը սահմանում է լուծումներ չանցկացնելու այն հիմքերը, որոնց ամկայության դեպքում վարչական մարմինն ունի հայեցողական լիազորություն ընտրելու լուծումներ անցկացնելու կամ չանցկացնելու երկու իրավաչափ լուծումներից մեկը: Վարչական վարույթի ընթացքում լուծումներ չանցկացնելու հայեցողական հիմքերն են.

ա) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցետեղերը չի պնդում, որ լուծումներ անցկացվեն,

բ) վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացած դիմումն ակնհայտ անհիմն է,

գ) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բանավոր վարչական ակտ:

Մինչդեռ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է լուումներ չանցկացնելու ինպերատիվ հիմքերը, որոնք են՝

ա) անհրաժեշտություն է առաջացել անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման,

բ) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է այլ ձևի վարչական ակտ:

Ընդ որում, լուումներ չանցկացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետում ամրագրված ինպերատիվ հիմքը համահունչ է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված այն իրավակարգավորման հետ, որ անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել միայն եզրափակիչ փուլով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ վարչական վարույթի ընթացքում լուումներ չանցկացնելու վերոգրյալ դեպքերը սպառիչ չեն, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասում օրենսդիրն ամրագրել է, որ օրենքով կարող են նախատեսվել լուումներ չանցկացնելու հայեցողական և ինպերատիվ այլ հիմքեր:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական վարույթի ընթացքում լաված լինելու իրավունքի երաշխավորված իրացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերից մեկը վարչական վարույթ հարուցելու մասին վարույթի մասնակիցներին ծանուցելու վարչական մարմնի պարտականության պատշաճ կատարումն է, որը սահմանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածում ամրագրված վարչական վարույթի մասին ծանուցելու վերաբերյալ իրավակարգավորումների միջոցով և նպատակ է հետապնդում վարույթի մասնակիցներին իրազեկելու այն մասին, որ վերջինիս նկատմամբ հարուցվել է և իրականացվելու է վարչական վարույթ: Նշված հոդվածով նախատեսված իրավական նորմերի բովանդակային վերլուծությունը վկայում է այն մասին, որ օրենսդիրը նախատեսել է վարչական վարույթի մասնակիցներին ծանուցման հետ կապված վարչական մարմնի հետևյալ պարտականությունները.

1) դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելը,

2) վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելը,

3) վարույթի մասնակիցներին վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին ծանուցելը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական վարույթի հարուցման մասին վարույթի մասնակիցներին ծանուցելու կարգավորումը հատկապես կարևորվում է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարույթ հարուցելու դեպքերում, քանի որ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցված լինելու մասին վարույթի մասնակիցը որևէ կերպ տեղեկացված չի կարող լինել: Ընդ որում, դիմումի հիման վրա հարուցված և վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների հարուցման մասին վարույթի մասնակիցներին ծանուցելու վարչական մարմնի պարտականությունների բովանդակային տարբերությունն այն է, որ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի հարուցման մասին ծանուցումը պարտադիր է առանց որևէ բացառության, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հարուցման մասին ծանուցումը պարտադիր է միայն այն դեպքում, երբ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է: Այսինքն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարչական մարմինը պարտավոր է վարույթ հարուցելու մասին պատշաճ ձևով ծանուցել վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է: Այլ կերպ ասած՝ վարչական մարմինը չունի սեփական նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հարուցման մա-

սին վարույթի մասնակիցներին ծանուցելու պարտականություն միայն այն դեպքում, երբ վարչական ակտն ընդունվելու է վարչական վարույթի հարուցումից հետո երեք օրվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունվելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից պակաս լինելու դեպքում վարչական մարմնի՝ վարույթի հարուցման մասին վարույթի մասնակիցներին ծանուցելու պարտականությունն չունենալու օրենսդրական կարգավորումը համահունչ է վարչարարության համազավտության և տնտեսավարության սկզբունքներին և նպատակ է հետապնդում վարչարարությունն իրականացնել վարչական մարմնի տիրապետման ներքո գտնվող միջոցների չափավոր և արդյունավետ օգտագործմամբ: Այսինքն՝ օրենսդրի տեսանկյունից, եթե վարչական վարույթի հարուցման և եզրափակիչ փուլերի միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում երեք օրը, ապա վարչական վարույթի մասնակիցներին վարչական վարույթի հարուցման մասին առանձին ծանուցելու անհրաժեշտությունը բացակայում է, նրանք պետք է ծանուցվեն միայն լուսնների անցկացման ժամանակի և վայրի մասին:

Վճռաբեկ դատարանը նախկին որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարույթին մասնակցող անձի՝ լաված լինելու իրավունքը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը: Այս եզրահանգումը բխում է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներից, որոնցով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական և թե՛ իրավական առումներով, մասնավորապես այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ (*յրեն, Ivanov and others v. Bulgaria (46336/99) գործով Եվրոպական դատարանի 24.11.2005 թվականի վճիռը, կետ 70*): Հետևաբար, վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը վարույթին մասնակից անձին պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին (*յրեն, ՀՀ աշխատանքի պետական տեսչությունն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի փնտրենների խորհրդի նախագահ, գլխավոր փնտրեն Վայերի Օվկյաննիկովի թիվ ՎԴ/0016/05/08 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը*):

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական վարույթի մասին ծանուցելու՝ «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված կառուցակարգն անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում վարչական վարույթի ընթացքում մարդու լաված լինելու իրավունքի կենսագործման համար, քանի որ առանց վարչական վարույթի մասնակիցներին վարույթի հարուցման կամ վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների (օրինակ՝ լուսնների) անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին ծանուցելու հնարավոր չէ ապահովել վարչական վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքի գործնական իրացումը: Թեև վարչական վարույթի մասնակիցներին վարույթի մասին ծանուցելը և վարույթի մասնակիցներին քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու հնարավորություն տալը՝ լսելը, կատարվում են վարչական վարույթի երկու տարբեր փուլերում և նախատեսված են վարչական վարույթի հարուցման ու ընթացիկ փուլերը կարգավորող իրավական նորմերով, սակայն նշված ընթացակարգային գործողությունները հետապնդում են մեկ միասնական նպատակ, որը հանգում է մարդու՝ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքների իրացման երաշխավորմանը:

Այնուամենայնիվ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ վարչական վարույթի մասնակիցներին վարույթի հարուցման մասին ծանուցելու և այդ վարույթի ընթացքում լուսններ անցկացնելու իրավական հիմքերը տարբերվում են միմյանցից: Մասնավորապես, վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հարուցման մասին չծանուցելու իրավական հիմքի՝ վարչական վարույթի հա-

րուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից պակաս լինելու, առկայությունը չի կարող հիմք հանդիսանալ վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքը սահմանափակելու և առանց ընթացիկ փուլում լսումների իրականացման միջամտող վարչական ակտ ընդունելու համար, եթե բացակայում են լսումներ չանցկացնելու կամ վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով իրականացնելու համար «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերը:

**ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

07.04.2017թ.

**46. Երվանդ Ոսկանյան v. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջան, վարչ. գործ թիվ ՎԳ/0721/05/15**

Էջ  
524-537

*Խնդիր.* 2008, 2009, 2010 և 2011 թվականներին կատարված հարկային օրենսդրության խախտումների համար կարող են արդյո՞ք առաջանալ գույքահարկի գծով հարկային պարտավորություններ, եթե տվյալ իրավախախտումները հայտնաբերվել են 2015 թվականին:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով օրենսդիրը նախատեսել է հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետները: Նշված իրավադրույթով օրենսդիրը սահմանել է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետը երեք տարի է, որի հաշվարկման համար ելակետ է ընդունվում հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարին (ժամկետը հաշվարկվում է իրավախախտման կատարման տարվան հաջորդող տարվանից): Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ օրենսդրի կողմից սահմանված ընդհանուր կանոնը հետևյալն է. հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե հարկային օրենսդրության տվյալ խախտումը հայտնաբերվել է այն ժամանակ, երբ լրացած է եղել այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը: Այսինքն՝ հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետն ընդգրկում է տվյալ իրավախախտման կատարման տարվան անմիջապես հաջորդող երեք օրացուցային տարիները. այդ տարիներն անցնելուց հետո հայտնաբերված իրավախախտման համար հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ:

Հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերոգրյալ ընդհանուր կանոնից օրենսդիրը նախատեսել է բացառություն՝ ամրագրելով, որ նշված ժամկետը չի գործում «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված դեպքերում: Ըստ այդմ, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում օրենսդիրը նախատեսել է գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ հատուկ իրավակարգավորում: Նշված իրավադրույթի համաձայն՝ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետները հաշվարկելու համար հիմք է ընդունվում հարկային օրենսդրության խախտումը կատարելու պահը (ժամկետը հաշվարկվում է իրավախախտման կատարման պահից): Սակայն գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ օրենսդրի կողմից սահմանված հատուկ կանոնը հանգում է հետևյալին. գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե հարկային օրենսդրության տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելուց հետո տասը տարվա ժամկետը լրանալուց հետո:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

1. որպես ընդհանուր կանոն՝ հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետը երեք տարի է, որի հաշվարկման սկիզբն իրավախախտման կատարման տարվան անմիջապես հաջորդող տարին է,

2. որպես բացառություն ընդհանուր կանոնից՝ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետը տասը տարի է, որի հաշվարկման սկիզբն իրավախախտման կատարման պահն է,

3. հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության թե՛ ընդհանուր, թե՛ հատուկ ժամկետների հաշվարկման անհրաժեշտությունը ծագում է հարկային իրավախախտման հայտնաբերման պահին, քանի որ հարկային պարտավորությունների առաջացումը պայմանավորված է վաղեմության ժամկետի՝ տվյալ իրավախախտման հայտնաբերման պահին լրացած լինելու կամ չլինելու հանգամանքով:

Վճարելի դատարանն արձանագրել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների՝ գույքահարկին վերաբերող բացառությունը սահմանվել է 21.03.2012 թվականին ընդունված և 28.04.2012 թվականին ուժի մեջ մտած ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն ՀՀ օրենքով, իսկ գույքահարկի գծով հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետի վերաբերյալ հատուկ կանոններն ամրագրվել են «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում 21.03.2012 թվականին ընդունված և 28.04.2012 թվականին ուժի մեջ մտած ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքով: Փաստորեն, գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ հատուկ իրավակարգավորումները Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ են ներմուծվել 21.03.2012 թվականին տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում, որոնք իրավաբանական ուժի մեջ են մտել 28.04.2012 թվականին:

Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ կանոններում օրենսդրական փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի՝ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ժամանակի մեջ գործողության հարցին:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածից հետևում է, որ իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, իսկ մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորները: Այսինքն՝ ըստ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության համընդհանուր սկզբունքի՝ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ եղած ժամանակահատվածում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ իրավական ակտի կիրառելիության հարցն ուղղակիորեն կապված է կարգավորման առարկան կազմող իրավահարաբերության ծագման պահի հետ:

Վճարելի դատարանը նախ արձանագրել է, որ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքները հետադարձ ուժ չունեն: Նշված օրենսդրական ակտերով նախատեսված գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության հատուկ ժամկետների վերաբերյալ իրավակարգավորումները չեն կարող տարածվել այդ օրենքների ուժի մեջ մտնելուց՝ 28.04.2012 թվականից առաջ ծագած հասարակական հարաբերությունների վրա: Նշված դատողության համար Վճարելի դատարանը հիմք է ընդունել իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության վերաբերյալ սահմանադրաիրավական այն սկզբունքը, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ իրավական ակտերը չեն գործում հետադարձ ուժով, իսկ



անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը սահմանադրորեն արգելված է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության հատուկ ժամկետների վերաբերյալ իրավակարգավորումները, որոնք ՀՀ իրավական համակարգ են ներմուծվել «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքներով, կիրառվում են միայն այն հասարակական հարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են նշված օրենքների ուժի մեջ մտնելուց՝ 28.04.2012 թվականից հետո: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ժամանակի մեջ գործողության հարցը լուծելիս անհրաժեշտ է պարզել հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ կանոններով կարգավորվող հասարակական հարաբերության ծագման պահը:

Հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ օրենսդրական նորմերի բովանդակային վերլուծությունը վկայում է այն մասին, որ այդ կանոնների կարգավորման առարկան հայտնաբերված հարկային իրավախախտումների համար առաջացող պատասխանատվությունը բացառող որոշակի հանգամանքների հետ կապված հասարակական հարաբերություններն են: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ հարկային օրենսդրության այս կամ այն խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներն սկսում են գործել իրավասու վարչական մարմնի կողմից տվյալ իրավախախտումը հայտնաբերվելու պահից: Այսինքն՝ հարկային օրենսդրության այս կամ այն խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ նորմերն իրավական հետևանքներ են առաջացնում միայն այն ժամանակ, երբ իրավասու վարչական մարմինը հայտնաբերել է տվյալ իրավախախտումը: Այլ կերպ ասած՝ եթե հարկային օրենսդրության խախտումը դեռևս հայտնաբերված չէ իրավասու վարչական մարմնի կողմից, ապա այդ խախտման համար հարկային պարտավորությունների առաջացումը բացառող հանգամանքները՝ վաղեմության ժամկետները, սահմանող իրավանորմերը չեն կարող որևէ իրավաբանական նշանակություն ունենալ: Այսպիսով, ըստ Վճռաբեկ դատարանի՝ իրավասու վարչական մարմնի կողմից այս կամ այն հարկային իրավախախտման հայտնաբերում է այն անհրաժեշտ իրավաբանական փաստը, որի հետ օրենսդիրը կապել է այդ խախտման համար հարկային պարտավորությունների առաջացումը բացառող հանգամանքները՝ վաղեմության ժամկետները, սահմանող իրավանորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների ծագումը:

Վերոգրյալ փաստարկները հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ կանոններով կարգավորվող հասարակական հարաբերությունները ծագում են իրավասու վարչական մարմնի կողմից այս կամ այն հարկային իրավախախտման հայտնաբերման պահին: Մինչև հարկային իրավախախտման հայտնաբերումը հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ կանոններով կարգավորվող հասարակական հարաբերություններ չեն կարող ծագել՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է այդ իրավախախտումը կատարվել: Հետևաբար հարկային օրենսդրության կոնկրետ խախտման համար հարկային պարտավորությունների առաջադրման հարցը լուծելիս վաղեմության ժամկետների վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում գործող օրենսդրական կարգավորումների կիրառման համար որպես ելակետ պետք է ընդունել տվյալ հարկային իրավախախտման հայտնաբերման պահը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ վերոգրյալ ընդհանուր կանոնից պետք է կատարել մեկ բացառություն, որը վերաբերում է այն դեպքերին, երբ հարկային իրավախախտումը հայտնաբերվել է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-

94-Ն ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելուց հետո, սակայն այդ օրենքների ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ այդ իրավախախտումների կատարման տարվան հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած է եղել: Քննարկվող պարագայում հարկային օրենսդրության կոնկրետ խախտման համար հարկային պարտավորությունների առաջադրման հարցը լուծելիս վաղեմության ժամկետների վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում գործող օրենսդրական կարգավորումների կիրառման համար որպես ելակետ պետք է ընդունել ոչ միայն տվյալ հարկային իրավախախտման հայտնաբերման պահը, այլ նաև այն հանգամանքը, թե արդյոք վերոգրյալ օրենքների ուժի մեջ մտնելու պահին՝ 28.04.2012 թվականին, այդ իրավախախտումների կատարման տարվան հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած եղել է, թե՛ ոչ:

Վճարելի դատարանը գտել է, որ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելուց առաջ կատարված հարկային օրենսդրության խախտումն իրավասու վարչական մարմնի կողմից կարող էր հայտնաբերվել մինչև 28.04.2012 թվականը, այդ դեպքում տվյալ իրավախախտման համար հարկային պարտավորություններ չէին կարող առաջանալ, եթե լրացած լիներ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված երեք տարվա ժամկետը: Ըստ այդմ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավակարգավորումը պետք է տարածվի նաև 28.04.2012 թվականից հետո հայտնաբերված այն հարկային իրավախախտումների վրա, որոնց կատարման տարվան հաջորդող երեք տարվա ժամկետը «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելու պահին լրացած է եղել: Հետևաբար Վճարելի դատարանը գտել է, որ հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ բոլոր այն հարկային իրավախախտումների համար, որոնց կատարման տարվան հաջորդող երեք տարվա ժամկետը «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելու պահին լրացած է եղել: Այդ դեպքում հարկային օրենսդրության խախտում թույլ տված անձն իրավունք ունի ողջամտորեն ենթադրելու և ակնկալելու, որ իր կողմից կատարված իրավախախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետներն անցել են՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավակարգավորումների համաձայն:

Անփոփելի վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճարելի դատարանը գտել է, որ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների՝ ժամանակի մեջ գործողության իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա հետևյալ ուղղությամբ. նշված օրենքները տարածվում են դրանց ուժի մեջ մտնելուց՝ 28.04.2012 թվականից հետո հայտնաբերված հարկային օրենսդրության խախտումների նկատմամբ, և քննարկվող օրենքների՝ ժամանակի մեջ գործողության կանոնի բովանդակությունը հանգում է հետևյալին.

1. Եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է և իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է մինչև 28.04.2012 թվականը, ապա այդ դեպքում կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավակարգավորումը:

2. Եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է և իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է 28.04.2012 թվականից հետո, ապա այդ դեպքում կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ ներկայումս (28.04.2012 թվականից) գործող խմբագրությամբ և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի՝ 28.04.2012 թվականից գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավակարգավորումը:

3. Եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է մինչև 28.04.2012 թվականը, սակայն իրավասու վարչական մարմնի կողմից հայտնա-

բերվել է 28.04.2012 թվականին կամ դրանից հետո, ապա այդ դեպքում վաղեմության ժամկետների վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում գործող օրենսդրական կարգավորումների կիրառման հարցը պետք է լուծվի՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, թե 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած եղել է, թե՛ ոչ այսպես՝

- եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է մինչև 28.04.2012 թվականը, սակայն իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է 28.04.2012 թվականին կամ դրանից հետո, և 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած է եղել, ապա այդ իրավախախտման համար հարկային պարտավորություններ առաջադրելիս կիրառվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավարգավորումը,

- եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է մինչև 28.04.2012 թվականը, սակայն իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է 28.04.2012 թվականին կամ դրանից հետո, և 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած չի եղել, ապա այդ իրավախախտման համար հարկային պարտավորություններ առաջադրելիս կիրառվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ ներկայումս (28.04.2012 թվականից) գործող խմբագրությամբ և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի՝ 28.04.2012 թվականից գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավակարգավորումը:

**20.07.2017թ.**

**47. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան v. Մհեր Գևորգյան, վարչ. գործ թիվ ՎԴ/6487/05/15**

Էջ  
538-552

**Խնդիր.** Ո՞ր պահից է առաջանում ֆիզիկական անձին պատկանող փոխադրամիջոցի համար գույքահարկի գծով հարկային պարտավորության խախտումը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերահաստատելով *Երվանդ Ոսկանյան ընդդեմ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թիվ ՎԴ/0721/05/15 վարչական գործով 07.04.2017 թվականի որոշմամբ* ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, իսկ կոնկրետ հարկատեսակները սահմանում է օրենսդիրը: Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված հարկատեսակ է գույքահարկը, որը որոշակի կատեգորիայի գույքի համար համայնքային կամ պետական բյուջե վճարվող և հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից չկախված ուղղակի հարկ է: Հայաստանի Հանրապետությունում գույքահարկ վճարող են համարվում նաև ֆիզիկական անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկվող օբյեկտ համարվող որոշակի տեսակի գույք: Օրենսդիրը սահմանել է, որ գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում նաև փոխադրամիջոցները՝ դրանց շարքում նախատեսելով նաև ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 13-րդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ ֆիզիկական անձինք հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար գույքահարկի տարեկան գումարը վճարում են իրենց հաշվառման վայրի համայնքի բյուջե, նշված հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում՝ իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե, իսկ եթե հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարում են փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 13-րդ հոդվածների և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին, և վերջիններս պարտավոր են գույքահարկի տարեկան գումարը համապատասխան բյուջե վճարել մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: Հետևաբար, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար

գույքահարկի գծով ֆիզիկական անձի հարկային պարտավորության խախտումը վրա է հասնում այն դեպքում, երբ տվյալ ֆիզիկական անձը մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ ամբողջությամբ չի վճարել տվյալ փոխադրամիջոցի համար համապատասխան բյուջե վճարման ենթակա գույքահարկի գումարը:

Օրենսդիրը վերոնշյալ կարգավորումից բացի նախատեսել է նաև հատուկ կարգավորում, այն է՝ ֆիզիկական անձը տարեկան տեխնիկական գննության ենթակա փոխադրամիջոցի համար գույքահարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարում է մինչև փոխադրամիջոցի՝ տվյալ տարվա տեխնիկական գննության ներկայացնելը: Նշված դրույթի կառուցվածքային վերլուծությունից բխում է, որ այն կիրառվում է միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում.

- տրանսպորտային միջոցը ենթակա է տեխնիկական գննության,
- տրանսպորտային միջոցի տեխնիկական գննությունն ամենամյա բնույթ է կրում,
- տրանսպորտային միջոցը ներկայացվել է տվյալ տարվա տեխնիկական գննության:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ գույքահարկի գծով պարտավորությունը մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ կատարելու կանոնից բացառություն նախատեսող նորմի գործողության նպատակը տրանսպորտային միջոցների գույքահարկի գծով հարկային պարտավորության պատշաճ կատարումն ապահովելն է: Այսինքն՝ փոխադրամիջոցի ամենամյա տեխնիկական գննությունը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ տվյալ տրանսպորտային միջոցի համար գույքահարկ վճարելու պարտավորությունը պատշաճ կատարվել է:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքից բխում է, որ ոչ բոլոր տրանսպորտային միջոցներն են ենթակա ամենամյա տեխնիկական գննության: Մասնավորապես՝ տրանսպորտային միջոցները, բացառությամբ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների, դրանց թողարկման տարվան հաջորդող չորրորդ տարին ներառյալ, տեխնիկական գննության ենթարկվում են յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամ, իսկ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցները՝ 6 ամիսը մեկ անգամ: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի կատարած վերլուծությունից հետևում է, որ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքը ֆիզիկական անձի համար մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ գույքահարկի տարեկան գումարը վճարելու պարտավորությունից բացառություն սահմանել է միայն տարեկան տեխնիկական գննության ենթակա փոխադրամիջոցի համար: Ավելին, տարեկան տեխնիկական գննության ենթակա փոխադրամիջոցը տեխնիկական գննության չներկայացնելու հանգամանքը ևս չի կարող ազդեցություն ունենալ գույքահարկի գծով պարտավորության կատարման վրա, և այդ դեպքում գործում է պարտավորությունը մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ կատարելու ընդհանուր կանոնը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ գույքահարկի գծով հարկային պարտավորությունն ամեն դեպքում խախտված կարող է համարվել, եթե տվյալ ֆիզիկական անձը մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ ամբողջությամբ չի վճարել փոխադրամիջոցի համար համապատասխան բյուջե վճարման ենթակա գույքահարկի գումարը:

**07.04.2017թ.**

**48. «Արթիկի «Ստեկլոմաշ»» ԲԲԸ v. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչություն, վարչ. գործ թիվ ՎԳ5/0519/05/13**

Էջ 553-564

**Խնդիր.** Ի՞նչ տվյալներ և տեղեկություններ պետք է պարունակի շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով որոշակի իրավախախտումների համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող ստուգման ակտը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը նախևառաջ արձանագրել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի բովանդակությունից հետևում է, որ ստուգումն իրավական նորմերով կարգավորվող ընթացակարգ է, որի միջոցով պետությունը պարզում է Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից իրենց գործունեության վերաբերյալ պետությանը

տրամադրվող տեղեկությունների արժանահավատությունը և այդ գործունեության համապատասխանությունն իրավական ակտերի պահանջներին: Ստուգման՝ որպես իրավական գործընթացի անհրաժեշտությունն առավելապես պայմանավորված է տնտեսական գործունեության բազմազանության, դրանում մեծ քանակությամբ սուբյեկտների ներգրավվածության պայմաններում տնտեսվարող սուբյեկտների՝ պետության հանդեպ ունեցած պարտականությունների կատարման ապահովման նկատառումով:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասում օրենսդիրը սահմանել է, որ ստուգումը կարող է ուղղված լինել ինչպես տնտեսավարող սուբյեկտի ամբողջ ֆինանսատնտեսական գործունեության փաստացի իրավիճակը պարզելուն (համալիր ստուգում), այնպես էլ տնտեսվարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաստացի իրավիճակը պարզելուն (թեմատիկ ստուգում): Ընդ որում՝ թեմատիկ ստուգումներից է նաև պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումը, որի ընթացքում ժամանակակից լիազոր մարմնի կողմից ըստ էության ստուգման է ենթարկվում ստուգվող ժամանակաշրջանում տնտեսվարող սուբյեկտի իրականացրած ամբողջ գործունեության արդյունքում պետական բյուջե վճարման ենթակա գումարների (հարկեր, տուրքեր, այլ պարտադիր վճարներ) հաշվարկման ու վճարման ճշտությունը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ ստուգման գործընթացը եզրափակվում է ստուգման ակտի ընդունմամբ, որը պետք է բովանդակային իմաստով համապատասխանի նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերով ստուգման ակտին ներկայացվող պահանջների իրավական վերլուծությանը: Այսպես, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և խախտված իրավական նորմերը, ինչպես նաև պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը ստուգման ակտում նշելու վարչական մարմնի պարտականության սահմանումն ինքնանպատակ չէ, քանի որ օրենքի այդ պահանջները պահպանված լինելու պարագայում միայն վարչական կամ դատական բողոքարկման կարգով հնարավոր կլինի պարզել և հաստատել ստուգմամբ հայտնաբերված խախտումների առկայությունը կամ բացակայությունը: Ընդ որում, ստուգման ակտում բովանդակվող վերոգրյալ տեղեկությունները պետք է լինեն ամբողջական, հստակ և վարչական բողոքը քննող վարչական մարմնին կամ դատարանին հնարավորություն ընձեռեն գնահատելու ստուգման ակտի իրավաչափությունը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ստուգմամբ բացահայտված խախտումների և տնտեսվարողի կողմից խախտված իրավական նորմերի վերաբերյալ ստուգման ակտում նշում կատարելը հնարավորություն է ընձեռում որոշելու ակտի իրավաչափությունը, գնահատելու նորմատիվ հիմքը, այսինքն՝ վարքագծի այն կանոնների ամբողջությունը, որոնք տնտեսվարող սուբյեկտի համար սահմանում են որոշակի գործողություն կատարելու կամ չկատարելու պարտականություն, իսկ խախտումների նկարագրությունն ակտում նշելը հնարավոր է դարձնում առանձնացնել այն իրավաբանական փաստերը՝ իրողությունները և գործողությունները, որոնք հիմք են տալիս տնտեսվարող սուբյեկտին այս կամ այն իրավախախտումը վերագրելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ միայն վերոգրյալ չափանիշներին համապատասխանող վարչական ակտը կարող է ապահովել և արդարացնել ստուգման նպատակները, որոնց թվին են դասվում տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտում նորմատիվ իրավապահ ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելը և տնտեսավարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի վերլուծությունից հետևում է, որ շահութահարկը պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որի հարկվող օբյեկտը ռեզիդենտների համար Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթն է: Ընդ որում, հարկվող շահույթ է հարկատուի համախառն եկամտի, այսինքն՝ հաշվետու տարում անկախ դրանց ստացման աղբյուրներից հար-

կատուի բոլոր եկամուտների հանրագումարի, և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը: Օրենսդիրը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում սահմանել է, որ նշված օրենքի իմաստով եկամուտը հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումն է, որը հանգեցնում է հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տնտեսվարող սուբյեկտի հարկվող շահույթը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել օրենքով սահմանված հետևյալ երկու տարրերը. տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտը և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված թույլատրելի նվազեցումները, որտեղ համախառն եկամուտը տնտեսվարող սուբյեկտի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից, իսկ թույլատրելի նվազեցումներն օրենքով սահմանված ծախսերն են, կորուստները և այլ նվազեցումները: Նշված երկու տարրերի՝ համախառն եկամտի և թույլատրելի նվազեցումների դրական տարբերությունը տնտեսվարող սուբյեկտի մոտ առաջացնում է հարկվող շահույթ, որից հնարավոր է հաշվարկել օրենքով սահմանված վճարման ենթակա շահութահարկի գումարը:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից ծախսերի մասով համախառն եկամուտը թույլատրվում է նվազեցնել, եթե կատարված ծախսերը կապված են համախառն եկամտի ստացման հետ, ընդ որում՝ ծախսերը պետք է լինեն անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված: Այսինքն՝ տնտեսվարող սուբյեկտի կատարած բոլոր ծախսերը չեն, որոնք կարող են նվազեցվել համախառն եկամտից, այլ դրանք անմիջականորեն և բացառապես պետք է կապված լինեն համախառն եկամտի ստացման հետ, իսկ այն ծախսերը, որոնք տնտեսվարողի կողմից կարող են կատարվել ոչ եկամտի ստացման նպատակով, չեն կարող նվազեցվել: Օրենսդրական նման մոտեցումը նպատակ է հետապնդում պաշտպանելու թե՛ պետության, թե՛ տնտեսվարող սուբյեկտների շահերը, քանի որ խթանում է տնտեսվարող սուբյեկտի կողմից իր միջոցներն անմիջականորեն եկամուտ ստանալուն ուղղելուն, ինչն իր հերթին նպաստում է պետության ընդհանուր տնտեսության զարգացմանը: Շարադրվածը չի նշանակում, սակայն, որ տնտեսվարող սուբյեկտը զրկված է այնպիսի ծախսեր անելու հանրավորությունից, որոնք անմիջականորեն և բացառապես ուղղված չեն տնտեսվարողի համախառն եկամուտը ձևավորելուն: Այդպիսի ծախսերի կատարումն ընդամենը զրկում է տնտեսվարողին այդ ծախսերի մասով իր համախառն եկամտից նվազեցումներ կատարելու իրավունքից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե տնտեսվարողի մոտ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության թեմատիկ ստուգման արդյունքում պարզվում է, որ տվյալ տնտեսվարող սուբյեկտն իր հարկային հաշվետվություններում կատարել է համախառն եկամտից ապօրինի նվազեցումներ, այսինքն՝ կատարել է այնպիսի նվազեցումներ, որոնք կապված չեն եկամտի ստացման հետ կամ հիմնավորված չեն փաստաթղթերով, ապա այդ հանգամանքը պետք է իր մանրամասն նկարագրությունը ստանա ստուգման ակտում: Այսինքն՝ տվյալ պարագայում ստուգման ակտը պետք է կազմվի այնպես, որ հնարավոր լինի պարզել, թե որքան է կազմում տնտեսվարողի իրական հարկվող շահույթը, ինչպես նաև օրինական նվազեցումների՝ համախառն եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի գումարը՝ հղում կատարելով այն փաստաթղթերին, որոնցով հիմնավորվում է օրինական նվազեցումների այդ չափը: Այնուհետև ստուգման ակտում թվաբանական հաշվարկի տեսքով պետք է արտացոլվի վարչական մարմնի կողմից հայտնաբերված ապօրինի նվազեցումների գումարը, ինչպես նաև այդ նվազեցումների կատարման արդյունքում պակաս վճարված շահութահարկի և դրա նկատմամբ հաշվարկվող տույժերի ու տուգանքների գումարը: Այլ կերպ ասած՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերի ուժով ստուգման ակտում պետք է շարադրվեն տնտեսվարող սուբյեկտի կողմից իր հաշվետվություններում համախառն եկամտից «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի խախտմամբ կատարված նվազեցումները և այդ նվազեցումների ապօրինի լինելու վերաբերյալ վարչական մարմնի հանապատասխան հիմնավորումները: Ավելին, ստուգման ակտում նշված փաստական հանգամանքների շարադրանքը՝ որպես ստուգմամբ բացահայտված խախտումների նկարագրություն, պետք է ամրապնդվի վարչական մարմնի կողմից ստուգմամբ ձեռք բերված հանապատասխան ապացույցներով, որոնք կարող են հաստատել քննարկվող հարկային իրավախախտման առկայությունը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ստուգման ակտում շահութահարկով հարկման ենթակա հարկվող օբեկտը՝ հարկվող շահույթը, ցույց չտալու կամ այն պակաս ցույց տալու դեպքն արձանագրելիս հարկային մարմինը պարտավոր է որպես վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցներ դատարանին ներկայացնել այն ապացույցները (փաստաթղթերը), որոնք հնարավորություն կստեղծեն դատարանի համար հաստատելու կամ հերքելու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ամփայտությունը կամ բացակայությունը, այսինքն՝ գնահատելու վիճարկվող ստուգման ակտի իրավաչափությունը: Այսպես, դատարանի կողմից պետք է գնահատվեն այն փաստաթղթերը, որոնցով հիմնավորվում է տնտեսվարողի համախառն եկամտի ստացման հետ կապված ամբողջ ծախսերը, որոնք իրականում կատարվել են, իսկ կատարված, սակայն փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը ստուգման ակտում պետք է արտացոլվեն թվաբանական հաշվարկի միջոցով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ավելացված արժեքի հարկի՝ որպես անուղղակի հարկի հարկվող օբյեկտն ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից իրականացվող օրենքով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքն է (շրջանառությունը): «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով օրենսդիրը կարգավորել է ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման հետ կապված հարաբերությունները՝ սահմանելով այդ գումարից հաշվանցման ենթակա գումարները, հաշվանցման կարգը և դեպքերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե տնտեսվարողի մոտ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության թեմատիկ ստուգման արդյունքում պարզվում է, որ տվյալ տնտեսվարող սուբյեկտը խախտել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, այսինքն՝ իր կողմից վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարից ապօրինի կերպով կատարել է հաշվանցումներ, ապա այդ հանգամանքը պետք է հստակ և հիմնավորված նկարագրվի ստուգման ակտում: Ստուգման ակտը տվյալ դեպքում պետք է բովանդակի «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի այն կոնկրետ դրույթը, որը, ըստ վարչական մարմնի, խախտվել է տնտեսվարող սուբյեկտի կողմից: Ավելին, քննարկվող պարագայում ստուգման ակտը պետք է կազմվի այնպես, որ հնարավոր լինի պարզել, թե որքան է կազմում հաշվետու ժամանակաշրջանում տնտեսվարողի կողմից վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի իրական գումարը, հաշվետու ժամանակաշրջանում ավելացված արժեքի հարկից օրինական հաշվանցման ենթակա գումարի չափը, տնտեսվարողի կողմից ապօրինի կերպով կատարված հաշվանցման գումարի չափը, ինչպես նաև դրա նկատմամբ հաշվարկվող տույժերի ու տուգանքների գումարը: Այլ կերպ ասած՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերի ուժով ստուգման ակտում պետք է շարադրվեն տնտեսվարող սուբյեկտի կողմից իր հաշվետվություններում ավելացված արժեքի հարկի գծով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի խախտմամբ կատարված հաշվանցը և այդ հաշվանցի ապօրինի լինելու վերաբերյալ վարչական մարմնի համապատասխան հիմնավորումները: Բացի այդ, նշված իրավախախտման համար տնտեսվարող սուբյեկտին պատասխանատվության ենթարկող ստուգման ակտի վիճարկման դեպքում վարչական մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել ստուգման ընթացքում ձեռք բերված և վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորող համապատասխան ապացույցները:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ստուգման ակտի դատական կարգով բողոքարկման արդյունքում հարուցված գործի քննության ընթացքում վարչական դատարանը պետք է նախևառաջ պարզի այն հանգամանքը, թե արդյոք ստուգման ակտը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ պահանջներին, և ստուգման ակտում շարադրված իրավախախտման նկարագրությունը հիմնավորվում է արդյոք ստուգմամբ ձեռք բերված ապացույցներով, քանի որ ստուգման ակտը կարող է համարվել իրավաչափ վարչական վարույթի (ստուգման) ընթացքում ձեռք բերված և դատարանի գնահատմանը ներկայացված ապացույցներով հիմնավորված լինելու դեպքում միայն:

20.07.2017թ.

**49. Ա/Ձ Մարտին Զարոյան v. ՀՀ Ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչություն, վարչ. գործ թիվ ՎԻ/6872/05/14** Էջ 565-581

*Խնդիր.* Աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտը կարող է արդյո՞ք իրավաչափ համարվել այն պայմաններում, երբ լիազոր մարմնի կողմից նշված փաստն արձանագրելիս ՀՀ կառավարության սահմանած կարգը չի պահպանվել, սակայն տնտեսավարող սուբյեկտը վարչական վարույթի ընթացքում ընդունել է չգրանցված աշխատողներ ունենալու հանգամանքը:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 102-րդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունների ծագման համար օրենսդիրը նախատեսել է հետևյալ հիմքերը. (1) գրավոր աշխատանքային պայմանագիր կամ (2) աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ: Ընդ որում, աշխատանքային հարաբերությունների ծագման վերոգրյալ հիմքերի միաժամանակյա բացակայության դեպքում իրականացվող աշխատանքը համարվում է անօրինական:

Փաստորեն, օրենսդրի տեսանկյունից՝ առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի իրականացվող աշխատանքը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում որակվում է որպես անօրինական աշխատանք, որը գործատուի համար առաջացնում է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված անբարենպաստ հետևանքները: Այսպես, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված իրավական նորմի բովանդակային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստի առկայության դեպքում գործատուն պարտավոր է յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկել և վճարել եկամտային հարկ, որի չափը պայմանավորված է չձևակերպված վարձու աշխատողների քանակով: Ընդ որում, գործատուի համար նշված անբարենպաստ հետևանքը կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե իրավասու մարմինը տվյալ գործատուի մոտ աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրել է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասը, 25.07.2013 թվականի «Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրելու կարգը և արձանագրության ձևը սահմանելու մասին» թիվ 1259-Ն որոշման 1-ին կետով սահմանել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի, և աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (...) փաստի վերաբերյալ արձանագրության ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (...) փաստն արձանագրվում է հարկ վճարողի (տնտեսավարող սուբյեկտի) մոտ հարկային մարմնի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության, պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգումների, օպերատիվ հետախուզական միջոցառումների, ինչպես նաև հարկային մարմնի կամ լիազորված այլ մարմնի կողմից առանց անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված ստուգումների (նույն կարգի իմաստով՝ ստուգում) շրջանակներում: Նույն կարգի իմաստով՝ աշխատողի աշխատանքի ընդունումը համարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրու-



թյամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպված, եթե առկա չէ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր:

ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշման բովանդակությունից հետևում է, որ աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստը հարկային մարմնի կամ այլ իրավասու մարմնի կողմից կարող է արձանագրվել է տվյալ գործատուի՝ որպես հարկ վճարողի (տնտեսավարող սուբյեկտի) մոտ իրականացվող օրենքով նախատեսված հետևյալ ընթացակարգերի միջոցով.

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում,

2) պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգում,

3) առանց անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված ստուգում,

4) օպերատիվ հետախուզական միջոցառում:

Վճարել դատարանն արձանագրել է, որ օրենքով նախատեսված նշված ընթացակարգերի շրջանակներում հարկային մարմնի կամ այլ իրավասու մարմնի խնդիրը, *inter alia*, տվյալ գործատուի՝ որպես հարկ վճարողի (տնտեսավարող սուբյեկտի) մոտ աշխատանք կատարող այնպիսի անձանց բացահայտումն է, որոնց վերաբերյալ առկա չէ աշխատանքի ընդունման մասին գրավոր պայմանագիր կամ անհատական իրավական ակտ: Նշված փաստի բացահայտումը հիմք է հանդիսանում գործատուի նկատմամբ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված անբարենպաստ հետևանքների կիրառման համար: Սակայն ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշմամբ ոչ միայն սահմանված են աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստի արձանագրմանն ուղղված միջոցառումները և այդ միջոցառումների շրջանակներում հարկային մարմնի կամ այլ իրավասու մարմնի կողմից բացահայտման ենթակա փաստերի էությունը, այլ նաև մանրամասն շարադրված են այն ընթացակարգային կանոնները, որոնք պետք է հաջորդաբար կատարվեն իրավասու մարմնի կողմից իր առջև դրված խնդիրը պատշաճ կերպով լուծելու համար:

Այսպես, Կարգի 4-րդ կետի համաձայն՝ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (...) փաստն արձանագրելու համար ստուգում իրականացնող անձինք իրականացնում են հետևյալ գործողությունները՝

1) գործատուից պահանջում են փաստացի աշխատանք կատարող (...) անձանց աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը կամ գրավոր պայմանագրերը, իսկ անհրաժեշտության և առկայության դեպքում՝ նաև գործատուի կողմից հաստատված հաստիքացուցակը.

2) կազմում են ստուգման պահին փաստացի աշխատանք կատարող (...) այն անձանց ցանկը, որոնց մասով գործատուն չի ներկայացնում աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր (...).

3) փաստաթղթերի ուսումնասիրությամբ, գործատուից գրավոր բացատրություններ վերցնելով՝ պարզում են նույն կետի 2-րդ ենթակետով կազմված ցանկում ներառված անձանց կողմից իրականացվող կամ ստուգվող ժամանակաշրջանում իրականացված աշխատանքային պարտականությունների բնույթը.

4) նույն կետի 2-րդ ենթակետում նշված ցանկում ներառված անձանց բացատրում են հայտարարություն տալուց հրաժարվելու նրանց իրավունքների մասին և, նրանց համաձայնությամբ, վերցնում են հայտարարություն (...), որտեղ նշվում են՝ հայտարարություն տվող անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հայտարարություն տվող անձի կողմից իրականացվող աշխատանքային գործառնությունների հակիրճ նկարագրությունը, տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը.

5) նույն կետի 4-րդ ենթակետով ներկայացված հայտարարությունն ստուգման արդյունքում ստուգում իրականացնող անձանց կողմից կազմվող՝ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (...) փաստի վերաբերյալ կազմվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի թիվ 1259-Ն որոշման թիվ 2 հավել-

վածով սահմանված արձանագրության (...) անբաժանելի մասն է:

Կարգի 5-րդ կետի համաձայն՝ արձանագրության մեջ պարտադիր նշվում են նույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցանկում ընդգրկված անձի (անձանց) անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, նրա (նրանց) կողմից կատարվող աշխատանքային պարտականությունների բնույթը (...):

Կարգի 6-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրականացվող ստուգումների արդյունքում ստուգում իրականացնող անձանց կողմից կազմվող ստուգման ակտի անբաժանելի մասն է:

Փաստորեն, այս կամ այն տնտեսավարող սուբյեկտի մոտ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրելիս իրավասու մարմնի պաշտոնատար անձինք պետք է հաջողաբար իրականացնեն Կարգի 4-րդ կետում նկարագրված քայլերը: Այնուհետև իրավասու մարմնի պաշտոնատար անձանց կողմից պետք է կազմվի ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշման թիվ 2 հավելվածով սահմանված ձևի արձանագրություն, որում պետք է նշվեն, inter alia, փաստացի աշխատանք կատարած անձանց տվյալները (անունը, ազգանունը, անձնագրային տվյալները), նրանց կողմից կատարվող աշխատանքային պարտականությունների բնույթը (պաշտոնը, մասնագիտությունը), իսկ փաստացի աշխատանք կատարած անձանցից հայտարարություններ վերցված լինելու դեպքում այդ հայտարարությունները պետք է կցվեն նշված արձանագրությանը: Եթե աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրվել է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրականացվող ստուգումների արդյունքում, ապա նշված արձանագրությունը պետք է կցվի ստուգման ակտին՝ որպես դրա անբաժանելի մաս:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ աշխատողի աշխատանքի ընդունումը գրավոր չձևակերպելու փաստը ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված Կարգին համապատասխան արձանագրելու օրենսդրական պահանջը հետապնդում է գործի փաստերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ու բոլոր հանգամանքների բացահայտումն ապահովելու նպատակ, որը հետագայում, մասնավորապես՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտի վիճարկման դեպքում հնարավորություն կտա պարզելու այդ վարչական ակտի իրավաչափությունը: Հետևաբար աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտի վիճարկման դեպքում վարչական դատարանը պետք է նախնառաջ պարզի այն հարցը, թե՞ տվյալ վարչական ակտը կայացրած իրավասու մարմինը պահպանել է արդյոք ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված Կարգի պահանջները, թե՞ ոչ:

Մինչև ժամանակ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտերը պետք է հիմնավորված լինեն. օրենսդիրը սահմանել է, որ վարչական ակտի հիմնավորումներում պետք է անպայման նշվեն համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը, այսինքն՝ վարչական մարմինը վարչական ակտն ընդունելիս պարտավոր է վարչական ակտում նշել այն բոլոր փաստական հանգամանքները և իրավական հիմքերը, որոնք հիմք են հանդիսացել տվյալ վարչական ակտն ընդունելու համար:

Հիմք ընդունելով վարչական ակտերի հիմնավորվածության պահանջի վերաբերյալ նախկին որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտը (մասնավորապես՝ ստուգման ակտը) պետք է պարունակի հիմնավորում, inter alia, աշխատողի աշխատանքի ընդունումը գրավոր չձևակերպելու փաստը ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված Կարգին համապատասխան արձանագրված լինելու վերաբերյալ, քանի որ նշվածն այն էական փաստական և իրավաբանական

հանգամանքներից մեկն է, որը հիմք է հանդիսանում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար:

20.07.2017թ.

50. «ԻՆՏԳՐԱՐՆՏ» ՍՊԸ v. ՀՀ ֆինանսների նախարարություն, վարչ. գործ թիվ ՎԳ/3899/05/14

Էջ 582-593

**Խնդիր.** Ինչ փաստական և իրավաբանական հանգամանքների առկայության դեպքում և ինչ ընթացակարգով հարկային մարմինը կարող է կիրառել հարկ վճարողի հարկվող օբյեկտը և հարկային պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու, մասնավորապես՝ շահութահարկի գծով թույլատրելի նվազեցումներն անուղղակի եղանակով հաշվարկելու միջոցով հարկվող շահույթը որոշելու իր լիազորությունը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի վերլուծությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ շահութահարկը պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որի հարկվող օբյեկտը ռեզիդենտների համար Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթն է: Ընդ որում, հարկվող շահույթ է հարկատուի համախառն եկամտի, այսինքն՝ հաշվետու տարում անկախ դրանց ստացման աղբյուրներից հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի, և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը: Օրենսդիրը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում սահմանել է, որ նշված օրենքի իմաստով եկամուտը հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհույքը, աճը կամ պարտավորությունների նվազումն է, որը հանգեցնում է հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տնտեսավարող սուբյեկտի հարկվող շահույթը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել օրենքով սահմանված հետևյալ երկու տարրերը. տնտեսավարող սուբյեկտի համախառն եկամուտը և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված թույլատրելի նվազեցումները, որտեղ համախառն եկամուտը տնտեսավարող սուբյեկտի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից, իսկ թույլատրելի նվազեցումներն օրենքով սահմանված ծախսերն են, կորուստները և այլ նվազեցումները: Նշված երկու տարրերի՝ համախառն եկամտի և թույլատրելի նվազեցումների դրական տարբերությունը տնտեսավարող սուբյեկտի մոտ առաջացնում է հարկվող շահույթ, որից հնարավոր է հաշվարկել օրենքով սահմանված վճարման ենթակա շահութահարկի գումարը: Ընդ որում, տնտեսավարող սուբյեկտի կողմից ծախսերի մասով համախառն եկամուտը թույլատրվում է նվազեցնել, եթե կատարված ծախսերը կապված են համախառն եկամտի ստացման հետ, ընդ որում՝ ծախսերը պետք է լինեն անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված (*դեմ.* «Արթիկի «Սյրեկլումա»» ԲԲԸ-ն *ընդդեմ* ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գյումրու փարածքային հարկային տեսչության թիվ ՎԳ5/0519/05/13 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ շահութահարկ վճարողները պարտավոր են յուրաքանչյուր տարվա արդյունքներով ինքնուրույն հաշվարկել շահութահարկի գումարները և մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը հարկային մարմին ներկայացնել այդ հաշվարկը: Մինևույն ժամանակ օրենսդիրը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում հատուկ իրավակարգավորումներ է նախատեսել այն իրավիճակների համար, երբ հարկ վճարողի վերոգրյալ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում վերջինիս ունեցած հարկային պարտավորության չափը, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, հնարավոր չի լինում պարզել:

Նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավադրույթի բովանդակությանը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ այն դեպքում, երբ անհնար է հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, հարկային մարմինը պարտավոր է ՀՀ կառավարության սահմանած կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները (*դեմ.* *անհարձ ձեռնարկարեր Տիգրան Խոսրովյանն ընդդեմ* ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Շահումյանի հարկային տեսչության թիվ ՎԳ/0054/05/09 վարչական

գործով Վճռաբեկ դատարանի 24.07.2009 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում հետակորեն ամրագրված են այն իրավական հիմքերը, որոնց առկայության դեպքում հարկային մարմնի մոտ առաջանում է հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելու լիազորությունը: Այսպես, ըստ իրավահարաբերության ծագման պահին գործող կանոնի, հարկային մարմինը պարտավոր է ինքնուրույն հաշվարկել հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, եթե առկա է հետևյալ իրավիճակներից որևէ մեկը.

1) հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելը դարձել է անհնար,

2) օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները համարվում են չհիմնավորված:

Ընդ որում՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը նախատեսել է նաև այն փաստական հանգամանքների սպառիչ ցանկը, որոնք պատճառ են հանդիսանում վերոգրյալ իրավիճակների առաջացման համար. այդ ցանկը ներառում է հետևյալ դեպքերը.

1) հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև այլ) սահմանված փաստաթղթերը,

2) հարկ վճարողը հաշվապահական հաշվառման (օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև այլ) սահմանված փաստաթղթերը վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով,

3) հարկ վճարողն ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային մարմին ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում:

Փաստորեն, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորության ծագման համար անհրաժեշտ պայման է հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելն անհնար դառնալու կամ հարկ վճարողի շրջանառություններն օրենքով սահմանված դեպքերում չհիմնավորված համարվելու իրավիճակներից որևէ մեկի և հարկ վճարողի կողմից թույլ տրված վերոգրյալ արարքներից որևէ մեկի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը ոչ միայն ամրագրել է այն հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորության ծագման համար անհրաժեշտ իրավական նախադրյալների բովանդակությունը, այլ նաև սահմանել է հարկային մարմնի այդ լիազորության իրականացման պայմանները: Այսպես, քննարկվող իրավական նորմով օրենսդիրը նախևառաջ թվարկել է այն չափանիշները, որոնք պետք է հիմք ընդունվեն հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելիս: Այդ գործողությունը կատարելիս հարկային մարմինը հիմնվում է, մասնավորապես, հետևյալ տվյալների վրա.

1) հարկ վճարողի ակտիվներ,

2) հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալներ,

3) հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծախսեր,

4) գույքագրման և չափագրման տվյալներ,

5) օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկություններ,

6) «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված այլ տեղեկություններ,

7) համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գներ և այլ ցուցանիշներ,

8) օրենքով իրականացված հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված տվյալներ,

9) հաշվարկային հարկվող շահույթ կամ հաշվարկային հարկվող եկամուտ (համախառն եկամտի մեջ 25 տոկոս):

Բացի այդ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելու կարգը հաստատելու լիազորությունը վերապահվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը: ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունը, 18.09.1998 թվականին ընդունել է թիվ 580 որոշումը, որով հաստատել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեպքերում հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) կարգը: Նշված ենթաօրենսդրական ակտով ՀՀ կառավարությունն անդրադարձել է, ի թիվս այլնի, հետևյալ հարաբերությունների կանոնակարգմանը.

1) հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) հաջորդականությունը (Կարգի 4-րդ կետ),

2) ելակետային չափերի որոշման համար անհրաժեշտ վերլուծության կատարումը և հարկվող օբյեկտների ու հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման, վերագնահատման) համար անհրաժեշտ ելակետային չափերի որոշումը (Կարգի 5-րդ կետ), որն ընդգրկում է նաև՝

- ակտիվների շարժի (օգտագործման) չափի մնացորդի որոշումը (Կարգի 6-8-րդ կետեր),

- ակտիվների առաջացման աղբյուրների չափի մնացորդի որոշումը և վերլուծումը (Կարգի 9-11-րդ կետեր),

3) հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկումն ու ձևակերպումը (Կարգի 12-15-րդ կետեր):

Այսպիսով, հարկ վճարողի հարկվող օբյեկտը և հարկային պարտավորություններն անուղղակի եղանակով հաշվարկելու հարկային մարմնի լիազորությունը կարող է իրականացվել միայն ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ սահմանված կարգով:

Անփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճաբեկ դատարանը հանգել է հետևյալ եզրակացության.

- հարկային մարմնին օժտված է հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, ինքնուրույն հաշվարկելու լիազորությամբ,

- հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորությունը կարող է կիրառվել միայն օրենքով հստակորեն նախատեսված և սույն որոշմամբ ներկայացված իրավիճակներում, որոնք առաջանում են հարկ վճարողի՝ օրենքով սահմանված որոշակի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով,

- հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորությունը կարող է իրականացվել միայն ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով (18.09.1998 թվականի թիվ 580 որոշում)՝ հիմք ընդունելով օրենքով դրա համար հատուկ նախատեսված չափանիշները:

Մինևույն ժամանակ հիմք ընդունելով վարչական ակտերի հիմնավորվածության պահանջի վերաբերյալ նախկին որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճաբեկ դատարանը գտել է, որ հարկային մարմնի կողմից հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, ինքնուրույն հաշվարկելու լիազորության կիրառմամբ հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտը (մասնավորապես՝ ստուգման ակտը) պետք է պարունակի հիմնավորումներ, ի թիվս այլնի, (1) հարկային մարմնի քննարկվող լիազորության կիրառման համար հիմք հանդիսացող օրենքով նախատեսված իրավիճակներից որևէ մեկի առկայության, (2) հարկ վճարողի կողմից օրենքով սահմանված որոշակի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, (3) առաջացած իրավիճակի և հարկ վճարողի կողմից թույլ տրված կոնկրետ արարքի միջև պատճառահետևանքային կապի առկայության, ինչպես նաև (4) հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելու համար օրենքով նախատեսված չափանիշները հիմք ընդունելու և (5) այդ հաշվարկը ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ սահմանված

կարգով կատարված լինելու վերաբերյալ: Վճարեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ հարցերը կազմում են այն էական փաստական և իրավաբանական հանգամանքների ամբողջությունը, որոնք հիմք են հանդիսանում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար:

27.12.2017թ.

**51. «Կլեոպատրա» ՍՊԸ v. ՀՀ կառավարության արընթեր պետական եկամուտների կոմիտե, վարչ. գործ թիվ ՎԳ/1258/05/15**

Էջ  
594-608

**Խնդիր.** Արդյո՞ք հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած (չիրականացնող) տնտեսվարող սուբյեկտն ազատվում է այդ գործունեության մասով շահութահարկի գծով կանխավճարներ կատարելու պարտականությունից այն պայմաններում, երբ տնտեսվարող սուբյեկտը դադարեցրել է (չի իրականացնում) միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը, սակայն շարունակում է գրավել գործունեության այլ տեսակներով:

**Վճարեկ դատարանի դիրքորոշումը.** Վճարեկ դատարանն արձանագրել է, որ այս կամ այն հարկ վճարողի՝ շահութահարկի գծով պետական բյուջե վճարման ենթակա հարկային պարտավորության չափը որոշվում է յուրաքանչյուր տարվա գործունեության արդյունքներով տվյալ հարկ վճարողի մոտ առաջացած հարկվող շահույթի հիման վրա: Ընդ որում, շահութահարկով հարկվող օբյեկտը (հարկվող շահույթը) հնարավոր է որոշել միայն հաշվետու տարվա ավարտից հետո, քանի որ տվյալ հարկ վճարողի հարկվող շահույթը, այն է՝ ամբողջ հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը, հնարավոր է հաշվարկել միայն հաշվետու տարվա ավարտից հետո: Ըստ այդմ, օրենսդիրը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներում սահմանել է, որ հաշվետու տարվա արդյունքներով շահութահարկի հաշվարկը հարկային մարմին է ներկայացվում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը, իսկ շահութահարկի գումարը պետական բյուջե է վճարվում մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը ներառյալ:

Մինևույն ժամանակ օրենսդիրը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածով սահմանել է, որ հարկատուները հաշվետու տարվա ընթացքում, այսինքն՝ մինչև այդ տարվա համար շահութահարկով հարկվող շահույթի և շահութահարկի գումարների հաշվարկման հնարավորության առաջացումը, պարտավոր են պետական բյուջե վճարել շահութահարկի գծով կանխավճարներ: Վճարեկ դատարանի գնահատմամբ օրենսդրական նշված իրավակարգավորումը նպատակաուղղված է հարկ վճարողի՝ շահութահարկի գծով հարկային պարտավորության բեռի համաչափ բաշխմանը հաշվետու տարվա ընթացքում, ինչպես նաև հաշվետու տարվա համար շահութահարկի գծով վճարման ենթակա գումարների՝ տվյալ տարվա ընթացքում պետական բյուջե մուտքի ապահովմանը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճարեկ դատարանն արձանագրել է, որ շահութահարկ վճարողի՝ հաշվետու տարվա ընթացքում կանխավճարներ վճարելու պարտականությունը կատարվում է եռամսյակային պարբերականությամբ՝ նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի կամ շահութահարկի հաշվարկային մեծության 18,75 տոկոսի չափով, ինչը նպատակաուղղված է ընթացիկ տարվա շահութահարկի գծով հարկային պարտավորության հնարավորինս համամասնորեն բաշխմանը տվյալ տարվա ընթացքում: Ընդ որում, նշված հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է կանխավճարների չափի հաշվարկման երկու առանձին հիմքեր. դրանք են՝

1) նախորդ տարվա հարկվող շահույթի նկատմամբ կիրառվող դրույքաչափով հաշվարկված շահութահարկի գումարի և նախորդ տարում օտարերկրյա պետություններում ստացված եկամտից վճարված շահութահարկի հաշվանցվող գումարների դրական տարբերությունը,

2) նախորդ տարվա շրջանառության հարկի, հաստատագրված վճարի և (կամ) արտոնագրային վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարները:

Փաստորեն, մատնանշված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ հարկ վճարողը պարտավոր է հաշվարկել և վճարել ընթացիկ տարվա շահութահարկի

կանխավձար, ի թիվս այնի, նաև նախորդ տարվա հաստատագրված վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարների հիման վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեության որոշ տեսակների համար հաստատագրված վճարների հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի բովանդակությունից հետևում է, որ օրենքով նախատեսված գործունեության որոշակի տեսակների համար տնտեսվարող սուբյեկտները վճարում են հաստատագրված վճար, որը փոխարինում է տվյալ գործունեության մասով առաջացող շահութահարկի և (կամ) ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորություններին: Ընդ որում, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով հաշվետու տարվա ընթացքում հաստատագրված վճար վճարող հանդիսացող տնտեսվարող սուբյեկտները հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների մասով ազատված են շահութահարկի կանխավձարային մուծումներ կատարելու պարտականությունից: Սակայն, եթե նախորդ տարվա ընթացքում հաստատագրված վճար վճարող հանդիսացող տնտեսվարող սուբյեկտը հաշվետու տարվա ընթացքում այլևս չի հանդիսանում հաստատագրված վճար վճարող կամ հանդիսանալով հաստատագրված վճար վճարող՝ միաժամանակ իրականացնում է նաև շահութահարկով հարկվող գործունեություն, ապա վերջինս «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով պարտավոր է կատարել շահութահարկի կանխավձարներ նախորդ տարվա հաստատագրված վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարների հիման վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով օրենսդիրը նախատեսել է շահութահարկի կանխավձարներ չկատարելու իրավունք այն հարկատուների համար, ովքեր հարկային մարմին են ներկայացրել գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն: Նշված օրենսդրական կարգավորման հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ հաշվետու տարվա ընթացքում դադարեցված գործունեության մասով հարկատուն փաստացի շահույթ չի ստանում և չիրականացվող գործունեության մասով փաստացի չի կարող ունենալ շահութահարկի գծով պետական բյուջե վճարման ենթակա հարկային պարտավորություն: Հետևաբար նման իրավիճակում վերանում է նաև հաշվետու տարվա ընթացքում դադարեցված գործունեության մասով շահութահարկի կանխավձարներ կատարելու անհրաժեշտությունը: Այլ կերպ ասած, եթե ընթացիկ տարվա ընթացքում հարկատուն չի իրականացնում տնտեսական գործունեություն, ապա տվյալ տարվա համար այդ գործունեության մասով շահութահարկի կանխավձարներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է: Փաստորեն, տնտեսական գործունեություն չիրականացնող և շահույթ չստացող հարկատուի համար հաշվետու տարվա ընթացքում այդ գործունեության մասով շահութահարկի կանխավձարների կատարման պարտականությունից ազատվելու կառուցակարգի սահմանումը գործնականում երաշխավորում է տվյալ հարկատուի տնտեսական գործունեության արդյունքներին չհամապատասխանող հարկային բեռից զերծ մնալու ապահովումը:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ իրավակիրառ պրակտիկայում հանդիպող այն դեպքերին, երբ նախորդ տարվա ընթացքում հաստատագրված վճար վճարող հանդիսացող տնտեսվարող սուբյեկտը հաշվետու տարում դադարեցրել է հաստատագրված վճարով հարկվող իր գործունեությունը՝ շարունակելով զբաղվել հաստատագրված վճարով չհարկվող տնտեսական գործունեության այլ տեսակներով: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցը հանգում է հետևյալին. արդյո՞ք «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավադրույթը վերաբերում է միայն այն տնտեսվարող սուբյեկտներին, ովքեր իրենց գործունեությունը դադարեցրել են ամբողջ ծավալով և չեն իրականացնում որևէ տնտեսական գործունեություն, թե այդ կանոնը հավասարապես կիրառելի է նաև այն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, ովքեր դադարեցրել են իրենց գործունեության միայն մի մասը:

Վերոգրյալ իրավական խնդրին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավանորմը մեկնաբանել անձի՝ սեփականության և տնտեսական գործունեությանը զբաղվելու հիմնարար իրավունքների էության և բովանդակության լույսի ներքո:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը երաշխավորում է սեփականության իրավունքը: Այն նախատեսում է երեք հստակ կանոններ. առաջին կանոնը սահմանում է գույքից անարգել օգտվելու ընդհանուր սկզբունքը, երկրորդ կանոնը կարգավորում է սեփականությունից զրկվելու հետ կապված հարաբերությունները, իսկ երրորդ կանոնը ճանաչում է սեփականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պետության իրավունքը հանրային շահին համապատասխան կամ հարկերի և այլ պարտադիր վճարների գանձումն ապահովելու համար:

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է այն դիրքորոշումը, որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված վերոհիշյալ երեք կանոնները սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ. երկրորդ և երրորդ կանոններն առնչվում են գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ թույլատրելի միջամտություններին, հետևաբար պետք է դիտարկվեն առաջին կանոնում նախատեսված ընդհանուր սկզբունքի լույսի ներքո (*լին, AGOSI v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 24.10.1986 թվականի վճիռը, կետ 48*):

Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել մեջբերել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության թույլատրելի սահմանների վերաբերյալ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքը, որի համաձայն՝ գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) միջամտությունը նախատեսված է օրենքով,
- 2) միջամտությունը բխում է հանրային շահից,
- 3) միջամտությունը բավարարում է համաչափության պահանջներին:

Փաստորեն, Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը պետության ապօրինի միջամտությունից պաշտպանում է յուրաքանչյուրի՝ իր գույքից անարգել օգտվելու հիմնարար իրավունքը, որը կարող է սահմանափակվել նույն հոդվածում նշված հետևյալ եղանակներով. սեփականությունից զրկում և սեփականության նկատմամբ վերահսկողություն: Ընդ որում, սեփականության նկատմամբ հանրային իշխանության վերահսկողության ձևերից մեկը հարկերի և մյուս պարտադիր վճարների հավաքագրման ապահովումն է: Նշված բնագավառում պետությունն օժտված է լայն հայեցողության շրջանակներով և իրավասու է սեփական հայեցողությամբ որոշելու իր կողմից իրականացվող հարկային քաղաքականության բովանդակությունը և ուղղությունը, հարկային բեռի չափը, հարկերի գանձման կարգը և այլն: Այնուհանդերձ, ասվածը բոլորովին չի նշանակում, որ հարկերի և այլ պարտադիր վճարների գանձման հարցում պետությունն օժտված է անսահմանափակ հայեցողությամբ:

Այսպես, ըստ Եվրոպական դատարանի՝ հարկերի գանձումն ապահովող ներպետական կարգավորումները պետք է ունենան ողջամիտ պատճառաբանություն, իսկ սեփականության իրավունքի նկատմամբ ցանկացած միջամտություն, ներառյալ հարկերի վճարումն ապահովելուն ուղղված միջամտությունը, պետք է ապահովի «ողջամիտ հավասարակշռություն» հասարակության ընդհանուր շահերի և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև: Ըստ այդմ, հարկերի գանձման կառուցակարգը կարող է հակասության մեջ մտնել սեփականության հիմնարար իրավունքի հետ, եթե այն հարկ վճարողի վրա դնում է չափազանց մեծ բեռ կամ էական բացասական ազդեցություն է ունենում վերջինիս ֆինանսական վիճակի վրա (*լին, Gasus/Dosier - und Fördertechnik GmbH v. The Netherlands գործով Եվրոպական դատարանի 23.02.1995 թվականի վճիռը, կետեր 60, 62 և 67*):

Վճռաբեկ դատարանը գտել է, որ պետության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունն առնչվում է ոչ միայն անձի սեփականության իրավունքի, այլ նաև տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի երաշխավորված իրականացման և պաշտպանության անհրաժեշտության հետ: Տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության երաշխավորումը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք, ելակետային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հարաբերությունների կանոնակարգման համար: Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքն է և շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ նախադրյալը:

Այսպիսով, որպես ելակետ ընդունելով սեփականության և տնտեսական գործունեությանը զբաղվելու հիմնարար իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՀՀ սահ-



մանադրական դատարանի 25.11.2008 թվականի թիվ ՍԴՌ-780, 30.01.2013 թվականի թիվ ՍԴՌ-1073, 18.02.2014 թվականի թիվ ՍԴՌ-1139 որոշումներում և Եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված իրավադրույթը չի կարող մեկնաբանվել այնպես, որ դրանով սահմանված իրավակարգավորումը կիրառելի է բացառապես այն հարկատուների նկատմամբ, ովքեր իրենց գործունեությունը դադարեցրել են ամբողջությամբ: Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, գտել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված շահութահարկի կանխավճարներ չկատարելու հնարավորությունը հավասարապես կիրառելի է թե՛ իր տնտեսական գործունեությունն ամբողջությամբ դադարեցրած տնտեսվարող սուբյեկտի, թե՛ միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած, այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ:

Նախևառաջ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված շահութահարկի կանխավճարներ չկատարելու հնարավորությունն իր տնտեսական գործունեությունն ամբողջությամբ դադարեցրած տնտեսվարող սուբյեկտի վրա տարածելու, իսկ միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած, սակայն այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի վրա չտարածելու հարկային քաղաքականությունը չի կարող ունենալ որևէ ողջամիտ պատճառաբանություն, քանի որ շահութահարկի կանխավճարներ չկատարելու կառուցակարգի հիմքում ընկած է այն գաղափարը, որ շահութահարկի կանխավճարները հնարավորինս պետք է համապատասխանեն բոլոր տնտեսվարող սուբյեկտների՝ թե՛ նախորդ և թե՛ հաջվետու տարվա գործունեության արդյունքներին: Իսկ այդ կառուցակարգը միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած, սակայն այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների վրա չտարածելու դեպքում շահութահարկի կանխավճարներ կատարելու հարկային պարտավորության մասով առաջանում է ակնհայտ անհավասարություն նշված տնտեսվարող սուբյեկտի և իր տնտեսական գործունեությունն ամբողջությամբ դադարեցրած տնտեսվարող սուբյեկտի միջև: Ընդ որում, այդ անհավասար մոտեցումն արդարացված չէ որևէ օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով, քանի որ օրենքով շահութահարկի կանխավճարներ չկատարելու հնարավորություն նախատեսելու նպատակը դրա կիրառման տիրույթում գտնվող բոլոր տնտեսվարող սուբյեկտներին թե՛ նախորդ և թե՛ հաջվետու տարվա գործունեության արդյունքների հնարավորինս համապատասխանող հարկային բեռով ծանրաբեռնելն է:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թվականի թիվ ՍԴՌ-881 որոշմամբ արտահայտվել է այն իրավական դիրքորոշումը, որ խտրականության արգելքի սկզբունքի խախտում է հանդիսանում այնպիսի տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից: Իսկ 07.06.2011 թվականի թիվ ՍԴՌ-967 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից դադարեցված գործունեության ծավալը (լրիվ կամ մասնակի) չի կարող համարվել «օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ» «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված շահութահարկի կանխավճարներ չկատարելու կառուցակարգը տարբերակված ձևով կիրառելու համար: Տվյալ իրավադրույթի հնարավոր շրջանակներում իր տնտեսական գործունեությունն ամբողջությամբ դադարեցրած տնտեսվարող սուբյեկտը և միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած, սակայն այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտը գտնվում են միևնույն իրավիճակում, և վերջիններիս նկատմամբ պետք է դրսևորվի հավասար մոտեցում՝ հնարավորություն ընձեռելով այդ տնտեսվարող սուբյեկտներին չկատարելու շահութահարկի կանխավճարներ՝ յուրաքանչյուրին իր դադարեցրած գործունեության մասով:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված շահութահարկի կան-

խավձարներ չկատարելու հնարավորությունն իր տնտեսական գործունեությունն ամբողջությամբ դադարեցրած տնտեսվարող սուբյեկտի վրա տարածելու, իսկ միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած, սակայն այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի վրա չտարածելու հարկային քաղաքականությունը չի ապահովում արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների, մասնավորապես՝ սեփականության և տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքների, պաշտպանության պահանջների միջև: Վճռաբեկ դատարանը գտել է, որ շահութահարկի կանխավձարներ չկատարելու կառուցակարգը միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած, սակայն այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ կիրառելի չհամարելու մոտեցման արդյունքում այդ տնտեսվարող սուբյեկտի վրա կարող է դրվել անհամաչափ, ավելորդ և չափազանց մեծ բեռ, որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ վերջինիս ֆինանսական վիճակի վրա: Քննարկվող իրավիճակը կարող է առաջանալ այն դեպքում, երբ նախորդ տարվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ունեցած տնտեսական շրջանառության համեմատ հաշվետու տարում գործունեության մի մասի դադարեցման հետևանքով տվյալ տնտեսվարող սուբյեկտի շրջանառությունն էականորեն նվազել է: Այդ պայմաններում տնտեսվարող սուբյեկտի կողմից նախորդ տարվա տնտեսական գործունեության արդյունքների հիման վրա շահութահարկի կանխավձարներ կատարելը կարող է լուրջ ֆինանսական դժվարություններ առաջացնել տվյալ տնտեսվարողի համար, կաթվածահար անել վերջինիս գործունեությունը և հանգեցնել ընդհուպ հարկային անհամաչափ բեռի պատճառով տնտեսական գործունեություն իրականացնելու անհնարինություն:

Փաստորեն, շահութահարկի կանխավձարներ չկատարելու հնարավորությունը միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած, սակայն այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի վրա չտարածելու հարկային քաղաքականությունը Կոնվենցիայի տեսանկյունից ոչ իրավաչափ միջամտություն է տվյալ տնտեսվարող սուբյեկտի սեփականության իրավունքի նկատմամբ, ինչը կարող է հանգեցնել նաև վերջինիս՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի խախտմանը: Այսպիսով, տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների հիմնարար իրավունքների խախտումները բացառելու նպատակով Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված կանոնը պետք է մեկնաբանվի և կիրառվի, մասնավորապես, հետևյալ կերպ. այն դեպքում, երբ հարկատուն հարկային մարմին է ներկայացրել հաստատագրված վճարով հարկվող գործունեություն չիրականացնելու (հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն, ապա հայտարարությունը ներկայացնելուց հետո հարկատուն պարտավոր չէ կատարել շահութահարկի կանխավձարներ հաստատագրված վճարով հարկվող դադարեցված գործունեության մասով: Ընդ որում, տնտեսական գործունեությունը միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով դադարեցրած, իսկ մյուս տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտները շարունակում են կրել շահութահարկի գծով կանխավձարներ կատարելու պարտականությունը՝ իրենց կողմից իրականացվող (չդադարեցված) գործունեության մասով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ եթե հարկատուն հարկային մարմին է ներկայացրել հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն՝ շարունակելով զբաղվել գործունեության այլ տեսակներով, ապա «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով այդ տնտեսվարողը հաշվետու տարվա ընթացքում ազատվում է շահութահարկի գծով կանխավձարներ կատարելու պարտականությունից հաստատագրված վճարով հարկվող դադարեցված գործունեության մասով և պարտավոր չէ կատարել շահութահարկի կանխավձարներ նախորդ տարվա հաստատագրված վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարների հիման վրա:

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՆՈՎՈՒԹՅՈՒՆ**

20.07.2017թ.

**52. Մարիամ Բաղայան v. ՀՀ գլխավոր դատախազություն, վարչ. գործ թիվ ԷԶ 4Գ/2010/05/14** **609-620**

**Խնդիր.** Ինչ իրավական նախադրյալների, չափանիշների և պայմանների առկայության դեպքում դատախազը կարող է ունենալ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք՝ տարբեր ժամանակահատվածներում գործող օրենսդրական կարգավորումների համատեքստում:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ, վերահաստատել է իր այն մտցումը, որ կենսաթոշակի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող գույքային իրավունք է (յրև, Թերեզա Գևորգյանն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության թիվ ՎԴ/5086/05/09 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը):

01.07.1998 թվականին ընդունված, 12.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 01.05.2007 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» թիվ ՀՕ-245 ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ (...) դատախազների (...) թոշակավորումն իրականացվում է ներքին գործերի մարմիններում ծառայություն անցնող ղեկավար կազմի անձանց համար կիրառվող պայմաններով, նորմերով և կարգով (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թեև 01.07.1998 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրել է 01.05.2007 թվականին, սակայն այդ օրենքի 40-րդ հոդվածի վկայակոչված դրույթը պահպանել է իր ուժը մինչև 09.01.2011 թվականը՝ 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և ներկայումս գործող «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն և ուժը կորցրել է միայն 22.12.2010 թվականին ընդունված ««Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-291-Ն ՀՀ օրենքով: 01.07.1998 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթի գործողությունը շարունակվելու մասին նշել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ 10.02.2010 թվականի թիվ ՍԴՌ-865 որոշմամբ՝ արտահայտելով այն իրավական դիրքորոշումը, որ համակարգային մոտեցում չցուցաբերելով, «Դատախազության մասին» 22.02.2007 թվականի օրենքն ընդունելուց հետո պահպանվել է 1998 թվականի «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի այն դրույթի իրավաբանական ուժը, համաձայն որի՝ «Դատախազների և քննիչների թոշակավորումն իրականացվում է ներքին գործերի մարմիններում ծառայություն անցնող ղեկավար կազմի անձանց համար կիրառվող պայմաններով, նորմերով և կարգով»:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը 22.02.2007 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքով 01.05.2007 թվականից մինչև 09.01.2011 թվականը դատախազի կենսաթոշակի իրավունքի վերաբերյալ որևէ հատուկ իրավակարգավորում չի նախատեսել և սահմանել է, որ այդ հարցը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 01.07.1998 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածով ամրագրված՝ դատախազի կենսաթոշակի իրավունքին վերաբերող դրույթը շարունակել է գործել մինչև 09.01.2011 թվականը:

Փաստորեն, 12.01.1999 թվականից մինչև 09.01.2011 թվականը գործող իրավակարգավորումների համաձայն՝ դատախազի կենսաթոշակի իրավունքի հետ կապված հարաբերությունների վրա տարածվում էին ներքին գործերի մարմինների ղեկավար ծառայողների կենսաթոշակի իրավունքը կարգավորող նորմերով սահմանված պայմանները:

«Ջինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ ներքին գործերի հանրապետական գործադիր մարմինների համակարգի հրամանատարական (ղեկավար) անձնակազմի ծառայողները նշված օրենքի իմաստով համարվում են «զինվորական ծառայողներ»: Իսկ զինվորական ծառայողների զինվորական կենսաթոշակի իրավունքի հետ կապված հասարակական հարաբերությունները 30.11.1998 թվա-

կանից մինչև 01.01.2011 թվականը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում կարգավորվել են «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի՝ «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովությունը» վերտառությամբ 2-րդ գլխով, որն ուժը կորցրած է ճանաչվել «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 22.10.2010 թվականի թիվ ՀՕ-248-Ն օրենքով:

Այսպիսով, 01.07.1998 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածով, 22.02.2007 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 9-րդ մատով, նույն օրենքի՝ 01.05.2007 թվականից մինչև 09.01.2011 թվականը գործող խմբագրությամբ 56-րդ հոդվածով, 22.12.2010 թվականին ընդունված ««Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-291-Ն ՀՀ օրենքով, «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով և նույն օրենքի՝ 30.11.1998 թվականից մինչև 01.01.2011 թվականը գործող խմբագրությամբ 2-րդ գլխով սահմանված իրավական նորմերի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2010 թվականի թիվ ՍԴԳ-865 դրոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ 12.01.1999 թվականից մինչև 01.01.2011 թվականը դատախազների մոտ կարող էր ծագել երկարամյա ծառայության գինվորական կենսաթոշակի իրավունք՝ ներքին գործերի հանրապետական գործադիր մարմինների համակարգի հրամանատարական (ղեկավար) անձնակազմի գինվորական ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով սահմանված պայմանների առկայության դեպքում: Այլ կերպ ասած՝ 12.01.1999 թվականից մինչև 01.01.2011 թվականը գործող իրավակարգավորումների համաձայն՝ դատախազները ևս կարող էին ունենալ երկարամյա ծառայության գինվորական կենսաթոշակի իրավունք՝ այնպես, ինչպես Հայաստանի Հանրապետության ներքին գործերի հանրապետական գործադիր մարմինների համակարգի հրամանատարական (ղեկավար) անձնակազմի գինվորական ծառայողները, եթե բավարարում էին երկարամյա ծառայության գինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման համար «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով նախատեսված պայմաններին:

Վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը կամ կապված է որոշակի հանգամանքների հետ, որոնց օրենքը տալիս է իրավական նշանակություն (իրավաբանական փաստեր): Ըստ Վճռաբեկ դատարանի՝ օրենսդիրը տարանջատել է «կենսաթոշակի իրավունք» և «կենսաթոշակ ստանալու իրավունք» հասկացությունները: Ընդ որում, դրանցից յուրաքանչյուրի ծագման համար նախատեսվել են տարբեր իրավաբանական փաստեր: Մասնավորապես՝ կենսաթոշակի իրավունքը ծագում է օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում, իսկ կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ կենսաթոշակի իրավունքի առկայությամբ պայմանավորված՝ համապատասխան մարմին սահմանված կարգով դիմելու պարագայում: Վճռաբեկ դատարանը հավելել է նաև, որ երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքն այդպիսի կենսաթոշակի իրավունք ունեցող անձի մոտ ծագում է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնին դիմելու հիմքով կենսաթոշակ նշանակելու պարագայում: Ըստ Վճռաբեկ դատարանի, թե՛ նախկին («Ջինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք), թե՛ ներկա («Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք) կարգավորումներով երկարամյա ծառայության գինվորական կենսաթոշակի իրավունքի ծագումն օրենսդիրը պայմանավորել է գինվորական ծառայությունից անձին արձակելու հետ (*տես, Արարար Ափոյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առդյոթեր սզգային անվկանգության ծառայության թիվ ՎԳ/6690/05/13 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, իրացնելով կենսաթոշակների ծավալները և ձևերը, դրանց նշանակման պայմանները և կարգը սահմանելու իր լիազորությունը, 08.06.2009 թվականին գործող խմբագրությամբ «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում

ամրագրել էր, որ համապատասխան զինվորական ծառայողի մոտ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման երկու առանձին դեպքեր, որոնցից առաջինը գործում էր հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում.

- տվյալ զինվորական ծառայողը սահմանված կարգով արձակվել է ծառայությունից,
- ծառայությունից արձակվելու պահին տվյալ զինվորական ծառայողն ունի առնվազն 20 տարվա զինվորական ծառայության ընդհանուր ժամկետ (ստաժ):

Իսկ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման երկրորդ դեպքը գործում էր հետևյալ չորս պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում.

- տվյալ զինվորական ծառայողն արձակվել է ծառայությունից տարիքի կամ առողջական վիճակի կամ հաստիքների կրճատման պատճառով,
- ծառայությունից արձակվելու պահին տվյալ զինվորական ծառայողն առնվազն 50 տարեկան է,
- ծառայությունից արձակվելու պահին տվյալ զինվորական ծառայողն ունի առնվազն 25 տարվա ընդհանուր աշխատանքային (ապահովագրական) ստաժ,
- ծառայությունից արձակվելու պահին տվյալ զինվորական ծառայողի աշխատանքային (ապահովագրական) ստաժում զինվորական ծառայության ընդհանուր ժամկետը (ստաժը) կազմում է առնվազն 8 տարի:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ 22.02.2007 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ 09.01.2011 թվականից մինչև 01.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 56-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը 09.01.2011 թվականից մինչև 01.07.2014 թվականը դատախազի կենսաթոշակի իրավունքի հետ կապված հարաբերությունները կարգավորել է հետևյալ կերպ.

1) 01.01.1974 թվականին և դրանից հետո ծնված դատախազի կենսաթոշակային ապահովությունն իրականացվում էր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2) մինչև 01.01.1974 թվականը ծնված դատախազի կենսաթոշակային ապահովությունն իրականացվում էր զինծառայողների համար սահմանված կարգով:

Այսինքն՝ 09.01.2011 թվականից մինչև 01.07.2014 թվականն ընկած ժամանակահատվածում այն դատախազների կենսաթոշակի իրավունքը, որոնք ծնվել են մինչև 01.01.1974 թվականը, հավասարեցված էր զինծառայողների կենսաթոշակի իրավունքին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ինչպես 09.01.2011 թվականից մինչև 01.07.2014 թվականն ընկած ժամանակահատվածում, այնպես էլ ներկայումս զինվորական ծառայողների կենսաթոշակի հետ կապված հարաբերությունները կարգավորվում էին (են) 22.12.2010 թվականին ընդունված և 01.01.2011 թվականից ուժի մեջ մտած «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, որը սահմանում է զինվորական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ հաշվարկելու, նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը:

Այսպես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը նախատեսում է զինծառայողի մոտ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման երեք առանձին դեպքեր, որոնցից առաջինը գործում է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում.

- տվյալ զինծառայողը սահմանված կարգով արձակվել է զինվորական ծառայությունից,
- զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ տվյալ զինծառայողն ունի առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ:

Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված երկրորդ դեպքը գործում է հետևյալ երեք պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում.

- տվյալ զինծառայողը սահմանված կարգով արձակվել է զինվորական ծառայությունից սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ կամ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ (սահմանային տարիքը լրացած լինելու դեպքում),
- զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ տվյալ զինծառայողն ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ,

- ծառայությունից արձակվելու պահին տվյալ գինվորական ծառայողի աշխատանքային ստաժում գինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս:

Երկարամյա ծառայության գինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված երրորդ դեպքը գործում է հետևյալ չորս պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում.

- տվյալ գինվորական ծառայողն արձակվել է ծառայությունից հաստիքների կրճատման կամ առողջական վիճակի պատճառով,

- ծառայությունից արձակվելու պահին տվյալ գինվորական ծառայողն առնվազն 45 տարեկան է,

- ծառայությունից արձակվելու պահին տվյալ գինվորական ծառայողն ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ,

- ծառայությունից արձակվելու պահին տվյալ գինվորական ծառայողի աշխատանքային ստաժում գինվորական ծառայության ստաժը կազմում է 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս:

## ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

27.12.2017թ.

#### 53. Աշոտ Ուլիխանյան v. Երևան համայնք, վարչ. գործ թիվ ՎԳ/2731/05/13

**Խնդիր.** Կարող է արդյոք դատարանը կարճել գործի վարույթը վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը լրանալու հիմքով այն պայմաններում, երբ հայցվոր կողմը չի ներկայացրել դատարան դիմելու համար օրենքով սահմանված և բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն:

Էջ  
621–632

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերահաստատելով դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումների վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ դատավարական ժամկետները բաց թողնելու և վերականգնելու մասին իրավակարգավորումները վերաբերում են ոչ միայն հայցադիմումի ընդունելիության, այլև վարչական դատավարության մյուս փուլերին: Ըստ այդմ, վարչական դատավարության բոլոր փուլերում վարչական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի իրավակարգավորմանը համապատասխան պարտավոր է կատարել մատնանշման իր պարտականությունը, այդ թվում նաև՝ մատնանշելով կողմերին դատավարական ժամկետների բացթողնման դեպքում դրանք վերականգնելու նպատակով միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ: Այնուամենայնիվ, եթե դատավարության որոշակի փուլում վարչական դատարանը մատնանշման իր պարտականությունը չի կատարել, ապա նա գրկված չէ իր այդ պարտականությունը կատարելու հնարավորությունից դատավարության հետագա փուլերում՝ գործին մասնակցող անձանց միջնորդությունների և ներկայացրած նոր ապացույցների հիման վրա, իսկ այդ պարտականության կատարման պարագայում դատավարության մասնակցի կողմից բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելու դեպքում կիրառվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական հետևանքը, այն է՝ դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը:

20.07.2017թ.

**54. Գագիկ Մաթևոսյան v. ՀՀ արդարադատության նախարարություն, վարչ. գործ թիվ ՎԳ/0229/05/15**

Էջ  
633-644

**Խնդիր.** (1) Հանրային-իրավական այս կամ այն վեճը վարչական դատարանի առջև բարձրացնելու համար օրենքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրությունն ինքնին ենթադրում է արդյո՞ք, որ տվյալ հայցը (վեճը) ենթակա չէ դատարանի քննությանը, (2) հայցվորի կողմից ոչ ձիշտ հայցատեսակով վարչական դատարան դիմելն ինքնին կարող է արդյո՞ք հիմք հանդիսանալ վեճը (հայցը) դատարանի քննությանը ենթակա չլինելու պատճառաբանությամբ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վարչական գործի վարույթը կարճելու համար:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ, փաստել է, որ դատարան դիմելու կամ արդարադատության մատչելիության իրավունքը մարդու՝ սահմանադրաիրավական և միջազգային իրավական նորմերով երաշխավորված դատարան պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների կարևորագույն բաղադրիչն է:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ արդարադատության մատչելիության իրավունքը սերտորեն փոխկապակցված է այս կամ այն գործի՝ դատարանի քննությանը ենթակա լինելու կամ չլինելու հարցի հետ, քանի որ դատարանը՝ որպես իրավաբանական գործեր քննող և լուծող մարմին, օժտված չէ համընդհանուր իրավագործությամբ և իր գործառնություններին ու խնդիրներին համապատասխան կարող է քննել և լուծել միայն իր իրավասությանը հանձնված գործերը: Այս հանգամանքն առաջացնում է, մի կողմից, դատարանի, իսկ մյուս կողմից, իրավաբանական գործեր քննելու և լուծելու իրավասություն ունեցող այլ մարմինների (օրինակ՝ վարչական մարմիններ, առևտրային արբիտրաժ և այլն) իրավասությունը հատկորեն սահմանազատելու անհրաժեշտություն: Դատարանի և իրավաբանական գործեր քննելու ու լուծելու իրավասություն ունեցող այլ մարմինների իրավասությունը տարանջատելիս կիրառվում է «ենթակայություն» իրավաբանական եզրույթը. ենթակայությունն իրավաբանական գործերի այնպիսի հատկանիշ է, որի միջոցով պարզվում է տվյալ գործը քննելու և լուծելու իրավասություն ունեցող կոնկրետ սուբյեկտը: Ըստ այդմ, այն գործերը, որոնց քննությունն ու լուծումն օրենքով հանձնված է դատարանի իրավասությանը, համարվում են դատական ենթակայության գործեր:

Փաստորեն, անձը կարող է իրացնել դատարանի մատչելիության իր իրավունքը միայն այն դեպքում, երբ դատարանի առջև վերջինիս բարձրացրած հարցը (որպես կանոն՝ իրավունքի մասին վեճը) ենթակա է քննության և լուծման դատարանի կողմից: Այդ իսկ պատճառով օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանել է, որ դատարանը պարտավոր է մերժել հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության, իսկ նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանել է, որ դատարանը պարտավոր է գործի քննության ցանկացած փուլում կարճել գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հայցադիմումի ընդունումը կարող է մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով այն դեպքում, երբ դատարան դիմող սուբյեկտը հայց հարուցելու իրավունք առհասարակ չունի, իսկ դատարանն իրավասու չէ լուծել իր առջև բարձրացված տվյալ վեճը (դրն, *Վարուժան Ավերիքյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատարանական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԳ/3804/05/15 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը*): Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված «որևէ դատարան» բառակապակցության ներքո օրենսդիրը նկատի է ունեցել, որ վեճը վերապահված չէ Հայաստանի Հանրապետությունում գործող ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների քննությանը և լուծմանը: Նման իրավակարգավորումը կոչված է բացառելու դատարանների իրավասությանը չհանձնված վեճերի քննությունը և լուծումը դատարանների կողմից: Եթե գործը ենթակա չէ դատարանին, ապա դատարան դիմող անձը հայց հարուցելու իրավունք չունի, իսկ դատարանն իրավասու չէ խախտել այլ մարմինների իրա-

վասությունը և լուծել նրանց վերապահված գործերը, հետևաբար գործի վարույթը ենթակա է կարճման (տե՛ս, «Վեսթ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Այսպիսով, անձի կողմից դատարանի առջև բարձրացված հարցի՝ դատարանի քննությանը ենթակա լինելու հանգամանքը հանդիսանում է հայց հարուցելու իրավունքի ընդհանուր դրական նախադրյալ, որի առկայության դեպքում միայն անձն իրավունք ունի իր սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության խնդրանքով դիմել դատարան: Հակառակ դեպքում, այսինքն՝ գործը դատարանին ենթակա չլինելու դեպքում, անձն իրավունք չունի հայց հարուցել դատարանում, և դատարանը պարտավոր է վարույթ չընդունել ներկայացված հայցադիմումը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը որդեգրել է այն կառուցակարգը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված՝ «հայցը ենթակա չէ դատարանում քննության» արտահայտությունը և նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված՝ «վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության» արտահայտությունն ունեն միևնույն նշանակությունը, որը հանգում է հետևյալին. վարչական դատարանում գործ չի կարող հարուցվել, իսկ հարուցված գործի վարույթը ենթակա է կարճման, եթե այդ գործի հիմքում ընկած վեճը (հայցապահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունը, հայցադիմումով դատարանի առջև բարձրացված հարցը) ենթակա չէ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին ատյանի որևէ (ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ մասնագիտացված) դատարանում քննության: Հետևաբար, վեճը (հայցը) դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելիս կամ այդ հիմքով գործի վարույթը կարճելիս վարչական դատարանը պարտավոր է ցույց տալ այն իրավական և փաստական հանգամանքները, որոնք վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարաններն իրավասու չեն քննելու և լուծելու տվյալ վեճը:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի ուժով հայցադիմումում պետք է նշվի հայցվորի պահանջը, որը կազմում է հայցի առարկան և որի մերժման կամ բավարարման վերաբերյալ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը (հայցի առարկան) հայցադիմումում պետք է շարադրված լինի այն կերպ, որ դատարանի համար առկալից պարզ լինի, թե ինչ է ակնկալում հայցվորը՝ դատական պաշտպանություն հայցելով: Այլ կերպ ասած՝ հայցադիմումը պետք է բովանդակի հայցի առարկան բավարար հստակությամբ, որպեսզի դատարանը հնարավորություն ունենա ներկայացված նյութաիրավական պահանջի կապակցությամբ իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին բավարարող դատական ակտ կայացնել: Ասվածը հատկապես կարևոր նշանակություն ունի վարչական դատավարությունում, քանի որ օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը հստակ սահմանում է այն հայցատեսակները, որոնց միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են վարչական դատարանից հայցել իրենց խախտված իրավունքների և շահերի դատական պաշտպանություն: Ընդ որում, նշված հայցատեսակները միմյանցից առաջին հերթին տարբերվում են հայցի առարկայով, այսինքն՝ այն նյութաիրավական պահանջի բովանդակությամբ, որը ֆիզիկական և իրավաբանական անձինք ուղղում են այս կամ այն վարչական մարմնին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ անձը, իր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով դիմում է վարչական դատարան, ապա վերջինիս իրավունքների և շահերի դատական պաշտպանությունը պետք է իրականացվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հիման վրա հարուցված վարչական գործի ըստ էության քննության և լուծման միջոցով: Այսինքն՝ վարչական դատավարությունում հայցվորի պահանջը պետք



է համապատասխանի օրենքով սահմանված այն հայցատեսակին բնորոշ հայցի առարկային, որի միջոցով տվյալ վիճելի իրավահարաբերության շրջանակներում հնարավոր է գործնականում հասնել անձի իրավունքների և շահերի դատական պաշտպանության ապահովմանը (տե՛ս, *Վարուժան Ավետիսյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկալելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքները՝ ձիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ձիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ վարչական դատարան դիմած անձն իր կողմից ներկայացված հայցի առարկան չի ձևակերպել տվյալ վիճելի իրավահարաբերության համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ձիշտ հայցատեսակով, ապա այդ հանգամանքն ինքնին չի ենթադրում, որ հայցը (վեճը) ենթակա չէ դատարանում քննության: Այլ կերպ ասած, այս կամ այն վիճելի իրավահարաբերությունը (իրավունքի մասին վեճը կամ այլ հարցը) վարչական դատավարության կարգով դատարանի առջև բարձրացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրությունն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ վեճը (հայցը) դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վարչական գործի վարույթը կարճելու համար: Փաստորեն, վարչական դատարանը չի կարող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով մերժել հայցադիմումի ընդունումը կամ նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով կարճել վարչական գործի վարույթը միայն այն պատճառաբանությամբ, որ հայցվորը դատական պաշտպանության չի դիմել օրենքով նախատեսված ձիշտ հայցատեսակով կամ հայցվորը դատարան է դիմել սխալ հայցատեսակով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպող վերը նկարագրված դեպքերում հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի իրացումն ապահովվում է դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն («ex officio») պարզելու սկզբունքի կենսագործման միջոցով, որը վարչական արդարադատության բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկն է:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է հետևյալ եզրահանգման.

- 1) հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրությունն ինքնին չի ենթադրում, որ դատարանի առջև բարձրացված վեճը (հայցը) ենթակա չէ դատարանի քննությանը,
- 2) հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրության դեպքում վարչական դատարանը ոչ թե պետք է որոշում կայացնի վեճը (հայցը) դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վարչական գործի վարույթը կարճելու մասին, այլ պարտավոր է առաջարկել հայցվորին ոչ ձիշտ հայցատեսակը փոխարինել պատշաճ հայցատեսակով (մատնանշել ձիշտ հայցատեսակը),
- 3) եթե հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրության և վարչական դատարանի կողմից պատշաճ հայցատեսակի մատնանշման պարտականության պատշաճ կատարման պայմաններում հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված սկզբնական ոչ ձիշտ հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է կայացնել այդ հայցապահանջի շրջանակներում հարուցված վարչական գործի հետագա ճակատագիրը լուծող դատական ակտ:

07.04.2017թ.

**55. Հասմիկ Մելքոնյան v. ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կա-  
դաստրի պետական կոմիտե, վարչ. գործ թիվ ՎԳ/8975/05/13**

Էջ  
645-654

**Խնդիր.** Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի, վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության շրջանակներում անդրադառնալով այդ պետական գրանցման համար հինգ հանդիսացող վարչական ակտի՝ տվյալ գույքի նկատմամբ կիրառելիության հարցին՝ վարչական դատարանը խախտում է արդյո՞ք վիճարկվող պետական գրանցման իրավաչափության գնահատման սահմանները, թե՛ ոչ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թե՛ 28.11.2007 թվականի, և թե՛ ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերով օրենսդիրը սահմանել է, որ վիճարկման հայցով հայցվորն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը, որը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դառնում է դատական վերահսկողության առարկա: Վիճարկման հայցը՝ որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից անձանց իրավական պաշտպանության միջոց, օրենսդրի կողմից սահմանված հայցի տեսակ է, որն ուղղված է դատական կարգով վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելուն: Վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում դատարանը ձեռնամուխ է լինում վարչական ակտի իրավաչափության գնահատմանը՝ ստուգելով վիճարկվող վարչական ակտի համապատասխանությունն օրենսդրության պահանջներին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ օրենսդիրը հստակորեն կանխորոշել է վիճարկվող վարչական ակտի իրավաչափության դատական վերահսկողության սահմանները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրելով, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանի կողմից վարչական ակտի իրավաչափության գնահատումը պետք է կատարվի տվյալ վարչական ակտի ընդունման համար հինգ հանդիսացած փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերով սահմանված պահանջների պահպանման հարցը պարզելու միջոցով: Ընդ որում, այն պարագայում, երբ վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հինգ է հանդիսացել մեկ այլ վարչական ակտ, ապա դատարանը չի կարող այդ վարչական ակտի իրավաչափության ստուգման պահանջի բացակայության պայմաններում իր նախաձեռնությամբ անդրադառնալ վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հինգ հանդիսացած վարչական ակտի իրավաչափության հարցին. եթե վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հինգ հանդիսացած վարչական ակտի վիճարկման պահանջը չի հանդիսանում տվյալ գործով հայցի առարկա, ապա դատարանն իրավասու չէ ստուգելու այդ գործով չվիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը՝ ելնելով չվիճարկվող և ոչ իրավաչափ չճանաչված վարչական ակտերի իրավաչափության կանխավարկածից:

Այսպես, հինգ ընդունելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված օրինականության հիմնարար սկզբունքը՝ Վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում ձևավորել է իրավական դիրքորոշում վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի մասին: Այսպես՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանմամբ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքը նշանակում է, որ բոլոր դեպքերում վարչական ակտը համարվում է իրավաչափ, եթե այն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել: Հետևաբար քննվող գործի շրջանակներում որևէ վարչական ակտի իրավաչափության վիճարկման պահանջի բացակայության պայմաններում դատարանն իրավասու չէ անդրադառնալ այդ հարցին, գնահատական տալ չվիճարկվող վարչական ակտի իրավաչափությանը, ինչպես նաև դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությանը: Այլ կերպ՝ դատարանը պարտավոր է ձեռնպահ մնալ քննվող գործի շրջանակներում չվիճարկվող վարչական ակտի իրավաչափության կամ դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորության վերաբերյալ գնահատականներ տալուց *(տե՛ս, Լյուբով Փիլյոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և այլոց թիվ ՎԳ/2085/05/12 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):*

Անփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափության գնահատման սահմանների մեջ չի կարող ներառվել մեկ այլ, այդ թվում՝ այդ վարչական ակտի ընդունման հիմք հանդիսացած վարչական ակտի իրավաչափության գնահատումը, մինչդեռ վիճարկվող վարչական ակտի հիմքում ընկած վարչական ակտի կիրառելիության ստուգումը ներառվում է այդ սահմանների մեջ: Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ վիճարկվող վարչական ակտի ընդունման հիմքում ընկած է մեկ այլ վարչական ակտ, ապա դատարանը վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս կարող է անդրադառնալ դրա հիմքում ընկած վարչական ակտի՝ վիճարկվող վարչական ակտի ընդունման համար կիրառելի լինելու կամ չլինելու հարցի պարզմանը: Այսինքն՝ դատարանի կողմից վարչական ակտի իրավաչափության գնահատումը ներառում է նաև վիճարկվող վարչական ակտի հիմքում այլ վարչական ակտի դրված լինելու իրավաչափության պարզումը. դատարանը կարող է որոշել վարչական ակտի իրավաչափությունը՝ պարզելով, թե վիճարկվող վարչական ակտը կարող էր ընդունվել արդյոք դրա հիմքում դրված վարչական ակտի հիման վրա, թե՛ ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման իրավական հիմքերը սահմանվում են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, որի 8-րդ հոդվածի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք են հանդիսանում իրավահաստատող փաստաթղթերը: Նշված օրենքի իմաստով իրավահաստատող փաստաթղթեր են համարվում իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթերը և գույքագրման փաստաթղթերը, իսկ իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթերն օրենքով սահմանված հիմքերով պետական գրանցման ենթակա իրավունքների ձեռքբերման համար օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի ավարտի իրավական ձևակերպման համար անհրաժեշտ և բավարար գրավոր փաստաթղթերն են, այդ թվում նաև՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անհատական ակտերը:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ինչպես վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի վերաբերյալ սեփական մտեցումները, այնպես էլ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 04.02.2014 թվականի թիվ ՍԴՌ-1137 որոշմամբ պետական գրանցման համար հիմք հանդիսացող վարչական ակտի կատարման հարցի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտել է, որ այն դեպքում, երբ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում այդ պետական գրանցման հիմքում դրված վարչական ակտը չի վիճարկվում և ոչ իրավաչափ չի ճանաչվել, ապա դատարանը վիճարկվող պետական գրանցման իրավաչափությունը որոշելիս կարող է անդրադառնալ ոչ թե պետական գրանցման հիմքում ընկած վարչական ակտի իրավաչափության ստուգմանը, այլ պետական գրանցման հիմքում տվյալ վարչական ակտի դրված լինելու իրավաչափության ստուգմանը՝ պարզելով, թե վիճարկվող պետական գրանցումը կարող էր արդյոք կատարվել դրա հիմքում դրված և իրավաբանական ուժի մեջ գտնվող վարչական ակտի հիման վրա, թե՛ ոչ: Այլ կերպ ասած, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթի շրջանակներում իրավասու վարչական մարմինը պետք է պարզի, թե գրանցման համար որպես իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթուղթ ներկայացված վարչական ակտով տվյալ գույքի նկատմամբ անձին տրամադրվել է արդյոք որևէ իրավունք, թե՛ ոչ: Ընդ որում, իրավունքի պետական գրանցումը դատական կարգով վիճարկելու դեպքում դրա իրավաչափությունը դատարանը ստուգում է պետական գրանցման վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Մասնավորապես, դատարանը տվյալ դեպքում պետք է պարզի, թե պետական գրանցման վարչական վարույթի ընթացքում հաստատվել է արդյո՞ք այն հանգամանքը, որ որպես իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթուղթ ներկայացված վարչական ակտով իրավունքի գրանցում հայցող անձին կոնկրետ գույքի նկատմամբ տրամադրվել է այն իրավունքը, որը գրանցելու պահանջով վերջինս դիմել է իրավասու վարչական մարմնին:

27.12.2017թ.

56. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Էջ  
 Արաբկիրի հարկային տեսչություն v. Ա/2 Էդուարդ Ափոյան, վարչ. գործ թիվ 655-661  
 ՎԳ/3204/05/15

**Խնդիր.** Անհատ ձեռնարկատիրոջն ուղղված հանրային իրավական դրամական պահանջով գումարի բռնագանձման վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «գ» կետի հիմքով հարուցված գործը ենթակա է արդյո՞ք կարճման՝ վեճը որևէ դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով այն դեպքում, երբ անհատ ձեռնարկատերն ընդհանրապես գույք չունի:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում «հանրային իրավական» է կոչվում պետական կամ համայնքային բյուջե դրամական գումարներ վճարելու այն պահանջը, որին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- 1) այդ դրամական գումարները վճարելու կարգը սահմանված է օրենքով,
- 2) այդ դրամական գումարները վճարելը պարտադիր է,
- 3) այդ դրամական գումարները վճարելու պարտադիրությունը ծագում է և հաստատվում է վարչական ակտի հիման վրա:

Օրենսդիրը, հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման հետ կապված հասարակական հարաբերությունները կարգավորելիս սահմանել է հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման երկու տարբեր եղանակներ՝ *դատական և արտադատական*: Ընդ որում, հանրային իրավական դրամական պահանջի՝ *արտադատական կարգով* հարկադիր կատարման եղանակը նախատեսված է որպես ընդհանուր կանոն, իսկ *դատական կարգով* կատարման եղանակը՝ որպես բացառություն ընդհանուր կանոնից:

Այդ ընդհանուր կանոնը սահմանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման անմիջականորեն այդ պահանջի պարտադիրությունը հաստատող անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Հանրային իրավական դրամական պահանջների՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակը կիրառվում է միայն այն դեպքում, երբ առկա է հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ օրենքով սահմանված որևէ սահմանափակում. այդ սահմանափակումներն իրենց հերթին հանդիսանում են այն պայմանները, որոնց առկայությունն անհրաժեշտ է հանրային իրավական դրամական պահանջների՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակի գործողության համար: Վերոնշյալ պայմանները (սահմանափակումները) նախատեսված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասում և հանգում են հետևյալին.

ա) անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը,

բ) ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր չէ առանց նրան սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականության) իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձման,

գ) իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը:

Այսպիսով, նշված իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը կանխորոշում է հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման եղանակը. այդ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում հանրային իրավական դրամական պահանջի՝ *արտադատական կարգով* հարկադիր կատարման եղանակը չի գործում, և գործում է հանրային իրավական դրամական պահանջի՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակը (*յուե՛ս, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության հարկադիր կատարման եղանակը»* և *ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության հարկադիր կատարման եղանակը»* օրենքները):

տրիկանություն» ծառայությունն ընդդեմ Կարեն Պետրոսյանի թիվ ՎԳՅ/0196/05/16 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 19.06.2017 թվականի որոշումը):

Անդրադառնալով հանրային իրավական դրամական պահանջի դատական կարգով հարկադիր կատարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «գ» կետով սահմանված պայմանի էությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված իրավական նորմով նախատեսված «(...) գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը (...)» արտահայտությունը նախևառաջ նշանակում է, որ սովյալ անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող որոշակի գույք, սակայն այդ գույքի արժեքն ավելի փոքր է, քան հանրային իրավական դրամական պահանջով գանձման ենթակա գումարի չափը: Միևնույն ժամանակ վերոգրյալ օրենսդրական ձևակերպումը կարող է նշանակել նաև, որ անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձն ընդհանրապես չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, քանի որ վերջինիս մոտ գույքի բացակայությունը ևս գործնականում առաջացնում է այնպիսի իրավիճակ, երբ «(...) գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը (...)»: Փաստորեն, հանրային իրավական դրամական պահանջի դատական կարգով հարկադիր կատարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «գ» կետով սահմանված իրավական նորմի դիսպոզիցիան հավասարապես տարածվում է թե՛ այն դեպքի վրա, երբ անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող որոշակի գույք, սակայն այդ գույքի արժեքն ավելի փոքր է, քան հանրային իրավական դրամական պահանջով գանձման ենթակա գումարի չափը, թե՛ այն դեպքի վրա, երբ անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձն ընդհանրապես չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «գ» կետով սահմանված իրավադրույթի ուժով հանրային իրավական դրամական պահանջների դատարանական կարգով հարկադիր կատարման եղանակը կիրառվում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) անբողոքարկելի վարչական ակտով հաստատված հանրային իրավական դրամական պահանջն ուղղված է անհատ ձեռնարկատիրոջը կամ իրավաբանական անձին,
- 2) անբողոքարկելի վարչական ակտով հաստատված հանրային իրավական դրամական պահանջի չափը գերազանցում է այդ անհատ ձեռնարկատիրոջը կամ իրավաբանական անձին պատկանող գույքի արժեքը, ինչը կարող է առաջանալ ներքեռիշյալ իրավիճակներից որևէ մեկի առկայության դեպքում.
  - անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող որոշակի գույք, սակայն այդ գույքի արժեքն ավելի փոքր է, քան հանրային իրավական դրամական պահանջով գանձման ենթակա գումարի չափը, կամ
  - անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձն ընդհանրապես չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք:

**ԳԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ**

07.04.2017թ.

57. Լիլիթ Մուսեյան v. Երևանի քաղաքապետարան, վարչ. գործ թիվ ԵՁ ՎԳ/4084/05/15 662-672

**Խնդիր.** Վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի վարույթը վեճն ըստ էության սպառվելու հիմքով կարճվելու դեպքում հայցվորի կրած դատական ծախսերի, մասնավորապես՝ ներկայացուցչին վճարված գումարի, հատուցման պարտականությունը պատասխանողի վրա դնելիս ինչ չափանիշներով պետք է որոշվի այդ դատական ծախսի հատուցման ողջամիտ չափը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորվում են յուրաքանչյուրի իրա-

վունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքները, որոնց բաղկացուցիչ տարրերից մեկն իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն է, այդ իրավունքը երաշխիք է հանդիսանում իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ իրացման համար:

ՀՀ սահմանադրական դատարանը 08.10.2008 թվականի թիվ ՄԴՈ-765 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է նախ՝ որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը, երկրորդ՝ պետության պարտավորությունը որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ապահովելու բոլոր նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն:

Մարդու իրավունքների և ազատությունների ամենահուսալի և արդյունավետ պաշտպանության մեխանիզմը դատական պաշտպանությունն է: Պաշտպանության այս միջոցը պետք է արդյունավետ լինի գործնականում, այսինքն՝ այն պետք է կարողանա կանխել ենթադրյալ խախտման շարունակումը և երաշխավորել, որ դատական պաշտպանության դիմելով՝ անձը չի հայտնվի առավել անբարենպաստ վիճակում, քան մինչ այդ էր: Հետևաբար դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է անձին իրավաբանական օգնություն ցուցաբերող ներկայացուցչին վճարված գումարի՝ որպես դատական ծախսի համարժեք փոխհատուցման հնարավորություն: Պատշաճ փոխհատուցում տրամադրելը դատական պաշտպանության արդյունավետության անհրաժեշտ տարր է, որը լրացուցիչ երաշխիք է հանդիսանում անձանց իրավունքների խախտումները վերացնելու, ընդհուպ մինչև խախտումը եղած դրությունը վերականգնելու համար:

Վճարելի դատարանի գնահատմամբ անձի դատական պաշտպանությունը չի կարող արդյունավետ լինել, երբ վերջինս վերջնական բարենպաստ դատական ակտին հասնելու համար կրում է ավելի շատ ծախսեր, քան այն գույքի հնարավոր կորուստն էր, որի կանխման համար նա դիմել էր դատական պաշտպանության: Ուստի հատկապես վարչական մարմինների ոչ իրավաչափ վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության դատական բողոքարկման հայցերով կայացված դատական ակտերով դատական ծախսերի բաշխումը պետք է կատարվի այն հաշվառմամբ, որ անձինք չզրկվեն որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու, մինչև խախտումը եղած իրադրությունը վերականգնելու իրական հնարավորությունից:

Եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված «դատարանի իրավունքը» բացարձակ չէ և իր բնույթով պահանջում է ներպետական կարգավորումների առկայություն, որոնք կարող են որոշակի սահմանափակումների ենթարկել այդ իրավունքը (*յրեն, Z and Others v. the United Kingdom գործով Եվրոպական դատարանի 10.05.2001 թվականի վճիռը, 91-93-րդ կետեր*): Այս առումով դատական ծախսերի վճարման պարտականությունն ինքնին չի կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիության իրավունքի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ անհամատեղելի սահմանափակում (*յրեն, Kreuz v. Poland գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 60-րդ կետ*): Եվրոպական դատարանի տեսանկյունից որոշ դեպքերում դատական ծախսերի բաշխման հետ կապված հարցերը կարող են նշանակություն ունենալ այն հանգամանքի գնահատման համար, թե դատավարությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է արդյոք Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին, թե՛ ոչ (*յրեն, Stankiewicz v. Poland գործով Եվրոպական դատարանի 06.04.2006 թվականի վճիռը, 60-րդ կետ*): Կոնվենցիան երաշխավորում է ոչ թե տեսական կամ վերացական, այլ գործնական և արդյունավետ իրավունքներ (*յրեն, Ait-Mouhoub v. France գործով Եվրոպական դատարանի 28.10.1998 թվականի վճիռը, 52-րդ կետ*): Հետևաբար, դատական այն ծախսերը, որոնց վճարման պարտականությունն անձը կրում է ոչ թե դատարանի դիմելիս, այլ դատական քննության ավարտից հետո, գործնականում նույնպես կարող են դիտարկվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համատեքստում՝ որպես «դատարանի իրավունքի» սահմանափակում (*յրեն, Stankov v. Bulgaria գործով Եվրոպական դատարանի 12.07.2007 թվականի վճիռը, 54-րդ կետ*): Ընդ որում, «դատարանի իրավունքի» այդ սահմանափակման համապատասխանությունը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին ենթակա է գնահատման այն տեսանկյունից, թե արդյոք այն հետապնդում է իրավաչափ նպատակ, և առկա է արդյոք ողջամիտ հավասարակշռություն կիրառվող միջոցների և

հետապնդվող նպատակի միջև (*լրեն, Apostol v. Georgia գործով Եվրոպական դատարանի 28.11.2006 թվականի վճիռը, 57-րդ կետը*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները դատական ծախսերի մաս են կազմում և ենթակա են հատուցման օրենքով սահմանված կարգով: Դատական ծախսերի, այդ թվում նաև՝ ներկայացուցիչներին վճարված գումարների հատուցման ընդհանուր կանոնն այն է, որ փոխհատուցման ենթակա է դատավարության մասնակցի կրած ծախսերի այն ծավալը, որն անհրաժեշտ է եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Ընդ որում, դատական ներկայացուցիչների վճարների հատուցման հետ կապված օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 10-րդ մասում կատարել է հատուկ վերապահում այն մասին, որ ներկայացուցիչների վճարների գծով դատական ծախսի հատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափերը: Այսինքն՝ ամեն դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել փաստաբանի վարձատրության ողջամտությունը, որպեսզի հնարավորինս բացառվի դատական ծախսի հատուցման պարտականություն կրող սուբյեկտին չարդարացված, ակնհայտ ոչ համաչափ պարտավորություններով ծանրաբեռնելը: Անձինք ազատ են կնքելու իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր իրենց նախընտրած փաստաբանի կամ ներկայացուցչություն իրականացնելու իրավասություն ունեցող ցանկացած անձի հետ՝ վճարելով փոխադարձ համաձայնությամբ որոշված ցանկացած գումար: Այդուհանդերձ, այդ գումարների փոխհատուցման ակնկալիք նրանք կարող են ունենալ միայն ծախսերի այն ծավալով, որն իրապես անհրաժեշտ է եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ պետք է հաշվի առնվի նաև դատական ծախսերի փոխհատուցման համաչափությունը, որպեսզի դատական պաշտպանության դիմելը չդառնա ոչ արդյունավետ:

Վճռաբեկ դատարանը նախկինում անդրադարձել է փաստաբանի վարձատրության խելամտության հարցին՝ նշելով, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև փաստաբանի խելամիտ վարձատրությունը: Ուստի փաստաբանի խելամիտ վարձատրությունը նախևառաջ պետք է դիտել որպես դատական ծախս, և թե՛ հայցվորը, և թե՛ պատասխանողը դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույց: Ընդ որում, անկախ վճարված գումարի բռնագանձման մասին պահանջի առկայությունից, վճարումը հավաստող ապացույց ներկայացնելը բավարար է փաստաբանի վարձատրությանը, որպես դատական ծախսի, վճռով անդրադառնալու համար (*լրեն, անհայր ձեռնարկագրեր Նարինե Ռոսպոմյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/1401/02/11 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ներկայացուցչի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափանիշները.

- 1) փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը),
- 2) գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը),
- 3) նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը,
- 4) դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (*լրեն, Ֆերդինանդ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Վերահաստատելով և զարգացնելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վկայակոչված որոշմամբ թվարկվածներից բացի, վարչական դատավարությունում ներկայացուցիչների վճարների չափի ողջամտության գնահատման կարևոր չափորոշիչներ են նաև դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար կատարված ծախսերի անհրաժեշտությունը, փոխհատուցման համարժեքությունն ու արդյունավետությունը: Դատական ծախսերի, այդ թվում նաև

փաստաբանի վճարների փոխհատուցման այս չափորոշիչներն անտեսելու պարագայում խոսք չի կարող լինել արդյունավետ դատական պաշտպանության մասին, քանի որ որոշ դեպքերում դատական պաշտպանության դիմած անձինք կհայտնվեն առավել անբարենպաստ վիճակում, քան մինչ այդ էր:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ վեճը սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքի համար օրենսդիրը սահմանել է դատական ծախսերի հատուցման որոշ առանձնահատկություններ: Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում և 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում սահմանված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի հատուցման պարտականությունն ամբողջությամբ կան մասնակիորեն կարող է դրվել պատասխանողի վրա:

Թեև օրենսդիրը սահմանել է դատարանի հայեցողական լիազորությունը՝ լուծելու վեճը սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի, այդ թվում նաև փաստաբանին վճարված գումարների հատուցման պարտականությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն պատասխանողի վրա դնելու հարցը, այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ լիազորությունը դատարանները պետք է իրացնեն մարդու՝ դատական պաշտպանության և արդար դատաբնության հիմնարար իրավունքների հաշվառմամբ՝ այնպես, որ չխաթարվի այդ իրավունքների բուն էությունը: Մասնավորապես, եթե վեճը սպառվել է վարչական մարմնի ակտիվ գործողությունների հետևանքով, օրինակ՝ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ժամանակ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վերացրել է վիճարկվող վարչական ակտը, ապա այդ պարագայում հայցվորի կրած դատական ծախսերի, այդ թվում նաև՝ ներկայացուցչին վճարված գումարների հատուցման պարտականությունը պետք է կրի պատասխանող կողմը, ինչն ապահովում է անձի դատական պաշտպանության և արդար դատաբնության հիմնարար իրավունքների արդյունավետ իրացումը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն բոլոր դեպքերում, երբ գործի վարույթը կարճվում է այն հիմքով, որ վեճն ըստ էության սպառվել է վարչական մարմնի ակտիվ գործողությունների հետևանքով, ապա հայցվորի կրած դատական ծախսերի, այդ թվում նաև՝ ներկայացուցչին վճարված գումարների հատուցման պարտականությունը պետք է դրվի պատասխանողի վրա:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ վեճն ըստ էության սպառվելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում վիճարկվող վարչական ակտով դրա հասցեատիրոջ վրա դրված գումարային պարտավորության չափը դատական ծախսերի բաշխման հարցի լուծման համար չպետք է դիտարկվի որպես միակ որոշիչ հանգամանք: Այլ կերպ՝ եթե վիճարկվող վարչական ակտով դրա հասցեատիրոջ վրա դրված գումարային պարտավորության չափն ավելի փոքր է, քան այդ վարչական ակտը դատական կարգով վիճարկելու համար իրավաբանական օգնություն ստանալու նպատակով անձի կատարած ծախսերը, ապա դատարանը դատական ծախսերի բաշխման հարցը պետք է լուծվի իրավունքների արդյունավետ պաշտպանության սկզբունքի լուսի ներքո՝ հաշվի առնելով խախտված իրավունքները վերականգնելուն ուղղված անձի կողմից փաստացի կատարված ծախսերի և դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ողջամիտ հարաբերակցությունը: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վեճն ըստ էության սպառվելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի հարցի լուծումը չպետք է պայմանավորել միայն վիճարկվող վարչական ակտով դրա հասցեատիրոջ վրա դրված գումարային պարտավորության չափով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցի լուծման համար դատարանը պետք է հաշվի առնի հետևյալ չափորոշիչները.

1) փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը),

2) գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը),



3) նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը,

4) ներկայացուցչին վճարված գումարի և վիճարկվող վարչական ակտով առաջադրված գումարի չափի հարաբերակցությունը,

5) անձի կողմից փաստացի կատարված ծախսերի այն ծավալը, որն անհրաժեշտ է եղել դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար,

6) վեճն ըստ էության սպառվելու իրադրության առաջացման հարցում վարչական մարմնի գործողությունների ազդեցությունը:

Ընդ որում վերջին չափորոշիչը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նշված հիմքով գործի վարույթը կարճելու պարագայում ստանում է առաջնային նշանակություն, քանի որ վեճն ըստ էության սպառելուն ուղղված վարչական մարմնի ակտիվ գործողությունները վկայում են այն իրողության մասին, որ անձի դատական պաշտպանության դիմելը եղել է արդարացված, ուստի դատական ծախսերի հատուցման մյուս չափորոշիչները ենթակա են գնահատման անձի կատարած ծախսերի արդյունավետության և համարժեքության հաշվառմամբ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հավելել է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտը բողոքարկվել է միայն դատական ծախսերի մասով, բողոք բերող անձը վերագրյալ պատճառաբանությունների հիմքով պետական տուրքի վճարման պարտականություն չի կրում: Ընդ որում, դատական պրակտիկան զարգացել է հենց նշված ուղղությամբ, որպիսի հանգամանքն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդի «ՀՀ-ում դատարանների կողմից պետական տուրքի գանձման դատական պրակտիկայի մասին» մասին 29.01.2013 թվականի թիվ 129 որոշման մեջ: Համաձայն նշված որոշման 10-րդ կետի՝ եթե բողոքարկվում է դատական ակտը միայն դատական ծախսերի մասով, ապա ներկայացված բողոքի համար պետական տուրք չի վճարվում (*տե՛ս, «Ռեքվիզիտ» ՄՊԸ-ն ընդդեմ «Սեզարոն» ՄՊԸ-ի թիվ ԵՇԴ/1017/02/14 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 11.03.2015 թվականի որոշումը*):

Թեև նշված իրավական դիրքորոշումներն արտահայտվել են քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործի շրջանակներում, սակայն Վճռաբեկ դատարանը գտել է, որ դրանք հավասարապես կիրառելի են նաև վարչական դատավարության կարգով քննվող գործերի նկատմամբ, քանի որ թե՛ քաղաքացիական, թե՛ վարչական գործով կայացված վերջնական դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելիս անձը հայցում է այնպիսի դատավարական հետևանքների առաջացում, որոնք անմիջականորեն պայմանավորված չեն ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետ և ուղղված են վարույթի կանոնավոր ընթացքի ապահովմանը: Այս պարագայում անձի բողոքարկման իրավունքի իրացումն ուղղված է ոչ թե գործի ըստ էության լուծման իրավաչափության, այլ դրա արդյունքում դատական ծախսերի բաշխման իրավաչափության հարցի պարզմանը: Հետևաբար վերջնական դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու դեպքում, անկախ այն հանգամանքից, թե տվյալ դատական ակտը կայացվել է քաղաքացիական, թե վարչական գործի շրջանակներում, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության, բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը:

**20.07.2017թ.**

**58. Անի Դավթյան v. ՀՀ ոստիկանության «ձանապարհային ոստիկանություն» ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԳ/6377/05/15**

**Էջ  
673-682**

*Խնդիր.* Վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով հայցապահանջը բավարարվելու դեպքում հայցվորի կրած դատական ծախսերի, մասնավորապես՝ ներկայացուցչին վճարված գումարի հատուցման պարտականությունը պատասխանողի վրա դնելիս ի՞նչ չափանիշներով պետք է որոշվի այդ դատական ծախսի հատուցման ողջամիտ չափը:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վերահաստատելով Լիլիթ Մուսեյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4084/05/15 վարչական գործով 07.04.2017 թվականի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը

րանը գտել է, որ ներկայացված վիճարկման հայցի բավարարման դեպքում վիճարկվող վարչական ակտով դրա հասցեատիրոջ վրա դրված գումարային պարտավորության չափը դատական ծախսերի բաշխման հարցի լուծման համար չպետք է դիտարկվի որպես միակ որոշիչ հանգամանք: Այլ կերպ՝ եթե վիճարկվող վարչական ակտով դրա հասցեատիրոջ վրա դրված գումարային պարտավորության չափն ավելի փոքր է, քան այդ վարչական ակտը դատական կարգով վիճարկելու համար իրավաբանական օգնություն ստանալու նպատակով անձի կատարած ծախսերը, ապա դատարանը դատական ծախսերի բաշխման հարցը լուծելիս պետք է հաշվի առնի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ողջամիտ չափը: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վիճարկման հայցի բավարարման դեպքում դատական ծախսերի հարցի լուծումը չպետք է պայմանավորել միայն վիճարկվող վարչական ակտով դրա հասցեատիրոջ վրա դրված գումարային պարտավորության չափով:

Անփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ վիճարկման հայցի բավարարման դեպքում դատական ծախսերի հատուցման հարցի լուծման համար դատարանը պետք է հաշվի առնի հետևյալ չափորոշիչները.

1) փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը),

2) գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը),

3) նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը,

4) ներկայացուցչին վճարված գումարի և վիճարկվող վարչական ակտով առաջադրված գումարի չափի հարաբերակցությունը,

5) անձի կողմից փաստացի կատարված ծախսերի այն ծավալը, որն անհրաժեշտ է եղել դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար:

## ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

### ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

04.09.2017թ.

1. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ v. Ալբերտ Վիրաբյան, քաղ. գործ թիվ ԷԶ ԵՃ ԵՆՆԳ/0951/02/15 683-688

**Խնդիր.** Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացվող բողոքներով պետական տուրք գանձելու խնդրին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 68-րդ հոդվածները, 70-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում արձանագրել է, որ պետական տուրքի հաշվարկման հիմքն այն գույքային կամ ոչ գույքային պահանջն է, որով անձը դիմել է դատարան՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով՝ արդյունքում ակնկալելով ներկայացված պահանջի ըստ էության քննություն և լուծում: Այսինքն՝ գործող իրավակարգավորման պայմաններում պետական տուրքի գանձում իրականացվում է ոչ թե դատարանի ցանկացած գործողության, այլ այն գործողությունների համար, որոնց արդյունքում վերջնական դատական ակտի կայացմամբ քննարկվում և լուծվում է ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջը: Հետևաբար այն դեպքում, երբ դատարան դիմած անձը հայցում է դատարանի որևէ գործողության իրականացում, որն անմիջականորեն պայմանավորված չէ ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետ, այլ ուղղված է վարույթի կանոնավոր ընթացքն ապահովելուն, թեկուզև այդ գործողության հայցումն իրականացվում է բողոքարկման ընթացակարգի միջոցով, այնուամենայնիվ, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության, բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն պարագայում, երբ անձի բողոքարկման իրավունքի իրացումն ուղղված չէ ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի քննությանը և լուծմանը, ընդհակառակը՝ շահագրգիռ անձը տվյալ դեպքում վիճարկում է միջանկյալ դատական ակտի իրավաչափության հարցը, հետևաբար բողոք բերող անձը վերոգրյալ պատճառաբանությունների հիմքով պետական տուրքի վճարման պարտականություն չի կրում:

### ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

13.03.2017թ.

2. Անդրանիկ Բեգլարյան v. Սուրեն Վերդիյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԷԶ ԵՃ ԵՆՆԳ/1684/02/15 689-700

**Խնդիր.** Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն իրավական հարցադրմանը, թե արդյոք ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը տվյալ գործի շրջանակներում կարող է ներկայացնել հակընդդեմ հայց:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին կետը, 34-րդ, 96-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի կարգավիճակով պայմանավորված՝ վերջինս դատավարության ընթացքում օժտված է այնպիսի իրավունքներով, որոնք ուղղակիորեն չեն ազդում գործի քննության ծավալի վրա: Մասնավորապես՝ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձը չի կարող փոխել հայցի հիմքը կամ առարկան, ավելացնել կամ նվազեցնել հայցային պահանջների չափը և այլն: Օրենսդրի նման մոտեցումը պայմա-

նավորված է այն հանգամանքով, որ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի իրավունքներով ու պարտականություններն անմիջականորեն չեն քննվում տվյալ գործի շրջանակներում, այլ տվյալ գործով վերջնական ակտը հետագայում կարող է ազդել երրորդ անձի և կողմերից մեկի միջև առկա իրավունքների և պարտականությունների վրա: Նման առանձնահատկությամբ էլ պայմանավորվում է ինքնուրույն պահանջ ներկայացնող և չներկայացնող երրորդ անձանց տարբերությունը: Ինքնուրույն պահանջ ներկայացնող անձը դատավարությունում հանդես է գալիս՝ օժտված լինելով հայցվորի բոլոր իրավունքներով ու պարտականություններով՝ ներկայացնելով սեփական պահանջը վեճի առարկայի նկատմամբ: Ընդ որում, վերջինիս ներկայացրած ինքնուրույն պահանջը հակադրվում է ինչպես հայցվորին, այնպես էլ պատասխանողին, այլ կերպ ասած՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձը ներկայացնում է սեփական հավակնությունները: Վերջինս դատավարությանը ներգրավվում է միայն սեփական նախաձեռնությամբ՝ ներկայացնելով ինքնուրույն պահանջ: Տվյալ դեպքում դատարանը, փաստորեն, քննում է երկու գործ՝ հայցվորի ներկայացրած պահանջը և երրորդ անձի ներկայացրած ինքնուրույն պահանջը:

Ի տարբերություն ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձի՝ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը դատավարության ընթացքում հանդես է գալիս հայցվորի կամ պատասխանողի կողմում (կախված նրանից, թե ում հետ ունեցած իրավունքների կամ պարտականություններին է առնչվելու վերջնական դատական ակտը), դատավարությանը որպես կանոն ներգրավվում է դատարանի նախաձեռնությամբ կամ կողմերի միջնորդությամբ՝ անկախ իր կամքից: Ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը որևէ պահանջ դատարանին և կողմերին չի ներկայացնում:

Ելնելով վերոնշյալ տրամաբանությունից՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը գործի քննության ընթացքում որևէ նյութաիրավական պահանջ՝ կապված վեճի առարկայի հետ, ներկայացնել չի կարող: Դա վերաբերում է նաև հակընդդեմ հայցին, քանի որ հակընդդեմ հայցը հայցվորին ուղղված նյութաիրավական պահանջ է, որն ընդունվում է միայն օրենսդրի կողմից սահմանված հստակ դեպքերում, այն է՝ սկզբնական և հակընդդեմ պահանջների միջև հաշվանցի հնարավորություն, հակընդդեմ հայցով սկզբնական հայցի լրիվ կամ մասնակի բացառում, երկու հայցապահանջների միջև փոխադարձ կապ: Հակընդդեմ հայցը հարուցվում է պատասխանողի կողմից, այսինքն՝ այն անձի, ում դեմ ի սկզբանե հայցվորը պահանջ է ներկայացրել: Հակընդդեմ հայցը սկզբնական հայցի դեմ պատասխանողի շահերի պաշտպանության դատավարական միջոց է, այն նաև լրիվ ինքնուրույն հայց է, որը կարող էր ներկայացվել նաև առանձին: Հետևաբար, հակընդդեմ հայցը պատասխանողի կողմից հայցվորին ուղղված ինքնուրույն պահանջ է, որը դատարանը քննում է և վերջինիս կապակցությամբ իր եզրահանգումն արտահայտում է վերջնական դատական ակտում, ուստի ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը հակընդդեմ հայց ներկայացնել չի կարող:

07.06.2017թ.

3. Արսեն Բաբայան v. Արմինե Բաբայան, քաղ. գործ թիվ ԵԱԲԳ/0229/02/16

Էջ 701-711

**Խնդիր.** Ենթակամ է արդյոք դատական պաշտպանության «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 25.10.1980 թվականի Հաագայի կոնվենցիայով նախատեսված՝ երեխային իրեն վերադարձնելու ծնողի իրավունքը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին և 63-րդ հոդվածի 1-ին մասերը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետը, 3-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 1-ին կետը և 91-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորվում է յուրաքանչյուրի դատական պաշտպանության իրավունքը, երբ որոշվում են նրա «քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները»: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանը դեռևս 1971 թվականին նշել է, որ խնդրո առարկա հասկացությունը ներառում է բոլոր ընթացակարգերը, որոնց արդյունքը վճռորոշ է մասնավոր իրավունքների և պարտականությունների համար (*յուև. Ringelsen v. Austria գործով Եվրոպական դատարանի 16.07.1971 թվականի վճիռը, կետ 94*): Ինչ վերաբերում է

ծնողի՝ երեխային վերադարձնելու իրավունքին, ապա Եվրոպական դատարանը հստակ նշել է, որ այդ իրավունքը ենթակա է պաշտպանության նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում (*յրեն, H.N. v. Poland գործով Եվրոպական դատարանի 13.09.2005 թվականի վճիռը, կետ 94*):

Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, ու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, որը ենթակա է իրականացման նաև հայց հարուցելով, քաղաքացիական գործերի ենթակայությանը համապատասխան իրականացնում է դատարանը: Այսինքն՝ դատական ենթակայության առկայության դեպքում համապատասխան քաղաքացիական գործերի քննությունը և լուծումը քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ հանձնված է դատական մարմինների իրավասությանը: Այլ կերպ ասած՝ ենթակայության ինստիտուտի էությունը կայանում է նրանում, որ այն բացառում է գործը լուծելու համար այլ մարմին դիմելու հնարավորությունը: Միաժամանակ բոլոր այն դեպքերում, երբ մինչև դատարան դիմելն օրենքով սահմանված կարգով առկա է գործն այլ մարմինների քննելու իրավասություն, ապա տվյալ գործը ենթակա չէ դատարանում քննության, իսկ դատարան դիմող անձը հայց հարուցելու իրավունք չունի: Ըստ այդմ էլ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում վեճը դատարանին ենթակա լինելու հարցը պարզելիս դատարաններն առաջին հերթին պետք է ելնեն վիճելի իրավահարաբերության բնույթից, որից հետո հաշվի առնեն տվյալ վեճը կարգավորող նյութական իրավունքի նորմերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև հայցային վարույթի գործերը հարուցվում են դատարան հայցադիմում ներկայացնելու միջոցով և հայց ներկայացնելը հանդիսանում է գործի հարուցման նախապայման, այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ առկա չեն հայց հարուցելու իրավունքի նախադրյալները, որոնցից է նաև հայցը դատարանին ենթակա լինելու նախապայմանը, այդպիսի պարագայում բացակայում է հայցվորի՝ հայց հարուցելու իրավունքը, հետևաբար և դատավորը կայացնում է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 2-րդ, 3-րդ, 7-րդ, 57-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է նաև, որ ընտանիքի անդամների՝ ամուսինների, ծնողների, զավակների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները կարգավորում են ընտանեկան օրենսդրությամբ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ ընտանեկան օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև իրավական այլ ակտերով, իսկ եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ընտանեկան օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը: Ընդ որում, ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է դատական կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դրա իրականացումը ՀՀ ընտանեկան օրենսգրքով վերապահված է համապատասխան պետական մարմիններին կամ խնամակալության և հոգաբարձության մարմիններին: Տվյալ դեպքում ՀՀ ընտանեկան օրենսգրքով նախատեսվել է, որ եթե երեխային առանց օրինական հիմքի կամ առանց դատարանի որոշման իր մոտ պահող անձը իրաժարվում է երեխային վերադարձնելու մասին ծնողի պահանջը կատարելուց, ապա իր ծնողական իրավունքները պաշտպանելու համար վերջինս կարող է դիմել դատարան:

Հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան հարաբերությունները կարգավորվում են նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ավելի՛ն օրենսդիրը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված նորմերին ընտանեկան օրենսդրությամբ նախատեսված այլ իրավական ակտերի սահմանված նորմերի համեմատ տվել է նախապատվություն՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ անհրաժեշտ է համապատասխան վերլուծության ենթարկել վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նաև տվյալ միջազգային պայմանագրի՝ «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումներ

մասին» Հաագայի կոնվենցիայի (այսուհետ՝ Հաագայի կոնվենցիա) համապատասխան նորմերը:

Վերոգրյալ եզրահանգումը բխում է նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից: Մասնավորապես՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի լույսի ներքո անդրադառնալով ծնողի՝ իր երեխայի հետ վերամիավորվելու իրավունքին՝ Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Կոնվենցիան պետք է կիրառվի միջազգային իրավունքի նորմերին, մասնավորապես՝ մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանությանը վերաբերող նորմերին համապատասխան: Անդամ պետությունների վրա Կոնվենցիայի 8-րդ հոդվածով դրվող՝ ծնողներին իրենց երեխաների հետ վերամիավորելու պոզիտիվ պարտականությունը պետք է մեկնաբանվի Հաագայի կոնվենցիայի լույսի ներքո (*լրեն, Iglesias Gil and A.U.I. v. Spain գործով Եվրոպական դատարանի 29.04.2003 թվականի վճիռը, 51-րդ կետ*):

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի Վիեննայի կոնվենցիայի դրույթներին համապատասխան մեկնաբանելով Հաագայի կոնվենցիան՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հաագայի կոնվենցիայի նպատակներն են.

- 1) ապահովել որևէ Պայմանավորվող պետություն անօրինականորեն տեղափոխված կամ այնտեղ պահվող երեխաների անհապաղ վերադարձը, և
- 2) երաշխավորել մի Պայմանավորվող պետության օրենսդրությամբ նախատեսված՝ խնամակալության և տեսակցության իրավունքների արդյունավետ հարգումն այլ Պայմանավորվող պետություններում:

Այս նպատակների իրականացման համար Պայմանավորվող պետություններն անհապաղ պետք է ձեռնարկեն բոլոր համապատասխան միջոցները: Երեխաները, ովքեր անօրինական կերպով տեղափոխվել կամ պահվում են որևէ Պայմանավորվող պետության տարածքում, գրկված են իրենց խնամքն իրականացնելու իրավունք ունեցող անձի հետ կայուն հարաբերություններ պահպանելու հնարավորությունից, և հենց այդ հարաբերություններն անհապաղ վերականգնելուն է ուղղված Հաագայի կոնվենցիայի նպատակների իրագործումը: Թեև այս կոնվենցիան օգտագործում է «առևանգում» եզրույթը, այնուամենայնիվ, այն չպետք է ընկալվի քրեաիրավական իմաստով, քանի որ Հաագայի կոնվենցիան վերաբերում է երեխայի միջազգային առևանգման միայն քաղաքացիական ձևերին և դրանում օգտագործվող հասկացություններն ունեն ինքնուրույն իմաստ:

Մասնավորապես՝ Հաագայի կոնվենցիայի նպատակների լույսի ներքո դրա 3-րդ և 12-րդ հոդվածների վերլուծությունից բխում է, որ «առևանգում» հասկացությունն այդ կոնվենցիայի իմաստով ընդգրկում է երեխային մի Պայմանավորվող պետությունից մյուս Պայմանավորվող պետություն անօրինական տեղափոխելու կամ պահելու դեպքերը: Իսկ այդ կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի տեղափոխումը կամ պահելն անօրինական է այն դեպքում, երբ՝

- 1) դրանով խախտվում են խնամակալության իրավունքները, որոնք միասնական կամ անհատական կերպով շնորհված են որևէ անձի, հաստատության կամ այլ մարմնի՝ այն պետության օրենսդրության համաձայն, որտեղ երեխան սովորաբար բնակվել է տեղափոխվելուց կամ պահվելուց անմիջապես առաջ, և
- 2) տեղափոխման կամ պահելու պահին միասնական կամ անհատական կերպով այդ իրավունքներն արդյունավետորեն իրականացվել են կամ կիրականացվեին, եթե չլիներ տեղափոխումը կամ պահելը:

Բացի այդ, Հաագայի կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այդ կոնվենցիայի պաշտպանության ներքո են գտնվում երեխայի նկատմամբ խնամակալության և տեսակցության իրավունքները: Ըստ այդմ՝ «խնամակալության իրավունքները» ներառում են երեխայի անձի նկատմամբ խնամք տանելուն և, մասնավորապես, երեխայի բնակության վայրը որոշելուն վերաբերող իրավունքները, իսկ «տեսակցության իրավունքները» ներառում են երեխային սահմանափակ ժամանակով իր մշտական բնակության վայրից մեկ այլ վայր տանելու իրավունքը: Միևնույն ժամանակ, Հաագայի կոնվենցիան կիրառվում է միայն 16 տարին չլրացած երեխաների նկատմամբ, և դրա կիրառումը դադարեցվում է երեխայի 16 տարին լրանալու դեպքում:

Հաագայի կոնվենցիայի մեջբերված հոդվածների վերլուծությունից հետևում է նաև, որ այդ կոնվենցիայի իմաստով երեխաների անօրինական տեղափոխման և պահման

հետ կապված հարցերով զբաղվելու համար Հաագայի կոնվենցիան որպես իրավասու մարմիններ է նախատեսել Կենտրոնական մարմին, դատարանին և վարչական մարմին՝ նրանցից յուրաքանչյուրին օժտելով համապատասխան իրավունքներով և պարտականություններով:

Այսպես՝ Հաագայի կոնվենցիայում ամրագրված նպատակներն իրագործելու համար Պայմանավորվող պետությունները պետք է նշանակեն Կենտրոնական մարմին՝ նրա վրա դնելով նույն կոնվենցիայով նախատեսված պարտականությունները: Այդ պարտականություններն, ի թիվս այլնի, ընդգրկում են **համագործակցությունն այլ Պայմանավորվող պետությունների** Կենտրոնական մարմինների հետ, օժանդակումը Պետությունների իրավասու մարմինների միջև համագործակցությանը՝ երեխաների անհապաղ վերադարձն ապահովելու և Հաագայի կոնվենցիայի այլ նպատակներին հասնելու համար, դատական կամ վարչական ընթացակարգերի նախաձեռնումը, այդ ընթացակարգերին նպաստումը և այլն:

Այսինքն՝ նույն կոնվենցիայի իմաստով ապօրինի տեղափոխված կամ պահվող երեխաների անհապաղ վերադարձն ապահովելու հարցում Կենտրոնական մարմին դերը երեխային վերադարձնելու մասին որոշում կայացնելը չէ, այլ այդ որոշումը կայացնելու իրավասություն ունեցող մարմինների ուշադրությունը հրավիրելը և ապօրինի տեղափոխված կամ պահվող երեխայի անհապաղ վերադարձման օժանդակելն է, որը, մասնավորապես, կարող է իրագործվել դատական կամ վարչական ընթացակարգեր նախաձեռնելու և, ըստ անհրաժեշտության, դրանց օժանդակելու միջոցով: Ընդ որում, մասն ընթացակարգերի նախաձեռնումը չի հանդիսանում միայն Կենտրոնական մարմնի իրավասությունը, քանի որ Հաագայի կոնվենցիան անձին ևս իրավունք է վերապահել համապատասխան հիմքերի առկայության պայմաններում անմիջականորեն դիմել Պայմանավորվող պետության դատական կամ վարչական մարմիններին:

Միաժամանակ նույն կոնվենցիայի համակարգային վերլուծությունից բխում է, որ բացառապես միայն դատական և վարչական մարմիններին է վերապահված երեխայի վերադարձի մասին կարգադրություն անելու, վերադարձը բացառող հանգամանքները պարզելու, դրա վերաբերյալ դիմումը մերժելու իրավասությունը: Միաժամանակ նրանց վրա է դրվել երեխաներին վերադարձնելու համար ընթացակարգերում անհապաղ գործելու պարտականություն: Ինչ վերաբերում է Հաագայի կոնվենցիայում նշված «վարչական մարմիններին» ապա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դրանք վերաբերում են հիշյալ կոնվենցիային անդամ այն պետություններին, որոնք դրանով ստանձնած պարտավորությունների կատարումը վերապահել են որևէ վարչական մարմնի, որը չի կարող համընկնել Կենտրոնական մարմնի հետ, քանի որ Հաագայի կոնվենցիան հստակ տարանջատում է Կենտրոնական մարմնի լիազորությունները վարչական կամ դատական մարմինների լիազորություններից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունը, որպես Հաագայի կոնվենցիայի իմաստով Պայմանավորվող կողմ, ի դեմս ՀՀ կառավարության՝ միայն 20.08.2009 թվականին կայացրել է թիվ 952-Ն որոշումը, որի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված կենտրոնական մարմին է նշանակել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը:

Վճռաբեկ դատարանի կատարած վերլուծությունից բխում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը տարածվում է նաև ծնողի՝ իր երեխայի հետ վերամիավորվելու իրավունքի վերաբերյալ վեճերի վրա, ինչը ևս նշանակում է, որ այդպիսի վեճերի առկայության դեպքում անձը պետք է ունենա արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Իսկ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «այն դեպքերում, երբ դատարաններից տարբերվող մարմիններ են լուծում այնպիսի վեճեր, որոնց նկատմամբ կիրառելի է [Կոնվենցիայի] 6-րդ հոդվածը, Կոնվենցիան պահանջում է հետևյալ համակարգերից առնվազն մեկի առկայությունը, համապատասխան իրավասություն ունեցող մարմինները կամ իրենք են բավարարում 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները կամ այնքան էլ չեն բավարարում դրանք, սակայն ենթակա են այնպիսի դատական մարմնի կողմից լրացուցիչ հսկողության, որն ունի լիարժեք իրավասություն և ապահովում է 6-րդ հոդվածի 1-ին կետի երաշխիքները» (յուև, Սադաթեյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 20.10.2015 թվականի վճիռը, 39-րդ կետ): Հետևարար հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված չէ այնպիսի վարչական մարմին, որն ունի խնդրո առարկա վեճը լուծելու իրավասություն և բավարարում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետից բխող անկախության ու անկողմնակալության

պահանջները՝ խնդրո առարկա վեճը ենթակա է դատարանում քննության՝ շահագրգիռ անձի կողմից անմիջականորեն ներկայացվող դիմումի հիման վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը Հաագայի կոնվենցիայի շրջանակներում նախատեսված իրավական կառուցակարգերի միջոցով իրականացնելու համար դատարանը պետք է պարզի այդ կոնվենցիայից բխող նաև հետևյալ հանգամանքները.

1) արդյո՞ք խնդրո առարկա դեպքը գտնվում է Հաագայի կոնվենցիայի գործողության ոլորտում՝ դեպքը վերաբերում է մինչև 16 տարեկան երեխայի նկատմամբ Հաագայի կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով «խնամակալության իրավունքներին» կամ «տեսակցության իրավունքներին»,

2) արդյո՞ք երեխան տեղափոխվել կամ պահվում է Հայաստանի Հանրապետության տարածքում,

3) արդյո՞ք երեխային տեղափոխելը կամ պահելը այդ կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով անօրինական է:

Վերոգրյալի հիման վրա, եթե դատարանը գալիս է եզրահանգման, որ երեխայի տեղափոխումը կամ պահելն անօրինական է, ապա կոնվենցիայի 12-րդ հոդվածի ուժով պարտավոր է կարգադրություն անել երեխային անհապաղ վերադարձնելու մասին: Մինևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ երեխային վերադարձնելու պարտականությունը բացարձակ չէ և ոչ բոլոր դեպքերում է, երբ Հաագայի կոնվենցիայի իմաստով երեխային անօրինական տեղափոխելու կամ պահելու վերաբերյալ հետևություն անելուց հետո, դատարանը պարտավոր է երեխային վերադարձնելու մասին կարգադրություն անել: Մասնավորապես՝ այդ պարտականությունը ենթակա է ժամկետային սահմանափակումների՝ նախատեսված Հաագայի կոնվենցիայի 4-րդ, 12-րդ և 35-րդ հոդվածներով, ինչպես նաև բովանդակային սահմանափակումների՝ նախատեսված նույն կոնվենցիայի 13-րդ և 20-րդ հոդվածներով:

**23.08.2017թ.**

**4. «Անելիք բանկ» ՓԲԸ v. Վերծին Սահակյանի, քաղ. գործ թիվ ԵՆԴ/3578/02/16**

Էջ  
712-717

*Խնդիր.* Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքում հայցադիմումի ընդունումը մերժելու հարցին:

*Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.* Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետը, 91-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, երաշխավորելով յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքը, միաժամանակ սպառիչ կերպով ամրագրել է հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, որոնք ենթակա չեն փոփոխման: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայցի ներկայացումը դատարան և դրա հիման վրա քաղաքացիական գործի հարուցումը, առաջ են բերում որոշակի իրավական հետևանքներ: Մասնավորապես, հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու պահից է սկսվում հարուցված քաղաքացիական գործի ընթացքը, իսկ դատական պաշտպանություն հայցած անձն իր հերթին ակնկալում է համապատասխան քաղաքացիադատավարական իրավահարաբերությունների առաջացում, այն է՝ ն՝ դատարանի, ն՝ գործին մասնակցող անձանց մոտ առաջ են գալիս որոշակի դատավարական իրավունքներ և պարտականություններ, որոնց իրականացումը տեղի է ունենում գործի քննության ընթացքում: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ դատարանի կողմից որոշում է կայացվում հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, դատարան դիմած անձի դատական պաշտպանության իրավունքը չի իրացվում՝ դրանից բխող իրավական հետևանքներով: Ընդ որում, եթե հայցադիմումի ընդունումը մերժվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի հիմքով, ապա այդ դեպքում պետք է առկա լինի օրինական ուժի մեջ մտած վճռո նույն անձանց միջև, միևնույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքով գործի վարույթը կարճելու հիմքին, արձանագրել է, որ գործի վարույթը, ՀՀ քաղաքացիական դատավարության



օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, կարող է կարճվել միայն այն դեպքում, երբ նույնն են օրինական ուժի մեջ մտած վճռով լուծված և տվյալ քաղաքացիական գործերի

1. կողմերը, այսինքն՝ քաղաքացիական վարույթում հակադիր շահերով օժտված անձինք,

2. հայցի առարկան, այսինքն՝ հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը,

3. հայցի հիմքը, այսինքն՝ այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի:

Հետևաբար վերը նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում քաղաքացիական գործի վարույթը կարճվել չի կարող (*տես*, ՀՀ Սյունիքի մարզի Ներքին Հանդիսանալիքի ընդհանուր «Գ. Արշակյան» ՄՊԸ-ի թիվ ԵԿԴ/0407/02/11 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով հայցադիմումի ընդունումը մերժելու և գործի վարույթի կարճման վկայակոչված հիմքի նույնաբովանդակ լինելը, գտել է, որ Վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումը կիրառելի է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու վերաբերյալ որոշում կայացնելիս:

## ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

24.03.2017թ.

5. Դոնարա Գրիգորյան v. Երևանի քաղաքապետարան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2791/02/13

Էջ

718-724

**Խնդիր.** Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ հարցադրումներին.

1) վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը բողոք բերած անձին ուշ հասու լինելու դեպքում բողոք բերելու բաց թողած ժամկետը ենթակա է վերականգնման իրավունքի ուժով (*ex jure*), թե՛ վերաքննիչ դատարանի հայեցողությամբ.

2) արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավասու է վերադարձնել վերաքննիչ բողոքն այն պայմաններում, երբ որոշման եզրափակիչ մասում որևէ անդրադարձ չի կատարել վերաքննիչ բողոք բերած անձի՝ «Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու մասին» միջնորդությանը և որևէ եզրահանգում չի արել այն բավարարելու կամ մերժելու վերաբերյալ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին կետը, 77-րդ հոդվածի 1-ին կետը, 124-րդ հոդվածի 4-րդ պարբերությունը, 140-րդ հոդվածի 1-ին կետը, 207-րդ հոդվածի 1-ին կետը, 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը՝ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով դատարանի վճիռն օրենսդրությամբ սահմանված ժամկետում անձին չհանձնելու և բողոքարկման ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքներին, արձանագրել է, որ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ: Այդ ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման համար օրենքն ընդհանուր իրավասության դատարանին պարտավորեցնում է վճիռը հրապարակվելուց անմիջապես հետո դրա օրինակը հանձնել գործին մասնակցած անձանց, իսկ նրանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկել նրան: Միաժամանակ այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պարտավոր է իրականացնել՝ հաշվի առնելով նաև անձի՝ սահմանադրական նորմով երաշխավորված դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները (*տես*, «ՎՏԲ-Հայաստան քանկ» ՓԲԸ-ն ընդդեմ

*Դանիել Բարսեղյանի և այլոց թիվ ԱՐԱԳ/0716/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 21.12.2011 թվականի որոշումը):*

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ բողոքարկման իրավունքի իրացման ժամկետի բացթողումը պայմանավորված է ստորադաս դատարանի անգործությամբ, բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու հարցը քննարկելիս վերադաս դատարանը պետք է առաջնորդվի անձի՝ իր իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու և դրա մատչելիության սկզբունքներով:

Ընդ որում, այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր 09.02.2016 թվականի թիվ ՄԴՈ-1254 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրոեն պետք է սահմանվեն անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ դատական ակտը բողոք բերողի կողմից ամբողջությամբ ու ողջամիտ ժամկետում ստանալու և դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իր իրավունքն արդյունավետ իրացնելու համար: Վերը նշվածի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ չնայած այն հանգամանքին, որ դատական ակտերի բողոքարկման ժամկետը, որպես կանոն, հաշվարկվում է հրապարակման պահից, այնուամենայնիվ, անհրաժեշտ են օրենսդրական բավարար երաշխիքներ, որոնք կապահովեն անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը:

Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատել է 22.12.2015 թվականի թիվ ՄԴՈ-1249 որոշմամբ արտահայտված այն իրավական դիրքորոշումը, որ երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքարկողից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով (ex jure)՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև վերաքննության կարգով բողոքարկման իրավակարգավորումների նկատմամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ըստ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշման՝ բողոքարկման ժամկետը բաց թողնելու դեպքում բողոքաբերի կողմից ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն և համապատասխան ապացույցներ ներկայացնելը, իսկ վերադաս դատարանի կողմից նշված միջնորդության քննարկումը և ապացույցները գնահատելը, պարտադիր է: Այն դեպքում, երբ պատշաճ ապացուցված է բողոքարկվող դատական ակտը բողոք բերած անձի կողմից իր կամքից անկախ պատճառներով ուշ ստանալու հանգամանքը և բողոքը ներկայացվել է դատական ակտը ստանալու օրվանից հաշված օրենքով սահմանված ժամկետում, վերադաս դատարանը բացթողած ժամկետը պետք է վերականգնի իրավունքի ուժով (ex jure):

Երկրորդ հարցադրման կապակցությամբ վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 210-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը, 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը, նույն հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ բողոքի վերադարձման հիմք է նաև վերաքննիչ բողոքն օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո ներկայացված լինելը և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն չներկայացնելը, կամ այդ միջնորդությունը վերաքննիչ դատարանի կողմից մերժելը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքին կցված է կամ բողոքում ներառված է վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, ապա վերաքննիչ դատարանը **պարտավոր է անդրադառնալ այդ միջնորդությանը և դրա քննարկման արդյունքում որոշում կայացնելուց հետո միայն որոշել վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ վարույթ ընդունելու հարցը:**

17.05.2017թ.

**6. Լևոն Առաքելյան v. «Սիրաձոր» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ՍԳ-3/0419/02/15**

Էջ  
725-730

**Խնդիր.** Արդյո՞ք վերաքննիչ բողոքում ՀՀ օրենսդրությանը վերաքննիչ դատարանին վերապահված լիազորությունների համապատասխան ամբողջական պահանջ չներկայացնելը հիմք է վերաքննիչ բողոքը վերադարձնելու համար, եթե բողոք բերող անձը վերաքննիչ բողոքում նշել է միայն ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու պահանջը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերլուծելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետը, 219-րդ հոդվածի 1-ին կետը, 221-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությանը, արձանագրել է, որ նշված նորմը ոչ միայն նշանակում է, որ վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտելով ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հակառակ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը կկրի հոշակագրային բնույթ, եթե դատարանները սահմանափակվեն զուտ այդ դրույթին համահունչ վերաքննիչ բողոքի հիմքերը դատական ակտում շարադրելով և չանդրադառնան այդ հիմքերի հիմնավորվածության հարցին: Հետևաբար բողոքում բարձրացված հիմքերը պարտադիր քննության առարկա պետք է դառնան վերադաս դատական ատյանում, և դատարանի կայացրած որոշումը պետք է պարունակի այդ հիմքերի վերաբերյալ եզրահանգումներ (*յրե՛ս, Համայնակ Ոսկանյանն ընդդեմ Վոլոդյա Հակոբյանի թիվ ԵԷԿ/1643/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ և 221-րդ հոդվածների վերլուծությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածով թվարկված վերաքննիչ դատարանի լիազորությունների կիրառումը պետք է պայմանավորված լինի բացառապես վերաքննիչ բողոքում շարադրված հիմքերի և հիմնավորումների քննարկման և դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ կայացված եզրահանգումներով: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հավելել է, որ վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, կաշկանդված չէ բողոքում ներկայացված պահանջով և իր լիազորություններից օգտվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ըստ դատական պաշտպանության իրավունքի իրականացման, դատավարական նպատակահարմարության և արդարադատության արդյունավետության (*յրե՛ս, «ԱՐՄԵՆ-ՕՍՍ» ՍՊԸ-ն ընդդեմ «ՄԱՎԱ ԻՍՊՈՒԼՍ» ՍՊԸ-ի, երրորդ անձ Վարշամ Դարիբյանի թիվ ԵԱԳԴ/1617/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը*):

Վերահաստատելով և գարգացնելով վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը չի բացահայտել վերաքննիչ բողոքի պահանջի բովանդակությունը՝ դրա մեկնաբանությունը թողնելով իրավակիրառողի հայեցողությանը: Համակարգային վերլուծության ենթարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ և 221-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ, որպես կանոն, վերաքննիչ բողոքի պահանջը ենթադրում է հետևյալ երկու տարրերի միաժամանակյա առկայություն՝ ստորադաս դատարանի դատական ակտի լրիվ կամ մասնակի բեկանում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածով վերաքննիչ դատարանին վերապահված որևէ լիազորության հայցում: Ընդ որում, վերը նշված տարրերից առաջնայինը դատական ակտի լրիվ կամ մասնակի բեկանման պահանջն է, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածով վերաքննիչ դատարանին վերապահված այս կամ այն լիազորության հայցումը կրում է ֆակուլտատիվ բնույթ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը կաշկանդված է միայն վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքն-

նիչ բողոքին ներկայացվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված պայմանը պահպանված կարող է համարվել նաև այն դեպքում, երբ բողոքը բերող անձը միայն ներկայացնի ստորադաս դատարանի դատական ակտը լրիվ կամ մասնակիորեն բեկանելու պահանջ՝ առանց հայցելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածով սահմանված լիազորություններից որևէ մեկը: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ վերաքննիչ բողոքում «բեկանել» եզրույթի կիրառումն արդեն իսկ բավարար է հետևություն անելու այն մասին, որ բողոքաբերը համաձայն չէ ստորադաս դատարանի կողմից կայացված դատական ակտով լուծում ստացած քաղաքացիական գործի ելքի հետև և բողոքարկելով դատական ակտը վերադաս դատական ատյան՝ ակնկալում է բողոքարկվող դատական ակտի վերանայում: Միաժամանակ, ներկայացնելով վերաքննիչ բողոք և դրանում ներառելով այն նյութական և/կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումները, որոնք ըստ բողոքաբերի՝ ազդել են գործի ելքի վրա, բողոքաբերը, պահանջելով ուղղակի բեկանել ստորադաս դատարանի դատական ակտը, պահանջի իրավական հետևանքի կանխորոշումը թողնում է վերաքննիչ դատարանի հայեցողությանը: Վերաքննիչ դատարանն էլ, կաշկանդված լինելով բողոքի հիմքերով և հիմնավորումներով, քննության է առնում դրանից յուրաքանչյուրի հիմնավորվածության հարցը՝ համապատասխանաբար կիրառելով օրենսդրի կողմից իրեն վերապահված լիազորություններից որևէ մեկը: Հետևաբար բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածով սահմանված որևէ լիազորություն կիրառելու պահանջ չներկայացնելը որևէ կերպ չի կարող խոչընդոտել վերաքննության բնականոն ընթացքը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատական ակտի վերանայումը կոնկրետ պահանջի շրջանակներում իրականացնելու սահմանափակում գործող օրենսդրությամբ նախատեսված չէ:

## ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

31.07.2017թ.

7. Ժաննա Միրզոյան v. ՀՀ Կոտայքի մարզի Չորաղբյուր համայնքի ղեկավար,  
վարչ. գործ թիվ ՎԳ/0100/05/17

Էջ  
731-741

**Խնդիր.** Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վարչական ակտի վերաբերյալ տեղեկացված չլինելու հիմքով վիճարկման հայց ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու առանձնահատկություններին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, Հրաչյա Գրիգորյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և մյուսների թիվ ՎԳ/1963/05/14 վարչական գործով 24.12.2014 թվականի որոշմամբ քննարկելով վիճարկվող վարչական ակտի մասին հայցվորի տեղյակ լինելու փաստը հաստատված համարելու կամ չհամարելու հարցը, նշել է. «մեկ այլ գործով հայցադիմումի պայրասիանը, որում առկա է հիշարարկում թիվ ՎԳ/1963/05/14 վարչական գործով վիճարկվող վարչական ակտերի վերաբերյալ, 2013 թվականի ապրիլին փոստային կապի ծառայության միջոցով ուղարկվել է թիվ ՎԳ/1963/05/14 վարչական գործով հայցվորին: Հերևաբար թիվ ՎԳ/1963/05/14 վարչական գործով հայցվորը վիճարկվող վարչական ակտերի մասին մեկ այլ գործի քննության շրջանակներում կարող էր ողջամտորեն տեղյակ լինել դեռևս 2013 թվականի ապրիլ ամսից»: Փաստորեն, վկայակոչված որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վիճարկվող վարչական ակտի մասին հայցվորի տեղյակ լինելու փաստը կարող է հաստատված համարվել նաև այդ վարչական ակտի օրինակը մեկ այլ դատական գործի շրջանակներում հայցվորին ուղարկված լինելը հավաստող ապացույցով:

Հիմք ընդունելով իրավունքի զարգացման միջոցով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառնությունը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել զարգացնել վերոգրյալ իրավական դիրքորոշումները: Այսպես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն վիճարկվող վարչական ակտի օրինակը հայցվորին փոստային կապի ծառայության միջոցով ուղարկելու վերաբերյալ ապացույցը չի կարող բավարար լինել վիճարկման հայց ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդության մերժման կամ բավարարման հարցը լուծելիս հայցվորի կողմից վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացված լինելու փաստը հաստատելու համար: Նման դեպքերում վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացված լինելու փաստը հաստատելու համար անհրաժեշտ է նաև վիճարկվող վարչական ակտի օրինակը հայցվորի կողմից ստանալու կամ այն հայցվորին հասանելի դառնալու վերաբերյալ համապատասխան ապացույցի առկայություն: Այլ կերպ ասած, հայցվորի կողմից վիճարկվող վարչական ակտի մասին տեղյակ լինելու փաստը պետք է հաստատվի այնպիսի ապացույցների միջոցով, որոնք վկայում են վիճարկվող վարչական ակտի օրինակը հայցվորին ոչ միայն ուղարկված լինելու, այլ նաև որևէ ձևով հասանելի դառնալու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքի նման զարգացումը պայմանավորել է այն հանգամանքով, որ իրավակիրառ պրակտիկայում են դեպքեր, երբ անձի դատական պաշտպանության իրավունքը սահմանափակվում է միայն այն հիմքով, որ վիճարկվող վարչական ակտի օրինակն ուղարկվել է տվյալ անձին՝ առանց ձշտելու, թե արդյոք նա ստացել է այդ փաստաթուղթը, կամ արդյոք այն որևէ ձևով հասանելի է դարձել այդ անձին, թե՛ ոչ: Նկարագրված իրավիճակներում դատարանները, կիրառելով հայց ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետները բաց թողնելու վերաբերյալ կանոնները, ցուցաբերում են անձի արդար դատաքննության իրավունքը սահմանափակող ավելորդ ձևականություն (ֆորմալիզմ), որի արդյունքում խաթարվում է դատարանի մատչելիության իրավունքը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպա-

տակներին և անհիմն կերպով խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը:

24.02.2017թ.

8. Հարություն Մարության և այլոք v. ՀՀ կառավարություն, վարչ. գործ թիվ ՎԳ/6284/05/14

Էջ

742-752

**Խնդիր.** Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարան դիմելու ժամկետների հաշվարկման առանձնահատկություններին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել անձին վիճարկելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերը՝ միաժամանակ տարանջատելով այդպիսի հնարավորության ծագման համար հետևյալ հիմքերը.

վիճարկվող նորմատիվ իրավական ակտն անձի նկատմամբ կիրառվել է անհատական իրավական ակտով կամ ռեալ ակտով, ինչի արդյունքում խախտվել են վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իրավունքները,

նորմատիվ իրավական ակտն անձի նկատմամբ չի կիրառվել, սակայն դրանով կամ դրա դրույթով կարող են խախտվել վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իրավունքները:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ «անձի նկատմամբ նորմատիվ իրավական ակտի՝ անհատական իրավական ակտով կիրառում» և «նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ ընդունված անհատական իրավական ակտ» հասկացություններն առերևույթ նման լինելով հանդերձ ունեն բովանդակային տարբերություն:

Այսպես, առաջին իրավիճակն առկա է այն դեպքում, երբ նորմատիվ իրավական ակտի գործողությունն ապահովելու համար անհրաժեշտ է ընդունել որոշակի անհատական իրավական ակտ, այսինքն՝ անհատական իրավական ակտը տվյալ դեպքում հանդիսանում է նորմատիվ իրավական ակտի կիրառման ապահովման միջոցը: Այս դեպքում անձի իրավունքների խախտման պարագայում քննարկման առարկա է հանդիսանում նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը: Մինչդեռ երկրորդ դեպքում անհատական իրավական ակտն ընդունվում է որևէ հարց կարգավորելու նպատակով, որի համար կիրառվում է նորմատիվ իրավական ակտը: Այսինքն՝ այդ դեպքում անհատական իրավական ակտը չի հանդիսանում նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոց, այլ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ է պայմանավորվում այն հարցի լուծումը, որի համար ընդունվում է անհատական իրավական ակտը: Հետևաբար այս դեպքում անձի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված է ոչ թե կիրառված նորմատիվ իրավական ակտի, այլ նորմատիվ իրավական ակտի կիրառման իրավաչափությամբ:

Վերոգրյալի հիման վրա անդրադառնալով նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական ժամկետներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում անձը վարչական դատարան կարող է դիմել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) կիրառման վերաբերյալ անհատական իրավական ակտի ուժի մեջ մտնելու կամ դրա կիրառումը (կատարումը) ապահովված գործողության կամ անգործության օրվանից հետո՝ չորսամսյա ժամկետում, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում, այն է՝ երբ նորմատիվ իրավական ակտն անձի նկատմամբ չի կիրառվել, սակայն դրանով կամ դրա դրույթով կարող են խախտվել վերջինիս իրավունքները, վարչական դատարան դիմելու համար սահմանվել է չորսամսյա ժամկետ՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո:

Նշված համատեքստում անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրեն-

նագրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ դրանով սահմանված չորսամսյա ժամկետը վերաբերում է այն դեպքերին, երբ վիճարկվող նորմատիվ իրավական ակտն անձի նկատմամբ կիրառվել է անհատական իրավական ակտով կամ ռեալ ակտով, սակայն անձն օրենքով սահմանված կարգով չի իրագեկվել անհատական իրավական ակտի ընդունման կամ ուժի մեջ մտնելու մասին, կամ չի իմացել նորմատիվ իրավական ակտի կիրառումը (կատարումը) ապահոված գործողության կամ անգործության մասին: Այսպիսի դեպքերի համար վարչական դատարան դիմելու չորսամսյա ժամկետը սկսում է հոսել այն օրվանից հետո, երբ անձն իմացել է կամ պարտավոր էր իմանալ համապատասխան անհատական իրավական ակտի ընդունման կամ ուժի մեջ մտնելու կամ գործողություն կատարելու կամ անգործություն ցուցաբերելու մասին: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետները կիրառելի են այն դեպքերի համար, երբ վիճարկվող նորմատիվ իրավական ակտն անձի նկատմամբ կիրառվել է անհատական իրավական ակտի կամ նորմատիվ իրավական ակտի կիրառումը (կատարումը) ապահոված գործողության կամ անգործության միջոցով, սակայն վերջինս անհատական իրավական ակտի կամ գործողության կամ անգործության մասին չի իմացել կամ չի իրագեկվել:

27.01.2017թ.

9. Զարուհի Հովհաննիսյան և այլոք v. ՀՀ ոստիկանություն, վարչ. գործ թիվ ԷԶ ՎԳ/3043/05/14 753-759

**Խնդիր.** Իրավաչափ է արդյոք վերաքննիչ բողոքը վերադարձնելու դեպքում այն կրկին ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետը հաշվարկել ոչ թե բողոք բերած անձանց, այլ նրանց ներկայացուցչի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից այն պարագայում, երբ առկա չէ միայն ներկայացուցչին ծանուցելու վերաբերյալ միջնորդություն:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*լրեն, նաև «Ֆասթ Սիվլայ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ3/0347/05/13 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը*):

Եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*լրեն, օրինակ, Khalifaoui v. France գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 35-36-րդ կետեր, Papon v. France գործով Եվրոպական դատարանի 25.07.2002 թվականի վճիռը, 90-րդ կետ*):

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույն-

պեն հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*յրևն, Stubbings and others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետեր 51, 55*):

Ավելին, Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է դիրքորոշում այն մասին, որ եթե ներպետական օրենսդրությամբ հստակ սահմանված է դատական որոշումը ծանուցելու՝ իրավասու մարմինների պարտականությունը, ապա դիմողի գանգատարկման իրավունքը չի կարող մերժվել, եթե ուշացումների պատճառն իշխանությունների պարտականությունների կատարումն է եղել, նույնիսկ եթե տեսակա-նորեն դիմողն ունեցել է դատարանի որոշման մասին այլ աղբյուրներից տեղեկանալու հնարավորություն (*յրևն, Davran v. Turkey գործով Եվրոպական դատարանի 03.11.2009 թվականի վճիռը, կետեր 31-47*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը հստակ նախատեսել է այն դատավարական ժամկետը, որի ընթացքում վերաքննիչ բողոք բերած անձը կարող է վերացնել վերաքննիչ բողոքը վերադարձնելու որոշման մեջ նշված թերությունները և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնել վերաքննիչ դատարան. այդ ժամկետը գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի դեպքում տասնհինգ օր է, որը հաշվարկվում է վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոք բերած անձի կողմից ստանալու պահից: Մյուս կողմից օրենսդիրը սահմանել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոք բերած անձին ուղարկելու վերաքննիչ դատարանի պարտականությունը: Ընդ որում, վերը նշված դատավարական ժամկետի խախտման իրավաբանական հետևանքը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հանգում է գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետի խախտմամբ բերված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելուն:

Հիմք ընդունելով իրավական ակտում որևէ բառի՝ եզակի կամ հոգնակի թվով կիրառության վերաբերյալ օրենսդրական տեխնիկայի՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կանոնի բովանդակությունը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասում նշված «բողոք բերող անձին» արտահայտությունը պետք է հավասարապես կիրառելի լինի նաև հոգնակի թվով, եթե վերաքննիչ բողոքը բերվել է մեկից ավելի անձանց կողմից: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոք բերած անձին ուղարկելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված վերաքննիչ դատարանի պարտականության ուժով վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը, որպես ընդհանուր կանոն, պետք է ուղարկվի բողոք բերած բոլոր անձանց:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 14-րդ, 130-րդ, 149-րդ հոդվածների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոք բերած անձին ուղարկելու ՀՀ վերաքննիչ դատարանի պարտականությունը նեյտադրում է, որ այդ որոշումը պետք է ուղարկվի դատավարության մասնակիցներին, քանի որ վերջիններս են օրենսդրորեն օժտված ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունքով, իսկ դատավարության մասնակիցներն են կողմերը՝ հայցվորը, պատասխանողը, և երրորդ անձինք: Հետևաբար, որպես ընդհանուր կանոն, վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է ուղարկվի դատավարության մասնակիցներին:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ օրենսդիրը դատական ակտը գործին մասնակցող անձի փոխարեն այլ անձի, այդ թվում՝ վերջինիս ներկայացուցչին ուղարկելու հանգամանքը չի նախատեսել որպես դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության այլընտրանք: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դատական ակտը գործին մասնակցող անձի ներկայացուցչին ուղարկելը դատարանի հայեցողությունն է, սակայն այն չի կարող դիտարկվել որպես դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության պատշաճ կատարում, եթե գործին մասնակցող անձը նման միջնորդությամբ չի դիմել դատարան (*յրևն, ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական տեսչությունն ընդդեմ Գայանե*



Սողոմոնյանի թիվ ՎԳ/8923/05/11 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 14.01.2015 թվականի որոշումը):

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքում առկա թերությունները վերացնելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված տասնհինգօրյա ժամկետը չի կարող հաշվարկվել բողոք բերած անձանց ներկայացուցչի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից, եթե առկա չէ միայն ներկայացուցչին ծանուցելու վերաբերյալ միջնորդություն:

## ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

25.04.2017թ.

10. Էրիկ Վարդանյան v. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԳ/0528/05/16

Էջ  
760-768

**Խնդիր.** Վարչարարությանը պատճառված վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթ տրամադրելու վերաբերյալ հայցապահանջն ընդդատյա է արդյո՞ք վարչական դատարանին, թե՛ ոչ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված գործողության կատարման հայցը, որով հայցվորը կարող է վարչական մարմնին ներկայացնել հետևյալ երկու տեսակի հայցապահանջներից որևէ մեկը.

- կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը,
- օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը:

Օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու հետ կապված ընդհանուր իրավակարգավորումներն օրենսդիրը սահմանել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով, որը նախատեսում է վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտի՝ օրենքի ուժով ընդունված համարվելու իրավական հնարավորություն: Այսինքն՝ վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտը նշված իրավադրույթի ուժով որոշ դեպքերում կարող է համարվել ընդունված և առաջացնել այդ վարչական ակտին բնորոշ բոլոր իրավաբանական հետևանքները: Տվյալ դեպքում դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական ակտի ընդունման օրենքով սահմանված ժամկետը խախտվելու և օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում գործում է այն ֆիկցիան, որ պահանջվող բարենպաստ վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է օգտվել դիմում ներկայացնելիս իր ակնկալած իրավունքից, որը տրամադրման էր ենթակա ընդունվելիք վարչական ակտով: Վճռաբեկ դատարանը գտել է, որ քննարկվող իրավական կառուցակարգը բխում է յուրաքանչյուրի՝ վարչական մարմինների կողմից իրեն առջևվող գործերի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի՝ որպես 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու պաշտած վարչարարության հիմնարար իրավունքի բաղադրատարրերից մեկի պաշտպանության անհրաժեշտությունից:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ նշված իրավական կառուցակարգի շրջանակներում վարչական ակտի ընդունված համարվելու դեպքերում այդ վարչական ակտից բխող իրավունքները դրա հասցեատիրոջ կողմից կարող են արդյունավետ կերպով իրացվել, եթե տվյալ անձին տրամադրվի հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունված լինելը հավաստող համապատասխան փաստաթուղթը: Նշված փաստաթուղթը, ըստ էության, հաստատում է իրավական համակարգում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ուժով ընդունված

վարչական ակտի ձևական-իրավաբանական գոյությունը և սպառիչ տեղեկություններ է պարունակում այն կոնկրետ իրավունքի մասին, որը համարվում է անձին տրամադրված տվյալ վարչական ակտով: Այդ իսկ պատճառով ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողության կատարման հայցատեսակը նպատակաուղղված է նկարագրված իրավական կառուցակարգի շրջանակներում վարչական ակտի ընդունված համարվելու դեպքերում գործնականում պաշտպանել շահագրգիռ անձի (որպես կանոն՝ վարչական ակտի հասցեատիրոջ) իրավունքները և ապահովել այդ վարչական ակտից բխող իրավունքների երաշխավորված իրացումը: Այդ հայցատեսակի բավարարման արդյունքում շահագրգիռ անձին վերոգրյալ բովանդակությամբ փաստաթուղթ տրամադրվելու դեպքում վերջինս կարող է ձեռնամուխ լինել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ուժով ընդունված համարվող վարչական ակտից բխող համապատասխան իրավունքի գործնական իրականացմանը, ինչպես նաև ազատվել այն պատասխանատվությունից կամ պարտականություններից, որոնք նախատեսված են այդ փաստաթուղթը չունենալու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը մարդու հիմնարար իրավունքների շարքում ամրագրում է նաև վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքը՝ այդ վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանելու իրավասությունը վերապահելով օրենսդրին: Վերջինս վարչարարությամբ հասցված վնասի հատուցման կապակցությամբ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագող հարաբերությունները կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, որի 100-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ վարչարարությամբ հասցված վնասի հատուցման պահանջը դիմումի միջոցով ներկայացվում է այն վարչական մարմնին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է այդ վնասը:

Այսպես, Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անձը պարտավոր է նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմնին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադատության կամ դատական կարգով (*յրեն, ժորս Սարգսյանն ընդդեմ Երևանի Քանաբեռ-Ջեյթոն թաղապետարանի թիվ ՎԳ/0277/05/09 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 03.12.2009 թվականի որոշումը*):

Ընդ որում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ և 102-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի նկատմամբ կիրառելի են օրենքով վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները, իսկ վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումը վարչական մարմինը քննարկում և լուծում է վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող դիմումների քննարկման համար օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան: Փաստորեն, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումը՝ ուղղված իրավասու վարչական մարմնին (այն վարչական մարմնին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է այդ վնասը), «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով վարչական վարույթ հարուցելու հիմք է:

Վերոգրյալ իրավական վերլուծություններից հետևում է, որ վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտի՝ օրենքի ուժով ընդունված համարվելու իրավաբանական ֆիզիցիան հավասարապես կիրառելի է նաև վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի նկատմամբ: Այսինքն՝ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական մարմնի կողմից չընդունված բարենպաստ վարչական ակտը՝ վնասի հատուցում տրամադրելու մասին, ևս կարող է համարվել ընդունված, եթե առկա են դրա համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված և սույն որոշմամբ նկարագրված բոլոր պայմանները:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դա-

տարանը գտել է, որ վարչարարությանը պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը տրամադրելու վերաբերյալ հայցապահանջը բխում է հանրային իրավահարաբերություններից և ընդդատյա է վարչական դատարանի քննությանը: Այսպես՝

1. վարչարարությանը պատճառված վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը տրամադրելու պահանջի վերաբերյալ գործով քննության ենթակա վեճի կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ այն վարչական մարմինը, որի վարչարարության հետևանքով ենթադրաբար պատճառվել է այդ վնասը, և որը ենթադրաբար դրսևորել է ապօրինի անգործություն՝ վնասի հատուցման դիմումի կապակցությամբ օրենքով սահմանված ժամկետում ենթադրաբար չընդունելով որևէ որոշում,

2. վարչարարությանը պատճառված վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը տրամադրելու պահանջի վերաբերյալ գործով քննության ենթակա վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությանը օժտված սուբյեկտի՝ վարչական մարմնի կողմից վարչարարությանը պատճառված վնասի հատուցման դիմումի կապակցությամբ օրենքով նախատեսված ժամկետում վարչական ակտ ընդունելու իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը,

3. վարչարարությանը պատճառված վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը տրամադրելու պահանջի վերաբերյալ գործով վիճելի իրավահարաբերությունը ծագում է հանրային-իշխանական գործունեության բնագավառում օրենքով սահմանված պատշաճ ընթացակարգերի պահպանման միջոցով մարդու՝ իրեն առնչվող գործերի ողջամիտ ժամկետում քննության և վարչարարությանը պատճառված վնասի հատուցման հիմնարար իրավունքների պաշտպանությունն ապահովելու հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացման և առարկայացման կապակցությամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, հանգել է այն եզրակացության, որ վարչարարությանը պատճառված վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը տրամադրելու վերաբերյալ հայցապահանջներն ընդդատյա են վարչական դատարանին:

**24.03.2017թ.**

**11. Արթուր Ավթանդիլյան և այլք v. ՀՀ ոստիկանություն, վարչ. գործ թիվ ՎԳ/1707/05/15**

Էջ  
769-777

**Խնդիր.** Իրավաչափ է արդյոք դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումն այն հիմքով, որ ներկայացված հայցապահանջը հստակ չէ, եթե ներկայացված հայցադիմումի բովանդակության ընդհանրական ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ հայցվորի պահանջը ձևակերպված է բավարար հստակությամբ, և պահանջի այդպիսի ձևակերպումը գործի քննության համար արգելք չի հանդիսանում:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 65-րդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ վարչական դատարանը ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի պաշտպանությանը ձեռնամուխ է լինում միայն այն դեպքում, երբ շահագրգիռ անձն օրենքով սահմանված կարգով հայց է ներկայացնում դատարան: Փաստորեն, հայցն անձանց սուբյեկտիվ իրավունքների և շահերի դատական պաշտպանության միջոց է, որի էությունը հանգում է հետևյալին. հայցը մի անձի՝ վիճելի նյութա-

կան իրավահարաբերությունից բխող և որոշակի իրավաբանական փաստերի վրա հիմնված նյութափրավական պահանջն է՝ ուղղված պատասխանողին և միաժամանակ վեճը դատավարության օրենքով սահմանված որոշակի կարգով քննելու և լուծելու պահանջն է՝ ուղղված իրավասու դատարանին:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի ուժով հայցադիմումում պետք է նշվի հայցվորի պահանջը, որը կազմում է հայցի առարկան և որի մերժման կամ բավարարման վերաբերյալ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պատասխանողին ուղղված նյութափրավական պահանջը (հայցի առարկան) հայցադիմումում պետք է շարադրված լինի այն կերպ, որ դատարանի համար առնվազն հասկանալի լինի, թե ինչ է ակնկալում հայցվորը՝ դատական պաշտպանություն հայցելով: Այլ կերպ ասած՝ հայցադիմումը պետք է բովանդակի հայցի առարկան բավարար հստակությամբ, որպեսզի դատարանը հնարավորություն ունենա ներկայացված նյութափրավական պահանջի կապակցությամբ իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին բավարարող դատական ակտ կայացնելու:

Ավանդը հատկապես կարևոր նշանակություն ունի վարչական դատավարությունում, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը հստակ սահմանում է այն հայցատեսակները, որոնց միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են վարչական դատարանից հայցել իրենց խախտված իրավունքների և շահերի դատական պաշտպանություն: Ընդ որում, նշված հայցատեսակները միմյանցից առաջին հերթին տարբերվում են հայցի առարկայով, այսինքն՝ այն նյութափրավական պահանջի բովանդակությամբ, որը ֆիզիկական և իրավաբանական անձինք ուղղում են այս կամ այն վարչական մարմնին: Այսպես, օրինակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածը, որը սահմանում է ձանաչման հայցատեսակի բովանդակությունը, այդ հայցատեսակի շրջանակներում է ներառում նաև վարչական մարմնի՝ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ձանաչելու վերաբերյալ հայցը: Հետևաբար ձանաչման հայցի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված տվյալ տարատեսակով դատական գործ հարուցելու համար ներկայացված հայցադիմումը պետք է բավարար հստակությամբ նշում պարունակի վարչական մարմնի այն կոնկրետ գործողության կամ անգործության մասին, որի իրավաչափությունը վիճարկվում է հայցվորի կողմից: Տվյալ դեպքում վիճարկվող գործողությունը կամ անգործությունը ձանաչման հայցի քննարկվող տարատեսակի նյութական հիմքն է. այն տվյալ հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է և դատարանի քննությանը հանձնված վեճի նյութական օբյեկտը, որի հստակ և որոշակի ձևակերպումը հայցադիմումում թույլ է տալիս վարչական դատարանին ըստ էության քննության առնել տվյալ վեճը և վերջնական դատական ակտով լուծել հայցը լրիվ կամ մասնակիորեն մերժելու կամ բավարարելու հարցը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի և 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ հայցադիմումում հայցվորի պահանջը չբովանդակելու իրավաբանական հետևանքն այն է, որ այդ դեպքում վարչական դատարանը վերադարձնում է ներկայացված հայցադիմումը պետք է մեկնաբանվի հետևյալ կերպ. վարչական դատարանը պարտավոր է վերադարձնել հայցադիմումն ինչպես այն դեպքում, երբ հայցադիմումում հայցվորի պահանջն իսպառ բացակայում է, այնպես էլ այն դեպքում, երբ հայցվորի պահանջը բավարար չափով հստակ կամ որոշակի չէ: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ հայցվորի պահանջը կարող է դիտարկվել որպես բավարար չափով հստակ կամ որոշակի չձևակերպված, մասնավորապես, այն դեպքերում, երբ այն հնարավորություն չի տալիս պարզելու հայցի կոնկրետ նյութական օբյեկտը, կամ հայցվորի կողմից ներկայացվող նյութափրավական պահանջի բովանդակության կապակցությամբ տարակերպ մեկնաբանությունների տեղիք է տալիս և ողջամտորեն անհասկանալի է դարձնում այն՝ դատարանին հնարավորություն չտալով ըստ էության քննության առնել տվյալ վեճը և վերջնական դատական ակտով լուծել հայցը լրիվ կամ մասնակիորեն մերժելու կամ բավարարելու հարցը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասի և 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իրավադրույթները դիտարկելով քննարկվող հարցի հաստատեցստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ, մի կողմից, օրենսդիրը հնա-

րավորություն է ընձեռել հայցվորին հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետում վերացնելու հայցադիմումում պահանջի ձևակերպման հետ կապված սխալը և կրկին ներկայացնելու այն վարչական դատարան, որի դեպքում հայցադիմումը համարվում է վարույթ ընդունված սկզբնական ներկայացման օրը: Մյուս կողմից, եթե նշված ժամկետում հայցվորը չի վերացնում հայցադիմումում պահանջի ձևակերպման հետ կապված սխալը և հայցադիմումը՝ նշված թերությունը շտկված վիճակում, կրկին չի ներկայացնում դատարան, ապա վարչական դատարանը որոշում է կայացնում հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, եթե հայցադիմումի տվյալ սխալը չվերացնելն արգելք է գործի քննության համար:

**20.07.2017թ.**

**12. Լուսինե Ավագյան v. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԳ/2191/05/16 Էջ 778-783**

**Խնդիր.** Վիճարկման հայցով դատարան դիմելիս կամ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնելիս անհրաժեշտ է արդյո՞ք վճարել պետական տուրք նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջի համար, եթե այդ պահանջն իրավունքի ուժով ներառված է վիճարկման հայցում:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական դատավարության շրջանակներում հայցադիմում ներկայացնելու, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ բերելու համար, որպես կանոն, անհրաժեշտ է վճարել պետական տուրք, որի վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի 9-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը դատարան ներկայացվող հայցադիմումների, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափը որոշելիս ելակետային է համարել հայցապահանջների բնույթը, այսինքն՝ պետական տուրքի դրույքաչափը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք ներկայացված հայցապահանջը գույքային բնույթի է, թե՛ ոչ գույքային: Այսպես, ոչ գույքային բնույթի պահանջների հիման վրա հարուցված գործերով դատարան ներկայացվող հայցադիմումների, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափը սահմանված է կայուն դրամական միավորների տեսքով, որոնք հաշվարկվում են բազային տուրքի (1.000 ՀՀ դրամ) հիման վրա և գանձվում են յուրաքանչյուր ոչ գույքային պահանջի համար առանձին: Օրինակ՝ երկու ոչ գույքային պահանջի հիման վրա հարուցված վարչական գործով դատարանի վճիռը վերաքննության կարգով ամբողջությամբ բողոքարկելու համար, որպես ընդհանուր կանոն, անհրաժեշտ է վճարել 20.000 ՀՀ դրամ, այսինքն՝ յուրաքանչյուր ոչ գույքային պահանջի համար 10.000-ական ՀՀ դրամ պետական տուրք:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի ուժով հայցադիմումում պետք է նշվի հայցվորի պահանջը, որը կազմում է հայցի առարկան և որի մերժման կամ բավարարման վերաբերյալ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում (*տես, Արթուր Ավթանդիլյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության թիվ ՎԳ/1707/05/15 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 24.03.2017 թվականի որոշումը*):

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ վարչական գործի հարուցման հիմք հանդիսացող հայցի առարկան երբեմն կարող է իրավունքի ուժով իր մեջ ներառել այնպիսի հայցապահանջ, որը հայցվորի կողմից չի ներկայացվել դատարան: Այսպես, մեկ այլ որոշմամբ անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի բովանդակությանը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք, վիճարկման հայցով դիմելով վարչական դատարան, հայցում են իրենց իրավունքներին ու օրինական շահերին միջամտող վարչական ակտի վերացում: Ընդ որում, եթե նախքան տվյալ վարչական ակտի վիճարկման հայցով վարչական դատարան դիմելն այն բողոքարկվել է նաև վարչական կարգով, ապա ներկայացված հայցն օրենքի ուժով ներառում է նաև այդ վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ

(տես, Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/4315/05/14 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Փաստորեն, միջամտող վարչական ակտի բողոքարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջն իրավունքի ուժով ներառվում է սկզբնական վարչական ակտի վիճարկման հայցում՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք միջամտող վարչական ակտի վերացման պահանջով դատարան դիմած հայցվորի կողմից այդ վարչական ակտի բողոքարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ ներկայացված է, թե՛ ոչ: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ միջամտող վարչական ակտը բողոքարկվել է վարչական կարգով և այդ բողոքարկման արդյունքում ևս կայացվել է միջամտող վարչական ակտ, ապա սկզբնական միջամտող վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով դատարանը պարտավոր է սկզբնական վարչական ակտի իրավաչափության հարցի հետ մեկտեղ քննել և լուծել նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի իրավաչափության հարցը:

Վերոգրյալ իրավական կարգավորումը համադրելով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ոչ գույքային բնույթի պահանջներով դատարան դիմելու, ինչպես նաև այդպիսի պահանջներով հարուցված գործերի շրջանակներում կայացված դատական ակտերը վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկելու համար սահմանված պետական տուրքի վճարման կառուցակարգի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վիճարկման հայցով դատարան դիմելիս կամ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնելիս վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջի՝ որպես ոչ գույքային պահանջի, համար պետական տուրք վճարելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ այդ պահանջն իրավունքի ուժով ներառված է վիճարկման հայցում՝ անկախ հայցվորի կողմից ներկայացված լինելու կամ չլինելու հանգամանքից:

**14.03.2017թ.**

**13. Վարուժան Ավետիսյան v. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԳ/3804/05/15**

Էջ  
784-803

**Խնդիր.** Անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշման՝ դատական կարգով բողոքարկման իրավական կառուցակարգի համատեքստում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե դատավարության ռիսկոյուն է ինչպե՞ս կարող է կատարվել ոչ ձիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ հայցվորին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականությունը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերահաստատելով Հայկ Ալյումյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն թիվ ՎԳ/3540/05/14 վարչական գործով 25.05.2016 թվականին կայացված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման՝ վարչական դատավարության կարգով անմիջական բողոքարկման միջոցով շահագրգիռ անձն ըստ էության ձգտում է հասնել հարուցված կատարողական վարույթի ընդհատմանը, վերացմանը կամ այդ վարույթով պայմանավորված՝ միջամտող գործողությունների դադարեցմանը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերում ամրագրված հիմքերից որևէ մեկով կատարողական վարույթը կարձեղու իրավական կառուցակարգը ևս կարող է կիրառական լինել շահագրգիռ անձի նշված նպատակին հասնելու համար: Մասնավորապես՝ քննարկվող պարագայում շահագրգիռ անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը տեղի է ունենում անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական բուն վարույթի շրջանակներում, և կատարողական վարույթը կարձեղու հարցը լուծվում է վարչական մարմնի կողմից՝ առանց դատական միջամտության: Նշված հանգամանքն էսպես ազդում

է շահագրգիռ անձի խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացման վրա, քանի որ տվյալ դեպքում կատարողական վարույթը կարող է վերանալ (կարճվել) սեղմ ժամկետներում, առանց դատական քննության և դատավարական օրենսդրությունից բխող լրացուցիչ գործողություններ կատարելու անհրաժեշտության: Բացի այդ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերում ամրագրված հիմքերից որևէ մեկով կատարողական վարույթը կարճելու իրավական կառուցակարգի պատշաճ իրացման միջոցով շահագրգիռ անձն ի վերջո հասնում է այն նույն իրավական դրությանը (վիճակին), որը կարող էր վրա հասնել վարչական դատարանի կողմից անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու մասին վճիռ կայացնելու արդյունքում:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկը դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքն է, որը նպատակաուղղված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով ամրագրված իրավանդումների վերլուծությունից հետևում է, որ որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու վարչական դատարանի՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (“ex officio“) պարզելու սկզբունքի էությունից բխող պարտականությունը վարչական դատավարությունում կարող է իրականացվել թե՛ գործի հարուցման, թե՛ գործը դատաքննության նախապատրաստելու, թե՛ դատաքննության փուլերի ընթացքում: Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական դատավարության վերոգրյալ փուլերի ընթացքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտության և բավարար հիմքերի առկայության պարագայում վարչական դատարանը պարտավոր է ձեռնամուխ լինել այդ գործողությունների կատարմանը: Այլ կերպ ասած, եթե գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (“ex officio“) պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող այս կամ այն դատավարական գործողությունը գործի քննության սկզբնական (գործի հարուցման կամ հայցադիմումի ընդունելիության) փուլում կատարելու համար առկա են բավարար իրավական և փաստական հիմքեր, ապա վարչական դատարանը պարտավոր է տվյալ դատավարական պարտականությունը կատարել հենց այդ փուլում՝ ելնելով գործի հետագա քննության արդյունավետությունն ապահովելու նկատառումներից:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական դատարանի կողմից ոչ ձիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ հայցվորին առաջարկ անելու պարտականությունը կարող է կատարվել նաև գործի հարուցման փուլում: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ հայցադիմումի ընդունելիության (գործի հարուցման) փուլում նշված դատավարական գործողությունը պետք է կատարվի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման շրջանակներում:

Այսպես, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի ուժով հայցադիմումում պետք է նշվի հայցվորի պահանջը, որը կազմում է հայցի առարկան և որի մերժման կամ բավարարման վերաբերյալ դատարանը գործը ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պատասխանողին անողված նյութաիրավական պահանջը (հայցի առարկան) հայցադիմումում պետք է շարադրված լինի այն կերպ, որ դատարանի համար առնվազն պարզ լինի, թե ինչ է ակնկալում հայցվորը՝ դատական պաշտպանություն հայցելով: Այլ կերպ ասած՝ հայցադիմումը պետք է բովանդակի հայցի առարկան բավարար հստակությամբ, որպեսզի դատարանը հնարավորություն ունենա ներկայացված նյութաիրավական պահանջի կապակցությամբ իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին բավարարող դատական ակտ կայացնել: Ավաճը հատկապես կարևոր նշանակություն ունի վարչական դատավարությունում, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը հստակ սահմանում է այն հայցատեսակները, որոնց միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են վար-

չական դատարանից հայցել իրենց խախտված իրավունքների և շահերի դատական պաշտպանություն: Ընդ որում, նշված հայցատեսակները միմյանցից առաջին հերթին տարբերվում են հայցի առարկայով, այսինքն՝ այն նյութաիրավական պահանջի բովանդակությամբ, որը ֆիզիկական և իրավաբանական անձինք ուղղում են այս կամ այն վարչական մարմնին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի և 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ հայցադիմումում հայցվորի պահանջը չբովանդակելու իրավաբանական հետևանքն այն է, որ այդ դեպքում վարչական դատարանը վերադարձնում է ներկայացված հայցադիմումը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ օրենսդրական կարգավորումը պետք է մեկնաբանվի հետևյալ կերպ. վարչական դատարանը պարտավոր է վերադարձնել հայցադիմումն ինչպես այն դեպքում, երբ հայցադիմումում հայցվորի պահանջն իսպառ բացակայում է, այնպես էլ այն դեպքում, երբ հայցվորի պահանջը բավարար չափով հստակ կամ որոշակի չէ: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ հայցվորի պահանջը կարող է դիտարկվել որպես բավարար չափով հստակ կամ որոշակի չձևակերպված, մասնավորապես այն դեպքերում, երբ այն հնարավորություն չի տալիս պարզելու հայցի կոնկրետ նյութական օբյեկտը, կամ հայցվորի կողմից ներկայացվող նյութաիրավական պահանջի բովանդակության կապակցությամբ տարակերպ մեկնաբանությունների տեղիք է տալիս և ողջամտորեն անհասկանալի է դարձնում այն՝ դատարանին հնարավորություն չտալով ըստ էության քննության առնել տվյալ վեճը և վերջնական դատական ակտով լուծել հայցը լրիվ կամ մասնակիորեն մերժելու կամ բավարարելու հարցը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ անձը, իր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով դիմում է վարչական դատարան, ապա վերջինիս իրավունքների և շահերի դատական պաշտպանությունը պետք է իրականացվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հիման վրա հարուցված վարչական գործի ըստ էության քննության և լուծման միջոցով: Այսինքն՝ վարչական դատավարությունում հայցվորի պահանջը պետք է համապատասխանի օրենքով սահմանված այն հայցատեսակին բնորոշ հայցի առարկային, որի միջոցով տվյալ վիճելի իրավահարաբերության շրջանակներում հնարավոր է գործնականում հասնել անձի իրավունքների և շահերի դատական պաշտպանության ապահովմանը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ հայցադիմումի ընդունելիության փուլում առկա են բավարար իրավական հիմքեր առ այն, որ հայցվորը դատարան է դիմել ոչ ճիշտ հայցատեսակով, ապա վարչական դատարանը պարտավոր է գործի քննության հենց այդ սկզբնական փուլում կատարել ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ իր դատավարական պարտականությունը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատարան ներկայացված հայցադիմումում հայցվորի պահանջը տվյալ վիճելի իրավահարաբերությունից բխող և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ճիշտ հայցատեսակին չհամապատասխանող կերպով ձևակերպված լինելը հիմք է հանդիսանում տվյալ հայցադիմումը վերադարձնելու համար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի խախտման հիմքով: Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ հայցադիմումի ընդունելիության փուլում առկա են բավարար հիմքեր հանգելու այն եզրակացության, որ անձի կողմից վարչական դատարան ներկայացված հայցապահանջը ձևակերպված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հայցի առարկային համահունչ, ապա տվյալ հայցադիմումը ենթակա է վերադարձման՝ որպես բավարար չափով հստակ կամ որոշակի չձևակերպված պահանջ պարունակող հայցադիմում:

Այսպես, օրինակ, դատական պրակտիկայում կարող են հանդիպել այնպիսի իրավիճակներ, երբ անձը, դիմելով վարչական դատարան, ցանկանում է հասնել վարչական ակտ չհանդիսացող անհատական իրավական ակտի վերացմանը և իր իրավունքների և շահերի դատական պաշտպանության համար ընտրել է ոչ ճիշտ հայցատեսակ՝ իր պահանջը ձևակերպելով տվյալ պարագայում ոչ կիրառելի՝ վիճարկման հայցատեսակի հայցի առարկային համապատասխան՝ պահանջելով վերացնել ոչ թե վարչական ակտ, այլ վարչական ակտ չհանդիսացող անհատական իրավական ակտ: Նման պայմաններում հայցվորի իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության համար



պատշաճ հայցատեսակի ընտրության իրավական հնարավորության առկայության դեպքում վարչական դատարանը պարտավոր է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման միջոցով մատնանշել հայցվորին այդ իրավական հնարավորությունը և առաջարկել վերջինիս ներկայացնելու տվյալ վիճելի իրավահարաբերությունից բխող և օրենքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հայցի առարկային բնորոշ հայցապահանջ:

Վճռաբեկ դատարանը նախկինում արդեն իսկ արձանագրել է, որ հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը վերացնելուն ուղղված հայցապահանջը չի կարող քննվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայցի շրջանակներում, քանի որ հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը վարչական ակտ չէ: Ըստ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների՝ նշված անհատական իրավական ակտի վերացմանն ուղղված հայցադիմումը վարույթ ընդունելու և այդ հայցապահանջը քննության առնելու նկատմամբ պետք է կիրառվեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մատով նախատեսված ճանաչման հայցի կանոնները: Հետևաբար հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը վերացնելուն ուղղված հայցապահանջը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայցատեսակին համապատասխան ներկայացված լինելը հիմք է հանդիսանում տվյալ հայցադիմումը վերադարձնելու համար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի խախտման հիմքով: Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը վերացնելուն ուղղված հայցապահանջը ձևակերպված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայցի առարկային համահունչ, ապա տվյալ հայցադիմումը ենթակա է վերադարձման՝ որպես բավարար չափով հստակ կամ որոշակի չձևակերպված պահանջ պարունակող հայցադիմում:

### ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

19.06.2017թ.

**14. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն v. Կարեն Պետրոսյան, վարչ. գործ թիվ ՎԳ3/0196/05/16**

Էջ  
804-816

**Խնդիր.** (1) Անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված գումարի բռնագանձման վերաբերյալ հանրային իրավական դրամական պահանջ պարունակող հայցերը ենթակա են արդյո՞ք դատարանում քննության, (2) Խնչ նյութափրավական պայմանների առկայության դեպքում է գործում անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջի՞ դատական կարգով հարկադիր կատարման եղանակը, (3) անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված գումարի բռնագանձման վերաբերյալ վարչական մարմնի կողմից ներկայացված հանրային իրավական դրամական պահանջ պարունակող հայցադիմումի ընդունելիության փուլում ի՞նչ որոշում պետք է կայացնի վարչական դատարանը, եթե հանրային իրավական դրամական պահանջը դատական կարգով հարկադիր կատարելու՝ օրենքով սահմանված նյութափրավական պայմանները բացակայում են, (4) հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարումը կարող է արդյո՞ք տեղի ունենալ դատական եղանակով, եթե այդ պահանջի հիմքում ընկած անբողոքարկելի վարչական ակտով ֆիզիկական անձից բռնագանձման ենթակա գումարի չափը չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը, սակայն այդ գումարի և դրա նկատմամբ իրավունքի ուժով ինքնաբերաբար ավելացած մասի հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «բ» և «գ» կետերով նախատեսված պայմանները բացակայում են:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում «հանրային իրավական» է կոչվում պետական կամ համայնքային բյուջե դրամական գումարներ վճարելու այն պահանջը, որին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- 1) այդ դրամական գումարները վճարելու կարգը սահմանված է օրենքով,
- 2) այդ դրամական գումարները վճարելը պարտադիր է,
- 3) այդ դրամական գումարները վճարելու պարտադիրությունը ծագում է և հաստատվում է վարչական ակտի հիման վրա:

Օրենսդիրը հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման հետ կապված հասարակական հարաբերությունները կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով՝ նախատեսված համապատասխան իրավական նորմերի միջոցով: Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ գոյություն ունեն հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման երկու տարբեր եղանակներ՝ *դատական և արբարարական*: Ընդ որում, հանրային իրավական դրամական պահանջի՝ *արբարարական կարգով* հարկադիր կատարման եղանակը նախատեսված է որպես ընդհանուր կանոն, իսկ *դատական կարգով* կատարման եղանակը՝ որպես բացառություն ընդհանուր կանոնից:

Այդ ընդհանուր կանոնը սահմանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման անմիջականորեն այդ պահանջի պարտադիրությունը հաստատող անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Քննարկվող օրենքները սահմանում են, որ անմիջականորեն անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու համար հիմք է հանդիսանում օրենքով սահմանված կարգով կազմված և հարկադիր կատարողին ուղարկված դիմումը (գրությունը), որին կից համապատասխան վարչական մարմինը ներկայացնում է նաև հանրային իրավական դրամական պահանջ պարունակող վարչական ակտը, ինչպես նաև այդ վարչական ակտի մասին հասցեատիրոջը պատշաճ ծանուցելը, տվյալ վարչական ակտի ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը հավաստող ապացույցները:

Հանրային իրավական դրամական պահանջների՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակը կիրառվում է միայն այն դեպքում, երբ առկա է հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ օրենքով սահմանված որևէ սահմանափակում. այդ սահմանափակումները, իրենց հերթին, հանդիսանում են այն պայմանները, որոնց առկայությունն անհրաժեշտ է հանրային իրավական դրամական պահանջների՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակի գործողության համար: Վերոնշյալ պայմանները (սահմանափակումները) նախատեսված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասում և հանգում են հետևյալին.

- ա) անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը,
- բ) ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր չէ առանց նրան սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականության) իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձման,
- գ) իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը:

Այսպիսով, նշված իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը կանխորոշում է հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման եղանակը. այդ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում հանրային իրավական դրամական պահանջի՝ *արբարարական կարգով* հարկադիր կատարման եղանակը

չի գործում, և գործում է հանրային իրավական դրամական պահանջի՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակը:

Օրենսդիրը հանրային իրավական դրամական պահանջի՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակի հետ կապված դատավարական հարաբերությունները կարգավորել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով՝ ամրագրելով, որ վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք կարող են դիմել վարչական դատարան՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով. անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը հարուցվում են այդ ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա: Հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը վարչական դատավարությունում քննվում են հատուկ վարույթի կարգով, որի առանձնահատկությունները սահմանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 29.1-ին գլխում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վերոգրյալ գլխում ամրագրված իրավանորմերը նույն օրենսգրքի համակարգում վերլուծության ենթարկելու արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը ենթակա են դատարանի քննությանը և ընդդատյա են վարչական դատարանին: Հետևաբար անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ հայցադիմումի ընդունումը չի կարող մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով, քանի որ այդ իրավանորմում «*դատարանում*» եզրույթի ներքո օրենսդիրը նկատի է ունեցել Հայաստանի Հանրապետությունում գործող ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարաններին: Այսինքն՝ հայցադիմումի ընդունումը կարող է մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով այն դեպքում, երբ դատարան դիմող սուբյեկտը հայց հարուցելու իրավունք առհասարակ չունի, իսկ դատարանն իրավասու չէ լուծել իր առջև բարձրացված տվյալ վեճը: Մինչդեռ հանրային իրավական դրամական պահանջի՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակը գործում է անբողոքարկելի վարչական ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա հարուցված՝ հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ դատական գործի քննության և լուծման միջոցով, ինչի իրավասությունը վերապահված է վարչական դատարանին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործը վարչական դատարանում հարուցվում է անբողոքարկելի վարչական ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա, որը պետք է ներառի տեղեկություններ հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված որևէ սահմանափակման առկայության մասին: Այդ սահմանափակումների առկայությունը հիմք է հանդիսանում հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ վարչական գործի հարուցման, այսինքն՝ հայցադիմումը դատարանի վարույթ ընդունելու համար:

Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասում սպառիչ կերպով թվարկելով հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ դատական գործի հարուցման՝ օրենքով նախատեսված պայմանների բացակայությունը չի դիտարկել որպես հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք: Փոխարենը, օրենսդիրը հատուկ իրավակարգավորում է սահմանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.3-րդ հոդվածում, որի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ դատական գործի հարուցման՝ օրենքով նախատեսված պայմանների բացակայությունը հիմք է հանդիսանում հայցադիմումը վերադարձնելու համար: Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում ՀՀ վարչական դա-

տավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված ընդհանուր և նույն օրենսգրքի 216.3-րդ հոդվածով նախատեսված հատուկ իրավակարգավորումների կիրառման հարցում նախապատվությունը պետք է տրվի հատուկ նորմին, որը վերաբերում է միայն անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերի վարույթին: Ըստ այդմ, եթե «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված և սույն որոշմամբ նկարագրված իրավաբանական փաստերից որևէ մեկն առկա չէ, ապա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.3-րդ հոդվածի ուժով վարչական դատարանը պարտավոր է վերադարձնել անբողոքարկելի վարչական ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումը:

Փաստորեն, հանրային իրավական դրամական պահանջը դատական կարգով հարկադիր կատարելու օրենքով նախատեսված հիմքերի բացակայության դատավարական հետևանքը հանգում է ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելուն, այլ նույն օրենսգրքի 216.3-րդ հոդվածի հիմքով հայցադիմումը վերադարձնելուն: Այլ կերպ ասած՝ հանրային իրավական դրամական պահանջը դատական կարգով հարկադիր կատարելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված հիմքերի բացակայության պայմաններում վարչական դատարանը պարտավոր է որոշում կայացնել վարչական մարմնի՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձից գումարի բռնագանձման վերաբերյալ հայցադիմումը վերադարձնելու մասին:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ անբողոքարկելի վարչական ակտով հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման հայցով դատարան դիմած վարչական մարմնի հայցադիմումով պահանջվող դրամական գումարի չափը չի համապատասխանում այդ անբողոքարկելի վարչական ակտով վճարման ենթակա գումարի չափին: Որոշ դեպքերում այդ իրավիճակն առաջանում է օրենսդրական կարգավորումների արդյունքում: Այսպես, օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ օրենսդիրը սահմանել էր, որ որոշակի վարչական իրավախախտումների համար նշանակված տուգանքը 30 օրվա ընթացքում չվճարելու դեպքում փաստացի չվճարված տուգանքի չափն ավելանում է 25 տոկոսով, իսկ 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում՝ 50 տոկոսով: Այդպիսի վարչական իրավախախտումներից են, *inter alia*, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ, 124.1-րդ, 124.2-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.6-րդ, 126-րդ հոդվածներով նախատեսված և ծանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններին ոտնձգող զանցանքները, որոնց վերաբերյալ գործերի քննության և լուծման լիազորությունը վերապահված է ծանապարհային ոստիկանությանը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ մինչև 26.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 13.11.2012 թվականին կայացրած թիվ ՍԴՈ-1056 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ սահմանված կանոնների մեկնաբանման հարցում: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն իրողությունը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ մինչև 26.07.2014 թվականը և 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությունների միջև էական տարբերություններ առկա չեն: Այսպես, եթե որոշակի վարչական իրավախախտումների համար նշանակված տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ մինչև 26.07.2014 թվականը գործող խմբագրությամբ նախատեսվում էր տուգանքի չափի եռապատկման կամ հնգապատկման հնարավորություն, ապա նշված հոդվածի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ այդ նույն դեպքի համար նախատեսվում էր տուգանքի չափի (դրա չվճարված մասի)՝ 25 կամ 50 տոկոսով ավելացման հնարավորություն: Ընդ որում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ թե՛ մինչև 26.07.2014 թվա-

կանը գործող խմբագրությամբ նախատեսված տուգանքի չափի բազմապատկումը, թե՛ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ նախատեսված տուգանքի չափի՝ որոշակի տոկոսով ավելացումը կատարվում էին օրենքի ուժով՝ առանց հատուկ վարչական ակտ ընդունելու անհրաժեշտության:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի վկայակոչված որոշումը, հիմնավոր է համարել այն մտեցումը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավակարգավորումների համատեքստում օրենքով նախատեսված զանցանքների համար նշանակված տուգանքի չափի ավելացումը կատարվում է ինքնաբերաբար, իրավունքի ուժով. տուգանքի չափի այդպիսի ավելացումը չի հաստատվում տվյալ զանցանքի համար անձին ի սկզբանե վարչական պատասխանատվության ենթարկված իրավասու վարչական մարմնի կողմից ընդունված առանձին վարչական ակտով:

Փաստորեն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը հանգում է հետևյալին.

- անձը ենթարկվում է վարչական պատասխանատվության, և նրա նկատմամբ վարչական ակտով նշանակվում է տուգանք,
- տուգանքը որոշակի ժամկետում չվճարելու դեպքում դրա փաստացի չվճարված մասն ավելանում է 25 կամ 50 տոկոսով (տոկոսային տարբերությունը պայմանավորված է տուգանքը չվճարելու ժամկետով),
- տուգանքի փաստացի չվճարված մասի ավելացումը կատարվում է օրենքի ուժով՝ առանց որևէ վարչական ակտ ընդունելու անհրաժեշտության,
- անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտը բովանդակում է միայն վարչական մարմնի կողմից ի սկզբանե նշանակված տուգանքի չափը,

- տուգանքի փաստացի չվճարված մասի՝ 25 կամ 50 տոկոս ավելացման փաստը, ինչպես նաև ավելացված գումարի չափը չի հաստատվում որևէ վարչական ակտով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել քննարկման առարկա դարձնել այն իրավիճակը, երբ վարչական մարմինը, հանրային իրավական դրամական պահանջով նախատեսված գումարի բռնագանձման հայցով դիմում է դատարան՝ այդ պահանջի հիմքում ունենալով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ, որպես վարչական պատասխանատվության միջոց, տուգանք նշանակելու մասին անըողորարկելի վարչական ակտ, որով առաջադրված տուգանքի չափը չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը, սակայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով տուգանքի չափն ինքնաբերաբար ավելանալու պայմաններում վարչական ակտով առաջադրված տուգանքի ու դրա ավելացած մասի հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը: Տվյալ դեպքում դատարանի առջև բարձրանում է այն հարցը, թե կարող է արդյոք հանրային իրավական դրամական այդ պահանջի հարկադիր կատարումն իրականացվել դատական կարգով, թե՛ ոչ:

Նշված հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը ելակետ է ընդունել այն իրավական դիրքորոշումը, որ հանրային իրավական դրամական պահանջի՝ դատական կարգով հարկադիր կատարման համար հիմք է հանդիսանում տվյալ հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված որևէ սահմանափակման առկայությունը: Այսինքն՝ հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործը վարչական դատարանում կարող է հարուցվել միայն օրենքով սպառիչ թվարկված հիմքերից որևէ մեկի առկայության պայմաններում, հակառակ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.3-րդ հոդվածի ուժով վարչական դատարանը պարտավոր է վերադարձնել վարչական մարմնի համապատասխան հայցադիմումը:

Սահմանվորական, անդրադառնալով հանրային իրավական դրամական պահանջների՝ դատական կարգով հարկադիր կատարման եղանակի գործողության համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով սահմանված պայմանի բովանդակության բացահայտ-

մանր՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ իրավական նորմը պետք է մեկնաբանվի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կանոնով, այսինքն՝ դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ առանց փոփոխելու դրանց իմաստը: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով սահմանված իրավանորմի բովանդակությունն իրավակիրառ պրակտիկայում պետք է ընկալվի հետևյալ կերպ. անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական անձին ուղղված դրամական պահանջի հարկադիր կատարումը տեղի է ունենում դատական կարգով, եթե տվյալ վարչական ակտով ֆիզիկական անձից գանձման ենթակա գումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ բոլոր այն դեպքերում, երբ հանրային իրավական դրամական պահանջը հավաստող վարչական ակտով ֆիզիկական անձի նկատմամբ առաջադրված դրամական գումարը, այսինքն՝ բուն վարչական ակտով նախատեսված դրամական գումարը, չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը, ապա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով նախատեսված՝ հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու սահմանափակումը բացակայում է: Այլ կերպ, եթե հանրային իրավական դրամական պահանջի հիմքում ընկած է ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ տուգանք նշանակելու մասին անբողոքարկելի վարչական ակտ, որով առաջադրված տուգանքի չափը չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը, ապա տվյալ դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով սահմանված՝ հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարը դատական կարգով բռնագանձելու հիմքը բացակայում է՝ անկախ այն հանգամանքից, որ անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված տուգանքի և դրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով ավելացած մասի հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը: Քննարկվող պարագայում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված՝ հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու մյուս սահմանափակումների բացակայության պայմաններում վարչական դատարանը չի կարող վարույթ ընդունել գումարի բռնագանձման վերաբերյալ վարչական մարմնի հայցադիմումը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.3-րդ հոդվածի ուժով պարտավոր է որոշում կայացնել այն վերադարձնելու մասին, քանի որ բացակայում են հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործի հարուցման օրենքով նախատեսված հիմքերը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ տուգանք նշանակելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարումը չի կարող տեղի ունենալ դատական կարգով հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտով նշանակված տուգանքի չափը չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը,
- 2) անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված տուգանքի և դրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով ավելացած մասի հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը,
- 3) հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «բ» և «գ» կետերով նախատեսված սահմանափակումները բացակայում են:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ տուգանք նշանակելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական

ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարումը պետք է տեղի ունենա ընդհանուր կանոնի համաձայն, այսինքն՝ արտադատական կարգով: Այլ կերպ ասած, վերը նկարագրված դեպքում հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարումը տեղի է ունենում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված արտադատական եղանակով՝ անմիջականորեն այդ պահանջի պարտադիրությունը հաստատող անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ տուգանք նշանակելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի արտադատական եղանակով հարկադիր կատարումը պետք է ուղղված լինի ոչ միայն անբողոքարկելի վարչական ակտով նշանակված և 200.000 ՀՀ դրամը չգերազանցող տուգանքի գումարի, այլ նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով այդ տուգանքին ավելացած գումարի բռնագանձմանը: Այսինքն՝ տվյալ դեպքում արտադատական եղանակով հարկադիր կատարման ենթակա հանրային իրավական դրամական պահանջը ներառում է ոչ միայն անբողոքարկելի վարչական ակտով նշանակված և 200.000 ՀՀ դրամը չգերազանցող տուգանքի բուն գումարը, այլ նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով այդ տուգանքին ավելացած գումարը՝ անկախ այն հանգամանքից, որ անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված տուգանքի և դրա ավելացած մասի հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը: Փաստորեն, ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ տուգանք նշանակելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի՝ արտադատական եղանակով հարկադիր կատարման դեպքում ֆիզիկական անձից բռնագանձման ենթակա է ոչ միայն անբողոքարկելի վարչական ակտով նշանակված տուգանքի գումարը, որը չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը, այլ նաև այդ տուգանքի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով ավելացած մասը՝ անկախ այն հանգամանքից, որ անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված տուգանքի և դրա ավելացած մասի հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը:

**15.11.2017թ.**

**15. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն v. ՀԶ Շավարշ Նալբանդյան, վարչ. գործ թիվ ՎԳ3/0224/05/16**

Էջ  
817-826

**Խնդիր.** Հանրային իրավական դրամական պահանջի հիմքում ընկած անբողոքարկելի վարչական ակտով ֆիզիկական անձի նկատմամբ նշանակված տուգանքի գումարի նկատմամբ իրավունքի ուժով ինքնաբերաբար ավելացած և որևէ վարչական ակտով չամրագրված մասի հարկադիր կատարումը կարող է արդյո՞ք տեղի ունենալ դատական եղանակով, եթե վարչական ակտով ֆիզիկական անձից բռնագանձման ենթակա գումարի չափը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերահաստատելով անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման առանձնահատկությունների վերաբերյալ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունն ընդդեմ Կարեն Պետրոսյանի թիվ ՎԳ3/0196/05/16 վարչական գործով 19.06.2017 թվականի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել քննարկման առարկա դարձնել այն իրավիճակը, երբ վարչական մարմինը հանրային իրավական դրամական պահանջով նախատեսված գումարի բռնագանձման հայցով դիմում է դատարան՝ այդ պահանջի հիմքում ունենալով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ, որպես վարչական պատասխանատվության միջոց, տուգանք նշանակելու մասին անբողոքարկելի վարչական ակտ, որով առաջադրված տուգանքի չափը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը, և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող

խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով տուգանքի չափն ինքնաբերաբար ավելանալու պայմաններում վարչական մարմինը պահանջում է ֆիզիկական անձից բռնագանձել ոչ միայն բուն վարչական ակտով առաջադրված 200.000 ՀՀ դրամը գերազանցող տուգանքի գումարը, այլ նաև այդ գումարի՝ իրավունքի ուժով ավելացած մասը: Տվյալ դեպքում էական նշանակություն է ստանում այն հարցը, թե կարող է արդյոք հանրային իրավական դրամական այդ պահանջն ամբողջությամբ (և՛ բուն վարչական ակտով առաջադրված տուգանքի գումարը, և՛ դրա՝ իրավունքի ուժով ավելացած մասը) բռնագանձվել դատական կարգով, թե՛ ոչ:

Նշված հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը ելակետ է ընդունել իր կողմից ձևավորված այն իրավական դիրքորոշումը, որ հանրային իրավական դրամական պահանջի՝ դատական կարգով հարկադիր կատարման համար հիմք է հանդիսանում տվյալ հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված որևէ սահմանափակման առկայությունը: Մասնավորապես՝ անդրադառնալով հանրային իրավական դրամական պահանջների՝ դատական կարգով հարկադիր կատարման եղանակի գործողության համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով սահմանված պայմանի բովանդակության բացահայտմանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ իրավական նորմը պետք է մեկնաբանվի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կանոնով, այսինքն՝ դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ առանց փոփոխելու դրանց իմաստը: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով սահմանված իրավանորմի բովանդակությունն իրավակիրառ պրակտիկայում պետք է ընկալվի հետևյալ կերպ. անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական անձին ուղղված դրամական պահանջի հարկադիր կատարումը տեղի է ունենում դատական կարգով, եթե տվյալ վարչական ակտով ֆիզիկական անձից գանձման ենթակա գումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ տուգանք նշանակելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի՝ դատական եղանակով հարկադիր կատարումը պետք է ուղղված լինի ոչ միայն անբողոքարկելի վարչական ակտով նշանակված և 200.000 ՀՀ դրամը գերազանցող տուգանքի գումարի, այլ նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով այդ տուգանքին ավելացած գումարը: Փաստորեն, ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ տուգանք նշանակելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի՝ դատական եղանակով հարկադիր կատարման դեպքում ֆիզիկական անձից բռնագանձման ենթակա է ոչ միայն անբողոքարկելի վարչական ակտով նշանակված տուգանքի գումարը, որը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը, այլ նաև այդ տուգանքի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով ավելացած մասը, որոնք միասին դիտարկվում են որպես անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա առաջադրված մեկ ամբողջական հանրային իրավական դրամական պահանջ:



# ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

## ՔԱՂԱՔԱԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական ֆաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/3367/02/15**  
դատարանի որոշում 2017թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/3367/02/15  
Նախագահող դատավոր՝ Ա. Հունանյան  
Դատավորներ՝ Կ. Հակոբյան  
Ա. Սմբատյան

#### ՈՐՈՇՈՒՄ

#### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Անի-96» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Գորգեն Թորոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.06.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Արֆարմագիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ Ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

#### ՊԱՐԶԵՑ

##### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 6.768.383 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրային պարտավորություններից բխող պարտքի գումար, ինչպես նաև հայցադիմումը դատարան մուտք լինելու օրվանից մինչև պարտավորության դադարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված բանկային տոկոսները:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Կատվայան) (այսուհետ՝ Դատարան) 01.04.2016 թվականի վճռով հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը, որպիսի հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.06.2016 թվականի որոշմամբ գործին մասնակից չդարձված անձանց՝ Ընկերության մասնակիցներ Հասմիկ Գրիգորյանի, Հասմիկ Գյուրջյանի, Աննա Սահակյանի, Հասմիկ Խաչիկյանի, Մագդա Հակոբյանի, Վարդուհի Ֆաբիդյանի, Անալիա Բաբայանի, Երազիկ Աշոտյանի, Անուշ Գալստյանի, Անահիտ Սարգսյանի, Քրիստինե Բաղդասարյանի և Լաբիսա Սարուխանովայի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 01.04.2016 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ և 95-րդ հոդվածները, «Սահմանափակ պարտախանութային ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 5-րդ, 12-րդ, 13-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ, 53-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի կատարել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ընկերության 12.03.2016 թվականին կայացած ընդհանուր ժողովը որոշում է կայացրել հավանություն տալ Կազմակերպության հետ կնքվելիք գործարքին՝ հաշտության համաձայնությանը: Ընդ որում՝ որոշումը համարվել է ընդունված, քանի որ ապահովվել է Ընկերության կանոնադրության 7.2 կետի 16-րդ ենթակետով սահմանված՝ Ընկերության գույքի օտարման հետ կապված հարցի ընդունման համար նույն կանոնադրության 7.3 կետի 3-րդ պարբերությամբ սահմանված ժողովին մասնակցողների ձայների 3/4-ը, որի համար անհրաժեշտ է եղել 72 տոկոս ձայն (սույն դեպքում առկա է եղել 77 տոկոս կողմ ձայն):

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով երկու իրավաբանական անձանց միջև պայմանագրային պարտավորությունների կատարման վերաբերյալ կայացված վճիռը որևէ կերպ չի վերաբերում ընկերության մասնակցի՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված իրավունքներին և պարտականություններին, հետևաբար Ընկերության մասնակիցներին գործին մասնակից դարձնելու դատավարական պարտականություն Դատարանը չունի:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հաշտության համաձայնություն կնքելու համար առկա է եղել Ընկերության ընդհանուր ժողովի որոշումը, որին մասնակցել են նաև վերաքննիչ բողոք բերած անձինք, ավելին՝ 12.03.2016 թվականին կայացած ընդհանուր ժողովի որոշումը որևէ ձևով չի վիճարկվել և անվավեր չի ճանաչվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.06.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 01.04.2016 թվականի վճիռն:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության՝ 12.03.2016 թվականին՝ ժամը 12:00-ին, կայացած ընդհանուր ժողովի թիվ 22 արձանագրության քաղվածքի համաձայն՝ ընդհանուր ժողովին ներկայացել են 96 տոկոս բաժնեմաս ունեցող մասնակիցները, ուստի Ընկերության կանոնադրության 7.3 կետի ուժով ընդհանուր ժողովը համարվել է իրավագործ՝ «մեկ բաժնեմաս-մեկ ձայն սկզբունքով»: Ի թիվս այլ հարցերի՝ ընդհանուր ժողովի օրակարգում ներառված է եղել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևանի Օհանովի փողոցի թիվ 1 հասցեում գտնվող, 52,82քմ մակերեսով հասարակական նշանակության անշարժ գույքը Կազմակերպության հանդեպ գոյացած պարտքը մարելու նպատակով օտարելու հարցի քննարկումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կանոնադրության 7.2 կետի 16-րդ ենթակետով Ընկերության գույքի օտարման հետ կապված հարցին հավանություն տալու համար, կանոնադրության 7.3 կետի 3-րդ պարբերության համաձայն, անհրաժեշտ է ընդհանուր ժողովին մասնակցողների ձայների 3/4-ը, որի համար անհրաժեշտ է 72 տոկոս ձայն, հարցը դրվել է քվեարկության: Ժողովին մասնակցել են Ընկերության մասնակիցներ Համլետ Պետրոսյանը, Հասմիկ Գրիգորյանը, Հասմիկ Գյուրջյանը, Աննա Սահակյանը, Հասմիկ Խաչիկյանը, Մագդա Հակոբյանը, Վարդուհի Ֆաքիրյանը, Անալիա Բաբայանը, Երազիկ Աշոտյանը, Անուշ Գալստյանը, Անահիտ Սարգսյանը, Քրիստինե Բաղդասարյանը: Քվեարկության արդյունքներով կողմ է քվեարկել Համլետ Պետրոսյանը՝ ի դեմս լիազորված անձ Գուրգեն Թորոսյանի (74 տոկոս բաժնեմասով)՝ ժողովին մասնակցող ձայների 77 տոկոս), դեմ՝ Հասմիկ Գրիգորյանը, Հասմիկ Գյուրջյանը, Աննա Սահակյանը, Հասմիկ Խաչիկյանը, Մագդա Հակոբյանը, Վարդուհի Ֆաքիրյանը, Անալիա Բաբայանը, Երազիկ Աշոտյանը, Անուշ Գալստյանը, Անահիտ Սարգսյանը, Քրիստինե Բաղդասարյանը՝ ի դեմս լիազորված անձ Գազիկ Խաչատրյանի (22 տոկոս բաժնեմասով)՝ ժողովին մասնակցող ձայների 23 տոկոս), ձեռնպահ չկա (**հատոր 3-րդ, գ.թ. 35-36**):

2) Ընկերության կանոնադրության 7.1 կետի համաձայն՝ Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը մասնակիցների (կամ նրանց լիազոր ներկայացուցիչների) ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, իսկ նույն կանոնադրության 7.2 կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված գործարքներին (այդ թվում՝ այլ տնտեսական ընկերակցություններին և ընկերություններին մասնակցելը) հավանություն տալը, որոնց արժեքը գերազանցում է կանոնադրական կապիտալի 1/4-ը (**հատոր 3-րդ, գ.թ. 29-30**):

3) Ընկերության կանոնադրության 7.3 կետի 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն՝ ժողովը համարվում է իրավասու, եթե ներկա են ընդհանուր ժողովի ձայների 60% ունեցող մասնակիցները (նրանց ներկայացուցիչները): Նույն կանոնադրության 7.2 կետի 1-ին, 8-րդ, 11-րդ և 16-րդ ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցողների ձայների երեք քառորդով (**հատոր 3-րդ, գ.թ. 29-30**):

4) Ընկերության կանոնադրության 6.1-րդ կետի համաձայն՝ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 4.550.310 ՀՀ դրամ (**հատոր 3-րդ, գ.թ. 28**):

5) Ընկերության և Կազմակերպության միջև 14.03.2016 թվականին կնքված հաշտության համաձայնության 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունն ընդունում է Կազմակերպության նկատմամբ ունեցած 7.411.000 ՀՀ դրամ պարտավորության առկայությունը, որի դիմաց Կազմակերպությանը, որպես սեփականություն, հանձնում է Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի Օգանովի փողոցի թիվ 1 հասցեի 52,82քմ ընդհանուր մակերեսով հասարակական նշանակության անշարժ գույքը: Հաշտության համաձայնության 2-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի արժեքը կազմում է 16.176.000 ՀՀ դրամ: Կազմակերպությունը, որպես սեփականություն, ընդունում է Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի Օգանովի փողոցի թիվ 1 հասցեի 52,82քմ ընդհանուր մակերեսով հասարակական նշանակության անշարժ գույքը 7.411.000 ՀՀ դրամի պարտավորության դիմաց և պարտավորվում է մինչև 2016

թվականի հուլիսի 15-ը վճարել Ընկերությանն անշարժ գույքի արժեքի մնացած տարբերությունը՝ 8.765.000 ՀՀ դրամ: Նշված հաշտության համաձայնությունը հաստատվել է Դատարանի վճռով (**հատոր 3-րդ, գ.թ. 21-22, 46-49**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզառաքանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ և 95-րդ հոդվածների, «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 5-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք իրավաբանական անձի կողմից կնքված և դատարանի վճռով հաստատված հաշտության համաձայնությունը, որն ուղղված է իրավաբանական անձի պարտավորությունների կարարմանը, կարող է խախտել այդ իրավաբանական անձի մասնակցի (մասնակիցների) իրավունքներն ու օրինական շահերն այն դեպքում, երբ առկա է փյվյալ իրավաբանական անձի (ընկերության) ընդհանուր ժողովի որոշում:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն՝ կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ: Կողմերի միջև կայացված հաշտության համաձայնությունը ձևակերպվում է գրավոր: Դատարանը, նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը, կողմերին պարզաբանում է դրա դատավարական հետևանքները: **Դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե այն հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:** Այդ դեպքերում դատարանը վեճը քննում է ըստ էության:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցի չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, վերաքննիչ դատարանում օգտվում են գործին մասնակցող անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականությունները:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հաշտության համաձայնությունը կողմերի միջև փոխզիջման արդյունքում ձեռքբերված պայմանավորվածություն է, որը հաստատվում է դատարանի կողմից: Հաշտության համաձայնություն կնքելը տնօրինչական դատավարական գործողություն է, որի միջոցով կողմերը տնօրինում են ինչպես իրենց նյութական, այնպես էլ դատավարական իրավունքները: Մասնավորապես՝ կնքելով նման համաձայնություն՝ կողմերը փոխադարձ պայմանավորվածությամբ որոշակի փոփոխության են ենթարկում վիճելի իրավահարաբերությունը՝ այդ իրավահարաբերության շրջանակներում ստանձնելով նոր պարտավորություններ կամ վիճելի իրավահարաբերությունը փոխարինելով մեկ այլ իրավահարաբերությամբ կամ ուղղակիորեն դադարեցնելով այն: Վերը նշվածում դրսևորվում է հաշտության համաձայնության նյութաիրավական (քաղաքացիաիրավական) կողմը: Հաշտության համաձայնությամբ կողմերը միաժամանակ տնօրինում

են իրենց դատավարական իրավունքները, ինչի արդյունքում դատավարության հետագա ընթացքը գործի վարույթի կարճամաբ դադարում է: Նշվածում էլ դրսևորվում է հաշտության համաձայնության դատավարական կողմը: Ընդ որում, հաշտության համաձայնությունը հաստատող դատարանի վճիռն իր դատավարական նշանակությամբ և հետևանքներով հավասարեցված է գործն ըստ էության լուծող վճիռին, որի կամավոր չկատարումը հանգեցնում է դատական ակտի հարկադիր կատարման (*տե՛ս, «Յունիքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի թիվ ԼԴ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ օրենսդիրը, իրավունք վերապահելով կողմերին դատավարության ցանկացած փուլում կնքելու հաշտության համաձայնություն, միաժամանակ սահմանել է այն պայմանները, որոնց առկայության դեպքում հաշտության համաձայնությունը ենթակա չէ հաստատման: Դրանք են, մասնավորապես, եթե հաշտության համաձայնությունը հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը հաստատելիս դատարանը պարտավոր է պարզել այդպիսի հաստատումը բացառող՝ վերը նշված պայմանների բացակայությունը: Այլ կերպ ասած՝ օրենսդրորեն ամրագրվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելը բացառելու երկու հիմք՝ օրենքին (այլ իրավական ակտերին) հակասելը կամ այլ անձանց իրավունքները և օրինական շահերը խախտելը, և կախված այն հանգամանքից, թե որ հիմքով է բողոքարկվում տվյալ դատական ակտը, տարբերվում է նաև բողոք բերած անձանց շրջանակը: Այսպես, օրինակ, այն դեպքում, երբ կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը խախտում է այն անձանց իրավունքները և օրինական շահերը, ովքեր գործին մասնակից չեն դարձվել, վերջիններս կարող են իրենց իրավունքների դատական պաշտպանությունն իրականացնել՝ որպես գործին մասնակից չդարձված անձ հաշտության համաձայնությունը հաստատող դատական ակտը բողոքարկելով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ այն դեպքում, երբ դատական ակտը, որով հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը, բողոքարկվել է գործին մասնակից չդարձված անձանց կողմից, ապա վերադաս դատական ատյանները պետք է հաշվի առնեն, թե որքանով է այդ հաշտության համաձայնությունն առնչվում բողոք բերած անձի (անձանց) իրավունքներին և շոշափում նրանց օրինական շահերը, այսինքն՝ որքանով են այդ անձինք շահագրգիռ՝ կողմերի միջև կնքված և դատարանի կողմից հաստատված հաշտության համաձայնությունը վիճարկելու առումով:

Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է գործին մասնակից չդարձած անձանց իրավունքներին և պարտականություններին և նշել է, որ օրենսդիրը գործին մասնակից չդարձված անձանց վերապահում է գործին մասնակցող անձանց իրավունքներ և նրանց համար սահմանում պարտականություններ միայն այն դեպքում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացվել է նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ (*տե՛ս, ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի գյուղապետարանն ընդդեմ Լարիսա Եղիազարյանի, Գագիկ Մալխասյանի թիվ ԱՐԼԴ/0242/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ գործին մասնակից չդարձած անձանց դատավարական գործողություններն ուղղակիորեն պայմանավորված են նրանց դատավարական կարգավիճակով և ուղղված են վիճելի նյութական իրավահարաբերության կարգավորման կապակցությամբ թույլ տրված այնպիսի սխալի վերացմանը, որն իրավահարաբերության ոչ բոլոր մասնակիցներին գործին մասնակից դարձնելու արդյունք է: Հետևաբար գործին մասնակից չդարձված անձը, որի իրավունքների և օրինական շահերի վերաբերյալ կայացվել է դատական ակտ, պետք է իր խախտված իրավունքներն արդյունավետ միջոցներով վերականգնելու հնարավորություն ունենա (*տե՛ս, «Հայր և որդի Ադամյաններ» ՍՊԸ-ն ընդդեմ «Հինգերորդ Ասոր» ՍՊԸ-ի թիվ ԵԱ-*

ԳԴ/0199/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դապարանի 17.07.2015 թվականի որոշումը):

Վերը նշվածը հաշվի առնելով և անդրադառնալով սույն որոշմամբ բարձրացված իրավական հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ իրավաբանական անձն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Իրավաբանական անձի հիմնադիրը (մասնակիցը) պատասխանատու չէ իրավաբանական անձի, իսկ իրավաբանական անձը՝ իր հիմնադրի (մասնակցի) պարտավորությունների համար, բացառությամբ նույն օրենսգրքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները պատասխանատու չեն նրա պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, իսկ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար, իսկ ընկերության մասնակիցները պատասխանատու չեն ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

ա) նույն օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել ընկերության կառավարմանը.

բ) ստանալ տեղեկություններ ընկերության գործունեության վերաբերյալ.

գ) ստանալ ընկերության գործունեությունից ստացվող՝ օրենքով սահմանված շահույթի մասը.

դ) օրենքով սահմանված կարգով իր բաժնեմասը (դրա մասը) օտարել ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց.

ե) անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից.

զ) ընկերության լուծարման դեպքում բաժին ստանալ ընկերության մնացած գույքից: Ընկերության մասնակիցներն ունեն նաև օրենքով, ընկերության կանոնադրությամբ կամ ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված այլ իրավունքներ:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ Ընկերության մասնակիցները պարտավոր են՝

ա) ներդրումներ կատարել ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության հիմնադրման մասին պայմանագրով կամ ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված կարգով:

բ) չհրապարակել ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ, բացի օրենքով սահմանված դեպքերից:

Ընկերության մասնակիցները կրում են նաև օրենքով և ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Ընկերության բարձրագույն մարմին է հանդիսանում ընդհանուր ժողովը: Ընդհանուր ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ: Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն ներկա գտնվել ընդհանուր ժողովին, մասնակցել օրակարգի հարցերի քննարկմանը և քվեարկել որոշումներ ընդունելիս:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Ընդհանուր ժողովի բացառիկ լիազորություններից են նաև՝ ժր) նույն օրենքով և (կամ) ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Ընդհանուր ժողովն անցկացվում է նույն օրենքով, ընկերության կանոնադրությամբ և ներքին փաստաթղթերով սահմանված կարգով: Նույն օրենքով, ընկերության կանոնադրությամբ և ներքին փաստաթղթերով չկանոնակարգված մասով ընդհանուր ժողովի անցկացման կարգը սահմանվում է ընդհանուր ժողովի որոշմամբ:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենքի, այլ իրավական ակտերի, ինչպես նաև ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ ընդունված կամ ընկերության մասնակցի իրավունքները և օրինական շահերը խախտող ընդհանուր ժողովի որոշումը կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել ընկերության մասնակցի դիմումի հիման վրա: Նման դիմում կարող է տրվել երկու ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ ընկերության մասնակիցն իմացել կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին:

Վերոնշյալ օրենսդրական նորմերի վերլուծությունից հետևում է, որ իրավաբանական անձին (տվյալ պարագայում՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը)՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտի, բնորոշ են հետևյալ հատկանիշները՝ կազմակերպական միասնությունը, **գույքային առանձնացվածությունը**, քաղաքացիական շրջանառությունում իր անունից հանդես գալու իրավունքը և **ինքնուրույն գույքային պատասխանատվությունը**: Ընդ որում, գույքային առանձնացվածությունը և ինքնուրույն գույքային պատասխանատվությունն անմիջականորեն փոխկապակցված են և իրենց բովանդակությամբ հանգում են հետևյալին. իրավաբանական անձի գույքն առանձնացված է իր հիմնադիրների կամ մասնակիցների գույքից և իրավաբանական անձն իր պարտավորությունների համար պատասխանատու է միայն այդ գույքով: Այլ կերպ ասած՝ իրավաբանական անձը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար, իսկ իրավաբանական անձի մասնակիցները պատասխանատու չեն վերջինիս պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդի արժեքի սահմաններում կրում են իրավաբանական անձի գործունեության հետ կապված վնասների ռիսկը: Բացառություն կարող են կազմել միայն այն դեպքերը, երբ համապատասխան պատասխանատվությունը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ:

Սույն գործով Դատարանն Ընկերության և Կազմակերպության միջև հաշտության համաձայնությունը հաստատելիս և վճիռ կայացնելիս պատճառաբանել է, որ կողմերի հաշտության համաձայնությունը չի հակասում օրենքին և իրավական ակտերի պահանջ-

ներին և **չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը**, ուստի այն ենթակա է հաստատման, իսկ քաղաքացիական գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 7-րդ կետի հիմքով ենթակա է կարճման:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը բեկանելով և գործը նոր քննության ուղարկելով, պատճառաբանել է, որ վերաքննիչ բողոք բերած անձինք 12.03.2016 թվականին տեղի ունեցած Ընկերության ընդհանուր ժողովի ժամանակ առարկել են Ընկերության գույքը սեփականության իրավունքով Կազմակերպությանը օտարելու հարցի դեմ, որպիսի պայմաններում կողմերի միջև 14.03.2016 թվականին կնքված և 01.04.2016 թվականին Դատարանի կողմից հաստատված հաշտության համաձայնագրով խախտվել են այլ անձանց, տվյալ դեպքում՝ բողոքաբերների իրավունքները և օրինական շահերը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի վերը նշված պատճառաբանության հիմնավորվածությանը, հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործում առկա՝ Ընկերության 12.03.2016 թվականի ընդհանուր ժողովի թիվ 22 արձանագրության քաղվածքի համաձայն՝ Ընկերության ընդհանուր ժողովին ներկայացել են 96 տոկոս բաժնետաս ունեցող մասնակիցները, ուստի Ընկերության կանոնադրության 7.3 կետի ուժով ընդհանուր ժողովը համարվել է իրավագործ՝ «մեկ բաժնետաս-մեկ ձայն սկզբունքով»: Ի թիվս այլ հարցերի՝ ընդհանուր ժողովի օրակարգում ներառված է եղել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, Երևանի Օհանովի փողոցի թիվ 1 հասցեում գտնվող, 52,82քմ մակերեսով հասարակական նշանակության անշարժ գույքը Կազմակերպության հանդեպ գոյացած պարտքը մարելու նպատակով օտարելու հարցի քննարկումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կանոնադրության 7.2 կետի 16-րդ ենթակետով Ընկերության գույքի օտարման հետ կապված հարցին հավանություն տալու համար, կանոնադրության 7.3 կետի 3-րդ պարբերության համաձայն, անհրաժեշտ է ընդհանուր ժողովին մասնակցողների ձայների 3/4-ը, որի համար անհրաժեշտ է 72 տոկոս ձայն, հարցը դրվել է քվեարկության: Ժողովին մասնակցել են Ընկերության մասնակիցներ Համլետ Պետրոսյանը, Հասմիկ Գրիգորյանը, Հասմիկ Գյուրջյանը, Աննա Սահակյանը, Հասմիկ Խաչիկյանը, Մագդա Հակոբյանը, Վարդուհի Ֆաքիրյանը, Ամալիա Բաբայանը, Երագիկ Աշոտյանը, Անուշ Գալստյանը, Անահիտ Սարգսյանը, Քրիստինե Բաղդասարյանը: Քվեարկության արդյունքներով կողմ է քվեարկել Համլետ Պետրոսյանը՝ ի դեմս լիազորված անձ Գուրգեն Թորոսյանի (74 տոկոս բաժնետասով՝ ժողովին մասնակցող ձայների 77 տոկոս), դեմ՝ Հասմիկ Գրիգորյանը, Հասմիկ Գյուրջյանը, Աննա Սահակյանը, Հասմիկ Խաչիկյանը, Մագդա Հակոբյանը, Վարդուհի Ֆաքիրյանը, Ամալիա Բաբայանը, Երագիկ Աշոտյանը, Անուշ Գալստյանը, Անահիտ Սարգսյանը, Քրիստինե Բաղդասարյանը՝ ի դեմս լիազորված անձ Գագիկ Խաչատրյանի (22 տոկոս բաժնետասով՝ ժողովին մասնակցող ձայների 23 տոկոս), ձեռնպահ չկա:

Վերը նշվածը հաշվի առնելով և դրանք համադրելով սույն որոշման իրավական վերլուծությունների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վեճը վերաբերում է երկու իրավաբանական անձանց միջև ծագած պայմանագրային պարտավորություններին: Հետևաբար Ընկերությունն այդ պարտավորություններով ծագած հարաբերություններում հանդես է եկել որպես ինքնուրույն սուբյեկտ՝ իր գույքով պատասխանատվություն կրելով իր պարտավորությունների համար:

Բացի այդ, բողոք բերած անձինք (բացառությամբ Լարիսա Սարուխանովայի)՝ որպես Ընկերության մասնակիցներ, իրացրել են օրենքով և Ընկերության կանոնադրությամբ ամրագրված իրենց իրավունքները: Մասնավորապես՝ ներկա են գտնվել Ընկերության մասնակիցների 12.03.2016 թվականի ընդհանուր ժողովին, մասնակցել քվեարկությանը և դեմ քվեարկել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևանի Մալաթիա-Սերաստիա համայնքի Օգանովի փողոցի թիվ 1 հասցեի 52,82քմ ընդհանուր մակերեսով հասարակական նշանակության անշարժ գույքի տնօրինման գործարքին: Ընդ որում, այդ գործարքին հավանություն է տրվել Ընկերության այն մարմնի կողմից, որի բացառիկ իրավասությանն է պատկանել Ընկերության գույքի տնօրինման գործարքի կնքումը: Ավելին՝ Ընկերության ընդհանուր ժողովն եղել է իրավասու, քանի որ ժողովին



մասնակցել են 96% բաժնեմաս ունեցող մասնակիցները, իսկ վերը նշված հարցի վերաբերյալ որոշումն ընդունվել է ժողովին մասնակցողների ձայների երեք քառորդով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձանց կողմից վերը նշված օտարման գործարքին դեմ քվեարկելու հանգամանքն ինքնին չի խախտում «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով կամ Ընկերության կանոնադրությամբ սահմանված Ընկերության մասնակիցների որևէ իրավունք կամ օրինական շահ: Ավելին՝ Ընկերության 12.03.2016 թվականի ընդհանուր ժողովի որոշումը վերջինիս կանոնադրությանը համապատասխան ընդունված լինելու և Ընկերության մասնակիցների կողմից դատական կարգով վիճարկված չլինելու պայմաններում, առկա չէ որևէ հիմք՝ Ընկերության մասնակիցներ Հասմիկ Գրիգորյանի, Հասմիկ Գյուրջյանի, Աննա Սահակյանի, Հասմիկ Խաչիկյանի, Մագդա Հակոբյանի, Վարդուհի Ֆաքիրյանի, Ամալիա Բաբայանի, Երազիկ Աշոտյանի, Անուշ Գալստյանի, Անահիտ Սարգսյանի, Քրիստինե Բաղդասարյանի և Լարիսա Սարուխանովայի իրավունքները և օրինական շահերը խախտված համարելու համար:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հաշտության համաձայնությունը հաստատող Դատարանի վճիռը որևէ կերպ չի առնչվում Ընկերության մասնակիցների՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-13-րդ հոդվածներով սահմանված իրավունքներին և պարտականություններին, ուստի և Ընկերության մասնակիցներ Հասմիկ Գրիգորյանին, Հասմիկ Գյուրջյանին, Աննա Սահակյանին, Հասմիկ Խաչիկյանին, Մագդա Հակոբյանին, Վարդուհի Ֆաքիրյանին, Ամալիա Բաբայանին, Երազիկ Աշոտյանին, Անուշ Գալստյանին, Անահիտ Սարգսյանին, Քրիստինե Բաղդասարյանին և Լարիսա Սարուխանովային գործին մասնակից դարձնելու դատավարական պարտականություն Դատարանը չուներ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Դատարանի վճիռը վերաքննության կարգով գործին մասնակցող անձանց կողմից չի բողոքարկվել, իսկ գործին մասնակից չդարձված անձանց կողմից բերված բողոքն էլ սույն որոշման պատճառաբանություններով ենթակա էր մերժման, հետևաբար Վճռաբեկ դատարանը Դատարանի վճիռն օրինական ուժ տալիս հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը՝ առանց անդրադառնալու Դատարանի վճիռի իրավաչափությանը և հիմնավորվածությանը՝ այլ հիմքով բողոքարկում իրականացված չլինելու պատճառաբանությամբ:

**5. Վճռաբեկ դատարանի պայրձառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» կետի համաձայն՝ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գուքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, վերաքննիչ դատարանում օգտվում են գործին մասնակցող անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականությունները:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների պաշտպանության երաշխիք է հանդիսանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ ատյանում դատական ակտի վերանայման վարույթում գործին մասնակից չդարձված անձանց այնպիսի իրավունքների ու պարտականությունների ընձեռումը, որոնք սահմանված են գործին մասնակցող անձանց համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ, որպես գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների պաշտպանության երաշխիք, վերջիններս գործին մասնակցող անձանց իրավունքներից օգտվում և վերջիններիս համար սահմանված պարտականությունները կրում են ոչ միայն վերաքննիչ, այլ նաև վճռաբեկ ատյանում:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործին մասնակից չդարձված անձինք, օգտվելով գործին մասնակցող անձանց բոլոր իրավունքներից և կրելով գործին մասնակցող անձանց համար սահմանված նույն պարտականությունները, մի կողմից՝ իրավունք ունեն պահանջելու դատական ծախսերի հատուցում, մյուս կողմից՝ կարող են նաև կրել գործին մասնակցող անձանց դատական ծախսերի հատուցման պարտականություն՝ դատական ծախսերի բաշխման ընդհանուր կանոնի համապատասխան:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով Հասմիկ Գրիգորյանից, Հասմիկ Գյուրջյանից, Աննա Սահակյանից, Հասմիկ Խաչիկյանից, Մագդա Հակոբյանից, Վարդուհի Ֆաբիդյանից, Անալիա Բաբայանից, Երագիկ Աշոտյանից, Անուշ Գալստյանից, Անահիտ Սարգսյանից, Քրիստինե Բաղդասարյանից և Լարիսա Սարուխանովայից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 203.051 ՀՀ դրամ (6.768.383 \*3%)՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 14.10.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.06.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 01.04.2016 թվականի վճռին:

2. Հասմիկ Գրիգորյանից, Հասմիկ Գյուրջյանից, Աննա Սահակյանից, Հասմիկ Խաչիկյանից, Մագդա Հակոբյանից, Վարդուհի Ֆաբիրյանից, Անալիա Բարայանից, Երազիկ Աշոտյանից, Անուշ Գալստյանից, Անահիտ Սարգսյանից, Քրիստինե Բաղդասարյանից և Լարիսա Սարուխանովայից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե բռնագանձել 203.051 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 14.10.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/2005/02/12**  
 դատարանի որոշում **2017թ.**  
 Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/2005/02/12  
 Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան  
 Դատավորներ՝ Ա. Պետրոսյան  
 Կ. Չիլինգարյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

*Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ*

2017 թվականի դեկտեմբերի 27-ին դռնբաց դատական նիստում, քննելով «Արմենալ Սերվիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.06.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի, երրորդ անձինք Արայիկ Միրզոյանի, Լուսյա Ստեփանյանի, Վազգեն Հակոբյանի, Էդգար Բանդուրյանի ընդդեմ «Ռուսալ Արմենալ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն), երրորդ անձ Կարինե Հարությունյանի՝ Ընկերությանը հասցված վնասի հատուցման պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### **1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 22.900.000 ՀՀ դրամ՝ որպես Ընկերությանը հասցված վնասի գումար:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Հունանյան) 25.12.2013 թվականի վճռով հայցը՝ 22.888.292 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով, բավարարվել է, իսկ մնացած մասով՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ա. Մկրտչյան, Ն. Տավարացյան, Ն. Բարսեղյան) 11.04.2014 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքնն-

նիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.12.2013 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.06.2014 թվականի որոշմամբ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Հովսեփյան) (այսուհետ՝ Դատարան) 25.01.2016 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.06.2016 թվականի որոշմամբ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.01.2016 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Կազմակերպության ներկայացուցիչներ Նարինե Ճաղարյանը և Մերի Գևորգյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ և 53-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի կատարել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում, այլապես կպարզեր, որ գործում առկա ապացույցներով հիմնավորվում է Կազմակերպության կողմից ղեկավար ցուցումներ տալու փաստը, ինչը պայմանավորված է ոչ թե կանոնադրական կապիտալում գերակշռող մասնակցությամբ կամ հիմնված է պայմանագրի վրա, այլ Ընկերության որոշումները կանխորոշելու, այսինքն՝ վերջինիս հիմնադիրների՝ ցանկացած որոշում կայացնելու հնարավորությամբ: Հետևաբար այդ ապացույցների առկայության պայմաններում ձևավորվում է այն ներքին համոզմունքը, որ Ընկերության ցանկացած գործողություն, այդ թվում՝ անգործություն, եթե դրանք Կազմակերպության ցուցումները չկատարելու արդյունք չեն (որի վերաբերյալ դատարանին ապացույց չի ներկայացվել), իրականացվել են որպես Կազմակերպության կամքով իրականացված գործողություններ:

Ավելին, սույն գործով հաստատված փաստերով, կամ որ նույնն է՝ երկու իրավաբանական անձանց տարիների ընթացքում իրականացրած գործողություններով (նաև անգործությամբ) հիմնավորվում է Ընկերության անվերապահ կախվածությունը Կազմակերպությունից՝ անկախ Ընկերության կանոնադրական կապիտալում վերջինիս մասնակցության փաստից: Ընդ որում, նշված գործողությունների արդյունքում ծագող քաղաքացիաիրավական հետևանքների առումով որևէ նշանակություն չի կարող ունենալ, թե ի սկզբանե որտեղից կամ որ ընկերություններից են գալիս հանձնարարություններն ու ղեկավար ցուցումները, քանի որ Ընկերությանը ղեկավար ցուցումներ տրվել են ու նրա որոշումները կանխորոշվել են անմիջականորեն Կազմակերպության կողմից, որպիսի հանգամանքն էլ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ այդ երկու ընկերությունների բնորոշում է որպես դուստր և հիմնական ընկերություններ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.06.2016 թվականի որոշումը, և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

### 2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Ընկերության սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա մերժման, քանի որ վերջինիս կողմից ներկայացված ապացույցներով հաստատվում է, որ հանդիսանալով առանձին իրավաբանական անձ՝ Ընկերությունն իր անունից կնքել է պայմանագրեր, ստացել շահույթ, կայացրել որոշումներ՝ աշխատավարձերի դրույքաչափերի փոփոխման վերաբերյալ, ձեռնարկել է համապատասխան միջոցներ՝ իր գործունեությունն ապահովելու համար, որպիսի պարագայում անհիմն են դառնում այն փաստարկները, որ Կազմակերպությունն Ընկերության որոշումները կանխորոշելու, ինչպես նաև պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու լիազորություն է ունեցել: Ավելին՝ Ընկերության կողմից չեն ներկայացվել ապացույցներ այն մասին, որ ա) Ընկերությունը հանդիսանում է Կազմակերպության դուստր ընկերությունը, բ) Կազմակերպությունն ուներ պարտադիր ցուցումներ տալու իրավունք, գ) այդ ցուցումներն եղել են պարտադիր կատարման ցուցումներ, դ) աշխատավարձի չվճարման արդյունքում սնանկության հիմքերի առաջացման համար պատասխանատու է Կազմակերպությունը, և աշխատավարձ չի վճարվել Կազմակերպության ցուցումների արդյունքում, ե) Կազմակերպությունը գիտեր կամ կարող էր իմանալ համապատասխան հետևանքների առաջացման մասին: Ավելին, չի հիմնավորվել նաև պատճառահետևանքային կապը Կազմակերպության գործողությունների և Ընկերության վնասի միջև:

### 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասերի նկատմամբ սեփականության իրավունքի թիվ 020812 և թիվ 020813 վկայագրերի, Ընկերության մասնակիցների 24.05.2011 թվականի արտահերթ ընդհանուր ժողովի արձանագրության, ինչպես նաև Կազմակերպության գրանցված սեփականատերերի ցուցակի համաձայն՝ Ընկերությունում և Կազմակերպությունում միևնույն համամասնությամբ մասնակիցներ են հանդիսանում «ՌՖԼ-ՖՈՅԼ ԼԻՄԻԹԵԴ» ընկերությունը՝ 99 տոկոս, և «ՌՈՒՍԱԼ ԼԻՄԻԹԵԴ» ընկերությունը՝ 1 տոկոս (**հատոր 1-ին, գ.թ. 13, 40, 67**).

2. Կազմակերպության գլխավոր տնօրեն Գ. Ավետիսյանի 21.02.2005 թվականի թիվ 18 հրամանի համաձայն՝ Արայիկ Միրզոյանը, հանդիսանալով նույն Կազմակերպության կորպորատիվ հաշվարկների գծով ֆինանսական տնօրենի տեղակալ, 28.02.2005 թվականից ազատվել է գրեղեցրած պաշտոնից՝ տեղափոխվելով Ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնին՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի (**հատոր 1-ին, գ.թ. 65**).

3. «ՊԵՊՍ» ՍՊԸ-ի տնօրեն Դ. Սարգսյանը 06.06.2005 թվականի թիվ 001 գրությամբ Կազմակերպության գլխավոր տնօրեն Գ. Ավետիսյանին խնդրել է ցուցում տալ համապատասխան ծառայություններին՝ վերջինիս վստահված կազմակերպությունում առկա որոշ ապրանքների վաճառքի գները սահմանելու և կանխիկ հաշվարկով դիմողին հատկացնելու վերաբերյալ, քանի որ ունեցել է տեղեկություն Գ. Ավետիսյանին վստահված ձեռնարկությունում այդպիսի ապրանքների առկայության մասին: Գրության վրա առկա է Գ. Ավետիսյանի ձեռագիր մակագրությունն Ա. Գևորգյանին և Ընկերության տնօրեն Ա. Միրզոյանին՝ «քննարկել հարցը և գեկուցել» նշումով (**հատոր 1-ին, գ.թ. 76**).

4. «Ռուսալ Սայանսկայա Ֆոլգա» ընկերության գլխավոր տնօրեն Ի. Տիխոմիրովը 14.04.2005 թվականի թիվ ՈւԴ/03-45/1 գրությամբ խնդրել է Կազմակերպության գլխավոր տնօրեն Գ. Ավետիսյանին պահուստավորել և նախապատրաստել որոշ ապրանքների առավաճառքի պայմանագրերը: Գրության վրա առկա է Գ. Ավետիսյանի ձեռագիր մակագրությունն Ա. Գևորգյանին և Ընկերության տնօրեն Ա. Միրզոյանին՝ «խնդրում եմ ձևակերպել» նշումով (**հատոր 1-ին, գ.թ. 75**).

5. «Ար-Ալ» ՀՀ ՓԲԸ-ի տնօրեն Բ. Փախլանյանը 28.07.2006 թվականի թիվ 01-34 գրությամբ խնդրել է Կազմակերպության գլխավոր տնօրեն Գ. Ավետիսյանին տալ ցուցում

70 հատ 200 կգ տարողությամբ պողպատյա տակառներ բաց թողնելու համար: Գրության վրա առկա է Գ. Ավետիքյանի ձեռագիր մակագրությունն Ընկերության տնօրեն Ա. Միրզոյանին **(հատոր 1-ին, գ.թ. 74)**.

6. Ռուսական «Ռուսալ» ընկերության ներկայացուցիչը ««Արմենալ-Սերվիս» ՍՊԸ-ի մասնակիցների փոխարինում» թեմայով 07.07.2006 թվականին գրություն է ուղարկել Կազմակերպության գլխավոր տնօրեն Գ. Ավետիքյանին՝ հայտնելով, որ «Ընթացիկ տարվա ապրիլին սկսվել է «Ռուսալ-Արմենալ» ԲԲԸ-ի և «Արմենալ-Սերվիս» ՍՊԸ-ի մասնակիցների փոխարինումը: «Ռուսալ-Արմենալ» ԲԲԸ-ի մասնակիցների փոխարինումն ավարտվել է ընթացիկ տարվա մայիսին, «Արմենալ-Սերվիս» ՍՊԸ-ի մասնակիցների փոխարինումը մինչ այդ պահը չի ավարտվել:

«Ռուսալ» ընկերության ներկայացուցիչը խնդրել է Կազմակերպության գլխավոր տնօրեն Գ. Ավետիքյանին ցուցում տալ համապատասխան ծառայությունների՝ «Արմենալ-Սերվիս» ՍՊԸ մասնակիցների փոխարինման ընթացակարգն արագ ավարտելու և համապատասխան փաստաթղթերի պատճենները ԴՖՎԻՌՊ «Ռուսալ-ՈՒԿ» ՍՊԸ-ի հասցեով ներկայացնելու վերաբերյալ: Գրության վրա առկա է Գ. Ավետիքյանի ձեռագիր մակագրությունն Ընկերության տնօրեն Ա. Միրզոյանին՝ «Որն է պատճառը» նշումով **(հատոր 1-ին, գ.թ. 78)**.

7. Ռուսական «Ռուսալ» ընկերության ներկայացուցիչը ««Արմենալ-Սերվիս» ՍՊԸ-ի հիմնադիր փաստաթղթեր» թեմայով 11.09.2006 թվականի էլեկտրոնային գրությամբ Կազմակերպության գլխավոր տնօրեն Գ. Ավետիքյանին հայտնել է, որ «կառավարիչ ընկերությունում որոշում է ընդունվել տեխնիկական մասնակցին Ընկերությունից հանելու վերաբերյալ, ինչպես նաև խնդրել է շտապ կարգով ներկայացնել Ընկերության հիմնադիր փաստաթղթերի վերջին խմբագրությունները և 2005 թվականի արձանագրությունները: Գրության վրա առկա է Գ. Ավետիքյանի ձեռագիր մակագրությունն Ընկերության տնօրեն Ա. Միրզոյանին՝ «Ի կատարում» նշումով **(հատոր 1-ին, գ.թ. 77)**.

8. Համաձայնեցնելով Կազմակերպության անձնակազմի գծով տնօրեն Կ. Գյոզայանի հետ՝ արարողակարգի և կատարման վերահսկողության բաժնի պետ Ա. Սերոբյանը ծառայողական գրությամբ (ընդհանուր բաժին մուտքագրվել է 14.07.2009 թվականին) դիմել է Կազմակերպության գլխավոր տնօրեն Ս. Բորովիկին՝ Ընկերության աշխատակից հանդիսացող, այգեպան Կոմիսար Հայրապետյանի դրույքի 50 տոկոսանոց հավելավճարը վերականգնելու խնդրանքով: Գրության վրա նշագրվել է «համաձայն եմ» մակագրությունը, և Ընկերության տնօրեն Ա. Միրզոյանի 13.07.2009 թվականի թիվ 14 հրամանով Կոմիսար Հայրապետյանի համար սահմանվել է ամսական լրավճար՝ 50 տոկոս հավելավճարով **(հատոր 1-ին, գ.թ. 79-81)**.

9. Ռուսական «Ռուսալ» ընկերության ֆինանսական տնօրեն Դ. Տրուբնիկովը 08.12.2009 թվականի թիվ 0274-03-18/4Դ գրությամբ Կազմակերպության գլխավոր տնօրեն Ս. Բորովիկին հայտնել է, որ «Կառավարման համակարգի պարզեցման և հարկային ռիսկերի բացառման նպատակով անհրաժեշտ է համարում «Արմենալ-Սերվիս» ՍՊԸ-ի անձնակազմին 01.01.2010 թվականից մտցնել ձեռնարկության կառուցվածք՝ աշխատավարձի ֆոնդի փոխանցումով»:

Գրության մեջ նշված է նաև «Ձեռնարկության լուծարման անհրաժեշտության հարցը հանձնել մշակման ՌԳՄ ՈւՌ իրավաբանական բաժնի վարիչ Ե. Յու. Ստարչիկովային» **(հատոր 2-րդ, գ.թ. 35)**.

10. Ընկերության տնօրեն Ա. Միրզոյանը 24.12.2009 թվականի թիվ 41/с գրությամբ «Ռուսալ» միավորման փաթեթավորման բիզնեսի տնօրեն Ա. Բուրդինին առաջարկել է Ընկերության լուծարման օպտիմալ տարբերակ **(հատոր 1-ին, գ.թ. 44)**.

11. Ընկերության մասնակիցների 24.05.2011 թվականի արտահերթ ընդհանուր ժողովի արձանագրության համաձայն՝ Ընկերության լուծարման հանձնաժողովի անդամներ են նշանակվել Ե. Ստարչիկովան և Կարինե Հարությունյանը, ով 22.06.2006 թվականից աշխատել է Կազմակերպությունում **(հատոր 1-ին, գ.թ. 40, 72)**.

12. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.05.2012 թվականի թիվ ԵԱԲԳ/0143/04/11 օրինական ուժի մեջ

մտած վճռի համաձայն՝ Ընկերությունն Ընկերության լուծարման հանձնաժողովի անդամներ Կարինե Հարությունյանի և Ե. Ստարչիկովայի դիմումի հիման վրա ձանաչվել է սնանկ (**հատոր 1-ին, գ.թ. 14-20**).

13. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 15.05.2013 թվականի թիվ ԵԱԲԳ/0143/04/11 որոշմամբ հաստատվել է Ընկերության նկատմամբ ներկայացված պահանջների վերջնական ցուցակը՝ ընդհանուր 20.807.538 ՀՀ դրամի չափով (**հատոր 2-րդ, գ.թ. 25-34**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պայմառարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար.

2) Վերաքննիչ դատարանի կողմից «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով դուստր ընկերության սնանկության դեպքում նրա պարտքերի համար հիմնական ընկերության (ընկերակցության)՝ սուբսիդիար պարտասխանավորություն կրելու խնդրին այն դեպքում, երբ երկու ընկերություններն էլ, ըստ էության, ղեկավարվում են նույն սեփականատիրոջ ցուցումներով:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը կազմված է նույն օրենսգրքից և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքներից: Այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն նույն օրենսգրքին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության 8-րդ ենթակետի համաձայն՝ (...) քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ տնտեսական ընկերակցությունները կարող են ստեղծվել լիակատար ընկերակցության կամ վստահության վրա հիմնված ընկերակցության (կոմանդիտային ընկերակցության) ձևով: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ տնտեսական ընկերությունները կարող են ստեղծվել սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կամ բաժնետիրական ընկերության ձևով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն կամ ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ հնարավորություն ունի կանխորոշել նման ընկերության որոշումները: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դուստր ընկերությունը պատասխանատվություն չի կրում հիմնա-



կան ընկերակցության կամ ընկերության պարտքերի համար: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ (...) Հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունեցող է համարվում, եթե այդ իրավունքը նախատեսված է դուստր ընկերության հետ կնքված պայմանագրում: Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ հիմնական ընկերակցության կամ ընկերության մեղքով դուստր ընկերության սնանկության դեպքում հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը սուբսիդիար պատասխանատվություն է կրում նրա պարտքերի համար: Դուստր ընկերության սնանկությունը հիմնական ընկերակցության կամ ընկերության մեղքով առաջացած է համարվում, եթե այն վրա է հասել դուստր ընկերության կողմից հիմնական ընկերակցության կամ ընկերության պարտադիր ցուցումները կատարելու հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 106-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ բաժնետիրական ընկերության իրավական վիճակը և բաժնետերերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են նույն օրենսգրքով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) ընկերություն կամ ընկերակցություն նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով հնարավորություն ունի կանխորոշել այդ ընկերության որոշումները:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ դուստր ընկերությունը պատասխանատվություն չի կրում հիմնական ընկերության (ընկերակցության) պարտավորությունների համար:

(...)

Հիմնական ընկերությունը (ընկերակցությունը) դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունեցող է համարվում, եթե այդ իրավունքն ամրագրված է նրանց միջև **կնքված պայմանագրում կամ ծագում է օրենքով չարգելված այլ ձևով:**

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով դուստր ընկերության սնանկության դեպքում հիմնական ընկերությունը (ընկերակցությունը) սուբսիդիար պատասխանատվություն է կրում նրա պարտքերի համար: Դուստր ընկերության սնանկությունը համարվում է առաջացած հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով, եթե այն վրա է հասել դուստր ընկերության կողմից հիմնական ընկերության (ընկերակցության) պարտադիր ցուցումները կատարելու հետևանքով:

Նույն հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 4-6-րդ կետերով նախատեսված դեպքերում հիմնական ընկերությունը (ընկերակցությունը) ենթակա է պատասխանատվության, եթե նա գիտեր կամ կարող էր իմանալ համապատասխան հետևանքների առաջացման մասին:

Վերոնշյալ նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ դուստր ընկերությունն իրավաբանական անձի ինքնուրույն կազմակերպարավական ձև չէ, այլ այդ հասկացությամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել պաշտպանելու այլ ընկերության կամ ընկերակցության ցուցումներով կաշկանդված ընկերության, դրա պարտատերերի և մասնակիցների շահերը: Դուստր ընկերության ինքնավար կամք դրսևորելու հնարավորությունը սահմանափակված է մեկ այլ՝ հիմնական ընկերությունից (ընկերակցությունից) ունեցած տնտեսական կախվածության պատճառով: Դուստր ընկերություն կարող է լինել ինչպես բաժնետիրական, այնպես էլ սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունը: Ընդ որում, դուստր ընկերության հանդեպ հիմնական կարող է լինել ինչպես այլ տնտեսական ընկերություն, այնպես էլ ընկերակցություն: Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդիրը չի հատակեցրել, թե որ տեսակի ընկերություններն ու ընկերակցությունները կարող են լինել հիմնական, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դուստր ընկերության հանդեպ որպես հիմնական կարող են հանդես գալ ինչպես բոլոր տեսակի տնտեսական ընկերությունները, այնպես էլ ընկերակցությունները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընկերության՝ դուստր համարվելու վերաբերյալ իրավակարգավորումներ առկա են ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքում,

այնպես էլ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված իրավանորմերի կառուցվածքային վերլուծությունից բխում է, որ ընկերությունը կարող է համարվել դուստր հետևյալ դեպքերում.

1. այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն կամ ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով հնարավորություն ունի կանխորոշելու նման ընկերության որոշումները,

2. այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն կամ ընկերություն, նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ հնարավորություն ունի կանխորոշելու նման ընկերության որոշումները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում արտացոլված է այն տրամաբանությունը, ըստ որի՝ ընկերության դուստր լինելու համար էական է, որ մեկ այլ ընկերություն (ընկերակցություն) հնարավորություն ունենա կանխորոշելու տվյալ ընկերության որոշումները, և դրանով պայմանավորված՝ օրենսդիրը նախատեսել է հիմնական ընկերության՝ դուստր ընկերության գործունեությունից բխող հետևանքների համար պատասխանատվություն կրելու որոշակի դեպքեր: Այսինքն՝ դուստր ընկերության իրավական կարգավիճակի առանձնահատուկ կարգավորման անհրաժեշտությունը թելադրված է վերջինիս որոշումները մեկ այլ ընկերության (ընկերակցության) կողմից կանխորոշելու հնարավորությամբ՝ պայմանավորված տվյալ ընկերությունների միջև ձևավորված փոխհարաբերությունների բնույթով և դրանից բխող պատասխանատվության առանձնահատկություններով: Ընդ որում, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսել է նաև, թե ինչ ձևերով պետք է հիմնական ընկերությունը մեկ այլ ընկերության որոշումները կանխորոշելու հնարավորություն ունենա, որպեսզի վերջինս համարվի դուստր: Մասնավորապես՝ այդ ձևերն են դուստր ընկերության կանոնադրական կապիտալում գերակշռող մասնակցության առկայությունը կամ ընկերությունների միջև կնքված պայմանագիրը:

Շարունակելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի տրամաբանությունն առ այն, որ ընկերությունը դուստր ճանաչելու համար հատկապես կարևոր է վերջինիս որոշումներն այլ ընկերության կողմից կանխորոշվելու հնարավորության առկայությունը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, ի հավելումս վերոնշյալ երկու ձևերի, սահմանում է, որ ընկերությունը կարող է համարվել դուստր նաև, եթե **մեկ այլ ընկերության օրենքով չարգելված որևէ այլ ձևով հնարավորություն ունի կանխորոշելու փակ ընկերության որոշումները**: Ընդ որում, հիմնական ընկերությունը դուստր ընկերության որոշումների վրա կարող է ազդել, օրինակ, դուստր ընկերության գույքը գրավ վերցնելու, փոխառություն տրամադրելու, իր ներկայացուցիչներին դուստր ընկերության կառավարման մարմիններում ընդգրկելու և այլ եղանակներով: Հետևաբար վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում, հաշվի առնելով նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընկերությունը դուստր ճանաչելու համար բավարար է միայն հետևյալ փաստերի հաստատումը.

ա) որևէ ընկերության որոշումները կանխորոշելու հնարավորություն ունի մեկ այլ՝ հիմնական ընկերություն (ընկերակցություն),

բ) հիմնական ընկերության (ընկերակցության)՝ դուստր ընկերության որոշումները կանխորոշելու հնարավորությունը պայմանավորված է օրենքով չարգելված որևէ կառուցակարգի առկայությամբ:

Անդրադառնալով դուստր ընկերության սնանկության դեպքում հիմնական ընկերության պատասխանատվության առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այնպես էլ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով այդ կապակցությամբ սահմանված են նույնաբնույթ իրավակարգավորումներ: Մասնավորապես՝ երկու իրավական ակտերով էլ նախատեսված է, որ հիմնական ընկերությունը դուստր ընկերության սնանկության դեպքում կրում է սուբսիդիար պատասխանատվություն վերջինիս պարտքերի համար, և պատասխանատվությունն առաջանում է միայն այն դեպքում, երբ դուստր ընկերու-

թյան սնանկությունն առաջացել է հիմնական ընկերության մեղքով: Այսինքն՝ հիմնական և դուստր ընկերությունների առկայությունը դեռևս բավարար չէ՝ վերջինիս սնանկության դեպքում հիմնական ընկերության սուբսիդիար պատասխանատվության առաջացման համար, այլ պատասխանատվությունն առաջանում է միայն հիմնական ընկերության մեղավորության փաստը հաստատվելու դեպքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և թե՛ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ դուստր ընկերության սնանկությունը համարվում է հիմնական ընկերության մեղքով առաջացած, եթե դատելի է ունեցել հիմնական ընկերության՝ պարտադիր կատարման ենթակա ցուցումներին հետևելու արդյունքում: Հետևաբար նախ պետք է պարզել, թե արդյոք հիմնական ընկերությունը դուստր ընկերությանը պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու իրավունք ունեցել է, թե՛ ոչ, այնուհետև պարզել դուստր ընկերության սնանկության և հիմնական ընկերության ցուցումների միջև առկա պատճառահետևանքային կապը:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հիմնական ընկերության՝ վերոնշյալ իրավանորմերով ամրագրված՝ դուստր ընկերությանը պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու իրավունքին, արձանագրում է, որ այդ իրավունքն ինքնին չի ենթադրվում, և միայն հիմնական ու դուստր ընկերության առկայությունը դեռևս բավարար չէ հիմնական ընկերության՝ պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու իրավունքի վերաբերյալ եզրահանգում կատարելու համար: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետի բովանդակության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու հիմնական ընկերության իրավունքը կարող է ծագել ոչ միայն ընկերությունների միջև կնքված պայմանագրից, այլև օրենքով չարգելված որևէ այլ ձևով: Ավելին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը նաև հավելում է, որ հիմնական ընկերությունը (ընկերակցությունը) ենթակա է սուբսիդիար պատասխանատվության, եթե նա գիտեր կամ կարող էր իմանալ համապատասխան հետևանքների (տվյալ դեպքում դուստր ընկերության սնանկության) առաջացման մասին:

Ընդհանրացնելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով դուստր ընկերության սնանկության դեպքում նրա պարտքերի համար հիմնական ընկերության (ընկերակցության) սուբսիդիար պատասխանատվություն կրելու համար անհրաժեշտ է հետևյալ փաստերի միաժամանակյա առկայությունը.

- ա) հիմնական ընկերության առկայությունը,
- բ) դուստր ընկերության առկայությունը,
- գ) հիմնական ընկերության՝ դուստր ընկերությանը պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու իրավունքի առկայությունը,
- դ) դուստր ընկերության սնանկ լինելը,
- ե) հիմնական ընկերության մեղքի առկայությունը դուստր ընկերության սնանկության հարցում, որը պետք է պայմանավորված լինի պարտադիր ցուցումների կատարման հետևանքով սնանկության առաջացմամբ,
- զ) այն հանգամանքի առկայությունը, որ հիմնական ընկերությունը գիտեր կամ կարող էր իմանալ սնանկության առաջացման մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների ցուցմունքներով, գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին և 2-րդ համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համա-

ձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Այն ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն, և դատարանը հանում է ապացույցների կազմից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին հանդգնամբ:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով ապացույցի հասկացությունը, սպառիչ սահմանել է դրանց տեսակները, այն է՝ գրավոր և իրեղեն ապացույցները, փորձագետների եզրակացությունները, վկաների ցուցմունքները և գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Ընդ որում, գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*տե՛ս, Սվեդլյանսա ժուդիլյանն ընդդեմ Անսահիս Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով նախատեսված ապացույցների թույլատրելիությանը, գտել է, որ դատարանը պետք է վերոնշյալ հոդվածը կիրառելիս ցույց տա, թե որ հոդվածով է արգելված ապացույցի նման տեսակով նման փաստի հաստատումը (*տե՛ս, Վարդիթեր Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ Արարարի մարզի Արտաշատի քաղաքապետարանի և այլոց թիվ ԱՎԴ/0235/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Սույն գործով Դատարանը հայցը մերժելիս պատճառաբանել է, որ հայցվորը չի ապացուցել, որ Կազմակերպությունն Ընկերության որոշումները կանխորոշելու, ինչպես նաև պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու լիազորություն է ունեցել, մինչդեռ այդ հանգամանքների ապացուցման բեռը կրել է հայցվոր կողմը: Ավելին, Դատարանը հաստատված է համարել, որ սնանկության հիմքերն առաջացել են Ընկերության՝ սահմանված ժամկետում աշխատավարձ չվճարելու արդյունքում, սակայն հայցվորը և երրորդ անձինք Դատարանին չեն ներկայացրել որևէ ապացույց, որն ուսումնասիրելու արդյունքում կպարզվեր, որ պատասխանող Կազմակերպությունը պարտադիր կատարման ենթակա ցուցում է տվել Ընկերության տնօրենին՝ աշխատակիցներին աշխատավարձ չվճարելու վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ «(...) Դատարանի կողմից սույն գործով կատարվել է պատշաճ քննություն, ներկայացված բոլոր ապացույցներն ուսումնասիրվել և գնահատվել են իրենց համակցության մեջ, ինչի արդյունքում կատարվել են իրավաչափ եզրահանգումներ: (...) տվյալ դեպքում հայցվորը չի հիմնավորել, որ իր կողմից վկայակոչված նամակագրությունները և կատարված գործողությունները հնարավորություն են տվել պատասխանող Կազմակերպությանը կանխորոշելու սնանկ ձանաչված ընկերության որոշումները»: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ «(...)տվյալ դեպքում, անգամ եթե հիմնավոր են բողոքաբերի պնդումները, ըստ որի՝ «Արմենալ Սերվիս» ՍՊԸ-ն հանդիսանում է դուստր ընկերություն, ապա վերջինս պետք է հիմնավորել, որ ընկերության սնանկությունը առաջացել է հենց «Ռուսալ Արմենալ» ՓԲԸ-ի մեղքով՝ վերջինիս պարտադիր ցուցումները կատարելու հետևանքով: Մինչդեռ սույն գործով նշված հանգամանքը որևէ կերպ չի հիմնավորվել (...): Ավելին, սույն գործով հայցվորը կրել է նաև այն հանգամանքի ապացուցման բեռը, ըստ որի՝ «Ռուսալ Արմենալ» ՓԲԸ-ն իմացել է կամ կարող էր իմանալ իր ցուցումները կատարելու արդյունքում համապատասխան հետևանքների առաջացման մասին»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա ապացույցներով, մասնավորապես՝ «ՊԵՊՍ» ՍՊԸ-ի տնօրեն Դ. Սարգսյանի 06.06.2005 թվականի թիվ 001 գրությամբ, «Ռուսալ Սայանսկայա Ֆոլգա» ընկերության գլխավոր տնօրեն Ի. Տիխոմիրովի 14.04.2005 թվականի թիվ ՈւԴ/03-45/1 գրությամբ, Կազմակերպության գլխավոր տնօրեն Գ. Ավետիսյանի 21.02.2005 թվականի թիվ 18 հրամանով, «Ար-Ալ» ՀՀ ՓԲԸ-ի տնօրեն Բ. Փահլևանյանի 28.07.2006 թվականի թիվ 01-34 գրությամբ, Կազմակերպության արարողակարգի և կատարման վերահսկողության բաժնի պետ Ա. Սերոբյանի ծառայողական գրությամբ, Ընկերության տնօրեն Ա. Միրզոյանի 13.07.2009 թվականի թիվ 14 հրամանով, ռուսական «Ռուսալ» ընկերության ներկայացուցչի՝ ««Արմենալ-Սերվիս» ՍՊԸ-ի մասնակիցների փոխարինում» թեմայով 07.07.2006 թվականի գրությամբ, ռուսական «Ռուսալ» ընկերության ներկայացուցչի՝ ««Արմենալ-Սերվիս» ՍՊԸ-ի հիմնադիր փաստաթղթեր» թեմայով 11.09.2006 թվականի էլեկտրոնային գրությամբ, ռուսական «Ռուսալ» ընկերության ֆինանսական տնօրեն Դ. Տրուբնիկովի 08.12.2009 թվականի թիվ 0274-03-18/4Դ գրությամբ, Ընկերության տնօրեն Ա. Միրզոյանի 24.12.2009 թվականի թիվ 41/с գրությամբ, Ընկերության մասնակիցների 24.05.2011 թվականի արտահերթ ընդհանուր ժողովի արձանագրությամբ հիմնավորվում է այն հանգամանքը, որ Կազմակերպությունն Ընկերության որոշումները կանխորոշելու և պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու լիազորություն է ունեցել, ինչպես նաև պատասխանատու է աշխատավարձի չվճարման արդյունքում վերջինիս սնանկության հիմքերի առաջացման համար, քանի որ հենց Կազմակերպությունն է փաստացի ղեկավարել Ընկերության ընդհանուր գործունեությունը: Մասնավորապես՝ վերոնշյալ փաստերում առկա հետևյալ արտահայտությունների՝ «քննարկել հարցը և զեկուցել», «խնդրում եմ ձևակերպել», «ի կատարում», ինչպես նաև այդ փաստերի համակցության մեջ գնահատման արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կազմակերպությունը, օրենքով չարգելված ձևով ցուցումներ տալով, կանխորոշել է Ընկերության որոշումները, ինչը, ըստ էության, դրսևորվել է Կազմակերպության կողմից Ընկերության ցանկացած որոշում ստանալու հնարավորությամբ: Ավելին, Ընկերության ողջ տնտեսական գործունեությունը, ըստ էության, գտնվել է Կազմակերպության ընդհանուր ղեկավարման ներքո: Հետևաբար Կազմակերպության կողմից Ընկերության տնտեսական գործունեությունը ղեկավարելու պայմաններում վերջինիս սնանկության առաջացումը ևս տեղի է ունեցել Կազմակերպության տված ցուցումների արդյունքում՝ անկախ աշխատավարձ չվճարելու վերաբերյալ հստակ ցուցում տալու մասին ուղղակի ապացույցների առկայության: Ավելին, նման պայմաններում Կազմակերպությունը եթե նույնիսկ չգիտեր, պապ առնվազն կարող էր իմանալ Ընկերության սնանկության առաջացման մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Ընկերության համար Կազմակերպության կողմից տրված ցուցումների պարտադիր լինելը, ինչպես նաև Ընկերության դուստր լինելու հանգամանքը պայմանավորված են եղել երկու ընկերություններում բաժնեմասերի նույն սեփականատիրոջ առկայությամբ, որն իր իրավագործություններն իրականացրել է միջնորդավորված՝ Կազմակերպության միջոցով:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կազմակերպության կողմից Ընկերության որոշումների վրա ազդելու հնարավորությունը պայմանավորված է եղել սնանկ ձանաչված Ընկերության բաժնեմասի սեփականատիրոջ կողմից տրված մանդատով, որպիսի հանգամանքն արգելված չէ օրենքով և հիմք է սուբսիդիար պատասխանատվության համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, եկել են սխալ եզրահանգման՝ անտեսելով, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 15.05.2013 թվականի թիվ ԵԱԶԴ/0143/04/11 որոշմամբ հաստատվել է Ընկերության նկատմամբ ներկայացված պահանջների վերջնական ցուցակը՝ ընդհանուր 20.807.538 ՀՀ դրամի չափով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառավարչի վարձատրությունը սահմանվում է դատարանի որոշմամբ, պարտատերե-

րի պահանջների բավարարման չափի հետևյալ տոկոսադրույքներով՝ մինչև 25 միլիոն դրամ՝ 10 տոկոս:

Նկատի ունենալով, որ թիվ ԵԱԲԳ/0143/04/11 գործի շրջանակներում պարտատերերի պահանջների չափը կազմում է 20.807.538 ՀՀ դրամ, որի 10 տոկոսը կազմում է 2.080.753,8 ՀՀ դրամ (ընդհանուր՝ 22.888.292 ՀՀ դրամ), Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կազմակերպության սուբսիդիար պատասխանատվությունն Ընկերության պարտքերի համար կազմում է 22.888.292 ՀՀ դրամ: Հետևաբար հայցը՝ 22.888.292 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասով, ենթակա է բավարարման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցը բավարարման ենթակա է միայն 22.888.292 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով, քանի որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավադատության դատարանի 25.12.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 22.888.292 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով, իսկ մնացած մասով մերժվել է, ու այդ մասով հայցվորի կողմից այն չի բողոքարկվել:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարձառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դա-

տարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «իա. 1» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են սնանկության կառավարիչները՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Նկատի ունենալով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ ստորադաս դատարանի դատական ակտը ենթակա է փոփոխման, ինչի արդյունքում մասնակիորեն բավարարման ենթակա է նաև Ընկերության սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի հայցը՝ 22.888.292 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով, որպիսի պայմաններում վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով Կազմակերպությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 457.776 ՀՀ դրամ (22.888.292 ՀՀ դրամ \* 2%)՝ որպես հայցադիմումի համար սահմանված և վճարման ենթակա պետական տուրքի գումար: Կազմակերպությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման նաև 686.648,80 ՀՀ դրամ (22.888.292 ՀՀ դրամ \* 3%)՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և վճարման ենթակա պետական տուրքի գումար, ինչպես նաև 686.648,80 ՀՀ դրամ (22.888.292 ՀՀ դրամ \* 3%)՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և վճարման ենթակա պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.06.2016 թվականի որոշումը և այն փոփոխել. հայցը բավարարել մասնակիորեն՝ «Ռուսալ Արմենալ» ՓԲԸ-ից հօգուտ «Արմենալ Սերվիս» ՍՊԸ-ի բռնագանձել 22.888.292 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում:

2. «Ռուսալ Արմենալ» ՓԲԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 457.776 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար սահմանված և վճարման ենթակա պետական տուրքի գումար:

«Ռուսալ Արմենալ» ՓԲԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 686.648,80 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և վճարման ենթակա պետական տուրքի գումար:

«Ռուսալ Արմենալ» ՓԲԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 686.648,80 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և վճարման ենթակա պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0395/02/15  
դատարանի որոշում 2017թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0395/02/15  
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան  
Դատավորներ՝ Ն. Բարսեղյան  
Մ. Հարթենյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Մ. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին,  
դժբաց դատական նիստում, քննելով Արտաշես Թառումյանի վճռաբեկ բողոքը ՀՀ  
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ ՀՀ  
ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) դիմումի, երրորդ անձ  
Արտաշես Թառումյանի՝ գույքը տիրագուրկ ձանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Նախարարությունը պահանջել է «Ֆիրմա Նյու» ՍՊԸ-ի մաք-  
սային պահեստում գտնվող, փորձագետի եզրակացությանը համապատասխանող 21  
մատանիները, 3 արձանիկների գլուխները, 32 բանկային թղթադրամները, 11 նամակա-  
նիշերը, 5 փոստային քարտերը, 13 բանկային չեկերը, 2 նամակները և 21 մետաղադրամ-  
ները ձանաչել տիրագուրկ՝ հանձնելով պետության սեփականությանը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-  
թյան դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 04.11.2015 թվակա-  
նի վճռով Նախարարության դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
12.02.2016 թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝  
Դատարանի 04.11.2015 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արտաշես Թառումյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:



**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները՝ հաշվի չառնելով այն, որ Արտաշես Թառումյանը, հանդիսանալով առգրավված գույքի սեփականատեր, ձեռնարկել է ակտիվ գործողություններ իրեն պատկանող գույքը վերադարձնելու ուղղությամբ: Հետևաբար ակնհայտ է, որ մաքսային մարմինների կողմից առգրավված գույքը տիրագուրկ չէ և չի կարող հանձնվել պետության սեփականությանը: Ավելին՝ Նախարարությունն ի հիմնավորումն իր դիմումի չի ներկայացրել որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց այն մասին, որ առգրավված գույքը տիրագուրկ է, իսկ վկայակոչած փաստի ապացուցված չլինելու բացասական հետևանքները պետք է կրի Նախարարությունը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ թե՛ մաքսային մարմինները, թե՛ ՀՀ գլխավոր դատախազությունը և թե՛ Նախարարությունը հաստատապես համոզված են եղել, որ առգրավված գույքի սեփականատերն Արտաշես Թառումյանն է, այլապես վերջինիս դեմ չէր իրականացվի վարչական վարույթ և քրեական հետապնդում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.02.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 04.11.2015 թվականի վճռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության վարչության (այսուհետ՝ Վարչություն) «Զվարթնոց» բաժնի աշխատակիցների կողմից 27.04.2013 թվականին կազմված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրության համաձայն՝ 27.04.2013 թվականին՝ ժամը 14:00-ի սահմաններում Վարչության «Զվարթնոց» բաժնի աշխատակիցները «Զվարթնոց» օդանավակայանում Երևան-Մոսկվա թիվ «ՏՄ1861» չվերթով մեկնող ուղևորների մաքսային հսկողության ժամանակ ՀՀ քաղաքացի Արտաշես Ալեքսանի Թառումյանի ուղեբեռում գտնվող թերմոսի մեջ հայտնաբերել են մաքսային հսկողությունից թաքցրած տարբեր պետությունների և տարբեր ժամանակաշրջանների 257 մետաղադրամներ, իսկ ձեռքի պայուսակի միջից՝ հետևյալ ապրանքատեսակները. 21 մատանիներ, 3 արձանիկների գլուխներ, 32 բանկային թղթադրամներ, 11 նամականիշներ, 5 փոստային քարտեր, 13 բանկային չեկեր, 2 նամակներ, 21 մետաղադրամներ: Իրավախախտման անմիջական օբյեկտ հանդիսացող վերոգրյալ առարկաները վերցվել են՝ ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 264-րդ հոդվածով (**հատոր 1-ին, գ.թ. 7-8**):

2) Ապրանքագրի ի պահ ընդունման համար 04.11.2013 թվականին կազմված ակտի համաձայն՝ Կոմիտեի քննչական վարչության քննիչի կողմից «Ֆիրմա Նյու» ՍՊԸ-ի մաքսային պահեստ ի պահ է հանձնվել ապրանք (մշակութային արժեքներ) (**հատոր 1-ին, գ.թ. 113**):

3) Կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնի քննիչ Վ. Հակոբջանյանի 28.10.2013 թվականի «Քրեական գործ հարուցելը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» որոշման համաձայն՝ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, և Արտաշես Թառումյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից համաներման ակտ ընդունելու հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 110-112**):

4) Դատարանին հասցեագրված 03.03.2015 թվականի դիմումով Արտաշես Թառունյանը միջնորդություն է ներկայացրել սույն գործով որպես երրորդ անձ ներգրավվելու մասին՝ հայտնելով, որ ինքը Նախարարության կողմից պահանջվող գույքի սեփականատերն է: Դատարանի որոշմամբ Արտաշես Թառունյանի միջնորդությունը բավարարվել է, և վերջինս գործով ներգրավվել է որպես երրորդ անձ (**հատոր 1-ին, գ.թ. 117, հատոր 2-րդ, գ.թ. 1-3**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ մաքսային հսկողությունից թաքցված և մաքսային մարմինների կողմից վերցված շարժական գույքը տիրագուրկ ճանաչելու հնարավորության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե մաքսային հսկողությունից թաքցված և մաքսային մարմինների կողմից վերցված գույքը կարո՞ղ է արդյոք փոխյալ փաստի առթիվ քրեական գործ հարուցված չլինելու և քրեական հետապնդում չիրականացվելու դեպքում դատական կարգով ճանաչվել տիրագուրկ այն պայմաններում, երբ գործի քննությանը չի հասարակվում այն տիրագուրկ ճանաչելու իրավական և փաստական հիմքերի առկայությունը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տիրագուրկ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ տիրագուրկ շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել նույն օրենսգրքի 179-188-րդ հոդվածների կանոններով: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ տիրագուրկ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու հիմքերն ու կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ շարժական գույքը, որը սեփականատերը լքել է կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու նպատակով թողել է այլ կերպ (դեռ նետված գույք), այլ անձինք կարող են վերածել իրենց սեփականության՝ նույն հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անձը, ում սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հողամասում, ջրավազանում կամ այլ օբյեկտում կա նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափից ակնհայտ ցածր արժեք ունեցող դեռ նետված գույք կամ դեռ նետված մետաղների ջարդոն, խոտանված արտադրանք, օգտակար հանածոների արդյունահանման ժամանակ առաջացած լցակույտեր, արտադրական և այլ թափոններ, իրավունք ունի այդ գույքը վերածել իր սեփականության՝ ձեռնամուխ լինելով դրա օգտագործմանը կամ կատարելով գույքը սեփականության վերածելու այլ գործողություններ: Դեռ նետված այլ գույքն անցնում է այն տիրապետող անձի սեփականությանը, եթե այդ անձի դիմումի հիման վրա դատարանը գույքը ճանաչում է տիրագուրկ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից (...), սեփականության իրավունքից հրաժարվելու (...), և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփա-

կանության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 187-րդ հոդվածի համաձայն՝ գույքը տիրագուրկ ճանաչելու վերաբերյալ քաղաքացու կամ իրավաբանական անձի դիմումում պետք է նշվի, թե որ գույքն է տիրագուրկ ճանաչվելու, նկարագրվեն դրա հիմնական տարբերակիչ հատկանիշները, ինչպես նաև բերվեն ապացույցներ, որոնք հաստատում են սեփականատիրոջ կողմից առանց գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության գույքը թողնելու փաստը և ապացույցներ՝ գույքը դիմողի տիրապետման անցնելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, գտնելով, որ գույքը սեփականատեր չունի կամ այն դրա սեփականատիրոջ կողմից թողնվել է առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության, վճիռ է կայացնում գույքը տիրագուրկ ճանաչելու և տիրապետող անձի սեփականությանն այն հանձնելու մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գույքի նկատմամբ անձի սեփականության սուբյեկտիվ իրավունքը ծագում է օրենքով նախատեսված իրավաբանական փաստերի ուժով, որոնք հիմք են հանդիսանում սեփականության իրավունքի առաջացման համար: Սեփականության իրավունքի ծագման նշված հիմքերից մեկը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 179-րդ հոդվածով, որը սահմանում է լքյալ (դեն նետված) գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման պայմաններն ու կարգը: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 179-րդ, 279-րդ և 280-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ անձը կարող է սկզբնական եղանակով սեփականության իրավունք ձեռք բերել լքյալ (դեն նետված) շարժական գույքի նկատմամբ. շարժական գույքը համարվում է լքյալ (դեն նետված), եթե սեփականատերը լքել է այն կամ այլ կերպ թողել է այն՝ դրա նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու նպատակով: Ընդ որում, ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից որևէ գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելը, որը կատարվում է այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության, համարվում է այդ անձի սեփականության իրավունքի դադարման հիմք և հանդիսանում է նույն գույքի՝ որպես լքյալ (դեն նետված) գույքի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքի առաջացման նախադրյալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գույքը դատական կարգով տիրագուրկ ճանաչելու կարգը սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, որի 187-րդ և 188-րդ հոդվածների համակարգային վերլուծության համաձայն՝ գույքը տիրագուրկ ճանաչելու պահանջով դատարան դիմած անձը պետք է ներկայացնի ապացույցներ, որոնք կհաստատեն հետևյալ փաստական հանգամանքների առկայությունը.

1) տիրագուրկ ճանաչելու պահանջի առարկա գույքը գտնվում է դատարան դիմած անձի տիրապետության ներքո,

2) գույքը չունի սեփականատեր կամ տվյալ գույքի սեփականատերը լքել է այն՝ առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության:

Ընդ որում, դատարանը կարող է գույքը տիրագուրկ ճանաչելու և տիրապետող անձի սեփականությանն այն հանձնելու մասին վճիռ կայացնել միայն այն դեպքում, երբ գործի քննությամբ հաստատվի, որ գույքը չունի սեփականատեր, կամ այն թողնվել է սեփականատիրոջ կողմից՝ առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշա-

նակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ սույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավական վերլուծությանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*տես, օրինակ, Էդգար Մարկոսյանն և Ջարոսի Գևորգյանն ընդդեմ Սեդա Մարգարյանի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*տես, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ 27.04.2013 թվականին «Զվարթնոց» օդանավակայանում Երևան-Մոսկվա թիվ «SU1861» չվերթով մեկնող ուղևորների մաքսային հսկողության ժամանակ Վարչության «Զվարթնոց» բաժնի աշխատակիցների կողմից ՀՀ քաղաքացի Արտաշես Թառույանի ուղեբեռում հայտնաբերվել են մաքսային հսկողությունից թաքցրած իրեր (մետաղադրամներ, բանկային թղթադրամներ, բանկային չեկեր, նամականիշներ, փոստային քարտեր, նամակներ, մատանիներ, արձանիկների գլուխներ), որոնք Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 264-րդ հոդվածի կիրառմամբ վերցվել են և ի պահ են հանձնվել «Ֆիրմա Նյու» ՍՊԸ-ի մաքսային պահեստում: Սակայն նշված փաստի առթիվ քրեական գործ չի հարուցվել, և Արտաշես Թառույանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից համաներման ակտ ընդունելու հիմքով:

Սույն գործով դիմելով դատարան՝ Նախարարությունը պահանջել է Արտաշես Թառույանից վերցված և ի պահ հանձնված վերագրյալ իրերը ձանաչել տիրազուրկ և հանձնել պետության սեփականությանը, քանի որ այդ իրերի սեփականատերը հրաժարվել է դրանցից: Մինչդեռ Արտաշես Թառույանը հայտնել է Դատարանին, որ ինքն է հանդիսանում Նախարարության կողմից պահանջվող իրերի սեփականատերը և չի հրաժարվել դրանց նկատմամբ սեփականության իրավունքից:

Դատարանը մերժել է Նախարարության դիմումը՝ պատճառաբանելով, որ Նախարարությունը չի ներկայացրել ապացույցներ այն մասին, որ իր կողմից ներկայացված պահանջի առարկա հանդիսացող գույքը սեփականատեր չունի:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Նախարարության վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության՝ պատճառաբանելով, որ Դատարանը չի իրականացրել լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն: Ըստ Վե-

րաքննիչ դատարանի՝ Դատարանը, մասնավորապես, չի պարզել այն հարցը, թե առկա չեն արդյոք բավարար հիմքեր եզրակացնելու համար, որ Նախարարության կողմից պահանջվող իրերի սեփականատերն իր գործողություններով (անգործությամբ) փաստացի հրաժարվել է այդ իրերի նկատմամբ սեփականության իրավունքից:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Նախարարության կողմից ներկայացված պահանջի առարկա հանդիսացող շարժական գույքը դուրս է եկել Արտաշես Թառումյանի տիրապետությունից իրենից անկախ հանգամանքներում, քանի որ այդ գույքը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 264-րդ հոդվածի կիրառմամբ վերցվել է Արտաշես Թառումյանից Վարչության «Ջվարթնոց» բաժնի աշխատակիցների կողմից և հետագայում ի պահ է հանձնվել մաքսային պահեստ: Տվյալ դեպքում ՀՀ մաքսային սահմանը հատելիս Արտաշես Թառումյանի մոտ մաքսային հսկողությունից թաքցված իրեր հայտնաբերելու փաստի առթիվ քրեական գործ կամ վարչական վարույթ չի հարուցվել, մինչդեռ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 264-րդ հոդվածի հիմքով վերջինիցս վերցված գույքը վարչական մարմինն առանց որևէ իրավական հիմքի շարունակել է պահել իր տիրապետության ներքո և ոչ իրավաչափորեն չի վերադարձրել այն անձին, որից այդ գույքը վերցվել է, այսինքն՝ Արտաշես Թառումյանին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արտաշես Թառումյանից վերցված գույքի տնօրինման հարցը վերջինիս նկատմամբ քրեական հետապնդման չիրականացման պարագայում ենթակա էր լուծման քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից, և սույլ գույքը պետք է վերադարձվեր այն անձին, որից այդ գույքը վերցվել էր, այսինքն՝ Արտաշես Թառումյանին:

Ավելին՝ Վարչության «Ջվարթնոց» բաժնի աշխատակիցների կողմից 27.04.2013 թվականին կազմված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրության համաձայն՝ Արտաշես Թառումյանի մոտ հայտնաբերված մաքսային հսկողությունից թաքցրած իրերը վերցվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 264-րդ հոդվածի ուժով, որի համաձայն՝ (...) իրերի գննության ժամանակ հայտնաբերված իրավախախտման (...) անմիջական օբյեկտ հանդիսացող իրերը (...) վերցվում են նույն օրենսգրքի 261-րդ և 263-րդ հոդվածներում նախատեսված մարմինների պաշտոնատար անձանց կողմից: Վերցված իրերն ու փաստաթղթերը ընդհուպ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը պահվում են այն մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից որոշվող տեղերում, որոնց իրավունք է վերապահված վերցնելու իրերը և փաստաթղթերը, իսկ գործը քննելուց հետո, նայած գործի քննության արդյունքներին, դրանք սահմանված կարգով բռնագրավվում կամ վերադարձվում են տիրոջը (...):

Վերոգրյալ իրավադրույթները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 264-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ Արտաշես Թառումյանից վերցված իրերը գործը քննելուց հետո պետք է վերադարձվեին տիրոջը, սույլ դեպքում՝ Արտաշես Թառումյանին, քանի որ սույլ դեպքում վերջինից վերցված գույքի բռնագրավման որևէ իրավական հիմք առկա չէ:

Մինևսույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մաքսային մարմինների կողմից հայտնաբերված մշակութային արժեքներն Արտաշես Թառումյանի տիրապետումից դուրս են եկել իրենից անկախ հանգամանքներում և վերոհիշյալ գույքի՝ **մաքսային պահեստում ի պահ հանձնումը չէր կարող վկայել գույքը լքելու կամ դրանից հրաժարվելու մասին: Հետևաբար վերջինիս կողմից իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից հրաժարվելու մասին վկայող գործողությունների բացակայության պայմաններում, որոնք ակնհայտ կդարձնեին գույքի տիրապետումից,**

**օգտագործումից և տնօրինումից մեկուսանալու և այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք չպահպանելու մտադրությունը, առկա չեն բավարար հիմքեր եզրակացնելու, որ Արտաշես Թառումյանը հրաժարվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից:**

Փաստորեն, սույն գործով չի ապացուցվել այն հանգամանքը, որ Արտաշես Թառումյանը կատարել է որևէ գործողություն, որը վկայում է Վարչության «Զվարթնոց» բաժնի աշխատակիցների կողմից վերցված իրերի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից Արտաշես Թառումյանի մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության: Այլ կերպ ասած՝ սույն գործով Նախարարությունը չի ներկայացրել բավարար ապացույցներ այն մասին, որ Արտաշես Թառումյանը լքել է խնդրո առարկա շարժական գույքը՝ առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության:

Այսպիսով, սույն գործով Նախարարության դիմումը ենթակա էր մերժման, քանի որ դատարանը կարող է գույքը տիրագուրկ ճանաչելու և տիրապետող անձի սեփականությանն այն հանձնելու մասին վճիռ կայացնել միայն այն դեպքում, երբ գործի քննությանը հաստատվի, որ գույքը չունի սեփականատեր, կամ այն թողնվել է սեփականատիրոջ կողմից՝ առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության: Մինչդեռ սույն գործի քննությանը չի հաստատվել այն հանգամանքը, որ Արտաշես Թառումյանից վերցված և մաքսային պահեստ ի պահ հանձնված շարժական գույքը չունի սեփականատեր, կամ այն թողնվել է սեփականատիրոջ կողմից՝ առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Բացի այդ, ՀՀ մաքսային սահմանը հատելիս Արտաշես Թառումյանի մոտ մաքսային հսկողությունից թաքցված իրեր հայտնաբերելու փաստի առթիվ քրեական գործ չի հարուցվել և Արտաշես Թառումյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել, որպիսի պայմաններում վերջինից վերցված և մաքսային պահեստ հանձնված գույքի տնօրինման հարցը ենթակա էր լուծման վարույթն իրականացնող մարմնի կողմից: Ավելին՝ սույն գործում առկա չէ որևէ ապացույց՝ վերը նշված խախտման համար վարչական վարույթ հարուցված լինելու և Արտաշես Թառումյանին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշմամբ նշված փաստարկներն անհիմն են, քանի որ Դատարանը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատել է սույն գործում առկա բոլոր ապացույցները և իրավացիորեն հանգել այն եզրակացության, որ սույն գործի քննությանը չի հաստատվել Նախարարության կողմից ներկայացված պահանջի առարկա շարժական գույքը տիրագուրկ ճանաչելու իրավական և փաստական հիմքերի առկայությունը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը, համաձայն որի՝ գործն ըստ էության ձիշտ լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, ուստի Դատարանի վճռին պետք է տալ օրինական ուժ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Միաժամանակ վերոհիշյալ դիրքորոշման համար Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

**5. Վճռաբեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին, 3-րդ և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդված 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի «գ» կետի համաձայն՝ (...) պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար հատուկ վարույթի գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ (...) բազային տուրքի չափ է սահմանվում 1.000 դրամը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ, եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ հատուկ վարույթի կարգով քննվող սույն քաղաքացիական գործով Արտաշես Թառումյանի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելու համար պետական տուրքի՝ օրենքով սահմանված չափը կազմում է 10.000 ՀՀ դրամ: Արտաշես Թառումյանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ

դրամ պետական տուրք:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ Արտաշես Թառույանի կողմից վճարված պետական տուրքը՝ 10.000 ՀՀ դրամի չափով, անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերած անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, գտնում է, որ Արտաշես Թառույանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը՝ 10.000 ՀՀ դրամի չափով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Նախարարության կողմից:

Մինչույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վճռաբեկ բողոք բերելու համար Արտաշես Թառույանի կողմից օրենքով պահանջվող պետական տուրքի չափից ավելի վճարված պետական տուրքը՝ 10.000 ՀՀ դրամի չափով, ենթակա է վերադարձման այն վճարած անձին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 04.11.2015 թվականի վճիռն՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. ՀՀ ֆինանսների նախարարությունից հօգուտ Արտաշես Թառույանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Արտաշես Թառույանի կողմից օրենսդրությամբ պահանջվող պետական տուրքի չափից ավելի՝ 10.000 ՀՀ դրամի չափով վճարված պետական տուրքի հարցը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազրոյթուն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազրոյթուններ*



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԱՐԴ/0303/02/15**  
 դատարանի որոշում **2017թ.**  
 Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ/0303/02/15  
 Նախագահող դատավոր՝ Գ. Խանդանյան  
 Դատավորներ՝ Ս. Միքայելյան  
 Հ. Ենոքյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
	Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հայկ Միրզախանի Մալխասայանի ներկայացուցիչ Սարգիս Մադաթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.12.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ղուկաս Ավագյանի ընդդեմ Հայկ Միրզախանի Մալխասայանի՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերից բաժինները բնեղենով առանձնացնելու պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1.Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ղուկաս Ավագյանը պահանջել է իրեն և Հայկ Միրզախանի Մալխասայանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերը՝ ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղում գտնվող 04-079-106-072 և 04-079-101-031 կադաստրային համարների տակ գրանցված հողամասերի, նույն գյուղի 2-րդ փողոցի 53ա հասցեում գտնվող 04-079-161-001-001 կադաստրային համարի տակ գրանցված խորքային հորի և ջրաձնշման աշտարակի, նույն փողոցի թիվ 52 հասցեում գտնվող 04-079-111-075 կադաստրային համարի տակ գրանցված գույքի, ինչպես նաև 04-079-111-075-001: 002: 007 կադաստրային համարների տակ գրանցված անասնաշենքերի 1/3 բաժինները բնեղենով առանձնացնել:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Մ. Սիմոնյան) (այսուհետ՝ Դատարան) 05.09.2016 թվականի վճռով հայրը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 22.12.2016 թվականի որոշմամբ Հայկ Միրզախանի Մալխասայանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 05.09.2016 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայկ Միրզախանի Մալխասայանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 197-րդ, 447-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզառարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, նշելով, որ գրավի պայմանագրերը չէին կարող արգելք հանդիսանալ Դատարանի վճռի կայացման համար, քանի որ գրավի առարկա հանդիսացող հողամասերը չեն օտարվել երրորդ անձանց կամ որևէ այլ կերպ չեն տնօրինվել, ինչպես նաև որևէ փոփոխության չեն ենթարկվել, անտեսել է, որ հողամասից բաժինն առանձնացնելը հենց գույքի տնօրինման դրսևորում է, որը, գրավի պայմանագրերի համաձայն, կարող էր իրականացվել բացառապես գրավառուի համաձայնությամբ: Տվյալ դեպքում, անկախ այն հանգամանքից, որ հողամասերի սեփականատերերի կազմի փոփոխություն տեղի չի ունենալու, գույքերը մի դրությամբ փոխվելու են այլ դրությամբ՝ դառնալով երկու միավոր գույք, ձևափոխվելու են՝ նախկինի համեմատ այլ արտաքին ձև, սահմանագիծ և կազմ ստանալով: Այսինքն՝ ակնհայտ առկա են փոփոխության դրսևորումներ, որոնք վկայում են վերաքննիչ դատարանի եզրահանգման անհիմն լինելու մասին: Բացի այդ, Դատարանի վճռի հիման վրա գույքերի բաժանումը հանգեցնելու է դրանց շուկայական գնի փոփոխությանը՝ նվազմանը, ուստի փաստացի վտանգ է առաջանում հիմնական պարտավորության ապահովվածության տեսանկյունից:

*2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ, 28-րդ, 53-րդ, 62-րդ, 130-րդ, 219-րդ, 220-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզառարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ փորձագիտական եզրակացությունը չի պարունակում դատատեխնիկական հետազոտության որևէ մեթոդ, ուստի եզրակացությունն իրականացվել է սահմանված դատավարական կարգի խախտմամբ:

Վերաքննիչ դատարանը խախտել է նաև փորձագիտական եզրակացության՝ որպես մեկ ամբողջական փաստաթղթի գնահատման վերաբերյալ պահանջը՝ առանձնացնելով եզրակացությունից ապրանքագիտական մասը և գտնելով, որ այն վճռի հիմքում չի դրվել, և գնահատական տալով միայն եզրակացության դատատեխնիկական մասին: Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել նաև սույն գործով կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության վերաբերյալ վերաքննիչ բողոքում առկա հիմնավորումներին, չի գնահատել բողոքաբերի կողմից այդ կապակցությամբ ներկայացված փաստարկները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել վերաքննիչ դատարանի 22.12.2016 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել, կամ գործն ուղարկել նոր քննության:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմի-

տեի աշխատակազմի Արմավիր տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կաղաստր) կողմից 04.11.2011 թվականին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2850548 վկայականի համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղում գտնվող 04-079-106-072 կադաստրային համարի տակ գրանցված 2,6849հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է Հայկ Միրզախանի Մալխասայանին՝ 2/3 բաժին, և Ղուկաս Ավագյանին՝ 1/3 բաժին:

Կաղաստրի կողմից 04.11.2011 թվականին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2850549 վկայականի համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղում գտնվող 04-079-101-031 կադաստրային համարի տակ գրանցված 4,335հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է Հայկ Միրզախանի Մալխասայանին՝ 2/3 բաժին, և Ղուկաս Ավագյանին՝ 1/3 բաժին:

Կաղաստրի կողմից 07.11.2011 թվականին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2850547 վկայականի համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղի 2-րդ փողոցի թիվ 53ա հասցեում գտնվող խորքային հորը և ջրաձնշման աշտարակը, ինչպես նաև 04-079-161-001-001 կադաստրային համարի տակ գրանցված 0,0303հա մակերեսով արդյունաբերական նշանակության հողամասն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են Հայկ Միրզախանի Մալխասայանին՝ 2/3 բաժին, և Ղուկաս Ավագյանին՝ 1/3 բաժին:

Կաղաստրի կողմից 07.11.2011 թվականին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2850550 վկայականի համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղի 2-րդ փողոցի թիվ 52 հասցեում գտնվող 04-079-111-075 կադաստրային համարի տակ գրանցված 8,4439հա մակերեսով արդյունաբերական նշանակության հողամասը, ինչպես նաև 04-079-111-075-001: 002: 007 կադաստրային համարների տակ գրանցված 863,3քմ մակերեսով անասնաշենքերն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են Հայկ Միրզախանի Մալխասայանին՝ 2/3 բաժին, և Ղուկաս Ավագյանին՝ 1/3 բաժին (**հատոր 1-ին, գ.թ. 7-18**):

2) «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և Ա/Ձ Ղուկաս Ավագյանի միջև 16.08.2012 թվականին կնքված թիվ 90977Կ վարկային պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը Ա/Ձ Ղուկաս Ավագյանին մինչև 60 ամիս մարման ժամկետով և տարեկան 11% տոկոսադրույքով տրամադրել է 39.000.000 ՀՀ դրամ վարկ (**հատոր 2-րդ, գ.թ. 146-153**):

3) Ընկերության՝ որպես գրավառուի և Ղուկաս Ավագյանի, Հայկ Միրզախանի Մալխասայանի՝ որպես գրավատուների միջև 16.08.2012 թվականին կնքված թիվ 90977Գ/01 անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագրի համաձայն՝ գրավատուները՝ որպես 16.08.2012 թվականին կնքված թիվ 90977Կ վարկային պայմանագրով Ղուկաս Ավագյանի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոց, գրավադրել են ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղում գտնվող 04-079-106-072 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0106-0072) տակ գրանցված 2,6849հա մակերեսով հողամասը (թիվ 2850548 անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական):

Ընկերության՝ որպես գրավառուի և Ղուկաս Ավագյանի, Հայկ Միրզախանի Մալխասայանի՝ որպես գրավատուների միջև 16.08.2012 թվականին կնքված թիվ 90977Գ/02 անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագրի համաձայն՝ գրավատուները՝ որպես 16.08.2012 թվականին կնքված թիվ 90977Կ վարկային պայմանագրով Ղուկաս Ավագյանի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոց, գրավադրել են ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղում գտնվող 04-079-101-031 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0101-0031) տակ գրանցված 4,335հա մակերեսով հողամասը (թիվ 2850549 անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական):

Ընկերության՝ որպես գրավառուի և Ղուկաս Ավագյանի, Հայկ Միրզախանի Մալխասայանի՝ որպես գրավատուների միջև 16.08.2012 թվականին կնքված թիվ 90977Գ/03 անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագրի համաձայն՝ գրավատուները՝ որպես 16.08.2012 թվականին կնքված թիվ 90977Կ վարկային պայմանագրով Ղուկաս Ավագյանի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոց, գրավադրել են ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղի 2-րդ փողոցի թիվ 52 անասնաշենքերի հասցեում գտնվող 04-079-111-075 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0111-0094) տակ գրանցված 8,4439հա մակերեսով հողամասը, ինչպես նաև նշված հողամասի վրա գտնվող շինությունները (թիվ 2850550 անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական):

Նշված պայմանագրերի 3.17-րդ կետի համաձայն՝ գրավատուները պարտավորվում են առանց գրավառուի գրավոր համաձայնության գրավի առարկա հանդիսացող գույքը չօտարել, չհանձնել վարձակալության, ենթավարձակալության և անհատույց օգտագործման կամ չտնօրինել այլ կերպ: Նույն պայմանագրերի 3.19-րդ կետի համաձայն՝ գրավատուները պարտավորվում են գրավի առարկայի հետ կատարված ցանկացած փոփոխությունների դեպքում ստանալ գրավառուի համաձայնությունը, ողջամիտ ժամկետում ապահովել կատարված փոփոխությունների պետական գրանցում և պայմանագրերում կատարել համապատասխան փոփոխություններ **(հատոր 2-րդ, գ.թ. 154-159):**

4) Ընկերության և Հայկ Միրզախանի Մալխասայանի միջև 03.06.2016 թվականին կնքված պահանջի գիջման մասին պայմանագրի համաձայն՝ Հայկ Միրզախանի Մալխասայանի ամբողջությամբ կատարել է Ընկերության հանդեպ Ղուկաս Ավագյանի ստանձնած պարտավորությունը՝ 16.363.937,7 ՀՀ դրամ պարտքի գումարը վճարելով Ընկերությանը: Պայմանագրի 2.3-րդ կետի համաձայն՝ հիմք ընդունելով Հայկ Միրզախանի Մալխասայանի կողմից Ընկերության հանդեպ Ղուկաս Ավագյանի ստանձնած պարտավորության ամբողջական կատարման փաստը, Ընկերության՝ վարկային պայմանագրով ծագած պահանջի իրավունքները և վարկային պայմանագրի կատարման ապահովման միջոց հանդիսացող գրավի պայմանագրերից ծագած գրավի իրավունքները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցնում են Հայկ Միրզախանի Մալխասայանին այն ծավալով, որով վերջինս բավարարել է Ընկերության պահանջը: Նույն պայմանագրի 2.5-րդ կետի համաձայն՝ հաշվի առնելով, որ 2.3-րդ կետում նշված իրավունքները Հայկ Միրզախանի Մալխասայանին անցնելու արդյունքում պարտատերը և երաշխավորության պայմանագրով երաշխավորը (Հայկ Միրզախանի Մալխասայանը) համընկնում են, ուստի կողմերն ընդունում են, որ նույն պայմանագրի կնքմամբ երաշխավորության պայմանագրի գործողությունը դադարում է **(հատոր 3-րդ, գ.թ. 74-75):**

5) 07.06.2016 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07062016-04-0032, թիվ 07062016-04-0030 և թիվ 07062016-04-0026 վկայականների համաձայն՝ համապատասխանաբար ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղում գտնվող 04-079-0106-0072 կադաստրային ծածկագրով 2,6849հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի, նույն գյուղում գտնվող 04-079-0101-0031 կադաստրային ծածկագրով 4,335հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի, նույն գյուղի 2-րդ փողոցի թիվ 52 հասցեում գտնվող անասնաշենքի, ինչպես նաև 04-079-0111-0094 կադաստրային ծածկագրով 8,4439հա մակերեսով արդյունաբերական նշանակության հողամասի նկատմամբ գրանցվել է Հայկ Միրզախանի Մալխասայանի գրավի իրավունքը **(հատոր 3-րդ, գ.թ. 76-78):**

6) «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից կատարված դատատեխնիկական և դատապրանքագիտական փորձաքննության արդյունքում 18.02.2016 թվականին կազմված թիվ «013-01/Վ-016» փորձագետի եզրակացությունը չի պարունակում նշում դատատեխնիկական փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդի վերաբերյալ **(հատոր 2-րդ, գ.թ. 86-113):**

**4. Վճռաբեկ դատարանի պայրձառաքանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում գրավ դրված և ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը բաժանելու կամ դրանից բաժին առանձնացնելու հնարավորության հարցի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ, 447-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաքանություններով:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

*- արդյոք ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը բաժանելը կամ դրանից բաժին առանձնացնելը համարվում է սեփականության իրավունքի փնտրիման իրավագործության դրսևորում, և հնարավոր է արդյոք ընդհանուր գույքը բաժանելու կամ բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել այն դեպքում, երբ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի գրավի պայմանագրով նախատեսված է առանց գրավառուի համաձայնության գրավի առարկան փնտրիներու կամ դրա փոփոխությանը հանգեցնող ցանկացած գործողություն իրականացնելու արգելք,*

*- արդյոք փորձագետի եզրակացությունը կարող է համարվել պարզաձ ապացույց այն դեպքում, երբ չի պարունակում նշում կիրառված մեթոդների մասին:*

1) 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ձևանշված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: (...) Տնօրինման իրավունքը գույքի ձակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման,

տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը կարող է դրա մասնակիցների միջև բաժանվել նրանց համաձայնությամբ, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջել առանձնացնելու իր բաժինն ընդհանուր գույքից:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը:

Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով, կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարել իր բաժնի արժեքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 260-րդ հոդվածի համաձայն՝ հիփոթեք է համարվում անշարժ գույքի գրավը, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի և կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույք գնելու իրավունքի գրավը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը (...) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ [ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 15-րդ գլխի 1-ին] պարագրաֆում պարունակվող գրավի մասին ընդհանուր կանոնները կիրառվում են հիփոթեքի նկատմամբ, եթե այլ կանոններ չեն սահմանված [ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 15-րդ գլխի] հիփոթեքին վերաբերող պարագրաֆում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գույքի գրավատու կարող է լինել միայն դրա սեփականատերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 229-րդ հոդվածի համաձայն՝ գրավառուն այն անձն է, ով օրենքով կամ պայմանագրով սահմանված հիմքերով՝ գրավատուի գույքի նկատմամբ ունի գույքային իրավունք (գրավի իրավունք)՝ ի ապահովում իր պանդեպ պարտապանի դրամական կամ այլ պարտավորության կատարման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 230-րդ հոդվածի համաձայն՝ գրավի առարկա կարող է լինել **ցանկացած գույք**, այդ թվում՝ գույքային իրավունք (պահանջ), բացառությամբ շրջանառությունից հանված գույքի, պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված պահանջների՝ ներառյալ ալիմենտի, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջների, պետական (գանձապետական) անվանական այն արժեթղթերի, որոնց թողարկման պայմաններով կնախատեսվեն, որ այդ արժեթղթերը գրավադրման ենթակա չեն, և այն իրավունքների, որոնց զիջելն այլ անձի արգելված է օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը կարող է գրավ դրվել միայն բոլոր սեփականատերերի գրավոր համաձայնությամբ, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցը կարող է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում իր բաժինը գրավ դնել առանց մյուս սեփականատերերի համաձայնության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավատուն իրավունք ունի գրավի առարկան օտարելու, այն տրամադրելու վարձակալության

**կամ անհատույց օգտագործման, կամ տնօրինելու այլ կերպ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:**

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ անձի սահմանադրական իրավունք հանդիսացող սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող տնօրինման իրավագործությունը ենթադրում է սեփականատիրոջ կողմից սեփական կամքով և հայեցողությամբ գույքի իրավական և փաստացի ճակատագիրը որոշելու հնարավորություն: Գույքի տնօրինման իրավունքը ենթադրում է ինչպես օրենքով նախատեսված, այնպես էլ օրենքով չարգելված եղանակներով գույքի հետագա ճակատագիրը որոշելու իրավունք, այդ թվում նաև՝ գույքի փաստացի նկարագիրը փոփոխելու կամ գույքի տնօրինման գործարքներ կնքելու եղանակով: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված կարգավորումը կիրառելի է ինչպես միանձնյա, այնպես էլ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման դրսևորում է հանդիսանում նաև գույքի բաժանումը և գույքից բաժին առանձնացնելը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը բաժանելիս այն դադարում է ընդհանուր սեփականություն հանդիսանալ, և յուրաքանչյուր մասնակից դառնում է գույքի բաժանված մասի միակ սեփականատերը: Գույքից բաժին առանձնացնելիս առանձնացող սեփականատերը դառնում է միակ սեփականատեր առանձնացված բաժնի նկատմամբ, իսկ գույքի մնացած մասի նկատմամբ պահպանվում է չառանձնացած մասնակիցների ընդհանուր սեփականությունը: Հետևաբար, ընդհանուր գույքը բաժանելիս կամ դրանից բաժին առանձնացնելիս ոչ միայն փոփոխվում է գույքի փաստացի վիճակը (մասնավորապես՝ օբյեկտիվ իրականության մեջ այն շարունակում է գոյություն ունենալ այլ անհատականացնող տվյալներով, այլ մակերեսով, այլ արժեքով), այլ նաև իրավական վիճակը, քանի որ մասնավորապես փոփոխվում է սեփականության տեսակը և գույքային միավորների քանակը: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի կարգավորումը ոչ այլ ինչ է, քան տնօրինման իրավագործության դրսևորում:

ՀՀ վճռաբեկ դատարանը *Դավիթ Ասարյանն ընդդեմ Սվերլյանա Ասարյանի և Արթուր Գասիսյանի* գործով անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի մեկնաբանությանը՝ մասնավորապես արձանագրելով, որ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջելու ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել իր բաժինը միայն այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակիցների միջև բացակայում է ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնություն (*պե 'u, թիվ ԵՄԳ/0199/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

*Նելլի Հարությունյանն ընդդեմ Աղաջան և Հնազանդ Ավագյանների գործով* զարգացնելով իր նախկին դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գոյություն ունեցող իրավակարգավորումը հնարավոր է համարում բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնել ինչպես բնեղենով, այնպես էլ դրամական հատուցմամբ: Ընդ որում, նախապատվությունը տրվում է բաժինը բնեղենով առանձնացնելուն, քանի որ այս դեպքում անձը շարունակում է պահպանել իր սեփականության իրավունքը բնեղենով առանձնացված մասի նկատմամբ, մինչդեռ փոխհատուցման դեպքում անձի սեփականության իրավունքը բաժնեմասի նկատմամբ դադարում է: ՀՀ վճռաբեկ դատարանը նաև նշել է, որ օրենսդիրը նախատեսել է հետևանքներ այն դեպքերի համար, երբ կոնկրետ տեսակի գույքը բաժանելու հնարավորությունը սահմանափակված է օրենքով կամ անհնար է առանց այդ գույքին անհամաչափ վնաս պատճառելու: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում կոնկրետ գործի փաստերից ելնելով՝ դատարանները նշված պայմանների հաշվառմամբ պետք է գնահատեն գույքի բաժանման հնարավորությունը, ինչպես նաև նմանատիպ գործերի քննության ընթացքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ պայմաններին պետք է անդրադառնան առանձին-առանձին (*պե 'u, թիվ ԵԷԳ/1661/02/09*)

*քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը):*

Հետևաբար, գույքի տնօրինման իրավագործության դրսևորում հանդիսացող՝ գույքի բաժանման կամ առանձնացման իրավունքն իրացնելիս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածով սահմանված պահանջները պահպանելը պարտադիր է:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև նշել, որ գույքի տնօրինում է նաև գույքը գրավ դնելը:

«Սելվր» ՍՊԸ-ն ընդդեմ Նշան Ալեքսանյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գրավի իրավունքն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրային իրավունքների շարքում: Ի տարբերություն այլ իրային իրավունքների՝ գրավն առաջանում և իրավական արժևորում է ստանում այնքանով, որքանով այն անհրաժեշտ է օգտագործել հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով գրավը, որպես այդպիսին, ունի երկակի բնույթ. այն բնութագրվում է որպես պարտավորաիրավական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց: Գրավի իրավունքին բնորոշ են իրային իրավունքներին ներհատուկ հետևյալ առանձնահատկությունները.

- «բացարձակ իրավունքը». գրավի իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքի իրականացումը խախտող կամ խոչընդոտող արարքներից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 241-րդ հոդված),

- «հետևելու իրավունքը». գրավի իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկան անցնում է այլ անձի սեփականության ներքո (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետ):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ գրավի իրավունքը պետք է դիտարկել որպես «գույք»՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ (1) գրավի իրավունքը հանդիսանում է գրավատուի սահմանափակ իրային իրավունքը, (2) գրավատուն ունի հիմնական պարտավորության չկատարման դեպքում նախապատվության իրավունքով գրավադրված գույքի արժեքից իր պահանջների բավարարում ստանալու «օրինական սպասելիք»: Հետևաբար սեփականության իրավունքի պաշտպանության թե՛ սահմանադրաիրավական, թե՛ կոնվենցիոն ընթացակարգերը հավասարապես կիրառելի են նաև գրավի իրավունքի պաշտպանության նկատմամբ (տե՛ս, թիվ ԵԿԴ/0169/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ոչ միայն գույքը գրավ դնելն է հանդիսանում սեփականության իրավունքի տնօրինման իրավագործության դրսևորում, այլ նաև գրավատուն գրավի իրավունք ձեռք բերելուց հետո օգտվում է սեփականության իրավունքի պաշտպանության համար սեփականատիրոջը տրված երաշխիքներից: Ընդ որում, եթե սեփականատիրոջը տրված երաշխիքները սահմանվում են օրենքով, գրավի պայմանագրով կողմերը կարող են նախատեսել նաև այլ երաշխիքներ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 238-րդ հոդվածի ուժով կողմերը կարող են սահմանափակել գրավատուի կողմից գույքի տնօրինման իրավունքը: Նման կարգավորման նպատակը սեփականատիրոջ և գրավատուի՝ որպես գրավ դրված գույքի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող սուբյեկտների շահերի հավասարակշռումն է: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գրավ դրված գույքի տնօրինման իրավունքը սահմանափակ չէ, այլ կարող է սահմանափակվել ինչպես օրենքով, այնպես էլ գրավի պայմանագրով: Ընդ որում, նշված հետևությունը կիրառելի է գրավի առարկա հանդիսացող ցանկացած գույքի, այդ թվում՝ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ:

Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում մեջբերել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության թույլատրելի սահմանների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետև՝ Եվրոպական դատարան) կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքը, որի համաձայն՝ գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել հետևյալ պայմանների միաժամանակյա



մանակյա առկայության դեպքում.

- 1) միջամտությունը նախատեսված է օրենքով,
- 2) միջամտությունը բխում է հանրային շահից,
- 3) միջամտությունը բավարարում է համաչափության պահանջներին:

Այսպես, ըստ Եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին և կարևորագույն պահանջն այն է, որ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը պետք է հիմնված լինի օրենքի վրա. այս պահանջը բխում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկի՝ իրավունքի գերակայության էությունից (*յրեն, The Former King of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, 79-րդ կետ*): Հետևաբար առաջին պայմանը ենթադրում է ոչ միայն ներպետական օրենսդրության շրջանակներում սեփականության իրավունքի տվյալ սահմանափակումը նախատեսող օրենքի առկայությունը, այլ նաև այդ օրենքի համապատասխանությունը իրավունքի գերակայության սկզբունքից բխող որոշակի որակական հատկանիշների (*յրեն, James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, 67-րդ կետ*):

Սեփականության իրավունքի իրականացման միջամտության իրավաչափության երկրորդ պայմանի համաձայն՝ այդ միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից, որի գնահատման հարցում հանրային իշխանության մարմիններն օժտված են որոշակի հայեցողությամբ (*յրեն, James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, 46-րդ կետ*):

Սեփականության իրավունքի նկատմամբ միջամտության իրավաչափության երրորդ պայմանը նախատեսում է, որ միջամտությունը պետք է ապահովի արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև (*յրեն, Sporrang and Lönnroth v. Sweden գործով Եվրոպական դատարանի 23.09.1982 թվականի վճիռը, 69-րդ կետ*): Մասնավորապես, գույքից անարգել օգտվելու իրավունքի ցանկացած միջամտության դեպքում կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև պետք է գոյություն ունենա համաչափության որոշակի ողջամիտ հարաբերակցություն (*յրեն, Scollo v. Italy գործով Եվրոպական դատարանի 28.09.1995 թվականի վճիռը, 32-րդ կետ*): Եվրոպական դատարանի գնահատմամբ նման բարենպաստ հավասարակշռության հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ սեփականության իրավունքի միջամտության պատճառով սեփականատերն ստիպված է կրել անհամաչափ, ավելորդ և չափազանց մեծ ծանրություն (*յրեն, The Former King of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, 89-րդ կետ*):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 238-րդ հոդվածով նախատեսված տնօրինման իրավագործության սահմանափակումը նպատակ ունի ապահովելու հավասարակշռություն գույքային իրավունքի իրավատերեր հանդիսացող սեփականատիրոջ և գրավառուի շահերի միջև: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված սահմանափակումը տեղավորվում է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության թույլատրելի սահմաններում:

Ուստի Վճռաբեկ դատարանը, կարևորելով ընդհանուր սեփականության յուրաքանչյուր մասնակցի իրավունքը՝ ներկայացնել գույքից բնեղենով իր բաժինն առանձնացնելու պահանջ, հարկ է համարում արձանագրել, որ եթե տվյալ գույքը կրում է օրենքով սահմանված կամ կամովին ստանձնած ծանրաբեռնվածություններ, օրինակ՝ գրավ, որն արգելք է հանդիսանում գույքի տնօրինման համար, ապա գույքի տնօրինումը կարող է կատարվել համապատասխան ծանրաբեռնվածությունների վերացումից հետո: Հակառակ եզրահանգման պայմաններում գրավի առկայությունը որևէ կերպ չէր ապահովվի այն պարտավորությունները, որոնցում առկա է ընդհանուր, չբաժանված սեփականություն, մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ գրավը կարգավորող նորմերը կիրառելի

են ինչպես միաձնյա, այնպես էլ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը գրավ դնելիս: Ուստի Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ գրավատուն, պայմանագրի ազատության սկզբունքից ելնելով գրավի պայմանագիր կնքելով, որում մասնավորապես նախատեսված է նման սահմանափակում, համաձայնում և ընդունում է, որ ժամանակավորապես զրկվում է իր որոշ իրավունքներն իրականացնելու հնարավորությունից:

2) Սույն գործով Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով փորձագետի եզրակացության վերաբերյալ նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները, հարկ է համարում անդրադառնալ փորձագետի եզրակացության բովանդակությանը՝ այդպիսով նպաստելով այդ հարցով իրավունքի զարգացմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ (...) փորձագետների եզրակացություններով (...): Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին հանդգնմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով՝ դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել:

Նույն օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը կազմվում է գրավոր: Այն պետք է պարունակի՝

- 1) նշում՝ կիրառված մեթոդների մասին.
- 2) կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրությունը.
- 3) հետազոտությունների արդյունքում արված հետևությունները.
- 4) առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը հետազոտվում է դատական նիստում և գնահատվում մյուս ապացույցների հետ:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքերում դատարանը կարող է նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով միննույն կամ մեկ այլ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության), իսկ նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ եթե դատարանի կամ դատավարության մասնակիցների մեջ կասկածներ են առաջանում փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ, կամ առկա են հակասություններ մի քանի փորձագետների եզրակացություններում, ապա դատարանը միևնույն հարցերի վերաբերյալ կարող է նշանակել կրկնակի փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվում է մեկ այլ փորձագետի (փորձագետների, մասնագիտացված փորձագիտական հաստատության):

ՀՀ Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերը նշված դատավարական նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանն իրավունք ունի գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակելու փորձաքննություն՝ իր որոշմամբ սահմանելով հարցերի ցանկը և բովանդակությունը: Փորձագետի եզրակացությունն ապացույցի տեսակ է, իսկ դատարանը գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հան-

գամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզում է բացառապես ապացույցների հիման վրա, որոնք դատարանը պարտավոր է գնահատել գործում եղած նյութի բնույթը և ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսինքն՝ փորձաքննության նշանակումն ինքնանպատակ չէ և չի կարող կրել ձևական բնույթ (յրեն, «Օրինեսթ Սթոն» ՍՊԸ-ն ընդդեմ «Վագ քար» ՍՊԸ-ի և նյութների թիվ ԱՎԴ1/0074/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ դատարանի նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու իրավասությունը դատարանն իրականացնում է դատական հայեցողության իրավունքով՝ ելնելով հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակից (յրեն, Ռազմիկ Սարգսյանը և Լիդա Սևոյանն ընդդեմ Ռաֆիկ Հախվերդյանի թիվ 3-259(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի որոշումը):

ՀՀ ֆինանսների նախարարության Շենգյալիթի հարկային տեսչությունն ընդդեմ Ա/2 Գուրգեն Այվազյանի և նյութների գործով ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատարանի հայեցողական լիազորությանը՝ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ՝ մասնավորապես արձանագրելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանի նախաձեռնությամբ փորձաքննության նշանակումը թեև դատարանի հայեցողական լիազորությունն է, այնուամենայնիվ, դատարանն իր այդ լիազորությունն իրականացնելիս պարտավոր է ապահովել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված և երաշխավորված գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ներքին համոզման հանգելու պարտականության լիարժեք իրականացումը՝ միաժամանակ երաշխավորելով կողմերի մրցակցության և իրավահավասարության դատավարական սկզբունքները, անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով նաև վիճելի իրավահարաբերության բնույթը և կոնկրետ գործի փաստական հանգամանքները (յրեն, թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը): ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ապացույցների գնահատման ներառված փորձագիտական եզրակացությունների գնահատման խնդրին, նշել է, որ փորձագիտական եզրակացությունների գնահատումը պետք է կատարել այնպես, որ ամբողջ եզրակացությունը, այլ ոչ թե այդ եզրակացության որոշակի բաժնում արտացոլված տվյալները գնահատվեն որպես մեկ ապացույց (յրեն 'ս, Ռաֆայել Ավետիսյանն ընդդեմ Սեյրան Վարդանյանի իրավահաջորդներ Արթուր և Անժելա Վարդանյանների թիվ ԿԴ3/0133/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ «Կանաչապատում» ՊՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանն ընդդեմ Կարեն Արիսյանի և նյութների գործով ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի գնահատման առանձնահատկություններին՝ առանձնացնելով այն հիմնական չափորոշիչները, որոնք ենթակա են կիրառման վերոնշյալ ապացույցի գնահատումը վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից իրականացնելիս: ՀՀ վճռաբեկ դատարանը մասնավորապես գտել է, որ **արժանահավասարության տեսանկյունից** փորձագետի եզրակացության գնահատում իրականացնելիս պետք է հաշվի առնել փորձաքննության ընթացքում **կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության աստիճանը**, փորձաքննությանը տրամադրված նյութի որակը և բավարարությունը, ելակետային տվյալների բնույթը, փորձագետի հետևությունների փաստարկվածության աստիճանը, գործին մասնակցող անձանց՝ փորձաքննությանը ներկա գտնվելու իրական հնարավորությունը, եզրակացության համապատասխանությունը գործում առկա այլ ապացույցներին (յրեն, թիվ ԵԴԴ/1284/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

Ջարգացնելով վերը նշված դիրքորոշումները՝ վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ փորձագետի եզրակացությունը վերաբերելիության, թույլատրելի-

ության և արժանահավատության տեսանկյունից արդյունավետ գնահատելու համար էական է հենց փորձագետի եզրակացության բովանդակությունը: Փորձագետի եզրակացության բովանդակությունը կազմող ներածական տվյալների միջոցով հնարավոր է լինում տեղեկություն ստանալ փորձաքննության տեսակի, այն կատարող փորձագետի, փորձաքննություն անցկացնելու հիմքի և նման այլ տվյալների վերաբերյալ: Փորձագետի եզրակացության հետազոտական (նկարագրական) և եզրափակիչ մասերին ներկայացվող պահանջները սահմանվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Ընդ որում, նման պահանջներն օրենքով սահմանելն օրենսդրի կողմից ինքնանպատակ չի արվել: Եզրակացության հետազոտական մասում ներկայացվում են կատարված հետազոտության ընթացքը և դրա արդյունքները մանրամասն նկարագրվում են նաև հետազոտության ընթացքում փորձագետի կիրառած մեթոդները: Նշված մասում պետք է արտացոլվի հետազոտությունների ողջ ընթացքը և փորձագետի եզրահանգումների պատճառաբանությունը: Հետազոտական մասի հիմնավորվածության և պատճառաբանվածության տրամաբանական հետևությունը պետք է արտացոլվի եզրակացության եզրափակիչ մասում՝ առաջադրված հարցերին պատասխանելու միջոցով: Հետևաբար, փորձագետի եզրակացությունը պետք է բավարարի օրենսդրի կողմից սահմանված պահանջներին՝ պարունակելով առնվազն այն տվյալները, որոնք պարտադիր են համարվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Նշված պահանջներից մեկն էլ վերաբերում է կիրառված մեթոդների մասին տեղեկություններ պարունակելուն: Փորձագետի եզրակացությունը պետք է նշում պարունակի կիրառված մեթոդների վերաբերյալ, որպեսզի՝ մասնավորապես կողմերը և դատարանը հնարավորություն ունենան գնահատելու եզրակացությունն արժանահավատության, հիմնավորվածության, ամբողջականության տեսանկյունից՝ անհրաժեշտության դեպքում բարձրացնելով լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելու հարցը: Փորձագետի եզրակացության մեջ կիրառված մեթոդները նշելով՝ փորձագետը հնարավորություն է տալիս այլ անձանց՝ պատկերացում կազմելու իր կազմած եզրակացության մասնագիտական հիմնավորվածության վերաբերյալ: Իրազեկվելով, թե ինչ մեթոդներ են կիրառվել փորձաքննություն իրականացնելիս՝ կողմերը և դատարանը հնարավորություն են ունենում, օրինակ, բացահայտելու փորձաքննության ընթացքում անթույլատրելի մեթոդների կիրառման դեպքերը: Ուստի Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ եթե փորձագետի եզրակացությունը չի պարունակում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով պարտադիր համարվող պահանջները, այդ թվում՝ չի պարունակում նշում կիրառված մեթոդների մասին, ապա նման եզրակացությունը չի կարող համարվել պատշաճ ապացույց՝ մասնավորապես դրա արժանահավատության տեսանկյունից:

### ***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Ընկերության և Ա/2 Դուկաս Ավագյանի միջև 16.08.2012 թվականին կնքված վարկային պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը Ա/2 Դուկաս Ավագյանին մինչև 60 ամիս մարման ժամկետով և տարեկան 11% տոկոսադրույքով տրամադրել է 39.000.000 ՀՀ դրամ վարկ: Նշված վարկային պայմանագրից ծագող պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Ընկերության՝ որպես գրավատուի և Դուկաս Ավագյանի, Հայկ Միրզախանի Մալխասյանի՝ որպես գրավատուների միջև 16.08.2012 թվականին կնքվել են անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագրեր, որոնց համաձայն՝ գրավադրվել են Դուկաս Ավագյանին և Հայկ Միրզախանի Մալխասյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հետևյալ անշարժ գույքերը.

1. ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղում գտնվող 04-079-106-072 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0106-0072) տակ գրանցված 2,6849հա մակերեսով հողամասը,
2. ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղում գտնվող 04-079-101-031 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0101-0031) տակ գրանցված 4,335հա մակերեսով հողամասը,
3. ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղի 2-րդ փողոցի թիվ 52 անասնաշենքերի

հասցեում գտնվող 04-079-111-075 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0111-0094) տակ գրանցված 8,4439հա մակերեսով հողամասը, ինչպես նաև նշված հողամասի վրա գտնվող շինությունները:

Նշված անշարժ գույքերի նկատմամբ գրանցված է Հայկ Միրզախանի Մալխասայանի (2/3 բաժին) և Ղուկաս Ավագյանի (1/3 բաժին) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը: Բացի նշված գույքից, ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղի 2-րդ փողոցի թիվ 53ա հասցեում գտնվող խորքային հորը և ջրաձնշման աշտարակը, ինչպես նաև 0,0303հա մակերեսով արդյունաբերական նշանակության հողամասը նույնպես ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են Հայկ Միրզախանի Մալխասայանին (2/3 բաժին) և Ղուկաս Ավագյանին (1/3 բաժին):

Վերոնշյալ գրավի պայմանագրերի 3.17-րդ կետի համաձայն՝ գրավատուները պարտավորվում են առանց գրավառուի գրավոր համաձայնության գրավի առարկա հանդիսացող գույքը չօտարել, չհանձնել վարձակալության, ենթավարձակալության և անհատույց օգտագործման կամ չտնօրինել այլ կերպ: Նույն պայմանագրերի 3.19-րդ կետի համաձայն՝ գրավատուները պարտավորվում են գրավի առարկայի հետ կատարված **ցանկացած փոփոխությունների դեպքում** ստանալ գրավառուի համաձայնությունը, ողջամիտ ժամկետում ապահովել կատարված փոփոխությունների պետական գրանցում և պայմանագրերում կատարել համապատասխան փոփոխություններ:

Ընկերության և Հայկ Միրզախանի Մալխասայանի միջև 03.06.2016 թվականին կնքված պահանջի զիջման մասին պայմանագրի համաձայն՝ հիմք ընդունելով Հայկ Միրզախանի Մալխասայանի կողմից Ընկերության հանդեպ Ղուկաս Ավագյանի ստանձնած պարտավորության ամբողջական կատարման փաստը, Ընկերության՝ վարկային պայմանագրով ծագած պահանջի իրավունքները և վարկային պայմանագրի կատարման ապահովման միջոց հանդիսացող գրավի պայմանագրերից ծագած գրավի իրավունքները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցել են Հայկ Միրզախանի Մալխասայանին այն ծավալով (16.363.937,7 ՀՀ դրամ), որով վերջինս բավարարել է Ընկերության պահանջը: Վերը նշված գույքերի նկատմամբ գրանցվել է Հայկ Միրզախանի Մալխասայանի գրավի իրավունքը:

Դատարանը, բավարարելով Ղուկաս Ավագյանի հայցը, պատճառաբանել է, որ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքերը բաժանելու և դրանցից Ղուկաս Ավագյանի բաժիններն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնություն առկա չէ, և գտել է, որ Ղուկաս Ավագյանն իրավունք ունի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա դատական կարգով պահանջելու այդ ընդհանուր գույքերից բնեղենով առանձնացնելու իր 1/3-ական բաժինները: Միաժամանակ Դատարանն արձանագրել է, որ նշված անշարժ գույքերից գրավադրված երեք անշարժ գույքերի առանձնացված բաժինների նկատմամբ Ղուկաս Ավագյանի սեփականության իրավունքը կարող է գրանցվել դրանց գրավը դադարելուց հետո միայն: Դատարանը նաև գտել է, որ գործում առկա՝ 18.02.2016 թվականին տրված թիվ 013-01/Վ-016 եզրակացությունն արժանահավատ և հիմնավորված է, ուստի կրկնակի փորձաքննություն նշանակելու հիմքեր և անհրաժեշտություն առկա չէ:

Վերաքննիչ դատարանը, Հայկ Միրզախանի Մալխասայանի վերաքննիչ բողոքը մերժելով և անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ գրավի պայմանագրերի 3.17-րդ և 3.19-րդ կետերի վերլուծությունից հետևում է, որ գրավադրված անշարժ գույքերի փոփոխությանը հանգեցնող ցանկացած գործողություն կարող է իրականացվել միայն գրավառուի, այսինքն՝ բողոքաբերի համաձայնությամբ, պատճառաբանել է, որ գրավի առարկա հանդիսացող հողամասերը չեն օտարվել երրորդ անձանց կամ որևէ այլ կերպ չեն տնօրինվել, ինչպես նաև որևէ փոփոխության չեն ենթարկվել, Դատարանի 05.09.2016 թվականի վճռով հստակեցվել են կողմերին պատկանող բաժնեմասերը, և դրանք առանձնացվել են բնեղենով, որը չի հակասում գրավի պայմանագրերի վերոնշյալ կետերի պահանջներին: Վերաքննիչ դատարանը նաև նշել է, որ փորձագետի եզրակացության «Հետազոտություն» բաժնում ներկայացվել է անշարժ գույքը բնեղենով առանձնացնելու տարբերակների չափագիտական մեթոդով համապատասխան հիմ-

նավորումները, որոնց հիմքով էլ փորձագետի եզրակացության «եզրակացություններ» բաժնում փորձագետների կողմից ներկայացվել են անշարժ գույքի բնեղենով առանձնացման տարբերակներ:

Մինչդեռ վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

Վերոնշյալ հոդվածն ամրագրում է պայմանագրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը՝ ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի մեկնաբանումը՝ համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար (*պենս*, «Կարայր» ՍՊԸ-ն ընդդեմ «Էզնա Շին» ՍՊԸ-ի թիվ ՇԴ1/0303/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Սույն գործով Ղուկաս Ավագյանն Ընկերության հետ կնքել է վարկային պայմանագիր, որի կատարման ապահովման նպատակով կնքել է նաև գրավի պայմանագրեր: Նշված պայմանագրերի 3.17-րդ կետի համաձայն՝ գրավատուները պարտավորվում են **առանց գրավառուի գրավոր համաձայնության** գրավի առարկա հանդիսացող գույքը չօտարել, չհանձնել վարձակալության, ենթավարձակալության և անհատույց օգտագործման կամ **չտնօրինել այլ կերպ**, իսկ 3.19-րդ կետի համաձայն՝ գրավատուները պարտավորվում են **գրավի առարկայի հետ կատարված ցանկացած փոփոխությունների դեպքում ստանալ գրավառուի համաձայնությունը**:

Վերոգրյալ գրավի պայմանագրերի 3.17-րդ և 3.19-րդ կետերը մեկնաբանելով և գնահատելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով սահմանված պահանջների շրջանակներում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կնքելով նշված գրավի պայմանագրերը՝ Ղուկաս Ավագյանը պարտավորություն է ստանձնել առանց գրավառուի (Ընկերության, իսկ հետագայում՝ պահանջի զիջման պայմանագրի ուժով Հայկ Միրզախանի Մալխասայանի) համաձայնության չտնօրինելու գրավադրված գույքը, դրա հետ կապված որևէ փոփոխություն չիրականացնելու: Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տնօրինման դրսևորում է նաև Ղուկաս Ավագյանի կողմից ներկայացված՝ ընդհանուր գույքից բաժինը բնեղենով առանձնացնելու պահանջը: Հետևաբար, առանց գրավառուի համաձայնության ներկայացնելով ընդհանուր գույքից իր բաժինը բնեղենով առանձնացնելու պահանջ՝ Ղուկաս Ավագյանը խախտել է գրավի պայմանագրերի՝ գույքի տնօրինման իրավունքի և գրավի առարկայի հետ կապված ցանկացած փոփոխության վերաբերյալ սահմանափակում նախատեսող կանոնները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը գրավի պայմանագրերի դրույթները չի մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով սահմանված պայմանագրի մեկնաբանման կանոններով, որի ար-

դյուքում հանգել է սխալ եզրակացության առ այն, որ գրավի առարկա հանդիսացող հողամասերը չեն օտարվել երրորդ անձանց կամ որևէ այլ կերպ չեն տնօրինվել, ինչպես նաև որևէ փոփոխության չեն ենթարկվել: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Ղուկաս Ավագյանը պարտավոր էր ընդհանուր գույքից իրեն պատկանող բաժինները բնեղենով առանձնացնելու պահանջ ներկայացնել միայն գրավառուի՝ Հայկ Միրզախանի Մալխասայանի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո, որպիսի հանգամանքն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից: Այլ կերպ ասած՝ ստորադաս դատարաններն անտեսել են, որ քանի դեռ առկա չէ գրավառու հանդիսացող Հայկ Միրզախանի Մալխասայանի գրավոր համաձայնությունը՝ Ղուկաս Ավագյանի պահանջը՝ գրավադրված անշարժ գույքերից բաժին առանձնացնելու վերաբերյալ, բավարարվել չի կարող:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Դատարանը վերը թվարկված փաստերի անտեսմամբ, արդյունքում նաև՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 447-րդ հոդվածների խախտմամբ սխալ եզրահանգման է եկել գրավ դրված գույքից բաժին առանձնացնելու հնարավորության վերաբերյալ, ինչն անտեսվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից, ուստի այս մասով վճռաբեկ բողոքի փաստարկները հիմնավոր են և իրավաչափ:

Նկատի ունենալով, որ կողմերի ընդհանուր բաժնային սեփականությունը հանդիսացող թվով չորս անշարժ գույքերից միայն երեքն են հանդիսանում գրավի առարկա, նշված եզրահանգումը վերաբերում է միայն ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղում գտնվող 04-079-106-072 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0106-0072) տակ գրանցված 2,6849հա մակերեսով հողամասից, նույն գյուղում գտնվող 04-079-101-031 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0101-0031) տակ գրանցված 4,335հա մակերեսով հողամասից, նույն գյուղի 2-րդ փողոցի թիվ 52 հասցեում գտնվող 04-079-111-075 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0111-0094) տակ գրանցված 8,4439հա մակերեսով հողամասից, ինչպես նաև նշված հողամասի վրա գտնվող շինություններից Ղուկաս Ավագյանի բաժինն առանձնացնելու վերաբերյալ Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգմանը:

Ինչ վերաբերում է կողմերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող և գրավի առարկա չհանդիսացող ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղի 2-րդ փողոցի թիվ 53ա հասցեում գտնվող խորքային հորը և ջրաձնշման աշտարակը, ինչպես նաև 0,0303հա մակերեսով արդյունաբերական նշանակության հողամասը բաժանելու վերաբերյալ Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգմանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը նշված անշարժ գույքի բաժանումն իրականացրել է «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՄՊԸ-ի կողմից կատարված դատատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննության արդյունքում 18.02.2016 թվականին կազմված թիվ «013-01/Վ-016» փորձագետի եզրակացության հիման վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն անտեսել են, որ անշարժ գույքերի բաժանման հիմքում ընկած փորձագետի եզրակացությունը չի պարունակում նշում դատատեխնիկական փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների վերաբերյալ, ինչը կասկած է հարուցում փորձագետի եզրակացության հիմնավորվածության և արժանահավատության վերաբերյալ: Ընդ որում, նման հարց բարձրացվել է նաև Դատարանում գործի քննության ժամանակ, մինչդեռ Դատարանը, մերժելով կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունը, վճիռ հիմքում դրել է մի եզրակացություն, որը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին՝ դրանով իսկ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի պահանջը: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշված մեթոդին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փորձաքննություն ընթացքում կիրառված մեթոդի մասին նշումը պետք է հստակորեն նշվի փորձագետի եզրակացության մեջ՝ չհարուցելով կասկած հենց նման մեթոդը կիրառված լինելու վերաբերյալ, մինչդեռ Վերաքննիչ դատարանը կողմից նշված և ենթադրաբար

կիրառված մեթոդի վերաբերյալ նշում փորձագետի եզրակացության մեջ առկա չէ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղի 2-րդ փողոցի թիվ 53ա հասցեում գտնվող խորքային հորը և ջրաձնշման աշտարակը, ինչպես նաև 0,0303հա մակերեսով արդյունաբերական նշանակության հողամասը բաժանելու վերաբերյալ պահանջը քննելիս Դատարանը պատշաճ քննություն չի իրականացրել, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պահանջի մասով գործը ենթակա է նոր քննության՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի վերոնշյալ հանգամանքները պարզելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղում գտնվող 04-079-106-072 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0106-0072) տակ գրանցված 2,6849հա մակերեսով հողամասից, նույն գյուղում գտնվող 04-079-101-031 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0101-0031) տակ գրանցված 4,335հա մակերեսով հողամասից, նույն գյուղի 2-րդ փողոցի թիվ 52 հասցեում գտնվող 04-079-111-075 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0111-0094) տակ գրանցված 8,4439հա մակերեսով հողամասից, ինչպես նաև նշված հողամասի վրա գտնվող շինություններից Ղուկաս Ավագյանի բաժինն առանձնացնելու վերաբերյալ պահանջների մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը նշված մասերով փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով այդ մասերով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ստորադաս դատարանի դատական ակտը նշված մասերով փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղի 2-րդ փողոցի թիվ 53ա հասցեում գտնվող խորքային հորը և ջրաձնշման աշտարակից, ինչպես նաև 0,0303հա մակերեսով արդյունաբերական նշանակության հողամասից բաժինն առանձնացնելու վերաբերյալ պահանջի մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ գործը նշված ծավալով նոր քննության ուղարկելու լիազորությունը:

##### ***5. Վճռաբեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու,



ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի իրավակարգավորումը, գտնում է, որ Ղուկաս Ավագյանից հոգուտ Հայկ Միրզախանի Մալխասայանի ենթակա է բռնագանձման 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար, ինչպես նաև 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար: Մնացած մասերով դատական ծախսերի բաշխման հարցին անհրաժեշտ է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.12.2016 թվականի որոշումը և

- ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 05.09.2016 թվականի վճիռը՝ հայցը՝ ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղում գտնվող 04-079-106-072 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0106-0072) տակ գրանցված 2,6849հա մակերեսով հողամասից, նույն գյուղում գտնվող 04-079-101-031 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0101-0031) տակ գրանցված 4,335հա մակերեսով հողամասից, նույն գյուղի 2-րդ փողոցի թիվ 52 հասցեում գտնվող 04-079-111-075 կադաստրային համարի (փոխվել է 04-079-0111-0094) տակ գրանցված 8,4439հա մակերեսով հողամասից և դրա վրա գտնվող շինություններից Ղուկաս Ավագյանի բաժինն առանձնացնելու պահանջի մասով բավարարելու մասով օրինական ուժի մեջ թողնելու մասով, փոփոխել և Ղուկաս Ավագյանի հայցը՝ նշված անշարժ գույքերից իր բաժինն առանձնացնելու պահանջի մասերով, մերժել,

- գործը՝ ՀՀ Արմավիրի մարզի Շենավան գյուղի 2-րդ փողոցի թիվ 53ա հասցեում գտնվող 0,0303հա մակերեսով արդյունաբերական նշանակության հողամասից և դրա վրա գտնվող խորքային հորից և ջրաձնշման աշտարակից Ղուկաս Ավագյանի բաժինն առանձնացնելու պահանջի մասով, ուղարկել ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Ղուկաս Ավագյանից հոգուտ Հայկ Միրզախանի Մալխասայանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ղուկաս Ավագյանից հոգուտ Հայկ Միրզախանի Մալխասայանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Մնացած մասերով դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0556/02/14**  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0556/02/14  
Նախագահող դատավոր՝ **Տ. Նազարյան**  
Դատավորներ՝ **Ա. Պետրոսյան**  
**Կ. Չիլինգարյան**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՑԱՆԻ**  
**Ռ. ՀԱԿՈՒՑԱՆԻ**  
**Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ**  
**Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**  
**Մ. ԴՐՄԵՑԱՆԻ**  
**Գ. ՀԱԿՈՒՑԱՆԻ**  
**Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**  
**Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ**  
**Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ**

2017 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով **Ջարուհի Հայրապետյանի** ներկայացուցիչ **Արտակ Ավանեսյանի** վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.04.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի **Ջարուհի Հայրապետյանի** և **Գայանե Ղազարյանի** ընդդեմ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ **Ընկերություն**), երրորդ անձ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակի (այսուհետ՝ **Գրասենյակ**)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ **Ջարուհի Հայրապետյանը** և **Գայանե Ղազարյանը** պահանջել են **Ընկերությունից** բռնագանձել 25.02.2013 թվականին կնքված թիվ 5/13 պայմանագրով սահմանված և չվճարված 1.680.000 ՀՀ դրամը, ինչպես նաև հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները մինչև գումարը վերադարձնելու օրը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ **Ա. Մելքումյան**) (այսուհետ՝ **Դատարան**) 03.11.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 21.04.2016 թվականի որոշմամբ Ջարուհի Հայրապետյանի և Գայանե Ղազարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.11.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ջարուհի Հայրապետյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի ուսումնասիրել 25.02.2013 թվականին կնքված թիվ 5/13 ծառայությունների մատուցման պայմանագիրը, այլապես կպարզեր, որ տվյալ պայմանագրի «Գ» հավելվածն ուժը կորցրած է ճանաչվել այն ժամանակ, երբ արդեն աշխատանքները կատարված են եղել և հանձնվել են Ընկերությանը, և որի դիմաց Գրասենյակի կողմից վարձատրությունը ստացված է եղել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ընկերությունը մինչև պայմանագիր կնքելը Գրասենյակին ներկայացրել է առաջարկ՝ սահմանելով տվյալ հետազոտությունն իրականացնելու իր մեթոդները և այդ աշխատանքներն իրականացնելու իր աշխատակազմը (երկու սոցիոլոգ), որոնց միջոցով պետք է մատուցեր այդ ծառայությունը: Ընդ որում, Ջարուհի Հայրապետյանը և Գայանե Ղազարյանը, ներգրավված լինելով որպես սոցիոլոգներ և չհանդիսանալով Ընկերության աշխատակիցներ, նախքան թիվ 5/13 ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը ստացել են այդ պայմանագիրը և արտահայտել իրենց համաձայնությունը նշված պայմանագիրը կնքելու համար:

Հետևաբար 25.02.2013 թվականին կնքված թիվ 5/13 ծառայությունների մատուցման պայմանագիրը պարտավորական հարաբերություններ է առաջացրել ինչպես Ընկերության և Գրասենյակի, այնպես էլ Ընկերության և Ջարուհի Հայրապետյանի, Գայանե Ղազարյանի միջև:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «վճռաբեկ բողոքն ընդունել քննության և ամբողջությամբ բավարարել այն՝ բեկանելով կայացված դատական ակտը»:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Կրթության որակ և համապատասխանություն» 2-րդ վարկային ծրագրի շրջանակում Ընկերության կողմից ներկայացված ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի ազդեցության գնահատման նպատակով հետազոտության իրականացման տեխնիկական և ֆինանսական առաջարկի «Աշխատակազմ» բաժնի համաձայն՝ Ընկերության հիմնական աշխատակազմում Գայանե Ղազարյանը և Ջարուհի Հայրապետյանը ներգրավվել են որպես սոցիոլոգներ, որոնց պարտականությունները, ի թիվս այլնի, ներառել են՝ վերաձևակերպել տեխնիկական առաջարկի դրույթներ և առաջարկել փոփոխություններ, կազմել մեթոդաբանության մի մասը, կազմել հաշվետվություններ ըստ փուլերի (**հատոր 1-ին, գ.թ. 24-34**):

2. Գրասենյակի ՊՀ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և Ընկերության (Խորհրդատու) միջև 25.02.2013 թվականին կնքված թիվ 5/13 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1-ին կետի համաձայն՝ Խորհրդատուն Պատվիրատուին մատուցում է Պայմանագրի անբաժանելի մաս կազմող «Ա» հավելվածում նշված ծառայությունները, իսկ հաշվետվությունը կտրամադրվի Պայմանագրի «Բ» հավելվածում սահմանված կարգով (**հատոր 3-րդ, գ.թ. 21-27**):

3. Պատվիրատուի և Ընկերության միջև 25.02.2013 թվականին կնքված թիվ 5/13 պայմանագրի անբաժանելի մասը կազմող «Ա» հավելվածի համաձայն՝ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային 2-րդ ծրագրի շրջանակներում հետազոտության առաջին փուլը ընդգրկում է 2013 թվականի փետրվար ամսից մինչև մարտ ամիսները, երկրորդ փուլն ընդգրկում է 2013 թվականի ապրիլ ամսից մինչև հուլիս ամիսները, երրորդ փուլն ընդգրկում է 2013 թվականի սեպտեմբեր ամսից մինչև դեկտեմբեր ամիսները, չորրորդ փուլն ընդգրկում է 2014 թվականի հունվար ամսից մինչև փետրվար ամիսները, իսկ նույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող «Գ» հավելվածով սահմանվել է Զարուհի Հայրապետյանի և Գայանե Ղազարյանի պաշտոնները, չափման միավորները, միավորների քանակը, օրերի քանակը և միավորների արժեքները (**հատոր 3-րդ, գ.թ. 28-34**):

4. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող «Բ» հավելվածի համաձայն՝ «Խորհրդատուի հաշվետվային պարտականություններն» են.

- **Սկզբնական հաշվետվություն.** Հաշվետվությունը պետք է ներկայացվի աշխատանքների առաջին փուլն ավարտելուց հետո: Հաշվետվությունը պետք է ընդգրկի հետազոտության մեթոդաբանության նկարագրությունը՝ ներառելով ընտրության մեթոդները, հատուկ հարցերի հետազոտության շրջանակները, հետազոտության գործիքները: Հաշվետվությունը պետք է ներկայացվի մինչև 30.03.2013 թվականը:
- **Առաջին միջանկյալ հաշվետվություն.** Հաշվետվությունը պետք է ներկայացվի աշխատանքների երկրորդ փուլն ավարտելուց հետո: Հաշվետվությունը պետք է ներառի 2011 և 2012 թվականների վերապատրաստումների ազդեցության գնահատման նպատակով դաշտային աշխատանքների իրականացման և հավաքագրած տվյալների վերլուծության արդյունքներ: Հաշվետվությունը պետք է ներկայացվի մինչև 15.07.2013 թվականը:
- **Երկրորդ միջանկյալ հաշվետվություն.** Հաշվետվությունը պետք է ներկայացվի աշխատանքների երրորդ փուլը ավարտելուց հետո: (...) Հաշվետվությունը պետք է ներկայացվի մինչև 15.12.2013 թվականը:
- **Վերջնական հաշվետվություն.** Հաշվետվությունը պետք է ներկայացվի աշխատանքների չորրորդ փուլը ավարտելուց հետո: (...) Հաշվետվությունը պետք է ներկայացվի մինչև 15.02.2014 թվականը:

5. Ընկերության և Զարուհի Հայրապետյանի միջև կնքված ծառայություններ մատուցելու 03.06.2013 թվականի թիվ 06/03-1 պայմանագրի համաձայն՝ Զարուհի Հայրապետյանը պարտավորվել է Ընկերության հանձնարարությամբ մշակել Կրթական Ծրագրերի Կենտրոնի (ԿԾԿ) «Կրթության որակ և պատասխանատվություն» 2-րդ վարկային ծրագրի «Կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով» ենթածրագրի ազդեցության գնահատման մեթոդաբանությունը և «Որակական հետազոտության» գործիքները: Պայմանագրի գինը սահմանվել է 800.000 ՀՀ դրամ (**հատոր 2-րդ, գ.թ. 21-22**):

6. Թիվ 08/06-01 կատարողական ակտի համաձայն՝ Զարուհի Հայրապետյանը պատշաճ կատարել է Կրթական ծրագրերի կենտրոնի «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային 2-րդ ծրագրի շրջանակներում պայմանագրային պարտավորությունները և պատշաճ որակով ներկայացրել է կատարված աշխատանքները (**հատոր 2-րդ, գ.թ. 23**):

7. 10.07.2013 թվականի թիվ 151 դրամարկղային ելքի օրդերի համաձայն՝ թիվ 08/06-01 կատարողական ակտի հիման վրա Զարուհի Հայրապետյանին վճարվել է 800.000 ՀՀ դրամ (**հատոր 2-րդ, գ.թ. 24**):

8. Ընկերության ներկայացուցիչների և Գրասենյակի աշխատողների համատեղ խորհրդակցության 12.08.2013 թվականի արձանագրության համաձայն՝ Խորհրդակցությանը մասնակցել են Ընկերության կոորպորատիվ ֆինանսների և բիզնես խորհրդատվության բաժնի ղեկավար Սամվել Հովհաննիսյանը, խորհրդատու-վերլուծաբան Լուսինե Հով-

հաննիսյանը և փորձագետ Ջարուհի Հայրապետյանը, ինչպես նաև Գրասենյակի տնօրեն Հասմիկ Ղազարյանը, բաղադրիչի ղեկավար Կարեն Մելքոնյանը և համակարգող Լիլիթ Շավարշյանը: Ըստ նշված արձանագրության՝ օրակարգում ընդգրկվել է «Կրթության որակ և պատասխանատվություն» 2-րդ վարկային ծրագրի «Կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով» ենթածրագրի ազդեցության գնահատողական հետազոտության **երկրորդ փուլի հաշվետվությունն ընդունելու հարցը**: «Կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով» բաղադրիչի ղեկավար Կարեն Մելքոնյանը ներկայացրել է Ընկերության առաջին միջանկյալ հաշվետվությունը: Նշելով կատարված աշխատանքների արդյունավետության մասին և անդրադառնալով հաշվետվության վերլուծական մասին՝ առաջարկել է վերանայել այն և հաշվետվությունը վերանայելու վերջնաժամկետ է սահմանել մինչև 30.08.2013 թվականը **(հատոր 3-րդ, գ.թ. 36-37)**:

9. Ընկերության կողմից Գրասենյակի տնօրեն Հ. Ղազարյանին ուղղված 30.08.2013 թվականի գրության համաձայն՝ Ընկերության կողմից Գրասենյակին է ներկայացվել «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային 2-րդ ծրագրի «Կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով» ենթածրագրի ազդեցության երկրորդ փուլի վերանայված հաշվետվությունը՝ Ընկերության և Գրասենյակի աշխատողների համատեղ խորհրդակցության 12.08.2013 թվականի արձանագրության համաձայն, որն էլ ընդունվել է Գրասենյակի կողմից, մասնավորապես, նշված գրության վրա առկա է «Կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով» բաղադրիչի ղեկավար Կարեն Մելքոնյանը գրառում «Կից ներկայացված հաշվետվությունը համապատասխանում է պայմանագրին և աշխատանքի նկարագրի պահանջներին: Նկատի ունենալով վերոնշյալը՝ հաշվետվությունն ընդունում են» **(հատոր 4-րդ, գ.թ. 72-135)**:

10. Գրասենյակի և Ընկերության միջև 16.10.2013 թվականին կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, որով փոփոխության է ենթարկվել նույն կողմերի միջև 25.02.2013 թվականին կնքված թիվ 5/13 պայմանագիրը: Մասնավորապես՝ նշված Պայմանագրի «Գ» հավելվածը չեղյալ է համարվել **(հատոր 2-րդ, գ.թ. 64-65)**:

#### **4. Վճարելի դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումը**

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելու պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սույն դեպքում գործարքի գրավոր ձևը չպահպանելու հետևանքների վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարելի դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք գործարքի գրավոր ձևը պահպանված չլինելու դեպքում այդ գործարքից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են իրականացման, եթե առկա են այլ ապացույցներ, որոնք վկայում են Կրթության որակի հետագա բարելավման մասին:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված

են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կնքվում են բանավոր կամ գրավոր (հասարակ կամ նոտարական) ձևով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործարքը, որը կարող է կնքվել բանավոր, համարվում է կնքված նաև այն դեպքում, եթե անձի վարքից ակնհայտ է գործարք կնքելու նրա կամքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 295-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքը, որի համար օրենքով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ գրավոր (հասարակ կամ նոտարական) ձև, կարող է կնքվել բանավոր: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բանավոր կարող են կնքվել կնքման պահին կատարվող բոլոր գործարքները, բացառությամբ այն գործարքների, որոնց համար սահմանված է նոտարական ձև, և այն գործարքների, որոնց հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրանց անվավերության, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից: Երկկողմ (բազմակողմ) գործարքները կարող են կնքվել նույն օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված եղանակներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրերի նկատմամբ կիրառվում են նույն օրենսգրքի 18-րդ գլխում նախատեսված երկկողմ և բազմակողմ գործարքների մասին կանոնները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կնքվում է գրավոր:

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտություն» հասկացությունները: Հետևաբար ՀՀ վճարելի դատարանը հարկ է համարել բացահայտել նշված հասկացությունների բովանդակությունը: «Կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց **ներքին կամքի** և **արտաքին կամահայտության համակցությունն է**

(*տես, Նեղի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Համիաս» ՍՊԸ-ի թիվ ԵԿԿ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ պայմանագիրը՝ որպես գործարք, կարող է կնքվել բանավոր կամ գրավոր ձևով: Պայմանագրի ձևի վերաբերյալ օրենսդրական կարգավորման նպատակը պայմանագրի հիման վրա ծագող հարաբերություններն ավելի հստակ դարձնելն է, քաղաքացիական շրջանառության կայունությունն ապահովելը, պայմանավորված պայմանագրի տվյալ տեսակի բնույթով՝ ապագայում հնարավոր վեճերի կանխումը: Մասնավորապես՝ պայմանագրի կնքման բանավոր ձև նախատեսելու միջոցով քաղաքացիական շրջանառությունը չի ծանրաբեռնվում (օրինակ՝ կնքման պահին կատարվող գործարքները, որոնց համար հատուկ կարգավորում նախատեսված չէ, կարող են կնքվել բանավոր ձևով): Ինչ վերաբերում է գրավոր ձևով կնքվող գործարքներին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործարքների որոշ տեսակների համար հստակ նախատեսելով գրավոր ձև՝ օրենսդիրը կարևորել է այդ պայմանագրերը կնքված համարվելու համար որոշակի պահանջների պահպանումը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետ, 450-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետեր): Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ սահմանելով գործարքի կնքման գրավոր ձև՝ օրենսդիրը նախատեսել է այդ ձևը չպահպանելու երկու հնարավոր հետևանք.

1) գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին գրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից՝ չգրկելով գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից,

2) օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ օրենսդրի կողմից պայմանագրի տվյալ ձևի համար սահմանված է գրավոր ձև՝ առանց ձևը չպահպանելու հետևանքները նշելու (օրինակ՝ կապալի պայմանագիր, հանձնարարության պայմանագիր, կոմիսիայի պայմանագիր և այլն), ապա գործում է վերը նշված 1-ին կանոնը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերը նշված իրավական հետևանքը կիրառվում է բացառապես վեճի առկայության դեպքում: Այսինքն՝ այն դեպքերում, երբ տվյալ գործարքը կնքված լինելու փաստը կողմերի կողմից չի վիճարկվում, ապա գործարքի հասարակ գրավոր ձևը պահպանված չլինելու հանգամանքն ինքնին որևէ իրավական հետևանքներ չի առաջացնում: Հետևաբար նշված հետևանքը դատավարական բնույթի է: Այն դեպքերում, երբ օրենքով կամ պայմանագրով հստակ նախատեսված է, ապա պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է անվավերության (օրինակ՝ փոխառության պայմանագիր, վարկային պայմանագիր, բանկային ավանդի պայմանագիր և այլն):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը՝ որպես այն կնքող անձանց համաձայնեցված կամքի արտահայտություն, ուղղված է որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի գործունեություն իրականացնելու արդյունքում քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն: Նկատի ունենալով, որ օրենսդիրն այս պայմանագրի համար սահմանել է գրավոր ձևով կնքելու պահանջ, ծառայությունների վճարովի պայմանագիրը պետք է կնքվի գրավոր գործարքին ներկայացվող պահանջներին համապատասխան: Այն դեպքերում, երբ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի գրավոր ձևը չի պահպանվում, ապա կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կանոնը, այն է՝ կողմերը գրկվում են ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից՝ այդուհանդերձ պահպանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքը, որոնք ենթակա են գնահատման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի հա-



մաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*լրեն, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*լրեն, Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը «Կրթության որակ և համապատասխանություն» 2-րդ վարկային ծրագրի շրջանակում, ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի ազդեցության գնահատման հետազոտության իրականացման նպատակով, ներկայացրել է տեխնիկական և ֆինանսական առաջարկ, որի «Աշխատակազմ» բաժնում՝ որպես Ընկերության աշխատակազմի անդամ ներգրավվել է նաև սոցիոլոգ Զարուհի Հայրապետյանը: Տվյալ առաջարկով վերջինիս պարտականությունները, ի թիվս այլնի, ներառել են՝ կազմել հաշվետվություններ՝ ըստ փուլերի: 25.02.2013 թվականին Գրասենյակի (Պատվիրատու) և Ընկերության (Խորհրդատու) միջև կնքվել է թիվ 5/13 պայմանագիրը, ըստ որի՝ Ընկերությունը պարտավորվել է Գրասենյակին մատուցել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող «Ա» հավելվածում նշված ծառայությունները: Ընդ որում, ըստ նշված պայմանագրի անբաժանելի մասը կազմող «Ա» հավելվածի՝ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային 2-րդ ծրագրի շրջանակներում հետազոտության **երկրորդ փուլն ընդգրկել է 2013 թվականի ապրիլ ամսից մինչև հուլիս ամիսները**, իսկ սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող «Բ» հավելվածի՝ «Խորհրդատուի հաշվետվային պարտականություններն», ի թիվս այլնի, ներառել է առաջին միջանկյալ հաշվետվության կազմումը, որը պետք է ներկայացվեր աշխատանքների երկրորդ փուլին ավարտելուց հետո: Հաշվետվությունը պետք է ներկայացվեր մինչև 15.07.2013 թվականը: 03.06.2013 թվականին Ընկերության և Զարուհի Հայրապետյանի միջև կնքվել է թիվ 06/03-1 ծառայություններ մատուցելու պայմանագիրը, որով Զարուհի Հայրապետյանը պարտավորվել է Ընկերության հանձնարարությամբ մատուցել «Կրթության որակ և համապատասխանություն» 2-րդ վարկային ծրագրի շրջանակում համապատասխան ծառայությունը, իսկ Ընկերությունը պարտավորվել է դրա համար վճարել 800.000 ՀՀ դրամ: Զարուհի Հայրապետյանը պատշաճ կատարել է 2-րդ վարկային ծրագրի շրջանակներում պայմանագրային պարտավորությունները և պատշաճ որակով ներկայացրել է կատարված աշխատանքները, որի համար կազմվել է թիվ 08/06-01 կատարողական ակտը և 10.07.2013 թվականի թիվ 151 դրամարկղային ելքի օրդերով Զարուհի Հայրապետյանին վճարվել է 800.000 ՀՀ դրամ:

12.08.2013 թվականին կայացել է խորհրդակցություն, որին, ի թիվս այլ անձանց, մասնակցել են խորհրդատու-վերլուծաբան Լուսինե Հովհաննիսյանը, փորձագետ Զարուհի Հայրապետյանը, ինչպես նաև Գրասենյակի տնօրեն Հասմիկ Ղազարյանը, բաղադրիչի ղեկավար Կարեն Մելքոնյանը: Օրակարգում ընդգրկվել է «Կրթության որակ և պատասխանատվություն» 2-րդ վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող **գնահատողական հետազոտության երկրորդ փուլի հաշվետվությունն ընդունելու հարցը**: Նշված հարցի քննարկման ժամանակ Կարեն Մելքոնյանը, անդրադառնալով հաշվետվության վերլուծական մասին, առաջարկել է վերանայել այն, և հաշվետվությունը վերանայելու վերջնաժամկետ է սահմանվել մինչև 30.08.2013 թվականը: 30.08.2013 թվական

նին Ընկերությունն **երկրորդ փուլի վերանայված հաշվետվությունը ներկայացրել է** Գրասենյակ, որն ընդունվել է Գրասենյակի կողմից՝ համապատասխան նշում կատարելով գրության վրա:

Պայմանագրի «Գ» հավելվածը չեղյալ է համարվել **16.10.2013 թվականին**:

Սույն գործով Դատարանը, Զարուհի Հայրապետյանի հայցը մերժելով, պատճառաբանել է, որ Զարուհի Հայրապետյանը չի ներկայացրել բավարար, վերաբերելի և թույլատրելի ապացույցներ իր պահանջը հիմնավորելու համար, մասնավորապես՝ չի ներկայացրել պայմանագիր, որը կողմերի միջև պարտավորություններ սահմանող իրավահարաբերությունների ծագման հիմքը կհանդիսանար, չի պարզաբանել, թե ինչ հաշվարկով և ինչ ելակետային տվյալներից է ստացել հայցով պահանջվող գումարի չափը, հաշվի առնելով, որ Ընկերությունում գործարար շրջանառության սովորույթի համաձայն պայմանագիրը կնքվում է աշխատանքները կատարելուց հետո, չի ներկայացրել նույնիսկ կատարողական ակտը, որով կհաստատվեր, որ չնայած պայմանագրի բացակայության պարագայում, հայցվորները կատարել են աշխատանքը, իսկ պատասխանողն այն ընդունել է: Միաժամանակ Դատարանն արձանագրել է, որ Պայմանագրի «Գ» հավելվածով սահմանվել է աշխատակազմը, որում ընդգրկված է եղել նաև Զարուհի Հայրապետյանը, որը հետագայում չեղյալ է համարվել:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, հիմնավոր է համարել Դատարանի վերը նշված պատճառաբանությունները:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանության հիմնավորվածությանը, հարկ է համարում նշել հետևյալը.

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ ծառայությունների մատուցման պայմանագրի հասարակ գրավոր ձևը չպահպանելը չի հանգեցնում տվյալ գործարքի անվավերության (եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ), այլ գրկում է գործարքի կողմերին, ի հավաստումն գործարքի և դրա պայմանների, վկաների ցուցումները վկայակոչելու հնարավորությունից:

Սույն գործով Զարուհի Հայրապետյանի և Ընկերության միջև «Կրթության որակ և պատասխանատվություն» 2-րդ վարկային ծրագրի շրջանակում գնահատողական հետազոտության երկրորդ փուլի վերաբերյալ ծառայությունների վճարովի մատուցման գրավոր պայմանագիր չի կնքվել, որպիսի պայմաններում ստորադաս դատարանները բացառել են կողմերի միջև պարտավորական հարաբերությունների առաջացման հնարավորությունը՝ այն պայմանավորելով միայն գրավոր պայմանագրի առկայությամբ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը վերը շարադրված իրավական դիրքորոշումների համատեքստում գտնում է, որ ստորադաս դատարանները գրավոր պայմանագրի բացակայության պայմաններում պետք է գնահատման առարկա դարձնեին կողմերի դրսևորած վարքագիծը՝ պարզելու համար վերջիններիս կամահայտնության ուղղվածությունը, մասնավորապես՝ արդյոք այն ուղղված է եղել կողմերի համար իրավունքներ և պարտականություններ առաջացնելուն, և արդյոք դրանք իրականացվել են: Այսպես, հաշվի առնելով ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի բնույթը, մասնավորապես՝ այն, որ մի կողմը կրում է որոշակի աշխատանքներ իրականացնելու պարտականություն և դրա դիմաց վարձատրություն ստանալու իրավունք, իսկ մյուս կողմը պարտավորվում է ընդունել կատարած աշխատանքը և վճարել դրա դիմաց, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճելի իրավահարաբերության մասնակիցների վարքագիծը ենթակա էր գնահատման վերը նշվածի հաշվառմամբ:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները չեն իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի և լրիվ գնահատում՝ անտեսելով այն հանգամանքը, որ Զարուհի Հայրապետյանը «Կրթության որակ և համապատասխանություն» 2-րդ վարկային ծրագրի շրջանակում Ընկերության կողմից ներկայացված ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի ազդեցության գնահատման նպատակով հետազոտության իրականացման տեխնիկական և ֆինանսական առաջարկում ներգրավված է եղել որպես սոցիոլոգ, վերջինիս հետ աշխատանքների իրականացման առաջին փուլի վերաբերյալ կնքված է եղել ծառայությունների մատուց-

ման պայմանագիր, Զարուհի Հայրապետյանը պատշաճ կերպով իրականացրել է առաջին փուլի աշխատանքները, մասնակցել է երկրորդ փուլի աշխատանքների կատարման հաշվետվության քննարկմանը: Նշված հանգամանքները, ապացույցների համակցության մեջ գնահատման արդյունքում, կարող էին վկայել կողմերի որոշակի փոխհամաձայնեցված վարքագծի մասին, որն իրավական առումով կաշկանդել է վերջիններիս, և ըստ այդմ՝ վերջիններիս համար կարող է առաջացնել իրավական հետևանքներ:

Ավելին, ստորադաս դատարաններն անտեսել են, որ Պայմանագրի «Գ» հավելվածը, որը սահմանել է աշխատողների, այդ թվում նաև՝ Զարուհի Հայրապետյանի պաշտոնը, աշխատանքի չափման միավորները, միավորների քանակը, օրերի քանակը և միավորների արժեքները, չեղյալ համարվել է միայն 16.10.2013 թվականին, երբ երկրորդ փուլի վերանայված հաշվետվությունը ներկայացրված է եղել Գրասենյակ և ընդունվել է Գրասենյակի կողմից:

Միաժամանակ ստորադաս դատարանները պատշաճ կարգով չեն հետազոտել գործում առկա՝ Լուսինե Հովհաննիսյանի, Զարուհի Հայրապետյանի և Գայանե Ղազարյանի էլեկտրոնային նամակագրությունը, որոնց միջոցով վերջիններս ենթադրաբար հաղորդակցվել են սույն գործով վեճի առարկա հանդիսացող աշխատանքների 2-րդ փուլի վերաբերյալ:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները չեն իրականացրել ապացույցների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտություն՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որպիսի պայմաններում առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու և գործը՝ Զարուհի Հայրապետյանի պահանջի մասով, նոր քննության ուղարկելու համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանվում է միայն Զարուհի Հայրապետյանի վերաքննիչ բողոքը մերժելու մասով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված ակտի դեմ վճռաբեկ բողոք բերվել է միայն վերջինիս կողմից:

**5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործը՝ Զարուհի Հայրապետյանի պահանջի մասով, ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ դատական ծախսերի, այդ թվում նաև՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 07.10.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցը, ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.04.2016 թվականի որոշման՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.11.2015 թվականի վճիռը՝ Զարուհի Հայրապետյանի հայցն ընդդեմ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասով, մերժելու մասով օրինական ուժի մեջ թողնելու մասը և այդ մասով գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում նաև՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 07.10.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԱՎԳ-3/0787/02/14  
 դատարանի որոշում **2017թ.**  
 Քաղաքացիական գործ թիվ ԱՎԳ-3/0787/02/14  
 Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան  
 Դատավորներ՝ Ա. Պետրոսյան  
 Կ. Չիլինգարյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

*Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՏՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ*

2017 թվականի ապրիլի 07-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «Գործիսի «Միկրոշարժիչ»» ԲԲԸ-ի (այսու-  
հետ՝ Կազմակերպություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարա-  
նի 19.08.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կազմակերպության ընդդեմ «Ջերմուկ  
Ինյութերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթլեր» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ գումարի բռնագա-  
նձման պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### **1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից բռնագան-  
ձել 22.544.274 ՀՀ դրամ, ինչպես նաև նշված գումարի նկատմամբ վճարման ենթակա  
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները՝ 16.02.2012  
թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավա-  
սության դատարանի (դատավոր՝ Զ. Նախշբարյան) 24.07.2015 թվականի վճռով Կազմա-  
կերպության հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ն. Բարսեղյան, Ս. Մի-  
քայելյան, Մ. Հարթենյան) 27.11.2015 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողո-  
քը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շր-

ջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.07.2015 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Հովսեփյան) (այսուհետ՝ Դատարան) 18.05.2016 թվականի վճռով Կազմակերպության հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 19.08.2016 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ որոշվել է. «Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.05.2016 թվականի թիվ ԱՎԳ-3/0787/02/14 քաղաքացիական գործով կայացրած վճիռը մասնակի բեկանել և փոփոխել հետևյալ կերպ. «Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի Կոլա Բոյլեր» ՍՊԸ-ից հոգուտ «Գորիսի «Միկրոշարժիչ»» ԲԲԸ-ի բռնագանձել 3.469.804 ՀՀ դրամ: Սկսած 16.02.2012 թվականից մինչև գումարը հայցվոր «Գորիսի «Միկրոշարժիչ»» ԲԲԸ-ին վերադարձնելու օրը՝ 3.469.804 ՀՀ դրամի վրա հաշվարկել ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքները և այն բռնագանձել պատասխանող «Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի Կոլա Բոյլեր» ՍՊԸ-ից հոգուտ «Գորիսի «Միկրոշարժիչ»» ԲԲԸ-ի: 19.074.470 ՀՀ դրամի և դրա նկատմամբ 16.02.2012 թվականից սկսած մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների բռնագանձման պահանջի մատով «Գորիսի «Միկրոշարժիչ»» ԲԲԸ-ի հայցը մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով»:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ, 335-րդ, 337-րդ, 340-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանի որոշումը՝ հայցային վաղեմություն կիրառելու մատով, կայացվել է դատավարական նորմերի կոպիտ խախտմամբ, որն ազդել է գործի ելքի վրա, քանի որ վերաքննիչ դատարանը բազմակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն չի հետազոտել գործում առկա ապացույցները, որի հետևանքով խաթարվել է արդարադատության բուն էությունը և խախտվել են Կազմակերպության՝ ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքներն ու օրինական շահերը:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով դատական ակտը, եկել է ակնհայտ անհիմն եզրահանգման՝ նշելով, որ սույն գործում առկա հաշիվ-ապրանքագրերում, ինչպես նաև հարկային հաշիվներում հստակ նշված են մատակարարող և ստացող սուբյեկտների անվանումները, մատակարարվող ապրանքի տեսակը, քանակը, արժեքը: Այսինքն՝ պահպանված են մատակարարման պայմանագրի հիմնական էական պայմանները: Ուստի նման պայմաններում դրանցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին, մեկը մյուսի հետ չկապված, ինքնուրույն գործարք, որպիսի պայմաններում դրանցից յուրաքանչյուրի համար հայցային վաղեմության ժամկետը հոսում է և կարող է ընդհատվել առանձին կերպով: Հետևաբար 16.02.2012 թվականին Ընկերության կողմից 15.000.000 ՀՀ դրամի չափով վճարում կատարելը չէր կարող ընդհատել բոլոր՝ թվով 11 մատակարարման գործարքների համար հոսող հայցային վաղեմության ժամկետը:

Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանություններն ակնհայտ անհիմն են, չեն բխում գործի փաստական հանգամանքներից և չեն արտացոլում օբյեկտիվ իրակասությունը, քանի որ օրենսդիրը համապատասխան իրավական կարգավորման է ենթար-

կել հայցային վաղեմության եռամյա ժամկետի հաշվարկման կարգը:

Վերաքննիչ դատարանն անհիմն փաստել է, որ վճարման հանձնարարագրերից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին, մեկը մյուսի հետ չկապված, ինքնուրույն գործարք, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ կողմերի միջև պարտավորական իրավահարաբերությունների առաջացման հիմքը մեկն է՝ 25.01.2010 թվականին կնքված մատակարարման թիվ 43 պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր), իսկ հաշիվապարանքագրերն ու վճարման հանձնարարագրերը, ըստ էության, Պայմանագրից բխող պարտավորությունը՝ մատակարարումը կատարված լինելը հավաստող փաստեր են և հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մաս:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ րեկանել Վերաքննիչ դատարանի 19.08.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 18.05.2016 թվականի վճռին կամ գործն ուղարկել նոր քննության:

**2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ իրավացիորեն նշել է, որ Կազմակերպության կողմից ներկայացված 19.074.470 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասով հայցային վաղեմության ժամկետը ընդհատված չէ, քանի որ այդ գումարը գոյացել է առանձին հարկային հաշիվների հիմքով, իսկ Կազմակերպությունը որևէ կերպ չի ապացուցել, որ 16.02.2012 թվականին վճարված 15.000.000 ՀՀ դրամն ուղղվել է դրանց մարմանը: Հետևաբար Ընկերության կողմից ներկայացված հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը Դատարանի կողմից անհիմն կերպով է ամբողջությամբ մերժվել, քանի որ իրականում հայցային վաղեմության ժամկետն ընդհատվել է միայն 3.469.804 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասով, իսկ մնացած մասով Կազմակերպությունը բաց է թողել իր խախտված իրավունքների պաշտպանության համար օրենքով նախատեսված եռամյա ժամանակահատվածը:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Կազմակերպության և Ընկերության միջև 25.01.2010 թվականին կնքված Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող Կազմակերպությունը պարտավորվել է նույն պայմանագրով նախատեսված ժամկետներում Ընկերությանը հանձնել իր կողմից արտադրված կամ գնված ապրանքները, այն է՝ սենդվիչ-պանել՝ իր կոնալեկտ էլեմենտներով, (...) իսկ Ընկերությունը պարտավորվել է ընդունել այդ ապրանքները և վճարել դրանց դիմաց: Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ապրանքների անվանացանկը, քանակը, որակը և գինը որոշվում են թիվ 1 հավելվածով, որը նույն պայմանագրի անբաժանելի մասն է: Պայմանագրի 4.1 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված մատակարարվող ապրանքի գինը կազմում է 70.382.994 ՀՀ դրամ: Պայմանագրի 4.2 կետի համաձայն՝ նույն պայմանագիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը կատարում է առաջին կանխավճարային մուծում պայմանագրով նախատեսված մատակարարվող ապրանքի գնի 50 տոկոսի չափով, այն է՝ 35.191.497 ՀՀ դրամ, այնուհետև Ընկերությունը պայմանագրով նախատեսված առաջին կանխավճարային մուծում կատարելուց 35 օր հետո կատարում է երկրորդ կանխավճարային մուծումը՝ պայմանագրով նախատեսված մատակարարվող ապրանքի գնի 20 տոկոսի չափով, այն է՝ 14.076.598 ՀՀ դրամ, իսկ մնացած գումարը վճարում է 49.268.095 ՀՀ դրամի կանխավճարային մուծում կատարած գումարի չափով ապրանքը ստանալուց հետո, *յուրաժամկետ (մաս-մաս) վճարումներով՝ Կազմակերպության կողմից համապատասխան խմբաքանակի ապրանք մատակարարելուց, փոխադարձ ակտերը կնքելուց, հաշիվ-ապրանքագրերը սրանալուց և ստորագրելուց հետո՝ փաստը աշխատանքային օրվա ընթացքում:* Պայմանագրի 4.5 կետի համաձայն՝ (...) Ընկերությունն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները

Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է ապրանքը գնորդի պահեստ հասցնելու պահից տասնօրյա ժամկետում: Պայմանագրի 10.1 կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև 22.06.2010 թվականը: Պայմանագրի 10.2 կետի համաձայն՝ նույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր (...) **(հատոր 1-ին, գ.թ. 55-61)**:

2. Կազմակերպության կողմից ներկայացված՝ վերջինիս կողմից Ընկերությանը մատակարարված ապրանքների և ստացված գումարների վերաբերյալ հաշվարկի համաձայն՝ 15.02.2010 թվականից մինչև 16.09.2011 թվականն Ընկերությանը մատակարարվել է 120.544.274 ՀՀ դրամի ապրանք, որի դիմաց 16.02.2012 թվականի դրությամբ Կազմակերպությանը վճարվել է 98.000.000 ՀՀ դրամ: Նույն հաշվարկի համաձայն՝ գումարի վերջին ստացումը եղել է 16.02.2012 թվականին, որպիսի փաստը կողմերը չեն վիճարկել **(հատոր 1-ին, գ.թ. 39)**:

3. 16.02.2012 թվականի թիվ 12021504916600 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Ընկերության կողմից Կազմակերպության հաշվեհամարին 16.02.2012 թվականին փոխանցվել է 15.000.000 ՀՀ դրամ, իսկ որպես վճարման նպատակ նշված է՝ «շինանյութերի համար» **(հատոր 2-րդ, գ.թ. 52)**:

4. 25.01.2010 թվականի թիվ A-035 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Ընկերության կողմից Կազմակերպության հաշվեհամարին 25.01.2010 թվականին փոխանցվել է 19.000.000 ՀՀ դրամ, իսկ որպես վճարման նպատակ նշված է՝ թիվ 43 Պայմանագիրը: 29.01.2010 թվականի թիվ A-036 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Ընկերության կողմից Կազմակերպության հաշվեհամարին 29.01.2010 թվականին փոխանցվել է 16.000.000 ՀՀ դրամ, իսկ որպես վճարման նպատակ նշված է՝ թիվ 43 Պայմանագիրը: 16.03.2010 թվականի թիվ A-044 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Ընկերության կողմից Կազմակերպության հաշվեհամարին 16.03.2010 թվականին փոխանցվել է 15.000.000 ՀՀ դրամ, իսկ որպես վճարման նպատակ նշված է՝ թիվ 43 Պայմանագիրը: 07.09.2010 թվականի թիվ A-114 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Ընկերության կողմից Կազմակերպության հաշվեհամարին 07.09.2010 թվականին փոխանցվել է 5.000.000 ՀՀ դրամ, իսկ որպես վճարման նպատակ նշված է՝ «կանխավճար շինանյութերի ձեռքբերման համար»: 06.12.2010 թվականի թիվ A-194 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Ընկերության կողմից Կազմակերպության հաշվեհամարին 06.12.2010 թվականին փոխանցվել է 2.000.000 ՀՀ դրամ, իսկ որպես վճարման նպատակ նշված է՝ թիվ 43 Պայմանագիրը: 09.12.2010 թվականի թիվ A-210 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Ընկերության կողմից Կազմակերպության հաշվեհամարին 09.12.2010 թվականին փոխանցվել է 2.000.000 ՀՀ դրամ, իսկ որպես վճարման նպատակ նշված է՝ թիվ 43 Պայմանագիրը: 30.12.2010 թվականի թիվ A-253 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Ընկերության կողմից Կազմակերպության հաշվեհամարին 30.12.2010 թվականին փոխանցվել է 5.000.000 ՀՀ դրամ, իսկ որպես վճարման նպատակ նշված է՝ թիվ 43 Պայմանագիրը: 28.02.2011 թվականի թիվ A-081 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Ընկերության կողմից Կազմակերպության հաշվեհամարին 28.02.2011 թվականին փոխանցվել է 5.000.000 ՀՀ դրամ, իսկ որպես վճարման նպատակ նշված է՝ «շինանյութերի համար»: 11.04.2011 թվականի թիվ NS-052 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Ընկերության կողմից Կազմակերպության հաշվեհամարին 11.04.2011 թվականին փոխանցվել է 6.000.000 ՀՀ դրամ, իսկ որպես վճարման նպատակ նշված է՝ «շինանյութերի համար» **(հատոր 4-րդ, գ.թ. 22-30)**:

5. Սույն գործում առկա՝ թվով 15 հաշիվ ապրանքագրերի համաձայն՝ 15.02.2010 թվականից մինչև 24.12.2010 թվականը Կազմակերպությունն Ընկերությանը մատակարարել է 81.754.483 ՀՀ դրամի շինանյութ **(հատոր 1-ին, գ.թ. 10-24)**:

6. Սույն գործում առկա՝ թվով 14 հարկային հաշիվների համաձայն՝ 12.01.2011 թվականից մինչև 16.09.2011 թվականը Կազմակերպությունն Ընկերությանը մատակարարել է 38.789.791 ՀՀ դրամի շինանյութ **(հատոր 1-ին, գ.թ. 25-38)**:

7. Սույն գործով Դատարանում որպես վկա Ընկերության գլխավոր հաշվապահ Մա-



րետա Պողոսյանը ցուցմունք է տվել առ այն, որ Պայմանագրով սահմանված վճարումները 2011 թվականին կատարվել են և 16.02.2012 թվականի 15.000.000 ՀՀ դրամի վճարումը չի վերաբերում տվյալ պայմանագրին, այլ վերաբերում է հարկային հաշիվներին, սակայն չի հայտնել, թե կոնկրետ որ հարկային հաշիվներին է վերաբերել այդ վճարումը (**հատոր 4-րդ, գ.թ. 46ա**):

**4. Վճռաբեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է ամերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք պարտապանի կողմից պարտավորության մի մասի կատարումը համարվում է պարտավոր անձի կողմից ամբողջ պարտավորության ճանաչումը վկայող գործողություն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատելով ողջ պարտավորության համար, այն պարագայում, երբ պարտավորությունը կրում է շարունակական բնույթ և ենթադրում է պարբերական կատարում:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է վիճող կողմի դիմումի հիման վրա: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով, իսկ սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի ժամկետ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով, ինչպես նաև պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություններ կատարելով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընդհատումից հետո հայցային վաղեմության ժամկետի ընթացքը նորից է սկսվում: Մինչև ընդհատումն անցած ժամանակը չի հաշվվում նոր ժամկետի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում արձանագրել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*Կրենս, օրինակ, Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասաբողյանի թիվ ԵԷԴ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ*

*վճարել դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*): Միաժամանակ, օրենսդրի կողմից ամրագրվել են նաև այն դեպքերը, որոնց առկայության պայմաններում հայցային վաղեմության ժամկետն ընդհատվում է: Ընդ որում, հայցային վաղեմության ժամկետի ընդհատման հիմք կարող է հանդիսանալ սահմանված կարգով հայցի հարուցումը, ինչպես նաև պարտավոր անձի կողմից պարտքի ձանաչումը վկայող գործողություններ կատարելը (*տե՞ս, Արմեն Ավագյանն ընդդեմ Արտավազդ Խաչատրյանի թիվ ԵՔԴ/0365/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 14.10.2011 թվականի որոշումը*):

Վճարելի դատարանն արձանագրում է, որ հայցային վաղեմության ընթացքի ընդհատման էությունը կայանում է նրանում, որ օրենքով մատնանշված հիմքերի առկայության դեպքում հայցային վաղեմության արդեն իսկ անցած ժամանակահատվածն այլևս հաշվի չի առնվում և հայցային **վաղեմության ժամկետը սկսում է հոսել վերստին**: Ընդ որում, օրենսդրի կողմից նախատեսված հայցային վաղեմության ժամկետի ընդհատման հիմքերից է պարտավոր անձի կողմից պարտքի ձանաչումը վկայող գործողություններ կատարելը: Այլ կերպ ասած՝ ինչպիսի ձևով էլ պարտապանն ընդունի իր պարտքը, պարտքի ընդունման օրվանից տեղի է ունենում հայցային վաղեմության ընդհատում, և հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում է նորից: Մինչույն ժամանակ, հայցային վաղեմության ժամկետի ընդհատման հիմք կարող է հանդիսանալ պարտավոր անձի այն գործողությունը, *որը կատարվել է հայցային վաղեմության ժամկետում*:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը, ընդ որում պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 521 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մատակարարման պայմանագրով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 531 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մատակարարված ապրանքների համար գնորդը վճարում է՝ պահպանելով պայմանագրով նախատեսված հաշվարկների կարգը և ձևը: Եթե հաշվարկների կարգը և ձևը որոշված չեն կողմերի համաձայնությամբ, ապա հաշվարկները կատարվում են վճարման հանձնարարականներով:

Վերոգրյալ հոդվածների հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ մատակարարման հարաբերություններին, որպես կանոն, բնորոշ են կողմերի միջև ձևավորվող տևական կապերը, և մատակարարման պայմանագիրը հաճախ կազմվում է երկարատև ժամանակահատվածի ընթացքում պարտավորությունը մաս-մաս կատարելու համար: Այդ պատճառով մատակարարման պայմանագրով հաճախ նախատեսվում է պայմանագրի կատարման ժամկետների բազմազանություն կամ իրերը որոշակի խմբաքանակներով և ժամկետներում հանձնելու պարտականություն, որը բխում է նաև ՀՀ քա-

դաքացիական օրենսգրքի 521-րդ հոդվածից, ըստ որի՝ մատակարարը պարտավորվում է ապրանքը գնորդին հանձնել որոշակի ժամկետում կամ ժամկետներում: Նման պարագայում հայցային վաղեմության ժամկետի ընթացքում մատակարարման պայմանագրով պարտապանի կողմից պայմանագրի կատարմանն ուղղված գործողությունը դիտվում է որպես ամբողջ պայմանագրի՝ ընդհանուր պարտավորության ճանաչմանն ուղղված գործողություն, ոչ թե միայն պարտավորության կոնկրետ մասով նախատեսված պարտքի ընդունում: Այսինքն՝ այն դեպքում, երբ պարտավորության ծագման հիմքը մեկն է, պարտապանի կողմից տվյալ պարտավորության կատարմանն ուղղված գործողությունը հանգեցնում է այդ պարտավորությամբ առաջացած ամբողջ պարտքի ճանաչման, անգամ երբ պայմանագրով նախատեսված է դրա մաս-մաս կատարում և պարտապանի գործողություններից հստակ չի երևում, թե պարտավորության որ մասի կատարմանն են ուղղված վերջինիս գործողությունները:

Բացի այդ, վերոգրյալ իրավանորմերից հետևում է, որ պարտավորության կատարումը պատշաճ է, եթե այն կատարվել է պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան: Ինչ վերաբերում է մատակարարման պայմանագրին, ապա դրանով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար, իսկ գնորդը պարտավոր է իրեն հանձնված ապրանքի դիմաց վաճառողի օգտին վճարումը կատարել պայմանագրով նախատեսված հաշվարկների կարգի և ձևի պահպանմամբ: Ընդ որում, վաճառողն իրավունք ունի գնորդի կողմից վճարելու պարտականությունը կատարելուց անհիմն հրաժարվելու դեպքում պահանջել կատարելու այն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի, 48-րդ հոդվածի 1-ին կետի և 53-րդ հոդվածի 1-ին կետի համակարգային վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող յուրաքանչյուր փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ըստ այդմ, դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգեցնում է անմիջականորեն գնահատել գործում առկա բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը և այդ պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել ներկայացված հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ

բացակայության մասին դատարանի դիրքորոշումը կամ եզրակացությունը պետք է լինի կոնկրետ գործով ձեռք բերված բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման անմիջական և տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը:

Սույն գործով Դատարանը Կազմակերպության հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ «թիվ 43 պայմանագրի ժամկետի ավարտից հետո պատասխանողի կողմից իրականացվել է պարտքի մարում, այսինքն՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարում, մասնավորապես՝ պատասխանող Ընկերությունը դեռևս 16.02.2012 թվականին կատարել է վճարում, ինչը նշանակում է, որ պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություններ են կատարվել, ինչը նաև ենթադրում է, որ ընդհատվել է հայցային վաղեմության ընթացքը»: Դատարանը հիմնավորված է համարել նաև այն փաստը, որ «կնքված մատակարարման պայմանագրով և ապրանքների մատակարարման հարկային հաշիվներով ծագած իրավահարաբերությունները կողմերի միջև դիտարկվել է, որպես մեկ ամբողջական գործարք, և պատասխանողի կողմից 16.02.2012 թվականին կատարված վճարմամբ ըստ էության ընդհատվել է հայցային վաղեմության ժամկետի ընթացքը»:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Ընկերության վերաքննիչ բողոքը, ոչ իրավաչափ է համարել Դատարանի եզրահանգումները և պատճառաբանել, որ «(...) ներկայացված հաշվարկի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 15.000.000 ՀՀ դրամի վճարումով մարվել են առնվազն 27.01.2011 թվականի և 10.02.2011 թվականի ապրանքների մատակարարման գործարքներից ծագած պարտավորություններն ամբողջությամբ, ինչպես նաև 15.03.2011 թվականին դուրս գրված հարկային հաշվով նախատեսված գումարը մասնակի՝ 1.080.463 ՀՀ դրամի չափով: Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ 15.03.2011 թվականին դուրս գրված հարկային հաշվով նախատեսված վճարման ենթակա գումարը կազմել է 4.550.267 ՀՀ դրամ, որից, սակայն, կատարվել է մասնակի վճարում՝ 1.080.463 ՀՀ դրամ, ուստի տվյալ գործարքի մասով հայցային վաղեմության ժամկետի հոսքը ընդհատվել է և 16.02.2012 թվականից սկսել է հոսել սկզբից (...): Ինչ վերաբերում է 16.03.2011 թվականից սկսած դուրս գրված հարկային հաշիվներին, ապա ըստ հայցվորի կողմից ներկայացված հաշվարկի դրանց դիմաց որևէ վճարումներ չեն կատարվել, ուստիև դրանցից յուրաքանչյուրի մասով հոսող հայցային վաղեմության ժամկետը չի ընդհատվել (...): Ընդհանրացնելով՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «հայցվորի կողմից ներկայացված 19.074.470 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասով հայցային վաղեմության ժամկետն ընդհատված չէ, քանի որ այդ գումարը գոյացել է առանձին հարկային հաշիվների (գործարքների) հիմքով, իսկ հայցվորը որևէ կերպ չի ապացուցել, որ 16.02.2012 թվականին վճարված 15.000.000 ՀՀ դրամն ուղղվել է դրանց մարմանը, ավելին, (...) 19.074.470 ՀՀ դրամից որևէ մարում չի կատարվել»: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտել է, որ «Դատարանի կողմից հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունն անհիմն կերպով է ամբողջությամբ մերժվել, իրականում հայցային վաղեմության ժամկետն ընդհատվել է միայն 3.469.804 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասով, իսկ մնացած մասով Կազմակերպությունը բաց է թողել իր խախտված իրավունքների պաշտպանության համար օրենքով նախատեսված եռամյա ժամանակահատվածը, որպիսի հիմքով ներկայացված պահանջը՝ 19.074.470 ՀՀ դրամի մասով, ենթակա է եղել մերժման»:

Մինչդեռ վերագրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Կազմակերպության և Ընկերության միջև 25.01.2010 թվականին կնքված Պայմանագրի հիման վրա վերջիններիս միջև ծագել է պարտավորական իրավահարաբերություն, որի ուժով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող Կազմակերպությունը պարտավորվել է Պայմանագրով նախատեսված ժամկետներում Ընկերությանը հանձնել իր կողմից արտադրված կամ գնված 70.382.994 ՀՀ դրամի չափով ապրանք (շինանյութ),

այն է՝ սենդվիչ-պանել՝ իր կոմպլեկտ էլեմենտներով, որոնց անվանացանկը, քանակը, որակը և գինը որոշվում են Պայմանագրին կից թիվ 1 հավելվածով, իսկ Ընկերությունը պարտավորվել է ընդունել այդ ապրանքները և վճարել դրանց դիմաց: Պայմանագրի 4.5 կետի վերլուծությունից բխում է, որ Ընկերությունն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը պետք է կատարվեր ապրանքը գնորդի պահեստ հասցնելու պահից տասնօրյա ժամկետում: Ավելին, ըստ Պայմանագրի՝ ապրանքների մատակարարումը և դրա դիմաց վճարումը տեղի է ունեցել մաս-մաս:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա հաշիվ-ապրանքագրերի, հարկային հաշիվների և հայցվորի կողմից ներկայացված՝ վերջինիս կողմից Ընկերությանը մատակարարված ապրանքների և ստացված գումարների վերաբերյալ հաշվարկի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 15.02.2010 թվականից մինչև 16.09.2011 թվականը Կազմակերպությունն Ընկերությանը մատակարարել է 120.544.274 ՀՀ դրամի ապրանք՝ նույն տեսակի շինանյութ, իսկ Ընկերությունն այդ ապրանքի դիմաց վճարել է 98.000.000 ՀՀ դրամ, որպիսի փաստը կողմերը չեն վիճարկում: Հետևաբար Ընկերությունը Կազմակերպության հանդեպ ունի 22.544.274 ՀՀ դրամի չափով չկատարված պարտավորություն: Ընկերությանը վերջին մատակարարումը տեղի է ունեցել 16.09.2011 թվականին, իսկ Ընկերությանը կողմից Կազմակերպությանը վերջին վճարումը կատարվել է 16.02.2012 թվականին:

Վճռաբեկ դատարանի կատարած իրավական վերլուծություններից բխում է, որ 16.02.2012 թվականին Ընկերության կատարած 15.000.000 ՀՀ դրամի վճարումով տեղի է ունեցել հայցային վաղեմության ժամկետի ընդհատում, քանի որ Ընկերությունը կատարել է պարտքի ճանաչումը վկայող գործողություն: Մինևույն ժամանակ 16.02.2012 թվականի վճարման հանձնարարագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վճարումը կատարվել է «շինանյութի համար», և դրանում որպես ստացող նշված է Կազմակերպությունը: Այսինքն՝ 15.000.000 ՀՀ դրամը վճարվել է շինանյութի դիմաց՝ ի կատարումն Ընկերության և Կազմակերպության միջև գոյություն ունեցող պարտավորության: Հետևաբար այդ վճարմամբ՝ որպես պարտքի ճանաչումը վկայող գործողություն, Ընկերությունը ճանաչել է Կազմակերպության հանդեպ շինանյութի համար ունեցած պարտքը, թեև վճարման հանձնարարագրից հստակ չի երևում, թե որ պարտավորության կատարման համար է տեղի ունեցել վճարումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե կողմերի միջև խնդրո առարկա ապրանքների մատակարարումը և դրա դիմաց կատարված վճարումները վերջիններս դիտարկել են որպես Պայմանագրի հիման վրա ծագած մեկ միասնական պարտավորություն, թե նրանց միջև Պայմանագրից ծագող իրավահարաբերությունները դադարել են, այնուհետև կնքվել են առանձին գործարքներ, որոնցից մեկին կամ մի քանիսին է վերաբերել 16.02.2012 թվականի վճարումը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ 120.544.274 ՀՀ դրամի շինանյութը 15.02.2010 թվականից մինչև 16.09.2011 թվականը Կազմակերպությունն Ընկերությանը մատակարարել է, իսկ վերջինս դրա դիմաց վճարել է՝ ի կատարումն 25.01.2010 թվականին կնքված Պայմանագրի հիման վրա կողմերի միջև ծագած մեկ ամբողջական պարտավորության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Թեև 25.01.2010 թվականին կնքված Պայմանագրի գինը կազմել է 70.382.994 ՀՀ դրամ, այնուամենայնիվ, Կազմակերպությունը մատակարարել է 120.544.274 ՀՀ դրամի նույն տեսակի շինանյութ, որից 81.754.483 ՀՀ դրամի շինանյութի մատակարարումը հիմնավորվում է սույն գործում առկա հաշիվ-ապրանքագրերի ուսումնասիրությամբ, իսկ մնացածը՝ հարկային հաշիվների ուսումնասիրությունից: Փաստորեն տվյալ դեպքում տեղի է ունեցել Պայմանագրի փոփոխություն՝ առարկայի լրացում, ինչը հավաստվում է սույն գործում առկա հաշիվ-ապրանքագրերով, հարկային հաշիվներով և կողմերի դրսևորած վարքագծով: Մասնավորապես՝ հաշիվ-ապրանքագրերով Կազմակերպությունն Ընկերությանը նախ մատակարարել է 81.754.483 ՀՀ դրամի շինանյութ,

իսկ այնուհետև՝ շինանյութը մատակարարել է հարկային հաշիվներով՝ Ընկերությանը ընդհանուր առմամբ հանձնելով 120.544.274 ՀՀ դրամի նույն տեսակի ապրանք՝ Պայմանագրով նախատեսված 70.382.994 ՀՀ դրամի շինանյութի փոխարեն: Մինևնույն ժամանակ Պայմանագրում գրավոր փոփոխություններ կատարելու հնարավորությունը նախատեսված է դրա 10.2 կետով, որն էլ ըստ էության տեղի է ունեցել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ կետի և 454-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով առկա կողմերի համաձայնությամբ՝ հաշիվ-ապրանքագրերի և հարկային հաշիվների փոխանակման եղանակով:

Վերոգրյալ եզրահանգումը բխում է նաև «Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.08.1998 թվականի թիվ 525 որոշմամբ հաստատված՝ «Նյութական ու ոչ նյութական ակտիվների, ծառայությունների (աշխատանքների) ձեռքբերման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջների սահմանման և այդ փաստաթղթերի կազմման» կարգից, որի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ծախսերի հաշվեգրման համար նյութական և ոչ նյութական ակտիվների, ինչպես նաև ծառայությունների (աշխատանքների) ձեռքբերման ժամանակ իրականացված գործարքները հավաստող փաստաթղթեր կարող են համարվել, մասնավորապես՝ հարկային հաշիվը, հաշիվ-ապրանքագրերը: Հետևաբար սույն գործում առկա հաշիվ-ապրանքագրերը և հարկային հաշիվները ևս հավաստում են Կազմակերպության և Ընկերության միջև կնքված գործարքի և պարտավորական իրավահարաբերության առկայությունը, որը ծագել է 25.01.2010 թվականին կնքված մատակարարման Պայմանագրի հիման վրա:

Վճարել դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ 16.02.2012 թվականին կատարված 15.000.000 ՀՀ դրամի վճարումով մարվել են առնվազն 27.01.2011 թվականի և 10.02.2011 թվականի ապրանքների մատակարարման գործարքներից ծագած պարտավորություններն ամբողջությամբ, ինչպես նաև 15.03.2011 թվականին դուրս գրված հարկային հաշվով նախատեսված գումարը մասնակի՝ 1.080.463 ՀՀ դրամի չափով, հիմնավոր չէ, քանի որ 16.02.2012 թվականի վճարման հանձնարարագրից պարզ չէ, թե որ պարտավորության դիմաց է կատարվել վճարումը, իսկ դրանում որպես վճարման նպատակ նշված է՝ «շինանյութերի համար»: Բացի այդ, Դատարանում որպես վկա հարցաքննված Ընկերության գլխավոր հաշվապահ Մարետա Պողոսյանը, թեև Դատարանին հայտնել է, որ 25.01.2010 թվականի Պայմանագրով սահմանված 70.382.994 ՀՀ դրամ վճարումները կատարվել են, և 16.02.2012 թվականի 15.000.000 ՀՀ դրամի վճարումը չի վերաբերում տվյալ պայմանագրին, այլ վերաբերում է հարկային հաշիվներին, սակայն չի հայտնել, թե կոնկրետ որ հարկային հաշիվներին է վերաբերել այդ վճարումը: Ավելին, սույն գործում առկա չէ այնպիսի հարկային հաշիվ, որով առաքվել է 15.000.000 ՀՀ դրամի ապրանք, որպիսի հանգամանքը ևս վկայում է այն մասին, որ վճարումը կատարվել է ոչ թե կոնկրետ հարկային հաշվի, այլ կողմերի միջև գոյություն ունեցող ընդհանուր պարտավորության կատարման համար: Ընդ որում, սույն գործում առկա հարկային հաշիվներից զատ, միայն հաշիվ-ապրանքագրերով մատակարարված ապրանքների ընդհանուր գինը ևս գերազանցում է 25.01.2010 թվականի Պայմանագրի գինը՝ կազմելով 81.754.483 ՀՀ դրամ, որը ևս մեկ անգամ հավաստում է, որ տեղի է ունեցել Պայմանագրի առարկայի լրացում:

Վճարել դատարանի գնահատմամբ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի նաև այն եզրահանգումը, որ Դատարան ներկայացված հաշվարկի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կատարվել է ապրանքների մատակարարում և մատակարարված ապրանքների դիմաց Ընկերության կողմից կատարվել է ընդհանուր 98.000.000 ՀՀ դրամի վճարում և այդ պայմաններում կողմերի միջև կնքված պայմանագիրն ըստ էության դադարել է նաև այն հանգամանքի ուժով, որ պատասխանողն ամբողջությամբ վճարել է պայմանագրի գինը: Մասնավորապես՝ սույն գործում առկա վճարման հանձնարարագրերից միայն 25.01.2010 թվականի թիվ A-035, 29.01.2010 թվականի թիվ A-036, 16.03.2010 թվականի թիվ A-044, 06.12.2010 թվականի թիվ A-194, 09.12.2010 թվականի թիվ A-210, 30.12.2010

թվականի թիվ A-253 վճարման հանձնարարագրերում է որպես վճարման նպատակ հիշատակվում թիվ 43 Պայմանագիրը, իսկ 07.09.2010 թվականի թիվ A-114 վճարման հանձնարարագրում վճարման նպատակը նշված է «կանխավճար՝ շինանյութերի ձեռքբերման համար»: Ընդ որում, վերոգրյալ վճարման հանձնարարագրերով, որոնց նպատակի վերաբերյալ նշումները հստակեցնում են, որ վճարումն ուղղված է կողմերի միջև կնքված Պայմանագրին, կատարված վճարումների ընդհանուր գումարը կազմում է 64.000.000 ՀՀ դրամ՝ ի տարբերություն Պայմանագրի, որի գինը, ըստ դրա 4.1 կետի՝ եղել է 70.382.994 ՀՀ դրամ: Այսինքն՝ Պայմանագրի 4.1 կետում նշված գինը վճարելու համար բավարար չեն եղել այն վճարումները, որոնք կատարվել են վճարման հանձնարարագրերի հիման վրա, որոնցում որպես վճարման նպատակ է նշված եղել 25.01.2010 թվականի Պայմանագիրը: Ավելին, վերջին վճարման հանձնարարագիրը, որում որպես նպատակ նշվել է թիվ 43 Պայմանագիրը՝ կատարվել է 30.12.2010 թվականին, մինչդեռ Մարեռա Պողոսյանն իր ցուցմունքում նշել է, որ թիվ 43 Պայմանագրով պարտավորությունների կատարումն ավարտվել է 2011 թվականին: Հետևաբար հետագա վճարման հանձնարարագրերով, որոնցում որպես վճարման նպատակ նշված է «շինանյութի համար», ևս իրականացվել է Պայմանագրից ծագած ընդհանուր պարտավորության կատարում:

Բացի այդ, ժամանակագրական հերթականությամբ հաջորդ երկու վճարումները կատարվել են 28.02.2011 թվականի թիվ A-081 և 11.04.2011 թվականի թիվ NS-052 վճարման հանձնարարագրերով, որոնցով վճարվել է, համապատասխանաբար՝ 5.000.000 ՀՀ դրամ և 6.000.000 ՀՀ դրամ, իսկ դրանցում որպես վճարման նպատակ նշվել է «շինանյութերի համար»: Այսինքն՝ մինչև 11.04.2011 թվականը Ընկերությունը Կազմակերպությանը վճարել է 75.000.000 ՀՀ դրամ, թեև 25.01.2010 թվականի Պայմանագրի գինը, ըստ դրա 4.1 կետի, եղել է 70.382.994 ՀՀ դրամ: Նշված հանգամանքը ևս հավաստում է, որ կողմերը հաշիվ-ապրանքագրերով և հարկային հաշիվներով կատարել են Պայմանագրի լրացում:

Վերը շարադրվածի հիման վրա Վճարել դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ սույն գործում առկա հաշիվ-ապրանքագրերն ու հարկային հաշիվներն իրենցից ներկայացնում են առանձին, միմյանց հետ չկապված և ինքնուրույն գործարքներ, հիմնավոր չէ, քանի որ դա չի բխում սույն գործում առկա հաշիվ-ապրանքագրերի բովանդակությունից, կողմերի դրսևորած վարքագծից և վկա Մարեռա Պողոսյանի ցուցմունքից:

Վկայակոչված իրավական և փաստական վերլուծությունների հիման վրա Վճարել դատարանը գտնում է, որ Դատարանն իրավաչափորեն հանգել է այն եզրակացության, որ կնքված Պայմանագրով և ապրանքների մատակարարման հարկային հաշիվներով ծագած իրավահարաբերությունները կողմերի միջև դիտարկվել են որպես մեկ ամբողջական գործարք, և պատասխանողի կողմից 16.02.2012 թվականին կատարված վճարմամբ ըստ էության ընդհատվել է հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ամբողջ պարտավորության համար:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճարել դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը ոչ իրավաչափորեն է կիրառել հայցային վաղեմություն, ինչը չի բխում գործում առկա փաստական տվյալներից և հանգեցրել է գործի սխալ լուծմանը, քանի որ սույն գործով տեղի է ունեցել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածով սահմանված՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատում ամբողջ պարտավորության համար:

*Նշված պատճառաբանություններով հերքվում են վճարել բողոքի պարասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճարել դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է

կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով անրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

#### ***5. Վճռաբեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ ու վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ գույքային պահանջի գործերով առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների համար պետական տուրքը գանձվում է հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից, նույն պահանջի գործերով դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը գանձվում է վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով, նույն պահանջի գործերով դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով Ընկերությունը վերաքննիչ բողոքի համար վճարել է 676.328,30 ՀՀ դրամ պետական տուրք, իսկ վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի մնացած մասի վճարումը վերաքննիչ դատարանի 22.07.2016 թվականի որոշմամբ հետաձգվել է (**հատոր 4-րդ, գ.թ. 100 և 104**):

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 21.12.2016 թվա-



կանի որոշմամբ վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգվել է:

Հիմք ընդունելով վերը նշված իրավակարգավորումները, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ տույն գործով վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, արդյունքում նաև բավարարման է ենթակա հայցն ամբողջությամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

- Ընկերությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 22.544.274 ՀՀ դրամի նկատմամբ սկսած 16.02.2012 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարի 3%-ը՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և Վերաքննիչ դատարանի 22.07.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար,

- Ընկերությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 676.328,22 ՀՀ դրամ (22.544.274 ՀՀ դրամ x 3%), ինչպես նաև 22.544.274 ՀՀ դրամի նկատմամբ սկսած 16.02.2012 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարի 3%-ը՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 21.12.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, որպիսի գումարը, սակայն, չպետք է գերազանցի բազային տուրքի հազարապատիկը:

Ենելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.08.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.05.2016 թվականի վճռին:

2. «Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթլեր» ՍՊԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 22.544.274 ՀՀ դրամի նկատմամբ՝ սկսած 16.02.2012 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարի 3%-ը՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.07.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

«Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթլեր» ՍՊԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 676.328,22 ՀՀ դրամ, ինչպես նաև 22.544.274 ՀՀ դրամի նկատմամբ՝ սկսած 16.02.2012 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարի 3%-ը՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 21.12.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, բայց ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ-2/0349/02/16  
դատարանի որոշում 2017թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ-2/0349/02/16  
Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան  
Դատավորներ՝ Ա. Խառատյան  
Ս. Թորոսյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
	Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Հայկանուշ Օհանյանի ներկայացուցիչ Կորյուն  
Քիշմիրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.04.2017  
թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հայկանուշ Օհանյանի ընդդեմ Սուսաննա Եղիազար-  
յանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարունությունը**

Դիմելով դատարան՝ Հայկանուշ Օհանյանը պահանջել է Սուսաննա Եղիազարյանից  
բռնագանձել 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև նշված գումարի  
նկատմամբ մինչև պարտավորության փաստացի կատարման օրը հաշվարկել և բռնա-  
գանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դա-  
տավոր՝ Ս. Սահակյան) (այսուհետ՝ Դատարան) 11.10.2016 թվականի վճռով հայցը բավա-  
րարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
06.04.2017 թվականի որոշմամբ Սուսաննա Եղիազարյանի ներկայացուցչի վերաքննիչ  
բողոքը բավարարվել է՝ Դատարանի 11.10.2016 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել  
է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայկանուշ Օհանյանի ներկայացու-  
ցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սուսաննա Եղիազարյանի ներկայացուցիչը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ և 337-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, միայն վկայի ցուցմունքը հիմք ընդունելով, եզրահանգել է, որ փոխառության գումարը վերադարձնելու ժամկետը պարտավորագրով որոշված չլինելու պարագայում և գումարը վերադարձնելու պահանջը դեռևս 2011 թվականի ամռանը ներկայացված ու Սուսաննա Եղիազարյանի կողմից մերժված լինելու պայմաններում հայցը ենթակա է մերժման հայցվորի կողմից հայցային վաղեմության եռամյա ժամկետը բաց թողնելու հիմքով: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նշված ցուցմունքով չի հաստատվում, թե Հայկանուշ Օհանյանը որքան գումարի պահանջ է ներկայացրել, արդյոք այդ պահանջն ուղղված է եղել 24.02.2010 թվականին Սուսաննա Եղիազարյանի կողմից տրված «Պարտավորագիր» վերտառությամբ փաստաթղթով սահմանված պարտավորության կատարմանը, արդյոք Հայկանուշ Օհանյանը գումարը վերադարձնելու արտոնյալ ժամկետ նշել է, որի լրանալուց հետո միայն նրա մոտ կծագեր պարտավորության կատարում պահանջելու իրավունքը, և կսկսվեր հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը:

*2) Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ կետը, 877-րդ, 878-րդ հոդվածները, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետը, 48-րդ հոդվածի 1-ին կետը, 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ 24.02.2010 թվականի պարտավորագրում որպես փոխատու նշված է «Հայկուշ Օհանյան», իսկ որպես հայցվոր հանդես է եկել «Հայկանուշ Օհանյան»-ը, որպիսի պայմաններում նրանց նույնական լինելը պետք է ապացուցի Հայկանուշ Օհանյանը: Մինչդեռ Հայկանուշ Օհանյանի կողմից պարտքային փաստաթղթի բնօրինակը դատարան ներկայացված լինելու պարագայում գործում է վերջինիս՝ փոխատու լինելու կանխավարկածը, հետևաբար Սուսաննա Եղիազարյանն է կրում Հայկանուշ Օհանյանի՝ փոխատու չհանդիսանալու փաստի ապացուցման պարտականությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.04.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 11.10.2016 թվականի վճիռն:

**2.1 Վճռաբեկ բողոքի պայասխանի հիմնավորումները**

Հայկանուշ Օհանյանը ներկայացրել է «Հայկուշ Օհանյանի» անվամբ կազմված պարտքային փաստաթուղթ և նշվել է, որ Սուսաննա Եղիազարյանը չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհիմնավորվի, որ փոխատուն այլ անձ է:

Մինչդեռ Հայկանուշ Օհանյանը որպես հիմնավորում ներկայացրել է միայն այլ անձի անվամբ կազմված փաստաթուղթ, որը միայն հիմք ընդունելով՝ հնարավոր չէ հայցը բավարարել: Նման պարագայում Հայկանուշ Օհանյանը չի հիմնավորել իր վկայակոչած փաստը, ուստի վերջինս է կրում դրա բացասական հետևանքները:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 24.02.2010 թվականի պարտավորագրի համաձայն՝ Սուսաննա Եղիազարյանը Հայկուշ Օհանյանին պարտք է 20.000 ԱՄՆ դոլար և պարտավորվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքերը վաճառելուց անմիջապես հետո վերադարձնել նշված գումարը: Պարտավորագրի բնօրինակը 26.09.2016 թվականի դատական նիստի ժամանակ ներկայացրել է Հայկանուշ Օհանյանի ներկայացուցիչ Կորյուն Քիշմիրյանը (**հատոր 1-ին, գ.թ. 11, 120, 122**):

2) Ռուզաննա Խալաթյանը գրավոր հայտնել է, որ ճանաչում է Հայկանուշ Օհանյանին: Վերջինս իր ամուսնու հետ պարբերաբար այցելել է սրճարան՝ Սուսաննա Եղիազարյանին հանդիպելու և նրա կողմից վերցրած գումարները վերադարձնելու հարցը քննարկելու համար: Նրանց միջև քննարկվող հարցի մասին տեղյակ է, քանի որ գրեթե բոլոր հանդիպումների ընթացքում նրանք բարձրաձայն վիճաբանել են: 2011 թվականի ամռանը սրճարանում տեղի ունեցած հերթական հանդիպման ժամանակ՝ նրանց սեղանը սպասարկելիս, իր ներկայությամբ Սուսաննա Եղիազարյանը, պատճառաբանելով, որ արդեն վերցրած գումարից մի քանի անգամ ավել գումար է Հայկանուշ Օհանյանին վերադարձրել, հրաժարվել է այլևս որևէ գումար նրան վճարելուց և պահանջել է, որ այդ հարցով իրեն չանհանգստացնեն (**հատոր 1-ին, գ.թ. 100**):

3) 26.09.2016 թվականի դատական նիստի ժամանակ վկա Ռուզաննա Խալաթյանը ցուցումն է տվել առ այն, որ սրճարանում աշխատելու ընթացքում ակնատես է եղել Հայկանուշ Օհանյանի և Սուսաննա Եղիազարյանի վեճերին, որոնցից վերջինը տեղի է ունեցել 2011 թվականի օգոստոսին, երբ Սուսաննա Եղիազարյանը Հայկանուշ Օհանյանի հետ վիճելիս ասել է, որ բավական է՝ ինչքան գումար է տվել: Միաժամանակ Դատարանի այն հարցին, թե արդյոք վկան կարող է ասել, թե ինչ գումարի մասին է եղել խոսքը, Ռուզաննա Խալաթյանը պատասխանել է՝ ոչ (**հատոր 1-ին, գ.թ. 122-123, 126**):

#### **4. Վճարել դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ, 424-րդ, 877-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի էլքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանը հարկ է համարում անդրադառնալ փոխառության պայմանագրում դրա կարարման ժամկետը նշված ջիներու դեպքում հայցային վաղեմության ժամկետի ընթացքը որոշելու առանձնահատկություններին:*

##### *1. Վճարել բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է վիճող կողմի դիմումի հիման վրա: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են նույն օրենսգրքով և այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնց կատարման ժամկետը որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այն պահից, երբ պարտատիրոջ մոտ առաջանում է պարտավորության կատարում պահանջելու իրավունք, իսկ եթե պարտապահին արտոնյալ ժամկետ է տրամադրվել պահանջը կատարելու համար, հայցային վաղեմության հաշվարկն սկսվում է այդ ժամկետի ավարտից հետո:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով: Օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ժամկետը, սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը: Այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լինել իր իրավունքի խախտման մասին (*լրեն, Սերգեյ Սարգսյանն ընդդեմ Արա Սարգսյանի և մյուսների թիվ ԵԿԴ/0881/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*): Միաժամանակ օրենսդիրը սահմանել է հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման կարգն այն պարտավորությունների համար, որոնց կատարման ժամկետը որոշված չէ կամ որոշված է ցպահանջ: Նշված պարտավորությունների համար հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն պահից, երբ պարտատիրոջ մոտ առաջանում է պարտավորության կատարում պահանջելու իրավունք, իսկ եթե պարտապահին արտոնյալ ժամկետ է տրամադրվել պահանջը կատարելու համար, ապա այդ ժամկետի ավարտից հետո (*լրեն, «Բեյց» ՍՊԸ-ն ընդդեմ «Նաիրիթ գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԲԴ/0075/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ի հավաստուն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխառուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխառուին վերադարձնել ստացված փոխառության գումարը: Այն դեպքում, երբ վերադարձնելու ժամկետը պայմանագրով որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, փոխառության գումարը փոխառուն պետք է վերադարձնի այդ մասին փոխառուի պահանջը ներկայացնելու օրվանից երեսուրյա ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ փոխառության պայմանագիրը գրավոր ձևով կնքվող գործարք է, որի ուժով փոխատուն փոխառուի սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով փոխառուին վերադարձնել փոխառության գումարը կամ փոխառուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Ընդ որում, երբ փոխառության գումարը վերադարձնելու ժամկետը պայմանագրով որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, ապա փոխառուն այն պետք է վերադարձնի այդ մասին փոխառուի պահանջը ներկայացնելու օրվանից երեսուրյա ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փոխառության պայմանագրում փոխառության գումարի վերադարձման ժամկետի վերաբերյալ պայմանի շուրջ կողմերի կամահայտ-

նությունը պետք է լինի հնարավորինս հստակ ձևակերպված, այսինքն՝ լինի որոշակի և չպարունակի անորոշ ձևակերպումներ, որն իր հերթին հնարավորություն կտա հնարավորինս ճշգրիտ հաշվարկելու փոխառուի՝ գումարը վերադարձնելու պարտականության կատարման ծագման պահը: Ըստ այդմ, այն դեպքում, երբ փոխառության պայմանագրում փոխառությանը վերցված գումարը վերադարձնելու ժամկետի վերաբերյալ պայմանը ձևակերպվել է անորոշ, որը հնարավորություն չի տալիս այն մեկնաբանելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի կանոններին համապատասխան, ապա կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությանը նախատեսված կանոնակարգումը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ փոխառությանը տրված գումարը բոլոր դեպքերում ենթակա է վերադարձման փոխատուին, և փոխառության պայմանագրում փոխառության գումարը վերադարձնելու ժամկետի վերաբերյալ պայմանի վրա հասնելը չի կարող ուղղակի կախվածության մեջ դրվել փոխառուի կողմից որևէ գործողության կատարումից կամ պայմանավորվել վերջինիս անգործությամբ: Հակառակ պարագայում փոխառուի՝ փոխառությանը վերցված գումարը վերադարձնելու պարտականությունը հնարավոր է, որ երբևէ չծագի, ինչն անթույլատրելի է փոխառության իրավահարաբերությունների պայմաններում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն, եթե սույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ անդրադարձել է պայմանագրի մեկնաբանման հարցին և արձանագրել է, որ վերոնշյալ հոդվածն ամրագրում է պայմանագրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը՝ ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի մեկնաբանումը՝ համարելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար (լրես 'ս, «Կարսպ» ՍՊԸ-ն ընդդեմ «Էգնա Շին» ՍՊԸ-ի թիվ ՇԳ1/0303/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Սույն գործով Դատարանը հայցային վաղեմության ժամկետի սկիզբը որոշելիս արձանագրել է, որ Հայկանուշ Օհանյանը 24.02.2010 թվականի պարտավորագրով նախատեսված փոխառության գումարը վերադարձնելու գրավոր պահանջը ներկայացրել է 09.03.2016 թվականին Դատարան ներկայացված հայցադիմումով, ինչը Սուսաննա Եղիազարյանը ստացել է 10.05.2016 թվականին, իսկ պարտավորությունը կատարելու համար նախատեսված երեսնօրյա ժամկետը լրացել է 09.06.2016 թվականին, ուստի գտել է, որ սույն գործով հայցային վաղեմության ժամկետի ընթացքն այդպես էլ չի սկսվել:

Վերաքննիչ դատարանը, Սուսաննա Եղիազարյանի վերաքննիչ բողոքը բավարարելով և Դատարանի վճիռը բեկանելով, արդյունքում՝ հայցը մերժելով, պատճառաբանել է, որ վկա Ռուզաննա Խալաթյանի ցուցմունքով հիմնավորվել է, որ 2011 թվականի ամռանը Հայկանուշ Օհանյանը ներկայացրել է պարտավորության կատարման պահանջ, որը մերժվել է: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ 24.02.2010 թվականի պարտավորագրի բովանդակությունից բխում է, որ փոխառությանը տրամադրվել է գումար ոչ թե անորոշ ժամկետով, այլ՝ հետաձգող պայմանով, որը դեռևս չի իրականացվել:

Վերը նշված իրավական դիրքորոշման համատեքստում մեկնաբանելով 24.02.2010 թվականի պարտավորագիրը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նշված պարտավորագրով պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից ելնելով՝ հնարավոր չէ մեկնաբանել այդ պայմանը՝ կապված դրանում նշված պարտավորության կատարման հստակ ժամկետը պարզելու հետ, քանի որ Սուսաննա Եղիազարյանն այն պայմանավորել է «անշարժ գույքեր վաճառելու հետ»՝ առանց նշելու դրանք վաճառելու վերջնաժամկետը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ըստ էության փոխառության պայմանագրով (պարտավորագրով) որոշված չէ փոխառության գումարը վերադարձնելու ժամկետը: Այդ պայմանի վերաբերյալ հնարավոր չէ մեկնաբանություն կատարել նաև պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի համադրման կանոնի կիրառմամբ, քանի որ 24.02.2010 թվականի պարտավորագրով այլ պայմաններ առկա չեն: Հետևաբար ենթակա է կիրառման պայմանագրի մեկնաբանման հաջորդ կանոնը, որի ժամանակ ենթակա է պարզման կողմերի իրական ընդհանուր կամքը:

Այսպես, 24.02.2010 թվականին Սուսաննա Եղիազարյանն իր կողմից ստորագրված պարտավորագրում նշել է, որ «Հայկուշ» Օհանյանից վերցրել է 20.000 ԱՄՆ դոլար և պարտավորվել է նշված գումարը վերադարձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքերը վաճառելու դեպքում: Այսինքն՝ Սուսաննա Եղիազարյանն ընդունել է, որ փոխառությամբ գումար է վերցրել և կամք է դրսևորել այդ գումարը վերադարձնելու: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պայմանագրի կողմերի ընդհանուր իրական կամքն ուղղված է եղել միմյանց միջև փոխառության իրավահարաբերություններ առաջացնելուն, որոնք և առաջացել են:

Հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ փոխառությամբ տրված գումարը բոլոր դեպքերում ենթակա է վերադարձման, և փոխառության պայմանագրում փոխառության գումարը վերադարձնելու ժամկետի վերաբերյալ պայմանի վրա հասնելը չի կարող ուղղակի կախվածության մեջ դրվել փոխառուի կողմից որևէ գործողության կատարումից կամ պայմանավորվել վերջինիս անգործությամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Սուսաննա Եղիազարյանի՝ փոխառության գումարը վերադարձնելու պարտականությունը չի կարող կախվածության մեջ դրվել պարտավորագրում նշված անշարժ գույքերը վաճառելու պայմանից, քանի որ հնարավոր է, որ Սուսաննա Եղիազարյանին չհաջողվի այն ընդհանրապես վաճառել, կամ վաճառվի պարտավորագրում նշված գումարից պակաս գումարով, կամ վերջինս փոխի այն վաճառելու իր մտադրությունը, որոնցից յուրաքանչյուրի դեպքում նա չի ազատվում փոխառության գումարը վերադարձնելու պարտականությունը կատարելուց:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փոխառության պայմանագրով, ըստ էության, որոշված չէ փոխառության գումարը վերադարձնելու ժամկետը, որի դեպքում ստացված փոխառության գումարը Սուսաննա Եղիազարյանը պետք է վերադարձնե՝ այդ մասին իրեն պահանջ ներկայացվելու օրվանից երեսօրյա ժամկետում: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում պարտատերը պարտապանին իր պահանջը պետք է ներկայացնի այնպիսի եղանակով, որով հնարավոր է ապացուցել պարտապանին իր պարտավորությունների վերաբերյալ տեղեկացնելու փաստը: Նման պահանջ պարտատերը կարող է ներկայացնել նաև դատարան հայց հարուցելու միջոցով: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է հայցի ինստիտուտի էությունից, մասնավորապես՝ հայցը նյութաիրավական և դատավարական հասկացություն է, որի նյութաիրավական կողմն արտահայտվում է հայցվորի կողմից պատասխանողին ներկայացվող իրավական պահանջի մեջ, իսկ դատավարական կողմը դատարանին հասցեագրված պահանջն է՝ քննել և լուծել կողմերի միջև ծագած վեճը:

Սույն գործով Հայկանուշ Օհանյանը 24.02.2010 թվականի պարտավորագրից բխող փոխառության գումարը վերադարձնելու պահանջը Սուսաննա Եղիազարյանին ներկայացրել է 09.03.2016 թվականին դատարան մուտքագրված հայցադիմումով, որը Սուսաննա Եղիազարյանը ստացել է 10.05.2016 թվականին, սակայն իր այդ պարտավորությունն օրենքով նախատեսված երեսօրյա ժամկետում չի կատարել: Նման պայ-

մաններում հիմնավոր է Դատարանի այն պատճառաբանությունը, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն այդպես էլ չի սկսվել, քանի որ Հայկանուշ Օհանյանը հայցադիմումով ներկայացրել է և՛ իր խախտված իրավունքները վերականգնելու՝ դատարանին հասցեագրված պահանջ, և՛ փոխառության գումարը վերադարձնելու՝ Սուսաննա Եղիազարյանին հասցեագրված պահանջ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ վկա Ռուզաննա Խալաթյանի ցուցմունքով հիմնավորվել է, որ Հայկանուշ Օհանյանը նման պահանջ ներկայացրել է ավելի վաղ, հետևաբար հայցը ենթակա էր մերժման հայցային վաղեմության եռամյա ժամկետը բաց թողնելու հիմքով, ապա Վճռաբեկ դատարանն այն համարում է անհիմն, քանի որ վկա Ռուզաննա Խալաթյանի ցուցմունքով հիմնավորվում է միայն, որ Հայկանուշ Օհանյանի կողմից 2011 թվականի ամռանը ներկայացվել է գումարի վերադարձման պահանջ, որը մերժվել է, մինևույն ժամանակ, սակայն, վկան չի նշել, թե ինչ պարտավորություններից ծագած գումարի վերադարձման մասին է խոսքը, արդյոք նշված պահանջն ուղղված է եղել 24.02.2010 թվականի պարտավորագրում նշված 20.000 ԱՄՆ դոլարի վերադարձմանը, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն վկա Ռուզաննա Խալաթյանի ցուցմունքը բավարար չէ՝ հայցային վաղեմության ժամկետը Հայկանուշ Օհանյանի կողմից բացթողնված լինելու հանգամանքը հաստատված համարելու համար:

Ուստի, անդրադառնալով հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությանը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատասխանողը թույլատրելի և վերաբերելի ապացույցներով չի հիմնավորել հայցային վաղեմության եռամյա ժամկետի հոսքի այնպիսի մեկնարկ, որը հանգեցրած կլիներ հայցային վաղեմության ժամկետի հոսքի ավարտին:

## **2. Վճռաբեկ բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է հեղինակ պայմանաբանությանը.**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտատերը, ընդունելով կատարումը, պարտավոր է պարտապանի պահանջով նրան ստացական տալ՝ կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին: Եթե պարտապանն ի հավաստումն պարտավորության պարտքային փաստաթուղթ է տվել պարտատիրոջը, ապա պարտատերը, ընդունելով կատարումը, պետք է վերադարձնի այդ փաստաթուղթը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ այդ մասին նշի իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Պարտքային փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը, քանի դեռ այլ բան չի ապացուցվել:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է ՀՀ քա-



դաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծությանը՝ դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ օրենսդիրը պարտատիրոջ վրա պարտականություն է դրել պարտքի կատարումն ընդունելիս պարտապանի պահանջով կատարումը լրիվ կամ համապատասխան մատով ստանալու մասին նրան ստացական տալ, իսկ պարտապանի կողմից պարտատիրոջն ի հավաստումն պարտավորության պարտքային փաստաթուղթ տրված լինելու դեպքում՝ պարտապանին վերադարձնել այդ փաստաթուղթը, դրա անհնարինության դեպքում՝ այդ մասին նշել իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Ընդ որում, այլ բան ապացուցված չլինելու դեպքում նշված փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը (*տես, Ֆերդինանդ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պեպրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.06.2012 թվականի որոշումը*):

Վերոնշյալ դիրքորոշումից հետևում է, որ պարտավորության կատարման փաստն ապացուցված չլինելու պարագայում քանի դեռ պարտքային փաստաթղթի բնօրինակը գտնվում է պարտատիրոջ մոտ, գործում է պարտավորությունը կատարված չլինելու կանխավարկածը:

Այսպիսով, պայմանավորված այն հանգամանքով, թե պարտավորության որ կողմն է (պարտատերը կամ պարտապանը) դատարան ներկայացնում պարտքային փաստաթղթի բնօրինակը, այն մի դեպքում կարող է հաստատել պարտավորության առկայության, մեկ այլ դեպքում՝ պարտավորության դադարման փաստը (*տես, նաև Ղասեմ Արդոյահ Նեմադին ընդդեմ Աշոտ Հարությունյանի և մյուսների թիվ ԵԱԲԴ/0704/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

Սույն գործով Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ 24.02.2010 թվականի պարտավորագրի բնօրինակը գտնվել է Հայկանուշ Օհանյանի մոտ, և վերջինս է այն ներկայացրել դատարան՝ ի հիմնավորումն իր պահանջի, մինչդեռ Սուսաննա Եղիազարյանի կողմից չի ներկայացվել այլ ապացույց, որով կհիմնավորվեր, որ 24.02.2010 թվականի պարտավորագրով փոխատու է հանդիսանում այլ անձ:

Վերաքննիչ դատարանը Սուսաննա Եղիազարյանի վերաքննիչ բողոքը բավարարելու, Դատարանի վճիռը բեկանելու և հայցը մերժելու հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ 24.02.2010 թվականի պարտավորագրում որպես պարտատեր (փոխատու) նշված է «Հայկուշ Օհանյանը», այլ ոչ թե «Հայկանուշ Օհանյանը», և նշված պարտավորագիրը Հայկանուշ Օհանյանի մոտ գտնվելու փաստն ինքնին չի կարող հիմք ծառայել այդ փաստաթղթի պատկանելությունը կոնկրետ անձին հաստատված համարելու համար:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի վերը նշված հետևությունը ևս համարում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործում առկա ապացույցներով, այդ թվում նաև հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությամբ ներկայացված հիմնավորումներից հետևում է, որ պարտքային փաստաթուղթը պատկանում է հայցվոր Հայկանուշ Օհանյանին և տրվել է ի հավաստումն նրա նկատմամբ ունեցած պարտավորության:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Դատարանի այն պատճառաբանությունը, որ փոխատու է հանդիսանում Հայկանուշ Օհանյանը, քանի որ 24.02.2010 թվականի պարտավորագրի բնօրինակը գտնվել է Հայկանուշ Օհանյանի մոտ, և վերջինս է այն ներկայացրել դատարան՝ ի հիմնավորումն իր պահանջի, մինչդեռ Սուսաննա Եղիազարյանի կողմից չի ներկայացվել այլ ապացույց, որով կհիմնավորվեր, որ 24.02.2010 թվականի պարտավորագրով փոխատու է հանդիսանում այլ անձ:

Միաժամանակ անդրադառնալով 20.000 ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները բռնագանձելու պահանջին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին

անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ նույն կետով նախատեսված կարգը գործում է, եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Եթե օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար, ապա նույն կետով նախատեսված կարգը չի գործում միայն տվյալ ժամանակահատվածում:

ՀՀ վճարել դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի վերլուծությանը: ՀՀ վճարել դատարանը, մասնավորապես, նշել է, որ դրամական պարտավորությունը չկատարելու համար գումարին տոկոսներ վճարելու պարտավորության ծագման հիմքն ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելն է (*տես, օրինակ, Արամ Հայրապետյանն ընդդեմ Նորիկ Գզիրյանի և մյուսների թիվ 3-502/ՎԳ քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 26.09.2008 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճարել դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգավորումը դրամական պարտավորությունը խախտելու համար նախատեսված պատասխանատվության ընդհանուր կանոն է: Այսինքն՝ նշված կարգավորումը գործում է դրամական պարտավորությունների խախտման բոլոր այն դեպքերում, երբ այլ կարգավորում նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Ընդ որում, եթե այլ կարգավորում նախատեսված է կոնկրետ ժամանակահատվածի համար, ապա այդ ժամանակահատվածի ավարտից հետո նույնպես գործում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության ընդհանուր կանոնը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգավորումը՝ որպես ընդհանուր կանոն, չի գործում այն դեպքերում, երբ պատասխանատվության հստակ չափ և կարգավորում նախատեսվում է օրենքով կամ պայմանագրով՝ որպես հատուկ կանոն (*տես, Ռազմիկ Ուզունյանն ընդդեմ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/3908/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով վերը նշված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճարել դատարանն արձանագրում է, որ Հայկանուշ Օհանյանը վիճելի գումարի բռնագանձման հայցապահանջը ներկայացրել է 09.03.2016 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 7**), որը Սուսաննա Եղիազարյանը ստացել է 10.05.2016 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 17**), սակայն օրենքով սահմանված երեսնօրյա ժամկետում փոխառության գումարը Հայկանուշ Օհանյանին չի վերադարձրել, որպիսի պայմաններում 10.06.2016 թվականից սկսած վերջինիս դրամական միջոցները պահել է ապօրինի: Հետևաբար Վճարել դատարանը գտնում է, որ հիմնավոր է նաև Դատարանի այն հետևությունը, որ ենթակա է բավարարման նաև վերադարձման ենթակա գումարի մնացորդին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված տոկոսները հաշվարկելու և բռնագանձելու հայցվորի պահանջը, որը պետք է հաշվարկել սկսած 10.06.2016 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

*Վերոնշյալ պարզառարանություններով հերքվում են վճարել բողոքի պատասխանի փաստարկները:*

Այսպիսով, վճարել բողոքի հիմքերի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կի-

րառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պարզառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գույքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոնների համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման և օրինական ուժ է տրվում Դատարանի վճռին, միաժամանակ հաշվի առնելով, որ Սուսաննա Եղիազարյանը վերաքննիչ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ, իսկ պետական տուրքի մնացած մասի վճարումը Վերաքննիչ դատարանի 27.02.2017 թվականի որոշմամբ հետաձգվել է (հատոր 2-րդ, գ.թ. 20), Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սուսաննա Եղիազարյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 600 ԱՄՆ (20.000\*3%) դոլարին համարժեք ՀՀ դրամ և սկսած 10.06.2016 թվականից մինչև պարտավորության կատարման օրը 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի 3 տոկոսի չափով գումար՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և Վերաքննիչ դատարանի 27.02.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի գումար՝ հաշվանցելով Սուսաննա Եղիազարյանի կողմից նախապես վճարված 20.000 ՀՀ դրամը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սուսաննա Եղիազարյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման նաև 600 ԱՄՆ

(20.000\*3%) դոլարին համարժեք ՀՀ դրամ և սկսած 10.06.2016 թվականից մինչև պարտավորության կատարման օրը 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի 3 տոկոսի չափով գումար, բայց ոչ ավելի, քան 1.000.000 ՀՀ դրամը (նշված պետական տուրքերի հանրագումարը)՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և Վճռաբեկ դատարանի 31.08.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.04.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 11.10.2016 թվականի վճռին:

2. Սուսաննա Եղիազարյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 600 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և սկսած 10.06.2016 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի 3 տոկոսի չափով գումար՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի գումար՝ հաշվանցելով Սուսաննա Եղիազարյանի կողմից նախապես վճարված 20.000 ՀՀ դրամը:

Սուսաննա Եղիազարյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 600 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և սկսած 10.06.2016 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի 3 տոկոսի չափով գումար, բայց ոչ ավելի, քան 1.000.000 ՀՀ դրամը (նշված պետական տուրքերի հանրագումարը)՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 31.08.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2680/02/15**  
 դատարանի որոշում **2017թ.**  
 Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2680/02/15  
 Նախագահող դատավոր՝ Ա. Հունանյան  
 Դատավորներ՝ Կ. Հակոբյան  
 Լ. Գրիգորյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
 Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
 Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
 Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
 Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
 Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
 Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Մարիամ Դուլյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.07.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ Արայիկ, Արմեն և Սուրեն Մելքոնյանների (այսուհետ՝ Համապատասխանողներ)՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Համապատասխանողներից համապարտության կարգով բռնագանձել 9.165.322,9 ՀՀ դրամ՝ որպես վարկի մնացորդ, 336.716,7 ՀՀ դրամ՝ որպես տրամադրված վարկի մնացորդի նկատմամբ հաշվարկված տոկոս, սկսած 19.11.2015 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը հաշվեգրել և բռնագանձել վարկային պայմանագրի 2.3 կետով սահմանված տոկոսները, 469.499,5 ՀՀ դրամ՝ որպես տրամադրված վարկի ժամկետանց գումարի նկատմամբ հաշվարկված տոկոսագումար, սկսած 17.11.2015 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման՝ ժամկետանց վարկի գումարի փաստացի վճարման օրը, հաշվեգրել և բռնագանձել վարկային պայմանագրի 2.4 կետով սահմանված տոկոսները, 1.072.248,4 ՀՀ դրամ՝ որպես տրամադրված վարկի ժամկետանց մասի նկատմամբ հաշվարկված տույժ, սկսած 13.06.2015 թվականից մինչև ժամկետանց վարկի փաստացի վճարման օրը հաշվեգրել և բռնագանձել վարկային պայմանագրի 5.3 կետով հաշվե-

գրվող տույժը, 1.193.781,5 ՀՀ դրամ՝ որպես ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ հաշվարկված տույժ, ինչպես նաև սկսած 13.06.2015 թվականից մինչև ժամկետանց տոկոսների փաստացի վճարման օրը հաշվեգրել և բռնագանձել վարկային պայմանագրի 5.3 կետով հաշվեգրվող տույժը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Վարդագաբյան) (այսուհետ՝ Դատարան) 08.02.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Համապատասխանողներից համապարտության կարգով հոգուտ Ընկերության բռնագանձել 9.165.322,9 ՀՀ դրամ՝ որպես վարկի մնացորդ, 336.716,70 ՀՀ դրամ՝ որպես հաշվարկված տոկոսագումար, 469.499,5 ՀՀ դրամ՝ որպես հաշվարկված ժամկետանց գումարի տոկոսագումար, 1.072.248,4 ՀՀ դրամ՝ որպես ժամկետանց գումարի տույժ, 1.193.781,5 ՀՀ դրամ՝ որպես ժամկետանց տոկոսի տույժ, 19.11.2015 թվականից սկսած մինչև պարտավորության փաստացի կատարման օրը հաշվեգրել և Համապատասխանողներից համապարտության կարգով հոգուտ Ընկերության բռնագանձել վարկային պայմանագրի 2.3 կետով սահմանված տոկոսները, 17.11.2015 թվականից սկսած մինչև պարտավորության փաստացի կատարման՝ ժամկետանց վարկի գումարի փաստացի վճարման օրը հաշվեգրել և բռնագանձել վարկային պայմանագրի 2.4 կետով սահմանված տոկոսները, 13.06.2015 թվականից սկսած մինչև ժամկետանց վարկի փաստացի վճարման օրը հաշվեգրել և բռնագանձել վարկային պայմանագրի 5.3 կետով հաշվեգրվող տույժը, 13.06.2015 թվականից սկսած մինչև ժամկետանց տոկոսների փաստացի վճարման օրը հաշվեգրել և բռնագանձել վարկային պայմանագրի 5.3 կետով հաշվեգրվող տույժը, ինչպես նաև բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար. մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.07.2016 թվականի որոշմամբ Արմեն Մելքոնյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, և Դատարանի 08.02.2016 թվականի վճիռը՝ «ժամկետանց տոկոսագումարի՝ 469.499,5 ՀՀ դրամի դիմաց հաշվարկված տուժանքի գումարը՝ 1.193.781,5 ՀՀ դրամը, բռնագանձելու պահանջը բավարարելու մասով», բեկանվել է, և գործն այդ մասով ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության. վճիռը՝ մնացած մասով, թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ, 369-րդ, 372-րդ, 437-րդ, 447-րդ և 887-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 208-րդ և 220-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Արմեն Մելքոնյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը ենթակա չէր քննության, քանի որ վերջինս Դատարանում երբևիցե չի ներկայացել նշանակված դատական նիստերին, չի ներկայացրել հայցադիմումի պատասխան, ինչպես նաև որևէ հարցի, այդ թվում՝ տուժանքի գումարն ակնհայտորեն անհամաչափ լինելու կապակցությամբ գրավոր կամ բանավոր դիքքորոշում չի հայտնել, իսկ վերաքննիչ բողոքում էլ չի հիմնավորել, որ գրկված է եղել Դատարանում իր դիքքորոշումը հայտնելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները:

Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ պայմանագրով նախատեսված և Ընկերության կողմից պահանջվող գումարի չափն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, չի նշել այդ հետևությունը հիմնավորող որևէ հանգա-

մանք, ինչպես նաև չի անդրադարձել տուժանքի անհամաչափության ակնհայտության վավերապայմանին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.07.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 08.02.2016 թվականի վճռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Արայիկ Մելքումյանի միջև 30.10.2013 թվականին կնքված վարկային պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.4 կետի համաձայն՝ Պայմանագրով սահմանված ժամկետում վարկը չմարելու դեպքում ժամկետանց վարկի օգտագործման համար Արայիկ Մելքումյանը պարտավորվել է վարկի մնացորդի նկատմամբ վճարել տոկոսներ՝ տարեկան 24 տոկոս դրույքաչափով (**հատոր 1-ին, գ.թ. 16-18**).

2) Պայմանագրի 5.3 կետի համաձայն՝ վարկը կամ դրա մասը, ինչպես նաև տոկոսները սահմանված ժամկետում չմարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար Արայիկ Մելքումյանը պարտավորվել է վճարել տույժ՝ ժամկետանց գումարի 1/300 մասի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 16-18**).

3) Ընկերության (պարտատեր), Արայիկ Մելքումյանի (պարտապան) և Արմեն Մելքումյանի (երաշխավոր) միջև կնքված 31.10.2013 թվականի թիվ 19813ԲԱԳՄ երաշխավորության պայմանագրի համաձայն՝ երաշխավոր Արմեն Մելքումյանը, ի ապահովումն 31.10.2013 թվականի վարկային պայմանագրի, պարտավորվել է պատասխանատվություն կրել պարտատիրոջ առջև նույն ծավալով, ինչ պարտապանը (**հատոր 1-ին, գ.թ. 20-21**).

4) Արմեն Մելքումյանը հայցադիմումի պատասխան չի ներկայացրել, հրավիրված նախնական դատական նիստին և նշանակված դատաքննություններին չի ներկայացել, սակայն դիմում է ներկայացրել Դատարան գործի քննությունը հետաձգելու մասին՝ հնարավորություն տալով ամբողջությամբ կատարելու ստանձնած պարտավորությունները (**հատոր 1-ին, գ.թ. 55-59, 72-75, 77, 97-100, 106-109**).

5) Արմեն Մելքումյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի 08.02.2016 թվականի վճռի դեմ՝ բողոքում որպես Դատարանի կողմից թույլ տրված նյութական իրավունքի խախտում նշելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը, իսկ որպես հիմնավորում նշել է, որ Դատարանը գնահատման առարկա չի դարձրել այն հարցը, թե որքանով է պայմանագրով նախատեսված տուժանքը համաչափ պարտավորության խախտման հետևանքներին: Վերաքննիչ բողոքը որևէ փաստարկ չի պարունակում այդ հիմքի վերաբերյալ Դատարանում դիրքորոշում հայտնելու հնարավորությունից զրկված լինելու մասին (**հատոր 2-րդ, գ.թ. 8-12**):

**4.Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը կիրառելու վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ կետը խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին՝

- 1) արդյո՞ք դատարանն իրավասու է իր նախաձեռնությամբ պակասեցնել փոժանքը,
- 2) արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավասու է անդրադառնալ և քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքի այն փաստարկը, որն առաջին ասյանի դատարանում քննության առարկա չի դարձվել:

1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝ եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վկայակոչված նորմերի իրավական վերլուծությանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ տուժանքը պարտավորությունների կատարումն ապահովող երաշխիք է: Այն նպատակաուղղված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում՝ նրա համար նախատեսել գույքային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվություն, իսկ դատարանը կոչված է ապահովելու սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը: Տուժանքը պակասեցնելու դատարանի իրավունքը կոչված է կանխելու անձի կողմից իր քաղաքացիական իրավունքների իրականացման չարաշահումը (*տես*, «Ժամանակ» արդարադատական կոոպերատիվն ընդդեմ «ԱՄ-ԿԱ» ՍՊԸ-ի թիվ 3-27(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ չսահմանափակելով պայմանագրերով նախատեսվող տուժանքի գումարի չափը՝ օրենսդիրը միևնույն ժամանակ իրավունք է վերապահել դատարաններին որոշելու հիմնական պարտավորությանը համաչափ տուժանքի սահմանները՝ ապահովելով սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը: Դատարաններին վերապահված նման իրավունքն իրավական այն միջոցներից մեկն է, որոնք ուղղված են անձի կողմից իր քաղաքացիական իրավունքների իրականացման չարաշահումը կանխելուն, ինչն իր հերթին համահունչ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված՝ իրավունքի որևէ ձևով չարաշահելու արգելքին: ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է նաև, որ տուժանքի չափի նվազեցումը չի կարող նշանակել տուժանքի վճարումից ընդհանրապես ազատում կամ այնպիսի չափով նվազեցում, որը կինաստագրկի տուժանքի ինստիտուտը և չի ծառայի իր նպատակին (պարտավորությունների կատարման երաշխիք) (*տես*, *Երևանի քաղաքապետարանի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն ընդդեմ «ԱՐՄԻՆԿՈ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/0930/02/13 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականի որոշումը*):

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության կամ ողջամիտ հարաբերակցության ապահովման նպատակով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածով սահմանված դրույթը կիրառելու դատարանի լիազորությունն անմիջականորեն պայմանավորված է բացառապես առաջին ասյանի դատարանում պատասխանողի (պարտապանի) կողմից վճարման ենթակա տուժանքը պարտավորության խախտման հետևանքներին ակնհայտորեն անհամաչափ լինելու վերաբերյալ դիրքորոշում հայտնելու կամ համապատասխան միջնորդություն կամ դիմում ներկայացնելու հետ հետևյալ պատճառաբանությամբ.



ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը (այսուհետ՝ դատարան):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերին համապատասխան՝ քաղաքացիական դատավարության հիմնարար սկզբունքների կիրառմամբ: Ընդ որում՝ գործին մասնակցող անձինք իրենք են ընտրում իրենց իրավունքների պաշտպանության եղանակները, որոշում դրանց իրականացման ձևերը և միջոցները:

Կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներով պայմանավորված՝ դատարանը հանդես է գալիս միայն որպես վեճը լուծող մարմին և կաշկանդված է որոշակի դատավարական գործողություններ սեփական հայեցողությամբ իրականացնելու արգելքով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ այս կամ այն հայեցողական լիազորությունն իրականացնելու դատարանի իրավունքը բացարձակ բնույթ չի կրում, և դրա իրականացման նպատակահարմարության հարցն անհրաժեշտ է որոշել՝ ելնելով դատավարության մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքների էությունից (*տես, Գյումրու քաղաքապետարանն ընդդեմ «Չապ» ՍՊԸ-ի թիվ 0351/02/08-(ՇԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 31.10.2008 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, վերը նշված դիրքորոշումների համատեքստում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը նաև մեկնաբանելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ, գտնում է, որ եթե պատասխանողը (պարտապանը) որպես իր իրավունքների պաշտպանության եղանակ չի ընտրել տուժանքը պակասեցնելու մասին դիրքորոշմամբ հանդես գալը, ապա դատարանը՝ որպես վեճը լուծող մարմին, ելնելով դատավարության մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքների էությունից, կաշկանդված է պաշտպանության այդ եղանակով և սեփական հայեցողությամբ տուժանքը պակասեցնելու իր իրավունքը չի կարող իրականացնել: Այսինքն՝ նման պայմաններում դատարանի այդ հայեցողությունը բացարձակ չէ: Հակառակ դեպքում, եթե դատարանը, առանց պատասխանողի (պարտապանի) միջնորդության, իր հայեցողությամբ է պակասեցնում տուժանքի չափը, ապա, ըստ էության, իրացնում է դատավարության մասնակցի՝ իր հայեցողությամբ իր իրավունքների պաշտպանության եղանակներն ընտրելու, դրանց իրականացման ձևերն ու միջոցները որոշելու սուբյեկտիվ իրավունքը, որի արդյունքում կարող է առաջանալ կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների

խախտման վտանգ: Ավելին, եթե դատարանը, առանց պատասխանողի (պարտապանի) միջնորդության, իր հայեցողությամբ է պակասեցնում տուժանքի չափը, ըստ էության, գրվում է հայցվոր կողմին՝ սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության կամ ողջամիտ հարաբերակցության վերաբերյալ փաստարկներ և դրանք հիմնավորող ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից, որի արդյունքում ևս կարող է առաջանալ կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների խախտման վտանգ: Վճռաբեկ դատարանի վերը նշված եզրահանգումը բխում է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) երաշխավորված յուրաքանչյուրի՝ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իրավական դիրքորոշումներից: Մասնավորապես *Անկերլյն ընդդեմ Շվեյցարիայի գործով* Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որ յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում(*տես, Անկերլյն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի վճիռը, կեր 38*):

Ամփոփելով վերը շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածով սահմանված լիազորության կիրառման հարցին պետք է անդրադառնա միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձն է հայցադիմումի պատասխանով, դիմումով, իր առարկություններով կամ միջնորդությամբ հայցում տուժանքի չափի պակասեցում (*տես, նաև թիվ ԵԿԴ/0930/02/13 և թիվ ԵՄԳ/0492/02/14 քաղաքացիական գործերի փաստական հանգամանքներն ու նշված գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի համապարասխանաբար 18.07.2014 թվականի և 27.11.2015 թվականի որոշումների իրավական հիմնավորումները*):

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշում պարունակի նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտման մասին, որը ազդել է գործի ելքի վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը (կամ դրա մասը) ենթակա է քննության, եթե բողոք բերած անձը տվյալ հարցի վերաբերյալ բողոքում արտահայտած իր դիրքորոշումը հայտնել է առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ: Բացառություն է այն դեպքը, երբ բողոք բերած անձը գրկված է եղել այդ հարցի վերաբերյալ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերլուծելով նշված հոդվածները, նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը, գործին մասնակցող անձանց վերապահելով առաջին ատյանի դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունք, միաժամանակ սահմանել է, որ վերաքննիչ բողոքը ենթակա չէ քննության, եթե բողոք բերած անձը բողոքում արտահայտած իր դիրքորոշման մասին չի հայտնել առաջին ատյան-

նի դատարանում գործի քննության ժամանակ: Ընդ որում, բացառություն է դիտել այն դեպքը, երբ բողոք բերած անձի համար անհնարին է եղել հայտնել վերաքննիչ բողոքում բերած դիրքորոշումը (*տե՛ս, Նիկոլա Աբրահամյանն ընդդեմ Վարդուհի Մինասյանի թիվ ԱՐԱԳ/0313/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում առաջին ատյանի դատական ակտը վերանայելիս հայտնաբերվում է, որ կողմը վերաքննիչ բողոքում նշված փաստարկի վերաբերյալ առաջին ատյանի դատարանում որևէ դիրքորոշում չի հայտնել և չի փաստարկել դրա չհայտնելու անհնարինությունը, ապա վերաքննիչ դատարանն իրավասու չէ քննության առնելու նշված փաստարկի վերաբերյալ վերաքննիչ բողոքի հիմքը և հիմնավորումը:

Նման սահմանափակումը պայմանավորված է ոչ լրիվ վերաքննության ինստիտուտի առաձնահատկություններով: Մասնավորապես՝ ոչ լրիվ վերաքննության պարագայում վերաքննիչ դատարանը վերանայում է առաջին ատյանի դատական ակտը, այլ ոչ թե՛ գործն ընդհանրապես: Ըստ այդմ էլ, եթե ստորադաս դատարանը որևէ պահանջով վերջնական եզրահանգում չի կատարել, կամ կողմը վերաքննիչ բողոքում նշված փաստարկի վերաբերյալ որևէ դիրքորոշում չի հայտնել առաջին ատյանի դատարանում, ապա վերաքննության օբյեկտը բացակայում է:

**Վերջ նշված դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ**

Սույն գործի փաստերի համաձայն՝ վերաքննիչ բողոք ներկայացրած անձ Արմեն Մելքումյանը հայցադիմումի պատասխան չի ներկայացրել, հրավիրված նախնական դատական նիստին և նշանակված դատաքննություններին չի ներկայացել: Վերջինիս կողմից Դատարանին դիմում է ներկայացվել գործի քննությունը հետաձգելու մասին՝ հնարավորություն տալով ամբողջությամբ կատարելու ստանձնած պարտավորությունները:

Հետագայում Արմեն Մելքումյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի 08.02.2016 թվականի վճռի դեմ՝ բողոքում որպես Դատարանի կողմից թույլ տրված նյութական իրավունքի խախտում նշելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը, իսկ որպես հիմնավորում նշել է, որ Դատարանը գնահատման առարկա չի դարձրել այն հարցը, թե որքանով է պայմանագրով նախատեսված տուժանքը համաչափ պարտավորության խախտման հետևանքներին: Վերաքննիչ բողոքը չի պարունակում այդ հիմքի վերաբերյալ Դատարանում դիրքորոշում հայտնելու հնարավորությունից զրկված լինելու մասին որևէ փաստարկ:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը քննելով այդ հիմքով, և պատճառաբանելով, որ «եթե սույն գործով վճարման ենթակա տուժանքը ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, ապա Դատարանը պարտավոր էր գնահատման առարկա դարձնել այդ հանգամանքը՝ անկախ նրանից, թե կողմը մասնակցել է դատական նիստին, գործի քննության ընթացքում հայտնել է իր դիրքորոշումը այդ հարցի վերաբերյալ, թե ոչ», «սույն քաղաքացիական գործով կիրառման ենթակա իրավական նորմը Դատարանի կողմից չկիրառելը դիտվում է որպես նյութական իրավունքի նորմի խախտում, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ կետը չի կարող խոչընդոտ հանդիսանալ Վերաքննիչ դատարանի համար թույլ տրված դատական սխալը արձանագրելու և օրենքով սահմանված կարգով համապատասխան եզրակացության հանգելու համար», Արմեն Մելքումյանի վերաքննիչ բողոքը բավարարել է՝ Դատարանի 08.02.2016 թվականի վճիռը՝ «ժամկետանց տոկոսագումարի՝ 469.499,5 ՀՀ դրամի դիմաց հաշվարկված տուժանքի գումարը՝ 1.193.781,5 ՀՀ դրամը, բռնագանձելու պահանջը բավարարելու մասով», բեկանել է և գործն այդ մասով ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

Վերջ նշվածը հաշվի առնելով և դրանք համադրելով սույն որոշման իրավական դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արմեն Մելքումյանը տուժանքը պարտավորության խախտման հետևանքներին ակնհայտորեն անհամաչափ

լինելու վերաբերյալ որևէ դիրքորոշում չի հայտնել առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում, որպիսի պայմաններում Դատարանը որևէ պարտականություն չունի իր նախաձեռնությամբ, առանց պարտապանի կողմից այդ մասին որևէ դիրքորոշում հայտնելու կամ միջնորդություն կամ դիմում ներկայացնելու, կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունը:

Նման պայմաններում Վճարեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ «Եթե սույն գործով վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, ապա Դատարանը պարտավոր էր գնահատման առարկա դարձնել այդ հանգամանքը՝ անկախ նրանից, թե կողմը մասնակցել է դատական նիստին, գործի քննության ընթացքում հայտնել է իր դիրքորոշումը այդ հարցի վերաբերյալ, թե ոչ»:

Բացի այդ, Վճարեկ դատարանը փաստում է, որ բողոք բերած անձ Արմեն Մելքունյանը վերաքննիչ բողոքում իր արտահայտած վերը նշված դիրքորոշման մասին չի հայտնել ինչպես Դատարանում գործի քննության ժամանակ, այնպես էլ վերաքննիչ բողոքում չի նշել դրա վերաբերյալ Դատարանում դիրքորոշում հայտնելու հնարավորությունից զրկված լինելու մասին, որպիսի պայմաններում բացակայել են վերաքննիչ բողոքն այդ հիմքով քննելու համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված միաժամանակյա անհրաժեշտ երկու պայմանները:

Այսպիսով, վճարեկ բողոքի հիմքի առկայությունը Վճարեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճարեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճարեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճարեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճարեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական ուժ տալիս Վճարեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճարեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճարեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, և օրինական ուժ է տրվում Դատարանի վճռին, վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետը, գտնում է, որ Արմեն Մելքունյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 35.813 ՀՀ դրամ (1.193.781\*3%)՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.05.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար: Միաժամանակ Արմեն Մելքունյանից հոգուտ Ընկերության ենթակա է բռնագանձման 35.813 ՀՀ դրամ (1.193.781\*3%)՝ որպես Ընկերության կողմից վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.07.2016 թվականի որոշման՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 08.02.2016 թվականի վճիռը ժամկետանց տոկոսագումարի՝ 469.499,5 ՀՀ դրամի դիմաց հաշվարկված տուժանքի գումարը՝ 1.193.781,5 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջը բավարարելու և այդ մասով գործը նոր քննության ուղարկելու մասը և այդ մասով օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 08.02.2016 թվականի վճռին:

2. Արմեն Մելքունյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 35.813 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.05.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Արմեն Մելքունյանից հոգուտ «Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ի բռնագանձել 35.813 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/0591/02/14  
 դատարանի որոշում 2017թ.  
 Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/0591/02/14  
 Նախագահող դատավոր՝ Մ. Հարթենյան  
 Դատավորներ՝ Կ. Չիլինգարյան  
 և Հ. Ենոքյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

*Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ*

2017 թվականի ապրիլի 07-ին դռնբաց դատական նիստում, քննելով Էդիկ Մարկոսյանի ներկայացուցիչ Արմեն Չիլինգարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.12.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ «Յունիքանկ» ՓԲԸ-ի (ներկայումս՝ «Յունիքանկ» ԲԲԸ) (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ Էդիկ Մարկոսյանի, երրորդ անձ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### ***1. Գործի դատավարական նախապարտությունը***

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է բռնագանձել 86.319,09 ԱՄՆ դոլար՝ որպես 30.07.2012 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրով սահմանված պարտքի գումար՝ հիմք ընդունելով 30.07.2012 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագրի 2-րդ կետով նախատեսված տոկոսադրույքը և 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրի 1.4-րդ կետով նախատեսված տոկոսի հաշվարկը՝ 77.337,72 ԱՄՆ դոլար ժամկետային վարկի նկատմամբ հաշվարկվող տոկոսները՝ սկսած 10.04.2014 թվականից մինչև պարտավորության կատարման օրը, հիմք ընդունելով 30.07.2012 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագրի 4-րդ կետով նախատեսված պահանջը՝ վարկի գումարի ժամկետանց մասի նկատմամբ հաշվարկվող տույժ՝ սկսած 10.04.2014 թվականից մինչև պարտավորության կատարման օրը, հիմք ընդունելով 21.07.2008 թվականին կնքված թիվ 337

վարկային պայմանագրի 2.4.5-րդ կետով նախատեսված պահանջը՝ չվճարված տոկոսագումարների նկատմամբ հաշվարկվող 0,2%-ի չափով տույժը՝ սկսած 10.04.2014 թվականից մինչև պարտավորության կատարման օրը:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ն. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 27.05.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.12.2015 թվականի որոշմամբ Էդիկ Մարկոսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 27.05.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Էդիկ Մարկոսյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 361-րդ, 362-րդ, 375-րդ, 377-րդ, 382-րդ, 423-րդ հոդվածները, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառարանել է հետևյալ փաստարկներով.*

Ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով դատարանը հաստատել է Բանկի և Կազմակերպության միջև կնքված հաշտության համաձայնությունը, իսկ Բանկը վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում դատարան չի դիմել կատարողական թերթ ստանալու խնդրանքով: Ստորադաս դատարաններն անտեսել են, որ կատարողական թերթը հիմնական պարտապան Կազմակերպության մասով օրենքով սահմանված ժամկետում հարկադիր կատարման չներկայացվելու արդյունքում հիմնական պարտավորությունը դադարել է օրենքի ուժով՝ համաձայն ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում, մասնավորապես՝ թիվ ՀՔԴ/0024/04/08 քաղաքացիական գործով 18.09.2009 թվականի որոշմամբ արտահայտված դիրքորոշման: Հետևաբար, չնայած այն հանգամանքին, որ երաշխավորության և վարկային պայմանագրով սահմանված ժամկետը չի ավարտվել և/կամ հիմնական վարկային պարտավորությունը փաստացի չի կատարվել, սակայն հաշվի առնելով, որ ավարտվել է դատական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու մեկամյա ժամկետը, ավարտվել է նաև դրանով սահմանված պարտավորության հարկադիր կատարման իրավական հնարավորությունը, ինչը դադարեցրել է Բանկի իրավունքը՝ պարտապաններից պահանջելու կատարել պարտավորությունը:

Բանկի և Էդիկ Մարկոսյանի միջև 30.07.2012 թվականին կնքվել է թիվ 337-1/Ե երաշխավորության պայմանագիրը, որի համաձայն՝ Էդիկ Մարկոսյանը պարտավորվել է պատասխանատվություն կրել 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 հիմնական վարկային պայմանագրով Կազմակերպության ստանձնած պարտավորությունների համար, իսկ տվյալ վարկային պայմանագրում հետագայում կատարված լրացումները և փոփոխությունները հանդիսացել են հիմնական վարկային պայմանագրի անբաժանելի մասը: Ուստի հաշվի առնելով, որ պարտատերը երաշխավորի դեմ կարող է պահանջ ներկայացնել միայն այն դեպքում, երբ հիմնական պարտապանից պարտավորությունը կատարելու իրավունքն օրենքի ուժով չի կորցրել, տվյալ դեպքում էական նշանակություն ունի այն, որ Բանկը հիմնական վարկային պարտավորության մասով բաց է թողել կատարողական թերթը հարկադիր կատարման ներկայացնելու համար նախատեսված ժամկետը, որի արդյունքում Կազմակերպությունն ազատվել է պարտավորության կատարումից: Հետևաբար հիմնական պարտավորության դադարմամբ դադարել է նաև դրա ապահովման միջոց հանդիսացող երաշխավորությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.12.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

### 2.1. Վճարելի բողոքի պատասխանի հիմնավորումները

Սույն գործով պարտավորությունները ոչ թե դադարել են, այլ կողմերը կնքել են հաշտության համաձայնություն՝ սահմանելով վարկային պարտավորության կատարման նոր ժամանակացույց: Հաշտության համաձայնության կնքումից հետո Բանկը և Կազմակերպությունն արտադատական կարգով 30.07.2012 թվականին կնքել են նաև վարկային պայմանագրին կից համաձայնագիր՝ սահմանելով մարման նոր ժամանակացույց: Թիվ ԼԴ/0406/02/10 քաղաքացիական գործով դատարանը հիմք է ընդունել ոչ թե 30.07.2012 թվականին կնքված համաձայնագիրը և դրա հիման վրա կնքված հաշտության համաձայնությունը, այլ միայն հաշտության համաձայնությունը: 30.07.2012 թվականին համաձայնագիրը կնքվել է հաշտության համաձայնության կնքումից հետո, ուստի 30.07.2012 թվականի համաձայնագիրը հաշտության համաձայնության հիմք հանդիսանալ չէր կարող, այն պարտավորության ինքնուրույն հիմք է:

Երաշխավորը պատասխանատվություն է ստանձնել Կազմակերպության վարկային պարտավորությունների պատշաճ կատարման համար, ընդ որում՝ երաշխավորության պայմանագիրը կնքվել է արդեն իսկ թիվ ԼԴ/0406/02/10 քաղաքացիական գործի քննության ընթացքում, արտադատական կարգով կողմերի միջև տվյալ գործով հաշտության համաձայնության կնքումից հետո, հետևաբար կողմերն ընդունել են, որ հիմնական վարկային պայմանագրի գործողությունը շարունակվում է, և անկախ վճռից՝ երաշխավորը ստանձնում է այդ պարտավորությունների կատարման համար պատասխանատվությունը:

### 3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Բանկի և Կազմակերպության միջև 21.07.2008 թվականին կնքվել է թիվ 337 վարկային պայմանագիրը, որի համաձայն՝ Բանկը Կազմակերպությանը տրամադրել է 27.000.000 ՀՀ դրամ վարկ՝ տարեկան 19% տոկոսադրույքով, մինչև 21.07.2018 թվականն ամբողջությամբ մարման պայմանով (**հատոր 1-ին, գ.թ. 19-22**).

2. 30.07.2012 թվականին Բանկի և Կազմակերպության միջև կնքվել է «21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագիր, որի համաձայն՝ սկսած 30.07.2012 թվականից վարկի առկա մնացորդը համաձայնագրի կնքման օրը կազմում է 84.137,72 ԱՄՆ դոլար, վարկի մնացորդի նկատմամբ սահմանվում է տարեկան 14% տոկոսադրույք: Վարկի մարման վերջնաժամկետն է 23.07.2018 թվականը (**հատոր 1, գ.թ. 25-27**).

3. Թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործով 08.08.2012 թվականի վճռով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը հաստատել է կողմերի՝ Բանկի, Կազմակերպության, «Ղազումյանի Գուգար» ՍՊԸ-ի, Ալբերտ Շամիրյանի և Կարինե Օհանյանի միջև կնքված հաշտության համաձայնությունը, ըստ որի՝ Կազմակերպությունը պարտավորվել է 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրով մնացորդ 84.137,72 ԱՄՆ դոլարը և դրա նկատմամբ տարեկան 14 տոկոս տոկոսադրույքով հաշվարկվող տոկոսների մարումները կատարել մինչև 21.07.2018 թվականը՝ համաձայնությամբ հաստատված ամսական մարումներով (**հատոր 1-ին, գ.թ. 12-15**).

4. Էդիկ Մարկոսյանի՝ որպես երաշխավոր, Բանկի՝ որպես պարտատեր, և Կազմակերպության՝ որպես վարկառու, միջև 30.07.2012 թվականին կնքվել է երաշխավորության պայմանագիր (այսուհետ՝ Երաշխավորության պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ Էդիկ Մարկոսյանը պարտավորվել է իրեն սեփականության իրավունքով պատկանող ամբողջ գույքով, բոլոր բանկերում սպասարկվող հաշվարկային, ընթացիկ, արտարժույթային, ավանդային և այլ բանկային հաշիվներին առկա գումարներով պատասխանատվություն կրել Բանկի առջև՝ Բանկի և Կազմակերպության միջև 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագրով նախատեսված և Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունների (վարկի գումարի, վարկի տոկոսների և վճարումների ուշացման



համար նախատեսված տոկոսների և տույժերի գումարների վճարման) կատարման համար:

Երաշխավորության պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ 30.07.2012 թվականին կնքված համաձայնագրով վարկի մայր գումարը կազմում է 84.137,72 ԱՄՆ դոլար՝ տարեկան 14 տոկոս տոկոսադրույքով, իսկ վարկը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարներն ամբողջությամբ ենթակա են մարման մինչև 23.07.2018 թվականը:

Երաշխավորության պայմանագրի 2.3 կետի համաձայն՝ երաշխավորը պարտավորվել է կատարել դրամական միջոցները պարտատիրոջը վերադարձնելու՝ վարկառուի պարտավորությունը՝ վարկառուի կողմից այդ պարտավորությունը չկատարելու մասին պարտատիրոջ հաղորդումը ստանալուց հետո երկու բանկային օրվա ընթացքում:

Երաշխավորության պայմանագրի 2.4 կետի համաձայն՝ երաշխավորը վարկառուի պարտավորության կատարման համար պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, եթե պարտատիրոջ պահանջը ներկայացվելուց հետո վարկառուն հրաժարվել է կատարել իր պարտավորությունները (**հատոր 1-ին, գ.թ. 17-18**):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պարբերական կատարում ենթադրող պարտավորությունների հարկադիր կատարման ժամկետների և սուբսիդիար պատասխանատվություն ստանձնած երաշխավորի դեմ պահանջ ներկայացնելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք սուբսիդիար պատասխանավորություն ստանձնած երաշխավորի դեմ կարող է պահանջ ներկայացվել այն դեպքում, երբ թեև լրացել է պարտատիրոջ և հիմնական պարտապանի միջև կնքված և պարբերական կատարում ենթադրող հաշվության համաձայնությունը հաստատող օրինական ուժի մեջ մտած դատական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու՝ օրենքով սահմանված մեկամյա ժամկետը, սակայն հաշվության համաձայնությամբ սահմանվել են պարտավորության կատարման՝ վերոնշյալ ժամկետից ավելի երկար ժամկետներ:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի համաձայն՝ երաշխավորությունը դադարում է՝

- 1) դրանով ապահովված պարտավորությունը դադարելու, ինչպես նաև առանց երաշխավորի համաձայնության պարտավորությունը փոփոխելու դեպքում, որը հանգեցրել է նրա պատասխանատվության մեծացմանը կամ նրա համար այլ անբարենպաստ հետևանքների.
- 2) երաշխավորությամբ ապահովված պարտավորությամբ պարտքն այլ անձի փոխանցելով, եթե երաշխավորը պարտատիրոջը համաձայնություն չի տվել պատասխանատվություն կրել նոր պարտապանի համար.
- 3) եթե պարտատերը հրաժարվել է ընդունել պարտապանի կամ երաշխավորի առաջարկած պատշաճ կատարումը.
- 4) երաշխավորության պայմանագրում նշված ժամկետի ավարտով, որով այն տրվել է: Նման ժամկետի բացակայության դեպքում երաշխավորությունը դադարում է, եթե

պարտատերը, երաշխավորությամբ ապահովված պարտավորության կատարման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, երաշխավորի դեմ հայց չի հարուցել: Այն դեպքերում, երբ հիմնական պարտավորության կատարման ժամկետը նշված չէ և չի կարող որոշվել կամ որոշվել է պահանջի պահով, երաշխավորությունը դադարում է, եթե պարտատերը երաշխավորության պայմանագիր կնքելու օրվանից երկու տարվա ընթացքում երաշխավորի դեմ հայց չի հարուցել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում երաշխավորը և պարտապանը պարտատիրոջ առջև կրում են համապարտ պատասխանատվություն, **եթե երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով:** Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ համապարտ պարտապանները պարտական են մնում այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունը լրիվ չի կատարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև պահանջներն այն անձին ներկայացնելը, ով օրենքին, այլ իրավական ակտերին կամ պարտավորության պայմաններին համապատասխան կրում է հիմնական պարտապանի պատասխանատվությանը լրացուցիչ պատասխանատվություն (սուբսիդիար պատասխանատվություն), պարտատերը պետք է պահանջ ներկայացնի հիմնական պարտապանին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե հիմնական պարտապանը հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց, կամ պարտատերը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը, ապա այդ պահանջը կարող է ներկայացվել սուբսիդիար պատասխանատվություն կրող անձին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշումներից մեկով արձանագրել է, որ օրենսդիրն ամրապրել է երաշխավորի համապարտ պատասխանատվության կանխավարկածը, ինչը ենթադրում է, որ պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտատերն իրավունք ունի կատարման պահանջ ներկայացնելու ինչպես պարտապանին և երաշխավորին միասին, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրին ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով: ՀՀ վճռաբեկ դատարանը, նույն որոշմամբ վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածի 1-ին կետը, նշել է, որ գործում է երաշխավորի լրիվ ծավալով պատասխանատվության սկզբունքը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով (*լրեն, «Կոնսլերս բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Մարինե Նազարյանի և մյուսների թիվ ԵՇԴ/0700/02/12 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականի ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը*):

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը նաև արձանագրում է, որ այն դեպքերում, երբ օրենքով կամ պայմանագրով նախատեսվում է երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն, վերջինիս դեմ պարտատերը կարող է պահանջ ներկայացնել միայն այն պարագայում, երբ հիմնական պարտապանից պահանջի բավարարում չի ստանում: Սուբսիդիար պատասխանատվության դեպքում, դեկլարավելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 415-րդ հոդվածով, մինչև երաշխավորի դեմ պահանջ ներկայացնելը պարտատերը պետք է պահանջ ներկայացնի հիմնական պարտապանի դեմ, և միայն այն դեպքում, երբ հիմնական պարտապանը հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց, կամ պարտատերը ողջամիտ ժամկետում

չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը, ապա այդ պահանջը կարող է ներկայացվել երաշխավորին: Այսինքն՝ նման գործերով երաշխավորի դեմ պահանջի բավարարման համար անհրաժեշտ է ապացուցել նաև հիմնական պարտապանին պահանջ ներկայացրած լինելու և պահանջի բավարարում ստացված չլինելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ նշված պահանջը կարող է ներկայացվել ինչպես արտադատական, այնպես էլ դատական կարգով: Այսինքն՝ պարտատերը կարող է, օրինակ, արտադատական կարգով նախապահանջ ուղարկել հիմնական պարտապանին կամ վերջինիս դեմ հայց ներկայացնել դատարան: Երկու պարագայում էլ առկա կլինի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 415-րդ հոդվածով նախատեսված՝ հիմնական պարտապանին պահանջ ներկայացնելու պայմանը:

Անդրադառնալով երաշխավորության դադարման հիմքերին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ բացի պարտավորությունների դադարման ընդհանուր հիմքերից, երաշխավորությունը դադարում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում: Նման հիմքերից մեկն էլ **հիմնական պարտավորության դադարումն է**, որպիսի հիմքի առկայությունը պայմանավորված է երաշխավորության լրացուցիչ բնույթով, այն է՝ առանց հիմնական պարտավորության երաշխավորությունը գոյություն ունենալ չի կարող:

Նկատի ունենալով, որ վերոնշյալ կարգավորումն ունի առանձնահատկություններ պարբերական վճարում ենթադրող պարտավորությունների կատարման դեպքում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նշված պարտավորությունների **հարկադիր կատարման առանձնահատկություններին**՝ բացահայտելու համար նման պարտավորությունների դադարման պահն այն դեպքում, երբ լրացել է այն դատական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու մեկամյա ժամկետը, որով նախատեսվել են պարբերական վճարումներ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին անգամ կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացի-պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում դատարանը կարող է այն վերականգնել:

ՀՀ սահմանադրական դատարանը, 24.09.2013 թվականի թիվ ՍԴՈ-1115 որոշմամբ անդրադառնալով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի իրավակարգավորմանը, դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ վկայակոչված հոդվածի 1-ին մասում առկա «քաղաքացի-պահանջատիրոջ» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանել և կիրառել (2005 թվականի փոփոխություններով) ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը համահունչ՝ հաշվի առնելով, որ այն վերաբերում է նաև իրավաբանական անձանց, քանի որ այն իր էությամբ կիրառելի է նաև վերջիններիս նկատմամբ:

Նախկինում կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) և ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո արձանագրել է, որ թեև ՀՀ Սահմանադրությունը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ուղղակիորեն չեն ամրագրում դատական ակտերի կատարման իրավունքը՝ որպես արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ, սակայն դատական ակտերի կատարումը դիտարկվում է որպես արդար դատաքննության բաղկացուցիչ տարր. այն ունի բացառիկ նշանակություն արդարադատության արդյունավետ կենսագործման համար, քանի որ մարդու խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքը չի կարող երաշխավորված իրացվել, եթե վերջինիս խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ վերջնական դատական ակտը մնում է անկատար (*լրե'ս*, «Յունիքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Հրաշք

*Ապագա» ՍՊԸ-ի թիվ ԼԴ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանի մեկ այլ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված ժամկետը մեկ տարի է, որի հաշվարկը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, իսկ այդ պահանջի անտեսմամբ ընդունված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը համարվում է օրենքի խախտմամբ ընդունված (յրե՛ս, ՀՀ Արևմտյան մարզի Արաբս գյուղի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արևմտյան մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքի թիվ ՎԴ4/0104/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը):

Նախկին որոշումներից մեկում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ հարկադիր կատարման ենթակա վերջնական դատական ակտի կատարումը պետք է տեղի ունենա դատական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի հետո, կամ պարտապահի կողմից դատական ակտի կամավոր կատարումն առանց կատարողական վարույթի հարուցման ընդհատվում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված մեկ տարվա ժամկետից հետո:

Գործող օրենսդրության պայմաններում նման դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը ևս պետք է կատարման ներկայացվի այդ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում: Նման իրավակարգավորումը չի բխում վերջնական դատական ակտի կատարման՝ պահանջատիրոջ իրավունքի երաշխավորված իրացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման պետության պարտականության էությունից: Դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետների հարցում առկա իրավական խնդիրը լուծելու օրենսդրությամբ նախատեսված միակ միջոցը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու կառուցակարգն է, որը սահմանված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով և կատարվում է հետևյալ ընթացակարգով.

1) կատարողական թերթով պահանջատեր հանդիսացող անձը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմում է ներկայացնում կատարողական թերթ տված դատարան,

2) կատարողական թերթ տված դատարանը քննում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը՝ այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում,

3) այդ դիմումի քննության արդյունքներով կատարողական թերթ տված դատարանը կայացնում է որոշում՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ դիմումը մերժելու մասին:

Վերոգրյալից հետևում է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը համապատասխան դատարանի կողմից վերականգնվում է միայն այն դեպքում, երբ այդ ժամկետը բաց թողնելու պատճառը նույն դատարանի կողմից ճանաչվում է հարգելի: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը կատարողական թերթով պահանջատեր հանդիսացող անձին կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու հնարավորություն է ընձեռել ոչ թե բոլոր, այլ միայն այն դեպքերում, երբ պահանջատերը նշված ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով պահանջատերը բաց է թողել այդ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու՝ օրենքով նախատեսված մեկամյա ժամկետը, ապա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամ-

կետը վերականգնելու մասին դիմումի առկայության պայմաններում կատարողական թերթ տված դատարանը պարտավոր է հաշվի առնել կատարողական թերթը կատարման չներկայացնելու հիմքում ընկած բոլոր փաստական հանգամանքները և վերականգնել բաց թողած ժամկետը, եթե դա պայմանավորված է եղել դատական ակտով որոշված պարտավորությունը դատական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից հետո մեկ տարին գերազանցող ժամկետով կամ պարտապահի կողմից դատական ակտի կամավոր կատարման ընդհատմամբ, երբ պարտատիրոջ կարծիքով սպառվել է դատական ակտի կամավոր կատարման հնարավորությունը: Նշված մոտեցման ցուցաբերման դեպքում միայն հնարավոր կլինի ապահովել պարտատիրոջ և պարտապահի շահերի հավասարակշռված պաշտպանությունը (*յրե'ս, «Յունիքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի թիվ ԼԴ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ որոշ դեպքերում կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը կատարողական թերթ տված դատարանի կողմից պետք է բավարարվի իրավունքի ուժով (*ex jure*)՝ հաշվի առնելով այդ ժամկետը բաց թողնելու պատճառները: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ նշված կանոնը գործում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) պահանջատերը բաց է թողել այդ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու՝ օրենքով նախատեսված մեկամյա ժամկետը,
- 2) կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու պահին չի լրացել կատարման ենթակա դատական ակտով սահմանված պարտավորության (ների) կատարման համար սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո մեկ տարվա ժամկետը,
- 3) առկա է այդ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմում՝ ուղղված այդ կատարողական թերթը տված դատարանին:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վերը նշված պայմանների առկայության դեպքում դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (*ex jure*) վերականգնելու միջոցով հնարավոր կլինի ապահովել այդ դատական ակտով պահանջատեր հանդիսացող անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված դատական պաշտպանության, արդար դատաքննության և սեփականության իրավունքների երաշխավորված իրացումը: Նման պայմաններում չի բացառվում նաև պարտապահի կողմից դատական ակտի կամավոր կատարման հնարավորությունը (*յրե'ս, ըստ «Ինտելոքսնկ» ՓԲԸ-ի դիմումի թիվ ԵԱԲԴ/0515/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և Կազմակերպության միջև 21.07.2008 թվականին կնքվել է թիվ 337 վարկային պայմանագիրը, որի համաձայն՝ Բանկը Կազմակերպությանը տրամադրել է 27.000.000 ՀՀ դրամ վարկ՝ տարեկան 19% տոկոսադրույքով, մինչև 21.07.2018 թվականն ամբողջությամբ մարելու պայմանով: 30.07.2012 թվականին Բանկի և Կազմակերպության միջև կնքվել է «21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագիր, որի համաձայն՝ սկսած 30.07.2012 թվականից վարկի առկա մնացորդը համաձայնագրի կնքման օրը կազմում է 84.137,72 ԱՄՆ դոլար, վարկի մնացորդի նկատմամբ սահմանվում է տարեկան 14% տոկոսադրույք: Վարկի մարման վերջնաժամկետն է 23.07.2018 թվականը:

Էդիկ Մարկոսյանի՝ որպես երաշխավոր, Բանկի՝ որպես պարտատեր, և Կազմակերպության՝ որպես վարկառու, միջև 30.07.2012 թվականին կնքվել է երաշխավորության պայմանագիր (այսուհետ՝ Երաշխավորության պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ Էդիկ Մարկոսյանը պարտավորվել է իրեն սեփականության իրավունքով պատկանող ամբողջ գույքով, բոլոր բանկերում սպասարկվող հաշվարկային, ընթացիկ, արտարժու-

թային, ավանդային և այլ բանկային հաշիվներին առկա գումարներով պատասխանատվություն կրել Բանկի առջև՝ Բանկի և Կազմակերպության միջև 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագրով նախատեսված և Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունների (վարկի գումարի, վարկի տոկոսների և վճարումների ուշացման համար նախատեսված տոկոսների և տույժերի գումարների վճարման) կատարման համար: Երաշխավորության պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ 30.07.2012 թվականին կնքված համաձայնագրով վարկի մայր գումարը կազմում է 84.137,72 ԱՄՆ դոլար՝ տարեկան 14 տոկոս տոկոսադրույքով, իսկ վարկը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարներն ամբողջությամբ ենթակա են մարման մինչև 23.07.2018 թվականը: Երաշխավորության պայմանագրի 2.3 կետի համաձայն՝ երաշխավորը պարտավորվում է կատարել դրամական միջոցները պարտատիրոջը վերադարձնելու՝ վարկառուի պարտավորությունը՝ վարկառուի կողմից այդ պարտավորությունը չկատարելու մասին պարտատիրոջ հաղորդումը ստանալուց հետո երկու բանկային օրվա ընթացքում: Երաշխավորության պայմանագրի 2.4 կետի համաձայն՝ երաշխավորը վարկառուի պարտավորության կատարման համար պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, եթե պարտատիրոջ պահանջը ներկայացվելուց հետո վարկառուն հրաժարվել է կատարել իր պարտավորությունները:

Թիվ ԼԳ/0604/02/10 քաղաքացիական գործով 08.08.2012 թվականի վճռով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը հաստատել է կողմերի՝ Բանկի, Կազմակերպության, «Ղազումյանի Գուգար» ՍՊԸ-ի, Ալբերտ Շամիրյանի և Կարինե Օհանյանի միջև կնքված հաշտության համաձայնությունը, ըստ որի՝ Կազմակերպությունը պարտավորվել է 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրով մնացորդ 84.137,72 ԱՄՆ դոլարը և դրա նկատմամբ տարեկան 14 տոկոս տոկոսադրույքով հաշվարկվող տոկոսների մարումները կատարել մինչև 21.07.2018 թվականը՝ համաձայնությամբ հաստատված ամսական մարումներով:

Սույն գործով Դատարանը, բավարարելով Բանկի հայցը, գտել է, որ պատասխանող Էդիկ Մարկոսյանը՝ որպես երաշխավոր, համապարտ պատասխանատվություն է կրում պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար: Դատարանն անհիմն է համարել Էդիկ Մարկոսյանի այն պնդումը, որ Բանկը, դատական ակտի հիման վրա կատարողական թերթ չստանալու արդյունքում գրկվել է այդ իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից, իսկ պարտապաններն էլ ազատվել են հիմնական և լրացուցիչ պարտավորությունից: Արդյունքում Դատարանը գտել է, որ սույն գործով երաշխավորության դադարման որևէ հիմք առկա չէ:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, անհիմն է համարել թիվ ԼԳ/0604/02/10 քաղաքացիական գործով կայացված վճռի հիման վրա կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հայցվորի կողմից բաց թողնելու արդյունքում երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը դադարած լինելու վերաբերյալ վերաքննիչ բողոքի փաստարկը՝ պատճառաբանելով, որ կատարողական թերթն օրենքով սահմանված որոշակի ժամկետում կատարման չներկայացնելը՝ որպես վճռով սահմանված պարտավորությունների դադարման հիմք, օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված չէ: Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ Էդիկ Մարկոսյանը կրում է սուբսիդիար պատասխանատվություն, գտել է, որ սույն գործով վերջինիս դեմ ներկայացված պահանջն իրավաչափ է, քանի որ հիմնավորված է հիմնական պարտապան՝ վարկառու Կազմակերպության կողմից պարտատիրոջ պահանջը բավարարելուց հրաժարվելու՝ մասնավորապես՝ թիվ ԼԳ/0604/02/10 քաղաքացիական գործով վճիռը կատարված չլինելու փաստը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Երաշխավորության պայմանագրի 2.4 կետի համաձայն՝ Էդիկ Մարկոսյանը Կազմակերպության պարտավորության կատարման համար պատասխանատվություն է ստանձնել միայն այն դեպքում, եթե Բանկի պահանջը ներկայացվելուց հետո Կազմակերպությունը չկատարի իր պարտավորությունները: Հետևաբար Էդիկ Մարկոսյանը հանդիսանում է սուբսիդիար պատասխանատվություն ստանձնած երաշխավոր, ուստի վերջինիս դեմ կարող է պահանջ ներկայացվել միայն այն դեպքում, երբ Բանկը պահանջ ներկայացնի հիմնական պարտապան Կազմակերպությանը, իսկ վերջինս չկատարի Բանկի պահանջը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Բանկի և Կազմակերպության միջև 30.07.2012 թվականին կնքված «21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագրով կողմերը որոշել են, որ վարկի առկա մնացորդ կազմող 84.137,72 ԱՄՆ դոլարը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարներն ամբողջությամբ ենթակա են մարման համաձայնագրով սահմանված գրաֆիկով՝ յուրաքանչյուր ամսվա 23-ին, մինչև 23.07.2018 թվականը: Նշված համաձայնագրով որոշակի փոփոխության է ենթարկվել կողմերի միջև 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագիրը, մասնավորապես՝ սահմանվել է վարկի առկա մնացորդը՝ 84.137,72 ԱՄՆ դոլար, ինչպես նաև դրա մարման ժամկետները և կարգը: Այդ համաձայնագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից և կազմել է 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրի անբաժանելի մասը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կողմերի միջև 30.07.2012 թվականին կնքված համաձայնագիրը, հանդիսանալով 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրի անբաժանելի մասը, չի կարող դիտարկվել որպես կողմերի միջև առկա պարտավորության ինքնուրույն հիմք:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Բանկի կողմից հիմնական պարտապան Կազմակերպությանը պահանջը ներկայացվել է թիվ ԼԴ/0604/02/10 քաղաքացիական գործի շրջանակներում: Նշված գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 08.08.2012 թվականի վճռով հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը, որով Կազմակերպությունը պարտավորվել է 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագրով վարկի առկա մնացորդ կազմող 84.137,72 ԱՄՆ դոլարի և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների մարում՝ համաձայն ներկայացված գրաֆիկի՝ յուրաքանչյուր ամսվա 21-ին, **մինչև 21.07.2018 թվականը:** Այսինքն՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վերը նշված վճռով հաստատված հաշտության համաձայնությունը կազմելիս կողմերը 21.07.2008 թվականին կնքված թիվ 337 վարկային պայմանագիրը հիմք են ընդունել դրանում 30.07.2012 թվականին կնքված համաձայնագրով կատարված փոփոխություններով հանդերձ, մասնավորապես՝ նշված հաշտության համաձայնությամբ ևս վարկի առկա մնացորդը կազմում է 84.137,72 ԱՄՆ դոլար, իսկ մարման վերջնաժամկետ է սահմանվել **2018 թվականի հուլիս ամիսը:**

Հետևաբար Բանկի և Կազմակերպության միջև հաստատվել է պարբերական վճարումներ ենթադրող պարտավորություն, իսկ պարտավորությունների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2018 թվականի հուլիս ամիսը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Էդիկ Մարկոսյանի դեմ ներկայացված պահանջի բավարարումը կախված է այն հանգամանքից, թե Բանկի կողմից դատական կարգով հիմնական պարտապան Կազմակերպության դեմ պահանջն ինչ լուծում է ստացել: Այլ կերպ ասած՝ քանի դեռ սույն գործով պարզված չէ հիմնական պարտապանից՝ Կազմակերպությունից Բանկի կողմից պահանջի բավարարում ստացած լինելու հանգամանքը, Էդիկ Մարկոսյանի դեմ պահանջը բավարարվել չի կարող, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ կատարողական թերթն օրենքով սահմանված ժամկետում կատարման չներկայացնելը չի դադարեցնում պարտավորությունը, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումը հակասում է «Արդյունքանկ» ԲԲԸ-ն ընդդեմ «Արոր-Բագրասյ» արտադրական կոոպերատիվի թիվ ՀՔԴ4/0024/04/08 քաղաքա-

*ցիական գործով 18.09.2009 թվականի որոշմամբ* ՀՀ վճարել դատարանի արտահայտած դիրքորոշմանը, որում ՀՀ վճարել դատարանը գտել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված մեկ տարվա ընթացքում կատարման չներկայացնելով՝ պարտատերը գրկվում է այդ իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից, իսկ պարտապանն ազատվում է նույն վճռով սահմանված պարտավորությունից: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ վերոնշյալ որոշման հիմքում ընկած է միանվագ կատարում ենթադրող պարտավորություն, Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով էական նշանակություն ունի այն, որ հիմնական պարտապանի ստանձնած պարտավորությունը ենթադրում է **պարբերական կատարում**, իսկ պարտավորության կատարման վերջնաժամկետը դեռևս չի լրացել: Ուստի Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է նոր քննության անհրաժեշտություն՝ պարզելու համար, թե արդյոք վերացած չէ Կազմակերպության դեմ Բանկի պահանջի բավարարման հնարավորությունը, և արդյոք Կազմակերպությունը բավարարել է Բանկի պահանջը:

*Նշված պարզառարանություններով հերքվում են վճարել բողոքի պապասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, Վճարել դատարանը վճարել բողոքի հիմքի առկայությունը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

##### **5. Վճարել դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճարել բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճարել բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճարել դատարանը, նկատի ունենալով այն, որ վճարել բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ դատական ծախսերի, այդ թվում՝ վճարել բողոքի համար սահմանված և ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.06.2016 թվականի որոշմամբ հետաձգված, ինչպես նաև վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.08.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը



**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.12.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.06.2016 թվականի որոշմամբ հետաձգված, ինչպես նաև վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.08.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/5067/02/15**  
դատարանի որոշում **2017թ.**  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/5067/02/15  
Նախագահող դատավոր՝ Ա. Սմբատյան  
Դատավորներ՝ Կ. Հակոբյան  
Ա. Հունանյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՏՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝  
Բանկ) ներկայացուցիչ Կանո Պետրոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացի-  
ական դատարանի 17.11.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ստեփան Մեսրոպյանի  
ընդդեմ Բանկի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

**ՊԱՐՁԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ստեփան Մեսրոպյանը պահանջել է Բանկից բռնագանձել  
817.190 ՀՀ դրամ, այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ  
հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած 19.06.2015 թվա-  
կանից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը, ինչպես նաև բռնագան-  
ձել 52.000 ՀՀ դրամ՝ որպես իրավունքի գրանցման և դադարեցման համար կատար-  
ված ծախս, ինչպես նաև 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության  
գումար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավա-  
տության դատարանի (դատավոր՝ Հ. Զարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 06.07.2016  
թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան)

17.11.2016 թվականի որոշմամբ Ստեփան Մեսրոպյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 06.07.2016 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ստեփան Մեսրոպյանի ներկայացուցիչը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գումար վերադարձնելու պարտավորությունը Բանկի մոտ ծագել է վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ գործարքների անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը միայն պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ստացածը, իսկ տվյալ դեպքում Բանկի կողմից վերադարձվել է ոչ միայն պայմանագրում նշված գումարը, այլ նաև որոշակի չափով ավել գումար է տրվել՝ որպես հնարավոր վնասների փոխհատուցում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը պայմանագրի կողմերի միջև կիրառելի չէ, քանի որ Բանկն այդ գումարը Ստեփան Մեսրոպյանից ստացել է օրինական կնքված գործարքով, իսկ այն անվավեր ճանաչվելուց հետո գումարը վերադարձվել է:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով հայցապահանջում ներառված պետական գրանցման ծախսերին, հաշվի չի առել, որ 52.000 ՀՀ դրամն իրավունքի գրանցման համար պետական տուրքն է, և գործարքի անվավերության դեպքում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն ևս պետք է կրի դրա հետևանքները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.11.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 06.07.2016 թվականի վճիռն:

**2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանը թույլ չի տվել վճռաբեկ բողոքում նշված խախտումները, իսկ կայացված դատական ակտը համապատասխանում է օրենքի պահանջներին: Նկատի ունենալով, որ կողմերի միջև կնքված պայմանագիրն անվավեր է ճանաչվել, Բանկն Ստեփան Մեսրոպյանի կողմից առաջին իսկ վճարումը կատարելու պահից սկսած ապօրինի է պահել վերջինիս դրամական միջոցները, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները ենթակա են հաշվարկման 13.06.2011 թվականից սկսած:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 22.05.2008 թվականին կնքված թիվ Ա61 վարկային պայմանագրով վարկառու Նառա Հովհաննիսյանի՝ Բանկի հանդեպ ունեցած վարկային պարտավորությունը չկատարելու համար 14.04.2010 թվականին Բանկի սեփականության իրավունքն է գրանցվել այդ պարտավորության կատարումն ապահովելու նպատակով գրավա-

դրված՝ Երևանի Քանաքեռ 1-ին փողոցի թիվ 20 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ (**հատոր 1-ին, գ.թ. 36-60**).

2) Բանկի և Ստեփան Մեսրոպյանի միջև 07.07.2011 թվականին կնքվել է անշարժ գույքի տարաժամկետ վճարումով առուվաճառքի պայմանագիր, որի համաձայն՝ Բանկը 8.000.000 ՀՀ դրամի դիմաց Ստեփան Մեսրոպյանի սեփականությանն է հանձնել վերը նշված անշարժ գույքը: Նույն պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ նշված գումարից 2.600.000 ՀՀ դրամը վճարվել է պայմանագրի նոտարական վավերացման օրը, իսկ գումարի մնացած մասը պետք է վճարվեր 18 ամիսների ընթացքում՝ յուրաքանչյուր ամիս 300.000 ՀՀ դրամից ոչ պակաս գումար վճարելու միջոցով: Ի կատարումն պայմանագրում նշված այդ պայմանի՝ Ստեփան Մեսրոպյանը մինչև 29.01.2013 թվականը Բանկին վճարել է ընդհանուր 8.000.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 10-30, 35**).

3) Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.11.2014 թվականի թիվ ԵԱԲԴ/2183/02/11 վճռով անվավեր է ճանաչվել 14.04.2010 թվականին վերը նշված գույքի նկատմամբ Բանկի սեփականության իրավունքի պետական գրանցումը, և որպես անվավերության հետևանք՝ անվավեր են ճանաչվել վերը նշված անշարժ գույքի տարաժամկետ վճարումով առուվաճառքի պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված Ստեփան Մեսրոպյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը (**հատոր 1-ին, գ.թ. 36-60**).

4) 19.06.2015 թվականին Բանկն Ստեփան Մեսրոպյանին վերադարձրել է նրանից ստացած 8.000.000 ՀՀ դրամը, ինչպես նաև վճարել է ևս 2.290.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 4, 84-87**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների հաշվարկման հարցի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանք կիրառելու արդյունքում վերադարձման ենթակա գումարը չվերադարձնելու դեպքում դրամական պարտավորությունը չկատարելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պարտահանարկության ընդհանուր կանոնին՝ միաժամանակ վերահասարակելով նախկինում արտահայտած դիրքորոշումները:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույթների:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ նույն կետով նախատեսված կարգը գործում է, եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Եթե օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված է որո-

շակի ժամանակահատվածի համար, ապա նույն կետով նախատեսված կարգը չի գործում միայն տվյալ ժամանակահատվածում:

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի վերլուծությանը: ՀՀ վճարելի դատարանը, մասնավորապես, նշել է, որ դրամական պարտավորությունը չկատարելու համար գումարին տոկոսներ վճարելու պարտավորության ծագման հիմքն ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելն է (*տե՛ս, օրինակ, Արամ Հայրապետյանի ընդդեմ Նորիկ Գզիրյանի և մյուսների թիվ 3-502/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 26.09.2008 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը վրա է հասնում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում, և

- եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով կամ օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար:

Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տոկոսները ենթակա են հաշվեգրման և բռնագանձման, եթե առկա է դրամային պարտավորություն, որի կատարումը խախտվել է, կամ այն չի կատարվել (*տե՛ս, «Գագարին» սերմնարածական սպառողական կոոպերատիվի ընդդեմ «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պարտասխանապլորությանը ընկերության թիվ ԵԿԴ/0735/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի հաշվառմամբ վճարելի դատարանը հարկ է համարում անդրադառնալ առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու արդյունքում նման դատական ակտի հիման վրա վերադարձման ենթակա գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կիրառման հնարավորությանը:

Այսպես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և այդ սկզբունքի շրջանակներում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշին: Մասնավորապես, ՀՀ վճարելի դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված արդար դատաքննության իրավունքը կդառնա վերացական, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ դատարանի՝ ի վնաս կողմերից մեկի կայացրած վերջնական, պարտադիր դատական ակտը մնա անկատար: Ավելին, եթե Կոնվենցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողնի դատական ակտերի ի կատար ածումը, ապա դա հավանաբար

կհանգեցնի այնպիսի իրողության, որն անհամատեղելի կլինի իրավունքի գերակայության սկզբունքների հետ, որը Պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս (յրեն, *Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը*, կետ 34, *Հորնսբին ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը*, կետ 40, «Գլոր» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության և մյուսների թիվ ԳԴ/0171/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերը նշված պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու դեպքերում ապրանքի համար վճարված գումարը հետ ստանալը գնորդի իրավունքն է: Ընդ որում, օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից ձեռք է բերում պարտադիրության և կատարելիության հատկանիշ, և եթե վաճառողն այն չի կատարում, այսինքն՝ տվյալ դեպքում գումարը չի վերադարձնում գնորդին, ապա վերջինս իրավունք ունի դատական կարգով պահանջելու բռնագանձել չվերադարձված գումարը: Այս դեպքում, երբ արդեն իսկ առկա է նման վճիռ, այդ գումարը դառնում է գնորդի օգտին բռնագանձման ենթակա գումար, որը չվերադարձնելու դեպքում վաճառողն արդեն խախտում է վճռի պարտադիրության և կատարելիության հատկանիշները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ դատական ակտով բռնագանձման ենթակա և չվերադարձված գումարի նկատմամբ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կետանցի պահից մինչև պարտավորության փաստացի կատարումը ենթակա են վճարման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանը տվյալ դեպքում կարևորում է դատական ակտի առկայությունը՝ նկատի ունենալով, որ քանի դեռ դատական ակտով վիճահարույց գործարքն անվավեր չի ճանաչվել, այն օրինական գործարք է, ուստի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կիրառման պայմանը՝ առանց օրինական հիմքի դրամական միջոցները պահելը (վերադարձնելուց խուսափելը, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելը, այլ անձի հաշվին անհիմն ստանալը կամ խնայելը), առկա չէ: Այլ կերպ ասած՝ քանի դեռ գործարքը վավեր է, գնորդի կողմից վճարված դրամական միջոցները վաճառողի մոտ գտնվում են օրինական դրամական հիմքով: Հետևաբար որպես գործարքի անվավերության հետևանք վճարման ենթակա դրամական միջոցների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները կարող են հաշվարկվել միայն գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո առաջացող կետանցի պահից սկսած:

Ինչ վերաբերում է տվյալ դեպքում կետանցի պահը որոշելուն, ապա Վճռաբեկ դատարանը տվյալ հարցն անհրաժեշտ է համարում քննարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին կետի կարգավորման շրջանակներում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին կետի իրավական վերլուծությանը, նշել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը (յրեն, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՄՊԸ-ի թիվ ԵԲԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

Տվյալ դեպքում գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտի առկայության պայմաններում անհրաժեշտ է, որ հաստատվի պայմանագրի հիման վրա գնորդից ստացված գումարը դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վաճառողի կողմից գնորդին անհապաղ չվերադարձնելու փաստը, քանի որ մի-

այն այդ դեպքում կքննարկվի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելու հանգամանքը: Նկատի ունենալով, որ տվյալ պարագայում քննարկման է ենթակա դրամական պարտավորությունը չկատարելու համար պատասխանատվությունը, իսկ պատասխանատվության պարտադիր պայման է պարտավորությունը խախտած անձի մեղքը, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում պարզել մեղքի ծագման պահը, այսինքն՝ որ պահից անձը մեղավոր կհամարվի նշված պարտավորությունը չկատարելու մեջ:

Հաշվի առնելով, որ մեղքն անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարվող իրավախախտման և դրա հետևանքների նկատմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ իրավախախտման համար մեղքը կարող է առկա լինել միայն այն պահից սկսած, երբ անձին հայտնի է դարձել իր ունեցած դրամական պարտավորության մասին: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելու արդյունքում որպես պատասխանատվության միջոց տոկոսներ հաշվարկելիս դատարանները պետք է հաշվի առնեն, թե որ պահից է տեղի ունեցել իրավախախտումը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ պահը համընկնում է վերջնական դատական ակտը պարտապանին հասու լինելու պահի հետ, այսինքն՝ թե որ պահից է պարտապանն իմացել կամ իրական հնարավորություն ունեցել իմանալու, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ունի դրամական պարտավորություն:

Ընդ որում, վերը շարադրված իրավական դիրքորոշումը ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է նաև *Ռազմիկ Ուզունյանն ընդդեմ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի* թիվ ԵԿԴ/3908/02/14 քաղաքացիական գործով 07.04.2017 թվականի որոշման շրջանակներում օրինական ուժի մեջ մտած և չկատարված դատական ակտով բռնագանձման ենթակա աշխատավարձը չվճարելու դեպքում աշխատավարձի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների հաշվարկման հնարավորության հարցի կապակցությամբ: Հաշվի առնելով, որ ինչպես սույն գործով, այնպես էլ թիվ ԵԿԴ/3908/02/14 քաղաքացիական գործով փաստական հանգամանքները նմանատիպ են, մասնավորապես՝ վերաբերում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների հաշվեգրմանը՝ անկախ բռնագանձման ենթակա գումարի գոյացման հիմքից, Վճռաբեկ դատարանը որևէ հիմք չի արձանագրում թիվ ԵԿԴ/3908/02/14 քաղաքացիական գործով 07.04.2017 թվականի որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումից շեղվելու համար և վերահաստատելով այն՝ հավասարապես կիրառելի է համարում նաև սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի հանդեպ ունեցած վարկային պարտավորությունը չկատարելու համար 14.04.2010 թվականին գրանցվել է Բանկի սեփականության իրավունքն այդ պարտավորության կատարումն ապահովելու նպատակով գրավադրված՝ Երևանի Քանաքեռ 1-ին փողոցի թիվ 20 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ: Այնուհետև Բանկի և Ստեփան Մեսրոպյանի միջև 07.07.2011 թվականին կնքվել է անշարժ գույքի տարածամկետ վճարումով առուվաճառքի պայմանագիր, որի համաձայն՝ Բանկը 8.000.000 ՀՀ դրամի դիմաց Ստեփան Մեսրոպյանի սեփականությանն է հանձնել վերը նշված անշարժ գույքը: Նույն պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ նշված գումարից 2.600.000 ՀՀ դրամը վճարվել է պայմանագրի նոտարական վավերացման օրը, իսկ գումարի մնացած մասը պետք է վճարվեր 18 ամիսների ընթացքում՝ յուրաքանչյուր ամիս 300.000 ՀՀ դրամից ոչ պակաս գումար վճարելու միջոցով: Ի կատարումն պայմանագրում նշված այդ պայմանի՝ Ստեփան Մեսրոպյանը մինչև 29.01.2013 թվականը Բանկին վճարել է ընդհանուր 8.000.000 ՀՀ դրամ: Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.11.2014 թվականի վճռով անվավեր է ճանաչվել 14.04.2010 թվականին Բանկի անվամբ վերը նշված գույքի նկատմամբ կատարված սեփականության իրա-

վունքի պետական գրանցումը, և որպես անվավերության հետևանք՝ անվավեր են ճանաչվել վերը նշված պայմանագիրն ու դրա հիման վրա Ստեփան Մեսրոպյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: Բանկը, հաշվի առնելով կայացված դատական ակտի բովանդակությունը, 19.06.2015 թվականին Ստեփան Մեսրոպյանին վերադարձրել է պայմանագրով նրանից ստացած 8.000.000 ՀՀ դրամը, ինչպես նաև վճարել է ևս 2.290.000 ՀՀ դրամ: Այսինքն՝ Բանկը Ստեփան Մարգարյանին գումարը, ըստ էության, վերադարձրել է դատական ակտի հիման վրա:

Ստեփան Մեսրոպյանը հայց է ներկայացրել ընդդեմ Բանկի՝ խնդրելով նրանից բռնագանձել 817.190 ՀՀ դրամ՝ որպես ապրանքի գնից պակաս վերադարձված գումար, այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած 19.06.2015 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը, ինչպես նաև բռնագանձել 52.000 ՀՀ դրամ՝ որպես իրավունքի գրանցման և դադարեցման համար կատարված ծախս, ու 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար:

Սույն գործով Դատարանը, պատճառաբանելով, որ «Բանկի կողմից ստացված գումարն անօրինական պահելու ժամանակահատված կարող է համարվել վերը նշված գործարքն անվավեր ճանաչելու մասին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.11.2014 թվականի վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև անվավերության հետևանքների կիրառմամբ պայմանավորված դրամական պարտավորության փաստացի կատարման պահը», «Բանկը գումարներն ստացել է օրինական հիմքերով՝ կողմերի միջև 07.07.2011 թվականին կնքված գործարքի ուժով, ուստի և այն հետագայում անվավեր ճանաչելու դեպքում գործարքի գործողության ընթացքում տոկոսներ ենթակա չեն բռնագանձման, քանի որ այդ ընթացքում գումարի վճարումն իրականացվել է օրինական և իրավական հիմքով՝ գործարքի ուժով», և հաստատված համարելով, որ «08.04.2015 թվականից Ստեփան Մեսրոպյանի հանդեպ Բանկն ունեցել է 8.000.000 ՀՀ դրամի հետ վճարման պարտավորություն՝ որպես գործարքի անվավերության հետևանք», «Բանկի կողմից 19.06.2015 թվականին Ստեփան Մեսրոպյանին հատուցվել է 10.290.000 դրամ, որից 8.000.000 ՀՀ դրամը՝ որպես տան համար վճարված փոխհատուցում, իսկ 2.290.000 ՀՀ դրամը՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվակված տոկոսագումար՝ սկսած 28.01.2013 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը՝ 19.06.2015 թվականը, այսինքն՝ Բանկի կողմից վճարվել է ավելի գումար, քան ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով 08.04.2015 թվականից մինչև 19.06.2015 թվականն ընկած ժամանակահատվածի համար հաշվեգրված գումարը», հայցը մերժել է:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «Դատարանի կողմից տոկոսների հաշվեգրման ժամանակահատվածի սկիզբը սխալ է մեկնաբանվել», «Դատարանի կողմից հաշվարկը պետք է կատարվեր ամեն ամիս նվազող գումարների վրա, այսինքն՝ Բանկի կողմից գումարների վճարման պարտավորությունը ծագել է ավելի վաղ՝ հայցվորի կողմից կատարված առաջին վճարման պահից», գտել է, որ «անհիմն է դառնում Դատարանի այն եզրահանգումը, որ Բանկը պետք է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով հաշվեգրվող տոկոսների հաշվարկը սկսեր Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱԲԴ/2183/02/11 վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 08.04.2015 թվականից», ու Ստեփան Մեսրոպյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարել է՝ Դատարանի 06.07.2016 թվականի վճիռը բեկանել է և գործն ուղարկել է նոր քննության:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը՝ Վճարեկ դատարանը գտնում է, որ թեև Վերաքննիչ դատարանի եզրահանգումը՝ գործը նոր քննության ուղարկելու մասով, հիմնավոր է, սակայն Վերաքննիչ դատարանի պատճառաբա-



նություններն անհիմն են, քանի որ պայմանագրի հիման վրա ստացված գումարն Ստեփան Մեսրոպյանին վերադարձնելու Բանկի պարտականությունը ծագել է թիվ ԵԱԲԴ/2183/02/11 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացվելու և այն օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Ընդ որում, օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելու արդյունքում որպես պատասխանատվության միջոց տոկոսներ հաշվարկելիս պետք է հաշվի առնվի, թե որ պահից է փաստացի սկսել իրավախախտումը, այսինքն՝ որ պահից է Բանկը մեղավոր իրավախախտման համար, որի համար պետք է պարզել, թե երբ է վերջնական դատական ակտը հասու դարձել Բանկին: Հետևաբար սույն գործով պարզաբանման է ենթակա այն հարցը, թե թիվ ԵԱԲԴ/2183/02/11 քաղաքացիական գործով առկա է արդյոք վերջնական դատական ակտ, երբ է այն ուժի մեջ մտել և երբ է հասու դարձել Բանկին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ենթակա է նոր քննության՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի վերոնշյալ հանգամանքները պարզելու համար, որպիսի պայմաններում անհնարին է համարում որպես իրավունքի գրանցման և դադարեցման համար կատարված ծախսի բռնագանձման հարցին՝ որպես ածանցյալ պահանջի, ինչպես նաև փաստաբանի վարձատրության գումար բռնագանձելու հարցին անդրադառնալը:

*Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:*

Անփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը և գործը նոր քննության ուղարկելով, կայացրել է ձիշտ դատական ակտ: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի դատական ակտը սխալ է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, որպիսի պարա-

գայում սույն գործը Վերաքննիչ դատարանի որոշման ուժով ենթակա է նոր քննության, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, և այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.11.2016 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/5402/02/14**  
դատարանի որոշում 2017թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/5402/02/14  
Նախագահող դատավոր՝ Ա. Սմբատյան  
Դատավորներ՝ Կ. Հակոբյան  
Ա. Հունանյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ և  
ասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ԱՐԳՈՏՈՒՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերու-  
թյուն) ներկայացուցիչ Վանյա Բալասանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքա-  
ցիական դատարանի 13.10.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արշակ Միրզոյանի  
ընդդեմ Ընկերության՝ վնասը հատուցելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Արշակ Միրզոյանը պահանջել է Ընկերությունից բռնագանձել  
1.171.610 ՀՀ դրամ՝ որպես վնասի հատուցում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-  
թյան դատարանի (դատավոր՝ Ռ. Ափիյան) (այսուհետ՝ Դատարան) 25.03.2016 թվականի  
վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան)  
13.10.2016 թվականի որոշմամբ Արշակ Միրզոյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը  
բավարարվել է՝ Դատարանի 25.03.2016 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկ-  
վել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արշակ Միրզոյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմ-  
նավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 06.12.2015 թվականի խմբագրությանը ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 345-րդ և 409-րդ հոդվածները, «Զբոսաշրջության և գրոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 16-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատարանության օրենսգրքի 48-րդ և 51-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է գնահատել գործում առկա ապացույցները, որի արդյունքում անտեսել է, որ Ընկերությունն Արշակ Միրզոյանին երբևէ «զբոսաշրջային փաթեթ» ծառայություն չի մատուցել, քանի որ վերջինիս կողմից միաժամանակ երկու գործառնություն Ընկերությանը չի պատվիրվել՝ 06.08.2014 թվականին առանձին պատվիրել է ավիատոմս, իսկ 07.08.2014 թվականին կատարվել է հյուրանոցի ամրագրում, և գործում առկա չէ հակառակը հիմնավորող որևէ թույլատրելի և (կամ) վերաբերելի ապացույց:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ թե՛ ներպետական և թե՛ միջազգային որևէ իրավական նորմով կամ գործարար շրջանառության սովորույթներով նախատեսված չէ որևէ դրույթ կամ սովորույթ, որով տուրիստական ընկերություններն ավիատոմսեր վաճառելու կամ հյուրանոցային համար ամրագրելու ժամանակ պարտավոր են ստուգել (հայտնել) հաճախորդի մոտ համապատասխան երկրի մուտքի արտոնագրի (վիզայի) առկայությունը և (կամ) բացակայությունը կամ ավելին՝ պարտավոր են հաճախորդին ավիատոմս վաճառելու կամ հյուրանոցային համար ամրագրելու ժամանակ նաև մատուցել մուտքի արտոնագիր (վիզա) ստանալու հետ կապված ծառայություններ (առավել ևս անվճար):

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.10.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 25.03.2016 թվականի վճռին:

### **2.1. Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վճարել բողոքի պատասխան ներկայացրած անձն Ընկերությանը դիմել է իրեն երկու ծառայություն մատուցելու՝ ավիատոմսի և հյուրանոցի ամրագրում կատարելու նպատակով: Ընկերություն դիմելու հաջորդ օրն էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացվել է ավիատոմսի և հյուրանոցի արժեքների մասին, որից հետո վճարել է ավիատոմսի համար՝ նշելով, որ հյուրանոցի ամրագրման համար կհայտնի հաջորդ օրը: Այսինքն՝ Ընկերությունն ի սկզբանե տեղյակ է եղել երկու ծառայություն պատվիրվելու մասին:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերությունն Արշակ Միրզոյանի համար 06.08.2014 թվականին կատարել է օդանավի տոմսի ամրագրում (**հատոր 1-ին, գ.թ. 85-90**).

2) Ընկերությունն Արշակ Միրզոյանի համար 07.08.2014 թվականին կատարել է Հնդկաստանի Գոա քաղաքում հյուրանոցային համարի ամրագրում (**հատոր 1-ին, գ.թ. 15**):

### **4. Վճարել դատարանի պարզապարսպությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 16-րդ հոդվածները, դրա արդյունքում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանը, վերահասարակե-

լով նախկինում արտահայտած դիրքորոշումները, հարկ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյոք իրավաչափ է գրավոր պայմանագրի բացակայության պայմաններում, օրար լեզվով կազմված գրավոր փաստաթղթի հիման վրա՝ առանց դրա պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանության, եզրահանգում կատարել կողմերի միջև, Կվիյալ դեպքում, զբոսաշրջային փաթեթի ծառայություն մատուցելու նպատակով ծագած իրավահարաբերության առկայության վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կնքվում են բանավոր կամ գրավոր (հասարակ կամ նոտարական) ձևով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործարքը, որը կարող է կնքվել բանավոր, համարվում է կնքված նաև այն դեպքում, եթե անձի վարքից ակնհայտ է գործարք կնքելու նրա կամքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից: Երկկողմ (բազմակողմ) գործարքները կարող են կնքվել նույն օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված եղանակներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության բնագավառին առնչվող հարաբերությունները և զբոսաշրջային գործունեության բնագավառում ծագող այն հարաբերությունները, որոնք ի հայտ են գալիս քաղաքացիների հանգստի, շրջագայության, ազատ տեղաշարժման իրավունքների իրականացման գործընթացում:

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակներից է՝ նաև՝ քաղաքացիների զբոսաշրջության ընթացքում ծագած իրավունքների ապահովումը:

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ զբոսաշրջային ծառայությունները զբոսաշրջիկներին մատուցվող և նրանց պահանջմունքների բավարարմանն ուղղված տեղաբաշխման, հյուրանոցային, տեղափոխման, էքսկուրսային, սննդի կազմակերպման և մատուցման, մշակութային, մարզական բնույթի միջոցառումների, հանգստի, զվարճանքի կազմակերպման և այլ ծառայություններն են: Նույն հոդվածի համաձայն՝ **զբոսաշրջային փաթեթը զբոսաշրջային ծառայությունների համալիր է, որն ընդգրկում է ծառայությունների մատուցման առնվազն երկու գործառույթ**՝ կապված տրանսպորտային (և դրա հետ առնչվող), հյուրանոցային (և դրա հետ առնչվող) ծառայությունների հետ, ինչպես նաև այն ծառայությունների հետ, որոնք կապված չեն տրանսպորտային և հյուրանոցային ծառայությունների հետ և զբոսաշրջային արդյունքի էական մասն են կազմում: Զբոսաշրջային փաթեթով մատուցված ծառայության տևողությունը պետք է գերազանցի 24 ժամը կամ ներառի առնվազն մեկ գիշերակաց: Նույն հոդվածի համաձայն՝ **զբոսաշրջային արդյունքը** զբոսաշրջային ծառայությունների ամբողջական համալիրն է:

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդ-

վածի 1-ին մասի համաձայն՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից զբոսաշրջային արդյունքը տրամադրվում է սպառողի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր պայմանագրի կնքմամբ:

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտը մինչև պայմանագրի կնքելը պարտավոր է զբոսաշրջիկին տրամադրել զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ժամանման կամ տարանցիկ երկրների անձնագրային, մուտքի և ելքի պահանջների վերաբերյալ տեղեկատվություն:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության բնագավառին առնչվող հարաբերությունները, ինչպես նաև զբոսաշրջային գործունեության բնագավառում ծագող այն հարաբերությունները, որոնք ի հայտ են գալիս քաղաքացիների հանգստի, շրջագայության, ազատ տեղաշարժման իրավունքների իրականացման գործընթացում՝ նպատակ ունենալով ապահովելու, *inter alia*, քաղաքացիների՝ զբոսաշրջության ընթացքում ծագած իրավունքների արդյունավետ իրացումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտները սպառողի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքում են գրավոր պայմանագիր: Ընդ որում, նրանց միջև պայմանագրի կնքելը պարտադիր է այն դեպքում, երբ տրամադրվում է զբոսաշրջային ծառայությունների ամբողջական համալիր: Զբոսաշրջային ծառայություններն իրենց մեջ նաև ներառում են զբոսաշրջիկներին մատուցվող **հյուրանոցային և տրանսպորտային տեղափոխման** ծառայությունները, իսկ զբոսաշրջային փաթեթն իր մեջ **զբոսաշրջային ծառայությունների մատուցման առնվազն երկու գործառույթ** (օրինակ, հյուրանոցային և տրանսպորտային տեղափոխման ծառայությունները) **ընդգրկող** համալիր է, որով մատուցված ծառայությունների տևողությունը պետք է գերազանցի 24 ժամը կամ ներառի առնվազն մեկ գիշերակաց: Այսինքն՝ որպեսզի զբոսաշրջային գործունեություն իրականացնող սուբյեկտի մոտ ծագի զբոսաշրջային փաթեթ կազմելու պարտականություն, անհրաժեշտ է, որ նրա կողմից միաժամանակ՝ մեկ գործարքից բխող իրավահարաբերությունների շրջանակներում, մատուցվեն առնվազն երկու զբոսաշրջային ծառայություններ՝ 24 ժամը գերազանցող տևողությամբ, կամ դրանք ներառեն առնվազն մեկ գիշերակաց:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել բացահայտել նշված հասկացությունների բովանդակությունը: «Կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց **ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է (տե՛ս, Նեյլի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Համիաչ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԿ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):**

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից սպառողին երկու ծառայություն տրամադրելը բավարար չէ այն զբոսաշրջային փաթեթ գնահատելու համար: Միաժամանակ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միայն այն փաստը, որ ծառայությունները մատուցվել են տարբեր օրեր, դեռևս չի նշանակում, որ առկա չէ զբոսաշրջային փաթեթի ծառայություն: Զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից տրամադրված առնվազն երկու գործառույթ ընդգրկող համալիրը կլինի մեկ գործարքից բխող իրավահարաբերությունների շրջանակներում կատարված այն դեպքում, երբ գործարքի կողմերն ի սկզբանե ունեցել են առնվազն երկու զբոսաշրջային ծառայությունների մատուցման մտադրություն: Այսինքն՝ տվյալ դեպքում հատկապես կարևորվում է գործարքի սուբյեկտի կողմը՝ իրավահարաբերու-

թյան մասնակիցների կամքի ուղղվածությունը՝ կապված զբոսաշրջային սուբյեկտի կողմից առնվազն երկու գործառույթ ընդգրկող զբոսաշրջային ծառայություն մատուցելու, իսկ սպառողի կողմից այն ստանալու հետ: Ընդ որում, այդ դեպքում է ծագում զբոսաշրջային գործունեություն իրականացնող սուբյեկտի՝ մինչև զբոսաշրջիկի հետ պայմանագիր կնքելը նրան զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ժամանան կամ տարանցիկ երկրների անձնագրային, մուտքի և ելքի պահանջների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը:

Ընդհանրացնելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից սպառողին զբոսաշրջային փաթեթի ծառայություն մատուցվում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից մատուցվում է առնվազն երկու գործառույթ ընդգրկող զբոսաշրջային ծառայությունների համալիր,

2. այդ ծառայությունները մատուցվում են մեկ գործարքից բխող իրավահարաբերությունների շրջանակներում, այսինքն՝ զբոսաշրջային սուբյեկտն ի սկզբանե ունեցել է առնվազն երկու գործառույթ ընդգրկող զբոսաշրջային ծառայություն մատուցելու, իսկ սպառողը՝ այն ստանալու մտադրություն,

3. զբոսաշրջային ծառայությունները ներառում են առնվազն մեկ գիշերակաց կամ դրանց տևողությունը գերազանցում է 24 ժամը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում կարող է հաստատված համարվել զբոսաշրջային փաթեթի տրամադրման փաստը, հետևաբար նաև զբոսաշրջային գործունեության սուբյեկտի՝ մինչև զբոսաշրջիկի հետ պայմանագիր կնքելը նրան զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ժամանան կամ տարանցիկ երկրների անձնագրային, մուտքի և ելքի պահանջների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու պարտականության առկայությունը:

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը զբոսաշրջային փաթեթ կազմելու դեպքում նախատեսել է գրավոր ձևով պայմանագիր կնքելու պարտականություն, որը պետք է կնքվի գրավոր գործարքին ներկայացվող պահանջներին համապատասխան: Միաժամանակ օրենսդիրը չի նշել, որ այդ գործարքի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Հետևաբար զբոսաշրջային փաթեթ տրամադրելու կապակցությամբ կողմերի միջև գրավոր ձևով կնքված պայմանագրի բացակայությունը չի բացառում փաստացի նման գործարք կնքված լինելու հնարավորությունը, քանի որ այդ դեպքում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կանոնը, այն է՝ կողմերը զրկվում են ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից՝ այդուհանդերձ պահպանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքը, որոնք ենթակա են գնահատման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կանոններով (*ipso, mutatis mutandis, Զարուհի Հայրապետյանը և Գայանե Ղազարյանն ընդդեմ «Բելքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի, երրորդ անձ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակի թիվ ԵԿԳ/0556/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

06.12.2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

«Լեզվի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են գործավարությունը կատարել գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, ամրագրված լեզվական կանոնները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը տարվում է հայերեն: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են՝

1) գրավոր և իրեղեն ապացույցներով (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր ապացույցներ են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ փաստաթղթերը և նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն (...) ստանալու փաստաթղթերից իրենց համար հասկանալի լեզվով կատարված թարգմանությունների տեքստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է դատավարության լեզվի առումով ապացույցի թույլատրելիության հարցին՝ արձանագրելով, որ վերաքննիչ դատարանը, ընդունելով, գնահատման արժանացնելով և ապա դատական ակտի բեկանման հիմքում դնելով ռուսերենով ներկայացված տեղեկանքը, շրջանցել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը հայերեն տարվելու պահանջը՝ այդպիսով խախտելով դատավարությունը հայերեն վարելու վերոգրյալ սկզբունքը (*տես, Արայիկ Բաղդասարյանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին թիվ ԵՄԴ/0006/04/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.10.2012 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել նաև այն մասին, որ գրավոր ապացույցները քաղաքացիական դատավարությունում մեծ ապացուցողական նշանակություն ունեցող և տարածված ապացուցման միջոցներ են, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածում ամրագրված ձևակերպումից բխում է, որ որպես գրավոր ապացույց կարող է հանդես գալ ցանկացած նյութական կրիչ, որի վրա տառերի, թվերի, ծածկագրերի և այլ նշանների կիրառմամբ արտացոլված են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին որոշակի տեղեկություններ: Ընդ որում, գրավոր ապացույցներում ապացուցողական նշանակություն ունի այն տեղեկությունը (միտքը), որը տառերի, թվերի, ծածկագրերի և այլ նշանների միջոցով արտացոլված է որոշակի նյութական կրիչի վրա և ընկալվում է դրա բովանդակության (տեքստի) ընթերցման միջոցով: Օրենսդիրն ուղղակիորեն չի կարգավորում օտար լեզվով կազմված փաստաթղթերը և դրանց թարգմանությունները դատարան ներկայացնելու կարգն ու չթարգմանված ապացույցները դատարան ներկայացնելու դատավարական հետևանքները՝ սահմանափակվելով միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի



551-րդ հոդվածի այն իրավակարգավորմամբ, որ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ստանալու փաստաթղթերից իրենց համար հասկանալի լեզվով կատարված թարգմանությունների տեքստերը: Հիմք ընդունելով 06.12.2015 թվականի խմբագրությանը ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածով ամրագրված այն դրույթը, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով ամրագրված դատավարության լեզվի սկզբունքը, ինչպես նաև քննարկվող հարցի շուրջ ձևավորված իրավակիրառ պրակտիկան՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ օտար լեզվով կազմված փաստաթղթերի ներկայացման դեպքում ապացուցման պարտականություն ունեցող դատավարության մասնակիցների կողմից պետք է ներկայացվի նաև այդ փաստաթղթի պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանությունը (*տե՛ս, ըստ Արեգնազ Կարապետյանի դիմումի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջի մասին թիվ Գ-ԴԿ/0504/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Ընդհանրացնելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ զբոսաշրջային գործունեություն իրականացնող սուբյեկտի կողմից սպառողին միաժամանակ՝ մեկ գործարքից բխող իրավահարաբերությունների շրջանակներում, առնվազն երկու գործառույթ ընդգրկող զբոսաշրջային ծառայություններ են մատուցվում, որոնց տևողությունը գերազանցում է 24 ժամը կամ ներառում է առնվազն մեկ գիշերակաց, ապա զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտավոր է սպառողի հետ կնքել գրավոր պայմանագիր և մինչև պայմանագիր կնքելը նրան տրամադրել զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ժամանման կամ տարանցիկ երկրների անձնագրային, մուտքի և ելքի պահանջների վերաբերյալ տեղեկատվություն: Մինչդեռ այն դեպքում, երբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի և սպառողի միջև զբոսաշրջային փաթեթի կապակցությամբ առկա չէ գրավոր ձևով կնքված պայմանագիր, ապա այդպիսի գործարքը փաստացի կնքված լինելը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված ապացույցներով՝ բացառությամբ վկաների ցուցմունքների: Ընդ որում, ի հավաստումն զբոսաշրջային փաթեթի և դրանով պայմանավորված պայմանագրի առկայության՝ օտար լեզվով կազմված փաստաթղթեր ներկայացնելու դեպքում ապացուցման պարտականություն ունեցող դատավարության մասնակցի կողմից պետք է ներկայացվի նաև այդ փաստաթղթի պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտ հանդիսացող Ընկերությունն Արշակ Միրզոյանի համար 06.08.2014 թվականին մատուցել է մեկ զբոսաշրջային ծառայություն՝ կատարել է օդանավի տոմսի ամրագրում: Նույն անձի համար Ընկերությունը 07.08.2014 թվականին մատուցել է մեկ այլ զբոսաշրջային ծառայություն՝ կատարել է Հնդկաստանի Գոա քաղաքում հյուրանոցային համարի ամրագրում: Ընկերության կողմից զբոսաշրջային փաթեթ չի կազմվել: Կողմերի միջև առկա չէ զբոսաշրջային ծառայությունների համալիր տրամադրելու վերաբերյալ գրավոր ձևով կնքված պայմանագիր:

Սույն գործով Դատարանը, նաև պատճառաբանելով, որ «Արշակ Միրզոյանն Ընկերությանը չի պատվիրել վիզայի ապահովման ծառայություն, հետևաբար և Ընկերությունը չի ունեցել որևէ պարտավորություն Արշակ Միրզոյանին վիզայի ապահովման ծառայություն մատուցելու վերաբերյալ», հայցը մերժել է:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «Ընկերությունը 05.08.2014 թվականին Արշակ Միրզոյանին էլեկտրոնային նամակով [tiker@argotour.am](mailto:tiket@argotour.am) հայտնել է, որ ավիատոմսի արժեքը 498.000 ՀՀ դրամ է, իսկ հյուրանոցինը՝ 496.000 ՀՀ դրամ, ընդհանուրը՝ 994.000 ՀՀ դրամ», «Արշակ Միրզոյանն ի պատասխան իր հարցմանը 05.08.2014 թվականին Ընկերությունից էլեկտրոնային նամակով [tiker@argotour.am](mailto:tiket@argotour.am) ստացել է պատասխան՝ ավիատոմսի արժեքի 498.000 ՀՀ դրամ և հյուրանոցի՝ 496.000 ՀՀ դրամի վերաբերյալ», գտել է, որ «Արշակ Միրզոյանն Ընկերությանը պատվիրել է երկու ծառայություն՝ 06.08.2014 թվականին ավիատոմս, իսկ 07.08.2014 թվականին՝ հյուրանոց ավելի

քան մեկ գիշերակացով...: Հետևապես տրամադրվել է գրոսաշրջային ծառայությունների փաթեթ», ու Արշակ Միրզոյանի վերաքննիչ բողոքը բավարարել է՝ Դատարանի 25.03.2016 թվականի վճիռը բեկանել է, և գործն ուղարկել է նոր քննության:

Վերը նշված իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ և այդ համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների իրավաչափությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վերաքննիչ դատարանը, հիմնվելով օտարալեզու էլեկտրոնային նամակագրության վրա (**հասոք 1-ին, գ.թ. 24**), հաստատված է համարել այն հանգամանքը, որ Արշակ Միրզոյանն Ընկերությանը պատվիրել է երկու ծառայություն, ներառյալ՝ հյուրանոցային համարի ամրագրում՝ ավելի քան մեկ գիշերակացով, հետևաբար Ընկերության կողմից նրան տրամադրվել է գրոսաշրջային փաթեթ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում դրել է օտար լեզվով ներկայացված փաստաթուղթ, որը չունի պատշաճ կերպով վավերացված հայերեն թարգմանություն այն պարագայում, երբ Վճռաբեկ դատարանի վերոգրյալ իրավական վերլուծությունից բխում է, որ օտար լեզվով ներկայացված էլեկտրոնային նամակները՝ առանց դրանց պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանությունների, պետք է գնահատվեն որպես անթույլատրելի: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը դրանք ընդունել է որպես ապացույց, գնահատման արժանացրել և դրել Դատարանի 25.03.2016 թվականի վճիռի բեկանման հիմքում՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը հայերեն տարվելու պահանջը՝ այդպիսով խախտելով դատավարությունը հայերեն վարելու վերոգրյալ սկզբունքը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի վկայակոչած էլեկտրոնային նամակները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի հիմքով չեն համարվում թույլատրելի ապացույց, հետևաբար դրանք չեն կարող հիմք հանդիսանալ հաստատված համարելու գործի քննության համար նշանակություն ունեցող այն փաստերը, որ «Արշակ Միրզոյանն Ընկերությանը պատվիրել է երկու ծառայություն, հետևաբար Ընկերությանը տրամադրել է գրոսաշրջային ծառայությունների փաթեթ»: Այսինքն՝ սույն գործով չի հաստատվում Արշակ Միրզոյանին մեկ գործարքից բխող իրավահարաբերությունների շրջանակներում առնվազն երկու գործառույթ ընդգրկող գրոսաշրջային ծառայությունների համալիր տրամադրելու փաստը, քանի որ դրա վերաբերյալ գործում առկա չեն թույլատրելի ապացույցներ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, հայցը մերժելով, հանգել է իրավաչափ հետևության, մինչդեռ Վերաքննիչ դատարանը նյութական և դատավարական նորմերի խախտման արդյունքում սխալ եզրահանգման է եկել, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և առաջին աստիճանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում

նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գույքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ Ընկերության ներկայացուցիչը վճռաբեկ բողոքի համար վճարել է 36.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, և այդ ծավալով վճարված պետական տուրքի գումարից, համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «ա» ենթակետի, միայն 35.148,3 ՀՀ դրամն է անհրաժեշտ եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության ներկայացուցչի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարից 35.148,3 ՀՀ դրամը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Աշոտ Միրզոյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.10.2016 թվականի որոշումն ու օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.03.2016 թվականի վճռին:
2. Արշակ Միրզոյանից հօգուտ «ԱՐԳՈՏՈՒՐ» ՍՊԸ-ի բռնագանձել 35.148,30 ՀՀ դրամ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/0520/02/11**  
դատարանի որոշում **2017թ.**  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0520/02/11  
Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան  
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան  
Կ. Չիլինգարյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ե. ԽՈՒՆԴԿԱՐՑԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Մ. ԴՐՄԵՑԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵԴՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈՒՑԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին դռնբաց դատական նիստում, քննելով «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Տիգրան Խուրշուդյանի և «Հախվերդյան Շինմոնտաժ» ԲԲԸ-ի ներկայացուցիչ Ժաննա Օհանյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.12.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ «Հախվերդյան Շինմոնտաժ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի պահ հանձնված գույքից հրաժարվելու և դրա արժեքը վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությանը պարտավորեցնել վճարել 214.254.871 ՀՀ դրամ:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Բունիաթյան) (այսուհետ՝ Դատարան) 28.06.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Կազմակերպությունից բռնագանձել 14.649.062 ՀՀ դրամ, իսկ մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.12.2016 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Դատարանի 28.06.2016 թվականի վճիռը և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Ընկերության և Կազմակերպության ներկայացուցիչները:

Վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

**2. Կազմակերպության ներկայացուցչի վճարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 813-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Կազմակերպության կողմից փորձագիտական եզրակացությունը՝ ձեռագիր պայմանագիրը վերծանելու մասին, ներկայացվել է, երբ ստորադաս դատարանը նախնական դատական նիստի ժամանակ ներկայացված ապացույցը՝ պայմանագիրը, վերադարձրել է անընթեռնելի լինելու պատճառաբանությամբ՝ պահանջելով ներկայացնել ընթեռնելի տարբերակը, որից հետո էլ Կազմակերպությունը ներկայացրել է պայմանագրի վերծանման եզրակացությունը: Վերաքննիչ դատարանի հետևությունը, որ նշված եզրակացությունը, ինչպես նաև «Կառուցագետ» անկախ փորձագիտական կենտրոն ՄՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունն անթույլատրելի են, քանի որ ներկայացվել են դատաքննության ընթացքում, անհիմն է, քանի որ դրանք առաքվել են փոստով և Դատարան են մուտքագրվել մինչև դատաքննություն սկսվելը:

Վերաքննիչ դատարանը, նշված ապացույցները համարելով անթույլատրելի և չգնահատելով, ինչպես նաև անտեսելով գործում առկա Ընկերության կողմից Կազմակերպությանն ուղղված գրությունը, անհիմն կերպով գտել է, որ կողմերի միջև կապալի իրավահարաբերությունը բացակայում է, և առկա է միայն պահատվության իրավահարաբերություն:

Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ վերադարձվել է միայն 4,643 տոննա մետաղական կոնստրուկցիա, իրականությանը չի համապատասխանում, քանի որ հաստատված չհամարելով կապալի հարաբերությունների առկայությունը՝ Վերաքննիչ դատարանը նաև անտեսել է, որ ըստ փորձագիտական եզրակացությունների՝ առկա են դեռևս չվերամշակված (սույն տեսքը պահպանած) կոնստրուկցիաներ, կիսավերամշակված կոնստրուկցիաներ, վերջնական վերամշակված և նախագծին համապատասխանեցված կոնստրուկցիաներ, ինչպես նաև մոնտաժված և «Ուրարտու» հյուրանոցում տեղադրված 11,2 տոննա ընդհանուր քաշով մետաղական կոնստրուկցիաներ:

Ինչ վերաբերում է ի պահ հանձնված մետաղական կոնստրուկցիաներն օգտագործված լինելու կամ չլինելու հանգամանքին, ապա Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործում բացակայում են նաև նշված կոնստրուկցիաների գործարանային փաստաթղթերը, այսինքն՝ չի հիմնավորվում նաև օգտագործված չլինելու հանգամանքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.12.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 28.06.2016 թվականի վճիռն:

**2.1 Ընկերության ներկայացուցչի վճարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ և 813-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 48-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ հետևյալ փաստարկներով.*

Սույն գործով Վերաքննիչ դատարանն իրավաչափորեն հաստատված է համարել այն հանգամանքը, որ կողմերի միջև առկա են պահատվության, այլ ոչ թե կապալի հարաբերություններ, և որ 04.07.2001 թվականի պայմանագրի հիմքով Ընկերությունը Կազմակերպությանն ի պահ է հանձնել 230,322 տոննա մետաղական կոնստրուկցիա, որից

վերադարձվել է 4,643 տոննա մետաղական կոնստրուկցիա, ինչի արդյունքում Կազմակերպության կողմից Ընկերությանը վերադարձման ենթակա մետաղական կոնստրուկցիայի քաշը կազմում է 225,679 տոննա: Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել նաև այն հանգամանքը, որ Կազմակերպության և «Եվրոպա» ՍՊԸ-ի տարածքում առկա մետաղական կոնստրուկցիաներն այն նույն մետաղական կոնստրուկցիաներն են, որոնք ի պահ են հանձնված եղել 2001 թվականին: Այսուհետև Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել վերաքննիչ բողոքում նշված դիրքորոշումն այն մասին, որ Դատարանը պետք է կիրառեր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 829-րդ հոդվածի 3-րդ կետը և պատասխանողից հոգուտ հայցվորի բռնագանձեր ի պահ հանձնված գույքի արժեքը:

Այդուհանդերձ, իրավաչափորեն հաստատված համարելով վերոնշյալ փաստերը՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Կազմակերպությանն ի պահ հանձնված մետաղական կոնստրուկցիաները 2001 թվականին հանձնելու պահին օգտագործված լինելու հանգամանքն առհասարակ չի կարող հաստատվել որևէ փորձագետի կողմից, իսկ այդ փաստը պետք է ապացուցվեր Կազմակերպության կողմից, սակայն վերջինս ներկայացրել է այն բոլոր հնարավոր ապացույցները, որոնք եղել են իր տիրապետության ներքո և հայտնել, որ այլ ապացույց չունի: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, նման պայմաններում անդրադառնալով ի պահ հանձնված մետաղական կոնստրուկցիաների օգտագործված լինելու կամ չլինելու հարցին, գտել է, որ ի պահ հանձնված մետաղական կոնստրուկցիաները նախկինում օգտագործված լինելու կամ չլինելու և, ըստ այդմ, վճարման ենթակա գումարի չափը ձիշտ որոշելու մասով առկա է սույն գործի նոր քննության անհրաժեշտություն՝ անտեսելով, որ այդ հանգամանքն ապացուցելու պարտականությունը և չապացուցման բացասական հետևանքները կրում է Կազմակերպությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 22.12.2016 թվականի որոշումը, փոփոխել այն՝ կայացնելով նոր դատական ակտ, այն է՝ մասնակի՝ 209.922.769 ՀՀ դրամի չափով բավարարել Ընկերության հայքը»:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Կազմակերպության միջև 04.07.2001 թվականին կնքված «Ապրանքների (շինարարական նյութերի) ի պահ հանձման վերաբերյալ» պայմանագրի (այսուհետև՝ Պահատվության պայմանագիր) 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը Կազմակերպությանը հանձնում է ի պահ 219 տոննա մետաղական կոնստրուկցիա (ըստ ներկայացված ցուցակի, որը պայմանագրին կից է):

Նույն պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ Կազմակերպությունն ի պահ է ընդունում Ընկերությունից 219 տոննա մետաղական կոնստրուկցիա (ըստ պայմանագրին կից ներկայացված ցուցակի)՝ երաշխավորված լինելով, որ հետագայում մետաղական կոնստրուկցիաների մոնտաժային աշխատանքների կատարումը կհանձնարարվի իրեն (վարձատրության մասին նախնական փոխհամաձայնության գալու պայմաններում):

Նույն պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է նշված աշխատանքների կատարումը հանձնարարել Կազմակերպությանը (վարձատրության մասին նախնական փոխհամաձայնության գալու պայմաններում):

Նշված պայմանագրին կից ներկայացված է Կազմակերպությանն ի պահ տրվող մետաղական կոնստրուկցիաների տեսականու սպեցիֆիկացիան (այսուհետև՝ Սպեցիֆիկացիա) (**հատոր 1-ին, գ.թ. 26-27**):

2) Ընկերության և Կազմակերպության միջև 04.07.2001 թվականին ստորագրված «Ընդունման-հանձման» ակտի (այսուհետև՝ Ընդունման-հանձման ակտ) 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը Կազմակերպությանը 04.07.2001 թվականին կնքված «Ապրանքների (շինարարական նյութերի) ի պահ հանձման վերաբերյալ» պայմանագրի հիման

վրա ի պահ է հանձնել մետաղական կոնստրուկցիաներ՝ ըստ պայմանագրին կից սպեցիֆիկացիայի, ընդհանուր 219 տոննա (125 հատ):

Նույն ակտի 2-րդ կետի համաձայն՝ Կազմակերպությունն Ընկերությունից ընդունում է ի պահ 219 տոննա (125 հատ) մետաղական կոնստրուկցիա (**հատոր 1-ին, գ.թ. 28**):

3) Ընկերության՝ ի դեմս Ծ.Մկրտչյանի կողմից 09.07.2005 թվականին տրված ստացականի համաձայն՝ Կազմակերպության կողմից Ընկերությանն է վերադարձվել 4,643 տոննա մետաղական կոնստրուկցիա (**հատոր 1-ին, գ.թ. 31**):

4) Ընկերությունը 22.02.2011 թվականին գրություն է ուղարկել Կազմակերպությանը՝ հայտնելով, որ համաձայն երկու ընկերությունների միջև 13.12.2000 թվականին կնքված շինարարության պայմանագրի՝ Ընկերության կողմից Կազմակերպությանն է հանձնվել 302 տոննա մետաղական կոնստրուկցիա: Քանի որ իրենց բոլոր նախնական պայմանավորվածությունները չեն կատարվել, խնդրել է վերադարձնել 04.07.2001 թվականի Պահատվության պայմանագրով հանձնված մետաղական կոնստրուկցիաները: Ընկերությունը նաև խնդրել է հնգօրյա ժամկետում վերադարձնել Ընկերությունից ստացած կանխավճարները՝ 25.12.2000 թվականի ստացականով՝ տասը հազար ԱՄՆ դոլարին համարժեք 5.499.800 ՀՀ դրամը և 10.01.2001 թվականի ելքի օրդերով՝ տասը հազար ԱՄՆ դոլարին համարժեք 5.539.400 ՀՀ դրամը (**հատոր 1-ին, գ.թ. 11**):

5) Ընկերությունը 05.03.2011 թվականին դարձյալ գրություն է ուղարկել Կազմակերպությանը՝ խնդրելով հնգօրյա ժամանակահատվածում վերադարձնել Ընկերության 302 տոննա գույքը և 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը (**հատոր 1, գ.թ. 12**):

6) Կազմակերպության տնօրեն Վիլիկ Հախվերդյանի ստորագրությամբ «Ստացական» վերտառությամբ փաստաթղթի, ինչպես նաև 10.01.2001 թվականի թվագրությամբ Ընկերության դրամարկղային ելքի օրդերի համաձայն՝ Ընկերությունը Վիլիկ Հախվերդյանին տրամադրել է 10.000-ական ԱՄՆ դոլար՝ շինարարական աշխատանքների՝ մասնավորապես «Ուրարտու» հյուրանոցի կառուցման համար (**հատոր 3, գ.թ. 56-57**):

7) ՀՀ «Փորձաքննությունների Ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված լրացուցիչ դատաապրանքագիտական և դատատեխնիկական համալիր փորձաքննության արդյունքում 03.07.2015 թվականին կազմված թիվ 14-0463Դ եզրակացության (այսուհետ՝ Եզրակացություն) համաձայն՝ ըստ «Երևաննախագիծ» ՊԲԲԸ-ի կողմից գծագրված «Ուրարտու» հյուրանոցային համալիրի գծագրով նախատեսված նախագծի, որը համաձայնեցված չէ իրավասու մարմինների հետ, «Եվրոպա» ՍՊԸ-ի և Կազմակերպության տարածքում գտնվող մետաղական կոնստրուկցիաները մասնակիորեն են համապատասխանում նշված նախագծին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փորձաքննությանը տրամադրված նյութերում բացակայում են շինարարական աշխատանքների փաստացի իրականացումը հաստատող փաստաթղթերը (համապատասխան ճարտարապետահատակագծային առաջադրանք, համաձայնեցված և հաստատված նախագիծ-նախահաշիվ, շինարարական թույլտվություն, կապալի պայմանագիր, շինարարության աշխատանքները հավաստող կատարողական և թաքնված աշխատանքների համապատասխան ակտեր), նման պայմաններում զուտ շինարարատեխնիկական, ինչպես նաև ապրանքագիտական տեսանկյունից չի հիմնավորվում, որ մետաղական կոնստրուկցիաների որոշ հատվածներ տեղադրվել են նշված հյուրանոցային համալիրի կառուցման մայթի մակերևույթից ցածր հատվածում:

Ինչ վերաբերում է հետազոտման ենթակա մետաղական կոնստրուկցիաների նախկինում օգտագործված լինելու հանգամանքի պարզաբանմանը, ապա լիարժեք կերպով հնարավոր չէ պարզել «Եվրոպա» ՍՊԸ-ի տարածքում առկա, փորձաքննությամբ հետազոտման առարկա հանդիսացող մետաղական կոնստրուկցիաների, ինչպես նաև մետաղական հատվածների՝ նախկինում օգտագործված լինելու հանգամանքը: Ընդ որում, նաև հստակ հնարավոր չէ պարզել, թե նշված փորձաքննությամբ հետազոտման առարկա հանդիսացող «Եվրոպա» ՍՊԸ-ի և Կազմակերպության տարածքում գտնվող մետաղական կոնստրուկցիաները հանդիսանում են արդյոք Ընկերության կողմից Կազմակերպությանը 04.07.2001 թվականի Պահատվության պայմանագրում և Սպեցիֆիկացիայում նշված մետաղական կոնստրուկցիաները, թե՛ ոչ:

Միաժամանակ Եզրակացության համաձայն՝ Կազմակերպության կողմից Ընկերությանը պակաս է վերադարձվել 97,3352 տոննա մետաղական կոնստրուկցիա (չհաշված «Եվրոպա» ՄՊԸ-ի և Կազմակերպության տարածքում գտնվող խոտանված և ոչ խոտանված մետաղական կոնստրուկցիաները), որի միջին շուկայական արժեքը կազմում է 90.539.554 ՀՀ դրամ (**հատոր 4-րդ, գ.թ. 2-35**):

1) Դատարանի 19.01.2016 թվականի որոշմամբ գործը 19.02.2016 թվականին նշանակվել է դատաքննության (**հատոր 4, գ.թ. 104-105**):

2) Կազմակերպության ներկայացուցչի կողմից 23.05.2016 թվականին Դատարան է ներկայացվել իր 02.02.2016 թվականի գրության հիման վրա «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 11.02.2016 թվականին իրականացված փաստաթղթաբանական փորձաքննության արդյունքում 23.02.2016 թվականին տրված թիվ 05581601 փորձագետի եզրակացությունը, ինչպես նաև իր 04.04.2016 թվականի դիմումի հիման վրա «ՀՀ «Կառուցագետ» անկախ փորձաքննությունների ազգային կենտրոն» ՄՊԸ-ի կողմից 04.04.2016-18.04.2016 թվականների ընթացքում իրականացված շինարարական փորձաքննության արդյունքում 18.04.2016 թվականին տրված թիվ Կ-16/Պ-017 եզրակացությունը (**հատոր 5, գ.թ. 17, 25-39**):

#### **4. Վճարել դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սովյալ դեպքում պահատվության պայմանագրի առանձնահատկությունների վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանը, վերլուծելով պահարկության պայմանագրի առանձնահատկությունները, անհրաժեշտ է համարում անդարձառնալ մասնավորապես հետևյալ իրավական հարցադրումներին.*

- *ո՞ր դեպքերում պահարկն իրավունք ունի պահանջել հարսցելու ի պահ հանձնված գույքի արժեքը,*

- *նման դեպքերում ի՞նչ հանգամանքների հաշվառմամբ և ո՞ր պահի դրությամբ է որոշվում գույքի արժեքը,*

- *պայմանագրում հայտնի նշում առկա չլինելու դեպքում ի՞նչ հանգամանքների հաշվառմամբ է որոշվում գույքի՝ ի պահ հանձնելու պահի դրությամբ ոսնեցած վիճակը:*

#### **4.1 Քննելով Կազմակերպության վճարել բողոքը՝ Վճարել դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պարձառաքանությամբ.**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 813-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պահատվության պայմանագրով մի կողմը (պահատուն) պարտավորվում է պահել մյուս կողմի (պահատուի) կողմից իրեն հանձնված գույքը և այն վերադարձնել պահպանված վիճակում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 814-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պահատ-



վության պայմանագիրը պետք է կնքվի գրավոր:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պահատվության պայմանագրի հասարակ գրավոր ձևը համարվում է պահպանված, եթե գույքի ի պահ ընդունումը պահառուի կողմից հավաստված է պահատուիին՝

1) պահատվության ստացական, անդորրագիր, վկայագիր կամ պահառուի կողմից ստորագրված այլ փաստաթուղթ տրամադրելով.

2) գույքի ի պահ ընդունումը հավաստող մետաղանիշ (համար) կամ այլ նշան տալով, եթե գույքի ի պահ ընդունումը հաստատող այդպիսի ձևը նախատեսված է օրենքով կամ այլ իրավական ակտով կամ սովորական է տվյալ տեսակի պահատվության համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 700-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կապալի պայմանագրով մի կողմը (կապալառուն) պարտավորվում է մյուս կողմի (պատվիրատուի) առաջադրանքով կատարել որոշակի աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կապալի պայմանագիրը կնքվում է գրավոր: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ կապալի պայմանագրի առանձին տեսակների (կենցաղային կապալ, *շինարարական կապալ*, նախագծային և հետազոտական աշխատանքների կապալ, պետական կարիքների համար կապալային աշխատանքներ) նկատմամբ կիրառվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ գլխի 1-ին պարագրաֆի դրույթները, եթե այլ բան սահմանված չէ նույն օրենսգրքի՝ կապալի պայմանագրի համապատասխան տեսակների մասին կանոններով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 738-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կապալառուն, շինարարական կապալի պայմանագրով, պարտավորվում է պայմանագրում սահմանված ժամկետում պատվիրատուի առաջադրանքով կառուցել որոշակի օբյեկտ կամ կատարել շինարարական այլ աշխատանքներ, իսկ պատվիրատուն պարտավորվում է կապալառուի համար ստեղծել աշխատանքը կատարելու համար անհրաժեշտ պայմաններ, ընդունել դրա արդյունքը և վճարել պայմանավորված գինը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ շինարարական կապալի պայմանագիրը կնքվում է շենքի (ներառյալ՝ բնակելի տան), շինության կամ այլ օբյեկտի շինարարության, ինչպես նաև կառուցվող օբյեկտի հետ անխզելիորեն կապված մոնտաժման, գործարկման, կարգավորիչ և այլ աշխատանքներ կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 741-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կապալառուն պարտավոր է շինարարությունը և դրա հետ կապված աշխատանքներն իրականացնել աշխատանքի ծավալը, բովանդակությունն ու դրան ներկայացվող այլ պահանջները սահմանող նախագծային փաստաթղթերին և աշխատանքի գինը որոշող նախահանձնի համապատասխան (...): Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ շինարարական կապալի պայմանագրով պետք է սահմանված լինեն նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը, ինչպես նաև պետք է նախատեսված լինի, թե կողմերից որը ու ինչ ժամկետում պետք է ներկայացնի համապատասխան փաստաթղթերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանդես է գալիս որպես կառուցապատող (...):

(...) Կառուցապատողները պարտավոր են՝

ա) կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա, (...)

գ) քաղաքաշինական գործունեություն (բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) իրականացնել բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան,

դ) քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար ճարտարապետա-հատակագծային առաջադրանք, այդ թվում՝ ինժեներական ենթակառուցվածքների նա-

խագծման տեխնիկական պայմաններ ստանալ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններից, (...)

գ) ապահովել իրենց քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, (...):

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ շինարարություն իրականացնողները պարտավոր են՝

ա) ունենալ համապատասխան գործունեության իրավունքի լիցենզիա.

բ) շինարարության ընթացքում պահպանել հաստատված նախագծի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները (...):

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 22.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը (կամ նախագծման թույլտվությունը) փաստաթուղթ է, որը, հիմք ընդունելով համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի և քաղաքաշինական կանոնադրության պահանջները, սահմանում է քաղաքաշինական գործունեության տվյալ օբյեկտին ներկայացվող նախագծման պարտադիր պահանջները, պայմանները, այդ թվում՝ նույն օրենքի 6-րդ հոդվածի «դ» կետով սահմանված՝ քաղաքաշինական օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում և այլն) նախագծման տեխնիկական պայմանները (...) և սահմանափակումները:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պահատվության վերաբերյալ նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պահատվության հարաբերությունները ծագում են պահատուի կողմից պահառուին գույք հանձնելու պահից (ռեալ պայմանագիր), որից հետո պահառուի մոտ ծագում է գույքը պահելու և այն պահպանված վիճակում վերադարձնելու պարտականություն: Եթե պահառուն հատուկ սուբյեկտ չէ (մասնավորապես՝ արհեստավարժ պահառու) կամ պահատվության առանձին տեսակներ (օրինակ՝ պահատվությունն ապրանքային պահեստում, գրավատանը) առկա չեն, ապա որպես պահատվության հարաբերության կողմ կարող են հանդես գալ քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտները, իսկ պահատվության հարաբերությունները կծագեն պայմանագրի գրավոր ձևը պահպանված լինելու և գույքը հանձնված լինելու պայմաններում: Այսինքն՝ պահառուի և պահատուի իրավունքների և պարտականությունների ծագման համար լրացուցիչ պահանջներ պահպանելու անհրաժեշտություն չկա:

Մինչդեռ շինարարական կապալի վերաբերյալ նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Շինարարական կապալի առանձնահատկությունը նախևառաջ պայմանավորված է սուբյեկտային կազմով: Պայմանագրի կողմերն են կապալառուն և պատվիրատուն: Կապալառուն այն անձն է, որը մյուս կողմի համար նրա պատվերով կատարում է որոշակի աշխատանք, իսկ պատվիրատուն կապալառուին որոշակի աշխատանքի կատարում հանձնարարողն է: Ընդ որում, եթե պատվիրատու կարող է լինել ցանկացած անձ, ում մոտ անհրաժեշտություն է առաջացել կառուցելու որևէ օբյեկտ կամ կատարելու շինարարական այլ աշխատանք, ապա կապալառու կարող են լինել շինարարության բնագավառում գործող և շինարարական համապատասխան գործողություն իրականացնելու լիցենզիա ունեցող շինարարական, շինմոնտաժային, նախագծաշինարարական և այլ շինարարական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը (*յուեն, «ԱՎԱՈՆ» ՍՊԸ-ն ընդդեմ «ՌԱՄԷՕ-ՕՏԵԼ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ-2150/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շինարարական կապալի պայմանագրով կողմերի՝ մասնավորապես կապալառուի կողմից իր պարտականությունների կա-

տարման համար անհրաժեշտ է, որ կապալի պայմանագրից բացի, պատվիրատուն սահմանված կարգով ստացած լինի «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը (կամ նախագծման թույլտվությունը) և շինարարական թույլտվությունը, հակառակ պարագայում, անգամ կապալի պայմանագիրը սահմանված կարգով կնքված լինելու դեպքում, կապալառուն ոչ միայն իրավունք ունի, այլ նաև պարտավոր է չիրականացնել շինարարական աշխատանքները:

Ընդ որում, հաշվի առնելով, որ շինարարական կապալի պայմանագրի կապալի կողմերն առավելապես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտներ են, Վճռաբեկ դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ որպես ինքնուրույն, իրենց ռիսկով գործունեություն իրականացնողներ՝ նշված անձինք պարտավոր են ապահովել **միայն նման փաստաթղթերի առկայության դեպքում** շինարարական աշխատանքների կատարումը՝ կրելով նման պարտականությունը չկատարելու բացասական հետևանքները (ներառյալ՝ վարչական պատասխանատվությունը, ինքնակամ կառույցը քանդելու պարտականությունը և այլն):

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ 04.07.2001 թվականի Պահատվության պայմանագրով Ընկերությունը Կազմակերպության պահատվությանն է հանձնել 219 տոննա մետաղական կոնստրուկցիա: Նշված պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ Կազմակերպությունն ի պահ է ընդունում Ընկերությունից 219 տոննա մետաղական կոնստրուկցիա՝ **երաշխավորված լինելով, որ հետագայում մետաղական կոնստրուկցիաների մոնտաժային աշխատանքների կատարումը կհանձնարարվի իրեն** (վարձատրության մասին նախնական փոխհամաձայնության գալու պայմաններում): Նույն պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ **Ընկերությունը պարտավորվում է նշված աշխատանքների կատարումը հանձնարարել Կազմակերպությանը** (վարձատրության մասին նախնական փոխհամաձայնության գալու պայմաններում):

Ընկերությունը 22.02.2011 թվականին գրություն է ուղարկել Կազմակերպությանը՝ հայտնելով, որ համաձայն երկու ընկերությունների միջև 13.12.2000 թվականին կնքված շինարարության պայմանագրի՝ Ընկերության կողմից Կազմակերպությանն է հանձնվել 302 տոննա մետաղական կոնստրուկցիա: Քանի որ իրենց բոլոր նախնական պայմանավորվածությունները չեն կատարվել, խնդրել է վերադարձնել 04.07.2001 թվականի Պահատվության պայմանագրով հանձնված մետաղական կոնստրուկցիաները: Ընկերությունը նաև խնդրել է հնգօրյա ժամկետում վերադարձնել Ընկերությունից ստացած կանխավճարները՝ 25.12.2000 թվականի ստացականով՝ տասը հազար ԱՄՆ դոլարին համարժեք 5.499.800 ՀՀ դրամը և 10.01.2001 թվականի ելքի օրդերով՝ տասը հազար ԱՄՆ դոլարին համարժեք 5.539.400 ՀՀ դրամը: Բացի այդ, Կազմակերպության տնօրեն Վիլիկ Հախվերդյանի ստորագրությամբ «Ստացական» վերտառությամբ փաստաթղթի, ինչպես նաև 10.01.2001 թվականի թվագրությամբ Ընկերության դրամարկղային ելքի օրդերի համաձայն՝ Ընկերությունը Վիլիկ Հախվերդյանին տրամադրել է 10.000-ական ԱՄՆ դոլար՝ շինարարական աշխատանքների՝ մասնավորապես «Ուրարտու» հյուրանոցի կառուցման համար:

ՀՀ «Փորձաքննությունների Ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի եզրակացության համաձայն՝ «Երևաննախագիծ» ՊՓԲԸ-ի կողմից գծագրված «Ուրարտու» հյուրանոցային համալիրի գծագրով նախատեսված նախագիծը **համաձայնեցված չէ իրավասու մարմինների հետ**: Բացի այդ, փորձաքննությանը տրամադրված նյութերում բացակայում են շինարարական աշխատանքների փաստացի իրականացումը հաստատող փաստաթղթերը (համապատասխան ճարտարապետահատակագծային առաջադրանք, համաձայնեցված և հաստատված նախագիծ-նախահաշիվ, շինարարական թույլտվություն, կապալի պայմանագիր, շինարարության աշխատանքները հավաստող կատարողական և թաքնված աշխատանքների համապատասխան ակտեր):

Դատարանի 19.01.2016 թվականի որոշմամբ գործը **19.02.2016 թվականին** նշանակ-

վել է դատաքննության: Կազմակերպության ներկայացուցչի կողմից **23.05.2016 թվականին** Դատարան է ներկայացվել իր 02.02.2016 թվականի գրության հիման վրա «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 11.02.2016 թվականին իրականացված փաստաթղթաբանական փորձաքննության արդյունքում 23.02.2016 թվականին տրված թիվ 05581601 փորձագետի եզրակացությունը:

Կազմակերպությունը սույն գործով հայտնել է, որ իրականում Ընկերության և Կազմակերպության միջև ծագել են շինարարական կապալի հարաբերություններ, որի հիման վրա էլ Կազմակերպությունը վերանշակել է իրեն ի պահ հանձնված մետաղական կոնստրուկցիաները:

Սույն գործով Դատարանը, հայցը մասնակիորեն բավարարելով, արձանագրել է, որ կողմերի միջև սկզբնապես ծագել են պահատվության հարաբերություններ, միևնույն ժամանակ Կազմակերպությունը երաշխավորված է եղել, որ հետագայում մետաղական կոնստրուկցիաների մոնտաժային աշխատանքների կատարումը կհանձնարարվի իրեն, իսկ Ընկերությունը պարտավորվել է նշված աշխատանքների կատարումը հանձնարարել Կազմակերպությանը, որպիսի պայմաններում Դատարանը եզրահանգել է, որ «Երևաննախագիծ» ՊՓԲԸ-ի կողմից կազմված «Ուրարտու» հյուրանոցային համալիրի կառուցման նախագծով շինարարական աշխատանքները հանձնարարվել է Կազմակերպությանը: Դատարանը, հիմք ընդունելով Ընկերության կողմից Կազմակերպությանն ուղարկված գրությունները, Կազմակերպության տնօրենի ստորագրությամբ ստացականն ու դրամարկղային ելքի օրդերը, ինչպես նաև «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացությունը, գտել է, որ բացի պահատվության հարաբերություններից, հայցվոր և պատասխանող ընկերությունների միջև եղել են նաև կապալային հարաբերություններ: Ընդ որում, Դատարանը նշել է, որ մոնտաժային աշխատանքները կատարվել են մասնակի, քանի որ հետագայում համապատասխան կարգով չի հաստատվել «Երևաննախագիծ» ՊՓԲԸ-ի կողմից կազմված «Ուրարտու» հյուրանոցային համալիրի կառուցման նախագիծը:

Վերաքննիչ դատարանը, Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարելով, Դատարանի վճիռը բեկանելով և գործը նոր քննության ուղարկելով, նախ արձանագրել է, որ «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը պատվիրվել է, ձեռք է բերվել և Դատարան է ներկայացվել դատաքննության որոշման կայացումից հետո, որպիսի պարագայում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը վճիռի հիմքում դրել է ոչ թույլատրելի ապացույց՝ հաշվի չառնելով նաև այն, որ սույն գործը քննվում է 2011 թվականից, և պատասխանողը ոչ միայն գրկված չէր նշված ապացույցը նախապես ձեռք բերելու հնարավորությունից, այլ նաև գործի նախապատրաստության փուլում չի հայտնել նոր ապացույց ձեռք բերելու իր մտադրության մասին: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ընկերության կողմից Կազմակերպությանն ուղարկված գրությունները և Ընկերության կողմից Կազմակերպությանը գումար հանձնված լինելը հավաստող ապացույցները ոչ վերաբերելի են: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանի եզրահանգումն առ այն, որ Կազմակերպությունը երաշխավորված է եղել, որ հետագայում մետաղական կոնստրուկցիաների մոնտաժային աշխատանքների կատարումը կհանձնարարվի իրեն, ըստ էության իրավաչափ է և բխում է պայմանագրի բովանդակությունից: Սակայն որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույցներ Դատարան չեն ներկայացվել այն մասին, որ կողմերը եկել են վարձատրության մասին նախնական փոխհամաձայնության և ըստ այդմ՝ Ընկերությունը Կազմակերպությանը հանձնարարել է որևէ աշխատանքի կատարում, և վերջինիս կողմից կատարվել է որևէ աշխատանք: Ուստի Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ պատասխանողի կողմից ներկայացված և Դատարանի կողմից հիմք ընդունված ապացույցներով չէր կարող հիմնավորվել կողմերի միջև կապալի հարաբերությունների առկայությունը՝ նաև հաշվի առնելով, որ կապալի պայմանագիրը կնքվում է գրավոր, սույն դեպքում գրավոր պայմանագիր առկա չէ, իսկ նշված ապացույցները բավարար և վերաբերելի չեն կողմերի միջև գրավոր գործարք կնքված լինելը հաստատելու համար: Հետևաբար Վերաքննիչ դատարանի գնահատմամբ կողմերի միջև առկա են միայն պահատվու-

թյան հարաբերություններ:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայականչաժ փաստերը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ մինչև դատաքննությունը պարտավոր է գործին մասնակցող մյուս անձանց առջև բացահայտել տվյալ պահին իրեն հայտնի այն ապացույցները, որոնց վրա նա հղում է կատարում որպես իր պահանջների և առարկությունների ապացուցման հիմք, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն հղում կատարելու միայն այն ապացույցների նկատմամբ, որոնց հետ գործին մասնակցող մյուս անձինք նույն օրենսգրքով սահմանված կարգով ծանոթացել են նախօրոք:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Նույն հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ դատաքննությունն սկսվելուց հետո գործին մասնակցող անձի ներկայացրած լրացուցիչ ապացույցներն ընդունում է դատարանը, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է մինչև դատաքննությունը սկսվելը նման ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով: Եթե գործին մասնակցող մյուս անձինք նախապես ստացած չեն լինում դատաքննության ընթացքում ներկայացված լրացուցիչ ապացույցը, ապա դատարանը պարտավոր է գործին մասնակցող անձանց տրամադրել ողջամիտ ժամկետ՝ ապացույցին ծանոթանալու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*յրեն, Էդգար Մարկոսյանը և Զարոհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Սարգսյանի թիվ ԵԱԾԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզումները (*յրեն, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԾԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապա-

ցույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (յրեն, *Սվեդլանա Տոլիկյանն ընդդեմ Անահիպ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, վերլուծելով վկայակոչված քաղաքացիադատավարական իրավանորմերը, արձանագրում է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ գործին մասնակցող անձինք պարտավոր են ապացույցները ներկայացնել առաջին ատյանի դատարանում մինչև դատաքննությունը սկսվելը: Օրենսդիրը վերը նշված ընդհանուր կանոնից բացառություն նախատեսել է այն դեպքի համար, երբ գործին մասնակցող անձը հիմնավորում է մինչև դատաքննությունը սկսվելը նման ապացույցի ներկայացման անհնարիությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Վերոգրյալ վերլուծության հիման վրա անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը սույն գործով ոչ թույլատրելի ապացույց է, Վճռաբեկ դատարանն այն հիմնավոր է համարում՝ նկատի ունենալով, որ Կազմակերպությունը չի հիմնավորել նախքան դատաքննությունը նշված ապացույցը ձեռք բերելու անհնարիությունը: Ավելին, Կազմակերպությունը նշված ապացույցները ձեռք բերելուն ձեռնամուխ է եղել դատաքննության նշանակումից հետո՝ գրկված չլինելով ավելի վաղ դրանք ստանալու հնարավորությունից: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունը նշված ապացույցի անթույլատրելիության վերաբերյալ հիմնավոր է:

Անդրադառնալով գործում առկա այլ ապացույցներով կապալի հարաբերությունների առկայությունը հաստատված լինելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընգծել, որ կողմերի միջև գրավոր պայմանագրի ձևով կնքվել է պահատվության պայմանագիր, որում նախատեսվել է **միայն հնարավորություն** ապագայում կապալի հարաբերությունների ծագման վերաբերյալ: Սույն գործում առկա չէ ոչ միայն կապալի պայմանագիր կամ կողմերի հետագա համաձայնություն՝ կապալի հարաբերությունների վերաբերյալ, այլ նաև առկա չեն շինարարական կապալի իրականացման համար անհրաժեշտ շինարարական փաստաթղթերը: Գործում առկա գրավոր ապացույցներով հիմնավորվում է, որ Ընկերության կողմից Կազմակերպության տնօրեն Վիլիկ Հախվերդյանին ենթադրյալ շինարարության համար կանխավճարներ տրամադրվել են դեռ մինչև պահատվության պայմանագրի կնքումը: Ավելին, անգամ հյուրանոցի կառուցման համար գումար փոխանցած լինելը դեռևս չի վկայում կողմերի միջև շինարարական կապալի հարաբերություններից ծագող իրավունքների և պարտականությունների ծագման մասին՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կազմակերպությունը՝ որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտ, պարտավոր էր տեղյակ լինել շինարարության իրականացման համար անհրաժեշտ պայմանների մասին, և կրում է առանց շինարարական փաստաթղթերի առկայության ենթադրաբար շինարարություն իրականացնելու բացասական հետևանքների ռիսկը: Նման պայմաններում եթե անգամ Կազմակերպությունը հետագայում հյուրանոց կառուցելու նպատակով վերամշակել է մետաղական կոնստրուկցիաները, ապա կրում է դրա բացասական հետևանքների ռիսկը՝ նկատի ունենալով, որ շինարարական կապալի հարաբերությունները լիարժեքորեն չեն կարող ծագել առանց շինարարական համապատասխան փաստաթղթերի առկայության: Ուստի, հաշվի առնելով սույն գործով կապալի հարաբերությունների հաստատման համար անհրաժեշտ ապացույցների բացակայությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կողմերի միջև ծագել են միայն պահատվության հարաբերություններ, քանի որ կապալի հարաբերությունների առկայության մասին վկայակոչող կողմը՝ Կազմակերպությունը, չի ներկայացրել անհրաժեշտ և բավարար ապացույցներ՝ նշված հանգամանքի առկայությունը հաստատված համարելու համար:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կազմակերպության վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով չի հիմնավորվում Վերաքննիչ դատարանի

կողմից թույլ տրված դատական սխալի առկայությունը, ուստի՝ Կազմակերպության բողոքը ենթակա է մերժման:

**4.2 Քննելով Ընկերության վճարելի բողոքը՝ Վճարելի դապարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հեղուկ պայմանաբանությամբ.**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 816-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պահառուն պարտավոր է գույքը պահել պահատվության պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պահառուն պարտավոր է գույքը պահել մինչև պահատուն այն կպահանջի, եթե պահատվության ժամկետը նախատեսված չէ պայմանագրով և չի կարող որոշվել՝ ելնելով դրա պայմաններից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 817-րդ հոդվածի համաձայն՝ պահատվության պայմանագրով ուղղակի նախատեսված դեպքերում, մեկ պահատուի ի պահ ընդունած գույքը կարող է խառնվել այլ պահատուներից նույն տեսակի և որակի ի պահ ընդունած գույքի հետ (**դիմագրված պահատվություն**): Այդ դեպքում պահատուին վերադարձվում է հավասար կամ կողմերի պայմանավորված քանակությամբ նույն տեսակի և որակի գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 818-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ի պահ ընդունված գույքի պահպանվածության ապահովման համար պահառուն պարտավոր է ձեռնարկել պահատվության պայմանագրով նախատեսված բոլոր միջոցները: Պայմանագրում այդպիսի միջոցների մասին պայմանների բացակայության կամ այդ պայմանները լրիվ չլինելու դեպքում, պահառուն գույքի պահպանվածություն ապահովելու նպատակով պետք է ձեռնարկի գործարար շրջանառության սովորույթներին և պարտավորության էությանը՝ ներառյալ ի պահ հանձնված գույքի հատկություններին, համապատասխանող միջոցներ, եթե նման միջոցներ ձեռնարկելը բացառված չէ պայմանագրով: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե պահատվությունն իրականացվում է անհատույց, պահառուն պարտավոր է ի պահ ընդունված գույքի համար հոգ տանել ոչ պակաս, քան իր գույքի համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 819-րդ հոդվածի համաձայն՝ պահառուն **իրավունք չունի առանց պահատուի համաձայնության օգտվել** ի պահ հանձնված գույքից, ինչպես նաև դրանից օգտվելու հնարավորություն ընձեռել երրորդ անձանց, բացառությամբ այն դեպքի, երբ պահվող գույքից օգտվելն անհրաժեշտ է դրա պահպանվածությունն ապահովելու համար և չի հակասում պահատվության պայմանագրին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 820-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե պահատվության ժամանակ առաջացել է գույքի փչացման իրական վտանգ, կամ գույքն արդեն փչացել է, կամ առաջ են եկել դրա պահպանվածությունն ապահովելու հնարավորությունը բացառող հանգամանքներ, իսկ պահատուի կողմից ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելն անհնար է, պահառուն իրավունք ունի **պահատվության վայրում գոյություն ունեցող** գնով ինքնուրույն վաճառել գույքը կամ դրա մի մասը (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 822-րդ հոդվածի համաձայն՝ **պահառուն իրավունք չունի առանց պահատուի համաձայնության գույքը ի պահ հանձնել երրորդ անձին**, բացառությամբ այն դեպքերի, երբ նա ստիպված է դա կատարել հանգամանքների ուժով՝ պահատուի շահերից ելնելով, և գրկված է նրա համաձայնությունն ստանալու հնարավորությունից, եթե այլ բան նախատեսված չէ պահատվության պայմանագրով: Պահառուն պարտավոր է անհապաղ ծանուցել պահատուին գույքը երրորդ անձին ի պահ հանձնելու մասին: Գույքը երրորդ անձին ի պահ հանձնելու դեպքում պահատուի և սկզբնական պահառուի միջև պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը, և վերջինս պատասխանատվություն է կրում երրորդ անձի, որին նա ի պահ է հանձնել գույքը, գործողությունների համար, ինչպես իր սեփականի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 826-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պահատուի կողմից ի պահ հանձնված գույքը հետ վերցնելու պարտականությունը չկատարելու՝ ներառյալ գույքն ստանալուց խուսափելու դեպքում, պահառուն իրավունք ունի պահատուին գրավոր նախազգուշացնելուց հետո, ինքնուրույն վաճառել գույքն **այն գնով, որը**

**գոյություն ունի պահատվության վայրում (...):**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 827-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պահառուն պարտավոր է պահատուին կամ նրա կողմից որպես ստացող նշված անձին վերադարձնել հենց այն գույքը, որը հանձնված է եղել իրեն ի պահ, եթե պայմանագրում նախատեսված չէ դիմազրկմամբ պահատվություն (հոդված 817): Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պահառուն պետք է գույքը վերադարձնի **այն վիճակով**, որով նա ի պահ է ընդունել՝ հաշվի առնելով դրա բնականոն վատթարացումը, նվազելը կամ գույքի բնական հատկությունների հետևանքներով առաջացած այլ փոփոխություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 828-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պահառուն, նույն օրենսգրքի 417-րդ հոդվածով նախատեսված հիմքերով, պատասխանատվություն է կրում ի պահ ընդունված գույքի կորստի, պակասորդի կամ վնասվածքի համար (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 829-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գույքի կորստի, պակասորդի կամ վնասվածքի հետևանքով պահատուին պատճառված վնասները հատուցում է պահառուն՝ նույն օրենսգրքի 409-րդ հոդվածին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պահատվության պայմանագրով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անհատույց պահատվության դեպքում գույքի կորստի, պակասորդի կամ վնասվածքի հետևանքով պահատուին պատճառված վնասները հատուցվում են՝

1) գույքի կորստի կամ պակասորդի համար՝ կորած կամ պակասած գույքի արժեքի չափով:

2) գույքի վնասվածքի համար՝ դրա արժեքի նվազած մասի չափով:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ վնասվածքի հետևանքով, որի համար պատասխանատվություն է կրում պահառուն, գույքի որակն այնքան է փոխվել, որ այն չի կարող օգտագործվել իր սկզբնական նշանակությանը համապատասխան, պահատուն իրավունք ունի հրաժարվել գույքից և պահառուից պահանջել այդ գույքի արժեքը, ինչպես նաև հատուցելու այլ վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պահատվության պայմանագրով:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում առանձնացնել պահատվության պայմանագրի հիմնական առանձնահատկությունները: Այսպես, պահատվության պայմանագրի կողմերը, ինչպես արդեն նշվել է, պահատուն և պահառուն են: Պահատվության պայմանագրի առարկան գույքը պահելու ծառայությունն է, պայմանագրի օբյեկտը՝ ի պահ հանձնված գույքը: Պահատվության օբյեկտ կարող են լինել ինչպես անհատապես, այնպես էլ տեսակկանխիշով որոշվող իրերը: Պահատվության օբյեկտի տեսակը կարող է պայմանավորել նաև պահատվության տեսակը՝ նկատի ունենալով, որ պահառուն պարտավոր է պահատուին կամ նրա կողմից որպես ստացող նշված անձին վերադարձնել **հենց այն գույքը, որը հանձնված է եղել իրեն ի պահ**, եթե պայմանագրում նախատեսված չէ դիմազրկմամբ պահատվություն: Հետևաբար, որպես կանոն, պահառուն պարտավոր է վերադարձնել հենց նույն գույքը, որը նշված է պահատվության պայմանագրում:

Պահատվության պայմանագրի գործողության ընթացքում պահառուն պարտավոր է ապահովել գույքի ամբողջականությունը, պահպանվածությունը՝ ձեռնարկելով սահմանված համապատասխան միջոցները: Նկատի ունենալով, որ պահատվության դեպքում պահառուին փոխանցվում է միայն տիրապետման իրավագործություն, պահառուն իրավունք չունի օգտվել իրեն ի պահ հանձնված գույքից կամ տնօրինել այն՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Վճռաբեկ դատարանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ օրենսդիրն արգելում է պահառուին գույքն ի պահ հանձնել այլ անձի՝ առանց պահատուի համաձայնության, բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 822-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Նշված նորմը նույնպես բխում է ի պահ հանձնված գույքի պահպանվածության ապահովման՝ պահառուի պարտականությունից, ուստի պատահական չէ, որ գույքը երրորդ անձին ի պահ հանձնելու դեպքում սկզբնական պահառուն պատասխանատվություն է կրում երրորդ անձի, որին նա ի պահ է հանձնել գույքը, գործողությունների հա-



մար, ինչպես իր սեփականի: Ընդ որում, գույքի կորստի, պակասորդի կամ վնասվածքի համար պահառուն կրում է պատասխանատվություն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածին համապատասխան:

Ամփոփելով վերը նշված վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պահառուի հիմնական պարտականություններն են՝ պահատվության ընթացքում ապահովել գույքի պահպանվածությանը՝ հոգ տանելով դրա մասին, չօգտվելով դրանից, պահատվության պարտականությունը կատարել անձամբ, ինչպես նաև պահատուին վերադարձնել ի պահ հանձնված գույքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված նորմերի վերլուծության արդյունքում անդրադառնալով գույքը վերադարձնելու պահառուի պարտականությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

1. որպես կանոն, պահառուն պարտավոր է վերադարձնել նույն գույքը,

2. դիմագրվմամբ պահատվության դեպքում պահառուն պարտավոր է վերադարձնել նույն տեսակի և որակի գույք,

3. պահառուն գույքը պետք է վերադարձնի սկզբնական վիճակով՝ հաշվի առնելով դրա բնականոն վատթարացումը, նվազելը կամ գույքի բնական հատկությունների հետևանքներով առաջացած այլ փոփոխություններ,

4. ի պահ հանձնված գույքի կորստի, պակասորդի կամ վնասվածքի համար պատասխանատվություն է կրում պահառուն և պարտավոր է պահատուին հատուցել պատճառված վնասները (այդ թվում՝ բաց թողնված օգուտը)՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 409-րդ հոդվածի հաշվառմամբ, եթե պահատվությունը հատուցելի է,

5. անհատույց պահատվության դեպքում գույքի կորստի, պակասորդի կամ վնասվածքի հետևանքով պահատուին պատճառված վնասները հատուցվում են՝

1) գույքի կորստի կամ պակասորդի համար՝ կորած կամ պակասած գույքի արժեքի չափով.

2) գույքի վնասվածքի համար՝ դրա արժեքի նվազած մասի չափով,

6. այն դեպքում, երբ վնասվածքի հետևանքով, որի համար պատասխանատվություն է կրում պահառուն, գույքի որակն այնքան է փոխվել, որ այն չի կարող օգտագործվել իր սկզբնական նշանակությանը համապատասխան, պահատուն իրավունք ունի հրաժարվել գույքից և պահառուից պահանջել այդ գույքի արժեքը, ինչպես նաև հատուցելու այլ վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պահատվության պայմանագրով:

Վերոշարադրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում անդրադառնալով նշված վերջին իրավիճակին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ որպես պարտավորությունը բնեղենով կատարելու սկզբունքի դրսևորում (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 412-րդ հոդված)՝ ի պահ հանձնված գույքը միշտ պետք է վերադարձվի պահատուին՝ անհրաժեշտության դեպքում հատուցելով պատճառված վնասները: Այդուհանդերձ, օրենսդիրը բացառություն է նախատեսել այն դեպքի համար, երբ գույքը վնասվածքի հետևանքով այնքան է փոխվել, որ չի կարող օգտագործվել իր սկզբնական նշանակությանը համապատասխան:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն դեպքերին, երբ պահատվության պայմանագրով ի պահ հանձնված գույքը վերադարձնելու պահի դրությամբ գույքն ընդհանրապես առկա չէ կամ վիճելի է գույքի փաստացի առկայությունը:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով օրենսդրի տրամաբանությունը՝ մասնավորապես այն հանգամանքը, որ գույքի կորստի դեպքում վնասները հատուցվում են առնվազն գույքի արժեքի չափով (հատուցելի պահատվության դեպքում կարող են հատուցվել նաև այլ վնասներ), ինչպես նաև հաշվի առնելով պահատուին տրված իրավունքը՝ հրաժարվել գույքից, գտնում է, որ ոչ միայն այն դեպքերում, երբ գույքը փաստացի առկա է, սակայն էականորեն վնասված է, կամ ապացուցված է, որ պահառուի վարքագիծը հանգեցրել է գույքի կորստի, այլ նաև այն դեպքերում, երբ վիճելի է մնում ի պահ հանձնված գույքի՝ վերադարձնելու պարտականության ծագման պահի դրությամբ փաստացի

գոյությունը, ապա պահատուն իրավունք ունի նաև նշված դեպքում հրաժարվել գույքը վերադարձնելու պահանջից և պահանջել հատուցել գույքի վնասները՝ մասնավորապես գույքի արժեքը:

Անդրադառնալով գույքի արժեքը որոշելու հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 827-րդ հոդվածին համապատասխան **նույն վիճակով** գույքը վերադարձնելու պահառուի պարտականությունը կատարած լինելը գնահատելիս հաշվի է առնվում գույքի **բնականոն վատթարացումը, նվազելը կամ գույքի բնական հատկությունների հետևանքներով առաջացած այլ փոփոխություններ**: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 820-րդ և 826-րդ հոդվածները պահառուին իրավունք են վերապահում վաճառել ի պահ հանձնված գույքը համապատասխան հանգամանքներն ի հայտ գալու դեպքում **պահատվության վայրում գոյություն ունեցող գնով**: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պահատուին գույքի արժեքը հատուցելիս պետք է հաշվի առնվի նման պահանջի պահին, այլ ոչ թե պայմանագրի կնքման պահին գոյություն ունեցող գինը՝ նկատի ունենալով, որ եթե օրինակ պահառուն բարեխղճորեն կատարեր իր պարտականությունը, գույքն ամբողջական վիճակով վերադարձներ պահատուին, ապա պահատուի կողմից այդ գույքն օտարելիս պետք է հիմք ընդունվեր հենց տվյալ պահի դրությամբ գույքի շուկայական արժեքը: Ուստի, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն դեպքում, երբ պահատուն իրավունք ունի հրաժարվել գույքն ընդունելուց, նրան պետք է հատուցվի գույքի արժեքը պահատուի պահանջի պահի դրությամբ, եթե իհարկե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ գույքի վիճակի՝ մասնավորապես նախկինում օգտագործված լինելու կամ չլինելու վերաբերյալ վեճ առաջանալու այն դեպքերին, երբ հստակ չէ գույքի նախնական վիճակը: Նման վեճ հնարավոր է այն դեպքում, երբ պահատվության պայմանագրում նշում չկա գույքի անհատականացնող տվյալների՝ մասնավորապես գույքի վիճակի մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե պայմանագրով չի անհատականացվել գույքը, այդ թվում՝ չի նշվել գույքի նախնական վիճակը, ինչպես նաև այն հնարավոր չի որոշել պայմանագրի մեկնաբանման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով սահմանված կանոններից ելնելով, ապա պետք է գործի ի պահ հանձնված գույքը պատշաճ վիճակում գտնված լինելու կանխավարկածը՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նաև այլ պայմանագրային հարաբերությունները կարգավորող նորմերում առկա այն տրամաբանությունը, որ գույքը մյուս կողմին հանձնվում է պատշաճ վիճակում (օրինակ՝ վարձատուն, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 613-րդ հոդվածի համաձայն, պարտավոր է գույքը տրամադրել գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում, նույն օրենսգրքի 665-րդ հոդվածի համաձայն՝ բնակության համար պիտանի վիճակում, նույն օրենսգրքի 689-րդ հոդվածի համաձայն՝ փոխատուն նույնպես պարտավոր է գույքը տրամադրել գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում և այլն): Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր պայմանագրի դեպքում գույքի վիճակի պատշաճությունը գնահատվում է տվյալ պայմանագրի տեսակի առանձնահատկության հաշվառմամբ: Ընդ որում, եթե գույքի հանձնելու վերաբերյալ այլ պայմանագրերի դեպքում գույքի պատշաճ վիճակը պայմանավորված է նաև նրանով, որ որպես կանոն մյուս կողմին փոխանցվում է նաև գույքն օգտագործելու իրավագործությունը, պահատվության դեպքում գույքի վիճակի պատշաճությունը կարևորվում է հետագայում գույքը վերադարձնելիս վեճ առաջանալու հանգամանքով:

Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է նաև ի պահ հանձնված գույքը պահպանելու պարտականության և չպահպանելու հետևանքների վերաբերյալ սույն որոշմամբ արդեն իսկ քննարկված հստակ կարգավորումների առկայությամբ՝ նկատի ունենալով, որ օրենսդիրը կարևորել է պահառուի՝ ի պահ հանձնված գույքի պահպանվածության պարտականության կատարումը պահատվության պայմանագրի գործողության ընթացքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պահատվության պայմանագրում

այլ բան նախատեսված չլինելու պարագայում գործում է ի պահ հանձնված գույքն ի սկզբանե պատշաճ վիճակում հանձնված լինելու կանխավարկածը:

**Վճռարեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ 04.07.2001 թվականին կնքված Պահատվության պայմանագրի, դրան կից Սպեցիֆիկացիայի և նույն օրը կազմված ընդունման-հանձնման ակտի համաձայն՝ Ընկերությունը Կազմակերպությանը հանձնել է ի պահ 219 տոննա մետաղական կոնստրուկցիաներ, որոնց տեսակը, չափը և քանակը նշվել են Սպեցիֆիկացիայում: Կազմակերպության կողմից Ընկերությանն է վերադարձվել 4,643 տոննա մետաղական կոնստրուկցիա:

ՀՀ «Փորձաքննությունների Ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված լրացուցիչ դատաապրանքագիտական և դատատեխնիկական համալիր փորձաքննության արդյունքում կազմված Եզրակացության համաձայն՝ լիարժեք կերպով հնարավոր չէ պարզել «Եվրոպա» ՍՊԸ-ի տարածքում առկա, փորձաքննությամբ հետազոտման առարկա հանդիսացող մետաղական կոնստրուկցիաների, ինչպես նաև մետաղական հատվածների՝ **նախկինում օգտագործված լինելու հանգամանքը:** Ընդ որում, նաև հստակ հնարավոր չէ պարզել, թե նշված փորձաքննությամբ հետազոտման առարկա հանդիսացող «Եվրոպա» ՍՊԸ-ի և Կազմակերպության տարածքում գտնվող մետաղական կոնստրուկցիաները **հանդիսանում են արդյոք Ընկերության կողմից Կազմակերպությանը 04.07.2001 թվականի Պահատվության պայմանագրում և Սպեցիֆիկացիայում նշված մետաղական կոնստրուկցիաները, թե՛ ոչ:** Միաժամանակ Եզրակացության համաձայն՝ Կազմակերպության կողմից Ընկերությանը պակաս է վերադարձվել 97,3352 տոննա մետաղական կոնստրուկցիա (չհաշված Եվրոպա» ՍՊԸ-ի և Կազմակերպության տարածքում գտնվող խոտանված և ոչ խոտանված մետաղական կոնստրուկցիաները), որի միջին շուկայական արժեքը կազմում է 90.539.554 ՀՀ դրամ:

Սույն գործով Դատարանը հայցը մասնակիորեն բավարարելիս նախ նշել է, որ չնայած այն հանգամանքին, որ Հանձման-ընդունման ակտով, ինչպես նաև Սպեցիֆիկացիայով նշվել է, որ Կազմակերպությանը տրամադրվել է ընդհանուր 219 տոննա մետաղական կոնստրուկցիա, այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի, ինչպես նաև «ՀՀ «Կառուցագետ» անկախ փորձաքննությունների ազգային կենտրոն» ՍՊԸ-ի կողմից տրված փորձագետի եզրակացություններով նշվել է, որ մետաղական կոնստրուկցիաների ընդհանուր զանգվածն ավելացել է 11,322 տոննայով և արդյունքում ստացվել է 230,322 տոննա, հաստատված է համարել, որ Կազմակերպությանը տրամադրվել է ոչ թե 219 տոննա, այլ 230,322 տոննա մետաղական կոնստրուկցիա: Դատարանը գտել է, որ մետաղական կոնստրուկցիաները եղել են նախկինում օգտագործված՝ հիմք ընդունելով գործում առկա լուսանկարները, ինչպես նաև «ՀՀ «Կառուցագետ» անկախ փորձաքննությունների ազգային կենտրոն» ՍՊԸ-ի կողմից տրված փորձագետի եզրակացությունը: Անդրադառնալով խոտանված մետաղական կոնստրուկցիաներին՝ Դատարանը գտել է, որ Կազմակերպության կողմից կատարվել են մոնտաժային աշխատանքներ՝ հյուրանոցի կառուցման համար: Հիմք ընդունելով վերոգրյալ եզրակացությունը՝ Դատարանը գտել է, որ պակաս է վերադարձված 82,468 տոննա մետաղական կոնստրուկցիա, որից Դատարանը նվազեցրել է գրոյական մակարդակից ցածր տեղադրված 10,411 տոննա և վերադարձված 4,643 տոննա մետաղական կոնստրուկցիաների զանգվածը և հաստատված է համարել, որ Ընկերության կողմից Կազմակերպությանը հանձնված մետաղական կոնստրուկցիայից բացակա է ընդհանուր առմամբ 67,414 տոննա մետաղական կոնստրուկցիա: Մետաղական կոնստրուկցիաները համարելով նախկինում օգտագործված՝ Դատարանը, հիմք ընդունելով վերոնշյալ եզրակացությամբ սահմանված 1 տոննա մետաղական կոնստրուկցիայի՝ 217.300 ՀՀ դրամ միջին շուկայական արժեքը, գտել է, որ Կազմակերպությունից հօգուտ Ընկերության պե-

տք է բռնագանձել 14.649.062 ՀՀ դրամ (67,414\*217.300):

Վերաքննիչ դատարանը, քեկանելով Դատարանի վճիռը, «ՀՀ «Կառուցագետ» անկախ փորձաքննությունների ազգային կենտրոն» ՍՊԸ-ի կողմից տրված փորձագետի եզրակացությունը համարել է ոչ թույլատրելի ապացույց՝ նկատի ունենալով, որ այն ներկայացվել է դատաքննության փուլում՝ առանց հիմնավորելու մինչ այդ ներկայացնելու անհնարիությունը: Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել կողմերի միջև պահատվության հարաբերությունների առկայությունը և 230,32 տոննա մետաղական կոնստրուկցիա հանձնված լինելու, ինչպես նաև 4,643 տոննա մետաղական կոնստրուկցիա վերադարձված լինելու հանգամանքները: Վերաքննիչ դատարանն անհիմն է համարել Դատարանի հետևությունը՝ գրոյական մակարդակից ցածր 10,411 տոննա մետաղական կոնստրուկցիա տեղադրված լինելու հանգամանքը՝ այդպիսով եզրահանգելով, որ Ընկերությանը վերադարձման ենթակա մետաղական կոնստրուկցիայի քաշը կազմում է 225,679 տոննա: Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործով չի հիմնավորվել կողմերի միջև կապալի հարաբերությունների առկայությունը և համապատասխան քանակով և քաշով մետաղական կոնստրուկցիաների՝ շինարարության մեջ օգտագործված լինելու և վերադարձման ենթակա չլինելու կամ Ընկերության հանձնարարությամբ դրանք վերամշակման ենթարկված լինելու հանգամանքները, իսկ Կազմակերպությունը չի ներկայացրել որևէ ապացույց, որ վերադարձրել է Սպեցիֆիկացիայում նշվածին համապատասխան մետաղական կոնստրուկցիա: Ուստի, հաշվի առնելով, որ 225,679 տոննա մետաղական կոնստրուկցիայից «Եվրոպա» ՍՊԸ-ի և Կազմակերպության տարածքում առկա է միայն մի մասը, այն էլ պարզ չէ, թե արդյոք առկա մետաղական կոնստրուկցիաներն այն նույն մետաղական կոնստրուկցիաներն են, որոնք ի պահ են հանձնված եղել 2001 թվականին, թե՛ ոչ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը պետք է Կազմակերպությունից հօգուտ Ընկերության բռնագանձեր ի պահ հանձնված գույքի արժեքը: Անդրադառնալով մետաղական կոնստրուկցիաները նախկինում օգտագործված լինելու կամ չլինելու հարցին՝ Վերաքննիչ դատարանը նախ հայտնել է, որ փորձագետը չէր կարող եզակացություն տալ այն մասին, թե 2001 թվականին ի պահ հանձնված մետաղական կոնստրուկցիաները եղել են օգտագործված, թե՛ ոչ, և գտել է, որ ի պահ հանձնված մետաղական կոնստրուկցիաները նախկինում օգտագործված լինելու կամ չլինելու և վճարման ենթակա գումարի չափը ճիշտ որոշելու մասով առկա է սույն գործի նոր քննության անհրաժեշտություն:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Կազմակերպության վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում արդեն Վճռաբեկ դատարանը հաստատված է համարել, որ սույն գործով կողմերի միջև առկա են եղել միայն պահատվության հարաբերություններ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով կողմերի միջև պահատվության հարաբերությունների ծագման համար հիմք հանդիսացած գրավոր ապացույցներում՝ Պահատվության պայմանագրում, Սպեցիֆիկացիայում և Ընդունման-հանձնման ակտում, որպես մետաղական կոնստրուկցիայի քաշ, նշված է 219 տոննա: Հետևաբար, հատկապես հաշվի առնելով, որ պայմանագրի երկու կողմերն էլ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտներ են, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է հաստատված համարել, որ ի պահ հանձնված գույքը եղել է 219 տոննա՝ նկատի ունենալով, որ ինչպես Կազմակերպությունը, այնպես էլ Ընկերությունը կրում են իրենց իրականացրած գործունեության ռիսկը, և պայմանագրի կնքելիս, կանխատեսելով հետագա հնարավոր վեճերը, պարտավոր էին բավարար չափով հոգացություն դրսևորել և արձանագրել մետաղական կոնստրուկցիայի իրական քաշը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հիմնավորված է 04.07.2001 թվականի Պահատվության պայմանագրով Ընկերության կողմից Կազմակերպությանը 219 տոննա մետաղա-

կան կոնստրուկցիա հանձնված լինելու հանգամանքը:

Անդրադառնալով ի պահ հանձնված գույքն Ընկերությանը վերադարձրած լինելու հանգամանքին՝ սույն գործում առկա ապացույցներով հիմնավորվում է, որ վերադարձվել է միայն 4,643 տոննա մետաղական կոնստրուկցիա: Վճարել նատարանի նման հետևությունը պայմանավորված է նրանով, որ նշված հանգամանքի ապացուցման պարտականությունը կրող անձը՝ Կազմակերպությունն անհրաժեշտ և բավարար ապացույցներ չի ներկայացրել այն մասին, որ 4,643 տոննայից բացի այլ քանակությամբ մետաղական կոնստրուկցիա է վերադարձրել Ընկերությանը: Ինչ վերաբերում է «ՀՀ «Կառուցագետ» անկախ փորձաքննությունների ազգային կենտրոն» ՍՊԸ-ի կողմից տրված փորձագետի եզրակացությանը, ապա Վճարել նատարանն այն դիտում է ոչ թույլատրելի ապացույց՝ այն նույն հիմնավորմամբ, ինչ Ընկերության վճարել բողոքը քննելիս նշել է «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացության կապակցությամբ:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճարել նատարանը կարևորում է այն հանգամանքը, որ Կազմակերպությունն իրավունք չունի գույքն առանց Ընկերության համաձայնության հանձնել այլ անձի (ենթադրաբար՝ «Եվրոպա» ՍՊԸ-ի) պահատվությանը, ուստի նման պայմաններում կրում է նման վարքագծի բացասական հետևանքների ռիսկը: Բացի այդ, Վճարել նատարանը կարևորում է, որ ՀՀ «Փորձաքննությունների Ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացության համաձայն՝ հստակ հնարավոր չէ պարզել, թե նշված փորձաքննությամբ հետազոտման առարկա հանդիսացող «Եվրոպա» ՍՊԸ-ի և Կազմակերպության տարածքում գտնվող մետաղական կոնստրուկցիաները **հանդիսանում են արդյոք Ընկերության կողմից Կազմակերպությանը հանձնված 04.07.2001 թվականի Պահատվության պայմանագրում և Սպեցիֆիկացիայում նշված մետաղական կոնստրուկցիաները, թե՛ ոչ:** Հետևաբար, վերոգրյալի հիման վրա Վճարել նատարանն արձանագրում է, որ վիճելի է մնացել Կազմակերպության կողմից Ընկերությանը գույքը վերադարձրած լինելու հանգամանքը, որպիսի պարագայում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի հիմքով Կազմակերպությունն է կրում այդ փաստի չապացուցման բացասական հետևանքները: Այսպիսով՝ Կազմակերպության կողմից Ընկերությանը վերադարձման է ենթակա 214,357 տոննա (219-4,643) մետաղական կոնստրուկցիա:

Նկատի ունենալով, որ սույն գործով վիճելի է մնացել վերադարձման ենթակա մետաղական կոնստրուկցիաների փաստացի գոյություն ունենալու հանգամանքը, Վճարել նատարանը, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, գտնում է, որ Ընկերությունն իրավունք ունի հրաժարվել գույքից և պահանջել գույքի արժեքը:

Անդրադառնալով մետաղական կոնստրուկցիաները նախկինում օգտագործված լինելու կամ չլինելու հարցին՝ Վճարել նատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ «Փորձաքննությունների Ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված լրացուցիչ դատաապրանքագիտական և դատատեխնիկական համալիր փորձաքննության արդյունքում կազմված եզրակացության համաձայն՝ լիարժեք կերպով հնարավոր չէ պարզել «Եվրոպա» ՍՊԸ-ի տարածքում առկա, փորձաքննությամբ հետազոտման առարկա հանդիսացող մետաղական կոնստրուկցիաների, ինչպես նաև մետաղական հատվածների՝ **նախկինում օգտագործված լինելու հանգամանքը:** Հետևաբար, այլ ապացույց ներկայացված չլինելու պայմաններում պետք է համարել, որ մետաղական կոնստրուկցիաները նախկինում օգտագործված չեն եղել՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ինչ վերաբերում է մետաղական կոնստրուկցիաների արժեքին, ապա Վճարել նատարանը հիմք է ընդունում ՀՀ «Փորձաքննությունների Ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից վերադարձման ենթակա մետաղական կոնստրուկցիաների միջին շուկայական գինը, որը որոշվել է փորձաքննության կատարման պահի դրությամբ չօգտագործված մետաղական կոնստրուկցիաների գնով: Նշված եզրակացության համաձայն՝ Կազմակերպության կողմից Ընկերությանը պակաս է վերադարձվել 97,3352 տոննա մետաղական կոնստրուկցիա, որի միջին շուկայական արժեքը կազմում է 90.539.554 ՀՀ դրամ: Հետևաբար,

հիմք ընդունելով նշված ելակետային տվյալները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կազմակերպության կողմից Ընկերությանը պակաս վերադարձված մետաղական կոնստրուկցիայի մեկ տոննայի միջին շուկայական արժեքը կազմում է 930.183 ՀՀ դրամ (90.539.554:97,3352): Հետևաբար, Կազմակերպության կողմից Ընկերությանը պակաս վերադարձված մետաղական կոնստրուկցիաների ընդհանուր շուկայական արժեքը կազմում է 199.391.237,3 ՀՀ դրամ (214,357\*930.183):

Նման պայմաններում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի հետևությանն այն մասին, որ ի պահ հանձնված մետաղական կոնստրուկցիաները նախկինում օգտագործված լինելու կամ չլինելու և վճարման ենթակա գումարի չափը ճիշտ որոշելու մասով առկա է սույն գործի նոր քննության անհրաժեշտություն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր չէ, նախ քանի որ գործում առկա ապացույցները՝ մասնավորապես Պահատվության պայմանագիրը, Սպեցիֆիկացիան, Ընդունման-հանձնման ակտը, նշում չեն պարունակում այն մասին, որ ի պահ են հանձնվում օգտագործված մետաղական կոնստրուկցիաներ: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանը, իր իսկ որոշմամբ նշելով, որ փորձագետը չի կարող եզրակացություն տալ այն մասին, թե 2001 թվականին ի պահ հանձնված մետաղական կոնստրուկցիաները եղել են օգտագործված, թե՛ ոչ, միևնույն ժամանակ հակասելով իր պատճառաբանությանը՝ նույն հարցը պարզելու նպատակով գտել է, որ այդ հիմքով անհրաժեշտ է իրականացնել գործի նոր քննություն: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ մետաղական կոնստրուկցիան օգտագործված լինելու մասին փաստը վկայակոչող կողմը՝ Կազմակերպությունը, անհրաժեշտ և բավարար ապացույցներ չի ներկայացրել այդ փաստի ապացուցման մասին, ուստի կրում է բացասական հետևանքների ռիսկը: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը, ի պահ հանձնված մետաղական կոնստրուկցիաները նախկինում օգտագործված լինելը կամ չլինելը և, ըստ այդմ, վճարման ենթակա գումարի չափը ճիշտ որոշելը պարզելու համար անհրաժեշտ համարելով գործի նոր քննություն, թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջների խախտում:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության հայցը հիմնավոր և բավարարման ենթակա էր մասնակիորեն, մինչդեռ ստորադաս դատարանները նյութական նորմերի սխալ կիրառության, արդյունքում նաև՝ դատավարական նորմի խախտման հետևանքով սխալ եզրահանգման են եկել գործի ելքի վերաբերյալ:

Այսպիսով, Ընկերության վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշ-

ման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճարել դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումներին, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճարելի բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճարելի բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» կետի համաձայն՝ դատական ակտերի դեմ վճարելի բողոքների համար պետական տուրքը գանձվում է գուքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

Սույն գործով նկատի ունենալով, որ Կազմակերպության վճարելի բողոքը ենթակա է մերժման, Կազմակերպության կողմից վճարելի բողոքի համար վճարվել է 20.000 ՀՀ դրամ, իսկ պետական տուրքի մնացած մասը հետաձգվել է ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 02.06.2017 թվականի որոշմամբ, ինչպես նաև հաշվի առնելով գույքային պահանջներով վճարելի բողոք ներկայացնելու համար պետական տուրքի առավելագույն չափը, Կազմակերպությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 980.000 ՀՀ դրամ (1.000.000-20.000)՝ որպես Կազմակերպության վճարելի բողոքի համար սահմանված և ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 02.06.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար:

Նկատի ունենալով, որ Ընկերության վճարելի բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, Վերաքննիչ դատարանի որոշումը՝ բեկանման և փոփոխման, իսկ հայցը՝ մասնակիորեն բավարարման, Վճարելի դատարանը գտնում է, որ Կազմակերպությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 3.987.824,7 ՀՀ դրամ (199.391.237,3\*2%)՝ որպես բավարարված հայցապահանջի մասով հայցադիմումը դատարան ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի գումար: Ընկերությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 297.272,6 ՀՀ դրամ (14.863.633,7\*2%)՝ որպես մերժված հայցապահանջի մասով հայցադիմումը դատարան ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի գումար:

Ընկերությունը վերաքննիչ բողոքի համար վճարել է 400.000 ՀՀ դրամ, իսկ պետական տուրքի մնացած մասը հետաձգվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.08.2016 թվականի որոշմամբ, հետևաբար՝ Ընկերությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 45.909 ՀՀ դրամ (14.863.633,7\*3%-400.000)՝ որպես մերժված հայցապահանջի մասով վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար: Կազմակերպությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 5.981.737 (199.391.237,3\*3%) ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջի մասով վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար:

Նկատի ունենալով վճարելի բողոքի համար սահմանված պետական տուրքի առա-

վելագույն չափը՝ Կազմակերպությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 850.000 ՀՀ դրամ (1.000.000–150.000)՝ որպես Ընկերության վճարելի բողոքի համար սահմանված և ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 06.05.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար՝ հաշվի առնելով, որ Ընկերության կողմից վճարելի բողոքի համար վճարվել է 150.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար:

Բացի այդ, Կազմակերպությունից հոգուտ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի, որպես կատարված փորձաքննությունների համար վճարման ենթակա գումար, ենթակա է բռնագանձման 88.200 ՀՀ դրամ և 102.900 ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2–րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. «Հախվերդյան Շինմոնտաժ» ԲԲԸ-ի վճարելի բողոքը մերժել:

2. «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ի վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.12.2016 թվականի որոշումը և այն փոփոխել՝ «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ի հայցը բավարարել մասնակիորեն. «Հախվերդյան Շինմոնտաժ» ԲԲԸ-ից հոգուտ «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ի բռնագանձել 199.391.237,3 ՀՀ դրամ:

3. «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 297.272,6 ՀՀ դրամ՝ որպես մերժված հայցապահանջի մասով հայցադիմումը դատարան ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի գումար:

«Հախվերդյան Շինմոնտաժ» ԲԲԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 3.987.824,7 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջի մասով հայցադիմումը դատարան ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի գումար:

«Մուշ-Մէդա» ՍՊԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 45.909 ՀՀ դրամ՝ որպես մերժված հայցապահանջի մասով վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար:

«Հախվերդյան Շինմոնտաժ» ԲԲԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 5.981.737 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջի մասով վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար:

«Հախվերդյան Շինմոնտաժ» ԲԲԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 850.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար սահմանված և ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 06.05.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար:

«Հախվերդյան Շինմոնտաժ» ԲԲԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 980.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար սահմանված և ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 02.06.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար:

«Հախվերդյան Շինմոնտաժ» ԲԲԸ-ից հոգուտ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի բռնագանձել 88.200 ՀՀ դրամ և 102.900 ՀՀ դրամ՝ որպես կատարված փորձաքննությունների համար վճարման ենթակա գումար:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազրոյթուն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազրոյթուններ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/0313/02/16**  
 դատարանի որոշում 2017թ.  
 Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0313/02/16  
 Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան  
 Դատավորներ՝ Ն. Բարսեղյան  
 Մ. Հարթենյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
 Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
 Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
 Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
 Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
 Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
 Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին դռնբաց դատական նիստում, քննելով Ռուզաննա Վարդանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.12.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ժիրայր Հակոբյանի ընդդեմ Ռուզաննա Վարդանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ժիրայր Հակոբյանը պահանջել է Ռուզաննա Վարդանյանից բռնագանձել 540.000 ՌԴ ռուբլուն համարժեք ՀՀ դրամ:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Տ. Ստեփանյան) (այսուհետ՝ Դատարան) 24.06.2016 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.12.2016 թվականի որոշմամբ Ժիրայր Հակոբյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 24.06.2016 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռուզաննա Վարդանյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

#### 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 347-րդ, հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ժիրայր Հակոբյանը պարտքով գումար տալը հավաստող որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց չի ներկայացրել: Ինչ վերաբերում է բանկային փոխանցումներին, ապա դրանք կատարվել են կամավոր՝ օգնության նպատակով:

Միաժամանակ անհիմն է Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ Դատարանի կողմից չեն հետազոտվել և պատշաճ գնահատման չեն արժանացել Ժիրայր Հակոբյանի կողմից որպես հայցապահանջը հիմնավորող ապացույց ներկայացված «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության 08.06.2016 թվականի գերմանական Կարմիր Խաչի Հայաստանում գտնվող մասնաճյուղի, Սոցիալական աջակցության Եղեգնաձորի տարածքային գործակալության տեղեկանքները և Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի գրությունը, քանի որ այդ փաստաթղթերով որևէ կերպ չի հիմնավորվում կողմերի միջև առկա փոխառության հարաբերությունները, հետևաբար դրանք սույն գործով վերաբերելի ապացույցներ չեն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.12.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.06.2016 թվականի վճռին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝ ՀՀ ռստիկանության Էրեբունու բաժնի հետաքննության ավագ լեյտենանտ Թ. Մաթևոսյանի կողմից կայացված «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» 13.12.2015 թվականի որոշման համաձայն՝ 2013 թվականի ապրիլին Ժիրայր Հակոբյանը ծանոթացել և շփում է հաստատել Ռուզաննա Վարդանյանի հետ: 18.07.2013 թվականին աշխատելու նպատակով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն և այնտեղ գտնվելու ընթացքում Ռուզաննա Վարդանյանին բանկային փոխանցման միջոցով 29.07.2013 թվականից մինչև 11.08.2015 թվականը պարտքով՝ իր կողմից ՀՀ վերադառնալուց հետո պարտքը վերադարձնելու պայմանով, պարբերաբար ուղարկել է գումարներ՝ ընդհանուր մոտ 540.000 ՌԴ ռուբլի: Ռուզաննա Վարդանյանին իր բացատրությամբ հայտնել է, որ Ժիրայր Հակոբյանը, իմանալով իր սոցիալական և առողջական խնդիրների մասին, ցանկացել է օգնել և Ռուսաստանի Դաշնություն մեկնելուց հետո այնտեղից պարբերաբար գումարներ է ուղարկել իրեն: Չնայած այն հանգամանքին, որ ինքը մերժել է Ժիրայր Հակոբյանին, սակայն վերջինս պնդել է, որ ցանկանում է օգնել և Ռուսաստանի Դաշնություն մեկնելուց հետո այնտեղից պարբերաբար գումարներ է ուղարկել իրեն: Միաժամանակ բացատրությամբ Ռուզաննա Վարդանյանը հայտնել է, որ ինքը Ժիրայր Հակոբյանին հայտնել է, որ գումարներ ուղարկելու կարիք չկա, սակայն Ժիրայր Հակոբյանը պնդել է, որ գումարները և նվերները ուղարկում է որպես օգնություն՝ առանց հետ վերադարձնելու պայմանի **(գ.թ. 5-7):**

### **4. Վճռաբեկ դատարանի պարձառարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ կողմերի միջև փոխառության հարաբերությունների առկայության փաստի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հերևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք միայն քրեական գործերով հերաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումները կամ այդ ընթացքում անձանց տված բացաբությունները պահանջվող գումարի հանձնման վերաբերյալ այլ վերաբերելի գրավոր ապացույցի բացակայության պայմաններում կարող են դիտվել բավարար փոխառության իրավահարաբերության առկայության փաստը հաստատված որակելու համար:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կնքվում են բանավոր կամ գրավոր (հասարակ կամ նոտարական) ձևով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե օրենքին համապատասխան, պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է նաև հանձնել գույք, պայմանագիրը կնքված է համարվում համապատասխան գույքը հանձնելու պահից (հոդված 177):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Նույն կետի 2-րդ պարբերության համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առաջին է:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերը նշված հոդվածների վերլուծությանը՝ դիրքորոշում հայտնելով այն մասին, որ փոխառության պայմանագիրը գրավոր ձևով կնքվող գործարք է, որի ուժով փոխատուն փոխառուին է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով փոխատուին վերադարձնել փոխառության գումարը կամ փոխատուից ստաց-

ված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրանով նախատեսված դրամը կամ այլ գույքը հանձնելու պահից (*յրե՛ս, Վահե Սահակյանն ընդդեմ Լեոնիդ Ներսիսյանի թիվ ԵԲԳ/0916/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ վերահաստատելով վերոգրյալ դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ օրենսդիրը, փոխառության պայմանագրի համար պարտադիր համարելով գրավոր ձևը, ապացույցների թույլատրելիության շրջանակը սահմանափակել է միայն **գրավոր ապացույցներով**...: Օրենսդիրը, պարտադիր համարելով փաստաթղթի ներկայացումը, չի սահմանել գրավոր ապացույցների սպառիչ ցանկ՝ հնարավորություն ընձեռելով ներկայացնելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող ցանկացած գրավոր ապացույց, որը կհաստատի փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը (*յրե՛ս, Հրանտ Ավետիսյանն ընդդեմ «Տրանստնիվերսալ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԳ/4542/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ թեև քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումներով, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իմաստով չունեն նախապես հաստատված ապացույցի ուժ, **այդուհանդերձ դրանք դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը** (*յրե՛ս, Վարթևես Հագոփյանն ընդդեմ Անահիտ Հակոբջանյանի և մյուսների թիվ ԱՐԱԳ/0093/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2010 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումները, այդ ընթացքում անձանց տված բացատրությունները և ցուցմունքները, ՀՀ քաղաքացիական դատավարությունում որպես գրավոր ապացույց, թույլատրելի են նաև փոխառության իրավահարաբերություններից բխող իրավական վեճերով: Այդպիսի եզրահանգումը բխում է նաև մի շարք գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում կայացրած որոշումներից (*յրե՛ս, օրինակ, թիվ ԵԵԳ/1342/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի, թիվ ԵԱԲԳ/1328/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի, թիվ ԱՐԳ/0107/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումները*): Այդուհանդերձ, հաշվի առնելով փոխառության իրավահարաբերությունների առանձնահատկությունները, ինչպես նաև դատական պրակտիկայի միտումները՝ Վճռաբեկ դատարանը կարևորում է այն խնդրի պարզաբանումը, թե արդյոք միայն վերը թվարկված փաստաթղթերը բավարար են փոխառության իրավահարաբերության ծագումը հաստատված համարելու համար:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ինչպես ցանկացած պայմանագիր, փոխառության պայմանագիրը ևս կամային ակտ է: Այսինքն՝ փոխառության իրավահարաբերության առաջացման համար անհրաժեշտ է, որ պայմանագրի կողմերը՝ փոխառուն և փոխատուն, հստակորեն դրսևորեն իրենց կամահայտությունը փոխառության պայմանագիր կնքելու վերաբերյալ, և այդ կամքն ուղղված լինի փոխատուի դեպքում՝ փոխառուին դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք հանձնելուն, իսկ փոխառուի դեպքում՝ փոխառուից ստացված գումարը կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք վերադարձնելուն: Նման կամքի դրսևորումը և դրա իրականացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների իրականացումը, սակայն, դեռևս բավարար չէ փոխառության իրավահարաբերության ծագումն արձանագրելու հա-

մար: Միաժամանակ անհրաժեշտ է, որ կողմերի կամահայտնությունն ամրապնդված և ձևակերպված լինի ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ գործարքի տվյալ տեսակի համար սահմանված կարգով: Ընդ որում, քանի որ կամահայտնությունը կամքի արտահայտման արտաքին դրսևորումն է, հաշվի առնելով փոխառության իրավահարաբերությունների առանձնահատկությունները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժամանակագրական առումով դրանք պետք է համընկնեն: Այսպես, փոխառության պայմանագիրը ռեալ գործարք է, այսինքն՝ կնքված է համարվում դրանը կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույքը հանձնելու պահից, ինչը նշանակում է, որ մինչ փոխառության առարկայի փոխանցումը կամ դրանից անմիջապես հետո արդեն իսկ օրենքով սահմանված ձևով պետք է ձևակերպված լինի փոխառության պայմանագիրը կամ փոխառության առարկայի փոխանցումը հավաստող գրավոր այլ փաստաթուղթը: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նաև օրենսդրական այն կարգավորմամբ, համաձայն որի՝ փոխառության պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է այդ պայմանագրի անվավերության, նման պայմանագիրն առջինն է:

Փոխառության իրավահարաբերությունների առանձնահատկությունների վերաբերյալ արտահայտված դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումներով, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով կամ ցուցմունքներով չի կարող հիմնավորվել փոխառության իրավահարաբերության ծագման հանգամանքը, քանի որ նախ՝ նման ապացույցները ժամանակագրական առումով ձևավորվում են փոխառության առարկայի ենթադրաբար փոխանցումից ավելի ուշ, հետևաբար գործարքի գրավոր ձևը պահպանված չլինելու հիմքով ենթադրյալ փոխառության գործարքն առջինն է: Բացի այդ, դրանք կամային ակտ որակվել չեն կարող, քանի որ ուղղված չեն կողմերի համար փոխադարձ իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, այլ քրեադատավարական վարույթի շրջանակներում դրանով կանխորոշված նպատակների իրականացմանն ուղղված գործողություններ են:

Վերոգրյալ ընդհանուր կանոնից բացառություն կարող է կազմել այն դեպքը, երբ ենթադրյալ փոխառության երկու կողմերն էլ հետաքննության կամ նախաքննության ընթացքում իրենց տված բացատրություններով կամ ցուցմունքներով ընդունել են միմյանց միջև փոխառության իրավահարաբերության գոյության փաստը և հետագայում այդ իրավահարաբերությունից բխող վեճով հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում տվյալ փաստը չի վիճարկվել ենթադրյալ փոխառուի կողմից կամ չի հերքվել այդ գործի շրջանակներում ձեռք բերված ապացույցներով:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով, պատճառաբանել է, որ Ժիրայր Հակոբյանի կողմից չի ներկայացվել որևէ հիմնավոր և վերաբերելի ապացույց առ այն, որ իր կողմից պահանջվող գումարը Ռուզաննա Վարդանյանին Ռուսաստանի Դաշնությունից ուղարկվել է որպես փոխառության գումար՝ վերադարձնելու պայմանով:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելով, Դատարանի վճիռը բեկանելով և գործը նոր քննության ուղարկելով, հիմք է ընդունել գործում առկա «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության 08.06.2016 թվականի թիվ ԱՀ-S4, Գերմանական Կարմիր Խաչի Հայաստանում գտնվող մասնաճյուղի 06.06.2016 թվականի թիվ 31-06/2016, Սոցիալական աջակցության Եղեգնաձորի տարածքային գործակալության 11.04.2016 թվականի թիվ Ե-275 տեղեկանքները և Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի 10.06.2016 թվականի թիվ 24/12-185 գրությունը, և հանգել է այն հետևության, որ վիճելի գումարը Ժիրայր Հակոբյանի կողմից Ռուզաննա Վարդանյանին՝ որպես օգնություն տրված լինելու մասին պատասխանող կողմի բանավոր պատճառաբանությունների արժանահավատության հարցը Դատարանը պետք է քննարկեր հայցվորի՝ ընտանյոք հանդերձ օգնության կարիք ունեցող անձ հանդիսանալու փաստը հիմնավորող վերոնշյալ ապացույցների հաշվառմամբ:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին հանդմամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներով անդրադարձել է ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու հարցին, ուստի սույն որոշմամբ կրկին դրան չի անդրադառնում (*տես, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը, Սվեփոլանա Ժոյկիլյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա՝ ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի հետաքննության ավագ լեյտենանտ Թ. Մաթևոսյանի կողմից կայացված «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» 13.12.2015 թվականի որոշման համաձայն՝ Ժիրայր Հակոբյանը Ռուսաստանի Դաշնությունից բանկային փոխանցման միջոցով 29.07.2013 թվականից մինչև 11.08.2015 թվականը պարտքով՝ ՀՀ վերադառնալուց հետո պարտքը վերադարձնելու պայմանով, Ռուզաննա Վարդանյանին պարբերաբար ուղարկել է գումարներ՝ ընդհանուր մոտ 540.000 ռուսական ռուբլի: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» 13.12.2015 թվականի որոշմամբ չի կարող հիմնավորվել կողմերի միջև փոխառության իրավահարաբերության ծագման փաստը՝ հաշվի առնելով նաև վերն արտահայտված իրավական դիրքորոշումները: Բացի այդ, վկայակոչված որոշման ուսումնասիրությունից հետևում է, որ կողմերը հակասական բացատրություն են տվել ենթադրաբար կատարված փոխանցումների նպատակի վերաբերյալ, մի կողմից՝ (ենթադրյալ փոխանցում կատարած անձը) այնտեղով դրանց վերադարձնելիության պայմանի մասին, մյուս կողմից՝ (ենթադրյալ փոխանցում ստացած անձը) առարկելով այդ փաստի դեմ՝ փոխանցումներն անհատույց լինելու հիմնավորմամբ: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ ապացույցով չի հիմնավորվում նաև այն փաստը, որ կողմերի կամքն ուղղված է եղել միմյանց միջև փոխառության իրավահարաբերությունների առաջացմանը:

Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանի կողմից նշված՝ գործում առկա ապացույցներին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք սույն գործով վերաբերելի չեն հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես, սույն գործում առկա՝

✓ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Եղեգնաձորի տարածքային գործակալության 11.04.2016 թվականի թիվ Ե-275 տեղեկանքն ընդհանրապես չի վերաբերում Ժիրայր Հակոբյանին և դրանով չի հիմնավորում վերջինիս օգնության կարիք ունեցող անձ հանդիսանալու փաստը, քանի որ այն տրվել է Ռուզաննա Վարդանյանին առ այն, որ նա հաշվառված է գործակալությունում, ընտանեկան նպաստի իրավունքից օգտվել է 01.01.2002 թվականից մինչև 30.06.2015 թվականը (**գ.թ. 29**):

✓ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության 08.06.2016 թվականի թիվ ԱՀ-S4, Գերմանական Կարմիր Խաչի Հայաստանում գտնվող մասնաճյուղի 06.06.2016 թվականի թիվ 31-06/2016 տեղեկանքներից հետևում է, որ Ժիրայր Հակոբյանը **26.11.2015 թվականից** է ընդգրկվել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունում որպես շահառու, իսկ **01.02.2016 թվականից** Ժիրայր Հակոբյանը՝ իր ընտանիքի երեք անդամով, Գերմանա-

կան Կարմիր Խաչի Հայաստանում գտնվող մասնաճյուղի կողմից իրականացվող «Գթության խոհանոց» ծրագրի շահառու է **(գ.թ. 27-28)**:

✓ Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի 10.06.2016 թվականի թիվ 24/12-185 գրությամբ հայտնվել է, որ Ժիրայր Հակոբյանը **2016 թվականի փետրվարից մինչև նույն թվականի մայիսն** օգտվել է որոշակի սոցիալական ծրագրերից **(գ.թ. 30)**:

Վերոնշյալ փաստաթղթերի ուսումնասիրությունից հետևում է, որ Ժիրայր Հակոբյանն օգտվել է սոցիալական ծրագրերից որոշակի ժամանակահատվածի ընթացքում, մասնավորապես՝ 2015 թվականի նոյեմբերից մինչև 2016 թվականի մայիսը: Մինչդեռ ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» 13.12.2015 թվականի որոշմամբ արձանագրվել է, որ Ժիրայր Հակոբյանը Ռուզաննա Վարդանյանին բանկային փոխանցման միջոցով գումար է փոխանցել 29.07.2013 թվականից մինչև 11.08.2015 թվականը: Հետևաբար Ռուսաստանի Դաշնությունից Ռուզաննա Վարդանյանին գումար փոխանցելու ժամանակահատվածում Ժիրայր Հակոբյանը վերոնշյալ սոցիալական ծրագրերից չի օգտվել, այդ ծրագրերի շահառու չի հանդիսացել, որպիսի պայմաններում այդ ապացույցները Ժիրայր Հակոբյանի կողմից Ռուզաննա Վարդանյանին գումարներ փոխանցելու ժամանակահատվածի համար նրա՝ օգնության կարիք ունեցող անձ հանդիսանալու փաստը հիմնավորելու համար վերաբերելի ապացույց չեն կարող հանդիսանալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում բացակայում է որևէ գրավոր ապացույց, որով հիմնավորվում է կողմերի միջև փոխառության իրավահարաբերությունների առաջացումը, իսկ Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված ապացույցները վերաբերելի համարվել չեն կարող, ուստի Դատարանը, հայցը մերժելով, կայացրել է օրինական և հիմնավորված դատական ակտ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը, համաձայն որի՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, ուստի Դատարանի վճռի պետք է տալ օրինական ուժ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Միաժամանակ վերոհիշյալ դիրքորոշման համար Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահե-

րից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոնների համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 06.05.2017 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ Ռուզաննա Վարդանյանի միջնորդությունը բավարարվել է, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարը՝ 16.200 ՌԴ ռուբլուն համարժեք ՀՀ դրամի չափով ( $540.000 \times 3\%$ ), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման ժիրայր Հակոբյանից: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժիրայր Հակոբյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման նաև վերաքննիչ բողոքի համար սահմանված և վերաքննիչ դատարանի 01.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումարը՝ 16.200 ՌԴ ռուբլուն համարժեք ՀՀ դրամի չափով ( $540.000 \times 3\%$ ):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.12.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.06.2016 թվականի վճիռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Ժիրայր Հակոբյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 16.200 ՌԴ ռուբլուն համարժեք ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 06.05.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ժիրայր Հակոբյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 16.200 ՌԴ ռուբլուն համարժեք ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորագրություններ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/2723/02/15**  
դատարանի որոշում **2017թ.**  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/2723/02/15  
Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան  
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան  
Կ. Զիլինգարյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

*Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ*

2017 թվականի դեկտեմբերի 27-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «Անելիք Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճ-  
ռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.04.2016 թվականի որոշ-  
ման դեմ՝ ըստ հայցի Բանկի ընդդեմ Արամ Աղաբեկյանի՝ գումարի բռնագանձման և բռ-  
նագանձումը գրավադրված գույքի վրա տարածելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Արամ Աղաբեկյանից բռնագանձել 400.262  
ՀՀ դրամ՝ բռնագանձումը տարածելով գրավադրված գույքի վրա, մինչև վճռի կայացման  
օրը վարկի մնացորդի նկատմամբ Արամ Աղաբեկյանից բռնագանձել վարկային պայ-  
մանագրով սահմանված տոկոսները և տույժերը, իսկ վճռի կայացման օրվանից մինչև  
պարտավորության ամբողջական կատարման օրը նույն գումարի նկատմամբ հաշվեգրել  
և բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոս-  
ները:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրա-  
վասության դատարանի (դատավոր՝ Ռ. Բունիաթյան) (այսուհետ՝ Դատարան) 18.12.2015  
թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
28.04.2016 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի  
18.12.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճարել բողոք է ներկայացրել Բանկը:  
 Վճարել բողոքի պատասխան է ներկայացրել Արամ Աղաբեկյանը:

## **2. Վճարել բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ, 411-րդ, 881-րդ և 887-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ, 132-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Ստորադաս դատարանները բավարար կերպով չեն անդրադարձել Բանկի կողմից ներկայացված փաստաթղթերին, ամբողջությամբ չեն ուսումնասիրել այդ փաստաթղթերում արտացոլված տվյալները և արդյունքում սխալ գնահատելով գործում առկա ապացույցները՝ հանգել են չհիմնավորված հետևության առ այն, որ Արամ Աղաբեկյանը չի ստացել ո՛չ վարկը, ո՛չ ապրանքը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ Արամ Աղաբեկյանը հնարավորություն է ունեցել լուծելու վարկային պայմանագիրը, որպիսի իրավունքից, սակայն, վերջինս չի օգտվել: Եթե Բանկը պատշաճ կերպով չէր կատարել իր պարտականությունները, ապա Արամ Աղաբեկյանը կարող էր իրացնել իր իրավունքը և լուծել վարկային պայմանագիրը, ինչը չի արել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.04.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

### **2.1 Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է և հիմնավորված, իսկ վճարել բողոքն անհիմն է, քանի որ Բանկը վարկառուին առձեռն գումար չի տրամադրել, այդ մասին որևէ ապացույց գործում առկա չէ: Բանկի կողմից փոխանցված վարկի գումարին իրականում տիրացել է «Այթիմաստեր» ՍՊԸ-ն՝ այդպես էլ չտրամադրելով այդ գումարով գնված համակարգիչը:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկի (Վարկատու) և Արամ Աղաբեկյանի (Վարկառու) միջև 18.08.2013 թվականին կնքված թիվ 1ԱՐ3145 վարկային պայմանագրի (այսուհետ՝ Վարկային պայմանագիր) համաձայն՝ Վարկատուի և «Այթիմաստեր» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 31.03.2011 թվականին կնքված համագործակցության պայմանագրի հիման վրա Վարկատուն Վարկառուին տրամադրել է սպառողական վարկ՝ «intel 2.7 Ghz» համակարգիչը (նույնականացման համար՝ 367850200331) ձեռք բերելու նպատակով (**հատոր 1-ին, գ.թ. 7**):

2) Բանկի (Վարկատու) և Արամ Աղաբեկյանի (Վարկառու) միջև 18.08.2013 թվականին կնքված թիվ 1ԱՐ3145 կոշտ գրավի պայմանագրի (այսուհետ՝ Գրավի պայմանագիր) համաձայն՝ Վարկատուի կողմից Վարկառուին տրամադրվող 24 ամիս ժամկետով և 23 տոկոս տարեկան տոկոսադրույքով 339.600 ՀՀ դրամ վարկի դիմաց գրավատուն գրավարդել է վարկի միջոցով ձեռք բերվող հետևյալ գույքը՝ «intel 2.7 Ghz» համակարգիչ (նույնականացման համար՝ 367850200331), գրավադրված գույքի գնահատման արժեքը՝ 339.600 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 6**):

3) Ընկերության կողմից 25.12.2013 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Արամ Աղաբեկյանը հրաժարվել է Ընկերության կողմից երաշխավորվող և Բանկի վարկավորման միջոցով ձեռք բերած համակարգիչից: Ընկերությունը պարտավորվել է 1 ամսվա ընթացքում հետ փոխանցել Բանկից Արամ Աղաբեկյանի համակարգիչի համար ստացված գումարը (**հատոր 1-ին, գ.թ. 54**):

4) Թիվ 14128214 քրեական գործով «Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ս. Ռաֆայելյանի 29.06.2015 թվականի որոշման համաձայն՝ Սուրեն Երիցյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ ի թիվս այլոց, Սուրեն Երիցյանը, հանդիսանալով Ընկերության տնօրեն, չարաշահելով Արամ Աղաբեկյանի վստահությունը, տարբեր պատճառաբանություններ ներկայացնելով, վերջինիս չի հանձնել Վարկային պայմանագրի առարկա հանդիսացող 339.600 ՀՀ դրամ արժողությամբ «intel 2.7 Ghz» տեսակի համակարգիչը, վստահեցնելով, որ Բանկի հետ կնքված Վարկային պայմանագիրը չեղյալ է համարվել՝ խաբեությամբ հափշտակել է համակարգիչ տրամադրելու դիմաց Բանկի կողմից Ընկերությանը փոխանցված 339.600 ՀՀ դրամը՝ Արամ Աղաբեկյանին պատճառելով 230.000 ՀՀ դրամ գույքային վնաս (**հատոր 1-ին, գ.թ. 72-97**):

**4. Վճռաբեկ դատարանի պայրճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սպառողական վարկի բնույթի և առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյոք՞ վարկատուի կողմից սպառողական վարկի փոխանցումը մատակարարին վարկի գումարի տրամադրման պարտավորության պարզաձև կատարում չէ վարկառուի հանդեպ:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը կազմված է նույն օրենսգրքից և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքներից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միննույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառուն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը փոխառուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են

նույն օրենսգրքի 46-րդ գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ նույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ վարկային պայմանագրով վարկատուն ստանձնում է վարկառուին դրամական միջոցներ տրամադրելու պարտականություն, ինչպես նաև ձեռք է բերում իրավունք՝ պահանջելու հետ վերադարձնել այդ դրամական միջոցները և տոկոսներ վճարել դրանցից, իսկ վարկառուն, իր հերթին, ձեռք է բերում այդ միջոցներն ստանալու իրավունք և ստանձնում վարկատուին տոկոսներ վճարելու ու ստացված միջոցները վերադարձնելու պարտականություն: Միաժամանակ նշված հոդվածով ամրագրվել է, որ վարկային հարաբերությունների նկատմամբ փոխառության հարաբերությունները կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը կիրառելի են, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող նորմերով և բուն վարկային պայմանագրով: Այսինքն՝ վարկային հարաբերությունները կարգավորելու առումով օրենսդիրը նախապատվությունը տվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող նորմերին և վարկային պայմանագրին, որոնցով այլ բան նախատեսված չլինելու դեպքում միայն տվյալ հարաբերությունների նկատմամբ կարող են գործել փոխառության հարաբերությունները կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ նորմերը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վարկային պայմանագիրը, որպես փոխառության պայմանագրի տեսակ, այդուհանդերձ, որոշակի հատկանիշներով տարբերվում է փոխառության պայմանագրից: Մասնավորապես, եթե փոխառության պայմանագրի դեպքում փոխառության առարկան պետք է փաստացի հանձնված լինի **փոխառուին**, ապա վարկային պայմանագրի դեպքում վարկի տրամադրման պարտականությունը համարվում է կատարված վարկի գումարն ինչպես անմիջականորեն վարկառուին, այնպես էլ այն պայմանագրով նախատեսված մատակարարին հանձնվելու, այն է՝ վարկառուի որոշակի կարիքների բավարարման նպատակով նրա օգտագործման համար հասանելի դառնալու պարագայում: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ-ում 23.01.2009 թվականից գործում է քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքը: Նշված օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. 1) **կրեդիտ**՝ պարտավորության տարաժամկետ վճարման իրավունք, վարկ, փոխառություն, ֆինանսական վարձակալություն (լիզինգ) կամ որևէ այլ համաձայնություն կամ պայմանավորվածություն, որի նպատակը ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերումը ֆինանսավորելն է. 2) **կրեդիտավորող**՝ բանկ, օտարերկրյա բանկի մասնաձյուղ, վարկային կազմակերպություն կամ գրավատուն, որը տրամադրում է կրեդիտ. 3) **կրեդիտավորման պայմանագիր**՝ գործարք, որով կրեդիտավորողն սպառողին տրամադրում կամ խոստանում է տրամադրել կրեդիտ. 4) **մատակարար**՝ ապրանքները վաճառող կամ ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող ֆիզիկական կամ իրավաբանական անձ. ... 6) **սպառող** (այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության կրեդիտ ստացող)՝ բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության կրեդիտների), ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման նպատակով կրեդիտ ստացող քաղաքացի....:

Վերոշարադրյալից հետևում է, որ «կրեդիտ» հասկացությունը, ի թիվս այլնի, սահմանվում է որպես վարկ, որի նպատակը սպառողի կողմից ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերումը ֆինանսավորելն է: Ընդ որում, սպառողական կրեդիտին կամ սպառողական վարկին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝

1) հատուկ նպատակի առկայությունը, ինչը նշանակում է, որ վարկի գումարը փոխառուի կողմից կարող է օգտագործվել միայն այնպիսի ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերման համար, որոնք անհրաժեշտ են իր անձնական, ըն-

տանեկան, տնային կամ այլ օգտագործման համար, կապված չեն ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ,

2) հատուկ սուբյեկտային կազմը, մասնավորապես՝ որպես փոխառու-սպառող կարող են հանդես գալ միայն ֆիզիկական անձինք:

Փաստորեն, սպառողական վարկը ձեռք բերված ապրանքի, ծառայության կամ աշխատանքի դիմաց վճարման միջոց է և որպես այդպիսին կարող է անմիջականորեն փոխանցվել նաև վկայակոչված օրենքի իմաստով մատակարար հանդիսացող սուբյեկտին (օրինակ՝ երբ սպառողական վարկը տրամադրվում է արդեն իսկ ընտրված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար և մատակարարը վարկի տրամադրման պահին հայտնի է): Ավելին, ձևավորված գործարար շրջանառության սովորույթը վկայում է, որ սպառողական վարկի ձևակերպումը գերակշռող դեպքերում իրականացվում է մատակարարից ապրանքի, ծառայության կամ աշխատանքի ձեռքբերման պահին, իսկ վարկի գումարը փոխանցվում է մատակարարին, այդուհանդերձ, անմիջականորեն վարկային հարաբերություններ առաջացնելով վարկատուի և սպառողի միջև:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ վարկի գումարը, որպես սպառողական կրեդիտ, փոխանցվել է մատակարարին, վարկատուի՝ վարկ տրամադրելու պարտականությունը համարվում է պատշաճ կարգով կատարված, իսկ սպառողը՝ փոխառուն, կրում է դրանից բխող իրավունքները և պարտականությունները: Մասնավորապես՝ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն իրավունք է վերապահում սպառողին պահանջները ներկայացնելու անմիջապես կրեդիտավորողին այն դեպքում, երբ կրեդիտավորման պայմանագրով կամ այդ պայմանագրի հիման վրա տրամադրված կրեդիտի միջոցով գնված ապրանքները, ծառայությունները կամ աշխատանքները չեն ստացվել (մատուցվել) կամ մասնակի են ստացվել (մատուցվել) կամ չեն համապատասխանում օրենքով և (կամ) ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների գնումն ապահովող գործարքով սահմանված պահանջներին, կամ նույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սպառողն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու կրեդիտավորման պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ): Սպառողի կողմից վերը նշված իրավունքները չիրացվելու դեպքում վերջինս կրում է վարկի գումարը և դրան հաշվեգրված տոկոսները վերադարձնելու՝ փոխառուի հիմնական պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (յրեն, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԳ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ 18.08.2013 թվականի Վարկային պայմանագրով Վարկատուի և Ընկերության միջև 31.03.2011 թվականին կնքված համագործակցության պայմանագրի հիման վրա Վարկատուին Վարկատուին տրամադրել է սպառողական վարկ՝ «intel 2.7 Ghz» համակարգիչը (նույնականացման համար՝ 367850200331) ձեռք բերելու նպատակով: Նույն օրը կնքված գրավի պայմանագրի համաձայն՝ Վարկատուի կողմից Վարկատուին տրամադրվող 24 ամիս ժամկետով և 23 տոկոս տարեկան տոկոսադրույքով 339.600 ՀՀ դրամ վարկի դիմաց գրավատուն գրավադրել է վարկի միջոցով ձե-

որ բերվող հետևյալ գույքը՝ «intel 2.7 Ghz» համակարգիչ (նույնականացման համար՝ 367850200331), գրավադրված գույքի գնահատման արժեքը՝ 339.600 ՀՀ դրամ: Ընկերության կողմից 25.12.2013 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Արամ Աղաբեկյանը հրաժարվել է Ընկերության կողմից երաշխավորվող և Բանկի վարկավորման միջոցով ձեռք բերած համակարգչից: Ընկերությունը պարտավորվել է 1 ամսվա ընթացքում հետ փոխանցել Բանկից Արամ Աղաբեկյանի համակարգչի համար ստացված գումարը: Թիվ 14128214 քրեական գործով «Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ս. Ռաֆայելյանի 29.06.2015 թվականի որոշման համաձայն՝ Սուրեն Երիցյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ ի թիվս այլոց, Սուրեն Երիցյանը, հանդիսանալով Ընկերության տնօրեն, չարաշահելով Արամ Աղաբեկյանի վստահությունը, տարբեր պատճառաբանություններ ներկայացնելով, վերջինիս չի հանձնել Վարկային պայմանագրի առարկա հանդիսացող 339.600 ՀՀ դրամ արժողությամբ «intel 2.7 Ghz» տեսակի համակարգիչը, վստահեցնելով, որ Բանկի հետ կնքված վարկային պայմանագիրը չեղյալ է համարվել, խաբեությանը հափշտակել է համակարգիչ տրամադրելու դիմաց Բանկի կողմից Ընկերությանը փոխանցված 339.600 ՀՀ դրամը՝ Արամ Աղաբեկյանին պատճառելով 230.000 ՀՀ դրամ գույքային վնաս:

Սույն գործով դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Բանկի կողմից դատարանին որևէ վերաբերելի ապացույց չի ներկայացվել, որով կհիմնավորվեր, որ Արամ Աղաբեկյանին տրամադրվել է Վարկային պայմանագրով նախատեսված 339.600 ՀՀ դրամը կամ տրամադրել է ապառիկ վաճառվող համակարգիչ «intel 2.7 Ghz» (նույնականացման համար՝ 367850200331) ապրանքը: Ավելին, Ընկերության կողմից 25.12.2013 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Արամ Աղաբեկյանը հրաժարվել է Ընկերության կողմից երաշխավորվող և Բանկի վարկավորման միջոցով ձեռք բերած համակարգչից, իսկ Ընկերությունը պարտավորվել է 1 ամսվա ընթացքում հետ փոխանցել Բանկից Արամ Աղաբեկյանի համակարգչի համար ստացված գումարը, հետևաբար վարկի գումարն Արամ Աղաբեկյանին չի տրամադրվել:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, պատճառաբանել է, որ վարկի գումարն Արամ Աղաբեկյանին չի տրամադրվել: Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, թե Արամ Աղաբեկյանը նախապես տեղյակ է եղել, որ գումարը պետք է տրամադրվեր Ընկերությանը, Վերաքննիչ դատարանը նշել է, որ տրամադրված գումարի փոխառնելու Արամ Աղաբեկյանին պետք է տրամադրվեր համապատասխան ապրանք, մինչդեռ գործի նյութերով հիմնավորվել է, որ ապրանքն Արամ Աղաբեկյանին չի տրամադրվել:

Վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վարկառուին տրամադրվել է սպառողական վարկ, հետևաբար կողմերի միջև ծագած վարկային հարաբերությունների նկատմամբ կիրառելի են «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի վերաբերելի կարգավորումները և դրանց կապակցությամբ Վճռաբեկ դատարանի սույն որոշմամբ արտահայտած իրավական վերլուծությունները: Սույն գործով կողմերը չեն վիճարկել, ավելին, Ընկերության կողմից 25.12.2013 թվականին տրված տեղեկանքով և 29.06.2015 թվականի թիվ 14128214 քրեական գործով անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշմամբ հիմնավորվել է, որ վարկատուի և Ընկերության միջև կնքված 31.03.2011 թվականի Համագործակցության պայմանագրի հիման վրա 18.08.2013 թվականի Վարկային պայմանագրով նախատեսված 339.600 ՀՀ դրամ վարկի գումարը փոխանցվել է Ընկերությանը: Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ սպառողական կրեդիտավորման դեպքում նշված պայմանագրի էությունը պայմանավորված, վարկը, որպես վճարման միջոց, կարող է փոխանցվել նաև մատակարարին, ինչը և տվյալ դեպքում տեղի է ունեցել: Հետևաբար Բանկը պատշաճ կարգով կատարել է վարկը տրամադրելու իր պարտականությունը, մինչդեռ ստորադաս դատարանները նշված կանոնակարգումների անտեսմամբ

մբ սխալ եզրահանգման են եկել՝ փաստելով, որ վարկը Վարկառուին չի տրամադրվել: Սույն գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ Վարկային պայմանագիրը Վարկառուի կողմից լուծվել է «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, որը վերաշարադրված է նաև Վարկային պայմանագրի 5.4 կետում կամ վարկառուն՝ որպես սպառող, Վարկառուին է ներկայացրել «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված պահանջը՝ գնված ապրանքը ստացված չլինելու վերաբերյալ: Նման պայմաններում հիմնավոր է վճռաբեկ բողոքի այն փաստարկը, որ Վարկային պայմանագիրը լուծված չլինելու պայմաններում դրանով սահմանված պարտավորությունները ենթակա են կատարման վարկառուի կողմից:

Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանները, հաստատված համարելով վարկի չտրամադրման փաստը, ըստ էության չեն անդրադարձել գործի լուծման համար նշանակություն ունեցող մյուս փաստերին, մասնավորապես՝ պարտքի գումարի և դրան հաշվեգրվող տոկոսների չափի հիմնավորվածությանը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն:

*Նշված պարզառարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն և սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռարեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.04.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ **ԼԳ/0647/02/13**  
Քաղաքացիական գործ թիվ ԼԳ/0647/02/13  
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան  
Դատավորներ՝ Գ. Կարախանյան  
Ս. Թորոսյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
- Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
- Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.05.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ Մարինե Ալավերդյանի, պատասխանող կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք Վահրամ Բարսեղյանի, Կամո Աֆիցեղյանի՝ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու և գումարի բռնագանձման պահանջների մասին, և ըստ Մարինե Ալավերդյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Բանկի՝ վարկային և գրավի պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է վաղաժամկետ լուծել 05.11.2012 թվականին Բանկի և Մարինե Ալավերդյանի միջև կնքված թիվ GA12/39357 և թիվ GA12/39361 վարկային պայմանագրերը, Մարինե Ալավերդյանից բռնագանձել 2.583.095,2 ՀՀ դրամ, ինչպես նաև 2.111.000 ՀՀ դրամի վրա՝ սկսած 25.06.2013 թվականից մինչև գումարը բռնագանձելու օրը հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված բանկային տոկոսները:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Մարինե Ալավերդյանը պահանջել է անվավեր ճանաչել Բանկի Վանաձոր մասնաձյուղի և իր միջև 05.11.2012 թվականին կնքված թիվ GA12/39357 և թիվ GA12/39361 վարկային, ինչպես նաև թիվ G12/078334 և թիվ G12/078331 գրավի պայմանագրերը:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Վ. Հովնանյան)

(այսուհետ՝ Դատարան) 17.02.2016 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցի մատով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է՝ հակընդդեմ հայցից հրաժարվելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 12.05.2016 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.02.2016 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ, 17-րդ, 347-րդ, 369-րդ, 408-րդ, 409-րդ, 411-րդ, 437-րդ, 881-րդ և 887-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ և 130-132-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները և գործում ապահովագրական պայմանագրի բացակայության պայմաններում եզրահանգում է կատարել ապահովագրական պայմանագրի պայմանների և պահանջի իրավունքի փոխանցված կամ չփոխանցված լինելու վերաբերյալ՝ անտեսելով այն հանգամանքը, որ վարկերի վերադարձելիությունը չի հանդիսացել ապահովագրության օբյեկտ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը որևէ կերպ չի պատճառաբանել և հիմնավորել այն եզրահանգումը, որ Բանկն ապահովագրողից ստացել է պատասխանողին տրամադրված վարկի գումարի մասի հատուցում: Ավելին, Բանկին վնասը պատճառվել է ոչ թե վարկառուների կողմից, այլ Բանկի աշխատակցի կողմից, և որպես ապահովագրական դեպք է դիտվել ոչ թե վարկերի վերադարձելիությունը, այլ Բանկի աշխատակցի գործողությունները (անազնվությունը), հետևաբար ապահովագրական ընկերության մոտ ռեգրեսի իրավունքը ծագել է ոչ թե Բանկի վարկառուների, այլ Բանկի աշխատակցի հանդեպ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ո՛չ իրավաբանորեն, ո՛չ էլ հաշվապահորեն առկա չեն հիմքեր ապահովագրության արդյունքում ստացված գումարները վարկերի մարմանն ուղղելու համար, քանի որ կողմերի միջև ձևավորվել են վարկային իրավահարաբերություններ, որոնք անկախ են ու ինքնուրույն ապահովագրական իրավահարաբերություններից, և ապահովագրության արդյունքում վճարված գումարը որևէ կապ չունի վարկային իրավահարաբերությունների հետ և հիմք չի հանդիսանում վարկային պարտավորությունների դադարեցման կամ նվազեցման համար:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ Դատարանը, չունենալով ապահովագրական պայմանագիրը, եզրահանգել է, որ ապահովագրական հատուցումը վճարվել է սույն քաղաքացիական գործով քննարկման առարկա հանդիսացող թիվ GA12/39357, GA12/39361 վարկային պայմանագրերի կնքման արդյունքում աշխատակցի անբարեխիղճ աշխատանքի հետևանքով, մինչդեռ նշված փաստը կարող էր հաստատվել բացառապես ապահովագրական պայմանագրի ուսումնասիրության արդյունքում, որն էլ գործում բացակայել է:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ թվով 50 վարկային պայմանագրերով տրամադրված վարկերի մայր գումարները (առանց տոկոսների, տույժերի և սպասարկման վճարների) կազմել են 45.586.000 ՀՀ դրամ, սակայն ապահովագրական ընկերությունը մայր գումարից նվազեցրել է վարկային պայմանագրերով կատարված 4.958.049 ՀՀ դրամ սպասարկման վճարների, տոկոսների և տույժերի վճարված գումարները և ապահովագրական դեպքով հատուցման բազային գումար է համարել 40.627.951 ՀՀ դրամը և

այդ գումարն էլ հիմք ընդունելով՝ հատուցել է 32.489.351 ՀՀ դրամ՝ մասհանելով (սվա-գեցնելով) 8.138.600 ՀՀ դրամ պայմանական չհատուցվող գումարը (ֆրանչիզա):

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.05.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Բանկի «Վանաձոր» մասնաձյուղի («Վարկատու») և Մարինե Ալավերդյանի («Վարկառու») միջև 05.11.2012 թվականին կնքված թիվ GA12/39357 վարկային պայմանագրի 1.1., 1.1.1., 1.1.2. և 1.1.3. կետերի համաձայն՝ վերջինիս կանխիկ եղանակով տրամադրվել է 1.033.000 ՀՀ դրամ սպառողական վարկ՝ մինչև 05.11.2013 թվականը մարման ժամկետով, տարեկան 24 տոկոս անվանական տոկոսադրույքով: Վարկառուն վարկային պայմանագրի 2.1.2. և 2.1.3. կետերով պարտավորվել է վերադարձնել ստացված վարկի գումարը և տոկոսներ վճարել դրանից, ինչպես նաև վճարել հաշվի սպասարկման միանվագ և ամսական վճարներ **(հատոր 1-ին, գ.թ. 8-9):**

2. Բանկի «Վանաձոր» մասնաձյուղի («Գրավառու») և Մարինե Ալավերդյանի («Գրավատու») միջև 05.11.2012 թվականին կնքված թիվ G12/078331 գրավի պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Մարինե Ալավերդյանը գրավ է դրել իրեն սեփականության իրավունքով պատկանող ոսկյա զարդերը, գրավով ապահովել է Բանկի և Մարինե Ալավերդյանի միջև 05.11.2012 թվականին կնքված թիվ GA12/39357 վարկային պայմանագրով գրավատուի ստանձնած պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը **(հատոր 1-ին, գ.թ. 12):**

3. Բանկի «Վանաձոր» մասնաձյուղի («Վարկատու») և Մարինե Ալավերդյանի («Վարկառու») միջև 05.11.2012 թվականին կնքված թիվ GA12/39361 վարկային պայմանագրի 1.1, 1.1.1., 1.1.2. և 1.1.3. կետերի համաձայն՝ վերջինիս կանխիկ եղանակով տրամադրվել է 1.078.000 ՀՀ դրամ վարկ՝ մինչև 05.11.2013 թվականը մարման ժամկետով, տարեկան 24 տոկոս անվանական տոկոսադրույքով: Վարկառուն վարկային պայմանագրի 2.1.2. և 2.1.3. կետերով պարտավորվել է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից, ինչպես նաև վճարել հաշվի սպասարկման միանվագ և ամսական վճարներ **(հատոր 1-ին, գ.թ. 10-11):**

4. Բանկի «Վանաձոր» մասնաձյուղի («Գրավառու») և Մարինե Ալավերդյանի «Գրավատու» միջև 05.11.2012 թվականին կնքված թիվ G12/078334 գրավի պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Մարինե Ալավերդյանը գրավ է դրել իրեն սեփականության իրավունքով պատկանող ոսկյա զարդերը, գրավով ապահովվել է Բանկի և Մարինե Ալավերդյանի միջև 05.11.2012 թվականին կնքված թիվ GA12/39361 վարկային պայմանագրով գրավատուի ստանձնած պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը **(հատոր 1-ին, գ.թ. 13):**

5. Բանկի և Կանո Աֆիցերյանի միջև 19.12.2002 թվականին կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Կանո Աֆիցերյանը նշանակվել է Բանկի Վանաձորի մասնաձյուղում ոսկերիչ-փորձագետի պաշտոնում: Պայմանագրի 4.2 կետով սահմանվել է, որ աշխատողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ծավալով նյութական պատասխանատվություն է կրում իր վրա դրված աշխատանքային պարտավորությունների խախտման կամ ոչ բարեխիղճ կատարման հետևանքով Բանկին պատճառած վնասի համար **(հատոր 1-ին, գ.թ. 105-106):**

6. Բանկի գործադիր տնօրենի 2007 թվականի թիվ 35 կարգադրության համաձայն՝ վարկերի տրամադրման գործընթացն իրականացվում է հետևյալ փուլերով՝ ոսկերիչ-փորձագետն ընդունում է հաձվախորդին իր աշխատանքային տեղում, տեղեկանում է որպես գրավ առաջարկվող իրերի ծագման ու պատկանելիության մասին և իրականացնում է գրավի գնահատումը **(հատոր 1-ին, գ.թ. 109-112):**

7. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ ՌՖ

Մինասյանի 10.10.2013 թվականի քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման համաձայն՝ ի թիվս այլոց, Մարինե Ալավերդյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 82-88**):

8. ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԳ/0184/01/13 քրեական գործով 19.01.2015 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռով Կամո Աֆիցերյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման համար: Դատարանը հաստատված է համարել, որ Կամո Աֆիցերյանը, 19.12.2002 թվականից հանդիսանալով Բանկի Վանաձորի մասնաճյուղի ոսկերիչ-փորձագետ և ունենալով Բանկում ոսկյա իրեր ստուգելու, գրավ ընդունելու և գնահատելու լիազորություն, համաձայնության է եկել Վահրամ Բարսեղյանի հետ, օժանդակել է վերջինիս Բանկից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու համար՝ կազմելով ոսկու գրավի գնահատման կեղծ ակտեր, վերացրել է խոչընդոտները: Կամո Աֆիցերյանը չարաշահել է Բանկի վստահությունը, և օգտագործելով որպես փորձագետ ներկայացված զարդերը գնահատելու և համապատասխան ակտ կազմելու իրեն վերապահված լիազորությունները, 2011 թվականից մինչև 07.02.2013 թվականն ընկած ժամանակահատվածում շարունակաբար քաղաքացիների անվամբ որպես ոսկի գրավադրել է Վահրամ Բարսեղյանի կողմից նախապես ձեռք բերված ոչ ոսկյա զարդերը՝ կազմելով իրավունք վերապահող 50 հատ կեղծ փաստաթուղթ՝ թանկարժեք մետաղների գնահատման ակտ՝ 2.035.200 ՀՀ դրամ արժողության զարդերը գնահատել է 50.732.880 ՀՀ դրամ: Դրանց հիման վրա ձևակերպվել են լումբարդային վարկի 50 պայմանագիր, որի արդյունքում քաղաքացիները ստացել են 44.796.130 ՀՀ դրամ վարկի կանխիկ գումար, որոնք վերջիններս փոխանցել են Վահրամ Բարսեղյանին, իսկ նա էլ խաբեությամբ Բանկից ստացած առանձնապես խոշոր չափերի՝ 42.760.930 ՀՀ դրամը Կամո Աֆիցերյանի օժանդակությամբ հափշտակել և տնօրինել է իր հայեցողությամբ: Քրեական գործով դատարանն ապացույց է ձևանշել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի և ապահովադիր Բանկի բանկային ռիսկերի համալիր ապահովագրության թիվ DI000036 պայմանագիրը, համաձայն որի՝ ապահովագրվել են վերջինիս բանկային ռիսկերը: Վերը նշված դեպքը համարելով ապահովագրական պատահար՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի կողմից 20.01.2014 թվականին կայացվել է որոշում՝ ապահովագրական հատուցում վճարելու մասին, որի հիման վրա Բանկին՝ որպես ապահովագրական հատուցում, վճարվել է 32.489.351 դրամ (**հատոր 3, գ.թ. 11-26**):

9. Սույն գործում առկա չէ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի և Բանկի միջև կնքված բանկային ռիսկերի համալիր ապահովագրության թիվ DI000036 պայմանագիրը:

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում վարկային հարաբերություններից ծագող ռիսկերի ապահովագրության դեպքում վարկատուի ունեցած պահանջն ապահովագրական ընկերությանն անցնելու պայմանների վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել

գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ հետևյալ հարցադրմանը՝ վարկային հարաբերություններից ծագող ռիսկերի ապահովագրության դեպքում վարկադրուի ունեցած պահանջն ինչ պայմանների առկայության դեպքում կարող է անցնել ապահովագրական ընկերությանը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից բխում է, որ վարկային պայմանագրով վարկատուն ստանձնում է վարկառուին դրամական միջոցներ տրամադրելու պարտականություն, ինչպես նաև ձեռք է բերում իրավունք՝ պահանջելու հետ վերադարձնել այդ դրամական միջոցները և տոկոսներ վճարել դրանցից, իսկ վարկառուն, իր հերթին, ձեռք է բերում այդ միջոցները ստանալու իրավունք և ստանձնում վարկառուին տոկոսներ վճարելու ու ստացված միջոցները վերադարձնելու պարտականություն (տե՛ս, «ՓԼԵՑ ԳՈՈՒԴ» ՍՊԸ-ն ընդդեմ «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԿ/4072/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարկային պայմանագրից բխող պահանջների դեպքում ապացուցման առարկայի մեջ է մտնում վարկային հարաբերությունների (վարկային պայմանագրի) առկայությունը, վարկատուի կողմից վարկի գումարը փոխառուին տրամադրած լինելը, փոխառուի կողմից պարտավորության կետանց թույլ տալը, ինչպես նաև փոխառուի մեղքի առկայությունը, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի ուժով ենթադրվում է, եթե փոխառուն չապացուցի իր մեղքի բացակայությունը:

Նկատի ունենալով, որ վարկային պայմանագրով որպես վարկատու հանդես են գալիս բանկերը և այլ վարկային կազմակերպությունները, որոնք ռիսկային ֆինանսական գործունեություն իրականացնող սուբյեկտներ են, վերջիններս հնարավորություն ունեն ապահովագրելու վարկային հարաբերություններից ծագող որոշակի ռիսկեր: Ընդ որում, որոշ դեպքերում ապահովագրման պահանջը սահմանվում է օրենքով: Այսպես, օրինակ, այն դեպքում, երբ վարկային պայմանագրի կատարումն ապահովված է գրավով, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գրավատուն կամ գրավառուն, կախված այն բանից, թե նրանցից ում մոտ է գտնվում գրավ դրված գույքը, պարտավոր է գրավ դրված գույքն ապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից: Այսինքն՝ վարկային հարաբերությունների շրջանակում հնարավոր է ապահովագրության հարաբերությունների ծագում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովագրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 996-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրության պայմանագրով մի կողմը՝ ապահովագրողը, որոշակի միանվագ կամ պարբերական վճարի (ապահովագրավճարի) դիմաց պարտավորվում է մյուս կողմին՝ ապահովադրին կամ նրա մատնանշած անձին (շահառուին), որոշակի ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել որոշակի իրադարձության (իրադարձությունների) տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար (ապահովագրական հատուցում), եթե այդ իրադարձությունների տեղի ունենալը կրում է հավանական և (կամ) պատահական բնույթ և կախված չէ կողմերի կամ ապահովագրված անձի կամ շահառուի կամքից (բացառությամբ կյանքի ապահովագրության այն դեպքերի, երբ հատուցվում է որոշակի հավաստի և ակնկալվող իրադարձության տեղի ունենալը):

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ապահովագրության պայմանագիրը կնքվում է գրավոր: Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է ապահովագրության պայմանագրի անվավերությանը: Այդպիսի պայմանագրի անառնչելի է: Օրենքով կարող են նախատեսվել ապահովագրության պայմանագրի կնքման նկատմամբ այլ պահանջներ:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապահովագրության իրականացման դեպքում ապահովագրության պայմանագրի առկայությունը պարտադիր է: Ապահովագրության վկայագիրը կարող է փոխարինել ապահովագրության պայմանագրին, եթե այն պարունակում է ապահովագրության պայմանագրի՝ [ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 54-րդ] գլխով և օրենքով սահմանված էական պահանջները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983<sup>1</sup>-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ապահովագրական պատահարն ապահովագրական պայմանագրով նախատեսված դեպքն է կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու ուժով ապահովագրողը պարտավորվում է ապահովադրին կամ շահառուին վճարել ապահովագրական հատուցում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտատիրոջը պարտավորության հիման վրա պատկանող իրավունքը (պահանջը) կարող է նրա կողմից այլ անձի փոխանցվել գործարքով (պահանջի գիշում) կամ անցնել այլ անձի՝ օրենքի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 402-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ օրենքի հիման վրա և դրանում նշված հանգամանքների ի հայտ գալով, պարտատիրոջ իրավունքներն այլ անձի են անցնում **ապահովագրական դեպքը** վրա հասնելիս պատասխանատու պարտապանի նկատմամբ պարտատիրոջ իրավունքներն ապահովագրական հատուցում վճարած ապահովագրողին անցնելիս:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովադրին (ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը **վնասը պատճառած անձի նկատմամբ** անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով: Դիտավորյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն ապահովագրողին անցնելը բացառող պայմանագրի պայմանն առոչինչ է:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում Վճարել դատարանը գտնում է, որ վարկային հարաբերություններից ծագող որոշակի ռիսկեր ապահովագրելիս ապահովագրական հատուցում վճարելուց հետո վարկային հարաբերություններից բխող պահանջն օրենքի ուժով անցնում է ապահովագրական ընկերությանը: Ընդ որում, պահանջի գիշման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը (եթե այլ բան նախատեսված չլինի ապահովագրության պայմանագրով):

1. ապահովագրության հարաբերությունների առկայությունը, ընդ որում, նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 996-րդ հոդվածի պահանջը՝ տվյալ փաստն ապացուցող **միակ թույլատրելի ապացույցն** ապահովագրության պայմանագիրն է կամ ապահովագրական վկայագիրը, եթե վերջինս պարունակում է ապահովագրության պայմանագրի՝ օրենքով սահմանված բոլոր էական պայմանները,

2. ապահովագրական պատահարի առկայությունը, ապահովագրական պատահարը պետք է ծագի ապահովագրական պայմանագրով նախատեսված իրավաբանական փաստերի ուժով, որպիսի պարագայում ապահովագրողը պարտավոր է ապահովադրին կամ շահառուին վճարել ապահովագրական հատուցում,

3. ապահովագրական հատուցում վճարած լինելն ապահովադրին կամ շահառուին: Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի «Վանաձոր» մասնաձյուղի («Վարկատու») և Սարիսե Ալավերդյանի («Վարկառու») միջև 05.11.2012 թվականին կնքված թիվ GA12/39357 և թիվ GA12/39361 վարկային պայմանագրերով վերջինիս մինչև 05.11.2013 թվականը մարման ժամկետով, տարեկան 24 տոկոս անվանական տոկոսադրույքով տրամադրվել է սպառողական վարկ՝ համապատասխանաբար 1.033.000 ՀՀ դրամ և 1.078.000 ՀՀ դրամ գումարների չափով: Ի ապահովումն նշված վարկային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման՝ 05.11.2012 թվականին կնքված

թիվ G12/078331 և թիվ G12/078334 գրավի պայմանագրերով Մարինե Ալավերդյանը գրավ է դրել իրեն սեփականության իրավունքով պատկանող ոսկյա զարդերը:

Բանկի և Կանոն Աֆիցերյանի միջև 19.12.2002 թվականին կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Կանոն Աֆիցերյանը նշանակվել է Բանկի Վանաձորի մասնաձյուղում ոսկերիչ-փորձագետի պաշտոնում: Պայմանագրի 4.2 կետով սահմանվել է, որ աշխատողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ծավալով նյութական պատասխանատվություն է կրում իր վրա դրված աշխատանքային պարտավորությունների խախտման կամ ոչ բարեխիղճ կատարման հետևանքով Բանկին պատճառած վնասի համար:

Բանկի գործադիր տնօրենի 2007 թվականի թիվ 35 կարգադրության համաձայն՝ վարկերի տրամադրման գործընթացն իրականացվում է հետևյալ փուլերով՝ ոսկերիչ-փորձագետն ընդունում է հաճախորդին իր աշխատանքային տեղում, տեղեկանում է որպես գրավ առաջարկվող իրերի ծագման ու պատկանելիության մասին և իրականացնում է գրավի գնահատումը:

ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ ՌՖ Մինասյանի 10.10.2013 թվականի քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման համաձայն՝ ի թիվս այլնի, Մարինե Ալավերդյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԳ/0184/01/13 քրեական գործով 19.01.2015 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռով Կանոն Գուրգենի Աֆիցերյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման համար: Դատարանը հաստատված է համարել, որ Կանոն Աֆիցերյանը, 19.12.2002 թվականից հանդիսանալով Բանկի Վանաձորի մասնաձյուղի ոսկերիչ-փորձագետ և ունենալով Բանկում ոսկյա իրեր ստուգելու, գրավ ընդունելու և գնահատելու լիազորություն, համաձայնության է եկել Վահրամ Բարսեղյանի հետ, օժանդակել է վերջինիս Բանկից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու համար՝ կազմելով ոսկու գրավի գնահատման կեղծ ակտեր, վերացրել է խոչընդոտները: Կանոն Աֆիցերյանը չարաշահել է Բանկի վստահությունը և, օգտագործելով որպես փորձագետ ներկայացված զարդերը գնահատելու և համապատասխան ակտ կազմելու իրեն վերապահված լիազորությունները, 2011 թվականից մինչև 07.02.2013 թվականն ընկած ժամանակահատվածում շարունակաբար քաղաքացիների անվամբ որպես ոսկի գրավադրել է Վահրամ Բարսեղյանի կողմից նախապես ձեռք բերված ոչ ոսկյա զարդերը՝ կազմելով իրավունք վերապահող 50 հատ կեղծ փաստաթուղթ՝ թանկարժեք մետաղների գնահատման ակտ՝ 2.035.200 ՀՀ դրամ արժողության զարդերը գնահատել է 50.732.880 ՀՀ դրամ: Դրանց հիման վրա ձևակերպվել են լոնքարդային վարկի 50 պայմանագիր, որի արդյունքում քաղաքացիները ստացել են 44.796.130 ՀՀ դրամ վարկի կանխիկ գումար, որոնք վերջիններս փոխանցել են Վահրամ Բարսեղյանին, իսկ նա էլ խաբեությամբ Բանկից ստացած առանձնապես խոշոր չափերի՝ 42.760.930 ՀՀ դրամը Կանոն Աֆիցերյանի օժանդակությամբ հափշտակել և տնօրինել է իր հայեցողությամբ: Քրեական գործով դատարանն ապացույց է ճանաչել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի և ապահովադիր Բանկի բանկային ռիսկերի համալիր ապահովագրության թիվ DI000036 պայմանագիրը, համաձայն որի՝ ապահովագրվել են վերջինիս բանկային ռիսկերը: Վերը նշված դեպքը համարելով ապահովագրական պատահար՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի կողմից 20.01.2014 թվականին կայացվել է որոշում ապահովագրական հատուցում վճարելու մասին, որի հիման վրա Բանկին՝ որպես ապահովագրական հատուցում, վճարվել է 32.489.351 ՀՀ դրամ:

Սույն գործում առկա չէ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի և Բանկի միջև կնքված բանկային ռիսկերի համալիր ապահովագրության թիվ DI000036 պայմանագիրը:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով, հաստատված է համարել, որ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԳ/0184/01/13 քրեական գործով 19.01.2015 թվականի դատավճռով ապացույց է ճանաչվել «Ռոսգոսստրախ-Արմենիա»

ապահովագրական ՓԲԸ-ի և ապահովադիր Բանկի միջև կնքված բանկային ռիսկերի համալիր ապահովագրության թիվ D1000036 պայմանագիրը, համաձայն որի՝ ապահովագրվել են վերջինիս բանկային ռիսկերը: «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի կողմից Բանկին՝ որպես ապահովագրական հատուցում, վճարվել է 32.489.351 ՀՀ դրամ: Դատարանը գտել է, որ ապահովագրական հատուցումը տրամադրելու պահից սկսած այդ գումարի շրջանակներում վնաս պատճառած անձից պահանջի իրավունքն անմիջականորեն փոխանցվել է ապահովագրողին: Դատարանը միաժամանակ նշել է, որ Բանկը «Ռոսգոսստրախ Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ից ստացել է ապահովագրական հատուցում սույն քաղաքացիական գործով քննարկման առարկա հանդիսացող թիվ GA12/39357 և թիվ GA12/39361 վարկային պայմանագրերի կնքման արդյունքում Բանկին աշխատակից Կամո Աֆիցերյանի անբարեխիղճ աշխատանքի հետևանքով պատճառված վնասի դիմաց: Դատարանը պատճառաբանել է, որ Բանկը, ապահովագրողից ստանալով Մարինե Ալավերդյանին տրամադրված վարկի գումարի մի մասի հատուցում, կորցրել է այդ գումարը վերջինից պահանջելու իրավունքը: Բացի այդ, Բանկը Դատարանին չի ներկայացրել որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց, որով կիմնավորվեր, թե որքան է կազմում Բանկի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ստացված գումարի և սույն քաղաքացիական գործով չստացված գումարի չափը:

Վերաքննիչ դատարանը, Բանկի վերաքննիչ բողոքը մերժելով, ըստ էության, հիմնավոր է համարել Դատարանի վերը նշված պատճառաբանությունները:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերը շարադրված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանությունների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և Մարինե Ալավերդյանի միջև կնքվել են վարկային պայմանագրեր: Բանկի աշխատակից Կամո Աֆիցերյանը մեղավոր է ճանաչվել խարդախության միջոցով Բանկից առանձնապես խոշոր չափերի գումար հանձնարելու մեջ: Սույն գործով ստորադաս դատարանները Կամո Աֆիցերյանի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա հաստատված են համարել այն հանգամանքը, որ Բանկը «Ռոսգոսստրախ Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ից ստացել է փոխհատուցում Կամո Աֆիցերյանի գործողությունների արդյունքում իրեն պատճառված վնասի, այդ թվում՝ Մարինե Ալավերդյանին տրամադրված վարկի կապակցությամբ: Մինչդեռ ստորադաս դատարանները նախ՝ պարտավոր էին գնահատել վարկային հարաբերությունների առկայությունը, որից հետո միայն անդրադառնային ապահովագրական հարաբերությունների առկայությանը և ապահովագրական հատուցում վճարված լինելու հիմքով պահանջի գիշում իրականացված լինելուն: Ընդ որում, ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ սույն գործում առկա չէ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի և Բանկի միջև կնքված բանկային ռիսկերի համալիր ապահովագրության թիվ D1000036 պայմանագիրը, որին հղում է կատարված վերոնշյալ դատավճռում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (յուն., Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԳ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):



ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*տե՛ս, Սվեյդանա Ժոյիկյանն ընդդեմ Անահիդ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, **չեն կարող հաստատվել այլ ապացույցներով** :

Անդրադառնալով ապացույցների թույլատրելիության կանոնին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ, մասնավորապես, ամրագրել է, որ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, **չեն կարող հաստատվել այլ ապացույցներով**: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված թույլատրելիության վերոնշյալ կանոնի բովանդակությունից հետևում է, որ այն դեպքերում, երբ օրենքում կամ իրավական ակտում ուղղակիորեն նշված չէ այն ապացույցը, որով թույլատրվում է հաստատել այս կամ այն փաստը, ապա վերջինս կարող է հաստատվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ցանկացած ապացույցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված թույլատրելիության վերոնշյալ կանոնը մեկնաբանվում է հետևյալ կերպ.

- գործի հանգամանքները կարող են հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով, **այլ ապացույցների կիրառումը բացառվում է**, կամ.

- գործի հանգամանքները կարող են հաստատվել օրենքով նախատեսված ապացույցներով (անհրաժեշտ ապացույց), սակայն **այլ ապացույցների վարույթ ներգրավելու հնարավորությունը սահմանափակված չէ**:

Ապացույցների թույլատրելիության նշված կանոնի մասնավոր դրսևորումներից է նաև այս կամ այն ապացույցի օգտագործման արգելքը, որը նշանակում է, որ ի հավաստում գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի չի կարող ներկայացվել որևէ կոնկրետ ապացույց, եթե նյութական օրենսդրությունն արգելում է դրա օգտագործումը (*տե՛ս, «Ջի ԷՅՋ ՍԹՈՐԻՋ ԷՆԹԵՐՓՐԱՅՅՁՍ» ՍՊԸ-ն ընդդեմ Սևակ Արզարնոս, Արդյուն Մարտիրոսյանի թիվ ԵԿԴ/2593/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանները ոչ միայն պատշաճ գնահատման չեն արժանացրել վարկային հարաբերությունների ապացուցման առարկայի մեջ մտնող փաստերը, այլ նաև առանց նյութական օրենսդրությամբ նախատեսված թույլատրելի ապացույցի (ապահովագրության պայմանագրի կամ վկայագրի) առկայության՝ հաստատված են համարել ապահովագրության հարաբերությունների առկայությունը: Ավելին, սույն գործով ստորադաս դատարաններն իրենց եզրահանգումների հիմքում դրել են թիվ ԼԳ/0184/01/13 քրեական գործով 19.01.2015 թվականի դատավճռով հաստատված հանգամանքները՝ հաշվի չառնելով, որ *թիվ 3-1091(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշման* համաձայն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նախադատելի (պրեյուդիցիալ) նշանակություն ունի միայն հանցագործության քաղաքացիաիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար՝ հետևյալ շրջանակներում:

1. արդյո՞ք կատարվել են որոշակի գործողություններ (հանցագործության օբյեկտիվ կողմը),

2. արդյո՞ք այդ գործողությունները կատարվել են տվյալ անձի կողմից (հանցագործության սուբյեկտ) (*տե՛ն, Կարապետ Գրաչյանն ընդդեմ Արոմ Ղազազյանի թիվ 3-1091(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը*):

Հետևաբար Վճռաբեկ դատարանն գտնում է, որ անգամ դատավճռով նման հանգամանքների առկայությունը հաստատված լինելու պարագայում դատարանները պարտավոր էին հաշվի առնել, որ դատավճռով հաստատված նման փաստը ոչ միայն չէր կարող ունենալ նախադատելի նշանակություն, այլ նաև ապահովագրական հարաբերությունների առկայությունը կարող էր հաստատվել միայն ապահովագրության պայմանագրով կամ վկայակագրով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սույն քաղաքացիական գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատում չեն իրականացրել, ինչն ազդել է գործի ելքի վրա, հետևաբար առկա է գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտություն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը՝ գումարի բռնագանձման պահանջի մասով, նոր քննության ուղարկելու համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գործը նոր քննության է ուղարկում միայն այդ պահանջի մասով, քանի որ գործով ներկայացված մյուս պահանջներով վերաքննության և վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկում չի իրականացվել:

#### ***5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը, այդ թվում նաև՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.10.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցը, ենթակա են լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.05.2016 թվականի որոշումը և գործը՝ գումարի բռնագանձման պահանջի մասով, ուղարկել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի, այդ թվում նաև՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.10.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/3378/02/15**  
դատարանի որոշում **2017թ.**  
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/3378/02/15  
Նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան  
Դատավորներ՝ Ս. Միքայելյան  
Գ. Խանդանյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*նախագահությամբ* Ե. ԽՈՒՆԴԿԱՐՑԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին դռնբաց դատական նիստում, քննելով Վաղարշակ Սաղաթեյանի ներկայացուցիչ Էրնեստ Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.09.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ռոսգոստորախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Էդգար և Վաղարշակ Սաղաթեյանների՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Էդգար և Վաղարշակ Սաղաթեյաններից համապարտության կարգով բռնագանձել 1.230.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառած վնասի փոխհատուցման գումար, ինչպես նաև նշված գումարին հաշվեգրել և բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Լ. Կատվայան) (այսուհետ՝ Դատարան) 19.04.2016 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.09.2016 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 19.04.2016 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վաղարշակ Սաղաթեյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ և 27-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 51-րդ, 53-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի կատարել ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ գնահատում՝ հաշվի չառնելով այն, որ Վաղարշակ Սաղաթեյանն առաջին իսկ հնարավորության դեպքում սահմանված կարգով զգուշացրել է ապահովագրողին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության աշխատակիցների կողմից տրված ցուցմունքներով հաստատվել է պատահարի արձանագրման ժամանակահատվածի մոտավոր լինելը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.09.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 19.04.2016 թվականի վճռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերության և Էդգար Սաղաթեյանի միջև 29.12.2013 թվականին կնքված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SG-848558 վկայագրի (այսուհետ՝ Վկայագրի) համաձայն՝ ապահովագրվել է «VOLKSWAGEN PASSAT 1.8» մակնիշի 90 OS 404 պետհամարանիշի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը: Լիազորված տիրապետող է հանդիսացել նաև Վաղարշակ Սաղաթեյանը:

Վկայագրի՝ պատահարի մասին Ապահովագրողին ծանուցման ժամկետի և կարգի մասին 13-րդ կետի համաձայն՝ Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոց օրինական հիմքով տիրապետող այլ անձը) պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով ԱԳՊ կտրոնի վրա նշված հեռախոսահամարով (**հատոր 1-ին, գ.թ. 8-9**):

2) Ավտոպատահարի վերաբերյալ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ավագ տեսուչ Վ. Սարգսյանի կողմից 21.08.2014 թվականին տրված եզրակացության համաձայն՝ Վաղարշակ Սաղաթեյանը, 15.08.2014 թվականին՝ ժամը 13:40-ի սահմաններում, վարելով «VOLKSWAGEN PASSAT 1.8» մակնիշի 90 OS 404 պետհամարանիշի ավտոմեքենան և թույլ տալով օրենսդրության նորմերի խախտումներ, բխվել է Հայկ Ամիրյանի վարած «MAZDA» մակնիշի 17 NL 111 պետհամարանիշի ավտոմեքենային, ինչի արդյունքում Վաղարշակ Սաղաթեյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության (**հատոր 1-ին, գ.թ. 19**):

3) Ավտոպատահարի մասին ապահովագրողը ծանուցվել է 15.08.2014 թվականին՝ ժամը 14:45-ին (**հատոր 1-ին, գ.թ. 7, 14**):

4) Հայկ Ամիրյանի ներկայացուցիչ Դավիթ Ամիրյանի կողմից 22.08.2014 թվականին ներկայացված ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումի հիման վրա 23.09.2014 թվականի թիվ SG/14-10834 որոշման համաձայն՝ Ընկերության կողմից «MAZDA» մակնիշի 17 NL 111 պետհամարանիշի ավտոմեքենայի սեփականատեր Հայկ Ամիրյանին որպես ապահովագրական հատուցում վճարվել է 1.230.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 10, 13-15**):

5) Վաղարշակ Սաղաթեյանի կողմից 19.08.2014 թվականին Ծառայության ՃՏՊ բաժնի ավագ տեսուչին տրված գրավոր բացատրության համաձայն՝ պատահարը տեղի

է ունեցել 15.08.2014 թվականին՝ ժամը 13:40-ի սահմաններում(**հատոր 1-ին, գ.թ. 81**):

6) Հայկ Ամիրյանի կողմից 19.08.2014 թվականին Ծառայության ՃՏՊ բաժնի ավագ տեսուչին տրված գրավոր բացատրության համաձայն՝ պատահարը տեղի է ունեցել 15.08.2014 թվականին՝ ժամը 13:40-ի սահմաններում(**հատոր 1-ին, գ.թ. 85**):

7) Ծառայության 18.01.2016 թվականի գրության համաձայն՝ 21.08.2014 թվականին տրված եզրակացության մեջ որպես պատահարի ժամ Ծառայության կողմից նշվել է պատահարի մասնակիցների կողմից տրված բացատրություններում նշված մոտավոր ժամանակահատվածը (**հատոր 1-ին, գ.թ. 82**):

8) 10.03.2016 թվականին Դատարանում որպես վկա հրավիրված Ծառայության ավագ տեսուչ Վարդան Սարգսյանի ցուցմունքի համաձայն՝ պատահարի կոնկրետ ժամանակը հնարավոր չէ նշել, քանի որ իր կողմից կազմված եզրակացության մեջ հիմք է ընդունվել պատահարի մասնակիցների նշած մոտավոր ժամանակահատվածը, ավելին՝ «MAZDA» մակնիշի ավտոմեքենայի վարորդն ընդհանրապես չի հիշել ժամանակահատվածը և խնդրել է հիմք ընդունել Վաղարշակ Մաղաթելյանի նշած ժամանակահատվածը, որը նույնպես մոտավոր է եղել:

Որպես վկա հրավիրված Ծառայության տեսուչ Մանուկ Մելիքյանը նշել է, որ պատահարը եղել է կեսօրից հետո՝ օրվա երկրորդ կեսին, ամենայն հավանականությամբ մինչև ժամը 16.00-ն:

Որպես վկա հրավիրված Ծառայության տեսուչ Հայրապետ Ավագյանը նշել է, որ վթարը եղել է կեսօրին, ցերեկը, կոնկրետ ժամը չի հիշում (**հատոր 1-ին, գ.թ. 99-100, 109**):

9) Ծառայության պետի 18.03.2016 թվականի գրության համաձայն՝ 15.08.2014 թվականին տեղի ունեցած պատահարի մասին հաղորդումը ստացվել է նույն օրը՝ ժամը 15:00-ին (**հատոր 1-ին, գ.թ.107**):

#### **4. Վճռարեկ դատարանի պայմառարանությունները և եզրահանգումը**

Վճռարեկ դատարանն Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռարեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ և 27-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման արդյունքում առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն վճռարեկ բողոքի քննության շրջանակներում Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք ապահովագրական պարտադիր մասին սահմանված ժամկետում ապահովագրական ընկերությանը չփոփոխված չի հիմքով ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի (սուբրոգացիա) իրավունքն առկա է այն դեպքում, երբ գործով չի ապացուցվում ապահովագրական պարտադիր հարակ ժամանակը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1017-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ ոչ կյանքի ապահովագրության պայմանագրով ապահովադիրն ապահովագրական պատահարի վրա հասնելն իրեն հայտնի դառնալուց հետո պարտավոր է այդ մասին **անհապաղ (ողջամիտ ժամկետում)** տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին: **Եթե պայմանագրով նախատեսված է ծանուցման ժամկետ** և (կամ) եղանակ, **ապա դա պետք է արվի սահմանված ժամկետում** ու պայմանագրում նշված եղանակով:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագրով ապահովադիր համարվող անձը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձն ապահովագրական պատահարի դեպքում պարտավոր են այդ մասին հայտնել ապահովագրական ընկերությանը: Ապահովագրական պատահարի մասին հայտնելու ժամկետները և կարգը, ինչպես

նաև ապահովագրական պատահարից հետո ապահովագրական ընկերության և պատահարի մասնակիցների այլ գործողությունները սահմանվում են «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կանոններով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներից ԱՊՊԱ պայմանագրով սահմանվում են բացառություններ այն դեպքերի համար, երբ ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պատահարի հետևանքով հայտնվել են անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որ անհնարին էր ապահովագրական ընկերությանը պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական պատահարի մասին տեղեկացնել, կամ ապահովադիրը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել ապահովագրական պատահարի մասին՝ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի կողմից նրան չտեղեկացնելու կամ այլ պատճառով: Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը կրում են ապահովագրական ընկերությանը նրանց կողմից ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու անհնարինության (անտեղյակության) ապացուցման պարտականությունը: Նույն մասով նախատեսված տեղեկացման պարտականությունն անհնարին դարձնող հանգամանքների վերացման (ապահովագրական պատահարի մասին տեղեկացվելու) դեպքում ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձն ապահովագրական պատահարի մասին պարտավոր է պայմանագրով սահմանված կարգով անմիջապես հայտնել ապահովագրական ընկերությանը:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը **հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի վնաս պատճառած անձի նկատմամբ**, եթե ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին:

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը **հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ**, եթե ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին:

Վկայագրի պատահարի մասին Ապահովագրողին ծանուցման ժամկետի և կարգի մասին 13-րդ կետի համաձայն՝ Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով ԱՊՊԱ կտրոնի վրա նշված հեռախոսահամարով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ն ընդդեմ Վաչագան Խաչատրյանի և Անդրանիկ Գուրբանյանի գործով անդրադառնալով վերը նշված նորմերի վերլուծությանը, գտել է, որ վնաս պատճառած անձը կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը պարտականություն են կրում ապահովագրական պատահարի տեղի ունենալն իրենց հայտնի դառնալուց հետո **անհապաղ (ողջամիտ ժամկետում)** տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին: Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանված բացառություններին (յո՛ւն, «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ն ընդդեմ Վաչագան Խաչատրյանի և Անդրանիկ Գուրբանյանի թիվ SԳ3/0222/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

Զարգացնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքի ծագման հիմքերից մեկն էլ այն է, երբ ապահովագրա-

կան ընկերությունը պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով չի տեղեկացվում պատահարի մասին: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման իրավունքի առկայությունը գնահատելիս նախ անհրաժեշտ է պարզել ապահովագրական ընկերությանը պատահարի մասին տեղեկացնելու փաստը, այսինքն՝ արդյո՞ք ապահովագրական ընկերությունն ընդհանրապես տեղեկացվել է պատահարի մասին: Այնուհետև գնահատման է ենթակա տեղեկացման ժամանակի և կարգի համապատասխանությունը ապահովագրական պայմանագրով սահմանված ժամանակին և կարգին: Այն դեպքում, երբ պատահարի մասին ծանուցումը եղել է այլ պայմաններում, քան սահմանված է պայմանագրով, մասնավորապես՝ պատահարի մասին ապահովագրողը ծանուցվել է ավելի ուշ, քան սահմանված է պայմանագրով, ապա գնահատման է ենթակա ծանուցման ժամկետի ողջամտությունը՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համատեքստում՝ «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ն ընդդեմ Վաչագան Խաչատրյանի և Անդրանիկ Գուլբանյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրում է, որ ծանուցման ժամկետի անհապաղությունը (ողջամտությունը) պարզելու համար էական նշանակություն ունի պատահարի հստակ ժամանակահատվածն այն դեպքերում, երբ պատահարի և տեղեկացման ժամանակահատվածի միջև տևողությունը երկար չէ: Այլ կերպ ասած՝ եթե պատահարից հետո մինչև ապահովագրական ընկերությանը տեղեկացնելը չի անցել շատ երկար ժամանակ (օրինակ՝ օրեր), ապա միայն պատահարի ժամանակահատվածի հստակ լինելու պայմաններում է հնարավոր եզրահանգում անել ծանուցման ժամկետի ողջամտության մասին (օրինակ՝ եթե ծանուցումը կատարվել է ենթադրաբար 1-1.5 ժամվա ընթացքում): Այսինքն՝ որքան կարճատև է պատահարի մասին ապահովագրական ընկերությանը տեղեկացնելու հապաղումը, այնքան ավելի է կարևորվում պատահարի ժամանակի հստակությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Էդգար Սաղաթեյանի միջև 29.12.2013 թվականին կնքված Վկայագրով ապահովագրվել է «VOLKSWAGEN PASSAT 1.8» մակնիշի 90 OS 404 պետհամարանիշի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը: Լիազորված տիրապետող է հանդիսացել նաև Վաղարշակ Սաղաթեյանը, ում մասնակցությամբ 15.08.2014 թվականին տեղի է ունեցել ավտոկոլապ: Պատահարի մասնակիցների տված բացատրությունների, ինչպես նաև դրանց տվյալների հիման վրա կազմված Ծառայության ավագ տեսուչ Վ. Սարգսյանի երակկացության համաձայն՝ պատահարը տեղի է ունեցել 15.08.2014 թվականին՝ **13:40-ի սահմաններում**: Ավտոպատահարի մասին ապահովագրողը ծանուցվել է 15.08.2014 թվականին՝ ժամը 14:45-ին: Ընկերությունը պատահարում տուժող կողմին վճարել է 1.230.000 ՀՀ դրամ ապահովագրական հատուցում: 10.03.2016 թվականին Դատարանում որպես վկա հրավիրված Ծառայության տեսուչներ Հայրապետ Ավագյանը և Մանուկ Մելիքյանն իրենց ցուցմունքներով հայտնել են, որ պատահարը տեղի է ունեցել 15.08.2014 թվականին՝ կեսօրից հետո, ընդ որում, Ծառայության ավագ տեսուչ Վարդան Սարգսյանը նաև նշել է, որ եզրակացության մեջ նշվել է պատահարի մասնակիցների նշած **նոտավոր ժամանակահատվածը**: Ծառայության պետի 18.03.2016 թվականի գրության համաձայն՝ 15.08.2014 թվականին տեղի ունեցած պատահարի մասին հաղորդումն ստացվել է նույն օրը՝ ժամը 15:00-ին:

Դատարանը հայցը մեծելիս պատճառաբանել է, որ հայցվոր կողմը չի ապացուցել իր վկայակոչած այն փաստը, որ պատասխանող կողմն ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությանն ապահովագրական պատահարի մասին չի տեղեկացրել, որի արդյունքում ապահովագրական ընկերության մոտ ծագել է հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքը պատասխանողների նկատմամբ: Դատարանը նշել է, որ Ծառայության ՃՏՊ բաժնի ավագ տեսուչ Վ. Սարգսյանի կողմից կազմված եզրակացության և ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշման համաձայն՝ պատահարը տեղի է ունեցել 15.08.2014 թվականին՝ **ժամը 13:40-ի սահմաններում**, որը չի կարող հիմք հանդիսանալ վնաս պատճառած անձի նկատմամբ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքի



ծագման համար, քանի որ Վաղարշակ Սաղաթեյանի կողմից ներկայացվել են բավարար ապացույցներ, որոնք կարող են հաստատել նրա կողմից պատահարից հետո **անհապաղ (ողջամիտ ժամկետում կամ օբյեկտիվորեն առաջին իսկ հնարավորության առկայության պարագայում) ապահովագրական ընկերությանը ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու մասին:**

Վերաքննիչ դատարանը Դատարանի 19.04.2016 թվականի վճիռը բեկանելիս պատճառաբանել է, որ Ծառայության կողմից կազմված եզրակացության առկայության պայմաններում պատահարի տեղի և ժամանակի մասին դրանում առկա տեղեկությունները պետք է ընդունվեն որպես հիմք, եթե գործի քննության ընթացքում չի ապացուցվել հակառակը: Հակառակը ապացուցելու պարտականությունը պետք է դրվի այն կողմի վրա, ով վկայակոչում է, որ պատահարը իրականում տեղի է ունեցել այլ վայրում կամ այլ ժամանակահատվածում, քան նշված է համապատասխան եզրակացությունում: Սույն գործով նշված փաստը վկայակոչել է պատասխանող Վաղարշակ Սաղաթեյանը, հետևաբար վերջինս էլ պետք է կրեր այդ փաստն ապացուցելու պարտականությունը: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտել է, որ առկա է գործի նոր քննության անհրաժեշտության:

Մինչդեռ, վերը շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի ապահովագրող Ընկերության կողմից վկայակոչած հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) հիմքում ընկած այն փաստի ապացուցումը, ըստ որի՝ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող անձ Վաղարշակ Սաղաթեյանն ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությանն ապահովագրական պատահարի տեղի ունենալն իրեն հայտնի դառնալուց հետո ապահովագրողին **անհապաղ (ողջամիտ ժամկետում)** չի տեղեկացրել, որի արդյունքում ապահովագրական ընկերության մոտ ծագել է հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք վնաս պատճառած անձանց նկատմամբ:

Ընկերությունը, հայց ներկայացնելով Դատարան, նշել է, որ Վաղարշակ Սաղաթեյանը, ԱՊՊԱ պայմանագրով ունենալով ապահովագրական պատահարի տեղի ունենալն իրեն հայտնի դառնալուց հետո ապահովագրողին անհապաղ (ողջամիտ ժամկետում) տեղեկացնելու պարտավորություն, պատշաճ չի կատարել ստանձնած պարտավորությունը՝ 15.08.2014 թվականին՝ **ժամը 13:40-ի սահմաններում**, տեղի ունեցած պատահարի մասին Ընկերությունը տեղեկացվել է 15.08.2014 թվականին՝ ժամը 14:45-ին:

Որպես Վաղարշակ Սաղաթեյանի կողմից ԱՊՊԱ պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման վերաբերյալ ապացույց՝ Ընկերությունը Դատարան է ներկայացրել Ծառայության ավագ տեսուչ Վ. Սարգսյանի կողմից 21.08.2014 թվականին կազմված եզրակացությունը, ըստ որի՝ Վաղարշակ Սաղաթեյանը, 15.08.2014 թվականին՝ **ժամը 13:40-ի սահմաններում**, վարելով «VOLKSWAGEN PASSAT 1.8» մակնիշի 90 OS 404 պետհամարանիշի ավտոմեքենան և թույլ տալով օրենսդրության նորմերի խախտմաներ, բխվել է Հայկ Ամիրյանի վարած «MAZDA» մակնիշի 17 NL 111 պետհամարանիշի ավտոմեքենային:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկայակոչված եզրակացության համաձայն՝ **պատահարը տեղի է ունեցել ժամը 13:40-ի սահմաններում**, որպիսի պարագայում պարզ չէ, թե ստույգ որ ժամին է տեղի ունեցել պատահարը: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է «սահմաններում» արտահայտության իմաստային նշանակությամբ՝ նկատի ունենալով, որ հայերենում «սահմաններ» բառի իմաստներից մեկն էլ որևէ բանի **մոտավոր** չափն է՝ քանակը, ծավալը և այլն<sup>1</sup>:

Ավելին՝ գործում առկա մյուս ապացույցները, մասնավորապես՝ Վաղարշակ Սաղաթեյանի և Հայկ Ամիրջանի՝ 19.08.2014 թվականին պատահարի վերաբերյալ տրված բացատրությունները, Ծառայության 18.01.2016 թվականի գրությունը, 10.03.2016 թվականին Դատարանում որպես վկա հրավիրված Ծառայության ավագ տեսուչ Վարդան Սարգսյանի, տեսուչներ Հայրապետ Ավագյանի և Մանուկ Մելիքյանի ցուցմունքները, Ծառայության պետի 18.03.2016 թվականի գրությունը ևս վկայում են այն մասին, որ 15.08.2014 թվականին տեղի ունեցած պատահարի ժամանակահատվածը հստակ չէ, այսինքն՝ այն տեղի չի ունեցել ստույգ ժամը 13:40-ին: Հետևաբար հնարավոր չէ նաև եզրակացություն անել այն մասին, որ պատահարի մասին 15.08.2014 թվականին՝ ժամը 14:45-ին, ծանուցելն անհասպաղ (ողջամիտ ժամկետում) չի կատարվել:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով Ծառայության ավագ տեսուչ Վարդան Սարգսյանի կողմից 21.08.2014 թվականին կազմված եզրակացության մեջ նշված՝ պատահարի ժամանակահատվածի ոչ ստույգ լինելը, գտնում է, որ նշված եզրակացությամբ չի կարող հիմնավորվել այն հանգամանքը, որ Վաղարշակ Սաղաթեյանն ապահովագրական պատահարի տեղի ունենալն իրեն հայտնի դառնալուց հետո ապահովագրողին **անհասպաղ (ողջամիտ ժամկետում)** չի տեղեկացրել:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը՝ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող անձի՝ Վաղարշակ Սաղաթեյանի կողմից ապահովագրական պատահարի տեղի ունենալն իրեն հայտնի դառնալուց հետո ապահովագրողին **անհասպաղ (ողջամիտ ժամկետում)** չտեղեկացնելը, հիմնավորել է միայն Ծառայության ավագ տեսուչ Վ. Սարգսյանի կողմից 21.08.2014 թվականին կազմված եզրակացության մեջ առկա «**պատահարը տեղի է ունեցել ժամը 13:40-ի սահմաններում**» արտահայտությամբ՝ պատշաճ չանդրադառնալով դրա արժանահավատությանը, ինչպես նաև այդ ապացույցը չզննհատելով գործում գտնվող մյուս ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցվորի կողմից ապացուցման ենթակա փաստը չապացուցվելու պայմաններում հայցվորը պետք է կրեր դրա բացասական հետևանքները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն րեկանելու համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի որոշումը վերանայում և րեկանում է միայն Վաղարշակ Սաղաթեյանի մասով գործը նոր քննության ուղարկելու մասով՝ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք ներկայացրել է միայն Վաղարշակ Սաղաթեյանը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրա-

<sup>1</sup> Տե՛ս, Էդուարդ Աղայան «Արդի հայերենի բացատրական բառարան», «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976:

քանցյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին մասնակիորեն օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի իրավակարգավորումը, գտնում է, որ Ընկերությունից հօգուտ Վաղարշակ Սաղաթեյանի ենթակա է բռնագանձման 36.900 (1.230.000\*3%) ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.09.2016 թվականի որոշման՝ Վաղարշակ Սաղաթեյանի մատով գործը նոր քննության ուղարկելու մասը, և այդ մատով օրինական ուժ տալ Երևանի Սպլաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 19.04.2016 թվականի վճիռ:

2. «Ռոսգոստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ից հօգուտ Վաղարշակ Սաղաթեյանի բռնագանձել 36.900 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
 Քաղաքացիական գործ թիվ **ԿԴ1/1999/02/14**  
 Քաղաքացիական գործ թիվ ԿԴ1/1999/02/14  
 Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան  
 Դատավորներ՝ Լ. Գրիգորյան  
 Մ. Հարթեյան

2017թ.

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ* Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ  
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
 Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
 Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
 Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
 Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին դռնբաց դատական նիստում, քննելով Արմեն Ստեփանյանի ներկայացուցիչ Վառդգես Ծառուկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.04.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ «Նաիրի Ինչուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայցի ընդդեմ Արմեն Ստեփանյանի՝ պատճառած վնասի փոխհատուցման պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Արմեն Ստեփանյանից բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառած վնասի փոխհատուցման գումար, ինչպես նաև նշված գումարին հաշվեգրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ն. Գալստյան) (այսուհետ՝ Դատարան) 16.12.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է հայցը՝ 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառած վնասի փոխհատուցման գումար բռնագանձելու մասով, բավարարել, իսկ նշված գումարին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսադրույքներ հաշվեգրելու մասով, մերժել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 08.04.2016 թվականի որոշմամբ Արմեն Ստեփանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.12.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմեն Ստեփանյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003-րդ, 1017-րդ, 1019-րդ, 1021-րդ, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 81-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ հոդվածները: Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը չի կատարել ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտում՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ Ընկերության հետ կնքված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիրը, ինչպես նաև Ընկերության կողմից սահմանված կանոնները չեն նախատեսել կոնկրետ և հստակ ժամկետ ծանուցման համար: Արմեն Ստեփանյանը չի տեղեկացվել և վերջինիս չի բացատրվել, թե պատահարից հետո ապահովագրող ընկերությանը պատահարի մասին չտեղեկացնելու համար ինչպիսի պատասխանատվություն և հետևանքներ են առաջանում: Այս դեպքում կիրառվել է «առաջին իսկ հնարավորության դեպքում» հասկացությունը, որը չի խախտվել, և պատասխանողը հոգեկան վիճակը կայունանալուց հետո անհապաղ ծանուցել է պատահարի մասին՝ նկատի ունենալով, որ այդ օրը պատահարից անմիջապես հետո Արմեն Ստեփանյանը մինչև ժամը 23:50 գտնվել է ոստիկանական բաժնում և տվել բացատրություն դեպքի առնչությամբ, ինչը մեկ անգամ ևս վկայում է, որ վերջինս գտնվել է հոգեբանական ծանր իրավիճակում: Ակնհայտ է, որ սույն գործի պարագայում, երբ Արմեն Ստեփանյանի մոտ վերացել են պատահարի հետևանքով առաջացած հոգեբանական իրավիճակի հետևանքները, վերջինս պատահարի մասին ողջամիտ ժամկետում տեղեկացրել է ապահովագրողին՝ ըստ էության կատարելով օրենքով և ապահովագրության պայմանագրով ստանձնած պարտավորությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.04.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերության և Արմեն Ստեփանյանի միջև 30.04.2013 թվականին կնքված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SA-252538 վկայագրի (այսուհետ՝ Վկայագիր) համաձայն՝ ապահովագրվել է «KAMAZ 5511» մակնիշի 12 ՕՍ 926 պետհամարանիշի բեռնատար ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը:

Վկայագրի 13-րդ կետի համաձայն՝ ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ գանգահարելով ԱԳՊԿ կտրոնի վրա նշված հեռախոսահամարով **(հատոր 1-ին, գ.թ. 9):**

2) Պատահարի վերաբերյալ 14.04.2014 թվականին կազմված արձանագրության և թիվ ԿԳ3/0044/01/13 քրեական գործով 26.08.2014 թվականի դատավճռի համաձայն՝ Արմեն Ստեփանյանը «KAMAZ 5511» մակնիշի 12 ՕՍ 926 պետհամարանիշի բեռնատար ավտոմեքենայով Աբովյան քաղաքի 9-րդ փողոցում հետընթաց կատարելիս վրաերթի է ենթարկել Հակոբ Ղազանչյանին, ով տեղում մահացել է **(հատոր 1-ին, գ.թ.12, 15-21):**

3) Սերիկ Կիրակոսյանի կողմից ստացված ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ 14.05.2014 թվականի դիմումի հիման վրա 05.11.2014 թվականին կազմված

թիվ 5407 որոշման համաձայն՝ Ընկերության կողմից ավտոպատահարի հետևանքով մահացած Հակոբ Ղազարյանի իրավահաջորդ Սերիկ Կիրակոսյանին, որպես ապահովագրական հատուցում, վճարվել է 1.000.000 ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 26.08.2014 թվականի կայացված թիվ ԿԴ3/0044/01/14 քրեական գործով դատավճիռը (**հատոր 1-ին, գ.թ. 11**):

4) Պատահարի վերաբերյալ հարցաթերթիկի և հեռախոսագանգի ձայնագրության համաձայն՝ պատահարը տեղի է ունեցել 13.04.2014 թվականին ժամը 15.00-ին, սակայն ապահովագրողը ծանուցվել է 14.04.2014 թվականին ժամը 16:16-ին (**հատոր 1-ին, գ.թ. 8, 13**):

5) ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի քննչական բաժնում ավտոպատահարի օրը՝ 13.04.2014 թվականին, Արմեն Ստեփանյանը ժամը 22.10-ից մինչև ժամը 23.50-ը որպես կասկածյալ հարցաքննվել է՝ հարցաքննության ընթացքում նշելով, որ «խնդրում եմ ինձ այլևս հարցեր մի տվեք, քանի որ դեպքի հետ կապված լարված եմ» (**հատոր 1-ին, 60-62**):

#### **4.Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ապահովադիր կողմից ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին անհապաղ (ողջամիտ ժամկետում) տեղեկացնելու առանձնահատկությունների վերաբերյալ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ապահովադիր կողմից ապահովագրական պարահարի մասին ապահովագրողին անհապաղ (ողջամիտ ժամկետում) տեղեկացնելու առանձնահատկություններին՝ վերահասարակելով և զարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1017-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ ոչ կյանքի ապահովագրության պայմանագրով ապահովադիրն ապահովագրական պատահարի վրա հասնելն իրեն հայտնի դառնալուց հետո պարտավոր է այդ մասին **անհապաղ (ողջամիտ ժամկետում)** տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին: **Եթե պայմանագրով նախատեսված է ծանուցման ժամկետ** (և կամ) եղանակ, **ապա դա պետք է արվի սահմանված ժամկետում** ու պայմանագրում նշված եղանակով:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագրով ապահովադիր համարվող անձը և (կամ)ավտոտրանսպորտայինմիջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձն ապահովագրական պատահարի դեպքում պարտավոր են այդմասինհայտնել ապահովագրական ընկերությանը: Ապահովագրական պատահարի մասին հայտնելու ժամկետները և կարգը, ինչպես նաև ապահովագրական պատահարից հետո ապահովագրական ընկերության և պատահարի մասնակիցների այլ գործողությունները սահմանվում են «Հայաստանի ավտոպահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կանոններով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներից ԱՊՊԱ պայմանագրով սահմանվում են բացառություններ այն դեպքերի համար, երբ ապահովադիրը և (կամ)ավտոտրանսպորտայինմիջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պատահարի հետևանքով հայտնվել են անգիտակից վիճակում կամ **այնպիսի իրավիճակում, որ անհնարին էր ապահովագրական ընկերությանը պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական պատահարի մասին տեղեկացնել**, կամ ապահովադիրը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել

ապահովագրական պատահարի մասին՝ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի կողմից նրան չտեղեկացնելու կամ այլ պատճառով: Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը կրում են ապահովագրական ընկերությանը նրանց կողմից ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու անհնարինության (անտեղյակության) ապացուցման պարտականությունը: Նույն մասով նախատեսված տեղեկացման պարտականությունն անհնարին դարձնող հանգամանքների վերացման (ապահովագրական պատահարի մասին տեղեկացվելու) դեպքում ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձն ապահովագրական պատահարի մասին պարտավոր է պայմանագրով սահմանված կարգով անմիջապես հայտնել ապահովագրական ընկերությանը:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի վնաս պատճառած անձի նկատմամբ, եթե ԱՊՊԱ **պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել** ապահովագրական պատահարի մասին:

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադիրի) նկատմամբ, եթե ԱՊՊԱ **պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել** ապահովագրական պատահարի մասին:

Վկայագրի՝ պատահարի մասին Ապահովագրողին ծանուցման ժամկետի և կարգի մասին 13-րդ կետի համաձայն՝ Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով ԱՊՊԱ կտրոնի վրա նշված հեռախոսահամարով:

ՀՀ վճարելի դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերը նշված նորմերի վերլուծությանը, գտել է, որ վնաս պատճառած անձը կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը պարտականություն են կրում ապահովագրական պատահարի տեղի ունենալիս իրենց հայտնի դառնալուց հետո **անհապաղ (ողջամիտ ժամկետում)** տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին: Այս կապակցությամբ ՀՀ վճարելի դատարանը, հարկ համարելով անդրադառնալ օրենսդրի կողմից նախատեսված՝ ապահովագրական ընկերությանն ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու պարտականության կատարման «անհապաղության» եզրույթի ընկալմանն ու մեկնաբանմանը, արձանագրել է, որ այն ունի հետևյալ բովանդակությունը. «անհապաղ» նշանակում է առանց հապաղելու, անմիջապես, նույն պահին, հնարավորինս արագ, առավելագույնս սեղմ ժամկետում: Մինչնույն ժամանակ, ՀՀ վճարելի դատարանը գտել է, որ օրենսդիրը, սահմանելով «անհապաղության» եզրույթը, այն չի դիտել որպես բացարձակ պայման, քանի որ իրավանորմի հետագա շարադրանքում կիրառել է նաև «ողջամիտ ժամկետում» հասկացությունը: Իսկ ողջամիտ կարող է գնահատվել այն ժամանակահատվածը, որն **օբյեկտիվորեն անհրաժեշտ է որևէ կոնկրետ գործողության իրականացման համար**: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում «անհապաղության» պարտադիր պայմանի գնահատումն իրականացնելիս դատարանները ոչ միայն պետք է հաշվի առնեն ծանուցման անմիջապես, նույն պահին իրականացված լինելու փաստը, այլև՝ դրա իրականացման՝ առաջին իսկ օբյեկտիվ, **արդարացված հնարավորությունը**:

Ընդ որում, եթե տեղի է ունենում ապահովագրական պատահար, ապա ապահովադիրին պատճառված վնասից բխող նրա կամ շահառուի պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով: Սակայն, ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջ

ջի (սուբրոգացիայի) իրավունք է ձեռք բերում վնաս պատճառած անձի և (կամ) վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ, եթե ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով, այսինքն՝ անհապաղ (ողջամիտ ժամկետում կամ օբյեկտիվորեն առաջին իսկ հնարավորության առկայության պարագայում) ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ ապահովագրական պատահարի մասին հայտնելու պարտականության կատարման հարցում բացառություններ են համարվում հետևյալ դեպքերը.

1. երբ ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պատահարի հետևանքով հայտնվել են **անգիտակից վիճակում**,

2. հայտնվել են այնպիսի իրավիճակում, որ **անհնարին էր** ապահովագրական ընկերությանը պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելը,

3. ապահովադիրը **տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել** ապահովագրական պատահարի մասին՝ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի կողմից նրան չտեղեկացնելու կամ այլ պատճառով (*տես*, «Արևելահայաստան» ապահովագրական ՄՊԸ-ն ընդդեմ Վաչագան Խաչատրյանի և Անդրանիկ Գուլբանյանի թիվ SԴ3/0222/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

Վերահաստատելով և զարգացնելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վնաս պատճառած անձը կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը թեև պարտականություն են կրում ապահովագրական պատահարի տեղի ունենալից իրենց հայտնի դառնալուց հետո **անհապաղ (ողջամիտ ժամկետում)** տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին, այնուամենայնիվ **առաջին իսկ հնարավորության դեպքում ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու հնարավորությունը կարող է պայմանավորվել մի շարք հանգամանքներով, քանի որ ապահովագրական պատահարի հետևանքով կարող է ստեղծվել այնպիսի իրադրություն**, որի ազդեցությունն օբյեկտիվորեն կարող է հիմք հանդիսանալ վնաս պատճառած անձի կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ համար հապաղելու օրենքով և ապահովագրության պայմանագրով ստանձնած պարտավորությունը կատարելուց: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում գնահատման պետք է արժանացնել ոչ միայն ապահովագրողին տեղեկացնելու անհապաղ հնարավորությունը, այլ նաև առաջին իսկ **արդարացված** հնարավորությունը:

Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ ապահովադիրի կողմից **որոշակի միջավայրում հայտնվելը (օրինակ՝ պատահարի պատճառով կողմերի միջև հնարավոր վեճ)** օբյեկտիվորեն կարող է ազդել ապահովադիրի գործողությունների վրա՝ ըստ էության երկարացնելով ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին անհապաղ (ողջամիտ ժամկետում) տեղեկացնելու ողջամիտ ժամանակահատվածը: Տեղեկացման հապաղումը ողջամտորեն արդարացված կարող է համարվել նաև այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, ինչպիսիք են՝ պատահարի բարդ մեխանիզմը, պատահարի գիշերային ժամը, անմարդաբնակ վայրը և (կամ) պատահարի մասնակիցների համար կապի միջոցների անհասանելիությունը, ինչպես նաև ցանկացած այլ օբյեկտիվ հանգամանքի առկայության դեպքում, որը թույլ կտա առանց ողջամիտ կասկածների եզրակացնել, որ նույնպիսի իրավիճակում հայտնված յուրաքանչյուր բարեխիղճ անձ տեղեկացման պարտավորությունը կկատարեր նույն կամ գրեթե նույն հապաղումամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ անկախ պատահարի կոնկրետ հանգամանքներից՝ ցանկացած պատահարի մասին տեղեկացման՝ որոշակի տևողությամբ հապաղումը **ողջամտորեն արդարացված** և անհապաղ տեղե-



կացմանը համարժեք համարելու համար բավարար հիմք կարող են հանդիսանալ նաև այն դեպքերը, երբ պատահարի հետևանքով ստացվել են մարմնական վնասվածքներ, որոնց հետևանքով թեև անձը չի հայտնվել անգիտակից վիճակում, սակայն ստեղծվել է օբյեկտիվ իրավիճակ, որն անհնար է դարձրել ապահովագրական ընկերությանը պատահարի մասին տեղեկացնելը: Ընդ որում, վնասվածքները կարող են լինել նաև այնպիսին, որոնց առկայությունը կարող է չբացահայտվել սովորական արտաքին գննությամբ (օրինակ՝ ներքին օրգանների վնասվածքների դեպքում): Բացի այդ, պատահարի մասնակցի մոտ կարող է ծագել լրացուցիչ միջամտություն կիրառելու կամ այդպիսի միջամտության աղբյուրներ որոնելու անհրաժեշտություն (օրինակ՝ ավտոմեքենաների բախման հետևանքով ավելի մեծ ծավալի վնասների ծագումը կանխելու համար միջոցներ ձեռնարկելը՝ մասնավորապես հնարավոր հրդեհը կանխելու նպատակով), որպիսի գործոնները իրավիճակով թելադրված լրացուցիչ գործողություններ կատարելու (այդ թվում՝ ապահովագրողից առաջ այլ անձանց զանգահարելու) անհրաժեշտություն են առաջացնում: Ուստի որոշակի **ողջամիտ տևողությամբ հապաղումը** ցանկացած պատահարի դեպքում պետք է համարել ոչ միայն բնական, այլև անվիճարկելի՝ պատահարի մասնակիցների իրավունքների անհարկի սահմանափակումներն ու հնարավոր վնասները բացառելու կամ առնվազն նվազագույնի հասցնելու նպատակով՝ յուրաքանչյուր դեպքում գնահատման արժանացնելով պատահարի մասին ապահովագրողին տեղեկացնելու՝ **ողջամիտ ժամկետում արդարացված հնարավորությունը**:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Արմեն Ստեփանյանի միջև 30.04.2013 թվականին կնքված Վկայագրով ապահովագրվել է «KAMAZ 5511» մակնիշի 12 ՕՍ 926 պետհամարանիշի բեռնատար ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը: Նշված ավտոմեքենայով հետընթաց կատարելիս Արմեն Ստեփանյանը վրաերթի է ենթարկել Հակոբ Ղազանչյանին, ով տեղում մահացել է: Վերջինիս իրավահաջորդին Ընկերության կողմից վճարվել է 1.000.000 ՀՀ դրամ ապահովագրական հատուցում: Նշված պատահարը տեղի է ունեցել 13.04.2014 թվականին ժամը 15.00-ին, սակայն ապահովագրողը ծանուցվել է 14.04.2014 թվականին ժամը 16.16-ին: Արմեն Ստեփանյանը ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի քննչական բաժնում 13.04.2014 թվականին ժամը 22.10-ից մինչև ժամը 23.50-ը որպես կասկածյալ հարցաքննվել է՝ հարցաքննության ընթացքում նշելով, որ «խնդրում եմ ինձ այլևս հարցեր մի տվեք, քանի որ դեպքի հետ կապված լարված եմ»:

Դատարանը հայցը մասնակի բավարարելիս պատճառաբանել է, որ Արմեն Ստեփանյանի կողմից չի ներկայացվել ապացույց առ այն, որ վթարից հետո գտնվել է հոգեկան ծանր, լարված վիճակում, և որ ապահովագրական ընկերությանը դեպքի մասին ծանուցելու առաջին իսկ հնարավորությունը ստեղծվել է հոգեկան վիճակը փոքր-ինչ կարգավորվելուց հետո:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի 16.12.2015 թվականի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, պատճառաբանել է, որ Դատարանն իրավաչափորեն հիմք է ընդունել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավակարգավորումը և արձանագրել, որ պատասխանողի կողմից ապացույց չի ներկայացվել առ այն, որ վերջինս վթարից հետո գտնվել է հոգեկան ծանր և լարված իրավիճակում, և որ առաջին իսկ հնարավորությունն ապահովագրական ընկերությանը պատահարի մասին ծանուցելու համար ստեղծվել է վթարի տեղի ունենալու հաջորդ օրը:

Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գտնում է, որ ստորադաս դատարանների եզրահանգումները հիմնավոր են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով Արմեն Ստեփանյանը հայցապահանջի դեմ առարկությունների հիմքում դրել է այն հանգամանքը, որ պատահարից հետո գտնվել է հոգեկան խիստ հուզմունքի վիճակում և առաջին իսկ հնարավորության դեպքում Ընկերությանը տեղեկացրել է պատահարի մասին:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարաններն իրավաչափորեն եզրահանգել են, որ սույն գործով առկա է Ընկերության հետադարձ պահան-

ջի (սուբբոգացիայի) իրավունք Արմեն Ստեփանյանի նկատմամբ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արմեն Ստեփանյանի կողմից ապացույց չի ներկայացվել այն մասին, որ պատահարից հետո մինչև Ընկերությանը տեղեկացնելու ժամանակահատվածում (մոտավորապես 25 ժամ) առկա են եղել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բացառությունները:

Ընդ որում, սույն գործով ներկայացված ապացույցների համաձայն՝ Արմեն Ստեփանյանի՝ պատահարից հետո Ընկերությանը տեղեկացնելու պարտականության կատարման անհնարինություն առկա է եղել միայն հարցաքննության ընթացքում: Մինչդեռ հարցաքննության ավարտից հետո Ընկերությունը պատահարի մասին տեղեկացվել է մոտավորապես 16 ժամ անց: Արմեն Ստեփանյանի պնդմամբ նման հապաղումը պայմանավորված է եղել իր հոգեկան խիստ հուզմունքի վիճակով: Վճարեկ դատարանը գտնում է, որ ստեղծված իրավիճակում Արմեն Ստեփանյանը կարող էր գտնվել հուզական լարված վիճակում, սակայն վերջինս չի գտնվել անգիտակից վիճակում, ինչպես նաև չի ներկայացրել ապացույց այն մասին, որը կարող էր հաստատել տվյալ իրավիճակում այնպիսի իրական և օբյեկտիվ պատճառների առկայությունը, որոնք կարող էին հիմք հանդիսանալ համապատասխան գործողության կատարման անհնարինության ստեղծման և հետագայում այդպիսի անհնարինության հիմնավորման համար՝ սկսած պատահարի պահից՝ 13.04.2014 թվականի ժամը 15:00-ից, մինչև Ընկերությանը պատահարի մասին տեղեկացնելու պահը՝ 14.04.2014 թվականի ժամը 16:16-ը, բացառությամբ հարցաքննության ժամանակահատվածը՝ 13.04.2014 թվականի ժամը 22:10-ից մինչև ժամը 23:50-ը:

Ըստ այդմ, Վճարեկ դատարանը գտնում է, որ սույն գործում բացառապես սուբյեկտիվ գործոնի առկայությունը՝ մահվան ելքով պատահարի կապակցությամբ հոգեկան հուզմունքի վիճակը, դեռևս բավարար չէ Ընկերությանը՝ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական պատահարի մասին տեղեկացման անհնարինության հանգամանքի առկայությունը հիմնավորված համարելու համար:

Այսպիսով, սույն գործով չեն ներկայացվել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված բացառությունների առկայությունը հիմնավորող ապացույցներ, որպիսի պարագայում Դատարանն իրավաչափորեն բավարարել է 1.000.000 ՀՀ դրամ փոխհատուցում վճարելու պահանջը, և որպիսի եզրահանգումն իրավաչափորեն հիմնավոր է համարել նաև Վերաքննիչ դատարանը:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճարեկ դատարանը գտնում է, որ սույն վճարեկ բողոքի քննության արդյունքներով չի հիմնավորվում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի առկայությունը, որպիսի պայմաններում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ Վճարեկ դատարանի՝ դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Միաժամանակ Վճարեկ դատարանը վճարեկ բողոքը մերժելիս հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ Դատարանի վճիռը վերաքննության կարգով բողոքարկվել և համապատասխանաբար վերանայվել է միայն 1.000.000 ՀՀ դրամ բավարարված հայցապահանջի մասով:

### **5. Վճարեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դա-

տարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» կետի համաձայն՝ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գույքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքիտասնապատիկից և ոչ ավելի բազայինտուրքի հազարապատիկից:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ պետական տուրքի վճարումից ազատում, պետական տուրքի նվազեցում, պետական տուրքի դրույքաչափի նվազեցում, պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում, պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի իրավակարգավորումը, գտնում է, որ Արմեն Ստեփանյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 30.000 ՀՀ դրամ (1.000.000\*3%)՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.04.2016 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. Արմեն Ստեփանյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԱՐԱԳ/0072/02/15**  
 դատարանի որոշում **2017թ.**  
 Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ/0072/02/15  
 Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան  
 Դատավորներ՝ Մ. Հարթենյան  
 Լ. Գրիգորյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
	Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Հակոբ Հակոբյանի ներկայացուցիչ Հրաչ Ալե-  
գյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.10.2015 թվա-  
կանի որոշման դեմ՝ ըստ հայցի «ՌԵՍՈ» ԱՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ  
Վարդգես Սարգսյանի, Հակոբ Հակոբյանի, երրորդ անձ Մուրադ Սարգսյանի՝ գումար բռ-  
նագանձելու պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է համապարտության կարգով Վա-  
րդգես Սարգսյանից և Հակոբ Հակոբյանից բռնագանձել 1.193.480 ՀՀ դրամ:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս.  
Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 02.06.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
23.10.2015 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դա-  
տարանի 02.06.2015 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հակոբ Հակոբյանի ներկայացուցիչը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

#### 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմ-  
նավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Ավրուրյանասպորտային միջոցների օգտագոր-  
ծումից բխող պարասիսանսպորտային պարտադիր սպահովագրության մասին» ՀՀ օրեն-*

քի 27-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 53-րդ հոդվածները:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի կատարել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, որի հետևանքով հանգել է սխալ եզրակացության: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Վարդգես Սարգսյանի և Ընկերության միջև 21.05.2012 թվականին՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) պայմանագրի կնքման ժամանակ, ներկայացվել է նաև Հակոբ Հակոբյանի՝ որպես լիազոր տիրապետողի վարորդական վկայականը, որտեղ նշված է համապատասխան տրանսպորտային միջոց վարելու կարգը, այն է՝ վարորդական վկայական թիվ AAB287320, կարգ «C»: Հետևաբար Ընկերությունը, ի սկզբանե իմանալով, որ Հակոբ Հակոբյանը վարորդական վկայականում նշված կարգով Վարդգես Սարգսյանին պատկանող «ՎԱԶ-2121» մակնիշի 15 LS 219 պետհամարանիշի ավտոմեքենան վարելու իրավունք չունի, նրա հետ կնքել է լիազորված տիրապետողի ԱՊՊԱ պայմանագիր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.10.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 02.06.2015 թվականի վճռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Վարդգես Սարգսյանի միջև 21.05.2012 թվականին կնքված՝ «ՎԱԶ-2121» մակնիշի, 15 LS 219 պետական համարանիշով ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SE156527 վկայագրում (այսուհետ՝ Վկայագիր) Հակոբ Հակոբյանը նշված է որպես լիազորված տիրապետող: Նույն Վկայագրում նշված են նաև Հակոբ Հակոբյանի վարորդական իրավունքի վկայականի համարը՝ AAB287320, դրանում ամրագրված կարգը՝ «C», վկայականի տրման անսաթիվը՝ 18.08.1989 թվական, վարորդական ստաժը՝ 25 տարի (**հատոր 1-ին, գ.թ. 8**):

2) Հակոբ Հակոբյանի վարորդական իրավունքի վկայականի կորստյան կապակցությամբ 20.09.2012 թվականին նրա կողմից ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի բաժին ներկայացված դիմումի հիման վրա նույն օրը նրան տրվել է թիվ M1862288 ժամանակավոր վարորդական վկայականը, որը վավերական է եղել մինչև 19.10.2012 թվականը, և որում ամրագրված է եղել նույն կարգը «C» (**հատոր 1-ին, գ.թ. 49, 52**):

3) ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 2-րդ սպայական գումարտակի 2-րդ սպայական վաշտի հրամանատարի (այսուհետ՝ Ոստիկանություն) կողմից հաստատված 03.10.2012 թվականի եզրակացության համաձայն՝ 23.09.2012 թվականին Ապարան քաղաքի Բաղրամյան փողոցում միմյանց են ընդհարվել «ՎԱԶ 2124» մակնիշի 79 MM 009 հաշվառման համարանիշի և «ՎԱԶ 2121» մակնիշի 15 LT 219 հաշվառման համարանիշի ավտոմեքենաները: Պատահարը տեղի ունենալու ժամանակ «ՎԱԶ 2121» մակնիշի 15 LT 219 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարել է Հակոբ Հակոբյանը, ընդ որում, վերջինս այն վարել է՝ «իր վարորդական իրավունքի վկայականում չունենալով համապատասխան կարգ», և պատահարը տեղի է ունեցել Հակոբ Հակոբյանի թույլ տված իրավախախտման հետևանքով (**հատոր 1-ին, գ.թ. 9,10**):

4) Ընկերության կողմից հատուցվել է Հակոբ Հակոբյանի մասնակցությամբ տեղի ունեցած պատահարի արդյունքում տուժած քաղաքացուն պատճառված վնասը՝ 1.193.480 դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 11-19, 23**):

#### 4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք ապահովագրական ընկերությունը վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի լիազոր փիրապետողի նկատմամբ ունի հետադարձ պահանջի իրավունք այն հիմքով, որ վերջինս ապահովագրական պարտահարի պահին չի ունեցել ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք, եթե ապահովագրական ընկերությունն ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս տեղեկացված է եղել լիազոր փիրապետողի՝ փոխյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու համապատասխան կարգ չունենալու մասին:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովագրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 996-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրության պայմանագրով մի կողմը՝ ապահովագրողը, որոշակի միանվագ կամ պարբերական վճարի (ապահովագրավճարի) դիմաց պարտավորվում է մյուս կողմին՝ ապահովադրին կամ նրա մատնանշած անձին (շահառուին), որոշակի ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել որոշակի իրադարձության (իրադարձությունների) տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար (ապահովագրական հատուցում), եթե այդ իրադարձությունների տեղի ունենալը կրում է հավանական և (կամ) պատահական բնույթ և կախված չէ կողմերի կամ ապահովագրված անձի կամ շահառուի կամքից (բացառությամբ կյանքի ապահովագրության այն դեպքերի, երբ հատուցվում է որոշակի հավաստի և ակնկալվող իրադարձության տեղի ունենալը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 998-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապահովագրության պայմանագրի էական պայմաններից է նաև՝ ապահովագրական պատահարը (պատահարները) կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքում տրվում է ապահովագրական հատուցումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովագրողի կողմից ապահովագրական պայմանագրի հիման վրա ապահովադրին կամ շահառուին վճարման ենթակա գումարն է՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբա-

նական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (**տրանսպորտային միջոցների**, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: (...) Վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առավել վտանգի աղբյուրի սեփականատերը պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրի պատճառած վնասի համար, եթե ապացուցում է, որ աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով: Նման դեպքերում առավել վտանգի աղբյուրի պատճառած վնասի համար պատասխանատվությունը կրում են աղբյուրն ապօրինի տիրապետած անձինք: Աղբյուրի սեփականատիրոջ տիրապետումից այդ աղբյուրի ապօրինի վերցնելու մեջ նրա մեղքի առկայության դեպքում պատասխանատվությունը կարող է դրվել ինչպես առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջ, այնպես էլ այն ապօրինի ձեռք բերողի վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովադրին (ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մատով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1025-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ նույն գլխով սահմանված դրույթները կիրառվում են ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության հետ կապված հարաբերությունների նկատմամբ, **եթե այլ կարգավորում նախատեսված չէ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով:**

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագրով նույն օրենքով սահմանված պայմաններով ապահովագրվում է տուժած անձանց պատճառված վնասների հատուցման համար ապահովագրված անձանց պատասխանատվությունը:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի վնաս պատճառած անձի նկատմամբ, եթե նա ապահովագրական պատահարի պահին չի ունեցել ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք կամ օրենքով սահմանված կարգով գրկված է եղել այդպիսի իրավունքից, բացառությամբ նույն մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքի:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդրադառնալով վերը նշված իրավանորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ սեփականատերը, իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրելով, փաստացի հնարավորություն է ստանում ապահովագրավճարի դիմաց ապահովագրողին փոխանցելու վնասը (որ կարող է պատճառված լինել ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ ավտոմեքենայի լիազորված տիրապետողի կողմից) հատուցելու իր պարտականությունը: Ապահովագրողն էլ օրենքով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում հնարավորություն ունի հետադարձ պահանջի միջոցով հետ ստանալու իր կողմից կատարված հատուցումը: Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի իրավակարգավորումը վերաբերում է ավտոմեքենայի սեփականատիրոջ և տուժողի իրավահարաբերություններին՝ մասնավորապես նախատեսելով սեփականատիրոջ պատասխանատվության պայմանները և այն բացառող դեպքերը, ապա «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը վերաբերում է ավտոմեքենայի սեփականատիրոջ և ապահովագրական ընկերության միջև ծագած իրավահարաբերություններին՝ մասնավորապես ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքին:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքը նախատեսված է *վնաս պատճառողի, վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) և (կամ) օրենքով սահմանված այլ անձանց նկատմամբ*: ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ *սեփականատիրոջ (ապահովադրի)* պատասխանատվության հիմքերը հստակ և սպառիչ սահմանված են նույն հոդվածով, հետևաբար սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ այլ հիմքերով հետադարձ պահանջ չի կարող ներկայացվել: Ուստի այն դեպքերում, երբ ավտոմեքենայի սեփականատերն ապահովագրել է իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը, ապա ապահովագրական ընկերության կողմից տուժող կողմին հատուցում վճարելու դեպքում ապահովագրական ընկերությունը սեփականատիրոջ դեմ հետադարձ պահանջ կարող է ներկայացնել միայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով թվարկված դեպքերում (*տես, «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ի ընդդեմ «ՍՄԱՐՏՍՈՎԹ», ՄՊԸ-ի թիվ ԿԳՎ/2015/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

Վերահաստատելով և զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ վճռաբեկ դատարանը հավելում է, որ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով հստակ և սպառիչ սահմանված են նաև *վնաս պատճառած անձի* պատասխանատվության հիմքերը: Հետևաբար տուժող կողմին ապահովագրական ընկերության կողմից հատուցում վճարելու դեպքում վերջինս վնաս պատճառած անձի դեմ հետադարձ պահանջ կարող է ներկայացնել բացառապես «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով թվարկված դեպքերում, որոնք վնաս պատճառած անձի դեմ հետադարձ պահանջով դիմելու իրավունք ձեռք բերելու հիմքերի մեջ, *inter alia*, ներառում են ապահովագրական պատահարի պահին վնաս պատճառած անձի՝ ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք չունենալը:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, նույն օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտերով, [*«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի*] (այսուհետ՝ Բյուրո) կանոններով և իրավական այլ ակտերով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը ծագում է վարորդական իրավունքի վկայականն ստանալու պահից:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 13.09.2010 թվականի խմբագրու-



թյամբ Բյուրոյի կողմից հաստատված «ԱՊՊԱ պայմանագիր կնքելու ժամանակ պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը» վերտառությամբ թիվ RL 1-007 կանոնների (այսուհետ՝ Թիվ RL 1-007 կանոններ) 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու համար ապահովագրողի (ապահովագրողի լիազորված անձի կամ ապահովագրական գործակալի) կողմից ապահովագրից (ապահովագրի լիազորված անձից) պահանջվում են հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները՝ ֆիզիկական անձ ապահովագրի դեպքում՝ ապահովագրի անձնագրի (անձը հաստատող այլ փաստաթղթի), սոցիալական ապահովության քարտի (սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի), վարորդական իրավունքի վկայականի (առկայության դեպքում) պատճենները, իսկ ապահովագրողի գրավոր կամ բանավոր պահանջով՝ նաև դրանց բնօրինակները, ապահովագրի կապի միջոցները, վարորդական ստաժի վերաբերյալ տեղեկատվություն (...): Նույն կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ (...) լիազորված տիրապետողների վերաբերյալ նույն կետի 1-5-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները՝ կախված նրա բնույթից (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 23.09.2011 թվականի խմբագրությամբ Բյուրոյի կողմից հաստատված «ԱՊՊԱ վկայագիրը կազմելու և լրացնելու հրահանգ» վերտառությամբ թիվ RL 1-002 կանոնների (այսուհետ՝ Թիվ RL 1-002 կանոններ) 2-րդ գլխի 18-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ԱՊՊԱ վկայագրի 6-րդ՝ «Լիազորված տիրապետողներ» դաշտում ապահովագրի հայեցողությամբ լրացվում է հետևյալ չորս տարբերակներից որևէ մեկը. 1) դրվում է «-» (զծիկ) նշանը, որը նշանակում է, որ լիազորված տիրապետող է համարվում միայն տվյալ ԱՊՊԱ վկայագրով նախատեսված ապահովագիրը, այդ դեպքում «Ապահովագիր» դաշտում պարտադիր լրացվում են ապահովագրի վարորդական վկայականի վերաբերյալ տվյալները: Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նշվում են այն անձանց ցանկը և նրանց վերաբերյալ (...) տվյալները, ում ապահովագիրը նախատեսում է վարելու նպատակով տրամադրել ավտոտրանսպորտային միջոցը կնքվող պայմանագրի գործողության ժամկետում: Նույն ենթակետով նախատեսված դեպքում ապահովագրի վարորդական վկայականի վերաբերյալ տեղեկատվության լրացման դեպքում ապահովագիրն ինքնաշխատ կերպով հանդիսանում է լիազորված տիրապետող: Ընդ որում, եթե ապահովագիրն ունի վարորդական վկայական և չի ցանկանում հանդես գալ որպես լիազորված տիրապետող, ապա Վկայագրի ապահովագիր դաշտում վարորդական վկայականի վերաբերյալ որևէ նշում չի կատարվում...:

Վերոգրյալ իրավանորմերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

13.09.2010 թվականի խմբագրությամբ Թիվ RL 1-007 կանոնների համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու համար ապահովագրից պահանջվող փաստաթղթերի մեջ նշված է վարորդական իրավունքի վկայականի պատճենը՝ միայն դրա առկայության դեպքում, իսկ լիազորված տիրապետողների վերաբերյալ պահանջվող փաստաթղթերի համար հղում է կատարված ապահովագրից պահանջվող նույն փաստաթղթերի ցանկին, սակայն վարորդական իրավունքի վկայականի բացակայության կամ այն չներկայացնելու դեպքում վրա հասնող իրավական հետևանքները բացահայտվել են Թիվ RL 1-002 կանոններում: Ընդ որում, այդ կանոնների վերլուծությունից պարզ է դառնում, որ ԱՊՊԱ վկայագրի 6-րդ՝ «Լիազորված տիրապետողներ» դաշտում լրացվող տեղեկատվությանը ներկայացվել են խիստ որոշակի պահանջներ: Մասնավորապես՝ այն դեպքում, երբ լիազորված տիրապետող պետք է համարվեր միայն տվյալ ԱՊՊԱ վկայագրով նախատեսված ապահովագիրը, ապա «Ապահովագիր» դաշտում պարտադիր էր ապահովագրի վարորդական վկայականի վերաբերյալ տվյալները լրացնելը: Ավելին՝ ապահովագրի վարորդական վկայականի վերաբերյալ տեղեկատվության լրացման դեպքում ապահովագիրն ինքնաշխատ կերպով դառնում էր լիազորված տիրապետող, իսկ եթե ապահովագիրն ուներ վարորդական վկայական և չէր ցանկանում հանդես գալ որպես լիազորված տիրապետող, ապա ԱՊՊԱ վկայագրի ապահովագիր դաշտում վարորդական վկայականի վերաբերյալ որևէ նշում չպետք է կատարվեր: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենդրությամբ որպես լիազոր-

ված տիրապետողներ կարող էին հանդես գալ միայն այն անձինք, որոնց վարորդական վկայականի վերաբերյալ տվյալները լրացված էին ԱՊՊԱ վկայագրում:

Այսինքն՝ ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովագրական ընկերությունը ֆիզիկական անձ ապահովադիրից պետք է պահանջեր, *inter alia*, վարորդական իրավունքի վկայական՝ միայն առկայության դեպքում, մինչդեռ լիազորված տիրապետողից պարտադիր էր վարորդական իրավունքի վկայականի պատճենը պահանջելը, իսկ վարորդական իրավունքի վկայական չլինելու դեպքում անձը չէր կարող նշվել որպես ավտոտրանսպորտային միջոցի լիազորված տիրապետող: Ավելին, ապահովադիրը ևս չէր կարող հանդես գալ որպես ավտոտրանսպորտային միջոցի լիազորված տիրապետող, եթե չուներ կամ չէր ներկայացրել վարորդական իրավունքի վկայականի պատճենը:

Բացի այդ, իրավահարաբերության ծագման պահին գործող Թիվ RL 1-002 կանոնների բովանդակությունից հետևում է, որ ԱՊՊԱ վկայագրի «Լիազորված տիրապետողներ» դաշտում նշվում էին այն անձանց ցանկը, ում ապահովադիրը նախատեսում էր **վարելու նպատակով** տրանսպորտային ավտոտրանսպորտային միջոցը: Հետևաբար ավտոտրանսպորտային միջոցը վարելու նպատակով կարող էր տրանսպորտային միայն այն անձին, ով օրենքով սահմանված կարգով ուներ տվյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք: Ընդ որում, ըստ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը ծագում է վարորդական իրավունքի վկայականն ստանալու պահից, իսկ վարորդական իրավունքի վկայականում նշվում է, թե որ կարգ(եր)ի ավտոտրանսպորտային միջոց վարելու իրավունք է տրանսպորտային տվյալ վկայականով:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրության իմաստով լիազորված տիրապետողներն այն անձինք են, ում ապահովադիրը նախատեսում էր վարելու նպատակով տրանսպորտային ավտոտրանսպորտային միջոցը, իսկ վարելու իրավունք անձը ձեռք է բերում վարորդական իրավունքի վկայականն ստանալու պահից: Միևնույն ժամանակ ԱՊՊԱ վկայագրով որպես լիազորված տիրապետողներ կարող էին հանդես գալ միայն այն անձինք, որոնց վարորդական իրավունքի վկայականի վերաբերյալ տվյալները լրացված էին ԱՊՊԱ վկայագրում: Ընդ որում, ԱՊՊԱ վկայագիրը լրացնելիս վարորդական իրավունքի վկայականի վերաբերյալ տվյալները նշելու իրավական պահանջն ինքնանպատակ չէր, և դրա միջոցով ապահովագրական ընկերությունը պետք է ստուգեր այն անձի մոտ ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունքի առկայությունը, ում ապահովադիրը ցանկանում էր տրանսպորտային ավտոտրանսպորտային միջոցը՝ վարելու նպատակով: Հետևաբար ապահովագրողը պարտավոր էր ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս հավաստիանալ, որ լիազորված տիրապետողն առնվազն այդ պահի դրությամբ ուներ խնդրո առարկա ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք:

Վճռաբեկ դատարանը, ընդհանրացնելով վերոգրյալը, արձանագրում է, որ ապահովագրական ընկերությունն ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս ավտոտրանսպորտային միջոցի լիազորված տիրապետող պետք է նշեր նրանց, ովքեր պայմանագիրը կնքելիս ունեին տվյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք, իսկ այդ հարցը պարզելու համար ապահովագրական ընկերությունը պետք է պահանջեր նրանց վարորդական իրավունքի վկայականը, որի վերաբերյալ տվյալները պարտադիր կերպով պետք է ներառեր ԱՊՊԱ վկայագրում լրացվող տեղեկատվության մեջ:

Անդրադառնալով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետի կիրառմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովագրողին տրամադրվել են լիազորված տիրապետողի բոլոր այն տվյալները, որոնք անհրաժեշտ են բավարար են պայմանագիր կնքելու հարցը լուծելու համար, այդ թվում՝ լիազորված տիրապետողի վարորդական իրավունքի վկայականը, ապա ապահովագրողը չի կարող հետագայում օգտվել վերոգրյալ ենթակետով նախատեսված սուբբոգացիայի իրավունքից, եթե ապահովագրության պայմանագրում լրացված են լիազորված տիրապետողի վա-

որոշական իրավունքի վկայականի տվյալները, և դրանցից բխում է, որ վերջինս պայմանագրի կնքման պահին չի ունեցել խնդրո առարկա ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք, սակայն ապահովագրողը, անտեսելով այդ հանգամանքը, կնքել է ապահովագրության պայմանագիր՝ օգտվելով դրանից բխող իրավունքներից և ստանձնելով դրանից բխող պարտավորություններ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Վարդգես Սարգսյանի միջև 21.05.2012 թվականին կնքված՝ «ՎԱԶ-2121» մակնիշի, 15 ԼՏ 219 պետական համարանիշով ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության Վկայագրում Հակոբ Հակոբյանը նշված է որպես լիազորված տիրապետող, ընդ որում, Վկայագրում նշված են նաև Հակոբ Հակոբյանի վարորդական իրավունքի վկայականի համարը՝ AAB287320, որում ամրագրված կարգը նշված է «C»: Հակոբ Հակոբյանի վարորդական իրավունքի վկայականի կորստյան կապակցությամբ 20.09.2012 թվականին վերջինիս ներկայացրած դիմումի հիման վրա նույն օրը նրան տրվել է թիվ M1862288 ժամանակավոր վարորդական վկայականը, որը վավերական է եղել մինչև 19.10.2012 թվականը, և որում ամրագրված է եղել նույն՝ «C» կարգը: Ընկերության կողմից վկայակոչված պատահարը տեղի է ունեցել 23.09.2012 թվականին: Ոստիկանության 03.10.2012 թվականի եզրակացության մեջ նշվել է, որ Հակոբ Հակոբյանը տվյալ ավտոմեքենան վարել է՝ «իր վարորդական իրավունքի վկայականում չունենալով համապատասխան կարգ», և որ պատահարը տեղի է ունեցել Հակոբ Հակոբյանի թույլ տված իրավախախտման հետևանքով: Ընկերության կողմից հատուցվել է տվյալ պատահարի արդյունքում տուժած քաղաքացուն պատճառված վնասը՝ 1.193.480 ՀՀ դրամի չափով:

Դատարանը, մերժելով հայցը, պատճառաբանել է, որ Ընկերության հետ ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրության պայմանագիր կնքելիս Վարդգես Սարգսյանը կատարել է նշված պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածի 2-րդ կետով սահմանված պարտավորությունը, մասնավորապես՝ որպես ապահովադիր ներկայացրել է ավտոտրանսպորտային միջոցը վարելու թույլտվություն ունեցող անձի տվյալները: Վկայագրի 6-րդ կետով որպես լիազորված տիրապետող նշվել է Հակոբ Հակոբյանը, որի վարորդական վկայականում նշված է համապատասխան «C» կարգը: Դատարանը գտել է, որ Ընկերությունն է կրում լիազորված անձի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու օրինական հիմք և համապատասխան կարգի վարորդական իրավունք ունենալու հանգամանքը ստուգելու պարտականությունը, որի արդյունքում որոշել է ապահովագրության պայմանագիրը կնքելու կամ չկնքելու հարցը: Այսինքն՝ Ընկերությունը, ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում անտեսելով այդ փաստաթղթերում առկա թերությունները, այնուամենայնիվ, կնքել է ապահովագրության պայմանագիր, հետևաբար և պետք է կատարի պայմանագրից բխող բոլոր պարտավորությունները:

Վերաքննիչ դատարանը բավարարել է վերաքննիչ բողոքը և գործն ուղարկել է նոր քննության՝ պատճառաբանելով, որ Դատարանը եկել է սխալ եզրահանգման, քանի որ Հակոբ Հակոբյանի՝ պատահարի պահին տվյալ ավտոմեքենան վարելու իրավունքի բացակայության փաստն արձանագրելով հանդերձ՝ չի կիրառել այդ փաստով պայմանավորված իրավանորմերը: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը չի պարզել, թե ով է խնդրո առարկա ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը, և արդյոք հայցվորի հետադարձ պահանջի իրավունքը ծագել է միայն նրա նկատմամբ, թե նաև պատահարի պահին ավտոմեքենան վարելու իրավունք չունեցող լիազորված տիրապետողի նկատմամբ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մեխանիկական տրանսպորտային միջոցները բաժանվում են հետևյալ կարգերի և ենթակարգերի՝

«C» կարգ՝

ա. բեռնատար ավտոմոբիլներ, բացառությամբ «D» կարգին վերաբերող տրանսպորտային միջոցների, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցում է 3500 կգ-ը, կամ

բ. ինչպես նաև բեռնատար ավտոմոբիլներ, բացառությամբ «D» կարգին վերաբերող տրանսպորտային միջոցների, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցում է 3500 կգ-ը՝ կցորդված կցորդով, որի թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցում 750 կգ-ը:

Վճարել դատարանն արձանագրում է, որ Ընկերության հետ 21.05.2012 թվականին ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիր (վկայագիր) կնքելիս Վարդգես Սարգսյանը կատարել է իր պարտականությունը, մասնավորապես՝ որպես ապահովադիր ներկայացրել է ավտոտրանսպորտային միջոցը վարելու թույլտվություն ունեցող անձի (անձանց) տվյալները, այդ թվում՝ վարորդական իրավունքի վկայականը, որի հիման վրա Վկայագրի 6-րդ կետով որպես լիազորված տիրապետող նշվել է Հակոբ Հակոբյանը. վարորդական վկայական՝ թիվ AAB287320, կարգ «C», տրված 18.08.1989 թվականին, վարորդական ստաժ՝ 25 տարի: Վճարել դատարանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ լիազորված տիրապետողի վարորդական իրավունքի վկայականը ներկայացնելու պահանջն ինքնասպատակ չէ, և դրա միջոցով Ընկերությունը պետք է ստուգեր այն անձի մոտ ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք ունենալու հանգամանքը, ում ապահովադիրը մտադիր է եղել տրամադրել ավտոտրանսպորտային միջոցը՝ վարելու նպատակով: Տվյալ պարագայում Ընկերությունը տեղեկացվել էր լիազորված տիրապետողի բոլոր այն տվյալների մասին, որոնք անհրաժեշտ էին պայմանագիր կնքելու հարցը լուծելու համար, մասնավորապես այն, որ Հակոբ Հակոբյանն ունի միայն վարորդական իրավունքի «C» կարգ, որը թույլ է տալիս վարել միայն բեռնատար մեքենաներ: Հետևաբար Վճարել դատարանը գտնում է, որ եթե Ընկերությունը, ներկայացված փաստաթղթերի հետազոտման և գնահատման արդյունքում անտեսելով դրանցում առկա անհամապատասխանությունն օրենսդրությամբ սահմանված պահանջներին, այնուամենայնիվ, կնքել է ապահովագրության պայմանագիր, այսինքն՝ պատրաստականություն է հայտնել, որպեսզի համապատասխան ավտոտրանսպորտային միջոցն այդ անձի կողմից վարելու հետևանքով առաջացած պատահարները լինեն ապահովագրության պայմանագրի առարկա, ապա Ընկերությունն այլևս չի կարող վկայակոչել նման անհամապատասխանությունը՝ բացառելով նաև այն սուբրոգացիայի իրավունքի հիմքում դնելու հնարավորությունը:

Նման պայմաններում Վճարել դատարանը գտնում է, որ Ընկերությունը, հատուցելով ապահովագրական վճարը, այլևս չէր կարող «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի հիմքով օգտվել վնաս պատճառած անձին՝ Հակոբ Հակոբյանին, հետադարձ պահանջ ներկայացնելու իրավունքից, որպիսի իրավաչափ եզրահանգման եկել է Դատարանը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճարել դատարանն արձանագրում է, որ նույնաբովանդակ դիրքորոշում արտահայտվել է նաև նույնաման փաստական հանգամանքներ ունեցող թիվ ԵԿԴ/1462/02/09 քաղաքացիական գործով 01.07.2011 թվականին կայացված որոշման շրջանակներում:

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար: Ընդ որում, Վճարել դատարանը Վերաքննիչ դատարանի որոշումը վերանայում և բեկանում է միայն Հակոբ Հակոբյանի մասով գործը նոր քննության ուղարկելու մասով՝ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճարել բողոք ներկայացրել է միայն Հակոբ Հակոբյանը:

Միաժամանակ Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կի-

րառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վճեի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին մասնակիորեն օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ Հակոբ Հակոբյանի դեմ ներկայացված պահանջի մատով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

**5. Վճռաբեկ դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար պետականտուրքը գանձվում է գույքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

Սույն գործով նկատի ունենալով, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 04.03.2016 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ Հակոբ Հակոբյանի ներկայացուցչի միջնորդությունը բավարարվել է, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումարը՝ 35.804,4 ՀՀ դրամի չափով (1.193.480 ՀՀ դրամ × 3%), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով, ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման Ընկերությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.10.2015 թվականի որոշման՝ Հակոբ Հակոբյանի մասով գործը նոր քննության ուղարկելու մասը, և այդ մասով օրինական ուժ տալ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.06.2015 թվականի վճռին:

2. «ՌԵՍՈ» ԱՓԲԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 35.804,4 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 04.03.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/3075/02/15  
 դատարանի որոշում **2017թ.**  
 Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/3075/02/15  
 Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան  
 Դատավորներ՝ Տ. Նազարյան  
 Կ. Չիլինգարյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՑԱՆԻ  
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
 Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
 Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
 Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
 Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
 Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
 Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին դռնբաց դատական նիստում, քննելով Գառնիկ Պողոսյանի ներկայացուցիչ Քրիստինա Մարդարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.03.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Գառնիկ Պողոսյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Գառնիկ Պողոսյանից բռնագանձել 1.800.000 ՀՀ դրամ՝ որպես ապահովագրության պայմանագրով տուժողներին վճարված ապահովագրական հատուցում, ինչպես նաև 36.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրք:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ե. Քոչարյան) (այսուհետ՝ Դատարան) 14.10.2016 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.03.2017 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 14.10.2016 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գառնիկ Պողոսյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սեփականատերը մեքենան փոխանցել է վերանորոգողին իր կամքով, սակայն կամք չի ցուցաբերել մեքենան շահագործելու վերաբերյալ, այսինքն՝ Գառնիկ Պողոսյանը Համբարձում Համբարձումյանին ավտոմեքենան օգտագործելու և վարելու թույլտվություն չի տվել: Մինչդեռ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» պայմանների 10.2-րդ կետի հիմքով սեփականատիրոջ պարտականությունը «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» վկայագրում լիազորված տիրապետողների փոփոխության վերաբերյալ նշում կատարելու մասին կարող է առաջանալ միայն ավտոմեքենան շահագործման հանձնելու դեպքում:

Բացի այդ, Գառնիկ Պողոսյանը չի իմացել և չէր էլ կարող իմանալ Համբարձում Համբարձումյանի կողմից ավտոմեքենան ապօրինի շահագործելու փաստի մասին, որպիսի պայմաններում ապահովագրողի Գառնիկ Պողոսյանը «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» պայմանագիրը կնքելիս Ընկերությանն ակնհայտ սուտ տեղեկություններ չի հայտնել ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.03.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 14.10.2016 թվականի վճիռին:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները**

Վերաքննիչ դատարանը 23.03.2017 թվականի որոշմամբ թույլ չի տվել իրավական ակտերի խախտումներ, ճիշտ է մեկնաբանել գործում առկա փաստերը և հանգել սույն վեճի ճիշտ լուծմանը, հետևաբար ներկայացված վճռաբեկ բողոքն անհիմն է:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Գառնիկ Պողոսյանի միջև 29.02.2012 թվականին կնքված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SG 133202 վկայագրի համաձայն՝ Գառնիկ Պողոսյանն ապահովագրել է «Opel Vectra 1.8» մակնիշի 25 00 889 պետհամարանիշի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը: Նույն վկայագրի 6-րդ կետում, որպես «Opel Vectra 1.8» մակնիշի 25 00 889 պետհամարանիշի ավտոմեքենայի լիազորված տիրապետողներ՝ նշվել են Ավետիք Պողոսյանը և Սուրեն Սահրադյանը (**հատոր 1-ին, գ.թ. 31-32**):

2) Ընկերության 29.11.2012 թվականի «Վթարային ակտ» վերտառությամբ փաստաթղթի համաձայն՝ «Opel Vectra 1.8» մակնիշի 25 00 889 պետհամարանիշի ավտոմեքենայի վարորդ Համբարձում Համբարձումյանը Երևանի Նորագավիթի 1-ին փողոցով երթևեկելիս վազանց կատարելիս բախվել է Էդիտա Կիրակոսյանին պատկանող «MITSUBISHI PAJERO IO 1.8» մակնիշի 32 UL 813 պետհամարանիշի ավտոմեքենային և Արմեն Մկրտչյանին պատկանող «MERCEDES-BENZ E220» 99 LU 444 պետհամարանիշի ավտոմեքենային: Միաժամանակ ակտում նշվել է. «Համբարձում Համբարձումյանը լիազորված չէ» (**հատոր 1-ին, գ.թ. 43**):



3) ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնի պետ Հ. Լ. Ղամբարյանի 17.03.2013 թվականի «Եզրակացության» համաձայն՝ նախապատրաստված նյութերով պարզվել է, որ «28.11.2012 թվականին Գագիկ Պողոսյանն իրեն պատկանող 1994 թվականի արտադրության «Opel Vectra 1.8» մակնիշի 25 00 889 պետհամարանիշի ավտոմեքենան նորոգելու նպատակով հանձնել է Համբարձում Համբարձումյանին: 29.11.2012 թվականին ժամը 01:00-ի սահմաններում վերջինս ավտոմեքենան փորձարկելու նպատակով երթևեկել է Երևանի Նորագավիթ փողոցով և իր մեղքով վթարի է ենթարկվել...» (**հատոր 1-ին, գ.թ. 77-78**):

4) ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության հետաքննության բաժնի պետ Հ. Ք. Մարգարյանի 05.12.2012 թվականի «Եզրակացության» համաձայն՝ Համբարձում Համբարձումյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124.6-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով: Վարչական պատասխանատվության հիմքում դրվել են վթարի վայրում կազմված սխեման, վարորդների բացատրությունները, ավտոմոբիլների գնմության արձանագրությունները և գործի նյութերը, որոնցով հիմնավորվել է, որ Համբարձում Համբարձումյանը թույլ է տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի և ՃԵԿ-ի 74-րդ կետի 1-ին մասի պահանջների խախտում, ինչի արդյունքում էլ ենթարկվել է վարչական պատասխանատվության (**հատոր 1-ին, գ.թ. 122-123**):

5) ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից Համբարձում Համբարձումյանից բացատրություն վերցնելու մասին 30.11.2012 թվականի արձանագրության համաձայն՝ 28.11.2012 թվականին ժամը 15:00-ի սահմաններում Գառնիկ Պողոսյանն իր անձնական օգտագործման «Opel Vectra 1.8» մակնիշի 25 00 889 պետհամարանիշի ավտոմեքենան նորոգելու նպատակով վստահել և հանձնել է իրեն, ինչպես նաև հանձնել է ավտոմեքենայի բանալիները՝ վերանորոգելուց հետո փորձարկման նպատակով: Վերանորոգելուց հետո 29.11.2012 թվականին՝ ժամը 01:00-ի սահմաններում, ավտոմեքենան փորձարկելու նպատակով Համբարձում Համբարձումյանը երթևեկել է Արտաշատի խճուղու կողմից Երևանի Նորագավիթի 1-ին փողոցով և վազանց կատարելու հետևանքով ենթարկվել է վթարի (**հատոր 1-ին, գ.թ. 124-126**):

6) Ընկերության 28.12.2012 թվականի «Հատուցում վճարելու մասին» որոշումներով Էդիտա Կիրակոսյանի և Արմեն Մկրտչյանի՝ հատուցում ստանալու վերաբերյալ դիմումները բավարարվել են: Համապատասխանաբար 09.01.2013 թվականին Ընկերությունն Էդիտա Կիրակոսյանին փոխանցել է 893.700 ՀՀ դրամ, իսկ Արմեն Մկրտչյանին՝ 906.300 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 44-45, 48-49**):

7) Ընկերությունը 19.09.2015 թվականին ներկայացված հայցադիմումում որպես հայցի իրավական հիմք՝ նշել է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետը, իսկ որպես հայցապահանջի փաստական հիմնավորում՝ այն, որ Գառնիկ Պողոսյանն ապահովագրության վկայագրում որպես ավտոմեքենայի լիազորված տիրապետող՝ չի նշել Համբարձում Համբարձումյանին, դրանով իսկ Ընկերությանը հայտնել է ակնհայտ սուտ տեղեկություն (**հատոր 1-ին, գ.թ. 4-9**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի, ինչպես նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի վերաբերյալ

արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի, ինչպես նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովատիրի) նկատմամբ ապահովագրական ընկերությունն ունի հետադարձ պահանջի իրավունք, եթե առկա չեն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջը դատարանը կարող է նաև լրիվ կամ մասնակիորեն ազատել պատասխանատվությունից՝ նույն օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով: Վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առավել վտանգի աղբյուրի սեփականատերը պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրի պատճառած վնասի համար, եթե ապացուցում է, որ աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով: Նման դեպքերում առավել վտանգի աղբյուրի պատճառած վնասի համար պատասխանատվությունը կրում են աղբյուրն ապօրինի տիրապետած անձինք: Աղբյուրի սեփականատիրոջ տիրապետումից այդ աղբյուրի ապօրինի վերցնելու մեջ նրա մեղքի առկայության դեպքում պատասխանատվությունը կարող է դրվել ինչպես առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջ, այնպես էլ այն ապօրինի ձեռք բերողի վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1025-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ նույն գլխով սահմանված դրույթները կիրառվում են ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության հետ կապված հարաբերությունների նկատմամբ, եթե այլ կարգավորում նախատեսված չէ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագրով նույն օրենքով սահմանված պայմաններով ապահովագրվում է տուժած անձանց պատճառված վնասների հատուցման համար ապահովագրված անձանց պատասխանատվությունը:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի՝

**1) վնաս պատճառած անձի նկատմամբ, եթե՝**

ա. նա ապահովագրական պատահարի ժամանակ ավտոտրանսպորտային միջոցը վարել է ակոհոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության ներքո.

բ. նա առանց հիմնավոր պատճառի լքել է պատահարի վայրը կամ խուսափել է ակոհոլի, թմրանյութերի կամ այլ հոգեմետ նյութերի օգտագործման փաստի վերաբերյալ քննություն անցնելուց.

գ. նա ապահովագրական պատահարի պահին չի ունեցել ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք կամ օրենքով սահմանված կարգով գրկված է եղել այդպիսի իրավունքից, բացառությամբ նույն մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքի.

դ. ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին.

**2) վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ, եթե՝**

ա. ավտոտրանսպորտային միջոցը վնասի պատճառման պահի դրությամբ չի անցել տեխնիկական զննություն, և պատահարի առաջացման անմիջական պատճառ է դարձել ավտոտրանսպորտային միջոցի այնպիսի անսարքությունը, որը կարող էր բացահայտվել տեխնիկական զննություն անցնելու դեպքում.

բ. ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին.

գ. ավտոտրանսպորտային միջոցի վարումը վստահել է այն վարելու իրավունք չունեցող անձին և գիտեր կամ կարող էր իմանալ, որ այդ անձը չունի վարելու իրավունք.

դ. ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել ապահովագրական ընկերությանն ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, եթե այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել ապահովագրական ընկերությանը մինչև ապահովագրական պատահարը.

**3) ինչպես նաև՝**

ա. պատահարի տարածքի կամ ճանապարհի սեփականատիրոջ նկատմամբ, եթե պատահարը տեղի է ունեցել տարածքի կամ ճանապարհի անսարքության կամ թերության պատճառով, և դրանում առկա է սեփականատիրոջ մեղքը.

բ. ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական զննություն իրականացրած կազմակերպության նկատմամբ, եթե պատահարի առաջացման անմիջական պատճառ է դարձել ավտոտրանսպորտային միջոցի այնպիսի անսարքությունը, որը չի բացահայտվել տեխնիկական զննության ընթացքում՝ դրա թերի կամ ոչ պատշաճ իրականացման հետևանքով.

գ. օրենքով սահմանված դեպքերում և կարգով այլ անձանց նկատմամբ, որոնց մեղքով տեղի է ունեցել պատահարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում մի քանի անձի նկատմամբ, ապա այդ անձինք ապահովագրական ընկերության նկատմամբ հանդես են գալիս որպես համապարտ պարտապաններ:

ՀՀ վճարելի դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի վերլուծությանը, արձանագրել է, որ տրանսպորտային միջոցով վնաս պատճառելիս այդ միջոցի սեփականատերը միայն այն դեպքում պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրի պատճառած վնասի համար, երբ ապացուցում է, որ

1. առավել վտանգի աղբյուրն օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լի-

ազդրագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) փոխանցվել է այլ անձի տիրապետմանը, կամ

2. առավել վտանգի աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով, և միայն այդ դեպքում է, որ տրանսպորտային միջոցի պատճառած վնասի համար պատասխանատվությունը կրում են տրանսպորտային միջոցն ապօրինի տիրապետած անձինք (*տե՛ս, Տիգրան Քոչարյանի ընդդեմ Աշուր և Արթուր Քոչարյանների թիվ ԵԱԲԴ/0610/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.10.2011 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ սեփականատերը, իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրելով, փաստացի հնարավորություն է ստանում ապահովագրավճարի դիմաց ապահովագրողին փոխանցելու վնասը (որը կարող է պատճառված լինել ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ ավտոմեքենայի լիազորված տիրապետողի կողմից) հատուցելու իր պարտականությունը: Ապահովագրողն էլ օրենքով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում հնարավորություն ունի հետադարձ պահանջի միջոցով հետ ստանալու իր կողմից կատարված հատուցումը: Ընդ որում, եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի իրավակարգավորումը վերաբերում է ավտոմեքենայի սեփականատիրոջ և տուժողի իրավահարաբերություններին՝ մասնավորապես նախատեսելով սեփականատիրոջ պատասխանատվության պայմանները և այն բացառող դեպքերը, ապա «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը վերաբերում է ավտոմեքենայի սեփականատիրոջ և ապահովագրական ընկերության միջև ծագած իրավահարաբերություններին, մասնավորապես՝ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքին:

Միաժամանակ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքը նախատեսված է վնաս պատճառողի, վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) և (կամ) օրենքով սահմանված այլ անձանց նկատմամբ: Ընդ որում՝ սեփականատիրոջ (ապահովադրի) պատասխանատվության հիմքերը հստակ և սպառիչ սահմանված են նույն հոդվածով, հետևաբար սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ այլ հիմքերով հետադարձ պահանջ չի կարող ներկայացվել: Ուստի այն դեպքերում, երբ ավտոմեքենայի սեփականատերն ապահովագրել է իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը, ապա ապահովագրական ընկերության կողմից տուժող կողմին հատուցում վճարելու դեպքում ապահովագրական ընկերությունը սեփականատիրոջ դեմ հետադարձ պահանջ կարող է ներկայացնել միայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով թվարկված դեպքերում (*տե՛ս, «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ի ընդդեմ «ՍՄԱՐՏՍՈՎԹ» ՍՊԸ-ի և Սարգիս Գրիգորյանի թիվ ԿԴԻ/2015/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Գառնիկ Պողոսյանի միջև 29.02.2012 թվականին կնքված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության վկայագրով Գառնիկ Պողոսյանն ապահովագրել է «Opel Vectra 1.8» մակնիշի 25 ՕՕ889 պետհամարանիշի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը: Նույն վկայագրի 6-րդ կետում որպես «Opel Vectra 1.8» մակնիշի 25 ՕՕ889 պետհամարանիշի ավտոմեքենայի լիազորված տիրապետողներ՝ նշվել են Ավետիք Պողոսյանը և Սուրեն Սահրադյանը: 28.11.2012 թվականին Գագիկ Պողոսյանն իրեն պատկանող՝ 1994 թվականի արտադրության «Opel Vectra 1.8» մակնիշի 25 ՕՕ 889 պետհամարանիշի ավտոմեքենան նորոգելու նպատակով հանձնել է Համբարձում Համբարձումյանին: 29.11.2012 թվականին ժա-

մը 01:00-ի սահմաններում Համբարձում Համբարձումյանն ավտոմեքենան փորձարկելու նպատակով երթնեկել է Արտաշատի խճուղու կողմից Երևանի Նորագավիթի 1-ին փողոցով և վազանց կատարելու հետևանքով ենթարկվել է վթարի, որով վնաս է պատճառել Էդիտա Կիրակոսյանի՝ «MITSUBISHI PAJERO IO 1.8» մակնիշի 32 UL 813 պետհամարանիշի և Արմեն Մկրտչյանի՝ «MERCEDES-BENZ E220» 99 LU 444 պետհամարանիշի ավտոմեքենաներին: Ընկերությունը որպես ավտոմեքենայի սեփականատիրոջ հանդեպ իր հետադարձ պահանջի իրավական հիմք՝ նշել է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետը, այն է՝ Գառնիկ Պողոսյանն ապահովագրության վկայագրում որպես ավտոմեքենայի լիազորված տիրապետող՝ չի նշել Համբարձում Համբարձումյանին, ինչի հետևանքով Ընկերությանը տրամադրել է ակնհայտ սուտ տեղեկություն:

Դատարանը, հայցը մերժելով, արձանագրել է, որ հայցվորը, ըստ էության, դատարան ներկայացված հայցապահանջի հիմքում դրել է այն հանգամանքը, որ պատասխանողն ապահովագրողին սուտ տեղեկություններ է հայտնել լիազորված տիրապետողների վերաբերյալ, մասնավորապես՝ պատասխանող Գառնիկ Պողոսյանն ապահովագրողին տեղեկություններ չի տրամադրել Համբարձում Համբարձումյանի՝ որպես լիազորված տիրապետողի վերաբերյալ: Միաժամանակ Դատարանն արձանագրել է, որ Համբարձում Համբարձումյանը հանդիսանում է մեքենա վերանորոգող և Գառնիկ Պողոսյանը Համբարձում Համբարձումյանին մեքենա վարելու թույլտվություն չի տվել: Նման պայմաններում Դատարանը գտել է, որ Գառնիկ Պողոսյանը չէր կարող կամ պարտավոր չէր Ընկերությանը տեղեկություններ տրամադրել Համբարձում Համբարձումյանի՝ որպես մեքենայի լիազորված տիրապետողի վերաբերյալ: Բացի այդ, Դատարանը նշել է, որ ավտոմեքենան Գառնիկ Պողոսյանի տիրապետումից դուրս է եկել Համբարձում Համբարձումյանի ապօրինի գործողությունների հետևանքով, որպիսի հանգամանքը հաստատվել է ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնի պետի 17.03.2013 թվականի եզրակացությանը:

Վերաքննիչ դատարանը, Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարելով և Դատարանի վճիռը բեկանելով ու փոփոխելով, պատճառաբանել է, որ «Opel Vectra 1.8» մակնիշի 25 00889 պետհամարանիշի ավտոմեքենայի 29.11.2012 թվականին տեղի ունեցած պատահարի ժամանակ վարորդը եղել է Համբարձում Համբարձումյանը, որի անունը, որպես ավտոմեքենան վարելու լիազորված անձ, Ընկերության և Գառնիկ Պողոսյանի միջև 09.02.2012 թվականին կնքված թիվ SG133202 վկայագրում նշված չի եղել, իսկ Գառնիկ Պողոսյանը չի ներկայացրել թույլատրելի և վերաբերելի ապացույց այն մասին, որ Համբարձում Համբարձումյանի կողմից ավտոմեքենայի տիրապետումը եղել է ապօրինի, որպիսի պայմաններում Դատարանը չէր կարող կայացնել Ընկերության հայցը մերժելու մասին վճիռ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 23.09.2011 թվականի խմբագրությանը Բյուրոյի կողմից հաստատված «ԱՊՊԱ վկայագիրը կազմելու և լրացնելու հրահանգ» վերառությամբ թիվ RL 1-002 կանոնների (այսուհետ՝ Թիվ RL 1-002 կանոններ) 2-րդ գլխի 18-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ԱՊՊԱ վկայագրի 6-րդ՝ «Լիազորված տիրապետողներ» դաշտում ապահովադրի հայեցողությամբ լրացվում է հետևյալ չորս տարբերակներից որևէ մեկը. 1) դրվում է «-» (գծիկ) նշանը, որը նշանակում է, որ լիազորված տիրապետող է համարվում միայն տվյալ ԱՊՊԱ վկայագրով նախատեսված ապահովադիրը, այդ դեպքում «Ապահովադիր» դաշտում պարտադիր լրացվում են ապահովադրի վարորդական վկայականի վերաբերյալ տվյալները: Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նշվում են այն անձանց ցանկը և նրանց վերաբերյալ (...) տվյալները, ում ապահովադիրը նախատեսում է վարելու նպատակով տրամադրել ավտոտրանսպորտային միջոցը կնքվող պայմանագրի գործողության ժամկետում: Նույն ենթակետով նախատես-

ված դեպքում ապահովադրի վարորդական վկայականի վերաբերյալ տեղեկատվության լրացման դեպքում ապահովադիրն ինքնաշխատ կերպով հանդիսանում է լիազորված տիրապետող: Ընդ որում, եթե ապահովադիրն ունի վարորդական վկայական և չի ցանկանում հանդես գալ որպես լիազորված տիրապետող, ապա վկայագրի ապահովադիր դաշտում վարորդական վկայականի վերաբերյալ որևէ նշում չի կատարվում...:

Իրավահարաբերության ծագման պահին գործող Թիվ RL 1-002 կանոնների բովանդակությունից հետևում է, որ ԱՊՊԱ վկայագրի «Լիազորված տիրապետողներ» դաշտում նշվում էր այն անձանց ցանկը, ում ապահովադիրը նախատեսում էր **վարելու նպատակով** տրամադրել ավտոտրանսպորտային միջոցը: Վերոգրյալից հետևում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրության իմաստով լիազորված տիրապետողներն այն անձինք են, ում ապահովադիրը նախատեսում էր վարելու նպատակով տրամադրել ավտոտրանսպորտային միջոց:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ավտոմեքենայի՝ որպես մեխանիկական տրանսպորտային միջոցի, բնականոն շահագործումն ապահովելու նպատակով կարող է առաջանալ այն տեխնիկական սպասարկման և վերանորոգման ներկայացնելու օբյեկտիվ անհրաժեշտություն, ինչն իրականացվում է ավտոմեքենան որոշակի ժամանակահատվածով համապատասխան մասնագետներին հանձնելու եղանակով: Ընդ որում, նման իրավիճակում ավտոմեքենայի հանձնումը որևէ կերպ չի կարող ենթադրել վարելու լիազորության փոխանցում՝ հաշվի առնելով մատուցվող ծառայությունների բնույթը, այն է՝ վերացնել ավտոմեքենայի տեխնիկական անսարքությունները կամ մատուցել նմանատիպ այլ ծառայություններ: Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, իրավահարաբերության ծագման պահին գործող կարգավորման հիմքով լիազորված տիրապետողներն այն անձինք են, ում ապահովադիրը նախատեսում էր վարելու նպատակով տրամադրել ավտոտրանսպորտային միջոցը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող կարգավորմամբ նախատեսված «լիազորված տիրապետողները» և ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ մատուցող մասնագետները, իրենց գործառնությունների նպատակաուղղվածությունից ելնելով, որևէ կերպ չեն կարող նույնացվել, որպիսի պարագայում ավտոմեքենայի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի մոտ չէր կարող ծագել նշված անձանց մասին տեղեկություններ տրամադրելու և նրանց՝ որպես «լիազորված տիրապետողների» ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության վկայագրերում ներառելու պարտականություն, որի չիրականացումն էլ կարող է որակվել որպես «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության վկայագրի ապահովագրության տրամադրում ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ:

Սույն գործում առկա ապացույցներով հիմնավորվում է, որ Գառնիկ Պողոսյանը «Opel Vectra 1.8» մակնիշի 25 00889 պետհամարանիշի ավտոմեքենան Համբարձում Համբարձումյանը հանձնել է վերանորոգման նպատակով: Հետևաբար Գառնիկ Պողոսյանն օբյեկտիվորեն որևէ պարտավորություն չունեի ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության վկայագրում Համբարձում Համբարձումյանին նշել որպես ավտոմեքենայի լիազորված տիրապետող անձ: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գառնիկ Պողոսյանը, 29.02.2012 թվականին Ընկերության հետ կնքելով ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության վկայագիրը, և նրանում որպես «լիազորված տիրապետողներ»՝ նշելով միայն Ավետիք Պողոսյանին և Սուրեն Սահրադյանին, Ընկերությանն ակնհայտ սուտ տեղեկություններ չի հայտնել ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ: Հետևաբար սույն գործով առկա չէ սեփականատիրոջ դեմ հետադարձ պահանջ ներկայացնելու՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր

ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետով սահմանված հիմքը, որպիսի պայմաններում Ընկերության հայցն ընդդեմ Գառնիկ Պողոսյանի ենթակա էր մերժման, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

*Վերը նշված պայրճառարանություններով հերքվում են վճարել բողոքի պայրասխանում նշված փաստարկները:*

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճարել դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճարել դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճարել դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճարել դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառարանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճարել դատարանի պայրճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճարել բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճարել բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճարել բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, Վճարել դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի իրավակարգավորումը, գտնում է, որ Ընկերությունից հօգուտ Գառնիկ Պողոսյանի ենթակա է բռնագանձման 54.000 ՀՀ դրամ (1.800.000\*3%)՝ որպես վճարել բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.03.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 14.10.2016 թվականի վճիռն:

2. «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ից հօգուտ Գառնիկ Պողոսյանի բռնագանձել 54.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3296/02/14**  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3296/02/14  
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան  
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան  
Կ. Զիլինգարյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությանը  
մասնակցությանը դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՑԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սամիկոն Ստեփանյանի և ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.03.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սամիկոն Ստեփանյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ վնասի հատուցման պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Սամիկոն Ստեփանյանը պահանջել է Հայաստանի Հանրապետությունից, որպես նյութական վնասի հատուցում, բռնագանձել 18.830.351 ՀՀ դրամ՝ որպես Նունե Խաչատրյանի և «ՏԱԹԵՎԻԿ» ՍՊԸ-ի կողմից վճարված շահութահարկի գումար, 1.740.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանին վճարված գումար, 360.000 ՀՀ դրամ՝ որպես 72 անգամ Գյումրիից Երևան մեկնելու և վերադառնալու ճանապարհածախս, 576.000 դրամ՝ որպես 72 օրվա օրապահիկի գումար, իսկ որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ 102.000.000 ՀՀ դրամ, ինչպես նաև նշված գումարների նկատմամբ կետանցի օրվանից մինչ գումարի փաստացի վճարման օրը հաշվարկել և բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 19.10.2015 թվականի վճռով հայրը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է. «Հայաստանի Հանրապետու-

թյունից հոգուտ Մամիկոն Ստեփանյանի բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրություն: Քաղաքացիական գործի վարույթը՝ ըստ Մամիկոն Ստեփանյանի հայցի ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ արդարացվածին հասցված բարոյական վնասի հատուցման պահանջի մասին, կարձել: Մասցած մատով հայցը մերժել և պետական տուրքի հարցը համարել լուծված»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 10.03.2016 թվականի որոշմամբ Նախարարության և Մամիկոն Ստեփանյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 19.10.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Մամիկոն Ստեփանյանը և Նախարարությունը:

Նախարարության վճռաբեկ բողոքի վերաբերյալ պատասխան է ներկայացրել Մամիկոն Ստեփանյանը:

## **2. Մամիկոն Ստեփանյան վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 5-րդ կետը, 13-րդ հոդվածը, 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 16-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական դատարանը 05.11.2013 թվականի թիվ ՍԴՈ-1121 որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետն այնքանով, որքանով բարոյական վնասը չի դիտում որպես վնասի տարատեսակ և չի ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն՝ արգելափակելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, միաժամանակ խոչընդոտելով Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարմանը, ճանաչել է 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 16-րդ հոդվածի 4-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր: Նշված որոշումից հետո օրենսդիրը 19.05.2014 թվականին ընդունել է «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-21-Ն» ՀՀ օրենքը, որով ոչ նյութական վնասը դիտվել է որպես վնասի տարատեսակ և թեև փոքր արժեքով, սակայն ապահովել է ոչ նյութական վնասի փոխհատուցման հնարավորությունը, հետևաբար ոչ նյութական վնասի հատուցման հնարավորություն օրենքով առկա է, և գործի վարույթն այդ մասով կարձելն օրինական չէ:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 130-րդ, 130.1-րդ, 131-րդ և 132-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Մամիկոն Ստեփանյանի կողմից փաստաբան Արա Զաքարյանին վճարված 1.740.000 ՀՀ դրամը վճարված է մինչդատական և դատական տարբեր փուլերում կատարած աշխատանքների և ստացած արդյունքների համար, ընդ որում՝ յուրաքանչյուր աշխատանքի համար վճարվել է առանձին: Վերաքննիչ դատարանը նաև անտեսել է, որ Դատարանի հետևությունը հիմնավորված չէ, քանի որ վճռում որևէ վերլուծություն չի կատարվել փաստաբանի խե-

լամիտ վարձատրության վերաբերյալ, ինչպես նաև վճռից պարզ չէ, թե փաստաբանի վարձատրության փոխհատուցման 1.000.000 ՀՀ դրամը որ պայմանագրով նախատեսված մատուցված ծառայությունների համար պետք է հատուցվի, որոնց դիմաց չպետք է հատուցվի, կամ հատուցվի մասնակիորեն:

*3) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի հիմքով հայցվորն իրավունք ուներ ստանալու և ճանապարհածախսի, և օրապահիկի գումարները, ընդ որում, ճանապարհածախսի և օրապահիկի հետ կապված գործում առկա են վերաբերելի և թույլատրելի բավարար ապացույցներ, հետևաբար Մամիկոն Ստեփանյանին պետք է փոխհատուցվեին նշված գումարները:

*4) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Մամիկոն Ստեփանյանը որևէ պարտավորություն չի կրել որպես ֆիզիկական անձ վճարելու 18.830.351 ՀՀ դրամը, ուստի այն ենթակա է վերադարձման: Միաժամանակ այդ գումարը մուծել է Նունե Խաչատրյանը, իսկ «Տաթևիկ» ՍՊԸ-ն նշվել է, քանի որ այն անդորրագիրը լրացնելու ձևի պահանջն է: Ընդ որում, «Տաթևիկ» ՍՊԸ-ն որևէ վճարում այդ պահին պարտավոր չէր և չէր կարող կատարել, քանի որ նրա դրամական միջոցներն արգելանքի տակ էին, տնօրենը ձերբակալված էր, իսկ Նունե Խաչատրյանն էլ գրավոր հայտարարություն է ներկայացրել այն մասին, որ այդ գումարը պատկանել է Մամիկոն Ստեփանյանին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.03.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ «հայցը բավարարել՝ պատասխանողից բռնագանձել 102.000.000 ՀՀ դրամ՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում, 18.830.351 ՀՀ դրամ՝ որպես իր կնոջ կողմից վճարված գումար, 1.740.000 ՀՀ դրամ՝ որպես քրեական գործով փաստաբանին վճարված գումար, ինչպես նաև բռնագանձել ճանապարհածախսի և օրապահիկի գումարը»:

**2.1 Նախարարության վճարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1064-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Սույն գործով Մամիկոն Ստեփանյանը պահանջել է հատուցել փաստաբանին վճարված 1.740.000 ՀՀ դրամը, սակայն չի նշել, թե պահանջվող գումարը ծառայությունների մատուցման արժեքն է, թե՛ պայմանագրերով սահմանված պարզևավճարը: Հետևաբար ներկայացված պահանջով դատարանները պետք է պարզեին, թե պահանջվող գումարների որ մասն էր կազմում ծառայությունների մատուցման արժեքը, որ մասը պարզևավճարը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարզևավճարը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումների համաձայն, ենթակա չէ փոխհատուցման: Բացի այդ, փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը որոշելիս հիմք պետք է ընդունվեր հանրային պաշտպանին վճարվող դատախազի մեկ ժամվա աշխատավարձին համարժեք գումարի չափը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դա-

տարանի 10.03.2016 թվականի որոշումը և փոփոխել այն. հայցը՝ դատական ծախսերի պահանջի մասով, մերժել կամ այդ մասով գործն ուղարկել նոր քննության:

### **2.2 Նախարարության վճռաբեկ բողոքի դեմ Մամիկոն Ստեփանյանի կողմից բերված պատասխանի հիմնավորումները**

Մամիկոն Ստեփանյանի և փաստաբան Արա Զաքարյանի միջև 11.04.2012 թվականին, 08.04.2013 թվականին, 19.09.2013 թվականին և 03.12.2013 թվականին կնքվել են իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրեր, որոնց համաձայն՝ Արա Զաքարյանը քրեական գործով նախաքննության ընթացքում ու դատարանում ստանձնել և իրականացրել է Մամիկոն Ստեփանյանի պաշտպանությունը՝ այդ պայմանագրերով սահմանված պայմաններով, հետևաբար գումարների վճարումը նախատեսված է պայմանագրերով և ողջամիտ է: Ընդ որում, փաստաբանի խելամիտ վարձատրությունը հանրային պաշտպանի վարձատրության նմանությամբ որոշելիս հատուցման ելթակա գումարը կլինեք ավելին, քան պահանջում է Մամիկոն Ստեփանյանը:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Թիվ ԵԱԴԴ/0060/01/12 քրեական գործով Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 08.08.2013 թվականի դատավճռով Մամիկոն Ստեփանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հանցակազմի բացակայությամբ ճանաչվել է անպարտ և արդարացվել է՝ հռչակելով նրա անմեղությունը: Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը նշված դատավճռով արձանագրել է, որ հաշվի առնելով Մամիկոն Ստեփանյանի անձը, նախնական քննության ընթացքում դրսևորած վարքագիծը, գործի քննության ընթացքը, քննիչը պարտավոր չէր ձեռքարկել Մամիկոն Ստեփանյանին (**հատոր 1-ին, գ.թ. 7-23**):

2) Թիվ ԵԱԴԴ/0060/01/12 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 13.11.2013 թվականի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Կ. Կարապետյանի և Մամիկոն Ստեփանյանի պաշտպան Արա Զաքարյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 08.08.2013 թվականի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ (**հատոր 1-ին, գ.թ. 24-32**):

3) Թիվ ԵԱԴԴ/0060/01/12 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 20.01.2014 թվականի որոշմամբ Մամիկոն Ստեփանյանի պաշտպան Արա Զաքարյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է (**հատոր 1-ին, գ.թ. 33-34**):

4) Մամիկոն Ստեփանյանի (Պատվիրատու) և փաստաբան Արա Զաքարյանի (Կատարող) միջև 11.04.2012 թվականին, 08.04.2013 թվականին, 19.09.2013 թվականին և 03.12.2013 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրերի համաձայն՝ կատարողը պարտավորվել է թիվ ԵԱԴԴ/0060/01/12 քրեական գործով իրականացնել պատվիրատուի պաշտպանությունը (**հատոր 1-ին, գ.թ. 35-38**):

5) 14.04.2012 թվականի թիվ 100, 23.04.2013 թվականի թիվ 239, 20.09.2013 թվականի թիվ 239, 09.12.2013 թվականի թիվ 474 և 11.02.2014 թվականի թիվ 201 անդորրագրերի համաձայն՝ Մամիկոն Ստեփանյանը փաստաբան Արա Զաքարյանին վճարել է 1.739.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 39-41**):

6) 23.02.2012 թվականի թիվ 318 անդորրագրի համաձայն՝ վճարողներ Նունե Խաչատրյանը և «ՏԱԹԵՎԻԿ» ՍՊԸ-ն Մաշտոցի ՏՀՏ-ի հաշվին են փոխանցել 18.830.351 ՀՀ դրամ՝ որպես արձանագրված շահութահարկի լրացուցիչ գանձման հարկի գումար (**հատոր 1-ին, գ.թ. 42**):

7) Թիվ ՎԴ/3564/05/11 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 19.12.2011 թվականի վճի համաձայն՝ «ՏԱԹԵՎԻԿ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի

ՀՏ-ի՝ 18.05.2011 թվականի թիվ 1013327 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժվել է **(հատոր 2-րդ, գ.թ. 51-54):**

8) ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալի 04.03.2015 թվականի թիվ 05/10.2/2186-15 գրության համաձայն՝ Երևան-Գյումրի թիվ 358 և Գյումրի-Երևան թիվ 359 միջմարզային միկրոավտոբուսային կանոնավոր երթուղիների փոխադրավարձը 1.500 ՀՀ դրամ է **(հատոր 2-րդ, գ.թ. 191):**

**4. Վճռաբեկ դատարանի պայրձառաքանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը և բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ոչ նյութական վնասի հատուցման իրավունքի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ արդարացվածին օրապահիկի և ճանապարհածախսի հատուցում տրամադրելու հնարավորության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

3) ստորադաս դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին՝*

*ա) արդյո՞ք անձը կարող է պահանջել ապօրինի դատապարտման արդյունքում կրած ոչ նյութական վնասի հատուցում և ի՞նչ պայմանների առկայության դեպքում նման պահանջը կարող է բավարարվել,*

*բ) արդյո՞ք փաստաբանին վճարված գումարները Հայաստանի Հանրապետության կողմից ենթակա են փոխհատուցման լրիվ ծավալով,*

*գ) արդյո՞ք արդարացվածը որպես հատուցում կարող է պահանջել ճանապարհածախսի և օրապահիկի գումարները:*

**4.1 Քննելով Սամիկոն Սյրեփանյանի վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.**

**1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պայրձառաքանությամբ.**

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի զրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պատճառված վնասի հատուցման:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տուժողին պատճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով:

Համանման բովանդակությամբ իրավադրույթներ են նախատեսված նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ, 62-րդ և 63-րդ հոդվածներով: Մասնավորապես՝ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հանցանք կատարելու համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձն արդարացվել է այն հիմքով, որ նոր կամ նոր երևան եկած որևէ հանգամանք ապացուցում է նրա դատապարտման ոչ իրավաչափ լինելը, ապա այդ անձն ունի օրենքին համապատասխան հատուցում ստանալու իրավունք, եթե չի ապացուցվում, որ այդ հանգամանքի ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն նույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածի համաձայն՝ եթե որևէ անձ վերջնական դատավճռով մեղավոր է ճանաչվել քրեական հանցագործություն կատարելու մեջ, և եթե հետագայում նրա նկատմամբ կայացված դատավճիռը չեղյալ է հայտարարվել, կամ նա ներման է ենթարկվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ համոզիչ կերպով ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետևանքով պատիժ կրած անձը փոխհատուցում է ստանում տվյալ պետության օրենքին կամ պրակտիկային համապատասխան, եթե չի ապացուցվում, որ ժամանակին այդ փաստը չբացահայտելը լիովին կամ մասամբ կախված չի եղել տվյալ անձից:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով եղել է անօրինական ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու զոհ, իրավունք ունի հայցային ուժ ունեցող փոխհատուցման, իսկ 14-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե որևէ անձ վերջնական որոշմամբ դատապարտվել է քրեական հանցագործության համար, և եթե նրա նկատմամբ կայացված դատավճիռը հետագայում բեկանվել է կամ նրան ներում է շնորհվել այն հիմքով, որ ինչ-որ նոր հանգամանք կամ նոր բացահայտված հանգամանք անվիճելիորեն ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա այդպիսի դատապարտման հետևանքով պատիժ կրած անձը փոխհատուցում է ստանում օրենքի համաձայն, եթե չապացուցվի, որ հիշյալ անհայտ հանգամանքը ժամանակին չի բացահայտվել բացառապես կամ մասամբ նրա մեղքով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարացվածն իր իրավունքների վերականգնման, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից իրեն պատճառված նյութական վնասի հատուցման

իրավունք ունի: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատճառված նյութական վնասի հատուցման իրավունք ունի նաև յուրաքանչյուր անձ, ով քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից անօրինական ենթարկվել է հարկադրանքի միջոցների:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարացված է այն անձը, (...) որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:

ՀՀ սահմանադրական դատարանը 14.12.2010 թվականի թիվ ՍԴՈ-929 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ անձին վնաս կարող է պատճառվել նաև հանրային իշխանության մարմինների գործողությունների (անգործության) հետևանքով: Արդարացված անձին ապօրինաբար պատճառված վնասը հատուցելը և նրա խախտված իրավունքները վերականգնելը պետք է դիտվեն որպես սահմանադրական անվերապահ պահանջ, որպես անձի իրավունք, իսկ այն իրացնելու օրենսդրական ընթացակարգերը չեն կարող աղավաղել այդ իրավունքի էությունը կամ օրենքի բացի արդյունքում ընդհուպ արգելափակել այն:

ՀՀ վճռաբեկ դատարանը *Գոգո և Վալի Ամոյաններն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության* գործի շրջանակներում անդրադարձել է արդարացվածի՝ **նյութական վնասների հատուցում պահանջելու իրավունքի** ծագման և իրացման հիմնախնդիրներին:

ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ հատուցման ենթակա են միայն այն վնասները, որոնք ապօրինի դատապարտելու հետևանք են: Ընդ որում, համանման իրավական դիրքորոշում արտահայտել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան): Եվրոպական դատարանը թեև ձանձաչել է ապօրինի դատապարտված անձանց կրած վնասների փոխհատուցման իրավունքը, սակայն միաժամանակ նշել է, որ Կոնվենցիան չի խոչընդոտում պայմանավորվող պետություններին հատուցել վնասը, միայն այն դեպքում, երբ տուժած անձը կկարողանա ապացուցել, որ իրեն պատճառված վնասն ուղղակիորեն կապված է իր իրավունքների խախտման հետ (*յրեն, Շիլանն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով Եվրոպական դատարանի 06.10.2005 թվականի վճիռը, կետ 20*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նաև գտել է, որ ապօրինի դատապարտման արդյունքում նյութական վնասի հատուցման իրավունքի իրացման հիմնախնդիրն անհրաժեշտ է դիտարկել նաև իրավունքների չարաշահման արգելքի համաիրավական սկզբունքի լույսի ներքո և արձանագրել է, որ անձին ապօրինի դատապարտման արդյունքում պատճառված նյութական վնասի հատուցման իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացում իրավական պետությունում հնարավոր է միայն այն պայմաններում, եթե չի ապացուցվում, որ այն հանգամանքների ժամանակին բացահայտումը, որոնք հիմնավորել են անձի ապօրինի դատապարտումը, լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ ապօրինի դատապարտման արդյունքում նյութական վնասների հատուցում պահանջելու իրավունքը ծագում է միայն անձի արդարացվածի կարգավիճակ ձեռք բերելուց հետո և համապատասխան սուբյեկտները կարող են իրացնել իրենց վնասի հատուցման իրավունքը, եթե ապացուցեն, որ իրենց վնասը պատճառվել է ապօրինի դատապարտման արդյունքում և չապացուցվի, որ այդ հանգամանքների ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից (*յրեն, թիվ ԵԿԴ/3025/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներն արդարացվածի կարգավիճակի, պետությունից ապօրինի դատապարտման արդյունքում իր կրած վնասի, մասնավորապես՝ նյութական վնասի հատուցում ստանալու իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացման պայմանների վերաբերյալ՝ Վճռաբեկ

դատարանը սույն որոշման շրջանակներում հարկ է համարում անդրադառնալ արդարացվածի՝ ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու իրավունքին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ մինչև 19.05.2014 թվականը գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

ՀՀ սահմանադրական դատարանը 05.11.2013 թվականի թիվ ՍԳՈ-1121 որոշմամբ, անդրադառնալով նշված խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի սահմանադրականության հարցին, վկայակոչված իրավադրույթն այնքանով, որքանով **բարոյական վնասը** չի դիտում որպես վնասի տարատեսակ և չի ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն՝ արգելափակելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, միաժամանակ խոչընդոտելով Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարմանը, ճանաչել է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 16-րդ հոդվածի 4-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր:

Արդյունքում՝ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 19.05.2014 թվականին ընդունված և 01.11.2014 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-21-Ն ՀՀ օրենքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրվեց նոր խմբագրությամբ՝ «վնաս» եզրույթի մեջ ներառելով նաև ոչ նյութական վնասը, միաժամանակ սահմանվեց ոչ նյութական վնասի հատուցման կառուցակարգը, որը լրացվեց «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 21.12.2015 թվականին ընդունված և 01.01.2016 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-184-Ն ՀՀ օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի համաձայն՝

1. Նույն օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

2. Անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառով ոչ նյութական վնասի հատուցում, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված **հետևյալ հիմնարար իրավունքները.**

- 1) կյանքի իրավունքը.
- 2) խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը.
- 3) անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը.
- 4) արդար դատաքննության իրավունքը.
- 5) անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը.
- 6) մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը.
- 7) հավաքների և միավորման ազատության իրավունքը.
- 8) իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը.
- 9) սեփականության իրավունքը:



3. Եթե դատապարտյալն արդարացվել է Կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված պայմաններում, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում (նույն օրենսգրքի իմաստով՝ հատուցում անարդարացի դատապարտման համար):

4. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասը հատուցվում է նույն օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով, իսկ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը՝ 1087.2-րդ հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

5. Ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի համաձայն՝

1. Հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման եղանակը, հիմքը և չափը որոշվում են նույն հոդվածին և նույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածին համապատասխան:

2. Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ հատուցման ենթակա գույքային վնասից:

3. Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ վնաս պատճառելիս պաշտոնատար անձի մեղքի առկայությունից:

4. Ոչ նյութական վնասը հատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Եթե նույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածով սահմանված հիմնարար իրավունքը խախտվել է տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից, ապա ոչ նյութական վնասը հատուցվում է համապատասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

5. Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարացիության (equitableness) և համաչափության սկզբունքներին համապատասխան:

6. Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ:

7. Հատուցման չափը չի կարող գերազանցել՝

1) նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը՝ նույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքների խախտման պարագայում,

2) նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը՝ նույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասի 3-9-րդ կետերով նախատեսված իրավունքների խախտման պարագայում:

8. Ոչ նյութական վնասի հատուցման չափը բացառիկ դեպքերում կարող է գերազանցել նույն հոդվածի 7-րդ մասով նախատեսած առավելագույն սահմանը, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ:

9. Ոչ նյութական վնասի հատուցման պահանջը դատարան կարող է ներկայացվել ինչպես նույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքի խախտումը հաստատելու պահանջի հետ՝ խախտման մասին անձին հայտնի դառնալու պահից, այնպես էլ այդ իրավունքի խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամ ոչ արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի կամ դատախազի կայացրած՝ չվերացված կամ չբողոքարկված որոշման մասին այդ անձին հայտնի դառնալու պահից մեկ տարվա ընթացքում:

10. Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը, որը հատուցել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի

որոշման, գործողության կամ անգործության հետևանքով պատճառած վնասը, հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի այդ անձի նկատմամբ՝ իր վճարած հատուցման չափով: Հետադարձ պահանջ ներկայացնելու հիմք է հանդիսանում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձի մեղքի առկայությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 19.05.2014 թվականի խմբագրությամբ 162.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե դատական կարգով հաստատվել է, որ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով ֆիզիկական անձի նկատմամբ թույլ է տրվել Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ կամ 5-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտում (նույն օրենսգրքի իմաստով՝ կոնվենցիոն իրավունքների խախտում), ապա այդ անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում՝ նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 19.05.2014 թվականի խմբագրությամբ 1087.2-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հատուցման չափը չի կարող գերազանցել՝

1) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը՝ Կոնվենցիայի 2-րդ կամ 3-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման պարագայում, ինչպես նաև նույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում:

2) նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտման պարագայում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 19.05.2014 թվականի խմբագրությամբ 1087.2-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջը կարող է ներկայացվել նույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում նախատեսվում է ոչ նյութական վնասի հատուցման հնարավորություն **միայն** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ հոդվածներով սահմանված որոշակի պայմանների պահպանման դեպքում՝ հաշվի առնելով նույն հոդվածներով սահմանված սահմանակալումները, որոնց վերլուծությունը հանգում է հետևյալին.

*ա) ոչ նյութական վնասի հատուցման համար հիմք հանդիսացող խախտված իրավունքների շրջանակը.*

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 162.1-րդ հոդվածը ոչ նյութական վնասի հատուցման իրավունք նախատեսում էր միայն Կոնվենցիայի 2-րդ (կյանքի իրավունք), 3-րդ (խոշտանգումների արգելում), 5-րդ (ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք) հոդվածներով սահմանված իրավունքների խախտման համար, իսկ նույն հոդվածի գործող խմբագրությամբ այդ իրավունքների շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները՝ կյանքի իրավունքը, խոշտանգման, անարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, մտքի, խղձի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, հավաքների և միավորման ազատության իրավունքը, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, սեփականության իրավունքը:

Ոչ նյութական վնասի հատուցում նախատեսվում է նաև դատապարտյալի համար, եթե վերջինս արդարացվել է Կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածի պայմաններում (փոխհատուցումը սխալ դատապարտման դեպքում): Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե առկա չեն նշված արձանագրությամբ սահման-

ված պայմանները, ապա արդարացված անձն ընդհանուր հիմունքներով իրավունք ունի պահանջել ոչ նյութական վնասի հատուցում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոչ նյութական վնասի հատուցում կարելի է պահանջել միայն վերոգրյալ իրավունքներից որևէ մեկի կամ միաժամանակ մի քանիսի խախտման դեպքում:

*բ) վերոնշյալ իրավունքները խախտած անձանց շրջանակը.*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում հատուցման է ենթակա միայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից պատճառված ոչ նյութական վնասը: Ընդ որում, վերոնշյալ անձանց կողմից կատարված խախտումը չպետք է լինի ենթադրյալ խախտում: Այդ խախտումը պետք է հաստատված լինի դատարանի կամ քրեական հետապնդման մարմնի կողմից: Միաժամանակ նշված սուբյեկտների կողմից կատարված խախտումը հաստատելիս հատուցման համար նշանակություն չունի համապատասխան պաշտոնատար անձի մեղքը, քանի որ ոչ նյութական վնասի հատուցման համար օրենսդիրը որդեգրել է առանց մեղքի պատասխանատվության սկզբունքը՝ սահմանելով, որ այն ենթակա է հատուցման՝ անկախ պաշտոնատար անձի մեղքից: Այդուհանդերձ, պաշտոնատար անձի դեմ պետության կամ համայնքի կողմից հետադարձ պահանջ ներկայացնելիս արդեն կարևորվում է պաշտոնատար անձի մեղքի առկայությունը:

*գ) ոչ նյութական վնասի հատուցման հիմքը և հատուցման չափը.*

Ոչ նյութական վնասի հատուցման համար հիմք է հանդիսանում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքը: Ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի առկայությունը հիմնավորելու հարցը Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո: Այսպես, Եվրոպական դատարանը, ***Dzhabarov and Others v. Bulgaria*** գործով 31.03.2016 թվականի վճռով արձանագրելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, հայտնել է այն իրավական դիրքորոշումը, որ ընդհանուր կանոնն այն է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված հատուցման տրամադրումը կախված է համապատասխան անձի կողմից նույն հոդվածի նախորդ կետերի խախտումը իրեն պատճառված վնասը հիմնավորելու հանգամանքից (*յրևն, նաև Wassink v. the Netherlands գործով (զանգապ թիվ 12535/86) Եվրոպական դատարանի 27.09.1990 թվականի վճիռ, կետ 38, Pavletić v. Slovakia գործով (զանգապ թիվ 39359/98) Եվրոպական դատարանի 22.06.2004 թվականի վճիռ, կետ 95, Włoch v. Poland (no. 2) գործով (զանգապ թիվ 33475/08) Եվրոպական դատարանի 10.05.2011 թվականի վճիռ, կետ 32*):

Այդուհանդերձ, Եվրոպական դատարանը գտել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտման արդյունքում հոգեկան տառապանքի հետևանքով ոչ նյութական վնասն ունի որոշ առանձնահատկություններ: Գործում է այն կանխավարկածը (որը կարող է հերքվել), որ նշված հոդվածի խախտմամբ ձերբակալումն անձին պատճառում է որոշ հոգեբանական տառապանքներ ոչ միայն ձերբակալման ընթացքում, այլ նաև դրանից հետո: Նման տառապանքները, որոնք պարտադիր չէ, որ հասնեն հոգեկան խանգարումների մակարդակի կամ արտահայտվեն արտաքին ախտանիշներով, անխուսափելիորեն չեն պահանջում այնպիսի բացառիկ ապացույցների միջոցով հաստատում, ինչպիսիք են հոգեբուժական կամ բժշկական փաստաթղթերը (*յրևն, Dzhabarov and Others v. Bulgaria գործով (զանգապ թիվ 6095/11, 74091/11և 75583/11) Եվրոպական դատարանի 31.03.2016 թվականի վճիռ, կետ 84*): Եվրոպական դատարանը նաև արձանագրել է, որ անօրինական կերպով ձերբակալված անձին որևէ փոխհատուցման տրամադրման մերժումն այն հիմքով, որ վերջինիս չի ներկայացրել նմանատիպ ապացույցներ, ինքնին խիստ ձևականացված է և համարվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում (*յրևն, Danev v. Bulgaria գործով (զանգապ թիվ 9411/05) Եվրոպական դատարանի 02.09.2010 թվականի վճիռը, կետեր 34-35*):

Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոչ նյութական վնասի հատուցման հիմք հանդիսացող տառապանքի, մասնավորապես՝ հոգեկան տառապանքի հաստատման համար պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նման տառապանքը հաստատելու համար ուղղակի ապացույցներ (օրինակ՝ բժշկական փաստաթղթեր, փորձագետի եզրակացություն) կարող են և չներկայացվել: Տառապանքի առկայությունը կարող է հաստատվել ցանկացած ապացույցով, այդ թվում՝ կողմի, նրա հարազատների ցուցումներով: Այլ կերպ ասած՝ հոգեկան տառապանքի առկայությունը հիմնավորելու համար չափից ավելի ֆորմալ պահանջները չեն բխի հոգեկան տառապանքի առանձնահատկություններից: Ուստի ցանկացած ապացույց, որը կարող է վկայել հոգեկան տառապանքի առկայության մասին (օրինակ՝ ձեռքակալվածին պահելու պայմանները, տևողությունը, անձի անհատական հատկանիշները՝ դյուրագրգիռությունը, ներշնչվողականությունը և այլն), պետք է գնահատվի դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ոչ նյութական վնասի հատուցման համար սահմանված են առավելագույն չափեր, որոնք կարող են գերազանցվել բացառիկ դեպքերում, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ (օրինակ՝ առողջությանը ծանր վնաս): Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարացիության (equitableness) և համաչափության սկզբունքների համապատասխան՝ հաշվի առնելով ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վնասի չափը որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն, որ ոչ նյութական վնասի հատուցումը չպետք է ուղղված լինի տուժող կողմի «հարստացմանը»՝ նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված իրավունքների չարաշահման արգելքը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը, Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո, հարկ է համարում արձանագրել, որ ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս դատարանները պետք է օժտված լինեն ձկնությունը՝ մասնավորապես հաշվի առնելով, որ իր բնույթով պայմանավորված՝ ոչ նյութական վնասը հաշվարկի կամ հստակ քանակական գնահատման ենթակա չէ (*պենս, օրինակ, Nagmetov v. Russia (գանձադր թիվ 35589/08) գործով Եվրոպական դատարանի 30.03.2017 թվականի վճիռը, կենտր 72-73, Varnava and Others v. Turkey (գանձապահ թիվ 16064/90, 16065/90, 16066/90, 16068/90, 16069/90, 16070/90, 16071/90, 16072/90 և 16073/90) գործով Եվրոպական դատարանի 18.09.2009 թվականի վճիռը, կենտր 224*): Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ ոչ նյութական վնասի չափը որոշելիս դատարանները պետք է առաջնորդվեն ողջամտության, արդարացիության և համաչափության սկզբունքներով՝ հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ և հայցվորի, և պատասխանողի փաստարկները:

### **Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 08.08.2013 թվականի թիվ ԵԱ-ԴԿ/0060/01/12 քրեական գործով կայացված օրինական ուժի մեջ մտած դատավճռով Մամիկոն Ստեփանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հանցակազմի բացակայությամբ ձանաչվել է անպարտ և արդարացվել է՝ հոչակելով նրա անմեղությունը: Դատավճռի համաձայն՝ հաշվի առնելով Մամիկոն Ստեփանյանի անձը, նախնական քննության ընթացքում դրսևորած վարքագիծը, գործի քննության ընթացքը, քննիչը պարտավոր չէր ձերբակալել Մամիկոն Ստեփանյանին:

Դատարանը, ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մատով կարճելով գործի վարույթը, պատճառաբանել է, որ ՀՀ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը ոչ նյութական վնասի հատուցումը որպես պատասխա-

նատվության տեսակ չի նախատեսում, որպիսի հիմքով վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Վերաքննիչ դատարանը Դատարանի նշված եզրահանգումը համարել է իրավաչափ:

Վճռաբեկ դատարանը, վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, գտնում է, որ դրանք անհիմն են, քանի որ 19.05.2014 թվականին ընդունված «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-21-Ն ՀՀ օրենքով ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը ներառվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Մինչդեռ Դատարանը, կարճելով գործի վարույթը, իսկ Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, սահմանափակել են Մամիկոն Ստեփանյանի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը: Հետևաբար հայցվորի կողմից ներկայացված ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մատված և նոր քննության անհրաժեշտություն՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո բացահայտելու համար ոչ նյութական վնասի հատուցման համար անհրաժեշտ պայմանների առկայությունը, մասնավորապես՝ պարզելու համար, թե արդյոք առկա է ոչ նյութական վնասի հատուցման համար հիմք հանդիսացող խախտված իրավունք, արդյոք այն խախտած անձը ներառված է օրենսդրի կողմից սահմանված անձանց շրջանակի մեջ, ինչպես նաև պարզելու համար հոգեկան կամ ֆիզիկական տառապանքի առկայությունը և ոչ նյութական վնասի չափի հիմնավորվածությունը:

**2) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հերևյալ պայմառաբառությամբ.**

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է փաստաբանի վարձատրության չափի՝ որպես դատական ծախսի խելամտության որոշման հարցին: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (*լրեն, Ֆերդինանդ Առաքելյանի գործով Եվրոպական դատարանի Պեդրոսյանի թիվ ԵԿԿ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում նույնպես բազմիցս անդրադարձել է ծախսերի և ծախքերի խելամտության հարցին և նշել, որ դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի և ծախքերի փոխհատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվում է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, և դրանց չափը եղել է ողջամիտ (*լրեն, Շանոյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 07.01.2015 թվականի վճիռը, կետ 48*):

Ընդ որում, **իրական** նշանակում է, որ պահանջ ներկայացրած անձը պետք է փաստաթղթային ողջամիտ ապացույցներ ներկայացնի առ այն, որ վնասն իրականում գոյություն ունի, վնասի հատուցման պահանջը չի կարող հիմնված լինել ենթադրությունների, շահարկումների և ապագայում տեղի ունենալիք հնարավոր կամ անհնարին իրադարձությունների ու փաստերի վրա: **Անհրաժեշտ** նշանակում է, որ պահանջ ներկայացրած անձը պետք է ապացուցի, որ այդ հատուցումն իրոք անհրաժեշտ է իր խախտված իրավունքները վերականգնելու համար և, որ ամենակարևորն է, պետք է ցույց տա իր կրած վնասների ու իր իրավունքների խախտման միջև պատճառահետևանքային կապը: **Ող-**

**ջամիտ** նշանակում է, որ վնասի հատուցման պահանջի չափը պետք է համարժեք լինի այդ վնասներին, ինչը հնարավոր է ապացուցել միայն հստակ փաստաթղթային եղանակով՝ բացառելով ենթադրությունները և շահարկումները:

*Գրոզ և Վայի Ամոխսներն ընդդեմ ՀՀ Ֆինանսների նախարարության* գործով որոշմամբ վերահաստատելով նախկինում կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ փաստաբանի վարձատրության չափի՝ որպես դատական ծախսի խելամտության հարցի վերաբերյալ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ դրանք նմանապես կիրառելի են նաև փաստաբանի վարձատրության չափի՝ որպես արդարացվածին պատճառված նյութական վնասի հատուցման խելամտության որոշման հարցի նկատմամբ, քանի որ փաստաբանին վճարված գումարները՝ անկախ այն հանգամանքից, թե դատական ծախսեր են, թե պատճառված նյութական վնասներ, ինչ դատավարության ընթացքում են վճարվել՝ քաղաքացիական, վարչական, թե քրեական, պետք է լինեն իրականում կատարված և անհրաժեշտ, ինչպես նաև դրանց չափը պետք է լինի ողջամիտ: Ընդ որում, քրեական դատավարության ընթացքում փաստաբանին՝ պաշտպանին, վճարված գումարների իրական լինելը, դրանց անհրաժեշտությունը և ողջամտությունը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել քրեական դատավարության առանձնահատկությունները, ինչպես նաև քրեական դատավարության ընթացքում կատարած աշխատանքի համար փաստաբաններին վարձատրելու վերաբերյալ արդեն իսկ ձևավորված և արմատավորված դատական պրակտիկայի առանձնահատկությունները:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ապօրինի դատապարտելու հետևանքով փաստաբանին վճարված իրական, անհրաժեշտ և ողջամիտ գումարները հատուցվում են լրիվ ծավալով (*դեռ, թիվ ԵԿԳ/3025/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մամիկոն Ստեփանյանի (Պատվիրատու) և փաստաբան Արա Զաքարյանի (Կատարող) միջև 11.04.2012 թվականին, 08.04.2013 թվականին, 19.09.2013 թվականին և 03.12.2013 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրերի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է թիվ ԵԱԳԳ/0060/01/12 քրեական գործով իրականացնել Պատվիրատուի պաշտպանությունը: Համաձայն 14.04.2012 թվականի թիվ 100, 23.04.2013 թվականի թիվ 239, 20.09.2013 թվականի թիվ 239, 09.12.2013 թվականի թիվ 474 և 11.02.2014 թվականի թիվ 201 անդորրագրերի՝ Մամիկոն Ստեփանյանը փաստաբան Արա Զաքարյանին վճարել է 1.739.000 ՀՀ դրամ:

Դատարանը, փաստաբանին վճարված 1.740.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մատվ հայրը բավարարելով 1.000.000 ՀՀ դրամի չափով, պատճառաբանել է, որ իր եզրահանգումը հիմնված է ՀՀ դատարաններում ձևավորված իրավակիրառական այն պրակտիկայի վրա, որի պայմաններում դատարանները ներկայացուցիչներին վճարվող գումարների գծով դատական ծախսերը փոխհատուցելիս պետք է հիմք ընդունեն ոչ թե փաստաբանական ծառայություն մատուցելու պայմանագրում նշված մատուցվող ծառայության համար վարձատրության չափը, այլ՝ խելամիտ չափը:

Վերաքննիչ դատարանը նշել է, որ փաստաբանի խելամիտ վարձատրության հարցին անդրադառնալով՝ Դատարանը գնահատել է իրավունքի պաշտպանության վրա ծախսված գումարների անհրաժեշտության ու խելամտության սահմանաբաժանը և ելել հիմնավոր համոզման:

Մինչդեռ վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով սույն գործով հայրը՝ փաստաբանին վճարված գումարի մատվ 1.000.000 ՀՀ դրամի չափով բավարարելու վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միայն ծախսերի խելամիտ լինելու անհրաժեշտության վկայակոչումը բավարար չէ՝ որոշելու այդ ծախսերի չափը, այլ դատարանները պետք է հիմնավորեն, թե վճարված գումարի որ մասը և ինչ հիմքով, ինչ հանգամանքների հաշվառմամբ են համարել խելամիտ: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ նշված պահանջի մատվ ստորադաս դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածին համապատասխան պատշաճ քննություն իրականացված չլինելու պայմաններում այդ մատվ ևս առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն:

**3) վճարել բողոքը երրորդ հիմքով հիմնավոր է հեղինակ պատճառաբանությամբ.**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արդարացվածն իրավունք ունի պահանջելու իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցում ամբողջ ծավալով՝ հաշվի առնելով իրական հնարավոր բաց թողնված օգուտները: Նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ արդարացվածը որպես հատուցում իրավունք ունի ստանալու աշխատավարձը, թոշակը, նպաստները, այլ եկամուտներ, որոնցից նա գրկվել է, **ինչպես նաև վճարված դատական ծախսերը**, փաստաբանին վճարված գումարները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արդարացվածին պատճառված վնասը հատուցվում է քաղաքացիական դատավարության կարգով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարության կարգով պետական բյուջեի հաշվին ենթակա են հատուցման տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի, կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցչի, պաշտպանյալի համար անվճար իրավաբանական օգնություն ցույց տվող պաշտպանի, ընթերակայի, մասնագետի, թարգմանչի, փորձագետի, վկայի կրած հետևյալ ծախսերը՝

1) քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու՝ երկարադաշին, ջրային, ավտոմոբիլային, **բացառությամբ տարսից**, և տրանսպորտի այլ տեսակներով **երթևեկության արժեքը**, իսկ քրեական վարույթն իրականացնող մարմնի համաձայնությամբ՝ նաև օդային տրանսպորտով երթևեկության արժեքը.

2) բնակտարածության վարձակալության արժեքը՝ **ծառայողական գործուղումների վճարման համար ընդունված նորմերով**, եթե այդ ծախսերն այլ կերպ չեն հատուցվել.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով մշտական բնակության վայրից դուրս տվյալ անձանց բնակվելու համար **անհրաժեշտ օրապահիկը**, եթե այն այլ կերպ չի հատուցվել. (...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը բաղկացած են՝ (...)

2) տուժողին, մասնագետին, փորձագետին, վկային **ներկայանալու և օրապահիկի ծախսերի հատուցման գումարներից**. (...)

8) քրեական գործով վարույթի իրականացման համար **անհրաժեշտ միջոցառումների համար ծախսված գումարներից**:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ծախսերը վճարվում են պետական բյուջեից, եթե նույն օրենսգրքով այլ կարգ սահմանված չէ:

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր վեհաժողովի կողմից 29.11.1985 թվականին ընդունված «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիր» վերտառությամբ թիվ 40/34 բանաձևի «Ա» բաժնի 2-րդ կետում բացահայտված է «տուժողի»՝ որպես հանցագործության զոհի, հասկացության միջազգային իրավական բովանդակությունը, համաձայն որի՝ հանցագործության զոհ է (են) այն անձը (անձինք), ում (որոնց) հանցագործությամբ կամ իշխանության չարաշահմամբ պատճառվել է վնաս, ներառյալ՝ մարմնական կամ բարոյական վնասը, հուզական ապրումները, նյութական վնասը կամ հիմնական իրավունքների էական խախտումները, որոնք օժտված են հատուցման հավասար իրավունքով:

Այդպիսով, անօրինական գործողությունների, հանցագործության և իշխանության չարաշահման արդյունքում վնաս կրած անձինք իրենց կարգավիճակով նույնացվում են, և նրանց նկատմամբ պահանջվում է համարժեք վերաբերմունք:

ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով միջազգային իրավունքում առկա վերը նշված մոտեցումները, 14.12.2010 թվականի թիվ ՄԻՌ-929 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ

Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «տուժող» հասկացությունն ունի ընդգրկուն բովանդակություն և ներառում է ոչ միայն քրեական, այլև քրեադատավարական, վարչական, քաղաքացիաիրավական ու այլ հարաբերություններից և իրենց կամքից անկախ տուժած ֆիզիկական և իրավաբանական անձանց: Ուստի, 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «տուժող» հասկացությունը նշանակում է նաև **հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործողություններից (անգործությունից) վնաս կրած անձ:**

Ընդ որում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ անձը տուժողի դատավարական կարգավիճակ է ձեռք բերում որպես այդպիսին ճանաչվելու փաստով, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության նշված դրույթի իմաստով տուժողին հասցված վնասի հատուցման իրավունքը ենթադրում է նաև **արդարացված անձի կրած վնասի հատուցման հարցով** քրեական դատավարությունից դուրս քաղաքացիական դատավարության կարգով համապատասխան հայց հարուցելու իրավունք:

Անդրադառնալով արդարացվածի կատարած դատական ծախսերի հատուցման հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդարացվածը, որպես վնասի հատուցում, քաղաքացիական դատավարության կարգով իրավունք ունի ստանալ նաև ճանապարհածախսի և օրապահիկի գումարների հատուցում՝ նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ արդարացվածը, որպես վնասի գույքային հատուցում, իրավունք ունի ստանալ նաև իր կատարած դատական ծախսերը: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեև քրեական դատավարության օրենսդրությամբ ճանապարհածախսը և օրապահիկը, որպես դատական ծախս, նախատեսված են տուժողի, մասնագետի, փորձագետի և վկայի համար, սակայն արդարացվածը միջազգային և սահմանադրական իրավական նորմերի տեսանկյունից նույնպես կարող է դիտվել որպես տուժող պետության հետ փոխհարաբերություններում, բացի այդ, վերջինս տվյալ դատական ծախսերը քաղաքացիական դատավարության կարգով պահանջում է որպես իր կրած գույքային վնասների հատուցում, որը ենթակա է հատուցման ամբողջ ծավալով: Ուստի, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ արդարացվածին հատուցման ենթակա գույքային վնասը ներառում է քրեական դատավարության կարգով կատարված բոլոր ծախսերը՝ ներառյալ օրապահիկը և ճանապարհածախսը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրապահիկի և ճանապարհածախսի հատուցման իրավունք անձը կարող է ձեռք բերել միայն այն նույն պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, որը սահմանվել է *Գոգո* և *Վալի* *Անոյաններն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վերը նշված որոշմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդարացվածն ունի օրապահիկի և ճանապարհածախսի հատուցում ստանալու իրավունք: Ինչ վերաբերում է այդ հատուցման չափերին, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանը, այնպես էլ Եվրոպական դատարանը բազմիցս նշել են, որ կատարված ծախսերը պետք է լինեն իրական, անհրաժեշտ և ողջամիտ, որոնց բնույթը բացահայտվել է բողոքի նախորդ հիմքի քննության ժամանակ: Վերահաստատելով նախկինում արտահայտված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ արդարացվածին հատուցման ենթակա օրապահիկը և ճանապարհածախսը պետք է լինեն իրական, այսինքն՝ իրականում կատարված լինեն, որի վերաբերյալ անձը պետք է ներկայացնի ողջամիտ ապացույցներ: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ դրանք կարող են լինել ինչպես ուղղակի ապացույցներ (օրինակ՝ վճարման անդորրագրեր), այնպես էլ անուղղակի ապացույցներ (օրինակ՝ ապացույց այն մասին, որ անձն իր բնակության վայրից դուրս մասնակցել է դատական նիստերի): Այդ ծախսերը պետք է լինեն անհրաժեշտ, այսինքն՝ արդարացվածը պետք է ապացուցի, որ առանց այդ ծախսերի իր իրավունքների պատշաճ պաշտպանություն իրականացվել չէր կարող: Եվ վերջապես այդ ծախսերը



պետք է լինեն ողջամիտ: Ողջամտության չափը որոշելու կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածում սահմանված՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց ծախսերի հատուցման վերաբերյալ կարգավորմամբ մասնավորապես նախատեսված է, որ հատուցման ենթակա բնակտարածության վարձակալության արժեքը որոշվում է ծառայողական գործուղումների վճարման համար ընդունված նորմերով, իսկ ճանապարհածախսի կապակցությամբ սահմանված է, որ ըստ էության այն հատուցվում է հասարակական տրանսպորտի երթևեկության արժեքին համաչափ: Ինչ վերաբերում է օրապահիկի գումարին, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին այս կապակցությամբ հատուկ կարգավորում չի նախատեսում:

Նկատի ունենալով նաև այն, որ ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը բնակտարածության վարձակալության արժեքի, այնպես էլ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը (59-րդ հոդվածի 8-րդ մաս՝ վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին օրապահիկի, գիշերավարձի և ճանապարհածախսի վճարումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ծառայողական գործուղման ծախսերի առավելագույն չափերը) օրապահիկի, գիշերավարձի և ճանապարհածախսի վճարումների չափը որոշելու կապակցությամբ հղում են կատարում ծառայողական գործուղման ծախսերին, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, մասնավորապես՝ օրապահիկի կապակցությամբ հատուկ կարգավորում նախատեսված չլինելու պարագայում անհրաժեշտ է դրա բնույթը բացահայտել «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման, օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողի և նրա ընտանիքի անդամների, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունում բնակելի տարածության վարձակալության համար դրամական փոխհատուցման կարգերն ու չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2335-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգին» համապատասխան:

Նշված կարգի 7-րդ կետի համաձայն՝ գործուղված աշխատողին հատուցվում է օրապահիկը, գիշերավարձը, աշխատանքի հիմնական վայրից գործուղման վայրեր մեկնելու և վերադառնալու ճանապարհածախսը, ճանապարհին հարկադրական կանգառի ժամանակ հյուրանոցներում և համանման օբյեկտներում տեղերն ամրագրելու վճարը, պետական տուրքերը, մուտքի արտոնագրի ձևակերպման հետ կապված ծախսերը, ինչպես նաև գործուղման հետ կապված կապի (հեռախոս, ֆաքս, ինտերնետ ծառայություն), փաստաթղթերի թարգմանության և վավերացման, գործուղման հետ կապված այլ ծախսեր՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում:

Աշխատանքի հիմնական վայրից մինչև 30 կմ հեռավորությամբ այլ վայր մեկնելու դեպքում գործուղվող աշխատողին հատուցվում է միայն գործուղման ճանապարհածախսը:

Աշխատանքի հիմնական վայրից 30 կիլոմետրից ավելի հեռավորությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում այլ վայր մեկնելու և նույն օրը վերադառնալու դեպքում գործուղվող աշխատողին հատուցվում են օրապահիկը և աշխատանքի հիմնական վայրից գործուղման վայր (վայրեր) մեկնելու և վերադառնալու ճանապարհածախսը:

Նույն կարգի 21-րդ կետի համաձայն՝ պետական և համայնքի բյուջեների միջոցներից հատկացվող օրապահիկի ծախսերի չափը՝ 3000 դրամը, համարվում է նվազագույն, որը նաև առավելագույն է, իսկ 22-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն գործուղվող աշխատողի հա-

մար ճանապարհածախսի նվազագույն չափ է համարվում աշխատանքի հիմնական վայրից դեպի գործուղման վայր հասնելու համար անհրաժեշտ գործող միջնարգային կամ միջպետական ավտոբուսային երթուղիների սակագները: Պետական և համայնքային բյուջեների միջոցներից ֆինանսավորման դեպքում առավելագույն չափ է համարվում միկրոավտոբուսային համապատասխան երթուղու սակագինը, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն օդային ճանապարհով երթնեկելու դեպքում՝ օդանավի տոմսի արժեքը:

Այսպիսով, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով բացահայտված չէ օրապահիկի գումարի ողջամիտ չափը, իսկ ճանապարհածախսի չափը որոշելու կարգը մանրամասնեցված չէ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդարացվածին հատուցման ենթակա օրապահիկի և ճանապարհածախսի ողջամտությունը որոշելիս, որպես կանոն, ուղենշային պետք է լինի գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգավորումը:

Սույն գործով Դատարանը, ճանապարհածախսի և օրապահիկի գումարների բռնագանձման պահանջը մերժելով, պատճառաբանել է, որ ճանապարհածախսի և օրապահիկի գումարների վերաբերյալ չեն ներկայացվել անդորրագրեր կամ այլ փաստաթղթեր՝ ծախսված գումարները հիմնավորելու համար:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Դատարանի եզրահանգումը, նշել է, որ Մամիկոն Ստեփանյանի կողմից չեն ներկայացվել վերաբերելի և թույլատրելի ապացույցներ այդ ծախսերը փաստացի կատարված լինելու մասին:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մամիկոն Ստեփանյանը՝ որպես արդարացված, իրավունք ուներ ստանալու իր կատարած ծախսերի, այդ թվում՝ օրապահիկի և ճանապարհածախսի փոխհատուցում: Նկատի ունենալով օրապահիկի և ճանապարհածախսի գումարների հիմնավորման առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատարանները հաշվի չեն առել, որ նշված ծախսերը կարող են հիմնավորվել նաև անուղղակի ապացույցներով: Ստորադաս դատարանները, մասնավորապես՝ քննության առարկա պետք է դարձնեին թիվ ԵԱԳԲ/0060/01/12 քրեական գործի շրջանակներում Մամիկոն Ստեփանյանի բնակության վայրից մեկնելու հանգամանքը, ճանապարհի երկարությունը, մեկնելու և վերադառնալու ժամկետի տևողությունը և այլն: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրապահիկի և ճանապարհածախսերի գումարների բռնագանձման պահանջների մատով լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն չի իրականացվել, ուստի այս պահանջի մատով նույնպես առկա է նոր քննության անհրաժեշտություն:

#### **4) վճռաբեկ բողոքը չորրորդ հիմքով անհիմն է հեղևյալ պայմառաբանությանը.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը

*(յրեն, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԳ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Նունե Խաչատրյանը և «ՏԱԹԵՎԻԿ» ՍՊԸ-ն Մաշտոցի ՏՀՏ-ի հաշվին են փոխանցել 18.830.351 ՀՀ դրամ՝ որպես արձանագրված շահութահարկի լրացուցիչ գանձման հարկի գումար: Թիվ ՎԳ/3564/05/11 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 19.12.2011 թվականի վճռի համաձայն՝ «ՏԱԹԵՎԻԿ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՏՀՏ-ի՝ 18.05.2011 թվականի թիվ 1013327 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժվել է:

Դատարանը, քննելով Հայաստանի Հանրապետությունից 18.830.351 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջը, նշել է, որ Մամիկոն Ստեփանյանի կողմից չի ներկայացվել ապացույց առ այն, որ 18.830.351 ՀՀ դրամի չափով շահութահարկի գումարը ենթակա չէր վճարման, քանի որ ՀՀ վարչական դատարանի 19.12.2011 թվականի վճռով հաստատվել է, որ պետության հանդեպ «Տաթևիկ» ՍՊԸ-ն ունեցել է հարկային պարտավորություն, որն էլ վճարվել է:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Դատարանի եզրահանգումը, հավելել է, որ Մամիկոն Ստեփանյանը չի ապացուցել իր կողմից վճարում կատարած լինելու հանգամանքը, մինչդեռ վճարման փաստաթղթի համաձայն՝ վճարումն իրականացվել է Նունե Խաչատրյանի և «Տաթևիկ» ՍՊԸ-ի կողմից, որոնք էլ դրա վերադարձի պահանջ կարող են ներկայացնել:

Անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը դրանք հիմնավոր է համարում և արձանագրում է, որ Մամիկոն Ստեփանյանի կողմից չեն ապացուցվել իր վկայակոչված փաստերը, այն է՝ իր կողմից 18.830.351 ՀՀ դրամի չափով վճարում կատարած լինելը, ինչպես նաև այդ գումարն իրեն վերադարձնելու իրավական և փաստական հիմքը: Ավելին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատարանի 19.12.2011 թվականի թիվ ՎԳ/3564/05/11 վճռի համաձայն՝ «ՏԱԹԵՎԻԿ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Մաշտոցի ՏՀՏ-ի՝ 18.05.2011 թվականի թիվ 1013327 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժվել է: Հետևաբար 18.830.351 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջը մերժելու մասով ստորադաս դատարանների եզրահանգումն իրավաչափ է և պատճառաբանված: Ուստի չի հիմնավորվել այս պահանջի մասով դատական սխալի առկայությունը:

**4.2 Քննելով Նախարարության վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Նախարարության վճռաբեկ բողոքը ևս վերաբերում է փաստաբանի ծախսի խելամիտ լինելը որոշելու չափանիշներին, ինչի մասին սույն որոշման մեջ արդեն իսկ անդրադարձ է կատարվել և գործն այդ մասով ևս ուղարկվում է նոր քննություն, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված պատճառաբանություններով Նախարարության վճռաբեկ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

*Նախարարության վճռաբեկ բողոքի դեմ Մամիկոն Ստեփանյանի կողմից բերված վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները հերքվում են վերոհիշյալ պարձառաբանություններով:*

Այսպիսով, Մամիկոն Ստեփանյանի վճռաբեկ բողոքի 1-ին, 2-րդ և 3-րդ հիմքերի, Նախարարության վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու և գործը բեկանված մասերով նոր քննության ուղարկելու համար:

### 5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «է.1» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են արդարացվածները՝ իրենց մասօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցման հայցերով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Սամիկոն Ստեփանյանի ներկայացրած վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի հարցին, հարկ է համարում ընդգծել, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «է.1» կետի հիմքով Սամիկոն Ստեփանյանն ազատված է գույքային վնասի հատուցման պահանջով պետական տուրքի վճարումից:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքների բավարարման արդյունքում վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է մասնակի բեկանման, իսկ գործը՝ բեկանված մասերով, ուղարկվում է նոր քննության, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բեկանված մասերով դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում: Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանի որոշման՝ օրինական ուժի մեջ թողնված մասով դատական ծախսերի բաշխման հարցին, ապա նկատի ունենալով, որ Սամիկոն Ստեփանյանը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «է.1» կետի հիմքով ազատված է նյութական վնասի պահանջի մասով պետական տուրքի վճարումից, իսկ 18.830.351 ՀՀ դրամի՝ որպես նյութական վնասի հատուցման պահանջի մասով ստորադաս դատարանի դատական ակտը թողնվում է օրինական ուժի մեջ, Վճռաբեկ դատարանն այդ մասով պետական տուրքի հարցը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Սամիկոն Ստեփանյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.03.2016 թվականի որոշման՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 19.10.2015 թվականի վճիռը՝ 102.000.000 ՀՀ դրամի՝ որպես բարոյական վնասի հատուցման պահանջի մասով գործի վարույթը կարճելու, 1.740.000 ՀՀ դրամի՝ որպես փաստաբանին վճարված գու-

մարի, ինչպես նաև ճանապարհածախսի և օրապահիկի բռնագանձման պահանջների մասերով հայցը մերժելու մասով օրինական ուժի մեջ թողնելու մասերը և այդ մասերով գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Բեկանված մասերով դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

18.830.351 ՀՀ դրամ նյութական վնասի հատուցման պահանջի մասով պետական տուրքի հարցը՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «է.1» կետի հիմքով, համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/2190/02/15**  
դատարանի որոշում **2017թ.**  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/2190/02/15  
Նախագահող դատավոր՝ Ս. Թորոսյան  
Դատավորներ՝ Ա. Խառատյան  
Գ. Կարախանյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ս. ԴԻՄԵՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «Յունիքանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռա-  
բեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.05.2016 թվականի որոշման  
դեմ՝ ըստ Բանկի հայցի ընդդեմ Անիկ Ստեփանյանի իրավահաջորդ Սիմոն Արզումանյա-  
նի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, պարտավորությունները վաղաժամ-  
կետ կատարելու և գումար բռնագանձելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Սիմոն Արզումանյանին ճանաչել Անիկ  
Ստեփանյանի իրավահաջորդ՝ ժառանգությունը փաստացի ընդունած լինելու հիմ-  
քով, Սիմոն Արզումանյանից հոգուտ Բանկի բռնագանձել 15.790.201,4 ՀՀ դրամ՝ որպես  
12.06.2012 թվականին կնքված վարկային պայմանագրով սահմանված պարտավորու-  
թյունների կատարում՝ բռնագանձումը տարածելով Երևանի Դավթաշեն 3-րդ թաղա-  
մասի 14 շենքի թիվ 18 հասցեում գտնվող՝ գրավի առարկա անշարժ գույքի վրա, ինչպես  
նաև բռնագանձել 12.800.770,9 ՀՀ դրամ վարկի գումարի մնացորդի նկատմամբ տարե-  
կան 17 տոկոս դրույքաչափով հաշվարկվող տոկոսները՝ սկսած 05.05.2015 թվականից  
մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավա-  
տության դատարանի (դատավոր՝ Զ. Նախշարյան) (այսուհետ՝ Դատարան) 12.02.2016  
թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

17.05.2016 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.02.2016 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ, 1225-րդ, 1226-րդ հոդվածները, 1243-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 53-րդ հոդվածները, 219-րդ հոդվածի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու հայցապահանջով կատարել է սխալ եզրահանգում, քանի որ դիտարկել և քննության առարկա է դարձրել մի այնպիսի պահանջ (ժառանգությունն ընդունելը պարտադրելու պահանջ), որը չի ներկայացվել Բանկի կողմից հայցադիմումում, Դատարանում չի հանդիսացել քննության առարկա և չի ներկայացվել վերաքննիչ բողոքի հիմքերում և հիմնավորումներում: Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ իբր «հայցվորը ներկայացրել է ժառանգությունն ընդունելուն պարտադրելու մասին պահանջ, մինչդեռ նման պահանջ չի կարող ներկայացվել, քանի որ ժառանգության ընդունումը կամավոր է»: Մինչդեռ Բանկի կողմից ներկայացված պահանջը վերաբերում է կատարված փաստին՝ պատասխանողին արդեն իսկ որպես ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելուն: Այսինքն՝ Բանկը ոչ թե պահանջել է պարտադրել պատասխանողին ընդունել ժառանգությունը, այլ Դատարանին խնդրել է պատասխանողին ճանաչել արդեն իսկ ժառանգությունն ընդունած ժառանգ: Հետևաբար այս մասով Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր լիազորություններից՝ հաշվի չառնելով, որ Բանկն ունի ժառանգությունն ընդունած ժառանգին, այդ թվում նաև՝ ժառանգությունը փաստացի ընդունած ժառանգին պահանջ ներկայացնելու իրավունք:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է պահանջատիրոջ իրավունքը՝ իր պահանջը ներկայացնելու ժառանգությանն ընդունած ժառանգին մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ հայցվորը ժառանգ չէ, հետևաբար չի կարող ներկայացնել ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջ, անհիմն է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «ամբողջությամբ բավարարել վճռաբեկ բողոքը՝ ամբողջությամբ բեկանելով դատական ակտը և բեկանված մասով գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ»:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 27.01.1987 թվականին տրված թիվ II-ՇՂ 348666 ամուսնության վկայականի համաձայն՝ Սիմոն Արզումանյանը և Անիկ Ստեփանյանն ամուսնացել են 27.01.1987 թվականին **(գ.թ. 13)**.

2) 09.07.2013 թվականին տրված թիվ ԱԲ 130277 մահվան վկայականի համաձայն՝ Անիկ Ստեփանյանը մահացել է 08.07.2013 թվականին **(գ.թ. 14)**.

3) Բանկի և Անիկ Ստեփանյանի միջև 17.07.2008 թվականին կնքվել է թիվ 244-05 վարկային պայմանագիրը, որի համաձայն՝ Բանկն Անիկ Ստեփանյանին տրամադրել է 18.500.000 ՀՀ դրամի չափով վարկ՝ տարեկան 17 տոկոս դրույքաչափով և մինչև 17.07.2023 թվականը մարման ժամկետով **(գ.թ. 16-18)**.

4) Բանկի, Խաչիկ Կիրակոսյանի և Անիկ Ստեփանյանի միջև 17.07.2008 թվականին կնքվել է թիվ 244-05/ԱՀ անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիրը, որի համաձայն՝ Բանկն Անիկ Ստեփանյանին վերոնշյալ վարկը տրամադրել է Երևանի Դավթաշեն 3-րդ թաղամասի 14-րդ շենքի թիվ 18 հասցեում գտնվող բնակարանը ձեռք բերելու նպատակով **(գ.թ. 19-25)**։

5) 22.01.2015 թվականի դիմումով Սիմոն Արզումանյանը Բանկին տեղեկացրել է, որ Անիկ Ստեփանյանը մահացել է 08.07.2013 թվականին, մահից հետո վճարումները կատարվել են իր կողմից, ընդունել է Անիկ Ստեփանյանի պարտավորություններն ամբողջությամբ և պարտավորվել դրանք կատարել։ Միաժամանակ նշել է, որ դիմել է նոտարական գրասենյակ՝ ժառանգություն ձևակերպելու համար, և Բանկից խնդրել է ժամկետանց պարտավորությունները կատարելու համար ժամկետ տրամադրել մինչև 01.04.2015 թվականը **(գ.թ. 35-36)**։

6) Բանկի կողմից 05.05.2015 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ 05.05.2015 թվականի դրությամբ վարկառու Անիկ Ստեփանյանի պարտավորությունը կազմում է 15.790.201,4 ՀՀ դրամ **(գ.թ. 15)**։

7) Արաբկիր նոտարական տարածքի նոտարական գրասենյակի նոտարներ Կ. Ադամյանի, Վ. Աբաջյանի և Դ. Բեգլարյանի՝ համապատասխանաբար 06.11.2015 թվականի թիվ 107, 09.11.2015 թվականի թիվ 131/2015 և 11.11.2015 թվականի թիվ 240 գրությունների համաձայն՝ Անիկ Ստեփանյանի (մահացած՝ 08.07.2013 թվականին) անվամբ ժառանգական գործ առկա չէ **(գ.թ. 68-70)**։

9) 13.07.2013 թվականի, 30.09.2013 թվականի, 31.01.2014 թվականի, 29.04.2014 թվականի և 27.06.2014 թվականի թվագրությամբ վճարման անդորրագրերի համաձայն՝ Սիմոն Արզումանյանի կողմից Անիկ Ստեփանյանի վարկի մարման համար գումարներ են վճարվել Բանկին **(գ.թ. 38-41)**։

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզառաքանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ, 1226-րդ և 1243-րդ հոդվածների միատեսակ կիրառության համար։

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ, 1226-րդ, 1243-րդ հոդվածների սխալ մեկնաբանության, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով։

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

*- արդյո՞ք կարելի է պահանջ ներկայացնել ժառանգին՝ ժառանգությունն ընդունելու վերաբերյալ,*

*- ինչպե՞ս է իրացվում անձի՝ ժառանգելու սահմանադրական իրավունքը,*

*- արդյո՞ք ժառանգները կրում են ժառանգության հետ կապված ծախսերը հարուցելու պարտականություն այն դեպքում, երբ նրանք ժառանգական գույքի փաստացի տիրակերպում են ընդունել են ժառանգությունը, և արդյո՞ք պարտավորվում են ցանկացած ժամանակ կարող է պարտքը մարելու պահանջ ներկայացնել ժառանգներին։*

*ս. ժառանգելու իրավունքը՝ որպես անձի սահմանադրական իրավունք*

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգելու իրավունքը երաշխավորվում է։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիա-



կան օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինքը քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հրաժարվել իրենց իրավունքներն իրականացնելուց չի հանգեցնում այդ իրավունքների դադարման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն), եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքի կանոններով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության գանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ժառանգի կողմից ժառանգությունը չընդունելը հանգեցնում է նույն հետևանքներին, ինչը ժառանգությունից հրաժարվելն առանց այն անձին նշելու, հօգուտ որի նա հրաժարվել է ժառանգությունից, եթե այլ բան սահմանված չէ նույն օրենսգրքով, իսկ 7-րդ կետի համաձայն՝ եթե ժառանգն օրենքով սահմանված կարգով սնանկ է ճանաչվել, ապա նրա կողմից ժառանգությունը չընդունելը չի համարվում ժառանգությունից հրաժարում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ ներառյալ այն դեպքում, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը հիմնվում է, մասնավորապես, իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքների վրա: Նշված սկզբունքներից կամքի ինքնավարության սկզբունքը ենթադրում է քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների իրավունքը՝ իրենց հայեցողությամբ և իրենց շահերին համապատասխան ընտրելու համապատասխան վարքագծի թույլատրելի տարբերակներից մեկը: Մասնակիցներն առավելապես իրենք են որոշում՝ մտնել որևէ քաղաքացիաիրավական հարաբերության մեջ, թե՛ ոչ, օգտվել իրենց իրավունքից, թե՛ ոչ, պահանջել իրենց օգտին պարտավորության կատարում, թե՛ ոչ և այլն: Ընդ որում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իրավունքից չօգտվելը չի հանգեցնում այդ իրավուն-

քի դադարման: Ուստի, վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական իրավահարաբերության մասնակիցները գործում են ինքնուրույն, սեփական կամքով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ սեփականության սահմանադրական իրավունքի տարր հանդիսացող ժառանգման իրավունքի հետ կապված հարցերն առավելապես կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, հետևաբար նշված հարաբերություններին նույնպես բնորոշ են վերը նշված առանձնահատկությունները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգությունը ժառանգը ձեռք է բերում միայն այն ընդունելու դեպքում: Որպես կամքի ինքնավարության սկզբունքի դրսևորում՝ ժառանգն ինքն է որոշում՝ ընդունել ժառանգությունը, թե՛ ոչ: Ընդ որում, ժառանգությունը ձեռք բերելու իրավունքից օգտվելու դեպքում գործում է, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ինպերատիվ այն նորմը, որ ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, որը ներառում է նաև ժառանգատուի պարտականությունները: Այլ կերպ ասած, եթե ժառանգը որոշում է ընդունել ժառանգությունը, ապա չի կարող հրաժարվել դրա արդյունքում վրա հասնող պարտադիր համարվող վարքագծից՝ ժառանգատուի պարտականությունն ընդունելուց: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ ժառանգը, որպես կամքի ինքնավարության դրսևորում, կարող է չընդունել ժառանգությունը կամ հրաժարվել արդեն ընդունած ժառանգությունից՝ իր համար չառաջացնելով որևէ իրավունք կամ պարտականություն: Այդուհանդերձ, նշված կանոնից օրենսդրի կողմից սահմանվել է բացառություն, որի համաձայն՝ սնանկ ճանաչված ժառանգը, փաստորեն, չի կարող հրաժարվել ժառանգությունից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ անձն ինքն է որոշում ընդունել ժառանգությունը, թե՛ ոչ: Ընդ որում, ժառանգությունն ընդունվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կանոնների պահպանմամբ, որոնք մասնավորապես վերաբերում են ժառանգությունն ընդունելու եղանակներին, ժամկետներին և կարգին: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձին չի կարելի պարտադրել ընդունել ժառանգությունը, այդ թվում՝ ժառանգին չի կարող ներկայացվել ժառանգությունն ընդունելու պահանջ:

#### *բ. ժառանգությունն ընդունելու եղանակները*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.

3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է վկայակոչված հոդվածների վերլուծությանը: Սահմավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժա-

ռանգի կողմից ժառանգված գույքը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: **Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման** (յրեն, *Արմինե Հակոբյանը և Սամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի նոտար Ալվարդ Մելքոնյանի և մյուսների թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե գործի քննության ընթացքում կողմերից մեկը բարձրացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ձևերից մեկով ժառանգությունն իր կողմից ընդունելու հարցը, **ապա նմանատիպ գործեր քննելիս միշտ կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը** (յրեն, *օրինակ, Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Կարինե Սերոբյանի և մյուսների թիվ 3-183(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը*): Ուստի, դատարանում գործի քննության ժամանակ պետք է հիմնավորվի փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքն ընդունելու փաստը: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ժառանգական գույքի փաստացի տիրապետելու հանգամանքը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով, ընդ որում, գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը կամ այլ ապացույցներ, որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգատուի մահից հետո ժառանգը փաստացի տիրապետել և կառավարել է ժառանգական գույքը (յրեն, *Միշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի և մյուսների թիվ 3-938(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը*):

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), **ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք նուղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը** (յրեն, *Կինա Սարգսյանն ընդդեմ Հարություն Սարգսյանի և մյուսների թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ըստ օրենքի ժառանգման դեպքում ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում **ժառանգի կողմից ժառանգված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն արդեն իսկ գիտակցված, ակտիվ գործողություններ են, որոնք նպատակաուղղված են ժառանգության ընդունմանը**: Եթե ժառանգը, գիտակցելով, որ գույքը պատկանել է ժառանգատուին, վերջինիս մահվանից հետո տիրապետում և կառավարում է այդ գույքը, ըստ էության գիտակցաբար կատարում է ակտիվ գործողություններ, իսկ նման գործողությունների կատարումն օրենսդիրը համարում է ժառանգության ընդունման եղանակներից մեկը: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ գործով հիմնավորված է ժառանգատուի մահվանից հետո ժառանգված գույքի փաստացի տիրապետման և կառավարման հանգամանքը, ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար այլևս անհրաժեշտություն չկա ապացուցելու այլ ակտիվ, գիտակցված գործողությունների կատարման վերաբերյալ փաստեր (...) (յրեն, *Սամվել Հովհաննիսյանն ընդդեմ Լիդա Հովհաննիսյանի և մյուսների թիվ ԱՐԱԴ2/0420/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նաև հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով ժառանգությունն ընդունելու համար **բավարար է նաև ժառանգի կողմից ժառանգատուի պարտքերն իր հաշվին վճարելը** կամ երրորդ անձանցից ժառանգատուին հասանելիք գումարներն ստանալը (*յոնս, Գագիկ Արշակյանը և ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Արթուր Արշակյանն ընդդեմ Վահան Քոչարյանի և մյուսների թիվ ԵԱՆԴ/0137/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ այն դեպքերում, երբ ժառանգը որոշում է օգտվել իր իրավունքից և ընդունել ժառանգությունը, ապա այդ իրավունքն իրացվում է վերը նշված եղանակներից որևէ մեկով՝ կամ ժառանգությունն ընդունելու, կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, կամ ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի տիրապետելով կամ կառավարելով: Հետևաբար, եթե ժառանգը սահմանված ժամկետում դիմում է ներկայացնում նոտարին կամ սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը՝ իրականացնելով, մասնավորապես, վերը թվարկված գործողություններից որևէ մեկը, ապա համարվում է, որ ժառանգն օգտվել է իր իրավունքից, որը հանգեցնում է դրանից անմիջականորեն բխող պարտադիր վարքագծի դրսևորման անհրաժեշտության՝ կապված հատկապես ժառանգատուի պարտատերերի առջև պատասխանատվության հետ:

*գ. ժառանգատուի պարտավորների պահանջների բավարարումը*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է**, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության հետ կապված ծախսերը հատուցվում են հետևյալ հերթականությամբ՝

առաջին հերթին հատուցվում են մինչև ժառանգատուի մահը նրա հիվանդության հետևանքով առաջացած և ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը:

երկրորդ հերթին հատուցվում են ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքը պահպանելու և կառավարելու, ինչպես նաև կտակը կատարելու հետ կապված ծախսերը:

**երրորդ հերթին բավարարվում են ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները:**

չորրորդ հերթին բավարարվում են պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների պահանջները:

հինգերորդ հերթին հատուցվում են կտակային հանձնարարությունը կատարելու հետ կապված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները**: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պահանջները, մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը, կարող են ներկայացվել ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, իսկ նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգները, ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո, իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են նույն օրենսգրքի 1242-րդ հոդվածում նշված ծախսերը: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ իրենց անցած ժառանգության արժեքի

սահմաններում ժառանգները կրում են համապարտ պատասխանատվություն:

ՀՀ վճարել դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ համակարգային վերլուծության ենթարկելով վերը նշված հոդվածներով նախատեսված կարգավորումները, արձանագրել է, որ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալուց հետո ժառանգը ժառանգատուի պարտքերով պարտատերերի առջև իրեն անցած գույքի սահմաններում կարող է կրել պարտավորություններ, **եթե ժառանգության բացումից վեցամսյա ժամկետում պարտատերերի կողմից իրեն պահանջ է ներկայացվել:** Պահանջների ներկայացման համար սահմանված վեցամսյա ժամկետի ավարտից հետո ներկայացված պահանջները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով, ենթակա չեն բավարարման, քանի որ մինչև ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը պահանջի ներկայացման դեպքում միայն ժառանգը կարող էր որոշել ժառանգությունն ընդունելու նպատակահարմարությունը (*լրե՛ս, Սերյա Սոնյանն ընդդեմ Իդա Էրզիմյանի թիվ 3-1778(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 25.12.2007 թվականի որոշումը*):

ՀՀ վճարել դատարանը, մեկ այլ որոշման շրջանակներում կրկին անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածին, արձանագրել է, որ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել ժառանգատուի պարտատերերին ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալն իրենց պահանջները ներկայացնել նախ հետևյալ անձանց՝ ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, ապա միայն նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին (*լրե՛ս, Սերգեյ Թաիրյանն ընդդեմ Երևանի Կենտրոն նոտարական գրասենյակի նոտարի թիվ ԵՔԴ/0279/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 25.06.2010 թվականի որոշումը*):

ՀՀ վճարել դատարանը, զարգացնելով վերը շարադրված իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի 1-ին կետով օրենսդրի կողմից ժառանգատուի պարտատերերի համար պահանջներ ներկայացնելու վերջնաժամկետ սահմանելն ինքնանպատակ չէ. այն կոչված է ապահովելու քաղաքացիաիրավական հարաբերությունների կայունությունը և որոշակիությունը՝ պայմանավորված ժառանգման իրավահարաբերությունների առանձնահատկություններով:

Ընդունելով ժառանգությունը՝ ժառանգը ոչ միայն ձեռք է բերում համապատասխան իրավունքներ, այլ նաև պարտավորություն է ստանձնում իրեն անցած գույքի արժեքի սահմաններում պատասխանատվություն կրելու ժառանգատուի պարտավորությունների համար: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում իր ժառանգման իրավունքն իրացնելիս ժառանգը **պետք է հստակ պատկերացում ունենա ինչպես ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի կազմի, այնպես էլ ժառանգատուի պարտավորությունների վերաբերյալ:** Եթե ժառանգության զանգվածի կազմը, որպես կանոն, պարզ է լինում ժառանգի համար, այլ է իրավիճակը ժառանգատուի պարտավորությունների պարագայում: Վերջիններիս վերաբերյալ որոշակի պատկերացում ժառանգը կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ օրենքով սահմանված ժամկետում պարտատերերի կողմից ներկայացվեն համապատասխան պահանջներ: Նման պայմաններում ՀՀ վճարել դատարանը գտել է, որ օրենսդիրը, ժառանգատուի պարտատերերի համար սահմանելով պահանջների ներկայացման վերջնաժամկետ, ըստ էության, նախադրյալներ է ապահովել ժառանգի համար ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի և ժառանգատուի պարտավորությունների հաշվառմամբ որոշելու իր՝ ժառանգման իրավունքի իրացման հարցը:

Ընդ որում, ՀՀ վճարել դատարանը հարկ է համարել ընդգծել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված ժամկետը դասվում է իրավադադարեցնող ժամկետների շարքին, ինչը նշանակում է, որ այդ ժամկետի բացթողումը հանգեցնում է պարտատիրոջ իրավունքի կորստի: Այսպես՝ գործնականում չի բացառվում, որ ժառանգությունը բացվելուց հետո ժառանգատուի պարտատերը կարող է որոշակի տևական ժամանակ օբյեկտիվորեն չիմանալ պարտապանի մահվան մասին: Մինչդեռ ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածը, այնպես էլ ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելուն վերաբերող մյուս իրավանորմերն այդ կապակ-

ցությամբ որևէ բացառություն չեն նախատեսում: Ավելին, ՀՀ օրենսդրությունը, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող որոշակի իրավահարաբերությունների, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի (*Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելը*) և 1228-րդ հոդվածի 2-րդ կետի (*Ժառանգությունն ընդունելը սահմանված ժամկետի ավարտից հետո*) կարգավորումների, չի նախատեսում նաև համապատասխան անձի մահվան մասին տեղյակ չլինելու հիմքով պահանջատիրոջ կողմից ժառանգներին պահանջ ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու և (կամ) այդ ժամկետը վերականգնելու հնարավորություն:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ **ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում պարտատերերի կողմից պահանջները ներկայացնելու դեպքում նրանք գրկվում են հետագայում պարտապանի ժառանգների դեմ իրենց պահանջները ներկայացնելու իրավունքի իրացման հնարավորությունից:**

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով օրենսդիրը սահմանափակել է նաև այն սուբյեկտների շրջանակը, որոնց ժառանգատուի պարտատերերը կարող են ներկայացնել իրենց պահանջները, մասնավորապես՝ պարտատերն իրավունք ունի իր պահանջը բացառապես ներկայացնելու ժառանգությունն ընդունած ժառանգներին, կտակակատարին կամ ժառանգության բացման վայրի նոտարին: Օրենսդիրը, ամրագրելով նշված սուբյեկտների շրջանակը և նրանց պահանջ ներկայացնելու ժամանակահատվածը, այդուհանդերձ, չի կարգավորել այդ պահանջների ներկայացման կարգը: Նման պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում պարտատերն իր իրավունքը պետք է իրացնի այնպիսի եղանակով, որով հնարավոր է ապացուցել վերը թվարկված սուբյեկտներին ժառանգատուի պարտավորությունների վերաբերյալ տեղեկացնելու փաստը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների փոխկապակցված վերլուծությամբ անդրադառնալով ժառանգությունն ընդունած ժառանգին պահանջ ներկայացնելու կարգին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ նման պահանջ կարող է ներկայացվել ժառանգման իրավունք ունեցող այն անձանց, որոնց վարքագիծը վկայում է ժառանգության հնարավոր ընդունման փաստի մասին: Ընդ որում, նման պահանջը կարող է ինչպես անմիջականորեն հասցեագրվել ժառանգին, այնպես էլ վերջինիս ներկայացվել դատարան հայց հարուցելու միջոցով: ՀՀ վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է հայցի ինստիտուտի էությունից, մասնավորապես՝ հայցը նյութափրավական և դատավարական հասկացություն է, որի նյութափրավական կողմն արտահայտվում է հայցվորի կողմից պատասխանողին ներկայացվող իրավական պահանջի մեջ, իսկ դատավարական կողմը դատարանին հասցեագրված պահանջն է՝ քննել և լուծել կողմերի միջև ծագած վեճը: Հետևաբար ժառանգատուի պարտատերը, վերջինիս հետ ունեցած պարտավորությունից բխող պահանջ ներկայացնելով դատարան ընդդեմ ժառանգման իրավունք ունեցող անձի, հայցի նյութափրավական կողմի տեսանկյունից իրացնում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով իրենց վերապահված իրավունքը (*տես, Գյուլիերի Սյրեփանյանն ընդդեմ Անահիտ Սմբարյանի և մյուսների թիվ ԱՐԱԳ/0416/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Ամփոփելով վերոգրյալը՝ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետի սահմանափակում դնելը նպատակաուղղված է ժառանգի կողմից ժառանգությունն ընդունելու իր իրավունքի իրացման համար բավարար հստակություն և որոշակիություն մտցնելուն, որպեսզի սահմանված ժամկետի ընթացքում ժառանգը հնարավորություն ունենա որոշել ընդունել ժառանգությունը, թե՛ ոչ, կամ օրինակ՝ պարտատերերի կողմից նշված ժամկետում պահանջ ներկայացվելու դեպքում հրաժարվել ժառանգությունից, թե՛ ոչ: Ընդ որում, նման կարգավորումը կիրառելի է ինչպես նոտարին դիմում ներկայացնելու, այնպես էլ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգությունն ընդունելու

պարագայում: Երկու դեպքում էլ ժառանգը պետք է իրական պատկերացում ունենա ժառանգության զանգվածի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև ժառանգության հետ կապված ծախսերի, մասնավորապես՝ ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները բավարարելու ժառանգների պարտականությանը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետի այն կարգավորման լույսի ներքո, համաձայն որի՝ ժառանգները հատուցում են այդ ծախսերը ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տվյալ դեպքում «ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո» արտահայտությամբ օրենսդիրը նպատակ է ունեցել ընդգծելու, որ քննարկվող ծախսերը հատուցվում են ժառանգության ընդունման համար օրենքով սահմանված վեցամսյա ժամկետն անցնելուց և ժառանգների կազմը հայտնի դառնալուց հետո: Ուստի, նախքան նշված ժամկետի ավարտը (քացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1246-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքի) չի կարող պահանջ ներկայացվել ծախսերը նշված ժամկետից ավելի վաղ հատուցելու մասին՝ նկատի ունենալով այն, որ մինչ այդ պարզված չի լինում ժառանգությունն ընդունած ժառանգների կազմը: Բանն այն է, որ թե՛ ժառանգությունն ընդունելու, թե՛ դրանից հրաժարվելու համար օրենսդիրը սահմանել է վեցամսյա ժամկետ, և միայն այդ ժամկետն անցնելուց հետո է պարզ դառնում, թե ժառանգներից ով կամ ովքեր են ընդունել ժառանգությունը, ով կամ ովքեր են հրաժարվել դրանից և ում պետք է տրվի ժառանգության իրավունքի վկայագիր: Բացառությամբ այն պարտավորությունների, որոնք չեն կարող կատարվել առանց ժառանգատուի անձնական մասնակցության, ժառանգատուի մյուս բոլոր պարտավորությունները նրա մահվամբ չեն դադարում, և դրանք, օրենքով սահմանված ժամկետում և կարգով պահանջ ներկայացված լինելու դեպքում, պարտավոր են կատարել ժառանգությունն ընդունած ժառանգները՝ իրենց անցած գույքի արժեքի սահմաններում: Վճռաբեկ դատարանի նման մեկնաբանությունը պայմանավորված է ժառանգների (այդ թվում՝ ժառանգությունը փաստացի տիրապետմամբ կամ կառավարմամբ ընդունած) և ժառանգատուի պարտատերերի շահերի հավասարակշռման անհրաժեշտությամբ՝ կանխելու համար ժառանգների կողմից իրավունքի չարաշահման դրսևորումները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի այլ մեկնաբանությունը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, որ իրականում ընդունելով ժառանգությունը՝ ժառանգները կարող են խուսափել ժառանգատուի պարտքերով պարտատերերի առջև պատասխանատվությունից՝ պարզապես չստանալով ժառանգության իրավունքի վկայագիր, այսինքն՝ չձևակերպելով ժառանգության ընդունումը: Նման մոտեցումն ամբողջությամբ կհակասի ժառանգված գույքը փաստացի տիրապետմամբ կամ կառավարմամբ ընդունելու հնարավորության վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված իրավակարգավորմանը, կստեղծի ժառանգության ընդունումն անհամաչափ ձևականություններով պայմանավորելու իրական վտանգ, ինչն իր հերթին կխախտի ժառանգության ընդունման իրավահարաբերությունների կայունությունը: Մյուս կողմից նման մեկնաբանությունը կիմաստազրկի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի այն ընդհանուր իրավակարգավորումը, համաձայն որի՝ ժառանգներն իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են նույն օրենսգրքի 1242-րդ հոդվածում նշված ծախսերը, և այդ հարցում նրանք կրում են համապարտ պատասխանատվություն: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգությունն ընդունած ժառանգներն օրենքով սահմանված կարգով և չափով պատասխանատու են ժառանգի՝ իրավահաջորդություն թույլ տվող պարտավորությունների համար՝ անկախ այն հանգամանքից, թե ժառանգության ընդունումը ժառանգության իրավունքի վկայագրով ձևակերպվել է, թե՛ ոչ: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է նաև նրանով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածը մեկնաբանելով ժառանգման ինստիտուտը կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ նորմերի համակցությունից առանձին և ժառանգների կողմից ժառանգատուի պարտքերի մարումը պայմանավորելով միայն ժառանգության իրավունքի վկայագիր ստանալով՝ անտեսվում է ժառանգությունը

փաստացի տիրապետմամբ կամ կառավարմամբ ընդունելու եղանակը, որի արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ փաստացի ընդունելով ժառանգությունը՝ ժառանգները խուսափում են ժառանգատուի պարտքերը մարելուց: Նման ստեղծումը չի բխում իրավունքների չարաշահման արգելքից և քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների իրավահավասարության սկզբունքից: Վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումը հիմնավորվում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ կետի իրավակարգավորմամբ, համաձայն որի՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և Անիկ Ստեփանյանի միջև 17.07.2008 թվականին կնքվել է վարկային պայմանագիր, որից բխող պարտավորությունը 05.05.2015 թվականի դրությամբ, համաձայն Բանկի կողմից տրված տեղեկանքի, կազմել է 15.790.201,4 ՀՀ դրամ: Անիկ Ստեփանյանը մահացել է 08.07.2013 թվականին: Վերջինիս ամուսինը՝ Սիմոն Արզումանյանը, 22.01.2015 թվականի դիմումով Բանկին հայտնել է, որ ընդունել է Անիկ Ստեփանյանի պարտավորություններն ամբողջությամբ և պարտավորվել դրանք կատարել, և Բանկից խնդրել է ժամկետանց պարտավորությունները կատարելու համար ժամկետ տրամադրել: Արաբկիր նոտարական տարածքի նոտարների կողմից տրված գրությունների համաձայն՝ Անիկ Ստեփանյանի անվամբ ժառանգական գործ առկա չէ: 13.07.2013 թվականի, 30.09.2013 թվականի, 31.01.2014 թվականի, 29.04.2014 թվականի և 27.06.2014 թվականի թվագրությամբ վճարման անդորրագրերի համաձայն՝ Սիմոն Արզումանյանի կողմից Անիկ Ստեփանյանի վարկի մարման համար գումարներ են վճարվել Բանկին:

Դատարանը, մերժելով Բանկի հայցը, գտել է, որ Բանկը չի ներկայացրել որևէ պատշաճ ապացույց այն մասին, որ Սիմոն Արզումանյանն Անիկ Ստեփանյանի փոխարեն վերջինիս մահից հետո անձամբ կատարել է վճարումներ: Բացի այդ, ապացույցներ չեն ներկայացվել նաև այն մասին, որ Սիմոն Արզումանյանն օրենքով սահմանված կարգով դիմում է ներկայացրել՝ ժառանգությունն ընդունելու համար, ավելին՝ այդ փաստը հերքվել է Արաբկիր նոտարական տարածքի նոտարների կողմից սույն գործով տրված գրություններով:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Բանկի վերաքննիչ բողոքը, արձանագրել է, որ Դատարանի եզրահանգումն այն մասին, որ Սիմոն Արզումանյանի կողմից վճարումներ կատարելու վերաբերյալ ապացույցներ չեն ներկայացվել, անհիմն է, քանի որ գործում առկա են համապատասխան վճարման անդորրագրեր, ինչպես նաև Սիմոն Արզումանյանի կողմից Բանկին ուղղված դիմում, որով Սիմոն Արզումանյանը հայտնել է, որ ընդունել է կնոջ պարտավորությունը: Այդուհանդերձ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ նշված խախտումն ազդեցություն չունի գործի ելքի վրա, քանի որ ժառանգություն ընդունելու համար պետք է առկա լինի ժառանգի կամահայտնությունը, որևէ մեկն իրավունք չունի ժառանգի փոխարեն ժառանգության ընդունման պահանջ ներկայացնելու: Հետևաբար Դատարանն իրավաչափ եզրահանգման է եկել այն մասին, որ Սիմոն Արզումանյանի կողմից ժառանգությունն ընդունելու համար նոտարին դիմում ներկայացրած լինելու վերաբերյալ ապացույցներ առկա չեն, այսինքն՝ քննարկվող պարագայում Սիմոն Արզումանյանի կողմից ժառանգությունն ընդունելու կամահայտնությունն առկա չի եղել: Վերաքննիչ դատարանը նաև գտել է, որ ժառանգությունը փաստացի տիրապետմամբ ընդունելու իրավունքը և այն իրացնելու իրավասությունը տրված է բացառապես ժառանգներին կամ օրենքով սահմանված կարգով նրանց անունից դատարանում հանդես գալու իրավասություն ունեցող անձանց: Ուստի ժառանգության ընդունման պահանջի մատով Բանկը չի կարող հանդիսանալ պատշաճ հայցվոր, հետևաբար նաև անհիմն են դրանից բխող մյուս պահանջները:



Մինչդեռ վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի մեկնաբանությանը, նշել է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտը պետք է վերանայի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայելիս պետք է պարտադիր անդրադառնա վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերին և հիմնավորումներին (*յրե՛ս, Տիգրան Կիրակոսյանն ընդդեմ Վիկտոր Խոյոզնիյի թիվ ԵԷԴ/0871/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2010 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է և վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը որոշում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, միաժամանակարձանագրել է, որ նշված նորմը ոչ միայն նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտելով ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ (*յրե՛ս, Համայակ Ոսկանյանն ընդդեմ Վոլոդյա Հակոբյանի, և Վոլոդյա Հակոբյանն ընդդեմ Համայակ Ոսկանյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանման թիվ ԵԷԴ/1643/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*յրե՛ս, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*յրե՛ս, Սվետլանա Ժայիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում արձանագրել, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ ժառանգության ընդունման պարտադրման պահանջի մասով Բանկը չի կարող հանդիսանալ պատշաճ հայցվոր, անտեսել է այն հանգամանքը, որ նման պահանջը Դատարանի կողմից քննության առարկա չի դարձվել,

և ըստ էության քննել է նշված հայցապահանջը և իր որոշմամբ եզրահանգել դրա՝ մերժման ենթակա լինելու մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ պարագայում Վերաքննիչ դատարանը վերը նշված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ իրավասու չէր սեփական նախաձեռնությամբ եզրահանգումներ անելու այնպիսի հայցապահանջի մերժման կամ բավարարման ենթակա լինելու վերաբերյալ, որը Դատարանի կողմից քննության առարկա չէր դարձվել: Հետևաբար Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն առարկայազուրկ են՝ նկատի ունենալով վերաքննության օբյեկտի բացակայությունը: Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով Բանկը ոչ թե ներկայացրել է ժառանգության ընդունման պարտադրման պահանջ, այլ արդեն ընդունած ժառանգությունից իր պահանջները բավարարելու պահանջ:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանները գնահատման չեն արժանացրել սույն որոշման իրավական դիրքորոշումներով բարձրացված հարցերը՝ մասնավորապես չպարզելով, թե արդյոք Բանկը սահմանված ժամկետում իր պահանջը ներկայացրել է նոտարին կամ Անիկ Ստեփանյանի ժառանգներին, որից հետո միայն պետք է քննության արժանանար մնացած հանգամանքները, մասնավորապես՝ Սիմոն Արզումանյանի կողմից ժառանգությունն ընդունած լինելու փաստը՝ նաև գնահատման արժանացնելով Սիմոն Արզումանյանի կողմից Անիկ Ստեփանյանի պարտքի մարման ուղղված գործողություններ կատարած լինելը, Բանկի՝ Սիմոն Արզումանյանի դեմ ներկայացված գումարային պահանջի հիմնավորվածությունը և այլն: Հետևաբար նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով չի իրականացվել ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտություն, որպիսի պարագայում առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն՝ պարզելու համար վերոնշյալ հանգամանքները՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ դատական ծախսերի, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 04.10.2016 թվա-

կանի որոշմամբ հետաձգված, ինչպես նաև վերաքննիչ բողոքի համար սահմանված և վերաքննիչ դատարանի 21.04.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.05.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 04.10.2016 թվականի որոշմամբ հետաձգված, ինչպես նաև վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.04.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3908/02/14**  
 դատարանի որոշում **2017թ.**  
 Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3908/02/14  
 Նախագահող դատավոր՝ Գ. Կարախանյան  
 Դատավորներ՝ Տ. Նազարյան  
 Ա. Խառատյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արսեն Թավադյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ռազմիկ Ուզունյանի ընդդեմ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), երրորդ անձ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### **1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Ռազմիկ Ուզունյանը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 940.085 ՀՀ դրամ, որից 179.585 ՀՀ դրամը՝ որպես 29.08.2013 թվականից մինչև 16.10.2013 թվականն ընկած ժամանակահատվածի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումար, 760.500 ՀՀ դրամը՝ որպես 29.08.2013 թվականից մինչև 06.07.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումար, ինչպես նաև 200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 30.09.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Ընկերությունից հօգուտ

Ռազմիկ Ուզունյանի բռնագանձել 760.500 ՀՀ դրամ, ինչպես նաև 80.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար. հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.01.2016 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 30.09.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը և 417-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը, 48-րդ հոդվածի 1-ին կետը, 49-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ 09.01.2014 թվականին Ճառայությունը որոշում է կայացրել 8.775.000 ՀՀ դրամի չափով Ընկերության դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին: Դրանից հետո «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն Ընկերության հաշվից 8.581.823 ՀՀ դրամ է փոխանցել Երևանի թիվ 1 գանձապետական բաժին՝ հարկադիր կատարման նպատակով, որը հաստատվում է այդ բանկի կողմից 24.01.2014 թվականին տրված թիվ 000090 վճարման հանձնարարագրի անդորրագրով: Այսպիսով, Ընկերության դրամական միջոցները դուրս են գրվել նրա հաշվից, որի կապակցությամբ դադարել է դրանց նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքը, որպիսի պայմաններում վերջինս որևէ կերպ չէր կարող դրանք ապօրինի պահել, վերադարձնելուց խուսափել կամ օգտագործել: Ուստի տվյալ դեպքում կողմերի միջև ծագած իրավահարաբերության նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի չէ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ տվյալ դեպքում Ընկերության մեղքը բացակայում է, քանի որ նա չի խուսափել, ինչպես նաև անհիմն չի պահել Ռազմիկ Ուզունյանին հասանելիք գումարները: Ավելին՝ Ընկերությունը պատասխանատու չէ պետական մարմնի կողմից իր պարտավորությունները ոչ պատշաճ իրականացնելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.01.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Թիվ ԵԿԳ/0973/02/11 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 11.12.2012 թվականին կայացված վճռով Ռազմիկ Ուզունյանի հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է անվավեր ձանաչել Ռազմիկ Ուզունյանին կարգապահական տույժերի ենթարկելու վերաբերյալ Ընկերության գլխավոր տնօրենի 14.04.2011 թվականի թիվ 29-Ա և 15.04.2011 թվականի թիվ 30-Ա հրամանները, վերականգնել նախկին աշխատանքում և Ընկերությանը պարտավորեցնել վճարել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար. 01.01.2011 թվականից մինչև 07.01.2011 թվականի տոնական օրերի և 2011 թվականի հունվար ամսից մինչև ապրիլ ամսվա հանգստյան օրերին կատարած աշխատանքի համար 1.104.331 ՀՀ դրամի չափով վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասով հայցը մերժվել է **(հատոր 1-ին, գ.թ. 19-21)**.

2) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.06.2013 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.12.2012 թվականի վճիռը՝ Ընկերության գլխավոր տնօրենի 14.04.2011 թվականի թիվ 29-Ա հրամանն անվավեր ճանաչելու մասով, բեկանվել և փոփոխվել է՝ հայցն այդ մասով մերժվել է. մնացած պահանջների մասով վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ (**հատոր 1-ին, գ.թ. 6-18**).

3) ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի «վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» 28.08.2013 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վերադարձվել է (**հատոր 1-ին, գ.թ. 19-21**).

4) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի պետի տեղակալ Ս. Սիմոնյանը, հիմք ընդունելով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 27.11.2013 թվականին տրված կատարողական թերթը, 09.12.2013 թվականին նաև որոշում է կայացրել Ընկերությանը հարկադիր պարապտողի ամբողջ ժամանակահատվածի համար վճարելուն պարտավորեցնելու վերաբերյալ կատարողական վարույթ հարուցելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 24**).

5) նույն հարկադիր կատարողը 09.01.2014 թվականին որոշում է կայացրել 8.775.000 ՀՀ դրամի չափով Ընկերության դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 53**).

6) 16.01.2014 թվականի մեմորիալ օրդերի համաձայն՝ Ընկերության հաշվից, ի կատարումն վերը նշված դատական ակտի, դուրս է գրվել 188.318,3 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 51**).

7) «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ավանդային հաշվի քաղվածքի համաձայն՝ Ընկերության հաշվից, ի կատարումն վերը նշված դատական ակտի, 17.01.2014 թվականին փոխանցվել է 4.753,96 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 52**).

8) 24.01.2014 թվականի թիվ 000090 վճարման հանձնարարագրի անդորրագրի համաձայն՝ Ընկերությունը Երևանի թիվ 1 գանձապետական հաշվին փոխանցել է 8.581.823 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 56**).

9) 07.07.2014 թվականի թիվ 646001 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Ծառայությունը Ռազմիկ Ուզունյանին փոխանցել է 8.775.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 23**).

10) Ռազմիկ Ուզունյանը հայցադիմումով պահանջել է 179.585 ՀՀ դրամը բռնագանձել որպես 29.08.2013 թվականից մինչև 16.10.2013 թվականն ընկած ժամանակահատվածի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումար, 760.500 ՀՀ դրամը՝ 29.08.2013 թվականից մինչև 06.07.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումար (**հատոր 1-ին, գ.թ. 3-5, 95-110**).

11) Ընկերությունը 01.12.2014 թվականի հայցադիմումի պատասխանով նշել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի «վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» 28.08.2013 թվականի որոշումն ստացել է 10.09.2013 թվականին և դատարանի դատական ակտը կատարել է ողջամիտ ժամկետում, այն է՝ 16.10.2013 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 43-48**):

#### ***4.Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները***

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ գործով չվճարված աշխատավարձի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների հաշվարկման հար-

ցի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ և 417-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

- *ի՞նչ պարասխանաարվություն է ծագում սահմանված ժամկետում աշխատավարձը չվճարելու դեպքում,*

- *արդյո՞ք աշխատավարձը չվճարելու դեպքում կետանցված աշխատավարձի նկատմամբ կարող են հաշվարկվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները,*

- *այն դեպքերում, երբ առկա է չվճարված աշխատավարձը բռնագանձելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած և չկատարված դատական ակտ, արդյո՞ք դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի նկատմամբ կարող են հաշվարկվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները:*

*ա. դրամական պարտավորությունը չկատարելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պարասխանաարվության ընդհանուր կանոնը.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ նույն կետով նախատեսված կարգը գործում է, եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Եթե օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար, ապա նույն կետով նախատեսված կարգը չի գործում միայն տվյալ ժամանակահատվածում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի վերլուծությանը: ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես, նշել է, որ դրամական պարտավորությունը չկատարելու համար գումարին տոկոսներ վճարելու պարտավորության ծագման հիմքն ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելն է *(տես, օրինակ, Արամ Հայրապետյանն ընդդեմ Նորիկ Գգիրյանի և մյուսների թիվ 3-502/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.09.2008 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը վրա է հասնում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում, և

- եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով կամ օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար:

Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված

տոկոսները ենթակա են հաշվեգրման և բռնագանձման, եթե առկա է դրամային պարտավորություն, որի կատարումը խախտվել է, կամ այն չի կատարվել (*տե՛ս*, «Գազարին» սերմնաբուծական սպառողական կոոպերատիվն ընդդեմ «Նաիրի Ինձուրան» սպահովագրական սահմանափակ պարասիանսարվությանը ընկերության թիվ ԵԿԴ/0735/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգավորումը դրամական պարտավորությունը խախտելու համար նախատեսված պատասխանատվության ընդհանուր կանոն է: Այսինքն՝ նշված կարգավորումը գործում է դրամական պարտավորությունների խախտման բոլոր այն դեպքերում, երբ այլ կարգավորում նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Ընդ որում, եթե այլ կարգավորում նախատեսված է կոնկրետ ժամանակահատվածի համար, ապա այդ ժամանակահատվածի ավարտից հետո նույնպես գործում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության ընդհանուր կանոնը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգավորումը՝ որպես ընդհանուր կանոն, չի գործում այն դեպքերում, երբ պատասխանատվության հստակ չափ և կարգավորում նախատեսվում է օրենքով կամ պայմանագրով՝ որպես հատուկ կանոն:

*բ. աշխատավարձի վճարումը խախտելու համար նախատեսված պարասիանսարվությունը.*

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատավարձը օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և աշխատանքային օրերին վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը: Գործատուն կարող է ամսական աշխատավարձ վճարել մեկ անգամից ավելի պարբերականությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե գործատուի մեղքով աշխատավարձի վճարումը կատարվում է նույն օրենսգրքով, կոլեկտիվ պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետների խախտումով, ապա գործատուն աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար աշխատողին վճարում է տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը:

«Աշխատավարձի պաշտպանության մասին» կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ մտել է 17.12.2005 թվականին) 1-ին հոդվածի համաձայն՝ նույն կոնվենցիայում «աշխատավարձ» եզրույթը, անկախ անվանումից և հաշվարկման մեթոդից, նշանակում է՝ փողով հաշվարկվող և փոխադարձ համաձայնագրով, ազգային օրենսդրությամբ սահմանված ցանկացած վարձատրություն կամ վաստակ, որը գրավոր կամ բանավոր պայմանագրի հիման վրա գործատուն վճարում է աշխատողին կատարած կամ կատարելիք աշխատանքի կամ մատուցած կամ մատուցելիք ծառայությունների համար:

«Աշխատավարձի պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ գործատուներին արգելվում է որևէ ձևով սահմանափակել աշխատողների՝ աշխատավարձի տնօրինման ազատությունը:

«Աշխատավարձի պաշտպանության մասին» կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աշխատավարձը վճարվում է կանոնավոր կերպով: Բացառությամբ այն դեպքերի, երբ գոյություն ունեն այլ համապատասխան կարգավորումներ, որոնք ապահովում են աշխատավարձի պարբերական վճարումը, աշխատավարձի վճարման պարբերականությունը սահմանվում է ազգային օրենսդրությամբ կամ կոլեկտիվ պայմանագրերով կամ միջնորդ դատարանի որոշումներով, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ աշ-



խատանքային պայմանագրի դադարելուց հետո հասանելիք աշխատավարձերի վերջնա-  
հաշվարկն իրականացվում է ազգային օրենսդրությանը համապատասխան, կոլեկտիվ  
պայմանագրով կամ միջնորդ դատարանի որոշմամբ կամ, այդպիսի օրենսդրության,  
պայմանագրի կամ որոշման բացակայության դեպքում, իրականացվում է ողջամիտ  
ժամկետում՝ հաշվի առնելով պայմանագրի պայմանները:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է աշխա-  
տավարձի հիմնական հատկանիշներին: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել  
է, որ այդ հատկանիշներն են՝

- 1) այն վարձատրություն է կատարված կամ կատարվելիք աշխատանքի դիմաց,
- 2) աշխատավարձի վճարման պայմանները սահմանվում են աշխատանքային պայ-  
մանագրով կամ օրենսդրությամբ,

3) աշխատավարձ վճարելու գործատուի պարտականությունը և աշխատավա-  
րձ ստանալու աշխատողի իրավունքը ծագում է աշխատանքային հարաբերություննե-  
րի ծագման պահից հետո (*տես, Վահե Դավթյանն ընդդեմ «Հարավկովկասյան երկա-  
թուղի» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/3838/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի  
22.07.2016 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ աշխատավարձի՝ որպես կատարված աշ-  
խատանքի դիմաց հատուցման վճարման և չվճարելու համար պատասխանատվության  
կարգը սահմանված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերոնշյալ հոդվածներով: Այսպես՝  
ընդհանուր կանոնի համաձայն՝ աշխատավարձը վճարվում է աշխատողին ամսական  
առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը: Նշված պարտականությունը չկա-  
տարելու համար ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված է պատասխանատ-  
վություն՝ օրական 0,15 տոկոսի չափով տուժանքի չափով: Ընդ որում, օրենսդրի կողմից  
սահմանափակվել է այդ պատասխանատվության՝ տուժանքի չափը. այն չի կարող գե-  
րազանցել վճարման ենթակա գումարի չափը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված իրավակարգավորումը, ըստ էու-  
թյան, գործատուի պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որը երաշխավորում է  
աշխատողների՝ օրենքով սահմանված ժամկետում իրենց հասանելիք աշխատավարձն  
ստանալու իրավունքի իրականացումը:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ աշխատավարձը չվճարելու համար  
ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանվել է պատասխանատվության հատուկ կանոն:  
Նման պայմաններում, հաշվի առնելով ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ  
հոդվածի իրավակարգավորումը, այնպես էլ այն հանգամանքը, որ նույն օրենսգր-  
քի 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները կար-  
գավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ  
բան նախատեսված չէ աշխատանքային օրենսդրությամբ, Վճռաբեկ դատարանն արձա-  
նագրում է, որ աշխատավարձը չվճարելու համար ենթակա է կիրառման ՀՀ աշխատան-  
քային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը: Այսինքն՝  
չվճարված աշխատավարձը բռնագանձելիս որպես պատասխանատվություն կիրառվում  
է օրական 0,15 տոկոսի չափով տուժանք, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա աշխա-  
տավարձի չափը:

*գ. դատական ակտի հիման վրա բռնագանձման ենթակա չվճարված աշխատավարձի  
նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կիրառման հնարավորու-  
թյունը.*

Նկատի ունենալով սույն գործով վճռաբեկ բողոքի հիմքերն ու հիմնավորումները՝  
Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ պատասխանատվության այն  
դեպքերին, երբ չվճարված աշխատավարձը բռնագանձելու վերաբերյալ առկա է օրինա-  
կան ուժի մեջ մտած դատական ակտ, որը չի կատարվել:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»  
Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝  
յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտակա-

նությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ Սարգոյ իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և այդ սկզբունքի շրջանակներում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշին: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ Կոնվեցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված արդար դատաքննության իրավունքը կդառնա վերացական, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ դատարանի՝ ի վնաս կողմերից մեկի կայացրած վերջնական, պարտադիր դատական ակտը մնա անկատար: Ավելին, եթե Կոնվեցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողնի դատական ակտերի ի կատար ածումը, ապա դա հավանաբար կհանգեցնի այնպիսի իրողության, որն անհամատեղելի կլինի իրավունքի գերակայության սկզբունքների հետ, որը Պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս (*տես, Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, կետ 34, Հորնսթին ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, կետ 40, «Գլոր» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության և մյուսների թիվ ԳԳ/0171/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ աշխատավարձ ստանալն աշխատողի իրավունքն է, և եթե գործատուն սահմանված ժամկետում աշխատավարձ չի վճարում, աշխատողն իրավունք ունի դատական կարգով պահանջելու բռնագանձել չվճարված աշխատավարձը, ինչպես նաև դրա նկատմամբ հաշվարկված՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված տուժանքը: Նման գործերի քննության ժամանակ հայցի փաստական և իրավական հիմքերը վերաբերում են աշխատանքային հարաբերություններից ծագող փաստական հանգամանքներին և աշխատանքային օրենսդրությանը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում առանձնացնել այն դեպքերը, երբ աշխատողի ներկայացրած հայցի հիման վրա առկա է աշխատավարձի բռնագանձման վճիռ, որը չի կատարվել: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ արդեն իսկ առկա է նման վճիռ, այդ գումարը դադարում է պարզապես չվճարված աշխատավարձ դիտարկվելուց, այն դառնում է աշխատողի օգտին բռնագանձման ենթակա գումար, որը չվճարելու դեպքում գործատուն արդեն խախտում է վճիռի պարտադիրության և կատարելիության հատկանիշները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը, այն է՝ դրամական պարտավորությունը խախտելու համար պատասխանատվությունը, քանի որ նման պայմաններում գործատուն ոչ թե պարզապես աշխատավարձ չի վճարում, այլ խախտում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով իր վրա դրված դրամական պարտավորությունը: Նշված մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրամական պարտավորությունը խախտելու համար նախատեսված տոկոսների բռնագանձման հայց ներկայացնելիս այլևս չի քննարկվում տվյալ գումարի՝ որպես չկատարված դրամական պարտավորության ծագման հիմքը, այլ քննարկվում է միայն դատական ակտով հաստատված հստակ դրամական պարտավորությունը, որը չի կատարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացու-

թյան, որ դատական ակտով բռնագանձման ենթակա, չվճարված աշխատավարձի գումարի նկատմամբ կետանցի պահից մինչև պարտավորության փաստացի կատարումը ենթակա են վճարման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները:

Ինչ վերաբերում է տվյալ դեպքում կետանցի պահը որոշելուն, ապա Վճռաբեկ դատարանը տվյալ հարցն անհրաժեշտ է համարում քննարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին կետի կարգավորման շրջանակներում:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վկայակոչված հոդվածի իրավական վերլուծությանը, նշել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը (*տես*, «Արդշինհնավատարան» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՍՊԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

Տվյալ դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված դրամական պարտավորությունը չկատարելու դեպքում անհրաժեշտ է, որ աշխատավարձի չվճարման հանգամանքը և աշխատավարձի չափը հաստատվի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, քանի որ միայն այդ դեպքում կքննարկվի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելու հանգամանքը: Նկատի ունենալով, որ տվյալ պարագայում քննարկման է ենթակա դրամական պարտավորությունը չկատարելու համար պատասխանատվությունը, իսկ պատասխանատվության պարտադիր պայման է պարտավորությունը խախտած անձի մեղքը, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում պարզել մեղքի ծագման պահը, այսինքն՝ որ պահից անձը մեղավոր կհամարվի նշված պարտավորությունը չկատարելու մեջ:

Հաշվի առնելով, որ մեղքն անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարվող իրավախախտման և դրա հետևանքների նկատմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ իրավախախտման համար մեղքը կարող է առկա լինել միայն այն պահից սկսած, երբ անձին հայտնի է դարձել իր ունեցած դրամական պարտավորությունն մասին: Հետևաբար չնայած այն հանգամանքին, որ դրամական պարտավորությունը հաստատվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, օրինական ուժի մեջ մտնելու պահը կարող է չհամընկնել մեղքի ծագման պահի հետ: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելու արդյունքում որպես պատասխանատվության միջոց տոկոսներ հաշվարկելիս դատարանները պետք է հաշվի առնեն, թե որ պահից է փաստացի սկսել իրավախախտումը, այսինքն՝ որ պահից է անձը մեղավոր իրավախախտման համար: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ պահը համընկնում է վերջնական դատական ակտը պարտապանին հասու լինելու պահի հետ, այսինքն՝ թե որ պահից է պարտապանն իմացել կամ իրական հնարավորություն ունեցել իմանալու, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ունի դրամական պարտավորություն:

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ ԵԿԴ/0973/02/11 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 11.12.2012 թվականին կայացված վճռով Ռազմիկ Ուզունյանի հայցը բավարարվել է մասնակիորեն՝ նաև վճռվել է Ընկերությանը պարտավորեցնել վճարել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար: ՀՀ վերաքննիչ քաղա-

քացիական դատարանի 20.06.2013 թվականի որոշմամբ դատարանի վճիռն այդ մասով թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.08.2013 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի պետի տեղակալ Ս. Սիմոնյանը, հիմք ընդունելով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 27.11.2013 թվականին տրված կատարողական թերթը, 09.12.2013 թվականին նաև որոշում է կայացրել Ընկերությանը հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարելուն պարտավորեցնելու վերաբերյալ կատարողական վարույթ հարուցելու մասին, իսկ 09.01.2014 թվականին որոշում է կայացրել 8.775.000 ՀՀ դրամի չափով Ընկերության դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին: 16.01.2014 թվականին և 17.01.2014 թվականին Ընկերության հաշվից, ի կատարումն վերը նշված դատական ակտի, մի դեպքում դուրս է գրվել 188.318,3 ՀՀ դրամ, իսկ մյուս դեպքում փոխանցվել է 4.753,96 ՀՀ դրամ, ինչպես նաև 24.01.2014 թվականին Երևանի թիվ 1 գանձապետական հաշվին փոխանցել է 8.581.823 ՀՀ դրամ, իսկ Ծառայությունն իր հերթին Ռազմիկ Ուզունյանին փոխանցել է 8.775.000 ՀՀ դրամ միայն 07.07.2014 թվականին:

Ռազմիկ Ուզունյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Ընկերության՝ 940.085 ՀՀ դրամի չափով տոկոսագումար բռնագանձելու պահանջի մասին, որից 179.585 ՀՀ դրամը՝ որպես 29.08.2013 թվականից մինչև 16.10.2013 թվականը, այսինքն՝ մինչև 2.220.828 ՀՀ դրամն իրեն վճարելու օրը, ընկած ժամանակահատվածի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսագումար, 760.500 ՀՀ դրամը՝ որպես 29.08.2013 թվականից մինչև 06.07.2014 թվականը, այսինքն՝ մինչև Ծառայության կողմից 8.775.000 ՀՀ դրամն իրեն փոխանցելու նախորդ օրը, ընկած ժամանակահատվածի համար նույն հոդվածով հաշվարկված տոկոսագումար:

Սույն գործով Դատարանը, պատճառաբանելով, որ «Ռազմիկ Ուզունյանին վճարվելիք գումարը կազմում է 10.995.000 ՀՀ դրամ, այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները ենթակա չեն վճարման, քանի որ Ընկերությունը, 16.10.2013 թվականին տեղեկանալով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի մասին, վճարել է 2.220.000 ՀՀ դրամ, որի պայմաններում նրա գործողություններում բացակայում են ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու կամ օգտագործելու փաստերը, իսկ 8.775.000 ՀՀ դրամը վճարվել է 07.07.2014 թվականին», հիմնավոր է համարել, որ 8.775.000 ՀՀ դրամն Ընկերության կողմից պահվել է ապօրինի, և այդ գումարի նկատմամբ առաջացել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված՝ տոկոսներ վճարելու պարտավորություն:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Դատարանի վերը նշված եզրահանգումները, Ընկերության վերաքննիչ բողոքը մերժել է:

Մինչդեռ վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Թիվ ԵԿԴ/0973/02/11 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 11.12.2012 թվականին կայացված վճռով Ընկերությունից հօգուտ Ռազմիկ Ուզունյանի պետք է բռնագանձվեր հարկադիր պարապուրդի գումար: Հետևաբար նշված վճռով հաստատված գումարի նկատմամբ, հիմք ընդունելով վերը նշված իրավական դիրքորոշումները, հաշվարկման են ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները՝ մինչև պարտավորությունների փաստացի կատարումը:

Թիվ ԵԿԴ/0973/02/11 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 11.12.2012 թվականին կայացված վճռի հիման վրա տրված կատարողական թերթի պահանջը կատարելու նպատակով հարուցված կատարողական վարույթի շրջանակներում 16.01.2014 թվականին և 17.01.2014 թվականին Ընկերության հաշվից դուրս է գրվել համապատաս-

խանաքար 188.318,3 ՀՀ դրամ և 4.753,96 ՀՀ դրամ, այնուհետև Ընկերությունը 24.01.2014 թվականին Երևանի թիվ 1 գանձապետական հաշվին փոխանցել է 8.581.823 ՀՀ դրամ, իսկ Ծառայությունն իր հերթին Ռազմիկ Ուզունյանին 8.775.000 ՀՀ դրամը փոխանցել է միայն 07.07.2014 թվականին, այսինքն՝ շուրջ հինգ ու կես ամիս հետո:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը չի կարող 188.318,3 ՀՀ դրամը 16.01.2014 թվականից, 4.753,96 ՀՀ դրամը 17.01.2014 թվականից և 8.581.823 ՀՀ դրամը 24.01.2014 թվականից մինչև 07.07.2014 թվականն ընկած ժամանակահատվածների համար համարվել Ռազմիկ Ուզունյանին հասանելիք համապատասխան գումարներն ապօրինի պահած, քանի որ տվյալ դեպքում վերը նշված գումարները տարբեր ժամանակահատվածներում դուրս են եկել նրա հաշվից, դրա հետևանքով՝ նաև տնօրինումից և տիրապետումից: Այսինքն՝ սույն գործով ապացուցված չէ 188.318,3 ՀՀ դրամը 16.01.2014 թվականից, 4.753,96 ՀՀ դրամը 17.01.2014 թվականից և 8.581.823 ՀՀ դրամը 24.01.2014 թվականից մինչև 07.07.2014 թվականն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից ապօրինի պահվելու փաստը, որպիսի պայմաններում բացակայում է Ընկերության մեղքը դեռևս 16.01.2014 թվականին, 17.01.2014 թվականին և 24.01.2014 թվականին փոխանցված վերը նշված գումարները Ծառայության կողմից միայն 07.07.2014 թվականին Ռազմիկ Ուզունյանին փոխանցելու հարցում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանած (ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 09.11.2010 թվականի թիվ 283-Ն որոշում) բանկային տոկոսի հաշվարկային դրույքը տվյալ ժամանակահատվածի համար եղել է տարեկան 12 տոկոս, գտնում է, որ 188.318,3 ՀՀ դրամի նկատմամբ 16.01.2014 թվականից մինչև 07.07.2014 թվականը հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների գումարի, այն է՝ 10.649 ՀՀ դրամի (188.318,3\*12%/365\*172(օր)), 4.753,96 ՀՀ դրամի նկատմամբ 17.01.2014 թվականից մինչև 07.07.2014 թվականը հաշվարկված տոկոսների գումարի, այն է՝ 267 ՀՀ դրամի (4.753,96\*12%/365\*171(օր)), ինչպես նաև 8.581.823 ՀՀ դրամի նկատմամբ 24.01.2014 թվականից մինչև 07.07.2014 թվականը հաշվարկված տոկոսների գումարի, այն է՝ 462.713 ՀՀ դրամի (8.581.823\*12%/365\*164(օր)) բռնագանձման մասով (ընդհանուր առմամբ՝ 473.629 ՀՀ դրամ) Ռազմիկ Ուզունյանի պահանջը ենթակա էր մերժման:

Մինչդեռ Դատարանը վերը թվարկված փաստերի անտեսմամբ, արդյունքում նաև՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ և 417-րդ հոդվածների խախտմամբ սխալ եզրահանգման է եկել նշված ժամանակահատվածի համար Ընկերության պատասխանատվության վերաբերյալ, ինչն անտեսվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից, ուստի այս մասով վճռաբեկ բողոքի փաստարկները հիմնավոր են և իրավաչափ:

Ինչ վերաբերում է 29.08.2013 թվականից մինչև 15.01.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար 8.775.000 ՀՀ դրամի նկատմամբ, 16.01.2014 թվականին 8.586.681,7 ՀՀ դրամի նկատմամբ, 17.01.2014 թվականից մինչև 23.01.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար 8.581.927,74 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարները բռնագանձելու մասով պահանջին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Թիվ ԵԿԳ/0973/02/11 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 11.12.2012 թվականին կայացված վճռով Ընկերությունը պարտավորվել է Ռազմիկ Ուզունյանին վճարել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար: Նշված վճիռն օրինական ուժի մեջ է մտել 28.08.2013 թվականին: Ընկերությունը 01.12.2014 թվականի հայցադիմումի պատասխանով նշել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» 28.08.2013 թվականի որոշումն ստացել է 10.09.2013 թվականին և դատական ակտը կատարել է ողջամիտ ժամկետում, այն է՝ 16.10.2013 թվականին:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լուսի ներքո գնահատելով սույն գործի

փաստերը՝ Վճառելի դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից չի պարզվել ՀՀ վճառելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.08.2013 թվականի որոշումն Ընկերությանը հասու լինելու օրը, որպիսի պայմաններում միայն կարող էր պարզ դառնալ Ընկերության կողմից այդ դրամական միջոցներն ապօրինի պահելու (օգտագործելու) ժամանակահատվածը, հետևաբար՝ Ընկերության մեղքի ծագման պահը, և միայն այդ դեպքում հնարավոր կլիներ հաշվարկել այդ դրամական միջոցների վրա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված հաշվեգրվող տոկոսները:

Նման պայմաններում Վճառելի դատարանը գտնում է, որ Ընկերությունից 29.08.2013 թվականից մինչև 15.01.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար 8.775.000 ՀՀ դրամի նկատմամբ, 16.01.2014 թվականին 8.586.681,7 ՀՀ դրամի նկատմամբ, 17.01.2014 թվականից մինչև 23.01.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար 8.581.927,74 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարները բռնագանձելու պահանջների մատով գործը ենթակա է ուղարկման նոր քննության՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի վերոնշյալ հանգամանքները պարզելու համար:

Այսպիսով, վճառելի բողոքի հիմքի առկայությունը Վճառելի դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճառելի դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճառելի դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճառելի դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի սույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճառելի դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճառելի դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Միաժամանակ Վճառելի դատարանը դատական ակտը փոփոխելիս հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ Դատարանի վճիռը վերաքննության կարգով բողոքարկվել և համապատասխանաբար վերանայվել է միայն 760.500 ՀՀ դրամ բավարարված հայցապահանջի մատով:

##### **5. Վճառելի դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին

և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճարեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճարեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» կետի համաձայն՝ դատական ակտերի դեմ վճարեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գույքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքիտասնապատիկից և ոչ ավելի բազայինտուրքի հազարապատիկից:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ պետական տուրքի վճարումից ազատում, պետական տուրքի նվազեցում, պետական տուրքի դրույքաչափի նվազեցում, պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում, պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճարեկ բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, ինչպես նաև հաշվի առնելով, որ Ռազմիկ Ուզունյանի հայցը՝ 473.629 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով, ենթակա է մերժման, Վճարեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի իրավակարգավորումը, գտնում է, որ Ռազմիկ Ուզունյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 9.472 ՀՀ դրամ (473.629\*2%)՝ որպես հայցադիմումի համար սահմանված և Դատարանի 16.09.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար: Միաժամանակ Վճարեկ դատարանը գտնում է, որ Ռազմիկ Ուզունյանից հոգուտ Ընկերության ենթակա է բռնագանձման 14.208 ՀՀ դրամ (473.629\*3%)՝ որպես վերաքննիչ բողոքի համար Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի մասի հատուցման գումար, և 14.208 ՀՀ դրամ (473.629\*3%)՝ որպես վճարեկ բողոքի համար Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի մասի հատուցման գումար:

Միաժամանակ նկատի ունենալով, որ գործը՝ Ընկերությունից 29.08.2013 թվականից մինչև 15.01.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար 8.775.000 ՀՀ դրամի նկատմամբ, 16.01.2014 թվականին 8.586.681,7 ՀՀ դրամի նկատմամբ, 17.01.2014 թվականից մինչև 23.01.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար 8.581.927,74 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարները բռնագանձելու պահանջի մասով, ուղարկվում է նոր քննության՝ Վճարեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի, այդ թվում՝ փաստաբանի վարձատրության գումարի բաշխման հարցին այդ մասով պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճարեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2016 թվականի որոշումը և

- Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 30.09.2015 թվականի վճիռը՝ հայցը՝ 473.629 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով բավարարելու մասով օրինական ուժի մեջ թողնելու, և դրա հետ կապված դատական ծախսերի բաշխման մասերով այն փոփոխել՝ Ռազմիկ Ուզունյանի հայցը՝ 473.629 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով, մերժել,

– գործը՝ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ից 29.08.2013 թվականից մինչև 15.01.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար 8.775.000 ՀՀ դրամի նկատմամբ, 16.01.2014 թվականին 8.586.681,7 ՀՀ դրամի նկատմամբ, 17.01.2014 թվականից մինչև 23.01.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար 8.581.927,74 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարները բռնագանձելու պահանջի և այդ մասով դատական ծախսերի բաշխման մասով, ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Ռազմիկ Ուզունյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 9.472 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար սահմանված և Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 16.09.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար:

Ռազմիկ Ուզունյանից հոգուտ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի բռնագանձել 14.208 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի մասի հատուցման գումար:

Ռազմիկ Ուզունյանից հոգուտ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի բռնագանձել 14.208 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի մասի հատուցման գումար:

Բեկանված մասով դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորագրություններ*



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3295/02/15**  
 դատարանի որոշում 2017թ.  
 Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3295/02/15  
 Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան  
 Դատավորներ՝ Տ. Նազարյան  
 Կ. Չիլինգարյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	<i>Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ</i>
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	<i>Ե. ՍՈՂՈՍՏՈՆՅԱՆԻ</i>
	<i>Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ</i>
	<i>Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ</i>
	<i>Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ</i>
	<i>Մ. ԴՐՄԵՅԱՆԻ</i>
	<i>Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ</i>
	<i>Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ</i>

2017 թվականի հուլիսի 20-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Իստերակո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչներ Սիլվա Պետրոսյանի և Արթուր Դավթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.12.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Խորեն Նասիբյանի ընդդեմ Ընկերության՝ անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու, չվճարված աշխատավարձը և միջին աշխատավարձը հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարելուն պարտավորեցնելու, գանձման ենթակա աշխատավարձի նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի Ընկերության ընդդեմ Խորեն Նասիբյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Խորեն Նասիբյանը պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության կողմից 26.06.2015 թվականին ընդունված անհատական իրավական ակտը և իրեն վերականգնել աշխատանքում, պարտավորեցնել Ընկերությանը վճարելու մինչև 26.06.2015 թվականին իրեն հասանելի չվճարված աշխատավարձը, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը, մինչև 26.06.2015 թվականը գանձման ենթակա աշխատավարձի գումարի նկատմամբ կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասը և Ընկերությունից բռնագանձել տուժանք նշված աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Խորեն Նասի-

բյանից բռնագանձել 400.000 ՀՀ դրամ՝ որպես Ընկերության կողմից Խորեն Նասիրյանին հանձնված և չվերադարձված ապրանքների գումար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Կ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 29.07.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.12.2016 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 29.07.2016 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ընկերության ներկայացուցիչները: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Խորեն Նասիրյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը կիրառել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 60-րդ, 61-րդ, 61.1-րդ և 68-րդ հոդվածները, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածը և 265-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք չպետք է կիրառել, չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, որոնք պետք է կիրառել, սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պարձառաբանել են հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը քննարկման առարկա է դարձրել միայն 26.06.2015 թվականին Ընկերության կողմից ընդունված անհատական իրավական ակտի անվավերության հարցը և գալով սխալ եզրահանգման՝ չի անդադարձել ակտի հիմքում դրված, աշխատանքից ազատելու համար հիմք հանդիսացած իրավական նորմին գնահատական տալուն:

Բացի այդ, սույն գործում առկա չէ վեճի առարկա հանդիսացող 26.06.2015 թվականի հրամանը, իսկ հայցվորի վրա դրված է նշված հրամանը դատարան ներկայացնելու պարտականությունը, մինչդեռ հայցվորը ոչ մի միջոց չի ձեռնարկել ստանալու այդ հրամանը:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ իրավական ակտի մասին իրազեկված լինելու փաստը հաստատվում է իրավական ակտի հանձնումով, և եկել է այն եզրահանգման, որ Ընկերության կողմից ընդունված ակտն իրավաբանական ուժ չունի՝ չանդադառնալով այն հարցին, թե որ պահն է համարվում ակտի իրավաբանական ուժի մեջ մտնելու պահը՝ իրավական ակտի հանձնումը, թե իրավական ակտի մասին իրազեկումը: Վերաքննիչ դատարանը չի հանգել միանշանակ հետևության, թե արդյոք Ընկերության ընդունած ակտն առջինն է, անվավեր, թե իրավաբանական ուժ չունեցող:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Խորեն Նասիրյանը չէր կարող վերականգնվել նախկին աշխատանքում, ուստի կիրառելի էր ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը, մինչդեռ Դատարանը կիրառել է նույն հոդվածի 1-ին մասը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Ընկերությունը հայցվորին վճարել է մայիս ամսվա աշխատավարձը, իսկ մինչև 26.06.2015 թվականն Ընկերությունը հայցվորին աշխատավարձ վճարելու պարտավորություն չի ունեցել, հետևաբար չէր կարող բռնագանձվել այդ աշխատավարձը և դրա նկատմամբ հաշվարկվել ու բռնագանձվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տույժը:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պարձառաբանել են հետևյալ փաստարկով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից

Դատարան է ներկայացվել թիվ Ա6320310332 հարկային հաշիվը, որի համաձայն՝ «Alcatel One Touch Idol 2 mini» բջջային հեռախոսն Ընկերությանը մատակարարվել է 87.900 ՀՀ դրամով, իսկ «HP PROBOOK 450G1 15/4/750/15.6» սնդեղի համակարգչի մասով Ընկերությունը ներկայացրել է «INVOICE» վերտառությամբ փաստաթուղթ, որտեղ երևում է, որ այդ համակարգիչը տրամադրվել է Խորեն Նասիբյանին: Աշխատանքից ազատվելուց հետո Խորեն Նասիբյանը չի վերադարձրել նշված ապրանքները, ինչը, սակայն, Դատարանի կողմից պատշաճ չի գնահատվել, և հակընդդեմ հայցն անհիմն կերպով մերժվել է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 22.12.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարել:

**2.1 Վճարել բողոքի պայասխանի հիմնավորումները**

Բողոքաբերն ըստ էության չի ներկայացրել որևէ պատշաճ հիմնավորում այն մասին, որ Դատարանի վճիռն օրինական չէ: Վճարել բողոքի հիմնավորումների հիմքում դրված օրենսդրական նորմերը մեկնաբանվել են՝ խեղաթյուրելով դրանց իմաստը, որպիսի համգամանքը հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածով սահմանված՝ իրավական ակտի մեկնաբանման կանոններին: Մասնավորապես՝ Ընկերությունը չի պագուցել հայցվորի կողմից աշխատանքի չներկայանալու հանգամանքը, ինչպես նաև անդրադառնալով «ուժի մեջ չմտած», «անվավեր» և «առջին» եզրույթներին՝ Ընկերությունն ինքն էլ չի նշել դրանց տարբերությունները: Ինչ վերաբերում է աշխատանքում վերականգնելու անհնարինությանը, ապա Ընկերությունը չի ներկայացրել որևէ ապացույց անհնարինության մասին:

Բացի այդ, գործում առկա չէ Ընկերության կողմից ներկայացված որևէ ապացույց այն մասին, որ հակընդդեմ հայցում նշված տեխնիկական սարքերը հանձնվել են հայցվորին:

**3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Խորեն Նասիբյանի և Ընկերության միջև 22.01.2015 թվականին կնքված աշխատանքային պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Խորեն Նասիբյանն ընդունվել է աշխատանքի որպես գործադիր տնօրեն: Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքն աշխատողի հիմնական աշխատանքից գատ համատեղությամբ աշխատանք է:

Պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ աշխատողի հաստատուն համախառն ամսական աշխատավարձը՝ ներառյալ կիրառելի հարկերը և վճարները, կազմում է 1.889.000 ՀՀ դրամ, որից զուտ աշխատավարձը՝ 1.400.000 ՀՀ դրամ, եկամտային հարկը՝ 489.000 ՀՀ դրամ:

Պայմանագրի 6.1 կետի համաձայն՝ աշխատողի առաջին աշխատանքային օրն է 01.02.2015 թվականը, աշխատողի աշխատանքը՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին: Այդուհանդերձ, աշխատողի ղեկավար պաշտոնից ելնելով՝ նրա աշխատանքային ռեժիմը կարող է որոշակիորեն տարբերվել վերը նշվածից և լինել չկարգավորվող: Պայմանագրի 6.2 կետի համաձայն՝ պայմանագրի գործողության ժամկետն է 6 ամիս՝ հաշված աշխատողի առաջին աշխատանքային օրվանից: Պայմանագրի 6.5 կետի համաձայն՝ եթե կողմերից որևէ մեկը Պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն 10 օր առաջ գրավոր չի ծանուցում մյուս կողմին, որ չի ցանկանում շարունակել Պայմանագիրը, ապա Պայմանագրի գործողության ժամկետը համարվում է երկարացված 6 ամիս ժամկետով (**հատոր 1-ին, գ.թ. 9-15**):

2) Ընկերության 17.06.2015 թվականի ծանուցման համաձայն՝ 05.05.2015 թվականից ավելի քան 1 ամիս 10 օր Խորեն Նասիբյանն անհարգելի պատճառներով չի ներկայացրել աշխատանքի: Առաջարկվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրա-

վոր բացատրություն աշխատանքի չներկայանալու պատճառների մասին (**հատոր 1-ին, գ.թ. 71**):

3) 23.06.2015 թվականի բացատրությամբ Խորեն Նասիբյանը հայտնել է, որ իր պաշտոնի առանձնահատկություններից ելնելով՝ աշխատանքային ռեժիմը չկարգավորվող է, Ընկերության ծանուցման մեջ նշված ժամկետի ընթացքում և տվյալ պահին ինքը գտնվում է աշխատանքի մեջ, կատարում է իր պարտականությունները (**հատոր 1-ին, գ.թ. 72-73**):

4) 21.07.2015 թվականի էլեկտրոնային նամակագրության համաձայն՝ Խորեն Նասիբյանի բանկային հաշվեհամարին Ընկերության կողմից կատարվել է 445.865 ՀՀ դրամի չափով փոխանցում (**հատոր 1-ին, գ.թ. 69**):

5) 05.08.2015 թվականին Ընկերության աշխատակից Գոհար Պապոյանին ուղարկված էլեկտրոնային նամակագրության, 15.07.2016 թվականի դատական նիստի ժամանակ որպես վկա հրավիրված Ռուբեն Խաչատրյանի ցուցմունքի համաձայն՝ Խորեն Նասիբյանը մինչև 2015 թվականի օգոստոս ամիսը ներառյալ կատարել է իր պարտականությունները (**հատոր 1-ին գ.թ. 30, հատոր 2-րդ, գ.թ. 128-131, 135, դատական նիստի արձանագրություն**):

6) 06.05.2015 թվականի թիվ Ա6320310332 հարկային հաշվի համաձայն՝ «Alcatel One Touch Idol 2 mini» բջջային հեռախոսը Ընկերությանը մատակարարվել է 06.05.2015 թվականին 87.900 ՀՀ դրամով (**հատոր 2-րդ, գ.թ. 61**):

7) Սույն գործում ամկա չէ 26.06.2015 թվականին Խորեն Նասիբյանին աշխատանքից ազատելու մասին հրամանը, ինչպես նաև ապացույց՝ այդ հրամանի մասին վերջինիս պատշաճ իրազեկելու մասին:

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ գործով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ և 265-րդ հոդվածների վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտման և 265-րդ հոդվածի 2-րդ մասի չկիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

1) արդյո՞ք աշխատողին աշխատանքից ազատելու մասին անհայտական իրավական ակտը ենթակա է անվավեր ճանաչման, եթե այն ուժի մեջ չի մտել,

2) արդյո՞ք աշխատողը կարող է վերականգնվել իր նախկին աշխատանքում, եթե վեճը լուծելու պահին լրացել է գործարուի և աշխատողի միջև կնքված որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը: Այդ դեպքում երբվանից պետք է աշխատանքային պայմանագիրը համարվի լուծված: Արդյո՞ք որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու պարզառով գործարուի և աշխատողի հերազա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում գործարուն պարտավոր է հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հարուցում՝ միջին աշխատավարձի չափով մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հարուցում:

Վերոգրյալի համատեքստում քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

1. Վճարել բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հերկյալ պարձա-  
նարանությամբ.

ա) գործարտի կայացրած անհատական իրավական ակտն ուժի մեջ մտնելու կարգը  
և ուժի մեջ չմտնած ակտի վիճարկման հնարավորությունը.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝  
իրավական ակտը Հայաստանի Հանրապետության ժողովրդի, Հայաստանի Հանրապե-  
տության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ  
համայնքային հիմնարկների, ինչպես նաև իրավաբանական անձանց, դրանց առանձ-  
նացված ստորաբաժանումների կամ հիմնարկների՝ օրենքով նախատեսված դեպքերում  
և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր  
փաստաթուղթ է, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պա-  
շտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություն-  
ներ, պատասխանատվություններ, սահմանափակումներ կամ այլ կանոններ (այսուհետ՝  
վարքագծի կանոններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերն իրենց բնույթով լինում  
են նորմատիվ, անհատական (ոչ նորմատիվ) կամ ներքին (լոկալ):

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական ակտ է նույն հոդվածի առա-  
ջին մասում նշված մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած իրա-  
վական այն ակտը, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է  
մեկնագամյա կամ բազմակի կիրառման համար, չի պարունակում իրավական նորմ  
և սահմանում է վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նա-  
խատեսված) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ պետական կամ տեղա-  
կան ինքնակառավարման մարմինների կամ պետական կամ համայնքային հիմնարկների  
(այսուհետ՝ անձ) համար:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբե-  
րության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հան-  
րապետության Ազգային ժողովի նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչա-  
պետի, գերատեսչական, տեղական ինքնակառավարման մարմինների, պետական այլ  
մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, **իրավաբանական անձա-  
նց** անհատական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց **ընդունմանը հա-  
ջորդող օրվանից**, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենքով, այլ օրենքներով կամ  
այդ անհատական իրավական ակտով: (...) Եթե նույն մասով սահմանված անհատական  
իրավական ակտերով նախատեսված է պարտականություն (այդ թվում՝ հանձնարարու-  
թյուններ) սահմանող կամ պետական մարմինների, պետական կամ համայնքային հիմ-  
նարկների կամ անձանց իրավական վիճակը վատթարացնող դրույթ, ապա այդ անհա-  
տական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում տվյալ անհատական իրավական ակտը  
համապատասխան մարմիններում կամ կազմակերպություններում մուտքագրվելու կամ  
պաշտոնատար անձանց կամ քաղաքացիներին հանձնվելու կամ նրանց տրամադրած  
(նշած) գտնվելու կամ բնակության վայր ուղարկելու կամ պատշաճ այլ կարգով **իրազե-  
կելու օրվան հաջորդող օրվանից**, եթե օրենքով կամ ավելի բարձր իրավաբանական  
ուժ ունեցող իրավական այլ ակտերով կամ այդ անհատական իրավական ակտով ավելի  
ուշ ժամկետ նախատեսված չէ:

Նույն մասի 2-րդ պարբերության համաձայն՝ նույն մասում նախատեսված մարմին-  
ների ընդունած և պատասխանատվություն սահմանող անհատական իրավական ակտն  
ուժի մեջ է մտնում տվյալ անհատական իրավական ակտը համապատասխան մարմին-  
ներում կամ կազմակերպություններում մուտքագրվելու կամ պաշտոնատար անձանց  
կամ քաղաքացիներին հանձնելու կամ նրանց տրամադրած (նշած) գտնվելու կամ բնակ-  
վելու վայր ուղարկելու կամ պատշաճ այլ կարգով **նրանց իրազեկելու պահից**, եթե  
օրենքով կամ ավելի բարձր իրավական ուժ ունեցող իրավական այլ ակտերով կամ այդ  
անհատական իրավական ակտով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝  
անհատական իրավական այլ ակտերը՝ դրանք ընդունելու օրվան հաջորդող երեք օրվա

ընթացքում ուղարկվում կամ հանձնվում են այն մարմիններին, պաշտոնատար անձանց կամ քաղաքացիներին, որոնց վրա տարածվում են դրանք:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 61.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով նախատեսված **իրավաբանական ուժ չունեցող իրավական ակտերն առ ոչինչ են և ենթակա չեն կատարման կամ կիրառման**: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական ուժ չունեցող իրավական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձը պարտավոր չէ կատարել իրավաբանական ուժ չունեցող, ինչպես նաև նույն օրենքով սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած իրավական ակտի պահանջները: Անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել իրավաբանական ուժ չունեցող, ինչպես նաև նույն օրենքով սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած իրավական ակտի պահանջների խախտման համար:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործատուի ներքին և անհատական իրավական ակտերն ընդունվում են հրամանների կամ կարգադրությունների, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այլ իրավական ակտերի տեսքով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհատական աշխատանքային հարաբերությունները կարգավորելու նպատակով գործատուն ընդունում է անհատական իրավական ակտեր:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործատուի ընդունած ներքին և անհատական իրավական ակտերն **ուժի մեջ են մտնում** այդ ակտի մասին համապատասխան անձանց **պատշաճ կարգով իրազեկելու պահից**, եթե այդ իրավական ակտերով այլ ժամկետ նախատեսված չէ: Աշխատանքի ընդունման, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի մեկ օրինակը հանձնվում է աշխատողին այն ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատանքային իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝

(...) 4) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ գործատուի իրավական ակտն անվավեր ճանաչելով, (...)

1) օրենքով նախատեսված այլ եղանակներով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերոհիշյալ հոդվածների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ իրավական ակտերի՝ մասնավորապես անհատական իրավական ակտերի կատարման կամ կիրառման հնարավորությունն օրենսդիրը պայմանավորել է դրանց ուժի մեջ մտնելու հանգամանքով, այսինքն՝ եթե այդ իրավական ակտերն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով ուժի մեջ չեն մտել, ապա դրանք ի սկզբանե առոչինչ են, իրավական առումով գոյություն չունեն և կատարման կամ կիրառման ենթակա չեն: Ավելին, առոչինչ իրավական ակտերի կատարման կամ կիրառման համար օրենսդիրը սահմանել է պատասխանատվություն: Դա նշանակում է, որ ուժի մեջ չմտած իրավական ակտերը որևէ իրավական հետևանք չեն կարող առաջացնել իրավական ակտերի հասցեատերերի, ինչպես նաև այլ իրավակիրառողների համար, բացի դրանց կատարման կամ կիրառման համար պատասխանատվությունից: Ընդ որում, նման կարգավորումը կիրառելի է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի տեսանկյունից գործատու հանդիսացող իրավաբանական անձի ընդունած ակտերի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի եզրահանգմամբ գործատուի՝ օրենքին կամ այլ իրավական ակտերին չհամապատասխանող անհատական իրավական ակտի վիճարկման համար նախ անհրաժեշտ է, որպեսզի այդ իրավական ակտն իրավաբանական ուժի մեջ մտած լինի: Իրավական ակտի հասցեատիրոջ պահանջով ակտն անվավեր ճանաչելը վերջինիս համար իրավական նշանակություն ունի այն դեպքում, երբ վիճարկվող ակտի կատարմամբ կամ կիրառմամբ խախտվել են կամ կարող են խախտվել նրա իրավունքներն ու օրինական շահերը, իսկ դա կարող է առկա լինել միայն իրավաբանական ուժի մեջ մտած

ակտի պարագայում՝ նկատի ունենալով, որ եթե անհատական իրավական ակտի մասին հասցեատերը սահմանված կարգով չի իրազեկվել, այս անկախ այն հանգամանքից՝ այդ իրավական ակտն իր բովանդակությամբ համապատասխանում է օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին, թե՛ ոչ, այդ իրավաբանական ակտն ուժի մեջ չմտնելու հետևանքով ենթակա չէ կատարման կամ կիրառման: Նման դեպքում դատարաններն աշխատողների իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացնեն ոչ թե ուժի մեջ չմտած անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելով, այլ պարզապես այդ իրավական ակտը չկիրառելով, ինչը կառաջացնի աշխատողի ակնկալած բարենպաստ իրավական հետևանքը: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ի սկզբանե գոյություն չունեցող, իրավաբանական ուժ չստացած իրավական ակտն անվավեր ճանաչելու պահանջն առարկայագուրկ է, այսինքն՝ չի կարող վիճարկվել իրավական առումով գոյություն չունեցող ակտը: Հետևաբար իրավաբանական ուժ չունեցող անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու պահանջը բավարարվել չի կարող:

*բ) որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրից բխող աշխատանքային հարաբերությունների դադարման առանձնահատկությունները.*

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 01.03.2011 թվականի խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

Ներկայումս գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը կնքվում է՝

1) անորոշ ժամկետով, եթե աշխատանքային պայմանագրում դրա գործողության ժամկետը նշված չէ,

2) որոշակի ժամկետով, եթե աշխատանքային պայմանագրում դրա գործողության ժամկետը նշված է:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որոշակի

ժամկետով աշխատանքային պայմանագիր է կնքվում, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով՝ հաշվի առնելով կատարվելիք աշխատանքի բնույթը կամ կատարման պայմանները, եթե նույն օրենսգրքով կամ օրենքներով այլ բան նախատեսված չէ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել որոշակի ժամանակահատվածով կամ օրացուցային ժամկետի սահմանումով կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտման սահմանումով:

Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ որոշակի ժամկետով պայմանագրեր կնքվում են նաև համատեղությամբ աշխատանք կատարողների հետ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվում է՝

(...) 2) պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում.

(...) 4) գործատուի նախաձեռնությամբ (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված դեպքերում աշխատանքային պայմանագրի լուծումը ձևակերպվում է գործատուի ընդունած անհատական իրավական ակտով (...):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 96-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը կարող է սահմանվել մինչև որոշակի օրացուցային տարին, ամիսը, ամսաթիվը կամ մինչև որոշակի իրադարձություն տեղի ունենալը, դրա փոփոխվելը կամ ավարտվելը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու պատճառով գործատուն կամ աշխատողն իրավունք ունեն լուծելու պայմանագիրը, բացառությամբ նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործատուն կարող է ժամկետը լրանալու պատճառով լուծել որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով աշխատողին առնվազն տասն օր առաջ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ աշխատողը կարող է լուծել որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն տասն օր առաջ գրավոր ծանուցելով գործատուին: Եթե աշխատողը չի ծանուցել գործատուին որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին և պայմանագրով նախատեսված վերջին աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը դուրս չի եկել աշխատանքի, ապա պայմանագիրը համարվում է լուծված, և գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ այդպիսի պահանջ ներկայացվելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը չի լուծվում նույն հոդվածով սահմանված կարգով, և աշխատանքային հարաբերությունները շարունակվում են, ապա պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են, որպես կանոն, անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով՝ նկատի ունենալով աշխատանքային հարաբերությունների կայուն և կատարվող աշխատանքի մշտական բնույթ ունենալը: Երաշխավորված աշխատանքի ապահովման և աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքն առավել արտահայտվում է հենց անորոշ ժամկետով աշխատանքային հարաբերություններում: Ուստի, դա է պատճառը, որ օրենսդիրը սահմանափակել է աշխատանքային պայմանագրեր կնքելիս անորոշ ժամկետով կամ որոշակի ժամկետով պայմանագրի տեսակն ընտրելու՝ կողմերի կամքի ազատությունը՝ սահմանելով, որ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր է կնքվում, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով:



Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործատուի և աշխատողի միջև որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելիս նրանց միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի սկզբից և տևում մինչև դրա գործողության ժամկետի ավարտը: Աշխատանքային իրավահարաբերությունները՝ որպես կամային հասարակական հարաբերություններ, ծագում, փոփոխվում և դադարում են աշխատանքային իրավունքի սուբյեկտների կամքի ազատ արտահայտության արդյունքում: Եթե աշխատանքային պայմանագրի կողմերն օրենքին համապատասխան որոշում են կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր, ապա նրանք կամովին իրենց աշխատանքային հարաբերությունները սահմանափակում են պայմանագրով որոշված ժամկետով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով նախատեսվում է գործողության ժամկետը լրանալու հիմքով որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի լուծման մեխանիզմը՝ առանձնացնելով նման պայմանագրի լուծման հնարավոր տարբերակները:

Այսպես, ընդհանուր կանոնն այն է, որ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո գործատուի և աշխատողի միջև աշխատանքային հարաբերությունները դադարում են: Օրենսդիրը նշված կարգից սահմանել է մեկ բացառություն, այն է՝ եթե որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը չի լուծվում օրենքով սահմանված կարգով, և աշխատանքային հարաբերությունները շարունակվում են, ապա պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով: Նման իրավակարգավորումից բխում է, որ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի լրանալիս ինքնին չի հանգեցնում աշխատանքային պայմանագրի դադարման, **եթե պայմանագրի երկու կողմերն էլ դրսևորում են աշխատանքային հարաբերությունները շարունակելու կամք**, այսինքն՝ աշխատողը շարունակում է աշխատանքը, իսկ գործատուն՝ ընդունում նրա աշխատանքի արդյունքը, ինչպես նաև կողմերը շարունակում են իրացնել աշխատանքային պայմանագրով նախատեսված իրենց իրավունքներն ու պարտականությունները: Ուստի, այն դեպքերում, երբ որոշակի ժամկետով կնքված **աշխատանքային պայմանագրով սահմանված ժամկետը լրանալուց հետո** աշխատողը փաստացի շարունակում է աշխատել և աշխատանքային պայմանագիրը չի լուծվում, ապա աշխատանքային պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով, որից հետո աշխատանքային պայմանագիրն արդեն չի կարող լուծվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 111-րդ հոդվածով սահմանված՝ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով: Նման դեպքերում աշխատանքային պայմանագիրը, համարվելով անորոշ ժամկետով կնքված պայմանագիր, կարող է լուծվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածով նախատեսված այլ հիմքերով:

Մյուս բոլոր դեպքերում որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը ենթակա է լուծման կամ գործատուի (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն), կամ աշխատողի (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն) կողմից՝ այդ մասին մյուս կողմին ծանուցելով առնվազն տասն օր առաջ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը լիարժեք կարգավորում չի նախատեսել այն դեպքերի համար, երբ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում այս կամ այն (օրինակ՝ կողմերի միջև աշխատանքային վեճի առկայության) պատճառով աշխատանքային հարաբերությունները չեն շարունակվում, իսկ կողմերն էլ օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիրը չեն լուծում՝ դրա գործողության ժամկետը լրանալու հիմքով:

Նման դեպքերի մի մասի համար օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորմամբ նախատեսել է, որ աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված, **եթե աշխատողը չի պահպանել** պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո պայմանագրի լուծման մասին ծանուցման

պահանջը, ինչպես նաև պայմանագրով նախատեսված վերջին աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը դուրս չի եկել աշխատանքի: Նման դեպքում փաստորեն պայմանագիրը **համարվում է լուծված օրենքի ուժով**:

Ինչ վերաբերում է գործատուի կողմից որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցման պահանջը չպահպանելուն, ապա օրենսդիրը դրա հետ կապված որևէ իրավական հետևանք, մասնավորապես՝ օրենքի ուժով պայմանագրի դադարում կամ լուծում չի նախատեսել: Ստացվում է, որ գործատուի կողմից աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու կամքի առկայության պայմաններում միայն գրավոր ծանուցման պահանջը չպահպանելն այն դեպքերում, երբ աշխատողը ցանկություն չունի երկարաձգելու աշխատանքային հարաբերությունները, չի հանգեցնում պայմանագրի լուծման կամ աշխատանքային հարաբերությունների դադարման, և այդ պարագայում էլ աշխատողը չի կարող օգտվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված իր խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից՝ պահանջելով, օրինակ, ձևակերպել աշխատանքային հարաբերությունների դադարումը, կատարել վերջնահաշվարկ և այլն, քանի որ ըստ այդ հոդվածի ձևակերպման՝ աշխատողն իրավունք ունի դիմելու դատարան «գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում»: Մինչդեռ, եթե կողմերի միջև աշխատանքային հարաբերությունները չեն շարունակվում, իսկ գործատուն էլ չի դադարեցնում կամ լուծում աշխատանքային պայմանագիրը, աշխատողը հայտնվում է անորոշ իրավական վիճակում, իսկ դա նրա համար առաջացնում է իրավունքների խախտման վտանգ:

Վճռաբեկ դատարանի եզրահանգմամբ տվյալ դեպքում, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ենթակա է կիրառման օրենքի անալոգիա, այն է՝ եթե աշխատանքային հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով, ապա նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող աշխատանքային օրենսդրության նորմերը: Քանի որ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու հավասար հնարավորություններ ունեն և՛ աշխատողը, և՛ գործատուն, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերջինիս կողմից աշխատանքային հարաբերությունները չշարունակելու կամքի դրսևորման պայմաններում պայմանագրի լուծման ծանուցման պահանջը չպահպանելու դեպքում պայմանագիրը պետք է համարվի լուծված պայմանագրով սահմանված ժամկետը լրանալու հաջորդ օրը, եթե աշխատանքային հարաբերությունները չեն շարունակվել, մասնավորապես, եթե գործատուն աշխատողին թույլ չի տվել շարունակելու աշխատանքը: Բարձրացված խնդրի նմանապատիպ կարգավորումը համապատասխանում է աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարության (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության հիման վրա աշխատանքային իրավահարաբերությունների պայմանագրային կարգով կարգավորման (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 6-րդ և 13-րդ հոդվածներ), աշխատանքային իրավունքների և պարտականությունների օրինական, բարեխիղճ և ողջամիտ իրականացման (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 37-րդ հոդված) սկզբունքներին և կիրառելի է այն դեպքում, եթե կողմերի միջև կնքված պայմանագրով այլ բան սահմանված չէ: Պայմանագրով այլ բան սահմանված լինելու դեպքում, եթե պայմանագիրը չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին, գործում է պայմանագիրը:

*զ) որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը գործադրուի նախաձեռնությամբ առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով լուծելու դեպքում աշխատողին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապորդի գումար վճարելու առանձնահատկությունները.*

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային

պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

ՀՀ վճարել դատարանը, *Ջոյա Ծարուրյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի գործով* կայացրած որոշմամբ անդրադառնալով նշված հոդվածի կիրառման դեպքին, դիրքորոշում է հայտնել նաև այն մասին, որ օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է աշխատանքում չվերականգնելու գործատուի իրավական հնարավորությունը՝ վերապահելով դատարանին այդ վարքագծի իրավաչափության գնահատման իրավասություն՝ որոշելու տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինությունը կոնկրետ գործի փաստերից ելնելով (*տես, թիվ 3-496(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 30.03.2007 թվականի որոշումը*):

Բացի այդ, *Քրիստինա Նեբիշն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի գործով* վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճարել դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծված լինելու դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով աշխատանքում վերականգնելու առանձնահատկություններին՝ արձանագրելով, որ՝

1. ոչ բոլոր դեպքերում է, որ առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատանքի պայմանները փոփոխելը, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելը կարող է հիմք հանդիսանալ աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու համար:

2. այդ կանոնից բացառություն է այն դեպքը, երբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը դատարանին իրավունք է վերապահում անգամ վերը նշված խախտումների փաստը հաստատված համարելու պայմաններում աշխատողին չվերականգնել նախկին աշխատանքում, եթե դա անհնարին է նաև տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով: Այս դեպքում նախկին աշխատանքում վերականգնելու փոխարեն դատարանը գործատուին պարտավորեցնում է հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարել հատուցում՝ նրա միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս,

քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով.

3. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասում խոսքը գնում է միայն նախկին աշխատանքում վերականգնվելու մասին, այսինքն՝ այն աշխատանքում, որն աշխատողը հրամանի կամ աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարել է աշխատանքից ազատվելու հրամանն արձակելու պահի դրությամբ (*տե՛ս, թիվ ԵԱՔԳ/1879/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Ջարգացնելով նախկինում արտահայտված դիրքորոշումները՝ վերոգրյալ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ նշված հոդվածով օրենսդիրը, անդրադառնալով աշխատանքային պայմանագրի վերաբերյալ վեճերին, կարգավորել է աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում աշխատողների խախտված իրավունքների վերականգման դեպքերը՝ առանձնացնելով երկու խումբ իրավիճակներ.

1. աշխատողը վերականգնվում է իր նախկին աշխատանքում՝ ստանալով հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ,

2. աշխատողը չի վերականգնվում նախկին աշխատանքում՝ ստանալով հատուցումներ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի, ինչպես նաև աշխատանքում չվերականգնվելու դիմաց:

Վերոնշյալ երկրորդ իրավիճակը հնարավոր է հետևյալ դեպքերում.

1. Առկա են տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներ: Մասնավորապես, նման իրավիճակ հնարավոր է այն դեպքում, երբ գործատուի վարչակազմակերպչական կառուցվածքում գոյություն չունի այնպիսի հաստիքային միավոր, որտեղ նախկինում աշխատել է աշխատողը, և առկա չէ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք (*տե՛ս, օրինակ, Անասյան Գիշյանը, Նորայր Եղիկյանն ընդդեմ «Արմեն-Տել» ՓԲԸ-ի թիվ ԵԱՔԳ/0605/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2009 թվականի որոշումը*):

2. Գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունները վերականգնելն անհնարին է այլ պատճառներով: Ընդ որում, նշված հիմքի կիրառման համար օրենսդիրը կոնկրետ դեպքեր չի նախատեսել՝ հնարավորություն տալով դատարաններին յուրաքանչյուր դեպքում գործի փաստական հանգամանքների շրջանակներում գնահատել աշխատանքում աշխատողի վերականգնման անհնարինությունը:

Այսպիսով, վերլուծելով նշված հոդվածով սահմանված իրավակարգավորումները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանով օրենսդիրը նպատակ է հետապնդել համապարփակ կերպով կարգավորելու աշխատանքային պայմանագրի վերաբերյալ վեճերը, մասնավորապես՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու և լուծելու հետ կապված բոլոր վեճերը՝ որպես աշխատողի խախտված իրավունքների վերականգնման եղանակներ սահմանելով ինչպես աշխատողի վերականգնումը նախկին աշխատանքում, այնպես էլ դրա անհնարինության դեպքում աշխատողին փոխհատուցումներ վճարելու գործատուի պարտականությունը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված հոդվածի իրավակարգավորումները կիրառելի են գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու և լուծելու վերաբերյալ բոլոր վեճերով՝ անկախ պայմանագիրը դադարեցնելու կամ լուծելու հիմքից, այլապես աշխատանքային վեճերի մի մասը դուրս կմնա օրենսդրական կարգավորման ոլորտից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հոդվածով սահմանված իրավակարգավորումները կրում են ընդհանուր բնույթ, դրանով մասնավորապես, սահմանված չեն գործատուի նախաձեռնությամբ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի դադարեցման կամ լուծման դեպքում աշխատողի խախտված իրավունքների վերականգնման եղանակների որոշակի առանձնահատկություններ, մինչդեռ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գլխա-

վոր առանձնահատկությունն այն է, որ պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ աշխատանքային հարաբերությունների դադարումը կախման մեջ են դնում որոշակի իրադարձությունից, այն է՝ ժամկետը լրանալու հանգամանքից: Այսինքն՝ դեռևս աշխատանքային պայմանագիրը կնքելիս կողմերը գիտակցում են, որ եթե պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո երկու կողմն էլ աշխատանքային հարաբերությունները շարունակելու միասնական կամք չդրսևորեն, ապա այդ հարաբերությունները սահմանափակվելու են պայմանագրով որոշված ժամկետով, և չեն կարող օրինական ակնկալիք ունենալ, որ որոշված ժամկետից հետո աշխատանքային հարաբերություններն անպայման շարունակվելու են: Դրանից տրամաբանորեն հետևում է, որ եթե առկա չէ կողմերից մեկի ազատ կամքը, պայմանագրի մյուս կողմը կամ որևէ այլ անձ չի կարող հարկադրել շարունակելու աշխատանքային հարաբերությունները պայմանագրի ժամկետը լրանալուց հետո, քանի որ նման հարկադրանքը կհակասի ինչպես կողմերի նախապես արտահայտած կամքին, այնպես էլ պայմանագրի կողմերի հավասարության սկզբունքին:

Վերը շարադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե գործատուի նախաձեռնությամբ ցանկացած հիմքով աշխատանքային պայմանագրի դադարեցման կամ լուծման վերաբերյալ վեճը լուծելու պահին լրացել է գործատուի և աշխատողի միջև կնքված որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը, ապա նույնիսկ գործատուի կողմից որոշակի ժամկետով կնքված պայմանագիրը լուծելու մասին ծանուցման օրենսդրական պահանջը չկատարելու պարագայում աշխատողը չի կարող վերականգնվել իր նախկին աշխատանքում՝ անկախ պայմանագիրը լուծելու հիմքի և կարգի օրինականությունից, քանի որ կողմերը պայմանագիր կնքելիս իրենց ազատ կամքով նման հնարավորություն չեն սահմանել և նման օրինական ակնկալիք չեն ունեցել: Այլ կերպ ասած, եթե գործատուն որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում այլ հիմքով լուծում է աշխատանքային պայմանագիրը, որից հետո աշխատողը վիճարկում է պայմանագրի լուծման օրինականությունը, և եթե դատարանի վճռի կայացման պահի դրությամբ արդեն իսկ լրացել է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը, ապա աշխատողն աշխատանքում վերականգնվել չի կարող՝ անկախ պայմանագրի լուծման օրինականությունից և այն հանգամանքից, որ աշխատողը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի հիման վրա գործատուի կողմից չի ծանուցվել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ:

Հետևաբար առանց օրինական հիմքերի և՛ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում այդ պայմանագրով սահմանված ժամկետը վեճը լուծելու ժամանակ լրացած լինելու և գործատուի կողմից աշխատանքային հարաբերությունները չշարունակելու կամք դրսևորելու պայմաններում առկա է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի իմաստով գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինություն՝ կապված կողմերի կնքած աշխատանքային պայմանագրի պայմանների կատարման հետ: Ուստի, եթե կողմերը պայմանագիր կնքելիս պայմանավորվել են իրենց աշխատանքային հարաբերությունները սահմանափակել որոշակի ժամկետով, ապա դատարանն իրավասու չէ կողմերից մեկի կամքին հակառակ փոփոխելու աշխատանքային պայմանագրի պայմանները՝ գործատուի համար առաջացնելով սպասվածից անբարենպաստ, իսկ աշխատողի համար՝ առանց պայմանագրային հիմքի առավել բարենպաստ հետևանքներ:

Նման պայմաններում, եթե աշխատողին աշխատանքից ազատելն անօրինական է, կիրառելի է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը, ընդ որում՝ աշխատանքային պայմանագրի լուծման օրվա և հատուցումների հարցերը լուծելիս ևս դատարանները պետք է հաշվի առնեն որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի վերոշարադրյալ առանձնահատկությունները: Մասնավորապես, որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը պետք է համարվի լուծված պայմանագրով որոշված ժամկետի հաջորդ օրը, իսկ հարկադիր պարապյուրդի գումարն էլ

կարող է բռնագանձվել մինչև պայմանագրով որոշված ժամկետի ավարտը, քանի որ այդ ժամկետը կողմերի նախապես դրսևորած կամքին համապատասխան ընդգրկում է հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածը:

**Վճարելի դադարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Խորեն Նասիբյանի և Ընկերության միջև 22.01.2015 թվականին կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա Խորեն Նասիբյանն ընդունվել է աշխատանքի որպես գործադիր տնօրեն: Պայմանագրի համաձայն՝ աշխատողի առաջին աշխատանքային օրն է 01.02.2015 թվականը, իսկ պայմանագրի գործողության ժամկետն է 6 ամիս՝ հաշված աշխատողի առաջին աշխատանքային օրվանից: Պայմանագրի 6.5 կետի համաձայն՝ եթե կողմերի որևէ մեկը Պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն 10 օր առաջ գրավոր չի ծանուցում մյուս կողմին, որ չի ցանկանում շարունակել Պայմանագիրը, ապա Պայմանագրի գործողության ժամկետը համարվում է երկարացված 6 ամիս ժամկետով:

Ընկերության 17.06.2015 թվականի ծանուցման համաձայն՝ 05.05.2015 թվականից ավելի քան 1 ամիս 10 օր Խորեն Նասիբյանն անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի: Առաջարկվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր բացատրություն աշխատանքի չներկայանալու պատճառների մասին:

23.06.2015 թվականի բացատրության համաձայն՝ Խորեն Նասիբյանը հայտնել է, որ իր պաշտոնի առանձնահատկություններից ելնելով՝ աշխատանքային ռեժիմը չկարգավորվող է, Ընկերության կողմից նշված ժամկետի ընթացքում և տվյալ պահին ինքը գտնվում է աշխատանքի մեջ, կատարում է իր պարտականությունները:

05.08.2015 թվականին Ընկերության աշխատակից Գոհար Պապոյանին ուղարկված էլեկտրոնային նամակագրության, 15.07.2016 թվականի դատական նիստի ժամանակ որպես վկա հրավիրված Ռուբեն Խաչատրյանի ցուցմունքի համաձայն՝ Խորեն Նասիբյանը մինչև 2015 թվականի օգոստոս ամիսը ներառյալ կատարել է իր պարտականությունները:

Սույն գործում առկա չէ 26.06.2015 թվականին Խորեն Նասիբյանին աշխատանքից ազատելու մասին հրամանը, ինչպես նաև ապացույց՝ այդ հրամանի մասին վերջինիս պատշաճ իրազեկելու մասին:

Սույն գործով Դատարանն Ընկերության 26.06.2015 թվականի հրամանն անվավեր ճանաչելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Ընկերության 26.06.2015 թվականի հրամանը պարտադիր պետք է հանձնվեր Խորեն Նասիբյանին, մինչդեռ գործում առկա չէ ապացույց այն վերջինիս հանձնված լինելու մասին, նման ապացույց չի ներկայացրել նաև Ընկերությունը: Վերոգրյալի հիման վրա Դատարանը հրամանը համարել է իրավաբանական ուժ չունեցող և այն անվավեր է ճանաչել:

Խորեն Նասիբյանին նախկին աշխատանքում վերականգնելու պահանջի մասով Դատարանը գտել է, որ քանի որ գործատուի կողմից աշխատանքային պայմանագիրը չի լուծվել դրա ժամկետը լրանալու հիմքով, իսկ այլ հիմքով այն լուծելու վերաբերյալ իրավական ակտն առոչինչ է, ուստի 22.01.2015 թվականին Խորեն Նասիբյանի և Ընկերության միջև կնքված աշխատանքային պայմանագիրը դարձել է անորոշ ժամկետով կնքված: Խորեն Նասիբյանին աշխատանքից ազատելու և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ հրամանն անվավեր ճանաչելու, Խորեն Նասիբյանի և Ընկերության միջև աշխատանքային պայմանագիրն անորոշ ժամկետով կնքված համարելու պայմաններում Դատարանը ելել է այն եզրահանգման, որ Խորեն Նասիբյանը ենթակա է նախկին աշխատանքում վերականգնման:

Չվճարված աշխատավարձը և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը վճարելու պահանջի մասով Դատարանը եզրակացրել է, որ 26.06.2015 թվականից Խորեն Նասիբյանը գտնվել է հարկադիր պարապուրդի մեջ, և քանի որ վերջինս վերականգնվում է նախկին աշխատանքում, հետևաբար Ընկերությունից ենթակա է բռնագանձման Խորեն Նասիբյանի միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար: Բացի այդ, մինչև

26.06.2015 թվականը Ընկերությունից հոգուտ Խորեն Նասիրյանի ենթակա է բռնագանձման նաև Խորեն Նասիրյանին հասանելիք և մինչ այդ պահը չվճարված աշխատավարձը:

Անդրադառնալով Խորեն Նասիրյանի օգտին բռնագանձման ենթակա աշխատավարձի գումարի նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելու՝ Ընկերությունից Խորեն Նասիրյանի օգտին աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար տուժանք բռնագանձելու պահանջին՝ Դատարանն արձանագրել է, որ առկա է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ փաստական հիմքը և մինչև 26.06.2015 թվականը Խորեն Նասիրյանին վճարման ենթակա, սակայն չվճարված աշխատավարձի նկատմամբ դրա վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար պետք է բռնագանձվի տուժանք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, պատճառաբանել է, որ ոչ միայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, այլև ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանվել է անհատական իրավական ակտն աշխատողին հանձնելու գործատուի պարտականությունը, սակայն Ընկերությունը՝ որպես գործատու և անհատական իրավական ակտ ընդունող մարմին, այն աշխատողին օրենքով սահմանված կարգով չի հանձնել կամ չի իրազեկել աշխատողին: Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ թեև Խորեն Նասիրյանի ազատման վերաբերյալ անհատական իրավական ակտը ձևակերպվել է՝ ընդունվել է (անվիձելի փաստ), սակայն այն առջինն, այսինքն՝ իրավական ուժ չունեցող է դարձել այդ ակտի մասին վերջինիս պատշաճ կարգով չիրազեկելու հիմքով:

Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ երբ աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրության խախտմամբ, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործով կիրառման ենթակա չէր ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը:

Անդրադառնալով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան մինչև 26.06.2015 թվականը չվճարված աշխատավարձի նկատմամբ տուժանքի բռնագանձելն անհիմն լինելու վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկին՝ Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ գործատուն մինչև 26.06.2015 թվականն աշխատողին աշխատավարձ վճարելու պարտականություն ունեցել է, հետևաբար այն չվճարելու համար տուժանք բռնագանձելը Դատարանի կողմից իրավաչափ է:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Դատարանն անվավեր է ճանաչել հայցվորի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ Ընկերության 26.06.2015 թվականի անհատական իրավական ակտն այն պայմաններում, երբ սույն գործում ոչ միայն առկա չէ այդ իրավական ակտը (կողմերից և ոչ մեկն այն չի ներկայացրել), այլև առկա չէ որևէ ապացույց նման անհատական իրավական ակտի մասին հայցվորին սահմանված կարգով իրազեկելու վերաբերյալ, ինչպես նաև հայցվորն ինքն էլ հայտնել է, որ չի ստացել այդ ակտը: Նման պարագայում այդպիսի իրավական ակտն առոչինչ է՝ իրավական ուժի մեջ մտած չլինելու հիմքով: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել հրամանն անվավեր ճանաչելու անհրաժեշտության վերաբերյալ Դատարանի հետևությունները և վճիռն այդ մասով թողել է օրինական ուժի մեջ: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Խորեն Նասիրյանի կողմից 26.06.2015 թվականի անհատական իրավական ակտի մասին պատշաճ կարգով իրազեկված չլինելու պայմաններում նշված ակտն անվավեր ճանաչելու պահանջն առարկայագուրկ էր և մերժման ենթակա:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն դրոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Ընկերության և Խորեն Նասիրյանի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով,

որ վեճի լուծման պահին աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրացել էր: Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանն աշխատանքից ազատելու մասին գործատուի կողմից աշխատողին չծանուցելու փաստի ուժով աշխատանքային պայմանագիրը համարել է կնքված անորոշ ժամկետով և վճռով հայցվորին վերականգնել է նախկին աշխատանքում՝ հաշվի չառնելով այն փաստը, որ կողմերի միջև կնքված աշխատանքային պայմանագրի 6.2 և 6.5 կետերի համաձայն՝ այն կնքվել է 6 ամիս ժամկետով՝ պայմանագիրը լուծելու մասին միմյանց չծանուցելու դեպքում ևս 6 ամիս ժամկետով երկարացված համարվելու պայմանով: Այսինքն՝ պայմանագրի գործողության ժամկետի առաջին 6 ամիսը լրանալուց հետո պայմանագիրը չլուծվելու և աշխատողի կողմից աշխատանքը շարունակելու պայմաններում պայմանագիրը պետք է համարվեր ոչ թե անորոշ ժամկետով կնքված, այլ երկարացված մինչև 01.02.2016 թվականը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 29.07.2016 թվականին սույն գործով վճիռը կայացնելու օրվա դրությամբ Դատարանի համար ակնհայտ է եղել, որ վեճը լուծելու պահին գործատուի և աշխատողի միջև կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը 01.02.2016 թվականին լրացած է եղել: Նման պայմաններում սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ պայմանագիրը չէր կարող համարվել կնքված անորոշ ժամկետով, և հայցվորն իր նախկին աշխատանքում վերականգնվել չէր կարող, քանի որ կողմերի աշխատանքային հարաբերություններն իրենց իսկ որոշած ժամկետը լրանալուց հետո դադարել էին, վեճի լուծման պահին առկա էր կողմերի աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարիություն՝ պայմանավորված կողմերի ազատ կամքով որոշված պայմանագրի գործողության ժամկետը լրանալով և աշխատանքային հարաբերությունները չշարունակելու գործատուի կանխատեսությամբ: Այդ դեպքում աշխատանքային պայմանագիրը պետք է համարվեր լուծված 02.02.2016 թվականից՝ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդված):

Աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելով՝ Դատարանը միաժամանակ գործատուից բռնագանձել է հարկադիր պարապուրդի գումարը՝ մինչև հայցվորին փաստացի աշխատանքում վերականգնելու պահը, մինչդեռ տվյալ դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ աշխատողի միջին աշխատավարձի չափով հարկադիր պարապուրդի գումարը ենթակա էր բռնագանձման 26.06.2015 թվականից մինչև 01.02.2016 թվականը ներառյալ, քանի որ այդ ժամկետն ընդգրկում է հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածը՝ նկատի ունենալով, որ պայմանագրի գործողության ժամկետը լրացել է 01.02.2016 թվականին:

Անդրադառնալով սույն գործով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում վճարելու հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ սույն գործով ի սկզբանե Խորեն Նասիրյանի համար ակնհայտ է եղել, որ աշխատանքային պայմանագրի գործողության առավելագույն ժամկետը 01.02.2016 թվականն է: Հետևաբար Խորեն Նասիրյանը չէր կարող վերականգնվել աշխատանքում աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո: Ուստի, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերջինիս աշխատանքում չվերականգնվելու դիմաց հատուցում չպետք է վճարվի:

Դատարանը որոշել է գործատուից բռնագանձել նաև մինչև 26.06.2015 թվականը չվճարած աշխատավարձը, ինչպես նաև այդ գումարի նկատմամբ հաշվարկել և բռնագանձել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տուժանքը՝ կետանցված յուրաքանչյուր օրվա համար: Նկատի ունենալով, որ մինչև 2015 թվականի օգոստոս ամիսը ներառյալ հայցվորը կատարել է իր աշխատանքային պարտականությունները, իսկ 26.06.2015 թվականի դրությամբ ունեցել է չվճարված աշխատավարձ, որի վճարումն ուշացվել է (դրա մի մասը վճարված է եղել 21.07.2015 թվականի դրությամբ), Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված մասով Դատարանը գործը ճիշտ է լուծել, իսկ Վերաքննիչ դատարանն էլ իրավացիորեն մերժել է ՀՀ աշխատանքային



օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տուժանքը կիրառելի չլինելու մասին գործատուի ներկայացուցիչների փաստարկները, ուստի նշված մասով Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր է:

*Վճռաբեկ բողոքի պայտասխանում բերված փաստարկները՝ բողոքի առաջին հիմքի վերաբերյալ, հերքվում են վերոնշյալ պարզառարանություններով:*

**2. Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պարզառարանությամբ.**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

Ապօրինի տիրապետման փաստն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ ի սկզբանե բացակայում է տիտղոսային տիրապետումը, այլև երբ տիրապետումը հիմնված է օրինական հիմքի (տիտղոս) վրա, որը հետագայում վերանում է:

Ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու գործով ապացուցման առարկան պատասխանողի կողմից վեճի առարկա գույքն ապօրինի տիրապետելու և հայցվորի կողմից տվյալ գույքի սեփականատեր հանդիսանալու փաստերն են: Հետևաբար ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելու պահանջ ներկայացնող կողմը կրում է նշված երկու փաստերի ապացուցման բեռը (*տևս, Միսակ-Նուբար Թեբեղեկյանն ընդդեմ Ռուբեն Քոչարի և մյուսների թիվ ԵԿԴ/0805/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վինդիկացիոն հայցը կարող է հարուցվել միայն ապօրինի տիրապետողի դեմ, հետևաբար այդպիսի հայցով պատշաճ պատասխանող կարող է լինել այն անձը, ում ապօրինի տիրապետման ներքո գտնվում է սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի գույքը (*տևս, Վարդան Ղազարյանն ընդդեմ Լևոն Գրիգորյանի թիվ ԼԴ1/0030/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*տևս, Էդգար Մարկոսյանը և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Մարգարյանի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը,

կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*տե՛ս, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԳ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*տե՛ս, Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԳ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Սույն գործում առկա 06.05.2015 թվականի թիվ Ա6320310332 հարկային հաշվի համաձայն՝ «Alcatel One Touch Idol 2 mini» բջջային հեռախոսը Ընկերությանը մատակարարվել է 06.05.2015 թվականին 87.900 ՀՀ դրամով: Սույն գործում առկա չէ ապացույց «Alcatel One Touch Idol 2 mini» բջջային հեռախոսը Խորեն Նասիրյանին հանձնելու վերաբերյալ, ինչպես նաև առկա չէ որևէ թույլատրելի ապացույց «HP PROBOOK 450G1 15/4/750/15.6» համակարգիչը Ընկերությանը պատկանելու և Խորեն Նասիրյանին հանձնված լինելու վերաբերյալ:

Դատարանը, հակընդդեմ հայցը մերժելով, գտել է, որ Ընկերության կողմից չեն ներկայացվել պատշաճ ապացույցներ Խորեն Նասիրյանին համակարգիչ և բջջային հեռախոս հանձնված լինելու և ներկայումս դրանք նրա մոտ գտնվելու վերաբերյալ, հետևաբար դրանց արժեքն աշխատողից բռնագանձելու պահանջն անհիմն է:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքն անհիմն է համարել հակընդդեմ հայցի մասով՝ գտնելով, որ գործում առկա չեն Ընկերության կողմից աշխատողին համակարգիչ և հեռախոս հանձնված լինելու մասին ապացույցներ, հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանն իրավացիորեն այդպիսի ապացույցներ չներկայացնելու բացասական հետևանքները դրել է Ընկերության վրա:

Անդրադառնալով հակընդդեմ հայցի կապակցությամբ ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը ճիշտ են գնահատել հակընդդեմ հայցը հիմնավորելու համար Ընկերության ներկայացրած ապացույցները՝ իրավաչափորեն արձանագրելով, որ Ընկերության կողմից չի ներկայացվել ապացույց այն մասին, որ վերոնշյալ ապրանքները հանձնվել են Խորեն Նասիրյանին: Ավելին, ստորադաս դատարաններն իրավաչափորեն եզրահանգել են, որ «HP PROBOOK 450G1 15/4/750/15.6» համակարգիչը Ընկերությանը պատկանելու վերաբերյալ ներկայացված օտարալեզու փաստաթուղթն անթույլատրելի է՝ նկատի ունենալով, որ *ըստ Արեգնազ Կարապետյանի դիմումի* գործով ՀՀ վճռաբեկ դատարանը հայտնել է դիրքորոշում այն մասին, որ օտար լեզվով կազմված փաստաթղթերի ներկայացման դեպքում ապացուցման պարտականություն ունեցող դատավարության մասնակիցների կողմից պետք է ներկայացվի նաև այդ փաստաթղթի պատշաճ կերպով հաստատված հայերեն թարգմանությունը (*տե՛ս, թիվ ԳԴ4/0504/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հակընդդեմ հայցի մասով դատական սխալ առկա չէ և Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր է:

*Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները՝ բողոքի երկրորդ հիմքի վերաբերյալ, հիմնավորվում են վերոնշյալ պարձառաբանություններով:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կի-

րառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Պահանջների մի մասով Վերաքննիչ դատարանի որոշումն անփոփոխ թողնելիս, իսկ մյուս մասով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելիս և փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խեղամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի մասնակիորեն բավարարման արդյունքում ստորադաս դատարանի դատական ակտը ենթակա է մասնակիորեն բեկանման, իսկ հայցը՝ անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու և նախկին աշխատանքում վերականգնելու պահանջների մասով, մերժման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետը, գտնում է, որ Խորեն Նասիբյանից հօգուտ Ընկերության պետք է բռնագանձել երկու ոչ գույքային պահանջների համար 20.000 ՀՀ դրամ (յուրաքանչյուր ոչ գույքային պահանջի համար 10.000 ՀՀ դրամ) որպես վերաքննիչ բողոքի համար Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար, երկու ոչ գույքային պահանջների համար 40.000 ՀՀ դրամ (յուրաքանչյուր ոչ գույքային պահանջի համար 20.000 ՀՀ դրամ)՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար: Մնացած մասով պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.12.2016 թվականի որոշման՝ «Ինտերակո» ՍՊԸ-ի 26.06.2015 թվականի անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու, Խորեն Նասիբյանին նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումար բռնագանձելու պահանջների մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.07.2016 թվականի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասերը, և այդ մասերով այն փոփոխել:

Խորեն Նասիբյանի հայցը՝ «Ինտերակո» ՍՊԸ-ի 26.06.2015 թվականի անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու և Խորեն Նասիբյանին նախկին աշխատանքում վերականգնելու պահանջների մասով, մերժել:

Խորեն Նասիբյանի հայցը՝ հարկադիր պարապուրդի գումար բռնագանձելու պահանջի մասով, բավարարել մասնակիորեն՝ «Ինտերակո» ՍՊԸ-ից հօգուտ Խորեն Նասիբյանի բռնագանձել նրա միջին աշխատավարձի չափով հարկադիր պարապուրդի գումարը՝ 26.06.2015 թվականից մինչև 01.02.2016 թվականը ներառյալ:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Խորեն Նասիբյանից հօգուտ «Ինտերակո» ՍՊԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

Խորեն Նասիբյանից հօգուտ «Ինտերակո» ՍՊԸ-ի բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

Դատական ծախսերի հարցը մնացած մասերով համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազրույթուն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազրույթուններ*

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ <b>ԵՄԴ/0049/04/15</b>
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0049/04/15	<b>2017թ.</b>
Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան	
Դատավորներ՝	Լ. Գրիգորյան
	Հ. Ենոքյան

### **ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչա-  
կան պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
	Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
	Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
	Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին դռնբաց դատական նիստում, քննելով Հարություն Վարդանյանի ներկայացուցիչ Սամվել Սիմոնյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.12.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ Հարություն Վարդանյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

### **ՊԱՐԶԵՑ**

#### **1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Հարություն Վարդանյանին ճանաչել սնանկ: Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Կատվայան) (այսուհետ՝ Դատարան) 15.09.2015 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 17.12.2015 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 15.09.2015 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հարություն Վարդանյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածը, 364-րդ հոդվածի 1-ին կետը, 375-րդ հոդվածի 1-ին կետը, 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 399-րդ հոդվածը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 46-րդ, 47-րդ հոդվածները, վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 23.06.2011 թվականի խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասը, 43-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Բանկը նույն վարկային պայմանագրի հիմքով սնանկ ճանաչելու պահանջներ է ներկայացրել ինչպես հիմնական պարտապանի, այնպես էլ բոլոր երաշխավորների դեմ, մինչդեռ նույն պայմանագրի հիման վրա սնանկ ճանաչվել էին կարող և հիմնական պարտապանը, և՛ վերջինիս պարտավորության կատարումն ապահովող երաշխավորները: Վարկային պայմանագրի և ի ապահովումն դրա կնքված երաշխավորության կամ գրավի պայմանագրի հիման վրա սնանկության վարույթ կարող է հարուցվել միայն հիմնական պարտապանի նկատմամբ, իսկ վերջինիս սնանկության վարույթում Բանկի պահանջը կհամարվի ապահովված պահանջ:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունից բխում է, որ երաշխավորի գույքը չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմի մեջ, և սնանկության գործով կառավարիչն իրավասություն չունի այն տնօրինելու: Տվյալ դեպքում սնանկ ճանաչված պարտապանի պարտավորությունների՝ երաշխավորությամբ ապահովված լինելը և երաշխավորի միջոցների հաշվին բավարարումը ենթադրվում է սնանկության վարույթի շրջանակներից դուրս՝ կամավոր ձևով կամ հարկադիր կատարման վարույթում: Ուստի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածն առանձնացնում է սնանկության վարույթը և երաշխավորի միջոցների հաշվին բավարարում ստանալու վարույթները: Այլ կերպ ասած՝ խոսքը գնում է միայն հիմնական պարտապանի սնանկության վարույթի մասին, այլ ոչ թե նաև երաշխավորների՝ առանձնացնելով այդ վարույթները և սահմանելով, որ երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցները բավարար չլինելու կամ երաշխիք կամ երաշխավորություն տված անձին պահանջ (ընդ որում ոչ թե սնանկության, այլ առանձին հայցային վարույթով) չներկայացնելու դեպքում պարտատերը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով ընդգրկվում է սնանկության գործով պարտատերերի ցուցակում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.12.2015 թվականի որոշումը և Դատարանի 15.09.2015 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Բանկի և «ԽԱՍ-ՊՐՈՖԻՏ» ՍՊԸ-ի միջև 13.10.2011 թվականին կնքված թիվ V04526 Վարկային գործառնությունների իրականացման գլխավոր պայմանագրով և դրան կից համաձայնագրերով, 31.10.2012 թվականին կնքված թիվ V04639 վարկային գործառնությունների իրականացման գլխավոր պայմանագրով և դրան կից համաձայնագրերով, ինչպես նաև դրանց հիման վրա 31.10.2012 թվականին կնքված թիվ V04639/2, 28.02.2014 թվականին կնքված թիվ V04526/12, 29.10.2014 թվականին կնքված թիվ V04526/14, 27.11.2014 թվականին կնքված թիվ V04526/19, 18.12.2014 թվականին կնքված թիվ V04526/20, 19.01.2015 թվականին կնքված թիվ V04526/21, 29.04.2015 թվականին կնքված թիվ V04526/22 վարկային պայմանագրերով Բանկի հանդեպ «ԽԱՍ-ՊՐՈՖԻՏ» ՍՊԸ-ի ու-

նեցած պարտքի ընդհանուր գումարը կազմում է 8.137.698,71 ԱՄՆ դոլար (**հատոր 1-ին, գ.թ 16-47, 88-108, 112-121, 123-129, 132-133, 138-144**):

2) Որպես Բանկի և «ԽԱՍ-ՊՐՈՖԻՏ» ՍՊԸ-ի միջև 13.10.2011 թվականին կնքված թիվ V04526 Վարկային գործառնությունների իրականացման գլխավոր պայմանագրով և 31.10.2012 թվականին կնքված թիվ V04639 Վարկային գործառնությունների իրականացման գլխավոր պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովում՝ 13.10.2011 թվականին, 31.10.2012 թվականին և 28.02.2014 թվականին կնքվել են համապատասխանաբար թիվ V04526/7, թիվ V04639/1 և թիվ V04526/13 երաշխավորության պայմանագրերը՝ Բանկի (պարտատեր), «ԽԱՍ-ՊՐՈՖԻՏ» ՍՊԸ-ի (պարտապան), Վարդան Վարդանյանի, Ստեփան Վարդանյանի, Արթուր Ալեքսանյանի, **Հարություն Վարդանյանի** և Լուսինե Մանուկյանի (երաշխավորներ) միջև, որոնց հիման վրա երաշխավորները պարտավորվել են յուրաքանչյուրն առանձին-առանձին իրենց անձնական ամբողջ գույքով և դրամական միջոցներով պարտատիրոջ առջև համապարտ պատասխանատվություն կրել վարկային պայմանագրով պարտապանի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար (**հատոր 1-ին, գ.թ. 48-54, 109-111**):

3) Բանկը դիմում է ներկայացրել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ «ԽԱՍ-ՊՐՈՖԻՏ» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջով, որը 12.06.2015 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ, և նշանակվել է ժամանակավոր կառավարիչ (գործ թիվ ԵՇԴ/0052/04/15) (**հատոր 2-րդ, գ.թ. 20**):

**4. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում երաշխավորին սնանկ ճանաչելու իրավական հնարավորության վերաբերյալ արտահայտած դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 23.06.2011 թվականի խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անհրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

- *ո՞րն է երաշխավորի պարասխանաբանության առանձնահատկությունը,*
- *որո՞նք են հարկադրված դիմումի հիման վրա պարտապանին սնանկ ճանաչելու պայմանները և հետևանքները*
- *արդյո՞ք հիմնական պարտավորության պարտաբերը կարող է ներկայացնել այդ պարտավորության կապարտումն ապահովող երաշխավորին սնանկ ճանաչելու պահանջ:*

*ա. երաշխավորի պարասխանաբանության ընդհանուր բնութագիրը.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ի կետի համաձայն՝ երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում երաշխավորը և պարտապանը պարտատիրոջ առջև

կրում են համապարտ պատասխանատվություն, եթե երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ համապարտ պարտապանները պարտական են մնում այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունը լրիվ չի կատարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապաններից մեկի կողմից համապարտ պարտականությունը լրիվ կատարելը մնացած պարտապաններին ազատում է պարտատիրոջ հանդեպ պարտականությունը կատարելուց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև պահանջներն այն անձին ներկայացնելը, ով օրենքին, այլ իրավական ակտերին կամ պարտավորության պայմաններին համապատասխան կրում է հիմնական պարտապանի պատասխանատվությանը լրացուցիչ պատասխանատվություն (սուբսիդիար պատասխանատվություն), պարտատերը պետք է պահանջ ներկայացնի հիմնական պարտապանին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե հիմնական պարտապանը հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց, կամ պարտատերը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը, ապա այդ պահանջը կարող է ներկայացվել սուբսիդիար պատասխանատվություն կրող անձին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը կատարած երաշխավորին են անցնում այդ պարտավորությամբ պարտատիրոջ իրավունքները և պարտատիրոջ՝ որպես գրավառուի պատկանող իրավունքներն այն ծավալով, որով երաշխավորը բավարարել է պարտատիրոջ պահանջը: Երաշխավորն իրավունք ունի նաև պարտապանից պահանջել հատուցելու պարտատիրոջը վճարած գումարի տոկոսներն ու, պարտապանի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ, իր կրած այլ վնասները: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունը երաշխավորի կողմից կատարելուց հետո պարտատերը պարտավոր է երաշխավորին հանձնել պարտապանի դեմ ունեցած իր պահանջը հավաստող փաստաթղթերը և փոխանցել այդ պահանջն ապահովող իրավունքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 399-րդ հոդվածի համաձայն՝ սկզբնական պարտատիրոջ իրավունքը նոր պարտատիրոջն է անցնում իրավունքի անցման պահին գոյություն ունեցող ծավալով և պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Մասնավորապես, նոր պարտատիրոջն են անցնում պարտավորության կատարումն ապահովող, ինչպես նաև պահանջի հետ կապված այլ իրավունքները՝ ներառյալ չվճարված տոկոսների նկատմամբ իրավունքը:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ երաշխավորը, կնքելով երաշխավորության պայմանագիր, իր վրա է վերցնում պարտապանի կողմից պարտավորությունը որևէ հիմքով խախտելու արդյունքում բացասական հետևանքներ կրելու ռիսկը: Դա, մասնավորապես, դրսևորվում է պարտավորության խախտման դեպքում երաշխավորի՝ պարտավորության ամբողջ ծավալով համապարտ պատասխանատվությամբ:

Նախկինում կայացված որոշումներից մեկով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն ամրագրել է երաշխավորի համապարտ պատասխանատվության կան-



խավարկածը, ինչը ենթադրում է, որ պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտատերն իրավունք ունի կատարման պահանջ ներկայացնելու ինչպես պարտապանին և երաշխավորին միասին, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրին ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

Երաշխավորի սուբսիդիար պատասխանատվությունը կարող է նախատեսվել միայն օրենքով կամ պայմանագրով: Պայմանագրով երաշխավորի պատասխանատվությունը կրում է սուբսիդիար բնույթ, եթե այդ մասին ուղղակիորեն սահմանված է պայմանագրում կամ երաշխավորին պահանջի ներկայացման ընթացակարգի վերաբերյալ պայմանագրային դրույթների կարգավորումից հետևում է, որ այն այդպիսին է:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտատերը սուբսիդիար պատասխանատվություն ստանձնած անձին պարտավորության կատարման պահանջ կարող է ներկայացնել միայն հիմնական պարտապանին այդպիսի պահանջ ներկայացնելուց հետո և միայն այն չափով, որ չափով պարտավորությունը չի կատարվել վերջինիս կողմից: Այսինքն՝ սուբսիդիար պատասխանատվություն կրող անձին պահանջը կարող է ներկայացվել, եթե

- հիմնական պարտապանը հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց, կամ

- պարտատերը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նույն որոշմամբ վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածի 1-ին կետը, նշել է, որ գործում է երաշխավորի լրիվ ծավալով պատասխանատվության սկզբունքը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով (*տե՛ս, «Կոմվերս բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Մարինե Նազարյանի և մյուսների թիվ ԵՇԴ/0700/02/12 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականի ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը*):

Վերոգրյալ իրավանդումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ երաշխավորությունը՝ որպես պարտավորության կատարման ապահովման միջոց, լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն է, այսինքն՝ առանց հիմնական պարտավորության՝ գոյություն ունենալ չի կարող: Այլ կերպ ասած՝ երաշխավորությունը միշտ լրացուցիչ պարտավորություն է, ինչը նշանակում է, որ հիմնական պարտապանի կողմից պարտավորությունը խախտելուց հետո միայն պարտատերը կարող է պահանջ ներկայացնել երաշխավորի դեմ, ընդ որում՝ պահանջ ներկայացնելն ունի առանձնահատկություն՝ կապված նրանից, թե երաշխավորի պատասխանատվությունը համապարտ է, թե սուբսիդիար: Եթե համապարտ պատասխանատվության դեպքում պարտատերն իր հայեցողությամբ կարող է պահանջ ներկայացնել ինչպես հիմնական պարտապանին, այնպես էլ՝ երաշխավորին, ապա սուբսիդիար պատասխանատվության դեպքում, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 415-րդ հոդվածով, մինչև երաշխավորի դեմ պահանջ ներկայացնելը պարտատերը պետք է պահանջ ներկայացնի հիմնական պարտապանին, և միայն այն դեպքում, եթե հիմնական պարտապանը հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց, կամ պարտատերը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը, ապա այդ պահանջը կարող է ներկայացվել երաշխավորին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև հավելել, որ երաշխավորը պարտապանի կողմից պարտավորությունը խախտելու դեպքում պարտատիրոջ առջև պարտապանի հետ միասին պատասխանատվություն կրող անձն է: Նկատի ունենալով, որ երաշխավորը հիմնական պարտավորության պարտապանը չէ, երաշխավորի կողմից հիմնական պարտավորությունը կատարելու դեպքում օրենսդիրը երաշխավորին տվել է իրավունք հիմնական պարտապանի նկատմամբ ձեռք բերել պահանջի իրավունք՝ իր կողմից կատարած պարտավորության չափով: Այլ կերպ ասած՝ այն դեպքերում, երբ երաշխավորը հիմնական պարտավորության պարտապանի փոխարեն կատարում է պարտավորությունը, ապա հիմնական պարտավորության պարտատիրոջ փոխարեն սկսում է հանդես գալ որպես պարտատեր:

*բ. հարկադրված դիմումի հիման վրա պարտապանին սնանկ ճանաչելու պայմանները և հետևանքները.*

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու հիմքը նրա անվճարունակությունն է, որը հարկադրված սնանկության դեպքում դրսևորվում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանցի առկայության և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվելու հանգամանքով: Ընդ որում, անձին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է՝ այդ շրջանառության անվճարունակ մասնակիցներին ֆինանսապես առողջացնելու կամ նրանց քաղաքացիական շրջանառությունից դուրս մղելու նպատակով, որպեսզի վերջիններիս անվճարունակության հետևանքով չտոնսահարվեն նաև քաղաքացիական շրջանառության մնացած մասնակիցների շահերը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ պարտապանին սնանկ ճանաչելը պարտավորությունը ոչ պատշաճ կատարած պարտապանի նկատմամբ դատական այնպիսի միջամտություն է, որի պայմաններում սահմանափակվում է պարտապանի գործողությունների շրջանակը մինչև սնանկության վարույթի ավարտը, որպիսի կարգավորման նպատակը պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովելն է:

*գ. երաշխավորին սնանկ ճանաչելու հնարավորությունը.*

Երաշխավորին հիմնական պարտատիրոջ կողմից պահանջ ներկայացնելու առանձնահատկությունները սահմանվում են «Մանկության մասին» ՀՀ օրենքի հետևյալ նորմերով.

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետի համաձայն՝ **մորատորիումի գործողությունը չի տարածվում** ի ապահովումն սնանկության գործընթացում գտնվող պարտապանի պարտավորությունների կատարման՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձանց կողմից այդ երաշխիքի կամ **երաշխավորության գծով** դրամական կամ այլ բավարարում տալու կամ դրա կատարմանն ուղղված ցան-

կացած գործողության կամ գործընթացի վրա: Ընդ որում, պարտապանի **սնանկության գործընթացը չի ազդում** ի սպահովումն պարտապանի պարտավորությունների կատարման երաշխիք կամ երաշխավորություն տված անձի՝ երաշխիքով կամ երաշխավորությամբ ստանձնած պարտավորությունների կատարման վրա:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ապահովված են համարվում ապահովված իրավունքով ծանրաբեռնված պահանջները: Ապահովված պարտատերեր են համարվում ապահովված իրավունք ունեցող անձինք՝ այդ պահանջների մասով:

2. Ապահովված իրավունքի առարկան իրացնելու մասին դիմումը բավարարելու վերաբերյալ դատարանի որոշմամբ ապահովված պարտատերը չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում, և նրա ապահովված պահանջները բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար ապահովված իրավունքի առարկայի իրացման հաշվին: Այդ դեպքում ապահովված պարտատերը, անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ:

3. Երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտատիրոջ պահանջները, այդ թվում՝ ապահովված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պայմանագրով սահմանված տուժանքները, տուգանքները և վճարման ենթակա տոկոսները կարող են բավարարվել երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցների հաշվին: **Երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցները բավարար չլինելու կամ երաշխիք կամ երաշխավորություն տված անձին պահանջ ներկայացնելու դեպքում ապահովված պարտատերը նույն օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով ընդգրկվում է սնանկության գործով պարտատերերի ցանկում և իր**

**պահանջների բավարարումն ստանում է նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով:** Ընդ որում, երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանի սնանկության գործընթացում հաշվարկված՝ պայմանագրով սահմանված տուժանքների, տուգանքների և վճարման ենթակա տոկոսների գումարները չեն կարող պահանջվել պարտապանից:

(...)

7. Եթե ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցները բավարար չեն պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջներն ամբողջովին մարելու համար, ինչպես նաև **երաշխիքով (երաշխավորությամբ) ապահովված պահանջների չբավարարված (այդ թվում՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձից պարտավորության կատարում չպահանջելու հետևանքով չբավարարված) մասը** (բացառությամբ այդ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանի սնանկության գործընթացում հաշվարկված՝ պայմանագրով սահմանված տուժանքների, տուգանքների և վճարման ենթակա տոկոսների գումարների) համարվում է չապահովված պահանջ, իսկ պարտատերը՝ չապահովված պարտատեր՝ չապահովված պահանջի չափով:

(...)

11. Երբորդ անձ գրավատուի, երաշխավորի կամ երաշխիք տվող անձի՝ պարտապանի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջ ձեռք բերելու դեպքում այդ պահանջը ենթակա է բավարարման՝ որպես նույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետով նախատեսված պահանջ (չապահովված պարտավորերների պահանջներ, ներառյալ՝ պարտադիր սոցիալական վճարները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ առաջացած՝ հարկային, պարտադիր այլ վճարների, վարչարարությունից ծագած փուզանքների գծով պարտավորությունները, բացառությամբ սրբորադաս չապահովված պարտավորերների պահանջների) »:

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 23.06.2011 թվականի խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ապահովված են համարվում գրավով (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող գույքի գրավով), երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պահանջները: Ապահովված պարտատերեր են համարվում ապահովված պահանջներ ունեցող անձինք՝ այդ պահանջների մասով:

2. Մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատերը չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում, և նրա ապահովված պահանջները բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար գրավադրված գույքի իրացման (այդ թվում՝ գործող օրենսդրությամբ սահմանված՝ առանց դատարան դիմելու) հաշվին: Այդ դեպքում պարտատերը, անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ:

3. Երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտատիրոջ պահանջները, այդ թվում՝ ապահովված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պայմանագրով սահմանված տուժանքները, տուգանքները և վճարման ենթակա տոկոսները կարող են բավարարվել երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցների հաշվին: **Երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցները բավարար չլինելու կամ երաշխիք կամ երաշխավորություն տված անձին պահանջ չներկայացնելու դեպքում պարտատերը նույն օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով ընդգրկվում է սնանկության գործով պարտատերերի ցանկում և իր պահանջների բավարարումն ստանում է նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով:** Ընդ որում, երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանի սնանկության գործընթացում հաշվարկված՝ պայմանագրով սահմանված տուժանքների, տուգանքների և վճարման ենթակա տոկոսների գումարները չեն կարող պահանջվել պարտապանից:

(...)

7. Եթե համապատասխան գրավի առարկայի իրացումից ստացված միջոցները բավարար չեն պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջներն ամբողջովին մարելու համար, ինչպես նաև երաշխիքով (երաշխավորությամբ) ապահովված պահանջների չբավարարված (այդ թվում՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձից պարտավորության կատարում չպահանջելու հետևանքով չբավարարված) մասը (բացառությամբ այդ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանի սնանկության գործընթացում հաշվարկված՝ պայմանագրով սահմանված տուժանքների, տուգանքների և վճարման ենթակա տոկոսների գումարների) համարվում է չապահովված պահանջ, իսկ պարտատերը՝ չապահովված պարտատեր՝ չապահովված պահանջի չափով:

(...)

11. Երրորդ անձ գրավատուի, երաշխավորի կամ երաշխիք տվող անձի՝ պարտապանի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջ ձեռք բերելու դեպքում այդ պահանջը ենթակա է բավարարման՝ որպես նույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված պահանջ (*չապահովված պահանջներ, որոնք առաջացել են պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ նույն օրենքով սահմանված կարգով իրականացված գործառնությունների (այդ թվում՝ գործունեության վերսկսման) հետևանքով*)»:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝ գրավով կամ երաշխիքով (**երաշխավորությամբ**) չապահովված բոլոր պահանջները կամ ապահովված պահանջների չապահովված մասերը համարվում են չապահովված պահանջներ, այդ թվում՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո առաջացած պահանջները և պարտապանի գույքի վաճառքի հետ կապված ընթացիկ անուղղակի հարկային պարտավորությունները, որոնց առաջնահերթությունը սահմանված է նույն օրենքի 82-րդ հոդվածի առաջին մասով:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն

արձանագրում է, որ օրենսդիրը երաշխավորությամբ ապահովված պահանջը դիտարկել է որպես ապահովված պահանջ: Նկատի ունենալով, որ օրենսդիրն ապահովված պահանջների համար նախատեսել է հատուկ կարգավորում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ըստ վերոնշյալ կարգավորման՝ մասնավորապես «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ երաշխավորությամբ ապահովված պարտատերը կարող է երաշխավորությամբ ապահովված իր պահանջն ուղղակիորեն ներկայացնել երաշխավորին սնանկության վարույթից առանձին, իսկ նման պահանջ չներկայացնելու կամ պահանջը լրիվ չբավարարվելու դեպքում այդ պահանջը ներկայացնել սնանկության վարույթում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ այն դեպքում, երբ երաշխավորությամբ ապահովված պարտավորության պարտատերն իր պահանջն ուղղակիորեն ներկայացնում է սնանկության վարույթում՝ ընդգրկվելով պարտատերերի ցուցակում, ապա այդ դեպքում պարտատերը համարվում է ապահովված պարտատեր: Հաշվի առնելով, որ ապահովված պարտատեր համարվելը չի կարող լինել ինքնապատակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ նման դեպքում պարտատիրոջ պահանջը բավարարվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածին համապատասխան (*Ապահովված պահանջները և դրանց բավարարումը*): Ընդ որում, նման դեպքում պարտատիրոջ պահանջները՝ որպես ապահովված պահանջ, սնանկության վարույթի շրջանակներում կարող են բավարարվել երաշխավորի միջոցների հաշվին: Այսպես՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերը շարադրված հիմնավորումները, օրենսդրի տրամաբանությունը, մասնավորապես՝ երաշխավորությամբ ապահովված պահանջն ապահովված պահանջների և դրանց բավարարման վերաբերյալ նշված օրենքի 43-րդ հոդվածում ներառելիս, գտնում է, որ օրենսդիրը չի բացառում, որ երաշխավորության հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջները կարող են բավարարվել երաշխավորի գույքի իրացման արդյունքում: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սնանկության գործով կառավարիչը՝ որպես սնանկության վարույթում պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովող հիմնական անձ, երաշխավորության հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար կարող է հայցով դիմել դատարան երաշխավորի դեմ՝ ստացված գումարն ուղղելով ապահովված պահանջատիրոջ պահանջների բավարարմանը: Ստացված միջոցներն անբավարար լինելու դեպքում պարտատերը մնացած պահանջի մասով համարվում է չապահովված պարտատեր՝ հետագա բավարարում ստանալով արդեն ըստ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված առաջնահերթության:

Ինչ վերաբերում է երաշխավորի դեմ սնանկության վարույթից դուրս պահանջ ներկայացնելու հնարավորությանը, ապա Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում գտնում է, որ նման պահանջ ներկայացնելու իրավունքը չի ներառում հիմնական պարտապանի հետ միաժամանակ երաշխավորին սնանկ ձանաչելու հնարավորությունը: Այսինքն՝ հիմնական պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում երաշխավորի դեմ պահանջ ներկայացնելու հնարավորությունը վերաբերում է միայն հայցային վարույթի կարգով գույքային պահանջ ներկայացնելուն, այլ ոչ թե նաև վերջինիս սնանկ ձանաչելուն: Այսպիսով, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ դրույթներից բխում է, որ երաշխավորը, անկախ նրանից՝ վերջինս համապարտ պարտավորություն է ստանձնել, թե ոչ, միևնույն պայմանագրի հիմքով՝ պարտապանի հետ միաժամանակ չի կարող սնանկ ձանաչվել:

Հետևաբար հիմնական պարտապանին սնանկ ձանաչելուց հետո վերջինիս սնանկության վարույթում պարտատիրոջ պահանջը երաշխավորության հիմքով կհամարվի ապահովված պահանջ, իսկ պահանջի բավարարումն արդեն կիրակախանացվի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանի նման մոտեցումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ զուգահեռ ընթացող հիմնական պարտապանի և երաշխավորի սնանկության վարույթներից մեկով պարտատերը կարող է ստանալ իր պահանջի ամբողջական բա-

վարարում, սակայն սնանկության հետևանքով կտուժեն քաղաքացիական շրջանառության մնացած մասնակիցները, քանի որ նույն պարտավորության համար մի քանի սուբյեկտ կձանաչվեն սնանկ՝ դրանից բխող հետևանքներով, ընդ որում այն դեպքում, երբ պարտատերն իր պահանջի բավարարում կարող էր ստանալ միայն հիմնական պարտապանին սնանկ ձանաչելով: Նման պարագայում սնանկության մյուս վարույթը կվերածվի ինքնասպատակ գործընթացի՝ հանգեցնելով երաշխավորի իրավունքների անհարկի սահմանափակման: Այլ կերպ ասած՝ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ երաշխավորը, անկախ վերջինիս պատասխանատվության համապարտ կամ սուբսիդիար լինելուց, պարտապանի հետ միաժամանակ սնանկ ձանաչվել չի կարող: Ուստի Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով օրենսդրի տրամաբանությունը, կարևորելով քաղաքացիական շրջանառության կայունությունն ապահովելը, գտնում է, որ հիմնական պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում պարտատիրոջ կողմից երաշխավորին սնանկ ձանաչելու պահանջ չի կարող ներկայացվել:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև երաշխավորության հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջների բավարարման ընթացակարգերին: Ի տարբերություն գրավով ապահովված պահանջատիրոջ պահանջների, որոնց համար «Մնանկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված են գրավադրված գույքի, ինչպես արտադատական, այնպես էլ դատական կարգով իրացման ընթացակարգեր, ապա նույն օրենքը չի նախատեսում երաշխավորի գույքի իրացման ընթացակարգ: Փաստորեն, օրենքը երաշխավորության հիմքով պարտատիրոջ պահանջը համարելով ապահովված, համենայնդեպս չի նախատեսում ապահովված պահանջի բավարարման կամ գույքի իրացման ընթացակարգ:

Սակայն, Վճռաբեկ դատարանը հիմք ընդունելով վերը շարադրված հիմնավորումները, գտնում է, որ օրենսդիրը չի բացառում, որ երաշխավորության հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջները կարող են բավարարվել երաշխավորի գույքի իրացման արդյունքում: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սնանկության գործով կառավարիչը երաշխավորության հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար կարող է հայցով դիմել դատարան՝ երաշխավորի գույքի հաշվին ապահովված պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար: Հակառակ դեպքում, ստացվում է, որ օրենսդիրը երաշխավորության հիմքով նախատեսելով պարտատիրոջ պահանջների ապահովված լինելը, սակայն չի նախատեսում նույն հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջների բավարարման ընթացակարգ:

### ***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և «ԽԱՍ-ՊՐՈՖԻՏ» ՍՊԸ-ի միջև կնքված վարկային պայմանագրերով Բանկի հանդեպ «ԽԱՍ-ՊՐՈՖԻՏ» ՍՊԸ-ի ունեցած պարտքի ընդհանուր գումարը կազմում է 8.137.698,71 ԱՄՆ դոլար: Որպես Բանկի և «ԽԱՍ-ՊՐՈՖԻՏ» ՍՊԸ-ի միջև կնքված վարկային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովում՝ Բանկի, «ԽԱՍ-ՊՐՈՖԻՏ» ՍՊԸ-ի և Հարություն Վարդանյանի միջև կնքվել է երաշխավորության պայմանագիր, որի հիման վրա Հարություն Վարդանյանը պարտավորվել է Բանկի առջև համապարտ պատասխանատվություն կրել վարկային պայմանագրով պարտապանի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար: Բանկը դիմում է ներկայացրել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան «ԽԱՍ-ՊՐՈՖԻՏ» ՍՊԸ-ին սնանկ ձանաչելու պահանջով, որը 12.06.2015 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ, և նշանակվել է ժամանակավոր կառավարիչ (գործ թիվ ԵՇԴ/0052/04/15):

Սույն գործով Դատարանը, մերժելով Բանկի դիմումը, գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի տրամաբանությունից հետևում է, որ եթե երաշխավորը կատարի պարտապանի պարտավորությունը, ապա պարտատերը պարտավոր կլինի պահանջի, այդ թվում՝ գրավի իրավունքը և այն հիմնավորող փաստաթղթերը փոխանցել պար-

տավորությունը կատարած երաշխավորին, իսկ սույն պարագայում, նկատի ունենալով, որ պարտատերը սնանկ ճանաչելու պահանջով դիմել է և հիմնական պարտապանի, և երաշխավորի դեմ, անհնարին կլինի պահանջի իրավունքը գրավի իրավունքի հետ միասին փոխանցել երաշխավորին, քանի որ գրավի առարկան կարող է վաճառքի հանվել ավելի շուտ: Բացի այդ, Հարություն Վարդանյանի կողմից Բանկի պահանջն ամբողջությամբ կատարելու դեպքում պարտապանի վերաբերյալ սնանկության գործով Բանկի պահանջը համարվում է կատարված, իսկ Հարություն Վարդանյանը պետք է պահանջ ներկայացնի դատարանին՝ պարտապանի և մյուս երաշխավորների դեմ, որպիսի հանգամանքը կհանգեցնի իրավական որոշակիության սկզբունքի խախտման: Ուստի հաշվի առնելով, որ հիմնական պարտապանի դեմ թիվ ԵՇԴ/0052/04/15 սնանկության գործն ընթացքի մեջ է, Դատարանը գտել է, որ երաշխավորի նկատմամբ սնանկության գործընթաց սկսելը չի բխում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի պահանջներից:

Վերաքննիչ դատարանը, մասնակի բավարարելով Բանկի վերաքննիչ բողոքը և գործն ուղարկելով նոր քննության, գտել է, որ Դատարանն ընդհանրապես չի անդրադարձել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ պայմաններին և դրանց առկայությունը հաստատող կամ հերքող ապացույցներին, Դատարանի վճիռը չի կայացվել գործում եղած թույլատրելի և վերաբերելի ապացույցներով հաստատվող կամ հերքվող փաստերի նկատմամբ համապատասխան օրենքների և այլ իրավական ակտերի կիրառման սկզբունքով: Ուստի, Դատարանի վճիռը օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի կողմից ներկայացվել է ինչպես հիմնական պարտավորության պարտապանին, այնպես էլ այդ պարտավորության կատարումն ապահովող երաշխավորին սնանկ ճանաչելու պահանջ: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Բանկի կողմից կարող էր ներկայացվել հիմնական պարտապան «ԽԱՍ-ՊՐՈՖԻՏ» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջ, իսկ վերջինիս սնանկ ճանաչվելուց հետո երաշխավոր Հարություն Վարդանյանի դեմ պահանջը՝ որպես ապահովված պահանջ, կարող էր բավարարում ստանալ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով՝ հիմք ընդունելով սույն որոշման իրավական վերլուծությունները: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված չեն և սույն գործով Դատարանն իրավացիորեն է մերժել Բանկի դիմումը՝ երաշխավորին սնանկ ճանաչելու պահանջի վերաբերյալ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը, համաձայն որի՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, ուստի Դատարանի վճռին պետք է տալ օրինական ուժ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Միաժամանակ վերոհիշյալ դիրքորոշման համար Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

### **5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է ոչ գույքային բնույթի պահանջի գործերով՝ բազային տուրքիքսանապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ պետական տուրքի վճարումից ազատում, պետական տուրքի նվազեցում, պետական տուրքի դրույքաչափի նվազեցում, պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում, պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

Սույն գործով նկատի ունենալով, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.05.2016 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ Հարություն Վարդանյանի ներկայացուցչի միջնորդությունը բավարարվել է, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարը՝ 20.000 ՀՀ դրամի չափով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով Բանկից ենթակա է բռնագանձման ՀՀ պետական բյուջե:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը



### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.12.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Սալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 15.09.2015 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.05.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0053/04/14  
 դատարանի որոշում 2017թ.  
 Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0053/04/14  
 Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան  
 Դատավորներ՝ Գ. Խանդանյան  
 Հ. Ենոքյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
 և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
 մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
 Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
 Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
 Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
 Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
 Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին  
 դռնբաց դատական նիստում, քննելով Արմեն Ստամբոլցյանի ներկայացուցիչ Կարո Ասատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.06.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ Երևան համայնքի (այսուհետ՝ Համայնք) դիմումի ընդդեմ Արմեն Ստամբոլցյանի՝ սնանկ ձանաչելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### **1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Համայնքը պահանջել է Արմեն Ստամբոլցյանին ձանաչել սնանկ:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ե. Ետյան) (այսուհետ՝ Դատարան) 24.11.2014 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.06.2016 թվականի որոշմամբ Արմեն Ստամբոլցյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 24.11.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմեն Ստամբոլցյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Համայնքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը:

#### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմա-*

նադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործի առկայության մասին Արմեն Ստամբուլյանը որևէ ձևով տեղեկացված չի եղել, չի ստացել որևէ ծանուցում, հետևաբար տեղյակ չի եղել կայացված դատական ակտի մասին և միայն իր ներկայացուցչի կողմից կատարված հարցման արդյունքում, այն է՝ 04.03.2016 թվականին ստանալով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից տրված միասնական տեղեկանքը, պարզել է, որ ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքում գտնվող, Արմեն Ստամբուլյանին համասեփականության իրավունքով պատկանող տան բաժնետնասի նկատմամբ կիրառված է արգելանք, ինչն էլ հիմք է հանդիսացել սույն գործի շրջանակներում 24.11.2014 թվականի վճռի մասին տեղեկանալու պահից անմիջապես հետո՝ 16.03.2016 թվականին ներկայացնելու վերաքննիչ բողոքը:

Բացի այդ, սնանկության դիմումի հիմքում Համայնքը դրել է Արմեն Ստամբուլյանի կողմից Երևանի Այվազովսկու փողոցի թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ օրենքով սահմանված գույքահարկի գծով պարտավորությունները չկատարելու՝ գույքահարկը չվճարելու փաստը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Արմեն Ստամբուլյանին սնանկ ճանաչելու վճռի կայացման պահին վերջինիս Երևանի Այվազովսկու փողոցի թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատերը չի եղել, հետևաբար գույքահարկ վճարելու պարտավորություն չի ունեցել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.06.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ դիմումը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պայրասխանի հիմնավորումները**

Թեև Արմեն Ստամբուլյանի ներկայացուցիչը վճռաբեկ բողոքում նշել է, որ հարկման օբյեկտ հանդիսացող Երևանի Այվազովսկու փողոցի թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը և հողամասը 24.09.2014 թվականի թիվ 1737 հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված գույքի առուվաճառքի պայմանագրի հիմքով օտարվել են, այնուհանդերձ, 24.09.2014 թվականի թիվ 1737 հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված գույքի առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում չի իրականացվել, այսինքն՝ հարկման օբյեկտ հանդիսացող անշարժ գույքի և հողամասի սեփականատերը մինչ օրս Արմեն Ստամբուլյանն է:

Ավելին, 03.06.2016 թվականին Արմեն Ստամբուլյանի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Սողոմոնյանը ՀՀ վարչական դատարան է ներկայացրել հայցադիմում՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության «05.05.2014 թվականի կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդ նշանակելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ 24.09.2014 թվականի թիվ 1737 հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը ՀՀ վարչական դատարանի 09.06.2016 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ: Գործի քննությամբ պարզվել է, որ վերադատության կարգով ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ապահովող ծառայության 13.03.2015 թվականի որոշմամբ վերացվել է «05.05.2014 թվականի կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդ նշանակելու մասին» որոշումը, և աճուրդով հաղթող ճանաչված «Էդշին» ՍՊԸ-ին է վերադարձվել Երևանի Այվազովսկու փողոցի թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքի և հողամասի համար վճարված 85.729.994 ՀՀ դրամը: Արդյունքում ՀՀ վարչական դատարանի 05.08.2016 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճվել է:

### 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Համայնքի Էրեբունի վարչական շրջանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ս. Սահակյանը 02.09.2014 թվականին դիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Արմեն Ստամբոլցյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին **(հատոր 1-ին, գ.թ. 4-11)**:

2) Դատարանը, պարզելով, որ 03.09.2014 թվականին պարտապան Արմեն Ստամբոլցյանին ուղարկված ծրարը հետևյալ փաստաթղթերով՝ սնանկության դիմում, դիմումին կից փաստաթղթերի պատճեններ, դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հետ է վերադարձվել դատարան, հիմք ընդունելով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածի 1-ին մասը, 17.09.2014 թվականի որոշմամբ Արմեն Ստամբոլցյանի և նրա գույքի նկատմամբ հայտարարել է հետախուզում: Միաժամանակ նույն օրը տրվել է կատարողական թերթ **(հատոր 1-ին, գ.թ. 38-39)**:

3) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Էրեբունի և Նուբարաշեն բաժնի (այսուհետ՝ Ծառայություն) ավագ հարկադիր կատարող Ա. Բունիայանի՝ «Կատարողական վարույթն ավարտելու մասին» 15.10.2014 թվականի որոշման համաձայն՝ Արմեն Ստամբոլցյանի և նրա գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու վերաբերյալ 23.09.2014 թվականին հարուցված կատարողական վարույթն ավարտվել է: Միաժամանակ որոշման մեջ նշվել է, որ կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է եղել պարզել պարտապան Արմեն Ստամբոլցյանի գտնվելու վայրը, ինչպես նաև պարզվել է, որ պարտապան Արմեն Ստամբոլցյանը հանդիսանում է Երևանի Այվազովսկու փողոցի թիվ 14 հասցեի սեփականատեր և ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Թումանյան փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան համասեփականատեր **(հատոր 1-ին, գ.թ. 61)**:

4) Սույն գործով սնանկության ժամանակավոր կառավարիչ Հ. Սողոմոնյանի կողմից Դատարանին 31.10.2014 թվականին ներկայացված միջանկյալ հաշվետվության համաձայն՝ «...25.10.2014 թվականին գույքագրման նպատակով եղա պարտապան Ա. Ստամբոլցյանի հաշվառման հասցեում Երևանի Աղբյուր Սերոբի 2ա շենքի 39 բնակարանում: Վերոնշյալ հասցեում հաշվառված, բնակվող Արթուր Նատյանը բանավոր տեղեկացրեց, որ Ա. Ստամբոլցյանը բացակայում է հանրապետությունից, և ինձ տրամադրեց պարտապանի հեռախոսահամարը...» **(հատոր 1-ին, գ.թ. 68)**:

5) Պարտապան Արմեն Ստամբոլցյանին ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Թումանյան 1-ին նրբանցք, տուն թիվ 2 և Երևանի Վ. Համբարձումյան փողոցի 18-րդ շենքի թիվ 52 բնակարան հասցեներով Դատարանի կողմից 21.10.2014 և 03.11.2014 թվականներին ուղարկվել են դիմումի և դիմումին կից փաստաթղթերի պատճենները, դիմումը վարույթ ընդունելու և սնանկության ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշումը, սակայն նշված փաստաթղթերով ուղարկված ծրարները հետ են վերադարձվել **(հատոր 1-ին, գ.թ. 62-65, 70-72)**:

6) Դատարանը, հիմք ընդունելով, որ Արմեն Ստամբոլցյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, որի արդյունքում վերջինս չի հայտնաբերվել, և կատարողական վարույթն ավարտվել է, «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածի համաձայն, 21.10.2014 և 03.11.2014 թվականների գրություններով ծանուցում է ուղարկել պարտապանի վերջին հայտնի հաշվառման, բնակության (գտնվելու) վայրի՝ Երևանի Էրեբունի վարչական շրջանի և Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարներին՝ Արմեն Ստամբոլցյանի վերաբերյալ ծանուցումները ստանալու փաստը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն դատարան ուղարկելու համար **(հատոր 1-ին, գ.թ. 66, 73)**:

7) Դատարանի 03.11.2014 թվականի գրությամբ հարցում է կատարվել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ պարզելու պարտապան Արմեն Ստամբոլցյանի բնակության (հաշվառման) վայրի վերաբերյալ տվյալները **(հատոր 1-ին, գ.թ. 76-78)**:

8) Դատարանին հասցեագրված՝ Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 27.10.2014 թվականի N24/1-5/122/5102 գրությամբ հայտնվել է, որ Արմեն Ստամբոլցյանը

նի գտնվելու կամ բնակության վայրի վերաբերյալ տեղեկություններ առկա չեն (**հատոր 1-ին, գ.թ. 67**):

9) Դատարանին հասցեագրված՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության 10.11.2014 թվականի գրությամբ հայտնվել է, որ Արմեն Ստամբուլյանի՝ ծնված 15.11.1965 թվականին, հաշվառման վայրի հասցեն է՝ քաղաք Երևան, Արաբկիր վարչական շրջան, Վ. Համբարձումյան փողոց, 18-րդ շենք, բնակարան թիվ 52, հաշվառված է՝ 11.09.2008 թվականին, անձնագիր՝ AN0603418, տրված 06.08.2013 թվականին՝ 004-ի կողմից (**հատոր 1-ին, գ.թ. 79-80**):

10) Դատարանին հասցեագրված՝ Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի 11.11.2014 թվականի N25/01-4/4954 գրությամբ նշվել է, որ ուսումնասիրությունների ընթացքում Վ. Համբարձումյան 18-րդ շենքի թիվ 52 բնակարանի դուռը մշտապես եղել է փակ, և հնարավոր չի եղել դատական նիստի մասին ծանուցել Արմեն Ստամբուլյանին (**հատոր 1-ին, գ.թ. 82**):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա հարուցված վարույթի մասին պարտապանի պարշաձ ծանուցման հարցին, ինչպես նաև վերջինիս պարշաձ չձանուցելու դեպքում՝ կողմերի իրավահավասարության և մրցակցության դավալարական սկզբունքների խախտման իրավական խնդրին:*

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի 2-րդ

պարբերության համաձայն՝ այլ օրենքներում (**բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների**) պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Մանկության մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ սնանկության գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Մանկության մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադրված սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու հաջորդ օրը դատարանը պարտապանին է ուղարկում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը՝ կցելով դիմումի պատճենը: Եթե դատարանի որոշումն ստանալուն հաջորդող 15 օրվա ընթացքում պարտապանը գրավոր չի վիճարկում իր սնանկությունը, ապա 16-րդ օրը դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու մասին, եթե պարտապանն անվճարունակ է կամ առկա են նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերը:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ֆիզիկական անձ պարտապանը, փաստացի իր գործունեությունը դադարեցրած անհատ ձեռնարկատեր պարտապանը կամ իրավաբանական անձ պարտապանի ղեկավարը բացակայում են, և նրանց գտնվելու (բնակության) վայրը բացահայտել հնարավոր չէ (այսուհետ՝ բացակայող պարտապան), ապա դատարանն իր նախաձեռնությամբ հետախուզում է հայտարարում պարտապանի (պարտապանի ղեկավարի) և նրա գույքի, ինչպես նաև հաշվապահական և այլ փաստաթղթերի նկատմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բացակայող պարտապանի նկատմամբ հայտարարված հետախուզման վարույթի ավարտից հետո, եթե չի հայտնաբերվում պարտապանի որևէ ներկայացուցիչ, ապա դատարանը ծանուցում է բացակայող պարտապանին նրա վերջին հայտնի՝ գտնվելու կամ բնակության վայրի հասցեով: Նշված հասցեով ծանուցումը բավարար է գործի վարույթը շարունակելու համար:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ծանուցումն ուղարկելուց հետո՝ 9 օրվա ընթացքում, պարտապանը գրավոր չի վիճարկում իր սնանկությունը, ապա 10-րդ օրը դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում բացակայող պարտապանին սնանկ ճանաչելու մասին՝ նույն օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված հատկանիշների առկայության դեպքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սնանկության վարույթի մասին պարտապանին ծանուցելը պայմանավորված է սնանկության վարույթի առանձնահատկությամբ և նպատակ ունի ապահովելու սնանկ ճանաչվող պարտապանի մասնակցությունը սնանկության վարույթին՝ դրանով իսկ երաշխավորելով սնանկության վարույթի ընթացքում սնանկ ճանաչվող պարտապանի՝ օրենքով սահմանված իրավունքների լիարժեք իրականացումը (օրինակ՝ վիճարկելու սնանկության հիմքերը, ներկայացնելու անհրաժեշտ ապացույցներ և այլն): Նման անհրաժեշտությունը բխում է նաև դատավարությունում, այդ թվում՝ սնանկության վարույթի ողջ ընթացքում կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքները պահպանելու սահմանադրաիրավական և կոնվենցիոն դրույթներից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, *Վերգուշ Վարդանյանն ընդդեմ Եղիշ Թորոսյանի* թիվ 3-19(ՎԴ) քաղաքացիական գործով 01.02.2008 թվականի որոշմամբ անդրադառնալով դատավարությունում կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներ-

րին, ինչպես նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իրավական վերլուծությանը, արձանագրել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն դիրքորոշումը, որ «հավասարության» սկզբունքը՝ կողմերի միջև «արդար հավասարակշռության» իմաստով պահանջում է, որ յուրաքանչյուր կողմ ունենա ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի նվազ բարենպաստ վիճակում: Մրցակցային դատաքննության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ունենա գործում եղած կամ լրացուցիչ ներկայացված ապացույցների մասին տեղեկանալու և դրանց մասին մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն (տես, *Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի վճիռը, կետ 38*): Թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ուղղակիորեն նշված չէ, սակայն Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում (*Կոլոցցան ընդդեմ Իսպանիայի գործով 12.02.1985 թվականի վճիռ 28-րդ կետ*) արտահայտել է այն դիրքորոշումը, որ Պալամանավորվող պետությունները ոչ միայն պետք է ամրագրեն քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանության իրավունքը, այլև **կոնկրետ գործով պետք է ապահովեն** անձի կողմից այդ իրավունքի իրականացման իրական հնարավորությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ սնանկության վարույթի ընթացքում սնանկ ձանաչված պարտապանի նկատմամբ, ըստ էության, կիրառելի են որոշակի սահմանափակումներ (օրինակ՝ մորատորիումը և այլն), միաժամանակ հաշվի առնելով այն, որ սնանկության վարույթը կարող է հանգեցնել սնանկ ձանաչվող պարտապանի՝ քաղաքացիաիրավական շրջանառությունից դուրս գալուն, «Մսանկության մասին» ՀՀ օրենքով սահմանել է սնանկության վարույթի մասին պարտապանին ծանուցելու ընթացակարգը: Այսպես՝ հարկադրված սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու հաջորդ օրը դատարանը պարտապանին է ուղարկում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը՝ կցելով դիմումի պատճենը:

Օրենսդիրը միաժամանակ պարտապանի կողմից իր սնանկությունը չվիճարկելու դեպքերի համար սնանկ ձանաչելու հարցի լուծման համար նախատեսել է հետևյալ ընթացակարգերը.

ա/ **ընդհանուր կարգը, երբ պարտապանը, ստանալով իր սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը**, դրան հաջորդող 15 օրվա ընթացքում գրավոր չի վիճարկում իր սնանկությունը, ապա 16-րդ օրը դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ձանաչելու մասին, եթե պարտապանն անվճարունակ է կամ առկա են «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերը,

բ/ **պարզեցված կարգը**, երբ պարտապանը բացակայում է, և նրա գտնվելու (բնակության) վայրը բացահայտել հնարավոր չէ (այսուհետ՝ բացակայող պարտապան), ապա դատարանն իր նախաձեռնությամբ հետախուզում է հայտարարում պարտապանի (պարտապանի ղեկավարի) և նրա գույքի, ինչպես նաև հաշվապահական և այլ փաստաթղթերի նկատմամբ: Ընդ որում, բացակայող պարտապանի նկատմամբ հայտարարված հետախուզման վարույթի ավարտից հետո, եթե չի հայտնաբերվում պարտապանի որևէ ներկայացուցիչ, ապա դատարանը ծանուցում է բացակայող պարտապանին նրա վերջին հայտնի՝ գտնվելու կամ բնակության վայրի հասցեով: Հատկանշական է, որ դատավորը 10-րդ օրը, առանց դատական նիստ հրավիրելու, վճիռ է կայացնում բացակայող պարտապանին սնանկ ձանաչելու մասին՝ «Մսանկության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հատկանիշների առկայության դեպքում, քանի որ նշված հասցեով ծանուցումը բավարար է գործի վարույթը շարունակելու համար, եթե ծանուցումն ուղարկելուց հետո՝ 9 օրվա ընթացքում, պարտապանը գրավոր չի վիճարկում իր սնանկությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Համայնքը, դիմելով դատարան, պահանջել է Արմեն Ստամբոլցյանին ձանաչել սնանկ: Դատարանը, պարզելով, որ 03.09.2014 թվականին

պարտապան Արմեն Ստամբոլցյանին ուղարկված ծրարը հետևյալ փաստաթղթերով՝ սնանկության դիմում, դիմումին կից փաստաթղթերի պատճեններ, դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հետ են վերադարձվել դատարան, հինք ընդունելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածի 1-ին մասը, «Պարտապանի և նրա գույքի հետախուզում հայտարարելու մասին» 17.09.2014 թվականի որոշմամբ Արմեն Ստամբոլցյանի և նրա գույքի նկատմամբ հայտարարել է հետախուզում: Միաժամանակ նույն օրը տրվել է կատարողական թերթ: Ծառայության «Կատարողական վարույթն ավարտելու մասին» 15.10.2014 թվականի որոշմամբ Արմեն Ստամբոլցյանի և նրա գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու վերաբերյալ 23.09.2014 թվականին հարուցված կատարողական վարույթն ավարտվել է: Որոշմամբ նշվել է, որ կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է եղել պարզել պարտապան Արմեն Ստամբոլցյանի գտնվելու վայրը, ինչպես նաև պարզվել է, որ պարտապան Արմեն Ստամբոլցյանը հանդիսանում է Երևանի Այվազովսկու փողոցի թիվ 14 հասցեի սեփականատեր և ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Թումանյան փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան համասեփականատեր:

Համաձայն սույն գործում առկա՝ սնանկության ժամանակավոր կառավարիչ Հ. Սողոմոնյանի կողմից 31.10.2014 թվականին Դատարան ներկայացված միջանկյալ հաշվետվության՝ «...**25.10.2014 թվականին գույքագրման նպատակով եղա պարտապան Ա. Ստամբոլցյանի հաշվառման հասցեում՝ ք. Երևան, Աղբյուր Սերթի 2ա շենքի 39 բնակարանում: Վերոնշյալ հասցեում հաշվառված, բնակվող Արթուր Նատյանը բանավոր տեղեկացրեց, որ Ա. Ստամբոլցյանը բացակայում է հանրապետությունից և ինձ տրամադրեց պարտապանի հեռախոսահամարը...**»: Հետագայում Դատարանի կողմից 21.10.2014 և 03.11.2014 թվականներին պարտապան Արմեն Ստամբոլցյանին ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Թումանյան 1-ին նրբանցք, տուն թիվ 2 և Երևանի Վ. Համբարձումյան փողոցի 18-րդ շենք, բնակարան թիվ 52 հասցեներով ուղարկվել են սնանկության դիմումի և դիմումին կից փաստաթղթերի պատճենները, դիմումը վարույթ ընդունելու և սնանկության ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշումը, սակայն նշված փաստաթղթերով ուղարկված ծրարները հետ են վերադարձվել:

Դատարանը, կիրառելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածը և դիմումը բավարարելով, պատճառաբանել է, որ «պարտապանին նրա վերջին հայտնի բնակության վայրերի հասցեներով ծանուցումներն ուղարկելուց հետո 9 օրվա ընթացքում Արմեն Ստամբոլցյանը չի վիճարկել իր սնանկությունը, իսկ դատարան ներկայացված ապացույցներից հետևում է, որ առկա են «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմքերն ու հետևանքները, հետևաբար Արմեն Գուրգենի Ստամբոլցյանին պետք է ձանաչել սնանկ»:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, արձանագրել է, որ Դատարանը ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները՝ պարտապանի ծանուցումն ապահովելու վերաբերյալ, և այն պարագայում, երբ անհնարին է եղել պարզել պարտապանի գտնվելու վայրը, Դատարանը, «իրավացիորեն առաջնորդվելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածի 3-րդ կետով, վճիռ է կայացրել պարտապանին սնանկ ձանաչելու մասին»:

Մինչդեռ վերը նշված դիրքորոշումների լրյսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանն Արմեն Ստամբոլցյանի սնանկության վարույթի ընթացքում, անցում կատարելով սնանկ ձանաչելու հարցի լուծման պարզեցված ընթացակարգին, 31.10.2014 թվականին սույն գործով սնանկության ժամանակավոր կառավարիչ Հ. Սողոմոնյանի կողմից ստացել է միջանկյալ հաշվետվություն, որում առկա է եղել տեղեկություն՝ Արմեն Ստամբոլցյանի գտնվելու կամ բնակության վայրի վերաբերյալ, որպիսի պայմաններում Դատարանը, ելնելով յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքի ապահովման երաշխիքներից, պետք է միջոցներ ձեռնարկեր սնանկության դիմումի մասին ծանուցումն իրականացնելու նաև համաձայն հաշվետվության մեջ նշված տեղեկության:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավարության մաս-



նակից պարտապանը սույն գործի առկայության մասին որևէ ձևով տեղեկացված չի եղել, չի ստացել որևէ ծանուցում, հետևաբար տեղյակ չի եղել կայացված դատական ակտի մասին, ինչի արդյունքում հնարավորություն չի ունեցել իրականացնելու սնանկության վարույթում իրեն վերապահված իրավունքները:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, չապահովելով սնանկ ճանաչված պարտապան Արմեն Ստամբոլցյանի սնանկության վարույթի վերաբերյալ իրապես տեղեկացված լինելու իրավունքը, սահմանափակել են վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը:

*Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում, ինչպես նաև վճռաբեկ բողոքի պատասխանում բերված նյութական իրավունքի նորմերի (տվյալ դեպքում սնանկության հիմքերի) խախտման վերաբերյալ փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը սնանկ ճանաչված պարտապանի դատավարական իրավունքի նման եղանակով սահմանափակման պայմաններում հնարավոր չի համարում դրանց անդրադառնալ:*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ չնայած այն հանգամանքին, որ սնանկության վարույթի ընթացքում Ծառայության ավագ հարակադիր կատարող Ա. Բունիաթյանի կատարողական գործողությունների ընթացքում պարզվել է, որ Երևանի Այվագովսկու փողոցի թիվ 14 հասցեի սեփականատեր է հանդիսանում Արմեն Ստամբոլցյանը, այնուամենայնիվ, սույն գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերոնշյալ հասցեի անշարժ գույքը հանդիսացել է որպես ձավարեղենի արտադրամաս, հետևաբար այն չէր կարող հանդիսանալ որպես պարտապանի հաշվառման կամ բնակության վայր:

Միաժամանակ սույն որոշման իրավական դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև գործի քննության ընթացքում ընդդատության կանոնների պահպանմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ հայցը հարուցվում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության, եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ պատասխանող Արմեն Ստամբոլցյանի հաշվառման հասցեն Երևանի Վ.Համբարձումյան փողոցի 18-րդ շենքի թիվ 52 բնակարանն է, որը գտնվում է Արաբկիր վարչական շրջանի տարածքում, հետևաբար հայցը ենթակա էր հարուցման Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Ավելին՝ Դատարանը, Արմեն Ստամբոլցյանի սնանկության վարույթի ընթացքում անցում կատարելով սնանկ ճանաչելու հարցի լուծման պարզեցված ընթացակարգի, 31.10.2014 թվականին սույն գործով սնանկության ժամանակավոր կառավարիչ Հ. Սողոմոնյանի կողմից ստացել է միջանկյալ հաշվետվություն, որում առկա է եղել տեղեկություն՝ Արմեն Ստամբոլցյանի գտնվելու կամ բնակության վայրի վերաբերյալ, որպիսի վայրը ևս գտնվում է Արաբկիր վարչական շրջանի տարածքում:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վերաքննիչ դատարանի 10.06.2016 թվականի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու,

ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.06.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազրոյություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազրոյություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0078/04/15  
 դատարանի որոշում 2017թ.  
 Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0078/04/15  
 Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան  
 Դատավորներ՝ Գ. Խանդանյան  
 Հ. Ենոքյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) և նրա սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.06.2016 թվականի որոշման դեմ՝ ըստդիմումի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կազմակերպության՝ սնանկ ձանաչելու պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությանը սնանկ ձանաչել:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.12.2015 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 24.02.2016 թվականի որոշմամբ մորատորիում չտարածելու մասին «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ծանուցումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.06.2016 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է և Դատարանի 24.02.2016 թվականի որոշումը՝ մորատորիում չտարածելու մասին Բանկի ծանուցումը մերժելու վերաբերյալ, վերացվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը և սնանկության գործով կառավարիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բանկը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պարզապես չեն հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սնանկության գործերով ձևավորված դատական պրակտիկան վկայում է, որ դատարանը որոշում է կայացնում մորատորիում չտարածելու ծանուցում ստանալու վերաբերյալ, այսինքն՝ Դատարանը, ստանալով մորատորիումի չտարածման մասին ծանուցումը, որոշում է կայացնում այն մերժելու կամ բավարարելու վերաբերյալ:

Բացի այդ, ծանուցման վերաբերյալ Դատարանի կողմից համապատասխան որոշում կայացնելու ինստիտուտը սահմանվել է նաև ներկայիս խմբագրությամբ գործող «Մասնկության մասին» ՀՀ օրենքի համապատասխան կարգավորումներում: Այսինքն՝ արդեն իսկ օրենսդրական մակարդակով ամրագրված է մորատորիումի չտարածման մասին ստացած ծանուցման առնչությամբ դատարանի լիազորությունները՝ հաշվի առնելով նախկինում դատական պրակտիկայով ձևավորված մոտեցումները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 16.06.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.02.2016 թվականի որոշմանը:

### **2.1. Բանկի վճռաբեկ բողոքի պարասխանի փաստարկները**

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենսդրությունը դատարանին մորատորիում չտարածելու մասին ծանուցման կապակցությամբ որոշում կայացնելու լիազորություն չի վերապահել, որպիսի պայմաններում վճռաբեկ բողոքում բերված փաստարկները՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտության վերաբերյալ, անհիմն են և չեն կարող ընդունելի համարվել: Ավելին, «Մասնկության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում վճռաբեկ բողոքում նշված հարցի կապակցությամբ օրենքի միատեսակ կիրառման ապահովման խնդիր ընդհանրապես չի կարող ծագել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.12.2015 թվականի թիվ ԵԿԴ/0078/04/15 վճռով Ընկերության դիմումը՝ Կազմակերպությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին, բավարարվել է, և Կազմակերպությունը ճանաչվել է սնանկ (**հավելված հատոր 1-ին, գ.թ. 1-11**):

2) Արբիտրաժային տրիբունալի վճիռը որպես պարտադիր ճանաչելու և արբիտրաժային տրիբունալի վճիռի հիման վրա կատարողական թերթ տրամադրելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 09.11.2015 թվականի թիվ ԵԿԴ/1152/17/15 որոշմամբ ճանաչվել է ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային տրիբունալի 17.07.2015 թվականի թիվ 07-10/04/15 վճիռը և Բանկին տրամադրվել է կատարողական թերթ: ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային տրիբունալի 17.07.2015 թվականի թիվ 07-10/04/15 վճիռի համաձայն՝ Կազմակերպությունից հոգուտ Բանկի բռնագանձվել է 7.621.333,7 ԱՄՆ դոլար և բռնագանձումը տարածվել է Երևանի Արգիշտի փողոցի թիվ 11/7, 11/11, 11/13, Երևանի Արգիշտի փողոցի 11/4 շենքի թիվ 5, Երևանի Արգիշտի փողոցի 7/4, Երևանի Արգիշտի փողոցի 7/13, 7/6 շենքի թիվ 93, 7/4 շինություն 144, Երևանի Արգիշտի փողոցի 7/6 շինություն 190, Երևանի Արգիշտի փողոցի 7/6 շինություն 191, Երևանի Արգիշտի փողոցի 11/4 շենքի թիվ 2 շինություն, Երևանի Փ.

Բուզանդի փողոցի 7 շենքի թիվ 40, Երևանի Ծարավ-Աղբյուրի փողոցի 55/5 շենքի թիվ 326, Երևանի Ծարավ-Աղբյուրի փողոցի 55/5 շենքի թիվ 327, Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի Կ. Ուլնեցու փողոցի թիվ 32/13, Երևանի Հանրապետության փողոցի նրբանցքի թիվ 13/2, Երևանի Խանջյան փողոցի նրբանցք 8/1, Երևանի Ֆիրդուսի փողոցի տուն թիվ 13/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերի նկատմամբ **(հավելված հատոր 1-ին, գ.թ. 16-36):**

3) Բանկը 29.12.2015 թվականին Դատարանին ծանուցել է ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային տրիբունալի 17.07.2015 թվականի թիվ 07-10/04/15 վճռով կատարման ենթակա, գրավով ապահովված պարտավորությունների նկատմամբ մորատորիում չտարածելու մասին և խնդրել է վերացնել գրավի առարկաների նկատմամբ կիրառված արգելանքները **(հավելված հատոր 1-ին, գ.թ. 12-15):**

4) Կազմակերպության սնանկության գործով կառավարիչը 29.01.2016 թվականին առարկություն է ներկայացրել դատարան՝ Բանկի կողմից ներկայացված ծանուցման վերաբերյալ, այն պատճառաբանությամբ, որ սնանկության գործընթացում պարզվել է, որ վերոնշյալ ծանուցմամբ ներկայացված գրավադրված գույքերի վերաբերյալ առկա են երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնումներ, միաժամանակ դատարաններում վիճարկվում են կնքված պայմանագրերը, առկա են հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման պայմանագրեր **(հավելված հատոր 1-ին, գ.թ. 37-41):**

5) Դատարանի «Միրատորիում չտարածելու մասին ծանուցումը մերժելու վերաբերյալ» 24.02.2016 թվականի որոշմամբ Բանկի միջնորդությունը՝ մորատորիում չտարածելու մասին, մերժվել է **(հավելված հատոր 1-ին, գ.թ. 77-86):**

6) Բանկի կողմից Դատարանի «Միրատորիում չտարածելու մասին ծանուցումը մերժելու վերաբերյալ» 24.02.2016 թվականի որոշման դեմ 18.03.2016 թվականի վերաքննիչ բողոքը բերվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի, 470-րդ հոդվածի 5-րդ կետի, 504-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հիմքերով այն հիմնավորումներով, որ դատարանն իրավասու չէր որոշում կայացնել, առկա չէին ծանուցումը մերժելու հիմքեր, գրավի առարկաները ծանրաբեռնված չեն երրորդ անձանց գրավի իրավունքներով և այլ հիմնավորումներով **(հատոր 2-րդ, գ.թ. 7-12):**

**4. Վճռաբեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ նախկինում գործող և ներկայիս իրավակարգավորումների պայմաններում սնանկության վարույթում ապահովված պարտատիրոջ կողմից մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելու դեպքում այդ կապակցությամբ որոշում կայացնելու անհրաժեշտության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք մինչև «Մնանկության մասին» ՀՀ օրենքում 17.06.2016 թվականի ՀՕ-105-Ն օրենքով փոփոխություններ և լրացումներ կատարելն ապահովված պարտատիրոջ կողմից մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելու դեպքում դատարանն իրավասու էր այդ հարցի վերաբերյալ որոշում կայացնել:*

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման բովանդակությամբ իրավադրույթներ են սահմանված նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում և 63-րդ հոդվածի 1-ին մասում:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...) ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

Նույն հոդվածի՝ իրավահաբերության ծագման պահին գործող խմբագրության 3-րդ մասի համաձայն՝ ապահովված պահանջների բավարարման առանձնահատկությունները, ինչպես նաև ապահովված պահանջների բավարարման համար պարտապանի գույքի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման առանձնահատկությունները կարգավորվում են նույն օրենքի 39-րդ և 43-րդ հոդվածներով:

Իրավահաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ծանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ կարճվում է սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով այն քաղաքացիական գործի վարույթը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով:

Իրավահաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի համաձայն՝ մորատորիումի գործողությունը չի տարածվում՝ գրավով ապահովված պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալու կամ նրանց՝ գրավով ապահովված պահանջների բավարարման համար ցանկացած գործարքի կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա, եթե ապահովված պարտատերը մորատորիում չտարածելու մասին ծանուցել է դատարանին:

Իրավահաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովված են համարվում գրավով (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող գույքի գրավով), երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պահանջները: Ապահովված պարտատերեր են համարվում ապահովված պահանջներ ունեցող անձինք՝ այդ պահանջների մասով:

Իրավահաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մասնկության մա-

սին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատերը չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում, և նրա ապահովված պահանջները բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար գրավադրված գույքի իրացման (այդ թվում՝ գործող օրենսդրությամբ սահմանված՝ առանց դատարան դիմելու) հաշվին: Այդ դեպքում պարտատերը, անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ: Ի ապահովումն պարտապանի՝ նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության համար գրավադրված գույքը (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող) չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում են ընդգրկվում նույն օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը «ՎՏԲ-Հայասրան Բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Կալաչ» ՍՊԸ-ի և Սիլվա Համբարձումյանի թիվ ԵԿԴ/0469/02/14 քաղաքացիական գործով 17.07.2015 թվականին կայացրած որոշմամբ, անդրադառնալով իրավահարաբերության ծագման պահին գործող վերը նշված հոդվածների վերլուծությանը, արձանագրել է, որ գրավով ապահովված պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության կատարման համար գրավադրված գույքը չի ընդգրկվում սնանկ ձանաչված պարտապանի գույքի կազմում և ապահովված պարտատերը կարող է այդ գույքից իր պահանջների բավարարում ստանալ սնանկության վարույթից դուրս ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, սակայն միայն այն դեպքում, երբ տեղեկանալով պարտապանի սնանկ ձանաչվելու վերաբերյալ՝ ապահովված պարտատերը ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու մասին:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը վկայակոչված կարգավորումների վերաբերյալ մեկ այլ որոշմամբ նշել է, որ օրենսդիրը պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջ համար նախատեսել է իր բավարարումը ստանալու երկու այլընտրանքային եղանակ՝ սնանկության վարույթից դուրս և սնանկության վարույթի շրջանակներում՝ նշված երկու եղանակներից որևէ մեկի ընտրության հնարավորությունը թողնելով պարտատիրոջ հայեցողությանը: Այսպես, եթե գրավով ապահովված պարտավորության պարտատերն ընտրում է սնանկության գործով վարույթը շրջանցելու միջոցով իր պահանջները բավարարելու եղանակը, ապա վերջինս բավարարում կարող է ստանալ բացառապես գրավադրված գույքի հաշվին, և անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ: Ընդ որում այն դեպքում, երբ գրավով ապահովված պահանջի պարտատերն օգտվում է իր պահանջի բավարարումը սնանկության վարույթի շրջանակներից դուրս ստանալու՝ օրենքով իրեն վերապահված իրավունքից, վերջինս հնարավորություն ունի գրավադրված գույքի վրա բռնազանձում տարածել և իրացնել այն ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ գրավադրված գույքի իրացման կանոններին համապատասխան: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ օրենսդրի կողմից նաևն փորձերով կարգավորում սահմանելու նպատակն է սնանկության վարույթի առկայության պայմաններում երաշխավորել գրավով ապահովված պարտատերերի և մյուս պարտավորելի իրավունքների և օրինական շահերի միջև ուղջամիտ հավասարակշռությունը (տե՛ս, «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն ընդդեմ «ԱԼՏԷ» ՓԲԸ-ի և մյուսների թիվ

ԵԿԴ/1873/02/14 **քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը**։

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մանկության մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավակարգավորումների՝ ապահովված պարտատերը, ծանուցելով դատարանին ապահովված իրավունքի առարկայի նկատմամբ մորատորիումի գործողությունը չտարածելու մասին, ակնկալում էր նյութական և դատավարական առումով որոշակի իրավական հետևանքների առաջացում, այն է՝ ապահովված իրավունքի առարկան սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմից դուրս բերում, դրա նկատմամբ կիրառված սահմանափակումների վերացում և սնանկության վարույթից դուրս արտադատական կամ դատական կարգով դրա իրացում։

Ընդ որում, ապահովված իրավունքի առարկան սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմից դուրս բերումը և դրա իրացումը որոշակի դեպքերում կարող էր առաջ բերել ինչպես պարտապանի գույքային զանգվածի փոփոխություն, այնպես էլ շոշափել երրորդ անձանց իրավունքները (օրինակ՝ այն դեպքում, երբ օրենքով սահմանված կարգով գրավի առարկան հաջորդող գրավի առարկա է)։ Այսինքն՝ նման դեպքերում դատարան ներկայացված՝ մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցումն իրավական հետևանքներ կարող էր առաջացնել նաև երրորդ անձանց համար, որպիսի պարագայում վերջիններս ձեռք էին բերում իրավական շահագրգռվածություն մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցմամբ պայմանավորված հետևանքների նկատմամբ, որոնք կարող էին շոշափել վերջիններիս՝ Կոնվենցիայով և դրան կից թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված՝ համապատասխանաբար արդար դատաքննության և անձի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքները։ Հետևաբար վերջիններս իրավաչափորեն ակնկալում էին դատարանի կողմից որոշման կայացում, որի հետ համաձայն չլինելու պարագայում կունենային այն բողոքարկելու հնարավորություն։

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մանկության մասին» ՀՀ օրենքի նշված իրավակարգավորումների պայմաններում յուրաքանչյուր դեպքում առաջանում էր մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցման առնչությամբ դատական ակտ կայացնելու իրավական անհրաժեշտություն, քանի որ նախ՝ այդպիսի ծանուցմամբ անձն ակնկալում էր որոշակի իրավական և փաստական հետևանքների առաջացում, որոնք ինքնին, միայն դատարանին ծանուցելու փաստի ուժով չէին կարող առաջանալ, քանի որ առկա էր դրանց իրավաչափության գնահատման և արդյունքում մերժման կամ բավարարման մասին որոշման կայացման անհրաժեշտություն։ Եվ երկրորդ՝ սնանկության վարույթի առանձնահատկությամբ պայմանավորված, մորատորիումի գործողությունը չտարածելու մասին դատարանին ծանուցած պարտատերն ակնկալում էր նաև ապահովված առարկայի նկատմամբ կիրառված սահմանափակումների վերացում, եթե այդպիսիք կիրառվել են, որն էլ իր հերթին կրկին ենթադրում է դատական ակտի կայացում՝ որոշման ձևով։

Բացի այդ, նշված եզրահանգումն առավել կարևորվում է այն պարագայում, երբ մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցմամբ ակնկալվող հետևանքները շոշափում էին երրորդ անձանց իրավունքները, քանի որ այդ դեպքում առաջանում էր տարբեր անձանց իրավունքների և իրավական շահերի միջև հավասարակշռության ապահովման խնդիր, որն առանց դատական ակտի կայացման հնարավոր չէ իրականացնել։ Այդ իսկ պատճառով օրենսդիրը սահմանել է մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցումը դատարանին ներկայացնելու պարտականություն։ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված կարգավորումը չէր կարող ինքնանպատակ լինել և դատարանի դերն այդ հարցում չէր կարող սահմանափակվել միայն ծանուցումն ի գիտություն ընդունելով, այլ դատարանը պետք է մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցման վերաբերյալ կայացնել դատական ակտ՝ ապահովելով անձի



արդար դատաքննության իրավունքի իրացումը: Այսինքն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Մանակության մասին» ՀՀ օրենքի հիման վրա դատարան ներկայացված մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցման իրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այն օրենքից բխող հետևանքներն առաջացնելու պահանջով դատարան ներկայացված միջնորդություն է, որի ուսումնասիրության արդունքում դատարանը պետք է կայացնէր համապատասխան որոշում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), անդրադառնալով Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքին, իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով «դատարան» եզրույթն ինքնավար նշանակություն ունի, և դրան բնորոշ հիմնական հատկություններից է պարտադիր որոշում կայացնելու հնարավորությունը (*յոնս, Benthem v. The Netherlands գործով Եվրոպական դատարանի 23.10.1985 թվականի վճիռը, կետ 40*): Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով դատարանը պետք է հնարավորություն ունենա ապահովելու նույն հոդվածով նախատեսված նյութաիրավական և ընթացակարգային բոլոր երաշխիքները: Ընդ որում, դատարանը պետք է ունենա ներկայացված հայցին վերաբերող բոլոր փաստական և իրավական խնդիրների հետ կապված պարտադիր որոշում կայացնելու հնարավորություն (*յոնս, Rolf Gustafson v. Sweden գործով Եվրոպական դատարանի 01.07.1997 թվականի վճիռը, կետեր 45,46*):

Վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ապահովված պարտատիրոջ՝ մորատորիումի գործողությունը չտարածելու վերաբերյալ ծանուցումը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ դատարանի կողմից համապատասխան դատական ակտ կայացնելու լիազորությունը բխում է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքի էությունից, ինչպես նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից, այն է՝ անձը դատարանի առջև իր կողմից բարձրացրած յուրաքանչյուր հարցի վերաբերյալ պետք է ունենա որոշակի հաստատուն որոշում ստանալու իրավունք կապված իր հարցի լուծման հետ, որն էլ իր հերթին սերտորեն կապված է յուրաքանչյուր անձի՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքի իրականացման հետ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ 17.06.2016 թվականին ընդունված ՀՕ-105 օրենքով, որն ուժի մեջ է մտել 23.07.2016 թվականին, «Մանակության մասին» ՀՀ օրենքը լրացվել է նոր՝ 39.1-րդ (ապահովված իրավունքի առարկայի իրացման մասին դիմումը) և 39.2-րդ (ապահովված իրավունքի առարկայի իրացման և ապահովված պահանջի չափը հաստատելու մասին դիմումի քննության կարգը) հոդվածներով:

Այսպես՝ «Մանակության մասին» ՀՀ օրենքի 39.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն պարտատերը, որ պարտապանի նկատմամբ ունի ապահովված իրավունքներ, և նրանց միջև օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրով առկա են այդ իրավունքների արտադատական իրականացման պայմաններ, կարող է մինչև պարտատերերի պահանջների ցուցակը դատարանի կողմից հաստատվելը դիմում ներկայացնել դատարան՝ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքների առարկայի արտադատական կամ սույն օրենքով նախատեսված կարգով իրացում թույլատրելու խնդրանքով:

«Մանակության մասին» ՀՀ օրենքի 39.2-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատարանը, ստանալով ապահովված պարտատիրոջ դիմումը, դիմումի օրինակը երկու աշխատանքային օրվա ընթացքում հանձնում է պարտապանին և կառավարչին: Պարտապանը և կառավարիչը պարտավոր են դիմումի օրինակը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, դիմումի կապակցությամբ գրավոր դիրքորոշում հայտնել:

2. Եթե պարտապանը կամ կառավարիչը սահմանված ժամկետում դիրքորոշում չեն ներկայացնում կամ ներկայացված դիրքորոշմամբ չեն առարկում դիմումին, ապա դա-

տարանը դիմումը ստանալուց հետո՝ 11-րդ օրը, կայացնում է որոշում ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքների առարկայի իրացում թույլատրելու մասին (...):

Վկայակոչված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն ուղղակիորեն ամրագրել է դատարանի լիազորությունն ապահովված իրավունքի առարկայի վրա մորատորիումի գործողությունը չտարածելու վերաբերյալ դատարանի կողմից համապատասխան դատական ակտի՝ որոշման կայացման մասին այն դեպքում, երբ ապահովված իրավունք ունեցող պարտատերը դիմել է դատարանին:

Այսինքն՝ եթե նախկին իրավակարգավորման պայմաններում մորատորում չտարածելու ծանուցման վերաբերյալ դատական ակտ կայացնելու դատարանի լիազորությունն ուղղակիորեն ամրագրված չէր, սակայն բխում էր ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքի էությունից, և որին համահունչ էլ ընթացել էր դատական պրակտիկան, ապա արդեն գործող իրավակարգավորման պայմաններում նման լիազորությունն ուղղակիորեն ամրագրված է գործող օրենսդրությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.12.2015 թվականի թիվ ԵԿԳ/0078/04/15 վճռով Կազմակերպությունը ճանաչվել է սնանկ: Բանկը Դատարանին ծանուցել է ՀՀՄ ֆինանսական արբիտրաժային տրիբունալի 17.07.2015 թվականի թիվ 07-10/04/15 վճռով կատարման ենթակա, գրավով ապահովված պարտավորությունների նկատմամբ մորատորիում չտարածելու մասին և խնդրել է վերացնել գրավի առարկաների նկատմամբ կիրառված արգելանքները: Կազմակերպության սնանկության գործով կառավարիչը առարկություն է ներկայացրել դատարան Բանկի կողմից ծանուցման վերաբերյալ այն պատճառաբանությամբ, որ սնանկության գործընթացում պարզվել է, որ վերոնշյալ ծանուցմամբ ներկայացված գրավադրված գույքերի վերաբերյալ առկա են երրորդ անձանց իրավունքների ծանրաբեռնումներ, միաժամանակ դատարաններում վիճարկվում են կնքված պայմանագրերը, առկա են հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման պայմանագրեր:

Դատարանը, մերժելով Բանկի ծանուցումը, պատճառաբանել է, որ դրա բավարարումը հիմնավոր չէ, քանի որ պարտապանի այն պարտավորությունները, որոնք ընկած են այդ ծանուցման հիմքում, վիճարկվում են դատարանի մեկ այլ վարույթում: Բացի այդ, Դատարանն արձանագրել է, որ Բանկի կողմից ներկայացված պարտավորություններն ապահովված են թվարկված գույքի նկատմամբ գրավի իրավունքով, մինչդեռ տվյալ գույքերի նկատմամբ առկա է նաև երրորդ անձանց՝ օրենքի ուժով ծագած գրավի իրավունքը:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի որոշումը վերացնելով, պատճառաբանել է, որ Դատարանի կողմից կայացվել է ոչ հիմնավոր որոշում, քանի որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ և 43-րդ հոդվածների կանոնակարգումների համաձայն, Բանկը տվյալ դեպքում օրենքով սահմանված կարգով և համապատասխան օրինական հիմքերով Դատարանին ծանուցել է՝ խնդրելով վերացնել սույն գործի շրջանակներում Կազմակերպությանը պատկանող, ծանուցման մեջ նշված գրավի առարկաների նկատմամբ կիրառված արգելանքները, սակայն Դատարանն անհիմն մերժել է Բանկի ծանուցումը՝ **չունենալով նման դատական ակտ կայացնելու հիմքեր:**

Ընդ որում, Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ առկա չեն մորատորիում չտարածելու մասին ծանուցման կապակցությամբ **դատական ակտ կայացնելու հիմքեր**, որևէ անդրադարձ չի կատարել վերաքննիչ բողոքի՝ մյուս հիմքերին և այդ կապակցությամբ բերված հիմնավորումներին:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ հարկ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել,

որ Բանկը, հիմք ընդունելով իրավահարաբերության ծագման պահին գործող «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը և ծանուցելով Դատարանին ապահովված իրավունքի առարկաների նկատմամբ մորատորիումի գործողությունը չտարածելու մասին, ակնկալել է նյութական և դատավարական որոշակի իրավական հետևանքների առաջացում, այն է՝ ծանուցման հիմքում ընկած, գրավադրված գույքերի վրա մորատորիումի գործողությունը չտարածելու, այդ գույքերը մասնկության վարույթից դուրս բերելու և դրանք իրացնելու նպատակ, որպիսի պայմաններում նշված հարցի լուծումը կարող էր կայացվել դատական ակտով՝ ծանուցումը բավարարելու կամ մերժելու որոշմամբ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, ստանալով մորատորիումի չտարածման մասին ծանուցումը, իրավասու էր կայացնել որոշում՝ ծանուցումը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ, ինչն անտեսվել և սխալ է մեկնաբանվել Վերաքննիչ դատարանի կողմից:

*Նշված պարզառարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միաժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը, ըստ էության, չի անդրադարձել վերաքննիչ բողոքի նյութի հիմքերին և հիմնավորումներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքի հիմքերը քննության առնելու և դրանց հիմնավորվածությունը ստուգելու նպատակով գործը՝ Բանկի՝ մորատորիում չտարածելու վերաբերյալ ծանուցման մասով, անհրաժեշտ է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.06.2016 թվականի որոշումը և գործը՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի՝ մորատորիում չտարածելու ծանուցման մասով, ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Բաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/0043/04/13  
դատարանի որոշում 2017թ.  
Բաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/0043/04/13  
Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան  
Դատավորներ՝ Ա. Խառատյան  
Ս. Թորոսյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «Հայր և որդի Ադամյաններ» ՍՊԸ-ի (այ-  
սուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի  
08.12.2016 թվականի որոշման դեմ՝ «Հինգերորդ աստղ» ՍՊԸ-ի դիմումի՝ վերջինիս սնա-  
նկ ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ «Հինգերորդ աստղ» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Պարտապան) պա-  
հանջել է իրեն ճանաչել սնանկ:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝  
Գ. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 02.12.2013 թվականի վճռով դիմումը բավա-  
րարվել է:

Դատարանի 20.06.2014 թվականի «Պարտապանի ֆինանսական առողջացման  
ծրագիրը հաստատելու մասին» որոշմամբ հաստատվել է 23.05.2014 թվականի պարտա-  
տերերի ժողովի, 12.06.2014 թվականին պարտատերերի խորհրդի կողմից ընդունված  
Պարտապանի ֆինանսական առողջացման լրամշակված ծրագիրը, որի իրականացման  
առավելագույն ժամկետ է սահմանվել 2 տարին:

Պարտապանի սնանկության գործով կառավարիչը 28.06.2016 թվականին դատա-  
րան է ներկայացրել ֆինանսական առողջացման ծրագրի կատարման հաշվետվությու-  
նը՝ Պարտապանի լուծարման գործընթաց սկսելու համար:

Դատարանի 06.09.2016 թվականի որոշմամբ պարտատերեր Աշխեն Քուրդյանի,  
Աշոտ Ռոստոմյանի, Անգին Հարոյանի, Արմինե Սողոմոնյանի, Աննա Հակոբյանի, Արթուր

Արշակյանի, Լևոն Զաքոյանի, Աշոտ Ծատուրյանի, Աննա Գալոյանի, Մամիկոն Թովմասյանի, Համլետ Չափարյանի ներկայացուցիչ Կարեն Հովհաննիսյանի՝ Պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին սնանկության գործով կառավարչի հաշվետվության քննությունը կասեցնելու մասին, սնանկության գործով կառավարիչ Գ. Ավագյանի՝ իր հաշվետվության քննարկումը հետաձգելու մասին, Պարտապանի ներկայացուցիչ Կ. Թունյանի՝ սնանկության գործով կառավարչի հաշվետվության քննարկումը կասեցնելու կամ այն առանց քննության թողնելու մասին միջնորդությունները մերժվել են, իսկ Պարտապանի սնանկության գործով կառավարչի ներկայացրած հաշվետվությունն ընդունվել է ի գիտություն և սկսվել է Պարտապանի լուծարման վարույթը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.12.2016 թվականի որոշմամբ Պարտապանի ներկայացուցիչ Կարեն Թունյանի և պարտատերեր Աշխեն Քուրդյանի, Աշոտ Ռոստոմյանի, Անգին Հարոյանի, Արմինե Սողոմոնյանի, Աննա Հակոբյանի, Արթուր Արշակյանի, Լևոն Զաքոյանի, Աշոտ Ծատուրյանի, Աննա Գալոյանի, Մամիկոն Թովմասյանի, Մարիա Մուրադյանի և Համլետ Չափարյանի ներկայացուցիչ Կարեն Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքները բավարարվել են, Դատարանի 06.09.2016 թվականի որոշումը բեկանվել է և գործը՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին սնանկության գործով կառավարչի հաշվետվությունը քննարկելու մատով, ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է բերել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 66-րդ, 69-րդ հոդվածները, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ եթե ոչ բոլոր պարտատերերի պահանջներն են բավարարվել, դատարանն իրավասու է որոշում կայացնելու ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ հաշվետվությունը չհաստատելու և պարտապանի լուծարման գործընթացը սկսելու համար: Հետևաբար ելնելով սույն գործի փաստերից, այն է՝ ոչ բոլոր պարտատերերի պահանջներն են բավարարվել, Դատարանն օրենքով սահմանված կարգով կայացրել է իրավաչափ որոշում:

Բացի այդ, թեև տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը հարցի լուծումը դիտարկել է բացարձակապես դատավարական տեսանկյունից՝ կասեցման նկատառումով՝ իբրև պարտատերերի դատական պաշտպանության իրավունքի ապահովում, այնուամենայնիվ հաշվի չի առել, որ սույն գործով Ընկերությունը նույնպես պարտատեր է, որի շահերը ևս պետք է հաշվի առնվեն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.12.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 06.09.2016 թվականի որոշմանը կամ գործն ուղարկել նոր քննության:

## **3. Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

1) Դատարանի 02.12.2013 թվականի վճռով Պարտապանը սնանկ է ճանաչվել (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 9-12**):

2) Դատարանի 28.03.2014 թվականի «Մասնկության գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշմամբ հաստատվել է Պարտապանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 4-28**):

3) Դատարանի 20.06.2014 թվականի «Պարտապանի ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին» որոշմամբ հաստատվել է 23.05.2014 թվականի պարտատերերի ժողովի, 12.06.2014 թվականին պարտատերերի խորհրդի կողմից ընդունված Պարտապանի ֆինանսական առողջացման լրամշակված ծրագիրը, որի իրականացման առավելագույն ժամկետ է սահմանվել 2 տարին (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 84**):

4) Պարտատերերի ժողովի 21.07.2016 թվականի արձանագրության համաձայն՝ որոշվել է Պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն, դատարանին առաջարկություն ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիրը մեկ տարով երկարաձգելու վերաբերյալ (**հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 47-51**):

5) Դատարանի 04.08.2016 թվականի որոշմամբ որոշվել է չքննարկել Պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը մինչև 12 ամիս երկարաձգելու հարցը՝ Պարտատերերի 21.07.2016 թվականի ժողովի որոշումը ֆինանսական առողջացման ծրագրի ընդունման վերաբերյալ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան ընդունված չլինելու հիմքով (**հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 80-91**):

6) 28.06.2016 թվականին սնանկության գործով կառավարիչը (այսուհետ՝ Կառավարիչ) դատարան է ներկայացրել պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը, որում նշել է, որ ֆինանսական առողջացման ծրագրի ընթացքում բավարարվել է միայն «Անելիք բանկ» ՓԲԸ-ի պահանջը, իսկ մնացած պարտատերերի պահանջները չեն բավարարվել, ուստի խնդրել է սկսել Պարտապանի լուծարման գործընթաց (**հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 1-4**):

7) 02.09.2016 թվականի դատական նիստին պարտատերեր Աշխեն Քուրդյանի, Աշոտ Ռոստոմյանի, Անգին Հարոյանի, Արմինե Սողոմոնյանի, Աննա Հակոբյանի, Արթուր Արշակյանի, Լևոն Զարոյանի, Աշոտ Ծատուրյանի, Աննա Գալոյանի, Սամիկոն Թովմայանի, Համլետ Չափարյանի ներկայացուցիչ Կ. Հովհաննիսյանը միջնորդել է դատարանին կասեցնել Պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին սնանկության գործով կառավարչի հաշվետվության քննությունը մինչև ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից Դատարանի 04.08.2016 թվականի «Պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը մինչև 12 ամիս երկարաձգելու հարցը չքննարկելու...» որոշման դեմ թիվ ԱՐԱԴ/0043/04/13 քաղաքացիական գործով դատական ակտի կայացումը: Նույն պատճառաբանությամբ Պարտապանի ներկայացուցիչ Կարեն Թունյանը միջնորդել է կասեցնել սնանկության գործով կառավարչի հաշվետվության քննարկումը կամ այն թողնել առանց քննության (**հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 133-134**):

#### **4. Վճարել դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք դատարանն իրավասու է որոշում կայացնել ֆինանսական առողջացման ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու վերաբերյալ, եթե սնանկության վարույթի մասնակիցները միջնորդել են կասեցնել կամ առանց քննության թողնել ֆինանսական առողջացման ծրագրի կատարման վերաբերյալ սնանկության գործով կառավարչի հաշվետվության քննարկումը:*

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող, օրենքով չարգելված միջոցառումների համալիրը, որի իրականացման դեպքում պարտապանը չի լուծարվելու կամ չի կայացվելու ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռ, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը չի կարող գերազանցել 36 ամիսը, եթե նույն օրենքով սահմանված կարգով դրա գործողության ժամկետը չի երկարաձգվել:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիրը՝ ժողովի որոշմամբ ընդունվելու և նույն օրենքով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում, հաստատվում է դատարանի որոշմամբ: Հակառակ դեպքում դատարանը որոշում է ընդունում ֆինանսական առողջացման ծրագիրը մերժելու և պարտապանին լուծարելու մասին:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումից հետո պարտապանի գործունեությունն իրականացվում է միայն ծրագրի շրջանակներում, իսկ պարտատերերի պահանջների բավարարումը՝ ծրագրով սահմանված կարգով: Պարտապանը կառավարչի վերահսկողությամբ պարտավոր է կատարել ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 15 օր առաջ կառավարիչը պետք է դատարան ներկայացնի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվություն:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ դատավորը ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունն ստանալուց ոչ ուշ, քան երկու և ոչ շուտ, քան մեկ շաբաթվա ընթացքում նշանակում է նիստ՝ այդ մասին առնվազն երեք օր առաջ ծանուցելով կառավարչին, պարտապանին և պարտատերերին:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության և ֆինանսական առողջացման ծրագրի կատարման վերաբերյալ պարտատերերի առարկությունների քննության արդյունքներով դատարանը կայացնում է՝

ա) վճիռ՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվությունը հաստատելու և սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարվել են.

բ) որոշում՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարված չեն:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված ժամկետում ֆինանսական առողջացման ծրագիր չներկայացվելու, ներկայացված ծրագրի հաստատումը մերժվելու, ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցվելու, ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության հաստատումը մերժվելու դեպքում դատարանը որոշում է կայացնում պարտապան իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման վարույթ սկսելու մասին (այսուհետ՝ պարտապանի լուծարում):

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ սնանկության վարույթում պարտապանի ֆինանսական առողջացումը սնանկության վարույթի առանցքային տարրերից է, որը պայմանավորված է սնանկության վարույթի առանձնահատկությամբ, այն է՝ հնարավորություն տալ բարելիսիղձ և պարտաճանաչ պարտապանին հաղթահարել ֆինանսական դժվարությունները, վերականգնել իր բնականոն գործունեությունը՝ մինչև ժամանակ ապահովելով պարտատերերի շահերի պաշտպանությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ պարտապանի ֆինանսական առողջացումը տեղի է ունենում օրենքով սահմանված որոշակի ընթացակարգով, որի սկզբնակետը ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացումն է: Ֆինանսական առողջացման ծրագիրը, լինելով պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող՝ օրենքով չարգելված միջոցառումների համալիր, ընդունվում է պարտատերերի ժողովի կողմից որոշակի ժամկետով (առավելագույնը՝ 36 ամիս, եթե այն չի երարաձգվել) և ենթակա է հաստատման դատարանի կողմից: Ընդ որում, դատարանի կողմից հաստատվելու դեպքում պարտապանի գործունեությունն իրականացվում է միայն այդ ծրագրի շրջանակներում, իսկ պարտատերերի պահանջների բավարարումը՝ ծրագրով սահմանված կարգով: Այսինքն՝ պարտապանը պարտավոր է կատարել ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները, որոնց նկատմամբ վերահսկողություն է իրականացվում ինչպես կառավարչի, այնպես էլ դատարանի կողմից: Նշվածով պայմանավորված՝ ֆինանսական առողջացման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 15 օր առաջ կառավարիչը պետք է դատարան ներկայացնի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվություն:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը պարտապանի ֆինանսական առողջացման մասին ամփոփ տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ է, որն արտացոլում է պարտապանի՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական դրությունը, պարտապանի ֆինանսական առողջացման ուղղված և իրականացված միջոցառումների նկարագիրը, պարտատերերի պահանջների բավարարված լինելու կամ չլինելու հանգամանքը և այլ տեղեկություններ: Այլ կերպ ասած՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության ներկայացումը պարտապանի ֆինանսական առողջացման գործընթացի ավարտին ուղղված ընթացակարգ է, քանի որ այդ փաստաթղթի քննարկման արդյունքներով է որոշվում՝ պարտապանը վերջնականապես առողջացել է, թե՛ ոչ: Այսպիսով ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության ներկայացումը դատարանին, դատարանի կողմից դրա քննարկումը և արդյունքում համապատասխան դատական ակտի կայացումը վկայում են այն մասին, որ պարտապանի ֆինանսական առողջացման նկատմամբ իրականացվում է նաև դատական վերահսկողություն: Ըստ այդմ էլ՝ դատարանը, ստանալով ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը, այն քննարկելու համար նշանակում է դատական նիստ, որի վերաբերյալ պատշաճ ձևով տեղեկացվում են պարտապանը, կառավարիչը և պարտատերերը: Ընդ որում, դատարանը հաշվետվության քննարկման արդյունքներով, հաշվի առնելով նաև պարտատերերի առարկությունները՝ կայացնում է

ա) վճիռ՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվությունը հաստատելու և սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարվել են, կամ

բ) որոշում՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարված չեն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության քննարկման արդյունքում դատարանի կողմից կայացվող դատական ակտերի տեսակների սպառիչ սահմանումն ինքնանպատակ չէ, այլ կոչված է սնանկության վարույթում ապահովելու բոլոր պարտատերերի շահերի պաշտպանությունը և դրանց միջև հավասարակշռությունը: Ըստ այդմ՝ այն դեպքում, երբ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության քննարկման արդյունքներով պարզվում է, որ բոլոր պարտատերերի պահանջները բավարարվել են, դատարանը հաստատում է ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը և վճիռ է կայացնում սնանկության գործն ավարտելու մասին, մինչդեռ այն դեպքում, երբ պարզվում է, որ բոլոր պարտատերերի պահանջները բավարարված չեն, դատարանը որոշում է կայացնում ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու մասին:



Սույն գործով Դատարանը, պարտապանի լուծարման վարույթը սկսելու մասին որոշում կայացնելիս, հիմք ընդունելով ներկայացված հաշվետվությունը, պատճառաբանել է, որ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետն ավարտված է և բոլոր պարտատերերի պահանջները բավարարված չեն:

Վերաքննիչ դատարանը, դատական ակտը բեկանելով, արձանագրել է, որ գործով բոլոր պարտատերերը, բացի մեկ պարտատիրոջից, միջնորդել են Դատարանին կասեցնել կառավարչի հաշվետվության քննարկումը՝ մինչև ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը երկարաձգելու հարցի վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացումը: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ նման իրավիճակում Դատարանը պետք է հաշվի առներ, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը երկարաձգելու պարտատերերի իրավունքը դեռևս քննության առարկա է վերաքննության փուլում և կայացվող որոշման հետևանքով ի չիք է դարձվում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը երկարաձգելու պարտատերերի իրավունքը:

Վերը շարադրված վերլուծությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի՝ «Մասնկության գործով առանձին պահանջների քննության կասեցման հիմքերը և կարգը» վերտառությամբ 20.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործի վարույթն առանձին պարտատերերի պահանջների մասով կարող է կասեցվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ կասեցման հիմքերի առկայության դեպքում, եթե այդ իրավակարգավորումները կիրառելի են սնանկության վարույթում առանձին պահանջների քննության նկատմամբ:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առանձին պահանջների մասով վարույթի կասեցումը չի ընդհատում սնանկության վարույթի ընթացքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի վարույթի կասեցումը գործի քննության ընթացքում այնպիսի հանգամանքի ի հայտ գալն է, որն ըստ էության արգելակում է գործի հետագա ընթացքը: Օրենսդիրը, հաշվի առնելով սնանկության վարույթի առանձնահատկությունը (սնանկության վարույթը բաղկացած է որոշակի փուլերից և ընթանում է յուրաքանչյուր փուլին համապատասխան օրենքով սահմանված ընթացակարգով), այդ վարույթի արդյունավետությունն ապահովելու նկատառումով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածով կարգավորել է կասեցման ընթացակարգի կիրառման հնարավորությունը: Օրենսդիրը վարույթի կասեցման կարգ նախատեսել է առանձին պարտատերերի պահանջների մասով և այն պայմանով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կասեցման հիմքը (հիմքերը) կիրառելի լինի այդ իրավահարաբերության նկատմամբ: Ընդ որում, առանձին պահանջների մասով վարույթի կասեցումը չի ընդհատում սնանկության վարույթի ընթացքը, ինչը նշանակում է, որ օրենքով սահմանված կարգով առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցման դեպքում սնանկության վարույթի մյուս փուլերը պետք է ընթանան օրենքով նախատեսված ընթացակարգով:

Այսպիսով օրենսդիրը սնանկության վարույթում կասեցման հնարավորությունն նախատեսել է միայն առանձին պարտատերերի պահանջների մասով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածը, որը սահմանում է դատարանի կողմից ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության քննարկման կարգը, այդ հաշվետվության քննության կասեցման կարգ չի նախատեսում: Նշված հոդվածը չի սահմանում նաև այդպիսի հաշվետվությունն առանց քննության թողնելու կարգ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, մերժելով Պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության

քննությունը կասեցնելու կամ առանց քննության թողնելու վերաբերյալ միջնորդությունները, հանգել է իրավաչափ եզրակացության, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Միաժամանակ նկատի ունենալով, որ 28.06.2016 թվականին Կառավարիչը դատարան է ներկայացրել պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը, որում նշել է, որ ֆինանսական առողջացման ծրագրի ընթացքում բավարարվել է միայն «Անելիք բանկ» ՓԲԸ-ի պահանջը, իսկ մնացած պարտատերերի պահանջները չեն բավարարվել, այսինքն՝ առկա է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետով նախատեսված հիմքը, Վճռաբեկ դատարանն իրավաչափ և հիմնավոր է համարում նաև Դատարանի կողմից Պարտապանի լուծարման գործընթաց սկսելու վերաբերյալ որոշման կայացումը, ինչը ևս անհիմն կերպով անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.12.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.09.2016 թվականի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազորություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազորություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0598/02/16  
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան  
Դատավորներ՝ Ս. Թորոսյան  
Ա. Մկրտչյան

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0598/02/16  
2017թ.

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահողությամբ մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին դռնբաց դատական նիստում, քննելով Սեդա Մելիք-Թանգյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.12.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արթուր Բադալյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի ընդդեմ Սեդա Մելիք-Թանգյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր)՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Արթուր Բադալյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանը պահանջել է անվավեր ճանաչել Արթուր Բադալյանի և Սեդա Մելիք-Թանգյանի միջև 11.12.2012 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել նվիրատվության պայմանագրի հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 14.07.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 15.12.2016 թվականի որոշմամբ Սեդա Մելիք-Թանգյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 14.07.2016 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սեդա Մելիք-Թանգյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզառարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործով սնանկության կառավարչի կողմից դատարան չեն ներկայացվել ոչ վիճարկվող նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու կամ առոչինչ համարելու իրավական հիմքերը, ոչ էլ այդպիսիք հաստատող ապացույցները:

Վերաքննիչ դատարանը չի կատարել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, այլապես կպարզեր, որ վիճարկվող անհատույց գործարքը չէր կարող Արթուր Բաղայանի սնանկության պատճառ հանդիսանալ: Ավելին, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ իրականում վիճարկվող գործարքով Արթուր Բաղայանը ցանկություն չի ունեցել խուսափելու բնակարանի նկատմամբ բռնագանձում տարածելու իրավական ընթացակարգից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.12.2016 թվականի որոշումը:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

**1.** Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի օրինական ուժի մեջ մտած 09.11.2015 թվականի թիվ ԵԿԴ/0307/04/15 վճռով Արթուր Բաղայանը սնանկ է ճանաչվել (**հատոր 1-ին, գ.թ. 12-14**).

**2.** Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.12.2015 թվականի թիվ ԵԿԴ/0307/04/15 որոշմամբ Գևորգ Ավագյանը նշանակվել է Արթուր Բաղայանի սնանկության գործով կառավարիչ (**հատոր 1-ին, գ.թ. 8-9**).

**3.** Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 09.11.2015 թվականի թիվ ԵԿԴ/0307/04/15 վճռով հաստատվել է այն փաստը, որ Լավրենտի Միքայելյանի և Արթուր Բաղայանի միջև 04.11.2014 թվականին կնքված փոխառության պայմանագրի համաձայն՝ վերջինս Լավրենտի Միքայելյանից փոխառությամբ վերցրել է 18.500 ԱՄՆ դոլար՝ պարտավորվելով այն վերադարձնել մինչև 15.11.2014 թվականը (**հատոր 1-ին, գ.թ. 12-14**).

**4.** Կադաստրի կողմից տրված՝ «Գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների վերաբերյալ» տեղեկանքի, ինչպես նաև Արթուր Բաղայանի և Սեդա Մելիք-Թանգյանի միջև 11.12.2012 թվականին կնքված նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Արթուր Բաղայանը Սեդա Մելիք-Թանգյանին անհատույց հանձնել է Երևանի Նալբանդյան փողոցի 37-րդ շենքի թիվ 3 բնակարանը, որը 14.12.2012 թվականին սեփականության իրավունքով գրանցվել է Սեդա Մելիք-Թանգյանի անվամբ (**հատոր 1-ին, գ.թ. 15-18**):

### **4. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը

կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերի գործողության համար անհրաժեշտ պայմանի, այն է՝ պարտապանի՝ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու մտադրության մասին, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ պարտապանի կողմից իր հետ փոխկապակցված կամ երրորդ անձանց կապրած անհատույց փոխանցումները որպես պարտավերերի նկատմամբ ունեցած պարտավորության կապարումից խուսափելու մրտադրությանը կապարված ակնհայտորեն վկայող փոխանցումներ գնահատելու խնդրին:*

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս զանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող (մինչև 17.06.2016 թվականն ընդունված և 23.07.2016 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-105-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունները գործող) խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ կառավարիչը կարող է սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել դատական կարգով հետ ստանալու պարտապանի կատարած անհատույց փոխանցումները (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի հետ փոխկապակցված անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում: Նույն մասի «բ» կետի համաձայն՝ կառավարիչը կարող է սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել դատական կարգով հետ ստանալու պարտապանի կատարած անհատույց փոխանցումները ցանկացած երրորդ անձանց, որոնք կատարվել են սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուն նախորդող երեք տարվա ընթացքում:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձ պարտապանի հետ փոխկապակցված են համարվում նրա ամուսինը, նրանց հետ երկու աստիճան ուղիղ վերընթաց և վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, եղբայրը, քույրը և նրանց հետ ուղիղ վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, ամուսնու եղբայրը, քույրը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), անդրադառնալով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին, իր որոշումներում նշել է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, հռչակելով սեփականության իրավունքը, միաժամանակ նախատեսում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն ի շահ հանրության, եթե այդ սահմանափակումը նախատեսված է օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով, և ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար: Եվրոպական դատարանը նշել է նաև, որ ինչ հիմքով էլ, որ տեղի ունենա միջամտությունը սեփականության իրավունքին, դա կարող է արդարացված համարվել բացառապես այն դեպքում, երբ այն տեղի է ունեցել ի շահ հանրության և հետապնդել է իրավաչափ նպատակ (...)  
(*յուն.*, *Sporrong and Lonnroth v. Sweden գործով Եվրոպական դատարանի 23.09.1982 թվականի վճիռը*, կետեր 61, *Mkhchyan v. Russia գործով Եվրոպական դատարանի 07.02.2017 թվականի վճիռը*, կետեր 65-67, *Barcza and Others v. Hungary գործով Եվրոպական դատարանի 11.10.2016 թվականի վճիռը*, կետեր 41-45):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ 17.06.2016 թվականին ընդունված և 23.07.2016 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-105-Ն ՀՀ օրենքով խմբագրվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի նախաբանը: Կատարված փոփոխությունը վերաբերում է սնանկության գործով կառավարչի կողմից դատարան դիմելու համար սահմանված մեկամյա ժամկետի հաշվարկման սկիզբը որոշելուն: Մասնավորապես՝ մինչև նշված օրենքով կատարված փոփոխությունը, մեկամյա ժամկետի հաշվարկման սկիզբը սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելու պահին էր, իսկ փոփոխությունից հետո՝ ներկայիս խմբագրությամբ, մեկամյա ժամկետի հաշվարկման սկիզբը պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահին է:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետին և արձանագրել է, որ վկայակոչված իրավակարգավորումը նախատեսում է սնանկության վերաբերյալ գործով կառավարչի դատարան դիմելու իրավունքը՝ պարտապանի կողմից իրեն փոխկապակցված անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով, որի նպատակը պարտապանի գույքի հավաքագրումն է՝ սնանկության վարույթի ընթացքում պարտատերերի պահանջների բավարարման նպատակով: Այսինքն՝ նշված նորմը սահմանում է սեփականության իրավունքի դադարման ինքնուրույն հիմք: Ընդ որում, կատարված փոխանցումները հետ ստանալու հիմքում դրված է այն նախամասնքը, որ դրանք պետք է փոխանցված լինեն պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում և անհատույց: Այդ փոխանցումները կարող են լինել նաև ոչ դրամային, այսինքն՝ այլ գույքային փոխանցումներ, այդ թվում՝ ապրանքներ, արժեթղթեր, շարժական և անշարժ գույք: Կառավարիչն այդ իրավունքը դատական կարգով կարող է իրականացնել պարտապանին սնանկ ճանաչելուց հետո, բայց ոչ ուշ քան մեկ տարվա ընթացքում  
(*յուն.*, *Հարություն Ջուլուխյանի սնանկության գործով կառավարիչ Ադասի Արսենյանն ընդդեմ Գայանե և Ռուբեն Ջուլուխյանների թիվ ԵԿԴ/2304/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.03.2012 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ այն նախատեսում է սնանկության վերաբերյալ գործով կառավարչի դատարան դիմելու իրավունքը՝ պարտապանի կողմից իրեն փոխկապակցված անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով: Վերոնշյալ հոդվածով առանձնացվել են այնպիսի փոխանցումների տեսակներ, որոնք ակնհայտորեն վկայում են պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու պարտապանի մտադրության մասին  
(*յուն.*, *Լիզա Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Համլետ Նաջարյանն ընդդեմ Լիզա Գրիգորյանի, Սոնիկ Աթայանի թիվ ԵԲԴ/1165/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.10.2012 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը 31.01.2017 թվականի թիվ ՍԳՈ-1340 որոշմամբ, քննելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, գտել է, որ այն համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դիմել և դատական կարգով հետ ստանալ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում պարտապանի հետ փոխկապակցված անձանց պարտապանի կատարած այն անհատույց փոխանցումները, որոնք դատարանի կողմից կգնահատվեն **որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին ակնհայտորեն վկայող փոխանցումներ:**

Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «... օրենքի վիճարկվող դրույթով սահմանված պայմաններին համապատասխանող փոխանցումներն ինքնին չեն կարող վկայել պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին: Նման դիրքորոշման համար հիմք են հանդիսանում այն հանգամանքները, որ, նախ՝ նման մտադրության առկայությունը կամ բացակայությունը գնահատման ենթակա հանգամանքներ են, որոնք կարող են հաստատվել դատարանի կողմից գործի կոնկրետ հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրման և գնահատման արդյունքում, երկրորդ՝ նշված պայմաններին համապատասխանող ոչ բոլոր փոխանցումները կարող են վկայել պարտապանի ոչ իրավաչափ մտադրության մասին: Եթե պարտապան ֆիզիկական անձը որևէ անհատույց փոխանցում է կատարել իր հետ փոխկապակցված անձի, որից միայն երեք կամ չորս տարի հետո է ստանձնել որևէ պարտավորություն և դրանից կարճ ժամանակ անց սնանկ է ճանաչվել, շատ դժվար կլինի նման փոխանցումը դիտարկել որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին ակնհայտորեն վկայող փոխանցում»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշման համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ նման դեպքերը, թեև համապատասխանում են վիճարկվող դրույթի սահմանած պայմաններին, սակայն չեն կարող ծառայել վիճարկվող դրույթի՝ օրենսդրի կողմից սահմանված և ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող նպատակին, և գտել է, որ դատարանները վիճարկվող դրույթը կիրառելիս դրա գործողության շրջանակից պետք է բացառեն այն անհատույց փոխանցումները, որոնք ակնհայտորեն չեն վկայում պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին: Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթում սահմանված պայմանները բավարարող բացառապես բոլոր փոխանցումները հետ ստանալը, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ դրանցից ոչ բոլորը կարող են ակնհայտորեն վկայել պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին, չի կարող դիտարկվել որպես ՀՀ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար անհրաժեշտ միջոց: Նման մոտեցումը կխախտի ոչ միայն անձի սեփականության իրավունքը, այլև հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության սահմանադրական իրավունքը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի իրավակարգավորումը՝ սնանկության գործով կառավարչի՝ պարտապանի կողմից իրեն **փոխկապակցված անձանց** կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով դատարան դիմելու իրավունքի վերաբերյալ, ընդհանուր առմամբ համադրելի է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի իրավակարգավորմանը, որով նախատեսված է սնանկության գործով կառավարչի՝ պարտապանի կողմից **երրորդ անձանց** կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով դատարան դիմելու իրավունքը: Մասնավորապես՝ նշված իրավանքների համեմատական վերլուծությունից բխում է, որ երկու իրավակարգավորումներն էլ վերաբերում են պարտապանի կատարած անհատույց

փոխանցումները հետ ստանալու պահանջով դատարան դիմելու՝ սնանկության գործով կառավարչի իրավունքին: Ընդ որում, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը սահմանում է պարտապանին փոխկապակցված անձանց, իսկ նույն մասի «բ» կետը՝ երրորդ անձանց կատարված անհատույց փոխանցումները հետ ստանալու պահանջով դատարան դիմելու իրավունքը: Ըստ այդմ, առաջին իրավանորմով սահմանված է նախկին 5 տարվա, իսկ երկրորդով՝ 3 տարվա ընթացքում պարտապանի կատարած փոխանցումները հետ ստանալու հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով նշված իրավակարգավորումների՝ անհատույց գործարքներով կատարված փոխանցումները հետ ստանալու իրավական հնարավորության մասով բովանդակային համարժեքությունը, գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 31.01.2017 թվականի թիվ ՍԴՌ-1340 որոշմամբ արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ սնանկության գործով կառավարիչը կարող է դատական կարգով հետ ստանալ միայն պարտապանի կատարած այն անհատույց փոխանցումները, որոնք դատարանի կողմից կգնահատվեն որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին ակնհայտորեն վկայող փոխանցումներ, կիրառելի է նաև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի նկատմամբ: Այսինքն՝ դատարանները «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի ինչպես «ա», այնպես էլ «բ» կետը կիրառելիս դրանց գործողության շրջանակից պետք է բացառեն այն անհատույց փոխանցումները, որոնք ակնհայտորեն չեն վկայում պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին:

Ընդհանրացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

1. յուրաքանչյուր դեպքում, երբ առկա է սեփականության իրավունքի սահմանափակում, մասնավորապես՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով սեփականության իրավունքի նկատմամբ միջամտություն, ապա սեփականության հիմնարար իրավունքի պաշտպանությունից բխում է, որ այդ սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ: Ընդ որում, սեփականության իրավունքի սահմանափակման և հետապնդվող նպատակի միջև պետք է ապահովվի ողջամիտ հավասարակշռություն,

2. պարտապանի՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերով նախատեսված անձանց կատարած անհատույց փոխանցումները սնանկության գործով կառավարչի կողմից հետ ստանալու՝ օրենքով սահմանված հնարավորությունը Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով միջամտություն է սեփականության իրավունքին,

3. այդ միջամտությունը, այն է՝ կատարված անհատույց փոխանցումները հետ ստանալը, հետապնդում է պարտատերերի նկատմամբ պարտավորության կատարումից չարամտորեն խուսափելը կանխելու նպատակ, որով պետությունն ապահովում է պարտատերերի հիմնական իրավունքների պաշտպանությունը: Ընդ որում, այդ նպատակով սեփականության իրավունքի սահմանափակումը, ըստ ՀՀ սահմանադրական դատարանի, համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Հետևաբար կատարված անհատույց փոխանցումներն իրավաչափ կերպով հետ ստանալու համար անհրաժեշտ է, որ պարտապանը գործարքը կնքած լինի պարտատիրոջ նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու մտադրությամբ,

4. «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կամ «բ» կետերով նախատեսված պայմաններին համապատասխանող պահանջ ներկայացնելն ինքնին բավարար չէ պարտապանի՝ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու մտադրության մասին եզրահանգում կատարելու համար: Հետևաբար այդ նորմերի տառացի կիրառումը որոշակի դեպքերում կհանգեցնի պարտապանի ունեցած ոչ իրավաչափ մտադրության մասին սխալ ենթադրության,

5. նման մտադրության առկայությունը կամ բացակայությունը գնահատման ենթակա հանգամանքներ են, որոնք կախված են կոնկրետ գործի հանգամանքներից և դատա-



րանի կողմից կարող են հաստատվել միայն դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրման և գնահատման արդյունքում,

6. պարտատերերի իրավունքների և անձի սեփականության իրավունքի միջև ողջամիտ հավասարակշռությունն ապահովելու համար դատարանները խնդրո առարկա իրավանորմերը կիրառելիս դրանց գործողության շրջանակից պետք է բացառեն այն անհատույց փոխանցումները, որոնք ակնհայտորեն չեն վկայում պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին, և այդ դեպքում կապահովվի սեփականության սահմանադրական իրավունքի սահմանափակման և դրանով հետապնդվող նպատակի համաչափությունը: Այսինքն՝ խնդրո առարկա իրավակարգավորումների տեսանկյունից անհատույց փոխանցումն անվավեր գործարք կարող է համարվել միայն, այն դեպքում երբ, ի թիվս այլ հանգամանքների, ապացուցված է պարտապանի ոչ իրավաչափ մտադրության առկայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կանայն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*յրեն, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 09.11.2015 թվականի թիվ ԵԿԴ/0307/04/15 վճռով Արթուր Բաղայանը սնանկ է ճանաչվել: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.12.2015 թվականի թիվ ԵԿԴ/0307/04/15 որոշմամբ Գևորգ Ավագյանը նշանակվել է Արթուր Բաղայանի սնանկության գործով կառավարիչ: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 09.11.2015 թվականի թիվ ԵԿԴ/0307/04/15 վճռով հաստատվել է այն փաստը, որ Լավրենտի Միքայելյանի և Արթուր Բաղայանի միջև 04.11.2014 թվականին կնքված փոխառության պայմանագրով վերջինս Լավրենտի Միքայելյանից փոխառությանը վերցրել է 18.500 ԱՄՆ դոլար՝ պարտավորվելով այն վերադարձնել մինչև 15.11.2014 թվականը: Արթուր Բաղայանը Սեդա Մելիք-Թանգյանին անհատույց հանձնել է Երևանի Նալբանդյան փողոցի 37-րդ շենքի թիվ 3 բնակարանը, որը 14.12.2012 թվականին սեփականության իրավունքով գրանցվել է Սեդա Մելիք-Թանգյանի անվամբ:

Սույն գործով Դատարանը, տառացի մեկնաբանությամբ կիրառելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, հայցը բավարարել է, քանի որ Արթուր Բաղայանի կողմից Սեդա Մելիք-Թանգյանին Երևանի Նալբանդյան փողոցի 37-րդ շենքի թիվ 3 բնակարանի նվիրատվությունը համապատասխանել է նշված իրավանորմով նախատեսված պայմաններին:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժել է՝ նշելով, որ «Դատարանի կողմից սույն քաղաքացիական գործով իրականացվել է ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, գործով ներկայացված բոլոր ապացույցները գնահատվել են իրենց համակցության մեջ, ինչի արդյունքում կայացվել է իրավաչափ դատական ակտ, որը բխում է ՀՀ օրենսդրության պահանջներից»:

Սինչդեմ Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադարձանալով սույն գործի փաստերին և ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, գտնում է, որ դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց, որը կվկայեր այն մասին, որ Արթուր Բաղայանն իր գործողություններով, այն է՝ Սեդա Մելիք-Թանգյանին 11.12.2012

թվականին կատարած անհատույց փոխանցմամբ, մտադրություն և նպատակ է ունեցել խուսափել Լավրենտի Միքայելյանի նկատմամբ ունեցած պարտավորությունից: Վերը նշված եզրահանգման համար հիմք է ծառայում այն, որ Արթուր Բաղայանին սնանկ ճանաչելու համար հիմք հանդիսացած փոխառության պայմանագիրը Լավրենտի Միքայելյանի և վերջինիս միջև կնքվել է 04.11.2014 թվականին, իսկ Արթուր Բաղայանը Սեդա Մելիք-Թանգյանին Երևանի Նալբանդյան փողոցի 37-րդ շենքի թիվ 3 բնակարանը նվիրել է 11.12.2012 թվականին՝ պարտավորության առաջացումից մոտ 2 տարի առաջ: Այսինքն՝ տվյալ դեպքում առկա է ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման մեջ նկարագրված այն իրավիճակը, երբ անհատույց փոխանցում կատարելուց տևական ժամանակ հետո նոր անձն ստանձնել է պարտավորություն, որը դարձել է վերջինիս սնանկ ճանաչվելու պատճառը: Ընդ որում, սույն գործում առկա չեն ապացույցներ այն մասին, որ Արթուր Բաղայանը կարող էր կամ պետք է կանխատեսել ապագայում իր ֆինանսական դրության վատթարացումը և, հենց այդ հանգամանքը կանխատեսելով, կատարել է անհատույց փոխանցումը՝ ապագայում պարտատերերի հանդեպ ունեցած պարտավորությունների կատարումից խուսափելու մտադրությամբ: Հետևաբար գործում է այն կանխավարկածը, որ 11.12.2012 թվականին անհատույց փոխանցում կատարելիս Արթուր Բաղայանն օբյեկտիվորեն չէր կարող կանխատեսել երկու տարի հետո սպասվող իրադարձությունները և այդ իրադարձություններով պայմանավորել Սեդա Մելիք-Թանգյանին Երևանի Նալբանդյան փողոցի 37-րդ շենքի թիվ 3 բնակարանի անհատույց փոխանցումը: Ուստի տվյալ դեպքում կատարված անհատույց փոխանցումը չի կարող որակվել որպես պարտատիրոջ նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու մտադրությամբ կատարված գործարք, քանի որ դա չի բխում սույն գործի հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրությունից:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհատույց փոխանցումից հետո ընկած ժամանակահատվածը, ինչպես նաև պարտատիրոջ նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ Արթուր Բաղայանի մտադրության մասին ակնհայտորեն վկայող գործողությունների բացակայությունը հիմք են տալիս փաստելու, որ վերջինս իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Երևանի Նալբանդյան փողոցի 37-րդ շենքի թիվ 3 բնակարանը տնօրինել է իր հայեցողությամբ՝ ՀՀ Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Սեդա Մելիք-Թանգյանի սեփականության իրավունքի դադարման հիմքը բացակայում է, որպիսի պարագայում հայրը ենթակա էր մերժման, մինչդեռ ստորադաս դատարանները նյութական նորմի սխալ մեկնաբանման, արդյունքում նաև՝ դատավարական նորմի խախտման հետևանքով սխալ եզրահանգման են եկել գործի ելքի վերաբերյալ:

Այսպիսով սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը դիտվում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի

դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «իա. 1» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են սնանկության կառավարիչները՝ «Մասնկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում դատարաններ ներկայացվող **հայցադիմումների**, դիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը՝ պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված իր լիազորությունների շրջանակներում դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար կառավարիչն ազատվում է պետական տուրքի վճարումներից: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելիս կառավարիչը գործում է պարտապանի անունից և իր պատասխանատվությամբ:

Վկայակոչված իրավակարգավորումներից հետևում է, որ պարտապանի սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի անունից դատարան հայց ներկայացնելու իրավունքն իրացնում է վերջինիս կառավարիչը, որը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ազատված է դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար սահմանված պետական տուրքի վճարումներից: Օրենսդրական նման կարգավորման հիմքում, ըստ էության, ընկած է այն տրամաբանությունը, որ կառավարիչը հայց հարուցում կամ պարտապանի մասնակցությամբ դատավարություններին ներգրավվում է պարտապանի անունից, հետևաբար՝ նրա վրա պետական տուրքի վճարման պարտականություն չի կարող դրվել այլ անձի իրավունքներն ու օրինական շահերն ի պաշտոնե իրականացնելու համար: Նման եզրահանգումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ պետությունը, որպես ան-

ծի հիմնարար իրավունք հռչակելով դատական պաշտպանության իրավունքը, կոնկրետ երաշխիքներ է նախատեսում այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար՝ ընդ որում, որոշակի խումբ անձանց համար սահմանելով նաև հավելյալ երաշխիքներ, ինչպես օրինակ՝ պետական տուրքի վճարումից ազատումն է: Այդուհանդերձ, քննարկվող իրավակարգավորումը վերաբերում է միայն պետության հանդեպ պետական տուրքի գծով պարտավորությունների բացակայությանը և չի կարող մեկնաբանվել որպես մյուս կողմի կրած դատական ծախսերի փոխհատուցման պարտականության բացակայություն: Վճարեկ դատարանի գնահատմամբ՝ պետական տուրքի վճարումից ազատված սուբյեկտը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով պետք է կրի մյուս կողմի կրած դատական ծախսերը փոխհատուցելու պարտականություն: Նման նոտեցումը բխում է կողմերի իրավահավասարության սկզբունքից և կոչված է կանխելու պետական տուրքի վճարումից ազատված սուբյեկտի կողմից իր դատավարական իրավունքների անբարեխիղճ իրականացման արդյունքում մյուս կողմին հնարավոր պատճառվելիք վնասները: Ավելին, կառավարչի պարագայում նշված եզրահանգումը հիմնավորվում է նաև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորմամբ, ըստ որի՝ սույն օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելիս կառավարիչը գործում է պարտապանի անունից և իր պատասխանատվությամբ: Հետևաբար, թեև կառավարիչը հայցը հարուցում է պարտապանի անունից, այնուամենայնիվ, նման հայց հարուցելու կամ այլ դատավարական գործողություններ իրականացնելու հիմքերն ու անհրաժեշտությունը գնահատում է իր իսկ հայեցողությամբ, ուստիև պետք է պատասխանատվություն կրի դրանց արդյունքում այլ անձանց կրած դատական ծախսերի փոխհատուցման համար:

Սույն գործով բողոք բերած անձը վճարեկ բողոք ներկայացնելիս վճարել է վճարեկ բողոք բերելու համար նախատեսված պետական տուրքի գումարը:

Նկատի ունենալով, որ սույն գործով վճարեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ Արթուր Բաղայանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի հայցը՝ մերժման, որպիսի պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով վճարեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումարը փոխհատուցելու պարտականությունը պետք է կրի հայցվոր կողմը, վճարեկ դատարանը գտնում է, որ Արթուր Բաղայանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանից հօգուտ Սեդա Մելիք-Թանգյանի ենթակա է բռնագանձման 10.000 ՀՀ դրամ որպես վերաքննիչ բողոքի և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար: Միաժամանակ, սակայն, նկատի ունենալով, որ հայցը հարուցված է սնանկության գործով կառավարչի կողմից, որն էլ իր հերթին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «իա. 1» կետի հիմքով ազատված է դատարաններ ներկայացվող **հայցադիմումների**, դիմումների, վերաքննիչ և վճարեկ բողոքների համար վճարման ենթակա պետական տուրքի վճարումից, վճարեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում հայցադիմումի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարի հետ կապված հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ վճարեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.12.2016 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Արթուր Բաղայանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի հայցն ընդդեմ Սեդա Մելիք-Թանգյանի՝ Արթուր Բաղայանի և Սեդա Մելիք-Թանգյանի միջև 11.12.2012 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և որպես հետևանք՝ նվիրատվության պայմանագրի հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Արթուր Բաղայանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանից հօ-

գուտ Սեդա Մելիք-Թանգյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը՝ հայցադիմումի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարի հետ կապված, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «իա. 1» կետի հիմքով համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/0254/02/16**  
դատարանի որոշում **2017թ.**  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0254/02/16  
Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան  
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան  
Կ. Չիլինգարյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* *մասնակցությամբ դատավորներ*  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «Դոն-Ալֆոն» սահմանափակ պատասխա-  
նատվությամբ ընկերության սնանկության գործով կառավարիչ Յուրիկ Օհանյանի վճռա-  
բեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.10.2016 թվականի որոշման  
դեմ՝ ըստ հայցի «Դոն-Ալֆոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության  
(այսուհետ՝ Ընկերություն) սնանկության գործով կառավարիչ Յուրիկ Օհանյանի (այսու-  
հետ՝ Կառավարիչ) ընդդեմ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության  
(այսուհետ՝ Կազմակերպություն)՝ Ընկերության կողմից փոխանցված գումարները նրա  
անվամբ բացված սնանկության հատուկ հաշվին փոխանցելու պահանջի մասին,

**ՊԱՐՁԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Կառավարիչը պահանջել է պարտավորեցնել Կազմակերպու-  
թյանը վերադարձնել սնանկ ծանաչված Ընկերության կողմից օրենքի խախտմամբ փո-  
խանցված 5.000.000 ՀՀ դրամի չափով գումարը՝ այն փոխանցելով պարտապանի անվա-  
մբ բացված սնանկության հատուկ հաշվին:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավա-  
տության դատարանի (դատավոր՝ Ս. Հովսեփյան) (այսուհետ՝ Դատարան) 21.06.2016 թվա-  
կանի վճռով հայցը բավարարվել է, վճռվել է՝ պարտավորեցնել Կազմակերպությանը  
վերադարձնել սնանկ ծանաչված պարտապան Ընկերության կողմից և նրա պարտավո-  
րությունների համար փոխանցված 5.000.000 ՀՀ դրամի չափով գումարը՝ այն փոխանցե-  
լով պարտապանի անվամբ բացված սնանկության հատուկ հաշվին:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետև՝ Վերաքննիչ դատարան) 27.10.2016 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 21.06.2016 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կառավարիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կազմակերպության ներկայացուցիչը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասը, խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 79-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես է հերքել փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ հայցվորը չի հիմնավորել Կազմակերպությանը 5.000.000 ՀՀ դրամի չափով փոխանցումը հենց Ընկերության կողմից կատարված լինելը, հաշվի չի առել, որ ըստ ներկայացված 04.02.2013 թվականի թիվ 248265 վճարման հանձնարարագրի՝ որպես վճարող նշվել է Ընկերությունը, վճարման նպատակ բաժնում նշվել է «Խողովակի արժեք», իսկ 13.02.2013 թվականի թիվ 222875 վճարման հանձնարարագրում թեև որպես վճարող նշվել է «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ն, սակայն որպես վճարման նպատակ նշվել է «Ընկերության կողմից ձեռք բերված խողովակաշարի արժեք»: Տվյալ դեպքում ակնհայտ է, որ վերը նշված երկու փոխանցումներն էլ պատկանել են Ընկերությանը, պարզապես Կազմակերպության նկատմամբ պարտավորությունները կատարվել են օրենքը շրջանցելով՝ նկատի ունենալով, որ «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ն, լինելով Ընկերության պարտապանը, ուղղակի փոխանցում վերջինիս կատարել չէր կարող: Կազմակերպության պարտավորությունը բավարարվել է ոչ թե ուղղակիորեն Ընկերության միջոցով, այլ շրջանցելով սնանկության վարույթը: Նշված գումարով՝ 5.000.000 ՀՀ դրամով, նվազել է պարտապանի դրամական պարտավորությունն այն դեպքում, երբ վերջինս արդեն իսկ ձանաչված էր սնանկ, և օրենքով արգելվում էր պարտապանի կողմից պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը՝ առանց դատարանի որոշման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.10.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 21.06.2016 թվականի վճիռն:

**2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները.**

Վերաքննիչ դատարանը միանգամայն հիմնավոր եզրահանգում է կատարել այն մասին, որ անկախ այն հանգամանքից, թե վիճարկվող գումարն ինչ նպատակով է «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ն փոխանցել Կազմակերպության բանկային հաշվեհամարին, անվիճելի է, որ այն փոխանցվել է ոչ սնանկ ձանաչված Ընկերության կողմից:

Վճռաբեկ բողոքը բավարարվելու դեպքում կստեղծվի մի իրավիճակ, երբ Ընկերության հետ գույքային ընդհանրություն չունեցող երրորդ անձանց կողմից Կազմակերպությանը փոխանցված դրամական միջոցները կվերադարձվեն ոչ թե երրորդ անձանց, այլ՝ Ընկերությանը, որը որևէ կապ չունի այդ դրամական միջոցների փոխանցման հետ:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Թիվ ԿԴ2/0109/04/12 քաղաքացիական գործով ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27.11.2012 թվականի վճռով Ընկերությունը ձանաչվել է սնանկ, 17.12.2012 թվականի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Յուրիկ

Օհանյանը: 11.04.2013 թվականին հաստատվել է Ընկերության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը, որում 08.06.2015 թվականի և 11.06.2015 թվականի որոշումների հիման վրա ավելացվել է Կազմակերպության (սախկինում՝ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ) պահանջը՝ 8.463.056 ՀՀ դրամի չափով: 17.09.2013 թվականի որոշումներով Ընկերության գործունեությունը կասեցվել է, և վերջինիս նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ **(գ.թ. 28-34, 48):**

2. «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և Ընկերության միջև 07.04.2010 թվականին կնքվել է խողովակների առուվաճառքի պայմանագիր: Կողմերի միջև 21.01.2013 թվականին կազմված հաշվարկների փոխադարձ ստուգման ակտի համաձայն՝ 30.11.2012 թվականի դրությամբ նշված պայմանագրի շրջանակներում վաճառված խողովակների դիմաց Ընկերության պարտքը «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին կազմել է 23.702.000 ՀՀ դրամ **(գ.թ. 6, 25-26):**

3. Ընկերության և «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ի միջև 10.06.2012 թվականին կնքված առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագիրը ստորագրելու պահից 90 օրվա ընթացքում Ընկերությանը վճարել ապրանքի՝ մետաղյա խողովակների արժեքը՝ 14.515.612 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) **(գ.թ. 18):**

4. ՀՀ էլեկտրոնային կառավարման համակարգից քաղվածքի համաձայն՝ «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ի հիմնադիրն է Գագիկ Գուրգենի Սարգսյանը **(գ.թ. 16):**

5. 04.02.2013 թվականի թիվ 248265 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Կազմակերպությանը («ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին) փոխանցվել է 3.000.000 ՀՀ դրամ, որպես վճարող նշվել է ««Ռոն Ալֆոն» ՍՊԸ/Գուրգեն Սարգսյան», իսկ որպես վճարման նպատակ՝ «Խողովակի արժեք» **(գ.թ. 43):**

6. 13.02.2013 թվականի թիվ 222875 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Կազմակերպությանը («ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին) փոխանցվել է 2.000.000 ՀՀ դրամ, որպես վճարող նշվել է ««Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ», իսկ որպես վճարման նպատակ՝ «Ընկերության կողմից ձեռք բերված խողովակաշարի դիմաց» **(գ.թ. 44):**

7. Կառավարիչը 07.03.2015 թվականի գրությամբ առաջարկել է Կազմակերպությանը Ընկերության կողմից վճարված 5.000.000 ՀՀ դրամը փոխանցել վերջինիս սնանկության հատուկ հաշվին, սակայն Կազմակերպությունը 25.03.2015 թվականի գրությամբ մերժել է այն **(գ.թ. 13-14):**

#### **4. Վճարելի դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումները**

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սույն դեպքում Վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պարտատերերի պահանջների բավարարման սառեցման (մորատորիումի) ընթացքում սնանկ ձանաչված պարտապանի՝ պարտապան հանդիսացող անձի կողմից սնանկ ձանաչված պարտապանի պարտատիրոջը դրամական կամ այլ բավարարում տալու հնարավորության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի սխալ մեկնաբանության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարելի դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք սնանկ ձանաչված պարտապանի հետ պարտավորական հարաբերությունների մեջ գտնվող անձի՝ պարտապանի կողմից ի*



*կայարարումն նշված պարտավորության սնանկ ճանաչված պարտապանի պարտապիրողը վճարում կարարելը կարող է համարվել առանց դատարանի որոշման սնանկ ճանաչված պարտապանի կողմից պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտապիրերին դրամական կամ այլ բավարարում տալ՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի իմաստով:*

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանն արգելանք է դնում պարտապանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա (...):

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 39-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից արգելվում է առանց դատարանի որոշման **պարտապանի կողմից** իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից արգելվում է առանց դատարանի որոշման **պարտապանի կողմից** իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, բացառությամբ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերի:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կառավարչի լիազորությունների մեջ է մտնում նաև գույքագրում կազմակերպելը և պարտապանին պատկանող գույքի պահպանության համար միջոցներ ձեռնարկելը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, կառավարիչն իրականացնում է պարտապանի գույքի գույքագրում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքագրումը պետք է ընդգրկի պարտապանին պատկանող ամբողջ գույքը, ներառյալ՝ երրորդ անձանց համար կատարված, սակայն չվճարված աշխատանքները և ծառայությունները, ինչպես նաև պարտապանի տիրապետման ներքո գտնվող իրերը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանին պատկանող գույքի կառավարումից և տնօրինումից ստացված եկամուտը փոխանցվում է պարտապանի սնանկության հատուկ հաշվին և բաշխվում է պարտատերերի միջև՝ գույքի վաճառքից ստացված միջոցների հետ միասին:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքից (օտարումից) ստացված (փոխհատուցված) միջոցները բաշխվում են նույն օրենքով սահմանված հերթականությամբ՝ կառավարչի կողմից հաստատված և պարտատերերի կողմից ընդունված (չառարկված) միջանկյալ բաշխման ծրագրին համապատասխան:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածով սահմանվում է չապահովված պահանջների բավարարման հերթականությունը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի դրամական միջոցներն անբավարար լինելու դեպքում համապատասխան հերթի պարտատերերի միջև դրանք բաշխվում են բավարարման ենթակա պահանջների գումարների համամասնորեն, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

ՀՀ վճարեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ

անձին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է՝ այդ շրջանառության անվճարունակ մասնակիցներին ֆինանսապես առողջացնելու կամ նրանց քաղաքացիական շրջանառությունից դուրս մղելու նպատակով, որպեսզի վերջիններիս անվճարունակության հետևանքով չտոնահարվեն նաև քաղաքացիական շրջանառության մնացած մասնակիցների շահերը: ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ պարտապանին սնանկ ճանաչելը պարտավորությունը ոչ պատշաճ կատարած պարտապանի նկատմամբ դատական այնպիսի միջամտություն է, որի պայմաններում սահմանափակվում է պարտապանի գործողությունների շրջանակը մինչև սնանկության վարույթի ավարտը, որպիսի կարգավորման նպատակը պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովելն է (*տե՛ս*, «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՍԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ն ընդդեմ Հարության Վարդանյանի թիվ ԵՄԴ/0049/04/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով օրենսդիրը նախատեսել է պարտատերերի պահանջների բավարարման սառեցման կամ այլ կերպ ասած՝ մորատորիումի ինստիտուտը: Պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը կամ մորատորիումը պարտապանի վճարունակության վերականգնման նպատակին հասնելու միջոցներից մեկն է: Այն առաջնահերթ ուղղված է **պարտապանի գույքի էական նվազեցում թույլ չտալուն** (*տե՛ս*, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն ընդդեմ «ԱՄՏԷ» ՓԲԸ-ի և մյուսների թիվ ԵԿԴ/1873/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ սնանկության գործընթացի հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից սառեցվում է պարտատերերի պահանջների բավարարումը (մորատորիում): Այդ պահից սառեցվում են պարտատերերի բոլոր գործողությունները, որոնք ուղղված են պարտապանի նկատմամբ պահանջների բավարարմանը (*տե՛ս*, *օրինակ*, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն ընդդեմ «Սպիրակի վերելակաշինական գործարան» ՓԲԸ-ի թիվ 3-1717(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ սնանկության վարույթի առանձնահատկություններով, սնանկության նպատակներով պայմանավորված՝ պարտապանի նկատմամբ կիրառվում են մի շարք սահմանափակումներ՝ սկսած պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմումը վարույթ ընդունելու պահից: Մասնավորապես՝ արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի պարտավորություններով պարտատիրոջը դրանական կամ այլ բավարարում տալը («Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և 2-րդ մասի 2-րդ կետեր), պարտապանի գույքը տնօրինելը («Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետ), պարտատիրոջն արգելվում է մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմում ներկայացնելը պարտապանի նկատմամբ ստանձնած ցանկացած պարտավորության հաշվանցը պարտապանի նկատմամբ ունեցած իր պահանջի հետ («Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետ) և այլն: Նշված սահմանափակումներն ինքնանպատակ չեն, այլ ուղղված են սնանկության գործընթացում պարտապանի գույքի ամբողջականության ապահովմանը՝ նպատակ ունենալով ապահովելու պարտատերերի պահանջների՝ օրենքով սահմանված հերթականությամբ համաչափ բավարարումը: Պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը միաժամանակ ուղղված է նաև պարտապանի շահերի բավարարմանը՝ նկատի ունենալով, որ պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է դատարանի հսկողությամբ, մասնավորապես՝ միջանկյալ բաշխման ծրագրին կամ ֆինանսական առողջացման ծրագրին համապատասխան: Այսպես, օրինակ, ֆինանսական առողջացման ծրագրով սահմանվում է պարտատերերի պարտավորությունների մարման ժամանակացույցը, նրանց պահանջների դիմաց վճարում-

ներ կատարելու կարգը, ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում կարող է իրականացվել պարտապանի ամբողջ գույքի կամ դրա մի մասի վաճառք կամ պարտապանի գույքը պարտատերերին հաշվանցով փոխանցում և այլն: Այսինքն՝ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է այնպես, որ հնարավոր լինի ֆինանսապես առողջացնել սնանկ ճանաչված պարտապանին: Հետևաբար պարտատերերի պահանջների բավարարման սանձեցման նպատակը մի կողմից բոլոր պարտատերերի շահերի ապահովումն է, որպեսզի որևէ պարտատեր օրենքով սահմանված առաջնահերթության խախտմամբ բավարարում չստանա, մյուս կողմից պարտապանի շահերի ապահովումն է՝ նկատի ունենալով, որ պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է օրենքով սահմանված ընթացակարգի հստակ պահպանմամբ՝ նպատակ ունենալով հնարավորինս ապահովելու նաև պարտապանի գործունեությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու պահից պարտապանի պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատիրոջը դրամական կամ այլ բավարարում տալու արգելքը վերաբերում է ոչ միայն ուղղակիորեն սնանկ ճանաչված պարտապանի կողմից, այլ նաև վերջինիս պարտապան հանդիսացող անձանց կողմից, ի կատարումն սնանկ ճանաչված պարտապանի հանդեպ ունեցած պարտավորության, սնանկ ճանաչված պարտապանի պարտատիրոջը դրամական կամ այլ բավարարում տալուն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ պարտավորությունները կենտրոնանում են սնանկության վարույթում: Այդ իսկ նկատառումով «Մասնկության մասին» ՀՀ օրենքում 17.06.2016 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում: Նույն տրամաբանությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում: Բացի այդ, նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի կողմից սնանկությունը ճանաչելու դիմումին կից ներկայացվում է նաև վերջինիս պարտատերերի և պարտապանների ցուցակը: Մասնկության վարույթում սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ պարտավորությունների կենտրոնացմամբ հնարավորություն է ստեղծվում ապահովելու վերջինիս ակտիվների հավաքագրումը և դրանց հիման վրա **բոլոր** պարտատերերի շահերի ապահովումը՝ օրենքով սահմանված առաջնահերթությամբ վերջիններիս պահանջների բավարարմամբ: Հետևաբար, եթե սնանկ ճանաչված պարտապանն ունի իր օգտին կատարման ենթակա պարտավորություններ, այսինքն՝ տվյալ պարտավորություններով պարտատեր է, ապա պարտավորությունների կատարումը հնարավոր է **միայն** սնանկության վարույթի շրջանակներում, այլ կերպ ասած՝ պարտավորության կատարման արդյունքը պետք է կենտրոնանա սնանկության վարույթում, որպեսզի հետագայում բաշխվի պարտատերերի միջև: Նույն տրամաբանությամբ սնանկ ճանաչված պարտապանի պարտապաններն իրենց պարտավորությունները չեն կարող կատարել հօգուտ սնանկ ճանաչված պարտապանի պարտատերերի՝ շրջանցելով սնանկության վարույթը: Այլ կերպ ասած՝ չի թույլատրվում սնանկ ճանաչված պարտապանի պարտատիրոջն անմիջականորեն բավարարում տալը սնանկ ճանաչված պարտապանի հետ պարտավորական հարաբերությունների մեջ գտնվող պարտապանի կողմից:

Վճռաբեկ դատարանը նաև փաստում է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ օրենսդրի կողմից սահմանված

արգելքը վերաբերում է **պարտապանի կողմից** պարտատիրոջը բավարարում տալուն: Այդուհանդերձ, հաշվի առնելով նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի այն պահանջը, որ իրավական ակտի մեկնաբանությունը չպետք է փոխի դրա իմաստը, ինչպես նաև հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ սնանկության գործընթացի որոշակիությունն ու կանխատեսելիությունն ապահովվելու, ինչպես նաև «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ և 84-րդ հոդվածներով սահմանված՝ պարտատերերի պահանջների բավարարման հերթականությունն ու կարգը պահպանելու նպատակով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «ա» կետով և գործող խմբագրությամբ 2-րդ կետով ամրագրված իրավանորմը ենթակա է ավելի լայն մեկնաբանման՝ այն համադրելով նշված օրենքի այլ պահանջների հետ, այլապես նշված նորմի ոչ համակարգային մեկնաբանումը տվյալ դեպքում կխախտի իրավական ակտի իմաստը: Ուստի Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ պարտատերերի պահանջների բավարարման սառեցման (մորատորիումի) ընթացքում պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալու արգելքը վերաբերում է նաև պարտապանի հետ պարտավորական հարաբերությունների մեջ գտնվող այլ անձանց՝ սնանկ ճանաչված պարտապանի պարտապան հանդիսացող անձանց կողմից սնանկության վարույթը շրջանցելով սնանկ ճանաչված պարտապանի պարտատիրոջը դրամական կամ այլ բավարարում տալուն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ի և Ընկերության միջև 07.04.2010 թվականին կնքվել է խողովակների առուվաճառքի պայմանագիր, և 30.11.2012 թվականի դրությամբ նշված պայմանագրի շրջանակներում Ընկերության պարտքը «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ին կազմել է 23.702.000 ՀՀ դրամ: Ընկերության և «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ի միջև 10.06.2012 թվականին կնքված առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագիրը ստորագրելու պահից 90 օրվա ընթացքում Ընկերությանը վճարել ապրանքի արժեքը՝ 14.515.612 ՀՀ դրամ: «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ի հիմնադիրն է Գագիկ Գուրգենի Սարգսյանը: 04.02.2013 թվականի թիվ 248265 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Կազմակերպությանը («Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ին) փոխանցվել է 3.000.000 ՀՀ դրամ, որպես վճարող նշվել է ««Դոն Ալֆոն» ՍՊԸ/Գուրգեն Սարգսյան», իսկ որպես վճարման նպատակ՝ «Խողովակի արժեք»: 13.02.2013 թվականի թիվ 222875 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Կազմակերպությանը («Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ին) փոխանցվել է 2.000.000 ՀՀ դրամ, որպես վճարող նշվել է ««Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ», իսկ որպես վճարման նպատակ՝ «Ընկերության կողմից ձեռք բերված խողովակաշարի դիմաց»:

Դատարանը, հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ Կազմակերպության ոչ իրավաչափ գործողությունները հանգեցրել են պարտապան Ընկերության գույքի նվազեցման, խոչընդոտել նրա պարտատերերի իրավաչափ պահանջների բավարարմանը, որպիսի հանգամանքն էլ հիմք է հայցը բավարարելու համար: Դատարանը, անդրադառնալով այն փաստարկին, որ փոխանցումները կատարվել են ոչ թե պարտապանի կողմից, այլ փոխանցվել են այլ անձանց կողմից, արձանագրել է, որ ներկայացված վճարման հանձնարարագրերում վճարողների և վճարման նպատակների տվյալներով հիմնավորվում է, որ դրանք կատարվել են հենց Ընկերության կողմից, մասնավորապես՝ հաշվի առնելով, որ «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ն վճարային պարտավորություններ ունի Ընկերության, իսկ վերջինս էլ Կազմակերպության նկատմամբ:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը և այն փոփոխելով՝ հայցը մերժելով, եզրահանգել է, որ հայցվորի կողմից չի ապացուցվել, որ փոխանցումները կատարվել են հենց պարտապանի, այլ ոչ թե՛ երրորդ անձանց կողմից: Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ վճարման հանձնարարագրերում վճարողների և վճարման նպատակների տվյալներից հետևում է, որ վճարումները կատարվել են «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ի կողմից՝ ի կատարումն Ընկերության հանդեպ ունեցած պարտավորության, այդուհանդերձ գտել է, որ անկախ այն հանգամանքից, թե «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ի

կողմից գումարներն ինչ նպատակով են փոխանցվել Կազմակերպությանը, անվիճելի է այն փաստը, որ նշված գումարները չեն փոխանցվել սնանկ ձանաչված պարտապան Ընկերության կողմից:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումների հիմնավորվածությանը, գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է հետազոտել և գնահատել գործի լուծման համար **էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը** և միայն նշված պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը (*լրե՛ս, «Երևան Զոր» ՓԲԸ-ն ընդդեմ Խսկոսի Ավագյանի և մյուսների թիվ ԵԱԳԳ/0417/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերից հետևում է, որ Ընկերությանը սնանկ ձանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն՝ մորատորիումի ընթացքում, «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ն առուծախի պայմանագրից բխող իր դրամական պարտավորությունն Ընկերության հանդեպ կատարելու փոխարեն վճարման ենթակա գումարը միանգամից փոխանցել է Կազմակերպության բանկային հաշվեհամարին՝ դրանով միաժամանակ կատարելով և՛ իր դրամական պարտավորությունն Ընկերության հանդեպ, և՛ վերջինիս դրամական պարտավորությունը Կազմակերպության հանդեպ: Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված փոխանցումները, կատարված լինելով Ընկերության պարտապան հանդիսացող «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ի կողմից հօգուտ Ընկերության պարտատեր Կազմակերպության, հակասում են «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված սահմանափակմանը: Դրա արդյունքում խախտվել է սնանկության գործընթացի որոշակիությունն ու կանխատեսելիությունը, մեկ պարտատիրոջ իրավունքներն ու շահերը գերակայել են մնացած պարտատերերի իրավունքների և շահերի հանդեպ: Մասնավորապես՝ ստեղծված իրավիճակում պարտատերերից մեկը ստացել է բավարարում սահմանված հերթից դուրս և պահանջների բավարարման կարգի խախտմամբ, իսկ մյուս պարտատերերը գրկվել են վճարված գումարների մատվ սահմանված կարգով բավարարում ստանալու հնարավորությունից:

Ուստի Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Վերաքննիչ դատարանը, գումարի փոխանցումը համարելով կատարված ոչ թե Ընկերության, այլ երրորդ անձի կողմից, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի իրավական նորմը մեկնաբանել է ոչ համակարգային, նեղ ծավալով՝ միայն այդ նորմի սահմաններում՝ առանց հաշվի առնելու «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սնանկության վարույթի առանձնահատկությունները: Մինչդեռ Դատարանը հիմնավոր եզրահանգման է եկել այն մասին, որ «Ռոյալ Պարադիզ» ՍՊԸ-ի կողմից Կազմակերպության բանկային հաշվեհամարին գումարների փոխանցումը կատարվել է ի կատարումն Կազմակերպության առջև Ընկերության ունեցած դրամական պարտավորության: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը միանգամայն հիմնավորված եզրահանգում է կատարել այն մասին, որ տեղի ունեցածի արդյունքում 5.000.000 ՀՀ դրամի չափով նվազել է պարտապանի գույքն այն դեպքում, երբ վերջինս արդեն իսկ ձանաչված էր սնանկ, և օրենքով արգելվում էր պարտապանի կողմից պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը՝ առանց դատարանի որոշման:

*Վճռաբեկ բողոքի պատրաստմանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով անրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորոգյալ դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իա.1» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են սնանկության կառավարիչները՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» կետի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար, գույքային պահանջի գործերով, պետական տուրքը գանձվում է հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որի արդյունքում Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանվում է և օրինական ուժ է տրվում Դատարանի վճռին, ինչպես նաև հաշվի առնելով, որ հայցվորը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իա.1» կետի ուժով ազատված է պետական տուրքի վճարումից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կազմակերպությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 150.000 ՀՀ դրամ (5.000.000\*3%)՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.10.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.06.2016 թվականի վճռին:
2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 150.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0062/04/16  
 դատարանի որոշում 2017թ.  
 Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0062/04/16  
 Նախագահող դատավոր՝ Ա. Սմբատյան  
 Դատավորներ՝ Կ. Հակոբյան  
 Ա. Հունանյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
 և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահող յայտը  
 մասնակցությանը դատավորները*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
 Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
 Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
 Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
 Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
 Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
 Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին  
 դռնբաց դատական նիստում, քննելով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.01.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի դիմումի ընդդեմ «Գամմա Կրեդիտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ սնանկ ձանաչելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### **1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ընկերությանը ձանաչել սնանկ:  
 Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 20.09.2016 թվականի վճռով Բանկի դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.01.2017 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 20.09.2016 թվականի վճիռը բեկանվել է, և Բանկի կողմից ներկայացված դիմումը՝ մերժվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:  
 Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

#### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.



Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն օրենքով սահմանված կարգով լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի կերպով չի հետազոտել գործի փաստական հանգամանքները և ներկայացված ապացույցները, ճիշտ չի գնահատել դրանք և գործով կայացրել է անհիմն և չպատճառաբանված որոշում: Մասնավորապես՝ հղում կատարելով թիվ ԵԿԴ/0074/04/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշմանը՝ գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է պարտավորության հիմք հանդիսացող գործարքը, ապա վճարային պարտավորությունը վիճելի է, հետևաբար բացակայում է սնանկ ճանաչելու հիմքերից մեկը՝ վճարային պարտավորության անվիճելիությունը:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը չի համադրել նշված որոշման և սույն գործի փաստական հանգամանքները, հաշվի չի առել սույն գործի առանձնահատկությունները՝ անտեսելով, որ Դատարանն իրավացիորեն եկել է այն հետևության, որ անկախ թիվ ԵԿԴ/2093/02/16 քաղաքացիական գործի ելքից՝ Ընկերության վճարային պարտավորությունը Բանկի նկատմամբ չի դադարի՝ գործարքի անվավերության հետևանքով պարտապանը պարտավոր կլինի վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը՝ վարկի 470.000 ԱՄՆ դոլարը, ինչը, անկախ տոկոսների կամ տույժերի վերահաշվարկի հանգամանքից, ենթադրում է նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող վճարային պարտավորության առկայություն: Պայմանագիրն անվավեր ճանաչելու պարտապանի պահանջի մերժման դեպքում, առավել ևս, այդ հանգամանքը չի կարող որևէ ազդեցություն ունենալ սնանկության վարույթի ընթացքի վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.01.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 20.09.2016 թվականի վճիռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկի և Ընկերության միջև 27.12.2013 թվականին կնքվել է թիվ VP 023568 վարկային պայմանագիրը, որի համաձայն՝ Բանկն Ընկերությանը տրամադրել է 470.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ՝ տարեկան 13 տոկոս տոկոսադրույքով՝ մինչև 08.01.2019 թվականը վարկը և տոկոսները պայմանագրի անբաժանելի մաս կազմող մարման ժամանակացույցին համապատասխան մարելու պայմանով **(գործի հավելված, գ.թ. 7-13):**

2) Համաձայն Բանկի կողմից 24.02.2016 թվականին տրված քաղվածքի՝ վարկի մնացորդը 24.02.2016 թվականի դրությամբ կազմել է 457.120 ԱՄՆ դոլար, որից ժամկետանց՝ 14.642,22 ԱՄՆ դոլար, հաշվարկված տոկոսը՝ 18.398,9 ԱՄՆ դոլար, որից ժամկետանց՝ 14.774,27 ԱՄՆ դոլար, վարձավճարը՝ 572.460 ՀՀ դրամ, ժամկետանց գումարի տույժը՝ 1.877 ԱՄՆ դոլար, ժամկետանց տոկոսի տույժ՝ 2.339,91 ԱՄՆ դոլար: Վարկի գումարի վերջին մարումը կատարվել է 02.11.2015 թվականին, իսկ տոկոսի գումարի վերջին մարումը՝ 01.12.2015 թվականին **(գործի հավելված, գ.թ. 15-16):**

3) Ընկերությունը 01.06.2016 թվականին Դատարան է ներկայացրել առարկություն՝ հայտնելով, որ 24.05.2016 թվականին հայց է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ Բանկի և Ընկերության միջև 27.12.2013 թվականին կնքված թիվ VP 023568 վարկային պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, և խնդրել է մերժել Բանկի դիմումը **(գործի հավելված, գ.թ. 32-35):**

4) Ընկերությունը 24.05.2016 թվականին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ Բանկի՝ խնդրելով անվավեր ճանաչել Բանկի և Ընկերության միջև 27.12.2013 թվականին կնքված թիվ VP 023568 վարկային պայմանագիրը՝ նկատի ունենալով, որ

այն հակասում է «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին, քանի որ տրամադրված վարկի (մայր գումարի) գնանշումը և տրամադրված վարկից վճարվող տոկոսները (պայմանագիր գինը) սահմանված են ԱՄՆ դոլարով: Նշված հայցադիմումն ընդունվել է վարույթ 27.05.2016 թվականի որոշմամբ (**գործի հավելված, գ.թ. 37-40**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք այլ քաղաքացիական գործով ցանկացած հիմքով նյութաիրավական վեճի առկայությունը բացառում է սնանկության գործով պարտավորության անվիճելիությունը և ըստ այդմ՝ պարտապանին սնանկ ճանաչելու հնարավորությունը:*

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել հարկադրված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

**բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),**

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

**դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:**

ՀՀ սահմանադրական դատարանը 25.02.2008 թվականի թիվ ՍԴԹ-735 որոշմամբ արձանագրել է, որ եթե առկա է վճարային պարտավորությունների վերաբերյալ վեճ, ապա պարտապանը պետք է հնարավորություն ունենա այդ վեճը լիարժեք դատական քննության առարկա դարձնել, որից հետո միայն կարող է հարց դրվել նրա անվիճել-

լի վճարային պարտավորությունների կատարման մասին: ՀՀ սահմանադրական դատարանը նաև նշել է, որ «պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր» ձևակերպումը ենթադրում է, որ խոսքը վերաբերվում է ոչ թե պարտապանի պարտավորության կամ կետանցի բացակայության փաստն ապացուցող հիմքերին, այլ նյութաիրավական վեճի առկայությանը, այն է՝ պարտավորության վիճելիությունը հավաստող հիմքերին:

ՀՀ վճռաբեկ դատարանը *«Լեռնամերսայրոգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սիփիան 1» ՍՊԸ-ի* գործով արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունը վկայում է, որ վճարային պարտավորությունները, որոնց կետանց է թույլ տվել պարտապանը, հիմք են դատարանի վճռով պարտապանին սնանկ ճանաչելու համար, եթե դրանք անվիճելի են, իսկ նշված դրույթը չի բացառում վճարային պարտավորությունների հիմքում դրված գործարքների վերաբերյալ վեճի քննությունն այլ վարույթի շրջանակներում: Նման եզրահանգման համար ՀՀ վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել նաև այն հանգամանքը, որ նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ սնանկ ճանաչելու հիմք է ոչ թե վճարային պարտավորության, այլ **անվիճելի** վճարային պարտավորության առկայությունը: «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի հիմքով վճարային պարտավորությունների անվիճելի լինելը կասկածի տակ առնելու համար բավարար է ոչ միայն պարտապանի պարտավորության կամ կետանցի բացակայության փաստն ապացուցող հիմքերի առկայությունը, այլ նյութաիրավական վեճի առկայությունը, որն ինքնին պարտավորության վիճելիությունը հավաստող հիմք է: Հետևաբար, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր» ձևակերպումը ներառում է նաև պարտավորության հիմքերի հետ կապված նյութաիրավական վեճի առկայությունը (*տե՛ս, թիվ ԵԿԴ/0074/04/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը կարգավորում է նաև այն դեպքերը, երբ պարտապանը վիճարկում է պարտավորության անվիճելի լինելու փաստը, այլ կերպ ասած՝ առարկում է իրեն սնանկ ճանաչելու պահանջի դեմ, և այդ առարկությունները վերաբերում է վճարային պարտավորությանը (այլ ոչ թե կետանցին կամ կետանցի շարունակվելուն): Նման պայմաններում վերը հիշատակված հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի **«անվիճելի վճարային պարտավորություն» եզրույթի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է այն դիտարկել նույն կետի «դ» ենթակետի համառոտում**: Մասնավորապես՝ այն պարտավորությունը, որը վիճարկվում է պարտապանի կողմից կամ որի դեմ պարտապանը ներկայացրել է առարկություն, անվիճելի է, եթե այդպիսի առարկությունն ուղղված է պահանջի մի մասի դեմ, իսկ մնացած մասը չի վիճարկվում: Այլ կերպ՝ չվիճարկվող մասը, եթե այն գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, անվիճելի է դարձնում պարտավորությունն առնվազն այդ մասով (*տե՛ս, «Յունիքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Գևորգ Հարոյանի թիվ ԵՇԴ/0009/04/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Զարգացնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված «անվիճելի վճարային պարտավորությունն» առկա է, մասնավորապես, այն դեպքում, երբ պարտապանն առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և **պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի** (ներառյալ՝ պահանջի հաշվանցը): Հետևաբար, օրենսդիրը կարևորել է, որ վճարային պարտավորության անվիճելիությունը կասկածի տակ դնելու համար պարտապանը **պետք է ներկայացնի բավարար ապացույցներ** իր առարկության հիմնավորման համար: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման ապացույցը պետք է լինի այնպիսին, որ առերևույթ կասկածի տակ դնի պարտատիրոջ պահանջի հիմնավորվածությունը, անվիճելիությունը (օրինակ, վկայի պարտավորության կատարումից ընդհանրապես հրաժարվելու հնարավորության

մասին, ինչպես որ առկա է եղել վերոնշյալ թիվ ԵԿԴ/0074/04/09 քաղաքացիական գործի պայմաններում): Ընդ որում, եթե անգամ առարկությունը հիմնավոր լինելու պայմաններում այդուհանդերձ առկա է լինում նաև չվիճարկվող պահանջ, որի չափը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, ապա պարտապահին սնանկ ճանաչելը չի բացառվում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ պահանջի դեմ առարկություն ներկայացնելը կարող է վերաբերել պարտավորության հիմքերին, պահանջն արդեն կատարված լինելուն, պահանջի չափին և այլն: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նյութափրավական վեճի առկայությունը, որը խոչընդոտ չի հանդիսանալու սնանկության վարույթում ներկայացված և օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող պահանջի բավարարմանը, այլ կերպ ասած՝ ամեն դեպքում առկա է լինելու նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող պահանջ՝ անկախ նյութափրավական վեճի ելքից, չի կարող արգելք հանդիսանալ պարտավորությունն անվիճելի դիտելու համար: Նման հետևությունը պայմանավորված է նրանով, որ օրենսդրի կողմից պարտավորության անվիճելիությունն ինքնանպատակ չի սահմանվել, և ցանկացած նյութափրավական վեճի առկայության դեպքում սնանկ ճանաչելու հնարավորությունը բացառելը կարժեգրկի նման նորմի նպատակը, այն է՝ բացառել անձին սնանկ ճանաչելը, մասնավորապես, այնպիսի պարտավորությունների վրա հիմնված պահանջով, որը հետագայում կարող է վերանալ մեկ այլ գործի շրջանակներում կայացված ակտի հիման վրա: Այսինքն՝ նյութափրավական վեճը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն ստեղծի պարտապահի կողմից ընդհանրապես չկատարել պարտատիրոջ պահանջը՝ անկախ նյութափրավական վեճի հիմքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և Ընկերության միջև 27.12.2013 թվականին կնքվել է թիվ VP 023568 վարկային պայմանագիրը, որի համաձայն՝ Բանկը Ընկերությանը տրամադրել է 470.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ: Վարկի մնացորդը 24.02.2016 թվականի դրությամբ կազմել է 457.120 ԱՄՆ դոլար, որից ժամկետանց՝ 14.642,22 ԱՄՆ դոլար: Ընկերությունը 24.05.2016 թվականին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ Բանկի՝ խնդրելով անվավեր ճանաչել Բանկի և Ընկերության միջև 27.12.2013 թվականին կնքված թիվ VP 023568 վարկային պայմանագիրը՝ նկատի ունենալով, որ այն հակասում է «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին, քանի որ տրամադրված վարկի (մայր գումարի) գնանշումը և տրամադրված վարկից վճարվող տոկոսները (պայմանագիր գինը) սահմանված են ԱՄՆ դոլարով: Նշված հայցադիմումն ընդունվել է վարույթ 27.05.2016 թվականի որոշմամբ:

Դատարանը, Բանկի դիմումի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ անգամ Ընկերության հայցը բավարարվելու և գործարքն անվավեր ճանաչվելու դեպքում պետք է կիրառվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածով սահմանված գործարքի անվավերության հետևանքները, այսինքն՝ Ընկերությունը Բանկին պետք է վերադարձնի այն դրամական միջոցները, որոնք վարկի ձևով ստացել է վարկային պայմանագրի հիման վրա: Հայցը մերժվելու դեպքում առավել ևս դատական ակտը որևէ ազդեցություն չի կարող ունենալ սնանկության վարույթի վրա: Ուստի Դատարանը գտել է, որ առկա են Ընկերությանը սնանկ ճանաչելու օրենքով նախատեսված պայմանները: Նկատի ունենալով, որ Ընկերությունը վարկային պայմանագիրը վիճարկելու հայց ներկայացրել է սնանկության դիմումը վարույթ ընդունելուց հետո, Դատարանը գտել է, որ նման հայց ներկայացնելը նպատակ է հետապնդում արհեստականորեն խոչընդոտել սնանկության վարույթը: Դատարանը նաև կարևորել է, որ թեև Ընկերության կողմից հայց է ներկայացվել պայմանագիրը՝ «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու պահանջով, այդուհանդերձ, վերջինիս կողմից նշված պայմանագրով ստանձնած պարտավորությունը շուրջ մեկ տարուց ավելի պատշաճորեն կատարվել է:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը բեկանելիս պատճառաբանել է, որ բուլոբ այն դեպքերում, երբ վիճարկվում է պարտավորության հիմք հանդիսացող գործարքը, ապա վճարային պարտավորությունը վիճելի է, հետևաբար բացակայում է սնանկ ճանաչելու հիմքերից մեկը՝ վճարային պարտավորության անվիճելիությունը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանի եզրահանգումը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած դիրքորոշումներին, քանի որ, եթե առկա է վճարային պարտավորությունների վերաբերյալ վեճ, ապա պարտապանը պետք է հնարավորություն ունենա այդ վեճը լիարժեք դատական քննության առարկա դարձնել, որից հետո միայն կարող է հարց դրվել նրա անվիճելի վճարային պարտավորությունների կատարման մասին: Ուստի Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը, չկիրառելով նույնանման փաստական հանգամանքներ ունեցող թիվ ԵԿԴ/0074/04/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը, թույլ է տվել ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի խախտում:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վճարային պարտավորության անվիճելիության հատկանիշի վերաբերյալ վերը նշված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը, արձանագրում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետում ամրագրված հատկանիշները պետք է դիտարկել որպես մեկ ամբողջություն՝ պայմանով, որ սնանկության պահանջի դեմ պարտապանի առարկությունները պետք է բավարար չափով հիմնավորեն պահանջի անհիմն լինելը: Ընդ որում, նման առարկությունները հիմնավոր լինելու պարագայում վճարային պարտավորության՝ պարտքի չափը պետք է նվազի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից, որպեսզի բացառվի պարտապանի սնանկությունը:

Տվյալ դեպքում Ընկերությունը ներկայացրել է հայցադիմում՝ վարկային պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին, այն հիմքով, որ այն հակասում է «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հայցադիմումը և այն վարույթ ընդունելու մասին որոշումը բավարար ապացույցներ չեն պարտավորության վիճելիությունը հիմնավորելու համար՝ նկատի ունենալով, որ ներկայացված ապացույցներով չի հիմնավորվում, որ Ընկերությունը հնարավորություն կարող է ստանալ պարտքի գումարը, մասնավորապես՝ վարկի մայր գումարը, որի չափը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, ընդհանրապես չվճարել Բանկին: Այլ կերպ ասած՝ պարտապանը չի հիմնավորում, որ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի՝ նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընկերությունը չի առարկել վարկի գումարը ստացած լինելու վերաբերյալ, ավելին, շուրջ մեկ տարի Բանկի հանդեպ կատարել է վարկային պայմանագրից բխող իր պարտավորությունները: Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող քաղաքացիական գործը՝ նյութաիրավական վեճը, սույն սնանկության գործով չի բացառում պարտավորության անվիճելիության հատկանիշը՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում:

Վերը նշվածի հիման վրա Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի հետևությանն այն մասին, որ Դատարանը խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը՝ չկիրառելով թիվ ԵԿԴ/0074/04/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս

ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, և ՀՀ վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս, դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն՝ դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս պետք է նախ **առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար** և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ՝ որոշելով դրանց նույնական լինել կամ չլինելու հարցը (*զեն, «Արաբկիր Ալկո Լիկյոր-Օդո գործարան» ՍՊ ընկերություն ընդդեմ Սոս Բադդասարյանի թիվ 3-480(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.07.2008 թվականի որոշումը*):

Թիվ ԵԿԴ/0074/04/09 քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ «Սիփան 1» ՍՊԸ-ի կողմից այլ գործով ներկայացված հայցապահանջը վերաբերել է «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի նկատմամբ ունեցած պարտավորությունն **ընդհանրապես չկատարելուն**, այսինքն՝ մեկ այլ վարույթում քննվող հայցի բավարարման պարագայում «Սիփան 1» ՍՊԸ-ն կարող էր **ամբողջությամբ ազատվել** «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից՝ գումարի վճարումից, որպիսի պարագայում էլ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտապանը բավարար հիմքեր ունի սնանկ ձանաչելու պահանջի դեմ առարկելու համար: Մինչդեռ սույն քաղաքացիական գործի պարագայում անգամ Ընկերության հայցը բավարարվելու դեպքում Ընկերությունը չի կարող ազատվել Բանկին նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը վերադարձնելու պարտականությունից, ինչն էլ հանդիսանում է քննարկվող քաղաքացիական գործերի փաստական հանգամանքների էական տարբերությունը: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Դատարանը թույլ է տվել ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում, անհիմն է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը

հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պայրճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի իրավակարգավորումը, գտնում է, որ Ընկերությունից հոգուտ Բանկի ենթակա է բռնագանձման 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.01.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.09.2016 թվականի վճիռին:

2. «Գամնա Կրեդիտ» ՍՊԸ-ից հոգուտ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Բաղաքացիական գործ թիվ **ԵԱԴԴ/0473/02/13**  
դատարանի որոշում **2017թ.**  
Բաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0473/02/13  
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան  
Դատավորներ՝ Գ. Խանդանյան  
Հ. Ենոքյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>Նախագահությամբ</i>	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
	Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
	Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին դռնբաց դատական նիստում, քննելով Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ) ներկայա-  
ցուցիչ էլիզա Կոստանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատա-  
րանի 11.10.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ)  
ընդդեմ Սարալ Քեշիշոլյանի՝ ամուսնալուծության պահանջի մասին և ըստ հակընդդեմ  
հայցի Սարալ Քեշիշոլյանի ընդդեմ Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ)՝ ալիմենտի բռնա-  
գանձման պահանջի մասին,

**ՊԱՐՁԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Ղազար Գեորգեսը (Ղազար Ջորջ) պահանջել է լուծել կողմերի  
ամուսնությունը՝ առանց հաշտության համար ժամկետ տրամադրելու:  
Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Սարալ Քեշիշոլյանը պահանջել է Ղազար  
Գեորգեսից (Ղազար Ջորջ) հոգուտ իրենց անչափահաս երեխայի՝ Հակոբ Ջորջի, որպես  
սպորտստի միջոց՝ բռնագանձել ալիմենտ Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ) վաստակի  
(կամ) այլ եկամտի 1/4 չափով:  
Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասու-  
թյան դատարանի (դատավոր՝ Ա. Փիլոսյան) (այսուհետ՝ Դատարան) 17.05.2016 թվականի  
վճռով հայրը բավարարվել է՝ լուծվել է Սարալ Քեշիշոլյանի ու Ղազար Գեորգեսի (Ղա-  
զար Ջորջ) ամուսնությունը: Հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել  
է Ղազար Գեորգեսից (Ղազար Ջորջ) հոգուտ Սարալ Քեշիշոլյանի խնամքին գտնվող,  
04.06.2001 թվականին ծնված անչափահաս երեխայի՝ Հակոբ Ջորջի բռնագանձել ալիմե-  
նտ կայուն դրամական գումարով՝ ամսական 350.000 ՀՀ դրամի չափով, մինչև երեխայի



չափահաս դառնալը՝ սկսած 01.07.2013 թվականից:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 11.10.2016 թվականի որոշմամբ Մարալ Քեշիշոլյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է. Դատարանի 17.05.2016 թվականի վճիռը մասնակիորեն՝ հակընդդեմ հայցի՝ ալիմենտ բռնագանձելու պահանջի մասով բեկանվել և փոփոխվել է՝ Մարալ Քեշիշոլյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ)՝ ալիմենտի բռնագանձման պահանջի մասին, բավարարվել է: Որոշվել է Ղազար Գեորգեսից (Ղազար Ջորջ) հոգուտ Մարալ Քեշիշոլյանի խնամքին գտնվող, 04.06.2001 թվականին ծնված Հակոբ Ջորջի բռնագանձել ալիմենտ՝ Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ) ամսական վաստակի և (կամ) այլ եկամտի 1/4 չափով, բայց ոչ պակաս ամսական 10.000 ՀՀ դրամից՝ 01.07.2013 թվականից սկսած մինչև երեխայի չափահաս դառնալը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ) ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ ընդհանրական օրենսգրքի 71-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 48-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ, 130-րդ և 132-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ տվյալ դեպքում Դատարան է ներկայացվել Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ) գույքային և ընտանեկան դրությանը վերաբերող ապացույցներ, համաձայն որի՝ Ղազար Գեորգեսին (Ղազար Ջորջ) հասանելիք գումարը թեև կազմում է 1.690 քուվեյթյան դինար, սակայն հաշվի առնելով նշված գումարից կատարվող պահումները և վճարումները՝ վերջինս իր անձնական տնօրինման համար ունի մոտավորապես 476 քուվեյթյան դինար: Հետևաբար, եթե ալիմենտը սահմանվի թվացյալ եկամտի 1/4-ի չափով, այսինքն՝ ամսական վճարվելիք ալիմենտի չափը հավասար լինի 422 դինարի, այսինքն Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ) գույքային դրությունն անարդարացիորեն կվատթարանա:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ եթե ալիմենտ վճարողն իր կայուն դրամական վաստակը (աշխատավարձը) ստանում է արտարժույթով, ապա դա հիմք է դատարանի համար բռնագանձվող ալիմենտի ամենամսյա չափը սահմանելու կայուն դրամական գումարով, քանի որ բաժիններով սահմանված լինելու հանգամանքը կարող է դժվարացնել դատական ակտի կատարման գործընթացը՝ կապված յուրաքանչյուր անգամ արտարժույթի տատանման դեպքում ոչ ձիշտ հաշվարկման արդյունքում խնդիրների առաջացման հետ, որը հետագայում կարող է հանգեցնել կողմերի միջև մեկ այլ վեճի, հետևաբար Դատարանի 17.05.2016 թվականին կայացված վճիռն օրինական է և բխում է արդարադատության շահերից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.10.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 17.05.2016 թվականի վճիռն:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Սիրիայի Արաբական Հանրապետության Ներքին գործերի նախարարության քաղաքացիական հարցերով գլխավոր վարչության կողմից 07.06.2001 թվականին տրված «Հնտանեկան քաղաքացիական կարգավիճակի գրառումից քաղվածք» փաստաթղթի և թիվ 728592 ընտանեկան գրքույկի համաձայն՝ Ղազար Գեորգեսը (Ղազար Ջորջ) և Մա-

րալ Քեշիշոյլյանը ամուսիններ են, Հակոբ Ջորջը նրանց երեխան է, ծնվել է 04.06.2001 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 97, հատոր 3-րդ, գ.թ. 23**).

2. Ըստ ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության 25.08.2014 թվականի թիվ 1108-1/17318 գրության՝ Քուվեյթում ՀՀ դեսպանությունից ստացված՝ Քուվեյթի առողջապահության նախարարության տեղեկանքի համաձայն՝ Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ) ամսական աշխատավարձը կազմում է 1.670 քուվեյթյան դինար (5.900 ԱՄՆ դոլար) (**հատոր 2-րդ, գ.թ. 35**).

3. Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների թեմի Հայոց առաջնորդարանի կողմից 04.11.2014 թվականին տրված թիվ 122-9 գրության համաձայն՝ Արաբսի Բեդրոսիանը 2011 թվականից ի վեր բնակվում է որդու՝ Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ) մոտ և որևէ նպաստ կամ թոշակ չի ստանում: Նրա կարիքները հոգում է որդին (**հատոր 3-րդ, գ.թ. 36**).

4. Քուվեյթի ազգային բանկի կողմից 10.12.2014 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Ղազար Գեորգեսը (Ղազար Ջորջ) Քուվեյթի ազգային բանկի Սալմիյա մասնաձյուղում ունի ընթացիկ հաշիվ: Նրա վարկային պարտավորությունը՝ հաճախորդի միջին դեբետային մնացորդը՝ ժամկետային վարկը, կազմում է 13.434,881 քուվեյթյան դինար, որը հաշվարկված է ֆիքսված տարեկան տոկոսներով և վճարվում է ամսավճարով՝ ամսական 449,563 քուվեյթյան դինարի չափով մինչև վերջնական վճարման կատարումը (**հատոր 3-րդ, գ.թ. 27**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի միատեսակ կիրառության համար.

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատձառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք այլմենսր վճարողի կողմից արքարժայթով կանոնավոր եկամուտ սրանալու պարագայում դատարանը կարող է սահմանել կայուն դրամական գումարով այլմենսրի ամենամսյա չափ:*

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ նրա ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում ծնողներից ալիմենտի բռնագանձումը կատարվում է դատական կարգով՝ հետևյալ չափերով ամենամսյա վճարումներ կատարելու միջոցով՝

ա) մեկ երեխայի համար ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի մեկ քառորդը.

բ) երկու երեխաների համար՝ մեկ երրորդը.

գ) երեք և ավելի երեխաների համար՝ կեսը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողների միջև երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում դատարանն իրավունք ունի բռնագանձվող ալիմենտի ամենամսյա չափը սահմանելու կայուն դրամական գումարով կամ միաժամանակ և՛ դրամական կայուն գումարով, և՛ բաժիններով:

Նույն մասի առաջին պարբերության նորմերը կիրառվում են, եթե այդ ծնողների վաստակից և (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն անհնար կամ դժվար է կամ էլ էականորեն վնասում է ստացողներից որևէ մեկի շահերին, ինչպես նաև այն դեպքերում, երբ երեխաների համար ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը՝

ա) ստանում է ոչ կանոնավոր կամ փոփոխվող վաստակ և (կամ) այլ եկամուտ.

**բ) վաստակ և (կամ) այլ եկամուտ է ստանում բնամթերքի տեսքով կամ արտարժույթով.**

գ) վաստակ և (կամ) այլ եկամուտ չի ստանում կամ չունի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կայուն դրամական գումարի չափը որոշում է դատարանը՝ ելնելով երեխայի նախկին կենսաապահովման մակարդակի առավելագույն պահպանման հնարավորությունից՝ հաշվի առնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը երեխայի ծնողից ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ գործեր քննելիս բռնագանձման ենթակա ալիմենտի չափը որոշելու համար նախևառաջ պետք է պարզի և գնահատման առարկա դարձնի ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի առկայությունը և դրա չափը: Այսինքն՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ալիմենտի չափի որոշման կանոնը կիրառվում է այն բոլոր դեպքերում, երբ դատարանի կողմից հաստատվում է ծնողի վաստակի և (կամ) այլ եկամտի կամ դրանցից որևէ մեկի առկայությունը, իսկ կայուն դրամական գումարով ալիմենտի բռնագանձման հնարավորությունը նախատեսվում է **բացառիկ դեպքերում**, այն է՝ եթե այդ ծնողների վաստակից և (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն անհնար կամ դժվար է կամ էլ էականորեն վնասում է ստացողներից որևէ մեկի շահերին, ինչպես նաև, երբ երեխաների համար ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը՝

- ստանում է ոչ կանոնավոր կամ փոփոխվող վաստակ և (կամ) այլ եկամուտ,
- վաստակ և (կամ) այլ եկամուտ ստանում է բնամթերքի տեսքով կամ արտարժույթով,
- վաստակ և (կամ) այլ եկամուտ չի ստանում կամ չունի (*տես, Գոհար Կիրակոսյանն ընդդեմ Լևոն Զազյանի թիվ ԵԱՆԴ/2775/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ծնողների վաստակից և (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի չափը որոշելը հանդիսանում է երեխայի ապրուստի միջոցի սահմանման հիմնական և առավել տարածված եղանակն այն դեպքերում, երբ ծնողներն ունեն կայուն վաստակ (եկամուտ): Ի տարբերություն բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի չափը սահմանելուն՝ կայուն դրամական գումարի չափը դատարանը որոշում է՝ ելնելով երեխայի նախկին կենսաապահովման մակարդակի առավելագույն պահպանման հնարավորությունից: Կայուն դրամական գումարով ալիմենտի բռնագանձման չափը սահմանելիս դատարանների կողմից պետք է հաշվի առնվի ալիմենտ վճարող ծնողի **իրական գույքային հնարավորությունները**, ինչպես նաև ուշադրության արժանի այլ հանգամանքներ կամ շահեր (օրինակ՝ ընտանիքի անդամի անաշխատունակությունը, որին ալիմենտ վճարող կողմը պարտավոր է տրամադրել ապրուստի միջոց, հաշմանդամության ձեռքբերումը կամ երեխայի կողմից աշխատանքի անցնելը կամ ձեռնարկատիրությամբ զբաղվելը), որոնք նաև անհրաժեշտ են ալիմենտ վճարող ծնողի և նրա ընտանիքի մյուս անդամների գոյության նվազագույն պայմաններն ապահովելու համար: Ընդ որում, նման գործերով կողմերի գույքային դրությունը պարզելու համար դատարանները պետք է միաժամանակ հաշվի առնեն բոլոր աղբյուրները, որոնցից գոյանում է անձի ընդհանուր եկամուտը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե բաժնային հարաբերակցությամբ ալիմենտ սահմանելիս դատարանը հիմք է ընդունում միայն օրենսդրի կողմից սահմանված բաժնային չափը, ապա կայուն դրամական գումարով ալիմենտ սահմանելիս հաշվի են առնվում մի շարք գործոններ, ընդ որում, ինչպես երեխայի լավագույն շահը, այնպես էլ ալիմենտ վճարող անձի բավարար կենսաանկարգակն ապահովելու անհրաժեշտությունը: Հաշվի առնելով կայուն դրամական գումարով ալիմենտ սահմանելիս գումարի չափը որոշելու նշված առանձնահատկությունը՝ օրենսդիրը որոշ դեպքերում հնարավորություն է տվել կանոնավոր վաստակ և (կամ) այլ եկամուտ ստանալու պայմաններում նույնպես սահմանելու կայուն դրամական գումարի չափով ալիմենտ: Մասնավորապես՝

այդ դեպքերից է, երբ ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը ստանում է **ալիմենտ արտարժույթով**, կամ եթե բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն **անհնար կամ դժվար է** կամ էլ էականորեն վնասում է ստացողներից որևէ մեկի շահերին: Նման կարգավորման նպատակն անձանց բավարար կենսամակարդակի ապահովումն է, երեխայի լավագույն շահի և ալիմենտ վճարող ծնողի ուշադրության արժանի շահերի հավասարակշռությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողի կողմից կայուն վաստակի և (կամ) այլ եկամտի ամկայության պայմաններում օրենսդիրը հնարավորություն է տալիս բռնագանձելու ալիմենտ նաև կայուն դրամական գումարով, որի դեպքում դատարանը պետք է հաշվի առնի կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը: Ընդ որում, նման հանգամանքները կարող են բացահայտվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի ամկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*լրեն, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ղազար Գեորգեսը (Ղազար Ջորջ) և Մարալ Քեշիշոզյանը ամուսիններ են, Հակոբ Ջորջը նրանց երեխան է, ծնվել է 04.06.2001 թվականին: Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ) ամսական աշխատավարձը կազմում է 1.670 քուվեյթյան դինար (որը համարժեք է 5.900 ԱՄՆ դոլար)՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության 25.08.2014 թվականի թիվ 1108-1/17318 գրության տրման օրվա դրությամբ):

Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների թեմի Հայոց առաջնորդարանի կողմից 04.11.2014 թվականին տրված թիվ 122-9 գրության համաձայն՝ Արաբսի Բեդրոսիանը 2011 թվականից ի վեր բնակվում է որդու՝ Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ) մոտ, և նրա կարիքները հոգում է որդին: Քուվեյթի ազգային բանկի կողմից 10.12.2014 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ)՝ Քուվեյթի ազգային բանկի նկատմամբ վարկային պարտավորությունը կազմում է 13.434,881 քուվեյթյան դինար, որը հաշվարկված է ֆիքսված տարեկան տոկոսներով և վճարվում է ամսավճարով՝ ամսական 449,563 քուվեյթյան դինարի չափով մինչև վերջնական վճարման կատարումը:

Դատարանը, հակընդդեմ հայցը մասնակիորեն բավարարելով, պատճառաբանել է, որ գործում ամկա ապացույցներով հիմնավորվում է Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ) արտարժույթով վաստակ ստանալու փաստը, ուստի գտել է, որ ալիմենտ պետք է բռնագանձվի կայուն դրամական գումարով: Ալիմենտի ամենամսյա վճարումների չափը սահմանելիս Դատարանը, Ղազար Գեորգեսի (Ղազար Ջորջ) գույքային, ընտանեկան դրության և ուշադրության արժանի այլ շահերը գնահատելով, հաշվի է առել, որ պատասխանողն ունի կայուն վաստակ, ունի վարկային պարտավորություններ, և ամսական 1.690 քուվեյթյան դինար եկամտից 449,563 քուվեյթյան դինարն ուղղվում է վարկային

պարտավորությունների կատարմանը, նրա խնամքին է գտնվում մայրը: Ելնելով երեխայի կենսական պահանջների կատարումը հնարավորինս ապահովելու և առավելապես այն կենսամակարդակը պահպանելու անհրաժեշտությունից, որը երեխան կունենար իր ծնողների հետ համատեղ ապրելու դեպքում, Դատարանը բռնագանձվող ալիմենտի ամենամսյա չափը սահմանել է կայուն դրամական գումարով՝ ամսական 350.000 ՀՀ դրամի չափով:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ հակընդդեմ հայցով պատասխանողն աշխատում է և ստանում կանոնավոր եկամուտ, ուստի Ղազար Գեորգեայից (Ղազար Ջորջ) հոգուտ Մարալ Քեշիշոլյանի, որպես իրենց երեխա Հակոբ Ջորջի պահելու համար ապրուստի միջոց, պետք է բռնագանձել ալիմենտ՝ Ղազար Գեորգեայի (Ղազար Ջորջ) ամսական վաստակի և (կամ) այլ եկամտի 1/4 չափով, բայց ոչ պակաս ամսական 10.000 ՀՀ դրամից՝ մինչև երեխայի չափահաս դառնալը:

Մինչդեռ վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Վճռաբեկ դատարանը, առաջնահերթ ուշադրություն դարձնելով երեխայի շահերի առավել ապահովմանը, կարևորելով նրա բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությունը, ինչպես նաև հաշվի առնելով Ղազար Գեորգեայի (Ղազար Ջորջ) ուշադրության արժանի շահերը, արձանագրում է, որ Դատարանը, որպես 04.06.2001 թվականին ծնված Հակոբ Ջորջի ապրուստի միջոց ամսական 350.000 ՀՀ դրամ ալիմենտ բռնագանձելով, հաշվի է առել ինչպես պատասխանողի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը, այնպես էլ երեխայի նախկին կենսաապահովման մակարդակն առավելագույնս պահպանելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով նաև պատասխանողի կողմից արտարժույթով վաստակ ստանալու փաստը:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ելնելով երեխայի կենսական պահանջների բավարարումն ապահովելու, ինչպես նաև առավելապես այն կենսամակարդակը հնարավորինս պահպանելու անհրաժեշտությունից, որը երեխան կունենար իր ծնողների հետ համատեղ ապրելու դեպքում, ղեկավարվելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածով, Դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Դատարանի վճիռը վերաքննության կարգով, ըստ այդմ՝ Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկվել են միայն հակընդդեմ հայցի՝ ալիմենտի բռնագանձման պահանջի մատով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է

արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խեղամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոնների համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ ալիմենտի գանձման վերաբերյալ հայցերով:

Սույն գործով նկատի ունենալով, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 15.02.2017 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ Ղազար Գեորգետի (Ղազար Ջորջ) ներկայացուցչի միջնորդությունը բավարարվել է, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման և հաշվի առնելով, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ հակընդդեմ հայցով հայցվորն ազատված է պետական տուրքի վճարումից, Վճռաբեկ դատարանը դատական ծախսերի հարցը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.10.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 17.05.2016 թվականի վճռին:

2. Դատական ծախսերի հարցը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «բ» կետի հիմքով համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԼԳ/2540/02/14**  
 դատարանի որոշում **2017թ.**  
 Քաղաքացիական գործ թիվ ԼԳ/2540/02/14  
 Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան  
 Դատավորներ՝ Ա. Խառատյան  
 Ա. Սմբատյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի ներկայացուցիչ Կիմա Հակոբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.10.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի ընդդեմ Էմմա Մինբաշիրովայի, Թումանյանի նոտարական տարածքի նոտար Ա. Մաղաքյանի, ՀՀ Լոռու մարզի Միլարթի գյուղապետարանի (այսուհետ՝ Գյուղապետարան), ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր) սեփականության իրավունքի գրանցումներն անվավեր ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու, գույքի նկատմամբ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին միանձնյա սեփականատեր ճանաչելու, ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու, Տարիել Հակոբյանին, Էմմա Մինբաշիրովային, Անահիտ Բաղիրյանին՝ յուրաքանչյուրին 1/3 մասով, Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Տարիել Հակոբյանը և Անահիտ Բաղիրյանը պահանջել են անվավեր ճանաչել 30.11.2001 թվականի ՀՀ Լոռու մարզի Միլարթ գյուղի թիվ 06-078-4-2 մատյանի 067 համարի տակ կատարված բնակելի տան և տնամերձ հողամասի, թիվ 06-078-4-2 մատյանի 126 համարի տակ կատարված 0,169հա մակերեսով վարելահողի, թիվ 06-078-4-2 մատյանի 147 համարի տակ կատարված 0,098հա մակերեսով վարելահողի, թիվ 06-078-4-1 մատյանի 175 համարի տակ կատարված 0,064հա մակերեսով վարելահողի, թիվ 06-078-4-1 մատյանի 285 համարի տակ կատարված 0,249հա մակերեսով վա-

րելահողի, թիվ 06-078-4-2 մատյանի 023 համարի տակ կատարված 0,439հա մակերեսով վարելահողի սեփականության իրավունքի պետական գրանցումները, 07.08.2013 թվականին Թումանյանի նոտարական տարածքի նոտար Ա. Մաղաբյանի կողմից տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ Լոռու մարզի Միարթ համայնքի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան և տնամերձ հողամասի նկատմամբ թիվ 13032014-06-0053, նույն համայնքի 0,169հա մակերեսով վարելահողի նկատմամբ թիվ 13032014-06-0013, 0,098հա մակերեսով վարելահողի նկատմամբ թիվ 13032014-06-0010, 0,064հա մակերեսով վարելահողի նկատմամբ թիվ 13032014-06-0009, 0,249հա մակերեսով վարելահողի նկատմամբ թիվ 13032014-06-0028, 0,439հա մակերեսով վարելահողի նկատմամբ թիվ 13032014-06-0026 սեփականության իրավունքի վկայականներով կատարված իրավունքի պետական գրանցումները, ՀՀ Լոռու մարզի Միարթ համայնքի թիվ 7 փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան և տնամերձ հողամասի, 0,169հա, 0,098հա, 0,064հա, 0,249հա, 0,439հա մակերեսներով վարելահողերի նկատմամբ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին ճանաչել միանձնյա սեփականատեր, Անահիտ Բաղիրյանի կողմից ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը համարել հարգելի, ինչպես նաև Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանի ամբողջ գույքի, այն է՝ Լոռու մարզի Միարթ համայնքի թիվ 7 փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան և տնամերձ հողամասի, 0,169հա, 0,098հա, 0,064հա, 0,249հա, 0,439հա մակերեսներով վարելահողերի նկատմամբ Տարիել Հակոբյանին, Էմմա Միրբաշիրովային, Անահիտ Բաղիրյանին ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ՝ յուրաքանչյուրին 1/3 մասով:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Երիցյան) (այսուհետ՝ Դատարան) 17.07.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.10.2015 թվականի որոշմամբ Անահիտ Բաղիրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Տարիել Հակոբյանի վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարվել է՝ Դատարանի 17.07.2015 թվականի վճիռը՝ Տարիել Հակոբյանի հայցապահանջները մերժելու մասով, բեկանվել է և փոփոխվել. գործի վարույթը՝ Տարիել Հակոբյանի մասով, կարճվել է, իսկ Դատարանի վճիռը՝ մնացած մասով, թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է բերել Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետը, 53-րդ հոդվածը, 109-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հերյույալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով Տարիել Հակոբյանի կողմից ներկայացված հայցապահանջներն ամբողջությամբ բխում են ժառանգական վեճից և պետք է լուծում ստանան ժառանգական իրավահարաբերությունների շրջանակներում: Այսինքն՝ սույն գործը՝ Տարիել Հակոբյանի կողմից ներկայացված հայցապահանջների մասով, ծագել է քաղաքացիաիրավական բնույթ կրող վեճից և ընդդատյա է ոչ թե վարչական, այլ ընդհանուր իրավասության դատարանին: Հետևաբար սույն գործի վարույթը՝ Տարիել Հակոբյանի կողմից ներկայացված հայցապահանջների մասով, ենթակա չէր կարճման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով ձեռք բերված ապացույցների, մասնավորապես՝ 05.05.2015 թվականին տրված բժշկական տեղեկանքի ուժով Անահիտ Բաղիրյանի պահանջը՝ ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահման-



ված ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու մասին, ենթակա էր բավարարման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.10.2015 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել, կամ գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

*Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հերկյալ փաստերը.*

1. Համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 30.11.2001 թվականի թիվ 843633 վկայականի՝ ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի 138,8քմ մակերեսով բնակելի տան և 0,267հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 06-078-4-2 մատյանի թիվ 067 համարի տակ գրանցվել է Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինբաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 32-33**):

2. Համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 30.11.2001 թվականի թիվ 831375 վկայականի՝ ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի 0,169-հա մակերեսով վարելահողի նկատմամբ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 06-078-4-2 մատյանի 126 համարի տակ գրանցվել է Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինբաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 37-38**):

3. Համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 30.11.2001 թվականի թիվ 831592 վկայականի՝ ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի 0,098-հա մակերեսով վարելահողի նկատմամբ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 06-078-4-2 մատյանի 147 համարի տակ գրանցվել է Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինբաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 40-41**):

4. Համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 30.11.2001 թվականի թիվ 831392 վկայականի՝ ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի 0,064-հա մակերեսով վարելահողի նկատմամբ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 06-078-4-1 մատյանի 175 համարի տակ գրանցվել է Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինբաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 43-44**):

5. Համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 30.11.2001 թվականի թիվ 831534 վկայականի՝ ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի 0,249-հա մակերեսով վարելահողի նկատմամբ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 06-078-4-1 մատյանի 285 համարի տակ գրանցվել է Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինբաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 46-47**):

6. Համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 30.11.2001 թվականի թիվ 831573 վկայականի՝ ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի 0,439-հա մակերեսով վարելահողի նկատմամբ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 06-078-4-2 մատյանի թիվ 023 համարի տակ գրանցվել է Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինբաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 49-50**):

7. ՀՀ «Թումանյան» նոտարական տարածքի նոտարի կողմից 07.08.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1719 վկայագրի համաձայն՝ Էմմա Մինբաշիրովան հանդիսանում է 30.11.2012 թվականին մահացած Վաղինակ Հակոբյանի ժառանգը, իսկ ժառանգական գույքը, որի համար տրված է վկայագիրը, բաղկացած է Լոռու մարզի Միարթ գյուղի 138,8քմ մակերեսով բնակելի տան, օժանդակ շինությունների, թիվ 0,267հա մակերեսով հողամասի և 0,169հա, 0,098հա, 0,064հա, 0,249հա, 0,439հա

մակերեսներով վարելահողերի՝ Վաղինակ Հակոբյանին պատկանող բաժնի 1/2 մասից, որը կազմում է ամբողջ գույքի 1/4 մասը, իսկ «հանգուցյալին պատկանող 1/2 բաժնի՝ ամբողջ գույքի 1/4 մասի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիր դեռևս տրված չէ» **(հատոր 2-րդ, գ.թ. 80-81):**

8. Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13032014-06-0053 վկայականի՝ 13.03.2014 թվականին Մղարթ համայնքի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 բնակելի տան, օժանդակ շինությունների և հողամասի 3/4 մասի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի 07.08.2013 թվականի թիվ 1719 վկայագրի և Մղարթ համայնքի ղեկավարի 14.08.2013 թվականի թիվ 10Ա որոշման հիման վրա գրանցվել է Էմմա Մինբաշիրովայի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 35):**

9. Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13032014-06-0013 վկայականի՝ 13.03.2014 թվականին Մղարթ համայնքի 0,169հա մակերեսով վարելահողի 3/4 մասի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի 07.08.2013 թվականի թիվ 1719 վկայագրի և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի թիվ 831375 վկայականի հիման վրա գրանցվել է Էմմա Մինբաշիրովայի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 39):**

10. Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13032014-06-0010 վկայականի՝ 13.03.2014 թվականին Մղարթ համայնքի 0,098հա մակերեսով վարելահողի 3/4 մասի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի 07.08.2013 թվականի թիվ 1719 վկայագրի և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի թիվ 831592 վկայականի հիման վրա գրանցվել է Էմմա Մինբաշիրովայի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 42):**

11. Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13032014-06-0009 վկայականի՝ 13.03.2014 թվականին Մղարթ համայնքի 0,064հա մակերեսով վարելահողի 3/4 մասի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի 07.08.2013 թվականի թիվ 1719 վկայագրի և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի թիվ 831392 վկայականի հիման վրա գրանցվել է Էմմա Մինբաշիրովայի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 45):**

12. Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13032014-06-0028 վկայականի՝ 13.03.2014 թվականին Մղարթ համայնքի 0,249հա մակերեսով վարելահողի 3/4 մասի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի 07.08.2013 թվականի թիվ 1719 վկայագրի և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի թիվ 831534 վկայականի հիման վրա գրանցվել է Էմմա Մինբաշիրովայի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 48):**

13. Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13032014-06-0026 վկայականի՝ 13.03.2014 թվականին Մղարթ համայնքի 0,439հա մակերեսով վարելահողի 3/4 մասի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի 07.08.2013 թվականի թիվ 1719 վկայագրի և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի թիվ 831573 վկայականի հիման վրա գրանցվել է Էմմա Մինբաշիրովայի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 51):**

14. Հայցվորները ՀՀ Լոռու մարզի Մղարթ գյուղի բնակելի տան, տնամերձ հողամասի և նույն գյուղում գտնվող վարելահողերի նկատմամբ Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինբաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքի 30.11.2001 թվականի պետական գրանցումներն անվավեր ծանաչելու վերաբերյալ հայցապահանջների հիմքում դրել են այն հանգամանքը, որ Մղարթ համայնքի տնտեսական գրքից տրված քաղվածքի հիման վրա Էմմա Մինբաշիրովան սխալմամբ դարձել է վիճելի անշարժ գույքերի սեփականատեր: Հայցվորները ՀՀ «Թունանյան» նոտարական տարածքի նոտարի կողմից 07.08.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1719 վկայագիրն անվավեր ծանաչելու վերաբերյալ հայցապահանջի հիմքում դրել են այն հանգամանքը, որ նոտարը սխալմամբ ժառանգության իրավունքի վկայագիր է տրամադրել փայն Էմմա Մինբաշիրովային, մինչդեռ Տարիել Հակոբյանը ևս դիմում է ներկայացրել

նույն նոտարին՝ Վաղինակ Հակոբյանի ժառանգությունն ընդունելու մասին **(հատոր 1-ին, գ.թ. 5-20)**:

15. Մահվան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Վաղիկ Հակոբյանը մահացել է 30.11.2012 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 54)**:

16. 05.05.2015 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Անահիտ Բաղիրյանը հիվանդ է մի շարք սիմպտոմներով 2012 թվականի դեկտեմբեր ամսից և 05.05.2013 թվականին դիմել է Վրաստանի Հանրապետության Մառնեուլի շրջանի Շահումյան ավանի ամբուլատորիա **(հատոր 2-րդ, գ.թ. 112-114)**:

**4. Վճռաբեկ դատարանի պայմանադրությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ այն հարցին, թե սեփականության իրավունքի պետական գրանցումը և ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ հիմնական հայցապահանջները կարող են արդյո՞ք ընդդարյալ է լինել ընդհանուր իրավասության դատարանին:*

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման իրավադրույթներ են նախատեսված նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում և 63-րդ հոդվածի 1-ին մասում:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանին են ենթակա բոլոր գործերը, բացառությամբ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված գործերի:

ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանն ըստ էության քննում է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Տարածքային ընդդատություն»

նր» վերտառությամբ 12-րդ գլխի 86-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության՝ եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով գործը, եթե այդ պահանջներից մեկն ընդդատյա է վարչական դատարանին, իսկ մյուսը՝ ընդհանուր իրավասության դատարանին, քննում է այն դատարանը, որին ընդդատյա է հիմնական պահանջը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնական է այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է դրանից ածանցվող պահանջների լուծման ելքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընդդատությունը՝ որպես դատավարական ինստիտուտ, դատավարական նորմերի այնպիսի համակցություն է, որոնք կարգավորում են դատարանի քննությանը ենթակա բոլոր գործերի բաշխումը ՀՀ դատական իշխանության առաջին ատյանի կոնկրետ դատարանների միջև:

ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009 թվականի թիվ ՍԴԳ-787 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատության օրենքով հանձնված է տվյալ գործը:

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներով օրենսդիրը կանխորոշել է ընդհանուր իրավասության դատարանի ընդդատության շրջանակը, որն ընդգրկում է բոլոր գործերը՝ բացառությամբ վարչական դատարանի քննությանը վերապահված գործերի, իսկ ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներով օրենսդիրը սահմանել է ՀՀ վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որը կազմված է հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերից: Փաստորեն, դատական գործերի տարանջատումը քաղաքացիական և վարչականի պայմանավորված է այդ գործերով վիճելի իրավահարաբերության բնույթից, կոնկրետ գործի՝ առարկայական ընդդատության հարցը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել այդ գործով վիճելի իրավահարաբերության բնույթը, այսինքն՝ այն հարցը, թե արդյոք տվյալ գործը ծագում է հանրային, թե մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով մի քանի փոխկապակցված հայցապահանջների հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության որոշման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ ներկայացվում են երկու և ավելի հայցապահանջ, որոնք ունեն տարբեր առարկայական ընդդատություն, ապա գործը պետք է քննվի այն դատարանում, որին ընդդատյա է ներկայացված հիմնական պահանջը (*յրե՛ս, Ռուբեն Միրաքյանն ընդդեմ Երևանի քաղաքապետի և մյուսների թիվ ՎԳ/0476/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2010 թվականի որոշումը*): Մեկ այլ որոշմամբ բացահայտելով հիմնական պահանջի հասկացությունը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ միմյանց հետ փոխկապակցված մի քանի հայցապահանջներից հիմնական է այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է մյուս պահանջների լուծումը (*յրե՛ս, Արևիկ Արուսյանն ընդդեմ «ՀԷԳ-90» ՍՊԸ-ի և Դանիել Գրիգորյանի թիվ ԵԱԲԴ/0433/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.07.2011 թվականի որոշումը*):

Այսպիսով, վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավունքների պաշտպանության

հայցի կամ դիմումի հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության հարցը որոշվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի (հանրային կամ մասնավոր) իրավահարաբերություններից ծագող վեճից է բխում այդ գործերի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջը (իսկ մի քանի փոխկապակցված հայցապահանջների առկայության դեպքում՝ դրանցից հիմնականը):

ՀՀ վճռաբեկ դատարանը հանրային և մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերի ընդդատության տարանջատման և դրա հիման վրա դատական այս կամ այն գործի ընդդատության որոշման իրավական խնդրին անդրադարձել է թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով 22.04.2016 թվականի որոշման շրջանակներում: Այդ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ինչպես ցանկացած հարաբերություն, այնպես էլ իրավական նորմերի միջոցով կարգավորվող հասարակական հարաբերությունը՝ իրավահարաբերությունը, որոշակի փոխկապակցված տարրերի (սուբյեկտ, օբյեկտ և բովանդակություն) ամբողջություն (համակարգ) է, որոնց բովանդակային-որակական տարբերությունը հնարավորություն է տալիս իրավահարաբերությունները տարանջատելու միմյանցից: Մասնավորապես՝ հանրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը:

Վկայակոչված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,
2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,
3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը (յրեն, «Վեսայ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով քաղաքացիական դատավարությունում ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը տարբերակված մոտեցում է ցուցաբերել առարկայական

ընդդատության և տարածքային ընդդատության կանոնների խախտման կապակցությամբ: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Տարածքային ընդդատությունը» վերտառությամբ 12-րդ գլխի 86-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով և նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավանդությունների համակարգային վերլուծությունից հետևում է, որ գործի՝ ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված լինելը տվյալ գործի քննության ընթացքում պարզվելու դեպքում դատարանը կարող է գործը հանձնել այլ դատարանի քննության, եթե այն վարույթ է ընդունվել տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ: Ընդ որում, ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի, «այլ դատարան» եզրույթի ներքո օրենսդիրը նկատի է ունեցել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով գործեր քննող ընդհանուր իրավասության դատարաններին: Մինչդեռ գործող քաղաքացիատավարական օրենսդրությունն առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործն այլ դատարանի քննությանը հանձնելու վերաբերյալ որևէ իրավակարգավորում չի նախատեսում:

Նման պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կանոնը վերաբերում է միայն այն դեպքին, երբ գործը վարույթ է ընդունվել տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ: Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործի՝ առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված լինելը տվյալ գործի քննության ընթացքում պարզվելու դեպքում դատարանն իրավասու չէ այն հանձնել այլ դատարանի քննությանը: Տվյալ պարագայում դատարանը պարտավոր է կարճել գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով: Այսինքն՝ այն դեպքում, երբ որևէ գործի քննության ընթացքում պարզվում է, որ այն վարույթ է ընդունվել առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ, դատարանը պարտավոր է վճիռ կայացնել գործի վարույթը կարճելու մասին այն հիմքով, որ տվյալ գործը ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանում քննության (լրևն, *Գողիշիան Իշիկյանն ընդդեմ «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՂԱՆԱՎԱԿԱՑՄԱՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ կառավարությանն առնչվող քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

### **Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

I. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացվել են միմյանց հետ փոխկապակցված հետևյալ հայցապահանջները.

1) անվավեր ճանաչել ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի 138,8քմ մակերեսով բնակելի տան և 0,267հա մակերեսով տնամերձ հողամասի, ինչպես նաև նույն գյուղում գտնվող 0,169հա, 0,098հա, 0,064հա, 0,249հա, 0,439հա մակերեսներով վարելահողերի նկատմամբ Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինբաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքի 30.11.2001 թվականի պետական գրանցումները,

2) անվավեր ճանաչել ՀՀ Լոռու մարզի Միարթ համայնքի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան, օժանդակ շինությունների և հողամասի 3/4 մասի, ինչպես նաև նույն համայնքի 0,169հա, 0,098հա, 0,064հա, 0,249հա, 0,439հա մակերեսներով վարելահողերի 3/4 մասի նկատմամբ Էմմա Մինբաշիրովայի սեփականության իրավունքի 13.03.2014 թվականի պետական գրանցումները,

3) անվավեր ճանաչել 07.08.2013 թվականին Թումանյանի նոտարական տարածքի նոտար Ա. Մաղաքյանի կողմից տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը,

4) Անահիտ Բաղիրյանի կողմից ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը համարել հարգելի,

5) ՀՀ Լոռու մարզի Միարթ ի համայնքի թիվ 7 փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան և տնամերձ հողամասի, ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի 0,169հա մակերեսով վարելահողի, 0,098հա մակերեսով վարելահողի, 0,064հա մակերեսով վարելահողի, 0,249հա մակերեսով վարելահողի, 0,439հա մակերեսով վարելահողի նկատմամբ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին ձանաչել միանձնյա սեփականատեր,

6) Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանի ամբողջ գույքի, այն է՝ ՀՀ Լոռու մարզի Միարթ ի համայնքի թիվ 7 փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան և տնամերձ հողամասի, 0,169հա, 0,098հա, 0,064հա, 0,249հա, 0,439հա մակերեսներով վարելահողերի նկատմամբ Տարիել Հակոբյանին ձանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ՝ 1/3 մասով, Էմմա Մինքաշիրովային ժանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ՝ 1/3 մասով, Անահիտ Բաղիրյանին ձանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ՝ 1/3 մասով:

**II.** Սույն գործով Դատարանն ամբողջությամբ մերժել է Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի հայցը՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանը մերժել է Անահիտ Բաղիրյանի վերաքննիչ բողոքը, իսկ Տարիել Հակոբյանի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն և Տարիել Հակոբյանի հայցը մերժելու մասով բեկանել է ու փոփոխել Դատարանի վճիռը՝ որոշելով Տարիել Հակոբյանի մասով սույն գործի վարույթը կարճել, իսկ մնացած մասով Դատարանի վճիռը թողնել օրինական ուժի մեջ: Իր այդ որոշման հիմքում Վերաքննիչ դատարանը դրել է այն պատճառաբանությունը, որ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի, վերացման մասին Տարիել Հակոբյանի կողմից ներկայացված պահանջն իր բնույթով վարչաիրավական է, և Տարիել Հակոբյանի մասով սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին պահանջը հիմնական է, որը կանխորոշում է մյուս պահանջների մերժման կամ բավարարման հնարավորությունը: Հետևաբար, ըստ Վերաքննիչ դատարանի, Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված այդ հայցապահանջը և դրանից ածանցվող մյուս պահանջներն ընդդատյա են ընդհանուր իրավասության դատարանի քննությանը, և Անահիտ Բաղիրյանի մասով սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա չէ կարճման:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, ելնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումներից, արձանագրում է հետևյալը.

**III.** Վճռաբեկ դատարանը նախևառաջ անհրաժեշտ է համարում անդրադառնալ սույն գործով Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված միմյանց փոխկապակցված հայցապահանջների՝ հիմնական և ածանցյալ պահանջների տարանջատման հարցին: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **(1)** ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի բնակելի տան, տնամերձ հողամասի և նույն գյուղում գտնվող վարելահողերի նկատմամբ Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինքաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքի 30.11.2001 թվականի պետական գրանցումներն անվավեր ձանաչելու վերաբերյալ, ինչպես նաև **(3)** ՀՀ «Թումանյան» նոտարական տարածքի նոտարի կողմից 07.08.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1719 վկայագիրն անվավեր ձանաչելու վերաբերյալ հայցապահանջները հիմնական են, և դրանց լուծումը կանխորոշում է **(2)** նույն անշարժ գույքերի 3/4 մասի նկատմամբ Էմմա Մինքաշիրովայի սեփականության իրավունքի 13.03.2014 թվականի պետական գրանցումներն անվավեր ձանաչելու պահանջների լուծման ելքը:

Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն փաստական հանգամանքը, որ սույն գործով վիճարկվող՝ ՀՀ Լոռու մարզի Միարթ ի համայնքի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան, օժանդակ շինությունների և հողամասի 3/4 մասի, ինչպես նաև նույն համայնքի 0,169հա, 0,098հա, 0,064հա, 0,249հա, 0,439հա մակերեսներով վարելահողերի 3/4 մասի նկատմամբ Էմմա Մինքաշիրովայի սեփականության

իրավունքի 13.03.2014 թվականի պետական գրանցումների համար հիմք են հանդիսացել ՀՀ «Թումանյան» նոտարական տարածքի նոտարի կողմից 07.08.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1719 վկայագիրը և ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի բնակելի տան, տնամերձ հողամասի և նույն գյուղում գտնվող վարելահողերի նկատմամբ Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինքաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքի 30.11.2001 թվականի պետական գրանցումները: Այսինքն՝ Լոռու մարզի Միարթ գյուղի բնակելի տան, տնամերձ հողամասի և նույն գյուղում գտնվող վարելահողերի նկատմամբ Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինքաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքի 30.11.2001 թվականի պետական գրանցումները և ՀՀ «Թումանյան» նոտարական տարածքի նոտարի կողմից 07.08.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1719 վկայագիրը դատական ակտով անվավեր ճանաչվելու հանգամանքն ինքնին կարող է հանգեցնել ՀՀ Լոռու մարզի Միարթ համայնքի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան, օժանդակ շինությունների և հողամասի 3/4 մասի, ինչպես նաև նույն համայնքի 0,169հա, 0,098հա, 0,064հա, 0,249հա, 0,439հա մակերեսներով վարելահողերի 3/4 մասի նկատմամբ Էմմա Մինքաշիրովայի սեփականության իրավունքի 13.03.2014 թվականի պետական գրանցումների անվավեր ճանաչման վերաբերյալ դատական ակտի կայացման:

**IV.** Անդրադառնալով սույն գործով Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված **(1)** ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի բնակելի տան, տնամերձ հողամասի, ինչպես նաև նույն գյուղում գտնվող վարելահողերի նկատմամբ Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինքաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքի 30.11.2001 թվականի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու և **(2)** նույն անշարժ գույքերի 3/4 մասի նկատմամբ Էմմա Մինքաշիրովայի սեփականության իրավունքի 13.03.2014 թվականի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու հայցապահանջների բնույթին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

1) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ վեճի կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն,

2) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորության օժտված սուբյեկտի՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը,

3) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունն ուղղված է հանրային շահի՝ օցցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը. այն ծագել է պետության կողմից անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների ճանաչման, երաշխավորման և պաշտպանության ապահովման հանրային շահի իրացման կապակցությամբ:

Ավելին, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթի իրավական հիմքերը սահմանող օրենսդրական կարգավորումների և իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ: Հատկանշական է, որ նմանատիպ իրավական դիրքորոշում ՀՀ վճռաբեկ դատարանը հայտնել է *Միսիսի քաղաքապետարանն ընդդեմ Շահեն Սարգսյանի թիվ 3-1920(ՎԻ) քաղաքացիական գործով* դեռևս 26.10.2006 թվականին կայացված որոշմամբ՝ նշելով, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ անշարժ գույքի գրանցմանստյանում կատարված գրանցումը (գրառումը) վարչական ակտ է: Հետևաբար,



անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը վերացնելու (անվավեր ճանաչելու) պահանջը հանդիսանում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վիճարկման հայցի առարկա և որպես հիմնական հայցապահանջ՝ ենթակա է քննության վարչադատավարական կարգով:

Այսպիսով, վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ **(1)** ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի բնակելի տան, տնամերձ հողամասի, ինչպես նաև նույն գյուղում գտնվող վարելահողերի նկատմամբ Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինբաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքի 30.11.2001 թվականի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու և **(2)** նույն անշարժ գույքերի 3/4 մասի նկատմամբ Էմմա Մինբաշիրովայի սեփականության իրավունքի 13.03.2014 թվականի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու հայցապահանջները բխում են ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից ծագող վեճից:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **(1)** ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի բնակելի տան, տնամերձ հողամասի, ինչպես նաև նույն գյուղում գտնվող վարելահողերի նկատմամբ Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինբաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքի 30.11.2001 թվականի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու հայցապահանջները սույն գործով հիմնական են (ածանցյալ չեն), քանի որ դրանց հիմքում դրված են սույն գործով ներկայացված մյուս հայցապահանջների լուծման ելքից անկախ փաստարկներ, մասնավորապես՝ այն հանգամանքը, որ Միարթ համայնքի տնտեսական գրքից տրված քաղվածքի հիման վրա Էմմա Մինբաշիրովան սխալմամբ դարձել է վիճելի անշարժ գույքերի սեփականատեր: Այսինքն՝ նշված հայցապահանջի բավարարման կամ մերժման հարցը պայմանավորված չէ սույն գործով ներկայացված որևէ այլ պահանջի լուծման ելքով:

**V.** Սույն գործով Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված **(3)** ՀՀ «Թումանյան» նոտարական տարածքի նոտարի կողմից 07.08.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1719 վկայագիրն անվավեր ճանաչելու հայցապահանջի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձ կատարել ժառանգության իրավունքի վկայագիրը դատական կարգով վիճարկելու իրավական կառուցակարգի բովանդակությանը:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել ժառանգության իրավունքի վկայագիրը վարչական դատարանում վիճարկելու իրավական հնարավորության վերաբերյալ՝ նշելով, որ նոտարի կողմից տրամադրված ժառանգության իրավունքի վկայագիրը ՀՀ իրավական համակարգում վարչական ակտ չէ: Հետևաբար անձն իրավունք չունի պահանջել վիճարկման հայցով վերացնել իր ենթադրյալ իրավունքները և ազատությունները խախտող ժառանգության իրավունքի վկայագիրը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումների համաձայն՝ վիճարկման հայցն օրենսդրի կողմից նախատեսված հայցի տեսակ է, որն ուղղված է դատական ակտով միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելուն: Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջը չի կարող դիտարկվել նաև որպես նոտարական գործողությունը վիճարկելու պահանջ, եթե ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված չէ նոտարական գործողությունների վիճարկումը (*չլեն, Սերժիկ Պողոսյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական փարածքի նոտար Էմմա Շաբոյանի թիվ ՎԳ/4901/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ անդրադարձել է նաև ժառանգության իրավունքի վկայագիրն ընդհանուր իրավասության դատարանում վիճարկելու իրավական հնարավորությանը՝ գտնելով, որ եթե ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված չէ նոտարական գործողությունների վիճարկումը, ապա այդ գործը չի ծագում հանրային իրավահարա-

բերություններից. այն ծագում է մասնավոր իրավահարաբերություններից, հետևաբար ընդդատյա է ընդհանուր իրավասության դատարանին (*լրեն, Հուսիկ Թաղևոսյանն ընդդեմ Արմեն Արիստակեսյանի և ՀՀ Արմավիրի նոտարական տարածքի նոտար Ամեդա Ցակայանի թիվ ԱՐԴ1/0019/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ ժառանգության իրավունքի վկայագրի վիճարկման հայցապահանջի ընդդատությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե այդ պահանջի հիմքում ընկած է արդյոք նոտարական գործողությունների վիճարկման փաստարկը, թե՛ ոչ: Այլ կերպ ասած, այն դեպքում, երբ ժառանգության իրավունքի վիճարկման հայցապահանջի հիմքում ընկած է նոտարական գործողությունների վիճարկումը, ապա այդ հայցապահանջը ծագում է հանրային իրավահարաբերություններից բխող վեճից և ընդդատյա է վարչական դատարանին, իսկ այն դեպքում, երբ ժառանգության իրավունքի վիճարկման հայցապահանջի հիմքում ընկած չէ նոտարական գործողությունների վիճարկումը, ապա այդ հայցապահանջը ծագում է մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճից և ընդդատյա է ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործով Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված **(3) ՀՀ «Թումանյան»** նոտարական տարածքի նոտարի կողմից 07.08.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1719 վկայագիրն անվավեր ճանաչելու հայցապահանջի ընդդատության որոշման հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հայցապահանջի հիմքում դրված է նոտարական գործողությունների վիճարկումը: Այսպես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով հայցվորները վիճարկում են ՀՀ «Թումանյան» նոտարական տարածքի նոտարի կողմից 07.08.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1719 վկայագիրը՝ իրենց պահանջի հիմքում դնելով այն հանգամանքը, որ նոտարը սխալմամբ ժառանգության իրավունքի վկայագիր է տրամադրել միայն Էմմա Մինբաշիրովային, մինչդեռ Տարիել Հակոբյանը ևս դիմում է ներկայացրել նույն նոտարին՝ Վաղինակ Հակոբյանի ժառանգությունն ընդունելու մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգության իրավունքի վկայագիրը յուրաքանչյուր ժառանգի համար կազմվում է առանձին, իսկ նույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության իրավունքի վկայագիրը ժառանգներին տրվում է ժառանգության բացման վայրի նոտարին ներկայացված գրավոր դիմումի հիման վրա (...):

Փաստորեն, սույն գործով Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված **(3) ՀՀ «Թումանյան»** նոտարական տարածքի նոտարի կողմից 07.08.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1719 վկայագիրն անվավեր ճանաչելու հայցապահանջի հիմքում դրված է այդ նոտարի կողմից առերևույթ թույլ տրված «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի և 62-րդ հոդվածի 1-ին մասի ենթադրյալ խախտման հիմքով վերջինիս նոտարական գործողությունների վիճարկումը: Նշված հայցապահանջի հիմքը ոչ թե ժառանգությունն ընդունելու կապակցությամբ Տարիել Հակոբյանի, Անահիտ Բաղիրյանի և Էմմա Մինբաշիրովայի միջև ծագած և ժառանգման իրավահարաբերություններից անմիջականորեն բխող վեճն է, այլ ՀՀ «Թումանյան» նոտարական տարածքի նոտարի՝ միայն Էմմա Մինբաշիրովային ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու գործողության և Տարիել Հակոբյանին ժառանգության իրավունքի վկայագիր չտրամադրելու անգործության վիճարկման կապակցությամբ տվյալ նոտարի և սույն գործով հայցվորների միջև ծագած վեճը: Իրավական այդ վեճի բովանդակությունը հանգում է նոտարի կողմից ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու՝ որպես հանրային գործառնության իրականացման իրավաչափության կամ ոչ իրավաչափության հարցին. տվյալ դեպքում դատական քննության առարկա է հանդիսանում նոտարի կողմից իր հանրային գործառնության իրականաց-

ման իրավաչափության ստուգումը: Ընդ որում, ՀՀ «Թումանյան» նոտարական տարածքի նոտարի հանրային գործառույթի իրականացման իրավաչափությունը ենթակա է ստուգման նոտարի կողմից ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու վերաբերյալ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավակարգավորումները խախտված լինելու կամ չլինելու հարցը պարզելու միջոցով: Այսպիսով, ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ սույն գործով ներկայացված հայցապահանջի հիմքում ընկած իրավական վեճն անմիջականորեն չի բխում ժառանգման իրավահարաբերություններից, այն չի կարող համարվել ժառանգությունն ընդունելու, ժառանգության բացման վայրի, ժառանգության զանգվածի կամ ժառանգման ինստիտուտի այլ տարրերի կապակցությամբ ժառանգների միջև ծագած վեճ: Այլ կերպ ասած՝ քննարկվող հայցապահանջը բխում է ոչ թե քաղաքացիաիրավական (ժառանգման) հարաբերություններում ժառանգների միջև ծագած վեճից, այլ նոտարի կողմից «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտականության ենթադրաբար ոչ պատշաճ կատարման արդյունքում, մի կողմից, այդ նոտարի և, մյուս կողմից, Տարիել Հակոբյանի ու Անահիտ Բաղիրյանի միջև ծագած հանրային-իրավական վեճից:

Հետևաբար, Վճաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված **(3)** ՀՀ «Թումանյան» նոտարական տարածքի նոտարի կողմից 07.08.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1719 վկայագիրն անվավեր ճանաչելու հայցապահանջը ծագում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից բխող վեճից:

**VI.** Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործով Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված **(1)** ՀՀ Լոռու մարզի Մղարթ գյուղի բնակելի տան, տնամերձ հողամասի, ինչպես նաև նույն գյուղում գտնվող վարելահողերի նկատմամբ Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինբաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքի 30.11.2001 թվականի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու, **(3)** ՀՀ «Թումանյան» նոտարական տարածքի նոտարի կողմից 07.08.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1719 վկայագիրն անվավեր ճանաչելու հայցապահանջները, ինչպես նաև դրանցից ածանցվող **(2)** նույն անշարժ գույքերի 3/4 մասի նկատմամբ Էմմա Մինբաշիրովայի սեփականության իրավունքի 13.03.2014 թվականի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու հայցապահանջները ծագում են հանրային իրավահարաբերությունից բխող վեճից և ընդդատյա են ոչ թե ընդհանուր իրավասության, այլ վարչական դատարանի քննությանը:

**VII.** Ինչ վերաբերում է սույն գործով ներկայացված **(4)** Անահիտ Բաղիրյանի կողմից ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու, **(5)** վիճելի անշարժ գույքի նկատմամբ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին միանձնյա սեփականատեր ճանաչելու, **(6)** Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանի ամբողջ անշարժ գույքի նկատմամբ Տարիել Հակոբյանին, Էմմա Մինբաշիրովային և Անահիտ Բաղիրյանին՝ յուրաքանչյուրին 1/3 մասով, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին հայցապահանջներին, ապա Վճաբեկ դատարանի գնահատմամբ ակնհայտ է, որ նշված հայցապահանջները ծագում են մասնավոր (քաղաքացիաիրավական) իրավահարաբերությունից, որը հանգում է Վաղինակ Հակոբյանի ժառանգությունն ընդունելու և ժառանգական զանգվածի մեջ մտնող գույքի նկատմամբ յուրաքանչյուր ժառանգի փոխադարձ հավակնությունների վերաբերյալ ժառանգների միջև ծագած իրավական վեճին: Հետևաբար, **(4)** Անահիտ Բաղիրյանի կողմից ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու, **(5)** վիճելի անշարժ գույքի նկատմամբ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին միանձնյա սեփականատեր ճանաչելու, **(6)** Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանի ամբողջ անշարժ գույքի նկատմամբ Տարիել Հակոբյանին, Էմմա Մինբաշիրովային և Անահիտ Բաղիրյանին՝ յուրաքանչյուրին 1/3 մասով, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին հայցապահանջներն ընդդատյա

են ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

**VIII.** Հաշվի առնելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի վարույթը՝ Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված **(1)** ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի բնակելի տան, տնամերձ հողամասի, ինչպես նաև նույն գյուղում գտնվող վարելահողերի նկատմամբ Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինբաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքի 30.11.2001 թվականի պետական գրանցումները, **(2)** նույն անշարժ գույքերի 3/4 մասի նկատմամբ Էմմա Մինբաշիրովայի սեփականության իրավունքի 13.03.2014 թվականի պետական գրանցումները և **(3)** ՀՀ «Թումանյան» նոտարական տարածքի նոտարի կողմից 07.08.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1719 վկայագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջների մասով, ենթակա է կարճման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով, քանի որ այդ հայցապահանջների մասով գործը վարույթ է ընդունվել առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը՝ **(4)** Անահիտ Բաղիրյանի կողմից ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու, **(5)** վիճելի անշարժ գույքի նկատմամբ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին միանձնյա սեփականատեր ճանաչելու, **(6)** Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանի ամբողջ անշարժ գույքի նկատմամբ Տարիել Հակոբյանին, Էմմա Մինբաշիրովային և Անահիտ Բաղիրյանին՝ յուրաքանչյուրին 1/3 մասով, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին հայցապահանջների մասով, ենթակա չէ կարճման, քանի որ այդ պահանջների մասով առարկայական ընդդատության կանոնների խախտում առկա չէ: Նշված հայցապահանջները ենթակա են ընդհանուր իրավասության դատարանի քննությանը՝ քաղաքացիական դատավարության կարգով, ինչն անտեսվել է վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանը կարճել է սույն գործի վարույթը միայն հայցվորներից մեկի՝ Տարիել Հակոբյանի, մասով, իսկ մյուս հայցվոր Անահիտ Բաղիրյանի մասով քննել է վերաքննիչ բողոքը: Այսպես, վերաքննիչ դատարանը, համարելով, որ Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված հիմնական հայցապահանջը ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու պահանջն է, ըստ էության անհիմն է գնահատել այդ պահանջը և Դատարանի վճիռը՝ Անահիտ Բաղիրյանի հայցը մերժելու մասով, թողել է օրինական ուժի մեջ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման միայն **(1)** ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի բնակելի տան, տնամերձ հողամասի, ինչպես նաև նույն գյուղում գտնվող վարելահողերի նկատմամբ Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինբաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքի 30.11.2001 թվականի պետական գրանցումները, **(2)** նույն անշարժ գույքերի 3/4 մասի նկատմամբ Էմմա Մինբաշիրովայի սեփականության իրավունքի 13.03.2014 թվականի պետական գրանցումները և **(3)** ՀՀ «Թումանյան» նոտարական տարածքի նոտարի կողմից 07.08.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1719 վկայագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջների մասով: Ընդ որում, այդ պահանջների առումով սույն գործը ենթակա է կարճման ոչ թե առանձին հայցվորի, այլ բոլոր հայցվորների մասով. այդ հայցապահանջների մասով գործը կարճելու դեպքում պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, որ դրանք ներկայացվել են միաժամանակ երկու հայցվորի՝ Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի կողմից, որոնք համատեղ դիմել են դատարան՝ իրենց իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով:

**IX.** Անդրադառնալով սույն գործով ներկայացված **(4)** Անահիտ Բաղիրյանի կողմից ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ հայցապահանջի վերաբերյալ ստորադաս դատարանների

եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան:

Վերոգրյալ իրավական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը ժառանգությունն ընդունելու համար սահմանել է վեցամսյա ժամկետ, որը հաշվարկվում է ժառանգության բացման պահից: Այդ ժամկետը բաց թողնելու դեպքում օրենսդիրը նախատեսել է դրա վերականգման հնարավորություն՝ դատական կարգով ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու միջոցով: Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետի, դատարանը ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի է համարում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) ժառանգը չգիտեր ժառանգության բացման մասին,
- 2) ժառանգը պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին,
- 3) նշված հանգամանքները հանդիսացել են ժամկետը բաց թողնելու պատճառ,
- 4) ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգը ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու վերաբերյալ պահանջով դատարան է դիմել այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո վեցամսյա ժամկետի ընթացքում:

Սույն գործով Դատարանը մերժել է Անահիտ Բաղիրյանի կողմից ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ հայցապահանջը՝ այն համարելով անհիմն:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով քննարկվող հայցապահանջին, գտել է, որ այն ենթակա է մերժման, քանի որ տվյալ դեպքում առկա չեն ժառանգություն ընդունելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու իրավական հիմքեր:

Համադրելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանն գտնում է, որ տվյալ դեպքում Անահիտ Բաղիրյանը չի ապացուցել ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված իրավական նախադրյալների առկայությունը, մասնավորապես այն հանգամանքը, որ ժամկետը բաց թողնելու պատճառն այն է, որ Անահիտ Բաղիրյանը չգիտեր և պարտավոր չէր իմանալ իր հոր՝ Վադինակ (Վադիկ) Հակոբյանի մահվան (ժառանգության բացման) մասին: Մինչդեռ օրենսդիրը հստակ սահմանել է, որ դատարանը ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի է համարում միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, որոնք սույն գործում բացակայում են: Ինչ վերաբերում է հայցվորի կողմից ներկայացված՝ Վրաստանի Հանրապետության Մառնետլի շրջանի Շահումյան ավանի ամբուլատորիայի կողմից 05.05.2015 թվականին տրված տեղեկանքին, ըստ որի՝ Անահիտ Բաղիրյանը մի շարք սիմպտոմներով 2012 թվականի դեկտեմբերից հիվանդ է եղել, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ ապացույցով չի հիմնավորվում այն փաստը, որ Անահիտ Բաղիրյանն օրենքով սահմանված ժամկետում և օրենքով սահմանված պատճառով ի վիճակի չէր ընդունելու իր հոր ժառանգությունը:

Հետևաբար, ստորադաս դատարանները, իրականացնելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում, իրավաչափորեն են հանգել այն հետևության, որ **(4)** Անահիտ Բաղիրյանի կողմից ժառանգություն ընդունե-

լու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ հայցապահանջը ենթակա է մերժման:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով **(4)** Անահիտ Բաղիրյանի կողմից ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ հայցապահանջով հայցվոր է հանդիսանում Անահիտ Բաղիրյանը, քանի որ այդ հայցապահանջն ուղղված է միայն վերջինիս իրավունքների և շահերի պաշտպանությանը: Ընդ որում, նշված պահանջից ածանցյալ է **(6)** Վադինակ (Վադիկ) Հակոբյանի ամբողջ անշարժ գույքի նկատմամբ Տարիել Հակոբյանին, Էմմա Մինքաշիրովային և Անահիտ Բաղիրյանին՝ յուրաքանչյուրին 1/3 մասով, ժառանգությունն ընդունած ժառանգ ծանաչելու մասին հայցապահանջը՝ Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված մասով, քանի որ Անահիտ Բաղիրյանին ժառանգություն ընդունած ժառանգ ծանաչելը պայմանավորված է ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարվելու կամ չհամարվելու հանգամանքով: Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **(4)** Անահիտ Բաղիրյանի կողմից ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ հայցապահանջի հետ միասին մերժման ենթակա է նաև **(6)** Վադինակ (Վադիկ) Հակոբյանի ամբողջ անշարժ գույքի նկատմամբ Տարիել Հակոբյանին, Էմմա Մինքաշիրովային և Անահիտ Բաղիրյանին՝ յուրաքանչյուրին 1/3 մասով, ժառանգությունն ընդունած ժառանգ ծանաչելու մասին հայցապահանջը՝ Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված մասով:

**X.** Անդրադառնալով **(5)** վիճելի անշարժ գույքի նկատմամբ Վադինակ (Վադիկ) Հակոբյանին միանձնյա սեփականատեր ծանաչելու հայցապահանջի՝ Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված մասին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հայցվորի մասով սովյալ պահանջը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի մեկնաբանությանը, արձանագրել է, որ շահագրգիռվածությունը դատարան ներկայացված որևէ պահանջի քննության նախապայման է, ուստի դատարանը պետք է պարզի բոլոր քննվող գործերով հայցվորի շահագրգռվածության հարցը: Դատարան դիմելով՝ հայցվորը պետք է հիմնավորի, իսկ դատարանը՝ պարզի, թե հայցվորի որ իրավունքներն են իրականում խախտվել և ինչ անբարենպաստ հետևանքների են հանգեցրել այդ խախտումները, ներկայացված հայցի նպատակն արդյոք իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու վերականգնումն է, և հնարավոր է արդյոք ընտրված միջոցով պաշտպանել կամ վերականգնել հայցվորի իրավունքները (կամ, համապատասխան դեպքերում, նրան պատճառված վնասը փոխհատուցել): Հայցվորն իրավունք ունի դատարան դիմելու իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և վերականգնման համար (*լրե՛ս, «ՄԻՄՈՆԱ ԱԿՎԱ» ՍՊԸ-ն ընդդեմ Արարատի մարզի Դաշպարսար համայնքի ղեկավարի և այլոց թիվ ԱՎԴ/0487/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումները կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **(5)** վիճելի անշարժ գույքի նկատմամբ Վադինակ (Վադիկ) Հակոբյանին միանձնյա սեփականատեր ծանաչելու հայցապահանջով Անահիտ Բաղիրյանը չի հանդիսանում շահագրգիռ անձ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **(4)** Անահիտ Բաղիրյանի կողմից ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու և **(6)** Վադինակ (Վադիկ) Հակոբյանի ամբողջ անշարժ գույքի նկատմամբ Անահիտ Բաղիրյանին՝

1/3 մասով, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների՝ մերժման ենթակա լինելու պայմաններում Անահիտ Բաղիրյանը չի կարող ունենալ որևէ իրավական շահագրգռվածություն իր հորը՝ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին, վիճելի անշարժ գույքի նկատմամբ միանձնյա սեփականատեր ճանաչելու հարցում: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին վիճելի անշարժ գույքի նկատմամբ միանձնյա սեփականատեր ճանաչելու՝ սույն գործով հայցվորների համար ցանկալի հետևանքը նրանց կողմից ժառանգման ենթակա գույքի (ժառանգական զանգվածի) ավելացումն է: Մինչդեռ **(4)** Անահիտ Բաղիրյանի կողմից ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու և **(6)** Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանի ամբողջ անշարժ գույքի նկատմամբ Անահիտ Բաղիրյանին՝ 1/3 մասով, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների՝ մերժման ենթակա լինելու պայմաններում Անահիտ Բաղիրյանն այլևս չի կարող հավակնել իր հոր՝ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանի գույքից ժառանգություն ստանալուն: Հետևաբար, Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանից ժառանգման ենթակա գույքի՝ ժառանգական զանգվածի փոփոխումը չի կարող որևէ իրավաբանական հետևանք ունենալ անձամբ Անահիտ Բաղիրյանի համար:

Փաստորեն, **(5)** վիճելի անշարժ գույքի նկատմամբ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին միանձնյա սեփականատեր ճանաչելու հայցապահանջը չի կարող ապահովել Անահիտ Բաղիրյանի իրավունքների կամ շահերի պաշտպանությունն ու վերականգնումը, իսկ Անահիտ Բաղիրյանը իրավական շահագրգռվածություն չի կարող ունենալ նշված հայցապահանջի բավարարման հարցում: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համաձայն՝ հայցվորի իրավական շահագրգռվածությունը դատարան ներկայացված որևէ պահանջի քննության նախապայման է. այդ նախապայմանը տվյալ դեպքում բացակայում է:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ **(5)** վիճելի անշարժ գույքի նկատմամբ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին միանձնյա սեփականատեր ճանաչելու հայցապահանջը՝ Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված մասով, ևս ենթակա է մերժման:

**XI.** Սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների հիման վրա անդրադառնալով Վերաքննիչ դատարանի որոշման իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

- Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով սույն գործի վարույթը կարճել է միայն Տարիել Հակոբյանի մասով,
- Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով սույն գործի վարույթը կարճել է Տարիել Հակոբյանի կողմից ներկայացված բոլոր, այդ թվում նաև՝ հանրային իրավահարաբերությունից չբխող վեճից ծագող հայցապահանջների մասով,
- Վերաքննիչ դատարանն իրավաչափորեն է եզրահանգել, որ **(4)** Անահիտ Բաղիրյանի կողմից ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու պահանջը, ինչպես նաև **(5)** վիճելի անշարժ գույքի նկատմամբ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին միանձնյա սեփականատեր ճանաչելու, **(6)** Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանի ամբողջ անշարժ գույքի նկատմամբ Տարիել Հակոբյանին, Էմմա Մինբաշիրովային և Անահիտ Բաղիրյանին՝ յուրաքանչյուրին 1/3 մասով, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին հայցապահանջները՝ Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված մասով, ենթակա են մերժման. այդ մասով Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ձիշտ լուծող դատական ակտ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը՝ կարճման ոչ ենթակա և մերժման ոչ ենթակա հայցապահանջների մասով, պետք է ուղարկվի նոր քննության ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այդ մասով Տարիել Հակոբյանի վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումներն ըստ էության քննելու և այդ սահմաններում Տարիել Հակոբյանի՝ վերաքննության կարգով Դատարանի վճռի բողոքարկման իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու համար:

Վճռաբեկ դատարանը, ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, հանգում է հետևյալ եզրակացության.

- սույն գործի վարույթը ենթակա է կարճման **(1)** ՀՀ Լոռու մարզի Միաթթ գյուղի բնակելի տան, տնամերձ հողամասի, ինչպես նաև նույն գյուղում գտնվող վարելահողերի նկատմամբ Վաղինակ Հակոբյանի և Էմմա Մինքաշիրովայի ընդհանուր սեփականության իրավունքի 30.11.2001 թվականի պետական գրանցումները, **(2)** նույն անշարժ գույքերի 3/4 մասի նկատմամբ Էմմա Մինքաշիրովայի սեփականության իրավունքի 13.03.2014 թվականի պետական գրանցումները և **(3)** ՀՀ «Թումանյան» նոտարական տարածքի նոտարի կողմից 07.08.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1719 վկայագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջների մասով, ընդ որում, այդ պահանջների մասով սույն գործի վարույթը ենթակա է կարճման ոչ միայն Տարիել Հակոբյանի, այլ նաև Անահիտ Բաղիրյանի մասով,

- սույն գործով Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված՝ **(4)** ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին պահանջը, ինչպես նաև երկու հայցվորների կողմից ներկայացված՝ **(5)** վիճելի անշարժ գույքի նկատմամբ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին միանձնյա սեփականատեր ճանաչելու, **(6)** Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանի ամբողջ անշարժ գույքի նկատմամբ Տարիել Հակոբյանին, Էմմա Մինքաշիրովային և Անահիտ Բաղիրյանին՝ յուրաքանչյուրին 1/3 մասով, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին հայցապահանջները՝ Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված մասով, ենթակա են մերժման,

- սույն գործը՝ **(5)** վիճելի անշարժ գույքի նկատմամբ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին միանձնյա սեփականատեր ճանաչելու, **(6)** Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանի ամբողջ անշարժ գույքի նկատմամբ Տարիել Հակոբյանին, Էմմա Մինքաշիրովային և Անահիտ Բաղիրյանին՝ յուրաքանչյուրին 1/3 մասով, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին հայցապահանջների՝ Տարիել Հակոբյանի կողմից ներկայացված մասով, պետք է ուղարկվի նոր քննության ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ Տարիել Հակոբյանի վերաքննիչ բողոքն այդ պահանջների մասով ըստ էության քննելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և քաղաքացիական գործի վարույթը մասնակիորեն կարճելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

##### ***5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի



համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հողվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության (...):

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, իսկ սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա է մասնակիորեն կարճման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով կարճման ենթակա հայցապահանջների մասով հայցադիմում ներկայացնելու, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարման ենթակա պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված, քանի որ թե՛ հայցադիմումի, թե՛ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրք վճարված չի եղել, և պետական տուրքի վճարումը հետաձգվել է մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացումը:

Հաշվի առնելով, որ Վերաքննիչ դատարանի որոշման՝ սույն գործով Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված թվով 3 ոչ գույքային պահանջները մերժելու մասով Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասը թողնվում է օրինական ուժի մեջ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Անահիտ Բաղիրյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 12.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար վճարման ենթակա և ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 18.09.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, 30.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.09.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, և 60.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 29.04.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ սույն գործը՝ թվով 2 ոչ գույքային պահանջների մասով, ուղարկվում է նոր քննության, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պահանջների մասով դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, և այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մասնակիորեն բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.10.2015 թվականի որոշումը:

- սույն քաղաքացիական գործի վարույթը՝ ըստ հայցի Տարիել Հակոբյանի և Անահիտ Բաղիրյանի ընդդեմ Էմմա Մինքաշիրովայի, Թումանյանի նոտարական տարածքի նոտար Ա. Մաղաքյանի, ՀՀ Լոռու մարզի Միարթի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման՝ 30.11.2001 թվականի ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի 06-078-4-2 մատյանի 067 համարի տակ կատարված բնակելի տան և տնամերձ հողամասի, թիվ 06-078-4-2 մատյանի 126 համարի տակ կատարված 0,169հա մակերեսով վարելահողի, թիվ 06-078-4-2 մատյանի 147 համարի տակ կատարված 0,098հա մակերեսով վարելահողի, թիվ 06-078-4-1 մատյանի 175 համարի տակ կատարված 0,064հա մակերեսով վարելահողի, թիվ 06-078-4-1 մատյանի 285 համարի տակ կատարված 0,249հա մակերեսով

վարելահողի, թիվ 06-078-4-2 մատյանի 023 համարի տակ կատարված 0,439հա մակերեսով վարելահողի սեփականության իրավունքի պետական գրանցումները, 07.08.2013 թվականին Թումանյանի նոտարական տարածքի նոտար Ա. Մաղաքյանի կողմից տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ Լոռու մարզի Միարթ համայնքի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան և տնամերձ հողամասի նկատմամբ թիվ 13032014-06-0053, ՀՀ Լոռու մարզի Միարթ համայնքի 0,169հա մակերեսով վարելահողի նկատմամբ թիվ 13032014-06-0013, ՀՀ Լոռու մարզի Միարթ համայնքի 0,098հա մակերեսով վարելահողի թիվ 13032014-06-0010, ՀՀ Լոռու մարզի Միարթ համայնքի 0,064հա մակերեսով վարելահողի նկատմամբ թիվ 13032014-06-0009, ՀՀ Լոռու մարզի Միարթ համայնքի 0,249հա մակերեսով վարելահողի նկատմամբ թիվ 13032014-06-0028, ՀՀ Լոռու մարզի Միարթ համայնքի 0,439հա մակերեսով վարելահողի նկատմամբ թիվ 13032014-06-0026 սեփականության իրավունքի վկայականներով կատարված իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին, կարճել,

- տույն քաղաքացիական գործը՝ ըստ հայցի Տարիել Հակոբյանի ընդդեմ Էմմա Մինքաշիրովայի, Թումանյանի նոտարական տարածքի նոտար Ա. Մաղաքյանի, ՀՀ Լոռու մարզի Միարթի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման՝ ՀՀ Լոռու մարզի Միարթ համայնքի թիվ 7 փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան և տնամերձ հողամասի, ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի 0,169հա մակերեսով վարելահողի, 0,098հա մակերեսով վարելահողի, 0,064հա մակերեսով վարելահողի, 0,249հա մակերեսով վարելահողի, 0,439հա մակերեսով վարելահողի նկատմամբ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին միանձնյա սեփականատեր ճանաչելու, Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանի ամբողջ գույքի, այն է՝ ՀՀ Լոռու մարզի Միարթ համայնքի թիվ 7 փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան և տնամերձ հողամասի, 0,169հա մակերեսով վարելահողի, 0,098հա մակերեսով վարելահողի, 0,064հա մակերեսով վարելահողի, 0,249հա մակերեսով վարելահողի, 0,439հա մակերեսով վարելահողի նկատմամբ Տարիել Հակոբյանին, Էմմա Մինքաշիրովային, Անահիտ Բաղիրյանին՝ յուրաքանչյուրին 1/3 մասով, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին, ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության,

- ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.10.2015 թվականի որոշման՝ Անահիտ Բաղիրյանի կողմից ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ պահանջը, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզի Միարթ համայնքի թիվ 7 փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան և տնամերձ հողամասի, ՀՀ Լոռու մարզի Միարթ գյուղի 0,169հա մակերեսով վարելահողի, 0,098հա մակերեսով վարելահողի, 0,064հա մակերեսով վարելահողի, 0,249հա մակերեսով վարելահողի, 0,439հա մակերեսով վարելահողի նկատմամբ Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանին միանձնյա սեփականատեր ճանաչելու, Վաղինակ (Վաղիկ) Հակոբյանի ամբողջ գույքի, այն է՝ ՀՀ Լոռու մարզի Միարթ համայնքի թիվ 7 փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 տան և տնամերձ հողամասի, 0,169հա մակերեսով վարելահողի, 0,098հա մակերեսով վարելահողի, 0,064հա մակերեսով վարելահողի, 0,249հա մակերեսով վարելահողի, 0,439հա մակերեսով վարելահողի նկատմամբ Տարիել Հակոբյանին, Էմմա Մինքաշիրովային, Անահիտ Բաղիրյանին՝ յուրաքանչյուրին 1/3 մասով, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու վերաբերյալ պահանջները՝ Անահիտ Բաղիրյանի կողմից ներկայացված մասով, մերժելու մասով, ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.07.2015 թվականի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.10.2015 թվականի որոշման՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռով դատական ծախսերի լուծման մասն օրինական ուժի մեջ թողնելու և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից դատական ծախսերը լուծելու մասը և այն փոփոխել:

- Անահիտ Բաղիրյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 12.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումը դատարան ներկայացնելու համար սահմանված և ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 18.09.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար,

- Անահիտ Բաղիրյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.09.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար,

- Անահիտ Բաղիրյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար սահմանված և ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 29.04.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար,

- սույն գործի՝ կարճման ենթակա մատվ դատական ծախսերի հարցը համարել լուծված,

- սույն գործի՝ նոր քննության ուղարկվող մատվ դատական ծախսերի, այդ թվում նաև՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 18.09.2014 թվականի որոշմամբ, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.09.2015 թվականի որոշմամբ և ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 29.04.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի, բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԻԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/1871/02/11**  
**2017թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1871/02/11  
Նախագահող դատավոր՝ Մ. Հարթենյան  
Դատավորներ՝ Կ. Չիլինգարյան  
                      Հ. Ենոքյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին

դժբազ դատական նիստում, քննելով Գոռ Նիկողոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.08.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Խաչիկ, Համբարձում Աշուրյանների և Էլիզա Սարգսյանի ընդդեմ Գոռ Նիկողոսյանի՝ բնակարանի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Գոռ Նիկողոսյանի ընդդեմ Խաչիկ, Համբարձում Աշուրյանների և Էլիզա Սարգսյանի՝ բնակարանից վտարելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Խաչիկ, Համբարձում Աշուրյանները և Էլիզա Սարգսյանը պահանջել են անվավեր ճանաչել Էական մոլորության ազդեցության տակ 12.08.2008 թվականին և 29.08.2008 թվականին կնքված Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2, 3 բնակարանի շինծու առուվաճառքի պայմանագրերը և կիրառել գործարքի անվավերության հետևանքներ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Գոռ Նիկողոսյանը պահանջել է Խաչիկ, Համբարձում Աշուրյաններին և Էլիզա Սարգսյանին վտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2, 3 բնակարանից և այն հանձնել իր տիրապետմանը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Գրիգորյան) 17.06.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. վճռվել է՝ կիրառել առաջին և գործարքի անվավերության հետևանքներ՝ անվավեր ճանաչել 12.08.2008 թվականի և 29.08.2008 թվականի առու-

վաճառքի պայմանագրերի հիման վրա Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2, 3 բնակարանի նկատմամբ Գոռ Նիկողոսյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, վերականգնել Խաչիկ, Համբարձում Աշուրյանների և Էլիդա Սարգսյանի սեփականության իրավունքը Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2, 3 բնակարանի նկատմամբ, պարտավորեցնել Համբարձում Աշուրյանին Գոռ Նիկողոսյանին վերադարձնել 18.916.000 ՀՀ դրամ և կողմերի միջև 12.08.2008 թվականին և 29.08.2008 թվականին կնքված առուվաճառքի գործարքը դիտել որպես գրավի պայմանագիր, իսկ Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2, 3 բնակարանը՝ որպես պայմանագրի ապահովման միջոց՝ գրավի առարկա: Հակընդդեմ հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Կ. Հակոբյան, Ն. Տավարացյան, Տ. Նազարյան) 03.10.2014 թվականի որոշմամբ Խաչիկ, Համբարձում Աշուրյանների և Էլիդա Սարգսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 17.06.2014 թվականի վճիռը մասնակիորեն՝ 18.916.000 ՀՀ դրամը Համբարձում Աշուրյանի կողմից Գոռ Նիկողոսյանին վերադարձնելուն պարտավորեցնելու մասով, բեկանվել է, և գործն այդ մասով ուղարկվել է նոր քննության: Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 17.06.2014 թվականի վճիռը՝ մնացած մասերով, թողնվել է օրինական ուժի մեջ:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Տ. Ստեփանյան) (այսուհետ՝ Դատարան) 10.06.2015 թվականի վճռել է պարտավորեցնել Համբարձում Աշուրյանին Գոռ Նիկողոսյանին վերադարձնել 12.266.800 ՀՀ դրամ՝ որպես առջին գործարքի անվավերության հետևանք:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.08.2016 թվականի որոշմամբ Գոռ Նիկողոսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Խաչիկ, Համբարձում Աշուրյանների և Էլիդա Սարգսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 10.06.2015 վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ որոշվել է որպես առջին գործարքի անվավերության հետևանք՝ Համբարձում Աշուրյանի կողմից Գոռ Նիկողոսյանին փոխառության գումար վճարելու պարտավորությունը համարել դադարած:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գոռ Նիկողոսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Խաչիկ, Համբարձում Աշուրյանների և Էլիդա Սարգսյանի ներկայացուցիչը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ, 877-րդ, 878-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը, 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ Խաչիկ Աշուրյանի և Գոռ Նիկողոսյանի միջև 21.07.2009 թվականին կնքված «Միցուբիշի» մակնիշի «17 SO 025» պետհամարանիշի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը չի վիճարկվել, այն դիտարկել է որպես կողմերի միջև կնքված փոխառության պայմանագրի կատարման առնչությամբ կնքված գործարք և միայն Խաչիկ Աշուրյանի պնդումների հիման վրա, անտեսելով, որ գործում առկա չէ 7.174 եվրոյի մասով Գոռ Նիկողոսյանի հանդեպ պարտավորությունը կատարելու փաստը հիմնավորող ապացույց, գտել է, որ Համբարձում Աշուրյանի կողմից կատարվել է Գոռ Նիկողոսյանի նկատմամբ ունեցած 7.174 եվրոյի չափով պարտավորությունը:

Վերաքննիչ դատարանը՝ նախադատելի է համարել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.10.2014 թվականի որոշմամբ հաստատված փաստական հանգամանքները՝ որպես նախադատելիության իրավական հիմք վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետը, որը, սակայն, տվյալ դեպքում կիրառելի չէր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.08.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 10.06.2015 թվականի վճռին կամ գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պայմասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանն իրավացիորեն շինծու է որակել ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը՝ այն դիտելով որպես պարտավորության մարում՝ գումարի փոխարեն գույք հանձնելով: Նման եղանակով պարտքի մարման դեմ Գոռ Նիկողոսյանը երբևէ չի առարկել, ավելին, նույն տրամաբանությամբ Գոռ Նիկողոսյանը դրամական պարտավորության դիմաց չպետք է ընդուներ 1.200 ԱՄՆ դոլար արժողությամբ հեռուստացույցը: Նշված պայմանագրում ավտոմեքենայի արժեքը սահմանվել է 3.500.000 ՀՀ դրամ, մինչդեռ իրականում Գոռ Նիկողոսյանն ավտոմեքենայի դիմաց գումար չի վճարել:

Վերաքննիչ դատարանը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.10.2014 թվականի որոշմամբ հաստատված փաստական հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով իրավացիորեն դիտել է որպես նախադատելի նշանակություն ունեցող փաստեր:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 12.08.2008 թվականի բնակարանի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Խաչիկ Աշուրյանը վաճառել է, իսկ Գոռ Նիկողոսյանը գնել է Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 3 բնակարանը, իսկ 29.08.2008 թվականի բնակարանի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Խաչիկ, Համբարձում Աշուրյանները, Էլիդա Սարգսյանը վաճառել են, իսկ Գոռ Նիկողոսյանը գնել է Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2 բնակարանը (**հատոր 1-ին, գ.թ. 12-13**):

2) ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Երևանի թիվ 2 հաշվառման բնական բաժանմունքի 06.05.2011 թվականի թիվ 17/22-A1501 տեղեկանքի համաձայն՝ Խաչիկ Աշուրյանի անվամբ 25.10.2008 թվականին հաշվառված «Միցուրիշի» սակնիշի «17 SO 025» պետհամարանիշի ավտոմեքենան հաշվառումից հանվել է 21.07.2009 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 20**):

3) Թիվ ԵԷԴ/0084/01/12 քրեական գործով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի «Քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու մասին» 17.10.2012 թվականի որոշման համաձայն՝ նախաքննական մարմնի կողմից Գոռ Նիկողոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2008 թվականի օգոստոս ամսից մինչև 2009 թվականի հուլիս ամիսը ներառյալ, ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով, այն է՝ ամսական 5 տոկոս տոկոսադրույքով, գործով տուժող Համբարձում Աշուրյանին տվել է 30.000 եվրո: 2008 թվականի օգոստոսին ամբաստանյալ Գոռ Նիկողոսյանը բնակարանների առուվաճառքով զբաղվող, գործով վկա Տիգրան Մալխասյանի հետ այցելել է տուժող Համբարձում Աշուրյանի՝ Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2, 3 բնակարանը, գնել դրանք և համաձայնել բնակարանների առուվաճառքի ձևական պայմանագրերով տրամադրել 30.000 եվրո: Այդ կապակցությամբ 2008 թվականի օգոստոսի 12-ին և 29-ին կնքվել են Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2 և 3 բնակարանների շինծու առուվաճառքի պայմանագրեր: Առուվաճառքի պայմանագրերը կնքելու օրերին ամբաստանյալ Գոռ Նիկողոսյանը մաս-մաս տուժող Համբարձում Աշուրյանին է տվել 13.399.500 ՀՀ դրամին համարժեք 30.000 եվրո՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով, այն է՝ ամսական 5 տոկոս տոկոսադրույքով: Բնակարանի առուվաճառքի երկրորդ շինծու պայմանագիրը կնքելու օրն ամբաստանյալ Գոռ Նիկողոսյանը որպես միջնորդավճար տուժող Համբարձում Աշուրյանից վերցրել է 893.300 ՀՀ դրամին համարժեք 2.000 եվրո, 267.990 ՀՀ դրամին համարժեք 600 եվրո՝

որպես բանկում վճարման գումար, ինչպես նաև որպես առաջին ամսվա տոկոսագումար՝ ստացել է 893.300 ՀՀ դրամին համարժեք 2.000 եվրո: Այնուհետև, 2008 թվականի սեպտեմբերից մինչև 2009 թվականի հուլիսը ներառյալ, տրամադրված գումարի դիմաց ամբաստանյալ Գոռ Նիկողոսյանն անձամբ տուժող Համբարձում Աշուղյանից ստացել է ընդամենը 8.886.845 ՀՀ դրամին համարժեք 18.500 եվրո, այսինքն՝ ամսական 720.555 ՀՀ դրամին համարժեք 1.500 եվրո (**հատոր 2-րդ, գ.թ. 3-9**):

4) Սույն քաղաքացիական գործով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 17.06.2014 թվականի վճռով հաստատված է համարել փոխառության քողարկման նպատակով կողմերի միջև 12.08.2008 թվականին և 29.08.2008 թվականին բնակարանների առուվաճառքի պայմանագրերի կնքումը՝ վճռելով կիրառել առջինից գործարքի անվավերության հետևանքներ՝ անվավեր ճանաչել 12.08.2008 թվականի և 29.08.2008 թվականի առուվաճառքի պայմանագրերի հիման վրա Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2, 3 բնակարանի նկատմամբ Գոռ Նիկողոսյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, վերականգնել Խաչիկ, Համբարձում Աշուղյանների և Էլիզա Սարգսյանի սեփականության իրավունքը Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2, 3 բնակարանի նկատմամբ, կողմերի միջև 12.08.2008 թվականին և 29.08.2008 թվականին կնքված առուվաճառքի գործարքը դիտել որպես գրավի պայմանագիր, իսկ Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2, 3 բնակարանը՝ որպես պայմանագրի ապահովման միջոց՝ գրավի առարկա: Նշված մասով վճիռը մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 4-րդ, գ.թ. 33-55**):

5) Սույն քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 03.10.2014 թվականի որոշմամբ արձանագրել է, որ գործում առկա բոլոր ապացույցների, այդ թվում՝ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի «Քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու մասին» 17.10.2012 թվականի որոշմամբ որպես ապացույց ճանաչված բացատրությունների՝ համակցության մեջ վերլուծության արդյունքում սույն գործով հաստատված է Գոռ Նիկողոսյանի կողմից Համբարձում Աշուղյանից 893.300 ՀՀ դրամին համարժեք 2.000 եվրո, 267.990 ՀՀ դրամին համարժեք 600 եվրո, 893.300 ՀՀ դրամին համարժեք 2.000 եվրո, 8.886.845 ՀՀ դրամին համարժեք 18.500 եվրո, ինչպես նաև 1.200 ԱՄՆ դոլար արժողությամբ հեռուստացույց ստանալու փաստը: Նշված որոշումը մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 4-րդ, գ.թ. 108-115**):

**4. Վճռաբեկ դատարանի պայմանաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում դատական ակտերի նախադատելիության հարցի վերաբերյալ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի և 53-րդ հոդվածի 1-ին կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք նույն գործով վերաքննիչ դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մյուս ղապական ակտով (որով բեկանվել է առաջին ապանի դատարանի վճիռը, և գործն ուղարկվել է նոր քննության) հասարակված փաստերը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով ունեն նախադատելի նշանակություն փյալ գործի նոր քննության ժամանակ ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելիս:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի հա-

մաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերոնշյալ իրավական նորմի վերլուծությանը, նշել է, որ օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նույն անձանց միջև այլ գործի քննության արդյունքում նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված հանգամանքներին:

Գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն՝ ներմուծելու նման հանգամանքը նոր կայացվող դատական ակտում: Որպես կանոն, դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով՝ թե՛ գործին մասնակցող անձանց, թե՛ դատարանի վրա (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետ): Հետևաբար նախադատելիությունն օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն: Դատական ակտի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ նախադատելիության օբյեկտիվ սահմանների որոշման համար էական նշանակություն ունի հետևյալ երկու դատավարական կանոնների պահպանումը՝

1) վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը դատարանը պարզում է միայն օրենքով նախատեսված կարգով ձեռք բերված և հետազոտված ապացույցների միջոցով (բացառություն են կազմում միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերը):

2) դատարանը պարզում է միայն գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը (վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ): Այս կանոնը կիրառելիս դատարանը պարտավոր է առաջնորդվել հայցվորի կողմից կանխորոշված հայցի առարկայի և հիմքի սահմաններով, որի փոփոխման բացառիկ իրավունքը պատկանում է հայցվորին (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդված):

ՀՀ վճռաբեկ դատարանը հատկապես կարևորել է ապացուցման առարկայի՝ վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների ճիշտ որոշման հարցը, քանի որ դատարանի կողմից ապացուցման առարկայի սահմանների կամայական (առանց դատավարական նախադրյալի՝ հայցվորի կամահայտնության) ընդլայնումը բերում է այդ գործով կայացված դատական ակտով հաստատված որոշակի հանգամանքների նախադատելիության բացառման (յուե՛ս, «Մայթն» ՄՊԸ-ն ընդդեմ Աշոտ և Հենրիկ Այվազյանների թիվ 3-93(ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ զարգացնելով վերը նշված դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ համաձայն ընդհանուր կանոնի՝ նախադատելիությունն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ սահմաններ: Նախադատելիության օբյեկտիվ սահմանները կազմում են այն փաստական հանգամանքները, որոնք հաստատվել են ավելի վաղ քննված գործով օրինական ուժի մեջ մտած վճռով:

Նախադատելիության սուբյեկտիվ սահմաններն այն անձինք են, որոնց համար դատական ակտով հաստատված հանգամանքներն ունեն նախադատելի նշանակություն: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իրավակարգավորու-



միջ հետևում է, որ փաստերը կարող են նախադատելի նշանակություն ունենալ այն անձանց համար, որոնք մասնակցել են գործի քննությանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ ընդգծել է, որ նախադատելիության ինստիտուտը կարևոր նշանակություն ունի դատական խնայողության սկզբունքի ապահովման և դատական ակտերի միջև անհաղթահարելի հակասությունների կանխարգելման առումով: Մասնավորապես՝ այն մի կողմից կոչված է պարզեցնելու խախտված իրավունքները վերականգնելու դատավարական կարգը՝ ազատելով կողմերին նույն փաստը կրկին ապացուցելու պարտականությունից, մյուս կողմից կոչված է բացառելու միևնույն փաստերի տարբեր, հակասական գնահատումը, որը կարող է հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի խախտման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված նորմի նպատակն է պարզեցնել ապացուցման գործընթացը, այն է՝ միևնույն փաստը մեկ անգամ մեկ այլ դատարանի կողմից հաստատված լինելու դեպքում կողմերին և դատարանին ազատել այդ փաստերը հաստատելու գործընթացը կրկին կատարելու բեռից, ընդ որում, նախադատելիության կիրառման համար օրենսդիրը կարևորել է այն հանգամանքը, որ նոր քննվող գործը վերաբերի միևնույն անձանց միջև վեճին (*դե՛ս, Մանյա Մանուկյանն ընդդեմ Աշրարակի քաղաքապետարանի թիվ ԱՐԱԴ/0209/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ նշել է, որ դատական ակտի պրեյտոդիցիալ կապի կամ նախադատելիության սուբյեկտիվ սահմանները որոշվում են գործին մասնակցող անձանց շրջանակով, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հանգամանքները նոր կայացվող դատական ակտ կարող են ներմուծվել միայն, եթե օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և նոր կայացվող դատական ակտով գործին մասնակցող անձինք նույնն են: Նախադատելիության ինստիտուտի կիրառումն անթույլատրելի է այն դեպքերում, երբ սկզբնական և հաջորդող գործերում գործին մասնակցող անձանց շրջանակը համընկնում է մասնակիորեն (*դե՛ս, Վահագն Ղազարյանն ընդդեմ Լուսինե և Սոնա Մխիթարյանների և մյուսների թիվ ԿԴ1/0063/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Զարգացնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ նախադատելիությունը, բացի օբյեկտիվ ու սուբյեկտիվ սահմաններից, ունի նաև ժամանակային գործողության և առարկայական կիրառելիության սահմաններ:

Այսպես, դատական ակտի նախադատելիությունը սահմանափակված է օրինական ուժ ստացած դատական ակտի գործողության ժամկետով, այսինքն՝ նախադատելի են միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Բացի այդ, այն դեպքերում, երբ օրինական ուժ ստացած դատական ակտը վերանայվում է նոր կամ նոր երևան եկած հանգամանքների ուժով, այն կորցնում է իր նախադատելիությունը: Ուստի նախադատելիության ժամանակային գործողության սահմանը դատական ակտի օրինական ուժի մեջ գտնվելու ժամանակահատվածն է:

Նախադատելիության մյուս սահմանը վերաբերում է առարկայական կիրառելիությանը: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծությունից հետևում է, որ նախադատելիությունը վերաբերում է **տարբեր քաղաքացիական գործերի**՝ նկատի ունենալով, որ օրենսդրի կողմից օգտագործվում են «նախկինում քննված քաղաքացիական գործ» և «այլ գործ» արտահայտությունները: Հետևաբար երկու դատական ակտերի միջև նախադատելիության կապի առաջանում է այն դեպքում, երբ նախադատելի դատական ակտը կայացվել է մի գործի քննության արդյունքում, իսկ մեկ այլ դատական ակտը, որի համար առաջինը նախադատելի է, կայացվում է այլ գործի քննության արդյունքում: Ուստի նախադատելիության ընդհանուր կանոնի համաձայն՝ երկու տարբեր դատական ակտերի միջև նախադատելիությունն առաջանում է այն դեպքում, երբ այդ դատական ակտերը կայացվել են տարբեր

գործերի քննության արդյունքներում: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ «նախկինում քննված քաղաքացիական գործ» արտահայտությունը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ քննվող քաղաքացիական գործի շրջանակներում վերադաս դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վճիռը մի մասով թողնվել է օրինական ուժի մեջ կամ փոփոխվել է, իսկ մյուս մասով բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության: Նման դեպքերում օրինական ուժի մեջ թողնված կամ փոփոխված վճռի մասով քաղաքացիական գործը նոր քննության ուղարկված մասով քաղաքացիական գործի նկատմամբ պետք է գնահատվի որպես նախկինում քննված այլ գործ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ վերադաս դատարանն օրինական ուժի մեջ է թողնում առաջին ատյանի դատարանի վճիռը՝ անհրաժեշտության դեպքում պատճառաբանելով այն, վերադաս դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշումները դառնում են վճռի բաղկացուցիչ մաս: Հետևաբար տվյալ գործի մյուս մասով նոր քննության ընթացքում օրինական ուժի մեջ թողնված վճիռը՝ այդ թվում վերադաս դատարանի պատճառաբանություններով, դառնում է նախադատելի: Նույն կարգավորումը գործում է նաև այն դեպքերում, երբ վերադաս դատարանը փոփոխում է դատարանի վճիռը՝ հաշվի առնելով, որ տվյալ դեպքում վճիռը գոյություն է ունենում վերադաս դատարանի կողմից փոփոխված տեսքով: Հետևաբար այս դեպքում նույնպես առաջին ատյանի դատարանի վճիռը վերադաս դատարանի կողմից փոփոխված տեսքով դառնում է նախադատելի: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է նաև նրանով, որ եթե նույն անձանց միջև մեկ այլ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը նախադատելի է, ապա անտրամաբանական է նույն քաղաքացիական գործի որևէ մասով վերադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ փոփոխված կամ օրինական ուժի մեջ թողնված վճիռը նախադատելի չհամարելը՝ նկատի ունենալով նախադատելիության ինստիտուտի նշանակությունը դատական խնայողության սկզբունքի ապահովման և դատական ակտերի միջև անհաղթահարելի հակասությունների կանխարգելման առումով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ այն դեպքերում, երբ վերադաս դատարանը գործն ուղարկում է նոր քննության՝ բեկանելով առաջին ատյանի դատարանի վճիռը, ապա այս դեպքում վճիռն իրավական առումով այլևս գոյություն չունի: Նման դեպքերում նախադատելիության մասին խոսք գնալ չի կարող՝ հաշվի առնելով վճռի՝ իրավական առումով բացակայությունը:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ նախադատելիությունը բացարձակ չէ, այն ունի օբյեկտիվ, սուբյեկտիվ, ժամանակային գործողության և առարկայական կիրառելիության սահմաններ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 12.08.2008 թվականի բնակարանի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Խաչիկ Աշուրյանը վաճառել է, իսկ Գոռ Նիկողոսյանը գնել է Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 3 բնակարանը, իսկ 29.08.2008 թվականի բնակարանի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Խաչիկ, Համբարձում Աշուրյանները, Էլիզա Սարգսյանը վաճառել են, իսկ Գոռ Նիկողոսյանը գնել է Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2 բնակարանը: Սույն քաղաքացիական գործով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 17.06.2014 թվականի վճռով հաստատված է համարել փոխառության քողարկման նպատակով կողմերի միջև 12.08.2008 թվականին և 29.08.2008 թվականին բնակարանների առուվաճառքի պայմանագրերի կնքումը՝ վճռելով կիրառել առաջին զործարքի անվավերության հետևանքներ՝ անվավեր ճանաչել 12.08.2008 թվականի և 29.08.2008 թվականի առուվաճառքի պայմանագրերի հիման վրա Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2, 3 բնակարանի նկատմամբ Գոռ Նիկողոսյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, վերականգնել Խաչիկ, Համբարձում Աշուրյանների և Էլիզա Սարգսյանի սեփականության իրավունքը Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2, 3 բնակարանի նկատմամբ, կողմերի միջև 12.08.2008 թվականին և 29.08.2008 թվականին կնքված առուվաճառքի գործարքը դիտել որպես գրավի պայմանագիր, իսկ

Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2, 3 բնակարանը՝ որպես պայմանագրի ապահովման միջոց՝ գրավի առարկա: Նշված մասով վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Երևանի թիվ 2 հաշվառման քննական բաժանմունքի 06.05.2011 թվականի թիվ 17/22-A1501 տեղեկանքի համաձայն՝ Խաչիկ Աշուրյանի անվամբ 25.10.2008 թվականին հաշվառված «Միցուբիշի» մակնիշի «17 SO 025» պետհամարանիշի ավտոմեքենան հաշվառումից հանվել է 21.07.2009 թվականին:

Թիվ ԵԷԴ/0084/01/12 քրեական գործով Երևանի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի «Քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու մասին» 17.10.2012 թվականի որոշման համաձայն՝ նախաքննական մարմնի կողմից Գոռ Նիկողոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2008 թվականի օգոստոս ամսից մինչև 2009 թվականի հուլիս ամիսը ներառյալ, ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով, այն է՝ ամսական 5 տոկոս տոկոսադրույքով, գործով տուժող Համբարձում Աշուրյանին տվել է 30.000 եվրո: 2008 թվականի օգոստոսին ամբաստանյալ Գոռ Նիկողոսյանը բնակարանների առուվաճառքով զբաղվող, գործով վկա Տիգրան Մալխասյանի հետ այցելել է տուժող Համբարձում Աշուրյանի՝ Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2 և 3 բնակարանները, գննել դրանք և համաձայնեց բնակարանների առուվաճառքի ձևական պայմանագրերով տրամադրել 30.000 եվրո: Այդ կապակցությամբ 2008 թվականի օգոստոսի 12-ին և 29-ին կնքվել են Երևանի Գլինկայի փողոցի 19-րդ շենքի թիվ 2 և 3 բնակարանների շինծու առուվաճառքի պայմանագրեր: Առուվաճառքի պայմանագրերը կնքելու օրերին ամբաստանյալ Գոռ Նիկողոսյանը մաս-մաս տուժող Համբարձում Աշուրյանին է տվել 13.399.500 ՀՀ դրամին համարժեք 30.000 եվրո՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով, այն է՝ ամսական 5 տոկոս տոկոսադրույքով: Բնակարանի առուվաճառքի երկրորդ շինծու պայմանագիրը կնքելու օրը ամբաստանյալ Գոռ Նիկողոսյանը որպես միջնորդավճար տուժող Համբարձում Աշուրյանից վերցրել է 893.300 ՀՀ դրամին համարժեք 2.000 եվրո, 267.990 ՀՀ դրամին համարժեք 600 եվրո՝ որպես բանկում վճարման գումար, ինչպես նաև որպես առաջին անվա տոկոսագումար՝ ստացել 893.300 ՀՀ դրամին համարժեք 2.000 եվրո: Այսուհետև, 2008 թվականի սեպտեմբերից մինչև 2009 թվականի հուլիսը ներառյալ, տրամադրված գումարի դիմաց ամբաստանյալ Գոռ Նիկողոսյանն անձամբ տուժող Համբարձում Աշուրյանից ստացել է ընդամենը 8.886.845 ՀՀ դրամին համարժեք 18.500 եվրո, այսինքն՝ ամսական 720.555 ՀՀ դրամին համարժեք 1.500 եվրո:

Սույն քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 03.10.2014 թվականի որոշմամբ արձանագրել է, որ գործում առկա բոլոր ապացույցների, այդ թվում՝ Երևանի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի «Քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու մասին» 17.10.2012 թվականի որոշմամբ որպես ապացույց ձանաչված բացատրությունների՝ համակցության մեջ վերլուծության արդյունքում **սույն գործով հաստատված է** Գոռ Նիկողոսյանի կողմից Համբարձում Աշուրյանից 893.300 ՀՀ դրամին համարժեք 2.000 եվրո, 267.990 ՀՀ դրամին համարժեք 600 եվրո, 893.300 ՀՀ դրամին համարժեք 2.000 եվրո, 8.886.845 ՀՀ դրամին համարժեք 18.500 եվրո, ինչպես նաև 1.200 ԱՄՆ դոլար արժողությամբ հեռուստացույց ստանալու փաստը: Նշված որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով Դատարանը, գնահատելով գործում առկա ապացույցները, գտել է, որ Համբարձում Աշուրյանի կողմից որպես փոխառություն 30.000 եվրո ստանալու պայմաններում արժանահավատ է քրեական գործի շրջանակներում Գոռ Նիկողոսյանի տված բացատրությունն այն մասին, որ Համբարձում Աշուրյանն իրեն տվել է 2 անգամ 370.000 ՀՀ դրամ (1.000 ԱՄՆ դոլարին համարժեք) և մեկ հեռուստացույց, որի գինը կազմել է 1.200 ԱՄՆ դոլար: Միաժամանակ վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածը՝ Դատարանը գտել է, որ սովյալ դեպքում գործում է պարտապանի կողմից գու-

մարը վերադարձված չլինելու կանխավարկածը, իսկ ինչ վերաբերում է քրեական գործի քննության ընթացքում կողմերի բացատրություններին և ցուցմունքներին, «Քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու մասին» որոշմանը, ապա դրանք վերաբերելի ապացույցներ չեն՝ փոխառության գումարը վերադարձնելու փաստը հաստատելու համար: Հետևաբար հաստատված համարելով Գոռ Նիկողոսյանի կողմից Համբարձում Աշուղյանին 30.000 եվրո գումար հանձնելու, Համբարձում Աշուղյանի կողմից Գոռ Նիկողոսյանին 2 անգամ 370.000 ՀՀ դրամ (1.000 ԱՄՆ դոլարին համարժեք) և 1.200 ԱՄՆ դոլար արժողությամբ հեռուստացույց վերադարձված լինելու փաստերը՝ Դատարանը, 30.000 եվրոյից նվազեցնելով վերոնշյալ գումարը, գտել է, որ որպես անվավերության հետևանք՝ պետք է պարտավորեցնել Համբարձում Աշուղյանին Գոռ Նիկողոսյանին վերադարձնել 12.266.800 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ սույն գործով օրինական ուժի մեջ մտած 17.06.2014 թվականի վճռով հաստատվել է կնքված առուվաճառքի պայմանագրերի շինծու լինելը, միաժամանակ արձանագրել է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.10.2014 թվականի որոշմամբ հաստատվել է Գոռ Նիկողոսյանի կողմից Համբարձում Աշուղյանից 893.300 ՀՀ դրամին համարժեք 2.000 եվրո, 267.990 ՀՀ դրամին համարժեք 600 եվրո, 893.300 ՀՀ դրամին համարժեք 2.000 եվրո, 8.886.845 ՀՀ դրամին համարժեք 18.500 եվրո, ինչպես նաև 1.200 ԱՄՆ դոլար արժողությամբ հեռուստացույց ստանալու փաստը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ վերոնշյալ որոշում ուժի մեջ մտնելու պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով Համբարձում Աշուղյանի կողմից Գոռ Նիկողոսյանին 23.100 եվրո և 1.200 ԱՄՆ դոլար արժողությամբ հեռուստացույց վերադարձված լինելու հանգամանքը կրկին ապացուցման անհրաժեշտություն չունի, քանի որ Գոռ Նիկողոսյանի կողմից Համբարձում Աշուղյանից ընդհանուր առմամբ 23.100 եվրո և 1.200 ԱՄՆ դոլար ստանալու հանգամանքն **ունի նախադատելի նշանակություն**, ինչը հաշվի չի առել Դատարանը: Ինչ վերաբերում է պարտքի մնացած մասին, ապա Վերաքննիչ դատարանը նշել է, որ թեև Գոռ Նիկողոսյանը նշել է, որ հայցվորներից ավտոմեքենան ստացել է առուվաճառքի պայմանագրի հիման վրա, սակայն այդ հանգամանքը հիմնավորող ապացույց չի ներկայացրել: Մինչդեռ գործի փաստերի համադրմամբ (ավտոմեքենայի արժեքը՝ 10.200 ԱՄՆ դոլար, ավտոմեքենան հաշվառումից հանելու ժամկետը՝ 21.07.2009 թվական, որը համընկնում է Գոռ Նիկողոսյանի նշած առուվաճառքի պայմանագրի ժամկետի հետ) հիմնավորվում է, որ ավտոմեքենան տրամադրվել է պարտքի դիմաց: Հետևաբար բավարար հիմքեր կան արձանագրելու, որ Համբարձում Աշուղյանի կողմից Գոռ Նիկողոսյանի հանդեպ առկա պարտավորությունը կատարված լինելու հիմքով դադարել է:

Մինչդեռ վերոնշյալ իրավական դիրքորոշումների լուսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Վերաքննիչ դատարանը սույն գործով նախադատելի է համարել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.10.2014 թվականի որոշմամբ հաստատված այն փաստերը, որ Գոռ Նիկողոսյանը ստացել է 893.300 ՀՀ դրամին համարժեք 2.000 եվրո, 267.990 ՀՀ դրամին համարժեք 600 եվրո, 893.300 ՀՀ դրամին համարժեք 2.000 եվրո, 8.886.845 ՀՀ դրամին համարժեք 18.500 եվրո, ինչպես նաև 1.200 ԱՄՆ դոլար արժողությամբ հեռուստացույց: Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ տվյալ փաստական հանգամանքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը հաստատել է՝ հիմնավորելու համար վճռի մասը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտությունը՝ գտնելով, որ նշված փաստական հանգամանքների մատվ Երևանի էրեքունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը պատշաճ քննություն չի իրականացրել: Այլ կերպ ասած, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գործը բողոքարկված մատվ ամբողջությամբ նոր քննության ուղարկելու պարագայում այլևս գոյություն չունի տվյալ հարցի կապակցությամբ առաջին ատյանի դատարանի վճիռը, որով հաստատված փաստերն ապացուցման կարիք չէին ունենա:

Հետևաբար վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.10.2014 թվականի որոշումը չէր կարող որակվել նախադատելի: Այսինքն՝ վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետը՝ իր պատճառաբանությունների հիմքում դնելով մի դատական ակտ, որը չի կարող համարվել նախադատելի՝ նախադատելիության սահմանների վերաբերյալ վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո:

Անդրադառնալով վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Համբարձում Աշուղյանի կողմից Գոռ Նիկողոսյանի հանդեպ փոխառության պարտավորության մնացած մասը կատարվել է, քանի որ Համբարձում Աշուղյանը, «Միցուրիչի» մակնիշի ավտոմեքենան պարտատիրոջը հանձնելով, կատարել է նաև պարտավորության մնացած մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*տես, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԳ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*տես, Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Տվյալ դեպքում վերաքննիչ դատարանը պարտավորության կատարման փաստը հաստատելիս չի հիմնվել գործում առկա ապացույցների այնպիսի համակցության վրա, որը հնարավորություն կտար միանշանակ հետևություն անելու այն մասին, որ վերոնշյալ ավտոմեքենան Համբարձում Աշուղյանի կողմից հանձնվել է Գոռ Նիկողոսյանին՝ որպես պարտավորության մնացած մասի մարում: Ինչ վերաբերում է սույն գործում առկա՝ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Երևանի թիվ 2 հաշվառման քննական բաժանմունքի տեղեկանքին, ապա տեղեկանքում նշված ժամանակահատվածում ավտոմեքենան հաշվառումից հանված լինելու հանգամանքն ինքնին բավարար չէ հետևություն անելու այն մասին, որ Համբարձում Աշուղյանի կողմից Գոռ Նիկողոսյանի հանդեպ փոխառության մնացած մասը կատարված է: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը հիմնավորվում է նաև նրանով, որ վերոնշյալ տեղեկանքը որևէ նշում չի պարունակում այն մասին, թե ինչն է հանդիսացել հաշվառումից հանելու հիմք, և թե Խաչիկ Աշուղյանի անվամբ հաշվառումից հանելուց հետո արդյոք ավտոմեքենան փոխանցվել է Գոռ Նիկողոսյանին: Հետևաբար վերաքննիչ դատարանը նման եզրահանգման կարող էր գալ միայն այն դեպքում, երբ ապացույցների համակցության մեջ պարզեր, մասնավորապես, ավտոմեքենայի իրական արժեքը և այն հարցը, թե արդյոք մեքենայի հանձնումը բավարար էր պարտավորությունը մնացած մասով կատարված համարելու համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի

2-րդ կետի և 53-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Միաժամանակ նկատի ունենալով, որ Դատարանը սույն գործով նույնպես պատշաճ քննություն չի իրականացրել՝ մասնավորապես՝ նույն ապացույցները մի դեպքում բավարար համարելով որոշակի փաստեր հաստատված համարելու համար, իսկ մեկ այլ դեպքում՝ դրանք դիտելով ոչ վերաբերելի, այն դեպքում, երբ դրանք անհրաժեշտ են գործի լուծման համար նշանություն ունեցող փաստերը պարզելու համար, հետևաբար՝ վերաբերելի են, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ամկա է գործի նոր քննության անհրաժեշտություն:

*Նշված պարզառարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պայրասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի ամկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.08.2016 թվականի որոշումը և գործը՝ որպես առոչինչ գործարքի անվավերության հետևանք վերադարձման ենթակա գումարի մասով, ուղարկել Երևանի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական հատարանի որոշում և հարապաշարի կողմից **ԵԿԴ/2524/02/10** 2017թ.  
 Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2524/02/10  
 Նախագահող դատավոր՝ Մ. Հարթենյան  
 Դատավորներ՝ Կ. Չիլինգարյան  
                                   Ը. Ենոքյան

### **ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին դռնբաց դատական նիստում, քննելով Սվետլանա Նալբանդյանի ներկայացուցիչ Գեղամ Ալվազյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.02.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սուսաննա Յազիյանի ընդդեմ Սվետլանա Նալբանդյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

### **Պ Ա Բ Ձ Ե Ց**

#### **1. Գործի դատավարական նախապարտությունը**

Դիմելով դատարան՝ Սուսաննա Յազիյանը պահանջել է Սվետլանա Նալբանդյանից բռնագանձել 3.600.000 ՀՀ դրամ՝ որպես վնասի հատուցում և 14.417.400 ՀՀ դրամ՝ որպես վճռով նախատեսված պարիսպը տեղափոխելու և իրավունքի խախտումը վերացնելու համար անհրաժեշտ ծախսերի գումար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) 15.07.2011 թվականի վճռով հայրը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ս. Սահակյան, Կ. Հակոբյան, Տ. Նազարյան) 23.12.2011 թվականի որոշմամբ Սվետլանա Նալբանդյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 15.07.2011 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-

թյան դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 20.05.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 05.02.2016 թվականի որոշմամբ Սվետլանա Նալբանդյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.05.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սվետլանա Նալբանդյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սուսաննա Յազիջանի ներկայացուցիչը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 47-րդ, 48-րդ, 60-րդ, 68-րդ, 73-րդ, 124-րդ, 149<sup>8</sup>-րդ և 149<sup>9</sup>-րդ հոդվածները: Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և հերկյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ դատաքննության ընթացքում ինչպես կողմը, այնպես էլ Դատարանը չեն կարող քննարկել փորձաքննություն նշանակելու վերաբերյալ որևէ հարց, եթե նախնական դատական նիստում դրա համար եղել է բավարար ժամանակ: Մինչդեռ սույն գործով Դատարանը դա հնարավոր է համարել և իր նախաձեռնությամբ՝ առանց պատասխանողի մասնակցության, ապացույցները հետազոտելուց հետո գործի քննության ավարտի մասին հայտարարելու փոխարեն, որոշել է նշանակել փորձաքննություն: Դրա հետևանքով խախտվել են կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները, Սվետլանա Նալբանդյանը Սուսաննա Յազիջանի համեմատ հայտնվել է էականորեն նվազ բարենպաստ վիճակում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ թիվ ԵԿԴ/2803/02/08 քաղաքացիական գործով դատական ծախսերի հարցը վճռով համարվել է լուծված, քանի որ այդ գործի քննության ընթացքում փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնագանձման պահանջ չի ներկայացվել: Ավելին՝ ներկայացված 3.600.000 ՀՀ դրամը սույն գործով դատարանները դիտարկել են ոչ միայն խելամիտ, այլև՝ որպես վնաս, սակայն այն չի կարող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի իմաստով դիտարկվել որպես վնաս:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել վերաքննիչ դատարանի 05.02.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Ստորադաս դատարանները ճիշտ հետևություն են կատարել այն մասին, որ Սուսաննա Յազիջանի իրավունքների խախտումները վերացնելը բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածից: Բացի այդ, նախկինում քննված թիվ ԵԿԴ/2803/02/08 քաղաքացիական գործի քննությունը բազմիցս հետաձգվել է Սվետլանա Նալբանդյանի կողմից դատական նիստերին չներկայանալու և փորձաքննություններին խոչընդոտելու պատճառով, ուստի վերջինս պետք է կրի իր գործողությունների հետ կապված վնասակար հետևանքները:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) թիվ ԵԿԴ/2803/02/08 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 26.06.2009 թվականին կայացված վճռով Սվետլանա Նալբանդյանը պարտավորեցվել է Սուսաննա Յազիջանին հանձնել վերջինիս սեփականության իրավունքով պատկանող, սակայն Սվետլանա Նալբանդյանի կողմից օգտագործվող 309,8քմ մակերեսով հողամասը և քանդել



հողամասերը բաժանող պարիսպն ու այն կառուցել հողամասի իրական սահմանագատման գոտում. նշված վճիռն օրինական ուժի մեջ է մտել 12.11.2009 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 24-28, 31**).

2) Դատարանը, համարելով գործը դատաքննության նախապատրաստված, 18.07.2012 թվականին որոշում է կայացրել 28.08.2012 թվականին ժամը 12:15-ին գործը դատաքննության նշանակելու մասին (**հատոր 4-րդ, գ.թ. 105**).

3) Դատարանը, պատճառաբանելով, որ որոշակի հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ է նշանակել փորձաքննություն, 09.11.2012 թվականին իր նախաձեռնությամբ որոշում է կայացրել դատատեխնիկական և դատահաշվապահական համալիր փորձաքննություն նշանակելու ու գործի վարույթը կասեցնելու մասին (**հատոր 5-րդ, գ. թ. 1-2**).

4) ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետների կողմից 28.10.2014 թվականին տրված թիվ 13-0099 եզրակացության համաձայն՝ պարսպի վերակառուցման ամբողջ արժեքը, ներառյալ՝ վերադիր ծախսերը, շահույթը, ԱԱՀ-ն և այլ չնախատեսված ծախսերը, կազմում է 14.417.430 ՀՀ դրամ (**հատոր 5-րդ, գ.թ. 45-53**).

5) Սուսաննա Յազիչյանի և փաստաբան Սեդա Սաֆարյանի միջև 01.01.2005 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավորվել է Սուսաննա Յազիչյանի համար իրականացնել ներկայացուցչություն և նրա շահերի պաշտպանությունն ըստ Սուսաննա Յազիչյանի հայցի ընդդեմ Սվետլանա Նալբանդյանի՝ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնելու պահանջով հարուցվելիք քաղաքացիական գործի շրջանակներում, որի դիմաց Սուսաննա Յազիչյանը պարտավորվել է, հիմք ընդունելով վերը նշված գործի տևողությունը, յուրաքանչյուր ամսվա համար վճարել 60.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 32-35**):

**4. Վճռաբեկ դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 68-րդ, 73-րդ և 149<sup>8</sup>-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին՝*

*ա) արդյո՞ք դատարանն իրավասու է գործի քննությունը դատաքննության նախապարտապահական փուլով իրականացնելու պայմաններում դատաքննության փուլում որոշում կայացնել իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու մասին,*

*բ) արդյո՞ք դատարանը կարող է նախկինում քննված գործով փաստաբանի ծառայությունների համար կարարված վճարումներն առանձին հայցով բռնագանձելու պահանջը բավարարել՝ առանց պարզելու փաստաբանի մատուցած ծառայությունների համար կարարված կամ կարարվելիք վճարումը հավասարող ապացույցն այդ գործի քննության ընթացքում ներկայացված լինելու փաստը:*

ա) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների ցուցմունքներով, գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա

փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով՝ դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանին առաջադրել հարցեր, որոնք պետք է պարզաբանվեն փորձաքննության ընթացքում, ինչպես նաև նշել այն մասնագիտացված փորձագիտական հաստատությունը կամ այն փորձագետին, որոնց դատարանը կարող է հանձնարարել փորձաքննության կատարումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ փորձաքննություն նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որում սահմանվում են հարցերի ցանկը և բովանդակությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>5</sup>-րդ հոդվածի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով դատարանը ձեռնամուխ է լինում գործը դատաքննության նախապատրաստելուն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում մասնավորապես՝ կողմերի միջնորդությամբ, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքում՝ իր նախաձեռնությամբ, պահանջում է անհրաժեշտ ապացույցներ, լուծում է փորձաքննություն նշանակելու, դատական նիստին փորձագետներ, վկաներ կանչելու, թարգմանիչ ներգրավելու, տեղում իրեղեն և գրավոր ապացույցներն ուսումնասիրելու հարցերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերը նշված դատավարական նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանն իրավունք ունի գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակելու փորձաքննություն՝ Փորձագետի եզրակացությունն ապացույցի տեսակ էլ, իսկ դատարանը գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզում է բացառապես ապացույցների հիման վրա, որոնք դատարանը պարտավոր է գնահատել գործում եղած մյուս բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսինքն՝ փորձաքննության նշանակումն ինքնանպատակ չէ և չի կարող կրել ձևական բնույթ (*տե՛ս*, «Օրինյթ Սթոն» ՄՊԸ-ն ընդդեմ «Վագ քար» ՄՊԸ-ի թիվ ԱՎԴՆ/0074/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի և 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի համադրված վերլուծությունը վկայում է այն մասին, որ օրենսդրական կարգավորման տեսանկյունից քաղաքացիական դատավարությունում փորձաքննություն կարող է նշանակվել ինչպես գործը դատաքննության նախապատրաստելու, այնպես էլ դատաքննության փուլում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներից մեկում անդրադառնալով դատարանի կողմից փորձաքննություն նշանակելու հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ փորձաքննություն նշանակելու հարցը պետք է լուծվի նախնական դատական նիստում (*տե՛ս*, Հրանտր Գրիգորյանն ընդդեմ Ռինա Գրիգորյանի ու Էրեբունու նոտարական տարածքի նոտարական գրասենյակի թիվ ԵԲԴ/0636/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 16.10.2009 թվականի որոշումը):

ՀՀ վճարել դատարանը, անդրադառնալով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի էությանը, իր որոշումներից մեկում նշել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը: Գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ դատարանի գործողություններն ուղղված են ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ձիշտ իրավանորմերի կիրառմանը: Հետևաբար գործը դատաքննության նախապատրաստելու դատավարական ինստիտուտի ամրագրումն օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ, և դատարանն այդ փուլով դատավարությունը պետք է անցկացնի իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար (*տե՛ս, Երևանի քաղաքապետարանի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն ընդդեմ Դավիթ Սարգիսյանի ու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունի անձնագրային բաժնի թիվ ԵՆԴ/1637/02/09 գործով ՀՀ վճարել դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Վճարել դատարանը, ելնելով փորձաքննության ինստիտուտի, ինչպես նաև գործը դատաքննության նախապատրաստելու փուլի էության, նպատակի և խնդիրների վերաբերյալ վերոգրյալ իրավական դիրքորոշումներից, գտնում է, որ փորձաքննություն նշանակելու հարցը, որպես կանոն, պետք է լուծվի գործը դատաքննության նախապատրաստելու փուլում, քանի որ փորձաքննություն նշանակելը գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու դատավարական միջոց է: Հետևաբար փորձաքննությունը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում նշանակելու կառուցակարգը համահունչ է քաղաքացիական դատավարության նշված փուլին բնորոշ նպատակին՝ քաղաքացիական գործի արդյունավետ քննության ապահովմանը և այդ փուլի առջև դրված խնդիրներին, հատկապես՝ ապացույցների բավարար համակցության ձևավորման (ապացույցների կենտրոնացման) ապահովմանը:

Այսպիսով, ընդհանուր կանոնի համաձայն՝ փորձաքննությունը պետք է նշանակվի մինչև գործը դատաքննության նշանակելու մասին որոշում կայացնելը: Նման մոտեցումը հետապնդում է նաև գործով դատաքննությունը մեկ դատական նիստով ավարտելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու, գործի քննության հետաձգումը կամ վարույթի կասեցումը հնարավորինս բացառելու, գործը դատաքննության նախապատրաստելիս կողմերի դատավարական պարտականությունների պատշաճ կատարմանը նպաստելու և դատավարական իրավունքների չարաշահումը բացառելու նպատակ: Այլ կերպ ասած, որպես ընդհանուր կանոն, քաղաքացիական դատավարությունում փորձաքննություն նշանակելու նախաձեռնության իրավունք ունեցող տուբյեկտները՝ կողմերը և դատարանը, պետք է իրենց այդ նախաձեռնությունը ցուցաբերեն ոչ թե դատաքննության, այլ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

Մինևույն ժամանակ Վճարել դատարանը փաստում է, որ փորձաքննություն նշանակելու հարցը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում լուծելու ընդհանուր կանոնն ունի որոշ բացառություններ: Այսինքն՝ որոշ դեպքերում օբյեկտիվ անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանը կարող է շեղվել ընդհանուր կանոնից և փորձաքննություն նշանակել դատաքննության ընթացքում: Ասվածը վերաբերում է այն դեպքերին, երբ փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունն օբյեկտիվորեն ծագում է դատաքննության ընթացքում, մասնավորապես՝ ապացույցները հետազոտելու ժամանակ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սուսաննա Յագիչյանը պահանջել է Սվետլանա Նալբանդյանից բռնագանձել նաև 14.417.400 ՀՀ դրամ՝ որպես օրինական ուժի մեջ մտած վճռով նախատեսված պարիսպը տեղափոխելու և իրավունքի խախտումը վերացնելու համար գումար:

Գործի քննությունն իրականացվել է դատաքննության նախապատրաստական փուլով, և Դատարանը, գործը համարելով դատաքննությանը նախապատրաստված, որոշում է կայացրել այն դատաքննության նշանակելու մասին: Այնուհետև Դատարանն իր նախաձեռնությամբ որոշում է կայացրել վերը նշված աշխատանքների կատարման հա-

մար հենց այդքան գումար անհրաժեշտ լինելու փաստը հաստատված համարելու կամ հերքելու նպատակով դատատեխնիկական և դատահաշվապահական համալիր փորձաքննությունն նշանակելու մասին:

Դատարանը բավարարել է Սվետլանա Նալբանդյանից 14.417.400 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին Մուսաննա Յազիչյանի հայցը՝ վճռի հիմքում դնելով նաև ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետների կողմից 28.10.2014 թվականին տրված թիվ 13-0099 եզրակացությունը:

Վերաքննիչ դատարանը մերժել է Սվետլանա Նալբանդյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է օրինական ուժի մեջ՝ պատճառաբանելով նաև, որ Դատարանի կողմից դատաքննության փուլում փորձաքննություն նշանակելու մասին որոշման կայացմամբ որևէ կերպ չեն խախտվել օրենքի առջև կողմերի հավասարության և դատավարության մրցակցության սկզբունքները:

Համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի վերոգրյալ եզրահանգման հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Դատարանը Սվետլանա Նալբանդյանից 14.417.400 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին Մուսաննա Յազիչյանի հայցը բավարարելու հիմքում դրել է նաև ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետների կողմից 28.10.2014 թվականին տրված թիվ 13-0099 եզրակացությունը, որն ստացվել է դատատեխնիկական և դատահաշվապահական համալիր փորձաքննություն նշանակելու մասին որոշման հիման վրա: Փորձաքննություն նշանակելու մասին այդ որոշումը Դատարանը կայացրել է իր նախաձեռնությամբ և ոչ թե գործը դատաքննության նախապատրաստելու, այլ դատաքննության փուլում: Մինչդեռ տվյալ դեպքում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը չէր ծագել բացառապես դատաքննության ընթացքում: Մասնավորապես՝ թե՛ Դատարանը, թե՛ Վերաքննիչ դատարանը չեն պատճառաբանել, թե հատկապես ինչ օբյեկտիվ հանգամանքներ են ի հայտ եկել գործի դատաքննության ընթացքում, որոնց ուժով անհրաժեշտություն է առաջացել նշանակելու դատատեխնիկական և դատահաշվապահական համալիր փորձաքննություն, և որոնք չէին կարող հայտնի լինել գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ քաղաքացիական դատավարությունում, որպես կանոն, փորձաքննություն պետք է նշանակվի գործը դատաքննության նախապատրաստելու փուլում, իսկ դատաքննության փուլում փորձաքննություն կարող է նշանակվել այն դեպքում, երբ դրա անհրաժեշտությունն օբյեկտիվորեն ծագել է դատաքննության ընթացքում:

Ավելին՝ սույն գործով փորձաքննություն նշանակելուս Դատարանը խախտել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, քանի որ Դատարանը փորձաքննություն նշանակելու հարցը չի քննարկել պատասխանող կողմի հետ, վերջինիս հնարավորություն չի ընձեռել առաջադրելու փորձաքննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցեր և նշելու փորձաքննություն կատարող սուբյեկտին:

Այսպիսով, սույն գործով Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը, իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելով ոչ թե գործը դատաքննության նախապատրաստելու, այլ դատաքննության փուլում, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետով և 60-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ փորձաքննություն նշանակելու դատավարական կարգը: Հետևաբար դատավարական կարգի նշված խախտմամբ ձեռք բերված ապացույցը՝ ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետների կողմից 28.10.2014 թվականին տրված թիվ 13-0099 եզրակացությունը, չէր կարող հիմք հանդիսանալ հայցը՝ 14.417.400 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, բավարարելու համար և դրվել Դատարանի վճռի հիմքում:

Ելնելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծություններից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մուսաննա Յազիչյանի ենթադրյալ իրավունքները վերա-

կանգնելու համար անհրաժեշտ գումարի չափը պարզելու ուղղությամբ թույլատրելի և վերաբերելի ապացույցներ ձեռք բերելու ու դրանց հիման վրա Սվետլանա Նալբանդյանից 14.417.400 ՀՀ դրամ բռնագանձելու մասին պահանջը լրիվ կամ մասնակիորեն բավարարելու հարցը լուծելու համար սույն գործը՝ նշված հայցապահանջի մասով, անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

բ) Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նախկինում քննված քաղաքացիական գործից բխող փաստաբանի վարձատրության հետ կապված 3.600.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանի ծառայության դիմաց վնասի հատուցում բռնագանձելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկին, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասում լուծվում է գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցը (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի եզրահանգումներ՝ գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերը բաշխելու վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ նույն օրենքով կամ պայմանագրով: Վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառով անձի կողմից, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը (*տե՛ս, Նապալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԳ3/0016/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով փաստաբանի խելամիտ վարձատրությունը դատական ծախսերի մեջ ընդգրկելու հարցին, արձանագրել է, որ փաստաբանի խելամիտ վարձատրությունը նախևառաջ պետք

է դիտել որպես դատական ծախս, և հետևաբար այն պետք է բաշխվի կողմերի միջև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված կարգով: Որպես դատական ծախս թե՛ հայցվորը և թե՛ պատասխանողը դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույց: Ընդ որում, անկախ վճարված գումարի բռնագանձման մասին պահանջի առկայությունից, վճարումը հավաստող ապացույց ներկայացնելը բավարար է փաստաբանի վարձատրությանը՝ որպես դատական ծախս, վճռով անդրադառնալու համար: Եթե դատարանը, համապատասխան ապացույցի առկայության դեպքում վճռով չի անդրադառնում փաստաբանի խելամիտ վարձատրության՝ կողմերի միջև բաշխման հարցին, ապա գործին մասնակցող անձինք գրկված չեն կատարված ծախսերի բաշխման հարցը լուծելու համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածով սահմանված կարգով դիմել վճիռը կայացրած դատարան՝ լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով: ՀՀ վճռաբեկ դատարանը, հնարավոր համարելով նաև այն իրավիճակը, երբ կողմերը չներկայացնեն փաստաբանի վարձատրության վերաբերյալ որևէ ապացույց (և դրա բռնագանձման մասին պահանջ), արձանագրել է նաև, որ նման պայմաններում նրանք գրկված չեն փաստաբանի ծառայությունների համար կատարված վճարումներն առանձին հայցով բռնագանձելու իրավունքից, որպիսի եզրահանգման համար հիմք է ընդունել այն, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով չի արգելվում դատական ծախսերը այլ՝ առանձին վարույթի շրջանակներում բռնագանձելը (*տե՛ս, անհասարկատրվաբեր Նարինե Ռոպունյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/1401/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական ծախսերի բռնագանձման հիմքը նույնական չէ վնասի պատճառման հետևանքով առաջացած պարտավորությունների ընդհանուր հիմքերի հետ, քանի որ դատական ծախսերի կազմի և բաշխման հետ կապված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ դատական ծախսերն այն ծախսերն են, որոնք կողմը կատարում է դատական կարգով իր իրավունքները պաշտպանելու համար, իսկ դատական ծախսերի բաշխման ընդհանուր սկզբունքն այն է, որ անձը, ում օգտին կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտը, պետք է դատական ծախսերի հատուցում ստանա մյուս կողմի հաշվին: Մինչդեռ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ վարքագծի միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Այս երկու ինստիտուտների տարբերությունը դրսևորվում է նաև վրա հասնող հետևանքների առումով՝ դատական ծախսերը հատուցվում են խելամտության սահմաններում, այսինքն՝ դրանց իրական ծավալը կարող է ավելի մեծ լինել, քան փաստացի հատուցման չափը, սակայն վնասի ինստիտուտի առնչությամբ այս սկզբունքը կիրառելի չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ վնասները ենթակա են հատուցման ամբողջ ծավալով: Բացի այդ, դատական ծախսերը վնաս չեն կարող դիտարկվել, քանի որ դատավարության սուբյեկտները, իրացնելով իրենց դատական պաշտպանության իրավունքը, չեն դրսևորում հակաիրավական, ոչ օրինաչափ վարքագիծ (*տե՛ս, Կուրայքի մարզի Բյուրեղավան քաղաքային համայնքն ընդդեմ Գյուլնարա Սարգսյանի թիվ ԿԴ2/0189/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

Միակ բացառությունն օրենսդիրը կատարել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով, երբ արդար դատաքննության իրավունքից անբարեխիղճ օգտվելը կարող է վնասներ հատուցելու պարտականություն առաջացնել: Նման դեպքերում մեղքի առկայության և վնասների հատուցման հիմք է դատարանի կողմից հայցն ակնհայտ անհիմն ճանաչելը: Այս դեպքում միայն պատասխանողն իրավունք ունի վնասների հատուցման պահանջով դիմելու դատարան: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի հիմքով դատարանի կողմից ակնհայտ անհիմն գնահատված հայց ներկայացրած անձի դեմ վնասների

հատուցման պահանջով դատարան դիմելու դեպքից զատ որևէ այլ դեպքում պատասխանողի մոտ հայցվորի նկատմամբ դատարան դիմելու հետևանքով իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջի իրավունք չի առաջանում (*տե՞ս, Շուշանիկ Գրիգորյանն ընդդեմ Արարատ Մովսիսյանի թիվ 3-2431(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի որոշումը*):

Սույն գործով Դատարանը, պատճառաբանելով, որ «Սուսաննա Յազիչյանի և փաստաբան Սեդա Սաֆարյանի միջև 01.01.2005 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն՝ ծառայությունը պատվիրատուի կողմից վճարվում է ըստ գործի քննության տևողության՝ յուրաքանչյուր ամսվա համար 60.000 ՀՀ դրամ», «Սուսաննա Յազիչյանը շուրջ 5 տարիների ընթացքում ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն՝ կրել է 3.600.000 ՀՀ դրամ նյութական վնաս՝ փաստաբանական ծառայության վճարների չափով», «փաստաբանի կողմից ի շահ հայցվորի կատարվել են 01.01.2015 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված դատավարական գործողությունները, ինչպես նաև հաշվի առնելով գործի քննության երկարատևությունը», 3.600.000 ՀՀ դրամը համարել է ողջամիտ և այն բռնագանձել է որպես վնասի փոխհատուցում:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով նաև, որ «թիվ ԵԿԴ/2803/02/08 քաղաքացիական գործով կողմերի միջև վեճով փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը որպես դատական ծախս բռնագանձելու հարցը քննարկման առարկա չի դարձվել, դատարանը լուծել է միայն պետական տուրքի հարցը», գտել է, որ տվյալ դեպքում Սուսաննա Յազիչյանի կողմից 3.600.000 ՀՀ դրամի չափով ներկայացված փաստաբանի վարձատրության գումարը որպես վնաս բռնագանձելու մասին պահանջը հիմնավոր է:

Մինչդեռ անդրադառնալով ստորադաս դատարանների վերոնշյալ դիրքորոշումներին հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Սուսաննա Յազիչյանը պահանջել է Սվետլանա Նալբանդյանից բռնագանձել 3.600.000 ՀՀ դրամ՝ որպես թիվ ԵԿԴ/2803/02/08 քաղաքացիական գործով կատարված դատական ծախսերի, մասնավորապես՝ փաստաբանի վարձատրության գումարի վճարման արդյունքում իրեն պատճառված վնասների հատուցում: Մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումներով ձևավորված իրավական դիրքորոշումների համաձայն՝ դատական ծախսերի բռնագանձման հիմքը նույնական չէ վնասի պատճառման հետևանքով առաջացած պարտավորությունների ընդհանուր հիմքերի հետ, և որևէ քաղաքացիական գործով կողմի կրած դատական ծախսերը չեն կարող մեկ այլ գործի շրջանակներում բռնագանձվել որպես այդ կողմին պատճառված վնաս (բացառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով սահմանված դեպքի): Փաստորեն, տվյալ դեպքում թիվ ԵԿԴ/2803/02/08 քաղաքացիական գործով Սուսաննա Յազիչյանի կրած ենթադրյալ դատական ծախսերը, մասնավորապես՝ փաստաբանին ենթադրաբար վճարված վարձատրության գումարները, սույն գործի շրջանակներում չեն կարող դիտարկվել որպես Սուսաննա Յազիչյանին պատճառված վնաս, քանի որ դատական ծախսերի և վնասի ինստիտուտներն ունեն էական տարբերություններ և որևէ ձևով չեն նույնանում, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Բացի այդ, ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ սույն գործում բացակայում է փաստաբանի ծառայությունների համար կատարված վճարումներն առանձին հայցով բռնագանձելու պահանջ ներկայացնելու իրավունքից օգտվելու համար անհրաժեշտ այն պայմանը, որ Սուսաննա Յազիչյանը նախորդ գործի քննության ընթացքում որպես իր կողմից կատարված դատական ծախս չի ներկայացրել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույցը: Այդ ապացույցը ներկայացված լինելու դեպքում դատարանը պարտավոր էր վճռով անդրադառնալ փաստաբանի խելամիտ վարձատրության՝ կողմերի միջև բաշխման հարցին, որը չանելու դեպքում Սուսաննա Յազիչյանը գրկված չէր կատարված ծախսերի բաշխման հարցը լուծելու համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվա-

ծով սահմանված կարգով դիմել վճիռը կայացրած դատարան՝ լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով կամ վերաքննության կարգով բողոքարկելու տվյալ դատական ակտը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

### **5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի, այդ թվում նաև՝ վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.07.2015 թվականի որոշմամբ հետաձգված, ինչպես նաև վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 29.06.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.02.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի, այդ թվում՝ վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.07.2015 թվականի որոշմամբ հետաձգված, ինչպես նաև վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 29.06.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազրույթունս  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազրույթուններ*



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/0985/02/14**  
 դատարանի որոշում **2017թ.**  
 Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0985/02/14  
 Նախագահող դատավոր՝ Մ. Հարթեյան  
 Դատավորներ՝ Ն. Բարսեղյան  
 Հ. Ենոքյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
 Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
 Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
 Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
 Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
 Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
 Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին  
 դռնբաց դատական նիստում, քննելով Արա Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ  
 վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.04.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայ-  
 ցի Արա Բաղդասարյանի ընդդեմ Նարինե Հակոբյանի, Հռիփսիմե, Տաթևիկ և Արմենու-  
 հի Թամրազյանների, երրորդ անձինք՝ «ՎԻ ԱՐ ԱԳՐՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն),  
 «Ֆաստ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի՝ հասանելիք ժառանգական զանգվածից փո-  
 յառության և տոկոսների գումարի բռնագանձման պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### **1.Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Արա Բաղդասարյանը պահանջել է Նարինե Հակոբյանին, Արմե-  
 նուհի, Հռիփսիմե և Տաթևիկ Թամրազյաններին հասանելիք ժառանգության զանգվածից  
 բռնագանձել 36.000.000 ՀՀ դրամ փոխառության գումար և ՀՀ քաղաքացիական օրենսգր-  
 քի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հաշվարկվելիք տոկոսները՝ հաշվարկը  
 կատարելով 26.04.2011 թվականից մինչև պարտավորության կատարման օրը, ինչպես  
 նաև որպես անհիմն խնայված գույք՝ Ընկերությունից բռնագանձել ամսական 1.000.000 ՀՀ  
 դրամ՝ հաշվարկը կատարելով 07.02.2012 թվականից, և Ընկերությունից բռնագանձված  
 գումարն ընդգրկել Սպարտակ Թամրազյանի ժառանգության զանգվածի մեջ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավա-  
 սության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 27.11.2015  
 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանը վճռել է Նարինե  
 Հակոբյանին, Հռիփսիմե, Տաթևիկ և Արմենուհի Թամրազյաններին հասանելիք ժառան-

գույթյան զանգվածից հոգուտ Արա Բաղդասարյանի բռնագանձել 36.000.000 ՀՀ դրամ փոխառության գումար, 36.000.000 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները՝ 26.04.2011 թվականից մինչև պարտավորության կատարման օրը, Սպարտակ Թամրազյանի և Ընկերության միջև 07.02.2012 թվականին կնքված վարձակալության պայմանագրով նախատեսված վարձավճարներն ընդգրկել Սպարտակ Թամրազյանի ժառանգական զանգվածի մեջ: Հայցը՝ 07.02.2012 թվականից ամսական 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես անհիմն խնայված գույք Ընկերությունից բռնագանձելու պահանջի մատով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 14.04.2016 թվականի որոշմամբ Տաթևիկ Թամրազյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 27.11.2015 թվականի վճիռը՝ հայցը բավարարելու, պետական տուրքի բաշխման, հայցի ապահովման միջոցները պահպանելու մասերով, բեկանվել է և գործն այդ մասերով ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արա Բաղդասարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ, 6-րդ և 11-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 119-րդ և 220-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկով.*

Սույն գործով վերաքննիչ բողոք է ներկայացրել միայն Տաթևիկ Թամրազյանը, իսկ Նարինե Հակոբյանը, Արմենուհի և Հռիփսիմե Թամրազյանները, ինչպես նաև Ընկերությունը վերաքննիչ բողոք չեն ներկայացրել, մինչդեռ վերաքննիչ դատարանը, Դատարանի 27.11.2015 թվականի վճիռը բեկանելով նաև նրանց մատով, հաշվի չի առել այն հանգամանքը, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքում ներկայացված հիմքերի և հիմնավորումների սահմաններում և բողոք բերած անձին վերաբերող մատով, և չի կարող քննության առարկա դարձնել և որոշում կայացնել վճռի այն մասի վերաբերյալ, որը չի բողոքարկվել այն անձանց կողմից, որոնց վերաբերում է վճռի այդ մասը: Հետևաբար Նարինե Հակոբյանի, Արմենուհի և Հռիփսիմե Թամրազյանների, Ընկերության կողմից դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք չներկայացնելու պայմաններում վերաքննիչ դատարանն իրավասու չէր վերանայել վճռի՝ նրանց վերաբերող մասը:

2) *Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետը, որը չպետք է կիրառել, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետը, որը պետք է կիրառել, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 53-րդ և 220-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ 22.04.2015 թվականի թիվ 13143315 քրեական գործը հարուցելու մասին, 29.07.2015 թվականի թիվ 13143315 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումներով հաստատվել է, որ Նարինե Հակոբյանը, Արմենուհի, Հռիփսիմե և Տաթևիկ Թամրազյանները հանդիսանում են Սպարտակ Թամրազյանի ժառանգները: Մասնավորապես՝ Նարինե Հակոբյանը հաղորդում է տվել այն մասին, որ Արա Բաղդասարյանն ամուսնու՝ Սպարտակ Թամրազյանի վստահությունը չարաշահելով և խաբեությանը վերջինիս հետ կնքել է 36.000.000 ՀՀ դրամի կեղծ փոխառության պայմանագիր: Բացի այդ, Նարինե Հակոբյանը ցուցմունք է տվել, որ Արա Բաղդասարյանն իրենից և Սպարտակ

Թամրազյանի երեխաներից փորձել է հափշտակել 36.000.000 ՀՀ դրամ և այդ կապակցությամբ հայցադիմում է ներկայացրել դատարան:

Պատասխանողները ոչ միայն չեն առարկել ժառանգությունն ընդունելու փաստի դեմ, այլև իրենք են ապացուցել, որ ընդունել են ժառանգությունը, քանի որ Դատարանին հայտնել են, որ կանոնավոր կերպով ստանում են ժառանգության զանգվածի մեջ մտնող Երևանի Արցախի փողոցի թիվ 143/1 հասցեում գտնվող գույքի վարձավճարները՝ սկսած ժառանգատուի մահվան ամսից: Պատասխանողները Դատարան են ներկայացրել 07.02.2012 թվականին Սպարտակ Թամրազյանի և Ընկերության միջև կնքված վարձակալության պայմանագրի պատճենը, Ընկերության կանոնադրության պատճենը, որոնց համաձայն՝ Ընկերության գտնվելու և իրավաբանական հասցե է համարվում ժառանգատուին պատկանող անշարժ գույքը՝ Երևանի Արցախի փողոցի թիվ 143/1 հասցեն: Այսինքն՝ գործին մասնակցող անձանց ցուցմունքներով և ներկայացված փաստաթղթերով հաստատվել է, որ ժառանգները ժառանգությունն ընդունելու ժամանակահատվածի սկզբից՝ ժառանգատուի մահվան օրվանից սկսած փաստացի տիրապետում են ժառանգական գույքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.04.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 27.11.2015 թվականի վճռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Արա Բաղդասարյանի (Փոխատու) և Սպարտակ Թամրազյանի (Փոխառու) միջև 26.01.2011 թվականին կնքված փոխառության պայմանագրի համաձայն՝ Փոխատուն Փոխառուին փոխառության կարգով առանց տոկոսների տվել է 36.000.000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կնքման օրվանից մինչև 26.04.2011 թվականը (**հատոր 1-ին, գ.թ. 13**):

2) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 19.05.2014 թվականի տեղեկանքի համաձայն՝ Երևանի Արցախի փողոցի թիվ 143/1 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով գրանցված է Սպարտակ Թամրազյանի անվամբ (**հատոր 1-ին, գ.թ. 84**):

3) Սպարտակ Թամրազյանի (Վարձատու) և Ընկերության (Վարձակալ) միջև 07.02.2012 թվականին հասարակ գրավոր ձևով կնքված վարձակալության պայմանագրի համաձայն՝ Վարձատուն պարտավորվել է ժամանակավոր օգտագործման համար Վարձակալին հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևանի Արցախի փողոցի թիվ 143/1 հասցեում գտնվող շինությունը: 23.11.2011 թվականի Ընկերության կանոնադրության համաձայն՝ Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ Երևանի Արցախի փողոցի թիվ 143/1 (**հատոր 2-րդ, գ.թ. 30-33, 35-36**):

4) Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության Երևանի հատուկ սպասարկման տարածքային բաժնի կողմից 14.08.2014 թվականին տրված մահվան ակտի գրանցման վերաբերյալ թիվ 01 տեղեկանքի՝ Սպարտակ Թամրազյանը մահացել է 01.04.2013 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 99**):

5) Էրեբունու նոտարական տարածքի նոտարին հասցեագրված 28.09.2013 թվականի դիմումի համաձայն՝ Արա Բաղդասարյանը հայտնել է, որ Սպարտակ Թամրազյանը 01.04.2013 թվականին մահացել է, ուստի խնդրել է իր՝ որպես պարտատիրոջ պահանջները գրանցել ժառանգական գործերի հաշվառման գրքում (**հատոր 1-ին, գ.թ. 83**):

6) Տաթևիկ Թամրազյանի ներկայացուցիչների կողմից Դատարան ներկայացված Տաթևիկ Թամրազյանի անձնագրի պատճենի համաձայն՝ վերջինիս հայրանունը Սպարտակ է (**հատոր 1-ին, գ.թ. 58**):

7) 24.10.2014 թվականին Դատարանին հասցեագրված դիմումի համաձայն՝ Տաթևիկ Թամրազյանի ներկայացուցիչները նշել են, որ 07.02.2012 թվականից Երևանի Արցախի փողոցի թիվ 143/1 հասցեում Ընկերությունն իրականացնում է խոզաբուծություն (**հատոր 2-րդ, գ.թ. 28-29**):

8) Տարբերի Թամրազյանը 29.12.2015 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք, որտեղ նշել է, որ Ընկերությունը կանոնավոր կերպով կատարում է և նախկինում էլ կատարել է վարձակալության վճարումները, ինչպես նաև որ Տարբերի Թամրազյանը Սպարտակ Թամրազյանի դուստրն է (**հատոր 4-րդ, գ.թ. 4-13**):

9) Սույն գործով պատասխանողներ Նարինե Հակոբյանը, Հռիփսիմե և Արմենուի Թամրազյանները Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք չեն ներկայացրել:

#### **4.Վճռաբեկ դատարանի պայմառարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետի միատեսակ կիրառության համար.

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետի սխալ մեկնաբանության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

1) *արդյո՞ք ժառանգները կրում են ժառանգության հետ կապված ծախսերը հայրուցելու պարտականություն այն դեպքում, երբ նրանք ժառանգական գույքի փաստացի տիրապետմամբ ընդունել են ժառանգությունը, սակայն ժառանգության իրավունքի վկայագիր չեն սրացել.*

2) *արդյո՞ք գործին մասնակցող անձը կրում է այն փաստերն ապացուցելու պարտականությունը, որոնք գործին մասնակցող մյուս անձինք ընդունում են դատարան ներկայացված դատավարական փաստաթղթերով, այլ ապացույցներով և իրենց դիրքորոշմամբ.*

3) *արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավասու է բեկանել վճիռն այն անձանց մասով, որոնք վերաքննիչ բողոք չեն ներկայացրել:*

1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության գանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված

չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ուսնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ ներառյալ այն դեպքում, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է վկայակոչված հոդվածների վերլուծությանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: **Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (յրեն, Արմինե Հակոբյանը և Սամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական փարածքի նոտար Արվարդ Մելքոնյանի և մյուսների թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը):**

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե գործի քննության ընթացքում կողմերից մեկը բարձրացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ձևերից մեկով ժառանգությունն իր կողմից ընդունելու հարցը, **ապա նմանատիպ գործեր քննելիս միշտ կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը (յրեն, օրինակ, Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Կարինե Սերոբյանի և մյուսների թիվ 3-183(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը):** Ուստի դատարանում գործի քննության ժամանակ պետք է հիմնավորվի փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքն ընդունելու փաստը: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ժառանգական գույքի փաստացի տիրապետելու հանգամանքը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով, ընդ որում, գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը կամ այլ ապացույցներ, որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգատուի մահից հետո ժառանգը փաստացի տիրապետել և կառավարել է ժառանգական գույքը (յրեն, Միշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի և մյուսների թիվ 3-938(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը):

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), **ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենաառաքրբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը (յրեն, Կինա Սարգսյանն ընդդեմ Հարություն**

*Սարգսյանի և մյուսների թիվ 3-1224(ՎԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության հետ կապված ծախսերը հատուցվում են հետևյալ հերթականությամբ՝

առաջին հերթին հատուցվում են մինչև ժառանգատուի մահը նրա հիվանդության հետևանքով առաջացած և ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը.

երկրորդ հերթին հատուցվում են ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքը պահպանելու և կառավարելու, ինչպես նաև կտակը կատարելու հետ կապված ծախսերը.

երրորդ հերթին բավարարվում են ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները.

չորրորդ հերթին բավարարվում են պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների պահանջները.

հինգերորդ հերթին հատուցվում են կտակային հանձնարարությունը կատարելու հետ կապված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պահանջները, մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը, կարող են ներկայացվել ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, իսկ նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգները, ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո, իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են նույն օրենսգրքի 1242-րդ հոդվածում նշված ծախսերը: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ իրենց անցած ժառանգության արժեքի սահմաններում ժառանգները կրում են համապարտ պատասխանատվություն:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ժառանգության հետ կապված ծախսերի, մասնավորապես՝ ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները բավարարելու ժառանգների պարտականությանը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետի այն կարգավորման լույսի ներքո, համաձայն որի՝ ժառանգները հատուցում են այդ ծախսերը ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տվյալ դեպքում «ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո» արտահայտությամբ օրենսդիրը ցանկացել է ընդգծել, որ քննարկվող ծախսերը հատուցվում են ժառանգության ընդունման համար օրենքով սահմանված վեցամսյա ժամկետն անցնելուց և ժառանգների կազմը հայտնի դառնալուց հետո, և չի կարող պահանջ ներկայացվել դրանք նշված ժամկետից ավելի վաղ հատուցելու մասին, քանի որ մինչ այդ պարզված չի լինում ժառանգությունն ընդունած ժառանգների կազմը: Բանն այն է, որ թե ժառանգությունն ընդունելու, թե դրանից հրաժարվելու համար օրենսդիրը սահմանել է վեցամսյա ժամկետ, և միայն այդ ժամկետն անցնելուց հետո է պարզ դառնում, թե ժառանգներից ով կամ ովքեր են ընդունել ժառանգությունը, ով կամ ովքեր են հրաժարվել դրանից և ում պետք է տրվի ժառանգության իրավունքի վկայագիր: Բացառությամբ այն պարտավորությունների, որոնք չեն կարող կատարվել առանց ժառանգատուի անձնական մասնակցության, ժառանգատուի մյուս բոլոր պարտավորությունները նրա մահվամբ չեն դադարում, և դրանք, օրենքով սահմանված ժամկետում և կարգով պահանջ ներկայացված լինելու դեպքում, պարտավոր են կատարել ժառանգությունն ընդունած ժառանգները՝ իրենց անցած գույքի արժեքի սահմաններում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի այլ մեկնաբանությունը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, որ իրականում ընդունելով ժառանգությունը՝ ժառանգները կարող են խուսափել ժառանգատուի պարտքերով պարտատերերի առջև պատասխանատվությունից՝ պարզապես չստանալով ժառանգության իրավունքի վկայագիր, այսինքն՝ չձևակերպելով ժառանգության ընդունումը: Նման մոտեցումն ամբողջությամբ կհակասի ժառանգված գույքը փաստացի տիրապետմամբ կամ

կառավարմամբ ընդունելու հնարավորության վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված իրավակարգավորմանը, կատեգորիա ժառանգության ընդունումն անհամաչափ ձևականություններով պայմանավորելու իրական վտանգ, ինչն իր հերթին կլիախտի ժառանգության ընդունման իրավահարաբերությունների կայունությունը: Մյուս կողմից նման մեկնաբանությունը կհիմաստագրվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի այն ընդհանուր իրավակարգավորումը, համաձայն որի՝ ժառանգներն իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են նույն օրենսգրքի 1242-րդ հոդվածում նշված ծախսերը, և այդ հարցում նրանք կրում են համապարտ պատասխանատվություն: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգությունն ընդունած ժառանգներն օրենքով սահմանված կարգով և չափով պատասխանատու են ժառանգի՝ իրավահաջորդություն թույլ տվող պարտավորությունների համար՝ անկախ այն հանգամանքից, թե ժառանգության ընդունումը ժառանգության իրավունքի վկայագրով ձևակերպվել է, թե՛ ոչ: Այս դիրքորոշումը հիմնավորվում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ կետի իրավակարգավորմամբ, համաձայն որի՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

2) Սույն գործով Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով ապացուցելուց ազատվելու հիմքերի վերաբերյալ նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները, հարկ է համարում անդրադառնալ անվիճելի փաստերի ապացուցման անհրաժեշտությանը՝ այդպիսով նպաստելով այդ հարցով իրավունքի զարգացմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանրահայտ հանգամանքներն ապացուցման կարիք չունեն: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք:

Քաղաքացիական գործի քննության արդյունավետությունը մեծապես կախված է այն բանից, թե որքանով է պարզ և հստակ ապացուցման գործընթացը: Այդ գործընթացը հնարավորինս պարզեցնելու, գործին մասնակցող անձանց և դատարանին անհարկի չծանրաբեռնելու նպատակով օրենսդիրը սահմանել է դեպքեր, երբ գործի քննության ընթացքում որոշակի փաստեր որոշակի հանգամանքներում անհրաժեշտ չէ ապացուցել: Դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև օրենսդիր կողմից իբրև ապացուցելուց ազատվելու հիմքեր սահմանված են հանրահայտ, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով և դատավճռով հաստատված փաստերը, սակայն դատարաններն իրավացիորեն ապացուցման կարիք չունեցող փաստերի շարքին են դասում նաև այսպես կոչված «անվիճելի փաստերը»: Դրանք գործին մասնակցող անձանց կողմից վկայակոչված, գործի լուծման համար նշանակություն ունեցող այն փաստերն են, որոնք գործին մասնակցող մյուս անձինք ընդունում են դատարան ներկայացված դատավարական փաստաթղթերով, դատական նիստի ընթացքում արված հայտարարությամբ, դիրքորոշում հայտնելու կամ ցուցմունք տալու ընթացքում: Գործին մասնակցող անձանց կողմից գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ընդունումը կրճատում է ապացուցման ենթակա փաստերի շրջանակը և դատարանին հնարավորություն է տալիս կենտրոնանալու վիճելի փաստերի ապացուցման գործընթացի վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված են որոշակի կանոններ, որոնց պահպանմամբ միայն դատարանները կարող են անվիճելի փաստերը համարել հաստատված և գործին մասնակցող անձանց ազատել ապացուցման պարտականությունից: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձի կողմից այն փաստն

ընդունելը, որի միջոցով մյուս անձը հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները, պարտադիր չէ դատարանի համար: Դատարանը կարող է ընդունված փաստը համարել հաստատված, եթե կասկածներ չկան, որ դա համապատասխանում է գործի հանգամանքներին, և կողմն այն չի ընդունել խաբեության, բռնության, սպառնալիքի, մոլորության ազդեցության տակ, մեկ կողմի ներկայացուցչի հետ մյուս կողմի չարամիտ համաձայնության հետևանքով կամ ձշմարտությունը թաքցնելու նպատակով: Վճռաբեկ դատարանի կարծիքով գործին մասնակցող անձինք չեն կարող ազատվել անվիճելի փաստերն ապացուցելու պարտականությունից նաև այն դեպքերում, երբ այդ փաստերը կարող են հաստատվել միայն ապացույցի որոշակի տեսակներով և նման ապացույցներ գործում առկա չեն, ինչպես նաև այն դեպքերում, երբ այդ փաստերի հաստատումը, բացի անվիճելի փաստերը վկայակոչած և դրանք ընդունած գործին մասնակցող անձանցից, կարող է ազդել նաև այլ անձանց իրավունքների և պարտականությունների վրա: Հարկ է նշել, որ բոլոր դեպքերում գործի փաստերն անվիճելիների շարքին դասելու, դրանք ապացուցման առարկայից հանելու և ի վերջո՝ հաստատված համարելու և գնահատելու գործառնությունները բացառապես վերապահված են դատարանին, որը դրանք պետք է իրականացնի սահմանված դատավարական իրավակարգավորումներին համապատասխան: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոշարադրյալ դատավարական կանոնների պահպանմամբ դատարանը գործին մասնակցող անձանց կարող է ազատել գործին մասնակցող մյուս անձանց կողմից չվիճարկվող փաստերն ապացուցելու պարտականությունից և այդ փաստերը համարել ապացուցված:

3) ՀՀ քաղաքացիական դատավարությունում գործում է տնօրինչականության սկզբունքը, համաձայն որի՝ գործին մասնակցող անձն օրենքով սահմանված կարգով սեփական հայեցողությամբ է տնօրինում իր նյութական և դատավարական իրավունքները և որոշում իր իրավունքների պաշտպանության միջոցներն ու եղանակները: Դրան համապատասխան էլ դատարաններն իրականացնում են արդարադատություն՝ հարուցում են քաղաքացիական գործ, քննում և լուծում այն, ինչպես նաև քննում և լուծում են դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքները: Ընդ որում, ինչպես գործին մասնակցող անձինք, այնպես էլ դատարանները պարտավոր են պահպանել օրենքով սահմանված կարգը: Ըստ այդմ՝ գործին մասնակցող անձանց համար օրենքով սահմանված են բողոքարկման, իսկ վերադաս դատական ատյանների համար՝ բողոքների քննության որոշակի սահմաններ: Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդարադատնալ վերաքննիչ բողոք բերելու սահմանափակումներին և վերաքննության սահմաններին՝ նպատակ ունենալով նպաստել այդ բնագավառում իրավունքի զարգացմանը:

«Վճռաբեկ բողոք բերելու սահմանափակումները» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ: Թեև «վարույթը վերաքննիչ դատարանում» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի չորրորդ բաժինը նույնաբովանդակ իրավակարգավորում չի նախատեսում վերաքննիչ վարույթի համար, սակայն դատական պրակտիկայում վճռաբեկ բողոք բերելու նման սահմանափակումը կիրառվում է նաև վերաքննիչ բողոքների համար, քանի որ դա բխում է տնօրինչականության սկզբունքից: Ընդ որում, դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ բողոք բերելու սահմանափակումն ունի կրկնակի բովանդակային նշանակություն՝

1) անձը չի կարող բողոք բերել դատական ակտի՝ իր համար բարենպաստ մասի դեմ,  
2) անձը չի կարող բողոք բերել դատական ակտի՝ այլ անձանց համար անբարենպաստ մասի դեմ:

Եթե անձի կողմից դատական ակտի՝ իր համար բարենպաստ մասի դեմ բողոք բերելը տրամաբանական չէ, ապա անձի կողմից այլ անձանց շահերի պաշտպանության համար բողոք ներկայացնելը այն պայմաններում, երբ այդ անձինք դատական ակտը չեն բողոքարկել (բացառությամբ օրենքով թույլատրված դեպքերի), կհակասի տնօրինչակա-



նության սկզբունքին: Դրան համապատասխան էլ վերաքննիչ դատարանը չի կարող քննել և լուծել ինչպես դատական ակտի՝ անձի համար բարենպաստ մասի դեմ բերված բողոքը, այնպես էլ անձի կողմից այլ անձանց իրավունքներին ու պարտականություններին առնչվող մասով բերված վերաքննիչ բողոքը: Եթե անձը, ի խախտումն տնօրինչականության սկզբունքի, ներկայացրել է վերաքննիչ բողոք, որով վիճարկում է դատական ակտի ոչ միայն իր, այլև այլ անձանց համար անբարենպաստ մասը, ապա վերաքննիչ դատարանն իրավասու է քննելու և լուծելու միայն բողոք բերած անձի իրավունքներին ու պարտականություններին վերաբերող մասով բերված բողոքը և ըստ այդմ էլ քննության ընթացքում համապատասխան հետևության գալով՝ իրավասու է բեկանել միայն դատական ակտի՝ բողոք բերած անձի համար անբարենպաստ մասը:

**Վճարել դապարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արա Բաղդասարյանի (Փոխատու) և Սպարտակ Թամրազյանի (Փոխառու) միջև 26.01.2011 թվականին կնքված փոխառության պայմանագրով Փոխատուն Փոխառուին փոխառության կարգով առանց տոկոսների տվել է 36.000.000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կնքման օրվանից մինչև 26.04.2011 թվականը: Գումարի վերադարձման մասին ապացույցներ գործում չկան: Սպարտակ Թամրազյանը մահացել է 01.04.2013 թվականին: Էրեբունու նոտարական տարածքի նոտարին հասցեագրված դիմումով Արա Բաղդասարյանը խնդրել է իր՝ որպես պարտատիրոջ պահանջները գրանցել ժառանգական գործերի հաշվառման գրքում: ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 15.05.2014 թվականի տեղեկանքի համաձայն՝ Երևանի Արցախի փողոցի թիվ 143/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցված է Սպարտակ Թամրազյանի սեփականության իրավունքը: Նշված հասցեի անշարժ գույքը Սպարտակ Թամրազյանի և Ընկերության միջև 07.02.2012 թվականին հասարակ գրավոր ձևով կնքված վարձակալության պայմանագրով Սպարտակ Թամրազյանի կողմից հանձնվել է Ընկերության ժամանակավոր օգտագործմանը: 24.10.2014 թվականին Դատարանին հասցեագրված դիմումի համաձայն՝ Տաթևիկ Թամրազյանի ներկայացուցիչները նշել են, որ 07.02.2012 թվականից Երևանի Արցախի փողոցի թիվ 143/1 հասցեում Ընկերությունն իրականացնում է խոզաբուծություն:

Սույն գործով Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք ներկայացրել է միայն պատասխանող Տաթևիկ Թամրազյանը՝ վերաքննիչ բողոքում հայտնելով, որ Ընկերությունը կանոնավոր կերպով կատարում է և նախկինում էլ կատարել է վարձակալության վճարումները, ինչպես նաև որ Տաթևիկ Թամրազյանը Սպարտակ Թամրազյանի ներկայացուցիչներին կողմից Դատարան ներկայացված Տաթևիկ Թամրազյանի անձնագրի պատճենի համաձայն՝ վերջինիս հայրատունը Սպարտակ է: Պատասխանողներ Նարինե Հակոբյանը, Հռիփսիմե և Արմենուհի Թամրազյանները Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք չեն ներկայացրել:

Սույն գործով Դատարանը հայցը մասնակիորեն բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքները, որ ժառանգատու Սպարտակ Թամրազյանն Արա Բաղդասարյանի նկատմամբ ունեցել է 36.000.000 ՀՀ դրամի փոխառության գումարը պայմանագրով սահմանված ժամկետում վճարելու չկատարված պարտավորություն. վերջինս օրենքով սահմանված ժամկետում և կարգով գրանցել է ժառանգների նկատմամբ պահանջի իր իրավունքը: Դատարանը հաստատված է համարել, որ Նարինե Հակոբյանը Սպարտակ Թամրազյանի կինն է, Հռիփսիմե, Արմենուհի և Տաթևիկ Թամրազյանները՝ դուստրերը: Նշված փաստերի հիման վրա Դատարանը գտել է, որ ժառանգները պատասխանավորություն են կրում ժառանգատուի պարտատիրոջ առջև և իրենց անցած ժառանգական գույքի արժեքի սահմաններում պարտավոր են բավարարել վերջինիս պահանջները:

Վերաքննիչ դատարանը, Տաթևիկ Թամրազյանի վերաքննիչ բողոքը բավարարելով, պատճառաբանել է, որ գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հաստատված համարելու ապացուցման առարկան կազմող այնպիսի հանգամանքի առկայությունը, որ պատասխանողներ Տաթևիկ, Արմենուհի և Հռիփսիմե Թամրազյանները,

Նարինե Հակոբյանը ժառանգատու Սպարտակ Թամրազյանի ժառանգությունն ընդունած ժառանգներ են: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ պատասխանողների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստացած լինելու փաստը, որն ապացուցելու պարտականությունը կրում է հայցվորը, չի հիմնավորվել, ինչը բավարար հիմք է հետևություն անելու այն մասին, որ վերջիններս չեն կարող պատասխանատվություն կրել ժառանգատու Սպարտակ Թամրազյանի պարտավորությունների համար: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ Դատարանը, ժառանգատուի պարտավորությունների համար Տաթևիկ, Արմենուհի և Հռիփսիմե Թամրազյաններին, Նարինե Հակոբյանին պատասխանատու որակելով և «վարձակալության պայմանագիր» վերտառությամբ փաստաթղթով նախատեսված վարձավճարները Սպարտակ Թամրազյանի ժառանգական զանգվածի մեջ ընդգրկելով, չի կատարել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գործում առկա ապացույցները դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից գնահատելու և դրա արդյունքում հիմնավորված ու պատճառաբանված դատական ակտ կայացնելու օրենսդրական պահանջը: Շարադրված պատճառաբանություններով Վերաքննիչ դատարանն ամբողջությամբ բավարարել է Տաթևիկ Թամրազյանի վերաքննիչ բողոքը, և Դատարանի վճիռը հայցը բավարարելու, պետական տուրքի բաշխման և հայցի ապահովման միջոցները պահպանելու մասերով բեկանել և գործն այդ մասերով ուղարկել է Դատարան՝ նոր քննության:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, սույն գործի փաստերի հիման վրա և վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի հետևությունները, արձանագրում է հետևյալը.

Նախ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հաշվի առնելով, որ վերաքննիչ բողոք ներկայացրել է միայն Տաթևիկ Թամրազյանը, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր դատական ակտը վերանայել միայն Տաթևիկ Թամրազյանի իրավունքներին և պարտականություններին առնչվող ծավալով: Նման պայմաններում հայցը բավարարելու մասով ամբողջությամբ բեկանելով Դատարանի վճիռը, այդ թվում՝ Արմենուհի և Հռիփսիմե Թամրազյանների և Նարինե Հակոբյանի դեմ պահանջների մասով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել տնօրինչականության սկզբունքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Նկատի ունենալով, որ վերաքննիչ բողոք ներկայացրել է միայն Տաթևիկ Թամրազյանը, Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի մյուս հիմքերին անդրադառնում է միայն Տաթևիկ Թամրազյանի մասով:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ ժառանգության իրավունքի վկայագիր ստացած լինելու փաստը հայցվորի կողմից ապացուցված չլինելու պայմաններում պատասխանողները չեն կարող պատասխանատվություն կրել Սպարտակ Թամրազյանի պարտավորությունների համար, Վճռաբեկ դատարանը համարում է անհիմն և վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո հարկ է համարում արձանագրել, որ սույն գործով էական նշանակություն ունի ոչ միայն ժառանգության իրավունքի վկայագիր ստացած լինելու հանգամանքի բացահայտումը, այլ նաև պատասխանողների կողմից Սպարտակ Թամրազյանի ժառանգությունն ընդունած լինելու փաստի բացահայտումը: Հետևաբար նման պայմաններում Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Տաթևիկ Թամրազյանի բողոքն այն հիմքով բավարարելու Վերաքննիչ դատարանի եզրահանգումը, ըստ որի՝ ժառանգների վրա պարտատերերի պահանջների հատուցման պարտականություն կարող է դրվել միայն այն դեպքում, երբ առկա է ժառանգության իրավունքի վկայագիր: Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով պարզաբանման է ենթակա այն հարցը, թե արդյոք Տաթևիկ Թամրազյանն ընդունել է Սպարտակ Թամրազյանի ժառանգությունը:

Նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի հիման վրա ժառանգությունն ընդունած ժառանգ համարվելու համար պարզաբանման է ենթա-

կա նախ ժառանգ լինելու հանգամանքը, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ սույն գործով Տաթևիկ Թամրազյանի՝ Սպարտակ Թամրազյանի դուստր լինելու փաստը հաստատված լինելուն: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ, որպես կանոն, ազգակցական կապը, մասնավորապես, ծնող և զավակ լինելու հանգամանքը, կարող է հաստատվել օրենքով սահմանված թույլատրելի ապացույցներով՝ ծննդյան վկայականով կամ ծննդյան գրառման վերաբերյալ ապացույցով՝ նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ծնունդը պետական գրանցման ենթակա քաղաքացիական կացության ակտ է, իսկ սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական կացության ակտերը գրանցում են քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մատյաններում (ակտերի գրքեր) համապատասխան գրառումներ կատարելու և այդ գրառումների հիման վրա քաղաքացիներին վկայականներ տալու միջոցով: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման քաղաքացիական կացության ակտերի կապակցությամբ **վեճ առաջանալու դեպքում** կիրառելի է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ապացույցների թույլատրելիության կանոնն այն մասին, որ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վեճ առկա չէ Տաթևիկ Թամրազյանի՝ Սպարտակ Թամրազյանի դուստրը լինելու հանգամանքի վերաբերյալ, քանի որ Տաթևիկ Թամրազյանը Դատարանում գործի քննության ընթացքում երբևէ չի վիճարկել Սպարտակ Թամրազյանի դուստրը լինելու հանգամանքը, որպիսի պայմաններում նշված փաստը դարձել է անվիճելի: Բացի այդ, Տաթևիկ Թամրազյանի անձնագրի պատճենում ևս վերջինիս հայրանունը նշված է Սպարտակ: Ավելին, Տաթևիկ Թամրազյանն իր կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի «Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը» բաժնում նշել է, որ ինքը Սպարտակ Թամրազյանի դուստրն է: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով ոչ միայն վեճ չկա Տաթևիկ Թամրազյանի՝ Սպարտակ Թամրազյանի դուստր լինելու հանգամանքի վերաբերյալ, այլ նաև այլ ապացույցներով ևս հաստատվել է այդ հանգամանքը: Հետևաբար ապացույցների թույլատրելիության վերը նշված կանոնի խախտում սույն գործով տեղի չի ունեցել: Ուստի սույն գործով հիմնավորվել է Տաթևիկ Թամրազյանի՝ Սպարտակ Թամրազյանի ժառանգը լինելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է Տաթևիկ Թամրազյանի կողմից ժառանգությունն ընդունած լինելուն, մասնավորապես, փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն հանգամանքը, որ Տաթևիկ Թամրազյանը գործի քննության ընթացքում ընդունել է, որ հոր սեփականությունը հանդիսացող տարածքում խոզաբուծություն իրականացնող Ընկերությունը վճարում է «վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարները», վկայում է այն մասին, որ Տաթևիկ Թամրազյանը մասնակցում է իր հոր ժառանգական գույքի՝ մասնավորապես՝ Երևանի Արցախի փողոցի թիվ 143/1 հասցեի անշարժ գույքի կառավարմանը: Ուստի նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տաթևիկ Թամրազյանը փաստացի կառավարման եղանակով ընդունել է Սպարտակ Թամրազյանի ժառանգությունը:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն հետևությանը, որ վարձակալության պայմանագրով նախատեսված վարձավճարները Սպարտակ Թամրազյանի ժառանգական զանգվածի մեջ ընդգրկելով՝ Դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտություն, Վճռաբեկ դատարանը, հիմնավոր համարելով նշված հետևությունը, հարկ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում **ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող** գույքը,

ներառյալ՝ դրամը, արժեթղթերը, **գույքային իրավունքները** և պարտականությունները: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ժառանգության զանգվածի մեջ կարող են մտնել միայն օրինական հիմքերով ժառանգատուին պատկանող գույքային իրավունքները: Հետևաբար վարձակալության պայմանագրից ծագող վարձավճարներ ստանալու իրավունքը ժառանգատուի ժառանգական զանգվածի մեջ կարող էր մտնել միայն այն դեպքում, եթե գործի քննության ընթացքում հաստատվեր վարձավճարներ ստանալու իրավունքի օրինական հիմքը: Այլ կերպ ասած՝ Դատարանը գործի քննության ընթացքում պետք է պարզեր, թե արդյոք վարձակալության հարաբերությունները ծագել են օրենքով սահմանված կարգով կնքված վարձակալության պայմանագրի հիման վրա՝ նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 610-րդ և 611-րդ հոդվածների համաձայն՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ նշված պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման: Մինչդեռ սույն գործով Դատարանը 27.11.2015 թվականի վճռի «Գործի փաստեր» բաժնում հաստատված է համարել, որ Սպարտակ Թամրազյանի և Ընկերության միջև 07.02.2012 թվականին կնքված վարձակալության պայմանագիրը վավերացված չէ նոտարական կարգով, իսկ պայմանագրից ծագող իրավունքները պետական գրանցման չեն ենթարկվել, սակայն այդուհանդերձ բավարարել է հայցը՝ նշված պայմանագրից ծագող վարձավճարներն ընդգրկելով Սպարտակ Թամրազյանի ժառանգական զանգվածի մեջ: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ և 302-րդ հոդվածների ուժով վերոնշյալ պայմանագիրն առոչինչ է, գտնում է, որ առոչինչ գործարքից ծագող ենթադրյալ գույքային իրավունքը չի կարող ներառվել ժառանգական զանգվածում: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սպարտակ Թամրազյանի և Ընկերության միջև 07.02.2012 թվականին կնքված վարձակալության պայմանագրից ծագող վարձավճարները Տաթևիկ Թամրազյանի մասով Սպարտակ Թամրազյանի ժառանգական զանգվածի մեջ ներառելու պահանջը ենթակա է մերժման:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հաստատված է Տաթևիկ Թամրազյանի՝ Սպարտակ Թամրազյանի ժառանգությունն ընդունած ժառանգ լինելու հանգամանքը, ուստի Տաթևիկ Թամրազյանից 36.000.000 ՀՀ դրամ փոխառության գումարը, այդ գումարի նկատմամբ 26.04.2011 թվականից մինչև պարտավորության կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների գումարը բռնագանձելու պահանջների և դրա հետ կապված դատական ծախսերի բաշխման մասով Դատարանի եզրահանգումը հիմնավորված է՝ սույն որոշմամբ շարադրված պատճառաբանություններով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սպարտակ Թամրազյանի և Ընկերության միջև 07.02.2012 թվականին կնքված վարձակալության պայմանագրով նախատեսված վարձավճարները Տաթևիկ Թամրազյանի մասով Սպարտակ Թամրազյանի ժառանգական զանգվածի մեջ ընդգրկելու պահանջը բավարարելու մասով Դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նկատի ունենալով, որ նման պահանջը ենթակա էր մերժման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նարինե Հակոբյանից, Արմենուհի և Հռիփսիմե Թամրազյաններից 36.000.000 ՀՀ դրամ փոխառության գումարը, այդ գումարի նկատմամբ 26.04.2011 թվականից մինչև պարտավորության կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների գումարը բռնագանձելու, Սպարտակ Թամրազյանի և Ընկերության միջև 07.02.2012 թվականին կնքված վարձակալության պայմանագրով նախատեսված վարձավճարները Նարինե Հակոբյանի, Արմենուհի և Հռիփսիմե Թամրազյանների մասով Սպարտակ Թամրազյանի ժառանգական զանգվածի մեջ ընդգրկելու պահանջների և դրա հետ կապված դատական ծախսերի բաշխման, ինչպես նաև Տաթևիկ Թամրազյանից 36.000.000 ՀՀ դրամ փոխա-

ռության գումարը, այդ գումարի նկատմամբ 26.04.2011 թվականից մինչև պարտավորության կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների գումարը բռնագանձելու և դրա հետ կապված դատական ծախսերի բաշխման մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճարել դատարանի լիազորությունը:

Ինչ վերաբերում է Սպարտակ Թամրազյանի և Ընկերության միջև 07.02.2012 թվականին կնքված վարձակալության պայմանագրով նախատեսված վարձավճարները Տաթևիկ Թամրազյանի մասով Սպարտակ Թամրազյանի ժառանգական զանգվածի մեջ ընդգրկելու պահանջին, ապա Վճարել դատարանը գտնում է, որ նշված պահանջի մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճարել դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճարել դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Վճարել դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Պահանջների մի մասով Դատարանի վճռին օրինական ուժ տալիս, իսկ մյուս մասով Վերաքննիչ դատարանի որոշումը փոփոխելիս Վճարել դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Վճարել դատարանն ընդգծում է, որ Դատարանի վճիռը վերաքննության կարգով Նարինե Հակոբյանի, Արմենուհի և Հռիփսիմե Թամրազյանների կողմից չի բողոքարկվել, հետևաբար Վճարել դատարանը վերջիններիս դեմ ներկայացված պահանջի մասով Դատարանի վճռին օրինական ուժ տալիս հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը՝ առանց անդրադառնալու Դատարանի վճռի նյութաիրավական իրավաչափությանը և հիմնավորվածությանը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված դատավարական պատճառաբանությունները:

**5. Վճարել դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճարել բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճարել բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» կետի համաձայն՝ դատական ակտերի դեմ վճարել բողոքների համար պետական տուրքը գանձվում է **գույքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:**

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ պետական տուրքի վճարումից ազատում, պետական տուրքի նվազեցում, պետական տուրքի դրույքաչափի նվազեցում, **պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում**, պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

Սույն գործով վճարել բողոք բերած Արա Բաղդասարյանը ներկայացված վճարել բողոքի համար վճարել է 50.000 ՀՀ դրամ պետական տուրք, իսկ ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.08.2016 թվականի որոշմամբ բավարարվել է բողոք բերած անձի միջնորդությունը՝ չվճարված մասով վճարել բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ: Բացի այդ, սույն գործով վերաքննիչ բողոք ներկայացրած Տաթևիկ Թամրազյանը վերաքննիչ բողոքի համար վճարել է 40.000 ՀՀ դրամ, իսկ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2016 թվականի որոշմամբ բավարարվել է բողոք բերած անձի միջնորդությունը՝ չվճարված մասով վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ:

Նկատի ունենալով, որ 36.000.000 ՀՀ դրամ փոխառության գումարը, այդ գումարի նկատմամբ 26.04.2011 թվականից մինչև պարտավորության կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների գումարը բռնագանձելու պահանջի մասով օրինական ուժ է տրվում Դատարանի վճիռն, Վճարել դատարանը գտնում է, որ 1.040.000 ՀՀ դրամ (36.000.000\*3%-40.000), ինչպես նաև 26.04.2011 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարումը 36.000.000 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների գումարի 3%-ը պետք է բռնագանձել Տաթևիկ Թամրազյանից ՀՀ պետական բյուջե՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար: Բացի այդ, Տաթևիկ Թամրազյանից ՀՀ պետական բյուջե պետք է բռնագանձել 950.000 ՀՀ դրամ (1.000.000-50.000)՝ որպես գույքային պահանջի գործերով վճարել բողոքի համար սահմանված և ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար՝ նկատի ունենալով, որ Արա Բաղդասարյանի կողմից վճարել բողոքի համար վճարվել է 50.000 ՀՀ դրամ, իսկ գույքային պահանջի գործերով վճարել բողոքի համար պետական տուրքի գումարը չի կարող գերազանցել 1.000.000 ՀՀ դրամը:

Արա Բաղդասարյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 10.000 ՀՀ դրամ՝ որպես վարձակալության պայմանագրով նախատեսված վարձավճարները Տաթևիկ Թամրազյանի մասով ժառանգական զանգվածի մեջ ընդգրկելու պահանջի համար վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար, ինչպես նաև 20.000 ՀՀ դրամ՝ որպես նույն պահանջի համար վճարել բողոքի համար սահմանված և ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար:

Տաթևիկ Թամրազյանից հօգուտ Արա Բաղդասարյանի ենթակա է բռնագանձման 50.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի մասի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.04.2016 թվականի որոշումը:

1) Նարինե Հակոբյանից, Արմենուհի և Հռիփսիմե Թամրազյաններից 36.000.000 ՀՀ դրամ փոխառության գումարը, այդ գումարի նկատմամբ 26.04.2011 թվականից մինչև պարտավորության կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների գումարը բռնագանձելու, ինչպես նաև Սպարտակ Թամրազյանի և «ՎԻ ԱՐ ԱԳՐՈ» ՍՊԸ-ի միջև 07.02.2012 թվականին կնքված վարձակալության պայմանագրով նախատեսված վարձավճարները Նարինե Հակոբյանի, Արմենուհի և Հռիփսիմե Թամրազյանների մատվ Սպարտակ Թամրազյանի ժառանգական զանգվածի մեջ ընդգրկելու պահանջների և դրա հետ կապված դատական ծախսերի բաշխման մատվ օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.11.2015 թվականի վճռին,

2) Տաթևիկ Թամրազյանից 36.000.000 ՀՀ դրամ փոխառության գումարը, այդ գումարի նկատմամբ 26.04.2011 թվականից մինչև պարտավորության կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների գումարը բռնագանձելու և դրա հետ կապված դատական ծախսերի բաշխման մատվ օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.11.2015 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով,

3) Սպարտակ Թամրազյանի և «ՎԻ ԱՐ ԱԳՐՈ» ՍՊԸ-ի միջև 07.02.2012 թվականին կնքված վարձակալության պայմանագրով նախատեսված վարձավճարները Տաթևիկ Թամրազյանի մատվ Սպարտակ Թամրազյանի ժառանգական զանգվածի մեջ ընդգրկելու պահանջների և դրա հետ կապված դատական ծախսերի բաշխման մատվ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.04.2016 թվականի որոշումը փոփոխել և այս մատվ հայցը մերժել:

2. Տաթևիկ Թամրազյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 1.040.000 ՀՀ դրամ, ինչպես նաև 26.04.2011 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարումը 36.000.000 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների գումարի 3%-ը՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար:

Տաթևիկ Թամրազյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 950.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար:

Արա Բաղդասարյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար:

Արա Բաղդասարյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասի գումար:

Տաթևիկ Թամրազյանից հօգուտ Արա Բաղդասարյանի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի մասի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/5066/02/14**  
դատարանի որոշում **2017թ.**  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/5066/02/14  
Նախագահող դատավոր՝ Ա. Հունանյան  
Դատավորներ՝ Կ. Հակոբյան  
Ա. Սմբատյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
- Մ. ԴՐՍԵՅԱՆԻ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆԻ
- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆԻ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
- Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին դռնբաց դատական նիստում, քննելով «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.01.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արփիինե Հարությունյանի ընդդեմ Կազմակերպության՝ աշխատանքային ստաժը ձիշտ հաշվարկելու, աշխատավարձ բռնագանձելու և նախկին աշխատանքում վերականգնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Արփիինե Հարությունյանը պահանջել է իրեն վերականգնել աշխատանքի, յոթ տարվա կատարած անօրինական աշխատանքը համարել աշխատանքային ստաժ և Կազմակերպությունից բռնագանձել այդ տարիների համար հասանելիք աշխատավարձը:  
Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.03.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է 14.09.2006 թվականից մինչև 20.11.2013 թվականը Կազմակերպությունում Արփիինե Հարությունյանի կատարած աշխատանքը հաշվարկել որպես աշխատանքային ստաժ, Կազմակերպությունից բռնագանձել չվճարված աշխատավարձ՝ 14.09.2006 թվականից սկսած մինչև 20.11.2013 թվականը: Մնացած մասով հայցը մերժվել է:  
Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 28.06.2016 թվականին տվել է թիվ ԵԿԴ/5066/02/14 կատարողական թերթը:



ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կենտրոնն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարող Ա. Հանեսյանը (այսուհետ՝ Հարկադիր կատարող) դիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ կատարողական թերթը պարզաբանելու մասին:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 04.11.2016 թվականի որոշմամբ Հարկադիր կատարողի դիմումը՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.06.2016 թվականի թիվ ԵԿԴ/5066/02/14 կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.01.2017 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.11.2016 թվականի «Կատարողական թերթի պարզաբանումը մերժելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպության ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 132-րդ, 143-րդ և 220-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ վճռում որևէ փաստ առկա չէ աշխատավարձի չափի կամ դրա հաշվարկման վերաբերյալ, իսկ Դատարանը թեև կատարողական թերթի պարզաբանումը մերժել է, սակայն միևնույն ժամանակ որոշման մեջ փաստացի պարզաբանում տալով՝ նշել է, որ հաշվարկման է ենթակա 13.09.2006 թվականից մինչև 21.10.2013 թվականը Կազմակերպությունում մենեդջուի (տպրանտյի) աշխատավարձի չափով գումար, այսինքն՝ Հարկադիր կատարողի համար 2006 թվականից մինչև 2013 թվականն ընկած ժամանակահատվածի հաշվարկման մեխանիզմ է սահմանել, այն էլ՝ սխալ:

Դատարանը կատարողական թերթի պարզաբանմամբ, նախ՝ նոր հիմք է ավելացրել, երկրորդ՝ հետադարձ ուժ է տվել Արփինե Հարությունյանի՝ 2013 թվականի նոյեմբերից ստացած աշխատավարձի չափին, երրորդ՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմի պահանջը՝ փոփոխել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.03.2016 թվականի վճռի բովանդակությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «ամբողջությամբ վերացնել կամ բեկանել Վերաքննիչ դատարանի 26.01.2017 թվականի որոշումը»:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.03.2016 թվականի վճռով Արփինե Հարությունյանի հայցն ընդդեմ Կազմակերպության՝ աշխատանքային ստաժը ձիշտ հաշվարկելու, աշխատավարձ բռնագանձելու և նախկին աշխատանքում վերականգնելու պահանջների մասին, բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է 14.09.2006 թվականից մինչև 20.11.2013 թվականը Կազմակերպությունում Արփինե Հարությունյանի կատարած աշխատանքը հաշվարկել որպես աշխատանքային ստաժ, Կազմակերպությունից բռնագանձել չվճարված աշխատավարձ՝ 14.09.2006 թվականից սկսած մինչև 20.11.2013 թվականը: Մնացած մասով հայցը մերժվել է:

է: Վճռում որևէ նշում չկա աշխատավարձի չափի կամ դրա հաշվարկման կարգի վերաբերյալ (**հատոր 2-րդ, գ.թ. 153-166**):

2) Երևանի Կենտրոնի և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 28.06.2016 թվականին տրվել է թիվ ԵԿԴ/5066/02/14 կատարողական թերթը (**հատոր 3-րդ, գ.թ. 41-42**):

3) Հարկադիր կատարողը 17.08.2016 թվականին դիմում է ներկայացրել Երևանի Կենտրոնի և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ կատարողական թերթը պարզաբանելու մասին՝ խնդրելով տալ պարզաբանում, թե որքան է կազմում կատարողական թերթով նախատեսված՝ Կազմակերպությունից հոգուտ Արփինե Հարությունյանի բռնագանձման ենթակա աշխատավարձի գումարը՝ սկսած 14.09.2006 թվականից մինչև 20.11.2013 թվականը (**հատոր 3-րդ, գ.թ. 79**):

4) Դատարանի 04.11.2016 թվականի որոշմամբ Հարկադիր կատարողի դիմումը՝ Երևանի Կենտրոնի և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.06.2016 թվականի թիվ ԵԿԴ/5066/02/14 կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ, մերժվել է: Միաժամանակ որոշման պատճառաբանական մասում Դատարանը նշել է, որ «վճռով հաստատված փաստերից հետևում է, որ հաշվարկման է ենթակա 13.09.2006 թվականից մինչև 21.10.2013 թվականը Կազմակերպությունում մենեջրգնուհու (տպրանոյի) աշխատավարձի չափով գումար» (**հատոր 3-րդ, գ.թ. 115-117**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում կատարողական թերթի պարզաբանման մասին դատական ակտերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանը համարում է, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) ստորադաս դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. դատավարական ինչ պահանջների պետք է համապատասխանի կատարողական թերթի պարզաբանման մասին որոշումը:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճիռ կայացրած դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձանց դիմումով կամ իր նախաձեռնությամբ պարզաբանել վճիռը, ուղղել թույլ տրված վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալները՝ չփոփոխելով վճռի բովանդակությունը և էությունը:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վճիռը պարզաբանելու կամ վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին դատարանը կայացնում է որոշում:

ՀՀ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վճռի պարզաբանումը վճռի եզրափակիչ մասում թերությունների վերացման միջոցներից մեկն է, որն ուղղված է շտկելու վճռում առկա անհստակություններն ու երկիմաստությունները՝ շարադրելով այն առավել պարզ և հասկանալի: Վճռի պարզաբանումն ուղղված է այնպիսի թերությունների վերացմանը, որոնք կարող են դժվարացնել դատական ակտի կատա-

րումը: Հետևաբար դատարանը պարզաբանում է, թե ինչ է նկատի ունեցել վճռի եզրափակիչ մասում և ինչպես պետք է հասկանալ վճիռը:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է նաև, որ օրենսդիրը վճռի պարզաբանման նպատակահարմարության հստակ չափորոշիչներ չի սահմանել, ուստի, հաշվի առնելով, որ վճռի պարզաբանումը դատարանի իրավասությունն է, այլ ոչ թե պարտականությունը, բոլոր դեպքերում վճռի պարզաբանման անհրաժեշտության հարցը դատարանը լուծում է ինքնուրույն: Վճռի պարզաբանման անհրաժեշտությունը պետք է պայմանավորված լինի միայն վճռի եզրափակիչ մասում այնպիսի անհստակությունների առկայությամբ, որոնք կարող են երկակի մեկնաբանության տեղիք տալ կամ դժվարացնել վճռի կատարումը: Դատարանն իրավասու չէ վճռի պարզաբանման արդյունքում փոփոխել վճռի բովանդակությունը կամ լուծել այնպիսի հարցեր, որոնք չեն քննարկվել այդ դատական ակտով (*տե՛ս, Հրաչիկ Ավետիսյանն ընդդեմ Մուսանսա Ավետիսյանի և մյուսների թիվ ԼԴ/0376/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ կատարողական ակտում պետք է նշվի դատական ակտի եզրափակիչ մասը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթում նշված պահանջները պարզ չլինելու դեպքում հարկադիր կատարողն իրավունք ունի դիմել կատարողական թերթ տված դատարան՝ այն պարզաբանելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է որոշում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը չի պարունակում կատարողական թերթի պարզաբանմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ դրույթներ, սակայն շարադրված իրավադրույթների վերլուծությունից բխում է, որ վճռի կատարողական թերթում նշվում է վճռի եզրափակիչ մասը, հետևաբար կատարողական թերթի պարզաբանման նկատմամբ լիովին կիրառելի են վճռի պարզաբանման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված վերոգրյալ իրավակարգավորումները, ինչպես նաև դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Մասնավորապես՝ կատարողական թերթի պարզաբանմամբ վերացվում են վճռի եզրափակիչ մասում տեղ գտած այն անհստակություններն ու երկիմաստությունները, որոնք ոչ միանշանակ մեկնաբանության տեղիք են տալիս կամ դժվարացնում են դատական ակտի կատարումը կատարողական վարույթի ընթացքում: Այլ կերպ ասած, կատարողական թերթի պարզաբանումն ըստ էության վճռի եզրափակիչ մասի պարզաբանումն է, որի մեկնաբանման և կատարման կապակցությամբ անորոշություն է առաջացել դատական ակտի հարկադիր կատարման ընթացքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատարանի վճիռը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, նույն օրենսգրքի, այլ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռը հիմնավորված է, եթե վճռում շարադրված եզրահանգումները և հաստատված փաստերը համապատասխանում են առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներին, իսկ 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետի 6-րդ

ենթակետի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասը պետք է պարունակի եզրահանգում գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմնավորվածության վերաբերյալ: Նույն հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի յուրաքանչյուր պահանջը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու մասին կամ գործի վարույթը կարձելու մասին դատարանի եզրակացությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, և եզրահանգումը քննարկվող հարցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի նույն օրենսգրքի 130.1-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր նախադեպային որոշմամբ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ներպետական իրավունքի նորմերը պետք է լինեն բավարար չափով հասանելի, հստակ և կանխատեսելի իրենց կիրառման մեջ (*լրեն, Broniowski v. Poland գործով Եվրոպական դատարանի 22.06.2004 թվականի վճիռը, 147-րդ կետ*): Բացի այդ, համաձայն Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների՝ օրենսդրական նորմերը պետք է կիրառվեն ողջամիտ հստակությամբ և կապակցվածությամբ, որպեսզի հնարավոր լինի որքան հնարավոր է խուսափել իրավական անորոշություններից և երկիմաստություններից: Եվրոպական դատարանն ընդգծել է նաև պետությունների բարձրագույն դատական ատյանների դերն իրավական անորոշությունը հնարավորինս հաղթահարելու հարցում (*լրեն, Beian v. Romania գործով Եվրոպական դատարանի 06.12.2007 թվականի վճիռը, 33-րդ և 39-րդ կետեր*):

Մինչև նույն ժամանակ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն թե՛ օրենսդրական, թե՛ վարչական և թե՛ դատական գործունեության արդյունք հանդիսացող իրավական անորոշություններից խուսափելու համար: Փաստորեն, իրավական որոշակիության սկզբունքը պահանջում է ոչ միայն օրենսդրական ձևակերպումների, այլև դատարանների կայացրած որոշումների հստակություն և կանխատեսելիություն: Ընդ որում, դատական ակտերը պետք է ուղղված լինեն օրենսդրական անհատականությունների վերացմանը և չպետք է պարունակեն անհասկանալի և անորոշ եզրահանգումներ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով դատական ակտի որոշակիության խնդրին, արտահայտել է դիրքորոշում առ այն, որ դատական ակտը պետք է լինի որոշակի. այն պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի, դրա բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որ դատավարության մասնակիցների համար ակնառու և ակնհայտ լինի, թե իրենց ինչ իրավունք է տրամադրվում, իրենց որ իրավունքն է սահմանափակվում, իրենց ինչ իրավունքից են զրկում կամ իրենց վրա ինչ պարտականություն է դրվում (*լրեն, Դավիդ Ասապրյանն ընդդեմ Սվեպրյանս Ասապրյանի և Արթուր Գասիպյանի թիվ ԵՄԴ/0199/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ գտել է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերին ներկայացվող իրավական որոշակիության պահանջը, ի թիվս այլ հանգամանքների, ենթադրում է, որ տվյալ դատական ակտը պետք է գործով ներկայացված բոլոր պահանջներին տա այնպիսի պատասխան, որը բացառում է կողմերի հարաբերություններում անորոշությունը, ինչպես նաև դատական ակտը կողմերի հայեցողությամբ տարբեր եղանակներով կատարելու հնարավորությունը (*լրեն, Անի Սարգսյանն ընդդեմ Արմեն Փերոյանի, երրորդ անձ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի*

**խնամակալության և հոգաբարձության մարմնի թիվ ԵԱՆԴ/4073/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):**

Վերահաստատելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել հետևյալը.

Դատարանի վճիռը գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտն է, վեճի վերաբերյալ դատարանի վերջնական որոշումը, այդ պատճառով էլ օրենսդիրն առավել մանրամասնորեն է կարգավորել վճռին ներկայացվող օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջները: Օրենսդրի կողմից դատարանի այլ ակտերին ներկայացվող պահանջների վերաբերյալ նույն մանրամասնությամբ իրավակարգավորումներ չսահմանելը չի նշանակում, որ այդ որոշումները կարող են լինել ոչ բավարար չափով օրինական, հիմնավորված և պատճառաբանված: Պարզապես գործի քննության արդյունավետության շահերից ելնելով՝ չի պահանջվում, որ դատարանն իր յուրաքանչյուր որոշումը հիմնավորի և պատճառաբանի նույն մանրամասնությամբ, ինչ որ գործով կայացվող վերջնական դատական ակտը: Այսպիսով, վճռի օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության վերաբերյալ դատավարական պահանջները որոշակիորեն վերաբերում են նաև դատարանի կողմից կայացվող որոշումներին, այսինքն՝ դատարանի յուրաքանչյուր որոշում պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված:

Կատարողական թերթի պարզաբանման մասին որոշումը դատարանի կողմից կայացվող դատական ակտերից մեկն է, որով վերացվում է վերջնական դատական ակտում առկա անորոշությունը, իսկ դատական ակտի անորոշությունը վերացնող դատական ակտն իր հերթին պետք է լինի օրինական, հիմնավորված, պատճառաբանված և չի կարող պարունակել անորոշություն: Մասնավորապես՝ այդ ակտի պատճառաբանական և եզրափակիչ մասերը պետք է համապատասխանեն միմյանց, ակտի եզրափակիչ մասը պետք է բխի դրա պատճառաբանական մասում կատարված եզրահանգումներից, իսկ ակտի եզրափակիչ մասում կատարված եզրակացությունը չի կարող կասկածի տակ դրվել նույն ակտի պատճառաբանական մասում կատարված այլ եզրահանգումներով: Հակառակ դեպքում անորոշությունը վերացնող դատական ակտը ոչ միայն չի ծառայի օրենսդրությամբ սահմանված նպատակներին, այլև իր հերթին կառաջացնի նոր անորոշություն և դատական ակտի կատարման նոր դժվարություններ:

**Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.03.2016 թվականի վճռով վճռվել է՝ 14.09.2006 թվականից մինչև 20.11.2013 թվականը Կազմակերպությունում Արփինե Հարությունյանի կատարած աշխատանքը հաշվարկել որպես աշխատանքային ստաժ, Կազմակերպությունից բռնագանձել չվճարված աշխատավարձ՝ 14.09.2006 թվականից սկսած մինչև 20.11.2013 թվականը: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 28.06.2016 թվականին տրված թիվ ԵԿԴ/5066/02/14 կատարողական թերթի կապակցությամբ Հարկադիր կատարողը 17.08.2016 թվականին դիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ կատարողական թերթը պարզաբանելու մասին՝ խնդրելով տալ պարզաբանում, թե որքան է կազմում կատարողական թերթով նախատեսված՝ Կազմակերպությունից հոգուտ Արփինե Հարությունյանի բռնագանձման ենթակա աշխատավարձի գումարը:

Դատարանի 04.11.2016 թվականի որոշմամբ Հարկադիր կատարողի դիմումը՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.06.2016 թվականի թիվ ԵԿԴ/5066/02/14 կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ, մերժվել է: Դատարանը կատարողական թերթի պարզաբանումը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.03.2016 թվականի վճ-

ռուն և դրա հիման վրա 28.06.2016 թվականին տրված կատարողական թերթում առկա չեն այնպիսի անհատակություններ, որոնք կարող են երկակի մեկնաբանության տեղիք տալ կամ դժվարացնել վճռի կատարումը: Դատարանը, նկատի ունենալով, որ վերը նշված վճռով հաստատված է համարվել 13.09.2006 թվականից մինչև 21.10.2013 թվականը փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայությունը և Կազմակերպության կողմից Արփինե Հարությունյանին կատարված աշխատանքի դիմաց աշխատավարձի տեսքով հատուցման վճարման պարտականությունը, ինչպես նաև այն, որ Արփինե Հարությունյանը Կազմակերպությունում աշխատել է որպես մենեջերգչուհի (սուպրանո), որոշման պատճառաբանական մասում գտել է, որ վճռով հաստատված փաստերից հետևում է, որ հաշվարկման է ենթակա 13.09.2006 թվականից մինչև 21.10.2013 թվականը Կազմակերպությունում մենեջերգչուհու (սուպրանոյի) աշխատավարձի չափով գումար: Միաժամանակ Դատարանը գտել է, որ վճռում բռնագանձման ենթակա գումարի չափի բացակայությունը պայմանավորված է կողմերի միջև առկա և Դատարանի կողմից հաստատված իրավահարաբերությունների առանձնահատկությամբ, ուստի վճռում և դրա հիման վրա տրված կատարողական թերթում առկա չեն անհատակություններ:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, պատճառաբանել է, որ Դատարանի 04.11.2016 թվականի «Կատարողական թերթի պարզաբանումը մերժելու մասին» որոշման մեջ շարադրված պատճառաբանական մասն ընդամենը բխում է թիվ ԵԿԴ/5066/02/14 քաղաքացիական գործով հաստատված փաստական հանգամանքներից և չի կարող մեկնաբանվել որպես Երևանի Կենտրոն և Նորք-Մարշալ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.03.2016 թվականի թիվ ԵԿԴ/5066/02/14 վճռի բովանդակության և էության փոփոխություն, ուստի բողոքաբերի փաստարկն այն մասին, որ Դատարանի 04.11.2016 թվականի «Կատարողական թերթի պարզաբանումը մերժելու մասին» որոշմամբ փոխվել է 25.03.2016 թվականի թիվ ԵԿԴ/5066/02/14 վճռի բովանդակությունը և էությունը, անհիմն է:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերից հետևում է, որ Դատարանն իր որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերով հանգել է այն եզրակացության, որ կատարողական թերթում անորոշություն, հետևաբար և դրա պարզաբանման անհրաժեշտություն չկա և մերժել է կատարողական թերթը պարզաբանելու մասին դիմումը: Միաժամանակ Դատարանն իր որոշման պատճառաբանական մասում կասկածի տակ է դրել նույն որոշման եզրափակիչ մասում իր իսկ կատարած եզրակացությունը և ըստ էության տվել է կատարողական թերթի պարզաբանում: Մինչդեռ որոշման պատճառաբանական մասում կատարելով եզրահանգում այն մասին, որ վճռի եզրափակիչ մասում, հետևաբար և կատարողական թերթում առկա է դատական ակտի միանշանակ ընկալմանը և կատարմանը խոչընդոտող անորոշություն, Դատարանը որոշման եզրափակիչ մասում պետք է հանգեր այն եզրակացության, որ այդ անորոշությունը ենթակա է վերացման և նշեր դրա վերացման կոնկրետ եղանակը: Վերաքննիչ դատարանն էլ վերաքննիչ բողոքը քննելով ի վերջո չի պատասխանել վերաքննիչ բողոքով բարձրացված այն հարցին, թե Դատարանի բողոքարկվող որոշմամբ ի վերջո կատարողական թերթի պարզաբանում տրվել է, թե՛ ոչ: Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանի որոշումն ունի ներքին հակասություն, և Դատարանի որոշումն ուժի մեջ թողնելով՝ չի վերացրել Դատարանի՝ բողոքարկվող որոշմամբ ստեղծված իրավական անորոշությունը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված անորոշությունը կարող է վերացվել Հարկադիր կատարողի ներկայացրած դիմումի նոր քննության ընթացքում:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը՝ Հարկադիր կատարողի դի-

մումը քննելու համար Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.01.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարող Ա. Հանեսյանի՝ կատարողական թերթը պարզաբանելու մասին դիմումի նոր քննության համար:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

# ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԳ/4093/05/15  
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան  
Դատավորներ՝ Հ. Բեդևյան  
Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԳ/4093/05/15  
2017թ.

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Գևորգ Շահինյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.05.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գևորգ Շահինյանի ընդդեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ Ծառայության 23.01.2015 թվականի թիվ 44 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Գևորգ Շահինյանը պահանջել է անվավեր ճանաչել «Վարչական տուգանք նշանակելու մասին» 23.01.2015 թվականի թիվ 44 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 11.11.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.05.2016 թվականի որոշմամբ Գևորգ Շահինյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 11.11.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գևորգ Շահինյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ծառայությունը:



**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Մանդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապարսկել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գյուղատնտեսական արտադրանքի շուկայում պարտադիր փորձաքննության ենթակա է միայն կենդանական ծագման մթերքը, իսկ բուսական ծագման սննդամթերքի իրացումը կարող է իրականացվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթղթերի առկայության դեպքում: Այսինքն՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկայում Ընկերությունը՝ որպես այդ շուկայի կազմակերպիչ, պարտավոր էր ապահովել միայն կենդանական ծագման մթերքի որակի ստուգման լաբորատորիայի առկայություն: Հետևաբար Ընկերության տնօրենը չէր կարող ենթարկվել վարչական պատասխանատվության գյուղատնտեսական արտադրանքի շուկան բուսական ծագման սննդամթերքի որակի ստուգման լաբորատորիայով չապահովելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.05.2016 թվականի որոշումը:

**2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի փաստարկները.**

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Վերաքննիչ դատարանը ճիշտ է վերլուծել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի և «Մանդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի դրույթները:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Իրավաբանական անձի պետական գրանցման թիվ 01Ա018350 վկայականի 10.04.2014 թվականի թիվ 007 ներդիրի համաձայն՝ Գևորգ Շահինյանը «Վանաձորի շուկա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) գործադիր մարմնի ղեկավարն (տնօրեն) է (**հատոր 1-ին, գ.թ. 7**).

2) ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից 25.08.2009 թվականին Ընկերությանը տրվել է Վանաձոր քաղաքում առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության թիվ 000028 լիցենզիան (**հատոր 1-ին, գ.թ. 10**).

3) Ծառայության 22.12.2014 թվականի թիվ 1447 ստուգման ակտի համաձայն՝ Ծառայության աշխատակազմի Լոռու մարզային կենտրոնի տեսուչների կողմից Ծառայության պետի 26.11.2014 թվականի թիվ 1447-Ա հրամանի հիման վրա Ընկերությունում 01.12.2014 թվականից մինչև 09.12.2014 թվականն իրականացվել է ստուգում՝ սննդամթերքի անվտանգության, սննդամթերքի անվտանգության բնագավառը կարգավորող ՀՀ իրավական ակտերով ներկայացվող պահանջերին համապատասխանությունը բացահայտելու նպատակով, որի արդյունում արձանագրվել են հետևյալ խախտումները.

ա) Ընկերության վաճառատեխնոլոգիական գույքի, սառնարանների և չափման միջոցների տեսակը հաստատված և ստուգաչափված չէ («Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի, 5-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ կառավարության 20.01.2011 թվականի թիվ 34-Ն որոշման հավելվածի 40-րդ կետի պահանջների խախտում),

բ) Ընկերությունում չի ապահովվում վաճառքի ընդունվող փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի, մասնավորապես՝ բուսական ծագման սննդամթերքի որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցած լաբորատորիա, ուստի առևտրի իրականացման վայրում բուսական ծագման սննդամթերքը չի ենթարկվում բուսասանիտարական ստուգման («Մանդամթերքի ան-

վտանգության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտում) **(հատոր 1-ին, գ.թ. 15-17)**.

4) Ծառայության 22.12.2014 թվականի «Վարչական իրավախախտման վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ Ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում բացահայտված և թիվ 1447 ստուգման ակտում արձանագրված խախտումների համար նախատեսված է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ և 11-րդ մասերով **(հատոր 1-ին, գ.թ. 18-19)**.

5) Ծառայության «Վարչական տուգանք նշանակելու մասին» 23.01.2015 թվականի թիվ 44 որոշման համաձայն՝ Ընկերության տնօրեն Գևորգ Շահինյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ և 11-րդ մասերով ենթարկվել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 60.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ Ընկերության վաճառատելանոլոգիական գույքի, սառնարանների և չափման միջոցների տեսակը հաստատված և ստուգաչափված չէ, ինչպես նաև Ընկերության կողմից առևտրի իրականացման վայրում բուսական ծագման սննդամթերքը չի ենթարկվում բուսասանիտարական ստուգման **(հատոր 1-ին, գ.թ. 20-21)**.

6) Ծառայության «Վարչական բողոքը մերժելու մասին» 20.04.2015 թվականի թիվ 2 որոշման համաձայն՝ Ընկերության տնօրեն Գևորգ Շահինյանի 09.03.2015 թվականի վարչական բողոքը մերժվել է և Ծառայության «Վարչական տուգանք նշանակելու մասին» 23.01.2015 թվականի թիվ 44 որոշումը թողնվել է անփոփոխ **(հատոր 1-ին, գ.թ. 27-29)**.

7) ՀՀ գյուղատնտեսության նախարարի «Վարչական բողոքը մերժելու մասին» 22.06.2015 թվականի թիվ ՎՎ-002 որոշման համաձայն՝ Ծառայության «Վարչական տուգանք նշանակելու մասին» 23.01.2015 թվականի թիվ 44 որոշման և Ծառայության «Վարչական բողոքը մերժելու մասին» 20.04.2015 թվականի թիվ 2 որոշման դեմ Ընկերության տնօրեն Գևորգ Շահինյանի վարչական բողոքը մերժվել է **(հատոր 1-ին, գ.թ. 36-39)**:

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաները փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայով չապահովվելու համար նախատեսված վարչական պատասխանատվության կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյոք համապատասխան պաշտոնատար անձը կարող է ենթարկվել վարչական պարտասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկան բոյսերի և բուսական արտադրանքի (բուսական ծագման սննդամթերքի) որակի ստուգման նպատակով անհրաժեշտ սարքավորումներով հագեցված լաբորատորիայով չապահովվելու համար:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով հա-

մապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայով չապահովելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում տվյալ պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների (...) ոլորտի պետական կառավարման հիմքերը, այդ ոլորտում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և ուղղված է առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացվող գործունեության կանոնակարգմանը, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության ապահովմանը:

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի իմաստով առևտրի հիմնական հասկացություններն են՝

(...) գյուղատնտեսական արտադրանքի շուկա՝առևտրի իրականացման վայր, որտեղ իրականացվում է կենդանական ծագում ունեցող մթերքի, բույսերի, բուսական արտադրանքի (այսուհետ՝ գյուղատնտեսական արտադրանք) և սննդամթերքի առուվաճառք (...).

առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ՝ նույն օրենքով սահմանված դեպքերում առևտրի իրականացման վայրի կազմակերպման իրականացման իրավունք ձեռք բերած և առևտրի իրականացման վայրի աշխատանքը կազմակերպող, նույն օրենքով սահմանված պարտավորություններ կամ իրավունքներ ունեցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր (...):

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի իրականացման վայրի տեսակներն են՝ (...) գյուղատնտեսական արտադրանքի շուկաները (...):

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկայի կազմակերպիչը վաճառքի ընդունվող՝ փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով ապահովում է գյուղատնտեսական արտադրանքի շուկայում համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիա (...):

«Մսնդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է մսնդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, սննդի շղթայի և առևտրի ու հանրային սննդի ոլորտում ծառայությունների մատուցման փուլերում անվտանգությանն առնչվող հարաբերությունները, ինչպես նաև ամրագրում է պետության կողմից նախատեսվող մարդու առողջության պաշտպանության երաշխիքները սննդամթերքի և սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի վնասակար ու վտանգավոր ազդեցությունից:

«Մսնդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իրացվող կենդանական ծագման մթերքը, համաձայն «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ենթակա է պարտադիր փորձաքննության:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սննդամթերքի առևտուրը, ինչպես նաև հանրային սննդի ոլորտում մատուցվող ծառայությունները պետք է համապատասխանեն «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասում վարչական պատասխանատվություն է նախատեսել գյուղատնտեսական արտադրանքի շուկաները փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայով չապահովելու համար: Նշված վարչական իրավախախտումն ուղղված է սննդամթերքի առևտրի բնագավառում պետական կառավարման հիմքերի դեմ, իսկ դրա կատարման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է սահմանել տուգանքը՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասում ամրագրված իրավանորմի դիսպոզիցիայի բովանդակությունից հետևում է, որ նշված իրավադրույթով նախատեսված զանցակազմը բնորոշվում է, ի թիվս այնի, հետևյալ հատկանիշներով.

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասում նախատեսված զանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվում է անգործությամբ՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկայում փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայի առկայությունն ապահովելու պարտականությունը կատարելուց ձեռնպահ մնալով,

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասում նախատեսված զանցանքի սուբյեկտն այն տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձն է, որի վրա օրենքով դրված է գյուղատնտեսական արտադրանքի շուկայում փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայի առկայությունն ապահովելու պարտականությունը:

Փաստորեն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվությունը կարող է վրա հասնել միայն այն դեպքում, երբ գյուղատնտեսական արտադրանքի շուկան ապահովված չէ այնպիսի գյուղատնտեսական արտադրանքի որակը ստուգելու համար անհրաժեշտ լաբորատորիայով, որը պահանջում է փորձաքննություն: Այսինքն՝ քննարկվող վարչական պատասխանատվությունն առաջանում է այն դեպքում, երբ տվյալ գյուղատնտեսական արտադրանքի շուկայում բացակայում է համապատասխան սարքավորումներով հագեցված այն լաբորատորիան, որն անհրաժեշտ է ոչ թե ցանկացած տեսակի գյուղատնտեսական արտադրանքի, այլ միայն փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում առևտրի ոլորտի պետական կառավարման հիմքերը կարգավորվում են «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով, որն ուղղված է այդ ոլորտում իրականացվող գործունեության կանոնակարգմանը, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության ապահովմանը: Նշված օրենքի 2-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել է գյուղատնտեսական արտադրանքի շուկայի հասկացությունը, որը բնորոշվում է որպես կենդանական ծագում ունեցող մթերքի, բույսերի, բուսական արտադրանքի և սննդամթերքի առևտրի իրականացման վայր: Փաստորեն, գյուղատնտեսական արտադրանքի շուկան առևտրի իրականացման վայրի տեսակ է, որի աշխատանքը կազմակերպվում է առևտրի իրականացման վայրի կազմակերպման իրավունք ունեցող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գյուղատնտեսական արտադրանքի շուկայում փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայի առկայությունն ապահովելու պարտականությունը «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով դրված է գյուղատնտեսական արտադրանքի շուկայի՝ որպես առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ հանդիսացող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ վրա: Հետևաբար, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված վարչական իրավախախտման սուբյեկտն այն անհատ ձեռնարկատերն է կամ այն իրավաբանական անձի համապատասխան պաշտոնատար անձն է, որը հանդիսանում է տվյալ գյուղատնտեսական արտադրանքի շուկայի կազմակերպիչ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների համաձայն՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկայում իրականացվում է գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի առուվաճառք, իսկ գյուղատնտեսական արտադրանքն օրենսդրի տեսան-

կյունից իր մեջ ներառում է՝ (1) կենդանական ծագում ունեցող մթերքը, (2) բույսերը և (3) բուսական արտադրանքը: Գյուղատնտեսական արտադրանքի շուկայում առևտուր իրականացնելիս գյուղատնտեսական արտադրանքի թվարկված տեսակների՝ պարտադիր փորձաքննության ենթակա լինելու կամ չլինելու հարցը պարզելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «Մանդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքին, որը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում կարգավորում է առևտրի ոլորտում սննդամթերքի անվտանգությանն առնչվող հարաբերությունները և ամրագրում է պետության կողմից նախատեսվող մարդու առողջության պաշտպանության երաշխիքները սննդամթերքի վնասակար ու վտանգավոր ազդեցությունից: Այսպես, նշված օրենսդրական ակտի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում իրացվող գյուղատնտեսական արտադրանքի տեսակներից պարտադիր փորձաքննության ենթակա է միայն (1) կենդանական ծագման մթերքը, իսկ գյուղատնտեսական արտադրանքի մյուս տեսակների՝ (2) բույսերի և (3) բուսական արտադրանքի համար օրենսդիրը նման պահանջ չի սահմանել: Փաստորեն, «Մանդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքը գյուղատնտեսական արտադրանքի շուկայում բուսական ծագման սննդամթերքի՝ (2) բույսերի և (3) բուսական արտադրանքի որակի ստուգման համար համապատասխան սարքավորումներով հագեցած լաբորատորիայի առկայության պահանջ չի նախատեսում:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ գյուղատնտեսական արտադրանքի շուկայի՝ որպես առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ հանդիսացող անհատ ձեռնարկատերը կամ նույն առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ հանդիսացող իրավաբանական անձի համապատասխան պաշտոնատար անձը չի կարող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով ենթարկվել վարչական պատասխանատվության տվյալ գյուղատնտեսական արտադրանքի շուկան (2) բույսերի և (3) բուսական արտադրանքի (բուսական ծագման սննդամթերքի) որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայով չապահովելու համար, քանի որ առևտրի ոլորտում գյուղատնտեսական արտադրանքի նշված տեսակների համար պարտադիր փորձաքննության պահանջ օրենսդրությամբ նախատեսված չէ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը հանդիսանում է գյուղատնտեսական արտադրանքի շուկայի՝ որպես առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ Վանաձոր քաղաքում: Ծառայության տեսուչների կողմից Ընկերությունում 01.12.2014 թվականից մինչև 09.12.2014 թվականն իրականացված ստուգման արդյունքում արձանագրվել են սննդամթերքի անվտանգության բնագավառում թույլ տրված որոշ խախտումներ, որոնց համար սույն գործով վիճարկվող վարչական ակտով՝ Ծառայության «Վարչական տուգանք նշանակելու մասին» 23.01.2015 թվականի թիվ 44 որոշմամբ, Ընկերության տնօրեն Գևորգ Շահինյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության: Այսպես, Ծառայության «Վարչական տուգանք նշանակելու մասին» 23.01.2015 թվականի թիվ 44 որոշմամբ Ընկերության տնօրեն Գևորգ Շահինյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել հետևյալ երկու առանձին իրավախախտումների կատարման համար.

1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասով՝ այն բանի համար, որ Ընկերության վաճառատեխնոլոգիական գույքի, սառնարանների և չափման միջոցների տեսակը հաստատված և ստուգաչափված չէ,

2) նույն օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով՝ այն բանի համար, որ առևտրի իրականացման վայրում Ընկերության կողմից չի ապահովվում վաճառքի ընդունվող բուսական ծագման սննդամթերքի որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցած լաբորատորիա, ուստի բուսական ծագման սննդամթերքը չի ենթարկվում բուսասանիտարական ստուգման:

Ընդ որում, վիճարկվող վարչական ակտով Գևորգ Շահինյանի նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 60.000 ՀՀ դրամի չափով, առավել լուրջ խախտման, այն է՝ Վարչական

իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված զանցանքի համար սահմանված սանկցիայի (նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով տուգանք) շրջանակներում, քանի որ նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ (...) եթե անձը կատարել է մի քանի վարչական իրավախախտումներ, որոնց վերաբերյալ գործերը միաժամանակ քննվում են նույն մարմնի (...) կողմից, տույժը նշանակվում է առավել լուրջ խախտման համար սահմանված սանկցիայի շրջանակներում (...):

Դատարանը մերժել է Ծառայության «Վարչական տուգանք նշանակելու մասին» 23.01.2015 թվականի թիվ 44 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին Գևորգ Շահինյանի հայցը՝ պատճառաբանելով, որ Ընկերությունը՝ որպես առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ, պարտավոր էր ապահովել փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման լաբորատորիայի առկայությունը, որպիսի պարտականությունը չկատարելու պայմաններում Ընկերության տնօրեն Գևորգ Շահինյանը ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով:

Վերաքննիչ դատարանը մերժել է Գևորգ Շահինյանի վերաքննիչ բողոքը, և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ ըստ էության հիմնավոր համարելով Դատարանի վերոգրյալ պատճառաբանությունը:

Վերնջյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը նախևառաջ ընդգծում է, որ թեև Ծառայության «Վարչական տուգանք նշանակելու մասին» 23.01.2015 թվականի թիվ 44 որոշմամբ Գևորգ Շահինյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել երկու առանձին զանցանքների կատարման համար, սակայն սույն գործով վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը պայմանավորված է այդ զանցանքներից միայն մեկի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված արարքի համար պատասխանատվության կիրառման իրավաչափությամբ: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն փաստական իրողությունը, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով Գևորգ Շահինյանի նկատմամբ կիրառված տուգանքը նշանակվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 35-րդ հոդվածին համապատասխան՝ առավել լուրջ խախտման, այն է՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված զանցանքի համար սահմանված սանկցիայի շրջանակներում: Հետևաբար սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունի այն հարցը, թե Գևորգ Շահինյանն իրավաչափորեն է արդյոք ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվության, թե՛ ոչ:

Անդրադառնալով սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոգրյալ հարցին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ծառայության «Վարչական տուգանք նշանակելու մասին» 23.01.2015 թվականի թիվ 44 որոշմամբ Ընկերության տնօրեն Գևորգ Շահինյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով վարչական պատասխանատվության է ենթարկվել այն քանի համար, որ առևտրի իրականացման վայրում Ընկերության կողմից չի ապահովվում վաճառքի ընդունվող բուսական ծագման սննդամթերքի որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցած լաբորատորիա, ուստի բուսական ծագման սննդամթերքը չի ենթարկվում բուսասանիտարական ստուգման:

Մինչդեռ սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվությունն առաջանում է այն դեպքում, երբ տվյալ գյուղատնտեսական արտադրանքի շուկայում

բացակայում է համապատասխան սարքավորումներով հագեցված այն լաբորատորիան, որն անհրաժեշտ է ոչ թե ցանկացած տեսակի գյուղատնտեսական արտադրանքի, այլ միայն փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման համար: Իսկ Հայաստանի Հանրապետությունում իրացվող գյուղատնտեսական արտադրանքի տեսակներից բույսերը և բուսական արտադրանքը, «Մնդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի համաձայն, պարտադիր փորձաքննության ենթակա չեն:

Հետևաբար գյուղատնտեսական արտադրանքի շուկայի՝ որպես առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ հանդիսացող Ընկերության համապատասխան պաշտոնատար անձը՝ տնօրեն Գևորգ Շահինյանը, չի կարող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասով ենթարկվել վարչական պատասխանատվության տվյալ գյուղատնտեսական արտադրանքի շուկան բույսերի և բուսական արտադրանքի (բուսական ծագման սննդամթերքի) որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայով չապահովելու համար, քանի որ առևտրի ոլորտում գյուղատնտեսական արտադրանքի նշված տեսակների համար պարտադիր փորձաքննության պահանջ օրենսդրությամբ նախատեսված չէ:

Անփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Ծառայության «Վարչական տուգանք նշանակելու մասին» 23.01.2015 թվականի թիվ 44 որոշումն ընդունվել է օրենքի, մասնավորապես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 11-րդ մասի, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի և «Մնդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի, խախտման հետևանքով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ենթակա էր անվավեր ճանաչման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության «Վարչական տուգանք նշանակելու մասին» 23.01.2015 թվականի թիվ 44 որոշման անվավերությունն ինքնին հիմք է հանդիսանում նաև այդ վարչական ակտի բողոքարկման արդյունքում ընդունված միջամտող վարչական ակտերը՝ Ծառայության «Վարչական բողոքը մերժելու մասին» 20.04.2015 թվականի թիվ 2 որոշումը և ՀՀ գյուղատնտեսության նախարարի «Վարչական բողոքը մերժելու մասին» 22.06.2015 թվականի թիվ ՎՎ-002 որոշումը, անվավեր ճանաչելու համար, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե մինչև վարչական հայց ներկայացնելը միջամտող վարչական ակտը բողոքարկվել է վարչական կարգով, ապա հայցը ներառում է նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ:

*Վերը նշված պարձառաքանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի համաձայն՝ դատարաններում վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ (...) վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ գանգատներով (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝ եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Հաշվի առնելով, որ տվյալ դեպքում Գևորգ Շահինյանն ազատված է պետական տուրքի վճարումից, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցադիմումի, վերաքննիչ բողոքի և վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի վճարման պարտականությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է կատարման Ծառայության կողմից: Հետևաբար Ծառայությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված պետական տուրքի գումար:

Մինևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Գևորգ Շահինյանը հայցադիմումի համար վճարել է պետական տուրք՝ 12.000 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 34**), մինչդեռ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի հիմքով նա ազատված է պետական տուրքի վճարումից: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Գևորգ Շահինյանի կողմից հայցադիմումի համար վճարված պետական տուրքի գումարը՝ 12.000 ՀՀ դրամի չափով, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ենթակա է վերադարձման այն վճարած անձին:



Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.05.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել: ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության «Վարչական տուգանք նշանակելու մասին» 23.01.2015 թվականի թիվ 44 որոշումը, «Վարչական բողոքը մերժելու մասին» 20.04.2015 թվականի թիվ 2 որոշումը և ՀՀ գյուղատնտեսության նախարարի «Վարչական բողոքը մերժելու մասին» 22.06.2015 թվականի թիվ ՎՎ-002 որոշումը ճանաչել անվավեր:

2. ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի գումար:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:

Գևորգ Շահինյանի կողմից հայցադիմումի համար վճարված պետական տուրքի հարցը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
վարչական գործ թիվ ՎԴ/4546/05/14  
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան  
Դատավորներ՝ Հ. Բեդեյան  
Ա. Առաքելյան

վարչական գործ թիվ **ՎԴ/4546/05/14**  
**2017թ.**

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՐՆԻՎԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՑԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Անդրանիկ Զաքարյանի ներկայացուցիչ Ռու-  
բեն Այվազյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.05.2016  
թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Անդրանիկ Զաքարյանի ընդդեմ Երևանի քաղաքա-  
պետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան)՝ «վարչական տույժ նշանակելու մասին»  
13.08.2014 թվականի թիվ Վ-34/3 որոշումը վերացնելու (անվավեր ճանաչելու) պահանջի  
մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### **1. Գործի դատավարական նախապարմությունը.**

Դիմելով դատարան՝ Անդրանիկ Զաքարյանը պահանջել է վերացնել (անվավեր ճա-  
նաչել) Քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության  
վարչության պետի «վարչական տույժ նշանակելու մասին» 13.08.2014 թվականի թիվ  
Վ-34/3 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան)  
08.09.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան)  
03.05.2016 թվականի որոշմամբ Անդրանիկ Զաքարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և  
Դատարանի 08.09.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անդրանիկ Զաքարյանի ներկայացու-  
ցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէր հերքել և փաստարկներով.*

Ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ վարչական մարմնի կողմից վարչական վարույթ իրականացնելիս անտեսվել են այն փաստերը, որ մետաղյա դարպասը և պարիսպը կառուցվել են 1989 թվականին Էմիլ Զաքարյանի կողմից, և վերջինս է կատարել ենթադրյալ «հողագավթումը», ինչն ապացուցվում է նաև ներկայացված լուսանկարներով: Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ օրենսդրի կողմից սահմանված իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայություն՝ պետական կամ համայնքային հողի ինքնակամ զավթում և դրա հետևանքները չվերացնելը: Մինչդեռ վարչական վարույթի գործում առկա ապացույցներով հերքվում է Անդրանիկ Զաքարյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողը զավթելու փաստը:

Բացի այդ, վարչական մարմինը չի ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, հնարավորություն չի ընձեռել վարչական վարույթի մասնակիցներին արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ, ինչն էլ անտեսվել է ստորադաս ատյանների կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.05.2016 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայրը բավարարել:

## 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 29.12.2011 թվականի թիվ 2846281 վկայականի համաձայն՝ Երևանի Նորքի 7-րդ փողոցի թիվ 92 տան և նույն հասցեում գտնվող 0,025456հա և 0,018305հա մակերեսներով հողամասերի ընդհանուր և բաժանյին սեփականության իրավունքով սեփականատեր է Անդրանիկ Զաքարյանը (**հատոր 1-ին, գ.թ. 26-27**):

2) Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատակցի կողմից 01.08.2014 թվականին կազմված թիվ 015676 արձանագրության համաձայն՝ Երևանի Նորքի 7-րդ փողոցի թիվ 92 հասցեի սեփականատեր Անդրանիկ Զաքարյանը վերոնշյալ հասցեին կից իրականացրել է 170քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի զավթում, որը փաստացի սահմանազատվել է մետաղյա դարպասի և քարե պարսպի միջոցով: Անդրանիկ Զաքարյանի ներկայացուցիչն առարկել է՝ նշելով, որ այդ պարիսպը և դարպասը կառուցել է Էմիլ Զաքարյանը 1989 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 23**):

3) Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատակցի կողմից 01.08.2014 թվականին կազմված թիվ 015676 արձանագրության հիման վրա Քաղաքապետարանի հարուցած վարչական վարույթի քննության արդյունքում 13.08.2014 թվականին կայացված թիվ Վ-34/3 որոշմամբ Անդրանիկ Զաքարյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով. նրան առաջադրվել է տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով՝ Երևանի Նորքի 7-րդ փողոցի թիվ 92 հասցեի դիմաց գտնվող՝ Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը զավթելու՝ փաստացի մետաղական դարպասի և քարե պարիսպի միջոցով սահմանազատելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 21-22**):

#### 4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ սույն գործով վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի տարրերի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցին. արդյո՞ք անձին սեփականության իրավունքով պատկանող փարածքին կից՝ համայնքին պատկանող հողամասի վրա կառուցված քարե պարսպի և մեքարայա դարպասի առկայության փաստն ինքնին բավարար է եզրահանգելու համար, որ դրանք կառուցվել են ԿՎԿՎ անձի կողմից, և հիմք է վերջինիս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկելու համար:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, (...) քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնական գավթելը և դրա հետևանքները չվերացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տարածքային կառավարման մարմինները քննում են նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով (...): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները քննում են նույն օրենսգրքի (...) 48-րդ հոդվածով՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով (...) նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ (...) եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 245-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն են, ի թիվս այլնի, նաև յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործը օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվում է՝ դրա կազմելու ամսաթիվն ու տեղը, արձանագրությունը կազմող անձի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը. տեղեկություններ խախտողի անձի մասին. վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը. այն նորմատիվ ակտը, որը պատասխանատվություն է նախատեսում տվյալ իրավախախտման համար. վկաների և տուժողների ազգանունները և հասցեները, եթե այդպիսիք կան. խախտողի բացատրությունը. գործի լուծման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտում. արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ապացուցման բեռը կրում է վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ հետագայում ընդունվել է դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերող՝ նրանց համար ավելի բարենպաստ օրենք, և եթե դա նախատեսված է այդ օրենքով:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական իրավախախտումը հակաիրավական, մեղավոր այնպիսի գործողություն կամ անգործություն է, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն, իսկ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածով վարչական պատասխանատվություն է նախատեսել պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու համար: Ընդ որում, այդ իրավանորմի կառուցվածքային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանով սահմանված զանցակազմն ունի հետևյալ դրսևորումները.

1) պետական սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելը և դրա հետևանքները չվերացնելը,

2) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելը և դրա հետևանքները չվերացնելը:

Ըստ այդմ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219-րդ հոդվածը, *inter alia*, սահմանում է նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի հիման վրա վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը քննելու տարածքային ենթակայության կանոնները, որոնց վերլուծությունից բխում է, որ պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու կապակցությամբ վարչական վարույթ իրականացնելու լիազորությունը պատկանում է տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմիններին՝ յուրաքանչյուրին իր տնօրինության ներքո գտնվող հողերի մասով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված իրավանորմով սահմանված զանցանքի ոտնձգության օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք ոտնահարվում են իրավախախտի կողմից, այն է՝ պետությանը և համայնքին պատկանող հողամասերի սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված հասարակական

հարաբերությունները: Ընդ որում, այդ զանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր տարրերն են հետևյալ արարքները.

- պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ գավթելը և

- պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ գավթելու հետևանքները չվերացնելը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածը մեկնաբանելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված այն կանոնի լույսի ներքո, ըստ որի՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խնդրո առարկա իրավանորմով նախատեսված պատասխանատվության առաջացման համար անհրաժեշտ է զանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող վերոգրյալ երկու արարքների միաժամանակյա առկայությունը, քանի որ պատասխանատվություն նախատեսող նորմի կիրառումը պայմանավորված է «և» շաղկապով բաժանված պայմաններով:

Անդրադառնալով խնդրո առարկա զանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր տարր հանդիսացող պայմաններից առաջինին, այն է՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ գավթելուն, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն բաղկացած է միմյանց հետ փոխկապակցված երկու պայմանից.

- պետք է կատարված լինի պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի գավթում,

- հողամասի գավթումը պետք է լինի ինքնակամ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ գավթումը դրսևորվում է որոշակի գործողություններ կատարելով, որոնք մատնանշում և հաստատում են անձի կողմից հողամասի փաստացի սահմանազատումը և տիրապետումը: Այլ կերպ՝ գավթումն առկա է, երբ անձը պետությանը կամ համայնքին պատկանող հողամասը որևէ կերպ առանձնացրել է (օրինակ՝ պարսպապատել կամ ցանկապատել է) և պահում է իր տիրապետության ներքո: Հետևաբար գավթումը կարող է դրսևորվել միայն գործողությամբ, իսկ անգործությամբ գավթում չի կարող իրականացվել: Ընդ որում, օրենքն արգելում է միայն ինքնակամ գավթումը, այսինքն՝ պատասխանատվություն առաջացնելու համար պետք է բացակայի պետությանը կամ համայնքին պատկանող հողամասն անձի սեփականությանը, տիրապետմանը կամ օգտագործմանն օրենքով նախատեսված որևէ հիմքով անցնելու փաստը:

Անդրադառնալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող երկրորդ պարտադիր տարրին՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ գավթելու հետևանքները չվերացնելուն, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պատասխանատվության առաջացման համար միայն հողամասի ինքնակամ գավթումը բավարար չէ, այլ անհրաժեշտ է, որ անձը վարչական պատասխանատվության ենթարկվելու պահի դրությամբ վերացրած չլինի հողամասը գավթելու հետևանքները, այսինքն՝ դադարեցրած չլինի դրա սահմանազատումն ու տիրապետումը: Հետևաբար, եթե անձը պետությանը կամ համայնքին պատկանող հողամասի ինքնակամ գավթում իրականացնելուց հետո մինչև պատասխանատվության ենթարկվելը, կվերացնի դրա հետևանքները (օրինակ՝ կքանդի կառուցած պարիսպը կամ ցանկապատը), ապա չի կարող ենթարկվել նշված իրավանորմով նախատեսված վարչական պատասխանատվության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ խնդրո առարկա իրավախախտման սուբյեկտը հակաիրավական, մեղավոր արարքը կատարած անձն է, սովյալ դեպքում՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ գավթած և դրա հետևանքները չվերացրած անձը: Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավախախտման համար վարչական պատասխանատվության ենթա-

րկվում է զանցակազմի օբյեկտիվ կողմն իրականացրած անձը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման համար վարչական պատասխանատվություն առաջանալու համար անհրաժեշտ է, որ զանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող երկու արարքներն էլ կատարվեն մինևույն սուբյեկտի կողմից, այսինքն՝ նույն անձը պետք է ինքնակամ զավթի պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և պատասխանատվության ենթարկվելու պահի դրությամբ վերացրած չլինի դրա հետևանքները:

Ինչ վերաբերում է զանցակազմի սուբյեկտիվ կողմին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն իրավախախտի հոգեբանական վերաբերմունքն է հակաիրավական արարքի և դրա հետևանքների նկատմամբ, որը, որպես ընդհանուր կանոն, կարող է արտահայտվել մեղքի երկու ձևով էլ, ինչպես դիտավորության, այնպես էլ անզուշտության: Վարչական իրավախախտման փաստակազմից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է հենց իրավախախտման փաստի բացակայությանը:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը հողօգտագործման բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները. օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հողօգտագործման բնագավառում քաղաքապետն իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունը. կազմակերպում է ապօրինի հողօգտագործման կասեցման և վերացման ուղղությամբ վարչական շրջանի ղեկավարների կողմից կատարվող աշխատանքները, իսկ նույն օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վարչական շրջանի ղեկավարը հողօգտագործման բնագավառում իրականացնում է հետևյալ լիազորությունները. օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ օրենսդիրը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողատարածքների ապօրինի հողօգտագործումը կասեցնելու և վերացնելու լիազորությունը վերապահել է տվյալ համայնքի ղեկավարին, իսկ Երևան քաղաքում՝ համապատասխան վարչական շրջանի ղեկավարին: Ընդ որում, Երևան քաղաքում ապօրինի հողօգտագործման կասեցման և վերացման ուղղությամբ վարչական շրջանի ղեկավարների կողմից կատարվող աշխատանքները կազմակերպվում են Երևանի քաղաքապետի կողմից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համայնքի ղեկավարը (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարը), իրացնելով համայնքի վարչական սահմաններում ապօրինի հողօգտագործումը կասեցնելու և վերացնելու՝ օրենսդրի կողմից իրեն վերապահված լիազորությունը, կարող է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ տիրապետող անձին նախագգուշացնել իր կողմից թույլ տրվող ապօրինի հողօգտագործման մասին և առաջարկել վերջինիս՝ վերացնել տվյալ հողամասի ինքնակամ գավթման հետևանքները: Նման պայմաններում համայնքի վարչական սահմաններում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող գավթված հողամասն ինքնակամ տիրապետող անձի կողմից տվյալ հողամասի ինքնակամ գավթման հետևանքները չվերացնելու դեպքում վերջինս ենթակա կլինի պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի

1-ին մասով նախատեսված իրավախախտման համար՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ հողամասի ինքնակամ զավթումն ի սկզբանե կատարվել է համայնքի ղեկավարի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարի) նախագգուշացման պահին այն փաստացի տիրապետող անձի, թե այլ անձի կողմից:

Ընդհանրացնելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումն առկա է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) տեղի է ունեցել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի զավթում՝ պետությանը կամ համայնքին պատկանող հողամասը որևէ անձի կողմից առանձնացվել է և գտնվում է նրա տիրապետության ներքո,

2) հողամասի զավթումն ինքնակամ է՝ առկա չէ դրա տիրապետման օրինական հիմք,

3) պատասխանատվության ենթարկելու պահի դրությամբ ինքնակամ զավթում իրականացրած անձը չի վերացրել դրա հետևանքները,

4) ինքնակամ զավթումն իրականացրել է և դրա հետևանքները չի վերացրել միևնույն սուբյեկտը,

5) վերոնշյալ արարքները կատարելիս անձը գործել է մեղավորությամբ:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համայնքի վարչական սահմաններում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը փաստացի ապօրինի տիրապետող անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման կատարման համար նաև հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) համայնքի վարչական սահմաններում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը փաստացի ապօրինի տիրապետող անձը համայնքի ղեկավարի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարի) կողմից նախագգուշացվել է տվյալ հողամասի ինքնակամ զավթման հետևանքները վերացնելու անհրաժեշտության մասին,

2) համայնքի վարչական սահմաններում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը փաստացի ապօրինի տիրապետող անձն այդ նախագգուշացումից հետո չի վերացրել տվյալ հողամասի ինքնակամ զավթման հետևանքները՝ անկախ այն հանգամանքից, որ ի սկզբանե ինքնակամ զավթումն իրականացրած անձը և հողամասը փաստացի տիրապետող և իրավասու մարմնի առաջարկով դրա հետևանքները չվերացրած անձը տարբերվում են միմյանցից:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի իրավակարգավորման առանձնահատկություններին, արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հստակ սահմանել է այդ վարույթի խնդիրները: Դրանցից են յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը:

Միաժամանակ ՀՀ Վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտումը, և արդյոք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործով ձեռք բերված ապացույցները՝ ղեկավարվելով օրենքով (*տես, Սուրեն Միմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4842/05/12 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):



Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործով ապացուցման բեռի բաշխման առանձնահատկություններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելու հայցապահանջի (վիճարկման հայց) հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում այդ վարչական ակտի համար հիմք ծառայած փաստերի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Ընդ որում, վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի, որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Հետևաբար միջամտող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված բոլոր ապացույցների հետազոտումից հետո տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու դեպքում վարչական դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված) (*տես, Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2846281 վկայականում որպես Երևանի Նորքի 7-րդ փողոցի թիվ 92 տան և նույն հասցեում գտնվող 0,025456հա և 0,018305հա մակերեսներով հողամասերի նկատմամբ ընդհանուր և բաժնային սեփականության իրավունքով սեփականատեր է նշված Անդրանիկ Զաքարյանը: Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության համապատասխան բաժնի պաշտոնատար անձի կողմից 01.08.2014 թվականին կազմվել է թիվ 015676 արձանագրությունը, որի համաձայն՝ Երևան համայնքի սեփականության ներքո գտնվող հողամասը զավթվել է Երևանի Նորքի 7-րդ փողոցի թիվ 92 հասցեի գույքի սեփականատեր Անդրանիկ Զաքարյանի կողմից: Ըստ նշված արձանագրության՝ Անդրանիկ Զաքարյանի ներկայացուցիչն առարկել է՝ նշելով, որ այդ պարիսպը և դարպասը կառուցել է Էմիլ Զաքարյանը 1989 թվականին: Այդ արձանագրության հիման վրա վարչական մարմնի՝ Քաղաքապետարանի հարուցած վարչական վարույթի իրականացման արդյունքում Անդրանիկ Զաքարյանը վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, 13.08.2014 թվականի թիվ Վ-34/3 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ Երևանի Նորքի 7-րդ փողոցի թիվ 92 հասցեի դիմաց գտնվող՝ Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը զավթելու՝ փաստացի մետաղական դարպասի և քարե պարսպի միջոցով սահմանազատելու համար:

Դատարանն Անդրանիկ Զաքարյանի հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի թույլ տրված իրավախախտման մեջ հայցվորի մեղավորության հարցի պարզաբանումը և փաստելով, որ զավթված հողամասը գտնվում է սեփականության իրավունքով հայցվորին պատկանող հողամասին կից և նրա տիրապետման ներքո՝ գտել է, որ իրավախախտումն իրավաչափորեն է վերագրվել հայցվորին: Ավելին՝ վարչական վարույթի նյութերում առկա՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 29.12.2011 թվականի թիվ 2846281 վկայականի հետազոտմամբ Դատարանը փաստել է, որ 29.12.2011 թվականի դրությամբ դրանում պատկերված հողամասի հատակագիծը եզրագծված է բացառապես հայցվորին փոխանցված օրինական հողամասի սահմաններում: Իսկ ինքնակամ զբաղեցված ու հայցվորին փոխանցված որևէ հողամասի գծապատկեր արտատպված չէ, հետևաբար հիմնավոր չի համարել հողամասն այլ անձի կողմից դեռևս 1989 թվականին զավթված լինելու մասին հայցվոր կողմի փաստարկը: Վերոգրյալի հիման վրա Դատարանը եզրահանգել է, որ գործի քննությամբ ձեռք բերված որևէ պատշաճ ապացույցով չի հիմնավորվել հողագավթումն այլ անձի կողմից կատարված լինելու հայցվորի փաստարկն այն պայմաններում, երբ հայցվորը կրել է այդ փաստն ապացուցելու բեռը:

Վերաքննիչ դատարանը, Անդրանիկ Ջաքարյանի վերաքննիչ բողոքը մերժելով, ըստ էության, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները:

Մինչևեռ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումները՝ ՎՃճաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկելու իրավաչափությունը ստուգելիս Դատարանը, հիմնվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ և 124-րդ հոդվածների վրա պետք է պարզեր, թե արդյոք վարչական վարույթն իրականացրած վարչական մարմինը՝ տվյալ դեպքում Քաղաքապետարանը, վարչական վարույթ իրականացնելու ընթացքում ձեռք է բերել բավարար ապացույցներ հետևյալի մասին.

1) առկա է Քաղաքապետարանի տնօրինության ներքո գտնվող հողամասի ինքնակամ գավթման և դրա հետևանքները չվերացնելու փաստ, որը թույլ է տալիս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով հարուցել և իրականացնել վարչական վարույթ,

2) զանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող արարքները կատարվել են միևնույն անձի կողմից՝ մեղավորությամբ, կամ այդ արարքները կատարվել են տարբեր անձանց կողմից, սակայն իրավասու մարմնի նախագուշացումից հետո հողամասն ապօրինի տիրապետող անձը չի վերացրել տվյալ հողամասի ինքնակամ գավթման հետևանքները:

Այսինքն՝ սույն գործով Քաղաքապետարանն է կրում միջամտող վարչական ակտն ընդունելու համար հիմք ծառայած փաստերի ապացուցման բեռը: Մասնավորապես՝ Քաղաքապետարանը պարտավոր էր պարզել վարչական գործի փաստական հանգամանքները, այդ թվում՝ իրավախախտման օբյեկտիվ կողմը կազմող արարքներն Անդրանիկ Ջաքարյանի կողմից կատարված լինելու փաստը, մինչդեռ սույն վարչական գործում առկա՝ Քաղաքապետարանի կողմից 01.08.2014 թվականին կազմված թիվ 015676 արձանագրությունից հետևում է, որ վարչական մարմնի համապատասխան աշխատակիցը նշել է միայն, որ Երևանի Նորքի 7-րդ փողոցի թիվ 92 հասցեի սեփականատեր Անդրանիկ Ջաքարյանը վերոնշյալ հասցեին կից իրականացրել է 170քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի գավթում, որը փաստացի սահմանազատվել է մետաղյա դարպասի և քարե պարսպի միջոցով, սակայն վարչական վարույթի ընթացքում այդպես էլ չի պարզվել Երևանի Նորքի 7-րդ փողոցի թիվ 92 հասցեի սեփականատեր Անդրանիկ Ջաքարյանի կողմից մետաղյա դարպասի և քարե պարսպի կառուցման փաստը, որպիսի հանգամանքն անտեսվել է ստորադաս ատյանների կողմից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գավթված հողամասն Անդրանիկ Ջաքարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից և նրա տիրապետության ներքո գտնվելու հանգամանքը կարող է փաստել միայն վերջինիս կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր տարր համարվող արարքներից միայն երկրորդի՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը գավթելու հետևանքները չվերացնելու մասին, և բավարար չէ եզրահանգելու, որ հողամասի գավթումը ևս իրականացրել է Անդրանիկ Ջաքարյանը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի կատարած իրավական վերլուծություններից բխում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկելու համար Քաղաքապետարանը պետք է ապացուցեր զանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող երկու արարքներն էլ Անդրանիկ Ջաքարյանի կողմից կատարված լինելը, որը չի ապացուցվել:

Ավելին՝ այն հանգամանքը, որ վարչական վարույթի նյութերում առկա՝ Երևանի Նորքի 7-րդ փողոցի թիվ 92 հասցեի նկատմամբ հայցվորի անվամբ իրականացված սեփականության իրավունքի գրանցման մասին թիվ 2846281 վկայականի լուսապատճենում պատկերված հողամասի հատակագիծը եզրագծված է բացառապես հայցվորին փոխանցված օրինական հողամասի սահմաններում, իսկ ինքնակամ գբաղեցված ու հայցվո-

րին փոխանցված որևէ հողամասի գծապատկեր արտատպված չէ, բավարար չէ եզրահանգելու, որ հողամասի զավթումն իրականացրել է Անդրանիկ Զաքարյանը: Այսինքն՝ վարչական վարույթի ընթացքում այդպես էլ չի պարզվել Երևանի Նորքի 7-րդ փողոցի թիվ 92 հասցեի սեփականատեր Անդրանիկ Զաքարյանի կողմից հողամասն ինքնակամ զավթելու փաստը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Անդրանիկ Զաքարյանը՝ որպես Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող հողամասն առերևույթ ապօրինի տիրապետող անձ, իրավասու մարմնի (համապատասխան վարչական շրջանի ղեկավարի) կողմից նախագգուշացվել է տվյալ հողամասի ինքնակամ զավթման հետևանքները վերացնելու անհրաժեշտության մասին և այդ նախագգուշացումից հետո չի վերացրել տվյալ հողամասի ինքնակամ զավթման հետևանքները:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում բացակայել են Անդրանիկ Զաքարյանին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքերը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով: Տվյալ դեպքում վիճարկվող վարչական ակտն ընդունվել էր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի սխալ կիրառման հետևանքով և ենթակա էր անվավեր ճանաչման, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության անհրաժեշտության աստիճանից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ գանգատներով:

Հաշվի առնելով, որ հայցվորն ազատված է պետական տուրքի վճարումից, իսկ վճարել բողոքը ենթակա է բավարարման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցադիմումի, վերաքննիչ բողոքի և վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի վճարման պարտականությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի ուժով պետք է կրի Քաղաքապետարանը, հետևաբար վերջինից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.05.2016 թվականի որոշումը և այն փոփոխել. հայցը բավարարել՝ անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի «Վարչական տույժ նշանակելու մասին» 13.08.2014 թվականի թիվ Վ-34/3 որոշումը:

2. Երևանի քաղաքապետարանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու համար սահմանված և վճարման ենթակա պետական տուրքի գումար:

Երևանի քաղաքապետարանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և վճարման ենթակա պետական տուրքի գումար:

Երևանի քաղաքապետարանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և վճարման ենթակա պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազորություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազորություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ5/0137/05/15  
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան  
Դատավորներ՝ Բ. Մկոյան  
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ5/0137/05/15**  
**2017թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Գյումրու քաղաքապետարանի (այսուհետ՝  
Քաղաքապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.11.2016  
թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արտյոմ Խոջոյանի ընդդեմ Քաղաքապետարանի՝  
վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐՁԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Արտյոմ Խոջոյանը պահանջել է անվավեր ճանաչել Գյումրի  
համայնքի ղեկավարի տեղակալի 23.09.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու  
մասին» թիվ Վ/Տ413Ռ/Ս-Ա որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Էդ. Նահապետյան) (այսուհետ՝ Դատարան)  
18.03.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 29.11.2016  
թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի  
18.03.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմ-  
նավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասը, 27-րդ և 124-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել ու գնահատել սույն գործով ձեռք բերված ապացույցները, մասնավորապես՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» 23.07.2015 թվականի և 31.08.2015 թվականի արձանագրությունները և շինարարական աշխատանքների լուսանկարները: Մինչդեռ այդ ապացույցները վկայում են այն մասին, որ Արտյոմ Խոջոյանը Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 04.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/S411Ռ/Ս-Ա որոշմամբ տուգանքի նշանակումից հետո շարունակել է իրականացնել ինքնակամ շինարարական աշխատանքներ և ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.11.2016 թվականի որոշումը:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 23.12.2008 թվականի թիվ 2629838 վկայականի համաձայն՝ Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 137/6 հասցեում գտնվող հասարակական նշանակության շինությունը սեփականության իրավունքով պատկանում է «Պինգվին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) **(հատոր 1-ին, գ.թ. 71-76):**

2. Գյումրի համայնքի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի կողմից 23.07.2015 թվականին կազմված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ Ընկերությունը՝ ի դեմս Արտյոմ Խոջոյանի, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ իրականացրել է ինքնակամ շինարարական աշխատանքներ (շինարարական աշխատանքների կատարումը լուսանկարվել է), ինչը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով **(հատոր 1-ին, գ.թ. 64):**

3. Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 04.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/S411Ռ/Ս-Ա որոշմամբ Ընկերության տնօրեն Արտյոմ Խոջոյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով, և վերջինիս նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինս, չունենալով շինարարական թույլտվություն, Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 137/6 հասցեում իրականացրել է ինքնակամ շինարարական աշխատանքներ **(հատոր 1-ին, գ.թ. 59-60):**

4. Գյումրի համայնքի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի կողմից 31.08.2015 թվականին կազմված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ Ընկերության տնօրեն Արտյոմ Խոջոյանը Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 04.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/S411Ռ/Ս-Ա որոշմամբ վերջինիս նկատմամբ տուգանքի նշանակումից հետո Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 137/6 հասցեում շարունակել է կատարել ինքնակամ շինարարական աշխատանքներ (շինարարական աշխատանքների կատարումը լուսանկարվել է), ինչը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով: Նշված արձանագրության մեջ Արտյոմ Խոջոյանը նշում է կատարել այն մասին, որ «(...) արտաքին աշխատանքներն ավարտված են, կատարվում են ներքին հարդարման աշխատանքներ և բարեկարգում (...)» **(հատոր 1-ին, գ.թ. 11):**

5. Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 23.09.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/S413ՈՒ/Ս-Ա որոշմամբ Ընկերության տնօրեն Արտյոմ Խոջոյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, և վերջինիս նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 2.500.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 04.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/S411ՈՒ/Ս-Ա որոշմամբ տուգանքի նշանակումից հետո Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 137/6 հասցեում Արտյոմ Խոջոյանը շարունակել է իրականացնել ինքնակամ շինարարական աշխատանքներ, մասնավորապես՝ տեղադրել է ապակեպատ մուտքի դռներ, իրականացրել պատերի շաղախալցման, ցեմենտ-բետոնյա շաղախով հատակի հարթեցման, ֆասադի երեսպատման աշխատանքներ **(հատոր 1-ին, գ.թ. 12-13):**

**4. Վճռաբեկ դատարանի պայրձառաքանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սույն դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը շարունակելու համար վարչական պատասխանատվության կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ, 27-րդ և 124-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաքանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք անձը ենթակա է վարչական պարտախանսարվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, եթե ինքնակամ շինարարական աշխատանքների համար առաջին անգամ վարչական պարտախանսարվության ենթարկվելուց հետո շարունակել է կատարել այնպիսի շինարարական աշխատանքներ, որոնք նպարակառողիված են ինքնակամ շինությունն ավարտին հասցնելուն և դրա բնականոն շահագործումն ապահովելուն:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հոգօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը (...) առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքներ կատարել շարունակելը նույն հոդվածի առաջին մասով նախատեսված կարգով տուգանք նշանակելուց հետո՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտ-

ման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ձիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցումներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտում. արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի իրավակարգավորման առանձնահատկություններին, արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հստակ սահմանել է այդ վարույթի խնդիրները: Դրանցից են յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ձիշտ համապատասխան լուծելը: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն իրականացվում են նաև գործի ձիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատշաճ ձևակերպումը: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմինն պարզել գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտումը, և արդյոք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործով ձեռք բերված ապացույցները՝ ղեկավարվելով օրենքով (*տևս, Սուրեն Մինոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4842/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում վարչական պատասխանատվություն է նախատեսել, ի թիվ այլնի, նաև շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար: Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը վարչական պատասխանատվություն է նախատեսել նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքների, այդ թվում նաև՝ շենքեր և շինություններ ինքնակամ կառուցման կատարումը շարունակելու համար՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով տուգանք նշանակելուց հետո:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նկարագրված զանցանքի ոտնձգության օբյեկտը քաղաքաշինության բնագավառում օրենսդրությամբ սահմանված իրավակարգի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Իսկ քննարկվող վարչական իրավախախտումն օբյեկտիվ կողմից դրսևորվում է հետևյալ արարքով. շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո անձը շարունակում է կատարել այն նույն ինքնակամ շինարարությունը, որի համար նախկինում ենթարկվել է վարչական



պատասխանատվության: Փաստորեն, օրենսդիրը նախատեսել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվության առաջացման համար անհրաժեշտ պայմանն ինքնական շինարարական աշխատանքների համար վարչական պատասխանատվության ենթարկված լինելու և վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո դրանց կատարումը շարունակելու փաստական հանգամանքների միաժամանակյա առկայությունն է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված վարչական իրավախախտման հասարակական վտանգավորությունը գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ ինքնական շինարարական աշխատանքների համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո անձը շարունակում է նույն օբյեկտի շինարարությունը՝ նպատակ ունենալով այն ավարտին հասցնել և ապահովել այդ ինքնական կառույցի շահագործման հնարավորությունը, ինչը քաղաքաշինական տեսանկյունից կարող է լուրջ սպառնալիքներ առաջացնել մարդկանց կյանքի և առողջության համար: Հետևաբար քննարկվող արարքի օբյեկտիվ կողմի բովանդակությունը պետք է պայմանավորել ինքնական կառուցված շինությունն ավարտին հասցնելու, ավարտական տեսքի բերելու հակաիրավական նպատակի իրագործմամբ: Այլ կերպ ասած՝ ինքնական շինարարական աշխատանքների համար վարչական պատասխանատվության ենթարկված լինելուց հետո այնպիսի շինարարական աշխատանքի կատարում, որն ուղղված է տվյալ ինքնական շինությունն ավարտական տեսքի բերելուն և շահագործման համար պիտանի դարձնելուն, պետք է որակվի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով: Փաստորեն, անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով պատասխանատվության ենթարկելիս, ի թիվս այլնի, էական նշանակություն ունի նաև այն հարցը, թե արդյոք ինքնական շինարարական աշխատանքների համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո անձը շարունակել է կատարել այնպիսի շինարարական աշխատանքներ, որոնք իրենց բնույթով նպատակաուղղված են ինքնական շինությունն ավարտական տեսքի բերելուն և դրա բնականոն շահագործումն ապահովելուն, թե՛ ոչ: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ այն բոլոր դեպքերում, երբ անձն ինքնական շինարարական աշխատանքների համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո շարունակել է կատարել այդպիսի շինարարական աշխատանքներ, ապա վերջինս ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված արարքի կատարման համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ, 27-րդ և 124-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին:

Վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները գնահատում է ներքին համոզմամբ, որը պետք է հիմնված լինի գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ թեև ներքին համոզմունքը սուբյեկտիվ կատեգորիա է, այդուհանդերձ օրենսդիրն այն դիտարկում է որպես ապացույցների գնահատման միջոց, որը հանգեցնում է իրավական գնահատականների, հետևաբար և դատավարական օրենսդրությամբ նախատեսել է դրա օբյեկտիվության ապահովմանն ուղղված որոշակի երաշխիքներ, մասնավորապես՝

1) որպես դատարանի ներքին համոզմունքի օբյեկտիվ հիմք պետք է հանդիսանա գործում եղած ամեն մի ապացույցի և ապացույցների համակցության բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունը,

2) դատարանն ազատ է ապացույցների գնահատման գործում:

Ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ դատարանը կաշկանդված չէ տվյալ ապացույցին գործին մասնակցող և այլ անձանց տված գնահատականներով և արտահայտած կարծիքներով:

Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը միայն այն դեպքում կարող է համարվել պատշաճորեն պատճառաբանված, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման հիմքերը:

Այսպիսով, ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում դատական ակտերին ներկայացվող՝ հիմնավորվածության և պատճառաբանվածության օրենսդրական պահանջի միջոցով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր մի շարք որոշումներում ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը դիտելով որպես անձի արդար դատական քննության իրավունքի խախտում, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանների կողմից կայացվող որոշումները պետք է ողջամտորեն պարունակեն այդ դատական ակտերի կայացման համար հիմք

հանդիսացած պատճառաբանություններ՝ կողմերի լաված լինելու հանգամանքը ցույց տալու, ինչպես նաև արդարադատության իրականացման նկատմամբ հրապարակային հսկողություն նպաստակցելու նպատակով, սակայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը չի կարող ընկալվել որպես պահանջ՝ մանրամասնորեն պատասխանելու կողմերի բարձրացրած բոլոր փաստարկներին: Ըստ այդմ, այն հարցը, թե դատարանը պատշաճորեն կատարել է արդյոք դատական ակտը պատճառաբանելու իր պարտականությունը, կարող է պարզվել միայն յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո (*տե՛ս, օրինակ, Salov v. Ukraine գործով Եվրոպական դատարանի 06.09.2005 թվականի վճռի 89-րդ կետը, Garcia Ruiz v. Spain գործով Եվրոպական դատարանի 21.01.1999 թվականի վճռի 26-րդ կետը*):

Վերոնշյալ հարցի վերաբերյալ 09.04.2007 թվականի թիվ ՄԴՌ-690 որոշմամբ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ նշելով, որ պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում ևս բազմիցս անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության հարցին՝ արձանագրելով, որ դատարանը ոչ միայն պետք է նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում դատական ակտ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*տե՛ս, օրինակ, Ռազմիկ Սարությանն ընդդեմ Սյունիան և Ասահիկ Սարությանների թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը, Միսակ Այանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0702/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը (*տե՛ս, Ջաջուռի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի տարածքային ստորաբաժանման թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Արտյոմ Խոջոյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ձանաչել Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 23.09.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/Տ413Ռ/Ս-Ա որոշումը: Նշված վարչական ակտով Հն-կերության տնօրեն Արտյոմ Խոջոյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, և վերջինիս նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 2.500.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 04.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/Տ411Ռ/Ս-Ա որոշմամբ տուգանքի նշանա-

կումից հետո Արտյոմ Խոջոյանը Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 137/6 հասցեում գտնվող և Ընկերությանը պատկանող տարածքում շարունակել է իրականացնել ինքնակամ շինարարական աշխատանքներ:

Դատարանը բավարարել է Արտյոմ Խոջոյանի հայցը՝ պատճառաբանելով, որ Արտյոմ Խոջոյանի կողմից իրականացված ինքնակամ շինարարական աշխատանքների համար շինարարության թույլտվություն չի պահանջվում, ուստի վերջինս չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով:

Վերաքննիչ դատարանը մերժել է Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ վարչական մարմնի կողմից ներկայացված թվով 6 լուսանկարներով չի հիմնավորվում Արտյոմ Խոջոյանի կողմից շինարարական աշխատանքները շարունակելու հանգամանքը, և պարզ չէ, թե դրանք երբ են կատարվել: Բացի այդ, վարչական մարմինը չի ներկայացրել որևէ փաստարկ կամ ապացույց, որով կարող է հերքվել վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում կազմված արձանագրության մեջ Արտյոմ Խոջոյանի կողմից վկայակոչված հանգամանքը, որի համաձայն՝ վերջինս ավարտել է շինարարական աշխատանքները և կատարում է ընդամենը ներքին հարդարման աշխատանքներ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սույն վարչական գործով քննության առարկա է Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 23.09.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/Տ413Ռ/Ս-Ա որոշման իրավաչափությունը, որը պարզելու նպատակով ստորադաս դատարանները պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատեին գործում առկա բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 04.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/Տ411Ռ/Ս-Ա որոշմամբ Ընկերության տնօրեն Արտյոմ Խոջոյանը նախ ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ վերջինս Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 137/6 հասցեում գտնվող և Ընկերությանը պատկանող տարածքում իրականացրել է ինքնակամ շինարարական աշխատանքներ՝ չունենալով համապատասխան շինարարության թույլտվություն: Նշված վարչական ակտի կայացման համար հիմք է հանդիսացել Գյումրի համայնքի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի կողմից 23.07.2015 թվականին կազմված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» արձանագրությունը, որի համաձայն՝ ինքնակամ շինարարական աշխատանքների կատարումը լուսանկարվել է:

Սույն գործով վիճարկվող վարչական ակտով՝ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 23.09.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/Տ413Ռ/Ս-Ա որոշմամբ, Ընկերության տնօրեն Արտյոմ Խոջոյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, և վերջինիս նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 2.500.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 04.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/Տ411Ռ/Ս-Ա որոշմամբ տուգանքի նշանակումից հետո Արտյոմ Խոջոյանը Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 137/6 հասցեում գտնվող և Ընկերությանը պատկանող տարածքում շարունակել է իրականացնել ինքնակամ շինարարական աշխատանքներ: Նշված որոշման կայացման համար հիմք են հանդիսացել Գյումրի համայնքի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի կողմից 31.08.2015 թվականին կազմված «Վարչական իրավա-

խախտումների վերաբերյալ» արձանագրությունը, որի համաձայն՝ ինքնական շինարարական աշխատանքների շարունակումը լուսանկարվել է:

Վերոգրյալ փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության տնօրեն Արտյոմ Խոջոյանը շարունակել է Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 137/6 հասցեում գտնվող և Ընկերությանը պատկանող տարածքում ինքնական շինարարական աշխատանքները Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 04.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/Տ411Ո/Ս-Ա որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո: Այսպես, Գյումրի համայնքի ինքնական շինությունների և հողի վերահսկողության բաժնի 31.08.2015 թվականի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ Ընկերության տնօրեն Արտյոմ Խոջոյանը հայտնել է, որ արտաքին աշխատանքներն ավարտված են, կատարվում են ներքին հարդարման աշխատանքներ և բարեկարգում: Փաստորեն, սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության տնօրեն Արտյոմ Խոջոյանն ընդունել է, որ Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 137/6 հասցեում գտնվող տարածքում 31.08.2015 թվականի դրությամբ ինքնական շինարարական աշխատանքների կատարումը շարունակվել է: Մինչույն ժամանակ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 23.09.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/Տ413Ո/Ս-Ա որոշմանն ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված լուսանկարներից (**հասցուր 1-ին, գ.թ. 77-79**) երևում է, որ Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 137/6 հասցեում շինարարական աշխատանքները չեն դադարեցվել:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 04.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/Տ411Ո/Ս-Ա որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո Արտյոմ Խոջոյանի կողմից շարունակված շինարարական աշխատանքները նպատակաուղղված են եղել Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 137/6 հասցեում գտնվող շինությունն ավարտական տեսքի բերելուն և դրա բնականոն շահագործումն ապահովելուն: Այսպես, սույն գործի փաստերի համաձայն՝ ինքնական շինարարական աշխատանքների համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո Արտյոմ Խոջոյանը Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 137/6 հասցեում գտնվող շինությունում տեղադրել է ապակեպատ մուտքի դռներ, իրականացրել է պատերի շաղախալցման, ցեմենտ-բետոնյա շաղախով հատակի հարթեցման, ֆասադի երեսպատման աշխատանքներ: Նշված շինարարական աշխատանքները չեն կարող որևէ կերպ համարվել ներքին հարդարման աշխատանքներ և ըստ էության ուղղված են եղել Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 137/6 հասցեում սկսված ինքնական շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելուն, ինչը թույլ կտար ապահովել շինության բնականոն շահագործումը: Իսկ ըստ սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշման՝ այն բոլոր դեպքերում, երբ անձն ինքնական շինարարական աշխատանքների համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո շարունակել է կատարել այնպիսի շինարարական աշխատանքներ, որոնք իրենց բնույթով նպատակաուղղված են ինքնական շինությունն ավարտական տեսքի բերելուն և դրա բնականոն շահագործումն ապահովելուն, ապա այդ անձը ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված արարքի կատարման համար:

Ընտևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության տնօրեն Արտյոմ Խոջոյանը Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 137/6 հասցեում շարունակել է ինքնական շինարարական աշխատանքների իրականացումը Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 23.09.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ/Տ413Ո/Ս-Ա որոշմամբ առաջին անգամ ինքնական շինարարական աշխատանքներ կատարելու համար վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության տնօրեն Արտյոմ Խոջոյանի արարքը պարունակում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված զանցակազմի հատկանիշներ, և վերջինս ենթակա

էր վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտարկում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Քաղաքապետարանը վերաքննիչ բողոքի համար վճարել է 10.000 ՀՀ դրամ, իսկ վճռաբեկ բողոքի համար՝ 20.000 ՀՀ դրամ պետական տուրք: Քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ Արտյոմ Խոջոյանի հայցը՝ մերժման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քաղաքապետարանի կողմից վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Արտյոմ Խոջոյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.11.2016 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2. Արտյոն Խոջոյանից հոգուտ Գյումրու քաղաքապետարանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Արտյոն Խոջոյանից հոգուտ Գյումրու քաղաքապետարանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է ստնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ** **ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԳ/2632/05/15**  
**2017թ.**

Վարչական գործ թիվ ՎԳ/2632/05/15  
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան  
Դատավորներ՝ Հ. Բեդևյան  
Ա. Առաքելյան

### **ՈՐՈՇՈՒՄ** **ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈՒՑՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին դռնբաց դատական նիստում, քննելով Ալբերտ Թուլումբաջյանի ներկայացուցիչ Մեսրոպ Մանրիկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 17.03.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ալբերտ Թուլումբաջյանի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության (իրավահաջորդ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե)՝ ՀՀ ֆինանսների նախարարության իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի 30.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 42 որոշումը և ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 13.05.2015 թվականի «Բողոքն առանց բավարարման թողնելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

### **ՊԱՐՁԵՑ**

#### ***1. Գործի դատավարական նախապայմանությունը.***

Դիմելով դատարան՝ Ալբերտ Թուլումբաջյանը պահանջել է անվավեր ճանաչել Վարչության պետի 30.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 42 որոշումը և ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 13.05.2015 թվականի «Բողոքն առանց բավարարման թողնելու մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան) 18.09.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.03.2016 թվականի որոշմամբ Ալբերտ Թուլումբաջյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 18.09.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ալբերտ Թուլումբաջյանի ներկայացուցիչը:



Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Հայկ Ռոստոմյանը չէր կարող Ալբերտ Թուլումբաջյանի անվամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված և մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը դուրս բերել մաքսատան տարածքից՝ առանց մաքսային մարմնի աշխատակիցների թույլտվության: Այսինքն՝ տվյալ դեպքում Ալբերտ Թուլումբաջյանի անվամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված և մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը հանձնվել է այլ անձի՝ Հայկ Ռոստոմյանին, մաքսային մարմնի թույլտվությամբ: Հետևաբար Ալբերտ Թուլումբաջյանի կողմից կատարված արարքում ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմը բացակայում է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.03.2016 թվականի որոշումը և «կարճել գործի վարույթը»:

**2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Սույն գործով հաստատվել է այն հանգամանքը, որ Ալբերտ Թուլումբաջյանը մաքսային հսկողության ներքո գտնվող ավտոմեքենան առանց մաքսային մարմնի թույլտվության փաստացի և իրավաբանորեն հանձնել է այլ անձի՝ Հայկ Ռոստոմյանի տիրապետման ու օգտագործմանը: Վերոգրյալը հիմք է հանդիսանում ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմով վարչական պատասխանատվության առաջացման համար:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևան քաղաքի Կենտրոն նոտարական տարածքի նոտարի կողմից 26.03.2015 թվականին վավերացված լիազորագրով Ալբերտ Թուլումբաջյանը լիազորել է Հայկ Ռոստոմյանին իր փոխարեն, *inter alia*, «Նորագավիթ» ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մաքսատնից ստանալ Ալբերտ Թուլումբաջյանին պատկանող 1998 թվականի արտադրության «DAIMLERCHRYSLER (MERCEDES) (D) c 180» մակնիշի, թիվ «WDB2020181A705122» նույնականացման համարանիշով ավտոմեքենան, կատարել բողոք մաքսային ձևակերպումները, վարելով ավտոմեքենան տեղափոխել անհրաժեշտ վայր, հանդես գալ մաքսատներում, կատարել մաքսային գործողություններ՝ մաքսազերծել, մուծել մաքսատուրքեր, կատարել մաքսային վճարներ, ինչպես նաև ավտոմեքենան վարել Հայաստանի Հանրապետությունում (**հատոր 1-ին, գ.թ. 25**):

2) 29.03.2015 թվականի թիվ 2015/05100022/1815 փոխադրման ամփոփագրի համաձայն՝ Ալբերտ Թուլումբաջյանի անվամբ 29.03.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել 1998 թվականի արտադրության «MERCEDES C180» մակնիշի թիվ «WDB2020181A705122» նույնականացման համարանիշով ավտոմեքենա (**հատոր 1-ին, գ.թ. 10**):

3) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության վարչության աշխատակիցների կողմից 30.03.2015 թվականին կազմված «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ 30.03.2015 թվականին՝ ժամը 15:00-ի սահ-

մաններում, Երևան քաղաքի Խանջյան փողոցում ստուգման են ենթարկվել 1998 թվականի արտադրության «MERCEDES C180» մակնիշի «HH045311» պետհամարանիշի ավտոմեքենայի փաստաթղթերը, և պարզվել է, որ այդ ավտոմեքենան 29.03.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն է ներմուծել Ալբերտ Թուլումբաջյանը, սակայն այն վարել է Հայկ Ռոստոմյանը (**հատոր 1-ին, գ.թ. 40**):

4) Հայկ Ռոստոմյանի և Ալբերտ Թուլումբաջյանի կողմից վարչական վարույթի ընթացքում 30.03.2015 թվականին, 14.04.2015 թվականին և 21.04.2015 թվականին տրվել են բացատրություններ այն մասին, որ Ալբերտ Թուլումբաջյանի կողմից տրված լիազորագրի հիման վրա, վերջինիս անվամբ 29.03.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցը Հայկ Ռոստոմյանը փաստացի ստացել է ոչ թե Ալբերտ Թուլումբաջյանից, այլ ՀՀ Ֆինանսների նախարարության ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատնից (**հատոր 1-ին, գ.թ. 37-39**):

5) Վարչության աշխատակիցների կողմից 14.04.2015 թվականին կազմված «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ Ալբերտ Թուլումբաջյանը 29.03.2015 թվականին թիվ 2015/05100022/1815 փոխադրման ամփոփագրով Հայաստանի Հանրապետություն ներմուծված և մաքսային հսկողության ներքո գտնվող 1998 թվականի արտադրության «MERCEDES C180» մակնիշի, «HH045311» պետհամարանիշի ավտոմեքենան առանց մաքսային մարմնի թույլտվության 30.03.2015 թվականին հանձնել է Հայկ Ռոստոմյանին (**հատոր 1-ին, գ.թ. 36**):

6) Վարչության պետի 30.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 42 որոշման համաձայն՝ Ալբերտ Թուլումբաջյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 577.113 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինս 29.03.2015 թվականին իր անվամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծած 1.154.226 ՀՀ դրամ մաքսային արժեքով 1998 թվականի արտադրության «MERCEDES C180» մակնիշի ավտոմեքենան մաքսային հսկողության ներքո գտնվելու ընթացքում առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնել է Հայկ Ռոստոմյանին: Նշված որոշման ընդունման համար հիմք են ընդունվել, inter alia, Ալբերտ Թուլումբաջյանի և Հայկ Ռոստոմյանի տված բացատրություններն այն մասին, որ Հայկ Ռոստոմյանն Ալբերտ Թուլումբաջյանի կողմից տրամադրված լիազորագրի հիման վրա 30.03.2015 թվականին ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատնից ստացել է Ալբերտ Թուլումբաջյանի անվամբ 29.03.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցը, չի կատարել այդ ավտոմեքենայի վերջնական մաքսային ձևակերպումները և վարելով այն դուրս է բերել մաքսատան տարածքից (**հատոր 1-ին, գ.թ. 14-16**):

7) ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալի 13.05.2015 թվականի «Բողոքն առանց բավարարման թողնելու մասին» որոշման համաձայն՝ Ալբերտ Թուլումբաջյանի նկատմամբ 30.04.2015 թվականին կայացված «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 42 որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ վերջինիս կողմից ներկայացված վարչական բողոքը՝ առանց բավարարման (**հատոր 1-ին, գ.թ. 20-24**):

#### **4. Վճարեկ դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումը**

Վճարեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճարեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելու, օտարելու, ոչնչացնելու կամ կորցնելու զանցակազմի հիմքով վարչական պատասխանատվության առաջացման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ

գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միննույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերագրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք անձը ենթակա է վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով՝ իր անվանք Հայաստանի Հանրապետություն ներմուծված և մաքսային հսկողության ներքո գտնվող փրանսպորտային միջոցն ապօրինի կերպով հանձնելու համար, եթե փրանսպորտային միջոցը հանձնվել է այդ անձի ներկայացուցչին ավտոփրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատնային կողմից:*

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 02.01.2015 թվականին) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի կարգավորման առարկան Հայաստանի Հանրապետության սահմանով ապրանքների տեղափոխման, մաքսային հսկողության ներքո դրանց փոխադրման, ժամանակավոր պահպանության, մաքսային հայտարարագրման, բաց թողնման, մաքսային ընթացակարգերին համապատասխան ապրանքների օգտագործման, մաքսային հսկողության իրականացման, մաքսային վճարների վճարման, ինչպես նաև մաքսային մարմինների և նշված ապրանքների նկատմամբ տիրապետման և (կամ) օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքներ ունեցող անձանց միջև հարաբերություններն են:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մաքսային գործն իրականացնում են մաքսային մարմինները, որոնք հանդիսանում են իրավապահ մարմիններ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններն են վերադաս մաքսային մարմինը, վերադաս մաքսային մարմնի մաքսատները, այդ թվում՝ տարածաշրջանային և մասնագիտացված, վերադաս մաքսային մարմնի մաքսային կետերը, այդ թվում՝ սահմանային և մասնագիտացված: Նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է ստեղծել մասնագիտացված մաքսատներ և մաքսային կետեր, որոնց իրավասությունները սահմանափակվում են Հայաստանի Հանրապետության օրենքով մաքսային մարմինների վրա դրված առանձին գործառնությունների և (կամ) մաքսային սահմանով տեղափոխվող առանձին ապրանքատեսակների (...) մաքսային ձևակերպումների իրականացման լիազորություններով:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերի համաձայն՝ մաքսային մարմիններն իրենց գործունեությունն իրականացնելիս պետք է առաջնորդվեն հետևյալ սկզբունքներով. օրինականության և օրենքի առաջ անձանց հավասարության, նրանց իրավունքների ու ազատությունների պահպանման անհրաժեշտությամբ, մաքսային հսկողության և մաքսային ձևակերպումների իրականացման ընթացքում օրենսդրությամբ սահմանված դրույթների միատեսակ կիրառման անհրաժեշտությամբ:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) ներմուծվող ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման պահից մինչև որևէ մաքսային ընթացակարգով հայտարարագրվելը գտնվում են մաքսային հսկողության տակ:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը կամ ոչնչացնելը (...):

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 128-րդ հոդվածի 2-րդ մասի համա-

ձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքները և տրանսպորտային միջոցները կորցնելու դեպքում անձը կրում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը կամ կորցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով վարչական պատասխանատվություն է նախատեսել մաքսային այն կանոնների խախտման համար, որոնք կապված են մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների նկատմամբ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 128-րդ հոդվածի ուժով գործող սահմանափակումների հետ և չեն առնչվում պետության ֆինանսական շահերին, մաքսային վճարների վճարման պարտականության կատարմանը, ինչպես նաև այդպիսի պարտականության կատարման ապահովմանը: Քննարկվող վարչական իրավախախտումն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողության սահմանված կարգի դեմ և դրսևորվում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելու, օտարելու, ոչնչացնելու կամ կորցնելու եղանակով: Նշված արարքների կատարման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է սահմանել տուգանքը՝ առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնված, օտարված, ոչնչացված կամ կորցված ապրանքի մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով (*տե՛ս, Հուսիկ Մարգարյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/10555/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի մեկնաբանությանը, նշել է, որ առանց մաքսային մարմնի թույլտվության մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները կամ տրանսպորտային միջոցները մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը կամ կորցնելը որակվում է որպես մաքսային կանոնների խախտում, որի համար մեղավոր անձը ենթակա է պատասխանատվության՝ նշված ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով տուգանքի տեսքով: Այսինքն՝ նշված իրավախախտման սուբյեկտ է համարվում այն անձը, որն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնում կամ օտարում կամ ոչնչացնում կամ կորցնում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները կամ տրանսպորտային միջոցները (*տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Վարդան Գիժարյանի թիվ ՎԴ2/0278/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2010 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածում ամրագրված արարքը կատարվում է այնպիսի գործողություններով, որոնցով որոշվում է մաքսային հսկողության ներքո գտնվող գույքի ձակատագիրը, և որոնց հետևանքով ապրանքները և տրանսպորտային միջոցները դուրս են գալիս անձի փաստացի տիրապետումից. այդպիսիք են ապրանքների և տրանսպորտային միջոցների հանձնումն այլ անձի, ապրանքների և տրանսպորտային միջոցների օտարմանն ուղղված գործարքների կնքումը, դրանք ոչնչացնելը կամ կորցնելը (*տե՛ս, Հայկ Մարգարյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/3932/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելու համար ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվություն չի կարող առաջանալ, եթե մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը հանձնվում է տեխնիկական սպասարկման, ավտովագման կամ վերանորոգման կետերի աշխատակիցներին կամ ավտոկայանատեղիի պահակին (ֆիզիկական հանձնում), քանի որ նման գործողություններով ավտոմեքենան չի հանձնվում այլ անձի տիրապետմանը և օգտագործմանը (տե՛ս, *Ալեքսանդր Դերձակյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/3633/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը, 12.10.2010 թվականի թիվ ՍԴՌ-920 որոշմամբ անդրադառնալով ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությանը, նշել է, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Այդ սկզբունքն է ընկած նաև մաքսային կանոնների խախտման համար պատասխանատվության հիմքում: Հետևաբար մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը:

ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումների լուսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի հատկանիշները հանգում են, ի թիվս այլնի, հետևյալին.

1. ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցանքի առարկան մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն են:

2. ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է այդ ապրանքների ու տրանսպորտային միջոցների փաստական և իրավաբանական ճակատագիրը կանխորոշող հետևյալ արարքներից որևէ մեկով.

- մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների հանձնում,
- մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների օտարում,
- մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների ոչնչացում,
- մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների կորուստ:

Ընդ որում, հարկ է նշել, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև այն, որ վերը նշված արարքները կատարվում են մաքսային մարմնի թույլտվության բացակայության պայմաններում:

3. ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը մեղքի առկայությունն է, որը դրսևորվում է դիտավորությամբ կամ անգզուշությամբ:

4. Վճռաբեկ դատարանի գնահատմամբ անձի կողմից թույլ տրված արարքում վերոգրյալ հատկանիշներից որևէ մեկի բացակայությունը բացառում է ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության առաջացումը: Մասնավորապես՝ հանձնված, օտարված, ոչնչացված կամ կորսված տրանսպորտային միջոցները մաքսային հսկողության ներքո չգտնվելու կամ այդ տրանսպորտային միջոցների հանձնումը, օտարումը կամ ոչնչացումը մաքսային մարմնի թույլտվությամբ կատարվելու կամ այդ արարքներում անձի մեղքի բացակայության

դեպքում անձը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցանքի կատարման համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը տիրապետելու իրավունք ունեցող անձից բացի այն փաստացի այլ անձի տիրապետման տակ գտնվելը ոչ բոլոր դեպքերում է նշանակում, որ առկա է «հանձնում»՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի իմաստով: Նշված հոդվածով նախատեսված արարքի՝ տրանսպորտային միջոցը հանձնելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար վարչական վարույթի ընթացքում պետք է ձեռք բերվեն բավարար և անհերքելի ապացույցներ հետևյալի մասին.

ա) փաստացի այլ անձի տիրապետման տակ գտնվող տրանսպորտային միջոցը գտնվում է մաքսային հսկողության ներքո,

բ) տրանսպորտային միջոցն այլ անձի տիրապետման տակ է հայտնվել առանց մաքսային մարմնի թույլտվության,

գ) տրանսպորտային միջոցն այլ անձի տիրապետման տակ է հայտնվել տվյալ տրանսպորտային միջոցը մաքսային հսկողության ներքո գտնվելու ժամանակահատվածում տիրապետելու իրավունք ունեցող անձի կողմից դիտավորությամբ կամ անգզուշությամբ կատարված և այդ տրանսպորտային միջոցի փաստական և իրավաբանական ճակատագիրը կանխորոշող ակտիվ գործողությունների արդյունքում, այսինքն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը հայտնվել է այլ անձի փաստացի տիրապետման տակ այն տիրապետելու իրավունք ունեցող անձի մեղքով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ իրավախախտման փաստի հաստատված լինելու հարցը վարչական դատարանը պարտավոր է լուծել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված ապացույցների ազատ գնահատման միջոցով, այն է՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները:

### **Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով վիճարկվող «Վարչական տույժ նշանակելու մասին» 30.04.2015 թվականի թիվ 42 որոշմամբ Ալբերտ Թուլումբաջյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 577.113 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինս 29.03.2015 թվականին իր անվամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծած 1.154.226 ՀՀ դրամ մաքսային արժեքով 1998 թվականի արտադրության «MERCEDES C180» մակնիշի ավտոմեքենան մաքսային հսկողության ներքո գտնվելու ընթացքում առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնել է Հայկ Ռոստոմյանին:

Դատարանը մերժել է նշված վարչական ակտը և դրա բողոքարկման արդյունքում ընդունված վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին Ալբերտ Թուլումբաջյանի հայցը՝ հաստատված համարելով, որ վերջինս մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնել է Հայկ Ռոստոմյանին, քանի որ 30.03.2015 թվականին Երևան քաղաքի Խանջյան փողոցում այդ ավտոմեքենան Ալբերտ Թուլումբաջյանի կողմից տրված լիազորագրի հիման վրա վարել է Հայկ Ռոստոմյանը:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Ալբերտ Թուլումբաջյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռն անփոփոխ թողնելով, հիմնավոր է համարել Դատարանի վերը նշված պատճառաբանությունները:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Ալբերտ

Թուլումբաջյանի կողմից 26.03.2015 թվականին տրված լիազորագրի հիման վրա Հայկ Ռոստոմյանը ՀՀ ֆինանսների նախարարության ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատնից ստացել է Ալբերտ Թուլումբաջյանի անվամբ 29.03.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցը՝ 1998 թվականի արտադրության «MERCEDES C180» մակնիշի ավտոմեքենան, դուրս է բերել այն մաքսատան տեղակայման վայրից և, վարելով, հասել մինչև Երևան քաղաքի Խանջյան փողոց: Ընդ որում, նշված ավտոմեքենան 30.03.2015 թվականի դրությամբ հայտարարագրված չի եղել որևէ մաքսային ընթացակարգով և «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով գտնվել է մաքսային հսկողության տակ:

Փաստորեն սույն գործով վիճարկվող վարչական ակտը կայացնելու համար ըստ էության հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ առանց մաքսային մարմնի թույլտվության Հայկ Ռոստոմյանը փաստացի տիրապետել է (վարել է) Ալբերտ Թուլումբաջյանի կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծված և մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը Հայկ Ռոստոմյանի կողմից փաստացի տիրապետելու (վարելու) փաստն ինքնին բավարար չէր կարող լինել Ալբերտ Թուլումբաջյանին ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտումը վերագրելու և այդ հոդվածով վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու համար:

Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարում արձանագրել, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում մաքսային մարմին են համարվում այն իրավապահ մարմինները, որոնք զբաղվում են մաքսային գործի իրականացմամբ. այդ գործունեության կատարման ընթացքում մաքսային մարմիններն առաջնորդվում են մի շարք հիմնարար սկզբունքներով, ինչպիսիք են, ի թիվս այլնի, մարդու իրավունքների ու ազատությունների պահպանման անհրաժեշտությունը, մաքսային հսկողության և մաքսային ձևակերպումների իրականացման ընթացքում օրենսդրությամբ սահմանված դրույթների միատեսակ կիրառման անհրաժեշտությունը: Մաքսային մարմինների շարքում օրենսդիրը նախատեսել է նաև մասնագիտացված մաքսատները, որոնց իրավասությունը սահմանափակվում է մաքսային մարմինների վրա օրենքով դրված առանձին գործառնությունների և (կամ) մաքսային սահմանով տեղափոխվող առանձին ապրանքատեսակների մաքսային ձևակերպումների իրականացման լիազորություններով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ կառավարության 13.12.2002 թվականի թիվ 2144-Ն որոշմամբ (**ուժը կորցրել է 29.08.2015 թվականին**) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսային կետ: Նույն որոշման 2-րդ կետով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ավտոտրանսպորտային միջոցների «Ներմուծում ազատ շրջանառության համար», «Վերաներմուծում» (...), «Սեփականության իրավունքից հրաժարում» հոգուտ պետության» և «Արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմներով մաքսային ձևակերպումներն իրականացվում են բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսային կետում: Հայտարարատուի ցանկությամբ ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված կետում կարող են իրականացվել ավտոտրանսպորտային միջոցների՝ նաև Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված այլ մաքսային ռեժիմներով մաքսային ձևակերպումներ:

ՀՀ կառավարության 22.09.2006 թվականի թիվ 1329-Ն որոշմամբ (**ուժը կորցրել է 29.08.2015 թվականին**) ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված

մաքսային կետը վերակազմավորվել է ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատան:

ՀՀ նախագահի 20.08.2008 թվականի ՆՀ-226-Ն հրամանագրով (**ուժի մեջ է մտել 13.09.2008 թվականին**) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն վերակազմակերպվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի:

ՀՀ նախագահի 30.04.2014 թվականի թիվ ՆՀ-97-Ն հրամանագրով (**ուժի մեջ է մտել 24.05.2014 թվականին**) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն վերակազմակերպվել է և միացել ՀՀ ֆինանսների նախարարությանը, իսկ ՀՀ նախագահի 01.03.2016 թվականի թիվ ՆՀ-213-Ն հրամանագրով (**ուժի մեջ է մտել 12.03.2016 թվականին**) ՀՀ ֆինանսների նախարարությունը վերակազմակերպվել է և դրանից առանձնացնվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն:

Վերոգրյալ նորմատիվ իրավական ակտերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ ՀՀ կառավարության 13.12.2002 թվականի թիվ 2144-Ն որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի կազմում ստեղծվել է ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսային կետ, որը հետագայում վերակազմակերպվել է ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատան: Այնուհետև ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի վերակազմակերպման արդյունքում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատունը 13.09.2008 թվականից գործել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կազմում, իսկ 24.05.2014 թվականից մինչև 12.03.2016 թվականը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կազմում: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատունը, որը, համաձայն «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի, ստեղծվել է ՀՀ կառավարության 06.08.2015 թվականի «Մասնագիտացված, տարածաշրջանային մաքսատներ ու մաքսային կետեր ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ձանաչելու մասին» թիվ 886-Ն որոշմամբ:

Այսպիսով, 1998 թվականի արտադրության «MERCEDES C180» մակնիշի թիվ «WD-B2020181A705122» նույնականացման համարանիշով ավտոմեքենան Ալբերտ Թուրյումբաջյանի անվամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծելու պահին՝ 29.03.2015 թվականին, ինչպես նաև մաքսային հսկողության տակ գտնվող այդ տրանսպորտային միջոցը Հայկ Ռոստոմյանին հանձնելու պահին՝ 30.03.2015 թվականին, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կազմում գործող ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատունը հանդիսացել է մաքսային մարմին, որի իրավասությունը սահմանափակված է եղել Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող ավտոտրանսպորտային միջոցների՝ որոշակի մաքսային ընթացակարգերով մաքսային ձևակերպումների իրականացման լիազորություններով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ալբերտ Թուրյումբաջյանի անվամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված և մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը Հայկ Ռոստոմյանին է հանձնել ՀՀ ֆինանսների նախարարության ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատունը՝ որպես մաքսային մարմին, հետևաբար Ալբերտ Թուրյումբաջյանին ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված խախտումը վերագրվել է փաստական և իրավական հիմքերի բացակայությամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվորին վերագրված իրավախախտումը ստորադաս դատարաններն ապացուցված են համարել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված ապացույցների



գնահատման կանոնների խախտմամբ: Այսպես, ստորադաս դատարանները ճիշտ չեն գնահատել Հայկ Ռոստոմյանի և Ալբերտ Թուլումբաջյանի կողմից վարչական վարույթի ընթացքում տրված բացատրությունները: Նշված ապացույցներով մասնավորապես հաստատվում է, որ Հայկ Ռոստոմյանը, գործելով Ալբերտ Թուլումբաջյանի կողմից իրեն տրված լիազորագրի հիման վրա, վերջինիս անվամբ 29.03.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցը՝ 1998 թվականի արտադրության «MERCEDES C180» մակնիշի ավտոմեքենան, փաստացի ստացել է ոչ թե Ալբերտ Թուլումբաջյանից, այլ ՀՀ ֆինանսների նախարարության ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատնից: Այնուհետև որևէ մաքսային ընթացակարգով չհայտարարագրելով նշված ավտոմեքենան՝ Հայկ Ռոստոմյանը դուրս է բերել այն մաքսատան տեղակայման վայրից:

Այսինքն՝ այդ ապացույցներով հաստատվում է, որ լիազորագրի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատնից ստանալով Ալբերտ Թուլումբաջյանի անվամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ավտոմեքենան՝ Հայկ Ռոստոմյանն իրացրել է ներկայացուցչի իր իրավունքներն ու պարտականությունները, ինչն ընդունելի է համարել նաև մաքսային մարմինը, քանի որ թույլատրել է Հայկ Ռոստոմյանին կատարել մաքսագերծման հետ կապված որոշ գործողություններ և մեքենան դուրս հանել մասնագիտացված մաքսատան տարածքից:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տվյալ դեպքում մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցի հանձնումը տեղի է ունեցել մաքսային մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատան կողմից, քանի որ առանց վերջինիս համաձայնության և թույլտվության 29.03.2015 թվականին Ալբերտ Թուլումբաջյանի անվամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցը չէր կարող 30.03.2015 թվականին հայտնվել Հայկ Ռոստոմյանի տիրապետման և օգտագործման ներքո մաքսատան սահմաններից դուրս:

Հարկ է նկատել նաև, որ Հայկ Ռոստոմյանին Ալբերտ Թուլումբաջյանի կողմից լիազորագիր տալու հանգամանքը ևս չի կարող հինք հանդիսանալ վերջինիս ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված խախտում վերագրելու համար, քանի որ տվյալ դեպքում Ալբերտ Թուլումբաջյանի կողմից Հայկ Ռոստոմյանին լիազորագիր տալու չի կարող որակվել որպես Ալբերտ Թուլումբաջյանի կողմից դիտավորությամբ կամ անզորչությամբ կատարված այնպիսի ակտիվ գործողություն, որի արդյունքում մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը հայտնվել է Հայկ Ռոստոմյանի տիրապետության տակ: Այսինքն՝ լիազորագիր տալու գործողությունը ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի իմաստով չի կարող որակվել «հանձնում», եթե միաժամանակ լիազորող անձի կողմից տրանսպորտային միջոցը փաստացի չի հանձնվել այդ անձին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ալբերտ Թուլումբաջյանին մեղսագրվող արարքում բացակայում են ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված զանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի այնպիսի պարտադիր հատկանիշներ, ինչպիսիք են մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցն Ալբերտ Թուլումբաջյանի կողմից այլ անձի «հանձնելը» և մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը փաստացի այլ անձի տիրապետման ներքո հայտնվելու մեջ Ալբերտ Թուլումբաջյանի մեղավորությունը, ինչը բացառում է ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության առաջացումը:

Փաստորեն, Վարչության պետի 30.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 42 որոշմամբ Ալբերտ Թուլումբաջյանին վերագրվող արարքում առկա չեն ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը բնութագրող պարտադիր հատկանիշները, հետևաբար Ալբերտ Թուլումբաջյանը չէր կարող ենթարկվել վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման համար:

Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող՝ Վարչության պետի 30.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 42 որոշումն ընդունվել է ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի և 198-րդ հոդվածի խախտմամբ և ենթակա էր անվավեր ճանաչման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչության պետի 30.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 42 որոշման անվավերությունն ինքնին հիմք է հանդիսանում նաև այդ վարչական ակտի բողոքարկման արդյունքում ընդունված միջամտող վարչական ակտը՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի «Բողոքն առանց բավարարման թողնելու մասին» 13.05.2015 թվականի որոշումը, անվավեր ճանաչելու համար:

*Նշված պարձառաքանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պայտասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով դիմելով դատարան՝ Ալ-

բերտ Թուլումբաջյանը պահանջել է անվավեր ճանաչել Վարչության պետի 30.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 42 որոշումը, ինչպես նաև այդ վարչական ակտի բողոքարկման արդյունքում ընդունված՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի «Բողոքն առանց բավարարման թողնելու մասին» 13.05.2015 թվականի որոշումը: Մինչդեռ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե մինչև վարչական հայց ներկայացնելը միջամտող վարչական ակտը բողոքարկվել է վարչական կարգով, ապա հայցը ներառում է նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ծախսերի բաշխումը պետք է կատարվի մեկ ոչ գույքային պահանջի համար, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի «Բողոքն առանց բավարարման թողնելու մասին» 13.05.2015 թվականի որոշման վիճարկման պահանջն օրենքի ուժով ինքնին ներառվում է Ալբերտ Թուլումբաջյանի վիճարկման հայցում:

Հաշվի առնելով, որ հայցվորն ազատված է պետական տուրքի վճարումից, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցադիմումի, վերաքննիչ բողոքի և վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի վճարման պարտականությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է կատարման ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ֆինանսների նախարարության իրավահաջորդ) կողմից, հետևաբար ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 17.03.2016 թվականի որոշումը և այն փոփոխել. հայցը բավարարել՝ ՀՀ ֆինանսների նախարարության իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության պետի 30.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 42 որոշումը և ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի «Բողոքն առանց բավարարման թողնելու մասին» 13.05.2015 թվականի որոշումը ճանաչել անվավեր:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի գումար:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/1897/05/15  
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան  
Դատավորներ՝ Ք. Մկոյան  
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/1897/05/15**  
**2017թ.**

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈՒՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈՒՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոս-  
տիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական  
վերաքննիչ դատարանի 05.08.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վահե Մնացա-  
կանյանի ընդդեմ Ծառայության՝ Ծառայության 15.01.2015 թվականի «Վարչական տույժ  
նշանակելու մասին» թիվ 1502547829 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### **1. Գործի դատավարական նախապարմությունը.**

Դիմելով դատարան՝ Վահե Մնացականյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծա-  
ռայության 15.01.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502547829  
որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ալ. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան)  
27.01.2016 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.08.2016  
թվականի որոշմամբ Վահե Մնացականյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատա-  
րանի 27.01.2016 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է (դա-  
տավոր Ա. Առաքելյանը գրավոր շարադրել է հատուկ կարծիք):

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ծառայության 15.01.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502547829 որոշմամբ Վահե Մնացականյանին մեղսագրվող արարքը որակող պաշտոնատար անձը հանդիսացել է այն վարչական մարմնի աշխատակիցը, ով իրավասու է տեղադրել ճանապարհային երթևեկության նշանները, և հստակ տիրապետել է իրավախախտման վայրում թիվ 3.27. «Կանգառն արգելվում է» նշանի առկայության մասին տեղեկատվությանը: Հետևաբար վարչական վարույթի ընթացքում վերոգրյալ ճանապարհային նշանի առկայության և Վահե Մնացականյանին պատկանող տրանսպորտային միջոցի՝ այդ նշանի ազդման գոտում գտնվելու փաստը Ծառայության համար կասկած չի հարուցել:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով Ծառայության կողմից ներկայացված տեղեկանքով հաստատվում է, որ Ծառայության 15.01.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502547829 որոշմամբ արձանագրված իրավախախտման կատարման օրվա դրությամբ իրավախախտման կատարման վայրում տեղադրված է եղել թիվ 3.27. «Կանգառն արգելվում է» նշանը: Հետևաբար Ծառայության համար կասկած չի հարուցել այն փաստը, որ իրավախախտման վայրում՝ թեկուզև տեսանյութի դրվագից դուրս գտնվող հատվածում, այդ նշանը տեղադրված է եղել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.08.2016 թվականի որոշումը որոշումը «և կայացնել նոր որոշում՝ հայքը մերժել»:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության 15.01.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502547829 որոշմամբ Վահե Մնացականյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման համար, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինիս սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի վարորդը 28.12.2014 թվականին՝ ժամը 14:10-ին, Երևան քաղաքի Ագաթանգեղոս և Խոբրենացի փողոցների խաչմերուկի հատվածում չի կատարել «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը (**հատոր 1-ին, գ.թ. 5**).

2) Ծառայության 15.01.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502547829 որոշմամբ Վահե Մնացականյանին մեղսագրվող արարքն ամրագրող լուսանկարներում և տեսանյութում թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանը չի երևում (**էլեկտրոնային կրիչ, հատոր 1-ին, գ.թ. 19, 5**).

3) Ծառայության 21.12.2015 թվականի տեղեկանքի համաձայն՝ Երևան քաղաքի Ագաթանգեղոս և Խոբրենացի փողոցների խաչմերուկի հատվածում 28.12.2014 թվականի դրությամբ տեղադրված է եղել «Կանգառն արգելվում է» թիվ 3.27 ճանապարհային նշանը (**հատոր 1-ին, գ.թ. 43**):

**4. Վճռաբեկ դատարանի պարզապահանջությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձ-

րացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի ընթացքում ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջների խախտման փաստի ապացուցման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. կարո՞ղ է արդյոք անձը տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի արդյունքում ենթարկվել վարչական պատասխանատվության թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջների խախտման համար, եթե այդ վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված տեսանկյունում կամ լուսանկարում տվյալ ճանապարհային նշանը տեսանելի չէ, և վարչական վարույթն ընթացել է միայն եզրափակիչ փուլով:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վկայակոչված իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը տրանսպորտային միջոցների վարորդների համար վարչական պատասխանատվություն է նախատեսել հետևյալ արարքների՝ (1) ճանապարհային նշանների պահանջները չկատարելու, կամ (2) ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելու համար: Ընդ որում, նված գանգանքների համար օրենսդիրը որպես վարչական տույժի միջոց է ընտրել տուգանքը՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը (...) (գ) հաստատում է ճանապարհային երթևեկության կանոնները (...):

Փաստորեն, Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային երթևեկության կանոնները սահմանելու լիազորությունն օրենսդիրը վերապահել է ՀՀ կառավարությանը: Վերջինս, հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրույթով իրեն վերապահված լիազորությունը, 28.06.2007 թվականին ընդունել է «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշումը, որի թիվ 1 հավելվածի թիվ 1 Ձևի 3-րդ գլխի համաձայն՝ արգելող նշանները մտցնում կամ վերացնում են երթևեկության որոշակի սահմանափակումներ. դրանցից է թիվ 3.27. «Կանգառն արգելվում է» նշանը, որը նշանակում է, որ արգելվում են տրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումը:

Նույն գլխի համաձայն՝ թիվ 3.27 նշանի ազդեցությունը տարածվում է ճանապարհի միայն այն կողմի վրա, որտեղ այն տեղադրված է:

Բացի այդ, ՀՀ կառավարությունը 26.10.2006 թվականի «Ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին» թիվ 1699-Ն որոշման թիվ 3 հավելվածով հաս-

տատել է ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները:

Այսպես, նշված որոշման թիվ 3 հավելվածի I բաժնի 3-րդ կետի համաձայն՝ ճանապարհային նշանը ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոց է, որն ունի վահանակի տեսք ու որոշակի ձև և որի վրա կատարված են այնպիսի նշումներ ու մակագրություններ, որոնք ճանապարհային երթևեկության մասնակիցներին տեղեկացնում են ճանապարհային պայմանների և երթևեկության ռեժիմների, բնակավայրերի ու այլ օբյեկտների գտնվելու վայրի մասին:

Նույն որոշման թիվ 3 հավելվածի՝ «Նշանների կիրառման և տեղակայման կանոնները» վերտառությամբ III բաժնի 50.27-րդ կետի համաձայն՝ 3.27 «Կանգառն արգելվում է» նշանը կիրառվում է տրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումն արգելելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված արգելող ճանապարհային նշաններից մեկը 3.27 «Կանգառն արգելվում է» նշանն է, որը սահմանում է երթևեկության որոշակի սահմանափակում. այն է՝ արգելում է իր գործողության տիրույթում գտնվող տրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումը: Ընդ որում, նշված ճանապարհային նշանի գործողությունը տարածվում է ճանապարհի միայն այն կողմի վրա, որտեղ այն տեղադրված է: Փաստորեն, տրանսպորտային միջոցների վարորդները կարող են պատասխանատվության ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով նաև թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար, եթե այդ նշանի գործողության տարածքում կատարել են իրենց տրանսպորտային միջոցների կանգառ կամ կայանում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ճանապարհային երթևեկության կանոնների նշված խախտումը հաճախ հայտնաբերվում է տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է մեխանիկական տրանսպորտային միջոցներով կատարված, տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով (...) հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքի կիրառման ընթացքում ծագող հարաբերություններն ուղղակիորեն չեն կարգավորվում նույն օրենքի դրույթներով, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցն իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ

հողվածի 1-ին մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ իրավախարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանդումների վերլուծությանը, նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, այսինքն՝ առկա է իրավախախտման փաստը, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Այլ կերպ ասած՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը (*լրեն, Աիրա Նազարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/6199/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի համար նախատեսել է միայն երկու փուլ՝ իրավախախտման հատկանիշների պարզման (հարուցման) և վարչական ակտի ընդունման (եզրափակիչ) փուլերը: Նշված վարչական վարույթում ընթացիկ փուլի բացառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների ակնհայտ համընկնման, այդ համընկնման վերաբերյալ որևէ կասկածի կամ վերապահման բացակայության պայմաններում հաստատվում է իրավախախտման փաստը, և բացակայում է նաև իրավախախտման հետ կապված այլ հանգամանքների պարզման, հետևաբար նաև՝ ընթացիկ փուլի անհրաժեշտությունը (*լրեն՝ Ա. Լուսինե Վիրաբյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/1570/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով հայտնաբերված թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու փաստը կարող է հաստատված համարվել միայն այն դեպքում, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Այսինքն՝ այն դեպքում, երբ թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու փաստը հայտնաբերվում է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա ըստ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ իրավախարաբերության ծագման պահին գործող խմբագրության՝ այդ արարքի կատարման համար վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի



1-ին մասի հիմքով անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայմանն այն է, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը որևէ կասկած չհարուցի:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս կամ այն տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու փաստի առկայությունը տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի ընթացքում կարող է կասկած չհարուցել միայն այն պարագայում, երբ վարչական մարմնի կողմից ձեռք բերված լուսանկարը կամ տեսանյութը պարունակում է միանշանակ տվյալներ այն մասին, որ տվյալ տրանսպորտային միջոցի վարորդը թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի գործողության տարածքում կատարել է իր տրանսպորտային միջոցի կանգառ կամ կայանում: Այլ կերպ ասած, քննարկվող իրավիճակում վարչական մարմնի կողմից ձեռք բերված լուսանկարը կամ տեսանյութը պետք է բովանդակի այնպիսի տեղեկություններ, որոնք անառարկելիորեն վկայում են այն մասին, որ թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջները ենթադրյալ իրավախախտման կատարման պահին տարածվել են տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի վրա, և վերջինս չի կատարել այդ նշանի պահանջները:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտով անձը կարող է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ենթարկվել վարչական պատասխանատվության թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար, եթե այդ վարչական վարույթում ձեռք բերված միակ թույլատրելի ապացույցը՝ իրավախախտումն ամրագրած տեսանյութը կամ լուսանկարը, պարունակում է նշված ճանապարհային նշանի պատկերը, հստակ պատկերացում է տալիս այդ նշանի գործողության տարածքի մասին, իսկ տրանսպորտային միջոցի կայանման վայրի և թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» նշանի համադրման միջոցով հնարավոր է անկասկած հետևություն անել տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տվյալ նշանի պահանջները չկատարելու փաստի առկայության մասին:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար վարչական պատասխանատվության ենթարկված անձի տրանսպորտային միջոցի կայանման վայրում քննարկվող ճանապարհային նշանի առկա լինելու և այդ նշանի գործողությունը տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի վրա տարածվելու փաստական հանգամանքները թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում ևս կարող են հաստատվել բացառապես իրավախախտումն ամրագրած տեսանյութով կամ լուսանկարով: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն իրավաբանական իրողությունը, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ուժով օրենսդիրը տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի ընթացքում իրավախախտման հատկանիշների պարզման համար միակ թույլատրելի ապացուցման միջոց է համարել իրավախախտումն ամրագրած տեսանյութը կամ լուսանկարը, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում:

Այսպիսով, անփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի արդյունքում թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտ ընդունելու իրավական նախադրյալն այն է, որ այդ վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարով կամ տեսանյութով ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում: Վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարով կամ տեսանյութով ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը տվյալ դեպքում նշանակում է, որ նշված լուսանկարի կամ տեսանյութի միջոցով անատարկելիորեն ապացուցվում են, ի թիվս այլնի, հետևյալ փաստերը.

1) տրանսպորտային միջոցի կայանման վայրում թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի առկայությունը,

2) տրանսպորտային միջոցի վարորդի վրա թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի գործողության տարածումը,

3) տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջների չկատարումը:

Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումների հանձնաձև՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով որևէ իրավակարգավորում նախատեսված չէ այն դեպքերի համար, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած է հարուցում, և օրենսդրական համապատասխան կարգավորման բացակայության պարագայում վարչական մարմինը գրկված է այդ կասկածը փարատելու նպատակով ապացույցներ ձեռք բերելու և դրանք գնահատելու հնարավորությունից: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների կասկած հարուցելու դեպքերի վերաբերյալ համապատասխան կարգավորումների բացակայության պայմաններում հարուցված վարչական վարույթների նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները (*լրև՝ Կ. Լուսինե Վիրաբյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎՌ/1570/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն բոլոր դեպքերում, երբ վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարով կամ տեսանյութով ամրագրված արարքի հատկանիշների և թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած է հարուցում, ապա վարչական մարմինը պարտավոր է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վարչական վարույթի ընթացիկ փուլի շրջանակներում լրիվ և բազմակողմանիորեն պարզել ենթադրյալ իրավախախտման առկայությունը և միայն այդ դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով անձին ենթարկել վարչական պատասխանատվության թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Վահե Մնացականյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 15.01.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին»

թիվ 1502547829 որոշումը: Նշված վարչական ակտով Վահե Մնացականյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման համար, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինիս սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի վարորդը 28.12.2014 թվականին՝ ժամը 14:10-ին, Երևան քաղաքի Ագաթանգեղոս և Խորենացի փողոցների խաչմերուկի հատվածում չի կատարել «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը:

Դատարանը մերժել է Վահե Մնացականյանի հայցը՝ պատճառաբանելով, որ Ծառայության 15.01.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502547829 որոշմամբ Վահե Մնացականյանին վերաբերող արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չէր կարող հարուցել վարչական մարմնի մոտ, քանի որ վերջինս համարվում է ճանապարհային նշաններ տեղադրող լիազոր մարմինը և տիրապետում է համապատասխան ճանապարհային նշանի առկայության ու դրա ազդեցության գոտու վերաբերյալ տեղեկություններին: Ընդ որում, իրավախախտման կատարման վայրում թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի առկայությունը Դատարանը հաստատված է համարել ոչ թե տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված տեսանյութի, այլ Ծառայության 21.12.2015 թվականի տեղեկանքի միջոցով:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Վահե Մնացականյանի բողոքը, բեկանել և փոփոխել է Դատարանի վճիռը և հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ տեխնիկական միջոցի օգտագործմամբ ստացված տեսանյութում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը Ծառայության մոտ ողջամտորեն պետք է կասկած հարուցեր, քանի որ սույն գործով ներկայացված տեսանյութում որևէ արգելող ճանապարհային նշան չի երևում: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ նման կասկածի առկայության դեպքում վարչական մարմինը պարտավոր էր օրենքով սահմանված կարգով բազմակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզել Վահե Մնացականյանի կողմից ճանապարհային նշանների պահանջները չկատարելու փաստը: Մինչդեռ սույն գործով վիճարկվող վարչական ակտն ընդունվել է միայն կասկած հարուցող տեսանյութի հիման վրա և ենթակա է անվավեր ճանաչման:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի՝ Ծառայության 15.01.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502547829 որոշման իրավաչափության հարցը լուծելու համար էական նշանակություն ունի այն հարցը, թե արդյոք այդ վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարով կամ տեսանյութով ամրագրված արարքի և իրավախախտման, այսինքն՝ թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը չկատարելու, հատկանիշների համապատասխանությունը կասկած հարուցում է, թե՛ ոչ: Սույն գործի փաստերից հետևում է, որ Ծառայության 15.01.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502547829 որոշմամբ Վահե Մնացականյանին վերագրվող արարքն ամրագրող լուսանկարները, որոնք ներառված են վիճարկվող վարչական ակտի մեջ, կամ տեսանյութը, որն առանձին էլեկտրոնային կրիչով ներկայացվել է Ծառայության կողմից, չեն պարունակում այնպիսի տվյալներ, որոնց միջոցով հնարավոր է ապացուցել Վահե Մնացականյանին պատկանող տրանսպորտային միջոցի կայանման վայրում թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի առկայությունը: Այլ կերպ ասած՝ նշված լուսանկարներում և տեսանյութում թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանը չի երևում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով չի հաստատվում այն հանգամանքը, որ Ծառայության 15.01.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502547829 որոշմամբ Վահե Մնացականյանին վերագրվող արարքի կատարման պահին այդ արարքի կատարման վայրում առկա է եղել թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանը, որի գործողությունը տարածվել է Վահե Մնացականյանին պատկանող տրանսպորտային միջոցի վարորդի վրա, քանի որ նշված հանգամանքները կարող են հաստատվել բացառապես իրավախախտումն ամրագրած տեսանյութով կամ լուսանկարով: Ընդ որում, Ծառայության կողմից դատարան ներկայացված 21.12.2015 թվականի տեղեկանքը, որի համաձայն՝ Երևան քաղաքի Ազաթանգեղոս և Խորենացի փողոցների խաչմերուկի հատվածում 28.12.2014 թվականի դրությամբ տեղադրված է եղել թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանը, տվյալ դեպքում չի կարող ազդել Ծառայության 15.01.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502547829 որոշման իրավաչափության գնահատման վրա, քանի որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնի խախտման վերաբերյալ տվյալ գործով միայն եզրափակիչ փուլով իրականացված վարչական վարույթում իրավախախտման հատկանիշների պարզման համար միակ թույլատրելի ապացուցման միջոցն իրավախախտումն ամրագրած տեսանյութը կամ լուսանկարն է:

Փաստորեն, Վերաքննիչ դատարանն իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ տվյալ դեպքում տեսանյութում ամրագրված արարքի և Վահե Մնացականյանին վերագրվող իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը Ծառայության մոտ ողջամտորեն պետք է կասկած հարուցեր, իսկ նման կասկածի առկայության պայմաններում վարչական մարմինը պարտավոր էր «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վարչական վարույթի ընթացիկ փուլի շրջանակներում լրիվ և բազմակողմանիորեն պարզել Վահե Մնացականյանին պատկանող տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թիվ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջները չկատարելու իրավախախտման առկայության կամ բացակայության հարցը: Մինչդեռ Ծառայությունը տեսանյութում ամրագրված արարքի և Վահե Մնացականյանին վերագրվող իրավախախտման հատկանիշների համապատասխանության հարցի շուրջ կասկածի առկայության պայմաններում առանց վարչական վարույթի ընթացիկ փուլով իրականացնելու որոշում է կայացրել վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու մասին, ինչն անթույլատրելի է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայության 15.01.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502547829 որոշումն ընդունվել է օրենքի, մասնավորապես՝ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտմամբ և ենթակա է անվավեր ճանաչման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, անվավեր ճանաչելով Ծառայության 15.01.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1502547829 որոշումը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ

լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

**5. Վճռաբեկ դատարանի պարզառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Ծառայության կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.08.2016 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/5620/05/15  
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան  
Դատավորներ՝ Ք. Սկոյան  
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԳ/5620/05/15  
**2017թ.**

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հարություն Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.07.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հարություն Սարգսյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ ծառայություն)՝ ծառայության 20.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503502294 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### ***1. Գործի դատավարական նախապայմանությունը.***

Դիմելով դատարան՝ Հարություն Սարգսյանը պահանջել է անվավեր ճանաչել ծառայության 20.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503502294 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Անի Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 15.12.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 21.07.2016 թվականի որոշմամբ Հարություն Սարգսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.12.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հարություն Սարգսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածը, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ձանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 27-րդ, 29-րդ, 124-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ և հերկյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ծառայության 20.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503502294 որոշմամբ արձանագրված արարքի կատարման պահին Երևան քաղաքի Խորենացի, Բեյրութ, Իտալիա, Վազգեն Սարգսյան փողոցների խաչմերուկի հատվածում թիվ 1.3 գծանշման պահանջը պահպանելը հնարավոր չէր: Նշված հանգամանքը հիմնավորվում է նաև Ծառայության պետի 10.02.2016 թվականի գրությամբ, որի համաձայն՝ այդ խաչմերուկի երկու կողմերի թիվ 1.12 «Կանգ գիծ» գծանշումը 2 մետր հետ է տարվել՝ Վազգեն Սարգսյան և Բեյրութ փողոցներից տրանսպորտային միջոցների ձախ շրջադարձը դեպի Խորենացի փողոց ավելի դյուրացնելու նպատակով: Հետևաբար Հարություն Սարգսյանը չէր կարող ենթարկվել վարչական պատասխանատվության այդ խաչմերուկում թիվ 1.3 գիծը հատելու համար, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.07.2016 թվականի որոշումը:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության 20.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503502294 որոշման համաձայն՝ Հարություն Սարգսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 10.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ Հարություն Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող «KIA» մակնիշի «25 ՍՍ 352» պետհամարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 05.08.2015 թվականին՝ ժամը 15:54-ին, Երևան քաղաքի Խորենացի, Բեյրութ, Իտալիա, Վազգեն Սարգսյան փողոցների խաչմերուկի հատվածում չի պահպանել թիվ 1.3 գծանշման պահանջը (**հատոր 1-ին, գ.թ. 33**).

2) Ծառայության պետի 10.02.2016 թվականի թիվ 17-3-1949 գրության համաձայն՝ Երևան քաղաքի Խորենացի, Վազգեն Սարգսյան և Բեյրութ փողոցների խաչմերուկի երկու կողմերի թիվ 1.12 «Կանգ գիծ» գծանշումը մոտավորապես 2 մետր հետ է տարվել՝ Վազգեն Սարգսյան և Բեյրութի փողոցներից տրանսպորտային միջոցների ձախ շրջադարձը դեպի Խորենացի փողոց ավելի դյուրացնելու նպատակով (**հատոր 2-րդ, գ.թ. 20**):

## **4. Վճռաբեկ դատարանի պարզապատկանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ձանապարհային գծանշումների պահանջների՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող

սարքերով հայտնաբերված խախտման համար վարչական պատասխանատվության կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք անձը ենթակա է վարչական պատասխանատվության ճանապարհային գծանշման պահանջների՝ րեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված խախտման համար, եթե արարքի կատարման վայրում և պահին փյվալ գծանշման պահանջները ողջամորթեն հնարավոր չէր պահպանել:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Վերոհիշյալ իրավական նորմի բովանդակությունից հետևում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը վարչական պատասխանատվություն է նախատեսել տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող գծանշումների պահանջները չկատարելու համար: Ընդ որում, նշված զանցանքների համար օրենսդիրը որպես վարչական տույժի միջոց է ընտրել տուգանքը՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

«Ճանապարհային երթևեկության մասին» Վիեննայի 08.11.1968 թվականի կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 08.02.2006 թվականին) 4-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ նույն կոնվենցիայի Պայմանավորվող կողմերը (...) պարտավորվում են միջոցներ ձեռք առնել, որպեսզի իրենց տարածքում տեղակայված ճանապարհային նշանները և ազդանշանները, լուսային ճանապարհային ազդանշանները և ճանապարհների գծանշումը կազմեն միասնական համակարգ և պատրաստվեն ու տեղակայվեն այնպես, որ հնարավոր լինի դրանք հեշտությամբ ընկալել:

Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող վերոգրյալ միջազգային պայմանագրի վկայակոչված իրավադրույթը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային գծանշումները պետք է կատարվեն այնպես, որ ճանապարհային երթևեկության մասնակիցները հեշտությամբ դրանք ընկալելու հնարավորություն ունենան: Այլ կերպ ասած՝ ճանապարհային գծանշումների պահանջները պետք է ողջամորթեն ընկալելի լինեն ճանապարհային երթևեկության մասնակիցներին, ինչն էլ հանդիսանում է այդ պահանջների կատարման անհրաժեշտ նախադրյալը: Փաստորեն, ճանապարհային գծանշումները՝ որպես ճանապարհային երթևեկությունը կարգավորող կարևոր միջոցներ, պետք է օժտված լինեն ընկալելիության և կատարելիության բավարար մակարդակով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է ճանապարհային երթևեկության կանոնները:

Փաստորեն, Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային երթևեկության կանոնները սահմանելու լիազորությունն օրենսդիրը վերապահել է ՀՀ կառավարությանը: Վերջինս, հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրույթով իրեն վերապահված լիազորությունը, 28.06.2007 թվականին ընդունել է «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշումը, որի թիվ 1 հավելվածի 168-րդ կետի համաձայն՝ ճանապարհային գծանշումները կիրառվում են ինքնուրույն կամ ճանապարհային նշանների և լուսացույցների հետ միասին:



Նույն որոշման թիվ 1 հավելվածի 169-րդ կետի համաձայն՝ ճանապարհային գծանշումները բաժանվում են 2 խմբի՝ (1) հորիզոնական, (2) ուղղաձիգ, իսկ 170-րդ կետի համաձայն՝ հորիզոնական գծանշումը երթևեկելի մասի վրա գծեր, սլաքներ, գրառումներ և այլ նշումներ են ու սահմանում են երթևեկության որոշակի ռեժիմ և կարգ (...):

ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշման թիվ 1 հավելվածի թիվ 2 Ձևի համաձայն՝ թիվ 1.3 հորիզոնական գծանշումը չորս և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհներին բաժանում է հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը (առանցքային գծեր), և թիվ 1.3 գիծը հատելն արգելվում է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող գծանշումներից է թիվ 1.3 հորիզոնական գիծը, որը սահմանում է երթևեկության որոշակի ռեժիմ և կարգ. այն է՝ բաժանում է չորս և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհների հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը: Ընդ որում՝ տրանսպորտային միջոցների վարորդներին արգելված է հատել այդ հորիզոնական գիծը: Փաստորեն, տրանսպորտային միջոցների վարորդների կատարած զանցանքների համար պատասխանատվություն կրող սուբյեկտները կարող են պատասխանատվության ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նաև թիվ 1.3 գծանշման պահանջները չկատարելու, այսինքն՝ չորս և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհների հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը միմյանցից բաժանող գիծը հատելու համար:

Մինչև նույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ ճանապարհային գծանշման պահանջները ողջամտորեն հնարավոր չէ կատարել բնականոն երթևեկության պայմաններում, ապա երթևեկության մասնակիցը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության այդ գծանշման պահանջները չկատարելու համար: Հետևաբար տրանսպորտային միջոցների վարորդների կատարած զանցանքների համար պատասխանատվություն կրող սուբյեկտները թիվ 1.3 գծանշման պահանջը չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով կարող են ենթարկվել պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ գծանշման պահանջները հնարավոր է ողջամտորեն կատարել ճանապարհի տվյալ հատվածում: Այլ կերպ ասած՝ տրանսպորտային միջոցների վարորդների կատարած զանցանքների համար պատասխանատվություն կրող սուբյեկտները չորս և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհների հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը միմյանցից բաժանող գիծը հատելու համար չեն կարող ենթարկվել պատասխանատվության, եթե այդ գիծը ճանապարհի տվյալ հատվածում և երթևեկության տվյալ պայմաններում ողջամտորեն հնարավոր չէր չհատել:

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ դատողությունները բխում են նաև իրավունքի գերակայության հիմքում ընկած իրավական որոշակիության հանրաձայն սկզբունքի էությունից, որի համաձայն՝ իրավունքի նորմերը պետք է օժտված լինեն հստակության, հասանելիության, կանխատեսելիության որակական հատկանիշներով, ինչի շնորհիվ այդ կանոնի կարգավորման տիրույթում հայտնվող յուրաքանչյուր սուբյեկտ պետք է ի վիճակի լինի իր վարքագիծը համապատասխանեցնել տվյալ նորմի պահանջներին: Այն բոլոր դեպքերում, երբ թիվ 1.3 գծանշման պահանջները ողջամտորեն հնարավոր չէ կատարել, ապա այդ գծանշման պահանջների խախտման համար պատասխանատվություն նախատեսող օրենքի դրույթը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմը, չի կարող կիրառվել. հակառակ պարագայում կառաջանա իրավական որոշակիության սկզբունքի խախտում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ճանապարհային երթևեկության կանոնների քննարկվող խախտումը հաճախ հայտնաբերվում է տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին

հողվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է մեխանիկական տրանսպորտային միջոցներով կատարված, տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով (...) հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները: Նույն հողվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքի կիրառման ընթացքում ծագող հարաբերություններն ուղղակիորեն չեն կարգավորվում նույն օրենքի դրույթներով, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Նույն օրենքի 3-րդ հողվածի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցն իրավախախտման ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, իսկ 5-րդ հողվածի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հողվածի 1-ին մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ:

Նույն օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 6-րդ հողվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով վերոգրյալ իրավանորմերի վերլուծությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, այսինքն՝ առկա է իրավախախտման փաստը, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Այլ կերպ ասած՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը (*տե՛ս, Աիդա Նազարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/6199/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի համար նախատեսել է միայն երկու փուլ՝ իրավախախտման հատկանիշների պարզման (հարուցման) և վարչական ակտի ընդունման (եզրափակիչ) փուլերը: Նշված վարչական վարույթում ընթացիկ փուլի բացառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների ակնհայտ համընկնման, այդ համընկնման վերաբերյալ որևէ կասկածի կամ վերապահման բացակայության պայմաններում հաստատվում է իրավախախտման փաստը, և բացակայում է նաև իրավախախտման հետ կապված այլ հանգամանքների պարզման, հետևաբար նաև՝ ընթացիկ փուլի անհրաժեշտությունը (*տե՛ս, Լուսինե Վիրաբյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության*

*թիվ ՎԳ/1570/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող թիվ 1.3 գծանշման պահանջը չկատարելը տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված լինելու դեպքում տվյալ տրանսպորտային միջոցով կատարված իրավախախտման համար պատասխանատվություն կրող սուբյեկտը կարող է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով ենթարկվել վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում:

Մինչդեռ ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ձանապարհային երթևեկության կանտոների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի արդյունքում թիվ 1.3 գծանշման պահանջները չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտ ընդունելու իրավական նախադրյալից մեկն այն է, որ տվյալ իրավիճակում տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող թիվ 1.3 գծանշման պահանջը կատարելու օբյեկտիվ հնարավորությունը ողջամտորեն կասկած չի հարուցում: Այսինքն՝ վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարի կամ տեսանյութի ուսումնասիրությունից չպետք է կասկած հարուցի նաև այն հանգամանքը, որ տվյալ իրավիճակում տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող թիվ 1.3 գծանշման պահանջը ողջամտորեն հնարավոր էր կատարել:

Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումների համաձայն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ձանապարհային երթևեկության կանտոների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով որևէ իրավակարգավորում նախատեսված չէ այն դեպքերի համար, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած է հարուցում, և օրենսդրական համապատասխան կարգավորման բացակայության պարագայում վարչական մարմինը գրկված է այդ կասկածը փարատելու նպատակով ապացույցներ ձեռք բերելու և դրանք գնահատելու հնարավորությունից: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների կասկած հարուցելու դեպքերի վերաբերյալ համապատասխան կարգավորումների բացակայության պայմաններում հարուցված վարչական վարույթների նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները (*տե՛ս, Լուսինե Վիրաբյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «ձանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/1570/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն բոլոր դեպքերում, երբ վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարով կամ տեսանյութով ամրագրված արարքի հատկանիշների ուսումնասիրության արդյունքում տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թիվ 1.3 գծանշման պահանջները կատարելու հնարավորությունը ողջամտորեն կասկած է հարուցում, ապա վարչական մարմինը պարտավոր է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վարչական վարույթի ընթացիկ փուլի շրջանակներում լրիվ և բազմակողմանիորեն պարզել չորս և ավելի երթևեկության գոտի ունեցող ձանապարհների հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը միմյանցից բաժանող գիծը չհատելու օբյեկտիվ հնարավորությունը և միայն այդ դեպքում Վարչական իրավախախտումների վերա-

բերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով անձին ենթարկել վարչական պատասխանատվության թիվ 1.3 գծանշման պահանջները չկատարելու համար:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Հարություն Սարգսյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 20.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503502294 որոշումը: Նշված վարչական ակտով Հարություն Սարգսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 10.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ Հարություն Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող «KIA» մակնիշի «25 ՍՍ 352» պետհամարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 05.08.2015 թվականին՝ ժամը 15:54-ին, Երևան քաղաքի Խորենացի, Բեյրութ, Իտալիա, Վազգեն Սարգսյան փողոցների խաչմերուկի հատվածում չի պահպանել թիվ 1.3 գծանշման պահանջը:

Դատարանը մերժել է Հարություն Սարգսյանի հայցը՝ Ծառայության կողմից ներկայացված տեսանյութի ուսումնասիրությամբ հաստատված համարելով վիճարկվող վարչական ակտով Հարություն Սարգսյանին վերագրվող իրավախախտման փաստը և գտնելով, որ վերջինս իրավաչափորեն է ենթարկվել վարչական պատասխանատվության: Մինևույն ժամանակ Դատարանն անհիմն է համարել Հարություն Սարգսյանի այն դիրքորոշումը, որ տվյալ խաչմերուկում անհնար է չհատել թիվ 1.3 գիծը՝ նշելով, որ «(...) *տեսաձայնագրային կրիչի ուսումնասիրությունից պարզորոշ երևում է, որ հայցվորի վարած տրանսպորտային միջոցն ունեցել է հնարավորություն առանց գիծը հատելու շարունակել մանևրը, և առկա չի եղել որևէ խոչընդոտ (...) 1.3 գծանշման պահանջը պահպանելու համար (...)*»:

Վերաքննիչ դատարանը մերժել է Հարություն Սարգսյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ ըստ էության համաձայնելով Դատարանի պատճառաբանությունների հետ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերից հետևում է, որ Ծառայության 20.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503502294 որոշումը Հարություն Սարգսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Երևան քաղաքի Խորենացի, Բեյրութ, Իտալիա, Վազգեն Սարգսյան փողոցների խաչմերուկի հատվածում տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող թիվ 1.3 գծանշման պահանջը չկատարելու համար, և այդ արարքը հայտնաբերվել է տեսանկարահանող սարքի միջոցով: Փաստորեն, վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը գնահատելու համար ստորադաս դատարանները պետք է պարզեին այն հարցը, թե արդյոք վարչական մարմնի կողմից ձեռք բերված տեսանյութում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած հարուցում է, թե՛ ոչ: Ընդ որում, Հարություն Սարգսյանը, վիճարկելով վերը նշված որոշումը, ի թիվս այլնի՝ վկայակոչել է նաև այն փաստարկը, որ Երևան քաղաքի Խորենացի, Բեյրութ, Իտալիա, Վազգեն Սարգսյան փողոցների խաչմերուկի հատվածում գտնվող թիվ 1.3 գծանշումն այնպես է կատարված, որ առանց թիվ 1.3 գիծը հատելու հնարավոր չէ անցնել նշված խաչմերուկը Վազգեն Սարգսյան փողոցից դեպի Խորենացի փողոց ձախ շրջադարձ կատարելիս: Այս համատեքստում Ծառայության 20.08.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503502294 որոշումը կարող է իրավաչափ համարվել միայն այն դեպքում, եթե վարչական վարույթում ձեռք բերված տեսանյութի ուսումնասիրության արդյունքում կասկած չհարուցի նաև այն հանգամանքը, որ ենթադր-

րյալ իրավախախտման կատարման պահին՝ 05.08.2015 թվականին՝ ժամը 15:54-ին, Հարություն Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող «KIA» մակնիշի «25 ՍՍ 352» պետհամարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը ողջամտորեն կարող էր կատարել Երևան քաղաքի Խորենացի, Բեյրութ, Իտալիա, Վազգեն Սարգսյան փողոցների խաչմերուկի հատվածում գտնվող թիվ 1.3 գծանշման պահանջը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով (...) և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը (...) պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ:

Վերոգրյալ իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները գնահատում է ներքին համոզմամբ, որը պետք է հիմնված լինի գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վարչական դատավարությունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու («ex officio») սկզբունքը դատական ապացույցման գործընթացում, մասնավորապես, դրսևորվում է կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու նպատակով ապացույցներ պահանջելու վարչական դատարանի պարտականությամբ: Թեև վարչական դատավարությունում ապացույցման պարտականությունը կրում են կողմերը, սակայն վարչական դատարանը, կաշկանդված չլինելով դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, պարտավոր է գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ և պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու ու գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

Մինչդեռ ստորադաս դատարանները ձեռնամուխ չեն եղել սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցի պարզմանը և չեն ձեռնար-

կել համարժեք միջոցներ ենթադրյալ իրավախախտման կատարման վայրում և պահին տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող թիվ 1.3 գծանշման պահանջը Հարություն Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող «KIA» մակնիշի «25 ՍՍ 352» պետհամարանիշի տրանսպորտային միջոցի վարորդի կողմից կատարելու օբյեկտիվ հնարավորությունը բացահայտելու ուղղությամբ: Այսինքն՝ Դատարանը, բավարարվելով միայն վարչական վարույթի արդյունքում ձեռք բերված տեսանյութի ուսումնասիրությամբ, չի ձեռնարկել համարժեք միջոցներ պարզելու համար այն հանգամանքը, թե 05.08.2015 թվականին՝ ժամը 15:54-ին, Հարություն Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող «KIA» մակնիշի «25 ՍՍ 352» պետհամարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը, մուտք գործելով Երևան քաղաքի Խորենացի, Բեյրութ, Իտալիա, Վազգեն Սարգսյան փողոցների խաչմերուկ, ողջամտորեն կարող էր արդյոք կատարել այդ խաչմերուկի հատվածում գտնվող թիվ 1.3 գծանշման պահանջը, թե՛ ոչ: Մինչդեռ այդ նույն տեսանյութից երևում է, որ նշված խաչմերուկում Վազգեն Սարգսյան փողոցից դեպի Խորենացի փողոց ձախ շրջադարձ կատարող տրանսպորտային միջոցները դժվարանում են պահպանել այդ խաչմերուկի հատվածում գտնվող թիվ 1.3 գծանշման պահանջը՝ այս կամ այն չափով հատելով այդ գիծը: Այսինքն՝ միայն սույն գործում առկա տեսանյութի ուսումնասիրությունը բավարար չէ քննարկվող հարցի շուրջ միանշանակ դատողություն կատարելու համար, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ավելին, սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի Խորենացի, Բեյրութ, Իտալիա, Վազգեն Սարգսյան փողոցների խաչմերուկի հատվածում կատարված գծանշումների խնդրահարույց լինելն ընդունել է նաև Ծառայությունը, քանի որ Ծառայության պետի կողմից 10.02.2016 թվականին տրված գրության համաձայն՝ Երևան քաղաքի Խորենացի, Վազգեն Սարգսյան և Բեյրութի փողոցների խաչմերուկի երկու կողմերի թիվ 1.12 «Կանգ գիծ» գծանշումը նոտավորապես 2 մետր հետ է տարվել Վազգեն Սարգսյան և Բեյրութի փողոցներից տրանսպորտային միջոցների ձախ շրջադարձը դեպի Խորենացի փողոց ավելի դյուրացնելու նպատակով: Թեև վերոգրյալ ապացույցը ներկայացված է եղել Վերաքննիչ դատարանին, սակայն վերջինս իր որոշմամբ չի անդրադարձել այդ փաստաթղթի գնահատմանը: Այնինչ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն ընդունում է (...) դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված ապացույցները, բացառությամբ այն դեպքի, երբ համարում է, որ դրանք գործի լուծման համար էական նշանակություն չունեն:

Անփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու միջոցով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոգրյալ հարցը պարզելու և դրա հիման վրա վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունն օրենքով սահմանված կարգով որոշելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.07.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
վարչական գործ թիվ ՎԴ/4936/05/14  
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան  
Դատավորներ՝ Ա. Աբովյան  
Ա. Բաբայան

վարչական գործ թիվ **ՎԳ/4936/05/14**  
**2017թ.**

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

- Ե. ԽՈՒՆԴՎԱՐՅԱՆԻ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
- Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
- Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոս-  
տիկանություն» ծառայության (այսուհետ՝ ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական  
վերաքննիչ դատարանի 26.01.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արսեն Խաչատու-  
րյանի ընդդեմ ծառայության՝ վարչական ակտերը վերացնելու պահանջի մասին,

### ՊԱՐՁԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Արսեն Խաչատրյանը պահանջել է վերացնել (անվավեր ճա-  
նաչել) ծառայության 30.07.2013 թվականի թիվ 1300819604, 30.07.2013 թվականի թիվ  
1300820598, 06.09.2013 թվականի թիվ 1300942354, 06.09.2013 թվականի թիվ 1300941750,  
09.09.2013 թվականի թիվ 1300949945, 03.09.2013 թվականի թիվ 1300930667, 04.10.2013  
թվականի թիվ 1301024027, 04.10.2013 թվականի թիվ 1301024630, 15.10.2013 թվականի թիվ  
1301057236, 09.10.2013 թվականի թիվ 1301037917, 09.10.2013 թվականի թիվ 1301037942,  
11.10.2013 թվականի թիվ 1301048096, 14.10.2013 թվականի թիվ 1301051607, 23.10.2013  
թվականի թիվ 1301077219, 25.10.2013 թվականի թիվ 1301083554, 04.11.2013 թվականի  
թիվ 1301104229, 07.11.2013 թվականի թիվ 1301114164, 06.11.2013 թվականի թիվ 1301113211  
«վարչական տույժ նշանակելու մասին» որոշումները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ալ. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան)  
03.02.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան)  
26.01.2016 թվականի որոշմամբ ծառայության վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարա-  
նի 03.02.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:



Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ և 29-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապարսպ է հերկյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վիճարկվող վարչական ակտերով արձանագրված իրավախախտումների կատարման պահին Գարիկ Ղամբարյանի կողմից ավտոմեքենան վարելու մասին որևէ ապացույց գործում առկա չէ, իսկ Արսեն Խաչատրյանի և Գարիկ Ղամբարյանի միջև 29.10.2013 թվականին կնքված ավտոմեքենայի վարձակալության պայմանագրով չի կարող հաստատվել այն փաստը, որ վիճարկվող վարչական ակտերով արձանագրված իրավախախտումները կատարել է ոչ թե Արսեն Խաչատրյանը, այլ Գարիկ Ղամբարյանը: Նշված փաստը հիմնավորվելու համար Դատարանը որպես վկա պետք է հրավիրեր և հարցաքններ Գարիկ Ղամբարյանին, ինչը սակայն չի կատարվել, որպիսի պայմաններում ստորադաս դատարանները ոչ իրավաչափորեն ապացուցված են համարել իրավախախտումները վերջինիս կողմից կատարված լինելու հանգամանքը:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արսեն Խաչատրյանը վիճարկվող վարչական ակտերը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում կարող էր վարչական մարմին ներկայացնել այդ վարչական ակտերի հետ իր անհամաձայնությունը և ապացուցել տրանսպորտային միջոցն այլ անձի կողմից վարելու հանգամանքը՝ դրանով իսկ ազատվելով վարչական պատասխանատվությունից: Մինչդեռ Արսեն Խաչատրյանը չի դիմել վարչական մարմնին և չի ապացուցել իրավախախտումներն այլ անձի կողմից կատարված լինելը, հետևաբար Արսեն Խաչատրյանը չէր կարող դատական քննության շրջանակներում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ ազատվել վարչական պատասխանատվությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.01.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ծառայության «Վարչական տույժ նշանակելու մասին» թվով 18 (30.07.2013 թվականի թիվ 1300819604, 30.07.2013 թվականի թիվ 1300820598, 03.09.2013 թվականի թիվ 1300930667, 06.09.2013 թվականի թիվ 1300942354, 06.09.2013 թվականի թիվ 1300941750, 09.09.2013 թվականի թիվ 1300949945, 04.10.2013 թվականի թիվ 1301024027, 04.10.2013 թվականի թիվ 1301024630, 09.10.2013 թվականի թիվ 1301037917, 09.10.2013 թվականի թիվ 1301037942, 11.10.2013 թվականի թիվ 1301057236, 23.10.2013 թվականի թիվ 1301077219, 25.10.2013 թվականի թիվ 1301083554, 04.11.2013 թվականի թիվ 1301104229, 06.11.2013 թվականի թիվ 1301113211, 07.11.2013 թվականի թիվ 1301114164) որոշումներով Արսեն Խաչատրյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք այն բանի համար, որ վերջինիս սեփականության իրավունքով պատկանող «ՕՔԵԼ» մակնիշի «35T0776» համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 2013 թվականի հուլիս, օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին կատարել է ճանապարհային երթևեկու-

թյան տարբեր կանոնների մի շարք խախտումներ, որոնք հայտնաբերվել են տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով (**հատոր 1-ին, գ.թ. 11-28**):

2. Արսեն Խաչատրյանի և Գարիկ Ղամբարյանի միջև 29.10.2013 թվականին կնքված, նոտարական կարգով հաստատված ավտոմեքենայի վարձակալության պայմանագրի համաձայն՝ Արսեն Խաչատրյանը 3 տարի ժամկետով Գարիկ Ղամբարյանի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնել «OPEL» մակնիշի «35T0776» համարանիշի ավտոմեքենան: Ըստ այդ պայմանագրի 6.3-րդ կետի՝ կապված նույն պայմանագրի առարկայի հետ՝ պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև նույն պայմանագրի կնքելը կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ՝ սկսած 01.07.2013 թվականից, քանի որ վարձակալը սկսած 01.07.2013 թվականից փաստացի վարձակալությամբ օգտագործել է մեքենան և մինչև նույն պայմանագրի կնքելն ամբողջությամբ վճարել է նշված ամիսների վարձավճարները (**հատոր 1-ին, գ.թ. 31**):

#### **4. Վճարել դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սովյալ դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձի ապացուցման պարտականության կատարման միջոցով տեսանկարահանմամբ կամ լուսանկարահանմամբ հայտնաբերված ձանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման կառուցակարգի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե տեսանկարահանմամբ կամ լուսանկարահանմամբ հայտնաբերված ձանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը կարող է արդյոք անվավեր ճանաչվել այն հիմքով, որ իրավախախտումը կարարել է տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ ցուցմանը ցուցմանը հարմարվող այլ անձ, եթե տրանսպորտային միջոցի սեփականատերը չի ապացուցել, որ իրավախախտման կատարման պահին իր կողմից վկայակոչված անձն է վարել տրանսպորտային միջոցը (տրանսպորտային միջոցը սեփականատիրոջ կամքից անկախ հանգամանքներում վերջինիս տիրապետությունից դուրս եկած չլինելու դեպքում):*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, (...) քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում. արդյոք, սովյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ. արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության (...):

Վկայակոչված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական պատասխանատվության ոլորտում գործում են «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» կարևորագույն սկզբունքները: Անձնական պատասխանատվության սկզբունքը նշանակում է, որ անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության միայն անձամբ իր կողմից կատարված զանցանքի համար: Իսկ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգուշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավասխտման բացակայության մասին:

Նմանատիպ իրավական դիրքորոշում արտահայտել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ 12.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-920 որոշմամբ նշելով, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավասխտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Հետևաբար մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաև վարչական պատասխանատվության մեկ այլ սկզբունքի՝ անձնական պատասխանատվության սկզբունքին, որի համաձայն՝ անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ կատարած իրավասխտման համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը վարչական պատասխանատվության վերոնշյալ սկզբունքներից կատարել է բացառություն, որը վերաբերում է տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտին:

Այսպես, Վարչական իրավասխտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ ճանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա Վարչական իրավասխտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի հանդիսանում է իրավաբանական անձի սեփականություն, այսպես, որին ամրացված է տրանսպորտային միջոցը կամ տրանսպորտային միջոցն ամրացնելու իրավասություն ունեցող անձը, եթե չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ:

Վարչական իրավասխտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 01.03.2016 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ ճանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա նույն օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ սեփականություն, ապա՝ համապատասխանաբար իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը, եթե չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Վարչական իրավասխտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի վկայակոչված խմբագրությունները, ըստ էության, նախատեսում են միևնույն իրավակարգավորումները, իսկ դրանց միջև առկա տարբերությունը վերաբերում է այն դեպքին, երբ տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով պատկանում է ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձի: Քանի որ սույն վճռաբեկ բողոքով Վճռաբեկ դատարանի առջև բարձ-

րացված հարցը վերաբերում է այն դեպքին, երբ տրանսպորտային միջոցի սեփականատերը ֆիզիկական անձ է, Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ անհրաժեշտ չի համարում անդրադառնալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի՝ 01.03.2016 թվականից առաջ և դրանից հետո գործող խմբագրությունների համեմատական վերլուծությանը: Փոխաբենը, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն որոշմամբ իրավական դիրքորոշումներ ձևավորել այն իրավիճակի վերաբերյալ, երբ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկված՝ տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը վարչական կամ դատական կարգով վիճարկում է իրեն վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը՝ իր վարչական բողոքի կամ հայցի հիմքում դնելով այն հանգամանքը, որ իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ: Ընդ որում, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները վերաբերում են միայն այն դեպքին, երբ տրանսպորտային միջոցը դուրս չի եկել սեփականատիրոջ տիրապետությունից վերջինիս կամքից անկախ հանգամանքներում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնի՝ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով բացահայտված խախտման համար պատասխանատվության ենթակա սուբյեկտի հարցում որոշակիորեն շեղվել է «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» սկզբունքներից և ամրագրել է այն կանխավարկածը, որ քննարկվող դեպքում, ընդհանուր կանոնի համաձայն, վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտը տրանսպորտային միջոցի սեփականատերն է, եթե վերջինս հանդիսանում է ֆիզիկական անձ:

Անդրադառնալով տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ առհասարակ իրավաբանական կանխավարկածն իրավական նորմերով հաստատված այն կանոնն է, որի համաձայն՝ որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը: Ըստ այդմ, վկայակոչված իրավական դրույթով նախատեսված՝ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի էությունը հանգում է հետևյալին. տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթակա է տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, քանի դեռ չի ապացուցվել, որ տվյալ իրավախախտումը կատարել է այլ անձ:

ՀՀ սահմանադրական դատարանը, 21.06.2016 թվականի թիվ ՍԴՌ-1282 որոշմամբ անդրադառնալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավական նորմի սահմանադրականության հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ օրենսդիրը վարչական պատասխանատվության ենթարկելու ընդհանուր կանոնները սահմանելիս քննարկվող դեպքում վարչական պատասխանատվության սուբյեկտ է դիտարկել տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը՝ հաշվի առնելով վերջինիս սեփականության իրավունքի իրացումից ծագող պարտականությունը, այն է՝ հանձնելու տրանսպորտային միջոցն այն անձի փաստացի օգտագործմանը, ով այն պետք է շահագործի ճանապարհային երթևեկության կանոններին համապատասխան՝ դրանով իսկ չխախտելով այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ նշված իրավակարգավորումը նպատակաուղղված է անձանց իրավունքների պաշտպանությանը և պայմանավորված է տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունների կա-

տարման, ինչպես նաև վարչական իրավախախտում կատարած անձի առավել արագ բացահայտման և պատասխանատվության ենթարկման անհրաժեշտությամբ, ինչը ևս ուղղված է այլ անձանց իրավունքների ու օրենքով պահպանվող շահերի պահպանմանը:

Վկայակոչված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ տվյալ իրավախախտություններում տրանսպորտային միջոցի սեփականատերը և իրավաչափ ձևով իր սեփականության օգտագործողը գտնվում են որոշակի իրավապայմանագրային հարաբերությունների մեջ, որը ենթադրում է նաև տրանսպորտային միջոցի օրինաչափ օգտագործման պարտավորություն և իրավախախտման համար պատասխանատվության անխուսափելիություն: Միևնույն ժամանակ, ելնելով մեղքի առկայությամբ պատասխանատվության, պատժի անհատականացման ընդհանուր սկզբունքներից՝ օրենսդիրը քննարկվող դեպքում տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը վարչական պատասխանատվության սուբյեկտ է դիտարկում, եթե տրանսպորտային միջոցի սեփականատերը չի ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ: Նման իրավակարգավորում սահմանելու նպատակը ոչ միայն մեղքի առկայությամբ պատասխանատվության ընդհանուր սկզբունքի պահպանումն է, այլև տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ՝ սեփականության իրավունքի իրացումից ծագող պարտականության չկատարման դեպքերը կանխելը, ինչպես նաև վարչական իրավախախտում կատարած անձի պատասխանատվության անխուսափելիության երաշխավորումը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ելնելով «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» վերոհիշյալ սկզբունքներից՝ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով այդ կանխավարկածը հաղթահարելի է համարել այն դեպքում, երբ ապացուցվում է, որ իրավախախտումը կատարել է այլ անձ: Ընդ որում, տվյալ դեպքում մեղագրվող իրավախախտումն այլ անձի կողմից կատարված լինելու փաստի ապացուցման բեռը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, որն իրավասու մարմնի կողմից ենթարկվել է վարչական պատասխանատվության տեսանկյարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), անդրադառնալով տրանսպորտային միջոցով տեղի ունեցած իրավախախտումների դեպքում այն վարած անձի վերաբերյալ տեղեկություններ հայտնելու տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ վրա դրված պարտականության իրավաչափության հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ավտոմեքենայի յուրաքանչյուր սեփականատեր պետք է գիտակցի, որ ինքը պարտավոր է ենթարկվել որոշակի իրավական կարգավորման ռեժիմի, որի առկայությունը պայմանավորված է տրանսպորտային միջոցների շահագործումից այլոց կյանքին և առողջությանը սպառնացող հնարավոր վտանգով: Հետևաբար այն անձինք, ովքեր ցանկանում են որպես սեփականություն ունենալ և շահագործել ավտոմեքենա, պետք է ստանձնեն որոշակի պատասխանատվություն և պարտականություններ, որոնք հանդիսանում են մեխանիկական տրանսպորտային միջոցներին վերաբերող իրավական կարգավորման ռեժիմի բաղկացուցիչ տարրերը: Ըստ Եվրոպական դատարանի՝ տրանսպորտային միջոցի սեփականատերը որոշ չափով պետք է համաձայնի ստանձնել ցուցմունք տալու պարտականություն՝ կապված իր մեքենայի ներգրավմամբ ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների հետ: Ընդ որում, փոխադրամիջոցների սեփականատերերի վրա տեսանկյարահանման կամ լուսանկարահանման սարքերով հայտնաբերված իրավախախտման կատարման պահին մեքենան վարող անձի մասին տվյալները բացահայտելու պարտականությունը պետք է համարել իրավաչափ՝ հաշվի առնելով իրավախախտման և պատասխանատվության միջոցի ոչ խիստ բնույթը, ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգությունն ապահովելու նկատմամբ հանրային հետաքրքրությունը, ինչպես նաև այդպիսի պարտականությունն ունենալու կանխատեսելիությունը փոխադրամիջոցի սեփականատիրոջ համար (*Կին, O'Halloran and Francis v. The United Kingdom (15809/02, 25624/02) գործով Եվրոպական դատարանի 29.06.2007 թվականի վճիռը, կետեր 52-63*):

Հաշվի առնելով քննարկվող հարցի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում այն մոտեցումը, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման համար անհրաժեշտ իրավաբանական փաստի ապացուցման պարտականությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը: Այլ կերպ ասած, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավական նորմը պետք է մեկնաբանվի և կիրառվի հետևյալ կերպ. եթե (1) տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թույլ տրված ու տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար և (2) վարչական կամ դատական կարգով վիճարկում է իրեն վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտն այն հիմքով, որ իրավախախտման կատարման պահին տվյալ տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ, ապա այդ վարչական ակտը կարող է վերացվել միայն այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձն ապացուցի, որ տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ:

Միևնույն ժամանակ սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում իրավակիրառ պրակտիկայում միատեսակ ընկալում ձևավորել այն փաստական հանգամանքների բովանդակության վերաբերյալ, որոնք տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը պարտավոր է ապացուցել տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածը հաղթահարելու համար:

Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված կանխավարկածի հաղթահարման համար ապացուցման ենթակա փաստական հանգամանքների բովանդակությունն օրենսդիրը սահմանել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում, մասնավորապես՝ հետևյալ դրույթի միջոցով. «(...) եթե չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ (...)»: Նշված իրավական նորմի բովանդակությունից հետևում է, որ տվյալ դեպքում օրենսդրի կողմից կանխորոշված ապացուցման ենթակա փաստական հանգամանքը տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցն այլ անձի կողմից վարելն է: Փաստորեն, քննարկվող իրավիճակում անհրաժեշտ է ապացուցել ոչ թե այն հանգամանքը, որ իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը չի վարել տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, այլ այն հանգամանքը, որ իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ:

Վերոգրյալից ուղղակիորեն հետևում է, որ խնդրո առարկա հասարակական հարաբերությունների կարգավորման հարցում օրենսդրի կամքը հանգում է հետևյալին. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման համար անհրաժեշտ է ոչ թե ապացուցել այն փաստը, որ իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը չի վարել տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, այլ բացահայտել այն հանգամանքը, թե կոնկրետ ով է վարել տրանսպորտային միջոցը, այսինքն՝ թե կոնկրետ որ ֆիզիկական անձն է կատարել տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված իրավախախտումը, և ապացուցել այդ հանգամանքի առկայությունը: Հետևաբար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ապացուցման բեռը կրող սուբյեկտը՝ տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, չի կարող բավարարվել միայն այն փաստի վկայակոչմամբ, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված իրավախախտման կատար-

ման պահին ինքը չի վարել տվյալ տրանսպորտային միջոցը, և պարտավոր է հայտնել, թե իրավախախտման կատարման պահին ով է վարել տվյալ տրանսպորտային միջոցը՝ նշելով այդ անձին նույնականացնելու համար անհրաժեշտ և բավարար տվյալներ (առնվազն վերջինիս անունը և հասցեն): Ընդ որում, տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, մատնացույց անելով որևէ մեկին՝ որպես իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարած անձի, պարտավոր է ապացուցել, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տվյալ տրանսպորտային միջոցը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձի կողմից վկայակոչված կոնկրետ անձի կողմից իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարելու փաստը վարչական կամ դատական ընթացակարգերի շրջանակներում չհաստատվելու (ապացուցված չհամարվելու) դեպքում տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձի վրա օրենքով դրված ապացուցման պարտականությունը համարվում է չկատարված, ինչն էլ հանգեցնում է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վերջինիս պատասխանատվության իրավաչափության հաստատմանը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման մասին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավակարգավորման բովանդակությունը հանգում է հետևյալին. տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը պարտավոր է իրավասու մարմին (վարչական մարմին կամ դատարան) հայտնել իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարած անձի ինքնությունը և ապացուցել, որ իրավախախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տրանսպորտային միջոցը: Հակառակ պարագայում տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածը համարվում է չհաղթահարված, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով վարչական պատասխանատվության ենթակա պատշաճ տույքեկտ է դիտարկվում տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը, և վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտը չի կարող վերացվել այն հիմքով, որ իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում մեխանիկական տրանսպորտային միջոցներով կատարված և տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները կարգավորվում են «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենսդրական ակտում 21.12.2015 թվականին ընդունված և 11.01.2016 թվականից ուժի մեջ մտած թիվ ՀՕ-179-Ն օրենքով կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, որոնք ևս վկայում են այն մասին, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման համար տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը պարտավոր է իրավասու մարմին (վարչական մարմին կամ դատարան) հայտնել իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարած անձի ինքնությունը

և ապացուցել, որ իրավախախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տրանսպորտային միջոցը:

Այսպես, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ 11.01.2016 թվականից գործող խմբագրությամբ 7-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ խախտումն այլ անձի կողմից կատարված լինելու փաստը կարող է ապացուցվել օրենքով սահմանված ժամկետում և կարգով գանգատ (բողոք կամ հայցադիմում) ներկայացնելու (...) միջոցով:

Նույն օրենքի՝ 11.01.2016 թվականից գործող խմբագրությամբ 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված գանգատը (բողոքը կամ հայցադիմումը) կարող է ներկայացվել վարչական ակտի հասցեատիրոջ կամ խախտում կատարած անձի կողմից և պետք է պարունակի խախտումը կատարած անձի անունը, ազգանունը, վարորդական վկայականի սերիան և համարը, բնակության վայրը, ինչպես նաև դրան պետք է կցվեն գանգատը ներկայացնող անձանց անձնագրերի և տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթղթի պատճենները: Եթե տրանսպորտային միջոցն օգտագործվում է գրավոր պայմանագրի հիման վրա, ապա գանգատին (բողոքին կամ հայցադիմումին) պետք է կցվի նաև պայմանագրի պատճենը:

Վկայակոչված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը 11.01.2016 թվականից գործող իրավակարգավորումների միջոցով սահմանել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման, այսինքն՝ տվյալ իրավախախտումը փաստացի չկատարած տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ վարչական պատասխանատվության բացառման և տվյալ իրավախախտման իրական կատարողին պատասխանատվության ենթարկելու պայմաններն ու կարգը: Ըստ այդ իրավակարգավորումների՝ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկված տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը կարող է հասնել իր նկատմամբ ընդունված վարչական ակտի վերացմանը թե՛ վարչական, թե՛ դատական կարգով այդ վարչական ակտը վիճարկելու միջոցով՝ իր բողոքի կամ հայցի հիմքում դնելով այն փաստական հանգամանքը, որ իրավախախտման կատարման պահին տվյալ տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ: Ընդ որում, վարչական կամ դատական կարգով բողոքարկելով տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը՝ վերջինս պարտավոր է վարչական բողոքը քննող վարչական մարմնին կամ դատարանին ներկայացնել, ի թիվս այլ հանգամանքների, հետևյալ տվյալները (փաստաթղթերը).

1) իրավախախտումը կատարած անձի անունը և ազգանունը,

2) իրավախախտումը կատարած անձի վարորդական վկայականի սերիան և համարը, բնակության վայրը,

3) տրանսպորտային միջոցն իրավախախտումը կատարած անձի կողմից օգտագործվելու հիմք հանդիսացող գրավոր պայմանագիրը (առկայության դեպքում):

Փաստորեն, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ 11.01.2016 թվականից գործող խմբագրությամբ 7-րդ հոդվածով սահմանված վերոգրյալ իրավական նորմերով օրենսդիրը տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձի վրա դրել է պարտականություն վարչական բողոքը քննող վարչական մարմնին կամ դատարանին հայտնել որոշակի տեղեկություններ տեսան-



կարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման կատարման պահին տվյալ տրանսպորտային միջոցը վարած անձի և այդ անձի կողմից տրանսպորտային միջոցն օգտագործելու հիմքերի վերաբերյալ:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ օրենսդիրը տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման հարցում դրսևորել է հստակ մոտեցում առ այն, որ նշված կանխավարկածի հաղթահարման համար անհրաժեշտ ապացուցման բեռի բովանդակությունը հանգում է հետևյալին. տրանսպորտային միջոցի սեփականատեր ֆիզիկական անձը պարտավոր է իրավասու մարմնին (վարչական մարմին կամ դատարան) հայտնել իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարած անձի ինքնությունը և ապացուցել, որ իրավախախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տրանսպորտային միջոցը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման համար բավարար հիմքերի առկայության պայմաններում տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու որոշումը վարչական բողոքարկման եղանակով վիճարկելու կառուցակարգը ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից կարող է առավել արդյունավետ կերպով ապահովել անձի խախտված իրավունքների գործնական վերականգնումը, քան քննարկվող կանխավարկածի հաղթահարումը նույն վարչական ակտը դատական կարգով բողոքարկելու և դատական գործ հարուցելու միջոցով:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Արսեն Խաչատրյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է վերացնել Ծառայության «Վարչական տույժ նշանակելու մասին» թվով 18 (30.07.2013 թվականի թիվ 1300819604, 30.07.2013 թվականի թիվ 1300820598, 03.09.2013 թվականի թիվ 1300930667, 06.09.2013 թվականի թիվ 1300942354, 06.09.2013 թվականի թիվ 1300941750, 09.09.2013 թվականի թիվ 1300949945, 04.10.2013 թվականի թիվ 1301024027, 04.10.2013 թվականի թիվ 1301024630, 09.10.2013 թվականի թիվ 1301037917, 09.10.2013 թվականի թիվ 1301037942, 11.10.2013 թվականի թիվ 1301048096, 14.10.2013 թվականի թիվ 1301051607, 15.10.2013 թվականի թիվ 1301057236, 23.10.2013 թվականի թիվ 1301077219, 25.10.2013 թվականի թիվ 1301083554, 04.11.2013 թվականի թիվ 1301104229, 06.11.2013 թվականի թիվ 1301113211, 07.11.2013 թվականի թիվ 1301114164) որոշումները: Նշված վարչական ակտերով Արսեն Խաչատրյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք այն բանի համար, որ վերջինիս սեփականության իրավունքով պատկանող «OPEL» մակնիշի «35T0776» համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 2013 թվականի հուլիս, օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին կատարել է ճանապարհային երթևեկության տարբեր կանոնների մի շարք խախտումներ, որոնք հայտնաբերվել են տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով:

Արսեն Խաչատրյանը վիճարկման հայցի հիմքում դրել է այն փաստարկը, որ վերոգրյալ վարչական ակտերով արձանագրված իրավախախտումների կատարման պահին «OPEL» մակնիշի «35T0776» համարանիշի տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ՝ Գարիկ Ղամբարյանը: Նշված փաստական հանգամանքն ապացուցելու համար Արսեն Խաչատրյանը վարչական դատարան է ներկայացրել իր և Գարիկ Ղամբարյանի միջև 29.10.2013 թվականին կնքված, նոտարական կարգով հաստատված ավտոմեքենայի վարձակալության պայմանագիրը, որի համաձայն՝ Արսեն Խաչատրյանը 3 տարի ժամկետով Գարիկ Ղամբարյանի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հա-

նձնել «OPEL» մակնիշի «35T0776» համարանիշի ավտոմեքենան: Ըստ այդ պայմանագրի 6.3-րդ կետի՝ կապված նույն պայմանագրի առարկայի հետ՝ պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև նույն պայմանագրի կնքելը կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ՝ սկսած 01.07.2013 թվականից, քանի որ վարձակալը սկսած 01.07.2013 թվականից փաստացի վարձակալությամբ օգտագործել է մեքենան և մինչև նույն պայմանագրի կնքելն ամբողջությամբ վճարել է նշված ամիսների վարձավճարները:

Դատարանը բավարարել է Արսեն Խաչատրյանի հայցը՝ պատճառաբանելով, որ Արսեն Խաչատրյանի և Գարիկ Ղամբարյանի միջև 29.10.2013 թվականին կնքված ավտոմեքենայի վարձակալության պայմանագրով հաստատվում է, որ իրավախախտումները կատարելու ժամանակահատվածում՝ 25.07.2013–30.10.2013 թվականներին, «OPEL» մակնիշի «35T0776» պետհամարանիշի ավտոմեքենան գտնվել է Գարիկ Ղամբարյանի օգտագործման և տիրապետման ներքո և շահագործվել է վերջինիս կողմից, որպիսի պարագայում Արսեն Խաչատրյանը զրկված է եղել իրեն սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցով համապատասխան իրավախախտումները կատարելու օբյեկտիվ հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ծառայության վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ ըստ էության համաձայնելով Դատարանի վերոգրյալ դիրքորոշման հետ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտերով Արսեն Խաչատրյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների մի շարք խախտումների համար՝ հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածը: Սույն վարչական գործի շրջանակներում նշված կանխավարկածը հաղթահարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ապացուցման բեռը կրող սուբյեկտը՝ «OPEL» մակնիշի «35T0776» համարանիշի տրանսպորտային միջոցի սեփականատեր Արսեն Խաչատրյանը, վկայակոչել է միայն այն փաստը, որ Ծառայության «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումներով իրեն մեղադրվող և լուսանկարահանման միջոցով հայտնաբերված իրավախախտումների կատարման պահին տվյալ տրանսպորտային միջոցը վարձակալությամբ հանձնված է եղել Գարիկ Ղամբարյանին, ինչը, ըստ հայցվորի, հաստատվում է Արսեն Խաչատրյանի և Գարիկ Ղամբարյանի միջև 29.10.2013 թվականին կնքված ավտոմեքենայի վարձակալության պայմանագրով:

Սակայն Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վիճարկվող վարչական ակտերով Արսեն Խաչատրյանին վերագրվող իրավախախտումները Գարիկ Ղամբարյանի կողմից կատարված լինելու փաստական հանգամանքը վերոգրյալ պայմանագրի միջոցով հաստատված համարելը չի կարող դիտարկվել բավարար հիմք՝ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածը հաղթահարելու համար: Այսպես, ըստ Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշման, տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածը հաղթահարելու համար տրանսպորտային միջոցի սեփականատեր Արսեն Խաչատրյանի վրա դրված ապացուցման բեռը հանգում է հետևյալին. վերջինս պարտավոր է դատարանին հայտնել իրեն մեղադրվող իրավախախտումների կատարման պահին՝ 2013 թվականի հուլիս, օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների համապատասխան օրերին և ժամերին, «OPEL» մակնիշի «35T0776» համարանիշի տրանսպորտային միջոցը վարած անձի ինքնությունը և ապացուցել, որ իրավախախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տվյալ տրանսպորտային միջոցը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ

պատասխանատվության կանխավարկածը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում կարող է հաղթահարվել տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը թե՛ վարչական, թե՛ դատական կարգով բողոքարկելու միջոցով: Ընդ որում, նշված հիմքով վարչական մարմնին վարչական բողոքով դիմելու կամ առանց վարչական բողոք ներկայացնելու անմիջապես դատարան դիմելու հարցում տրանսպորտային միջոցի սեփականատերն օժտված է տնօրինչական հայեցողությամբ. տրանսպորտային միջոցի սեփականատերն է որոշում քննարկվող կանխավարկածի հաղթահարման համար իր նկատմամբ ընդունված վարչական ակտը բողոքարկելու եղանակը: Հետևաբար վճռաբեկ բողոքի այն փաստարկը, որ *Արսեն Խաչատրյանի հայրը ենթակա չէր բավարարման, քանի որ վերջինս վիճարկվող վարչական ակտերը սրանսպուց հեղու 10 օրվա ընթացքում չի դիմել վարչական մարմնին և վարչական վարույթի շրջանակներում չի ապացուցել իրավախախտումներն այլ անձի կողմից կատարված լինելը*, անհիմն է, քանի որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտի վիճարկման հայցի բավարարումը կամ մերժումը որևէ կերպ պայմանավորված չէ այդ վարչական ակտը նախկինում վարչական կարգով բողոքարկված լինելու կամ չլինելու հանգամանքով: Ըստ այդմ, Վերաքննիչ դատարանն իրավաչափորեն է հանգել այն եզրակացության, որ «(...) *իրավախախտման պահին սեփականության իրավունքով անձին պարկանող տրանսպորտային միջոցն այլ անձի կողմից վարելու փաստի վերաբերյալ ապացույցները վարչական մարմնին չներկայացնելու հանգամանքը որևէ կերպ չի կարող սահմանափակել դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս այդ ապացույցը դատարանին ներկայացնելու դատավարական իրավունքը, անկախ այն հանգամանքից, թե այդ հիմքով վարչական ակտը (...) վարչական կարգով բողոքարկվել է կամ այդ ապացույցը (...) վարչական մարմնին ներկայացվել է, թե՛ ոչ (...)*»:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Արսեն Խաչատրյանը չի կատարել օրենքով իր վրա դրված ապացուցման պարտականությունը, այսինքն՝ մատնանշելով այն անձին, ով իրավախախտումների կատարման պահին վարել է «OPEL» մակնիշի «35T0776» համարանիշի տրանսպորտային միջոցը, դատարանն չի ներկայացրել սույն գործով վիճարկվող վարչական ակտերով արձանագրված իրավախախտումներն այդ անձի կողմից կատարված լինելու փաստը հաստատելու համար անհրաժեշտ և բավարար տվյալներ՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արսեն Խաչատրյանի և Գարիկ Ղամբարյանի միջև ավտոմեքենայի վարձակալության պայմանագիրը փաստացի կնքվել է 29.10.2013 թվականին, այսինքն՝ վիճարկվող վարչական ակտերով Արսեն Խաչատրյանին վերագրվող արարքների գերակշռող մասի կատարումից հետո: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ձանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածը պետք է համարվեր չհաղթահարված, և Արսեն Խաչատրյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտերը չէին կարող վերացվել այն հիմքով, որ իրավախախտումների կատարման պահին «OPEL» մակնիշի «35T0776» համարանիշի տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Դատարանը պատշաճ կերպով չի պարզել սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցը, այն է՝ արդյոք Ծառայության «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումներով Արսեն Խաչատրյանին մեղսագրվող արարքների կատարման պահին այլ անձ է վարել վերջինիս սեփականության իրավունքով պատկանող «OPEL» մակնիշի «35T0776» համարանիշի տրանսպորտային միջոցը, թե՛ ոչ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության՝ Արսեն Խաչատրյանի ապացուցման պարտականության կատարումը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո ապա-

հովելու միջոցով գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոհիշյալ հարցը պարզելու համար:

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ, 163-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճարել դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճարել դատարանը, նկատի ունենալով այն, որ վճարել բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի, այդ թվում՝ վճարել բողոքի համար սահմանված և ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.06.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ վճարել դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.01.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վճարել բողոքի համար սահմանված և ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.06.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/0446/05/16  
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան  
Դատավորներ՝ Բ. Մկոյան  
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0446/05/16**  
**2017թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հայկ Ղազարյանի ներկայացուցիչ Աշխեն Դաշյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.02.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հայկ Ղազարյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ ծառայություն) ծառայության 22.10.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503760033 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը.**

Դիմելով դատարան՝ Հայկ Ղազարյանը պահանջել է անվավեր ճանաչել ծառայության 22.10.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503760033 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Անի Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 01.04.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 21.02.2017 թվականի որոշմամբ ծառայության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 01.04.2016 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայկ Ղազարյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ, 22-րդ, 32-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 28-րդ, 124-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ծառայության 22.10.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503760033 որոշմամբ «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ի տնօրեն Հայկ Ղազարյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության ոչ թե իր կատարած իրավախախտման համար, այլ միայն այն բանի համար, որ տվյալ ընկերության վարորդը չի վճարել նախկինում նշանակված տուգանքները:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով Դատարանը չի պահանջել վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի բոլոր նյութերը, որտեղ առկա են համապատասխան ապացույցներ այն մասին, որ Հայկ Ղազարյանը կատարել է «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ձանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իր պարտականությունը: Այսինքն՝ Հայկ Ղազարյանը պատշաճ կերպով հայտնել է վարչական մարմնին այն անձի տվյալները, ում ամրացված է «OPEL» մակնիշի «132 OF 61» համարանիշի տրանսպորտային միջոցը: Հետևաբար վարչական վարույթի նյութերի ամբողջական ուսումնասիրության դեպքում Վերաքննիչ դատարանը չէր գա այն եզրահանգման, որ Հայկ Ղազարյանի կողմից չի մատնանշվել իրավախախտում կատարած անձը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.02.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 01.04.2016 թվականի վճիռը:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության 22.10.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503760033 որոշմամբ Հայկ Ղազարյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 20.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող «OPEL» մակնիշի «132 OF 61» համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 25.08.2015 թվականին՝ ժամը 14:43-ին, Երևան քաղաքի Հալաբյան, Արզումանյան և Հրազդանի կիրճի խաչմերուկի հատվածում չի ենթարկվել լուսացույցի արգելող ազդանշանին (**գ.թ. 4**).

2) Հայկ Ղազարյանը գործի քննության ընթացքում Դատարանին հայտնել է, որ վարչական ակտում նշված տրանսպորտային միջոցը վարում է Արման Խոջոյանը, որի վերաբերյալ Ծառայությունը բազմիցս տեղեկացվել է (**գ.թ. 24-25**).

3) Ծառայության 30.10.2015 թվականի թիվ 17-4-429 գրությամբ «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ի տնօրեն Հայկ Ղազարյանին 12.10.2015 թվականի գրության կապակցությամբ հայտնվել է, որ Արման Խոջոյանի նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ որոշում կայացնել հնարավոր չէ, քանի որ վերջինս այլ տրանսպորտային միջոցներով կատարել է ձանապարհային երթևեկության կանոնների բազմաթիվ խախտումներ, որոնց արդյունքում նրա նկատմամբ կայացվել են վարչական տույժ նշանակելու մասին թվով 30 և ավելի որոշումներ, որոնք չեն վճարվել (**գ.թ. 26**).

4) Ծառայության 23.12.2015 թվականի թիվ 17-4-26363 գրությամբ «Հայկ Ռաֆո»

ՄՊԸ-ի տնօրեն Հայկ Ղազարյանին 15.12.2015 թվականի գրության կապակցությամբ հայտնվել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով Հայկ Ղազարյանի կողմից չեն ներկայացվել պայացույցներ, որոնք հիմնավորում են գրությունում նշված անձանց «Հայկ Ռաֆո» ՄՊԸ-ում աշխատելու և տրանսպորտային միջոցները նրանց ամրակցված լինելու փաստը, ուստի Ծառայության թիվ 1503760033 և այլ որոշումները կայացվել են Հայկ Ղազարյանի նկատմամբ, և դրանց պահանջների կատարման պարտավորությունը կրում է վերջինս՝ որպես տրանսպորտային միջոցներն ամրակցելու իրավասություն ունեցող անձ **(գ.թ. 5)**:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանմամբ կամ լուսանկարահանմամբ հայտնաբերված ձանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության կիրառման կառուցակարգի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

1) *ո՞վ է ենթակա վարչական պատասխանատվության իրավաբանական անձին պարկանող տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանմամբ կամ լուսանկարահանմամբ հայտնաբերված ձանապարհային երթևեկության կանոնների խախտման համար,*

2) *ինչպիսի՞ իրավական կառուցակարգի միջոցով կարող է հաղթահարվել տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ձանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածը:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, (...) քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում. արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ. արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության (...):

Ստանանշված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական պատասխանատվության ոլորտում գործում են «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» կարևորագույն սկզբունքները: Անձնական պատասխանատվության սկզբունքը նշանակում է, որ անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության միայն անձամբ իր կողմից կատարված զանցանքի համար: Իսկ ըստ մեղքի պատաս-

խանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգուշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին:

Նմանատիպ իրավական դիրքորոշում արտահայտել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ 12.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-920 որոշմամբ նշելով, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Հետևաբար՝ մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաև վարչական պատասխանատվության մեկ այլ սկզբունքի՝ անձնական պատասխանատվության սկզբունքին, որի համաձայն՝ անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ կատարած իրավախախտման համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը վարչական պատասխանատվության վերոնշյալ սկզբունքներից կատարել է բացառություն, որը վերաբերում է տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ծանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտին:

Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ ծանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի սեփականություն, ապա այն անձը, որին ամրացված է տրանսպորտային միջոցը կամ տրանսպորտային միջոցն ամրացնելու իրավասություն ունեցող անձը, եթե չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 01.03.2016 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ ծանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա նույն օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ սեփականություն, ապա՝ համապատասխանաբար իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը, եթե չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի վկայակոչված խմբագրությունները, ըստ էության, նախատեսում են միևնույն իրավակարգավորումները, իսկ դրանց միջև առկա տարբերությունը վերաբերում է այն դեպքին, երբ տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով պատկանում է ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձի: Քանի որ սույն վճռաբեկ բողոքով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցը վերաբերում է այն դեպքին, երբ տրանսպորտային միջոցի սեփականատերն իրավաբանական անձ է, Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ անհրաժեշտ է համարում իրավական դիրքորոշումներ ձևավորել այն իրավիճակի վերաբերյալ, երբ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ծանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկված տրանսպորտային միջոցի սեփականատեր իրավաբանական անձի



տնօրենը վարչական կամ դատական կարգով վիճարկում է իրեն վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը՝ իր վարչական բողոքի կամ հայցի հիմքում դնելով այն հանգամանքը, որ իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ: Ընդ որում, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները վերաբերում են միայն այն դեպքին, երբ տրանսպորտային միջոցը դուրս չի եկել սեփականատիրոջ տիրապետությունից վերջինիս կամքից անկախ հանգամանքներում:

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը նախևառաջ անհրաժեշտ է համարում անդրադառնալ մինչև 11.01.2016 թվականը գործող այն օրենսդրական կարգավորումների վերլուծությանը, որոնք վերաբերում են իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար պատասխանատվության ենթակա սուբյեկտին որոշելու կառուցակարգին:

Այսպես, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե իրավախախտումը կատարվել է իրավաբանական անձին (...) պատկանող տրանսպորտային միջոցով, ապա վարչական ակտի հասցեատիրոջը պարզելու նպատակով վարչական մարմինը գրավոր հարցում է կատարում իրավաբանական անձին (...):

Նույն օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարցում ստացած անձը պարտավոր է 5-օրյա ժամկետում վարչական մարմնին գրավոր հայտնել, թե ում է ամրացված տրանսպորտային միջոցը: Գրավոր պատասխանում նշվում են անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, բնակության վայրը:

Վկայակոչված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ մինչև 11.01.2016 թվականը գործող իրավակարգավորումների համաձայն՝ իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար պատասխանատվության ենթակա սուբյեկտին որոշելու հարցը լուծելու համար վարչական մարմինը պարտավոր էր գրավոր հարցում ուղարկել տվյալ իրավաբանական անձին, իսկ վերջինս էլ իր հեթին պարտավոր էր հնգօրյա ժամկետում վարչական մարմնին տրամադրել հարցմամբ պահանջվող տեղեկությունները, մասնավորապես՝ այն անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, բնակության վայրը, ում ամրացված է տվյալ տրանսպորտային միջոցը:

Վերոգրյալ իրավական նորմերը համադրելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ մինչև 01.03.2016 թվականը գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավադրոյթների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարցման միջոցով վարչական մարմնին առաջին հերթին պարտավոր էր պարզել այն անձին, ով ենթակա է վարչական պատասխանատվության իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված իրավախախտման համար: Փաստորեն, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարցումով վարչական մարմինը պարզում էր, թե իրավաբանական անձին պատկանող այն տրանսպորտային միջոցը, որի միջոցով կատարվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնները:

րի խախտում, ամրացված է արդյո՞ք որևէ ֆիզիկական անձի, և որոնք են այդ անձին նույնականացնող տվյալները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաբանական անձին ուղղված քննարկվող հարցման միջոցով վերոգրյալ հանգամանքների պարզումն ապահովում էր իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված իրավախախտման համար վարչական պատասխանատվության կիրառումը պատշաճ սուբյեկտի (այն անձի, որին ամրացված է տվյալ տրանսպորտային միջոցը) նկատմամբ: Ընդ որում, տվյալ դեպքում իրավաբանական անձի կողմից վարչական մարմնի հարցմանը տրվող պատասխանի բովանդակությունն օրենսդիրը սահմանել էր սպառիչ կերպով. իրավաբանական անձը պարտավոր էր օրենքով սահմանված ժամկետում վարչական մարմնին հայտնել այն անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը և բնակության վայրը, ում ամրացված է տվյալ տրանսպորտային միջոցը: Իրավաբանական անձից ստացած տեղեկությունների հիման վրա պարզելով այն անձի տվյալները, ում ամրացված է տվյալ տրանսպորտային միջոցը, վարչական մարմինը պետք է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկվեր այդ անձին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ մինչև 01.03.2016 թվականը գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավական նորմը պետք է մեկնաբանվի և կիրառվի հետևյալ կերպ. եթե (1) իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցն ամրացնելու իրավասություն ունեցող անձը ենթարկվել էր վարչական պատասխանատվության՝ տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թույլ տրված ու տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար և (2) վարչական կամ դատական կարգով վիճարկում է իրեն վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտն այն հիմքով, որ իրավախախտման կատարման պահին տվյալ տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ, ապա այդ վարչական ակտը կարող է վերացվել միայն այն դեպքում, երբ վարչական պատասխանատվության ենթարկված անձն ապացուցի, որ ինքը պատշաճորեն կատարել է «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականությունը: Ասվածը վերաբերում է այն դեպքին, երբ իրավաբանական անձը ստացել է «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարցումը և ողջամտորեն հնարավորություն է ունեցել պատասխանալու դրան: Այսինքն՝ իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցն ամրացնելու իրավասություն ունեցող անձը պարտավոր էր ապացուցել, որ ստանալով վերոհիշյալ հարցումը և ողջամտորեն հնարավորություն ունենալով պատասխանել դրան, այդ հարցմանն ի պատասխան վարչական մարմնին հայտնել է այն անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը և բնակության վայրը, ում ամրացված է տվյալ տրանսպորտային միջոցը: Ընդ որում, այն դեպքում, երբ իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցն ամրացնելու իրավասություն ունեցող անձի կողմից վերոգրյալ պարտականության պատշաճ կատարման փաստը չի հաստատվում, ապա դա հանգեցնում է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցն ամրացնելու իրավասություն ունեցող անձի պատասխանատվության իրավաչափության հաստատմանը:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ հանապատասխան հարցման միջոցով իրավաբանական անձին պատկանող տրանս-

պորտային միջոցով կատարված և տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար պատասխանատվության ենթակա սուբյեկտին որոշելու հարցը լուծելու վերաբերյալ վերը նշված իրավակարգավորումները գործել են մինչև 11.01.2016 թվականը, իսկ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ 11.01.2016 թվականից գործող խմբագրությունն այլևս նման կառուցակարգ չի նախատեսում: Ըստ այդմ, սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 01.03.2016 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տվյալ իրավաբանական անձի ղեկավարի պատասխանատվության կանխավարկածի էությանը և դրա հաղթահարման կառուցակարգին: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնի՝ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով բացահայտված խախտման համար պատասխանատվության ենթակա սուբյեկտի հարցում որոշակիորեն շեղվել է «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» սկզբունքներից՝ ամբողջով տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածը: Անդրադառնալով տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ առհասարակ իրավաբանական կանխավարկածն իրավական նորմերով հաստատված այն կանոնն է, որի համաձայն՝ որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը:

Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 01.03.2016 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով պատկանում է իրավաբանական անձի, ընդհանուր կանոնի համաձայն, տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով բացահայտված ճանապարհային երթևեկության կանոնի խախտման համար վարչական պատասխանատվության է ենթակա տվյալ իրավաբանական անձի ղեկավարը: Փաստորեն, 01.03.2016 թվականից գործող կարգավորումների ուժով օրենսդիրը սահմանել է, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի էությունը հանգում է հետևյալին. տրանսպորտային միջոցն իրավաբանական անձի պատկանելու դեպքում տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթակա է տվյալ իրավաբանական անձի ղեկավարը, քանի դեռ չի ապացուցվել, որ տվյալ իրավախախտումը կատարել է այլ անձ:

ՀՀ սահմանադրական դատարանը, 21.06.2016 թվականի թիվ ՄԴՌ-1282 որոշմամբ անդրադառնալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավական նորմի սահմանադրականության հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ օրենսդիրը վարչական պատասխանատվության ենթարկելու ընդհանուր կանոնները սահմանելիս քննարկվող դեպքում վարչական պատասխանատվության սուբյեկտ է դիտարկել տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը՝ հաշվի առնելով վերջինիս սեփականության իրավունքի իրացու-

մից ծագող պարտականությունը, այն է՝ հանձնելու տրանսպորտային միջոցն այն անձի փաստացի օգտագործմանը, ով այն պետք է շահագործի ճանապարհային երթևեկության կանոններին համապատասխան՝ դրանով իսկ չխախտելով այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ նշված իրավակարգավորումը նպատակաուղղված է անձանց իրավունքների պաշտպանությանը և պայմանավորված է տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունների կատարման, ինչպես նաև վարչական իրավախախտում կատարած անձի առավել արագ բացահայտման և պատասխանատվության ենթարկման անհրաժեշտությամբ, ինչը ևս ուղղված է այլ անձանց իրավունքների ու օրենքով պահպանվող շահերի պահպանմանը:

Վկայակոչված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ տվյալ իրավահարաբերություններում տրանսպորտային միջոցի սեփականատերը և իրավաչափ ձևով իր սեփականության օգտագործողը գտնվում են որոշակի իրավապայմանագրային հարաբերությունների մեջ, որը, ի մասնավորի, ենթադրում է նաև տրանսպորտային միջոցի օրինաչափ օգտագործման պարտավորություն և իրավախախտման համար պատասխանատվության անխուսափելիություն: Միևնույն ժամանակ, ելնելով մեղքի առկայությամբ պատասխանատվության, պատժի անհատականացման ընդհանուր սկզբունքներից՝ օրենսդիրը քննարկվող դեպքում տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը վարչական պատասխանատվության տույժեր է դիտարկում, եթե տրանսպորտային միջոցի սեփականատերը չի ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ: Նման իրավակարգավորում սահմանելու նպատակը ոչ միայն մեղքի առկայությամբ պատասխանատվության ընդհանուր սկզբունքի պահպանումն է, այլև տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ՝ սեփականության իրավունքի իրացումից ծագող պարտականության չկատարման դեպքերը կանխելը, ինչպես նաև վարչական իրավախախտում կատարած անձի պատասխանատվության անխուսափելիության երաշխավորումը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ելնելով «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» վերոհիշյալ սկզբունքներից՝ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով այդ կանխավարկածը հաղթահարելի է համարել այն դեպքում, երբ ապացուցվում է, որ իրավախախտումը կատարել է այլ անձ: Ընդ որում, տվյալ դեպքում մեղսագրվող իրավախախտումն այլ անձի կողմից կատարված լինելու փաստի ապացուցման բեռը կրում է այն անձը, ով տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի ուժով իրավասու մարմնի կողմից ենթարկվել է վարչական պատասխանատվության տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար (իրավաբանական անձի ղեկավարը):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), անդրադառնալով տրանսպորտային միջոցով տեղի ունեցած իրավախախտումների դեպքում այն վարած անձի վերաբերյալ տեղեկություններ հայտնելու տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ վրա դրված պարտականության իրավաչափության հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ավտոմեքենայի յուրաքանչյուր սեփականատեր պետք է գիտակցի, որ ինքը պարտավոր է ենթարկվել որոշակի իրավական կարգավորման ռեժիմի, որի առկայությունը պայմանավորված է տրանսպորտային միջոցների շահագործումից այլոց կյանքին և առողջությանը սպառնացող հնարավոր վտանգով: Հետևաբար, այն անձինք, ովքեր ցանկանում են որպես սեփականություն ունենալ և շահագործել ավտոմեքենա, պետք է ստանձնեն որոշակի պատասխանատվություն և պարտականություններ, որոնք հանդիսանում են մեխանիկական տրանսպորտային միջոցներին վերաբերող իրավական կարգավորման ռեժիմի բաղկացուցիչ տարրերը: Ըստ Եվրոպական դատարանի՝ տրանսպորտային միջոցի սեփականատերը որոշ չափով պետք է համաձայնի ստանձնել ցուցմունք տալու պարտականություն՝ կապված իր մեքենայի ներգրավմամբ ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների հետ: Ընդ որում, փոխադրամիջոցների սեփականատերերի վրա տեսանկարահանման կամ լուսանկարահանման սարքերով հայտնաբերված իրավախախտման կատարման

պահին մեքենան վարող անձի մասին տվյալները բացահայտելու պարտականությունը պետք է համարել իրավաչափ՝ հաշվի առնելով իրավախախտման և պատասխանատվության միջոցի ոչ խիստ բնույթը, ճանապարհային ենթակետության անվտանգությունն ապահովելու նկատմամբ հանրային հետաքրքրությունը, ինչպես նաև այդպիսի պարտականություն ունենալու կանխատեսելիությունը փոխադրամիջոցի սեփականատիրոջ համար (*Կեն, O'Halloran and Francis v. The United Kingdom (15809/02, 25624/02) գործով Եվրոպական դատարանի 29.06.2007 թվականի վճիռը, 52-63-րդ կետեր*):

Հաշվի առնելով քննարկվող հարցի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում այն մոտեցումը, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման համար անհրաժեշտ իրավաբանական փաստի ապացուցման պարտականությունը կրում է այն անձը, ով տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի ուժով իրավասու մարմնի կողմից ենթարկվել է վարչական պատասխանատվության տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար, այսինքն՝ իրավաբանական անձի ղեկավարը:

Այլ կերպ ասած, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 01.03.2016 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավական նորմը պետք է մեկնաբանվի և կիրառվի հետևյալ կերպ. եթե (1) տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով պատկանում է իրավաբանական անձի և իրավաբանական անձի ղեկավարը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թույլ տրված ու տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար և (2) վարչական կամ դատական կարգով վիճարկում է իրեն վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտն այն հիմքով, որ իրավախախտման կատարման պահին տվյալ տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ, ապա այդ վարչական ակտը կարող է վերացվել միայն այն դեպքում, երբ վարչական պատասխանատվության ենթարկված անձն ապացուցի, որ տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ:

Միևնույն ժամանակ տույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում իրավակիրառ պրակտիկայում միատեսակ ընկալում ձևավորել այն փաստական հանգամանքների բովանդակության վերաբերյալ, որոնք տրանսպորտային միջոցն իրավաբանական անձի պատկանելու դեպքում տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի ուժով վարչական պատասխանատվության ենթարկված անձը պարտավոր է ապացուցել այդ կանխավարկածը հաղթահարելու համար:

Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված կանխավարկածի հաղթահարման համար ապացուցման ենթակա փաստական հանգամանքների բովանդակությունն օրենսդիրը սահմանել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում, մասնավորապես՝ հետևյալ դրույթի միջոցով. «(...) *եթե չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ (...)*»: Նշված իրավական նորմի բովանդակությունից հետևում է, որ տվյալ դեպքում օրենսդրի կողմից կանխորոշված ապացուցման ենթակա փաստական հանգամանքը տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցն այլ անձի կողմից վարելն է: Փաստորեն, քննարկվող իրավիճակում անհրաժեշտ է ապացուցել ոչ թե այն հանգամանքը, որ իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցն իրավախախտման կատարման պահին չի վարել տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականա-

տիրոջ պատասխանատվության կանխավարկածի ուժով վարչական պատասխանատվության ենթարկված անձը, այլ այն հանգամանքը, որ իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ:

Վերոգրյալից ուղղակիորեն հետևում է, որ խնդրո առարկա հասարակական հարաբերությունների կարգավորման հարցում օրենսդրի կամքը հանգում է հետևյալին. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման համար անհրաժեշտ է ոչ թե ապացուցել այն փաստը, որ իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցն իրավախախտման կատարման պահին չի վարել տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի ուժով վարչական պատասխանատվության ենթարկված անձը, այլ բացահայտել այն հանգամանքը, թե կոնկրետ ով է վարել տրանսպորտային միջոցը, այսինքն՝ թե կոնկրետ որ ֆիզիկական անձն է կատարել տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված իրավախախտումը, և ապացուցել այդ հանգամանքի առկայությունը: Հետևաբար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ապացուցման բեռը կրող սուբյեկտը՝ իրավաբանական անձի ղեկավարը, չի կարող բավարարվել միայն այն փաստի վկայակոչմամբ, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված իրավախախտման կատարման պահին ինքը չի վարել տվյալ տրանսպորտային միջոցը, և պարտավոր է հայտնել, թե իրավախախտման կատարման պահին ով է վարել տվյալ տրանսպորտային միջոցը՝ նշելով այդ անձին նույնականացնելու համար անհրաժեշտ և բավարար տվյալներ (անուն-վազն վերջինիս անունը և հասցեն): Ընդ որում, տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի ուժով վարչական պատասխանատվության ենթարկված անձը, մատնացույց անելով որևէ մեկին՝ որպես իրավախախտման կատարման պահին իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցը վարած անձի, պարտավոր է ապացուցել, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տվյալ տրանսպորտային միջոցը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ապացուցման բեռը կրող սուբյեկտի (իրավաբանական անձի ղեկավարի) կողմից վկայակոչված կոնկրետ անձի կողմից իրավախախտման կատարման պահին իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցը վարելու փաստը վարչական կամ դատական ընթացակարգերի շրջանակներում չհաստատվելու (ապացուցված չհամարվելու) դեպքում նշված սուբյեկտի վրա օրենքով դրված ապացուցման պարտականությունը համարվում է չկատարված, ինչն էլ հանգեցնում է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վերջինիս պատասխանատվության իրավաչափության հաստատմանը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման մասին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավակարգավորման բովանդակությունը հանգում է հետևյալին. նշված կանխավարկածի ուժով վարչական պատասխանատվության ենթարկված անձը՝ իրավաբանական անձի ղեկավարը, պարտավոր է իրավասու մարմին (վարչական մարմին կամ դատարան) հայտնել իրավախախտման կատարման պահին իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցը վարած անձի ինքնությունը և ապացուցել, որ իրավախախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տրանսպորտային միջոցը: Հակառակ պարագայում տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածը համարվում է չհաղթահարված, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի

3-րդ մասի ուժով վարչական պատասխանատվության ենթակա պատշաճ սուբյեկտ է դիտարկվում իրավաբանական անձի ղեկավարը, և վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտը չի կարող վերացվել այն հիմքով, որ իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքում 21.12.2015 թվականին ընդունված և 11.01.2016 թվականից ուժի մեջ մտած թիվ ՀՕ-179-Ն օրենքով կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, որոնք ևս վկայում են այն մասին, որ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման համար նշված կանխավարկածի ուժով վարչական պատասխանատվության ենթարկված անձը պարտավոր է իրավասու մարմին (վարչական մարմին կամ դատարան) հայտնել իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարած անձի ինքնությունը և ապացուցել, որ իրավախախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տրանսպորտային միջոցը:

Այսպես, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ 11.01.2016 թվականից գործող խմբագրությամբ 7-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ խախտումն այլ անձի կողմից կատարված լինելու փաստը կարող է ապացուցվել օրենքով սահմանված ժամկետում և կարգով գանգատ (բողոք կամ հայցադիմում) ներկայացնելու (...) միջոցով:

Նույն օրենքի՝ 11.01.2016 թվականից գործող խմբագրությամբ 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված գանգատը (բողոքը կամ հայցադիմումը) կարող է ներկայացվել վարչական ակտի հասցեատիրոջ կամ խախտում կատարած անձի կողմից և պետք է պարունակի խախտումը կատարած անձի անունը, ազգանունը, վարորդական վկայականի սերիան և համարը, բնակության վայրը, ինչպես նաև դրան պետք է կցվեն գանգատը ներկայացնող անձանց անձնագրերի և տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթղթի պատճենները: Եթե տրանսպորտային միջոցն օգտագործվում է գրավոր պայմանագրի հիման վրա, ապա գանգատին (բողոքին կամ հայցադիմումին) պետք է կցվի նաև պայմանագրի պատճենը:

Վկայակոչված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը 11.01.2016 թվականից գործող իրավակարգավորումների միջոցով սահմանել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման, այսինքն՝ տվյալ իրավախախտումը փաստացի չկատարած, սակայն նշված կանխավարկածի ուժով վարչական պատասխանատվության ենթարկված անձի վարչական պատասխանատվության բացառման և տվյալ իրավախախտման իրական կատարողին պատասխանատվության ենթարկելու պայմաններն ու կարգը: Ըստ այդ իրավակարգավորումների՝ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկված անձը՝ իրավաբանական անձի ղեկավարը, կարող է հասնել իր նկատմամբ ընդունված վարչական ակտի վերացմանը թե՛ վարչական, թե՛ դատական կարգով այդ վարչական ակտը վիճարկելու միջոցով՝ իր բողոքի կամ հայցի հիմքում դնելով այն փաստական հանգամանքը, որ իրավախախտման կատարման պահին տվյալ տրանսպորտային միջոցը վարել է այլ անձ: Ընդ որում, վարչական կարգով բողոքարկման վարույթի կամ դատական գործի քննության ընթացքում տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի ուժով վարչական պատասխանատվության

ենթարկված անձը պարտավոր է վարչական բողոքը քննող վարչական մարմնին կամ դատարանին ներկայացնել, ի թիվս այլնի, հետևյալ տվյալները (փաստաթղթերը)։

4) իրավախախտումը կատարած անձի անունը և ազգանունը,

5) իրավախախտումը կատարած անձի վարորդական վկայականի սերիան և համարը, բնակության վայրը,

6) տրանսպորտային միջոցն իրավախախտումը կատարած անձի կողմից օգտագործվելու հիմք հանդիսացող գրավոր պայմանագիրը (առկայության դեպքում)։

Փաստորեն, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ 11.01.2016 թվականից գործող խմբագրությամբ 7-րդ հոդվածով սահմանված վերոգրյալ իրավական նորմերով օրենսդիրը տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկված անձի վրա դրել է պարտականություն վարչական բողոքը քննող վարչական մարմնին կամ դատարանին հայտնել որոշակի տեղեկություններ տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման կատարման պահին տվյալ տրանսպորտային միջոցը վարած անձի և այդ անձի կողմից տրանսպորտային միջոցն օգտագործելու հիմքերի վերաբերյալ։

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ օրենսդիրը տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման հարցում դրսևորել է հստակ մոտեցում՝ առ այն, որ նշված կանխավարկածի հաղթահարման համար անհրաժեշտ ապացուցման բեռն բովանդակությունը հանգում է հետևյալին. տրանսպորտային միջոցն իրավաբանական անձի պատկանելու դեպքում տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկված անձը՝ իրավաբանական անձի ղեկավարը, պարտավոր է իրավասու մարմնին (վարչական մարմին կամ դատարան) հայտնել իրավախախտման կատարման պահին տրանսպորտային միջոցը վարած անձի ինքնությունը և ապացուցել, որ իրավախախտման կատարման պահին հենց այդ անձն է վարել տրանսպորտային միջոցը։ Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատասխանատվության կանխավարկածի հաղթահարման համար բավարար հիմքերի առկայության պայմաններում տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու որոշումը վարչական բողոքարկման եղանակով վիճարկելու կառուցակարգը ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից կարող է առավել արդյունավետ կերպով ապահովել անձի խախտված իրավունքների գործնական վերականգնումը, քան քննարկվող կանխավարկածի հաղթահարումը նույն վարչական ակտը դատական կարգով բողոքարկելու և դատական գործ հարուցելու միջոցով։

### ***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Հայկ Ղազարյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է վերացնել Ծառայության 22.10.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503760033 որոշումը։ Նշված վարչական ակտով Հայկ Ղազարյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 20.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ին սեփականության իրավուն-



քով պատկանող «OPEL» մակնիշի «132 OF 61» համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը 25.08.2015 թվականին՝ ժամը 14:43-ին, Երևան քաղաքի Հալաբյան (Արզումանյան) և Հրազդանի կիրճի խաչմերուկի հատվածում չի ենթարկվել լուսացույցի արգելող ազդանշանին:

Հայկ Ղազարյանի կողմից 16.03.2016 թվականին Դատարան է ներկայացվել «Հայցի հիմքի վերաբերյալ իրավական փաստարկներ» վերտառությամբ փաստաթուղթը, որի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտում նշված տրանսպորտային միջոցը վարում է Արման Խոջոյանը, որի վերաբերյալ բազմիցս հայտնվել է Ծառայությանը: Ծառայության կողմից 30.10.2015 թվականի թիվ 17-4-429 գրությամբ «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ի տնօրեն Հայկ Ղազարյանին հայտնվել է, որ Արման Խոջոյանի նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ որոշում կայացնել հնարավոր չէ, քանի որ վերջինս այլ ավտոտրանսպորտային միջոցներով կատարել է ճանապարհային երթևեկության կանոնների բազմաթիվ խախտումներ, որոնց արդյունքում նրա նկատմամբ կայացվել են վարչական տույժ նշանակելու մասին 30 և ավելի որոշումներ, որոնք չեն վճարվել:

Դատարանը բավարարել է Հայկ Ղազարյանի հայցը և անվավեր է ճանաչել Ծառայության 22.10.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503760033 որոշումը: Դատարանը վճռի հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ տվյալ դեպքում վարչական մարմինը, կրելով իր ընդունած վարչական ակտի համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը, չի ապացուցել, որ Ծառայության 22.10.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503760033 որոշմամբ Հայկ Ղազարյանին վերագրվող արարքը կատարվել է վերջինիս կողմից, ինչն էլ հանգեցնում է վիճարկվող վարչական ակտի անվավերության:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Ծառայության վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի վճիռը և փոփոխել այն՝ մերժելով Հայկ Ղազարյանի հայցը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում Ծառայության 22.10.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503760033 որոշմամբ Հայկ Ղազարյանին վերագրվող արարքն այլ անձի կողմից կատարված լինելու փաստի ապացուցման պարտականությունը կրում է ոչ թե պատասխանող վարչական մարմինը, այլ հայցվոր Հայկ Ղազարյանը: Մինչդեռ ըստ Վերաքննիչ դատարանի՝ սույն վարչական գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Հայկ Ղազարյանը վարչական իրավախախտման կատարման պահին Ընկերությանը պատկանող տրանսպորտային միջոցը չի վարել. այդպիսի ապացույց Հայկ Ղազարյանի կողմից չի ներկայացվել նաև վարչական մարմնին:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով Հայկ Ղազարյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության «OPEL» մակնիշի «132 OF 61» համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդի կողմից կատարված և տեսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնի խախտման (լուսացույցի արգելող ազդանշանին չենթարկվելու) համար՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայկ Ղազարյանը նշված տրանսպորտային միջոցի սեփականատեր «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ի տնօրենն է և այդ տրանսպորտային միջոցն ամրացնելու լիազորություն ունեցող անձը: Այսինքն՝ վիճարկվող վարչական ակտով Հայկ Ղազարյանին պատասխանատվության ենթարկելիս Ծառայությունն առաջնորդվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ մինչև 01.03.2016 թվականը գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 3-րդ մասով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա են որոշ ոչ ամբողջական տվյալներ այն մասին, որ «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ն Ծառայության 22.10.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503760033 որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմնին հայտնել է այն անձի տվյալները, ում ամրացված է «OPEL» մակնիշի «132 OF 61» համարանիշի տրանսպորտային միջոցը՝

պատասխանելով «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ծառայության հարցմանը: Մինչդեռ վարչական մարմինը պատասխանատվության է ենթարկել ոչ թե «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ի կողմից որպես տվյալ տրանսպորտային միջոցը վարող անձ մատնանշված ոմն Արման Խոջոյանին, այլ «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ի տնօրենին՝ որպես տրանսպորտային միջոցն ամրացնելու իրավասություն ունեցող անձի: Ընդ որում, ծառայությունն իր այդ վարքագիծը պատճառաբանել է այն հանգամանքով, որ «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ի կողմից մատնանշված անձն արդեն իսկ բազմիցս ենթարկվել է վարչական պատասխանատվության ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար և չի վճարել իր նկատմամբ առաջադրված տուգանքները:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ տվյալ դեպքում ծառայության կողմից «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ին պատկանող «OPEL» մակնիշի «132 OF 61» համարանիշի տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնի խախտման համար այդ իրավաբանական անձի տնօրեն Հայկ Ղազարյանին պատասխանատվության ենթարկելու պատճառաբանությունները չեն բխում վիճարկվող վարչական ակտի ընդունման պահին գործող վերը վկայակոչված իրավակարգավորումներից և հակասում են դրանց: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ այն անձը, ում ամրացված է իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցը, օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ենթակա էր վարչական պատասխանատվության այդ տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ անձը վճարել է իր նկատմամբ նախկինում նշանակված տուգանքների գումարները, թե՛ ոչ: Այսինքն՝ ծառայության այն փաստարկը, որ «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ի կողմից որպես «OPEL» մակնիշի «132 OF 61» համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդ մատնանշված անձը՝ Արման Խոջոյանը, «կայարտել է ճանապարհային երթևեկության կանոնների բազմաթիվ խախտումներ, ավելի քան 30 անգամ ենթարկվել է վարչական պարասպարվության ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար և չի վճարել իր նկատմամբ առաջադրված տուգանքները», չի կարող որևէ իրավաբանական նշանակություն ունենալ «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ին պատկանող այդ տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանման միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնի խախտման համար պատասխանատվության ենթակա սուբյեկտի հարցը լուծելու համար:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի նյութերում բացակայում են ինչպես ծառայության 22.10.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503760033 որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ին ծառայության կողմից «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարցման, այնպես էլ այդ հարցման՝ նույն օրենքի մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված և «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ի կողմից տրված պատասխանի օրինակները: Նշված ապացույցների բացակայության պայմաններում հնարավոր չէ միանշանակ դատողություն կատարել այն հարցի կապակցությամբ, թե «Հայկ Ռաֆո» ՍՊԸ-ն պատշաճ կերպով կատարել է արդյոք իրավահարաբերության պահին գործող

օրենսդրությամբ իր վրա դրված պարտականությունը՝ հայտնելու այն անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը և բնակության վայրը, ում ամրացված է «OPEL» մակնիշի «132 OF 61» համարանիշի տրանսպորտային միջոցը: Ասվածն էլ իր հերթին նշանակում է, որ գործի քննության ներկայիս փուլում հնարավոր չէ գնահատել վիճարկվող վարչական ակտի համապատասխանությունը «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ձանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված նորմերին:

Անփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևյալ եզրահանգման, որ սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեն հետևյալ հարցերը.

- արդյո՞ք Ծառայությունը «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ձանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 11.01.2016 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված նորմին համապատասխան հարցում ուղարկել է «Հայկ Ռ-աֆո» ՍՊԸ-ին վարչական ակտի հասցեատիրոջը պարզելու համար, և

- արդյո՞ք «Հայկ Ռ-աֆո» ՍՊԸ-ն Ծառայության հարցմանն ի պատասխան պատշաճ կերպով հայտնել է վերջինիս այն անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը և բնակության վայրը, ում ամրացված է «OPEL» մակնիշի «132 OF 61» համարանիշի տրանսպորտային միջոցը:

Հինք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները պատշաճ կերպով չեն պարզել սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերի շրջանակը: Հետևաբար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու միջոցով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոգրյալ հարցերը պարզելու և դրա հիման վրա վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունն օրենքով սահմանված կարգով որոշելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.02.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազբոսություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազբոսություններ*



## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

**1) Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը:**

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Սարգիս Խաչատրյանի կողմից 04.03.2011 թվականին օտարվել է «MERCEDES-BENZ C 220» մակնիշի, իսկ 07.12.2011 թվականին՝ «BMW 525 TDS» մակնիշի ավտոմեքենաները: Փաստորեն, «BMW 525 TDS» մակնիշի ավտոմեքենայի օտարման գործարքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, քանի որ այդ գործարքով օտարված գույքը ձեռք է բերվել 02.06.2011 թվականին, այսինքն՝ մեկ օրացուցային տարում երկրորդ նույն տեսակի գույքի օտարումը կատարվել է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

**2) Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը, չի կիրառել նույն օրենքի 36-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:**

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Տեսչության 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշումն ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընթացակարգային պահանջների պահպանմամբ: Այսպես, Սարգիս Խաչատրյանը չի ծանուցվել նշված վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի հարուցման վերաբերյալ, քանի որ այդ վարչական վարույթի տևողությունը չի գերազանցել օրենքով սահմանված եռօրյա ժամկետը: Բացի այդ, Տեսչության 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշումը կայացվել է դրա ընդունման համար անհրաժեշտ փաստաթղթերի, գործի՝ բավարար չափով պարզաբանված և ճշգրտված հանգամանքների հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստը, որ Սարգիս Խաչատրյանը տեղյակ է եղել իր մոտ ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորության առկայության մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.09.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Սարգիս Խաչատրյանը 04.03.2011 թվականին օտարել է «MERCEDES-BENZ C220» մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերել 09.11.2010 թվականին, իսկ 07.12.2011 թվականին՝ «BMW 525 TDS» մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերել 02.06.2011 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 16, 67**).

2) Ֆիզիկական անձի իրականացրած գործարքների մատով ավելացված արժեքի հարկի հաշվարկի և ավելացված արժեքի հարկի անձնական հաշվի քարտի համաձայն՝ ավելացված արժեքի հարկի գծով 2011 թվականի համար Սարգիս Խաչատրյանի հարկային պարտավորությունը կազմում է 849.336 ՀՀ դրամ, որից 333.400 ՀՀ դրամ՝ ապառք, 333.400 ՀՀ դրամ՝ տուգանք և 182.536 ՀՀ դրամ՝ տույժ (**հատոր 1-ին, գ.թ. 18, 21**).

3) Տեսչության «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշման համաձայն՝ Սարգիս Խաչատրյանից գանձվել է 849.336 ՀՀ դրամ՝ որպես ավելացված արժեքի հարկի գծով 14.10.2014 թվականի դրությամբ վերջինիս ունեցած հարկային պարտավորություն (**հատոր 1-ին, գ.թ. 3**).

4) Տեսչության «Հարկ վճարողի գույքի (այդ թվում դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա արգելանք դնելու մասին» 27.10.2014 թվականի թիվ 028680 որոշմամբ 849.336 ՀՀ դրամի չափով արգելանք է դրվել Սարգիս Խաչատրյանի գույքի վրա **(հատոր 1-ին, գ.թ. 62):**

**4. Վճռաբեկ դատարանի պայրձառարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ սույն գործով վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում իրականացված նույն տեսակի գույքի երկրորդ և ավելի թվով օտարման գործարքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով ապրանքի մատակարարում որակելու իրավական հիմքերի և առանձնահատկությունների, ինչպես նաև վարչական վարույթի մասին ծանուցելու և վարույթի ընթացքում լուումներ անցկացնելու միջոցով մարդու՝ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար զատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքների բաղադրատարր հանդիսացող լսված լինելու իրավունքի կենսագործման կառուցակարգի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

- *մեկ օրացուցային տարվա ընթացքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից առաջին գործարքով օտարված գույքի ձեռքբերման պահը կարող է արդյո՞ք նշանակություն ունենալ նույն տեսակի գույքի երկրորդ և ավելի թվով օտարումներն ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք որակելու համար,*
- *արդյո՞ք վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի փակումները եռօրյա ժամկետը չգերազանցելն ինքնին իրավաչափ հիմք է հանդիսանում այդ վարույթի ընթացքում լուումներ չանցկացնելու համար:*

**1) Քննելով վճռաբեկ բողոքն առաջին հիմքով՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (...) անուղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ ԱԱՀ վճարողներ են համարվում օրենքով սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող և նույն օրենքի 6-րդ հոդվածում թվարկված գործարքներ (գործառնություններ) իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք (...):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը), եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝ ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով: (...) Մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի, որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում (...):

Վճարել դատարանն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրույթների վերլուծության արդյունքում արձանագրում է, որ ավելացված արժեքի հարկի՝ որպես անուղակի հարկի հարկվող օբյեկտն ավելացված արժեքի հարկ վճարողների կամ ավելացված արժեքի հարկի վճարման պարտավորություն կրող անձանց կողմից իրականացվող օրենքով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքն է (շրջանառությունը): Որպես կանոն՝ ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտը ձեռնարկատիրական գործունեություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատերերի) իրականացրած գործարքներն են: Սակայն, բացի վերը նշված անձանց կողմից իրականացրած գործարքների, օրենսդիրը որդեգրել է այն մոտեցումը, որ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող մի շարք գործարքներ որոշակի պայմանների առկայության դեպքում ևս «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով դիտարկվում են որպես ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ: Նշված գործարքներից են, մասնավորապես, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի չորրորդ պարբերությամբ սահմանված գործարքները, որոնք վերաբերում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում իրականացված որոշակի կետագործիայի գույքի երկրորդ և ավելի թվով օտարմանը:

ՀՀ վճարելի դատարանն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում իրականացված նույն տեսակի գույքի երկրորդ և ավելի թվով օտարման գործարքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով ապրանքի մատակարարում որակելու իրավական հիմքերի և առանձնահատկությունների վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է արտահայտել *Մհեր Կակոսյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության թիվ ՎԴ/0811/05/15 վարչական գործով 26.12.2016 թվականի որոշմամբ*: Նշված որոշման շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ընդհանրացված կերպով հանգում են հետևյալին.

ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք, հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մեկից ավելի անգամ օտարել է որոշակի կատագորիայի գույք՝ բնակարան, առանձնատուն, անձնական օգտագործման ավտոմեքենա, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողեր, ավտոտնակ,



2) թե՛ առաջին, թե՛ հաջորդող գործարքներով տեղի է ունեցել անձի սեփականությունը հանդիսացող գույքի օտարում,

3) թե՛ առաջին, թե՛ հաջորդող օտարումները կատարվել են որևէ ձևով հատուցման դիմաց, այսինքն՝ օտարողը ստացել է կամ պետք է ստանա վճար կամ այլ հանդիպական կատարում գույքի օտարման դիմաց,

4) գործարքով օտարվել է այնպիսի տեսակի գույք, որպիսի տեսակի գույք նախկինում մեկ օրացուցային տարվա ընթացքում արդեն օտարվել է նույն անձի կողմից (այսուհետև՝ նույն տեսակի գույք),

5) նույն տեսակի գույքի օտարման թե՛ առաջին, թե՛ երկրորդ և հաջորդող գործարքներն իրականացվել են միննույն թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում,

6) երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարման գործարքով օտարվել է գույք, որը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե գործարքը բավարարում է վերը նշված բոլոր պայմաններին, ապա այն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք, իսկ եթե նշված պայմաններից որևէ մեկը բացակայում է, ապա գործարքը չի կարող համարվել ապրանքի մատակարարում:

Վկայակոչված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի չորրորդ պարբերությամբ նախատեսված՝ գույքի օտարման երկրորդ կամ հաջորդող գործարքն ապրանքի մատակարարում համարելու տեսանկյունից էական է, որ տվյալ գործարքով մեկ օրացուցային տարում թվով երկրորդ կամ հաջորդող անգամ օտարվի այնպիսի գույք, որը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, իսկ նույն օրացուցային տարվա ընթացքում առաջին գործարքով օտարված գույքը ֆիզիկական անձի կողմից ձեռք բերելու ժամանակահատվածը որևէ նշանակություն չունի նույն օրացուցային տարվա ընթացքում հետագայում նույն տեսակի գույքն օտարելու գործարքն ապրանքի մատակարարում որակելու համար: Այլ կերպ ասած՝ գործարքն ապրանքի մատակարարում համարելու համար էական է ոչ թե դրան նախորդող գործարքներով օտարված նույն տեսակի գույքի ձեռքբերման, այլ հենց տվյալ գործարքով օտարվող գույքի ձեռքբերման ժամանակահատվածը:

ՀՀ վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է օրենսդրի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի չորրորդ պարբերությունում առկա «եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում» արտահայտության տառացի մեկնաբանությունից, որում օրենսդիրն օգտագործել է «տվյալ գույքի» արտահայտությունը՝ նկատի ունենալով քննարկվող գործարքով օտարվող գույքը, այլ ոչ թե նույն օրացուցային տարվա ընթացքում նախկինում օտարված գույքը: Այսպիսով, մեկ օրացուցային տարվա ընթացքում երկրորդ և հաջորդող նույն տեսակի գույքի օտարման գործարքն ապրանքի մատակարարում որակելու համար այդ գույքի ձեռքբերման և օտարման գործարքների միջև ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի մեկ տարին՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է ձեռք բերվել տվյալ օրացուցային տարում առաջին օտարված գույքը (*յրես, Միեր Կակոյայանն ընդդեմ ՀՀ Ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային Կենտրոնի թիվ ՎԳ/0811/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նույն գործով վիճարկվող վարչական ակտով՝ Տեսչության «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշմամբ Սարգիս Խաչատրյանից գանձվել է 849.336 ՀՀ դրամ՝ որպես ավելացված արժեքի հարկի գծով 14.10.2014 թվականի դրությամբ վերջինիս ունեցած հարկային պար-

տավորություն: Այսպես, ըստ Տեսչության, Սարգիս Խաչատրյանը մեկ օրացուցային տարվա ընթացքում՝ 2011 թվականին, օտարել է սեփականության իրավունքով իրեն պատկանող երկու նույն տեսակի գույք (անձնական օգտագործման ավտոմեքենա)։ 04.03.2011 թվականին՝ «MERCEDES-BENZ C220» մակնիշի ավտոմեքենա, իսկ 07.12.2011 թվականին՝ «BMW 525 TDS» մակնիշի ավտոմեքենա: Ընդ որում, վերջին գործարքով օտարված «BMW 525 TDS» մակնիշի ավտոմեքենան Սարգիս Խաչատրյանը ձեռք է բերել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում՝ 02.06.2011 թվականին: Հետևաբար Տեսչությունը գտել է, որ Սարգիս Խաչատրյանի կողմից 07.12.2011 թվականին կնքված «BMW 525 TDS» մակնիշի ավտոմեքենայի օտարման գործարքն (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, այսինքն՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք:

Սույն գործով վիճարկվող մյուս վարչական ակտով՝ Տեսչության 27.10.2014 թվականի թիվ 028680 որոշմամբ, վերոգրյալ վարչական ակտով գանձման ենթակա 849.336 ՀՀ դրամի չափով արգելանք է դրվել Սարգիս Խաչատրյանի գույքի վրա:

Դատարանը բավարարել է Սարգիս Խաչատրյանի հայցը և անվավեր է ճանաչել սույն գործով վիճարկվող վարչական ակտերը՝ գտնելով, որ Սարգիս Խաչատրյանի կողմից կնքված օտարման գործարքները չեն կարող գնահատվել որպես ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ և դրանց նկատմամբ չեն կարող հաշվարկվել հարկային պարտավորություններ, քանի որ մեկ օրացուցային տարվա ընթացքում իրականացվել է երկու ավտոմեքենաների օտարում, սակայն այդ ավտոմեքենաները ձեռք են բերվել տարբեր ժամանակաշրջաններում:

Վերաքննիչ դատարանը մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ հիմնավոր համարելով Դատարանի վերոգրյալ պատճառաբանությունները:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Սարգիս Խաչատրյանի կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում՝ 2011 թվականին, նույն տեսակի գույքի (անձնական օգտագործման ավտոմեքենա) օտարման երկրորդ գործարքը՝ 07.12.2011 թվականին «BMW 525 TDS» մակնիշի ավտոմեքենայի օտարումը, ավելացված արժեքի հարկով հարկվող ապրանքի մատակարարում որակելու համար որևէ էական նշանակություն չունի այն հանգամանքը, թե երբ է ձեռք բերվել նույն տարվա ընթացքում Սարգիս Խաչատրյանի կողմից կնքված առաջին գործարքով օտարված «MERCEDES-BENZ C220» մակնիշի ավտոմեքենան, քանի որ գործարքն ապրանքի մատակարարում համարելու համար էական է ոչ թե դրան նախորդող գործարքներով օտարված նույն տեսակի գույքի ձեռքբերման, այլ հենց տվյալ գործարքով օտարվող գույքի ձեռքբերման պահը, ինչը հաշվի չի առնվել ստորադաս դատարանների կողմից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է. Վերաքննիչ դատարանը թույլ է տվել իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նյութական իրավունքի նորմի խախտում՝ սխալ մեկնաբանելով այն: Այնուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոգրյալ դատական սխալը չի կարող ազդել սույն գործի ելքի վրա՝ ստորև ներկայացվող պատճառաբանություններով:

**2) Քննելով վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.**

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին

մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու (...) հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ նույն օրենքով նախատեսված գործառնությունները (ընթացիկ փուլ): Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ): Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել միայն եզրափակիչ փուլով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներ են՝ (ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ, (բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝ եռօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին: Նշված անձանց (...) վարչական մարմինը ծանուցում է վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում

պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լուսմներ կարող են չանցկացվել, եթե՝ (ա) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լուսմներ անցկացվեն, (բ) դիմումն ակնհայտ անհիմն է, (գ) ընդունվում է բանավոր վարչական ակտ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լուսմներ չեն անցկացվում, եթե՝ (ա) անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման, (բ) ընդունվում է այլ ձևի վարչական ակտ: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ լուսմներ չեն անցկացվում կամ կարող են չանցկացվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ ոչ միայն տեսականորեն, այլ նաև գործնականում. արդյունավետ միջոցը պետք է օժտված լինի մարդու իրավունքի ենթադրյալ խախտումը կամ դրա շարունակումը կանխելու, կամ իրավունքի խախտման համար պատշաճ փոխհատուցում ապահովելու հատկանիշով (*ytü, İlhan v. Turkey* (22277/93) գործով *Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 27.06.2000 թվականի վճիռը, կետ 97*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով և Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված մարդու՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը ներառում է նաև վարչական վարույթի ընթացքում լաված լինելու իրավունքը, որի ապահովման պարտականությունն օրենսդիրը «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով դրել է վարույթն իրականացնող վարչական մարմնի վրա: Իսկ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով վարչական վարույթի ընթացքում լաված լինելու իրավունքը բարձրացվել է սահմանադրական մակարդակի. 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածում, որպես պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր, ամրագրված է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական վարույթի մասնակիցների՝ ընդունվելիք վարչական ակտի հասցեատիրոջ և երրորդ անձանց, լաված լինելու իրավունքի իրացման միջոցով վերջիններս հնարավորություն են ստանում արդյունավետ կերպով պաշտպանելու և իրականացնելու իրենց այն իրավունքներն ու շահերը, որոնց վերաբերում է տվյալ վարչական վարույթը: Այդ իրավունքի պատշաճ կենսագործման շնորհիվ վարչական վարույթի մասնակիցներն իրազեկվում են իրենց իրավական և փաստական վիճակի վրա ազդող վարչական վարույթի հարուցման և դրա արդյունքում արձակվելիք վարչական ակտի հիմքում դրվող փաստական և իրավական հանգամանքների վերաբերյալ՝ հնարավորություն ունենալով վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցի կապակցությամբ դիքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողություններ կատարելու միջոցով ազդելու վարչական մարմնի վերջնական որոշման վրա: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ վարչական մարմինը լսի, ի գիտություն ընդունի և գնահատի վարույթի մասնակիցների դիքորոշումները: Վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցների ներկայությունն ապահովելու վարչական մարմնի պարտականությունը կարևոր երաշխիք է հանդիսանում վարույթի մասնակցի՝ իրեն ընձեռված իրավունքներն իրացնելու և պաշտպանության միջոցներից օգտվելու համար: Ընդ որում, այդ իրավունքի իրացմանը խոչընդոտելը, այդ իրավունքի իրացման համար լիարժեք հնարավորու-

թյուն չապահովելը կամ անհիմն՝ ոչ ողջամիտ սահմանափակումներ ստեղծելն անթույլատրելի է:

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ օրենսդրի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի պարտականության նպատակը չի սահմանափակվում միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովելով, դրանով մասնակիցները նաև նպաստում են գործի փաստական հանգամանքները պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը: Այսպիսով, իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքը գործնականում իրացնելը (տե՛ս, *Տիգրան Աբադյանն ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի՝ թիվ ՎԴ/5539/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*): Այդ նպատակին հասնելու համար օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում սահմանել է վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը:

Այսպես, նախևառաջ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին լսելու վարչական մարմնի պարտականությունը, որի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է վերջիններիս հնարավորություն տալ արտահայտվելու տվյալ վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքի գործնական իրացումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի ընթացիկ փուլում, երբ վարչական մարմինն իրականացնում է գործի փաստերի ուսումնասիրություն և պարզում է կիրառման ենթակա իրավական ակտերը. այս փուլում կատարվում են վարչական ակտ ընդունելուն ուղղված հիմնական գործողությունները, մասնավորապես՝ վարչական գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների բացահայտումը, անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումը և գնահատումը, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Բացի այդ, վարույթի ընթացիկ փուլում լսումները պետք է իրականացվեն այն հաշվառմամբ, որ վարույթի մասնակիցները դեռ հնարավորություն ունենան իրենց դիրքորոշմամբ ազդելու վարչական մարմնի որոշման վրա:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում օրենսդիրը նախատեսել է վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքից որոշ բացառություններ: Ընդ որում նշված հոդվածի 2-րդ մասը սահմանում է լսումներ չանցկացնելու այն հիմքերը, որոնց առկայության դեպքում վարչական մարմինն ունի հայեցողական լիազորություն ընտրելու լսումներ անցկացնելու կամ չանցկացնելու երկու իրավաչափ լուծումներից մեկը: Վարչական վարույթի ընթացքում լսումներ չանցկացնելու հայեցողական հիմքերն են.

ա) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լսումներ անցկացվեն,

բ) վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացած դիմումն ակնհայտ անհիմն է,

գ) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բանավոր վարչական ակտ:

Մինչդեռ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է լսումներ չանցկացնելու իմպերատիվ հիմքերը, որոնք են՝

ա) անհրաժեշտություն է առաջացել անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման,

բ) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է այլ ձևի վարչական ակտ:

Ընդ որում, լուումներ չանցկացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետում ամրագրված ինպերատիվ հիմքը համահունչ է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված այն իրավակարգավորման հետ, որ անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել միայն եզրափակիչ փուլով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վարչական վարույթի ընթացքում լուումներ չանցկացնելու վերոգրյալ դեպքերը սպառնիչ չեն, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասում օրենսդիրն ամրագրել է, որ օրենքով կարող են նախատեսվել լուումներ չանցկացնելու հայեցողական և ինպերատիվ այլ հիմքեր:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական վարույթի ընթացքում լսված լինելու իրավունքի երաշխավորված իրացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերից մեկը վարչական վարույթ հարուցելու մասին վարույթի մասնակիցներին ծանուցելու վարչական մարմնի պարտականության պատշաճ կատարումն է, որը սահմանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածում ամրագրված վարչական վարույթի մասին ծանուցելու վերաբերյալ իրավակարգավորումների միջոցով և նպատակ է հետապնդում վարույթի մասնակիցներին իրազեկելու այն մասին, որ վերջինիս նկատմամբ հարուցվել է և իրականացվելու է վարչական վարույթ: Նշված հոդվածով նախատեսված իրավական նորմերի բովանդակային վերլուծությունը վկայում է այն մասին, որ օրենսդիրը նախատեսել է վարչական վարույթի մասնակիցներին ծանուցման հետ կապված վարչական մարմնի հետևյալ պարտականությունները.

1) դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելը,

2) վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելը,

3) վարույթի մասնակիցներին վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին ծանուցելը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական վարույթի հարուցման մասին վարույթի մասնակիցներին ծանուցելու կարգավորումը հատկապես կարևորվում է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարույթ հարուցելու դեպքերում, քանի որ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցված լինելու մասին վարույթի մասնակիցը որևէ կերպ տեղեկացված չի կարող լինել: Ընդ որում, դիմումի հիման վրա հարուցված և վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների հարուցման մասին վարույթի մասնակիցներին ծանուցելու վարչական մարմնի պարտականությունների բովանդակային տարբերությունն այն է, որ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի հարուցման մասին ծանուցումը պարտադիր է առանց որևէ բացառության, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հարուցման մասին ծանուցումը պարտադիր է միայն այն դեպքում, երբ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է: Այսինքն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարչական մարմինը պարտավոր է վարույթ հարուցելու մասին պատշաճ ձևով ծանուցել վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է: Այլ կերպ ասած՝ վարչական մարմինը չունի սեփական նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հարուցման մասին վարույթի մասնակիցներին ծանուցելու պարտականություն միայն այն դեպքում, երբ վարչական ակտն ընդունվելու է վարչական վարույթի հարուցումից հետո երեք օրվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից պակաս լինելու դեպքում վարչական մարմնի՝ վարույթի հարուցման մասին վարույթի մասնակիցներին ծանուցելու պարտականություն չունենալու օրենսդրական կարգավորումը համահունչ է վարչարարության համաչափության և տնտեսավարության սկզբունքներին և նպատակ է հետապնդում վարչարարությունն իրականացնել վարչական մարմնի տիրապետման ներքո գտնվող միջոցների չափավոր և արդյունավետ օգտագործմամբ: Այսինքն՝ օրենսդրի տեսանկյունից, եթե վարչական վարույթի հարուցման և եզրափակիչ փուլերի միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում երեք օրը, ապա վարչական վարույթի մասնակիցներին վարչական վարույթի հարուցման մասին առանձին ծանուցելու անհրաժեշտությունը բացակայում է. նրանք պետք է ծանուցվեն միայն լուումների անցկացման ժամանակի և վայրի մասին: ՀՀ Վճռաբեկ դատարանը նախկին որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարույթին մասնակցող անձի՝ լսված լինելու իրավունքը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը: Այս եզրահանգումը բխում է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներից, որոնցով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական և թե՛ իրավական առումներով, մասնավորապես այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ (*յրեն, Ivanov and others v. Bulgaria (46336/99) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.11.2005 թվականի վճիռը, կետ 70*): Հետևաբար, վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը վարույթին մասնակից անձին պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին (*յրեն, ՀՀ աշխարհային պետական քրեաշտությունն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի փնտրենների խորհրդի նախագահ, գլխավոր փնտրեն Վալերի Օվսյանիկովի թիվ ՎԴ/0016/05/08 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը*):

Անփոփոխելի վերագրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական վարույթի մասին ծանուցելու՝ «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված կառուցակարգը անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում վարչական վարույթի ընթացքում մարդու լսված լինելու իրավունքի կենսագործման համար, քանի որ առանց վարչական վարույթի մասնակիցներին վարույթի հարուցման կամ վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների (օրինակ՝ լուումների) անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին ծանուցելու հնարավոր չէ ապահովել վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքի գործնական իրացումը: Թեև վարչական վարույթի մասնակիցներին վարույթի մասին ծանուցելը և վարույթի մասնակիցներին քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու հնարավորություն տալը՝ լսելը, կատարվում են վարչական վարույթի երկու տարբեր փուլերում և նախատեսված են վարչական վարույթի հարուցման ու ընթացիկ փուլերը կարգավորող իրավական նորմերով, սակայն նշված ընթացակարգային գործողությունները հետապնդում են մեկ միասնական նպատակ, որը հանգում է մարդու՝ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքների իրացման երաշխավորմանը:

Այնուամենայնիվ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վարչական վարույթի մասնակիցներին վարույթի հարուցման մասին ծանուցելու և այդ վարույթի ընթացքում լուումներ անցկացնելու իրավական հիմքերը տարբերվում են միմյան-

ցից: Մասնավորապես, վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հարուցման մասին չձանուցելու իրավական հիմքի՝ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից պակաս լինելու, առկայությունը չի կարող հիմք հանդիսանալ վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքը սահմանափակելու և առանց ընթացիկ փուլում լուումների իրականացման միջամտող վարչական ակտ ընդունելու համար, եթե բացակայում են լուումներ չանցկացնելու կամ վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով իրականացնելու համար «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող՝ Տեսչության «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթը հարուցվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ: Մինչդեռ սույն գործով վարչական մարմինը չի ներկայացրել որևէ ապացույց այդ վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտի հասցեատիրոջը՝ Սարգիս Խաչատրյանին, դրա հարուցման մասին ծանուցելու և վարչական վարույթի ընթացքում լուումներ իրականացնելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը Տեսչության 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշումն անվավեր է ճանաչել նաև այդ վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում թույլ տրված «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընթացակարգային պահանջների խախտման հիմքով, որը հանգեցրել է Սարգիս Խաչատրյանի լաված լինելու իրավունքի սահմանափակման: Դատարանն իր վճռում, մասնավորապես, նշել է, որ Տեսչության 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշումն ընդունվել է առանց դրա հասցեատիրոջը՝ Սարգիս Խաչատրյանին, հարուցված վարչական վարույթի մասին ծանուցելու: Մինչդեռ, ըստ Դատարանի, տվյալ դեպքում բացակայել են ինչպես վարչական վարույթի հարուցման մասին Սարգիս Խաչատրյանին չձանուցելու, այնպես էլ վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով անցկացնելու և լուումներ չանցկացնելու օրենքով նախատեսված հիմքերը:

Վերաքննիչ դատարանը մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ հիմնավոր համարելով Տեսչության 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի հարուցման մասին Սարգիս Խաչատրյանին ծանուցելու, այդ վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով իրականացնելու և վարույթի ընթացքում լուումներ չանցկացնելու օրենքով նախատեսված հիմքերի բացակայության վերաբերյալ Դատարանի արտահայտած դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ստորադաս դատարանների վերոգրյալ պատճառաբանությունների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը խախտել է այդ վարչական ակտի հասցեատիրոջ՝ Սարգիս Խաչատրյանի լաված լինելու իրավունքը:

Այսպես, Վճռաբեկ դատարանը նախևառաջ փաստում է, որ Սարգիս Խաչատրյանը պետք է ծանուցվեր Տեսչության 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի հարուցման մասին, քանի որ սույն գործով չի հաստատվել, որ այդ վարչական վարույթի տևողությունը չի գերազանցել երեք օրը. սույն գործում առկա չէ որևէ ապացույց քննարկվող վարչական վարույթի հարուցման օրվա և վարույթի իրական տևողության մասին:

Անդրադառնալով Տեսչության 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում լուումներ չանցկացնելու իրավաչափության



հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական վարույթի տևողությունը եռօրյա ժամկետը չգերազանցելու հանգամանքն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ լուսմներ չանցկացնելու և առանց վարույթի մասնակցին արտահայտվելու հնարավորություն ընձեռելու վարչական ակտ ընդունելու համար, քանի որ լուսմներ չանցկացնելու իրավաչափությունը որևէ կերպ պայմանավորված չէ վարչական վարույթի տևողության հետ: Այսինքն՝ լուսմներ անցկացնելու կանոնը գործում է անկախ այն հանգամանքից, թե վարչական վարույթը ինչ ժամկետում պետք է իրականացվի:

Ավելին, Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքի սահմանափակման համար իրավաչափ հիմք չի կարող հանդիսանալ նույնիսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածում ամրագրված վարչական մարմնի արագ գործելու պարտականության կատարման անհրաժեշտությունը: Այլ կերպ ասած՝ վարչական վարույթը հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնելու օրենսդրական պահանջի կատարումը չի կարող տեղի ունենալ ի վնաս անձի իրավունքների գործնականում պատշաճ իրացման, մասնավորապես՝ վարչական վարույթի ընթացքում անձի լսված լինելու իրավունքի պատշաճ իրացման (*տե՛ս, Տիգրան Աբաղյանի ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի՝ թիվ ՎԴ/5539/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ անգամ Տեսչության 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի տևողությունը եռօրյա ժամկետը չգերազանցելու պարագայում այդ վարչական ակտը կարող էր ընդունվել առանց լուսմների իրականացման միայն լուսմներ չանցկացնելու համար օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում: Մինչդեռ սույն գործի փաստերից հետևում է, որ նշված վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում բացակայել են լուսմներ չանցկացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված թե՛ հայեցողական, թե՛ պարտադիր հիմքերը, ինչպես նաև վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով իրականացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքը: Հետևաբար Տեսչության «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում լուսմների անցկացումը պարտադիր էր:

Փաստորեն, Տեսչության 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշմանն ուղղված վարչական վարույթի հարուցման մասին Սարգիս Խաչատրյանին չճանուցելու և այդ վարույթի ընթացքում լուսմներ չանցկացնելու հետևանքով Սարգիս Խաչատրյանը ոչ իրավաչափ կերպով գրկվել է իր նկատմամբ հարկային պարտավորություններ առաջադրելուն ուղղված վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողությունների միջոցով վարչական մարմնի վերջնական որոշման վրա ազդելու հնարավորությունից: Այսինքն՝ Տեսչության «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշումն ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ, 35-րդ և 38-րդ հոդվածների խախտմամբ, ինչն էլ իր հերթին հանգեցրել է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված Սարգիս Խաչատրյանի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման:

Հետևաբար ստորդադա դատարաններն իրենց դատական ակտերով իրավացիորեն են եզրահանգել, որ Տեսչության «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է և ենթակա է վերացման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի

63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում նաև սույն գործով վիճարկվող մյուս վարչական ակտի՝ Տեսչության «Հարկ վճարողի գույքի (այդ թվում դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա արգելանք դնելու մասին» 27.10.2014 թվականի թիվ 028680 որոշման, անվավերության վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումները, քանի որ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտի վերացման պարագայում չի կարող ուժի մեջ մնալ այն վարչական ակտը, որը միտված է ապահովելու տվյալ հարկային պարտավորության կատարումը:

Անփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Դատարանը, Սարգիս Խաչատրյանի լաված լինելու իրավունքի խախտման հիմքով անվավեր ճանաչելով Տեսչության «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» 14.10.2014 թվականի թիվ 2050 որոշումը և դրա հիման վրա անվավեր ճանաչելով նաև Տեսչության «Հարկ վճարողի գույքի (այդ թվում դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա արգելանք դնելու մասին» 27.10.2014 թվականի թիվ 028680 որոշումը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի նշված վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը՝ Սարգիս Խաչատրյանի նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրման իրավաչափության մասով սխալ է պատճառաբանված, իսկ Սարգիս Խաչատրյանի լաված լինելու իրավունքի իրացման մասով՝ թերի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.09.2016 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/0721/05/15  
Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան  
Դատավորներ՝ Ա. Աբովյան  
  Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0721/05/15**  
**2017թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
- Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
- Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի  
ղեկավարի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.02.2016 թվականի  
որոշման դեմ՝ ըստ հայցի Երվանդ Ոսկանյանի ընդդեմ Երևան քաղաքի Կենտրոն  
վարչական շրջանի՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 03.02.2015  
թվականի թիվ 631-Ա որոշումը մասնակիորեն՝ 2008, 2009, 2010, 2011 թվականների համար  
հաշվարկված ընդհանուր 202.120 ՀՀ դրամի մատով, անվավեր ճանաչելու պահանջի  
մասին,

**ՊԱՐՁԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**  
Դիմելով դատարան՝ Երվանդ Ոսկանյանը պահանջել է մասնակիորեն՝ Երվանդ Ոսկանյանից  
հոգուտ Երևան համայնքի բյուջեի 2008, 2009, 2010, 2011 թվականների համար հաշվարկված  
202.120 ՀՀ դրամ գանձելու մատով, անվավեր ճանաչել Երևան քաղաքի Կենտրոն վարչական  
շրջանի ղեկավարի 03.02.2015 թվականի թիվ 631-Ա որոշումը:  
ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան) 19.06.2015  
թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. Երևան քաղաքի Կենտրոն վարչական  
շրջանի ղեկավարի 03.02.2015 թվականի թիվ 631-Ա որոշումը՝ Երվանդ Ոսկանյանից հոգուտ  
Երևան համայնքի բյուջեի 2008 թվականի համար հաշվարկված 13.466 ՀՀ դրամ գանձելու  
մատով, ճանաչվել է անվավեր, իսկ հայցը՝ մնացած մատով, մերժվել է:  
ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.02.2016

թվականի որոշմամբ Երվանդ Ոսկանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է և Դատարանի 19.06.2015 թվականի վճիռը մասնակիորեն բեկանվել է ու փոփոխվել՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 03.02.2015 թվականի թիվ 631-Ա որոշումը՝ Երվանդ Ոսկանյանից հոգուտ Երևան համայնքի բյուջեի 2009-2011 թվականների համար հաշվարկված 188.654 ՀՀ դրամ գանձելու մասով, ճանաչվել է անվավեր, իսկ մնացած մասով Դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածը, չի կիրառել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասը, որը պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Երվանդ Ոսկանյանի կողմից գույքահարկի գծով հարկային պարտավորությունը չկատարելու փաստը հայտնաբերվել է՝ համաձայն Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի կողմից տրված 22.01.2015 թվականի տեղեկանքների: Այսինքն՝ վիճելի իրավահարաբերությունը ծագել է Երվանդ Ոսկանյանի կողմից գույքահարկի գծով հարկային պարտավորությունը չկատարելու փաստի հայտնաբերման պահին, ուստի դրա նկատմամբ կիրառելի են խախտումը հայտնաբերելու պահին գործող իրավական նորմերը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.02.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 19.06.2015 թվականի վճիռն:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի 22.01.2015 թվականի թիվ 281475295797145253 տեղեկանքի համաձայն՝ Երվանդ Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող, «քաղաք Երևան, Իսրայելյան թիվ 37, թիվ 147» հասցեում գտնվող շինության գույքահարկի գծով հարկային պարտավորությունը 2008 թվականի համար կազմում է 7.205 ՀՀ դրամ, 2009 թվականի համար՝ 72.872 ՀՀ դրամ, 2010 թվականի համար՝ 72.872 ՀՀ դրամ, 2011 թվականի համար՝ 65.156 ՀՀ դրամ, 2012 թվականի համար՝ 65.156 ՀՀ դրամ, 2013 թվականի համար՝ 65.156 ՀՀ դրամ, 2014 թվականի համար՝ 42.304 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 16**).

2. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի 22.01.2015 թվականի թիվ 281475322929145343 տեղեկանքի համաձայն՝ Երվանդ Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող, «քաղաք Երևան, Իսրայելյան թիվ 37, թիվ 146» հասցեում գտնվող շինության գույքահարկի գծով հարկային պարտավորությունը 2008 թվականի համար կազմում է 3.706 ՀՀ դրամ, 2009 թվականի համար՝ 8.893 ՀՀ դրամ, 2010 թվականի համար՝ 8.893 ՀՀ դրամ, 2011 թվականի համար՝ 8.654 ՀՀ դրամ, 2012 թվականի համար՝ 8.654 ՀՀ դրամ, 2013 թվականի համար՝ 8.654 ՀՀ դրամ, 2014 թվականի համար՝ 5.525 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 18**).

3. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի 22.01.2015 թվականի թիվ 281475313361145334 տեղեկանքի համաձայն՝ Երվանդ Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող, «քաղաք Երևան, Իսրայելյան թիվ 37, թիվ 2» հասցեում գտնվող շինության (ավտոտնակի) գույքահարկի գծով հարկային պարտավորությունը 2008 թվականի համար կազմում է 2.555 ՀՀ դրամ, 2009 թվականի համար՝ 2.589 ՀՀ դրամ, 2010 թվականի համար՝ 2.589 ՀՀ դրամ, 2011 թվականի համար՝ 2.563 ՀՀ դրամ, 2012 թվականի համար՝ 2.563 ՀՀ դրամ, 2013 թվականի համար՝ 2.563 ՀՀ դրամ, 2014 թվականի համար՝ 1.546 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 17**).

4. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 03.02.2015 թվականի «Գույքահարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մասին» թիվ 631-Ա որոշմամբ Երվանդ Ոսկանյանից հոգուտ Երևան համայնքի բյուջե գանձվել է 460.668 ՀՀ դրամ՝ որպես «քաղաք Երևան, Իսրայելյան թիվ 37, թիվ 146» և «քաղաք Երևան, Իսրայելյան թիվ 37, թիվ 147» հասցեների հասարակական նշանակության շինությունների ու «քաղաք Երևան, Իսրայելյան թիվ 37, թիվ 2» հասցեի ավտոտնակի համար 2008–2014 թվականների համար գույքահարկի գծով հաշվարկված հարկային պարտավորության գումար (**հատոր 1-ին, գ.թ. 12**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզառաքանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ կանոններում օրենսդրական փոփոխություններ նախատեսող օրենքների՝ ժամանակի մեջ գործողության հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. 2008, 2009, 2010 և 2011 թվականներին կատարված հարկային օրենսդրության խախտումների համար կարող են արդյոք առաջանալ գույքահարկի գծով հարկային պարտավորություններ, եթե սույն իրավախախտումները հայտնաբերվել են 2015 թվականին:*

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս (...):

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ ներկայումս (28.04.2012 թվականից) գործող խմբագրության համաձայն՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, բացառությամբ «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի (...):

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրության համաձայն՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի վերոգրյալ փոփոխությունները կա-

տարվել են 21.03.2012 թվականին ընդունված և 28.04.2012 թվականին ուժի մեջ մտած «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն ՀՀ օրենքով:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի՝ 28.04.2012 թվականից գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված գույքահարկի վճարման գծով խախտումներ հայտնաբերվելու դեպքում գույքահարկի գծով հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը կատարելուց հետո անցել է տասը տարի:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը վերագրյալ բովանդակությամբ 4-րդ մասով լրացվել է 21.03.2012 թվականին ընդունված և 28.04.2012 թվականին ուժի մեջ մտած «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով օրենսդիրը նախատեսել է հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետները: Նշված իրավադրույթով օրենսդիրը սահմանել է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետը երեք տարի է, որի հաշվարկման համար ելակետ է ընդունվում հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարին (ժամկետը հաշվարկվում է իրավախախտման կատարման տարվան հաջորդող տարվանից): Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ օրենսդրի կողմից սահմանված ընդհանուր կանոնը հետևյալն է. հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե հարկային օրենսդրության տվյալ խախտումը հայտնաբերվել է այն ժամանակ, երբ լրացած է եղել այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը: Այսինքն՝ հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետն ընդգրկում է տվյալ իրավախախտման կատարման տարվան անմիջապես հաջորդող երեք օրացուցային տարիները. այդ տարիներն անցնելուց հետո հայտնաբերված իրավախախտման համար հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ:

Հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերագրյալ ընդհանուր կանոնից օրենսդիրը նախատեսել է բացառություն՝ անբազրելով, որ նշված ժամկետը չի գործում «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված դեպքերում: Ըստ այդմ, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում օրենսդիրը նախատեսել է գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ հատուկ իրավակարգավորում: Նշված իրավադրույթի համաձայն՝ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետները հաշվարկվելու համար հիմք է ընդունվում հարկային օրենսդրության խախտումը կատարելու պահը (ժամկետը հաշվարկվում է իրավախախտման կատարման պահից): Սակայն գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ օրենսդրի կողմից սահմանված հատուկ կանոնը հանգում է հետևյալին. գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե հարկային օրենսդրության տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելուց հետո տասը տարվա ժամկետը լրանալուց հետո:

Ամփոփելով վերագրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

1. որպես ընդհանուր կանոն՝ հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետը երեք տարի է, որի

հաշվարկման սկիզբն իրավախախտման կատարման տարվան անմիջապես հաջորդող տարին է,

2. որպես բացառություն ընդհանուր կանոնից՝ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետը տասը տարի է, որի հաշվարկման սկիզբն իրավախախտման կատարման պահն է,

3. հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության թե՛ ընդհանուր, թե՛ հատուկ ժամկետների հաշվարկման անհրաժեշտությունը ծագում է հարկային իրավախախտման հայտնաբերման պահին, քանի որ հարկային պարտավորությունների առաջացումը պայմանավորված է վաղեմության ժամկետի՝ տվյալ իրավախախտման հայտնաբերման պահին լրացած լինելու կամ չլինելու հանգամանքով:

Վճարել դատարանն արձանագրում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների՝ գույքահարկին վերաբերող բացառությունը սահմանվել է 21.03.2012 թվականին ընդունված և 28.04.2012 թվականին ուժի մեջ մտած ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն ՀՀ օրենքով, իսկ գույքահարկի գծով հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետի վերաբերյալ հատուկ կանոններն ամրագրվել են «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում 21.03.2012 թվականին ընդունված և 28.04.2012 թվականին ուժի մեջ մտած ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքով: Փաստորեն, գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ հատուկ իրավակարգավորումները Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ են ներմուծվել 21.03.2012 թվականին տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում, որոնք իրավաբանական ուժի մեջ են մտել 28.04.2012 թվականին:

Սույն որոշմամբ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ կանոններում օրենսդրական փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի՝ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ժամանակի մեջ գործողության հարցին:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների (...) գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերու-



թյունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը, եթե նույն օրենքով կամ փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ (...):

ՀՀ սահմանադրական դատարանը, 29.11.2011 թվականի թիվ ՄԳՈ-1000 որոշմամբ անդրադառնալով ժամանակի մեջ իրավական ակտի գործողության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրությամբ՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմի իրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այն իրավական ակտն ընդունող մարմնի հայեցողությանն է թողնում անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը: Միաժամանակ այս նորմը սահմանում է այդ հայեցողությունն իրացնելու ընթացակարգը, այն է՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ակտն ընդունող մարմինը, իրացնելով իրեն Սահմանադրությամբ տրված հայեցողական լիազորությունը, տվյալ իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելու նպատակահարմարության դեպքում տվյալ ակտում ամրագրում է այդ ակտին հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթ: Նշված հայեցողությունն իրացնելու այս ընթացակարգն ինքնանպատակ չէ և տրամաբանորեն բխում է Սահմանադրությամբ՝ իրավական ակտերի ժամանակի մեջ գործողության կանոնակարգման ընդհանուր տրամաբանությունից:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, իսկ մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը: Այսինքն՝ ըստ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության համընդհանուր սկզբունքի՝ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ եղած ժամանակահատվածում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ իրավական ակտի կիրառելիության հարցն ուղղակիորեն կապված է կարգավորման առարկան կազմող իրավահարաբերության ծագման պահի հետ: Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքները հետադարձ ուժ չունեն: Նշված օրենսդրական ակտերով նախատեսված գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության հատուկ ժամկետների վերաբերյալ իրավակարգավորումները չեն կարող տարածվել այդ օրենքների ուժի մեջ մտնելուց՝ 28.04.2012 թվականից առաջ ծագած հասարակական հարաբերությունների վրա: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության վերաբերյալ սահմանադրաիրավական այն սկզբունքը, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ իրավական ակտերը չեն գործում հետադարձ ուժով, իսկ անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը սահմանադրորեն արգելված է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության հատուկ ժամկետների վերաբերյալ իրավակարգավորումները, որոնք ՀՀ իրավական համակարգ են ներմուծվել ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ

ՀՕ-94-Ն ՀՀ օրենքներով, կիրառվում են միայն այն հասարակական հարաբերությունների սկստմամբ, որոնք ծագել են նշված օրենքների ուժի մեջ մտնելուց՝ 28.04.2012 թվականից հետո: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ժամանակի մեջ գործողության հարցը լուծելիս անհրաժեշտ է պարզել հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ կանոններով կարգավորվող հասարակական հարաբերության ծագման պահը:

Հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ օրենսդրական նորմերի բովանդակային վերլուծությունը վկայում է այն մասին, որ այդ կանոնների կարգավորման առարկան հայտնաբերված հարկային իրավախախտումների համար առաջացող պատասխանատվությունը բացառող որոշակի հանգամանքների հետ կապված հասարակական հարաբերություններն են: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ հարկային օրենսդրության այս կամ այն խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներն սկսում են գործել իրավասու վարչական մարմնի կողմից տվյալ իրավախախտումը հայտնաբերվելու պահից: Այսինքն՝ հարկային օրենսդրության այս կամ այն խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ նորմերն իրավական հետևանքներ են առաջացնում միայն այն ժամանակ, երբ իրավասու վարչական մարմինը հայտնաբերել է տվյալ իրավախախտումը: Այլ կերպ ասած՝ եթե հարկային օրենսդրության խախտումը դեռևս հայտնաբերված չէ իրավասու վարչական մարմնի կողմից, ապա այդ խախտման համար հարկային պարտավորությունների առաջացումը բացառող հանգամանքները՝ վաղեմության ժամկետները, սահմանող իրավանորմերը չեն կարող որևէ իրավաբանական նշանակություն ունենալ: Այսպիսով, ըստ Վճռաբեկ դատարանի՝ իրավասու վարչական մարմնի կողմից այս կամ այն հարկային իրավախախտման հայտնաբերումն է այն անհրաժեշտ իրավաբանական փաստը, որի հետ օրենսդիրը կապել է այդ խախտման համար հարկային պարտավորությունների առաջացումը բացառող հանգամանքները՝ վաղեմության ժամկետները, սահմանող իրավանորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների ծագումը:

Վերոգրյալ փաստարկները հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ կանոններով կարգավորվող հասարակական հարաբերությունները ծագում են իրավասու վարչական մարմնի կողմից այս կամ այն հարկային իրավախախտման հայտնաբերման պահին: Մինչև հարկային իրավախախտման հայտնաբերումը հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ կանոններով կարգավորվող հասարակական հարաբերություններ չեն կարող ծագել՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է այդ իրավախախտումը կատարվել: Հետևաբար հարկային օրենսդրության կոնկրետ խախտման համար հարկային պարտավորությունների առաջադրման հարցը լուծելիս վաղեմության ժամկետների վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում գործող օրենսդրական կարգավորումների կիրառման համար որպես ելակետ պետք է ընդունել տվյալ հարկային իրավախախտման հայտնաբերման պահը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վերոգրյալ ընդհանուր կանոնից պետք է կատարել մեկ բացառություն, որը վերաբերում է այն դեպքերին, երբ հարկային իրավախախտումը հայտնաբերվել է ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելուց հետո, սակայն այդ օրենքների ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ այդ իրավախախտումների կատարման տարվան հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած է եղել: Քննարկվող պարագայում հարկային օրենսդրության

կոնկրետ խախտման համար հարկային պարտավորությունների առաջադրման հարցը լուծելիս վաղեմության ժամկետների վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում գործող օրենսդրական կարգավորումների կիրառման համար որպես ելակետ պետք է ընդունել ոչ միայն տվյալ հարկային իրավախախտման հայտնաբերման պահը, այլ նաև այն հանգամանքը, թե արդյոք վերոգրյալ օրենքների ուժի մեջ մտնելու պահին՝ 28.04.2012 թվականին, այդ իրավախախտումների կատարման տարվան հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած եղել է, թե՛ ոչ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելուց առաջ կատարված հարկային օրենսդրության խախտումն իրավասու վարչական մարմնի կողմից կարող էր հայտնաբերվել մինչև 28.04.2012 թվականը. այդ դեպքում տվյալ իրավախախտման համար հարկային պարտավորություններ չէին կարող առաջանալ, եթե լրացած լիներ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված երեք տարվա ժամկետը: Ըստ այդմ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավակարգավորումը պետք է տարածվի նաև 28.04.2012 թվականից հետո հայտնաբերված այն հարկային իրավախախտումների վրա, որոնց կատարման տարվան հաջորդող երեք տարվա ժամկետը ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելու պահին լրացած է եղել: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ բոլոր այն հարկային իրավախախտումների համար, որոնց կատարման տարվան հաջորդող երեք տարվա ժամկետը ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելու պահին լրացած է եղել: Այդ դեպքում հարկային օրենսդրության խախտում թույլ տված անձն իրավունք ունի ողջամտորեն ենթադրելու և ակնկալելու, որ իր կողմից կատարված իրավախախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետներն անցել են՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավակարգավորումների համաձայն:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների՝ ժամանակի մեջ գործողության իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա հետևյալ ուղղությամբ. նշված օրենքները տարածվում են դրանց ուժի մեջ մտնելուց՝ 28.04.2012 թվականից հետո հայտնաբերված հարկային օրենսդրության խախտումների նկատմամբ, և քննարկվող օրենքների՝ ժամանակի մեջ գործողության կանոնի բովանդակությունը հանգում է հետևյալին.

1. եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է և իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է մինչև 28.04.2012 թվականը, ապա այդ դեպքում կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավակարգավորումը.

2. եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է և իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է 28.04.2012 թվականից հետո, ապա այդ դեպքում կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ ներկայումս (28.04.2012 թվականից) գործող խմբագրությամբ և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի՝ 28.04.2012 թվականից գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավակարգավորումը.

3. եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է մինչև 28.04.2012 թվականը, սակայն իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է 28.04.2012 թվականին կամ դրանից հետո, ապա այդ դեպքում վաղեմության ժամկետների վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում գործող օրենսդրական կարգավորումների կիրառման հարցը պետք է լուծվի՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, թե 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած եղել է, թե՛ ոչ այսպես՝

- եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է մինչև 28.04.2012 թվականը, սակայն իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է 28.04.2012 թվականին կամ դրանից հետո, և 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած է եղել, ապա այդ իրավախախտման համար հարկային պարտավորություններ առաջադրելիս կիրառվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավարգավորումը,

- եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է մինչև 28.04.2012 թվականը, սակայն իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է 28.04.2012 թվականին կամ դրանից հետո, և 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած չի եղել, ապա այդ իրավախախտման համար հարկային պարտավորություններ առաջադրելիս կիրառվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ ներկայումս (28.04.2012 թվականից) գործող խմբագրությամբ և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի՝ 28.04.2012 թվականից գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավակարգավորումը:

### ***Վճարելի դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Երվանդ Ոսկանյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է մասնակիորեն՝ գույքահարկի գծով 2008, 2009, 2010 և 2011 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումարը՝ 202.120 ՀՀ դրամի չափով, գանձելու մասով, անվավեր ճանաչել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 03.02.2015 թվականի թիվ 631-Ա որոշումը: Նշված վարչական ակտով Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարը Երվանդ Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող երեք անշարժ գույքի՝ 2008-2014 թվականների գույքահարկի գծով վերջինիս նկատմամբ առաջադրել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ 460.668 ՀՀ դրամի չափով:

Դատարանը Երվանդ Ոսկանյանի հայցը բավարարել է մասնակիորեն և Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 03.02.2015 թվականի թիվ 631-Ա որոշումն անվավեր է ճանաչել միայն 2008 թվականի համար գույքահարկի գծով հաշվարկված հարկային պարտավորության գումարը՝ 13.466 ՀՀ դրամի չափով, Երվանդ Ոսկանյանից գանձելու մասով: Դատարանը վճռի հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքները չեն կարող տարածվել այն խախտումների նկատմամբ, որոնց հայտնաբերման եռամյա ժամկետը 28.04.2012 թվականի դրությամբ արդեն իսկ լրացած է: Հետևաբար գույքահարկի գծով 2008 թվականի համար լրացուցիչ հարկային պարտավորությունը Երվանդ Ոսկանյանի նկատմամբ առաջադրվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված եռամյա ժամկետի խախտմամբ, իսկ 2009 թվականի և դրանից հետո մյուս տարիների համար հարկային պարտավորությունների

առաջադրումը կատարվել է օրենքի պահանջների պահպանմամբ:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Երվանդ Ոսկանյանի վերաքննիչ բողոքը և մասնակիորեն բեկանելով ու փոփոխելով Դատարանի վճիռը՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 03.02.2015 թվականի թիվ 631-Ա որոշումն անվավեր է ճանաչել նաև 2009-2011 թվականների համար գույքահարկի գծով հաշվարկված լրացուցիչ հարկային պարտավորությունը՝ 188.654 ՀՀ դրամի չափով, Երվանդ Ոսկանյանից գանձելու մասով: Վերաքննիչ դատարանը նշել է, որ «(...) մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածը կիրառելի է նաև 2009, 2010 և 2011 թվականների համար հաշվարկված գույքահարկի նկատմամբ (...): Հերևաքար վիճարկվող որոշումը՝ 2009-2011 թվականների համար (...) գույքահարկ առաջադրելու մասով (...), նույնպես ընդունվել է մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի խախտմամբ (...):»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված հարկատեսակ է տեղական հարկ հանդիսացող գույքահարկը:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար նույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկ վճարող են համարվում (...) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է նույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույքը (...):

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ նույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը և շինությունները (...)՝ ավտոտնակը (...), հասարակական նշանակության շինությունը (...):

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հարկեր, տուրքեր մուծելու և այլ պարտադիր վճարումներ կատարելու սահմանադրական պարտականությունը կրում է համընդհանուր բնույթ, այն տարածվում է բոլոր անձանց վրա: Սահմանադրությամբ նախատեսված այս պարտականության մեջ արտահայտված են հասարակության հանրային շահերը: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված «յուրաքանչյուր ոք պարտավոր է» ձևակերպումից ակնհայտ է, որ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումները կրում են համապարտադիր բնույթ: Համապարտադիրությունը՝ որպես անվերապահորեն կատարման ենթակա պահանջ, տարածվում է բոլոր վճարողների վրա: Գործնականում համապարտադիրության պահանջը կյանքի է կոչվում սեփականատիրոջ գույքի մի մասի՝ հարկի կամ այլ պարտադիր վճարումների ձևաչափով, պետության օգտին փոխանցելու միջոցով: Համապարտադիրության պահանջն արտահայտվում է նաև նրանում, որ կամավոր մուծումներ չկատարելու դեպքում դրանք պետության կողմից հարկադրաբար են գանձվում (*լրեն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կումիլուն ընդդեմ Լիլիթ Բաբասիկայի թիվ ՎԴ/7537/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, իսկ կոնկրետ հարկատեսակները սահմանում է օրենսդիրը: Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված հարկատեսակ է գույքահարկը, որը որոշակի կատեգորիայի գույքի համար համայնքային կամ պետական բյուջե վճարվող և հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից չկախված ուղղակի հարկ է: Հայաստանի Հանրապետությունում գույքահարկ վճարող են համարվում նաև ֆիզիկական անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկվող օբյեկտ համարվող որոշակի տեսակի գույք: Օրենսդիրը սահմանել է, որ գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում նաև շենքերը և շինությունները՝ դրանց շարքում նախատեսելով նաև ավտոտնակը և հասարակական նշանակության շինությունը:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 13-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը վճարում են համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար տվյալ համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Ընդ որում, ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին և վերջիններս պարտավոր են գույքահարկի տարեկան գումարը համապատասխան բյուջե վճարել մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: Հետևաբար գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքի և շինության համար գույքահարկի գծով ֆիզիկական անձի հարկային պարտավորության խախտումը վրա է հասնում այն դեպքում, երբ տվյալ ֆիզիկական անձը մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ ամբողջությամբ չի վճարել տվյալ շենքի և շինության համար համապատասխան բյուջե վճարման ենթակա գույքահարկի գումարը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարը 03.02.2015 թվականի «Գույքահարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մասին» թիվ 631-Ա որոշմամբ Երվանդ Ոսկանյանից գանձել է սեփականության իրավունքով վերջինիս պատկանող ավտոտնակի և երկու հասարակական նշանակության շինության համար գույքահարկի գծով 2008-2014 թվականների համար առաջացած հարկային պարտավորության գումարը: Նշված տարիների համար գույքահարկի գծով հարկային պարտավորությունների՝ Երվանդ Ոսկանյանի կողմից թույլ տրված խախտումներն իրավասու վարչական մարմինը հայտնաբերել է 2015 թվականին: Այդ հանգամանքը հաստատվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի տեղեկանքներով, որոնք կազմվել են 22.01.2015 թվականին:

Հաշվի առնելով այն, որ սույն գործով Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 03.02.2015 թվականի թիվ 631-Ա որոշումը վիճարկվում է միայն գույքահարկի գծով 2008, 2009, 2010 և 2011 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումարը գանձելու մասով, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերոգրյալ տարիների համար հաշվարկվող գույքահարկի գծով հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների հարցին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երվանդ Ոսկանյանը պարտավոր էր իրեն պատկանող ավտոտնակի և երկու հասարակական նշանակության շինության համար 2008, 2009, 2010 և 2011 թվականների գույքահարկի տարեկան գումարը Երևան համայնքի բյուջե վճարել մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: Հետևաբար նշված անշարժ գույքերի համար 2008, 2009, 2010 և 2011 թվականների գույքահարկի գծով Երվանդ Ոսկանյանի հարկային պարտավորության խախտումը յուրաքանչյուր տարվա համար վրա է հասել այդ տարվա դեկտեմբերի 2-ին:

Փաստորեն, տվյալ դեպքում առկա է սույն որոշմամբ նկարագրված այն իրավիճակը, երբ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է մինչև «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելը՝ 28.04.2012 թվականը, սակայն իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է այդ օրենքների ուժի մեջ մտնելուց հետո: Ըստ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման՝ նման դեպքերում հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում գործող օրենսդրական կարգավորումների կիրառման հարցը պետք է լուծվի՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, թե 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած եղել է, թե՛ ոչ: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը փաստում է հետևյալը.

1) Երվանդ Ոսկանյանին պատկանող ավտոտնակի և երկու հասարակական նշանակության շինության համար **2008 թվականի** գույքահարկի գծով հարկային պարտավորության խախտումը կատարվել է մինչև 28.04.2012 թվականը (02.12.2008 թվականին), և 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության այդ խախտումը կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած է եղել,

2) Երվանդ Ոսկանյանին պատկանող ավտոտնակի և երկու հասարակական նշանակության շինության համար **2009, 2010 և 2011 թվականների** գույքահարկի գծով հարկային պարտավորության խախտումները կատարվել են մինչև 28.04.2012 թվականը (02.12.2009, 02.12.2010, 02.12.2011 թվականներին), և 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության այդ խախտումները կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած չի եղել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երվանդ Ոսկանյանին պատկանող ավտոտնակի և երկու հասարակական նշանակության շինության համար **2008 թվականի** գույքահարկի գծով հարկային պարտավորությունների խախտման նկատմամբ պետք է կիրառվի «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավակարգավորումը, քանի որ Երվանդ Ոսկանյանն իրավունք ունի ողջամտորեն ենթադրելու և ակնկալելու, որ իր կողմից 02.12.2008 թվականին կատարված իրավախախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետներն անցել են՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի համաձայն: Նման պայմաններում Երվանդ Ոսկանյանին պատկանող ավտոտնակի և երկու հասարակական նշանակության շինության համար **2008 թվականի** գույքահարկի գծով հարկային պարտավորություններ այլևս չեն կարող առաջանալ: Հետևաբար Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 03.02.2015 թվականի թիվ 631-Ա որոշումը՝ Երվանդ Ոսկանյանից հօգուտ Երևան համայնքի բյուջեի 2008 թվականի համար հաշվարկված գույքա-

հարկի գումարը գանձելու մասով, ընդունվել է մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի խախտմամբ և այդ մասով ենթակա էր անվավեր ճանաչման:

Անդրադառնալով Երվանդ Ոսկանյանին պատկանող ավտոտնակի և երկու հասարակական նշանակության շինության համար **2009, 2010 և 2011 թվականների** գույքահարկի գծով հարկային պարտավորությունների առաջադրման հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ իրավախախտումների համար հարկային պարտավորությունների առաջադրման հարցը լուծելիս վաղեմության ժամկետների վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում գործող օրենսդրական կարգավորումների կիրառման համար որպես ելակետ պետք է ընդունել տվյալ հարկային իրավախախտման հայտնաբերման պահը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության այդ խախտումները կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած չի եղել: Հետևաբար Երվանդ Ոսկանյանին պատկանող ավտոտնակի և երկու հասարակական նշանակության շինության համար **2009, 2010 և 2011 թվականների** գույքահարկի գծով հարկային պարտավորություններ առաջադրելիս պետք է կիրառվի «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ ներկայումս (28.04.2012 թվականից) գործող խմբագրությամբ և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի՝ 28.04.2012 թվականից գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավակարգավորումը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 03.02.2015 թվականի թիվ 631-Ա որոշումը՝ Երվանդ Ոսկանյանից հօգուտ Երևան համայնքի բյուջեի 2009, 2010 և 2011 թվականների համար հաշվարկված գույքահարկի գումարը գանձելու մասով, ընդունվել է իրավահարաբերության ծագման՝ իրավասու վարչական մարմնի կողմից այդ իրավախախտումները հայտնաբերելու պահին գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ և այդ մասով ենթակա չէր անվավեր ճանաչման:

Ելնելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծություններից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանը, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 03.02.2015 թվականի թիվ 631-Ա որոշումն անվավեր ճանաչելով միայն 2008 թվականի համար գույքահարկի գծով հաշվարկված հարկային պարտավորության գումարը՝ 13.466 ՀՀ դրամի չափով, Երվանդ Ոսկանյանից գանձելու մասով, կայացրել է գործն ըստ էության ձիշտ լուծող դատական ակտ, ինչն անտեսվել է վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:



Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

**5. Վճռաբեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի բողոքը բերած անձի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Երվանդ Ոսկանյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.02.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 19.06.2015 թվականի վճիռն՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Երվանդ Ոսկանյանից հօգուտ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԳ/6487/05/15  
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան  
Դատավորներ՝ Բ. Սկոյան  
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԳ/6487/05/15**  
**2017թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 13.12.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդդեմ Միեր Գևորգյանի՝ գույքահարկի գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐՁԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարը պահանջել է Միեր Գևորգյանից բռնագանձել 919.195 ՀՀ դրամ:  
ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 21.03.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Միեր Գևորգյանից հոգուտ Երևան համայնքի բռնագանձվել է 360.982 ՀՀ դրամ (ապառք՝ 240.480 ՀՀ դրամ, տույժ՝ 120.502 ՀՀ դրամ), մասնակիորեն՝ 2009-2011 թվականների ժամանակահատվածի համար 558.213 ՀՀ դրամի չափով (ապառք՝ 360.720 ՀՀ դրամ, տույժ՝ 197.493 ՀՀ դրամ) գույքահարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մատով անվավեր է ձանաչվել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի «Գույքահարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մասին» 15.09.2015 թվականի թիվ 4879-Ա որոշումը, մնացած մատով հայցը մերժվել է:  
ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.12.2016 թվականի որոշմամբ Դատարանի 21.03.2016 թվականի վճռի դեմ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և

Գատարանի 21.03.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածը, չի կիրառել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասը, որը պետք է կիրառեր, խախտել է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը:*

*Բողոքը բերած անձը նշված պնդումները պարզապես անվավեր է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Մհեր Գևորգյանը բազմիցս տեղեկացվել է իր պարտավորությունների մասին, սակայն չի կատարել դրանք:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ Մհեր Գևորգյանի կողմից գույքահարկի գծով հարկային պարտավորությունը չկատարելու փաստը հայտնաբերվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի կողմից 24.08.2015 թվականին տրված տեղեկանքի հիման վրա: Այսինքն՝ վիճելի իրավահարաբերությունը ծագել է Մհեր Գևորգյանի կողմից գույքահարկի գծով հարկային պարտավորությունը չկատարելու փաստի հայտնաբերման պահին, ուստի դրա նկատմամբ կիրառելի են խախտումը հայտնաբերելու պահին գործող իրավական նորմերը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.12.2016 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել կամ մերժված մատվ գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի 24.08.2015 թվականի թիվ 185493854378120254 տեղեկանքի համաձայն՝ Մհեր Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող «BMW X 5 3.0 I» մակնիշի 91 SL 777 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի գծով հարկային պարտավորությունը 2009 թվականի համար կազմում է 209.330 ՀՀ դրամ, 2010 թվականի համար՝ 186.071 ՀՀ դրամ, 2011 թվականի համար՝ 162.812 ՀՀ դրամ, 2012 թվականի համար՝ 139.553 ՀՀ դրամ, 2013 թվականի համար՝ 116.294 ՀՀ դրամ, 2014 թվականի համար՝ 105.135 ՀՀ դրամ **(գ.թ. 3):**

2. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի 15.09.2015 թվականի «Գույքահարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մասին» թիվ 4879-Ա որոշմամբ Մհեր Գևորգյանից Երևան համայնքի բյուջե գանձվել է 919.195 ՀՀ դրամ՝ որպես «BMW X 5 3.0 I» մակնիշի 91 SL 777 պետհամարանիշի ավտոմեքենայի համար 2009-2014 թվականների համար գույքահարկի գծով հաշվարկված հարկային պարտավորության գումար **(գ.թ. 11):**

**4. Վճռաբեկ դատարանի պարզապարսպությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սույն դեպ-

քում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ կանոններում օրենսդրական փոփոխություններ նախատեսող օրենքների՝ ժամանակի մեջ գործողության հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. 2009, 2010 և 2011 թվականներին կատարված հարկային օրենսդրության խախտումների համար կարող են արդյո՞ք առաջանալ գույքահարկի գծով հարկային պարտավորություններ, եթե տվյալ իրավախախտումները հայտնաբերվել են 2015 թվականին:*

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս (...):

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ ներկայումս (28.04.2012 թվականից) գործող խմբագրության համաձայն՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, բացառությամբ «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի (...):

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրության համաձայն՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի վերոգրյալ փոփոխությունները կատարվել են 21.03.2012 թվականին ընդունված և 28.04.2012 թվականին ուժի մեջ մտած ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն ՀՀ օրենքով:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի՝ 28.04.2012 թվականից գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված գույքահարկի վճարման գծով խախտումներ հայտնաբերվելու դեպքում գույքահարկի գծով հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը կատարելուց հետո անցել է տասը տարի:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը վերոգրյալ բովանդակությամբ 4-րդ մասով լրացվել է 21.03.2012 թվականին ընդունված և 28.04.2012 թվականին ուժի մեջ մտած ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով օրենսդիրը նախատեսել է հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետները: Նշված իրավադրույթով օրենսդիրը սահմանել է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետը երեք տարի է, որի հաշվարկման համար ելակետ է ընդունվում հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարին (ժամկետը հաշվարկվում է իրավախախտման կատարման տարվան հաջորդող տարվանից): Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ օրենսդրի կողմից սահմանված ընդհանուր կանոնը հետևյալն է. հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե հարկային օրենսդրության տվյալ խախտումը հայտնաբերվել է այն ժամա-

նակ, երբ լրացած է եղել այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը: Այսինքն՝ հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետն ընդգրկում է տվյալ իրավախախտման կատարման տարվան անմիջապես հաջորդող երեք օրացուցային տարիները: այդ տարիներն անցնելուց հետո հայտնաբերված իրավախախտման համար հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ:

Հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերագրյալ ընդհանուր կանոնից օրենսդիրը նախատեսել է բացառություն՝ անրագրելով, որ նշված ժամկետը չի գործում «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված դեպքերում: Ըստ այդմ, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում օրենսդիրը նախատեսել է գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ հատուկ իրավակարգավորում: Նշված իրավադրույթի համաձայն՝ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետները հաշվարկելու համար հիմք է ընդունվում հարկային օրենսդրության խախտումը կատարելու պահը (ժամկետը հաշվարկվում է իրավախախտման կատարման պահից): Սակայն գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ օրենսդրի կողմից սահմանված հատուկ կանոնը հանգում է հետևյալին. գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե հարկային օրենսդրության տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելուց հետո տասը տարվա ժամկետը լրանալուց հետո:

Ամփոփելով վերագրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

4. որպես ընդհանուր կանոն՝ հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետը երեք տարի է, որի հաշվարկման սկիզբն իրավախախտման կատարման տարվան անմիջապես հաջորդող տարին է,

5. որպես բացառություն ընդհանուր կանոնից՝ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետը տասը տարի է, որի հաշվարկման սկիզբն իրավախախտման կատարման պահն է,

6. հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության թե՛ ընդհանուր, թե՛ հատուկ ժամկետների հաշվարկման անհրաժեշտությունը ծագում է հարկային իրավախախտման հայտնաբերման պահին, քանի որ հարկային պարտավորությունների առաջացումը պայմանավորված է վաղեմության ժամկետի՝ տվյալ իրավախախտման հայտնաբերման պահին լրացած լինելու կամ չլինելու հանգամանքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածում հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների՝ գույքահարկի վերաբերող բացառությունը սահմանվել է 21.03.2012 թվականին ընդունված և 28.04.2012 թվականին ուժի մեջ մտած ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն ՀՀ օրենքով, իսկ գույքահարկի գծով հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետի վերաբերյալ հատուկ կանոններն անրագրվել են «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում 21.03.2012 թվականին ընդունված և 28.04.2012 թվականին ուժի մեջ մտած ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքով: Փաստորեն, գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ հատուկ իրավակարգավորումները Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ են ներմուծվել 21.03.2012 թվականին տեղի

ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում, որոնք իրավաբանական ուժի մեջ են մտել 28.04.2012 թվականին:

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ կանոններում օրենսդրական փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի՝ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ժամանակի մեջ գործողության հարցին:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների (...) գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը, եթե նույն օրենքով կամ փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ (...):

ՀՀ սահմանադրական դատարանը, 29.11.2011 թվականի թիվ ՍԳՌ-1000 որոշմամբ անդրադառնալով ժամանակի մեջ իրավական ակտի գործողության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրությամբ՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմի իրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այն իրավականակտն ընդունող մարմնի հայեցողությանն է թողնում անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը: Միաժամանակ այս նորմը սահմանում է այդ հայեցողությունն իրացնելու ընթացակարգը, այն է՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ակտն ընդունող մարմինը, իրացնելով իրեն Սահմանադրությամբ տրված հայեցողական լիազորությունը, տվյալ իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելու նպատակահարմարության դեպքում տվյալ ակտում ամրագրում է այդ ակտին հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթ: Նշված հայեցողությունն իրացնելու այս ընթացակարգն ինքնապատակ չէ և տրամաբանորեն բխում է Սահմանադրությամբ՝ իրավական ակտերի ժամանակի մեջ գործողության կանոնակարգման ընդհանուր տրամաբանությունից:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի վկայակոչված իրավադ-

րույթներից հետևում է, որ իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, իսկ մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխություններ կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը: Այսինքն՝ ըստ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության համընդհանուր սկզբունքի՝ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ եղած ժամանակահատվածում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ իրավական ակտի կիրառելիության հարցն ուղղակիորեն կապված է կարգավորման առարկան կազմող իրավահարաբերության ծագման պահի հետ:

Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքները հետադարձ ուժ չունեն: Նշված օրենսդրական ակտերով նախատեսված գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության հատուկ ժամկետների վերաբերյալ իրավակարգավորումները չեն կարող տարածվել այդ օրենքների ուժի մեջ մտնելուց՝ 28.04.2012 թվականից առաջ ծագած հասարակական հարաբերությունների վրա: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության վերաբերյալ սահմանադրաիրավական այն սկզբունքը, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ իրավական ակտերը չեն գործում հետադարձ ուժով, իսկ անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը սահմանադրորեն արգելված է:

Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության հատուկ ժամկետների վերաբերյալ իրավակարգավորումները, որոնք ՀՀ իրավական համակարգ են ներմուծվել ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքներով, կիրառվում են միայն այն հասարակական հարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են նշված օրենքների ուժի մեջ մտնելուց՝ 28.04.2012 թվականից հետո: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ժամանակի մեջ գործողության հարցը լուծելիս անհրաժեշտ է պարզել հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ կանոններով կարգավորվող հասարակական հարաբերության ծագման պահը:

Հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ օրենսդրական նորմերի բովանդակային վերլուծությունը վկայում է այն մասին, որ այդ կանոնների կարգավորման առարկան հայտնաբերված հարկային իրավախախտումների համար առաջացող պատասխանատվությունը բացառող որոշակի հանգամանքների հետ կապված հասարակական հարաբերություններն են: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ հարկային օրենսդրության այս կամ այն խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ օրենսդրական կարգավորումները սկսում են գործել իրավասու վարչական մարմնի կողմից տվյալ իրավախախտումը հայտնաբերվելու պահից: Այսինքն՝ հարկային օրենսդրության այս կամ այն խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ նորմերն իրավական հետևանքներ են առաջացնում միայն այն ժամանակ, երբ իրավասու վարչական մարմինը հայտնաբերել է տվյալ իրավախախտումը: Այլ կերպ ասած՝ եթե հարկային օրենսդրության խախտումը դեռևս հայտնաբերված չէ իրավասու վարչական մարմնի կողմից, ապա այդ խախտման հա-

մար հարկային պարտավորությունների առաջացումը բացառող հանգամանքները՝ վաղեմության ժամկետները, սահմանող իրավանորմերը չեն կարող որևէ իրավաբանական նշանակություն ունենալ: Այսպիսով, ըստ Վճռաբեկ դատարանի՝ իրավասու վարչական մարմնի կողմից այս կամ այն հարկային իրավախախտման հայտնաբերումն է այն անհրաժեշտ իրավաբանական փաստը, որի հետ օրենսդիրը կապել է այդ խախտման համար հարկային պարտավորությունների առաջացումը բացառող հանգամանքները՝ վաղեմության ժամկետները, սահմանող իրավանորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների ծագումը:

Վերոգրյալ փաստարկները հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ կանոններով կարգավորվող հասարակական հարաբերությունները ծագում են իրավասու վարչական մարմնի կողմից այս կամ այն հարկային իրավախախտման հայտնաբերման պահին: Մինչև հարկային իրավախախտման հայտնաբերումը հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ կանոններով կարգավորվող հասարակական հարաբերություններ չեն կարող ծագել՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է այդ իրավախախտումը կատարվել: Հետևաբար, հարկային օրենսդրության կոնկրետ խախտման համար հարկային պարտավորությունների առաջադրման հարցը լուծելիս վաղեմության ժամկետների վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում գործող օրենսդրական կարգավորումների կիրառման համար որպես ելակետ պետք է ընդունել տվյալ հարկային իրավախախտման հայտնաբերման պահը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վերոգրյալ ընդհանուր կանոնից պետք է կատարել մեկ բացառություն, որը վերաբերում է այն դեպքերին, երբ հարկային իրավախախտումը հայտնաբերվել է ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելուց հետո, սակայն այդ օրենքների ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ այդ իրավախախտումների կատարման տարվան հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած է եղել: Քննարկվող պարագայում հարկային օրենսդրության կոնկրետ խախտման համար հարկային պարտավորությունների առաջադրման հարցը լուծելիս վաղեմության ժամկետների վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում գործող օրենսդրական կարգավորումների կիրառման համար որպես ելակետ պետք է ընդունել ոչ միայն տվյալ հարկային իրավախախտման հայտնաբերման պահը, այլ նաև այն հանգամանքը, թե արդյոք վերոգրյալ օրենքների ուժի մեջ մտնելու պահին՝ 28.04.2012 թվականին, այդ իրավախախտումների կատարման տարվան հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած եղել է, թե՛ ոչ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելուց առաջ կատարված հարկային օրենսդրության խախտումն իրավասու վարչական մարմնի կողմից կարող էր հայտնաբերվել մինչև 28.04.2012 թվականը. այդ դեպքում տվյալ իրավախախտման համար հարկային պարտավորություններ չէին կարող առաջանալ, եթե լրացած լիներ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված երեք տարվա ժամկետը: Ըստ այդմ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավակարգավորումը պետք է տարածվի նաև 28.04.2012 թվականից հետո հայտնաբերված այն հարկային իրավախախտումների վրա, որոնց կատարման տարվան հաջորդող երեք տարվա ժամկետը ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելու պահին լրացած է եղել: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկային պարտավորություններ չեն



կարող առաջանալ բոլոր այն հարկային իրավախախտումների համար, որոնց կատարման տարվան հաջորդող երեք տարվա ժամկետը ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելու պահին լրացած է եղել: Այդ դեպքում հարկային օրենսդրության խախտում թույլ տված անձն իրավունք ունի ողջամտորեն ենթադրելու և ակնկալելու, որ իր կողմից կատարված իրավախախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետներն անցել են՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավակարգավորումների համաձայն:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների՝ ժամանակի մեջ գործողության իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա հետևյալ ուղղությամբ. նշված օրենքները տարածվում են դրանց ուժի մեջ մտնելուց՝ 28.04.2012 թվականից հետո հայտնաբերված հարկային օրենսդրության խախտումների նկատմամբ, և քննարկվող օրենքների՝ ժամանակի մեջ գործողության կանոնի բովանդակությունը հանգում է հետևյալին.

1. Եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է և իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է մինչև 28.04.2012 թվականը, ապա այդ դեպքում կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավարգավորումը.

2. Եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է և իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է 28.04.2012 թվականից հետո, ապա այդ դեպքում կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ ներկայումս (28.04.2012 թվականից) գործող խմբագրությամբ և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի՝ 28.04.2012 թվականից գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավակարգավորումը.

3. Եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է մինչև 28.04.2012 թվականը, սակայն իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է 28.04.2012 թվականին կամ դրանից հետո, ապա այդ դեպքում վաղեմության ժամկետների վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում գործող օրենսդրական կարգավորումների կիրառման հարցը պետք է լուծվի՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, թե 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած եղել է, թե՛ ոչ. այսպես՝

- եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է մինչև 28.04.2012 թվականը, սակայն իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է 28.04.2012 թվականին կամ դրանից հետո, և 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած է եղել, ապա այդ իրավախախտման համար հարկային պարտավորություններ առաջադրելիս կիրառվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավարգավորումը,

- եթե գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է մինչև 28.04.2012 թվականը, սակայն իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է 28.04.2012 թվականին կամ դրանից հետո, և 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած չի եղել, ապա այդ իրավախախտման համար հարկային պարտավորություններ առաջադրելիս կիրառվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ ներկայումս (28.04.2012 թվականից) գործող խմբագրությամբ և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի՝ 28.04.2012 թվականից գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավակարգավորումը:

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործի հարուցման հիմքն անբողոքարկելի վարչական ակտի՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի «Գույքահարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մասին» 15.09.2015 թվականի թիվ 4879-Ա որոշման հիման վրա ֆիզիկական անձից գույքահարկի գումարի բռնագանձման վերաբերյալ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի հայցն է, որով վերջինս պահանջել է Միեր Գևորգյանից բռնագանձել գույքահարկի գծով առաջացած հարկային պարտավորության գումարը: Նշված վարչական ակտով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարը Միեր Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող «BMW X 5 3.0 I» մակնիշի 91 SL 777 պետհամարանիշի ավտոմեքենայի 2009-2014 թվականների գույքահարկի գծով վերջինիս նկատմամբ առաջադրել է հարկային պարտավորություն՝ 919.195 ՀՀ դրամի չափով:

Դատարանը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի հայցը բավարարել է մասնակի՝ վճռել է Միեր Գևորգյանից հոգուտ Երևան համայնքի բռնագանձել 360.982 ՀՀ դրամ և Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի 15.09.2015 թվականի թիվ 4879-Ա որոշումն անվավեր է ճանաչել 2009-2011 թվականների ժամանակահատվածի համար գույքահարկի գծով հաշվարկված հարկային պարտավորության գումարը՝ 558.213 ՀՀ դրամի չափով, Միեր Գևորգյանից գանձելու մատով:

Դատարանը վճռի հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ տվյալ դեպքում իրավահարաբերությունը ծագել է 2009 թվականից, իսկ գումարի հաշվարկը ներառում է 2009-2011 թվականները, ուստի նշված իրավահարաբերության նկատմամբ կիրառելի է տվյալ պահին գործող խմբագրությամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի 3-րդ մասը: Հետևաբար, գույքահարկի գծով 2009-2011 թվականների համար գույքահարկի պարտավորությունը Միեր Գևորգյանի նկատմամբ առաջադրվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ մինչև 28.04.2012 թվականը գործող խմբագրությամբ սահմանված եռամյա ժամկետի խախտմամբ:

Վերաքննիչ դատարանը մերժել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն ՀՀ օրենքը չի կարող տարածվել այն խախտումների նկատմամբ, որոնց հայտնաբերման եռամյա ժամկետը 28.04.2012 թվականի դրությամբ արդեն իսկ լրացած է, իսկ սույն գործի փաստերով հաստատվում է, որ Միեր Գևորգյանի կողմից թույլ տրված խախտման փաստը հայտնաբերվել է միայն 2015 թվականին, որին անմիջապես նախորդող երրորդ տարին 2012 թվականն է:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված հարկատեսակ է տեղական հարկ հանդիսացող գույքահարկը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահ-

մանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չնուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար նույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկ վճարող են համարվում (...) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է նույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույքը (...):

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում փոխադրամիջոցները, այդ թվում՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ, բացառությամբ նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի:

Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ (...) փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Նույն հոդվածի 4-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձինք տարեկան տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների համար գույքահարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև փոխադրամիջոցների՝ տվյալ տարվա տեխնիկական զննության ներկայացնելը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են տեխնիկական զննության:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցի առաջին տեխնիկական զննությունը կատարվում է նախքան տրանսպորտային միջոցը Ճանապարհային տնտեսականությունում առաջին անգամ հաշվառելը:

Նոր թողարկված (տվյալ տարում արտադրված) տրանսպորտային միջոցների տեխնիկական զննությունը կատարվում է տրանսպորտային միջոցի հաշվառմանը հաջորդող տարում՝ մինչև հաշվառման կտրոնի վրա նշված (փակցված կամ դակված) ամսվա վերջին օրը (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցի երկրորդ և հետագա տեխնիկական զննությունները կատարվում են հետևյալ պարբերականությամբ.

ա) ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցները՝ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրոլեյբուսները, ավտոբուսները և մարդատար-տաքսի ավտոմոբիլները (բացառությամբ մեկ մարդատար տաքսի-ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին պատկանող մարդատար-տաքսի ավտոմոբիլների)՝ յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ.

բ) տրանսպորտային միջոցները, դրանց թողարկման տարվան հաջորդող չորրորդ տարին ներառյալ (բացի նույն մասի «ա» կետում նշված տրանսպորտային միջոցներից)՝ յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամ:

գ) տրանսպորտային միջոցները, այդ թվում՝ մեկ մարդատար տաքսի-ավտոմոբիլով ուղևորավորադրումներ իրականացնող ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին պատկանող մարդատար-տաքսի ավտոմոբիլները, դրանց թողարկման տարվան հաջորդող հինգերորդ տարվանից սկսած, իսկ ինքնաշեն կամ թողարկման տարին չձշտված տրանսպորտային միջոցները (բացի նույն մասի «ա» կետում նշված տրանսպորտային միջոցներից)՝ յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

Տրանսպորտային միջոցը նույն մասի պահանջին համապատասխանող տարում տեխնիկական գննություն պետք է անցնի մինչև նախորդ տեխնիկական գննության արդյունքում տրամադրված կտրոնի վրա նշված ամսվա վերջին օրը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հարկեր, տուրքեր մուծելու և այլ պարտադիր վճարումներ կատարելու սահմանադրական պարտականությունը կրում է համընդհանուր բնույթ, այն տարածվում է բոլոր անձանց վրա: Սահմանադրությամբ նախատեսված այս պարտականության մեջ արտահայտված են հասարակության հանրային շահերը: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված «յուրաքանչյուր ոք պարտավոր է» ձևակերպումից ակնհայտ է, որ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումները կրում են համապարտադիր բնույթ: Համապարտադիրությունը, որպես անվերապահորեն կատարման ենթակա պահանջ, տարածվում է բոլոր վճարողների վրա: Գործնականում համապարտադիրության պահանջը կյանքի է կոչվում սեփականատիրոջ գույքի մի մասի՝ հարկի կամ այլ պարտադիր վճարումների ձևաչափով, պետության օգտին փոխանցելու միջոցով: Համապարտադիրության պահանջն արտահայտվում է նաև նրանում, որ կամավոր մուծումներ չկատարելու դեպքում դրանք պետության կողմից հարկադրաբար են գանձվում (*տես*, ՀՀ *կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Լիլիթ Բաբասիևայի թիվ ՎԴ/7537/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, իսկ կոնկրետ հարկատեսակները սահմանում է օրենսդիրը: Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված հարկատեսակ է գույքահարկը, որը որոշակի կատեգորիայի գույքի համար համայնքային կամ պետական բյուջե վճարվող և հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից չկախված ուղղակի հարկ է: Հայաստանի Հանրապետությունում գույքահարկ վճարող են համարվում նաև ֆիզիկական անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկվող օբյեկտ համարվող որոշակի տեսակի գույք: Օրենսդիրը սահմանել է, որ գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում նաև փոխադրամիջոցները՝ դրանց շարքում նախատեսելով նաև ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 13-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ ֆիզիկական անձինք հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար գույքահարկի տարեկան գումարը վճարում են իրենց հաշվառման վայրի համայնքի բյուջե, նշված հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում՝ իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե, իսկ եթե հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարում են փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 13-րդ հոդվածների և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի վկայակոչված իրավանորմերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին, և վերջիններս պարտավոր են գույքահարկի տարեկան գումարը համապատասխան բյուջե վճարել մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: Հետևաբար, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար գույքահարկի գծով ֆիզիկական անձի հարկային պարտավորության խախտումը վրա է հասնում այն դեպքում, երբ տվյալ ֆիզիկական անձը մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ ամբողջությամբ չի վճարել տվյալ փոխադրամիջոցի համար համապատասխան բյուջե վճարման ենթակա գույքահարկի գումարը:

Օրենսդիրը վերոնշյալ կարգավորումից բացի նախատեսել է նաև հատուկ կարգավորում, այն է՝ ֆիզիկական անձը տարեկան տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցի համար գույքահարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարում է մինչև փոխադրամիջոցի՝ տվյալ տարվա տեխնիկական զննության ներկայացնելը: Նշված դրույթի կառուցվածքային վերլուծությունից բխում է, որ այն կիրառվում է միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում.

- տրանսպորտային միջոցը ենթակա է տեխնիկական զննության,
- տրանսպորտային միջոցի տեխնիկական զննությունն ամենամյա բնույթ է կրում,
- տրանսպորտային միջոցը ներկայացվել է տվյալ տարվա տեխնիկական զննության:

Վճարել դատարանը գտնում է, որ գույքահարկի գծով պարտավորությունը մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ կատարելու կանոնից բացառություն նախատեսող նորմի գործողության նպատակը տրանսպորտային միջոցների գույքահարկի գծով հարկային պարտավորության պատշաճ կատարումն ապահովելն է: Այսինքն՝ փոխադրամիջոցի ամենամյա տեխնիկական զննությունը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ տվյալ տրանսպորտային միջոցի համար գույքահարկ վճարելու պարտավորությունը պատշաճ կատարվել է:

Միաժամանակ Վճարել դատարանն արձանագրում է, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքից բխում է, որ ոչ բոլոր տրանսպորտային միջոցներն են ենթակա ամենամյա տեխնիկական զննության: Մասնավորապես՝ տրանսպորտային միջոցները, բացառությամբ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների, դրանց թողարկման տարվան հաջորդող չորրորդ տարին ներառյալ, տեխնիկական զննության ենթարկվում են յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամ, իսկ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցները՝ 6 ամիսը մեկ անգամ: Մինչդեռ Վճարել դատարանի կատարած վերլուծությունից հետևում է, որ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքը ֆիզիկական անձի համար մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ գույքահարկի տարեկան գումարը վճարելու պարտավորությունից բացառություն սահմանել է միայն տարեկան տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցի համար: Ավելին, տարեկան տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցը տեխնիկական զննության չներկայացնելու հանգամանքը ևս չի կարող ազդեցություն ունենալ գույքահարկի գծով պարտավորության կատարման վրա, և այդ դեպքում գործում է պարտավորությունը մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ կատարելու ընդհանուր կանոնը:

Վերոգրյալի հիման վրա Վճարել դատարանը գտնում է, որ գույքահարկի գծով հարկային պարտավորությունն ամեն դեպքում խախտված կարող է համարվել, եթե տվյալ ֆիզիկական անձը մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ ամբողջությամբ չի վճարել փոխադրամիջոցի համար համապատասխան բյուջե վճարման ենթակա գույքահարկի գումարը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դեկավարը 15.09.2015 թվականի «Գույքահարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մասին» թիվ 4879-Ա որոշմամբ Միեր Գևորգյանից գանձել է «BMW X 5 3.0 l» մակնիշի 91 SL 777 պետհամարանիշի ավտոմեքենայի համար գույքահարկի գծով 2009-2014 թվականների համար առաջացած հարկային պարտավորության գումարը: Նշված տարիների համար գույքահարկի գծով հարկային պարտավորությունների՝ Միեր Գևորգյանի կողմից թույլ տրված խախտումներն իրավասու վարչական մարմինը

հայտնաբերել է 2015 թվականին. այդ հանգամանքը հաստատվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի տեղեկանքով, որը կազմվել է 24.08.2015 թվականին:

Հաշվի առնելով այն, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից անվավեր է ճանաչվել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի 15.09.2015 թվականի թիվ 4879-Ա որոշումը՝ 2009, 2010 և 2011 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումարը գանձելու մասով, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերոգրյալ տարիների համար հաշվարկվող գույքահարկի գծով հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների հարցին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մհեր Գևորգյանը իրեն պատկանող «BMW X 5 3.0 I» մակնիշի 91 SL 777 պետհամարանիշի ավտոմեքենայի համար 2009, 2010 և 2011 թվականների գույքահարկի տարեկան գումարը Երևան համայնքի բյուջե չի վճարել մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: Հետևաբար, նշված շարժական գույքի համար 2009, 2010 և 2011 թվականների գույքահարկի գծով Մհեր Գևորգյանի հարկային պարտավորության խախտումը յուրաքանչյուր տարվա համար վրա է հասել այդ տարվա դեկտեմբերի 2-ին:

Փաստորեն, տվյալ դեպքում առկա է սույն որոշմամբ նշված այն իրավիճակը, երբ գույքահարկի գծով հարկային օրենսդրության խախտումը կատարվել է մինչև ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելը՝ 28.04.2012 թվականը, սակայն իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է այդ օրենքների ուժի մեջ մտնելուց հետո: Ըստ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման՝ նման դեպքերում հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետների վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում գործող օրենսդրական կարգավորումների կիրառման հարցը պետք է լուծվի՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, թե 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած եղել է, թե՛ ոչ: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը փաստում է հետևյալը.

Մհեր Գևորգյանին պատկանող «BMW X 5 3.0 I» մակնիշի 91 SL 777 պետհամարանիշի ավտոմեքենայի համար **2009, 2010 և 2011 թվականների** գույքահարկի գծով հարկային պարտավորության խախտումները կատարվել են մինչև 28.04.2012 թվականը (02.12.2009, 02.12.2010, 02.12.2011 թվականներին), և 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության այդ խախտումները կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած չի եղել:

Անդրադառնալով Մհեր Գևորգյանին պատկանող «BMW X 5 3.0 I» մակնիշի 91 SL 777 պետհամարանիշի ավտոմեքենայի համար **2009, 2010 և 2011 թվականների** գույքահարկի գծով հարկային պարտավորությունների առաջադրման հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ իրավախախտումների համար հարկային պարտավորությունների առաջադրման հարցը լուծելիս վաղեմության ժամկետների վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում գործող օրենսդրական կարգավորումների կիրառման համար որպես ելակետ պետք է ընդունել տվյալ հարկային իրավախախտման հայտնաբերման պահը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 28.04.2012 թվականի դրությամբ հարկային օրենսդրության այդ խախտումները կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը լրացած չի եղել: Հետևաբար Մհեր Գևորգյանին պատկանող «BMW X 5 3.0 I» մակնիշի 91 SL 777 պետհամարանիշի ավտոմեքենայի համար **2009, 2010 և 2011 թվականների** գույքահարկի գծով հարկային պարտավորություններ առաջադրելիս պետք է կիրառվի «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի՝ ներկայումս (28.04.2012 թվականից) գործող խմբագրությամբ և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի՝ 28.04.2012 թվականից գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավակարգավորումը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի 15.09.2015 թվականի թիվ

4879-Ա որոշումը՝ Միեր Գևորգյանից հօգուտ ՀՀ Երևան համայնքի բյուջեի 2009, 2010 և 2011 թվականների համար հաշվարկված գույքահարկի գումարը գանձելու մասով, ընդունվել է իրավահարաբերության ծագման՝ իրավասու վարչական մարմնի կողմից այդ իրավախախտումները հայտնաբերելու պահին գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ, և այդ մասով ևս հայցը ենթակա էր բավարարման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարը վճռաբեկ բողոքի համար վճարել է 16.746 ՀՀ դրամ (558.213 ՀՀ դրամ x 3%), և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Միեր Գևորգյանի կողմից: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Միեր Գևորգյանից հօգուտ

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ենթակա է բռնագանձման 11.164 ՀՀ դրամ (558.213 ՀՀ դրամ x 2%)՝ որպես հայցադիմումի համար Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար և 16.746 ՀՀ դրամ (558.213 ՀՀ դրամ x 3%)՝ որպես վերաքննիչ բողոքի համար Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 13.12.2016 թվականի որոշումը և փոփոխել այն. հայցը՝ Միեր Գևորգյանից հօգուտ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի 558.213 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով, բավարարել. Միեր Գևորգյանից հօգուտ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բռնագանձել 558.213 ՀՀ դրամ:

2. Միեր Գևորգյանից հօգուտ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բռնագանձել 11.164 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Միեր Գևորգյանից հօգուտ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բռնագանձել 16.746 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Միեր Գևորգյանից հօգուտ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բռնագանձել 16.746 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԳ5/0519/05/13  
Նախագահող դատավոր՝ Բ. Մկոյան  
Դատավորներ՝ Ա. Առաքելյան  
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԳ5/0519/05/13**  
**2017թ.**

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՑԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գյումրու տարածքային հարկային տեսչու-  
թյան վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 09.12.2014 թվականի որոշ-  
ման դեմ՝ ըստ հայցի «Արթիկի «Ստեկլոմաշ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ  
Գյումրու տարածքային հարկային տեսչության՝ վարչական ակտը մասնակիորեն անվա-  
վեր ճանաչելու պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ կառավա-  
րությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային  
տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) 29.08.2013 թվականի թիվ 1008854 ակտի 1-ին կե-  
տը՝ 4.220.205 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրման մասով,  
և 5-րդ կետը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Էդ. Նահապետյան) (այսուհետ՝ Դատարան)  
13.06.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Տեսչության 29.08.2013  
թվականի թիվ 1008854 ակտի 1-ին կետը՝ 4.044.381 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պար-  
տավորություն առաջադրելու մասով, և 5-րդ կետը ճանաչվել են անվավեր:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.12.2014  
թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.06.2014  
թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ, 27-րդ հոդվածները, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ստուգման ընթացքում ուսումնասիրվել են ինչպես Ընկերության սկզբնական հաշվառման փաստաթղթերը, այնպես էլ Ընկերության կողմից տրամադրված 1 տոննա ապրանքի արտադրության մեջ օգտագործվող անհրաժեշտ նյութերի տեսականու և քանակի վերաբերյալ տեղեկանքը, որը հաստատվել է Ընկերության գլխավոր տնօրենի կողմից: Ստուգման արդյունքում ձեռք բերված ապացույցներով հաստատվում է այն փաստական հանգամանքը, որ Ընկերության կողմից արտադրությունում օգտագործվող հումքի ձեռքբերման ծախսերը՝ 2011 թվականի ընթացքում 799.200 ՀՀ դրամի չափով, իսկ 2012 թվականի ընթացքում՝ 10.133.175 ՀՀ դրամի չափով, նվազեցվել են համախառն եկամտից, մինչդեռ այդ ծախսերը հիմնավորված չեն համապատասխան փաստաթղթերով, ինչը հանգեցրել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի խախտման:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Ընկերության 2011 թվականի մարտ ամսվա ավելացված արժեքի հարկի հաշվարկում ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների գծով ավելացված արժեքի հարկի դեբետը ցույց է տրվել 1.338.520 ՀՀ դրամ, որի մեջ 100.000 ՀՀ դրամ գերազանցող հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները կազմել են 1.337.500 ՀՀ դրամ: Ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ պարտավորություններ առաջադրելիս հիմք են ընդունվել այն փաստական հանգամանքները, որ Ընկերության 2011 թվականի ապրիլ ամսվա ավելացված արժեքի հարկի հաշվարկի ձեռք բերված ապրանքների մասով հետաձգումը պակաս է ցույց տրվել 193.500 ՀՀ դրամի չափով, իսկ ավելացված արժեքի հարկի գումարի ձգբտման ընդհանուր գումարն ավելացվել է 874.900 ՀՀ դրամով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 09.12.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները**

Տեսչության վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման: Թե՛ շահութահարկի, թե՛ ավելացված արժեքի հարկի գծով ստուգման ակտում Տեսչության կողմից արձանագրված լրացուցիչ պարտավորություններն անհիմն են և չեն բխում Ընկերության հաշվառման տվյալներից: Արտադրությունում օգտագործված հումքի տեսակների և քանակի վերաբերյալ պատշաճ ուսումնասիրություն չկատարելու արդյունքում վարչական մարմնի կողմից խախտվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը: Բացի այդ, վարչական մարմինը չի պարզել Ընկերության ներկայացրած տվյալների, տեղեկությունների հավաստիությունը և ենթադրությունների վրա հիմնված հետևություններ է արել ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորության առկայության վերաբերյալ՝ ստուգման ակտում չնկարագրելով Ընկերության կողմից թույլ տրված խախտման էությունը:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Տեսչության կողմից 29.08.2013 թվականին կազմված թիվ 1008854 ակտի համաձայն՝ Ընկերությունում կատարված ստուգման արդյունքում պարզվել է հետևյալը.

ա) Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ստուգման ակտի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը խախտել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները: Այսպես՝ ըստ ստուգման ակտի՝ Ընկերությունը համախառն եկամտից կատարված նվազեցումներն ավել է ցույց տվել 2011 թվականի համար 799.200 ՀՀ դրամով, իսկ 2012 թվականի համար՝ 10.624.475 ՀՀ դրամով, որից 491.300 ՀՀ դրամը՝ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150 տոկոսի գումարն է, իսկ 10.133.175 ՀՀ դրամը՝ փաստաթղթերով չհիմնավորված, բայց կատարված անհրաժեշտ ծախսերի գումարը: Այսինքն՝ պակաս ցույց տրված շահութահարկի գումարը 2011 թվականի համար կազմում է 159.840 ՀՀ դրամ, իսկ 2012 թվականի համար՝ 2.124.895 ՀՀ դրամ, որոնց նկատմամբ հաշվարկվել են տույժեր և տուգանքներ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների համաձայն: Այսպիսով, շահութահարկի գծով Ընկերությանն ստուգման ակտով առաջադրված լրացուցիչ վճարման ենթակա գումարի չափը կազմել է 4.396.729 ՀՀ դրամ:

բ) Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ստուգման ակտի 5-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը խախտել է «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջները: Այսպես, Ընկերությունը 2011 թվականի ապրիլ ամսվա հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարն ավել է ցույց տվել 1.068.400 ՀՀ դրամով, որի նկատմամբ հաշվարկվել են տույժեր և տուգանքներ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ հոդվածների և «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն: Այսպիսով, ավելացված արժեքի հարկի գծով Ընկերությանը ստուգման ակտով առաջադրված լրացուցիչ վճարման ենթակա գումարի չափը կազմել է 2.294.389 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 5-9):**

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ՝ Գանգատարկման հանձնաժողով) 22.10.2013 թվականի որոշմամբ Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ստուգման ակտի դեմ բերված Ընկերության վարչական բողոքը մերժվել է, և ակտը թողնվել է անփոփոխ **(հատոր 1-ին, գ.թ. 12-14):**

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ստուգման ակտի բովանդակությանը վերաբերող օրենսդրական կարգավորումների կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հերկյալ իրավական հարցադրմանը, ինչ լույսիցներ և փեղեկություններ պեղք է պարունակի շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով որոշակի իրավախախտումների համար փոփոխվող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող սրուգման ակտը:*

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվետվություն) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ստուգումները կարող են լինել թեմատիկ՝ ուղղված տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաստացի իրավիճակը պարզելուն, կամ համալիր՝ ուղղված տնտեսավարող սուբյեկտի ամբողջ ֆինանսատնտեսական գործունեության փաստացի իրավիճակը պարզելուն: Թեմատիկ են հարկային, մաքսային, պարտադիր սոցիալական ապահովության, բնօգտագործման, բնապահպանական և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգումները, պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումները (...):

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստուգման նպատակը տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելը, Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելը և տնտեսավարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելը, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգումների դեպքում նաև տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաստացի իրավիճակը պարզելն է:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, (...) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) ակտում նշվում են՝

(...)

9) ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել:

10) պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը:

(...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկը հարկ վճարողների կողմից նույն օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում (հարկատու են) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և նույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ «Համախառն եկամտի նվազեցումները» վերտառությամբ 4-րդ գլխի 9-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից թույլատրվում է կատարել նույն գլխով նախատեսված նվազեցումները (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ): Նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով: Նույն օրենքի իմաստով՝ (ա) ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցման. (բ) անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, շուկայում առաջխաղացման և (կամ) ապրանքների (ծառայությունների) իրացման, խորհրդատվական և իրավաբանական ծառայությունների, ուղեկցման, երաշխիքային հսկողության և շահագործման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, արտադրության (շինարարության) նախապատրաստման, յուրացման և կոնսերվացման, գույքի պահպանման, կադրերի պատրաստման համար հարկատուի կատարած ծախսերը, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսերը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (...) անուղղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը) (...):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը 23-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում (պակասեցվում) են՝ 1) արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված այն ապրանքների և ստացված այն ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով (...), որոնց դիմաց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին կատարվել է վճարում (...) (2) հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար (...) Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից գանձված (գանձման ենթակա) ԱԱՀ-ի գումարների չափով (...):

Վճռաբեկ դատարանը նախնառաջ արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի բովանդակությունից հետևում է, որ ստուգումն իրավական նորմերով կարգավորվող ընթացակարգ է, որի միջոցով պետությունը պարզում է Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից իրենց գործունեության վերաբերյալ պետությանը տրամադրվող տեղեկությունների արժանահավատությունը և այդ գործունեության համապատասխանությունն իրավական ակտերի պահանջներին: Ստուգման՝ որպես իրավական գործընթացի անհրաժեշտությունն առավելապես պայմանավորված է տնտեսական գործունեության բազմազանության, դրանում մեծ քանակությամբ սուբյեկտների ներգրավվածության պայմաններում տնտեսվարող սուբյեկտների՝ պետության հանդեպ ունեցած պարտականությունների կատարման ապահովման նկատառումով:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասում օրենսդիրը սահմանել է, որ ստուգումը կարող է ուղղված լինել ինչպես տնտեսվարող սուբյեկտի ամբողջ ֆինանսատնտեսական գործունեության փաստացի իրավիճակը պարզելուն (համալիր ստուգում), այնպես էլ տնտեսվարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաս-

տացի իրավիճակը պարզելուն (թեմատիկ ստուգում): Ընդ որում՝ թեմատիկ ստուգումներից է նաև պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումը, որի ընթացքում պետական լիազոր մարմնի կողմից ըստ էության ստուգման է ենթարկվում ստուգվող ժամանակաշրջանում տնտեսվարող սուբյեկտի իրականացրած ամբողջ գործունեության արդյունքում պետական բյուջե վճարման ենթակա գումարների (հարկեր, տուրքեր, այլ պարտադիր վճարներ) հաշվարկման ու վճարման ճշտությունը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ ստուգման գործընթացը եզրափակվում է ստուգման ակտի ընդունմամբ, որը պետք է բովանդակային իմաստով համապատասխանի նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերով ստուգման ակտին ներկայացվող պահանջների իրավական վերլուծությանը: Այսպես, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և խախտված իրավական նորմերը, ինչպես նաև պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը ստուգման ակտում նշելու վարչական մարմնի պարտականության սահմանումն ինքնանպատակ չէ, քանի որ օրենքի այդ պահանջները պահպանված լինելու պարագայում միայն վարչական կամ դատական բողոքարկման կարգով հնարավոր կլինի պարզել և հաստատել ստուգմամբ հայտնաբերված խախտումների առկայությունը կամ բացակայությունը: Ընդ որում, ստուգման ակտում բովանդակվող վերոգրյալ տեղեկությունները պետք է լինեն ամբողջական, հստակ և վարչական բողոքը քննող վարչական մարմնին կամ դատարանին հնարավորություն ընձեռեն գնահատելու ստուգման ակտի իրավաչափությունը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ստուգմամբ բացահայտված խախտումների և տնտեսվարողի կողմից խախտված իրավական նորմերի վերաբերյալ ստուգման ակտում նշում կատարելը հնարավորություն է ընձեռում որոշելու ակտի իրավաչափությունը, գնահատելու նորմատիվ հիմքը, այսինքն՝ վարքագծի այն կանոնների ամբողջությունը, որոնք տնտեսվարող սուբյեկտի համար սահմանում են որոշակի գործողություն կատարելու կամ չկատարելու պարտականություն, իսկ խախտումների նկարագրությունն ակտում նշելը հնարավոր է դարձնում առանձնացնել այն իրավաբանական փաստերը՝ իրողությունները և գործողությունները, որոնք հիմք են տալիս տնտեսվարող սուբյեկտին այս կամ այն իրավախախտումը վերագրելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միայն վերոգրյալ չափանիշներին համապատասխանող վարչական ակտը կարող է ապահովել և արդարացնել ստուգման նպատակները, որոնց թվին են դասվում տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտում նորմատիվ իրավական ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելը և տնտեսվարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ շահութահարկը պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որի հարկվող օբյեկտը ռեզիդենտների համար Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթն է: Ընդ որում, հարկվող շահույթ է հարկատուի համախառն եկամտի, այսինքն՝ հաշվետու տարում անկախ դրանց ստացման աղբյուրներից հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի, և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը: Օրենսդիրը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում սահմանել է, որ նշված օրենքի իմաստով եկամուտը հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումն է, որը հանգեցնում է հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տնտեսվարող սուբյեկտի հարկվող շահույթը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել օրենքով սահմանված հետևյալ երկու տարրերը. տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտը և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված թույլատրելի նվազեցումները, որտեղ համախառն եկամուտը տնտեսվարող սուբյեկտի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից, իսկ թույլատրելի նվազեցումներն օրենքով սահմանված ծախսերն են, կորուստները և այլ նվազեցումները: Նշված երկու տարրերի՝ համախառն եկամտի և թույլատրելի նվազեցումների դրական տարբերությունը տնտեսվարող սուբյեկտի մոտ առաջացնում է հարկվող շահույթ, որից հնարավոր է հաշվարկել օրենքով սահմանված վճարման ենթակա շահութահարկի գումարը:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից ծախսերի մասով համախառն եկամուտը թույլատրվում է նվազեցնել, եթե կատարված ծախսերը կապված են համախառն եկամտի ստացման հետ, ընդ որում՝ ծախսերը պետք է լինեն անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված: Այսինքն՝ տնտեսվարող սուբյեկտի կատարած բոլոր ծախսերը չեն, որոնք կարող են նվազեցվել համախառն եկամտից, այլ դրանք անմիջականորեն և բացառապես պետք է կապված լինեն համախառն եկամտի ստացման հետ, իսկ այն ծախսերը, որոնք տնտեսվարողի կողմից կարող են կատարվել ոչ եկամտի ստացման նպատակով, չեն կարող նվազեցվել: Օրենսդրական նման մոտեցումը նպատակ է հետապնդում պաշտպանելու թե՛ պետության, թե՛ տնտեսվարող սուբյեկտների շահերը, քանի որ խթանում է տնտեսվարող սուբյեկտի կողմից իր միջոցներն անմիջականորեն եկամուտ ստանալուն ուղղելուն, ինչն իր հերթին նպաստում է պետության ընդհանուր տնտեսության զարգացմանը: Շարադրվածը չի նշանակում, սակայն, որ տնտեսվարող սուբյեկտը զրկված է այնպիսի ծախսեր անելու հնարավորությունից, որոնք անմիջականորեն և բացառապես ուղղված չեն տնտեսվարողի համախառն եկամուտը ձևավորելուն. այդպիսի ծախսերի կատարումն ընդամենը զրկում է տնտեսվարողին այդ ծախսերի մասով իր համախառն եկամտից նվազեցումներ կատարելու իրավունքից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե տնտեսվարողի մոտ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության թեմատիկ ստուգման արդյունքում պարզվում է, որ տվյալ տնտեսվարող սուբյեկտն իր հարկային հաշվետվություններում կատարել է համախառն եկամտից ապօրինի նվազեցումներ, այսինքն՝ կատարել է այնպիսի նվազեցումներ, որոնք կապված չեն եկամտի ստացման հետ կամ հիմնավորված չեն փաստաթղթերով, ապա այդ հանգամանքը պետք է իր մանրամասն նկարագրությունը ստանա ստուգման ակտում: Այսինքն՝ տվյալ պարագայում ստուգման ակտը պետք է կազմվի այնպես, որ հնարավոր լինի պարզել, թե որքան է կազմում տնտեսվարողի իրական հարկվող շահույթը, ինչպես նաև օրինական նվազեցումների՝ համախառն եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի գումարը՝ հղում կատարելով այն փաստաթղթերին, որոնցով հիմնավորվում է օրինական նվազեցումների այդ չափը: Այնուհետև ստուգման ակտում թվաքանակային հաշվարկի տեսքով պետք է արտացոլվի վարչական մարմնի կողմից հայտնաբերված ապօրինի նվազեցումների գումարը, ինչպես նաև այդ նվազեցումների կատարման արդյունքում պակաս վճարված շահութահարկի և դրա նկատմամբ հաշվարկվող տույժերի ու տուգանքների գումարը: Այլ կերպ ասած՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերի ուժով ստուգման ակտում պետք է շարադրվեն տնտեսվարող սուբյեկտի կողմից իր հաշվետվություններում համախառն եկամտից «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի խախտմամբ կատարված նվազեցումները և այդ նվազեցումների ապօրինի լինելու վերաբերյալ վարչական մարմնի համապատասխան հիմնավորումները: Ավելին, ստուգման ակտում նշված փաստական հանգամանքների շարադրանքը՝ որպես ստուգմամբ բացահայտված խախտումների նկարագրություն, պետք է ամրապնդվի վարչական մարմնի կողմից ստուգմամբ ձեռք բերված համապատասխան ապացույցներով, որոնք կարող են հաստատել քննարկվող հարկային իրավախախտման առկայությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստուգման ակտում շահութահարկով հարկման ենթակա հարկվող օբեկտը՝ հարկվող շահույթը, ցույց չտալու կամ այն պակաս ցույց տալու դեպքն արձանագրելիս հարկային մարմինը պարտավոր է որպես վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցներ դատարանին ներկայացնել այն ապացույցները (փաստաթղթերը), որոնք հնարավորություն կստեղծեն դատարանի համար հաստատելու կամ հերքելու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ամկայությունը կամ բացակայությունը, այսինքն՝ գնահատելու վիճարկվող ստուգման ակտի իրավաչափությունը: Այսպես, դատարանի կողմից պետք է գնահատվեն այն փաստաթղթերը, որոնցով հիմնավորվում է տնտեսվարողի համախառն եկամտի ստացման հետ կապված ամբողջ ծախսերը, որոնք իրականում կատարվել են, իսկ կատարված, սակայն փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը ստուգման ակտում պետք է արտացոլվեն թվաբանական հաշվարկի միջոցով:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի վկայակոչված հոդվածներով սահմանված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ավելացված արժեքի հարկի՝ որպես անուղղակի հարկի հարկվող օբյեկտն ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից իրականացվող օրենքով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքն է (շրջանառությունը): «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով օրենսդիրը կարգավորել է ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման հետ կապված հարաբերությունները՝ սահմանելով այդ գումարից հաշվանցման ենթակա գումարները, հաշվանցման կարգը և դեպքերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե տնտեսվարողի մոտ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության թեմատիկ ստուգման արդյունքում պարզվում է, որ տվյալ տնտեսվարող սուբյեկտը խախտել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, այսինքն՝ իր կողմից վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարից ապօրինի կերպով կատարել է հաշվանցումներ, ապա այդ հանգամանքը պետք է հստակ և հիմնավորված նկարագրվի ստուգման ակտում: Ստուգման ակտը տվյալ դեպքում պետք է բովանդակի «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի այն կոնկրետ դրույթը, որը, ըստ վարչական մարմնի, խախտվել է տնտեսվարող սուբյեկտի կողմից: Ավելին, քննարկվող պարագայում ստուգման ակտը պետք է կազմվի այնպես, որ հնարավոր լինի պարզել, թե որքան է կազմում հաշվետու ժամանակաշրջանում տնտեսվարողի կողմից վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի իրական գումարը, հաշվետու ժամանակաշրջանում ավելացված արժեքի հարկից օրինական հաշվանցման ենթակա գումարի չափը, տնտեսվարողի կողմից ապօրինի կերպով կատարված հաշվանցման գումարի չափը, ինչպես նաև դրա նկատմամբ հաշվարկվող տույժերի ու տուգանքների գումարը: Այլ կերպ ասած՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերի ուժով ստուգման ակտում պետք է շարադրվեն տնտեսվարող սուբյեկտի կողմից իր հաշվետվություններում ավելացված արժեքի հարկի գծով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի խախտմամբ կատարված հաշվանցը և այդ հաշվանցի ապօրինի լինելու վերաբերյալ վարչական մարմնի համապատասխան հիմնավորումները: Բացի այդ, նշված իրավախախտման համար տնտեսվարող սուբյեկտին պատասխանատվության ենթարկող ստուգման ակտի վիճարկման դեպքում վարչական մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել ստուգման ընթացքում ձեռք բերված և վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորող համապատասխան ապացույցները:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստուգման ակտի դատական կարգով բողոքարկման արդյունքում հարուցված գործի քննության ընթացքում վարչական դատարանը պետք է նախևառաջ պարզի այն հանգամանքը, թե արդյոք ստուգման ակտը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ պահանջներին, և ստուգման ակտում շարադրված իրավախախտման նկա-



րագրությունը հիմնավորվում է արդյոք ստուգմամբ ձեռք բերված ապացույցներով, քանի որ ստուգման ակտը կարող է համարվել իրավաչափ վարչական վարույթի (ստուգման) ընթացքում ձեռք բերված և դատարանի գնահատմանը ներկայացված ապացույցներով հիմնավորված լինելու դեպքում միայն:

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է մասնակիորեն՝ 1-ին կետի՝ 4.220.205 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրման մասով, և 5-րդ կետի մասով, վերացնել Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ստուգման ակտը: Նշված վարչական ակտի 1-ին կետով Ընկերության նկատմամբ շահութահարկի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ 4.396.729 ՀՀ դրամի չափով, իսկ 5-րդ կետով ավելացված արժեքի հարկի գծով՝ 2.294.389 ՀՀ դրամի չափով:

Դատարանը մասնակիորեն բավարարել է Ընկերության հայցը և անվավեր է ճանաչել Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ակտի 1-ին կետը՝ 4.044.381 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու մասով, ինչպես նաև 5-րդ կետը: Դատարանը գտել է, որ Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ակտի 1-ին կետը հիմնավոր է միայն այն մասով, որը վերաբերում է վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների չափով 2012 թվականին համախառն եկամտից կատարված ապօրինի նվազեցումների հետևանքով պակաս վճարված շահութահարկի գծով առաջացող լրացուցիչ հարկային պարտավորությանը: Ըստ Դատարանի պատճառաբանությունների՝ մնացած մասով Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ակտի 1-ին կետը ենթակա է անվավեր ճանաչման, քանի որ ստուգման ակտում նշված խախտման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը կրել է վարչական մարմինը, որը չի ապացուցել իրավախախտման կատարման փաստը: Ինչ վերաբերում է նույն վարչական ակտի՝ ավելացված արժեքի հարկի գծով Ընկերությանը լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու մասի իրավաչափությանը, ապա այս դեպքում Դատարանն արձանագրել է, որ ստուգման ակտում հիմնավոր նկարագրված չէ խախտման էությունը, այսինքն՝ պարզ չէ, թե ինչ հիմքով է այս կամ այն գումարն Ընկերության կողմից ավել հաշվանցելու մասին հետևություններ արվել: Դատարանը գտել է, որ այդ մասով վարչական ակտն իրավաչափ չէ, քանի որ վարչական մարմնի կողմից չի պարզվել Ընկերության ներկայացրած տվյալների և տեղեկությունների հավաստիությունը, և ավելացված արժեքի հարկի գծով իրավախախտման առկայության վերաբերյալ հետևությունը հիմնված է վարչական մարմնի ենթադրությունների վրա:

Վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ ըստ էության համաձայնելով Դատարանի վերոգրյալ դիրքորոշման հետ:

Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գտնում է, որ ստորադաս դատարանների եզրահանգումները հիմնավոր են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտը՝ Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ստուգման ակտի 1-ին կետը՝ համախառն եկամտից փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը նվազեցնելու համար լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրման մասով, և 5-րդ կետը կազմվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցացման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ:

Այսպես՝ նշված վարչական ակտի 1-ին կետով Ընկերության համախառն եկամտից ապօրինի (փաստաթղթերով չհիմնավորված) նվազեցումներ կատարելու համար վերջինիս նկատմամբ շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն

առաջադրելով՝ Տեսչությունը չի նշել, թե Ընկերության կողմից կատարված կոնկրետ որ ծախսերն են դիտվել որպես փաստաթղթերով չհիմնավորված: Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ստուգման ակտի 1-ին կետը չի բովանդակում այնպիսի տվյալներ, որոնց միջոցով հնարավոր կլինեք գնահատել վարչական ակտում նշված ապօրինի նվազեցումների գումարի իրավաչափությունը: այդ տվյալներն են Ընկերության իրական հարկվող շահույթի չափը, Ընկերության համախառն եկամուտի ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված (օրինական) ծախսերի գումարի չափը, որոնք կատարվել են ստուգման ժամանակահատվածն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջաններում: Բացի այդ, սույն գործով վիճարկվող ստուգման ակտը չի պարունակում որևէ նշում փաստաթղթերով չհիմնավորված ծախսերի կատարման առկայությունը հիմնավորող ապացույցների վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ստուգման ակտի 5-րդ կետում Ընկերության նկատմամբ առաջադրելով լրացուցիչ հարկային պարտավորություն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի խախտման համար՝ վարչական մարմինը չի հիմնավորել Ընկերության կողմից թույլ տրված իրավախախտման՝ ավելացված արժեքի հարկի գումարից ապօրինի հաշվանցումներ կատարելու առկայությունը: Ստուգման ակտը, մասնավորապես, չի բովանդակում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 23-րդ հոդվածի այն կոնկրետ դրույթը, որը, ըստ վարչական մարմնի, խախտվել է Ընկերության կողմից: Բացի այդ, վիճարկվող վարչական ակտի բովանդակությունից պարզ չէ, թե որքան է կազմում հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության կողմից վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի իրական գումարը, հաշվետու ժամանակաշրջանում ավելացված արժեքի հարկից օրինական հաշվանցման ենթակա գումարի չափը, ստուգման ակտում շարադրված չեն Ընկերության կողմից իր հաշվետվություններում ավելացված արժեքի հարկի գծով կատարված հաշվանցի ապօրինի լինելու վերաբերյալ վարչական մարմնի համապատասխան հիմնավորումները:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ստուգման ակտը՝ 1-ին կետի՝ համախառն եկամտից փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը նվազեցնելու համար լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրման մասով, և 5-րդ կետի մասով, ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված 2-րդ մասի 9-րդ կետի խախտմամբ, որի արդյունքում դատարանը գրկված է այդ վարչական ակտի իրավաչափությունը գնահատելու հնարավորությունից:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ստուգման ակտի 1-ին և 5-րդ կետերում շարադրված իրավախախտումները չեն հիմնավորվում նաև ստուգմամբ ձեռք բերված և սույն գործով Դատարանի գնահատմանը ներկայացված ապացույցների միջոցով: Այսպես, վարչական մարմինն Ընկերության կողմից փաստաթղթերով չհիմնավորված ծախսերի կատարման փաստը հիմնավորում է Ընկերության գլխավոր տնօրենի կողմից հաստատված՝ ձուլման արտադրամասում արտադրվող արտադրանքի 1 տոննայի համար ծախսվող հումքի տեսակների և քանակի վերաբերյալ տեղեկանքով: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված տեղեկանքում պարունակվող տվյալների միջոցով հնարավոր չէ հաստատել այն փաստը, որ Ընկերությունն առանց ձեռքբերման փաստաթղթերի 2011 և 2012 թվականների ընթացքում կատարել է իր արտադրությունում օգտագործվող որոշակի քանակությամբ հումք (այլումին, պողպատ, թուջ) ձեռք բերելու համար անհրաժեշտ ծախսեր և դրանք ներառել է հարկային հաշվետվություններում: Վերը նշված փաստաթուղթը պարունակում է Ընկերությունում արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող նյութերի տեսակների և քանակների վերաբերյալ տեղեկատվություն, ինչից հնարավոր չէ հստակ որոշել, թե Ընկերությունն ինչ քանակությամբ և ինչ տեսակի նյութեր է օգտագործել արտադրանքի արտադրության մեջ 2011 և 2012 թվականներին:

Ինչ վերաբերում է ավելացված արժեքի հարկի գծով Ընկերությանը լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելուն, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս

մասով ստուգման ակտն ընդհանրապես չի պարունակում որևէ տեղեկություն խախտման նկարագրության մասին, իսկ վարչական մարմնի կողմից չեն ներկայացվել Ընկերության կողմից ավելացված արժեքի հարկի գումարից ապօրինի հաշվանցում կատարելու փաստը հիմնավորող բավարար ապացույցներ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ակտը՝ 1-ին կետի՝ համախառն եկամտից փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը նվազեցնելու համար լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրման մասով, և 5-րդ կետի մասով, ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված 2-րդ մասի 9-րդ կետի, ինչպես նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի խախտումներով և ենթակա է անվավեր ճանաչման: Հետևաբար ստորդադաս դատարաններն իրենց դատական ակտերով իրավացիորեն են եզրահանգել, որ Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ակտը՝ այդ ակտի 1-ին կետով 4.044.381 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու և 5-րդ կետի մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ոչ իրավաչափ վարչական ակտ է:

*Նշված պարձառարանություններով հիմնավորվում են վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանը, մասնակիորեն անվավեր ճանաչելով Տեսչության 29.08.2013 թվականի թիվ 1008854 ակտը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարձառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Գյումրու տարածքային հարկային տեսչության կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռարեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 09.12.2014 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/6872/05/14  
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան  
Դատավորներ՝  
Հ. Բեդկյան  
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԳ/6872/05/14**  
**2017թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության և անհատ  
ձեռնարկատեր Մարտին Զարոյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վարչական վերաքննիչ դա-  
տարանի 22.12.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի անհատ ձեռնարկատեր Մարտին  
Զարոյանի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչու-  
թյան (այսուհետ՝ Տեսչություն)՝ Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտը մաս-  
նակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը.**

Դիմելով դատարան՝ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանը պահանջել է մաս-  
նակիորեն՝ 1-ին և 3-րդ կետերի մատով, անվավեր ճանաչել Տեսչության 20.11.2014 թվա-  
կանի թիվ 6100287 ակտը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 03.07.2015  
թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Տեսչության 20.11.2014 թվականի  
թիվ 6100287 ակտի 1-ին կետը՝ միայն թվով 4 չգրանցված աշխատողի (2.400.000 ՀՀ դրա-  
մի) մատով, ինչպես նաև 3-րդ կետը ճանաչվել են անվավեր, իսկ մնացած մատով հայցը  
մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 22.12.2015  
թվականի որոշմամբ Տեսչության և Մարտին Զարոյանի ներկայացուցչի վերաքննիչ բո-  
ղոքները մերժվել են և Դատարանի 03.07.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարու-  
թյունը և անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

**2. Անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Հայաստանի Հանրապետությունում սրուգունների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասը, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի «դ» կետը, ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշումը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածները, 29-րդ հոդվածի 1-ին մասը և 2-րդ մասի 1-ին կետը:*

*Բողոքը երաժանձընչված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վարձու աշխատողներին վերաբերող խախտումն արձանագրելիս ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից չեն պահպանվել ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշման պահանջները: Մասնավորապես՝ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանից չեն պահանջել համապատասխան աշխատանքային պայմանագրեր, այլ փաստաթղթեր, չեն ճշտել փաստացի աշխատանք կատարող կամ կատարած վարձու աշխատողների տվյալները, աշխատանքի բնույթը, նրանցից չեն վերցրել բացատրություններ: Տեսչության աշխատակիցները հիմնվել են բացառապես անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի հայտարարության վրա, մինչդեռ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն կարող է առաջադրվել միայն այն դեպքում, երբ խախտման փաստը լիազոր մարմինն արձանագրել է ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված կարգով: Հետևաբար Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 1-ին կետն ընդունվել է օրենքի խախտմամբ և ենթակա է անվավեր ճանաչման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի վերաքննիչ բողոքը մերժելու մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 22.12.2015 թվականի որոշումը»:

**2.1. ՀՀ ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

**ա)** *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածը, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասը:*

*Բողոքը երաժանձընչված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 1-ին կետով արձանագրված թվով 4 մատուցողներն անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի թույլտվությամբ աշխատել են նրա կողմից վարձակալված տարածքում և նրան պատկանող գույքով: Հետևաբար, այդ 4 չգրանցված աշխատողների մասով ևս անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի նկատմամբ ենթակա է առաջադրման եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն:

**բ)** *Վերաքննիչ դատարանը խախտել է «Արդյունագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը:*

*Բողոքը երաժանձընչված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանն իր հայտարարության մեջ հստակ նշել է, որ Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 31 հասցեում գործող հանրային սննդի կետը գործում է 150քմ մակերեսով տարածքում, իսկ Երևան քաղաքի Անդրանիկի թիվ 52 հասցեում՝ 100քմ մակերեսով տարածքում: Անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի կողմից վարձակալված տարածքների մակերեսների վերաբերյալ նշված տեղեկությունը հաստատվել է ստուգման ընթացքում, ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք դրա վերաբերյալ կասկածներ չեն ունեցել, և չափագրումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 22.12.2015 թվականի որոշումը և փոփոխել այն՝ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի հայցը՝ վիճարկվող վարչական ակտի 1-ին կետը՝ միայն թվով 4 չգրանցված աշխատողի (2.400.000 ՀՀ դրամի), և 3-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջների մատվ, մերժել:

**3. Վճարել բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

*Վճարել բողոքների քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.*

1) Տեսչության պետի 07.11.2014 թվականի թիվ 6100287 հանձնարարագրի համաձայն՝ Տեսչության ընթացիկ հսկողության 2-րդ բաժնի հարկային տեսուչներին հանձնարարվել է անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի մոտ ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի առանձին պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով իրականացնել, ի թիվս այլնի, աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում և օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում (**հատոր 1-ին, գ.թ. 26**).

2) Եկամտային հարկի և սոցիալական վճարի 2014 թվականի սեպտեմբերի ամսական ամփոփ հաշվարկի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանն ունեցել է ընդամենը 3 աշխատող (**հատոր 1-ին, գ.թ. 29**).

3) Տեսչության պետին հասցեագրված 07.11.2014 թվականի հայտարարության համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանը հայտնել է, որ ինքը՝ որպես անհատ ձեռնարկատեր, «Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 31 և Անդրանիկի թիվ 52 հասցեներում գբաղվում է հանրային սննդի կազմակերպմամբ: Անդրանիկի թիվ 52 հասցեում իր մուր աշխատում են թիվով 3 աշխատակից, իսկ Մաշտոցի թիվ 31 հասցեում՝ թիվով 8 աշխատակից, ունի թիվով 1 գլխավոր հաշվապահ և թիվով 2 երաժիշտ, որոնց չի վարձապարում (նրանք աշխատում են օրական թեյավճարով): Բացի վերը նշված թիվով 14 աշխատակցից, 07.11.2014 թվականին միջոցառում ունենալու կապակցությամբ Մաշտոցի թիվ 31 հասցե այդ միջոցառման «լերերի» կողմից հրավիրվել էին լրացուցիչ թիվով 4 մատուցող: Մաշտոցի թիվ 31 հասցեում գործող հանրային սննդի կետը գործում է 150քմ տարածքում, իսկ Անդրանիկի թիվ 52 հասցեում էլ գործունեություն է իրականացվում 100քմ տարածքում: Տարածքները վերցրել է վարձով՝ Անդրանիկի թիվ 52 հասցեի համար վճարելով 30.000 ՀՀ դրամ, իսկ Մաշտոցի 31 հասցեի համար՝ 50.000 ՀՀ դրամ» (**հատոր 1-ին, գ.թ. 27-28**).

4) Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի նախագծի վերաբերյալ 18.11.2014 թվականի առարկության համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանը հայտնել է Տեսչության պետին, որ Երևան քաղաքի Անդրանիկի թիվ 52 հասցեում իր կողմից օգտագործվող մակերեսը կազմում է 20քմ, իսկ Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 31 հասցեում՝ 58քմ (**հատոր 1-ին, գ.թ. 76**).

5) Անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի կողմից հարկային մարմնին ներկայացված՝ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություններում առկա են հետևյալ տեղեկությունները.

ա) Երևան քաղաքի Անդրանիկի թիվ 52 հասցեում 2014 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների համար ելակետային տվյալի մեծությունը կազմել է 20քմ,

բ) Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 31 հասցեում 2014 թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների համար եկանոսային տվյալի մեծությունը կազմել է համապատասխանաբար 68,5քմ և 58քմ (**հատոր 1-ին, գ.թ. 33-37**)։

6) Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի մոտ կատարված ստուգման արդյունքում պարզվել է հետևյալը։

ա) Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 1-ին կետի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին կետի և 85-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները։ Այսպես, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի գրավոր հայտարարությունը և համեմատելով այն եկամտային հարկի հաշվարկի հետ, պարզվել է, որ վերջինիս մոտ թվով 15 վարձու աշխատող ձևակերպված չէին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։ Նշված իրավախախտման համար «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի կողմից ենթակա է վճարման 9.000.000 (15 x 600.000) ՀՀ դրամ եկամտային հարկ։

բ) Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 3-րդ կետով արձանագրվել է, որ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի գրավոր հայտարարության համաձայն՝ վերջինս Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 31 և Անդրանիկի թիվ 52 հասցեներում իրականացնում է հանրային սննդի գործունեություն՝ համապատասխանաբար 150քմ և 100քմ մակերեսներով սպասարկման սրահներում։ Սակայն Մաշտոցի թիվ 31 հասցեի համար անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի՝ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին 2014 թվականի հոկտեմբեր ամսվա հայտարարության մեջ ներկայացվել է 68,5քմ մակերես, իսկ նոյեմբեր ամսվա հայտարարության մեջ՝ 58քմ մակերես, այսինքն՝ Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 31 հասցեի մակերեսը պակաս է ներկայացվել համապատասխանաբար 81,5քմ-ով և 92քմ-ով։ Երևան քաղաքի Անդրանիկի թիվ 52 հասցեի համար անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի՝ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին 2014 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների հայտարարության մեջ ներկայացվել է 20քմ մակերես, այսինքն՝ Երևան քաղաքի Անդրանիկի թիվ 52 հասցեի մակերեսը 3 ամսվա համար պակաս է ներկայացվել 80քմ-ով։ Նշված իրավախախտման համար «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների ուժով անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի նկատմամբ առաջադրվել է լրացուցիչ պարտավորություն՝ 1.192.720 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 6-8**)։

#### **4. Վճարել դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումը.**

Վճարել դատարանն արձանագրում է, որ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի ներկայացուցչի վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորության առաջացման իրավական նախադրյալների և առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար։

Մինևույն ժամանակ Վճարել դատարանն արձանագրում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանների կողմից «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի խախտման հետևանքով առկա է



առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

1) *աշխատողի աշխատանքի ընդունման օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտը կարող է արդյո՞ք իրավաչափ համարվել այն պայմաններում, երբ լիազոր մարմնի կողմից նշված փաստն արձանագրելիս ՀՀ կառավարության սահմանած կարգը չի պահպանվել, սակայն տնտեսավարող սուբյեկտը վարչական վարույթի ընթացքում ընդունել է չգրանցված աշխատողներ ունենալու հանգամանքը,*

2) *հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար արտոնագրային վճարի ելակերպային տվյալները կարող են արդյո՞ք արձանագրվել տնտեսավարող սուբյեկտի կողմից օրենքով նախատեսված արտոգման շրջանակներում տրված բացարժեղության մեջ առկա հստակ և աներկբա տեղեկությունների միջոցով:*

**4.1. Քննելով Մարտին Զարոյանի վճռաբեկ բողոքը՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անօրինական է համարվում այն աշխատանքը, որն իրականացվում է առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստը լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում գործատուն (...) տվյալ (արձանագրման) ամսում յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկում և վճարում է եկամտային հարկ՝

ա. 60.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների քանակը մեկից երեք է,

բ. 150.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների քանակը չորսից վեց է,

գ. 300.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների քանակը յոթից ինն է,

դ. 600.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների քանակը գերազանցում է ինը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման

մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, (...) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) ակտում նշվում են՝ (...) (9) ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել, (10) պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը (...):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 102-րդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունների ծագման համար օրենսդիրը նախատեսել է հետևյալ հիմքերը. (1) գրավոր աշխատանքային պայմանագիր կամ (2) աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ: Ընդ որում, աշխատանքային հարաբերությունների ծագման վերոգրյալ հիմքերի միաժամանակյա բացակայության դեպքում իրականացվող աշխատանքը համարվում է անօրինական:

Փաստորեն, օրենսդրի տեսանկյունից՝ առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի իրականացվող աշխատանքը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում որակվում է որպես անօրինական աշխատանք, որը գործատուի համար առաջացնում է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված անբարենպաստ հետևանքները: Այսպես, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված իրավական նորմի բովանդակային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստի առկայության դեպքում գործատուն պարտավոր է յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկել և վճարել եկամտային հարկ, որի չափը պայմանավորված է չձևակերպված վարձու աշխատողների քանակով: Ընդ որում, գործատուի համար նշված անբարենպաստ հետևանքը կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե իրավասու մարմինը տվյալ գործատուի մոտ աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրել է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասը, 25.07.2013 թվականի «Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրելու կարգը և արձանագրության ձևը սահմանելու մասին» թիվ 1259-Ն որոշման 1-ին կետով սահմանել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու կարգը (այսուհետ՝ Կարգ)՝ համաձայն թիվ 1 հավելվածի, և աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (...) փաստի վերաբերյալ արձանագրության ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (...) փաստն արձանագրվում է հարկ վճարողի (տնտեսավարող սուբյեկտի) մոտ հարկային մարմնի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ծշտության, պարտադիր սոցիալական և պահովության վճարների հաշվարկման ու վճարման ծշտությունը պարզելուն ուղղված ստուգումների, օպերատիվ հետախուզական միջոցառումների, ինչպես նաև հարկային մարմնի կամ լիազորված այլ մարմնի կողմից առանց անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված ստուգումների

(նույն կարգի իմաստով՝ ստուգում) շրջանակներում: Նույն կարգի իմաստով՝ աշխատողի աշխատանքի ընդունումը համարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպված, եթե առկա չէ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր:

ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշման վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստը հարկային մարմնի կամ այլ իրավասու մարմնի կողմից կարող է արձանագրվել է տվյալ գործատուի՝ որպես հարկ վճարողի (տնտեսավարող սուբյեկտի) մոտ իրականացվող օրենքով նախատեսված հետևյալ ընթացակարգերի միջոցով.

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում,

2) պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգում,

3) առանց անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված ստուգում,

4) օպերատիվ հետախուզական միջոցառում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենքով նախատեսված նշված ընթացակարգերի շրջանակներում հարկային մարմնի կամ այլ իրավասու մարմնի խնդիրը, *inter alia*, տվյալ գործատուի՝ որպես հարկ վճարողի (տնտեսավարող սուբյեկտի) մոտ աշխատանք կատարող այնպիսի անձանց բացահայտումն է, որոնց վերաբերյալ առկա չէ աշխատանքի ընդունման մասին գրավոր պայմանագիր կամ անհատական իրավական ակտ: Նշված փաստի բացահայտումը հիմք է հանդիսանում գործատուի նկատմամբ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված անբարենպաստ հետևանքների կիրառման համար: Սակայն ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշմամբ ոչ միայն սահմանված են աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստի արձանագրմանն ուղղված միջոցառումները և այդ միջոցառումների շրջանակներում հարկային մարմնի կամ այլ իրավասու մարմնի կողմից բացահայտման ենթակա փաստերի էությունը, այլ նաև մանրամասն շարադրված են այն ընթացակարգային կանոնները, որոնք պետք է հաջորդաբար կատարվեն իրավասու մարմնի կողմից իր առջև դրված խնդիրը պատշաճ կերպով լուծելու համար:

Այսպես, Կարգի 4-րդ կետի համաձայն՝ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (...) փաստն արձանագրելու համար ստուգում իրականացնող անձինք իրականացնում են հետևյալ գործողությունները՝

1) գործատուից պահանջում են փաստացի աշխատանք կատարող (...) անձանց աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը կամ գրավոր պայմանագրերը, իսկ անհրաժեշտության և առկայության դեպքում՝ նաև գործատուի կողմից հաստատված հաստիքացուցակը.

2) կազմում են ստուգման պահին փաստացի աշխատանք կատարող (...) այն անձանց ցանկը, որոնց մասով գործատուն չի ներկայացնում աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր (...).

3) փաստաթղթերի ուսումնասիրությամբ, գործատուից գրավոր բացատրություններ վերցնելով՝ պարզում են նույն կետի 2-րդ ենթակետով կազմված ցանկում ներառված անձանց կողմից իրականացվող կամ ստուգվող ժամանակաշրջանում իրականացված աշխատանքային պարտականությունների բնույթը.

4) նույն կետի 2-րդ ենթակետում նշված ցանկում ներառված անձանց բացատրում են հայտարարություն տալուց հրաժարվելու նրանց իրավունքների մասին և, նրանց համաձայնությամբ, վերցնում են հայտարարություն (...), որտեղ նշվում են՝ հայտարարություն տվող անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հայտարարություն տվող անձի կողմից իրականացվող աշխատանքային գործա-

ռույթների հակիրճ նկարագրությունը, տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը.

5) նույն կետի 4-րդ ենթակետով ներկայացված հայտարարությունն ստուգման արդյունքում ստուգում իրականացնող անձանց կողմից կազմվող՝ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (...) փաստի վերաբերյալ կազմվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի թիվ 1259-Ն որոշման թիվ 2 հավելվածով սահմանված արձանագրության (...) անբաժանելի մասն է:

Կարգի 5-րդ մասի համաձայն՝ արձանագրության մեջ պարտադիր նշվում են նույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցանկում ընդգրկված անձի (անձանց) անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, նրա (նրանց) կողմից կատարվող աշխատանքային պարտականությունների բնույթը (...):

Կարգի 6-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրականացվող ստուգումների արդյունքում ստուգում իրականացնող անձանց կողմից կազմվող ստուգման ակտի անբաժանելի մասն է:

Փաստորեն, այս կամ այն տնտեսավարող սուբյեկտի մոտ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրելիս իրավասու մարմնի պաշտոնատար անձինք պետք է հաջորդաբար իրականացնեն Կարգի 4-րդ կետում նկարագրված քայլերը: Այնուհետև իրավասու մարմնի պաշտոնատար անձանց կողմից պետք է կազմվի ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշման թիվ 2 հավելվածով սահմանված ձևի արձանագրություն, որում պետք է նշվեն, *inter alia*, փաստացի աշխատանք կատարած անձանց տվյալները (անունը, ազգանունը, անձնագրային տվյալները), նրանց կողմից կատարվող աշխատանքային պարտականությունների բնույթը (պաշտոնը, մասնագիտությունը), իսկ փաստացի աշխատանք կատարած անձանցից հայտարարություններ վերցված լինելու դեպքում այդ հայտարարությունները պետք է կցվեն նշված արձանագրությանը: Եթե աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրվել է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրականացվող ստուգումների արդյունքում, ապա նշված արձանագրությունը պետք է կցվի ստուգման ակտին՝ որպես դրա անբաժանելի մաս:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ աշխատողի աշխատանքի ընդունումը գրավոր չձևակերպելու փաստը ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված Կարգին համապատասխան արձանագրելու օրենսդրական պահանջը հետապնդում է գործի փաստերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ու բոլոր հանգամանքների բացահայտումն ապահովելու նպատակ, որը հետագայում, մասնավորապես՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտի վիճարկման դեպքում հնարավորություն կտա պարզելու այդ վարչական ակտի իրավաչափությունը: Հետևաբար աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտի վիճարկման դեպքում վարչական դատարանը պետք է նախևառաջ պարզի այն հարցը, թե տվյալ վարչական ակտը կայացրած իրավասու մարմինը պահպանել է արդյոք ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված Կարգի պահանջները, թե՛ ոչ:

Մինչև նույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածների վկայակոչված իրավական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտերը պետք է հիմնավորված լինեն. օրենսդիրը սահմանել է, որ վարչական ակտի հիմնավորումներում պետք է անպայման նշվեն համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական և իրավա-

կան հիմքերը, այսինքն՝ վարչական մարմինը վարչական ակտն ընդունելիս պարտավոր է վարչական ակտում նշել այն բոլոր փաստական հանգամանքները և իրավական հիմքերը, որոնք հիմք են հանդիսացել տվյալ վարչական ակտն ընդունելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներում անդրադարձել է վարչական ակտի հիմնավորվածության հարցին՝ արձանագրելով, որ վարչական ակտը հիմնավորելու՝ վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարչական վարույթի մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը (*յրեն, Գիթա Հեղարհմարանցեհն ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ ՎԴ/6781/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրի կողմից վարչական ակտի հիմնավորում պարունակելու պահանջն ինքնանպատակ չէ. այն հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց, ովքեր համաձայն չեն ընդունված վարչական ակտի հետ, վարչական բողոք կամ դատարան հայց ներկայացնելով, գործնականում իրացնել իրենց արդյունավետ իրավական պաշտպանության և դատարան դիմելու հիմնարար իրավունքները: Միաժամանակ վարչական մարմնի կողմից ընդունված հիմնավորված վարչական ակտը գործնականում իրական հնարավորություն է տալիս վարչական բողոքը քննարկող վարչական մարմնին կամ դատարանին պարզելու այն փաստական և իրավական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում (*յրեն, «Ինելիորանկ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերով ստուգման ակտի բովանդակությանը ներկայացվող պահանջների իրավական վերլուծությանը՝ արտահայտելով այն իրավական դիրքորոշումը, որ այդ իրավադրույթների ուժով ստուգման ակտը պետք է ամբողջական և հստակ տեղեկություններ պարունակի ստուգմամբ բացահայտված խախտումների նկարագրության, խախտված իրավական նորմերի և պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերի վերաբերյալ: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ ստուգման ակտի բովանդակությանն ուղղված նշված օրենսդրական պահանջների պահպանման դեպքում միայն հնարավոր կլինի պարզել տվյալ ստուգման ակտի իրավաչափության հարցը (*յրեն, «Արթիկի «Սյուելլումաշ»» ԲԲԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի Գյումրու օրարածքային հարկային տեսչության թիվ ՎԴ5/0519/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով վարչական ակտերի հիմնավորվածության պահանջի վերաբերյալ վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտը (մասնավորապես՝ ստուգման ակտը) պետք է պարունակի հիմնավորում, inter alia, աշխատողի աշխատանքի ընդունումը գրավոր չձևակերպելու փաստը ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված Կարգին համապատասխան արձանագրված լինելու վերաբերյալ, քանի որ նշվածն այն էական փաստական և իրավաբանական հանգամանքներից մեկն է, որը հիմք է հանդիսանում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի մոտ կատարված ստուգման արդյունքում Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 1-ին կետով արձանագրվել է թվով 15

վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը գրավոր ձևակերպված չլինելու փաստ: Նշված իրավախախտման համար «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի նկատմամբ եկամտային հարկի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ 9.000.000 (15 x 600.000) ՀՀ դրամի չափով:

Ըստ ստուգման ակտի՝ նշված փաստն արձանագրելու համար հիմք է ընդունվել անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի գրավոր հայտարարության և եկամտային հարկի հաշվարկի համեմատությունը: Այսպես, անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի գրավոր հայտարարությամբ վերջինս, ըստ էության, ընդունել է, որ իր կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացման երկու վայրերում՝ Երևան քաղաքի Անդրանիկի թիվ 52 և Մաշտոցի թիվ 31 հասցեներում, աշխատում են թվով 14 անձինք, որոնցից բացի 07.11.2014 թվականին Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 31 հասցեում միջոցառում ունենալու կապակցությամբ ևս 4 անձինք ոչ իր հրավերով ժամանակավոր կերպով աշխատել են որպես մատուցողներ: Փաստորեն, Տեսչությունը հիմք է ընդունել անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի հայտարարության մեջ նշված տվյալն այն մասին, որ վերջինիս մոտ աշխատանք կատարող անձնաց թիվը 18 (14+4) է: Նշված տվյալը համադրելով անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի կողմից ներկայացված եկամտային հարկի հաշվարկում առկա այն տեղեկության հետ, որ վերջինս ունի ընդամենը 3 աշխատող, Տեսչությունը գտել է, որ անհատ ձեռնարկատիրոջ մոտ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպված աշխատողների թիվը հավասար է 15-ի (18-3):

Դատարանը, մասնակիորեն բավարարելով անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի հայցը, Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 1-ին կետն անվավեր է ճանաչել միայն թվով 4 չգրանցված աշխատողի (2.400.000 ՀՀ դրամի) մասով: Դատարանը գտել է, որ թեև Տեսչությունն աշխատողների աշխատանքի ընդունումը գրավոր ձևակերպված չլինելու փաստի արձանագրումը չի կատարել ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով, սակայն անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի կողմից առանց ձևակերպման աշխատողների առկայությունն ընդունվելն արդեն բավարար է այդ փաստը հաստատված համարելու համար: Մինևույն ժամանակ Դատարանը նշել է, որ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի հայտարարությամբ նշված թվով 4 մատուցողները, որոնք հրավիրվել են այլ անձի կողմից, անհատ ձեռնարկատիրոջ հետ աշխատանքային հարաբերություններ չեն ունեցել, հետևաբար նրանց կատարած աշխատանքը չի կարող համարվել անօրինական:

Վերաքննիչ դատարանը մերժել է Տեսչության և Մարտին Զարոյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքները և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ հիմնավոր համարելով Դատարանի վերոգրյալ պատճառաբանությունները:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի քննության ընթացքում վարչական մարմինը չի ապացուցել այն հանգամանքը, որ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի մոտ իրականացված աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգման շրջանակներում բացահայտված թվով 15 վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը գրավոր ձևակերպված չլինելու փաստն արձանագրվել է ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված կարգով: Այսպես, սույն գործով բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ Տեսչության պաշտոնատար անձինք ստուգման ընթացքում հաջորդաբար կատարել են Կարգի 4-րդ կետում նկարագրված գործողությունները, կազմել են ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշման թիվ 2 հավելվածով սահմանված ձևի արձանագրություն և այն կցել ստուգման ակտին: Տվյալ դեպքում անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի մոտ

աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրելիս Տեսչության պաշտոնատար անձինք թույլ են տվել, *inter alia*, հետևյալ ընթացակարգային խախտումները.

1) գործատուից չեն պահանջվել աշխատանք կատարած անձանց աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը կամ գրավոր պայմանագրերը կամ գործատուի կողմից հաստատված հաստիքացուցակը,

2) չի կազմվել ստուգման պահին աշխատանք կատարած այն անձանց ցանկը, որոնց մասով գործատուն չի ներկայացնում աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր,

3) չի պարզվել աշխատանք կատարած անձանց ցանկում ներառված անձանց կողմից իրականացված աշխատանքային պարտականությունների բնույթը,

4) քայլեր չեն ձեռնարկվել անհատ ձեռնարկատիրոջ մոտ աշխատանք կատարած անձանց համաձայնությամբ նրանցից համապատասխան հայտարարություն վերցնելու ուղղությամբ,

5) չի կազմվել ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշման թիվ 2 հավելվածով սահմանված ձևի արձանագրություն և այն չի կցվել ստուգման ակտին՝ որպես դրա անբաժանելի մաս:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի մոտ իրականացված աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգման շրջանակներում բացահայտված թվով 15 վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը գրավոր ձևակերպված չլինելու փաստը Տեսչության կողմից չի արձանագրվել ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով, ինչն իրավացիորեն հաստատված է համարել նաև Դատարանը: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի մոտ իրականացված աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգման շրջանակներում բացահայտված թվով 15 վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը գրավոր ձևակերպված չլինելու փաստը ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված կարգով արձանագրված չլինելու պայմաններում անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի կողմից տրված հայտարարությամբ որոշակի քանակությամբ չգրանցված աշխատողներ ունենալու փաստի ընդունումը տվյալ դեպքում չի կարող հիմք հանդիսանալ Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 1-ին կետն իրավաչափ դիտելու համար: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ ստույգ արտացոլված օրենսդրական այն պարտադիր պահանջը, որ աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստը պետք է անպայմանորեն արձանագրվի ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով: Հակառակ պարագայում, այսինքն՝ երբ քննարկվող փաստը չի արձանագրվում ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով, ապա տվյալ տնտեսավարող սուբյեկտին աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտն ամեն դեպքում ոչ իրավաչափ է՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ տնտեսավարող սուբյեկտն ընդունել է իր մոտ չգրանցված աշխատողներ ունենալու փաստը, թե՛ ոչ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 1-ին կետը նշում չի պարունակում այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի նկատմամբ եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու վերաբերյալ համապատասխան որոշումը, քանի որ ստուգման ակտը չի պարունակում հիմնավորում աշխատողի աշխատանքի ընդունումը գրավոր չձևակերպելու

փաստը ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված Կարգին համապատասխան արձանագրված լինելու վերաբերյալ:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 սկտի 1-ին կետն ընդունվել է օրենքի, մասնավորապես՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի և դրա հիման վրա ընդունված՝ ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշման, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածների և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերի, խախտմամբ և ենթակա էր ամբողջությամբ անվավեր ճանաչման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի վճռաբեկ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

#### **4.2.1. Քննելով ՀՀ Ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքն առաջին հիմքով՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքի առաջին հիմքով առաջ քաշված հիմնավորումները հակասում են անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորության առաջացման առանձնահատկությունների և իրավական նախադրյալների վերաբերյալ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է:

#### **4.2.2. Քննելով ՀՀ Ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.**

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է արտոնագրային վճարի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է վճարողների շրջանակը, արտոնագրային վճարի չափը և վճարման կարգը:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտոնագրային վճարը նույն օրենքով սահմանված չափերով և ժամկետներում նույն օրենքով նախատեսված գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ) համար ավելացված արժեքի հարկին (...) փոխարինող պետական բյուջե մուծվող պարտադիր և անհատույց վճար է:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն նույն օրենքի անբաժանելի մասը կազմող թիվ 7 հավելվածով սահմանված գործունեության տեսակներ իրականացնողները համարվում են արտոնագրային վճար վճարողներ (...): Նույն օրենքի թիվ 7 հավելվածով սահմանված գործունեության տեսակների համար արտոնագրային վճարի հարկման օբյեկտները, արտոնագրային վճարի հաշվարկման ու վճարման կարգը և ժամկետները սահմանվում են նույն օրենքի անբաժանելի մասը կազմող թիվ 8 հավելվածով:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի անբաժանելի մաս համարվող թիվ 7 հավելվածում նշված գործունեության տեսակների մասով գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի արտոնագրում նշված արտոնագրային վճարի ելակետային տվյալի մեծությունը հարկային մարմնի կողմից արձանագրված ելակետային տվյալի մեծությունից պակաս լինելու (...) դեպքերում արտոնագրային վճար վճարողից գանձվում են տվյալ ժամանակահատվածի համար պակաս վճարված արտոնագրային վճարը և տուգանք՝ պակաս վճարված արտոնագրային վճարի 50 տոկոսի չափով (...):



«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 7 հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակներից մեկը հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունն է:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 7 հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նույն հավելվածի իմաստով՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն է համարվում խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպումը:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 8 հավելվածի 13-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն (...) հանրային սննդի ոլորտում իրականացվող (...) գործունեության մասով արտոնագրային վճարի մեկամսյա չափը որոշվում է ելակետային տվյալին համապատասխանող մեկամսյա դրույքաչափով, իսկ նույն հավելվածով գործակից սահմանված լինելու դեպքում՝ մեկամսյա դրույքաչափի և գործակիցների արտադրյալով:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 8 հավելվածի 13-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող ելակետային տվյալներն են՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար՝ հանրային սննդի սպասարկման սրահի մակերեսը, որն իր մեջ ներառում է պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված տարածքը, իսկ բացօթյա վայրերում հանրային սննդի սպասարկման սրահ է համարվում հանրային սննդի գործունեության իրականացման ընդհանուր մակերեսը՝ արտահայտված քառակուսի մետրով:

Վերոգրյալ իրավադրույթների համակարգային վերլուծության արդյունքում Վճաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով կարգավորելով արտոնագրային վճարի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանել է, որ արտոնագրային վճարն օրենքով նախատեսված որոշակի գործունեություն իրականացնող անձանց կողմից պետական բյուջե մուծվող պարտադիր և անհատույց վճար է, որը ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի, համար փոխարինում է ավելացված արժեքի հարկին: Նշված օրենքում օրենսդիրը սպառիչ կերպով թվարկել է գործունեության այն տեսակները, որոնք իրականացնող սուբյեկտները համարվում են արտոնագրային վճար վճարողներ: Այսպես, ի թիվս այլևի, արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակ է հանդիսանում նաև հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը, որն օրենսդրի կողմից բնորոշվում է որպես խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպում:

Օրենսդիրը «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանել է նաև այս կամ այն գործունեության տեսակով զբաղվելու համար վճարման ենթակա արտոնագրային վճարի չափը որոշելու կարգը: Այսպես, օրինակ՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար արտոնագրային վճարի մեկամսյա չափը որոշվում է ելակետային տվյալին համապատասխանող մեկամսյա դրույքաչափով (կամ գործակից սահմանված լինելու դեպքում՝ մեկամսյա դրույքաչափի և գործակիցների արտադրյալով): Ընդ որում, հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար արտոնագրային վճարի մեկամսյա չափը որոշելու համար որպես ելակետային տվյալ հիմք է ընդունվում հանրային սննդի սպասարկման սրահի մակերեսը՝ արտահայտված քառակուսի մետրով, այսինքն՝

1) պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված տարածքը,

2) իսկ բացօթյա վայրերում՝ հանրային սննդի գործունեության իրականացման ընդհանուր տարածքը:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում օրենսդիրը նախատեսել է արտոնագրային վճար վճարողի պատասխանատվությունն այն դեպքի համար, երբ արտոնագրային վճարով հարկվող գործունեության իրականացման վայրի արտոնագրում նշված արտոնագրային վճարի ելակետային տվյալի մեծությունը

պակաս է, քան հարկային մարմնի կողմից արձանագրված ելակետային տվյալի մեծությունը. այդ իրավախախտման համար արտոնագրային վճար վճարողից գանձվում են տվյալ ժամանակահատվածի համար պակաս վճարված արտոնագրային վճարը և տուգանք՝ պակաս վճարված արտոնագրային վճարի 50 տոկոսի չափով:

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի մոտ կատարված ստուգման արդյունքում Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 3-րդ կետով արձանագրվել է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից հանրային սննդի ոլորտում գործունեության իրականացման երկու տարբեր վայրերի համար արտոնագրային վճարի ելակետային տվյալի մեծությունը պակաս է, քան հարկային մարմնի կողմից արձանագրված ելակետային տվյալի մեծությունը: Նշված իրավախախտման համար «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների ուժով անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի նկատմամբ առաջադրվել է լրացուցիչ պարտավորություն՝ 1.192.720 ՀՀ դրամի չափով:

Ըստ ստուգման ակտի՝ նշված փաստն արձանագրելու համար հիմք է ընդունվել անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի կողմից ստուգման ընթացքում տրված գրավոր հայտարարության և արտոնագրային վճար վճարող համարվելու մասին 2014 թվականի տարբեր ամիսների հայտարարությունների համեմատությունը: Այսպես, անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի կողմից ստուգման ընթացքում տրված գրավոր հայտարարությամբ վերջինս նշել է, որ հանրային սննդի ոլորտում գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 31 և Աղդրանիկի թիվ 52 հասցեներում՝ համապատասխանաբար 150քմ և 100քմ մակերեսներով սպասարկման սրահներում: Սակայն Մաշտոցի թիվ 31 հասցեի համար անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի՝ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին 2014 թվականի հոկտեմբեր ամսվա հայտարարության մեջ ներկայացվել է 68,5քմ մակերես, իսկ նոյեմբեր ամսվա հայտարարության մեջ՝ 58քմ մակերես, այսինքն՝ Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 31 հասցեի մակերեսը պակաս է ներկայացվել համապատասխանաբար 81,5քմ-ով (150-68,5) և 92քմ-ով (150-58): Երևան քաղաքի Աղդրանիկի թիվ 52 հասցեի համար անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի՝ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին 2014 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների հայտարարության մեջ ներկայացվել է 20քմ մակերես, այսինքն՝ Երևան քաղաքի Աղդրանիկի թիվ 52 հասցեի մակերեսը 3 ամսվա համար պակաս է ներկայացվել 80քմ-ով (100-20):

Դատարանը Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 3-րդ կետը ձանաչել է անվավեր՝ պատճառաբանելով, որ վիճարկվող վարչական ակտի 3-րդ կետն ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 37-րդ հոդվածների խախտմամբ, քանի որ վարչական մարմինն անհիմն կերպով հիմք է ընդունել անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի կողմից ստուգման ընթացքում տրված գրավոր հայտարարությունը և չի հերքել ստուգման ակտի նախագծի առարկությամբ ներկայացված տեղեկություններն այն մասին, որ Երևան քաղաքի Աղդրանիկի թիվ 52 հասցեում փաստացի օգտագործվող տարածքի մակերեսը կազմում է միայն 20քմ, Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 31 հասցեում՝ 58քմ:

Վերաքննիչ դատարանը մերժել է Տեսչության վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ վերահաստատելով Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 3-րդ կետն անվավեր ճանաչելու վերաբերյալ Դատարանի պատճառաբանությունները:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճարել դատարանն արձանագրում է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք իրավունք ունեն ներկայացնել բացատրություններ (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ

հողվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները (...):

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչական վարույթի, այդ թվում նաև՝ օրենքով նախատեսված ստուգումների, ընթացքում տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց կողմից տրված բացատրությունները հանդիսանում են ապացույցներ և կարող են դրվել այդ վարչական վարույթի արդյունքում կայացվելիք վարչական ակտի հիմքում, եթե տվյալ հարաբերությունները կարգավորող հատուկ օրենսդրությամբ որևէ այլ ընթացակարգ նախատեսված չէ:

Տվյալ դեպքում վարչական վարույթի ընթացքում, մասնավորապես՝ օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգումը փաստացի սկսելու օրը, այն է՝ 07.11.2014 թվականին, անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանը գրավոր բացատրություն է տվել այն մասին, որ «(...) Մաշտոցի թիվ 31 հասցեում գործող հանրային սննդի կետը գործում է 150քմ փարածքում, իսկ Անդրանիկի թիվ 52 հասցեում էլ գործունեություն է իրականացվում 100քմ փարածքում (...)»: Փաստորեն, նշված բացատրությամբ (հայտարարությամբ) անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանը հստակ և աներկբա կերպով վարչական մարմին հայտնել է Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 31 և Անդրանիկի թիվ 52 հասցեներում հանրային սննդի ոլորտում իր կողմից իրականացվող գործունեության համար արտոնագրային վճարի մեկամսյա չափը որոշելու համար հիմք հանդիսացող ելակետային տվյալները, այսինքն՝ նշված հասցեներում պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված տարածքների մակերեսները: Հիմք ընդունելով հանրային սննդի սպասարկման սրահի մակերեսների վերաբերյալ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի կողմից տրված բացատրության (հայտարարության) մեջ նշված առերևույթ կասկած չհարուցող տվյալները՝ ստուգում իրականացնող վարչական մարմինն արձանագրել է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից արտոնագրային վճարով հարկվող գործունեության իրականացման վայրերի համար արտոնագրային վճարի մեկամսյա չափը որոշելու համար հիմք հանդիսացող՝ ի սկզբանե հարկային մարմին ներկայացված ելակետային տվյալների մեծությունը պակաս է, քան ստուգման արդյունքում հարկային մարմնի կողմից պարզված ելակետային տվյալների մեծությունը: Ինչ վերաբերում է ստուգման ակտի նախագծի վերաբերյալ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի կողմից հետագայում ներկայացված առարկությանը, ապա Վճարել դատարանի գնահատմամբ այն չի կարող նսեմացնել անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի կողմից 07.11.2014 թվականին տրված գրավոր բացատրության (հայտարարության) ապացուցողական նշանակությունը կամ հիմք հանդիսանալ նշված բացատրությամբ ներկայացված տեղեկությունները ոչ արժանահավատ դիտարկելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճարել դատարանը հանգում է այն եզրակացության, որ Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 3-րդ կետով անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանին «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի խախտումը վերագրվել է իրավաչափորեն, և այդ մասով վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու իրավական հիմքերը բացակայել են, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից: Հետևաբար Վճարել դատարանն արձանագրում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության վճարել բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է, և անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի հայցը՝ Տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 3-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջի մասով, ենթակա էր մերժման, ինչը հաշվի չի առնվել ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, սույն գործով անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի վճարել բողոքի հիմքի և ՀՀ ֆինանսների նախարարության վճարել բողոքի երկրորդ հիմքի առկայությունը Վճարել դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

#### ***5. Վճռաբեկ դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.***

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորի կամ բողոք բերողի պահանջները բավարարվում են մասամբ, ապա հաշվանցման եղանակով դատարանը կարող է հայցվորին, բողոք բերողին և պատասխանողին փոխադարձաբար ազատել դատական ծախսերի հատուցումից կամ համաչափորեն բաշխել դատական ծախսերը նրանց միջև:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանը վերաքննիչ բողոքի համար վճարել է 10.000 ՀՀ դրամ, իսկ վճռաբեկ բողոքի համար՝ 20.000 ՀՀ դրամ պետական տուրք: Այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման: Հետևաբար, անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի կողմից վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

Մինչև սույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ՀՀ ֆինանսների նախարարությունն իր վերաքննիչ բողոքի համար վճարել է 10.000 ՀՀ դրամ, իսկ վճռաբեկ բողոքի համար՝ 20.000 ՀՀ դրամ պետական տուրք: Հետևաբար, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-

րդ հողվածի հիմքով ենթակա է հատուցման անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի կողմից, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարության վճարեկ բողոքը ևս ենթակա է բավարարման (մասնակիորեն):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի վճարեկ բողոքի բավարարման և ՀՀ ֆինանսների նախարարության վճարեկ բողոքի մասնակի բավարարման պայմաններում հայցվորի պահանջը բավարարվում է մասամբ, Վճարեկ դատարանը գտնում է, որ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանին և ՀՀ ֆինանսների նախարարությանն անհրաժեշտ է հաշվանցման եղանակով փոխադարձաբար ազատել վերաքննիչ և վճարեկ բողոքների համար դատական ծախսերի հատուցումից: Հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով վերաքննիչ և վճարեկ բողոքների համար պետական տուրքի հատուցման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճարեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի վճարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 22.12.2015 թվականի որոշման՝ ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 1-ին կետը՝ թվով 11 չգրանցված աշխատողի համար 6.600.000 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու մասով, անվավեր ճանաչելու հայցապահանջը մերժելու մասով ՀՀ վարչական դատարանի 03.07.2015 թվականի վճիռն անփոփոխ թողնելու մասը և այդ մասով փոփոխել այն՝ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի հայցը՝ սշված պահանջի մասով, բավարարել: ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 1-ին կետը՝ թվով 11 չգրանցված աշխատողի համար 6.600.000 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու մասով, ճանաչել անվավեր:

ՀՀ ֆինանսների նախարարության վճարեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 22.12.2015 թվականի որոշման՝ ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 3-րդ կետն անվավեր ճանաչելու հայցապահանջը բավարարելու մասով ՀՀ վարչական դատարանի 03.07.2015 թվականի վճիռն անփոփոխ թողնելու մասը և այդ մասով փոփոխել այն՝ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանի հայցը՝ ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության 20.11.2014 թվականի թիվ 6100287 ակտի 3-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել: Մնացած մասով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 22.12.2015 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

1. Վերաքննիչ և վճարեկ բողոքների համար դատական ծախսերի հարցը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով համարել լուծված:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
վարչական գործ թիվ ՎԴ/3899/05/14  
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան  
Դատավորներ՝ Հ. Բեդկյան  
Ա. Սարգսյան

վարչական գործ թիվ **ՎԴ/3899/05/14**  
**2017թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿՎԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության վճռաբեկ  
բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 23.02.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ  
հայցի «ԻՆՏԳՐԱՐՆՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ ֆինանսների նախա-  
րարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ Նախարարության օպերատիվ հետախուզու-  
թյան վարչության (այսուհետ՝ Վարչություն) 30.07.2014 թվականի թիվ 1003775/1 ակտի  
1-ին կետն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Վարչության  
30.07.2014 թվականի թիվ 1003775/1 ակտի 1-ին կետը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան)  
16.09.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.02.2016  
թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի  
16.09.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկբողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմ-  
նավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, 3-րդ հոդվածի 1-ին մասը, 10-րդ հոդվածի 1-ին մասը:*

*Բողոքը բերած անձը նշված պնդումները պարզապես անտեղի է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման: Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերության կողմից կատարված հաշվարկներում չի նշվել հաշվապահության վարման քաղաքականությունը, և ծախսերը հաշվարկվել են կամայականության սկզբունքով, իսկ վարչական մարմնի կողմից հաշվարկները կատարվել են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների միջոցով: Այսպես, վարչական մարմինը համապատասխան հաշվարկները կատարելիս հիմնվել է «միջին կշռվածի» սկզբունքի, իրացման գների համապատասխան հաշվարկման եղանակի վրա: Ստուգողները փաստացի իրացման գներից ինքնարժեքի հաշվարկի համար հիմք են ընդունել կադաստրային արժեքները, և քանի որ տվյալ հաշվարկային սկզբունքով հարկային պարտավորությունների չափն էականորեն պակաս էր, քան «միջին կշռվածի» սկզբունքով կատարված հաշվարկում, ուստի ընդունել են երկրորդ սկզբունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.02.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ «կայացնել նոր դատական ակտ»:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 03.02.2014 թվականի թիվ 1003775/1 հանձնարարագրի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցներին հանձնարարվել է Ընկերությունում անցկացնել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում (**հատոր 1-ին, գ.թ. 81**).

2) Վարչության կողմից վերստուգման արդյունքում 30.07.2014 թվականին կազմվել է թիվ 1003775/1 վերստուգման ակտը, որի 1-ին կետով պարզվել է, որ Ընկերությունը 115.268.945 ՀՀ դրամով ավել է հաշվարկել 2010 թվականի համախառն եկամտից նվազեցվող ծախսերը, որոնք առաջացել են Ընկերության կողմից կառուցված շենքի իրացված տարածքների ինքնարժեքից: Նշված խախտման արդյունքում չի հաշվարկվել և պետական բյուջե չի վճարվել 23.053.790 ՀՀ դրամ շահութահարկի գումար: Կիրառելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածները՝ Վարչությունն Ընկերության նկատմամբ առաջադրել է շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն՝ 48.961.480 ՀՀ դրամի չափով: Ընդ որում, Ընկերության կողմից 2010 թվականի համախառն եկամտից նվազեցվող ծախսերի իրական գումարը Վարչությունը հաշվարկել է անուղղակի եղանակով՝ իր հաշվարկի հիմքում դնելով Ընկերության կողմից կառուցված շենքի իրացված տարածքների կադաստրային արժեքը (**հատոր 1-ին, գ.թ. 49-55**).

3) Նախարարության քննչական վարչության քննիչի 05.09.2014 թվականի որոշմամբ նշանակված դատահաշվապահական հանձնաժողովային փորձաքննության արդյունքում ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետների կողմից 11.12.2014 թվականին կազմված թիվ 14-2559 փորձագիտական եզրակացության համաձայն՝ Վարչության կողմից 30.07.2014 թվականին կազմված թիվ 1003775/1 վերստուգման ակտում արձանագրված շահութահարկի դրվագով դատահաշվապահական հանձնաժողովային փորձաքննությամբ կատարված ճշգրտումներով Ընկերությունում շահութահարկի գծով՝ տույժ և տուգանքներով հանդերձ, առաջանում է ընդամենը 2.342.249 ՀՀ դրամի (շահութահարկ՝ 1.090.686 + տույժ՝ 597.151 + տուգանքներ՝ 654.412) չափով պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա հարկային պարտավորություն, որն առաջացել է Ընկերության կողմից 2011 թվականի հաշվետու տարվա համար կազմված և հարկային

տեսչություն ներկայացված շահութահարկի հաշվարկում համախառն եկամտից նվազեցման ենթակա ծախսերի գումարի մեջ 5.453.430 ՀՀ դրամի չափով ավել ծախսեր ներառելու հետևանքով (**հատոր 1-ին, գ.թ 102-124**):

#### **4. Վճարելի դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումը.**

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հարկ վճարողի հարկվող օբյեկտը և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, անուղղակի եղանակով հաշվարկելու իրավական հիմքերի և առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե ի՞նչ փաստական և իրավաբանական հանգամանքների առկայության դեպքում և ի՞նչ ընթացակարգով հարկային մարմինը կարող է կիրառել հարկ վճարողի հարկվող օբյեկտը և հարկային պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու, մասնավորապես՝ շահութահարկի գծով թույլատրելի նվազեցումներն անուղղակի եղանակով հաշվարկելու միջոցով հարկվող շահույթը որոշելու իր լիազորությունը:*

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկը հարկ վճարողների կողմից նույն օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե նույն օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկությունները:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում (հարկատու են) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և նույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ «Համախառն եկամտի նվազեցումները» վերտառությամբ 4-րդ գլխի 9-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից թույլատրվում է կատարել նույն գլխով նախատեսված նվազեցումները (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ): Նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկ վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին յուրաքանչյուր



տարվա արդյունքներով՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը, ներկայացնում են սահմանված կարգով հարկային մարմնի կողմից հաստատված շահույթահարկի հաշվարկ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ հարկ վճարողը պարտավոր է՝ (ա) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում (...), կազմել հաշվետվություններ՝ իր ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ. (բ) հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում ինքնուրույն հաշվարկել սահմանված հարկերի գումարները և իրականացնել դրանց վճարումը բյուջե. (գ) սահմանված ժամկետում հարկային մարմնի ներկայացնել (...) հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկատուները շահութահարկի գումարները որոշում են յուրաքանչյուր տարվա արդյունքներով (...), իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շահութահարկի հաշվարկման նպատակով «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեպքերում հարկային տեսչության մարմինն օգտվում է նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված իրավունքից:

Իրավահարաբերության ծագման՝ սույն գործով վիճարկվող վերստուգման ակտի կայացման պահին, այսինքն՝ 30.07.2014 թվականին գործող խմբագրությամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային մարմնի ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը կամ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները համարվում են չհիմնավորված, ապա հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, մասնավորապես՝ հիմնվելով հարկ վճարողի ակտիվների, հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալների, հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծախսերի, գույքագրման և չափագրման տվյալների, օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունների, ինչպես նաև նույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված այլ տեղեկությունների, համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գների և այլ ցուցանիշների, համախառն եկամտի մեջ 25 տոկոս հաշվարկային հարկվող շահույթի կամ հարկվող եկամտի կամ օրենքով իրականացված հսկիչ գնումների վրա:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) ստուգող մարմինը կազմում

է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, (...) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) ակտում նշվում են՝ (...) (9) ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել, (10) պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված իրավանորմերի վերլուծությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ շահութահարկը պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որի հարկվող օբյեկտը ռեզիդենտների համար Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթն է: Ընդ որում, հարկվող շահույթ է հարկատուի համախառն եկամտի, այսինքն՝ հաշվետու տարում անկախ դրանց ստացման աղբյուրներից հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի, և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը: Օրենսդիրը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում սահմանել է, որ նշված օրենքի իմաստով եկամուտը հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումն է, որը հանգեցնում է հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տնտեսավարող սուբյեկտի հարկվող շահույթը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել օրենքով սահմանված հետևյալ երկու տարրերը. տնտեսավարող սուբյեկտի համախառն եկամուտը և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված թույլատրելի նվազեցումները, որտեղ համախառն եկամուտը տնտեսավարող սուբյեկտի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից, իսկ թույլատրելի նվազեցումներն օրենքով սահմանված ծախսերն են, կորուստները և այլ նվազեցումները: Նշված երկու տարրերի՝ համախառն եկամտի և թույլատրելի նվազեցումների դրական տարբերությունը տնտեսավարող սուբյեկտի մոտ առաջացնում է հարկվող շահույթ, որից հնարավոր է հաշվարկել օրենքով սահմանված վճարման ենթակա շահութահարկի գումարը: Ընդ որում, տնտեսավարող սուբյեկտի կողմից ծախսերի մասով համախառն եկամուտը թույլատրվում է նվազեցնել, եթե կատարված ծախսերը կապված են համախառն եկամտի ստացման հետ, ընդ որում՝ ծախսերը պետք է լինեն անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված (*տե՛ս*, «Արթիկի «Սյրեկլումաշ» ԲԲԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գյումրու փարածքային հարկային պետությանն թիվ ՎԴ5/0519/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ շահութահարկ վճարողները պարտավոր են յուրաքանչյուր տարվա արդյունքներով ինքնուրույն հաշվարկել շահութահարկի գումարները և մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը հարկային մարմին ներկայացնել այդ հաշվարկը: Մինչև ժամանակ օրենսդիրը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում հատուկ իրավակարգավորումներ է նախատեսել այն իրավիճակների համար, երբ հարկ վճարողի վերոգրյալ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում վերջինիս ունեցած հարկային պարտավորության չափը, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, հնարավոր չի լինում պարզել:

Նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավադրույթի բովանդակությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ այն դեպքում, երբ անհնար է հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, հարկային մարմինը պարտավոր է ՀՀ կառավարության սահմանած կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները (*տե՛ս*, *անհարձեռնարկայրեր Տիգրան Խոսրովյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական*

*եկամուսնների կոմիտեի Շահումյանի հարկային տեսչության թիվ ՎԴ/0054/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.07.2009 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման՝ սույն գործով վիճարկվող վերստուգման ակտի կայացման պահին, այսինքն՝ 30.07.2014 թվականին գործող խմբագրությամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում հատակորեն ամրագրված են այն իրավական հիմքերը, որոնց առկայության դեպքում հարկային մարմնի մոտ առաջանում է հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելու լիազորությունը: Այսպես, ըստ իրավահարաբերության ծագման պահին գործող կանոնի, հարկային մարմինը պարտավոր է ինքնուրույն հաշվարկել հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, եթե առկա է հետևյալ իրավիճակներից որևէ մեկը.

1) հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելը դարձել է անհնար,

2) օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները համարվում են չհիմնավորված:

Ընդ որում՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը նախատեսել է նաև այն փաստական հանգամանքների սպառիչ ցանկը, որոնք պատճառ են հանդիսանում վերոգրյալ իրավիճակների առաջացման համար. այդ ցանկը ներառում է հետևյալ դեպքերը.

1) հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև այլ) սահմանված փաստաթղթերը,

2) հարկ վճարողը հաշվապահական հաշվառման (օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև այլ) սահմանված փաստաթղթերը վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով,

3) հարկ վճարողն ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային մարմին ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում:

Փաստորեն, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորության ծագման համար անհրաժեշտ պայման է հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելն անհնար դառնալու կամ հարկ վճարողի շրջանառություններն օրենքով սահմանված դեպքերում չհիմնավորված համարվելու իրավիճակներից որևէ մեկի և հարկ վճարողի կողմից թույլ տրված վերոգրյալ արարքներից որևէ մեկի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը ոչ միայն ամրագրել է այն հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորության ծագման համար անհրաժեշտ իրավական նախադրյալների բովանդակությունը, այլ նաև սահմանել է հարկային մարմնի այդ լիազորության իրականացման պայմանները: Այսպես, քննարկվող իրավական նորմով օրենսդիրը նախևառաջ թվարկել է այն չափանիշները, որոնք պետք է հիմք ընդունվեն հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելիս: Այդ գործողությունը կատարելիս հարկային մարմինը հիմնվում է, մասնավորապես, հետևյալ տվյալների վրա.

- 1) հարկ վճարողի ակտիվներ,
- 2) հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալներ,
- 3) հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծախսեր,
- 4) գույքագրման և չափագրման տվյալներ,

5) օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկություններ,  
6) «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված այլ տեղեկություններ,

7) համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գներ և այլ ցուցանիշներ,

8) օրենքով իրականացված հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված տվյալներ,

9) հաշվարկային հարկվող շահույթ կամ հաշվարկային հարկվող եկամուտ (համալսառն եկամտի մեջ 25 տոկոս):

Բացի այդ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելու կարգը հաստատելու լիազորությունը վերապահվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը: ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունը, 18.09.1998 թվականին ընդունել է թիվ 580 որոշումը, որով հաստատել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեպքերում հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) կարգը (այսուհետ՝ Կարգ): Նշված ենթաօրենսդրական ակտով ՀՀ կառավարությունն անդրադարձել է, ի թիվս այլնի, հետևյալ հարաբերությունների կանոնակարգմանը.

1) հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) հաջորդականությունը (Կարգի 4-րդ կետ),

2) ելակետային չափերի որոշման համար անհրաժեշտ վերլուծության կատարումը և հարկվող օբյեկտների ու հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման, վերագնահատման) համար անհրաժեշտ ելակետային չափերի որոշումը (Կարգի 5-րդ կետ), որն ընդգրկում է նաև՝

- ակտիվների շարժի (օգտագործման) չափի մնացորդի որոշումը (Կարգի 6-8-րդ կետեր),

- ակտիվների առաջացման աղբյուրների չափի մնացորդի որոշումը և վերլուծումը (Կարգի 9-11-րդ կետեր),

3) հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկումն ու ձևակերպումը (Կարգի 12-15-րդ կետեր):

Այսպիսով, հարկ վճարողի հարկվող օբյեկտը և հարկային պարտավորություններն անուղղակի եղանակով հաշվարկելու հարկային մարմնի լիազորությունը կարող է իրականացվել միայն ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ սահմանված կարգով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևյալ եզրակացության.

- հարկային մարմինն օժտված է հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, ինքնուրույն հաշվարկելու լիազորությամբ,

- հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորությունը կարող է կիրառվել միայն օրենքով հստակորեն նախատեսված և սույն որոշմամբ ներկայացված իրավիճակներում, որոնք առաջանում են հարկ վճարողի՝ օրենքով սահմանված որոշակի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով,

- հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորությունը կարող է իրականացվել միայն ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով (18.09.1998 թվականի թիվ 580 որոշում)՝ հիմք ընդունելով օրենքով դրա համար հատուկ նախատեսված չափանիշները:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ և 57-

րդ հողվածների վկայակոչված իրավական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտերը պետք է հիմնավորված լինեն. օրենսդիրը սահմանել է, որ վարչական ակտի հիմնավորումներում պետք է անպայման նշվեն համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը, այսինքն՝ վարչական մարմինը վարչական ակտն ընդունելիս պարտավոր է վարչական ակտում նշել այն բոլոր փաստական հանգամանքները և իրավական հիմքերը, որոնք հիմք են հանդիսացել տվյալ վարչական ակտն ընդունելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներում անդրադարձել է վարչական ակտի հիմնավորվածության հարցին՝ արձանագրելով, որ վարչական ակտը հիմնավորելու՝ վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարչական վարույթի մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը (*տես*, *Գիթա Հեղարհինարանջենի ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ ՎԳ/6781/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրի կողմից վարչական ակտի հիմնավորում պարունակելու պահանջն ինքնանպատակ չէ. այն հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց, ովքեր համաձայն չեն ընդունված վարչական ակտի հետ, վարչական բողոք կամ դատարան հայց ներկայացնելով, գործնականում իրացնել իրենց արդյունավետ իրավական պաշտպանության և դատարան դիմելու հիմնարար իրավունքները: Միաժամանակ վարչական մարմնի կողմից ընդունված հիմնավորված վարչական ակտը գործնականում իրական հնարավորություն է տալիս վարչական բողոքը քննարկող վարչական մարմնին կամ դատարանին պարզելու այն փաստական և իրավական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում (*տես*, «Ինտելիդանկ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԳ/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերով ստուգման ակտի բովանդակությանը ներկայացվող պահանջների իրավական վերլուծությանը՝ արտահայտելով այն իրավական դիրքորոշումը, որ այդ իրավադրույթների ուժով ստուգման ակտը պետք է ամբողջական և հստակ տեղեկություններ պարունակի ստուգմամբ բացահայտված խախտումների նկարագրության, խախտված իրավական նորմերի և պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերի վերաբերյալ: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ ստուգման ակտի բովանդակությանն ուղղված նշված օրենսդրական պահանջների պահպանման դեպքում միայն հնարավոր կլինի պարզել տվյալ ստուգման ակտի իրավաչափության հարցը (*տես*, «Արթիկի «Սրելկումա»» ԲԲԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի Գյումրու փարածքային հարկային տեսչության թիվ ՎԳ5/0519/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վարչական ակտերի հիմնավորվածության պահանջի վերաբերյալ վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկային մարմնի կողմից հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահույթահարկի գծով, ինքնուրույն հաշվարկելու լիազորության կիրառմամբ հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտը (մասնավորապես՝ ստուգման ակտը) պետք է պարունակի հիմնավորումներ, ի թիվս այլնի, (1) հարկային մարմնի քննարկվող լիազորության կիրառման համար հիմք հանդիսացող օրենքով նախատեսված իրավիճակներից որևէ մեկի առկայության, (2) հարկ վճարողի կողմից օրենքով սահմանված որոշակի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, (3) առաջացած իրավիճակի և հարկ վճարողի կողմից թույլ տրված կոնկրետ արարքի միջև պատճառահետևանքային

կապի առկայության, ինչպես նաև (4) հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելու համար օրենքով նախատեսված չափանիշները հիմք ընդունելու և (5) այդ հաշվարկը ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ սահմանված կարգով կատարված լինելու վերաբերյալ: Վճարելի դատարանի գնահատմամբ վերոգրյալ հարցերը կազմում են այն էական փաստական և իրավաբանական հանգամանքների ամբողջությունը, որոնք հիմք են հանդիսանում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար:

***Վճարելի դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 03.02.2014 թվականի թիվ 1003775/1 հանձնարարագրով Ընկերությունում անցկացված բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգման արդյունքում Վարչության կողմից կազմվել է 30.07.2014 թվականի թիվ 1003775/1 վերստուգման ակտը: Նշված վարչական ակտի 1-ին կետով Ընկերության նկատմամբ առաջադրվել է շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն՝ 48.961.480 ՀՀ դրամի չափով, այն պատճառաբանությամբ, որ Ընկերությունը 115.268.945 ՀՀ դրամով ավել է հաշվարկել 2010 թվականի համախառն եկամտից նվազեցվող՝ Ընկերության կողմից Երևան քաղաքի Ֆուչիկի թիվ 19 հասցեում գտնվող շենքի իրացված տարածքների ինքնարժեքից առաջացած ծախսերը, որի հետևանքով չի հաշվարկվել և պետական բյուջե չի վճարվել 23.053.790 ՀՀ դրամ շահութահարկի գումար: Ընդ որում, Ընկերության կողմից 2010 թվականի համախառն եկամտից նվազեցվող ծախսերի իրական գումարը Վարչությունը հաշվարկել է անուղղակի եղանակով՝ իր հաշվարկի հիմքում դնելով Ընկերության կողմից կառուցված շենքի իրացված տարածքների կադաստրային արժեքը:

Դատարանը բավարարել է Վարչության 30.07.2014 թվականի թիվ 1003775/1 ակտի 1-ին կետն անվավեր ճանաչելու մասին Ընկերության հայցը՝ պատճառաբանելով, որ «(...) *տվյալ դեպքում իրացման նպատակով շինությունների ծախսերի մասով վարչական մարմինը հիմք է ընդունել կադաստրային տվյալները, որն անընդունելի է սույն դեպքում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սրտգման ակտում առկա չէ որևէ սպացույց այն մասին, որ վարչական մարմինը հնարավորություն չի ունեցել այլ եղանակով ծախսերը հաշվարկելու և սրիպաված է եղել ծախսերն անուղղակի եղանակով կադաստրելու (...):*

Վերաքննիչ դատարանը մերժել է նախարարության վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ ըստ էության հիմնավոր համարելով Դատարանի պատճառաբանությունները և հավելելով. «(...) *առավել ևս առկա չէ որևէ հիմնավորում, որ իրացման նպատակով շինությունների ծախսերի մասով պետք է հիմք ընդունվեին հենց կադաստրային արժեքները, ինչը նշանակում է, որ վարչական մարմինը հարկվող օբյեկտը և հարկային պարտավորությունները հաշվարկելիս դուրս է եկել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված շրջանակներից (...):*

Վճարելի դատարանը, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Վճարելի դատարանը փաստում է, որ սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտի՝ Վարչության 30.07.2014 թվականի թիվ 1003775/1 վերստուգման ակտի 1-ին կետով Ընկերության նկատմամբ շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելիս վարչական մարմինը գտել է, որ Ընկերության կողմից 2010 թվականի համախառն եկամտից կատարված նվազեցումները, որոնք վերաբերում են Երևան քաղաքի Ֆուչիկի թիվ 19 հասցեում կառուցված շենքի իրացված տարածքների ինքնարժեքին, անհիմն են: Հարկային մարմինն այդ նվազեցումները հաշվարկել է ինք-

նություն՝ անուղղակի եղանակով՝ հիմք ընդունելով շենքի իրացված տարածքների կադաստրային արժեքները: Փաստորեն, տվյալ դեպքում հարկային մարմինն ըստ էության ինքնություն հաշվարկել է շահութահարկի գծով Ընկերության հարկվող օբյեկտը և հարկային պարտավորությունները, ինչը կարող էր կատարվել միայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի ուժով: Այնինչ, Վարչության 30.07.2014 թվականի թիվ 1003775/1 վերստուգման ակտի 1-ին կետում առկա չէ որևէ նշում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկային մարմնի կողմից շահութահարկի գծով Ընկերության հարկվող օբյեկտները և հարկային պարտավորություններն ինքնություն հաշվարկելու լիազորության կիրառմամբ Ընկերության նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտը՝ Վարչության 30.07.2014 թվականի թիվ 1003775/1 վերստուգման ակտը, պետք է պարունակեր հիմնավորում, ի թիվս այլնի, հետևյալ հանգամանքների վերաբերյալ.

1) 2010 թվականի շահութահարկի գծով Ընկերության հարկային պարտավորությունը հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկելը դարձել է անհնար կամ օրենքով սահմանված դեպքերում Ընկերության հարկվող շրջանառությունը համարվել է չհիմնավորված,

2) վերոգրյալ իրավիճակներն առաջացել են Ընկերության կողմից հարկային օրենսդրությամբ նախատեսված և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 2-րդ մասում շարադրված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատճառով,

3) Ընկերության հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելու համար հիմք են ընդունվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված չափանիշները,

4) Ընկերության հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ սահմանված կարգով:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչության 30.07.2014 թվականի թիվ 1003775/1 վերստուգման ակտի 1-ին կետը որևէ նշում չի պարունակում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ Ընկերության նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար հիմք հանդիսացող վերոգրյալ էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, սույն գործի փաստերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործի քննության ընթացքում վարչական մարմինը չի ապացուցել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ Ընկերության նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի առկայությունը: Ավելին, սույն գործով բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ վարչական մարմինը պահպանել է շահութահարկի գծով Ընկերության հարկվող օբյեկտները և հարկային պարտավորություններն ինքնություն հաշվարկելու լիազորության իրականացման պայմաններն ու կարգը և Ընկերության 2010 թվականի հարկվող շահույթը որոշել է օրենքով սահմանված չափանիշների միջոցով:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտը հիմնավորված չէ նաև Ընկերության կողմից Երևան քաղաքի Ֆուչիկի թիվ 19 հասցեում գտնվող շենքի իրացված տարածքների ինքնարժեքը հաշվարկելու համար այդ տարածքների կադաստրային արժեքները որպես ելակետ ընդունելու առումով, քանի որ վարչական մարմինը չի նշել որևէ իրավական կամ փաստական հիմք, որը վերջինիս հնարավորություն կտար կատարելու նման հաշվարկ, այսինքն՝ շահութահարկի գծով համախառն եկամտից կատարվող թույլատրելի

նվազեցումների հաշվարկման համար որպես չափանիշ օգտագործել Ընկերության կողմից իրացված անշարժ գույքերի կադաստրային արժեքները:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործում առկա՝ ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետների կողմից 11.12.2014 թվականին կազմված թիվ 14-2559 փորձագիտական եզրակացության համաձայն՝ Ընկերությունը 2010 թվականի համար շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն չունի, իսկ Վարչության կողմից 30.07.2014 թվականին կազմված թիվ 1003775/1 վերստուգման ակտում արձանագրված շահութահարկի դրվագով պետք է առաջանար ընդամենը 2.342.249 ՀՀ դրամի չափով լրացուցիչ հարկային պարտավորություն, այն էլ՝ ոչ թե 2010, այլ 2011 թվականի համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչության 30.07.2014 թվականի թիվ 1003775/1 վերստուգման ակտը՝ սույն գործով վիճարկվող 1-ին կետի մասով, ընդունվել է օրենքի, մասնավորապես՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 2-րդ մասի և դրա հիման վրա ընդունված ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշման, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածների և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերի, խախտմամբ և ենթակա է անվավեր ճանաչման: Հետևաբար ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերով իրավացիորեն են եզրահանգել, որ Վարչության 30.07.2014 թվականի թիվ 1003775/1 վերստուգման ակտի 1-ին կետը ոչ իրավաչափ է և ենթակա է վերացման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով:

Անփոփոխելի վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Դատարանը, անվավեր ճանաչելով Վարչության 30.07.2014 թվականի թիվ 1003775/1 ակտի 1-ին կետը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխմանավերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկավարամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ Նախարարության կողմից վճռաբեկ բողոքի



համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 23.02.2016 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/1258/05/15  
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան  
Դատավորներ՝ Ա. Բարայան  
Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/1258/05/15**  
**2017թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական  
եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքն-  
նիչ դատարանի 15.02.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Կլեոպատրա» ՍՊԸ-ի  
(այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կոմիտեի՝ ՀՀ ֆինանսների նախարարության Կոտայ-  
քի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) 13.02.2015 թվականի  
թիվ 103 որոշումն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ Տեսչության  
19.02.2015 թվականի թիվ 029558 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության  
13.02.2015 թվականի թիվ 103 որոշումը և որպես անվավերության հետևանք՝ անվավեր  
ճանաչել Տեսչության 19.02.2015 թվականի թիվ 029558 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան)  
25.03.2016 թվականի որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը վերակազմակերպ-  
ման հիմքով փոխարինվել է իրավահաջորդով՝ Կոմիտեով:

Դատարանի 23.05.2016 թվականի վճռով Ընկերության հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.02.2017  
թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի  
23.05.2016 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետում կիրառելով «գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու)» բառակապակցությունը՝ օրենսդիրը նկատի է ունեցել ոչ թե գործունեության որևէ տեսակով չգրադվելը կամ գործունեության տեսակը փոխելը, այլ ընդհանրապես ոչ մի տեսակի գործունեություն չիրականացնելը: Հետևաբար նշված իրավադրույթը կիրառելի չէ Ընկերության նկատմամբ, իսկ Տեսչության 13.02.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 103 որոշմամբ Ընկերության նկատմամբ շահութահարկի գծով 2014 թվականի կանխավճարները չվճարելու մասով հարկային պարտավորության առաջադրումն իրավաչափ է:

Բացի այդ, Կոմիտեն համաձայն է սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում Ընկերության՝ լաված լինելու իրավունքը խախտված լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիրքորոշման հետ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.02.2017 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերության շահութահարկի հաշվարկի համաձայն՝ Ընկերությունը 2013 թվականի ընթացքում գրադվել է խաղատների, ինչպես նաև հանրային սննդի կետերի (բար և ռեստորան) կազմակերպմամբ և ունեցել է ընդամենը 3.648.539.956 ՀՀ դրամի չափով համախառն եկամուտ, 2013 թվականի համար Ընկերության կողմից վճարման ենթակա շահութահարկի գումարը կազմել է 784.072 ՀՀ դրամ, իսկ հաջորդ տարվա կանխավճարների եռամսյակային գումարը՝ 147.013 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 14-17**).

2) 10.01.2014 թվականին Ընկերությունը Կոմիտեի Կոտայքի տարածքային հարկային տեսչություն է ներկայացրել հայտարարություն՝ 01.01.2014 թվականից Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքում գտնվող խաղատան գործունեությունը դադարեցնելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 12**).

3) Ընկերության շահութահարկի հաշվարկի համաձայն՝ Ընկերությունը 2014 թվականի ընթացքում գրադվել է գույքը վարձակալությամբ տալով, խորհրդատվական ծառայությամբ և խաղային տեխնիկայի սպասարկմամբ ու նորոգմամբ և ունեցել է ընդամենը 90.132.105 ՀՀ դրամի չափով համախառն եկամուտ (**հատոր 1-ին, գ.թ. 76-82**).

4) Ընկերության կողմից հարկային տեսչություն է ներկայացվել նաև հայտարարություն՝ հանրային սննդի մասով գործունեությունը 31.01.2014 թվականից ժամանակավորապես դադարեցնելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 84**).

5) Տեսչության 13.02.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 103 որոշմամբ Ընկերությունից գանձվել է 474.806.486 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն, որից 469.175.137 ՀՀ դրամը (այդ թվում՝ ապառք 373.075.465 ՀՀ դրամ, տույժ՝ 96.099.672 ՀՀ դրամ) առաջացել է շահութահարկի գծով 2014 թվականի կանխավճարները չվճարելու համար, իսկ 5.631.349 ՀՀ դրամը՝ եկամտային հարկի գծով

2014 թվականի հունիսից մինչև դեկտեմբեր ամիսների հաշվարկների հիման վրա (**հատոր 1-ին, գ.թ. 18-19**):

6) Տեսչության 19.02.2015 թվականի «Հարկ վճարողի գույքի (այդ թվում՝ դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա արգելանք դնելու մասին» թիվ 029558 որոշմամբ արգելանք է դրվել Ընկերության գույքի և դրամական միջոցների վրա (**հատոր 1-ին, գ.թ. 21**):

**4. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ տնտեսվարող սուբյեկտի կողմից գործունեություն չիրականացնելու հիմքով շահութահարկի գծով կանխավճարներ կատարելու պարտականությունից ազատվելու իրավական կառուցակարգի առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյոք հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած (չիրականացնող) փակվարող սուբյեկտին ազատվում է այդ գործունեության մասով շահութահարկի գծով կանխավճարներ կատարելու պարտականությունից այն պայմաններում, երբ փակվարող սուբյեկտը դադարեցրել է (չի իրականացնում) միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը, սակայն շարունակում է զբաղվել գործունեության այլ փասկներով:*

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկը հարկ վճարողների կողմից նույն օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում (հարկատու են) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և նույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված իրավանորմերի վերլուծությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ շահութահարկը պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որի հարկվող օբյեկտը ռեզիդենտների համար Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթն է: Ընդ որում, հարկվող շահույթ է հարկատուի համախառն եկամտի, այսինքն՝ հաշվետու տարում անկախ դրանց ստացման աղբյուրներից հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը (փեն, «ԻՆՏԳՐԱՆՏ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԳ/3899/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հարկա-

տուները շահութահարկի գումարները որոշում են յուրաքանչյուր տարվա արդյունքներով (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկ վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը, ներկայացնում են սահմանված կարգով հարկային մարմնի կողմից հաստատված շահութահարկի հաշվարկ:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ հարկատուն պարտավոր է շահութահարկի գումարը վճարել պետական բյուջե մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը ներառյալ:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տարվա ընթացքում հարկատուն պարտավոր է կատարել շահութահարկի կանխավճարներ՝ նույն հոդվածով սահմանված կարգով (...):

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ, նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծության 18,75 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ: (...) ընթացիկ տարվա կանխավճարների հաշվարկման համար հիմք է հանդիսանում նախորդ տարվա հարկվող շահույթի նկատմամբ կիրառվող դրույքաչափով հաշվարկված շահութահարկի գումարի և (...) նախորդ տարում օտարերկրյա պետություններում ստացված եկամտից վճարված շահութահարկի հաշվանցվող գումարների դրական տարբերությունը, ինչպես նաև նախորդ տարվա շրջանառության հարկի, հաստատագրված վճարի և (կամ) արտոնագրային վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարները (...):

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ այն հարկատուն, որը հարկային մարմին է ներկայացրել գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն, կարող է նշյալ հայտարարությունը ներկայացնելուց հետո շահութահարկի կանխավճարներ չկատարել:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այս կամ այն հարկ վճարողի՝ շահութահարկի գծով պետական բյուջե վճարման ենթակա հարկային պարտավորության չափը որոշվում է յուրաքանչյուր տարվա գործունեության արդյունքներով տվյալ հարկ վճարողի մոտ առաջացած հարկվող շահույթի հիման վրա: Ընդ որում, շահութահարկով հարկվող օբյեկտը (հարկվող շահույթը) հնարավոր է որոշել միայն հաշվետու տարվա ավարտից հետո, քանի որ տվյալ հարկ վճարողի հարկվող շահույթը, այն է՝ ամբողջ հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը, հնարավոր է հաշվարկել միայն հաշվետու տարվա ավարտից հետո: Ըստ այդմ, օրենսդիրը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներում սահմանել է, որ հաշվետու տարվա արդյունքներով շահութահարկի հաշվարկը հարկային մարմին է ներկայացվում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը, իսկ շահութահարկի գումարը պետական բյուջե է վճարվում մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը ներառյալ:

Միևնույն ժամանակ օրենսդիրը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածով սահմանել է, որ հարկատուները հաշվետու տարվա ընթացքում, այսինքն՝ մինչև այդ տարվա համար շահութահարկով հարկվող շահույթի և շահութահարկի գումարների հաշվարկման հնարավորության առաջացումը, պարտավոր են պետական բյուջե վճարել շահութահարկի գծով կանխավճարներ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ օրենսդրական նշված իրավակարգավորումը նպատակաուղղված է հարկ վճարողի՝ շահութահարկի գծով հարկային պարտավորության բեռի համաչափ բաշխմանը հաշվետու տարվա ընթացքում, ինչպես նաև հաշվետու տարվա համար շահութահարկի գծով վճարման ենթակա գումարների՝ տվյալ տարվա ընթացքում պետական բյուջե մուտքի ապահովմանը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթ-

ների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շահութահարկ վճարողի՝ հաշվետու տարվա ընթացքում կանխավճարներ վճարելու պարտականությունը կատարվում է եռամսյակային պարբերականությամբ՝ նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի կամ շահութահարկի հաշվարկային մեծության 18,75 տոկոսի չափով, ինչը նպատակաուղղված է ընթացիկ տարվա շահութահարկի գծով հարկային պարտավորության հնարավորինս համամասնորեն բաշխմանը տվյալ տարվա ընթացքում: Ընդ որում, նշված հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է կանխավճարների չափի հաշվարկման երկու առանձին հիմքեր. դրանք են՝

1) նախորդ տարվա հարկվող շահույթի նկատմամբ կիրառվող դրույքաչափով հաշվարկված շահութահարկի գումարի և նախորդ տարում օտարերկրյա պետություններում ստացված եկամտից վճարված շահութահարկի հաշվանցվող գումարների դրական տարբերությունը,

2) նախորդ տարվա շրջանառության հարկի, հաստատագրված վճարի և (կամ) արտոնագրային վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարները:

Փաստորեն, մատնանշված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ հարկ վճարողը պարտավոր է հաշվարկել և վճարել ընթացիկ տարվա շահութահարկի կանխավճար, ի թիվս այլնի, նաև նախորդ տարվա հաստատագրված վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարների հիման վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեության որոշ տեսակների համար հաստատագրված վճարների հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով:

Այսպես, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի իմաստով՝ հաստատագրված վճարը նույն օրենքով նախատեսված չափերով և ժամկետներում հաստատագրված վճար վճարողների կողմից պետական բյուջե վճարվող ավելացված արժեքի հարկին և (կամ) շահութահարկին փոխարինող պարտադիր և անհատույց վճար է:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձանց համար հաստատագրված վճարը փոխարինում է ավելացված արժեքի հարկի և կամ շահութահարկի գումարին:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հաստատագրված վճար վճարողներ են իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը (...), որոնք զբաղվում են նույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված գործունեության տեսակներով:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողները հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով շահութահարկի կանխավճարային մուծումներ չեն կատարում:

Վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ օրենքով նախատեսված գործունեության որոշակի տեսակների համար տնտեսվարող սուբյեկտները վճարում են հաստատագրված վճար, որը փոխարինում է տվյալ գործունեության մասով առաջացող շահութահարկի և (կամ) ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորություններին: Ընդ որում, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով հաշվետու տարվա ընթացքում հաստատագրված վճար վճարող հանդիսացող տնտեսվարող սուբյեկտները հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների մասով ազատված են շահութահարկի կանխավճարային մուծումներ կատարելու պարտականությունից: Սակայն, եթե նախորդ տարվա ընթացքում հաստատագրված վճար վճարող հանդիսացող տնտեսվարող սուբյեկտը հաշվետու տարվա ընթացքում այլևս չի հանդիսանում հաստատագրված վճար վճարող կամ հանդիսանալով հաստատագրված վճար վճարող՝ միաժամանակ իրականացնում է նաև շահութահարկով հարկվող գործունեություն, ապա վերջինս «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով պարտավոր է կատարել շահութահարկի կան-

խավձարներ նախորդ տարվա հաստատագրված վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարների հիման վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով օրենսդիրը նախատեսել է շահութահարկի կանխավճարներ չկատարելու իրավունք այն հարկատուների համար, ովքեր հարկային մարմին են ներկայացրել գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն: Նշված օրենսդրական կարգավորման հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ հաշվետու տարվա ընթացքում դադարեցված գործունեության մասով հարկատուն փաստացի շահույթ չի ստանում և չիրականացվող գործունեության մասով փաստացի չի կարող ունենալ շահութահարկի գծով պետական բյուջե վճարման ենթակա հարկային պարտավորություն: Հետևաբար նման իրավիճակում վերանում է նաև հաշվետու տարվա ընթացքում դադարեցված գործունեության մասով շահութահարկի կանխավճարներ կատարելու անհրաժեշտությունը: Այլ կերպ ասած, եթե ընթացիկ տարվա ընթացքում հարկատուն չի իրականացնում տնտեսական գործունեություն, ապա տվյալ տարվա համար այդ գործունեության մասով շահութահարկի կանխավճարներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է: Փաստորեն, տնտեսական գործունեություն չիրականացնող և շահույթ չստացող հարկատուի համար հաշվետու տարվա ընթացքում այդ գործունեության մասով շահութահարկի կանխավճարների կատարման պարտականությունից ազատվելու կառուցակարգի սահմանումը գործնականում երաշխավորում է տվյալ հարկատուի տնտեսական գործունեության արդյունքներին չհամապատասխանող հարկային բեռից զերծ մնալու ապահովումը:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ իրավակիրառ պրակտիկայում հանդիպող այն դեպքերին, երբ նախորդ տարվա ընթացքում հաստատագրված վճար վճարող հանդիսացող տնտեսվարող սուբյեկտը հաշվետու տարում դադարեցրել է հաստատագրված վճարով հարկվող իր գործունեությունը՝ շարունակելով զբաղվել հաստատագրված վճարով չհարկվող տնտեսական գործունեության այլ տեսակներով: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցը հանգում է հետևյալին. արդյո՞ք «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավադրույթը վերաբերում է միայն այն տնտեսվարող սուբյեկտներին, ովքեր իրենց գործունեությունը դադարեցրել են ամբողջ ծավալով և չեն իրականացնում որևէ տնտեսական գործունեություն, թե այդ կանոնը հավասարապես կիրառելի է նաև այն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, ովքեր դադարեցրել են իրենց գործունեության միայն մի մասը:

Վերոգրյալ իրավական խնդրին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավանորմը մեկնաբանել անձի՝ սեփականության և տնտեսական գործունեությամբ զբաղվելու հիմնարար իրավունքների էության և բովանդակության լույսի ներքո:

Այսպես, 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ձևաչափում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու (...) իր սեփականությունը (...):

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 33.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք (...):

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի համա-

ձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք (...):

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վկայակոչված նորմերից հետևում է, որ սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է ինչպես սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային-իրավական նորմերի ուժով:

ՀՀ սահմանադրական դատարանը 30.01.2013 թվականի թիվ ՍԴՌ-1073 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ սեփականության պաշտպանությունն ուղղված սահմանադրական և միջազգային իրավական դրույթները չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար: Նույն որոշմամբ արձանագրելով մի դեպքում սեփականության իրավունքի իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներն ու դրանց կիրառման օրենսդրական շրջանակները, մյուս դեպքում օրենքով սահմանված հարկեր մուծելու՝ անձի սահմանադրական պարտականության կատարման անխուսափելիությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանը կարևորել է վերջինիս իրավակարգավորման այնպիսի միջոցների ու ձևերի սահմանումն ու կիրառումը, որոնց պարագայում իրավունքը չենթարկվի անիրավաչափ (անհամաչափ) սահմանափակման, իսկ օրենքով նախատեսված սահմանափակումները հետապնդեն սահմանադրորեն արդարացված նպատակ և որևէ կերպ չզերազանցեն Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը երաշխավորում է սեփականության իրավունքը: Այն նախատեսում է երեք հստակ կանոններ. առաջին կանոնը սահմանում է գույքից անարգել օգտվելու ընդհանուր սկզբունքը, երկրորդ կանոնը կարգավորում է սեփականությունից գրկելու հետ կապված հարաբերությունները, իսկ երրորդ կանոնը ճանաչում է սեփականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պետության իրավունքը հանրային շա-



հին համապատասխան կամ հարկերի և այլ պարտադիր վճարների գանձումն ապահովելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր նախադեպային իրավունքում ձևավորել է այն դիրքորոշումը, որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված վերոհիշյալ երեք կանոնները սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ. երկրորդ և երրորդ կանոնները առնչվում են գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ թույլատրելի միջամտություններին, հետևաբար պետք է դիտարկվեն առաջին կանոնում նախատեսված ընդհանուր սկզբունքի լույսի ներքո (*յրևն, AGOSI v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 24.10.1986 թվականի վճիռը, կետ 48*):

Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում մեջբերել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության թույլատրելի սահմանների վերաբերյալ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքը, որի համաձայն՝ գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) միջամտությունը նախատեսված է օրենքով,
- 2) միջամտությունը բխում է հանրային շահից,
- 3) միջամտությունը բավարարում է համաչափության պահանջներին:

Այսպես, ըստ Եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին և կարևորագույն պահանջն այն է, որ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը պետք է հիմնված լինի օրենքի վրա. այս պահանջը բխում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկի՝ իրավունքի գերակայության էությունից (*յրևն, The Former King of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, կետ 79*): Հետևաբար առաջին պայմանը ենթադրում է ոչ միայն ներպետական օրենսդրության շրջանակներում սեփականության իրավունքի տվյալ սահմանափակումը նախատեսող օրենքի առկայությունը, այլ նաև այդ օրենքի համապատասխանությունն իրավունքի գերակայության սկզբունքից բխող որոշակի որակական հատկանիշներին (*յրևն, James and others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, կետ 67*):

Սեփականության իրավունքի իրականացման միջամտության իրավաչափության երկրորդ պայմանի համաձայն՝ այդ միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից, որի գնահատման հարցում հանրային իշխանության մարմիններն օժտված են որոշակի հայեցողությամբ (*յրևն, James and others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, կետ 46*):

Սեփականության իրավունքի նկատմամբ միջամտության իրավաչափության երրորդ պայմանը նախատեսում է, որ միջամտությունը պետք է ապահովի արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև (*յրևն, Sporrong and Lönnroth v. Sweden գործով Եվրոպական դատարանի 23.09.1982 թվականի վճիռը, կետ 69*): Մասնավորապես՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի ցանկացած միջամտության դեպքում կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև պետք է գոյություն ունենա համաչափության որոշակի ողջամիտ հարաբերակցություն (*յրևն, Scollo v. Italy գործով Եվրոպական դատարանի 28.09.1995 թվականի վճիռը, կետ 32*): Եվրոպական դատարանի գնահատմամբ նման բարենպաստ հավասարակշռության հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ սեփականության իրավունքի միջամտության պատճառով սեփականատերը ստիպված է կրել անհամաչափ, ավելորդ և չափազանց մեծ ծանրություն (*յրևն, The Former King of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, կետ 89*):

Փաստորեն, Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը պետության ապօ-

րինի միջամտությունից պաշտպանում է յուրաքանչյուրի՝ իր գույքից անարգել օգտվելու հիմնարար իրավունքը, որը կարող է սահմանափակվել նույն հողվածում նշված հետևյալ եղանակներով. սեփականությունից զրկում և սեփականության նկատմամբ վերահսկողություն: Ընդ որում, սեփականության նկատմամբ հանրային իշխանության վերահսկողության ձևերից մեկը հարկերի և մյուս պարտադիր վճարների հավաքագրման ապահովումն է: Նշված բնագավառում պետությունն օժտված է լայն հայեցողության շրջանակներով և իրավասու է սեփական հայեցողությամբ որոշելու իր կողմից իրականացվող հարկային քաղաքականության բովանդակությունը և ուղղությունը, հարկային բեռի չափը, հարկերի գանձման կարգը և այլն: Այնուհանդերձ, ասվածը բոլորովին չի նշանակում, որ հարկերի և այլ պարտադիր վճարների գանձման հարցում պետությունն օժտված է անսահմանափակ հայեցողությամբ:

Այսպես, ըստ Եվրոպական դատարանի՝ հարկերի գանձումն ապահովող ներպետական կարգավորումները պետք է ունենան որչափ ապտճառաբանություն, իսկ սեփականության իրավունքի նկատմամբ ցանկացած միջամտություն, ներառյալ հարկերի վճարումն ապահովելուն ուղղված միջամտությունը, պետք է ապահովի «որչափազատ վասարակշռություն» հասարակության ընդհանուր շահերի և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև: Ըստ այդմ, հարկերի գանձման կառուցակարգը կարող է հակասության մեջ մտնել սեփականության հիմնարար իրավունքի հետ, եթե այն հարկ վճարողի վրա դնում է չափազանց մեծ բեռ կամ էական բացասական ազդեցություն է ունենում վերջինիս ֆինանսական վիճակի վրա (*Ullin, GasusDosier – und Fördertechnik GmbH v. The Netherlands գործով Եվրոպական դատարանի 23.02.1995 թվականի վճիռը, կետեր 60, 62 և 67*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունն առնչվում է ոչ միայն անձի սեփականության իրավունքի, այլ նաև տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի երաշխավորված իրականացման և պաշտպանության անհրաժեշտության հետ: Տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության երաշխավորումը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք, ելակետային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հարաբերությունների կանոնակարգման համար: Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքն է և շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ նախադրյալը:

ՀՀ սահմանադրական դատարանը 25.11.2008 թվականի թիվ ՄԴՌ-780 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելն անձի սահմանադրական իրավունքն է, և որ այդ գործունեության բովանդակությունը (հատկանիշները), իրականացման կարգն ու պայմանները ենթակա են օրենսդրական կարգավորման: Այդ իրավունքը ներառում է բոլոր իրավական հնարավորությունները, որոնք անհատի համար նախապայմաններ են ստեղծում ինքնուրույնաբար որոշումներ ընդունելու իր տնտեսական գործունեությանն առնչվող հարցերով:

Իսկ 18.02.2014 թվականի թիվ ՄԴՌ-1139 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ տնտեսական գործունեության ազատությունն իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն է ապահովում անձանց (տնտեսավարող սուբյեկտների) համար՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքը՝ օրենքով չարգելված տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Միաժամանակ այդ ազատության սկզբունքը բացարձակ չէ և ինչպես պետության, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների առջև դնում է կոնկրետ պարտականություններ: Այսպես, պետության հիմնական գործառույթն է ապահովել այդ ազատության երաշխավորման անհրաժեշտ իրավական և տնտեսական պայմաններ: Մյուս կողմից, տնտեսավարող սուբյեկտների պարտականությունն է իրենց գործունեությունը ծավալել օրենսդրությամբ սահմանված կարգով ու շրջանակներում, այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով ու չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Այն սահմանադրաիրավական պարտականություն է, որը պայմանավորված է հասարակության ու պետության համար

դրա կենսական կարևորությամբ ու նշանակությամբ: Այդ պարտականության պատշաճ կատարման ապահովմանն է անմիջականորեն ուղղված Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը:

Այսպիսով, որպես ելակետ ընդունելով սեփականության և տնտեսական գործունեության գրավելու հիմնարար իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված իրավադրույթը չի կարող մեկնաբանվել այնպես, որ դրանով սահմանված իրավակարգավորումը կիրառելի է բացառապես այն հարկատուների նկատմամբ, ովքեր իրենց գործունեությունը դադարեցրել են ամբողջությամբ: Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, գտնում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված շահութահարկի կանխավճարներ չկատարելու հնարավորությունը հավասարապես կիրառելի է թե՛ իր տնտեսական գործունեությունն ամբողջությամբ դադարեցրած տնտեսվարող սուբյեկտի, թե՛ միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած, այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ:

Նախևառաջ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված շահութահարկի կանխավճարներ չկատարելու հնարավորությունն իր տնտեսական գործունեությունն ամբողջությամբ դադարեցրած տնտեսվարող սուբյեկտի վրա տարածելու, իսկ միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած, սակայն այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի վրա չտարածելու հարկային քաղաքականությունը չի կարող ունենալ որևէ ողջամիտ պատճառաբանություն, քանի որ շահութահարկի կանխավճարներ չկատարելու կառուցակարգի հիմքում ընկած է այն գաղափարը, որ շահութահարկի կանխավճարները հնարավորինս պետք է համապատասխանեն բոլոր տնտեսվարող սուբյեկտների՝ թե՛ նախորդ և թե՛ հաշվետու տարվա գործունեության արդյունքներին: Իսկ այդ կառուցակարգը միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած, սակայն այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների վրա չտարածելու դեպքում շահութահարկի կանխավճարներ կատարելու հարկային պարտավորության մասով առաջանում է ակնհայտ անհավասարություն նշված տնտեսվարող սուբյեկտի և իր տնտեսական գործունեությունն ամբողջությամբ դադարեցրած տնտեսվարող սուբյեկտի միջև: Ընդ որում, այդ անհավասար մոտեցումն արդարացված չէ որևէ օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով, քանի որ օրենքով շահութահարկի կանխավճարներ չկատարելու հնարավորություն նախատեսելու նպատակը դրա կիրառման տիրույթում գտնվող բոլոր տնտեսվարող սուբյեկտներին թե՛ նախորդ և թե՛ հաշվետու տարվա գործունեության արդյունքներին հնարավորինս համապատասխանող հարկային բեռով ծանրաբեռնելն է:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թվականի թիվ ՍԴՈ-881 որոշմամբ արտահայտվել է այն իրավական դիրքորոշումը, որ խտրականության արգելքի սկզբունքի խախտում է հանդիսանում այնպիսի տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից: Իսկ 07.06.2011 թվականի թիվ ՍԴՈ-967 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից դադարեցված գործունեության ծավալը (լրիվ կամ մասնակի) չի կարող համարվել «օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ» «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված շահութահարկի կանխավճարներ չկատարելու կառուցակարգը տարբերակված ձևով կիրառելու համար: Տվյալ իրավահարաբերության շրջանակներում իր տնտեսական գործունեությունն ամբողջությամբ դադարեցրած տն-

տեսվարող սուբյեկտը և միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած, սակայն այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտը գտնվում են մինևս այն իրավիճակում, և վերջիններիս նկատմամբ պետք է դրսևորվի հավասար մոտեցում՝ հնարավորություն ընձեռելով այդ տնտեսվարող սուբյեկտներին չկատարելու շահութահարկի կանխավճարներ՝ յուրաքանչյուրին իր դադարեցրած գործունեության մասով:

Մինևս ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված շահութահարկի կանխավճարներ չկատարելու հնարավորությունն իր տնտեսական գործունեությունն ամբողջությամբ դադարեցրած տնտեսվարող սուբյեկտի վրա տարածելու, իսկ միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած, սակայն այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի վրա չտարածելու հարկային քաղաքականությունը չի ապահովում արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների, մասնավորապես՝ սեփականության և տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքների, պաշտպանության պահանջների միջև: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ շահութահարկի կանխավճարներ չկատարելու կառուցակարգը միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած, սակայն այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ կիրառելի չհամարելու մոտեցման արդյունքում այդ տնտեսվարող սուբյեկտի վրա կարող է դրվել անհամաչափ, ավելորդ և չափազանց մեծ բեռ, որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ վերջինիս ֆինանսական վիճակի վրա: Քննարկվող իրավիճակը կարող է առաջանալ այն դեպքում, երբ նախորդ տարվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ունեցած տնտեսական շրջանառության համեմատ հաշվետու տարում գործունեության մի մասի դադարեցման հետևանքով տվյալ տնտեսվարող սուբյեկտի շրջանառությունն էականորեն նվազել է: Այդ պայմաններում տնտեսվարող սուբյեկտի կողմից նախորդ տարվա տնտեսական գործունեության արդյունքների հիման վրա շահութահարկի կանխավճարներ կատարելը կարող է լուրջ ֆինանսական ռիսկերի հետևանքներ առաջացնել տվյալ տնտեսվարողի համար, կաթվածահար անել վերջինիս գործունեությունը և հանգեցնել ընդհուպ հարկային անհամաչափ բեռի պատճառով տնտեսական գործունեություն իրականացնելու անհնարինություն: Փաստորեն, շահութահարկի կանխավճարներ չկատարելու հնարավորությունը միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցրած, սակայն այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի վրա չտարածելու հարկային քաղաքականությունը Կոնվենցիայի տեսանկյունից ոչ իրավաչափ միջամտություն է տվյալ տնտեսվարող սուբյեկտի սեփականության իրավունքի նկատմամբ, ինչը կարող է հանգեցնել նաև վերջինիս՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի խախտմանը: Այսպիսով, տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների հիմնարար իրավունքների խախտումները բացառելու նպատակով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված կանոնը պետք է մեկնաբանվի և կիրառվի, մասնավորապես, հետևյալ կերպ. այն դեպքում, երբ հարկատուն հարկային մարմին է ներկայացրել հաստատագրված վճարով հարկվող գործունեություն չիրականացնելու (հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն, ապա հայտարարությունը ներկայացնելուց հետո հարկատուն պարտավոր չէ կատարել շահութահարկի կանխավճարներ հաստատագրված վճարով հարկվող դադարեցված գործունեության մասով: Ընդ որում, տնտեսական գործունեությունը միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով դադարեցրած, իսկ մյուս տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտները շարունակում են կրել շահութահարկի գծով կանխավճարներ կատարելու պարտականությունը՝ իրենց կողմից իրականացվող (չդադարեցված) գործունեության մասով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ եթե հարկատուն հարկային մարմին է ներկայացրել հաստատագրված վճարով հարկ-

վող գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն՝ շարունակելով զբաղվել գործունեության այլ տեսակներով, ապա «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով այդ տնտեսվարողը հաշվետու տարվա ընթացքում ազատվում է շահութահարկի գծով կանխավճարներ կատարելու պարտականությունից հաստատագրված վճարով հարկվող դադարեցված գործունեության մասով և պարտավոր չէ կատարել շահութահարկի կանխավճարներ նախորդ տարվա հաստատագրված վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարների հիման վրա:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Տեսչության 13.02.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 103 որոշմամբ Ընկերությունից գանձվել է 474.806.486 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն, որից 469.175.137 ՀՀ դրամն առաջացել է շահութահարկի գծով 2014 թվականի կանխավճարները չվճարելու համար, իսկ 5.631.349 ՀՀ դրամը՝ եկամտային հարկի գծով 2014 թվականի հունիսից մինչև դեկտեմբեր ամիսների հաշվարկների հիման վրա: Իսկ Տեսչության 19.02.2015 թվականի թիվ 029558 որոշմամբ արգելանք է դրվել Ընկերության գույքի և դրամական միջոցների վրա:

Դատարանը մերժել է վերոգրյալ վարչական ակտերը վերացնելու պահանջի մասին Ընկերության հայցը՝ պատճառաբանելով, որ շահութահարկի գծով 2014 թվականի կանխավճարները չվճարելու մասով Ընկերության նկատմամբ հարկային պարտավորության առաջադրումը հիմնավոր է: Այսպես, ըստ Դատարանի՝ Ընկերությունը պարտավոր էր 2014 թվականի ընթացքում կատարել շահութահարկի կանխավճարներ նաև 2013 թվականին իրականացված խաղատնային գործունեության համար հաշվարկված հաստատագրված վճարի մեջ շահութահարկի հաշվարկային մեծության հիման վրա, քանի որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետի իրավակարգավորումը վերաբերում է փայն այն դեպքերին, երբ հարկ վճարողն առհասարակ դադարում է իրականացնել որևէ տեսակի գործունեություն:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Ընկերության վերաքննիչ բողոքը՝ բեկանելով ու փոփոխելով Դատարանի վճիռը, հայցը բավարարել է և վիճարկվող վարչական ակտերը ձանաչել է անվավեր: Նախևառաջ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Տեսչության 13.02.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 103 որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում Տեսչությունը չի ապահովել Ընկերության լսված լինելու իրավունքը, ինչը բավարար է նշված վարչական ակտը և դրա հիման վրա ընդունված Տեսչության 19.02.2015 թվականի թիվ 029558 որոշումն անվավեր ձանաչելու համար: Մինևույն ժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ շահութահարկի գծով 2014 թվականի կանխավճարները չվճարելու մասով Ընկերության նկատմամբ հարկային պարտավորության առաջադրումն իրավաչափ չէ, քանի որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ մասում օգտագործված «գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու)» բառակապակցությունը կարող է վերաբերել ինչպես գործունեությունն ամբողջ ծավալով ժամանակավորապես դադարեցնելուն, այնպես էլ որոշակի առանձնացված տեսակի գործունեություն չիրականացնելուն, այդ տեսակի գործունեությունը դադարեցնելուն: Հետևաբար նշված հոդվածով սահմանված իրավակարգավորումը կիրառելի է նաև Ընկերության նկատմամբ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 2013 թվականի ընթացքում զբաղ-

վել է խաղատան, ինչպես նաև հանրային սննդի կետերի (բար և ռեստորան) կազմակերպմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2014 թվականը գործող խմբագրությամբ 7-րդ հոդվածի «ժգ» կետի համաձայն՝ հաստատագրված վճարի հարկվող օբյեկտ են համարվում գործունեության հետևյալ տեսակները՝ խաղատների գործունեության կազմակերպումը:

Այսպիսով, մինչև 01.01.2014 թվականը Հայաստանի Հանրապետությունում խաղատան կազմակերպումը հանդիսացել է հաստատագրված վճարով հարկվող գործունեություն և Ընկերությունը 2013 թվականի համար խաղատան կազմակերպման գործունեության մասով շահութահարկի փոխարեն վճարել է հաստատագրված վճար: Սակայն 2014 թվականի ընթացքում Ընկերությունն այլևս չի իրականացրել խաղատան կազմակերպման գործունեություն՝ 10.01.2014 թվականին հարկային մարմին ներկայացնելով 01.01.2014 թվականից Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքում գտնվող խաղատան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն: Մինևուն ժամանակ խաղատան կազմակերպումը չի հանդիսացել Ընկերության միակ գործունեությունը, և վերջինս 2014 թվականի ընթացքում զբաղվել է գույքը վարձակալությամբ տալով, խորհրդատվական ծառայությամբ և խաղային տեխնիկայի սպասարկմամբ ու նորոգմամբ: Այսինքն՝ Ընկերությունն ամբողջությամբ չի դադարեցրել իր գործունեությունը:

Փաստորեն, տվյալ դեպքում առկա է այն իրավիճակը, որ 2013 թվականի ընթացքում Ընկերությունը հանդիսացել է հաստատագրված վճար վճարող, սակայն 2014 թվականին դադարեցրել է հաստատագրված վճարով հարկվող իր գործունեությունը՝ շարունակելով զբաղվել հաստատագրված վճարով չհարկվող տնտեսական գործունեության այլ տեսակներով: Վճռաբեկ դատարանի կողմից սույն որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումների համաձայն՝ նման իրավիճակում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով Ընկերությունն ազատվում է 2014 թվականի ընթացքում շահութահարկի կանխավճարներ կատարելու պարտականությունից՝ հաստատագրված վճարով հարկվող դադարեցված գործունեության մասով, և պարտավոր չէ կատարել շահութահարկի կանխավճարներ նախորդ տարվա հաստատագրված վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարների հիման վրա: Այլ կերպ ասած՝ Ընկերությունը, հարկային մարմին ներկայացնելով 01.01.2014 թվականից խաղատան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն, բայց շարունակելով զբաղվել հաստատագրված վճարով չհարկվող գործունեությամբ, ազատվում է 2013 թվականին իրականացված խաղատան կազմակերպման գործունեության համար հաշվարկված հաստատագրված վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարների հիման վրա շահութահարկի կանխավճարներ կատարելու պարտականությունից, քանի որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված շահութահարկի կանխավճարներ չկատարելու հնարավորությունը հավասարապես կիրառելի է նաև իր գործունեությունը միայն հաստատագրված վճարով հարկվող մասով դադարեցրած, իսկ այլ տեսակներով գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ: Հակառակ պարագայում կարող են խախտվել Ընկերության սեփականության և տնտեսական գործունեությամբ զբաղվելու հիմնարար իրավունքները:

Վերոգրյալը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ 2013 թվականին Ընկերությունը զբաղվել է նաև հաստատագրված վճարով հարկվող գործունեությամբ (խաղատների կազմակերպում) և ունեցել է ընդամենը 3.648.539.956 ՀՀ դրամի չափով համախառն եկամուտ, իսկ 2014 թվականի ընթացքում դադարեցրել է հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը՝ շարունակելով զբաղվել այլ գործունեությամբ և ունեցել է ընդամենը 90.132.105 ՀՀ դրամի չափով համախառն եկամուտ: Այսինքն՝ 2014 թվականի ընթացքում Ընկերության համախառն եկամուտն էականորեն նվազել է՝ կազմելով 2013 թվականի նույն ցուցանիշի շուրջ 2,5 տոկոսը: Նշված իրավիճակում հաստատագրված վճարով հարկվող դադարեցված գործունեության մասով 2014 թվականի ընթացքում նախորդ տարվա տնտեսական գործունեության արդյունքների հիման վրա շահութահարկի կանխավճարներ կատարելու պարտականություն ունենալու դեպքում Ընկերությունը

կարող էր կրել անհամաչափ, ավելորդ և չափազանց մեծ բեռ, որը ողջամտորեն կարող էր էական բացասական ազդեցություն ունենալ վերջինիս ֆինանսական վիճակի վրա՝ հանգեցնելով ընդհուպ հարկային անհամաչափ բեռի պատճառով Ընկերության կողմից տնտեսական գործունեություն իրականացնելու անհնարինության:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված՝ «գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու)» բառակապակցությունը Դատարանի կողմից սխալ մեկնաբանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը:

Այսպիսով, առաջնորդվելով շահութահարկի գծով կանխավճարի կատարման պարտականությունից ազատվելու վերաբերյալ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետում նախատեսված հիմքով՝ Ընկերությունը պարտավոր չէր հաշվարկել և կատարել շահութահարկի գծով կանխավճարներ 2014 թվականին դադարեցված խաղատան կազմակերպման գործունեության մասով: Հետևաբար Տեսչության 13.02.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 103 որոշմամբ Ընկերության նկատմամբ շահութահարկի գծով 2014 թվականի կանխավճարները չվճարելու համար 469.175.137 և ՀՀ դրամի չափով լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրումը ոչ իրավաչափ է և այդ մասով սույն գործով վիճարկվող վարչական ակտն ընդունվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետի խախտմամբ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործով վիճարկվող վարչական ակտը՝ դրա ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում Ընկերության լաված լինելու իրավունքի խախտման հիմքով անվավեր ճանաչելուն, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ կապակցությամբ Կոմիտեի վճռաբեկ բողոքը որևէ հիմք կամ հիմնավորում չի պարունակում: Ավելին, Կոմիտեն իր վճռաբեկ բողոքում ընդունել է Ընկերության լաված լինելու իրավունքը Տեսչության կողմից խախտված լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հաստատված է համարում, որ Տեսչության 13.02.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 103 որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը խախտել է այդ վարչական ակտի հասցեատիրոջ՝ Ընկերության լաված լինելու իրավունքը: Այսինքն՝ Տեսչության 13.02.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 103 որոշումը՝ թե՛ շահութահարկի գծով, թե՛ եկամտային հարկի գծով առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունների մասերով, ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի խախտմամբ, ինչն էլ իր հերթին հանգեցրել է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված Ընկերության՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Տեսչության 13.02.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 103 որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է և ենթակա է վերացման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում նաև սույն գործով վիճարկվող մյուս վարչական ակտի՝ Տեսչության 19.02.2015 թվականի «Հարկ վճարողի գույքի (այդ թվում՝ դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա արգելանք դնելու մասին» թիվ 029558 որոշման, անվավերության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումները, քանի որ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտի վերացման պա-

րագայում չի կարող ուժի մեջ մնալ այն վարչական ակտը, որը միտված է ապահովելու տվյալ հարկային պարտավորության կատարումը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, անվավեր ճանաչելով Տեսչության 13.02.2015 թվականի թիվ 103 և 19.02.2015 թվականի թիվ 029558 որոշումները, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

#### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.02.2017 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազորություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազորություններ*



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/2010/05/14  
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան  
Դատավորներ՝ Ա. Աբովյան  
Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ **ՎԳ/2010/05/14**  
**2017թ.**

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈՒՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 20-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազության (այսուհետ՝  
Դատախազություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.04.2016  
թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Մարիամ Բաղայանի ընդդեմ Դատախազության,  
երրորդ անձինք ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական  
հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության՝ Դա-  
տախազության աշխատակազմի ղեկավարի 03.04.2014 թվականի թիվ 6-1396ա գրությու-  
նը վերացնելու և Դատախազությանը 18.03.2010 թվականից երկարամյա ծառայության  
կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելուն կամ կենսաթոշակի  
իրավունքի իրականացումն ապահովելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### **1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Մարիամ Բաղայանը պահանջել է վերացնել Դատախազության  
աշխատակազմի ղեկավարի 03.04.2014 թվականի թիվ 6-1396ա գրությունը և պարտա-  
վորեցնել Դատախազությանն ընդունելու Մարիամ Բաղայանին 18.03.2010 թվականից  
երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ վարչական ակտ կամ  
ապահովել Մարիամ Բաղայանի կենսաթոշակի իրավունքի իրականացումը 18.03.2010  
թվականից:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Դիլանյան) (այսուհետ՝ Դատարան)  
26.03.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.04.2016  
թվականի որոշմամբ Մարիամ Բաղայանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատա-  
րանի 26.03.2015 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճարել բողոք է ներկայացրել Դատախազությունը:  
 Վճարել բողոքի պատասխան է ներկայացրել Մարիամ Բաղայանը:

### **2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին պարբերության «բ» կետը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածը, 146-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Մարիամ Բաղայանի կողմից առաջին դիմումը ներկայացնելու՝ 18.03.2010 թվականի դրությամբ գործող իրավական ակտերը դատախազների իրավական կարգավիճակը կենսաթոշակային հարաբերություններում չեն հավասարեցրել զինծառայողների կարգավիճակին, ինչն իրավացիորեն արձանագրել է Դատարանը, ուստի 18.03.2010 թվականի դրությամբ դատախազների կենսաթոշակային իրավահարաբերությունների նկատմամբ «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը կիրառելի չէ: Հետևաբար Վերաքննիչ դատարանը սխալմամբ է վկայակոչել 18.03.2010 թվականի դրությամբ գործող խմբագրությանը «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավանորմերը և դրանց հիման վրա հանգել է ոչ իրավաչափ եզրակացության, որ այն ժամանակահատվածում, երբ Մարիամ Բաղայանն առաջին անգամ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու խնդրանքով Դատախազության աշխատակազմ դիմում է ներկայացրել երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ էր ընդամենը 8 տարվա զինվորական ծառայության ստաժ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ չի պատճառաբանել, թե 18.03.2010 թվականի դրությամբ գործող խմբագրությանը «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքն ինչ կապ ունի դատախազների թոշակավորման հարաբերությունների հետ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.04.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 26.03.2015 թվականի վճիռին:

### **2.1 Վճարել բողոքի պարասխանի փաստարկները**

Դատախազության կողմից ներկայացված վճարել բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Դատախազության կողմից վկայակոչված կենսաթոշակային իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերի կիրառության հարցերը Դատարանի կողմից չեն պարզվել, չեն հստակեցվել և չեն հիմնավորվել, հետևաբար դրանք հնարավոր է պարզել միայն գործի նոր քննության ժամանակ: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ սույն գործի արդարացի և օբյեկտիվ լուծման համար կարևոր նշանակություն ունեցող հարցերը պարզելու համար այն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Մարիամ Բաղայանի աշխատանքային գրքույկի համաձայն՝ վերջինս ծնվել է 1954 թվականին և 23.07.1997 թվականից մինչև 08.06.2009 թվականն աշխատել է ՀՀ դատախազության համակարգում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

- 23.07.1997 թվականից մինչև 17.10.1997 թվականը՝ ՀՀ դատախազության տնտեսական, սոցիալական և բնապահպանական ոլորտներում օրենքների կատարման վրա հսկող բաժնի ստաժոր-դատախազ,

- 17.10.1997 թվականից մինչև 13.01.1999 թվականը՝ ՀՀ դատախազության տնտեսական, սոցիալական և բնապահպանական ոլորտներում օրենքների կատարման վրա հսկող բաժնի դատախազ,

- 13.01.1999 թվականից մինչև 05.05.2009 թվականը՝ Դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազ,

- 05.05.2009 թվականից մինչև 08.06.2009 թվականը՝ Երևան քաղաքի դատախազության դատախազ (**հատոր 1-ին, գ.թ. 57-64**):

2) Մարիամ Բաղայանի աշխատանքային գործունեության վերաբերյալ քաղվածքի համաձայն՝ վերջինիս ընդհանուր մասնագիտական ստաժը (ծառայությունը ՀՀ դատախազության մարմիններում) կազմում է 11 տարի 10 ամիս 15 օր: Ըստ նույն քաղվածքի՝ Մարիամ Բաղայանը 12.07.2011 թվականին նշանակվել է Երևան քաղաքի դատախազության դատախազ, սակայն պաշտոնում նշանակվելու օրվանից աշխատանքի չի ներկայացել, որի պատճառով ՀՀ գլխավոր դատախազի 12.03.2012 թվականի թիվ 44 հրամանով ազատվել է գրադեցրած պաշտոնից (**հատոր 1-ին, գ.թ. 50**):

3) Դատախազության աշխատակազմի գլխավոր հաշվապահի 28.03.2014 թվականի տեղեկանքի համաձայն՝ Մարիամ Բաղայանը 12.07.2011 թվականից մինչև 12.03.2012 թվականը հրամանագրված է եղել որպես Երևան քաղաքի դատախազության դատախազ, սակայն նշված ժամանակահատվածում նրա համար աշխատավարձ չի հաշվարկվել և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ չեն փոխանցվել (**հատոր 1-ին, գ.թ. 48**):

4) Մարիամ Բաղայանը 18.03.2010 թվականին և 28.12.2012 թվականին դիմումներ է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ կենսաթոշակ նշանակելու խնդրանքով, իսկ 28.02.2014 թվականին՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու խնդրանքով (**հատոր 1-ին, գ.թ. 51, 53, 56**):

5) ՀՀ դատախազությունից կենսաթոշակների նշանակման հանձնաժողովի 28.03.2014 թվականի եզրակացության համաձայն՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու մասին Մարիամ Բաղայանի 28.02.2014 թվականի դիմումը մերժվել է, քանի որ վերջինիս մասնագիտական աշխատանքային ստաժը կազմում է 11 տարի 10 ամիս 15 օր, ինչը չի բավարարում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված զինծառայության ստաժի համար սահմանված պահանջներին: Ընդ որում, 12.07.2011 թվականից մինչև 12.03.2012 թվականն ընկած ժամանակահատվածը չի կարող համարվել աշխատանքային ստաժ՝ համաձայն ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 2 հավելվածի 9-րդ կետի (**հատոր 1-ին, գ.թ. 49**):

6) Դատախազության աշխատակազմի ղեկավարի 03.04.2014 թվականի թիվ 6-1396ա գրության համաձայն՝ Մարիամ Բաղայանը տեղեկացվել է ՀՀ դատախազությունից կենսաթոշակների նշանակման հանձնաժողովի 28.03.2014 թվականի եզրակացության մասին (**հատոր 1-ին, գ.թ. 9**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պայրձառաքանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ դատախազների մոտ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման համար Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում գոյություն ունեցած իրավական նախադրյալների և պայմանների, ինչպես նաև դրանց գոյության ժամանակագրու-

թյան վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցադրմանը, թե ինչ իրավական նախադրյալների, չափանիշների և պայմանների առկայության դեպքում դատարանը կարող է ունենալ երկարամյա ծանայության զինվորական կենսաթոշակի իրավունք՝ փարբեր ժամանակահատվածներում գործող օրենսդրական կարգավորումների համարեքսպում:*

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոչ ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գույքից՝ բացառությամբ ի շահ հանրության՝ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 29.01.2008 թվականի թիվ ՄԴՌ-731 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ ՀՀ Ազգային ժողովին է պատկանում կենսաթոշակների ծավալները և ձևերը, դրանց նշանակման պայմանները և կարգը սահմանելու լիազորությունը: Կենսաթոշակի նշանակման պայմանները բավարարելու դեպքում անձը ձեռք է բերում կենսաթոշակի իրավունք, իսկ պետության վրա դրվում է այդ իրավունքի իրականացումն ապահովելու պարտականություն:

Միևնույն ժամանակ ՀՀ սահմանադրական դատարանը 04.10.2006 թվականի թիվ ՄԴՌ-649 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է:

Կենսաթոշակը, սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է նաև ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հիշատակել, որ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված «գույք» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներ ու շահեր նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ» և հետևաբար նաև «գույք» նույն դրույթի իմաստով: Յուրաքանչյուր գործով պարզաբանման ենթակա հարցն այն է, թե արդյոք, գործի բոլոր հանգամանքներից ելնելով, դիմումատուն ունեցել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութական շահ (յու՛ս, օրինակ, Միսսայանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 23.06.2009 թվականի վճիռը, 55-րդ կետ):

Եվրոպական դատարանը տվել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքը ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (յու՛ն, Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium (17849/91) գործով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը):

Ըստ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել (*տե՛ս, Burdov v. Russia (59498/00) գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, 40-րդ կետը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Եվրոպական դատարանի վերագրյալ իրավական դիրքորոշումները, իր նախկին որոշումներում արձանագրել է, որ կենսաթոշակի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող գույքային իրավունք է (*տե՛ս, Թերեզա Գևորգյանն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության թիվ ՎԴ/5086/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը*):

01.07.1998 թվականին ընդունված, 12.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 01.05.2007 թվականին ուժը կորցրած «Դատախազության մասին» թիվ ՀՕ-245 ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ (...) դատախազների (...) թոշակավորումն իրականացվում է ներքին գործերի մարմիններում ծառայություն անցնող ղեկավար կազմի անձանց համար կիրառվող պայմաններով, նորմերով և կարգով (...):

27.10.1998 թվականին ընդունված և 30.11.1998 թվականին ուժի մեջ մտած «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ (...) զինծառայող են համարվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների (...) համակարգի հրամանատարական և շարքային անձնակազմի ծառայողները:

22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և ներկայումս գործող «Դատախազության մասին» ՀՀ օրենքում օրենսդիրը դատախազի կենսաթոշակի իրավունքի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորել է 56-րդ հոդվածի միջոցով, որն օրենքի ընդունման պահից ի վեր ենթարկվել է մի շարք փոփոխությունների և լրացումների:

Այսպես, 22.02.2007 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ 01.05.2007 թվականից մինչև 09.01.2011 թվականը գործող խմբագրությամբ 56-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունում պետական ծառայողի սոցիալական, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովությունը, իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Թեև 01.07.1998 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրել է 01.05.2007 թվականին, սակայն այդ օրենքի 40-րդ հոդվածի վկայակոչված դրույթը պահպանել է իր ուժը մինչև 09.01.2011 թվականը՝ 22.02.2007 թվականին ընդունված, 01.05.2007 թվականին ուժի մեջ մտած և ներկայումս գործող «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն և ուժը կորցրել է միայն 22.12.2010 թվականին ընդունված ««Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-291-Ն ՀՀ օրենքով: 01.07.1998 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթի գործողությունը շարունակվելու մասին նշել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ 10.02.2010 թվականի թիվ ՄԴՈ-865 որոշմամբ՝ արտահայտելով այն իրավական դիրքորոշումը, որ համակարգային մոտեցում չցուցաբերելով, «Դատախազության մասին» 22.02.2007 թվականի օրենքն ընդունելուց հետո պահպանվել է 1998 թվականի «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի այն դրույթի իրավաբանական ուժը, համաձայն որի՝ «Դատախազների և քննիչների թոշակավորումն իրականացվում է ներքին գործերի մարմիններում ծառայություն անցնող ղեկավար կազմի անձանց համար կիրառվող պայմաններով, նորմերով և կարգով»:

Ընդ որում, 22.02.2007 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի վկայակոչված խմբագրությունների համակարգային վերլուծու-

թյան արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն այդ օրենքով 01.05.2007 թվականից մինչև 09.01.2011 թվականը դատախազի կենսաթոշակի իրավունքի վերաբերյալ որևէ հատուկ իրավակարգավորում չի նախատեսել և սահմանել է, որ այդ հարցը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 01.07.1998 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածով ամրագրված՝ դատախազի կենսաթոշակի իրավունքին վերաբերող դրույթը շարունակել է գործել մինչև 09.01.2011 թվականը:

Փաստորեն, 12.01.1999 թվականից մինչև 09.01.2011 թվականը գործող իրավակարգավորումների համաձայն՝ դատախազի կենսաթոշակի իրավունքի հետ կապված հարաբերությունների վրա տարածվում էին ներքին գործերի մարմինների ղեկավար ծառայողների կենսաթոշակի իրավունքը կարգավորող նորմերով սահմանված պայմանները:

«Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ ներքին գործերի հանրապետական գործադիր մարմինների համակարգի հրամանատարական (ղեկավար) անձնակազմի ծառայողները նշված օրենքի իմաստով համարվում են «զինվորական ծառայողներ»: Իսկ զինվորական ծառայողների զինվորական կենսաթոշակի իրավունքի հետ կապված հասարակական հարաբերությունները 30.11.1998 թվականից մինչև 01.01.2011 թվականը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում կարգավորվել են «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի՝ «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովությունը» վերտառությամբ 2-րդ գլխով, որն ուժը կորցրած է ձանաչվել ««Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 22.10.2010 թվականի թիվ ՀՕ-248-Ն օրենքով:

Այսպիսով, 01.07.1998 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածով, 22.02.2007 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 9-րդ մասով, նույն օրենքի՝ 01.05.2007 թվականից մինչև 09.01.2011 թվականը գործող խմբագրությամբ 56-րդ հոդվածով, 22.12.2010 թվականին ընդունված ««Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-291-Ն ՀՀ օրենքով, «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով և նույն օրենքի՝ 30.11.1998 թվականից մինչև 01.01.2011 թվականը գործող խմբագրությամբ 2-րդ գլխով սահմանված իրավական նորմերի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2010 թվականի թիվ ՄԴՈ-865 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ 12.01.1999 թվականից մինչև 01.01.2011 թվականը դատախազների մոտ կարող էր ծագել երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք՝ ներքին գործերի հանրապետական գործադիր մարմինների համակարգի հրամանատարական (ղեկավար) անձնակազմի զինվորական ծառայողների նմանությամբ և «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով սահմանված պայմանների առկայության դեպքում: Այլ կերպ ասած՝ 12.01.1999 թվականից մինչև 01.01.2011 թվականը գործող իրավակարգավորումների համաձայն՝ դատախազները ևս կարող էին ունենալ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք՝ այնպես, ինչպես Հայաստանի Հանրապետության ներքին գործերի հանրապետական գործադիր մարմինների համակարգի հրամանատարական (ղեկավար) անձնակազմի զինվորական ծառայողները, եթե բավարարում էին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման համար «Ջինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով նախատեսված պայմաններին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործի հիմքում ընկած է Մարիամ Բադայանի և Դատախազության միջև ծագած այնպիսի հանրային-իրավական վեճ, որը վերաբերում է Մարիամ Բադայանի մոտ երկարամյա ծառայության զին-

վորական կենսաթոշակի իրավունքի առկայության կամ բացակայության հարցին: Այսպես, սույն վարչական գործի փաստական կողմի ուսումնասիրությունը վկայում է, որ ըստ Մարիամ Բաղայանի աշխատանքային գրքույկի տվյալների՝ վերջինս ազատվել է դատախազի պաշտոնից 08.06.2009 թվականին և այդ պահի դրությամբ դատախազի պաշտոնում նրա ունեցած ստաժը կազմել է 11 տարի, 10 ամիս և 15 օր:

Մարիամ Բաղայանը 18.03.2010 թվականին և 28.12.2012 թվականին դիմումներ է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ կենսաթոշակ նշանակելու խնդրանքով, իսկ 28.02.2014 թվականին՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու խնդրանքով: Մինչդեռ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու մասին Մարիամ Բաղայանի 28.02.2014 թվականի դիմումը ՀՀ դատախազությունից կենսաթոշակների նշանակման հանձնաժողովի 28.03.2014 թվականի եզրակացությամբ մերժվել է, որի մասին վերջինս տեղեկացել է Դատախազության աշխատակազմի ղեկավարի 03.04.2014 թվականի թիվ 6-1396ա գրությամբ:

Այնուհետև Մարիամ Բաղայանը, ցանկանալով իրացնել իր՝ որպես նախկին դատախազի, երկարամյա ծառայության գինվորական կենսաթոշակի ենթադրյալ իրավունքը, պարտավորեցման հայցով դիմել է վարչական դատարան՝ պահանջելով պարտավորեցնել Դատախազությանը ընդունելու Մարիամ Բաղայանին 18.03.2010 թվականից երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ վարչական ակտ կամ ապահովել Մարիամ Բաղայանի կենսաթոշակի իրավունքի իրականացումը 18.03.2010 թվականից:

Դատարանը մերժել է Մարիամ Բաղայանի պարտավորեցման հայցը՝ պատճառաբանելով, որ այն ժամանակահատվածում, երբ երկարամյա ծառայության գինվորական կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ էր ընդամենը 8 տարվա գինվորական ծառայության ստաժ, դատախազները կենսաթոշակային հարաբերություններում դեռ չէին հավասարեցվել գինծառայողներին: Իսկ այն ժամանակ, երբ դատախազները կենսաթոշակի իրավունքի հետ կապված հարաբերություններում հավասարեցվել են գինվորական ծառայողներին, այդ պահին արդեն անհրաժեշտ է եղել ոչ թե 8 տարվա, այլ ամսվազն 12 օրացուցային տարվա և 6 օրացուցային ամսվա աշխատանքային ստաժ, որը Մարիամ Բաղայանը չունի:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Մարիամ Բաղայանի վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի վճիռը և գործն ուղարկել է նոր քննության: Վերաքննիչ դատարանը որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Մարիամ Բաղայանի կողմից երկարամյա ծառայության գինվորական կենսաթոշակ ստանալու վերաբերյալ առաջին դիմումը ներկայացնելու պահին՝ 18.03.2010 թվականին, երկարամյա ծառայության գինվորական կենսաթոշակ նշանակելու համար պահանջվել է 8 տարվա գինվորական ծառայության ստաժ, իսկ մյուս դիմումները ներկայացնելու ժամանակ՝ 12 օրացուցային տարվա և 6 օրացուցային ամսվա ստաժ: Հետևաբար, ըստ Վերաքննիչ դատարանի եզրահանգման, հայցվող վարչական ակտի իրավաչափության նախադրյալների առկայության հարցը լուծելու համար անհրաժեշտ է պարզել Մարիամ Բաղայանի երկարամյա ծառայության «կենսաթոշակի իրավունքի» և «կենսաթոշակ ստանալու իրավունքի» ծագման պահը և ըստ այդմ՝ համապատասխան իրավական ակտերի կիրառելիության հարցը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, արձանագրում է հետևյալը.

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը կապված է որոշակի հանգամանքների հետ, որոնց օրենքը տալիս է իրավական նշանակություն (իրավաբանական փաստեր): Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ օրենսդիրը տարանջատել է «կենսաթոշակի իրավունք» և «կենսաթոշակ ստանալու իրավունք» հասկացությունները: Ընդ որում, դրանցից յուրաքանչյուրի ծագման համար նախատեսվել են տարբեր իրավաբանական փաստեր: Մասնավորապես՝ կենսաթոշակի իրավունքը ծագում է օրենքով նախատեսված որոշակի պայմանների առ-

կայության դեպքում, իսկ կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ կենսաթոշակի իրավունքի առկայությամբ պայմանավորված՝ համապատասխան մարմին սահմանված կարգով դիմելու պարագայում: ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է նաև, որ երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքը այդպիսի կենսաթոշակի իրավունք ունեցող անձի մոտ ծագում է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնին դիմելու հիմքով կենսաթոշակ նշանակելու պարագայում: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի, թե նախկին («Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք), թե ներկա («Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք) կարգավորումներով երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագումն օրենսդիրը պայմանավորել է զինվորական ծառայությունից անձին արձակելու հետ (տես, *Արարատ Ափոյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության թիվ ՎԴ/6690/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը նախևառաջ գտնում է, որ Մարիամ Բաղայանի՝ որպես նախկին դատախազի մոտ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի ենթադրյալ իրավունքի առկայության կամ բացակայության հարցը պետք է պարզվի՝ հիմք ընդունելով դատախազի պաշտոնից Մարիամ Բաղայանի ազատվելու պահին, այսինքն՝ 08.06.2009 թվականին գործող օրենսդրությունը: Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ 08.06.2009 թվականին Մարիամ Բաղայանը՝ որպես պաշտոնաթող դատախազ, կարող էր ունենալ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք՝ այնպես, ինչպես Հայաստանի Հանրապետության ներքին գործերի հանրապետական գործադիր մարմինների համակարգի հրամանատարական (ղեկավար) անձնակազմի զինվորական ծառայողները, եթե բավարարում էր երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման համար 08.06.2009 թվականին գործող խմբագրությամբ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով նախատեսված պայմաններին:

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխի՝ 08.06.2009 թվականին գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի համաձայն՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքից օգտվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր մարմիններում ծառայությունը կարգավորող օրենքներով սահմանված կարգով և ժամկետներով զինվորական ծառայություն անցած այն զինծառայողները, ովքեր՝

ա) ծառայությունից սահմանված կարգով արձակվելու պահին ունեն առնվազն 20 տարվա զինվորական ծառայության ընդհանուր ժամկետ (ստաժ):

բ) տարիքի կամ առողջական վիճակի կամ հաստիքների կրճատման պատճառով զինվորական ծառայությունից արձակվելու պահին առնվազն 50 տարեկան են և ունեն 25 և ավելի տարվա ընդհանուր աշխատանքային (ապահովագրական) ստաժ, որում զինվորական ծառայության ընդհանուր ժամկետը (ստաժը) կազմում է առնվազն 8 տարի (...):

Վերոգրյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը, իրացնելով կենսաթոշակների ծավալները և ձևերը, դրանց նշանակման պայմանները և կարգը սահմանելու իր լիազորությունը, 08.06.2009 թվականին գործող խմբագրությամբ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում ամրագրել էր, որ համապատասխան զինվորական ծառայողի մոտ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման երկու առանձին դեպքեր, որոնցից առաջինը գործում էր հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում.

- տվյալ զինվորական ծառայողը սահմանված կարգով արձակվել է ծառայությունից,

- ծառայությունից արձակվելու պահին տվյալ զինվորական ծառայողն ունի առնվազն 20 տարվա զինվորական ծառայության ընդհանուր ժամկետ (ստաժ):

Իսկ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման



երկրորդ դեպքը գործում էր հետևյալ չորս պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում.

- տվյալ զինվորական ծառայողն արձակվել է ծառայությունից տարիքի կամ առողջական վիճակի կամ հաստիքների կրճատման պատճառով,
- ծառայությունից արձակվելու պահին տվյալ զինվորական ծառայողն առնվազն 50 տարեկան է,
- ծառայությունից արձակվելու պահին տվյալ զինվորական ծառայողն ունի առնվազն 25 տարվա ընդհանուր աշխատանքային (ապահովագրական) ստաժ,
- ծառայությունից արձակվելու պահին տվյալ զինվորական ծառայողի աշխատանքային (ապահովագրական) ստաժում զինվորական ծառայության ընդհանուր ժամկետը (ստաժը) կազմում է առնվազն 8 տարի:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մարիամ Բաղայանի մոտ 08.06.2009 թվականին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի առկայության կամ բացակայության հարցը լուծելու համար անհրաժեշտ է պարզել 08.06.2009 թվականին գործող խմբագրությամբ «Քինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով նախատեսված վերոգրյալ պայմանների առկայությունը կամ բացակայությունը: Այլ կերպ ասած, Մարիամ Բաղայանը 08.06.2009 թվականին կարող է ունենալ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք միայն այն դեպքում, երբ 08.06.2009 թվականի դրությամբ վերջինիս մոտ առկա լինեին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման վերոգրյալ դեպքերից որևէ մեկով նախատեսված բոլոր պայմանները:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերում առկա են տվյալներ այն մասին, որ Մարիամ Բաղայանը 08.06.2009 թվականից հետո կրկին պաշտոնավարել է որպես դատախազ, այս անգամ արդեն՝ 12.07.2011 թվականից մինչև 12.03.2012 թվականը: Մարիամ Բաղայանի կողմից դատախազի պաշտոնից վերջին անգամ ազատվելու պահին՝ 12.03.2012 թվականին, օրենսդիրը դատախազների կենսաթոշակի իրավունքի հետ կապված հատուկ իրավակարգավորումներ էր նախատեսել 22.02.2007 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքում:

Այսպես, 22.02.2007 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ 09.01.2011 թվականից մինչև 01.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված՝ դատախազի պաշտոն զբաղեցնող անձի կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ 2-րդ մասի համաձայն՝ մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված՝ դատախազի պաշտոն զբաղեցնող անձի կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է զինծառայողների համար սահմանված կարգով (...):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ 22.02.2007 թվականին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ 09.01.2011 թվականից մինչև 01.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 56-րդ հոդվածի վկայակոչված իրավադրոյթների բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը 09.01.2011 թվականից մինչև 01.07.2014 թվականը դատախազի կենսաթոշակի իրավունքի հետ կապված հարաբերությունները կարգավորվել է հետևյալ կերպ.

1) 01.01.1974 թվականին և դրանից հետո ծնված դատախազի կենսաթոշակային ապահովությունն իրականացվում էր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2) մինչև 01.01.1974 թվականը ծնված դատախազի կենսաթոշակային ապահովությունն իրականացվում էր զինծառայողների համար սահմանված կարգով:

Այսինքն՝ 09.01.2011 թվականից մինչև 01.07.2014 թվականն ընկած ժամանակահատվածում այն դատախազների կենսաթոշակի իրավունքը, որոնք ծնվել են մինչև 01.01.1974 թվականը, հավասարեցված էր զինծառայողների կենսաթոշակի իրավունքին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես 09.01.2011 թվականից մինչև 01.07.2014 թվականն ընկած ժամանակահատվածում, այնպես էլ ներկայումս զինվո-

րական ծառայողների կենսաթոշակի հետ կապված հարաբերությունները կարգավորվում էին (են) 22.12.2010 թվականին ընդունված և 01.01.2011 թվականից ուժի մեջ մտած «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, որը սահմանում է զինվորական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ հաշվարկելու, նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը:

Այսպես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ է նշանակվում համապատասխան մարմիններում (...) ծառայությունը կարգավորող օրենքներով սահմանված կարգով և ժամկետներով ծառայած այն անձին (...), որը՝

1) զինվորական ծառայությունից (...) սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ:

2) սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ կամ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ (սահմանային տարիքը լրացած լինելու դեպքում) զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս:

3) հաստիքների կրճատման կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ առնվազն 45 տարեկան է և ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս:

Փաստորեն, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրույթը նախատեսում է զինծառայողի մոտ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման երեք առանձին դեպքեր, որոնցից առաջինը գործում է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում.

- տվյալ զինծառայողը սահմանված կարգով արձակվել է զինվորական ծառայությունից,

- զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ տվյալ զինծառայողն ունի առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ:

Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված երրորդ դեպքը գործում է հետևյալ երեք պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում.

- տվյալ զինծառայողը սահմանված կարգով արձակվել է զինվորական ծառայությունից սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ կամ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ (սահմանային տարիքը լրացած լինելու դեպքում),

- զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ տվյալ զինծառայողն ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ,

- ծառայությունից արձակվելու պահին տվյալ զինվորական ծառայողի աշխատանքային ստաժում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս:

Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված երրորդ դեպքը գործում է հետևյալ չորս պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում.

- տվյալ զինվորական ծառայողն արձակվել է ծառայությունից հաստիքների կրճատման կամ առողջական վիճակի պատճառով,

- ծառայությունից արձակվելու պահին տվյալ զինվորական ծառայողն առնվազն 45 տարեկան է,

- ծառայությունից արձակվելու պահին տվյալ զինվորական ծառայողն ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ,

- ծառայությունից արձակվելու պահին տվյալ զինվորական ծառայողի աշխատանքային ստաժում զինվորական ծառայության ստաժը կազմում է 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մարիամ Բաղայանի՝ որպես մինչև 01.01.1974 թվականը ծնված դատախազի (ծնվել է 1954 թվականին) մոտ 12.03.2012 թվականին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի առկայության կամ բացակայության հարցը լուծելու համար անհրաժեշտ է պարզել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված վերոգրյալ պայմանների առկայությունը կամ բացակայությունը: Այլ կերպ ասած, Մարիամ Բաղայանը 12.03.2012 թվականին կարող է ունենալ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք միայն այն դեպքում, եթե 12.03.2012 թվականի դրությամբ վերջինս բավարարեր երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման վերոգրյալ դեպքերից որևէ մեկով նախատեսված բոլոր պայմաններին և չափանիշներին:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևյալին.

1) Մարիամ Բաղայանի՝ թե՛ առաջին (08.06.2009 թվական), թե՛ երկրորդ (12.03.2012 թվական) անգամ դատախազի պաշտոնից ազատվելու պահին գործող օրենսդրության տեսանկյունից դատախազների կենսաթոշակի իրավունքը հավասարեցված էր զինվորական ծառայողների կենսաթոշակի իրավունքին,

2) Մարիամ Բաղայանի՝ առաջին անգամ դատախազի պաշտոնից ազատվելու պահին՝ 08.06.2009 թվականի դրությամբ վերջինիս մոտ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի առկայության կամ բացակայության հարցը պայմանավորված է այն հանգամանքով, թե՛ արդյոք Մարիամ Բաղայանը 08.06.2009 թվականին բավարարել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման համար 08.06.2009 թվականին գործող խմբագրությամբ «Ջինսառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով նախատեսված և սույն որոշմամբ նկարագրված պահանջներին, թե՛ ոչ:

3) Մարիամ Բաղայանի՝ երկրորդ անգամ դատախազի պաշտոնից ազատվելու պահին՝ 12.03.2012 թվականի դրությամբ վերջինիս մոտ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի առկայության կամ բացակայության հարցը պայմանավորված է այն հանգամանքով, թե՛ արդյոք Մարիամ Բաղայանը 12.03.2012 թվականին բավարարել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման համար «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված և սույն որոշմամբ նկարագրված պահանջներին, թե՛ ոչ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցը՝ Մարիամ Բաղայանի մոտ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի առկայությունը կամ բացակայությունը, լուծելու համար Դատարանը նախևառաջ պարտավոր էր պարզել, թե՛ Մարիամ Բաղայանի մոտ երբ կարող էր ծագել երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք՝ 08.06.2009 թվականին, թե՛ 12.03.2012 թվականին: Այնուհետև Դատարանը պարտավոր էր անդրադառնալ այն հարցին, թե՛ արդյոք Մարիամ Բաղայանը համապատասխանում է 08.06.2009 թվականին կամ 12.03.2012 թվականին գործող օրենսդրությամբ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագման համար անհրաժեշտ պարտադիր պայմաններին ու չափանիշներին, թե՛ ոչ: Միայն վերոգրյալ հանգամանքները բացահայտելուց հետո Դատարանը կարող էր վճիռ կայացնել Մարիամ Բաղայանի պարտավորեցման հայցը՝ իրեն երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն Դատախազությանը պարտավորեցնելու պահանջի մասին, բավարարելու կամ մերժելու վերաբերյալ:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու միջոցով վերոգրյալ հարցերը պարզելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն գործը նոր քննության ուղարկելով, ձիշտ չի որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող և նոր քննության ընթացքում բացահայտման ենթակա հարցերի շրջանակը՝

բավարարվելով միայն Մարիամ Բաղայանի երկարամյա ծառայության «կենսաթոշակի իրավունքի» և «կենսաթոշակ ստանալու իրավունքի» ծագման պահը վերհանելու անհրաժեշտության վերաբերյալ ընդհանրական դատողություններով:

*Վերը նշված պարձառաքանություններով հաստատվում են վճարել բողոքի պատասխանում նշված փաստարկները:*

Անփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճարել դատարանը գտնում է, որ վճարել բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը և գործը նոր քննության ուղարկելով, կայացրել է ճիշտ դատական ակտ: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճարել դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճարել դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

### **5. Վճարել դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճարել դատարանը, նկատի ունենալով այն, որ վճարել բողոքը ենթակա է մերժման, որպիսի պարագայում գործը, Վերաքննիչ դատարանի որոշման ուժով ենթակա է նոր քննության, գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը, ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճարել դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճարել բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.04.2016 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/2731/05/13  
Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան  
Դատավորներ՝ Ա. Աբովյան  
Ս. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԳ/2731/05/13  
**2017թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Մ. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լուսիկ Պետրոսյանի ներկայացուցիչ Վա-  
րդգես Ծառուկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 22.02.2017  
թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Աշոտ Ուլիխանյանի ընդդեմ Երևան համայնքի, եր-  
րորդ անձինք Լուսիկ Պետրոսյանի, «Բաբայան ԼԱՏ նախագիծ» ՍՊԸ-ի, ՀՀ կառավարու-  
թյանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ Երևանի քաղաքապե-  
տի կողմից 06.06.2012 թվականին տրամադրված թիվ 01/18-Պ-190-415 շինարարության  
թույլտվությունն անվավեր ճանաչելու, իրավունքի խախտումը վերացնելու նպատակով  
Լուսիկ Պետրոսյանին Երևանի Սոսկովյան փողոցի թիվ 8 շենքի 38-րդ և 39-րդ բնակա-  
րանների ձեռնհարկը քանդելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Աշոտ Ուլիխանյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի  
քաղաքապետի կողմից 06.06.2012 թվականին տրամադրված թիվ 01/18-Պ-190-415 շինա-  
րարության թույլտվությունը և պարտավորեցնել Լուսիկ Պետրոսյանին Երևանի Սոսկո-  
վյան փողոցի թիվ 8 շենքի 38-րդ և 39-րդ բնակարանների ձեռնհարկը քանդելուն:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան)  
25.01.2016 թվականի «Գործի վարույթը կարճելու մասին» որոշմամբ սույն գործի վարույ-  
թը կարճվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.02.2017

թվականի որոշմամբ Աշոտ Ուլիխանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 25.01.2016 թվականի «Գործի վարույթը կարճելու մասին» որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լուսիկ Պետրոսյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 54-րդ և 96-րդ հոդվածները:*

*Բողոքը երաժանված պնդումներ պարձառաբանել է հերկյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Լուսիկ Պետրոսյանի ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել Դատարանին սույն վարչական գործի վարույթը կարճելու մասին: Այդ միջնորդության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ հայցվորը վիճարկվող վարչական ակտի մասին իմացել է առնվազն 26.12.2012 թվականին, իսկ առաջին անգամ հայց ներկայացրել է միայն 13.04.2013 թվականին: Այսինքն՝ Աշոտ Ուլիխանյանը բաց է թողել վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը: Նշված միջնորդությունը ստանալուց հետո Դատարանը հայցվոր կողմին ժամանակ է տրամադրել այդ միջնորդության վերաբերյալ դիրքորոշում հայտնելու նպատակով: Ընդ որում, այդ դիրքորոշումը կարող էր արտահայտվել նաև բաց թողնված ժամկետի վերականգնման միջնորդության տեսքով: Սակայն հայցվոր կողմը չի ներկայացրել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն և արտահայտել է այն դիրքորոշումը, որ Աշոտ Ուլիխանյանը վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացել է միայն 19.02.2013 թվականին և դատարանն դիմելու ժամկետը բաց չի թողել:

Հետևաբար Դատարանը կատարել է իր մատնանշման պարտականությունը, իսկ սույն վարչական գործի վարույթը ենթակա էր կարճման, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.02.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 25.01.2016 թվականի «Գործի վարույթը կարճելու մասին» որոշմանը:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետի կողմից 06.06.2012 թվականին Լուսիկ Պետրոսյանին տրված թիվ 01/18-Պ-190-415 շինարարության թույլտվության համաձայն՝ վերջինիս թույլատրվել է կատարել Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի թիվ 8 շենքի 38-րդ և 39-րդ բնակարանների ներքին տարածքի վերահատակագծման և ձեղնահարկի վերակառուցման շինարարական աշխատանքներ (**հատոր 2-րդ, գ.թ. 16**):

2. Աշոտ Ուլիխանյանը Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի թիվ 8 շենքի 46-րդ բնակարանի սեփականատերն է (**հատոր 1-ին, գ.թ. 29-30**):

3. 26.12.2012 թվականին Երևանի քաղաքապետին հասցեագրված հարցման համաձայն՝ Աշոտ Ուլիխանյանի ներկայացուցիչ փաստաբան Տիգրան Խուրշուդյանը նշել է, մասնավորապես հետևյալը. «(...) Երևանի քաղաքապետարանի համապատասխան վարչության կողմից (...) 06.06.2012 թվականին Լուսիկ Պետրոսյանի անվամբ ցրվել է բնակարանի ներքին տարածքի և ձեղնահարկի վերակառուցման թիվ 01/18-Պ-190-415 շինարարության թույլտվությունը (...)» (**հատոր 4-րդ, գ.թ. 75**):

4. Երևանի քաղաքապետարանի 19.02.2013 թվականի թիվ 18-06/2-62718 գրության համաձայն՝ Մոսկովյան փողոցի թիվ 8 շենքի 38-րդ և 39-րդ բնակարանների վերահատակագծման և ձեղնահարկի վերակառուցման շինարարական աշխատանքներն իրա-

կանացվել են, ի թիվս այնի, նաև 06.06.2012 թվականին Լուսիկ Պետրոսյանին տրված թիվ 01/18-Պ-190-145 շինարարության թույլտվության համաձայն (**հատոր 1-ին, գ.թ. 10**):

5. Աշոտ Ուլիխանյանը 13.04.2013 թվականին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով (1) *ձանաչել Երևանի քաղաքապետի կողմից 06.06.2012 թվականին փրամադրված թիվ 01/18-Պ-190-415 շինարարության թույլտվության առ ոչինչ լինելը կամ* (2) *անվավեր ձանաչել Երևանի քաղաքապետի կողմից 06.06.2012 թվականին փրամադրված թիվ 01/18-Պ-190-415 շինարարության թույլտվությունը, և* (3) *պարտավորեցնել Լուսիկ Պետրոսյանին քանդել Երևանի Մոսկովյան փողոցի թիվ 8 շենքի 38-րդ և 39-րդ բնակարանների ձեղնահարկը* (**հատոր 1-ին, գ.թ. 4-6**):

6. Դատարանի 18.04.2013 թվականի որոշմամբ Աշոտ Ուլիխանյանի հայցադիմումը վերադարձվել է՝ հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները դատավարության մասնակիցներին ուղարկված չլինելու հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 16-17, հատոր 4-րդ, գ.թ. 112-113**):

7. Աշոտ Ուլիխանյանը 23.04.2013 թվականին կրկին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով (1) *ձանաչել Երևանի քաղաքապետի կողմից 06.06.2012 թվականին փրամադրված թիվ 01/18-Պ-190-415 շինարարության թույլտվության առ ոչինչ լինելը, և* (3) *պարտավորեցնել Լուսիկ Պետրոսյանին քանդել Երևանի Մոսկովյան փողոցի թիվ 8 շենքի 38-րդ և 39-րդ բնակարանների ձեղնահարկը* (**հատոր 1-ին, գ.թ. 24-27**):

8. Դատարանի 29.04.2013 թվականի որոշմամբ Աշոտ Ուլիխանյանի հայցադիմումն ընդունվել է վարույթ (**հատոր 1-ին, գ.թ. 41, հատոր 4-րդ, գ.թ. 114-116**):

9. 19.09.2013 թվականին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում Աշոտ Ուլիխանյանի ներկայացուցիչը կատարել է հայցի առարկայի փոփոխություն՝ խնդրելով քննել միայն (2) *«անվավեր ձանաչել Երևանի քաղաքապետի կողմից 06.06.2012 թվականին փրամադրված թիվ 01/18-Պ-190-415 շինարարության թույլտվությունը»* հայցապահանջը՝ հրաժարվելով (1) *նույն վարչական ակտի առ ոչինչ լինելը ձանաչելու* հայցապահանջից: Աշոտ Ուլիխանյանի ներկայացուցիչը միաժամանակ հայտնել է, որ վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացել է Երևանի քաղաքապետարանի 19.02.2013 թվականի թիվ 18-06/2-62718 գրությունից, իսկ հայցադիմումը ներկայացվել է 13.04.2013 թվականին, այսինքն՝ օրենքով սահմանված դատավարական ժամկետները պահպանվել են: Հայցի առարկայի նշված փոփոխությունը թույլատրվել է Դատարանի 19.09.2013 թվականի արձանագրային որոշմամբ (**հատոր 3-րդ, գ.թ. 61-64, 66**):

10. Սույն գործով երրորդ անձ Լուսիկ Պետրոսյանի ներկայացուցչի կողմից 14.12.2015 թվականին ՀՀ վարչական դատարան է ներկայացվել վիճարկման հայցով դատարան դիմելու համար օրենքով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնված լինելու հիմքով սույն վարչական գործի վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդություն: Նշված միջնորդությամբ երրորդ անձ Լուսիկ Պետրոսյանի ներկայացուցչին Աշոտ Ուլիխանյանի կողմից վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի բացթողումը հիմնավորել է այն փաստարկով, որ 26.12.2012 թվականին Երևանի քաղաքապետին ուղղված հարցման բովանդակությունից հետևում է, որ Աշոտ Ուլիխանյանի ներկայացուցիչը վիճարկվող շինարարության թույլտվության առկայության մասին ոչ թե տեղեկացել է 13.04.2013 թվականին, այլ տեղյակ է եղել դրա գոյության մասին դեռևս 26.12.2012 թվականի դրությամբ (**հատոր 4-րդ, գ.թ. 72-74**):

11. 14.12.2015 թվականին տեղի ունեցած դատական նիստի ժամանակ նախագահող դատավորը որոշել է հետաձգել գործի քննությունը մինչև 24.12.2015 թվականը՝ հայցվորին հնարավորություն տալով դիրքորոշում ներկայացնել երրորդ անձ Լուսիկ Պետրոսյանի ներկայացուցչի միջնորդության վերաբերյալ: Իսկ 24.12.2015 թվականին տեղի ունեցած դատական նիստի ժամանակ նախագահող դատավորը որոշել է մինչև 28.12.2015 թվականը ժամանակ տրամադրել հայցվոր Աշոտ Ուլիխանյանի ներկայացուցչին՝ գործի վարույթը կարճելու մասին երրորդ անձ Լուսիկ Պետրոսյանի ներկայացուցչի կողմից ներկայացված միջնորդության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու համար (**դատական նիստի արձանագրություն, հատոր 4-րդ, գ.թ. 79-80, 93-95, 109**):

12.18.01.2016 թվականին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում հայցվոր Աշոտ Ուլիխանյանի ներկայացուցիչ փաստաբան Տիգրան Խուրշուդյանը ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով, մասնավորապես նշել է, որ «(...) վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջը ներկայացվել է ՀՀ վարչական դատարարության օրենսգրքով սահմանված դատարարական ժամկետների պահպանմամբ (...)» (հատոր 4-րդ, գ.թ. 102-103):

#### 4. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վիճարկման հայց ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդության բացակայության պայմաններում հայց ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը լրանալու հիմքով վարչական գործի վարույթը կարճելու իրավաչափության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. կարո՞ղ է արդյոք դատարանը կարճել գործի վարույթը վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը լրանալու հիմքով այն պայմաններում, երբ հայցվոր կողմը չի ներկայացրել դատարան դիմելու համար օրենքով սահմանված և բաց թողնված դատարարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն:*

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման իրավադրույթներ են նախատեսված նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցադիմումը Դատա-



րան ներկայացնելու ժամանակահատվածում գործել է 28.11.2007 թվականին ընդունված, 01.01.2008 թվականից ուժի մեջ մտած և 07.01.2014 թվականին ուժը կորցրած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը, իսկ գործի վարույթը կարճվել է 05.12.2013 թվականին ընդունված, 07.01.2014 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

Մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից (...):

Նույնաբովանդակ իրավակարգավորումներ են սահմանված նաև 07.01.2014 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ, 66-րդ և 72-րդ հոդվածներով:

Մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո գործին մասնակցող անձինք կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը:

Մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

07.01.2014 թվականից գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

07.01.2014 թվականից գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե լրացել է հայց ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՌ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՌ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՌ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՌ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՌ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՌ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության,

արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարանի դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրվել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարանի դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարանի դիմելու իրավունքը չի ապահովվում (*յրևն, Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*): Այնուամենայնիվ Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*յրևն, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, կետ 59*): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*յրևն, Khalafou v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, կետ 36*): Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ձկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*յրևն, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կետ 28*):

Անդրադառնալով դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումներին՝ Եվրոպական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ներպետական օրենսդրությամբ սահմանված այդպիսի սահմանափակումները հետապնդում

են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից: Ըստ Եվրոպական դատարանի՝ նմանատիպ հայցերի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել հեռավոր անցյալում տեղի ունեցած իրադարձություններ այնպիսի ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Եվրոպական դատարանը գտել է, որ ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*յրեն, Stubbings and others v. The United Kingdom (22083/93;22095/93) գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետեր 51 և 55*):

Օրենսդիրը թե՛ նախկինում, թե՛ ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերով սահմանել է, որ վարչական դատարանում գործի հարուցման հիմքը՝ համապատասխան հայցն է՝ միաժամանակ ամրագրելով այն ժամկետները, որոնց ընթացքում հայցը կարող է ներկայացվել վարչական դատարան: Ընդ որում, օրենսդիրը հատուկ նախատեսել է բաց թողնված դատավարական, այդ թվում նաև՝ հայց ներկայացնելու ժամկետները վերականգնելու իրավական հնարավորություն՝ համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերի համար ամրագրել, որ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Այսպիսով, օրենքով սահմանված դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը պետք է մեկնաբանվեն և կիրառվեն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված վերոգրյալ հիմնարար իրավունքների լույսի ներքո:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի կիրառելիության և բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնման հարցին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքը թողնելով դատարանների գնահատմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ, երբ ֆիզիկական անձը գրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից երկարատև հիվանդության պատճառով:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտա-

վոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարությանը մասնակցելու և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետները (*լրեն, օրինակ, Ժաննա Միրզոյանն ընդդեմ ՀՀ Կուրայքի մարզի Ձորաղբյուր համայնքի ղեկավարի թիվ ՎԳ/0100/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 31.07.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնն («ex officio»): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ձշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի վկայակոչված իրավադրոյթների համալիր վերլուծությունից բխում է, որ դատավարական ժամկետները բաց թողնելու և վերականգնելու մասին իրավակարգավորումները վերաբերում են ոչ միայն հայցադիմումի ընդունելիության, այլև վարչական դատավարության մյուս փուլերին: Ըստ այդմ, վարչական դատավարության բոլոր փուլերում վարչական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի իրավակարգավորմանը համապատասխան պարտավոր է կատարել մատնանշման իր պարտականությունը, այդ թվում նաև՝ մատնանշելով կողմերին դատավարական ժամկետների բացթողնման դեպքում դրանք վերականգնելու նպատակով միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ: Այնուամենայնիվ, եթե դատավարության որոշակի փուլում վարչական դատարանը մատնանշման իր պարտականությունը չի կատարել, ապա նա զրկված չէ իր այդ պարտականությունը կատարելու հնարավորությունից դատավարության հետագա փուլերում՝ գործին մասնակցող անձանց միջնորդությունների և ներկայացրած նոր ապացույցների հիման վրա, իսկ այդ պարտականության կատարման պարագայում դատավարության մասնակցի կողմից բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելու դեպքում կիրառվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական հետևանքը, այն է՝ դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը:

Սույն գործի փաստական հանգամանքներից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Աշոտ Ուլիխանյանը Երևանի քաղաքապետի կողմից 06.06.2012 թվականին տրամադրված թիվ 01/18-Պ-190-415 շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջով դատարան է դիմել 13.04.2013 թվականին, այսինքն՝ բաց է թողել մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը: Սակայն Աշոտ Ուլիխանյանը, գտնելով, որ վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը բաց չի թողնվել, չի ներկայացրել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ հայտնելով, որ վիճարկվող վարչական ակտի մասին ինքը տեղեկացել է Երևանի քաղաքապետարանի 19.02.2013 թվականի թիվ 18-06/2-62718 գրությունից:

Դատարանը վերադարձրել է Աշոտ Ուլիխանյանի հայցադիմումը՝ հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները դատավարության մասնակիցներին ուղարկելու մասին ապացույցների բացակայության հիմքով: Այնուհետև Աշոտ Ուլիխանյանը դատարան է ներկայացրել նոր հայցադիմում՝ պահանջելով ճանաչել Երևանի քաղաքապետի կողմից 06.06.2012 թվականին տրամադրված թիվ 01/18-Պ-190-415 շինարարության թույլտ-

վության առ ոչինչ լինելը: Իսկ Դատարանի 29.04.2013 թվականի որոշմամբ Աշոտ Ուլիխանյանի հայցադիմումն ընդունվել է վարույթ:

19.09.2013 թվականին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում Աշոտ Ուլիխանյանի ներկայացուցիչը կատարել է հայցի առարկայի փոփոխություն՝ խնդրելով քննել միայն «անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի կողմից 06.06.2012 թվականին տրամադրված թիվ 01/18-Պ-190-415 շինարարության թույլտվությունը» հայցապահանջը՝ հրաժարվելով նույն վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջից: Աշոտ Ուլիխանյանի ներկայացուցիչը միաժամանակ հայտնել է, որ վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացել է Երևանի քաղաքապետարանի 19.02.2013 թվականի թիվ 18-06/2-62718 գրությունից, իսկ հայցադիմումը ներկայացվել է 13.04.2013 թվականին, այսինքն՝ օրենքով սահմանված դատավարական ժամկետները պահպանվել են: Դատարանը 19.09.2013 թվականի արձանագրային որոշմամբ թույլատրել է հայցի առարկայի նշված փոփոխությունը:

Երրորդ անձ Լուսիկ Պետրոսյանի ներկայացուցչի կողմից 14.12.2015 թվականին ՀՀ վարչական դատարան է ներկայացվել վիճարկման հայցադիմում ներկայացնելու դատավարական ժամկետը բաց թողնված լինելու հիմքով սույն վարչական գործի վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդություն: Նշված միջնորդությամբ երրորդ անձ Լուսիկ Պետրոսյանի ներկայացուցչին Աշոտ Ուլիխանյանի կողմից վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի բացթողումը հիմնավորել է այն փաստարկով, որ 26.12.2012 թվականին Երևանի քաղաքապետին ուղղված հարցման բովանդակությունից հետևում է, որ Աշոտ Ուլիխանյանի ներկայացուցիչը վիճարկվող շինարարության թույլտվության առկայության մասին ոչ թե տեղեկացել է 13.04.2013 թվականին, այլ տեղյակ է եղել դրա գոյության մասին դեռևս 26.12.2012 թվականի դրությամբ:

14.12.2015 թվականին տեղի ունեցած դատական նիստի ժամանակ նախագահող դատավորը որոշել է հետաձգել գործի քննությունը մինչև 24.12.2015 թվականը՝ հայցվորին հնարավորություն տալով դիրքորոշում ներկայացնել երրորդ անձ Լուսիկ Պետրոսյանի ներկայացուցչի միջնորդության վերաբերյալ: Իսկ 24.12.2015 թվականին տեղի ունեցած դատական նիստի ժամանակ նախագահող դատավորը որոշել է մինչև 28.12.2015 թվականը ժամանակ տրամադրել հայցվոր Աշոտ Ուլիխանյանի ներկայացուցչին՝ գործի վարույթը կարճելու մասին երրորդ անձ Լուսիկ Պետրոսյանի ներկայացուցչի կողմից ներկայացված միջնորդության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու համար:

18.01.2016 թվականին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում հայցվոր Աշոտ Ուլիխանյանի ներկայացուցիչ փաստաբան Տիգրան Խուրշուդյանը ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով, մասնավորապես նշել է, որ «(...) վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջը ներկայացվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետների պահպանմամբ (...)»: Ընդ որում, հայցվոր կողմը սույն գործի քննության ողջ ընթացքում այդպես էլ չի ներկայացրել վիճարկման հայց ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն:

Դատարանը կարճել է սույն վարչական գործի վարույթը՝ պատճառաբանելով, որ դեռևս 26.12.2012 թվականի դրությամբ Աշոտ Ուլիխանյանը փաստացի տեղյակ է եղել Երևանի քաղաքապետի կողմից 06.06.2012 թվականին տրամադրված թիվ 01/18-Պ-190-415 շինարարության թույլտվության մասին և վիճարկման հայցապահանջը ներկայացրել է առաջին անգամ 13.04.2013 թվականին, իսկ երկրորդ անգամ՝ 19.09.2013 թվականին: Հետևաբար Աշոտ Ուլիխանյանը բաց է թողել վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված երկամսյա ժամկետը և չի ներկայացրել դատավարական ժամկետները վերականգնելու վերաբերյալ միջնորդություն: Ըստ այդմ՝ Դատարանը եզրահանգել է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման, քանի որ լրացել է հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը (07.01.2014 թվականից գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ) և բացահայտել է հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք՝ հայցը դատարանում քննու-

թյան ենթակա չլինելը (07.01.2014 թվականից գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ և նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Աշոտ Ուլիխանյանի վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի «Գործի վարույթը կարճելու մասին» որոշումն ու գործն ուղարկել է նոր քննության: Վերաքննիչ դատարանը որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ հայցադիմումի ընդունելիության և հայցի առարկայի փոփոխության հարցերը քննարկելիս Դատարանը պարտավոր էր անդրադառնալ վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողնման հարցին և մատնանշել հայցվորին բաց թողնված դատավարական ժամկետները վերականգնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հնարավորության մասին, ինչը չի կատարվել: Այնուամենայնիվ Դատարանը հետագայում կարճել է սույն գործի վարույթը հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը լրանալու հիմքով: Սակայն, ըստ Վերաքննիչ դատարանի, նախքան այդ հիմքով գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշման կայացումը Դատարանը պարտավոր էր մատնանշել հայցվորին բաց թողնված դատավարական ժամկետները վերականգնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտության մասին և միայն այդ միջնորդության քննարկման արդյունքում որոշում կայացնել գործի վարույթը կարճելու մասին: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը չի կատարել իր վերոգրյալ պոզիտիվ պարտականությունը, ուստի Դատարանի որոշումը ենթակա է բեկանման:

Ինչ վերաբերում է սույն գործի վարույթը կարճելու երկրորդ հիմքին՝ հայք դատարանում ենթակա չլինելուն, ապա Վերաքննիչ դատարանը գտել է, որ 07.01.2014 թվականից գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված այդ հիմքը տվյալ դեպքում կիրառելի չէ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի վերոշարադրյալ փաստերից ակնհայտ է, որ Երևանի քաղաքապետի կողմից 06.06.2012 թվականին տրամադրված թիվ 01/18-Պ-190-415 շինարարության թույլտվության վիճարկման հայցապահանջն առաջին անգամ դատարան ներկայացնելիս հայցվորի ներկայացուցիչը վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկանալու ժամկետ է նշել 19.02.2013 թվականը և նկատի ունենալով, որ հայք ներկայացրել է դրանից հաշված երկամսյա ժամկետում՝ 13.04.2013 թվականին, ժամկետը վերականգնելու միջնորդություն չի ներկայացրել: Սակայն հետագայում՝ 14.12.2015 թվականին երրորդ անձի ներկայացրած ապացույցից ակնհայտ է դարձել, որ հայցվորի ներկայացուցչի ներկայացրած տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը: Այսինքն՝ 26.12.2012 թվականին Երևանի քաղաքապետին հասցեագրված հարցման բովանդակությունից հետևում է, որ հայցվոր կողմը Երևանի քաղաքապետի կողմից 06.06.2012 թվականին տրամադրված թիվ 01/18-Պ-190-415 շինարարության թույլտվության մասին իմացել է ոչ թե 19.02.2013 թվականին, այլ առնվազն 26.12.2012 թվականին:

Ավելին, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի վարույթը կարճելու վերաբերյալ երրորդ անձ Լուսիկ Պետրոսյանի ներկայացուցչի կողմից 14.12.2015 թվականին ներկայացված միջնորդությունը ստանալուց հետո Դատարանը որոշակի ողջամիտ ժամկետ է տրամադրել հայցվոր կողմին այդ միջնորդության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու համար: Սակայն հայցվոր կողմը, թե՛ գրավոր կերպով պնդել է, որ իր կողմից դատավարական ժամկետի բացթողում տեղի չի ունեցել, և չի ներկայացրել հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված երկամսյա ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն: Փաստորեն հայցվոր կողմը չի օգտվել բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու իր դատավարական իրավունքից, իսկ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործի քննության ընթացքում ի հայտ է եկել գործի

վարույթի կարճման հիմքը և Դատարանը, ձեռնարկելով համարժեք միջոցներ, սակայն հայցվորի կողմից բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն այդպես էլ չհերկայացվելու պայմաններում, նշված հիմքով իրավացիորեն կարճել է գործի վարույթը: Հետևաբար Դատարանը, ըստ էության, կատարել է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտության մասին հայցվորին մատնանշելու իր դատավարական պարտականությունը և թույլ չի տվել սույն գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատավարական իրավունքի նորմերի խախտում:

Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործի վարույթը ենթակա էր կարճման 07.01.2014 թվականից գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով: Ինչ վերաբերում է սույն գործի վարույթը կարճելու համար Դատարանի կողմից կիրառված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և սույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված իրավադրույթներին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ նորմերով սահմանված գործի վարույթը կարճելու հիմքը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ անկախ Աշոտ Ուլիխանյանի կողմից վիճարկման հայցով դատարան դիմելու ժամկետը բաց թողնված լինելու հանգամանքից վերջինիս ներկայացրած հայցը ենթակա է դատարանում քննության և ընդդատյա է վարչական դատարանին: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և սույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված իրավադրույթներին՝ Դատարանի կողմից թույլ տրված խախտումը չի ազդել սույն գործի ելքի վրա, քանի որ սույն գործի վարույթն ամեն դեպքում ենթակա էր կարճման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով: Հետևաբար Դատարանը, կարճելով սույն վարչական գործի վարույթը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը մասնակիորեն սխալ է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ որոշմանը պետք է տրվի օրինական ուժ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխանավերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, եթե գործի վարույթը կարճվում է (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ երրորդ անձ Լուսիկ Պետրոսյանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ պետական տուրք, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լուսիկ Պետրոսյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Աշոտ Ուլիխանյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 22.02.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 25.01.2016 թվականի «Գործի վարույթը կարճելու մասին» որոշմանը՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Աշոտ Ուլիխանյանից հօգուտ Լուսիկ Պետրոսյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորագրություններ*





## 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, 13-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ, 80-րդ, 81-րդ, 96-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն վարչական գործի վարույթը վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով կարճելու արդյունքում խախտվել է Գազիկ Մաթևոսյանի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, քանի որ հայցադիմում ներկայացնելիս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակներին վերաբերող պահանջները չպահպանելը չի կարող հանգեցնել անձի խախտված իրավունքի դատական պաշտպանության հնարավորության բացառմանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.09.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

## 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Գազիկ Մաթևոսյանի ներկայացուցիչ Արթուր Գրիգորյանը Նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետին ուղղված 19.08.2014 թվականի թիվ 62-14 գրությամբ խնդրել է Գազիկ Մաթևոսյանին իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ հայտնել, թե պատժի կրման ընթացքում նրա մոտ ի՞նչ հիվանդություն է ախտորոշվել և ընկնում է արդյո՞ք այդ հիվանդությունը ՀՀ կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշման 2-րդ հավելվածով սահմանված՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկում, թե՛ ոչ, և, եթե ոչ, ապա ինչ պատճառաբանությամբ (**հատոր 1-ին, գ.թ. 10**).

2) Գազիկ Մաթևոսյանի ներկայացուցիչ Արթուր Գրիգորյանի 19.08.2014 թվականի թիվ 62-14 գրությանն ի պատասխան՝ Նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետը 02.09.2014 թվականի թիվ Ե-40/18-8-5143 գրությամբ Արթուր Գրիգորյանին հայտնել է, որ նշված գրության հարցադրումն իր իրավասության սահմաններում չէ և այն ուղարկվել է Նախարարության քրեակատարողական վարչության բուժսպասարկման բաժին (**հատոր 1-ին, գ.թ. 11**).

3) Նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը 28.11.2014 թվականի թիվ 10/9355-Մ գրությամբ հայտնել է Արթուր Գրիգորյանին, որ Նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետին հանձնարարվել է ուսումնասիրել դատապարտյալ Գազիկ Մաթևոսյանի բժշկական հետազոտությունների արդյունքները և հնարավորինս սեղմ ժամկետներում զեկուցել Նախարարության քրեակատարողական վարչություն (**հատոր 1-ին, գ.թ. 12**).

4) 05.12.2014 թվականի թիվ 93-14 դիմումով Գազիկ Մաթևոսյանի ներկայացուցիչ Արթուր Գրիգորյանը Նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետին խնդրել է հայտնել, թե ի՞նչ եզրակացություն է արվել Գազիկ Մաթևոսյանի բժշկական հետազոտությունների արդյունքներով (**հատոր 1-ին, գ.թ. 13**):

## 4. Վճռաբեկ դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն

է՛ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վարչական դատարան դիմելիս օրենքով նախատեսված հայցատեսակի ընտրության և դատական ենթակայության հարաբերակցության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

1) *հանրային-իրավական այս կամ այն վեճը վարչական դատարանի առջև բարձրացնելու համար օրենքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրությունն ինքնին ենթադրում է արդյո՞ք, որ տվյալ հայցը (վեճը) ենթակա չէ դատարանի քննությանը,*

2) *հայցվորի կողմից ոչ ճիշտ հայցադրեսակով վարչական դատարան դիմելն ինքնին կարող է արդյո՞ք հիմք հանդիսանալ վեճը (հայցը) դատարանի քննությանը ենթակա չլինելու պարզապահանջությանը հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վարչական գործի վարույթը կարճելու համար:*

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (...), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով անրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեն Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե (“ex officio”): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը (...) առաջարկում է ձշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործի հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հայցադիմումը բովանդակում է հայցվորի պահանջը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարծում է գործի վարույթը, եթե՝

1) վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության. (...)

9) եթե բացահայտվել են նույն օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը (...):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատարան դիմելու կամ արդարադատության մատչելիության իրավունքը մարդու՝ սահմանադրաիրավական և միջազգային իրավական նորմերով երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների կարևորագույն բաղադրիչն է:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՈ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, ինաստա՞զրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերադրություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յրեն, Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետ*): Մինչդեռ Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*յրեն, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետ*): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*յրեն Khalifou v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետ*): Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական

կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (Ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*Կրեն, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդարադատության մատչելիության իրավունքը սերտորեն փոխկապակցված է այս կամ այն գործի՝ դատարանի քննությանը ենթակա լինելու կամ չլինելու հարցի հետ, քանի որ դատարանը՝ որպես իրավաբանական գործեր քննող և լուծող մարմին, օժտված չէ համընդհանուր իրավագործությամբ և իր գործառնություններին ու խնդիրներին համապատասխան կարող է քննել և լուծել միայն իր իրավասությանը հանձնված գործերը: Այս հանգամանքն առաջացնում է, մի կողմից, դատարանի, իսկ մյուս կողմից, իրավաբանական գործեր քննելու և լուծելու իրավասություն ունեցող այլ մարմինների (օրինակ՝ վարչական մարմիններ, առևտրային արբիտրաժ և այլն) իրավասությունը հստակորեն սահմանազատելու անհրաժեշտություն: Դատարանի և իրավաբանական գործեր քննելու ու լուծելու իրավասություն ունեցող այլ մարմինների իրավասությունը տարանջատելիս կիրառվում է «ենթակայություն» իրավաբանական եզրույթը. ենթակայություն իրավաբանական գործերի այնպիսի հատկանիշ է, որի միջոցով պարզվում է տվյալ գործը քննելու և լուծելու իրավասություն ունեցող կոնկրետ սուբյեկտը: Ըստ այդմ, այն գործերը, որոնց քննությունն ու լուծումը օրենքով հանձնված է դատարանի իրավասությանը, համարվում են դատական ենթակայության գործեր:

Փաստորեն, անձը կարող է իրացնել դատարանի մատչելիության իր իրավունքը միայն այն դեպքում, երբ դատարանի առջև վերջինիս բարձրացրած հարցը (որպես կանոն՝ իրավունքի մասին վեճը) ենթակա է քննության և լուծման դատարանի կողմից: Այդ իսկ պատճառով օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանել է, որ դատարանը պարտավոր է մերժել հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության, իսկ նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանել է, որ դատարանը պարտավոր է գործի քննության ցանկացած փուլում կարճել գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հայցադիմումի ընդունումը կարող է մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով այն դեպքում, երբ դատարան դիմող սուբյեկտը հայց հարուցելու իրավունք առհասարակ չունի, իսկ դատարանն իրավասու չէ լուծել իր առջև բարձրացված տվյալ վեճը (*Կրեն, Վարուժան Ավետիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ապահովող ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը*): Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված «որևէ դատարան» բառակապակցության ներքո օրենսդիրը նկատի է ունեցել, որ վեճը վերապահված չէ Հայաստանի Հանրապետությունում գործող ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների քննությանը և լուծմանը: Նման իրավակարգավորումը կոչված է բացառելու դատարանների իրավասությանը չհանձնված վեճերի քննությունը և լուծումը դատարանների կողմից: Եթե գործը ենթակա չէ դատարանին, ապա դատարանն դիմող անձը հայց հարուցելու իրավունք չունի, իսկ դատարանն իրավասու չէ խախտել այլ մարմինների իրավասությունը և լուծել նրանց վերապահված գործերը, հետևաբար գործի վարույթը ենթակա է կարճման (*Կրեն, «Վեսթ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության*

*մտավոր սեփականության գործակալության թիվ ՎԳ/0830/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):*

Այսպիսով, անձի կողմից դատարանի առջև բարձրացված հարցի՝ դատարանի քննությանը ենթակա լինելու հանգամանքը հանդիսանում է հայց հարուցելու իրավունքի ընդհանուր դրական նախադրյալ, որի առկայության դեպքում միայն անձն իրավունք ունի իր սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության խնդրանքով դիմել դատարան: Հակառակ դեպքում, այսինքն՝ գործը դատարանին ենթակա չլինելու դեպքում, անձն իրավունք չունի հայց հարուցել դատարանում, և դատարանը պարտավոր է վարույթ չընդունել ներկայացված հայցադիմումը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը որդեգրել է այն կառուցակարգը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված՝ «հայցը ենթակա չէ դատարանում քննության» արտահայտությունը և նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված՝ «վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության» արտահայտությունն ունեն միևնույն նշանակությունը, որը հանգում է հետևյալին. վարչական դատարանում գործ չի կարող հարուցվել, իսկ հարուցված գործի վարույթը ենթակա է կարճման, եթե այդ գործի հիմքում ընկած վեճը (հայցապահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունը, հայցադիմումով դատարանի առջև բարձրացված հարցը) ենթակա չէ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին ատյանի որևէ (ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ մասնագիտացված) դատարանում քննության: Հետևաբար, վեճը (հայցը) դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելիս կամ այդ հիմքով գործի վարույթը կարճելիս վարչական դատարանը պարտավոր է ցույց տալ այն իրավական և փաստական հանգամանքները, որոնք վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարաններն իրավասու չեն քննելու և լուծելու տվյալ վեճը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի ուժով հայցադիմումում պետք է նշվի հայցվորի պահանջը, որը կազմում է հայցի առարկան և որի մերժման կամ բավարարման վերաբերյալ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը (հայցի առարկան) հայցադիմումում պետք է շարադրված լինի այն կերպ, որ դատարանի համար առնվազն պարզ լինի, թե ինչ է ակնկալում հայցվորը՝ դատական պաշտպանություն հայցելու: Այլ կերպ սասած՝ հայցադիմումը պետք է բովանդակի հայցի առարկան բավարար հստակությամբ, որպեսզի դատարանը հնարավորություն ունենա ներկայացված նյութաիրավական պահանջի կապակցությամբ իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին բավարարող դատական ակտ կայացնել: Ասվածը հատկապես կարևոր նշանակություն ունի վարչական դատավարությունում, քանի որ օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը հստակ սահմանում է այն հայցատեսակները, որոնց միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են վարչական դատարանից հայցել իրենց խախտված իրավունքների և շահերի դատական պաշտպանություն: Ընդ որում, նշված հայցատեսակները միմյանցից առաջին հերթին տարբերվում են հայցի առարկայով, այսինքն՝ այն նյութաիրավական պահանջի բովանդակությամբ, որը ֆիզիկական և իրավաբանական անձինք ուղղում են այս կամ այն վարչական մարմնին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ անձը, իր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով դիմում է վարչական դատարան, ապա վերջինիս իրավունքների և շահերի դատական պաշտպանությու-

նր պետք է իրականացվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հիման վրա հարուցված վարչական գործի ըստ էության քննության և լուծման միջոցով: Այսինքն՝ վարչական դատավարությունում հայցվորի պահանջը պետք է համապատասխանի օրենքով սահմանված այն հայցատեսակին բնորոշ հայցի առարկային, որի միջոցով տվյալ վիճելի իրավահարաբերության շրջանակներում հնարավոր է գործնականում հասնել անձի իրավունքների և շահերի դատական պաշտպանության ապահովմանը (*տե՛ս, Վարուժան Ավերիքյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկալելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքները՝ ձիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ձիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ վարչական դատարան դիմած անձն իր կողմից ներկայացված հայցի առարկան չի ձևակերպել տվյալ վիճելի իրավահարաբերության համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ձիշտ հայցատեսակով, ապա այդ հանգամանքն ինքնին չի ենթադրում, որ հայցը (վեճը) ենթակա չէ դատարանում քննության: Այլ կերպ ասած, այս կամ այն վիճելի իրավահարաբերությունը (իրավունքի մասին վեճը կամ այլ հարցը) վարչական դատավարության կարգով դատարանի առջև բարձրացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրությունն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ վեճը (հայցը) դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վարչական գործի վարույթը կարճելու համար: Փաստորեն, վարչական դատարանը չի կարող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով մերժել հայցադիմումի ընդունումը կամ նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով կարճել վարչական գործի վարույթը միայն այն պատճառաբանությամբ, որ հայցվորը դատական պաշտպանության չի դիմել օրենքով նախատեսված ձիշտ հայցատեսակով կամ հայցվորը դատարան է դիմել սխալ հայցատեսակով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպող վերը նկարագրված դեպքերում հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի իրացումն ապահովվում է դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն («*ex officio*») պարզելու սկզբունքի կենսագործման միջոցով, որը վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկն է:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նշված դատավարական սկզբունքի էությանը և բովանդակությանը, նախկին որոշումներից մեկում նշել է, որ դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն («*ex officio*») պարզելու սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը: Խնդրո առարկա սկզբունքի համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական դատարանի պարտականությամբ: Այսպես, այն դեպքում, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք, դիմելով վարչական դատարան,

ձիշտ չեն ընտրել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ձիշտ չեն ձևակերպել իրենց հայցային պահանջները, վարչական դատարանը պարտավոր է մատնանշել ձիշտ հայցապահանջները կամ պատշաճ հայցատեսակները՝ առաջարկելով հայցվորին ձշտել ոչ հստակ հայցային պահանջները կամ ոչ ձիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով: Քննարկվող պարագայում վարչական դատարանի՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը, որը բխում է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքի բովանդակությունից, ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ ոչ հստակ հայցային պահանջները ձշտելու, ոչ ձիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում է ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև՝ անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը (*տրեն, Վարուժան Ալեքիբյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԳ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը*):

Իր մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը բոլոր դեպքերում պատկանում է հայցվորին, և եթե ոչ հստակ կամ ոչ ձիշտ հայցատեսակը հստակեցնելու կամ ձիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարանի մատնանշումից հետո էլ հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է գործի քննությունն իրականացնել հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Այդ պարագայում դատարանի մատնանշման պարտականությունը համարվում է կատարված (*տրեն, Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևյալ եզրահանգման.

1) հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրությունն ինքնին չի ենթադրում, որ դատարանի առջև բարձրացված վեճը (հայցը) ենթակա չէ դատարանի քննությանը,

2) հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրության դեպքում վարչական դատարանը ոչ թե պետք է որոշում կայացնի վեճը (հայցը) դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վարչական գործի վարույթը կարճելու մասին, այլ պարտավոր է առաջարկել հայցվորին ոչ ձիշտ հայցատեսակը փոխարինել պատշաճ հայցատեսակով (մատնանշել ձիշտ հայցատեսակը),

3) եթե հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրության և վարչական դատարանի կողմից պատշաճ հայցատեսակի մատնանշման պարտականության պատշաճ կատարման պայմաններում հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված սկզբնական ոչ ձիշտ հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է կայացնել այդ հայցապահանջի շրջանակներում հարուցված վարչական գործի հետագա ճակատագիրը լուծող դատական ակտ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գագիկ Մաթևոսյանի ներկայացուցիչ Արթուր Գրիգորյանը 19.08.2014 թվականի գրությամբ խնդրել է Նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետին հայտնել, թե պատժի կրման ընթացքում Գագիկ Մաթևոսյանի մոտ ինչ հիվանդություն է այտորոշվել և ներառված է արդյո՞ք այդ հիվանդությունը ՀՀ կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշման 2-րդ հավելվածով սահմանված՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկում, թե՛ ոչ, և, եթե ոչ, ապա ի՞նչ պատճառաբանությամբ: Նշված գրությանն ի պատասխան՝ Նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետը հայտնել է, որ



այդ գրության հարցադրումն իր իրավասության սահմաններում չէ, և այն ուղարկվել է Նախարարության քրեակատարողական վարչության բուժսպասարկման բաժին: Նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը 28.11.2014 թվականի գրությամբ Արթուր Գրիգորյանին հայտնել է, որ Նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետին հանձնարարվել է ուսումնասիրել դատապարտյալ Գագիկ Մաթևոսյանի բժշկական հետազոտությունների արդյունքները և հնարավորինս սեղմ ժամկետներում զեկուցել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն: Դրանից հոտ Արթուր Գրիգորյանը Նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետին ուղղված 05.12.2014 թվականի գրությամբ խնդրել է հայտնել, թե ինչ եզրակացություն է արվել նշված հետազոտությունների արդյունքներով, սակայն որևէ պատասխան չի ստացել:

Գագիկ Մաթևոսյանի ներկայացուցիչը դատարան է դիմել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցով՝ պահանջելով Գագիկ Մաթևոսյանի առողջական վիճակը ճանաչել ՀՀ կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշման 2-րդ հավելվածի 26-րդ և 27-րդ կետերին համապատասխանող:

Դատարանը 05.02.2015 թվականի որոշմամբ վերադարձրել է Գագիկ Մաթևոսյանի ներկայացուցչի հայցադիմումը՝ գտնելով, որ տվյալ դեպքում վարչական մարմնից Գագիկ Մաթևոսյանի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններ ստանալու ակնկալիքը կարող է իրացվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով նախատեսված գործողության կատարման հայցի միջոցով: Մինչդեռ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 07.04.2015 թվականի որոշմամբ Դատարանի 05.02.2015 թվականի որոշումը վերացրել է այն պատճառաբանությամբ, որ մատնանշման միջոցով ոչ ձիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու առաջարկ ներկայացնելու հիմքով հայցադիմումը վերադարձնելու իրավական հնարավորություն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածով նախատեսված չէ, և Գագիկ Մաթևոսյանի ներկայացուցչի հայցադիմումն օրենքի ուժով ընդունվել է Դատարանի վարությամբ:

Այնուհետև Դատարանը 22.02.2016 թվականի որոշմամբ կարճել է սույն վարչական գործի վարույթը՝ հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով: Դատարանն իր որոշումը, ըստ էության, հիմնավորել է այն փաստարկով, որ տվյալ դեպքում հայցվորը դատարան է դիմել ոչ ձիշտ հայցատեսակով:

Վերաքննիչ դատարանը 23.09.2016 թվականի որոշմամբ մերժել է Գագիկ Մաթևոսյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի 22.02.2016 թվականի «Փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու, վարչական գործի վարույթը կարճելու» մասին որոշումը՝ գործի վարույթը կարճելու մասով, թողել է անփոփոխ: Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Գագիկ Մաթևոսյանի կողմից ներկայացված ճանաչման հայցը՝ իր առողջական վիճակը ՀՀ կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշման 2-րդ հավելվածի 26-րդ և 27-րդ կետերին համապատասխանող ճանաչելու մասին, չի համապատասխանում ճանաչման հայցատեսակով վարչական դատարան դիմելու սուբյեկտիվ իրավունքի գոյության համար պարտադիր նախապայմաններին, հետևաբար այն ենթակա չէ դատարանում քննության: Այսպես, ըստ Վերաքննիչ դատարանի, սույն գործի փաստերից հետևում է, որ Գագիկ Մաթևոսյանի և վարչական մարմնի միջև վեճը չի ծագել նրա առողջական վիճակը ՀՀ կառավարության նշված որոշմանը համապատասխանող ճանաչելու վերաբերյալ, «(...) այլ նրանց միջև ծագած վեճը եզրագծվում է Գագիկ Մաթևոսյանի կողմից փնտրվող տեղեկությունը չտրամադրելով (...)»: Վերաքննիչ դատարանը գտել է, որ «(...) վարչական մարմնի կողմից Գագիկ Մաթևոսյանին տեղեկություն չտրամադրելու փաստով եզրագծված վեճի լուծման համար վերջինս իր իրավունքների դատական պաշտպանության նպատակով կարող էր (...) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործողության կատարման հայց ներկայացնել, որով կարող էր պահանջել կարարելու որոշակի գործողություններ, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը, այն է՝ տրամադրել փնտրվող տեղեկությունը (...)»: Նման պայմաններում

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով սույն գործի վարույթը կարճման ենթակա լինելու վերաբերյալ Դատարանի եզրահանգումը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը նախևառաջ փաստում է, որ սույն գործով Գագիկ Մաթևոսյանը դատարան է դիմել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցատեսակով՝ խնդրելով ճանաչել այն իրավահարաբերության առկայությունը, որ ազատագրված դատապարտված և պատիժը կրող Գագիկ Մաթևոսյանի առողջական վիճակը համապատասխանում է ՀՀ կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշման 2-րդ հավելվածի 26-րդ և 27-րդ կետերին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշմամբ հաստատել է պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկը՝ համաձայն այդ որոշման թիվ 2 հավելվածի, որի 26-րդ կետը վերաբերում է տեսողության սրության արտահայտված իջեցմանը, իսկ 27-րդ կետը գույգ աչքերի տեսադաշտի արտահայտված կոնցենտրիկ նեղացմանը:

Սակայն սույն գործի փաստերի ուսումնասիրությունից հետևում է, որ մինչև վերը նշված պահանջով վարչական դատարան դիմելը Գագիկ Մաթևոսյանն իր ներկայացուցչի կողմից Նախարարությանը (համապատասխան քրեակատարողական հիմնարկի վարչակազմին) ներկայացված հարցումների միջոցով ցանկացել է ընդամենը տեղեկություններ ստանալ այն հարցի կապակցությամբ, թե իր առողջական վիճակը համապատասխանում է արդյոք ՀՀ կառավարության վերոգրյալ որոշմամբ վկայակոչված կետերին, սակայն այդպես էլ սպառիչ պատասխան չի ստացել իր կողմից պահանջվող տեղեկատվության վերաբերյալ: Այդուհանդերձ, սույն գործում բացակայում է որևէ փաստական տվյալ այն մասին, որ Գագիկ Մաթևոսյանն իրավական վեճ է ունեցել Նախարարության հետ իր առողջական վիճակը ՀՀ կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշմամբ սահմանված՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկում ներառված հիվանդություններից որևէ մեկին համապատասխանող ճանաչելու կամ չճանաչելու վերաբերյալ: Մինչդեռ ներկայացված հայցադիմումով Դատարանի առջև բարձրացված հարցը հանգում է ոչ թե Գագիկ Մաթևոսյանի առողջական վիճակը որոշակի հիվանդություններին համապատասխանելու կամ չհամապատասխանելու վերաբերյալ վարչական մարմնից Գագիկ Մաթևոսյանի առողջական վիճակը որոշակի հիվանդություններին համապատասխանող ճանաչելուն կամ չճանաչելուն:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ ստորադաս դատարանները գտել են, որ Գագիկ Մաթևոսյանի և Նախարարության միջև առաջացած վեճը վերաբերում է միայն Գագիկ Մաթևոսյանի առողջական վիճակը որոշակի հիվանդությանը համապատասխանելու վերաբերյալ վարչական մարմնից տեղեկություններ ստանալու կամ չստանալու հարցին, և այդ վեճը վարչական դատավարության կարգով քննելու համար պատշաճ հայցատեսակը ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցն է, այլ նույն օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողության կատարման հայցը: Այսպիսով, ստորադաս դատարանները հայցվորի կողմից ոչ ձիշտ հայցատեսակ ընտրված լինելու պատճառաբանությամբ հանգել են այն եզրակացության, որ սույն վարչական գործի վարույթը ենթակա է կարճման:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, հիմնվելով սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների վրա, գտնում է, որ տվյալ դեպքում Գագիկ Մաթևոսյանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի առերևույթ սխալ ընտրությունն ինքնին չի ենթադրում, որ սույն գործով

ներկայացված հայրը՝ Գագիկ Մաթևոսյանի առողջական վիճակը ՀՀ կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշման 2-րդ հավելվածի 26-րդ և 27-րդ կետերին համապատասխանող ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ դատարանի քննությանը: Այլ կերպ ասած՝ Գագիկ Մաթևոսյանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի առերևույթ սխալ ընտրության դեպքում Դատարանը չէր կարող որոշում կայացնել հայրը դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով վարչական գործի վարույթը կարճելու մասին, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գագիկ Մաթևոսյանը, իր առողջական վիճակը ՀՀ կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշման 2-րդ հավելվածի 26-րդ և 27-րդ կետերին համապատասխանող ճանաչելու պահանջով դիմելով դատարան, նպատակ է ունեցել իրացնել իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը: Եթե Դատարանը հանգել է այն եզրակացության, որ տվյալ դեպքում Գագիկ Մաթևոսյանը սեփական սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության համար ընտրել է ոչ ձիշտ հայցատեսակ, ապա Դատարանը պարտավոր էր կատարել գործի փաստական հանգամանքներն ի պաշտոն («ex officio») պարզելու սկզբունքից բխող՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու իր պարտականությունը, այն է՝ առաջարկել Գագիկ Մաթևոսյանին ներկայացնելու տվյալ վիճելի իրավահարաբերությունից բխող և օրենքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հայցի առարկային բնորոշ հայցապահանջ: Այսինքն, եթե Դատարանը գտել է, որ Գագիկ Մաթևոսյանի կողմից ներկայացված առերևույթ ոչ ձիշտ հայցատեսակը չի կարող ապահովել վերջինիս իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը, ապա Դատարանը պարտավոր էր առաջարկել Գագիկ Մաթևոսյանին ոչ ձիշտ հայցատեսակը փոխարինել պատշաճ հայցատեսակով (մատնանշել ձիշտ հայցատեսակը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցադիմումի ընդունելիության փուլում Դատարանը ոչ ձիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու առաջարկով Գագիկ Մաթևոսյանի հայցադիմումը վերադարձրել է վերջինիս, սակայն Դատարանի այդ որոշումը վերացվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից, և Գագիկ Մաթևոսյանի հայցադիմումն ընդունվել է Դատարանի վարույթ՝ ի սկզբանե ներկայացված հայցապահանջով: Նման պայմաններում Դատարանը պարտավոր էր գործի փաստական հանգամանքներն ի պաշտոն («ex officio») պարզելու սկզբունքից բխող՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու իր պարտականությունը կատարել գործը դատաքննության նախապատրաստելու փուլում՝ Գագիկ Մաթևոսյանին պատշաճ կարգով առաջարկելով ոչ ձիշտ հայցատեսակը փոխարինել պատշաճ հայցատեսակով (պատշաճ կարգով մատնանշելով ձիշտ հայցատեսակը):

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ փաստական և իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործի վարույթը չէր կարող կարճվել Գագիկ Մաթևոսյանի հայրը դատական քննության ենթակա չլինելու պատճառաբանությամբ: Դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով կարճելով սույն վարչական գործի վարույթը, վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող հայցատեսակները կարգավորող դատավարական կանոնների նկատմամբ ցուցաբերել է չափազանց ձևական (ֆորմալ) մոտեցում, որի արդյունքում Գագիկ Մաթևոսյանի՝ դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակվել է այն աստիճան, որ խաթարվել է արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների բուն էությունը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Գագիկ Մաթևոսյանի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության համար վիճելի իրավահարաբերությունից բխող ձիշտ հայցատեսակը պարզելու, այն հայցվորին պատշաճ կարգով մատնանշելու և այդ պարտականության կատարումից հետո սույն գործի հետագա ընթացքը որոշելու նպատակով գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկավարամետնի վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 23.09.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/8975/05/13  
Նախագահող դատավոր՝ Բ. Մկոյան  
Դատավորներ՝ Ա. Առաքելյան  
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/8975/05/13**  
**2017թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈՒՑԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈՒՑԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հասմիկ Մելքոնյանի ներկայացուցիչ Մա-  
միկոն Մանուկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.05.2015  
թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հասմիկ Մելքոնյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն  
առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր), եր-  
րորդ անձինք Ջիտտա Հովհաննիսյանի, Աննա Բաբայանի՝ Երևան քաղաքի Վարդանանց  
փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ շինության նկատմամբ  
17.07.2013 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն  
անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Հասմիկ Մելքոնյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևան  
քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ  
շինության նկատմամբ 17.07.2013 թվականին կատարված սեփականության իրավունքի  
պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան)  
18.02.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.05.2015  
թվականի որոշմամբ Ջիտտա Հովհաննիսյանի ու Աննա Բաբայանի ներկայացուցչի և  
Կադաստրի վերաքննիչ բողոքները բավարարվել են և Դատարանի 18.02.2015 թվականի  
վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հասմիկ Մելքոնյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 27-րդ և 124-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն՝ անհիմն կերպով մերժելով Հասմիկ Մելքոնյանի հայցը: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործի շրջանակներում վիճարկվում է ոչ թե Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշման իրավաչափությունը, այլ այդ որոշման վերաբերելիությունը Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ կառույցին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Կադաստրը չէր կարող Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ կառույցի մասով պետական գրանցում կատարել Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշման հիման վրա, քանի որ պետական գրանցման վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվում այդ կցակառույցի՝ Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշման կայացումից առաջ կառուցված լինելու հանգամանքը: Հետևաբար սույն գործով վիճարկվող պետական գրանցումը՝ Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ շինության մասով, կատարվել է առանց իրավահաստատող փաստաթղթերի և ենթակա է անվավեր ճանաչման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.05.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 18.02.2015 թվականի վճիռն կամ գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի «Բազմաբնակարան շենքերին կից (շենքերի ծավալից դուրս) ինքնակամ իրականացված կառույցներն օրինական ճանաչելու և շենքերի զբաղեցրած հողամասերը դրանց բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցելու մասին» թիվ 4628-Ա որոշմամբ նույն որոշման հավելվածի ցանկում նշված հասցեների թվով 84 բազմաբնակարան շենքերին կից (շենքերի ծավալից դուրս) ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 25-րդ կետով նախատեսված ինքնակամ իրականացված կառույցները ճանաչվել են օրինական: Այդ որոշման հավելվածի 59-րդ տողում նշված է նաև Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքը, որի զբաղեցրած հողամասի մակերեսը 827,80քմ է (**հատոր 1-ին, գ.թ. 15-16**).

2) Երևանի քաղաքապետի 18.05.2011 թվականի թիվ 1937-Ա որոշման 9-րդ կետով Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշման հավելվածի 59-րդ տողի 4-րդ սյունյակում նշված «827,80» թիվը փոխարինվել է «757,77» թվով (**հատոր 1-ին, գ.թ. 17-18**).

3) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն՝ 17.07.2013 թվականին Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանի նկատմամբ գրանցվել է Ջիտտա Հովհաննիսյանի և Աննա Բաբայանի սեփականության իրավունքը: Սեփականության իրավունքի գրանցման համար հիմք

են հանդիսացել Երևան քաղաքի Սպանդարյանի շրջգործկումի 15.06.1995 թվականի թիվ 21/49 որոշումը, Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա և 18.05.2011 թվականի թիվ 1937-Ա որոշումները **(հատոր 1-ին, գ.թ. 57)**։

4) Կադաստրի նախագահի տեղակալի 02.09.2013 թվականի գրության համաձայն՝ Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանի նկատմամբ իրավունքներն առաջին անգամ գրանցվել են 2002 թվականին՝ առանց ինքնակամ կառույցի վերաբերյալ որևէ նշագրման։ Նշված բնակարանի նկատմամբ 17.07.2013 թվականին կրկին կատարվել է իրավունքի պետական գրանցում և գրանցումն իրականացնելիս բնակարանին կից իրականացրած ինքնակամ կառույցը դիտվել է որպես օրինական կառույց, որի համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշումը **(հատոր 1-ին, գ.թ. 20-21)**։

**4. Վճռաբեկ դատարանի պայրձառարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության շրջանակներում այդ վարչական ակտի իրավաչափության գնահատման սահմանների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական ու կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար։

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման որպես վարչական ակտի, վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության շրջանակներում անդրադառնալով այդ պետական գրանցման համար հիմք հանդիսացող վարչական ակտի՝ տվյալ գույքի նկատմամբ կիրառելիության հարցին՝ վարչական դատարանը խստիվոր է արդյոք վիճարկվող պետական գրանցման իրավաչափության գնահատման սահմանները, թե՛ ոչ։*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցադիմումը ներկայացնելու պահին գործել է 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը, որն ուժը կորցրել է 07.01.2014 թվականին, իսկ գործի քննությունն իրականացվել է 05.12.2013 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, որն ուժի մեջ է մտել 07.01.2014 թվականին։

28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող էր պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը։

07.01.2014 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները)։

07.01.2014 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով։

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանվում են գույքի նկատմամբ իրավունքների, իրավունքների սահմանափակումների պետական գրանցման, գույքի, դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, գրանցում իրականացնող մարմնի իրավունքներին պարտականությունների իրավական հիմքերը, գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթի առանձնահատկությունները:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են նույն օրենքում օգտագործված հիմնական հասկացությունները. այդ հոդվածի համաձայն՝ իրավահաստատող փաստաթղթերն իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթերը և գույքագրման փաստաթղթերն են, իսկ իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթերն օրենքով սահմանված հիմքերով պետական գրանցման ենթակա իրավունքների ձեռքբերման համար օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի ավարտի իրավական ձևակերպման համար անհրաժեշտ և բավարար գրավոր փաստաթղթերն են, այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրեր, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների անհատական ակտեր, դատական ակտեր, իսկ օրենքի ուժով ձևաչված իրավունքի համար՝ այդ օրենքով նման իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ և բավարար նախապայման հանդիսացող իրավաբանական փաստերը հաստատող գրավոր փաստաթղթեր:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք են հանդիսանում իրավահաստատող փաստաթղթերը (...):

Վճարել դատարանը փաստում է, որ օրենսդիրը 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում, որպես առանձին հայցի տեսակ, նախատեսել էր վիճարկման հայցը՝ որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից անձանց իրավական պաշտպանության միջոց: ՀՀ վճարել դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերը նշված հոդվածում ամրագրված վիճարկման հայցին՝ նշելով, որ վիճարկման հայցի առարկան միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու պահանջն է: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է՝ հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը (*տե՛ս, Սամվել Մելքոնյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԴ/1346/05/10 վարչական գործով ՀՀ վճարել դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Վարչական ակտերի դատական վերանայման մասին» 15.12.2004 թվականի թիվ Rec2004(20) հանձնարարականի համաձայն՝ բոլոր վարչական ակտերը կարող են դատական վերանայման առարկա հանդիսանալ, որպիսի վերանայումը պետք է անմիջական լինի: Դատարանը պետք է հնարավորություն ունենա գնահատելու օրենքի ցանկացած խախտում, ներառյալ՝ իրավասության բացակայությունը, ընթացակարգային խախտումները և լիազորությունների չարաշահումը:

Անդրադառնալով դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկման հարցին՝ ՀՀ վճարել դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վարչական ակտը դատական կարգով կարող է ձանաչվել անվավեր, եթե հաստատվի հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում,

2. վիճարկվող վարչական ակտով խախտվել են հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագր-



ված իրավունքները և ազատությունները (*Կրեն, Սվեյդլանա Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Այսպիսով, թե՛ 28.11.2007 թվականի, և թե՛ ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերով օրենսդիրը սահմանել է, որ վիճարկման հայցով հայցվորն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը, որը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դառնում է դատական վերահսկողության առարկա: Վիճարկման հայցը՝ որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից անձանց իրավական պաշտպանության միջոց, օրենսդրի կողմից սահմանված հայցի տեսակ է, որն ուղղված է դատական կարգով վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելուն: Վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում դատարանը ձեռնամուխ է լինում վարչական ակտի իրավաչափության գնահատմանը՝ ստուգելով վիճարկվող վարչական ակտի համապատասխանությունն օրենսդրության պահանջներին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրենսդիրը հստակորեն կանխորոշել է վիճարկվող վարչական ակտի իրավաչափության դատական վերահսկողության սահմանները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրելով, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանի կողմից վարչական ակտի իրավաչափության գնահատումը պետք է կատարվի տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերով սահմանված պահանջների պահպանման հարցը պարզելու միջոցով: Ընդ որում, այն պարագայում, երբ վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել մեկ այլ վարչական ակտ, ապա դատարանը չի կարող այդ վարչական ակտի իրավաչափության ստուգման պահանջի բացակայության պայմաններում իր նախաձեռնությամբ անդրադառնալ վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած վարչական ակտի իրավաչափության հարցին. եթե վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած վարչական ակտի վիճարկման պահանջը չի հանդիսանում տվյալ գործով հայցի առարկա, ապա դատարանն իրավասու չէ ստուգելու այդ գործով չվիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը՝ ելնելով չվիճարկվող և ոչ իրավաչափ չձանաչված վարչական ակտերի իրավաչափության կանխավարկածից:

Այսպես, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված օրինականության հիմնարար սկզբունքը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում ձևավորել է իրավական դիրքորոշում վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի մասին: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանմամբ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքը նշանակում է, որ բոլոր դեպքերում վարչական ակտը համարվում է իրավաչափ, եթե այն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ձանաչվել: Հետևաբար քննվող գործի շրջանակներում որևէ վարչական ակտի իրավաչափության վիճարկման պահանջի բացակայության պայմաններում դատարանն իրավասու չէ անդրադառնալ այդ հարցին, գնահատական տալ չվիճարկվող վարչական ակտի իրավաչափությանը, ինչպես նաև դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությանը: Այլ կերպ՝ դատարանը պարտավոր է ձեռնպահ մնալ քննվող գործի շրջանակներում չվիճարկվող վարչական ակտի իրավաչափության կամ դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորության վերաբերյալ գնահատականներ տալուց (*Կրեն, Լյուբով Փիրոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և այլոց թիվ ՎԴ/2085/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափության գնահատման սահմանների մեջ չի կարող ներառվել մեկ այլ, այդ թվում՝ այդ վարչական ակտի ընդունման հիմք

հանդիսացած վարչական ակտի իրավաչափության գնահատումը, մինչդեռ վիճարկվող վարչական ակտի հիմքում ընկած վարչական ակտի կիրառելիության ստուգումը ներառվում է այդ սահմանների մեջ: Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ վիճարկվող վարչական ակտի ընդունման հիմքում ընկած է մեկ այլ վարչական ակտ, ապա դատարանը վիճարկվող վարչական ակտի՝ վիճարկվող վարչական ակտի ընդունման համար կիրառելի լինելու կամ չլինելու հարցի պարզմանը: Այսինքն՝ դատարանի կողմից վարչական ակտի իրավաչափության գնահատումը ներառում է նաև վիճարկվող վարչական ակտի հիմքում այլ վարչական ակտի դրված լինելու իրավաչափության պարզումը: դատարանը կարող է որոշել վարչական ակտի իրավաչափությունը՝ պարզելով, թե վիճարկվող վարչական ակտը կարող էր ընդունվել արդյոք դրա հիմքում դրված վարչական ակտի հիման վրա, թե՛ ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման իրավական հիմքերը սահմանվում են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, որի 8-րդ հոդվածի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք են հանդիսանում իրավահաստատող փաստաթղթերը: Նշված օրենքի իմաստով իրավահաստատող փաստաթղթեր են համարվում իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթերն և գույքագրման փաստաթղթերը, իսկ իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթերն օրենքով սահմանված հիմքերով պետական գրանցման ենթակա իրավունքների ձեռքբերման համար օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի ավարտի իրավական ձևակերպման համար անհրաժեշտ և բավարար գրավոր փաստաթղթերն են, այդ թվում նաև՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անհատական ակտերը:

Անդրադառնալով Կադաստրի կողմից պետական գրանցման համար հիմք հանդիսացող վարչական ակտի կատարման հարցին՝ ՀՀ սահմանադրական դատարանը 04.02.2014 թվականի թիվ ՄԴՈ-1137 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետական գրանցման ենթակա իրավունք կամ սահմանափակում կիրառող վարչական ակտի՝ դրա ընդունման համար հիմք հանդիսացած օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի պահանջներին չհամապատասխանելու հիմքով իրավունքի պետական գրանցման մերժումը կարող է համարվել իրավաչափ միայն այն դեպքում, երբ սահմանված դատական կամ արտադատական կարգով վերացվել է պետական գրանցման իրավունք կամ սահմանափակում կիրառող անհատական իրավական ակտը, այսինքն՝ երբ դադարեցվել է վարչական ակտի իրավաբանական ուժը:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ինչպես վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի վերաբերյալ սեփական մոտեցումները, այնպես էլ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված վերոգրյալ իրավական դիրքորոշումները, գտնում է, որ այն դեպքում, երբ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում այդ պետական գրանցման հիմքում դրված վարչական ակտը չի վիճարկվում և ոչ իրավաչափ չի ճանաչվել, ապա դատարանը վիճարկվող պետական գրանցման իրավաչափությունը որոշելիս կարող է անդրադառնալ ոչ թե պետական գրանցման հիմքում ընկած վարչական ակտի իրավաչափության ստուգմանը, այլ պետական գրանցման հիմքում տվյալ վարչական ակտի դրված լինելու իրավաչափության ստուգմանը՝ պարզելով, թե վիճարկվող պետական գրանցումը կարող էր արդյոք կատարվել դրա հիմքում դրված և իրավաբանական ուժի մեջ գտնվող վարչական ակտի հիման վրա, թե՛ ոչ: Այլ կերպ ասած, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթի շրջանակներում իրավասու վարչական մարմինը պետք է պարզի, թե գրանցման համար որպես իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթուղթ ներկայացված վարչական ակտով տվյալ գույքի նկատմամբ անձին տրամադրվել է արդյոք որևէ իրավունք, թե՛ ոչ: Ընդ որում, իրավունքի պետական գրանցումը դատական կարգով վիճարկելու դեպքում դրա իրավաչափությունը դատարանը ստուգում է պետական գրանցման վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Մասնավորապես, դատարանը տվյալ դեպ-

քում պետք է պարզի, թե պետական գրանցման վարչական վարույթի ընթացքում հաստատվել է արդյո՞ք այն հանգամանքը, որ որպես իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթուղթ ներկայացված վարչական ակտով իրավունքի գրանցում հայցող անձին կոնկրետ գույքի նկատմամբ տրամադրվել է այն իրավունքը, որը գրանցելու պահանջով վերջինս դիմել է իրավասու վարչական մարմնին:

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Հասմիկ Մելքոնյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ շինության նկատմամբ 17.07.2013 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դատարանը բավարարել է Հասմիկ Մելքոնյանի հայցը՝ պատճառաբանելով, որ Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ կառույցի նկատմամբ 17.07.2013 թվականին կատարված պետական գրանցման վարույթի ընթացքում չի հիմնավորվել կցակառույցի՝ Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշման կայացումից առաջ կառուցված լինելու հանգամանքը: Ըստ Դատարանի՝ Կադաստրի կողմից ներկայացված ապացույցներով չի հաստատվել սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետի նշված որոշումը վերաբերում է խնդրո առարկա կցակառույցին, հետևաբար նշված վարչական ակտի հիման վրա սեփականության իրավունքը տվյալ ինքնակամ կառույցի նկատմամբ չէր կարող գրանցվել:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Զիտտա Հովհաննիսյանի ու Աննա Բաբայանի ներկայացուցչի և Կադաստրի վերաքննիչ բողոքները և բեկանելով ու փոփոխելով Դատարանի վճիռը՝ մերժել է Հասմիկ Մելքոնյանի հայցը: Վերաքննիչ դատարանը նշել է, որ սույն վարչական գործով գնահատման է ենթակա ոչ թե վիճարկվող պետական գրանցման հիմքում դրված վարչական ակտի, այլ բուն պետական գրանցման իրավաչափությունը: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ վիճարկվող պետական գրանցումը Կադաստրի կողմից կատարվել է օրենքի պահանջների պահպանմամբ և ենթակա չէ անվավեր ճանաչման, քանի որ վարչական մարմինը չէր կարող չկատարել դեռևս չվերացված, իրավաբանական ուժ ունեցող վարչական ակտի պահանջը:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ շինության նկատմամբ 17.07.2013 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման համար հիմք են հանդիսացել Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա և 18.05.2011 թվականի թիվ 1937-Ա որոշումները: Նկատի ունենալով, որ Երևանի քաղաքապետի 18.05.2011 թվականի թիվ 1937-Ա որոշումն ընդամենը փոփոխության է ենթարկել Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի գբաղեցրած հողամասի մակերեսի վերաբերյալ Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշման հավելվածում նշված տվյալը, ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող պետական գրանցման հիմքում, որպես իրավահաստատող փաստաթուղթ, դրված է Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի «Բազմաբնակարան շենքերին կից (շենքերի ծավալից դուրս) ինքնակամ իրականացված կառույցներն օրինական ճանաչելու և շենքերի գբաղեցրած հողամասերը դրանց բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցելու մասին» թիվ 4628-Ա որոշումը. այդ որոշմամբ Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքին կից (շենքի ծավալից դուրս) իրականացված ինքնակամ կառույցները ճանաչվել են օրինական: Ընդ որում, նշված վարչական ակտը սույն գործով չի վիճարկվել և երբևէ ոչ իրավաչափ չի ճանաչվել:

Սույն գործի փաստերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ տվյալ դեպքում վիճարկվող պետական գրանցման իրավաչափության հարցի լուծումը պայմանավորված է այն հանգամանքով, թե Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ շինության նկատմամբ Ջիտտա Հովհաննիսյանի և Աննա Բաբայանի սեփականության իրավունքը կարող էր արդյոք գրանցվել Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշման հիման վրա, թե՛ ոչ: Նշված հարցադրմանը պատասխանելու համար պետք է պարզել, թե Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշումը վերաբերում է արդյոք Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ շինությանը, այլ կերպ՝ արդյոք նշված ինքնակամ կառույցը գոյություն ունեցել է Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշման ընդունման պահին:

Այսպես, ըստ Վճռաբեկ դատարանի՝ Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշմամբ օրինական են ճանաչվել Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքին կից (շենքի ծավալից դուրս) ինքնակամ իրականացված այն կառույցները, որոնք նշված որոշման կայացման պահին առկա են եղել: Հետևաբար Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշման հիմքով կցակառույցների նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնելիս Կադաստրը պարտավոր էր նախևառաջ ստուգել, թե արդյոք գրանցման ներկայացված կցակառույցը տվյալ որոշումը կայացնելու պահին առկա եղել է, թե՛ ոչ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված հարցի պարզումը սույն գործով վիճարկվող պետական գրանցման վարույթի ընթացքում ունեցել է առանցքային նշանակություն, քանի որ կցակառույցի՝ Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշման կայացումից հետո կառուցված լինելու պարագայում նշված որոշումը դրա նկատմամբ կիրառելի չէր լինի: Այդ դեպքում Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի իմաստով չէր կարող դիմավել որպես Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ շինության նկատմամբ իրավահաստատող փաստաթուղթ (իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթուղթ) ու դրա հիմքով չէր կարող կատարվել Ջիտտա Հովհաննիսյանի և Աննա Բաբայանի սեփականության իրավունքի պետական գրանցում այդ անշարժ գույքի նկատմամբ: Այլ կերպ ասած, Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ շինության նկատմամբ Ջիտտա Հովհաննիսյանի և Աննա Բաբայանի սեփականության իրավունքի պետական գրանցման վարույթի շրջանակներում Կադաստրը պետք է պարզեր, թե գրանցման համար որպես իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթուղթ ներկայացված վարչական ակտով՝ Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշմամբ, տվյալ գույքի նկատմամբ Ջիտտա Հովհաննիսյանին և Աննա Բաբայանին տրամադրվել է արդյոք որևէ իրավունք, թե՛ ոչ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ինքնակամ կառույցի նկատմամբ կատարված և սույն գործով վիճարկվող պետական գրանցման իրավաչափությունը ստուգելիս այդ պետական գրանցման համար որպես իրավահաստատող փաստաթուղթ հանդիսացող վարչական ակտի՝ տվյալ ինքնակամ կառույցի նկատմամբ կիրառելիության հարցին անդրադառնալը չի կարող մեկնաբանվել որպես սույն գործով վիճարկվող վարչական ակտի իրավաչափության գնահատման սահմանների անցում: Տվյալ դեպքում վիճարկվող պետական գրանցման իրավաչափությունը որոշելիս Դատարանն անդրադարձել է ոչ թե պետական գրանցման հիմքում ընկած վարչական ակտի իրավաչափության ստուգմանը, այլ պետական գրանցման հիմքում տվյալ վարչական ակտի դրված լինելու իրավաչափության ստուգմանը: Հետևաբար սույն գործով Դատարանը չի խախտել Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշման իրավաչափության կանխավարկածի սկզբունքը:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Դատարանը դուրս է եկել վարչական ակտի իրավաչափության գնահատման սահմաններից և անդրադարձել է այն վարչական ակտերի իրավաչափությանը, որոնք չեն վիճարկվել, Վճռաբեկ դա-

տարանն անհիմն է համարում, քանի որ տվյալ դեպքում Դատարանը ոչ թե ստուգել է վիճարկվող պետական գրանցման հիմքում ընկած վարչական ակտի՝ Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշման իրավաչափությունը, այլ դրա կիրառելիությունը Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ կառույցի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի քննություն ընթացքում Դատարանը, անդրադարձ կատարելով վիճարկվող պետական գրանցման համար հիմք հանդիսացած վարչական ակտի՝ Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշման կիրառության իրավաչափության հարցին, իրավաչափ կերպով հանգել է այն եզրակացության, որ Կադաստրը չէր կարող ինքնակամ կառույցի մասով պետական գրանցում կատարել այնպիսի պայմաններում, երբ պետական գրանցման վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվել այդ կցակառույցի՝ Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշման կայացումից առաջ կառուցված լինելու հանգամանքը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, սույն գործում առկա բոլոր ապացույցների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի ուսումնասիրության արդյունքում իրավացիորեն հանգել է այն եզրակացության, որ Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշումը կիրառելի չէ Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ կառույցի նկատմամբ, քանի որ Կադաստրը չի ապացուցել այն հանգամանքը, որ վարչական վարույթի ընթացքում առկա են եղել բավարար տվյալներ առ այն, որ այդ ինքնակամ կառույցը կառուցվել է Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշումը կայացնելուց առաջ: Փաստորեն, սույն գործով վիճարկվող պետական գրանցման վարչական վարույթի ընթացքում չի հաստատվել այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետի 05.11.2007 թվականի թիվ 4628-Ա որոշումը կարող է հիմք հանդիսանալ նշված ինքնակամ կառույցի նկատմամբ Զիտտա Հովհաննիսյանի և Աննա Բաբայանի սեփականության իրավունքի պետական գրանցման համար, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ շինության նկատմամբ 17.07.2013 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի խախտմամբ և ենթակա է անվավեր ճանաչման:

Ելնելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծություններից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանը, Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 14/2 շենքի 22-րդ բնակարանին հարակից ինքնակամ շինության մասով անվավեր ճանաչելով 17.07.2013 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, կայացրել է գործն ըստ էության ձիշտ լուծող դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի

տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվոր Հասմիկ Մելքոնյանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հասմիկ Մելքոնյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Կադաստրի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.05.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 18.02.2015 թվականի վճիռին:

2. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից հօգուտ Հասմիկ Մելքոնյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «գ» կետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ սույն գործով բացակայում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված երեք պայմաններից որևէ մեկը, այսինքն՝ կատարողական վարույթի համար խոչընդոտ են հանդիսացել ոչ թե «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված սահմանափակումները, այլ գույքի բացակայությունը: Մինչդեռ նման պատճառաբանությունն անհիմն է, քանի որ պարտապան հանդիսացող անհատ ձեռնարկատիրոջ կողմից գույք կամ եկամուտներ չունենալը հանգեցնում է նրան, որ վերջինից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է անհատ ձեռնարկատիրոջ գույքի (հայտնաբերված կամ չհայտնաբերված) արժեքը, ինչն էլ համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «գ» կետի կանոնակարգմանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.06.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ «կայացնել նոր դատական ակտ»:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տեսչության 20.10.2014 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1252 որոշման համաձայն՝ որոշվել է Ա/Ձ Էդուարդ Ափոյանից գանձել ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը՝ 462.503 ՀՀ դրամի չափով (**գ.թ. 5-6**).

2) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 05.06.2015 թվականի որոշման համաձայն՝ Տեսչության 20.10.2014 թվականի թիվ 1252 որոշման հիման վրա Ա/Ձ Էդուարդ Ափոյանի նկատմամբ 27.01.2015 թվականին հարուցված թիվ 01/11-338/15 կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով (**գ.թ. 7**):

### **4. Վճարել դատարանի պարձառաբանությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հանրային իրավական դրամական պահանջի դատական կարգով հարկադիր կատարման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «գ» կետով նախատեսված պայմանի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. անհար ձեռնարկատիրոջն ուղղված հանրային իրավական դրամական պահանջով գումարի բռնագանձման վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «գ» կետի հիմքով հարուցված գործը ենթակա է արդյոք կարճման՝*



*վեճը որևէ դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով այն դեպքում, երբ անհայր ձեռնարկատերն ընդհանրապես գույք չունի:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները, օրենքով սահմանված կարգով, վարչական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պահանջներն են (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ օրինական ուժի մեջ մտած վճռով տրված կատարողական թերթի հիման վրա, եթե՝

ա. անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը,

բ. ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր չէ առանց նրան սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականության) իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձման,

գ. իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում «հանրային իրավական» է կոչվում պետական կամ համայնքային բյուջե դրամական գումարներ վճարելու այն պահանջը, որին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1) այդ դրամական գումարները վճարելու կարգը սահմանված է օրենքով,

2) այդ դրամական գումարները վճարելը պարտադիր է,

3) այդ դրամական գումարները վճարելու պարտադիրությունը ծագում է և հաստատվում է վարչական ակտի հիման վրա:

Օրենսդիրը, հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման հետ կապված հասարակական հարաբերությունները կարգավորելիս սահմանել է հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման երկու տարբեր եղանակներ՝ *դատական և արտադատական*: Ընդ որում, հանրային իրավական դրամական պահանջի՝ *արտադատական կարգով* հարկադիր կատարման եղանակը նախատեսված է որպես ընդհանուր կանոն, իսկ *դատական կարգով* կատարման եղանակը՝ որպես բացառություն ընդհանուր կանոնից:

Այդ ընդհանուր կանոնը սահմանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման անմիջականորեն այդ պահանջի պարտադիրությունը հաստատող անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Հանրային իրավական դրամական պահանջների՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակը կիրառվում է միայն այն դեպքում, երբ առկա է հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ օրենքով սահմանված որևէ սահմանափակում. այդ սահմանափակումներն իրենց հերթին հանդիսանում են այն պայմանները, որոնց առկայությունն անհրաժեշտ է հանրային իրավական դրամական պահանջների՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակի գործողության համար: Վերոնշյալ պայմանները (սահմանափակումները) նախատեսված են «Վարչարարության հիմունքների և վարչական

վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասում և հանգում են հետևյալին.

ա) անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը,

բ) ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր չէ առանց նրան սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականության) իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձման,

գ) իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը:

Այսպիսով, նշված իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը կանխորոշում է հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման եղանակը. այդ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում հանրային իրավական դրամական պահանջի՝ *արտադարական կարգով* հարկադիր կատարման եղանակը չի գործում, և գործում է հանրային իրավական դրամական պահանջի՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակը (*տե՛ս, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունն ընդդեմ Կարեն Պետրոսյանի թիվ ՎԴ3/0196/05/16 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 19.06.2017 թվականի որոշումը*):

Անդրադառնալով հանրային իրավական դրամական պահանջի դատական կարգով հարկադիր կատարման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «գ» կետով սահմանված պայմանի էությանը՝ վճարելի դատարանն արձանագրում է, որ նշված իրավական նորմով նախատեսված՝ «(...) գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը (...)» արտահայտությունը նախևառաջ նշանակում է, որ տվյալ անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող որոշակի գույք, սակայն այդ գույքի արժեքն ավելի փոքր է, քան հանրային իրավական դրամական պահանջով գանձման ենթակա գումարի չափը: Միևնույն ժամանակ վերոգրյալ օրենսդրական ձևակերպումը կարող է նշանակել նաև, որ անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձն ընդհանրապես չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, քանի որ վերջինիս մոտ գույքի բացակայությունը ևս գործնականում առաջացնում է այնպիսի իրավիճակ, երբ «(...) գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը (...)»: Փաստորեն, հանրային իրավական դրամական պահանջի դատական կարգով հարկադիր կատարման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «գ» կետով սահմանված իրավական նորմի դիսպոզիցիան հավասարապես տարածվում է թե՛ այն դեպքի վրա, երբ անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող որոշակի գույք, սակայն այդ գույքի արժեքն ավելի փոքր է, քան հանրային իրավական դրամական պահանջով գանձման ենթակա գումարի չափը, թե՛ այն դեպքի վրա, երբ անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձն ընդհանրապես չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք:

Այսպիսով, վճարելի դատարանը գտնում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «գ» կետով սահմանված իրավադրույթի ուժով հանրային իրավական դրամական պահանջների՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակը կիրառվում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) անբողոքարկելի վարչական ակտով հաստատված հանրային իրավական դրամական պահանջն ուղղված է անհատ ձեռնարկատիրոջը կամ իրավաբանական անձին,

2) անբողոքարկելի վարչական ակտով հաստատված հանրային իրավական դրամական պահանջի չափը գերազանցում է այդ անհատ ձեռնարկատիրոջը կամ իրավաբանական անձին պատկանող գույքի արժեքը, ինչը կարող է առաջանալ ներքոհիշյալ իրավիճակներից որևէ մեկի առկայության դեպքում.

- անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձն ունի սեփականության

իրավունքով իրեն պատկանող որոշակի գույք, սակայն այդ գույքի արժեքն ավելի փոքր է, քան հանրային իրավական դրամական պահանջով գանձման ենթակա գումարի չափը, կամ

- անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձն ընդհանրապես չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք:

**Վճարել դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Տեսչության 20.10.2014 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1252 որոշմամբ որոշվել է Ա/Չ Էդուարդ Ափոյանից գանձել ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը՝ 462.503 ՀՀ դրամի չափով: Նշված հանրային իրավական դրամական պահանջը ներկայացվել է հարկադիր կատարման արտադատական եղանակով, և Ծառայության կողմից հարուցվել է համապատասխան կատարողական վարույթ: Մինչդեռ Ծառայության 05.06.2015 թվականի որոշմամբ նշված կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով, որի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե պարտապանը չունի գույք կամ եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել, և հարկադիր կատարողի՝ նույն օրենքի 40 հոդվածի երրորդ մասով սահմանված կարգով իրականացված հետախուզումը և (կամ) պահանջատիրոջ կողմից պարտապանի գույքը փնտրելու ուղղությամբ ձեռնարկված օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

Փաստորեն, Տեսչության 20.10.2014 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1252 որոշմամբ Ա/Չ Էդուարդ Ափոյանի նկատմամբ առաջադրված հանրային իրավական դրամական պահանջը գերազանցել է այդ անհատ ձեռնարկատիրոջը պատկանող գույքի արժեքը, ինչն առաջացել է այնպիսի իրավիճակի պատճառով, որ անհատ ձեռնարկատերն ընդհանրապես չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք: Հիմք ընդունելով վերոգրյալ իրողությունը՝ Տեսչությունը դիմել է վարչական դատարան՝ 20.10.2014 թվականի թիվ 1252 որոշմամբ Ա/Չ Էդուարդ Ափոյանի նկատմամբ հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարի բռնագանձման հայցով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը (...) հարուցվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքերով՝ այդ ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա:

Վերոգրյալ իրավադրույթների բովանդակությունից բխում է, որ օրենսդիրը հանրային իրավական դրամական պահանջի՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակի հետ կապված դատավարական հարաբերությունները կարգավորել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով՝ ամրագրելով, որ վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք կարող են դիմել վարչական դատարան՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով. անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը հարուցվում են այդ ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա: Հանրային իրավական դրա-

մական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը վարչական դատավարությունում քննվում են հատուկ վարույթի կարգով, որի առանձնահատկությունները սահմանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 29.1-ին գլխում:

Այսպիսով, սույն վարչական գործը հարուցվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29.1-ին գլխով սահմանված կարգով՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջով Ա/Չ Էդուարդ Ափոյանից գումարի բռնագանձման վերաբերյալ Տեսչության հայցադիմումի հիման վրա:

Մինչդեռ Դատարանը որոշում է կայացրել սույն գործի վարույթը կարճելու մասին ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վեճը որևէ դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով: Դատարանն իր որոշմամբ պատճառաբանել է, որ պարտապանը չունի գույք կամ եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել, ինչը չի կարող անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործի հարուցման հիմք հանդիսանալ, քանզի այն դեպքում, երբ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը չունի որևէ գույք, որի նկատմամբ կարող է իրականացվել հարկադիր կատարում, վերանում է նաև այդ միջամտության նկատմամբ վարչադատական վերահսկողության իրականացման անհրաժեշտությունը:

Վերաքննիչ դատարանը մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի որոշումը թողել է անփոփոխ՝ ըստ էության համաձայնելով Դատարանի դիրքորոշման հետ: Վերաքննիչ դատարանը միաժամանակ նշել է, որ այն պարագայում, երբ Ծառայությունն արձանագրել է, որ Ա/Չ Էդուարդ Ափոյանը չի հայտնաբերվել, իրեն պատկանող գույք և դրամական միջոցներ չունի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «գ» կետը չի կարող կիրառվել:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների փաստարկները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ տվյալ դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «գ» կետով սահմանված՝ հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարը դատական կարգով բռնագանձելու հիմքն առկա է, քանի որ անհատ ձեռնարկատիրոջ մոտ գույքի բացակայությունը ևս գործնականում առաջացնում է այնպիսի իրավիճակ, երբ անբողոքարկելի վարչական ակտով գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է վերջինիս գույքի արժեքը: Նման պայմաններում Տեսչության 20.10.2014 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1252 որոշման վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարումը պետք է տեղի ունենա ոչ թե արտադատական, այլ՝ դատական եղանակով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ա/Չ Էդուարդ Ափոյանն ընդհանրապես չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, ինչի հետևանքով անբողոքարկելի վարչական ակտով հաստատված հանրային իրավական դրամական պահանջի չափը գերազանցում է Ա/Չ Էդուարդ Ափոյանին պատկանող գույքի արժեքը: Այլ կերպ ասած՝ պարտապան հանդիսացող անհատ ձեռնարկատիրոջ կողմից գույք կամ եկամուտներ չունենալն ըստ էության նշանակում է, որ վերջինից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է անհատ ձեռնարկատիրոջ գույքի (հայտնաբերված կամ չհայտնաբերված) արժեքը, ինչն էլ համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «գ» կետի կանոնակարգմանը, որպիսի պայմաններում վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց մոտ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դեմ հանրային իրավական դրամական պահանջով գումարի բռնագանձման հայցով վարչական դատարան դիմելու իրավական հնարավորության բացակայության մասին խոսք լինել չի կարող:

Անփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սխալմամբ են եկել այն եզրահանգման, որ սույն գործով անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործի հարուցման իրավական հիմքերը բացակայում են: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ արձանագրում է, որ սույն վարչական գործը ենթակա չէր կարճման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վեճը որևէ դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով, քանի որ տվյալ դեպքում առկա է հանրային իրավական դրամական պահանջը դատական կարգով հարկադիր կատարելու օրենքով նախատեսված պայմաններից մեկը, այն է՝ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.06.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
վարչական գործ թիվ ՎԴ/4084/05/15  
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան  
Դատավորներ՝ Ք. Մկոյան  
Ա. Առաքելյան

վարչական գործ թիվ **ՎԳ/4084/05/15**  
**2017թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
- Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
- Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 07-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Լիլիթ Մուսեյանի ներկայացուցիչ Դավիթ  
Ասատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 13.10.2016 թվա-  
կանի որոշման դեմ՝ ըստ հայցի Լիլիթ Մուսեյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի  
(այսուհետ՝ Քաղաքապետարան)՝ վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջնե-  
րի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Լիլիթ Մուսեյանը պահանջել է անվավեր ճանաչել Քաղաքա-  
պետարանի 08.07.2015 թվականի թիվ Վ-0036685 և 17.07.2015 թվականի թիվ Վ-0039588  
որոշումները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան)  
18.02.2016 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճվել է, Քաղաքապետա-  
րանից հոգուտ Լիլիթ Մուսեյանի բռնագանձվել է 10.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուց-  
չին վճարվելիք գումար և 800 ՀՀ դրամ՝ որպես փոստային ծախսի գումար:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 13.10.2016  
թվականի որոշմամբ Լիլիթ Մուսեյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և  
Դատարանի 18.02.2016 թվականի «Գործի վարույթը կարճելու մասին» որոշումը թողնվել  
է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լիլիթ Մուսեյանի ներկայացուցիչը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ, 13-րդ հոդվածները:*

*Բողոքը բերած անձը նշված պարձառարան էլ է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Քաղաքապետարանի 08.07.2015 թվականի թիվ Վ-0036685 և 17.07.2015 թվականի թիվ Վ-0039588 որոշումներով Լիլիթ Մուսեյանի նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000-ական ՀՀ դրամի չափով, վերջինս այդ վարչական ակտերի դեմ դիմել է դատական պաշտպանության՝ որպես ներկայացուցչի վճար ծախսելով 100.000 ՀՀ դրամ, իսկ Դատարանը որոշել է այդ դատական ծախսից փոխհատուցել ընդամենը 10.000 ՀՀ դրամ: Փաստորեն, սույն գործով Լիլիթ Մուսեյանի խախտված իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ չէ, քանի որ վերջինս, կատարելով որոշակի ծախսեր դատական պաշտպանության իրականացման համար, արդյունքում չի կարողացել հասնել այդ ծախսերի փոխհատուցմանը: Ընդ որում, տվյալ դեպքում Լիլիթ Մուսեյանը վերջնական դատական ակտով կրել է ավելի մեծ ծախսեր, քան այն հնարավոր կորուստը, որը կարող էր առաջանալ վիճարկվող վարչական ակտերը դատական կարգով չվիճարկելու պարագայում, և որի կանխման համար անձը դիմել է դատարան:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.10.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Երևան համայնքից հօգուտ Լիլիթ Մուսեյանի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչի վճար:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պետի 08.07.2015 թվականի թիվ Վ-0036685 և 17.07.2015 թվականի թիվ Վ-0039588 որոշումներով Լիլիթ Մուսեյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000-ական ՀՀ դրամի չափով (**գ.թ. 5, 6**).

2) Լիլիթ Մուսեյանի (Վստահորդ) և անհատ ձեռնարկատեր Դավիթ Ասատրյանի (Կատարող) միջև 13.08.2015 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է Քաղաքապետարանի թիվ Վ-0039588 և թիվ Վ-0036685 վարչական ակտերի մասով Վստահորդի իրավունքների պաշտպանության շրջանակներում մատուցել իրավաբանական ծառայություններ (իրավաբանական խորհրդատվություն, վստահորդի շահերի ներկայացում պետական և ոչ պետական մարմիններում, անհրաժեշտ դատավարական գործողությունների իրականացում, հայցադիմումների, բողոքների, միջնորդությունների կազմում և այլն), որոնց արժեքը կազմում է 100.000 ՀՀ դրամ (**գ.թ. 72-73**).

3) Դավիթ Ասատրյանը՝ որպես Լիլիթ Մուսեյանի ներկայացուցիչ, սույն վարչական գործի շրջանակներում կատարել է հետևյալ դատավարական գործողությունները.

- 20.08.2015 թվականին փոստային կապի ծառայության միջոցով ներկայացրել է հայցադիմում, որը Դատարանի 28.08.2015 թվականի որոշմամբ վերադարձվել է (**գ.թ. 2-10, 12**).

- վերաքննության կարգով բողոքարկել է Դատարանի 28.08.2015 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը. այդ վերաքննիչ բողոքը բավարարվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից և հայցադիմումն ընդունվել է Դատարանի վարույթ սկզբնական ներկայացման օրը (**գ.թ. 18-21, 38-45, 56**),

- 23.11.2015 թվականին փոստային կապի ծառայության միջոցով Դատարան է ներկայացրել գրավոր դիմում **(գ.թ. 61-65)**,

- մասնակցել է 18.02.2016 թվականի նախնական դատական նիստին և այդ նիստի ընթացքում ներկայացրել է գրավոր միջնորդություն **(գ.թ. 73-75)**.

4) Ծառայության պետի տեղակալի 10.11.2015 թվականի թիվ Վ-42/63 որոշմամբ սույն գործով վիճարկվող վարչական ակտերը՝ Ծառայության պետի 08.07.2015 թվականի թիվ Վ-0036685 և 17.07.2015 թվականի թիվ Վ-0039588 որոշումները, ճանաչվել են անվավեր **(գ.թ. 67)**.

5) Դատարանը 18.02.2016 թվականի որոշմամբ կարճել է սույն վարչական գործի վարույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված վեճն ըստ էության սպառվելու հիմքով և դատական ծախսերի բաշխման հարցը լուծել է հետևյալ կերպ. Քաղաքապետարանից հօգուտ Լիլիթ Մուսեյանի բռնագանձել է 10.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչին վճարվելիք գումար և 800 ՀՀ դրամ՝ որպես փոստային ծախսի գումար **(գ.թ. 76-77)**:

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վեճն ըստ էության սպառվելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի բաշխման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի վարույթը վեճն ըստ էության սպառվելու հիմքով կարճվելու դեպքում հայցվորի կրած դատական ծախսերի, մասնավորապես՝ ներկայացուցչին վճարված գումարի, հարուցման պարտականությունը պարասխանողի վրա դնելիս ի՞նչ չափանիշներով պետք է որոշվի այդ դատական ծախսի հարուցման ողջամիտ չափը:*

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:



ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ ներկայացուցիչների ծախսերը վճարում է նրանց ներգրավված դատավարության մասնակիցը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է (...) մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, եթե գործի վարույթը կարճվում է, բացառությամբ նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 10-րդ կետերում նշված դեպքերի: Նշված դեպքերում դատարանը կարող է դատական ծախսերի հատուցման պարտականությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն դնել պատասխանողի վրա (...):

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ ներկայացուցիչների վճարների գծով դատական ծախսի հատուցումը դրվում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կամ համայնքի վրա, եթե գործը լուծվել է ի վնաս իրենց: Հատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ըստ էության սպառվել է:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորվում են յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքները, որոնց բաղկացուցիչ տարրերից մեկն իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն է. այդ իրավունքը երաշխիք է հանդիսանում իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ իրացման համար:

ՀՀ սահմանադրության դատարանը 08.10.2008 թվականի թիվ ՍԴՌ-765 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է նախ՝ որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը, երկրորդ՝ պետության պարտավորությունը որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն սպահովելու բոլոր նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն:

Մարդու իրավունքների և ազատությունների ամենահուսալի և արդյունավետ պաշտպանության մեխանիզմը դատական պաշտպանությունն է: Պաշտպանության այս միջոցը պետք է արդյունավետ լինի գործնականում, այսինքն՝ այն պետք է կարողանա կանխել ենթադրյալ խախտման շարունակումը և երաշխավորել, որ դատական պաշտպանության դիմելով՝ անձը չի հայտնվի առավել անբարենպաստ վիճակում, քան մինչ այդ էր: Հետևաբար դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է անձին իրավաբանական օգնություն ցուցաբերող ներկայացուցչին վճարված գումարի՝ որպես դատական ծախսի համարժեք փոխհատուցման հնարավորություն: Պատշաճ փոխհատուցում տրամադրելը դատական պաշտպանության արդյունավետության անհրաժեշտ տարր է, որը լրացուցիչ երաշխիք է հանդիսանում անձանց իրավունքների խախտումները վերացնելու, ընդհուպ մինչև խախտումը եղած դրությունը վերականգնելու համար:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ անձի դատական պաշտպանությունը չի կարող արդյունավետ լինել, երբ վերջինս վերջնական բարենպաստ դատական ակտին

հասնելու համար կրում է ավելի շատ ծախսեր, քան այն գույքի հնարավոր կորուստն էր, որի կանխման համար նա դիմել էր դատական պաշտպանության: Ուստի հատկապես վարչական մարմինների ոչ իրավաչափ վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության դատական բողոքարկման հայցերով կայացված դատական ակտերով դատական ծախսերի բաշխումը պետք է կատարվի այն հաշվառմամբ, որ անձինք չզրկվեն որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու, մինչև խախտումը եղած իրադրությունը վերականգնելու իրական հնարավորությունից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված «դատարանի իրավունքը» բացարձակ չէ և իր բնույթով պահանջում է ներպետական կարգավորումների առկայություն, որոնք կարող են որոշակի սահմանափակումների ենթարկել այդ իրավունքը (*յրևու, Z and Others v. the United Kingdom գործով Եվրոպական դատարանի 10.05.2001 թվականի վճիռը, 91-93-րդ կետեր*): Այս առումով դատական ծախսերի վճարման պարտականությունն ինքնին չի կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիության իրավունքի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ անհամատեղելի սահմանափակում (*յրևու, Kreuz v. Poland գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 60-րդ կետ*): Եվրոպական դատարանի տեսանկյունից որոշ դեպքերում դատական ծախսերի բաշխման հետ կապված հարցերը կարող են նշանակություն ունենալ այն հանգամանքի գնահատման համար, թե դատավարությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է արդյոք Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին, թե՛ ոչ (*յրևու, Stankiewicz v. Poland գործով Եվրոպական դատարանի 06.04.2006 թվականի վճիռը, 60-րդ կետ*): Կոնվենցիան երաշխավորում է ոչ թե տեսական կամ վերացական, այլ գործնական և արդյունավետ իրավունքներ (*յրևու, Ait-Mouhoub v. France գործով Եվրոպական դատարանի 28.10.1998 թվականի վճիռը, 52-րդ կետ*): Հետևաբար, դատական այն ծախսերը, որոնց վճարման պարտականությունն անձը կրում է ոչ թե դատարան դիմելիս, այլ դատական քննության ավարտից հետո, գործնականում նույնպես կարող են դիտարկվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համատեքստում՝ որպես «դատարանի իրավունքի» սահմանափակում (*յրևու, Stankov v. Bulgaria գործով Եվրոպական դատարանի 12.07.2007 թվականի վճիռը, 54-րդ կետ*): Ընդ որում, «դատարանի իրավունքի» այդ սահմանափակման համապատասխանությունը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին ենթակա է գնահատման այն տեսանկյունից, թե արդյոք այն հետապնդում է իրավաչափ նպատակ, և առկա է արդյոք ողջամիտ հավասարակշռություն կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (*յրևու, Apostol v. Georgia գործով Եվրոպական դատարանի 28.11.2006 թվականի վճիռը, 57-րդ կետ*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները դատական ծախսերի մաս են կազմում և ենթակա են հատուցման օրենքով սահմանված կարգով: Դատական ծախսերի, այդ թվում նաև՝ ներկայացուցիչներին վճարված գումարների հատուցման ընդհանուր կանոնն այն է, որ փոխհատուցման ենթակա է դատավարության մասնակցի կրած ծախսերի այն ծավալը, որն անհրաժեշտ է եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Ընդ որում, դատական ներկայացուցիչների վճարների հատուցման հետ կապված օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 10-րդ մատում կատարել է հատուկ վերապահում այն մասին, որ ներկայացուցիչների վճարների գծով դատական ծախսի հատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափերը: Այսինքն՝ ամեն դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել փաստաբանի վարձատրության ողջամտությունը, որպեսզի հնարավորինս բացառվի դատական ծախսի հատուցման պարտականություն կրող սուբյեկտին չարդարացված, ակնհայտ ոչ համաչափ պարտավորություններով ծանրաբեռնելը: Անձինք ազատ են կնքելու իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր իրենց նախընտրած փաստաբանի

կամ ներկայացուցչություն իրականացնելու իրավասություն ունեցող ցանկացած անձի հետ՝ վճարելով փոխադարձ համաձայնությամբ որոշված ցանկացած գումար: Այդուհանդերձ, այդ գումարների փոխհատուցման ակնկալիք նրանք կարող են ունենալ միայն ծախսերի այն ծավալով, որն իրապես անհրաժեշտ է եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է հաշվի առնվի նաև դատական ծախսերի փոխհատուցման համաչափությունը, որպեսզի դատական պաշտպանության դիմելը չդառնա ոչ արդյունավետ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում անդրադարձել է փաստաբանի վարձատրության խելամտության հարցին՝ նշելով, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև փաստաբանի խելամիտ վարձատրությունը: Ուստի փաստաբանի խելամիտ վարձատրությունը նախևառաջ պետք է դիտել որպես դատական ծախս, և թե՛ հայցվորը, և թե՛ պատասխանողը դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույց: Ընդ որում, անկախ վճարված գումարի բռնագանձման մասին պահանջի առկայությունից, վճարումը հավաստող ապացույց ներկայացնելը բավարար է փաստաբանի վարձատրությանը, որպես դատական ծախսի, վճռով անդրադառնալու համար *(տե՛ս, անհայր ձեռնարկալսեր Նարինե Ռոսպոյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/1401/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ներկայացուցչի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափանիշները.

1) փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը),

2) գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը),

3) նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը,

4) դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը *(տե՛ս, Ֆերդինանս Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը):*

Վերահաստատելով և զարգացնելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի վկայակոչված որոշմամբ թվարկվածներից բացի, վարչական դատավարությունում ներկայացուցիչների վճարների չափի ողջամտության գնահատման կարևոր չափորոշիչներ են նաև դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար կատարված ծախսերի անհրաժեշտությունը, փոխհատուցման համարժեքությունն ու արդյունավետությունը: Դատական ծախսերի, այդ թվում նաև փաստաբանի վճարների փոխհատուցման այս չափորոշիչներն անտեսելու պարագայում խոսք չի կարող լինել արդյունավետ դատական պաշտպանության մասին, քանի որ որոշ դեպքերում դատական պաշտպանության դիմած անձինք կհայտնվեն առավել անբարենպաստ վիճակում, քան մինչ այդ էր:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վեճը սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքի համար օրենսդիրը սահմանել է դատական ծախսերի հատուցման որոշ առանձնահատկություններ: Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում և 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում սահմանված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի հատուցման պարտականությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող է դրվել պատասխանողի վրա:

Թեև օրենսդիրը սահմանել է դատարանի հայեցողական լիազորությունը՝ լուծելու

վեճը սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի, այդ թվում նաև փաստաբանին վճարված գումարների հատուցման պարտականությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն պատասխանողի վրա դնելու հարցը, այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ լիազորությունը դատարանները պետք է իրացնեն մարդու՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների հաշվառմամբ՝ այնպես, որ չխաթարվի այդ իրավունքների բուն էությունը: Մասնավորապես, եթե վեճը սպառվել է վարչական մարմնի ակտիվ գործողությունների հետևանքով, օրինակ՝ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ժամանակ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վերացրել է վիճարկվող վարչական ակտը, ապա այդ պարագայում հայցվորի կրած դատական ծախսերի, այդ թվում նաև՝ ներկայացուցչին վճարված գումարների հատուցման պարտականությունը պետք է կրի պատասխանող կողմը, ինչն ապահովում է անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների արդյունավետ իրացումը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն բոլոր դեպքերում, երբ գործի վարույթը կարճվում է այն հիմքով, որ վեճն ըստ էության սպառվել է վարչական մարմնի ակտիվ գործողությունների հետևանքով, ապա հայցվորի կրած դատական ծախսերի, այդ թվում նաև՝ ներկայացուցչին վճարված գումարների հատուցման պարտականությունը պետք է դրվի պատասխանողի վրա:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վեճն ըստ էության սպառվելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում վիճարկվող վարչական ակտով դրա հասցեատիրոջ վրա դրված գումարային պարտավորության չափը դատական ծախսերի բաշխման հարցի լուծման համար չպետք է դիտարկվի որպես միակ որոշիչ հանգամանք: Այլ կերպ՝ եթե վիճարկվող վարչական ակտով դրա հասցեատիրոջ վրա դրված գումարային պարտավորության չափն ավելի փոքր է, քան այդ վարչական ակտը դատական կարգով վիճարկելու համար իրավաբանական օգնություն ստանալու նպատակով անձի կատարած ծախսերը, ապա դատարանը դատական ծախսերի բաշխման հարցը պետք է լուծվի իրավունքների արդյունավետ պաշտպանության սկզբունքի լույսի ներքո՝ հաշվի առնելով խախտված իրավունքները վերականգնելուն ուղղված անձի կողմից փաստացի կատարված ծախսերի և դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ողջամիտ հարաբերակցությունը: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վեճն ըստ էության սպառվելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի հարցի լուծումը չպետք է պայմանավորել միայն վիճարկվող վարչական ակտով դրա հասցեատիրոջ վրա դրված գումարային պարտավորության չափով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցի լուծման համար դատարանը պետք է հաշվի առնի հետևյալ չափորոշիչները.

1) փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը),

2) գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը),

3) նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը,

4) ներկայացուցչին վճարված գումարի և վիճարկվող վարչական ակտով առաջադրված գումարի չափի հարաբերակցությունը,

5) անձի կողմից փաստացի կատարված ծախսերի այն ծավալը, որն անհրաժեշտ է եղել դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար,

6) վեճն ըստ էության սպառվելու իրադրության առաջացման հարցում վարչական մարմնի գործողությունների ազդեցությունը:

Ընդ որում վերջին չափորոշիչը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ

հողվածի 1-ին մասի 7-րդ կետում նշված հիմքով գործի վարույթը կարճելու պարագայում ստանում է առաջնային նշանակություն, քանի որ վեճն ըստ էության սպառելուն ուղղված վարչական մարմնի ակտիվ գործողությունները վկայում են այն իրողության մասին, որ անձի դատական պաշտպանության դիմելը եղել է արդարացված, ուստի դատական ծախսերի հատուցման մյուս չափորոշիչները ենթակա են գնահատման անձի կատարած ծախսերի արդյունավետության և համարժեքության հաշվառմամբ:

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործը հարուցվել է Լիլիթ Մուսեյանի ներկայացուցիչ Դավիթ Ասատրյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս խնդրել է վերացնել Ծառայության պետի 08.07.2015 թվականի թիվ Վ-0036685 և 17.07.2015 թվականի թիվ Վ-0039588 որոշումները: Նշված վարչական ակտերով Լիլիթ Մուսեյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ յուրաքանչյուր որոշմամբ 5.000-ական ՀՀ դրամի չափով: Լիլիթ Մուսեյանը նշված վարչական ակտերը դատական կարգով վիճարկելու համար իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել Դավիթ Ասատրյանի հետ, իսկ պայմանագրով մատուցվելիք ծառայությունների գինը կազմել է 100.000 ՀՀ դրամ: Սույն վարչական գործի քննության ընթացքում վարչական մարմինն իր նախաձեռնությամբ անվավեր է ճանաչել վերոգրյալ վարչական ակտերը, և սույն գործի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջի հիմքում ընկած հանրային-իրավական վեճն ըստ էության սպառվել է:

Դատարանը 18.02.2016 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վեճն ըստ էության սպառվելու հիմքով և դատական ծախսերի բաշխման հարցը լուծել է հետևյալ կերպ. Քաղաքապետարանից հօգուտ Լիլիթ Մուսեյանի բռնագանձել է 10.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչին վճարվելիք գումար, 800 ՀՀ դրամ՝ որպես փոստային ծախսի գումար: Դատարանը գտել է, որ տվյալ դեպքում ներկայացուցչին վճարման ենթակա դատական ծախսի՝ ողջամիտ և դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ չափը կազմում է 10.000 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Լիլիթ Մուսեյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը և Դատարանի որոշումը թողնելով անփոփոխ, ըստ էության համաձայնել է Դատարանի վերոգրյալ դիրքորոշման հետ՝ հիմք ընդունելով սույն գործի բարդությունը, քննության ժամկետները, դատական նիստերի քանակը, տևողությունը, ներկայացուցչի կատարած գործողությունները, նմանատիպ գործերով ներկայացուցչի վճարի՝ պրակտիկայում ընդունված չափը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ներկայացուցչին վճարված գումարների փոխհատուցման չափի վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով վեճն ըստ էության սպառվել է վարչական մարմնի ակտիվ գործողությունների հետևանքով: Մինչդեռ ստորադաս դատարաններն անտեսել են դատական պաշտպանության արդյունավետության սահմանադրական հիմնարար սկզբունքը և քննարկման առարկա չեն դարձրել այն հարցը, թե տվյալ դեպքում հայցվորի դատական պաշտպանության իրականացման համար իրավաբանական օգնություն ստանալու նպատակով 100.000 ՀՀ դրամ կատարվելիք ծախսը որքանով է եղել արդարացված, և արդյոք տրված փոխհատուցման չափը սույն գործի փաստերի հաշվառմամբ կարող է դիտվել ողջամիտ և բավարար մինչև խախտումը եղած իրադրությունը վերականգնելու համար:

Այդ առումով ստորադաս դատարանները պետք է պատշաճ գնահատական տան հետևյալ հարցերին.

- վերջնական բարենպաստ դատական ակտին հասնելու համար անձի կատարած

կամ կատարելիք ծախսերը չեն գերազանցում արդյո՞ք այն գումարների չափը, որոնց կորուստը կանխելու համար վերջինս դիմել է դատական պաշտպանության,

- արդյո՞ք անձի կողմից փաստացի կատարված կամ կատարվելիք ծախսն անհրաժեշտ է եղել իրավունքների պաշտպանության համար,

- արդյո՞ք անձի կողմից փաստացի կատարված կամ կատարվելիք ծախսի և դրա կատարման անհրաժեշտության միջև առկա է ողջամիտ հարաբերակցություն,

- ներկայացուցչի վճարի փոխհատուցման ինչ չափը կարող է վերականգնել մինչև Լիլիթ Մուսեյանի կողմից դատարան դիմելն առկա դրությունը:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանների կողմից դատական ծախսերի (վնասների) հատուցման հետ կապված փաստաբանի վարձատրության ողջամիտ չափը որոշելու նպատակով փաստաբանների պալատի խորհուրդը կարող է սահմանել փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակ: Նշված գնացուցակը չի կարող օգտագործվել այլ նպատակով:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013 թվականի թիվ 33/3-Լ որոշմամբ հաստատված «Դատարանների կողմից դատական ծախսերի հատուցման հետ կապված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակի» (այսուհետ՝ Գնացուցակ) համաձայն՝ հայցային վարույթի գործերով միջամտող վարչական ակտը, բացառությամբ ճանապարհային ոստիկանության կողմից կայացված տուգանքի վարչական ակտը, վերացնելու (անվավեր ճանաչելու) կամ փոփոխելու գործերով որպես փաստաբանի հոնորարի չափ սահմանված է վարչական ակտով նախատեսված գումարի (տուգանքի, տույժի և այլն) 5 տոկոսը, բայց ոչ պակաս բազային տուրքի 100-ապատիկի չափից և ոչ ավել բազային տուրքի 2000-ապատիկի չափից, իսկ եթե միջամտող վարչական ակտով տուգանք նախատեսված չէ՝ բազային տուրքի 200-ապատիկի չափով: Գնացուցակով բացառություն է նախատեսվել ճանապարհային ոստիկանության կողմից կայացված տուգանքի նշանակման վերաբերյալ վարչական ակտը վերացնելու (անվավեր ճանաչելու) կամ փոփոխելու գործերով փաստաբանի հոնորարի չափի սահմանման պարագայում. այդ վարչական ակտը վերացնելու (անվավեր ճանաչելու) կամ փոփոխելու գործերով որպես փաստաբանի հոնորարի չափ սահմանված է վարչական ակտով նախատեսված գումարի (տուգանքի, տույժի և այլն) 5 տոկոսը, բայց ոչ պակաս բազային տուրքի 50-ապատիկի չափից: Ընդ որում, Գնացուցակում օգտագործված բազային տուրքը սահմանվում է 1.000 ՀՀ դրամ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման (ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու) համար վարչական տույժ նշանակելու մասին Քաղաքապետարանի կողմից կայացված վարչական ակտերն իրենց բնույթով, այդ թվում՝ սանկցիայի չափերով, առավել նմանատիպ են ճանապարհային ոստիկանության կողմից կայացված վարչական ակտերին: Հետևաբար Վճռաբեկ դատարանը հնարավոր է համարում ճանապարհային ոստիկանության կողմից կայացված տուգանքի նշանակման վերաբերյալ վարչական ակտը վերացնելու (անվավեր ճանաչելու) գործերով փաստաբանի հոնորարի չափի կիրառելիությունը նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման համար Քաղաքապետարանի կողմից կայացված վարչական ակտերի վիճարկման գործերով:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկելով հայցվորի կողմից իր իրավունքների դատական պաշտպանության համար փաստաբանին վճարված գումարների հատուցման հարցը և որպես ողջամիտ փոխհատուցման չափ սահմանելով 10.000 ՀՀ դրամ՝ ստորադաս դատարաններն անտեսել են այն կարևոր հանգամանքը, որ սույն գործի վարույթը կարճվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վեճն ըստ էության սպառվելու հիմքով, որպիսի իրադրությունն առաջացել է Քաղաքապետարանի ակտիվ գործողություն-

ների հետևանքով: Հետևաբար Լիլիթ Մուսեյանի ներկայացուցչին վճարված գումարների փոխհատուցման չափը սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո դատական պաշտպանության արդյունավետության տեսանկյունից պարզելու և գնահատելու համար սույն գործը դատական ծախսերի հատուցման մասով անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը՝ դատական ծախսերի բաշխման, մասնավորապես՝ ներկայացուցչի վճարի հատուցման մասով, նոր քննության ուղարկելու համար:

### **5. Վճռաբեկ դատարանի պարզառաքանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտը բողոքարկվել է միայն դատական ծախսերի մասով, բողոք բերող անձը վերոգրյալ պատճառաբանությունների հիմքով պետական տուրքի վճարման պարտականություն չի կրում: Ընդ որում, դատական պրակտիկան զարգացել է հենց նշված ուղղությամբ, որպիսի հանգամանքն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդի «ՀՀ-ում դատարանների կողմից պետական տուրքի գանձման դատական պրակտիկայի մասին» մասին 29.01.2013 թվականի թիվ 129 որոշման մեջ: Համաձայն նշված որոշման 10-րդ կետի՝ եթե բողոքարկվում է դատական ակտը միայն դատական ծախսերի մասով, ապա ներկայացված բողոքի համար պետական տուրք չի վճարվում (*տես*, «Ռեքվիզիտ» ՍՊԸ-ն ընդդեմ «Մեգարոն» ՍՊԸ-ի թիվ ԵՃԳ/1017/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.03.2015 թվականի որոշումը):

Թեև նշված իրավական դիրքորոշումներն արտահայտվել են քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործի շրջանակներում, սակայն Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք հավասարապես կիրառելի են նաև վարչական դատավարության կարգով քննվող գործերի նկատմամբ, քանի որ թե քաղաքացիական, թե վարչական գործով կայացված վերջնական դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելիս անձը հայցում է այնպիսի դատավարական հետևանքների առաջացում, որոնք անմիջականորեն պայմանավորված չեն ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետ և ուղղված են վարույթի կանոնավոր ընթացքի ապահովմանը: Այս պարագայում անձի բողոքարկման իրավունքի իրացումն ուղղված է ոչ թե գործի ըստ էության լուծման իրավաչափության, այլ դրա արդյունքում դատական ծախսերի բաշխման իրավաչափության հարցի պարզմանը: Հետևաբար վերջնական դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու դեպքում, անկախ այն հանգամանքից, թե տվյալ դատական ակտը կայացվել է քաղաքացիական, թե վարչական գործի շրջանակներում, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության,

բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանի 18.02.2016 թվականի «Գործի վարույթը կարճելու մասին» որոշումը վերաքննության կարգով, իսկ Վերաքննիչ դատարանի 13.10.2016 թվականի որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկվել են միայն դատական ծախսերի մասով, իսկ Լիլիթ Մուսեյանը ՀՀ վճռաբեկ դատարանի վերոգրյալ որոշման ուժով ազատված է այդ բողոքների համար պետական տուրքի վճարման պարտականությունից: Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Լիլիթ Մուսեյանը տվյալ դեպքում վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրք չի վճարել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար սահմանված պետական տուրքի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 13.10.2016 թվականի որոշումը և գործը՝ դատական ծախսերի բաշխման, այն է՝ ներկայացուցչի վճարի հատուցման մասով, ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն*  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ





## 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետը՝ Կոնվենցիա) 6-րդ, 13-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Ոստիկանության 30.09.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503676017 որոշմամբ Անի Դավթյանի նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 20.000 ՀՀ դրամի չափով, վերջինս այդ վարչական ակտի դեմ դիմել է դատական պաշտպանության՝ որպես ներկայացուցչի վճար ծախսելով 100.000 ՀՀ դրամ, իսկ Դատարանը որոշել է այդ դատական ծախսից փոխհատուցել ընդամենը 5.000 ՀՀ դրամ: Փաստորեն, սույն գործով Անի Դավթյանի խախտված իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ չէ, քանի որ վերջինս, կատարելով որոշակի ծախսեր դատական պաշտպանության իրականացման համար, արդյունքում չի կարողացել հասնել այդ ծախսերի փոխհատուցմանը: Հատկանշական է, որ տվյալ դեպքում Անի Դավթյանը վերջնական դատական ակտով կրել է ավելի մեծ ծախսեր, քան այն հնարավոր կորուստը, որը կարող էր առաջանալ վիճարկվող վարչական ակտը դատական կարգով չվիճարկելու պարագայում, և որի կանխման համար անձը դիմել է դատարան:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.01.2017 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Ոստիկանությունից հոգուտ Անի Դավթյանի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչի վճար:

## 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ոստիկանության 30.09.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503676017 որոշման համաձայն՝ Անի Դավթյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 20.000 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 4**):

2) Անի Դավթյանի (Վստահորդ) և անհատ ձեռնարկատեր Դավիթ Ասատրյանի (Կատարող) միջև 25.10.2015 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է Ոստիկանության 30.09.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503676017 որոշման մասով Վստահորդի իրավունքների պաշտպանության շրջանակներում մատուցել իրավաբանական ծառայություններ (իրավաբանական խորհրդատվություն, վստահորդի շահերի ներկայացում պետական և ոչ պետական մարմիններում, անհրաժեշտ դատավարական գործողությունների իրականացում, հայցադիմումների, բողոքների, միջնորդությունների կազմում և այլն), որոնց արժեքը կազմում է 100.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 22**):

3) Դավիթ Ասատրյանը՝ որպես Անի Դավթյանի ներկայացուցիչ, սույն վարչական գործի շրջանակներում կատարել է հետևյալ դատավարական գործողությունները.

- 18.11.2015 թվականին փոստային կապի ծառայության միջոցով ներկայացրել է հայցադիմում, որը Դատարանի 26.11.2015 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ (**հատոր 1-ին, գ.թ. 2-10**).

- մասնակցել է 22.02.2016 թվականի դատական նիստին և այդ նիստի ընթացքում ներկայացրել է գրավոր միջնորդություններ (**հատոր 1-ին, գ.թ. 19-27**).

- 29.02.2016 թվականին Դատարան է ներկայացրել գրավոր դիմում՝ տրամադրելով

տեղեկատվություն սույն վարչական գործով երրորդ անձ ներգրավված Նարեկ Հովհաննիսյանի հասցեի մասին **(հատոր 1-ին, գ.թ. 37)**.

- մասնակցել է 30.03.2016 թվականի դատական նիստին **(հատոր 1-ին, գ.թ. 38-43)**:

4) Դատարանը 18.04.2016 թվականի վճռով հայցը բավարարել է և դատական ծախսերի բաշխման հարցը լուծել է հետևյալ կերպ. Ոստիկանությունից հոգուտ Անի Դավթյանի բռնագանձել է 5.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչի վճարի հատուցման գումար **(հատոր 1-ին, գ.թ. 44-53)**:

**4. Վճռաբեկ դատարանի պայրձառարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վիճարկման հայցի բավարարման դեպքում դատական ծախսերի բաշխման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ հետևյալ հարցադրմանը. վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով հայցապահանջը բավարարվելու դեպքում հայցվորի կրած դատական ծախսերի, մասնավորապես՝ ներկայացուցչին վճարված գումարի հարուցման պարտականությունը պարասխանողի վրա դնելիս ի՞նչ չափանիշներով պետք է որոշվի այդ դատական ծախսի հարուցման ողջամիտ չափը:*

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ ներկայացուցիչների ծախսերը վճարում է նրանց ներգրավված դատավարության մասնակիցը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է (...) սյուս կողմի

կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ ներկայացուցիչների վճարների գծով դատական ծախսի հատուցումը դրվում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կամ համայնքի վրա, եթե գործը լուծվել է ի վնաս իրենց: Հատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությանը և Կոնվենցիայով երաշխավորվում են յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքները, որոնց բաղկացուցիչ տարրերից մեկն իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն է, այդ իրավունքը երաշխիք է հանդիսանում իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ իրացման համար:

ՀՀ սահմանադրական դատարանը 08.10.2008 թվականի թիվ ՍԴՌ-765 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է նախ՝ որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը, երկրորդ՝ պետության պարտավորությունը որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ապահովելու բոլոր նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մարդու իրավունքների և ազատությունների ամենահուսալի և արդյունավետ պաշտպանության մեխանիզմը դատական պաշտպանությունն է: Պաշտպանության այս միջոցը պետք է արդյունավետ լինի գործնականում, այսինքն՝ այն պետք է կարողանա կանխել ենթադրյալ խախտման շարունակումը և երաշխավորել, որ դատական պաշտպանության դիմելով՝ անձը չի հայտնվի առավել անբարենպաստ վիճակում, քան մինչ այդ էր: Հետևաբար դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է անձին իրավաբանական օգնություն ցուցաբերող ներկայացուցչին վճարված գումարի՝ որպես դատական ծախսի համարժեք փոխհատուցման հնարավորություն: Պատշաճ փոխհատուցում տրամադրելը դատական պաշտպանության արդյունավետության անհրաժեշտ տարր է, որը լրացուցիչ երաշխիք է հանդիսանում անձանց իրավունքների խախտումները վերացնելու, ընդհուպ մինչև խախտումը եղած դրությունը վերականգնելու համար:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ անձի դատական պաշտպանությունը չի կարող արդյունավետ լինել, երբ վերջինս վերջնական բարենպաստ դատական ակտին հասնելու համար կրում է ավելի շատ ծախսեր, քան այն գույքի հնարավոր կորուստն էր, որի կանխման համար նա դիմել էր դատական պաշտպանության: Ուստի հատկապես վարչական մարմինների ոչ իրավաչափ վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության դատական բողոքարկման հայցերով կայացված դատական ակտերով դատական ծախսերի բաշխումը պետք է կատարվի այն հաշվառմամբ, որ անձինք չզրկվեն որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու, մինչև խախտումը եղած իրադրությունը վերականգնելու իրական հնարավորությունից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված «դատարանի իրավունքը» բացարձակ չէ և իր բնույթով պահանջում է ներպետական կարգավորումների առկայություն, որոնք կարող են որոշակի սահմանափակումների ենթարկվել այդ իրավունքը (*յրեն, Z and Others v. the United Kingdom գործով Եվրոպական դատարանի 10.05.2001 թվականի վճիռը, 91-93-րդ կետեր*): Այս առումով դատական ծախսերի վճարման պարտականությունն ինքնին չի կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիության իրավունքի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ անհամատեղելի սահմանափակում (*յրեն, Kreuz v. Poland գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 60-րդ կետ*): Եվրոպական դա-

տարանի տեսանկյունից որոշ դեպքերում դատական ծախսերի բաշխման հետ կապված հարցերը կարող են նշանակություն ունենալ այն հանգամանքի գնահատման համար, թե դատավարությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է արդյոք Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին, թե՛ ոչ (*Կրև, Stankiewicz v. Poland գործով Եվրոպական դատարանի 06.04.2006 թվականի վճիռը, 60-րդ կետ*): Կոնվենցիան երաշխավորում է ոչ թե տեսական կամ վերացական, այլ գործնական և արդյունավետ իրավունքներ (*Կրև, Ait-Mouhoub v. France գործով Եվրոպական դատարանի 28.10.1998 թվականի վճիռը, 52-րդ կետ*): Հետևաբար դատական այն ծախսերը, որոնց վճարման պարտականությունն անձը կրում է ոչ թե դատարան դիմելիս, այլ դատական քննության ավարտից հետո, գործնականում նույնպես կարող են դիտարկվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համատեքստում որպես «դատարանի իրավունքի» սահմանափակում (*Կրև, Stankov v. Bulgaria գործով Եվրոպական դատարանի 12.07.2007 թվականի վճիռը, 54-րդ կետ*): Ընդ որում, «դատարանի իրավունքի» այդ սահմանափակման համապատասխանությունը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին ենթակա է գնահատման այն տեսանկյունից, թե արդյոք այն հետապնդում է իրավաչափ նպատակ, և առկա է արդյոք ողջամիտ հավասարակշռություն կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (*Կրև, Apostol v. Georgia գործով Եվրոպական դատարանի 28.11.2006 թվականի վճիռը, 57-րդ կետ*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները դատական ծախսերի մաս են կազմում և ենթակա են հատուցման օրենքով սահմանված կարգով: Դատական ծախսերի, այդ թվում նաև՝ ներկայացուցիչներին վճարված գումարների հատուցման ընդհանուր կանոնն այն է, որ փոխհատուցման ենթակա է դատավարության մասնակցի կրած ծախսերի այն ծավալը, որն անհրաժեշտ է եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Ընդ որում, դատական ներկայացուցիչների վճարների հատուցման հետ կապված օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 10-րդ մասում կատարել է հատուկ վերապահում այն մասին, որ ներկայացուցիչների վճարների գծով դատական ծախսի հատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափերը: Այսինքն՝ ամեն դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել փաստաբանի վարձատրության ողջամտությունը, որպեսզի հնարավորինս բացառվի դատական ծախսի հատուցման պարտականություն կրող սուբյեկտին չարդարացված, ակնհայտ ոչ համաչափ պարտավորություններով ծանրաբեռնելը: Անձինք ազատ են կնքելու իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր իրենց նախընտրած փաստաբանի կամ ներկայացուցչություն իրականացնելու իրավասություն ունեցող ցանկացած անձի հետ՝ վճարելով փոխադարձ համաձայնությամբ որոշված ցանկացած գումար: Այդուհանդերձ, այդ գումարների փոխհատուցման ակնկալիք նրանք կարող են ունենալ միայն ծախսերի այն ծավալով, որն իրապես անհրաժեշտ է եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է հաշվի առնվի նաև դատական ծախսերի փոխհատուցման համաչափությունը, որպեսզի դատական պաշտպանության դիմելը չդաճնա ոչ արդյունավետ (*Կրև, նաև Լիլիթ Մոսեյանն ընդդեմ Երևանի Զադաքապետարանի թիվ ՎԴ/6047/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում անդրադարձել է փաստաբանի վարձատրության խելամտության հարցին՝ նշելով, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև փաստաբանի խելամիտ վարձատրությունը: Ուստի փաստաբանի խելամիտ վարձատրությունը նախնառաջ պետք է դիտել որպես դատական ծախս, և թե՛ հայցվորը և թե՛ պատասխանողը դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույց: Ընդ որում, անկախ վճարված գումարի բռնագանձման մասին պահանջի առկայությունից՝ վճարումը հավաստող ապացույց ներկայացնելը բավարար

է փաստաբանի վարձատրությանը, որպես դատական ծախսի, վճռով անդրադառնալու համար (*տես, անհասարակական Նարինե Ռուսոյանի ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/1401/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ներկայացուցչի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափանիշները.

5) փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը),

6) գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը),

7) նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը,

8) դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (*տես, Ֆերդինանդ Առաքելյանի ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Թեև նշված իրավական դիրքորոշումներն արտահայտվել են քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործի շրջանակներում, սակայն Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք հավասարապես կիրառելի են նաև վարչական դատավարության կարգով քննվող գործերի նկատմամբ, քանի որ թե՛ քաղաքացիական, թե՛ վարչական գործերով անհրաժեշտություն է առաջանում որոշելու ներկայացուցչի վճարների գծով դատական ծախսերի հատուցման ողջամիտ չափը, իսկ վերոգրյալ չափանիշներն ուղղորդող նշանակություն կարող են ունենալ նաև վարչական գործերով ներկայացուցչի վարձատրության խելամտության հարցը լուծելու համար:

Վերահաստատելով և զարգացնելով նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի վկայակոչված որոշմամբ թվարկվածներից բացի, վարչական դատավարությունում ներկայացուցիչների վճարների չափի ողջամտության գնահատման կարևոր չափորոշիչներ են նաև դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար կատարված ծախսերի անհրաժեշտությունը, փոխհատուցման համարժեքությունն ու արդյունավետությունը: Դատական ծախսերի, այդ թվում նաև՝ փաստաբանի վճարների փոխհատուցման այս չափորոշիչներն անտեսելու պարագայում խոսք չի կարող լինել արդյունավետ դատական պաշտպանության մասին, քանի որ որոշ դեպքերում դատական պաշտպանության դիմած անձինք կհայտնվեն առավել անբարենպաստ վիճակում, քան մինչ այդ էր:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ այն դեպքում, երբ ներկայացված վիճարկման հայցի բավարարման դեպքում վիճարկվող վարչական ակտով դրա հասցեատիրոջ վրա դրված գումարային պարտավորության չափը դատական ծախսերի բաշխման հարցի լուծման համար չպետք է դիտարկվի որպես միակ որոշիչ հանգամանք: Այլ կերպ՝ եթե վիճարկվող վարչական ակտով դրա հասցեատիրոջ վրա դրված գումարային պարտավորության չափն ավելի փոքր է, քան այդ վարչական ակտը դատական կարգով վիճարկելու համար իրավաբանական օգնություն ստանալու նպատակով անձի կատարած ծախսերը, ապա դատարանը դատական ծախսերի բաշխման հարցը լուծելիս պետք է հաշվի առնի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ողջամիտ չափը: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճարկման հայցի բավարարման դեպքում դատական ծախսերի հարցի լուծումը չպետք է պայմանավորել միայն վիճարկվող վարչական ակտով դրա հասցեատիրոջ վրա դրված գումարային պարտավորության չափով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ վիճարկման հայցի բավարարման դեպքում դատական

ծախսերի հատուցման հարցի լուծման համար դատարանը պետք է հաշվի առնի հետևյալ չափորոշիչները.

7) փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը),

8) գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը),

9) նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը,

10) ներկայացուցչին վճարված գումարի և վիճարկվող վարչական ակտով առաջադրված գումարի չափի հարաբերակցությունը,

11) անձի կողմից փաստացի կատարված ծախսերի այն ծավալը, որն անհրաժեշտ է եղել դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործը հարուցվել է Անի Դավթյանի ներկայացուցիչ Դավիթ Ասատրյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս խնդրել է անվավեր ճանաչել Ոստիկանության 30.09.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503676017 որոշումը: Նշված վարչական ակտով Անի Դավթյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 20.000 ՀՀ դրամի չափով: Անի Դավթյանը նշված վարչական ակտը դատական կարգով վիճարկելու համար իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել Դավիթ Ասատրյանի հետ, իսկ պայմանագրով մատուցվելիք ծառայությունների գինը կազմել է 100.000 ՀՀ դրամ: Սույն վարչական գործի քննության արդյունքում Դատարանն անվավեր է ճանաչել Ոստիկանության 30.09.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1503676017 որոշումը և դատական ծախսերի բաշխման հարցը լուծել է հետևյալ կերպ. Ոստիկանությունից հոգուտ Անի Դավթյանի բռնագանձել է 5.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչի վճարի հատուցման գումար: Դատարանը գտել է, որ տվյալ դեպքում ներկայացուցչին վճարման ենթակա դատական ծախսի՝ ողջամիտ և դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ չափը կազմում է 5.000 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Անի Դավթյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը և Դատարանի որոշումը թողնելով անփոփոխ, ըստ էության համաձայնել է Դատարանի վերոգրյալ դիրքորոշման հետ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ներկայացուցչին վճարված գումարների փոխհատուցման չափի վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով Անի Դավթյանի ներկայացուցչի կողմից ներկայացված վիճարկման հայցը բավարարվել է, այսինքն՝ գործը լուծվել է ի վնաս Ոստիկանության: Մինչդեռ ստորադաս դատարաններն անտեսել են դատական պաշտպանության արդյունավետության սահմանադրական հիմնարար սկզբունքը և քննարկման առարկա չեն դարձրել այն հարցը, թե տվյալ դեպքում հայցվորի դատական պաշտպանության իրականացման համար իրավաբանական օգնություն ստանալու նպատակով 100.000 ՀՀ դրամ կատարվելիք ծախսը որքանով է եղել արդարացված, և արդյոք տրված փոխհատուցման չափը սույն գործի փաստերի հաշվառմամբ կարող է դիտվել ողջամիտ և բավարար՝ մինչև խախտումը եղած իրադրությունը վերականգնելու համար:

Այդ առումով ստորադաս դատարանները պետք է պատշաճ գնահատական տան հետևյալ հարցերին.

- վերջնական բարենպաստ դատական ակտին հասնելու համար անձի կատարած

կամ կատարելիք ծախսերը չէն գերազանցում արդյոք այն գումարների չափը, որոնց կորուստը կանխելու համար վերջինս դիմել է դատական պաշտպանության,

- արդյոք անձի կողմից փաստացի կատարված կամ կատարվելիք ծախսն անհրաժեշտ է եղել իրավունքների պաշտպանության համար,
- արդյոք անձի փաստացի կատարված կամ կատարվելիք ծախսի և դրա կատարման անհրաժեշտության միջև առկա է ողջամիտ հարաբերակցություն,
- ներկայացուցչի վճարի փոխհատուցման ինչ չափը կարող է վերականգնել մինչև Անի Դավթյանի կողմից դատարան դիմելն առկա դրությունը:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանների կողմից դատական ծախսերի (վնասների) հատուցման հետ կապված փաստաբանի վարձատրության ողջամիտ չափը որոշելու նպատակով փաստաբանների պալատի խորհուրդը կարող է սահմանել փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակ: Նշված գնացուցակը չի կարող օգտագործվել այլ նպատակով:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013 թվականի թիվ 33/3-Լ որոշմամբ հաստատված «Դատարանների կողմից դատական ծախսերի հատուցման հետ կապված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակի» (այսուհետ՝ Գնացուցակ) համաձայն՝ հայցային վարույթի գործերով միջամտող վարչական ակտը, բացառությամբ ճանապարհային ոստիկանության կողմից կայացված տուգանքի վարչական ակտը, վերացնելու (անվավեր ճանաչելու) կամ փոփոխելու գործերով որպես փաստաբանի հոնորարի չափ սահմանված է վարչական ակտով նախատեսված գումարի (տուգանքի, տույժի և այլն) 5 տոկոսը, բայց ոչ պակաս բազային տուրքի 100-ապատիկի չափից և ոչ ավել բազային տուրքի 2000-ապատիկի չափից, իսկ եթե միջամտող վարչական ակտով տուգանք նախատեսված չէ՝ բազային տուրքի 200-ապատիկի չափով: Գնացուցակով բացառություն է նախատեսվել ճանապարհային ոստիկանության կողմից կայացված տուգանքի նշանակման վերաբերյալ վարչական ակտը վերացնելու (անվավեր ճանաչելու) կամ փոփոխելու գործերով փաստաբանի հոնորարի չափի սահմանման պարագայում. այդ վարչական ակտը վերացնելու (անվավեր ճանաչելու) կամ փոփոխելու գործերով որպես փաստաբանի հոնորարի չափ սահմանված է վարչական ակտով նախատեսված գումարի (տուգանքի, տույժի և այլն) 5 տոկոսը, բայց ոչ պակաս բազային տուրքի 50-ապատիկի չափից: Ընդ որում, Գնացուցակում օգտագործված բազային տուրքը սահմանվում է 1.000 ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Անի Դավթյանի կողմից իր իրավունքների դատական պաշտպանության համար ներկայացուցչին վճարված գումարների փոխհատուցման չափը սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո դատական պաշտպանության արդյունավետության տեսանկյունից պարզելու և գնահատելու համար սույն գործը՝ դատական ծախսերի հատուցման մասով, անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը՝ դատական ծախսերի բաշխման, մասնավորապես՝ ներկայացուցչի վճարի հատուցման մասով, նոր քննության ուղարկելու համար:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի



Հանրապետության դատական ղեկարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտը բողոքարկվել է միայն դատական ծախսերի մասով, բողոք բերող անձը վերոգրյալ պատճառաբանությունների հիմքով պետական տուրքի վճարման պարտականություն չի կրում: Ընդ որում, դատական պրակտիկան զարգացել է հենց նշված ուղղությամբ, որպիսի հանգամանքն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդի «ՀՀ-ում դատարանների կողմից պետական տուրքի գանձման դատական պրակտիկայի մասին» մասին 29.01.2013 թվականի թիվ 129 որոշման մեջ: Համաձայն նշված որոշման 10-րդ կետի՝ եթե բողոքարկվում է դատական ակտը միայն դատական ծախսերի մասով, ապա ներկայացված բողոքի համար պետական տուրք չի վճարվում (*տես*, «Ռեպլիկեն» ՄՊԸ-ն ընդդեմ «Մեգարոն» ՄՊԸ-ի թիվ ԵՇԴ/1017/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.03.2015 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործի շրջանակներում արտահայտված վերոգրյալ իրավական դիրքորոշումը հավասարապես կիրառելի է նաև վարչական դատավարության կարգով քննվող գործերի նկատմամբ, քանի որ թե քաղաքացիական, թե վարչական գործով կայացված վերջնական դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելիս անձը հայցում է այնպիսի դատավարական հետևանքների առաջացում, որոնք անմիջականորեն պայմանավորված չեն ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետ և ուղղված են վարույթի կանոնավոր ընթացքի ապահովմանը: Այս պարագայում անձի բողոքարկման իրավունքի իրացումն ուղղված է ոչ թե գործի ըստ էության լուծման իրավաչափության, այլ դրա արդյունքում դատական ծախսերի բաշխման իրավաչափության հարցի պարզմանը: Հետևաբար վերջնական դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու դեպքում, անկախ այն հանգամանքից, թե տվյալ դատական ակտը կայացվել է քաղաքացիական, թե վարչական գործի շրջանակներում, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության, բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանի 18.04.2016 թվականի վճիռը վերաքննության կարգով, իսկ Վերաքննիչ դատարանի 11.01.2017 թվականի որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկվել են միայն դատական ծախսերի մասով, իսկ Անի Դավթյանը ՀՀ վճռաբեկ դատարանի վերոգրյալ որոշման ուժով ազատված է այդ բողոքների համար պետական տուրքի վճարման պարտականությունից: Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Անի Դավթյանը տվյալ դեպքում վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրք չի վճարել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար սահմանված պետական տուրքի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.01.2017 թվականի որոշումը և գործը՝ դատական ծախսերի բաշխման, այն է՝ ներկայացուցչի վճարի հատուցման մասով, ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

# ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Բաղաքացիական գործ թիվ **ԵԱՆԴ/0951/02/15**  
դատարանի որոշում 2017թ.  
Բաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0951/02/15  
Նախագահող դատավոր՝ Ա. Հունանյան

#### ՈՐՈՇՈՒՄ

#### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի սեպտեմբերի 04-ին,

քննարկելով ըստ հայցի «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Ալբերտ Վիրաբյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.10.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Ալբերտ Վիրաբյանի ներկայացուցիչ Գևորգ Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը,

#### ՊԱՐԶԵՑ

##### 1. Գործի դատարանական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Ալբերտ Վիրաբյանից գումար բռնագանձել:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ալբերտ Վիրաբյանը պահանջել է վարկային պայմանագրի նկատմամբ կիրառել առջին գործարքի անվավերության հետևա-

նքներ, միաժամանակ միջնորդել է պետական տուրքի վճարումը հետաձգել և լուծել այն վերջնական դատական ակտով:

Երևանի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Բաղիրյան) (այսուհետ՝ Դատարան) 01.09.2016 թվականի որոշմամբ Ալբերտ Վիրաբյանի պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է և հակընդդեմ հայցադիմումը՝ վերադարձվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.10.2016 թվականի որոշմամբ Ալբերտ Վիրաբյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ սահմանելով ժամկետ՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Սույն գործով վճարել բողոք է ներկայացրել Ալբերտ Վիրաբյանի ներկայացուցիչը: Վճարել բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված բողոքներով պետական տուրք չի վճարվում: Ավելին, առկա չէ որևէ օրենսդրական ինպերատիվ պահանջ միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացվող բողոքներով պետական տուրք գանձելու վերաբերյալ: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշմամբ բողոքաբերի համար ստեղծվել են դատարանի մատչելիության իրավունքի պաշտպանության խոչընդոտներ՝ վերջինիս վրա դնելով մի այնպիսի պարտականություն, որն օրենսդրությամբ նախատեսված չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 20.10.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

### **3. Վճարել դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման դեպքում պետական տուրք վճարելու հարցի վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պետական տուրքի չափը սահմանելու, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝

- ա) պետական տուրքի վճարումից ազատում,
- բ) պետականտուրքի նվազեցում,
- գ) պետականտուրքի դրույքաչափի նվազեցում,
- դ) պետականտուրքի վճարման ժամկետի հետաձգում,

ե) պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

ՀՀ սահմանադրական դատարանը, 25.05.2010 թվականի թիվ ՍԳՌ-890 որոշման շրջանակներում արձանագրելով, որ պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ, ընդգծել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման՝ համապատասխան արտոնությունները, ի թիվս այլնի, ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը: Միաժամանակ «Պետականտուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է այն դեպքերը, երբ դատարաններում պետականտուրք վճարելու պարտականությունից անձն ազատվում է **օրենքի ուժով**, որով բացառվում է այդ պարտականությունից անձին ազատելու հայեցողական մոտեցումը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) դիրքորոշումների հիման վրա նախկինում կայացրած որոշման շրջանակներում անդրադառնալով պետական տուրքի հետ կապված խնդիրներին, արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (*պե՛ս, Արմենակ և Գույրա Սահակյաններն ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի թիվ 3-734(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի որոշումը*, «Պայքար և Հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 վճիռը, կետ 44):

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը, ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված իրավական դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներին՝ գույքային և ոչ գույքային պահանջների

համար գանձվող պետական տուրքերի առնչությամբ, նախկինում կայացրած որոշումներից մեկով արձանագրել է, որ պետական տուրքի հաշվարկման հիմքն այն գույքային կամ ոչ գույքային պահանջն է, որով անձը դիմել է դատարան՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով՝ արդյունքում ակնկալելով ներկայացված պահանջի ըստ էության քննություն և լուծում: Այսինքն՝ գործող իրավակարգավորման պայմաններում պետական տուրքի գանձում իրականացվում է ոչ թե դատարանի ցանկացած գործողության, այլ այն գործողությունների համար, որոնց արդյունքում վերջնական դատական ակտի կայացմամբ քննարկվում և լուծվում է ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջը: Հետևաբար այն դեպքում, երբ դատարան դիմած անձը հայցում է դատարանի որևէ գործողության իրականացում, որն անմիջականորեն պայմանավորված չէ ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետ, այլ ուղղված է վարույթի կանոնավոր ընթացքն ապահովելուն, թեկուզև այդ գործողության հայցումն իրականացվում է բողոքարկման ընթացակարգի միջոցով, այնուամենայնիվ, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության, բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը, օրինակ՝ **միջանկյալ դատական ակտերի բողոքարկման պարագայում** (տե՛ս, «Ռեքվիզիտ» ՄՊԸ-ն ընդդեմ ընդդեմ «Սեգարոն» ՄՊԸ-ի թիվ ԵՇԴ/1017/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարքի դատարանի 11.03.2015 թվականի որոշումը):

Վճարելի դատարանն արձանագրում է, որ այն պարագայում, երբ անձի բողոքարկման իրավունքի իրացումն ուղղված չէ ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի քննությանը և լուծմանը, ընդհակառակը՝ շահագրգիռ անձը տվյալ դեպքում վիճարկում է միջանկյալ դատական ակտի իրավաչափության հարցը, հետևաբար բողոք բերող անձը վերագրյալ պատճառաբանությունների հիմքով պետական տուրքի վճարման պարտականություն չի կրում:

Սույն գործով Ալբերտ Վիրաբյանը Դատարան է ներկայացրել հակընդդեմ հայցադիմում՝ վարկային պայմանագրի նկատմամբ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին՝ միաժամանակ միջնորդելով պետական տուրքի վճարումը հետաձգել և անդրադառնալ վերջնական դատական ակտով (**գ.թ. 38-41**): Դատարանի 06.06.2016 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցադիմումը՝ վերադարձվել (**գ.թ. 42-44**): Ալբերտ Վիրաբյանը կրկին Դատարան է ներկայացրել հակընդդեմ հայցադիմում՝ վարկային պայմանագրի նկատմամբ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին՝ կրկին միջնորդելով հետաձգել պետական տուրքի վճարումը (**գ.թ. 61-65**): Դատարանի 01.09.2016 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը կրկին մերժվել է, իսկ հակընդդեմ հայցադիմումը՝ վերադարձվել (**գ.թ. 66-67**):

Դատարանի 01.09.2016 թվականի «Պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդությունը մերժելու և հակընդդեմ հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ» որոշման դեմ Ալբերտ Վիրաբյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք (**գ.թ. 74-76**): Վերաքննիչ դատարանի 20.10.2016 թվականի որոշմամբ Ալբերտ Վիրաբյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ *վերաքննիչ բողոքին կից չեն ներկայացվել բողոքի պարձենները գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու և պետական փորձը վճարելու վերաբերյալ ապացույցներ* (**գ.թ. 79**):

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով վերաքննիչ դատարանի՝ պետական տուրքի վճարված չլինելու մասով եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքաբերը չունի պետական տուրքի վճարման պարտականություն, քանի որ Դատարանի 01.09.2016 թվականի «Պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդությունը մերժելու և հակընդդեմ հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ» որոշումը հանդիսանում է միջանկյալ դատական ակտ, որի բողոքարկման պարագայում բողոքաբերը չի ակնկալում դատարանից որևէ գույքային կամ ոչ գույքային պահանջի բավարարում: Հետևաբար Վճարելի դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Ալբերտ Վիրաբյանը

վերոնշյալ իրավական դիրքորոշման հիմքով ազատված է պետական տուրքի վճարման պարտականությունից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանը, վերադարձնելով Ալբերտ Վիրաբյանի վերաքննիչ բողոքն այն պատճառաբանությամբ, որ վերաքննիչ բողոքին կից չի ներկայացվել պետական տուրքը վճարված լինելու վերաբերյալ ապացույց, թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ և 213-րդ հոդվածների խախտում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի 20.10.2016 թվականի որոշմամբ Ալբերտ Վիրաբյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է նաև այն հիմքով, որ վերաքննիչ բողոքին կից չեն ներկայացվել բողոքի պատճենները գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու վերաբերյալ ապացույցներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվեն բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը, նույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, գործը ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է որոշում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին: Որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր առերևույթ խախտումները:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ բողոքի վերադարձման հիմք է նաև բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները վերաքննիչ բողոքին կից չներկայացնելը:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ բողոք բերած անձը Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 20.10.2016 թվականի որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկել է միայն պետական տուրքի մասով, հնարավոր չի համարում անդրադառնալ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մյուս հիմքի իրավաչափության գնահատմանը, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է վերացման միայն պետական տուրքի մասով արձանագրված դատական սխալի մասով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարելու և Վերաքննիչ դատարանի որոշումը՝ վերաքննիչ բողոքը՝ պետական տուրքը վճարելու վերաբերյալ ապացույց չներկայացելու հիմքով վերադարձնելու մասով, վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.10.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը՝ վերաքննիչ բողոքը՝ պետական տուրքը վճարելու վերաբերյալ ապացույց չներկայացելու հիմքով վերադարձնելու մասով, վերացնել:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորագրություն*



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՆԴ/1684/02/15**  
դատարանի որոշում **2017թ.**  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/1684/02/15  
Նախագահող դատավոր՝ Ա. Սմբատյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան),

*նախագահությանը  
մասնակցությանը դատավորները*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈՒՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈՒՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՏՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի մարտի 13-ին,

քննարկելով ըստ հայցի Անդրանիկ Բեգլարյանի ընդդեմ Սուրեն Վերդիյանի, Նինա Ավերյանովայի, երրորդ անձինք ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Քրիստինե Արսենյանի՝ գումար բռնագանձելու, գործարքն առաջին ճանաչելու և գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի Նինա Ավերյանովայի ընդդեմ Անդրանիկ Բեգլարյանի, երրորդ անձինք Արման Վարդանյանի, Սահակ Հովհաննիսյանի՝ Արման Վարդանյանի և Անդրանիկ Բեգլարյանի միջև 03.04.2015 թվականին կնքված պահանջի իրավունքը գիջելու մասին պայմանագիրն առաջին համարելու, առաջին գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Սուրեն Վերդիյանի ընդդեմ Անդրանիկ Բեգլարյանի, երրորդ անձինք Արման Վարդանյանի, Նինա Ավերյանովայի՝ 22.09.2008 թվականի փոխառության պայմանագիրը չկնքված համարելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.04.2016 թվականի որոշման դեմ Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանի ներկայացուցիչ Կարեն Աղաջանյանի վճռաբեկ բողոքը,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատարանական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Անդրանիկ Բեգլարյանը պահանջել է Սուրեն Վերդիյանից բռնագանձել 15.000.000 ՀՀ դրամ, առաջին ճանաչել 29.04.2015 թվականին Սուրեն Վերդիյանի և Նինա Ավերյանովայի միջև կնքված Երևանի Գայի պողոտայի 7-րդ շենքի թիվ 8 բնակարանի առուվաճառքի թիվ 1429 պայմանագիրը և կիրառել առաջին գործարքի անվավերության հետևանքներ, Սուրեն Վերդիյանից հոգուտ Անդրանիկ Բեգլարյանի 15.000.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձումը տարածել Երևանի Գայի պողոտայի 7-րդ շենքի թիվ 8 բնակարանի վրա:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Նինա Ավերյանովան պահանջել է Արման Վարդանյանի և Անդրանիկ Բեգլարյանի միջև 03.04.2015 թվականին կնքված պահանջի իրավունքը զիջելու պայմանագիրը (այսուհետ՝ Ցեսիայի պայմանագիր) համարել առոչինչ և կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Սուրեն Վերդիյանը պահանջել է 22.09.2008 թվականի փոխառության պայմանագիրը (այսուհետ՝ Փոխառության պայմանագիր) համարել չկնքված:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Բաբայան) (այսուհետ՝ Դատարան) 23.02.2016 թվականի որոշմամբ սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է մինչև Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող թիվ ԵԱԲԴ/0625/02/16 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.04.2016 թվականի որոշմամբ Սուրեն Վերդիյանի և Նինա Ավերյանովայի վերաքննիչ բողոքները բավարարվել են՝ վերացվել է Դատարանի 23.02.2016 թվականի՝ գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել Սուրեն Վերդիյանի ներկայացուցիչ Վահագն Բաղրամյանը և Նինա Ավերյանովայի ներկայացուցիչ Միխեիլ Անդրեասյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ կետը, 303-րդ հոդվածի 1-ին կետը, 305-րդ հոդվածը, 306-րդ հոդվածի 1-ին կետը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 23.06.2011 թվականի խմբագրության «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզառարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն քաղաքացիական գործով Անդրանիկ Բեգլարյանը Ցեսիայի պայմանագրի հիման վրա հայց է ներկայացրել ընդդեմ Սուրեն Վերդիյանի, Նինա Ավերյանովայի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, իսկ Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանի կողմից Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել Ցեսիայի պայմանագիրն անվավեր ճանաչելու հայցադիմում, որի բավարարման դեպքում Անդրանիկ Բեգլարյանը կգրկվի Ցեսիայի պայմանագրից բխող իր պահանջի իրավունքից: Սույն Ցեսիայի պայմանագիրը սկզբնական հայցի միակ հիմքն է, և այլ գործի շրջանակներում դրա անվավերության դեպքում հայցը կդառնա առարկայագուրկ: Վերաքննիչ դատարանը հանգել է այն սխալ հետևության, որ Ցեսիայի պայմանագրի վիճարկումը սույն գործով որևէ հանգամանք քննելու անհնարինություն չի առաջացնում, և որ սույն գործի շրջանակներում նշված գործարքը նույնպես վիճարկվում է, ուստի Դատարանը, քննելով համապատասխան հայցը, պետք է եզրակացներ՝ արդյոք գործարքը կնքվել է օրենքի պահանջների պահպանմամբ, թե՛ ոչ: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Նինա Ավերյանովան, հակընդդեմ հայցով ներկայացնելով Ցեսիայի պայմանագիրն առոչինչ համարելու և առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ, հիմքում դրել է դրա կեղծ գործարք լինելու հանգամանքը: Հետևաբար Դատարանը քննելու է այդ պահանջը՝ կեղծ գործարքի առկայությունը հիմնավորող հանգամանքները պարզելու նպատակով: Արման

Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանի կողմից ներկայացված պահանջը բխում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով սնանկության գործով կառավարչին տված իրավունքից, այն է՝ հետ պահանջել Արման Վարդանյանի սնանկ ճանաչվելուն նախորդող երեք տարվա ընթացքում կատարված անհատույց փոխանցումները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանի կողմից Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ներկայացված գործարքի վիճարկման պահանջը և սույն գործով Նինա Ավերյանովայի կողմից ներկայացված գործարքի առջնությունը հետևանքներ կիրառելու պահանջը տարբեր նյութաիրավական պահանջներ են, որոնց հիմքերը տարբեր են՝ տարբեր ապացուցման բեռներով և տարբեր փաստական հանգամանքներով: Ընդ որում, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածը գործարքն անվավեր ճանաչելու ինքնուրույն հիմք է, որի իրավունքը պատկանում է միայն սնանկության գործով կառավարչին:

*2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 34-րդ հոդվածը, 35-րդ հոդվածի 2-րդ կետը, 96-րդ հոդվածի 1-ին կետը.*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հանգել է այն սխալ հետևության, որ սնանկության գործով կառավարիչն անբարեխղճորեն է օգտվել իր դատավարական իրավունքներից և կարող էր իր նյութաիրավական պահանջն այլ դատարան ներկայացնելու փոխարեն այն ներկայացնել սույն քաղաքացիական գործի շրջանակներում: Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանը սույն քաղաքացիական գործով ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ է, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան իրավանորմերից բխում է, որ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք չունեն այնպիսի դատավարական իրավունքներ, ինչպիսին ունեն պատասխանողն ու ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձը, հետևաբար իրավունք չունեն նոր հայցով հանդես գալու կամ ներկայացնելու հակընդդեմ հայց: Ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք չունեն որևէ նյութաիրավական պահանջ և ներգրավվում են դատավարությանը, որովհետև վերջնական դատական ակտը կարող է առնչվել նրանց իրավունքներին կամ օրինական շահերին: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանը չէր կարող համապատասխան հայցադիմում ներկայացնել ինչպես հայցվորի, այնպես էլ երրորդ անձ Արման Վարդանյանի դեմ՝ գործարքն անհատույց լինելու հիմքով Ցեսիայի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով, քանի որ իր դատավարական կարգավիճակը իրեն թույլ չէր տալիս:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «թիվ ԵԱՆԴ/1684/02/15 քաղաքացիական գործով Դատարանի կողմից գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ 23.02.2016 թվականի որոշումը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի 19.04.2016 թվականի որոշումն ամբողջությամբ բեկանել՝ օրինական ուժ տալով Դատարանի 23.02.2016 թվականի գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշմանը»:

**2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանների հիմնավորումները.**

Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր է և բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրության պահանջներից, մասնավորապես, այն հանգամանքը, թե արդյոք Անդրանիկ Բեգլարյանը սույն քաղաքացիական գործով հանդիսանում է պատշաճ հայցվոր, թե՛ ոչ, ոչ մի դեպքում չի կարող խոչընդոտ հանդիսանալ սույն քաղաքացիական գործի քննության համար, քանի որ Նինա Ավերյանովայի կողմից ներկայացված հակընդդեմ հայցի շրջանակներում նույնպես քննվում է նշված հանգամանքը, ուստի Դա-

տարանը, քննելով համապատասխան հակընդդեմ հայցը, կարող էր պարզել Անդրանիկ Բեգլարյանի պատշաճ հայցվոր լինելու հանգամանքը: Ընդ որում, նշանակություն չունեն ներկայացված հայցերի տարբեր առարկաները, քանի որ երկու դեպքում էլ Ցեսիայի պայմանագիրն անվավեր ճանաչելիս դատարանը կիրառելու է նույն անվավերության հետևանքները:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը միանգամայն իրավացիորեն է եզրակացրել, որ Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանն իր դատավարական իրավունքներից անբարեխիղճ է օգտվել՝ գրկված չլինելով սույն գործի շրջանակներում հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորությունից: Ուստի ակնհայտ է, որ սույն քաղաքացիական գործի շրջանակներում Ցեսիայի պայմանագիրը վիճարկվելու պարագայում բողոք բերողի կողմից այլ դատարան Ցեսիայի պայմանագրի վիճարկման հայց ներկայացնելը և հետագայում սույն քաղաքացիական գործի վարույթը կատենել պահանջելը ոչ մի դեպքում չի կարող մեկնաբանվել որպես դատավարական իրավունքներից բարեխիղճ օգտվել:

### **3. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին կետի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի փոխհարաբերակցության վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ սույն գործով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

3) ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին կետի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի, 105-րդ հոդվածի 1-ին կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

1) արդյո՞ք «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով սնանկության գործով կառավարչին փրկված լիազորությունն իրականացնելու համար անհրաժեշտ է գործարքի կեղծ լինելն ապացուցելու անհրաժեշտություն,

2) արդյո՞ք ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը փոխյալ գործի շրջանակներում կարող է ներկայացնել հակընդդեմ հայց:

1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առօչին գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կեղծ գործարքը, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, առաջինն է:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դիմել և դատական կարգով հետ ստանալ պարտապանի կատարած անհատույց փոխանցումները ցանկացած երրորդ անձանց, որոնք կատարվել են սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուն նախորդող երեք տարվա ընթացքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով բացահայտելով կեղծ գործարքի իրավական բնույթը, առանձնացրել է կեղծ գործարքի հետևյալ տարրերը, որոնց գնահատումը կոնկրետ գործի շրջանակներում կնպաստի բացահայտելու կեղծ գործարքի առկայությունը՝

1. Կեղծ գործարքի **օբյեկտն** այն իրավահարաբերություններն են, որից կողմերը ցանկանում են խուսափել, այսինքն՝ կեղծ գործարք կնքելու իրական պատճառ հանդիսացող հարաբերությունները: Որպես հատուկ օբյեկտ՝ կարելի է առանձնացնել քաղաքացիաիրավական շրջանառության այն կոնկրետ սուբյեկտի իրավունքներն ու օրինական շահերը, որոնք ոտնահարվում են կեղծ գործարք կնքելու հետևանքով (օրինակ՝ պարտավորության կատարումից խուսափելու նպատակով կնքված կեղծ գործարքի դեպքում պարտատիրոջ շահերը):

2. **Օբյեկտիվ կողմից** կեղծ գործարքները դրսևորվում են այնպիսի գործողություններով (անգործությամբ), որի արդյունքում ստեղծվում է իրական հարաբերության առկայության տպավորություն: Գործարքը կնքելուց հետո կողմերի վարքագիծը, **որպես կանոն**, դրսևորվում է անգործությամբ՝ կողմերը չեն իրականացնում համապատասխան գործողություններ՝ գործարքի իրական հետևանքների առաջացման համար:

3. Կեղծ գործարքի **սուբյեկտիվ կողմը** դրսևորվում է գործարքի **բոլոր կողմերի դիտավորությամբ**: Կեղծ գործարքի առկայությունը հաստատելու համար բավարար չէ միայն մեկ կողմի դիտավորությունը՝ կնքելու կեղծ գործարք: Կողմերից մեկի դիտավորության բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ գործարքի կեղծ լինելը հաստատելու համար, քանի որ գործարքի բարեխիղճ կողմը չպետք է տուժի մյուս կողմի անբարեխիղճության հետևանքով: Բացի այդ, կեղծ գործարքի նպատակը իրավահարաբերության պատրաստ ստեղծելն է, իսկ նման տպավորություն ստեղծելու համար անհրաժեշտ է, որպեսզի բոլոր կողմերն ի սկզբանե նման ցանկություն ունենան (*յրեն, Ալբերդի Պեյրոուսյանի սնանկության գործով կառավարիչ Արսեն Չիրջյանն ընդդեմ «Նորուլի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և մյուսների թիվ ԿԴԴ/0935/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշումներից մեկում անդրադարձել է նաև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի իրավական վերլուծությանը՝ գտնելով, որ նշված նորմը սահմանում է սեփականության իրավունքի դադարման ինքնուրույն հիմք (*յրեն, Հարություն Ջուրմյանի սնանկության գործով կառավարիչ Ադասի Արսենյանն ընդդեմ Գայանե և Ռուբեն Ջուրմյանների թիվ ԵԿԴ/2304/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.03.2012 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշումներից մեկում անդրադարձել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման համար անհրաժեշտ պայմաններին՝ արձանագրելով, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ փաստա-կազմը՝

ա) պարտապանի կատարած փոխանցման անհատույց լինելը,

բ) փոխանցումը պարտապանի սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուն նախորդող երեք տարվա ընթացքում կատարած լինելը ցանկացած երրորդ անձի (*յրեն, Ալբերդի Պեյրոուսյանի սնանկության գործով կառավարիչ Արսեն Չիրջյանն ընդդեմ «Նորուլի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և մյուսների թիվ*

ԿԴԴ/0935/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով կեղծ գործարքի առոչնչության հետևանքներ կիրառելու և սնանկության գործով կառավարչի կողմից «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիման վրա անհատույց փոխանցումները հետ պահանջելու կարգավորումների միջև տարբերությունների՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Կեղծ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջներ քննելիս դատարանը պետք է գնահատման արժանացնի այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են, մասնավորապես, կեղծ գործարքի կողմերի ներքին կամքի և արտահայտած կամահայտնության հարաբերակցությունը, բացահայտի կեղծ գործարքի բոլոր կողմերի ներքին կամքը, կեղծ գործարք կնքելու մոտակա և հեռահար նպատակները, պարզի, թե արդյոք գործարքը փաստացի կատարվել է, թե՛ ոչ և այլն: Կեղծ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ:

Ի տարբերություն կեղծ գործարքի՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի կիրառման նպատակը պարտապանի գույքի հավաքագրումն է՝ սնանկության վարույթի ընթացքում պարտատերերի պահանջների բավարարման նպատակով: Ընդ որում, կառավարիչն այդ իրավունքը դատական կարգով կարող է իրականացնել պարտապանին սնանկ ճանաչելուց հետո, բայց ոչ ուշ քան մեկ տարվա ընթացքում: Սույն նորմի կիրառման համար անհրաժեշտ է, որպեսզի դատարանը գործի քննության ընթացքում պարզի պարտապանի կողմից անհատույց փոխանցում կատարած լինելու հանգամանքի առկայությունը և այդ փոխանցման կատարման ժամանակը: Ընդ որում, վերոնշյալ հոդվածով նման պահանջ ներկայացնելու համար օրենսդրի կողմից սահմանվել է հատուկ սուբյեկտ՝ սնանկության գործով կառավարիչը:

Այսպիսով, եթե կեղծ գործարքի առկայությունը հաստատված համարելու համար պահանջվում է մի շարք տարաբնույթ հանգամանքների վերհանում և գնահատում, ապա «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի կիրառման համար բավարար է միայն նույն հոդվածով թվարկված հանգամանքների առկայության հաստատումը: Նույն հոդվածով սնանկության կառավարչին տրված լիազորության նպատակը սնանկության վարույթի նպատակների իրագործումն է հնարավորինս արդյունավետ եղանակներով: Հետևաբար վերոնշյալ հոդվածի հիմքով դատարան դիմելիս սնանկության գործով կառավարիչը հարկադրված չէ ապացուցել տվյալ գործարքի կեղծ բնույթը: Կառավարիչի հայցի բավարարման համար անհրաժեշտ և բավարար է վերը թվարկված պայմանների առկայությունը:

Ինչ վերաբերում է կեղծ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջներ քննելիս վերը նշված հոդվածի կիրառման հնարավորությանը, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նշված պահանջը կարող է ընդհանրապես չառնչվել սնանկության որևէ վարույթի, այսինքն՝ նման հետևանքներ կիրառելիս պարտադիր չէ, որ օրինակ՝ գործարքի կողմերից մեկը լինի սնանկ ճանաչված անձ, ուստի հնարավոր է, որ կեղծ գործարքի նկատմամբ որևէ կերպ կիրառելի չլինի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ կեղծ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով անհատույց փոխանցումները հետ պահանջելու գործերով ապացուցման ենթակա փաստերի, ինչպես նաև նման պահանջ ներկայացնելու սուբյեկտների շրջանակը միանգամայն տարբեր է: Այլ կերպ ասած, ինչպես կեղծ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ քննելիս չի քննարկվում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով թվարկված պայմանների առկայությունը (օրինակ՝ ժամկետային սահմանափակումը), այնպես էլ նույն հոդվածի հիմքով պահանջ քննելիս՝ կեղծ գործարքի առկայությունը:

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք կարող են գործի մեջ մտնել հայցվորի կամ պատասխանողի կողմում մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը, եթե գործով կայացվող վճիռը կարող է ազդել կողմերից մեկի հանդեպ նրանց ունեցած իրավունքների կամ պարտականությունների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք օգտվում են կողմի իրավունքներից և կրում են նրա պարտականությունները, բացի հայցի հիմքը կամ առարկան փոխելու, հայցային պահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու, հայցից հրաժարվելու, հայցն ընդունելու կամ հաշտության համաձայնություն կնքելու և դատական ակտի հարկադիր կատարում պահանջելու իրավունքից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք կարող են գործի մեջ մտնել մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Նրանք օգտվում են հայցվորի բոլոր իրավունքներից և կրում են նրա բոլոր պարտականությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պատասխանողն իրավունք ունի մինչև գործով վճիռ կայացնելը հակընդդեմ հայց հարուցել ընդդեմ հայցվորի՝ սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հակընդդեմ հայցը հարուցվում է հայց հարուցելու ընդհանուր կանոններով:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հակընդդեմ հայցն ընդունվում է, եթե՝

1) հակընդդեմ պահանջն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը.

2) հակընդդեմ հայցի բավարարումը լրիվ կամ մասամբ բացառում է սկզբնական հայցի բավարարումը.

3) հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել վեճի առավել արագ և ձիշտ լուծումը:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի կարգավիճակով պայմանավորված՝ վերջինս դատավարության ընթացքում օժտված է այնպիսի իրավունքներով, որոնք ուղղակիորեն չեն ազդում գործի քննության ծավալի վրա: Մասնավորապես՝ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձը չի կարող փոխել հայցի հիմքը կամ առարկան, ավելացնել կամ նվազեցնել հայցային պահանջների չափը և այլն: Օրենսդրի նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի իրավունքներով ու պարտականություններն անմիջականորեն չեն քննվում տվյալ գործի շրջանակներում, այլ տվյալ գործով վերջնական ակտը հետագայում կարող է ազդել երրորդ անձի և կողմերից մեկի միջև առկա իրավունքների և պարտականությունների վրա: Նման առանձնահատկությամբ էլ պայմանավորվում է ինքնուրույն պահանջ ներկայացնող և չներկայացնող երրորդ անձանց տարբերությունը: Ինքնուրույն պահանջ ներկայացնող անձը դատավարությունում հանդես է գալիս՝ օժտված լինելով հայցվորի բոլոր իրավունքներով ու պարտականություններով՝ ներկայացնելով սեփական պահանջը վեճի առարկայի նկատմամբ: Ընդ որում, վերջինիս ներկայացրած ինքնուրույն պահանջը հակադրվում է ինչպես հայցվորին, այնպես էլ պատասխանողին, այլ կերպ ասած՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձը ներկայացնում է սեփական հավակնությունները: Վերջինս դատավարությանը ներգրավվում է միայն սեփական նախաձեռնությամբ՝ ներկայացնելով ինքնուրույն պահանջ: Տվյալ դեպքում դատարանը, փաստորեն, քննում է երկու գործ՝ հայցվորի ներկայացրած պահանջը և երրորդ անձի ներկայացրած ինքնուրույն պահանջը:

Ի տարբերություն ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձի՝ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը դատավարության ընթացքում հանդես է գալիս հայցվորի կամ պատասխանողի կողմում (կախված նրանից, թե ում հետ ունեցած իրավունքներին կամ պարտականություններին է առնչվելու վերջնական դատական ակտը),

դատավարությանը որպես կանոն ներգրավվում է դատարանի նախաձեռնությամբ կամ կողմերի միջնորդությամբ՝ անկախ իր կամքից: Ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը որևէ պահանջ դատարանին և կողմերին չի ներկայացնում:

Ելնելով վերոնշյալ տրամաբանությունից՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը գործի քննության ընթացքում որևէ նյութաիրավական պահանջ՝ կապված վեճի առարկայի հետ, ներկայացնել չի կարող: Դա վերաբերում է նաև հակընդդեմ հայցին, քանի որ հակընդդեմ հայցը հայցվորին ուղղված նյութաիրավական պահանջ է, որն ընդունվում է միայն օրենսդրի կողմից սահմանված հստակ դեպքերում, այն է՝ սկզբնական և հակընդդեմ պահանջների միջև հաշվանցի հնարավորություն, հակընդդեմ հայցով սկզբնական հայցի լրիվ կամ մասնակի բացառում, երկու հայցապահանջների միջև փոխադարձ կապ: Հակընդդեմ հայցը հարուցվում է պատասխանողի կողմից, այսինքն՝ այն անձի, ում դեմ ի սկզբանե հայցվորը պահանջ է ներկայացրել: Հակընդդեմ հայցը սկզբնական հայցի դեմ պատասխանողի շահերի պաշտպանության դատավարական միջոց է, այն նաև լրիվ ինքնուրույն հայց է, որը կարող էր ներկայացվել նաև առանձին: Հետևաբար, հակընդդեմ հայցը պատասխանողի կողմից հայցվորին ուղղված ինքնուրույն պահանջ է, որը դատարանը քննում է և վերջինիս կապակցությամբ իր եզրահանգումն արտահայտում է վերջնական դատական ակտում, ուստի ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը հակընդդեմ հայց ներկայացնել չի կարող:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն քաղաքացիական գործով սկզբնական հայցով հայցվոր Անդրանիկ Բեգլարյանի և Արման Վարդանյանի միջև 03.04.2015 թվականին կնքվել է Ցեսիայի պայմանագիր, որով Արման Վարդանյանը Անդրանիկ Բեգլարյանին փոխանցել է Արման Վարդանյանի և Կլարա Կագրամանովայի միջև 22.09.2008 թվականին կնքված Փոխառության պայմանագրից բխող 15.000.000 ՀՀ դրամ պահանջի իրավունքը (**հայտը 1-ին, գ.թ. 45, 48**): 02.10.2014 թվականին մահացած Կլարա Կագրամանովայի իրավահաջորդ Սուրեն Վերդիյանի և Նինա Ավերյանովայի դեմ Անդրանիկ Բեգլարյանը ներկայացրել է 15.000.000 ՀՀ դրամի բռնագանձման, Սուրեն Վերդիյանի և Նինա Ավերյանովայի միջև 29.04.2015 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը կեղծ լինելու հիմքով առոչինչ համարելու և առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու, գումարի բռնագանձումը գույքի վրա տարածելու պահանջներ (**հայտը 1-ին, գ.թ. 42, 46, հայտը 2-րդ, գ.թ. 14-21**):

Նինա Ավերյանովան հակընդդեմ հայց է ներկայացրել ընդդեմ Անդրանիկ Բեգլարյանի՝ կեղծ լինելու հիմքով Ցեսիայի պայմանագիրն առոչինչ համարելու և առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին (**հայտը 3-րդ, գ.թ. 102-106**):

Սուրեն Վերդիյանը հակընդդեմ հայց է ներկայացրել ընդդեմ Անդրանիկ Բեգլարյանի՝ Փոխառության պայմանագիրը չկնքված համարելու պահանջի մասին (**հայտը 4-րդ, գ.թ. 64-68**):

Թիվ ԵՄԴ/0014/04/15 սնանկության գործով 04.12.2015 թվականի վճռով Արման Վարդանյանը ճանաչվել է սնանկ, 25.01.2016 թվականին Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Խաչատուր Ղահրամանյանը (**հայտը 5-րդ, գ.թ. 38-40, 75-76**):

Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանը Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իարավատության դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ Արման Վարդանյանի և Անդրանիկ Բեգլարյանի՝ Ցեսիայի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը 19.02.2016 թվականին ընդունվել է վարույթ (գործ թիվ ԵԱԲԴ/0625/02/16) (**հայտը 5-րդ, գ.թ. 101**):

Սույն գործով Դատարանը, բավարարելով գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ



Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանի միջնորդությունը, գտել է, որ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանի ներկայացրած հայցապահանջը վերաբերում է Ցեսիայի պայմանագիրը «Մանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով անվավեր ճանաչելուն: Նշված գործով սնանկության գործով կառավարիչն իրացրել է օրենքով իրեն վերապահված լիազորությունը՝ պահանջելով անհատույց գործարք հանդիսանալու հիմքով վերադարձնել Ցեսիայի պայմանագրով Անդրանիկ Բեգլարյանին փոխանցված իրավունքը: Դատարանը նշել է, որ սնանկության գործով կառավարչի հայցի և քննվող գործով ներկայացված սկզբնական հայցի պահանջների համադրումից ակնհայտ է, որ սկզբնական հայցի ապացուցման առարկայի մեջ ներառված Ցեսիայի պայմանագրից բխող իրավահարաբերության առկայության, մասնավորապես՝ գումարի բռնագանձման պահանջ ներկայացնելու իրավունք ունենալու փաստը, այլ դատարանի վարույթում քննվող գործով սնանկության գործով կառավարչի՝ օրենքով սահմանված իր իրավագործության շրջանակում ներկայացված պահանջի քննությամբ վիճարկվում է: Այսինքն՝ ակնհայտ է, որ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող գործով կայացվելիք դատական ակտն ուղղակի նշանակություն ու ազդեցություն կունենա սույն քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործի ելքի և դատական ակտի վրա, և այդ գործով հաստատված հանգամանքը (հանգամանքները) սույն գործի համար կունենա իրավական նշանակություն ու կարևորություն, քանի որ ներկա պահին սույն գործով հնարավոր չէ օբյեկտիվորեն պատասխանել այն հարցին, թե արդյոք իրականում հայցվորին գումարի բռնագանձման որևէ պահանջ զիջվել է, թե՛ ոչ: Դատարանը նաև արձանագրել է, որ սույն գործով ինքնուրույն պահանջ չներկայացնող Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանը, ելնելով իր դատավարական կարգավիճակից, նույն պահանջը սույն գործի շրջանակներում ներկայացնել չէր կարող:

Վերաքննիչ դատարանը, վերացնելով Դատարանի որոշումը, նշել է, որ Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանը նույն քաղաքացիական գործում Նինա Ավերյանովայի և Սուրեն Վերդիյանի կողմից ներկայացված հակընդդեմ հայցերով ներգրավված է որպես երրորդ անձ (պատասխանողի կողմում), և թեև տնօրինչականության սկզբունքի հիման վրա հայցադիմում է ներկայացրել այլ դատարան, այնուամենայնիվ բարեխիղճ մոտեցում չի դրսևորել Դատարանում քննվող սույն գործի նկատմամբ՝ անհարկի ձգձգելով դրա քննությունը, առավել ևս, որ սույն գործով Նինա Ավերյանովայի կողմից ներկայացված հակընդդեմ հայցով վիճարկվում է Ցեսիայի պայմանագիրը: Վերաքննիչ դատարանը նշել է, որ Ցեսիայի պայմանագրի վիճարկումը որևէ հանգամանք քննելու անհնարիություն չի առաջացնում, որը կարող է հաստատվել միայն այլ գործի շրջանակներում, բացի այդ, սույն գործի շրջանակներում նշված գործարքը նույնպես վիճարկվում է, և Դատարանը, քննելով համապատասխան հակընդդեմ հայցը, պետք է եզրակացներ՝ արդյոք տվյալ գործարքը կնքվել է օրենքի պահանջների պահպանմամբ: Վերաքննիչ դատարանը նաև եզրակացրել է, որ Խաչատուր Ղահրամանյանը գրկված չէր իր դատավարական իրավունքներից օգտվել սույն գործի շրջանակներում (ինքնուրույն պահանջ կամ հակընդդեմ հայց ներկայացնելու միջոցով), ինչը, սակայն, չի արել, որը Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ դատավարական իրավունքների չարաշահում է:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վար-

չական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի վերլուծությանը՝ նախկինում կայացրած որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի վարույթի կասեցման դատարանի պարտականությունը չի ծագում, եթե տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը **կարող է հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում**: ՀՀ վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս պարտավոր է՝

1. նշել այն կայքը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն,

2. նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը (*տե՛ս, «Իրավագաբանություն» ՄՊԸ-ն ընդդեմ Ինգա Մանդելի և «Շենգալիթ-Ա» ՄՊԸ-ի թիվ ԵՆՔԳ/2790/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.10.2010 թվականի որոշումը*):

Վերահաստատելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի վերաբերյալ նախկինում արտահայտված դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործի վարույթը կասեցնելու դատարանի պարտականությունը ծագում է **երկու վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում**, դրանք են՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարությունների կարգով քննվող այլ գործի առկայությունը և տվյալ գործի քննության անհնարինությունը մինչև նշված դատավարությունների կարգով քննվող գործով կամ հարցով որոշում կայացնելը: Դա պայմանավորված է այն հանգամանքներով, որ այլ՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործով կամ հարցով փաստերը տվյալ գործի լուծման համար ունեն նշանակություն, և տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը կարող է հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում (*տե՛ս, Գայանե Ալախյանն ընդդեմ Սահակ Ալախյանի և մյուսների թիվ ԵՆՔԳ/0169/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.05.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նաև եզրակացրել է, որ գործի վարույթի կասեցման հիմքը գործի քննության ընթացքում այնպիսի հանգամանքի ի հայտ գալն է, որն ըստ էության **արգելակում է** գործի հետագա ընթացքը: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի վարույթի կասեցումը չի կարող կրել ձևական բնույթ, իսկ դրա միակ նպատակը գործի շարունակմանը խոչընդոտող հանգամանքների վերացումն է (*տե՛ս, Սամվել, Սահակ և Սուրբան Սարկոսյաններն ընդդեմ Լուսիկ Գևորգյանի և մյուսների թիվ ԵԿԳ/0808/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2013 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանը հանդես է գալիս որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ, ով, իր դատավարական կարգավիճակով պայմանավորված, սույն գործի շրջանակներում չէր կարող իրացնել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով իրեն վերապահված իրավունքը: Ընդ որում, չնայած այն հանգամանքին, որ Ցեսիայի պայմանագիրը վիճարկվում է նաև սույն գործով ներկայացված հակընդդեմ հայցով, այդուհանդերձ, Խաչատուր Ղահրամանյանի և Նինա Ավերյանովայի պահանջների հիմքը տարբեր է, Խաչատուր Ղահրամանյանը գործարքը վիճարկում է՝ որպես սնանկ ձևաչափված պարտապանի կողմից նախկինում կատարված անհատույց փոխանցում, իսկ Նինա Ավերյանովան սույն գործարքը վիճարկում է որպես կեղծ գործարք: Չնայած այն հանգամանքին, որ հայցա-

պահանջների բավարարման դեպքում անվավերության հետևանքները նույնն են լինելու, սակայն վիճարկման ողջ գործընթացը տարբեր է՝ տարբեր են վիճարկող սուբյեկտները, վիճարկման հիմքը, կիրառման ենթակա օրենսդրությունը: Հետևաբար, որևէ պարագայում Խաչատուր Ղահրամանյանի և Նինա Ավերյանովայի ներկայացրած հայցապահանջները չեն կարող նույնանալ:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ Արման Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանը, հնարավորություն չունենալով սույն գործով իրացնել իր լիազորությունը, այլ դատարան ներկայացրած պահանջով վիճարկում է մի գործարք, որն ընկած է սույն գործով հայցվորի հայց ներկայացնելու իրավունքի հիմքում (այսինքն՝ Խաչատուր Ղահրամանյանի հայցը բավարարվելիս Անդրանիկ Բեգլարյանն այլևս պատշաճ հայցվոր հանդիսանալ չի կարող), գտնում է, որ Խաչատուր Ղահրամանյանի ներկայացված հայցադիմումով հաստատվելիք հանգամանքն էական նշանակություն ունի սույն գործի լուծման համար: Ընդ որում, հաշվի առնելով, որ Խաչատուր Ղահրամանյանի հայցի հիմքում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասն է, որը գործարքը վիճարկելու հատուկ սուբյեկտ է դիտում սնանկության կառավարչին, նույն հոդվածով նախատեսվող հանգամանքները սույն գործի քննության շրջանակներում հաստատվել չեն կարող: Ավելին, նկատի ունենալով, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով գործարքը վիճարկելիս քննության առարկա չեն դառնում կեղծ գործարքի առկայության հատկանիշները, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ԵԱԲԴ/0625/02/16 քաղաքացիական գործով Խաչատուր Ղահրամանյանի ներկայացրած հայցապահանջի ելքն է, որ կանխորոշելու է սույն գործի ելքը, այլ ոչ թե հակառակը, այլ կերպ ասած՝ այլ դատարանում քննվող գործն արգելակում է սույն գործի քննությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի այն հետևությունները, որ Ցեսիայի պայմանագրի վիճարկումն այլ դատարանում որևէ հանգամանք քննելու անհնարիանություն չի առաջացնում, որը կարող է հաստատվել միայն այլ գործի շրջանակներում, և որ Խաչատուր Ղահրամանյանը գրկված չէր իր դատավարական իրավունքներից սույն գործի շրջանակներում օգտվելուց: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Դատարանն իրավացիորեն կասեցրել է գործի վարույթը՝ նշելով երկու գործերի միջև առկա կապը, այլ գործի առկայությունը սույն գործի քննության համար արգելակող և գործի ելքը պայմանավորող լինելը, ինչպես նաև Խաչատուր Ղահրամանյանի կողմից սույն գործի շրջանակներում սման պահանջ ներկայացնելու անհնարիանությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, վերացնելով գործի վարույթը կասեցնելու մասին Դատարանի որոշումը, թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին կետի, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի, արդյունքում նաև՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, ինչն ազդել է դատավարության ընթացքի վրա:

*Վերը նշված պարզառարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասմաններում նշված փաստարկները:*

Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-ին հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.04.2016 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ օրինական ուժ տալ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի գործի վարույթը կասեցնելու մասին 23.02.2016 թվականի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություն*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/0229/02/16**  
դատարանի որոշում **2017թ.**  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0229/02/16  
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՑԱՆԻ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
- Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
- Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2017 թվականի հունիսի 07-ին  
քննարկելով Արսեն Բաբայանի ներկայացուցիչ Լևոն Գևորգյանի վճռաբեկ բողոքը  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.02.2016 թվականի որոշման դեմ,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Արսեն Բաբայանը պահանջել է Արմինե Բաբայանին պարտադրել Արամայիս և Տիգրան Բաբայաններին անհապաղ վերադարձնել Ռուսաստանի Դաշնություն՝ վերականգնելով նրանց կապն իր հետ և (կամ) չխոչընդոտել իր կողմից Արամայիս և Տիգրան Բաբայանների վերադարձմանը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 01.02.2016 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 25.02.2016 թվականի որոշմամբ Արսեն Բաբայանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 01.02.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.03.2016 թվականի որոշմամբ Արսեն Բաբայանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է ու սահմանվել է հնգօրյա ժամկետ՝ որոշումն ստանալու պահից վճռաբեկ բողոքի ձևական սխալը շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 27.04.2016 թվականի որոշմամբ Արսեն Բաբայանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության:

ՀՀ վճարեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.12.2016 թվականի որոշմամբ Արսեն Բաբայանի ներկայացուցչի բերած վճարեկ բողոքը բավարարվել է՝ սոր հանգամանքի հիմքով վերանայվել է ՀՀ վճարեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 27.04.2016 թվականի «Վճարեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշումը և այն վերացվել է, Վերաքննիչ դատարանի 25.02.2016 թվականի որոշման դեմ Արսեն Բաբայանի ներկայացուցչի բերած վճարեկ բողոքն ընդունվել է ՀՀ վճարեկ դատարանի վարույթ:

Սույն գործով վճարեկ բողոք է ներկայացրել Արսեն Բաբայանի ներկայացուցիչը: Վճարեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մուրեցումների մասին» 25.10.1980 թվականի Հասագայի կոնվենցիայի (այսուհետ՝ Հասագայի կոնվենցիա) 11-րդ, 12-րդ, 29-րդ և 30-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, 8-րդ և 13-րդ հոդվածները, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 3-րդ և 7-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Հասագայի կոնվենցիան արձանագրում է դրանով ամրագրված իրավունքների դատական պաշտպանության եղանակ, որը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) պրակտիկայից: Ինչ վերաբերում է Հասագայի կոնվենցիայով նախատեսված Կենտրոնական մարմինն, ապա դրա գործառույթը նպատակ է հետապնդում լրացնելու դատական պաշտպանության եղանակը, այլ ոչ թե բացառելու վերջինս:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Կենտրոնական մարմինը չի կարող համարվել իրավունքի պաշտպանությունն ապահովող վարչական մարմին Հասագայի կոնվենցիայի իմաստով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Հասագայի կոնվենցիայի 7-րդ հոդվածի տեքստից բացահայտորեն հետևում է, որ Կենտրոնական մարմինը նույնական չէ նույն կոնվենցիայում օգտագործվող «վարչական մարմին» եզրույթի հետ, այն տարանջատված է դատական և վարչական մարմիններից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 2-րդ, 3-րդ և 7-րդ հոդվածների բովանդակությունից բխում է, որ ՀՀ տարածքում խնդրո առարկա իրավունքներն ենթակա են պաշտպանության ոչ թե վարչական, այլ՝ դատական մարմինների կողմից:

Վերոգրյալի հիման վրա վճարեկ բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 25.02.2016 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ գործը վարույթ ընդունելու մասին»:

## **3. Վճարեկ դատարանի պարզապարսպությունները և եզրահանգումները**

Վճարեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճարեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Հասագայի կոնվենցիայի իմաստով այդ կոնվենցիայի անդամ որևէ պետությունից Հայաստանի Հանրապետություն երեխայի անօրինական տեղափոխման կամ պահելու գործերի քննու-

թյան ենթակայության առանձնահատկությունների վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հերևյալ իրավական հարցադրմանը, ենթակա է արդյոք դատական պաշտպանության Հասագայի կոնվենցիայով նախատեսված՝ երեխային իրեն վերադարձնելու ծնողի իրավունքը:*

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է Եվրոպական դատարանի որոշումներում:

Այսպես՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայությունը քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յրեն, Kreuz v. Poland գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորվում է յուրաքանչյուրի դատական պաշտպանության իրավունքը, երբ որոշվում են նրա «քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները»: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանը դեռևս 1971 թվականին նշել է, որ խնդրո առարկա հասկացությունը ներառում է բոլոր ընթացակարգերը, որոնց արդյունքը վճռորոշ է մասնավոր իրավունքների և պարտականությունների համար (*յրեն, Ringeisen v. Austria գործով Եվրոպական դատարանի 16.07.1971 թվականի վճիռը, 94-րդ կետը*): Ինչ վերաբերում է ծնողի՝ երեխային վերադարձնելու իրավունքին, ապա Եվրոպական դատարանը հստակ նշել է, որ այդ իրավունքը ենթակա է պաշտպանության նաև Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում (*յրեն, H.N. v. Poland գործով Եվրոպական դատարանի 13.09.2005 թվականի վճիռը, 94-րդ կետը*):

Անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՍԴՌ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ հայցը կամ դիմումը դատարան իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների

տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանել դատարան դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների ու ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են դատական պաշտպանության և արդար դատաբնության հիմնական իրավունքները, ու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքներին, ազատություններին և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը (այսուհետ՝ դատարան):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, որը ենթակա է իրականացման նաև հայց հարուցելով, քաղաքացիական գործերի ենթակայությանը համապատասխան իրականացնում է դատարանը: Այսինքն՝ դատական ենթակայության առկայության դեպքում համապատասխան քաղաքացիական գործերի քննությունը և լուծումը քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ հանձնված է դատական մարմինների իրավասությանը: Այլ կերպ ասած՝ ենթակայության ինստիտուտի էությունը կայանում է նրանում, որ այն բացառում է գործը լուծելու համար այլ մարմին դիմելու հնարավորությունը: Միաժամանակ բոլոր այն դեպքերում, երբ մինչև դատարան դիմելն օրենքով սահմանված կարգով առկա է գործն այլ մարմինների քննելու իրավասություն, ապա տվյալ գործը ենթակա չէ դատարանում քննության, իսկ դատարան դիմող անձը հայց հարուցելու իրավունք չունի: Ըստ այդմ էլ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում վեճը դատարանին ենթակա լինելու հարցը պարզելիս դատարաններն առաջին հերթին պետք է ելնեն վիճելի իրավահարաբերության բնույթից, որից հետո հաշվի առնեն տվյալ վեճը կարգավորող նյութական իրավունքի նորմերը:



Անվտոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև հայցային վարույթի գործերը հարուցվում են դատարան հայցադիմում ներկայացնելու միջոցով և հայց ներկայացնելը հանդիսանում է գործի հարուցման նախապայման, այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ առկա չեն հայց հարուցելու իրավունքի նախադրյալները, որոնցից է նաև հայցը դատարանին ենթակա լինելու նախապայմանը, այդպիսի պարագայում բացակայում է հայցվորի՝ հայց հարուցելու իրավունքը, հետևաբար և դատավորը կայացնում է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված վեճը դատարանում քննության ենթակա լինելու հարցն անհրաժեշտ է պարզել հետևյալ նյութաիրավական նորմերի մեկնաբանման լույսի ներքո: Այսպես՝

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ընտանեկան օրենսդրությունը սահմանում է ամուսնության, ամուսնությունը դադարելու և անվավեր ճանաչելու պայմաններն ու կարգը, կարգավորում է անձնական ոչ գույքային և գույքային հարաբերություններն ընտանիքի անդամների միջև՝ ամուսինների, ծնողների և զավակների (որդեգորդների ու որդեգրվածների), իսկ ընտանեկան օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և շրջանակներում՝ մյուս ազգականների և այլ անձանց միջև, ինչպես նաև որոշում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանիքում տեղավորելու ձևերն ու կարգը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև իրավական այլ ակտերով: Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ընտանեկան օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է դատական կարգով, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ համապատասխան պետական մարմինների կամ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողները կարող են պահանջել վերադարձնել իրենց երեխային այն անձից, ով նրան իր մոտ է պահում առանց օրինական հիմքի կամ առանց դատարանի որոշման: Վեճի առկայության դեպքում ծնողներն իրենց ծնողական իրավունքները պաշտպանելու համար կարող են դիմել դատարան:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է նաև, որ ընտանիքի անդամների՝ ամուսինների, ծնողների և զավակների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները կարգավորում են ընտանեկան օրենսդրությամբ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ ընտանեկան օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև իրավական այլ ակտերով, իսկ եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ընտանեկան օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը: Ընդ որում, ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է դատական կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դրա իրականացումը ՀՀ ընտանեկան օրենսգրքով վերապահված է համապատասխան պետական մարմիններին կամ խնամակալության և հոգաբարձության մարմիններին: Տվյալ դեպքում ՀՀ ընտանեկան օրենսգրքով նախատեսվել է, որ եթե երեխային առանց օրինական հիմքի կամ առանց դատարանի որոշման իր մոտ պահող անձը հրաժարվում է երեխային վերադարձնելու մասին ծնողի պահանջը կատարելուց, ապա իր ծնողական իրավունքները պաշտպանելու համար վերջինս կարող է դիմել դատարան:

Հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան հարա-

բերությունները կարգավորվում են նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ավելին՝ օրենսդիրը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված նորմերին ընտանեկան օրենսդրությամբ նախատեսված այլ իրավական ակտերի սահմանված նորմերի համեմատ տվել է նախապատվություն՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ անհրաժեշտ է համապատասխան վերլուծության ենթարկել վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նաև տվյալ միջազգային պայմանագրի՝ «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի կոնվենցիայի համապատասխան նորմերը:

Վերոգրյալ եզրահանգումը բխում է նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից: Մասնավորապես՝ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի լույսի ներքո անդրադառնալով ծնողի՝ իր երեխայի հետ վերամիավորվելու իրավունքին՝ Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Եվրոպական կոնվենցիան պետք է կիրառվի միջազգային իրավունքի նորմերին, մասնավորապես՝ մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանությանը վերաբերող նորմերին համապատասխան: Անդամ պետությունների վրա Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով դրվող՝ ծնողներին իրենց երեխաների հետ վերամիավորելու պոզիտիվ պարտականությունը պետք է մեկնաբանվի «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 25.10.1980 թվականի Հաագայի կոնվենցիայի լույսի ներքո (*լոն, Iglesias Gil and A.U.I. v. Spain գործով Եվրոպական դատարանի 29.04.2003 թվականի վճիռը, 51-րդ կետ*):

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը մեկնաբանվում է պայմանագրի առարկայի և նպատակների լույսի ներքո՝ պայմանագրի տերմիններին տրված սովորական նշանակությանը համապատասխան: Մեկնաբանման անհրաժեշտություն առաջանալիս այն իրականացվում է նման հարցեր կարգավորող միջազգային իրավունքի նորմերով սահմանված կարգով: Միջազգային իրավունքի համապատասխան նորմերն արձանագրված են «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի Վիեննայի կոնվենցիայում (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա), որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 16.06.2005 թվականին:

Վիեննայի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն կոնվենցիան կիրառվում է պետությունների միջև կնքված պայմանագրերի նկատմամբ:

Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի հասկացությունների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի լույսի ներքո:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում 25.10.1980 թվականի Հաագայի կոնվենցիայի մեկնաբանման և կիրառման իրավական անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ ընտանեկան օրենսդրության վերոգրյալ նորմերից և Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումներից, իսկ այդ կոնվենցիայի մեկնաբանումը պետք է իրականացվի «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի և Վիեննայի կոնվենցիայի վերոնշյալ իրավանորմերի հիման վրա: Հաագայի կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 01.06.2007 թվականից:

Այսպես՝ Հաագայի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ նշված կոնվենցիայի նպատակներն են.

ա) ապահովել որևէ Պայմանավորվող պետություն անօրինականորեն տեղափոխված կամ այնտեղ պահվող երեխաների անհապաղ վերադարձը, և

բ) երաշխավորել մի Պայմանավորվող պետության օրենսդրությամբ նախատեսված՝ խնամակալության և տեսակցության իրավունքների արդյունավետ հարգումը այլ Պայմանավորվող պետություններում:

Նույն կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի տեղափոխումը կամ պահելը անօրինական է դիտվում, եթե.

ա) դրանով խախտվում են խնամակալության իրավունքները, որոնք միասնական կամ անհատական կերպով շնորհված են որևէ անձի, հաստատության կամ այլ մարմնի՝ այն պետության օրենսդրության համաձայն, որտեղ երեխան սովորաբար բնակվել է տեղափոխվելուց կամ պահվելուց անմիջապես առաջ, և

բ) տեղափոխման կամ պահելու պահին միասնական կամ անհատական կերպով այդ իրավունքներն արդյունավետորեն իրականացվել են կամ կիրականացվեին, եթե չլինեք տեղափոխումը կամ պահելը (...):

Նույն կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ նույն կոնվենցիայի նպատակների համար՝

ա) «խնամակալության իրավունքներ»-ը ներառում են երեխայի անձի նկատմամբ խնամք տանելուն և, մասնավորապես, երեխայի բնակության վայրը որոշելուն վերաբերող իրավունքները.

բ) «տեսակցության իրավունքներ»-ը ներառում են երեխային սահմանափակ ժամանակով իր մշտական բնակության վայրից մեկ այլ վայր տանելու իրավունքը:

Նույն կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ Պայմանավորվող պետությունները նշանակում են Կենտրոնական մարմին՝ նույն կոնվենցիայով նման իրավասու մարմինների վրա դրված պարտականությունները կատարելու համար:

Նույն կոնվենցիայի 7-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Կենտրոնական մարմինները համագործակցում են միմյանց հետ և օժանդակում են իրենց Պետությունների իրավասու մարմինների միջև համագործակցությանը՝ երեխաների անհապաղ վերադարձն ապահովելու և կոնվենցիայի այլ նպատակներին հասնելու համար:

Նույն կոնվենցիայի 7-րդ հոդվածի երկրորդ մասի «գ» կետի համաձայն՝ մասնավորապես, անմիջականորեն կամ որևէ միջնորդի միջոցով [Կենտրոնական մարմինները] ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները, որպեսզի նախաձեռնեն դատական կամ վարչական ընթացակարգեր կամ նպատեն այդպիսի ընթացակարգերին՝ երեխայի վերադարձմանը հասնելու նպատակով և, անհրաժեշտության դեպքում, համաձայնության գան տեսակցության իրավունքի արդյունավետ իրականացումը կազմակերպելու և ապահովելու համար:

Նույն կոնվենցիայի 11-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Պայմանավորվող պետությունների դատական և վարչական մարմինները երեխաներին վերադարձնելու համար ընթացակարգերում գործում են անհապաղ:

Նույն կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ եթե երեխան ապօրինաբար տեղափոխվել կամ պահվել է, ըստ 3-րդ հոդվածի դրույթների, երեխայի գտնվելու վայրի Պայմանավորվող պետության դատական կամ վարչական մարմիններում ընթացակարգերը սկսելու պահին անօրինական տեղափոխման կամ պահելու տարվա ամիս-ամսաթվից անցել է մեկ տարուց պակաս, համապատասխան մարմինները կարգադրություն են անում երեխային անհապաղ վերադարձնելու մասին (...):

Նույն կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ չնայած նախորդ հոդվածի դրույթներին՝ հայցվող Պետության դատական կամ վարչական մարմինները պարտավորված չեն կարգադրություններ անել երեխային վերադարձնելու մասին, եթե երեխայի վերադարձին դեմ հանդես եկող անձը, հաստատությունը կամ այլ մարմինն ապացուցում են, որ.

ա) երեխայի նկատմամբ խնամք իրականացնող անձը, հաստատությունը կամ այլ մարմինը տեղափոխման կամ պահելու պահին փաստացի չեն իրականացրել խնամակալության իրավունքները, կամ համաձայնություն են տվել, կամ հետագայում ընդունել են տեղափոխման կամ պահելու փաստը.

բ) գոյություն ունի լուրջ վտանգ, որ երեխայի վերադարձը ֆիզիկական կամ հոգեկան վնաս կհասցնի կամ այլ ճանապարհով երեխային կդնի անտանելի իրավիճակի մեջ:

Դատական կամ վարչական մարմինները կարող են նաև մերժել երեխայի վերադարձման մասին կարգադրություն անելը, եթե նրանք պարզում են, որ երեխան դեմ է

վերադարձին և հասել է այնպիսի տարիքի և հասունության մակարդակի, որ նպատակահարմար է հաշվի առնել նրա կարծիքը:

Քննարկելով սույն հոդվածում նշված հանգամանքները՝ դատական կամ վարչական մարմիններն ուշադրություն են դարձնում երեխայի մշտական բնակության երկրի Կենտրոնական մարմնի կամ այլ իրավասու մարմնի կողմից տրամադրված՝ երեխայի սոցիալական ծագմանը վերաբերող տեղեկատվությանը:

Նույն կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ պարզելու համար, թե արդյոք առկա է 3-րդ հոդվածի իմաստով անօրինական տեղափոխման կամ պահման փաստ, հայցվող Պետության դատական կամ վարչական մարմինները կարող են ուղղակի հաշվի առնել երեխայի մշտական բնակության Պետության իրավունքը և այնտեղ պաշտոնապես ճանաչված կամ չճանաչված դատական կամ վարչական որոշումները՝ առանց դիմելու տվյալ իրավունքը ստուգելու կամ օտարերկրյա որոշումը ճանաչելու հատուկ ընթացակարգերի, որոնք այլ կերպ կիրառելի կլինեն:

Նույն կոնվենցիայի 29-րդ հոդվածի համաձայն՝ նույն կոնվենցիան չի խոչընդոտի որևէ անձի, հաստատության կամ մարմնի, որը հայտնում է, որ տեղի է ունեցել 3-րդ կամ 21-րդ հոդվածների իմաստով խնամակալության կամ տեսակցության իրավունքների խախտում, անմիջականորեն դիմել Պայմանավորվող պետության դատական կամ վարչական մարմիններին՝ անկախ նրանից՝ նախատեսված է նույն կոնվենցիայի դրույթներով, թե ոչ:

Նույն կոնվենցիայի 30-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած դիմում, որը նույն կոնվենցիայի պայմանների համաձայն ներկայացվել է Կենտրոնական մարմնին կամ անմիջականորեն Պայմանավորվող պետությունների դատական կամ վարչական մարմիններին իրեն կցված կամ Կենտրոնական մարմնի կողմից տրամադրված փաստաթղթերի կամ այլ տեղեկատվության հետ միասին, պետք է ընդունելի լինի Պայմանավորվող պետությունների դատարաններում կամ վարչական մարմիններում:

Վերոգրյալ հոդվածների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հաագայի կոնվենցիայի նպատկներն են.

1) ապահովել որևէ Պայմանավորվող պետություն անօրինականորեն տեղափոխված կամ այնտեղ պահվող երեխաների անհապաղ վերադարձը, և

2) երաշխավորել մի Պայմանավորվող պետության օրենսդրությամբ նախատեսված՝ խնամակալության և տեսակցության իրավունքների արդյունավետ հարգումն այլ Պայմանավորվող պետություններում:

Այս նպատակների իրականացման համար Պայմանավորվող պետություններն անհապաղ պետք է ձեռնարկեն բոլոր համապատասխան միջոցները: Երեխաները, ովքեր անօրինական կերպով տեղափոխվել կամ պահվում են որևէ Պայմանավորվող պետության տարածքում, զրկված են իրենց խնամքն իրականացնելու իրավունք ունեցող անձի հետ կայուն հարաբերություններ պահպանելու հնարավորությունից, և հենց այդ հարաբերություններն անհապաղ վերականգնելուն է ուղղված Հաագայի կոնվենցիայի նպատակների իրագործումը: Թեև այս կոնվենցիան օգտագործում է «առևանգում» եզրույթը, այնուամենայնիվ, այն չպետք է ընկալվի քրեաիրավական իմաստով, քանի որ Հաագայի կոնվենցիան վերաբերում է երեխայի միջազգային առևանգման միայն քաղաքացիական ձևերին և դրանում օգտագործվող հասկացություններն ունեն ինքնուրույն իմաստ:

Մասնավորապես՝ Հաագայի կոնվենցիայի նպատակների լույսի ներքո դրա 3-րդ և 12-րդ հոդվածների վերլուծությունից բխում է, որ «առևանգում» հասկացությունն այդ կոնվենցիայի իմաստով ընդգրկում է երեխային մի Պայմանավորվող պետությունից մյուս Պայմանավորվող պետություն անօրինական տեղափոխելու կամ պահելու դեպքերը: Իսկ այդ կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի տեղափոխումը կամ պահելն անօրինական է այն դեպքում, երբ՝

1) դրանով խախտվում են խնամակալության իրավունքները, որոնք միասնական կամ անհատական կերպով շնորհված են որևէ անձի, հաստատության կամ այլ մարմնի՝ այն պետության օրենսդրության համաձայն, որտեղ երեխան սովորաբար բնակվել է տեղափոխվելուց կամ պահվելուց անմիջապես առաջ, և

2) տեղափոխման կամ պահելու պահին միասնական կամ անհատական կերպով այդ իրավունքներն արդյունավետորեն իրականացվել են կամ կիրականացվեին, եթե չլիներ տեղափոխումը կամ պահելը:

Բացի այդ, Հաագայի կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ կոնվենցիայի պաշտպանության ներքո են գտնվում երեխայի նկատմամբ խնամակալության և տեսակցության իրավունքները: Ըստ այդմ՝ «խնամակալության իրավունքները» ներառում են երեխայի անձի նկատմամբ խնամք տանելուն և, մասնավորապես, երեխայի բնակության վայրը որոշելուն վերաբերող իրավունքները, իսկ «տեսակցության իրավունքները» ներառում են երեխային սահմանափակ ժամանակով իր մշտական բնակության վայրից մեկ այլ վայր տանելու իրավունքը: Միևնույն ժամանակ, Հաագայի կոնվենցիան կիրառվում է միայն 16 տարին չլրացած երեխաների նկատմամբ, և դրա կիրառումը դադարեցվում է երեխայի 16 տարին լրանալու դեպքում:

Հաագայի կոնվենցիայի մեջբերված հոդվածների վերլուծությունից հետևում է նաև, որ այդ կոնվենցիայի իմաստով երեխաների անօրինական տեղափոխման և պահման հետ կապված հարցերով զբաղվելու համար Հաագայի կոնվենցիան որպես իրավասու մարմիններ է նախատեսել Կենտրոնական մարմին, դատարանին և վարչական մարմին՝ նրանցից յուրաքանչյուրին օժտելով համապատասխան իրավունքներով և պարտականություններով:

Այսպես՝ Հաագայի կոնվենցիայում ամրագրված նպատակներն իրագործելու համար Պայմանավորվող պետությունները պետք է նշանակեն Կենտրոնական մարմին՝ նրա վրա դնելով նույն կոնվենցիայով նախատեսված պարտականությունները: Այդ պարտականություններն, *inter alia*, ընդգրկում են համագործակցությունն այլ Պայմանավորվող պետությունների Կենտրոնական մարմինների հետ, օժանդակումը Պետությունների իրավասու մարմինների միջև համագործակցությանը՝ երեխաների անհապաղ վերադարձն ապահովելու և Հաագայի կոնվենցիայի այլ նպատակներին հասնելու համար, դատական կամ վարչական ընթացակարգերի նախաձեռնումը, այդ ընթացակարգերին նպաստումը և այլն:

Այսինքն՝ նույն կոնվենցիայի իմաստով ապօրինի տեղափոխված կամ պահվող երեխաների անհապաղ վերադարձն ապահովելու հարցում Կենտրոնական մարմնի դերը երեխային վերադարձնելու մասին որոշում կայացնելը չէ, այլ այդ որոշումը կայացնելու իրավասություն ունեցող մարմինների ուշադրությունը հրավիրելը և ապօրինի տեղափոխված կամ պահվող երեխայի անհապաղ վերադարձման օժանդակելն է, որը, մասնավորապես, կարող է իրագործվել դատական կամ վարչական ընթացակարգեր նախաձեռնելու և, ըստ անհրաժեշտության, դրանց օժանդակելու միջոցով: Ընդ որում, նման ընթացակարգերի նախաձեռնումը չի հանդիսանում միայն Կենտրոնական մարմնի իրավասությունը, քանի որ Հաագայի կոնվենցիան անձին ևս իրավունք է վերապահել համապատասխան հիմքերի առկայության պայմաններում անմիջականորեն դիմել Պայմանավորվող պետության դատական կամ վարչական մարմիններին:

Միաժամանակ նույն կոնվենցիայի համակարգային վերլուծությունից բխում է, որ բացառապես միայն դատական և վարչական մարմիններին է վերապահված երեխայի վերադարձի մասին կարգադրություն անելու, վերադարձը բացառող հանգամանքները պարզելու, դրա վերաբերյալ դիմումը մերժելու իրավասությունը: Միաժամանակ նրանց վրա է դրվել երեխաներին վերադարձնելու համար ընթացակարգերում անհապաղ գործելու պարտականություն: Ինչ վերաբերում է Հաագայի կոնվենցիայում նշված «վարչական մարմիններին», ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք վերաբերում են հիշյալ կոնվենցիային անդամ այն պետություններին, որոնք դրանով ստանձնած պարտավորությունների կատարումը վերապահել են որևէ վարչական մարմնի, որը չի կարող համընկնել Կենտրոնական մարմնի հետ, քանի որ Հաագայի կոնվենցիան հստակ տարանջատում է Կենտրոնական մարմնի լիազորությունները վարչական կամ դատական մարմինների լիազորություններից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, որպես Հաագայի կոնվենցիայի իմաստով Պայմանավորվող կողմ, ի դեմս ՀՀ կառավարության՝

միայն 20.08.2009 թվականին կայացրել է թիվ 952-Ն որոշումը, որի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված կենտրոնական մարմին է նշանակել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը:

Վճռաբեկ դատարանի կատարած վերլուծությունից բխում է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը տարածվում է նաև ծնողի՝ իր երեխայի հետ վերամիավորվելու իրավունքի վերաբերյալ վեճերի վրա, ինչը ևս նշանակում է, որ այդպիսի վեճերի առկայության դեպքում անձը պետք է ունենա արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Իսկ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «այն դեպքերում, երբ դատարաններից տարբերվող մարմիններ են լուծում այնպիսի վեճեր, որոնց նկատմամբ կիրառելի է [Եվրոպական կոնվենցիայի] 6-րդ հոդվածը, Եվրոպական կոնվենցիան պահանջում է հետևյալ համակարգերից առնվազն մեկի առկայությունը, համապատասխան իրավասություն ունեցող մարմինները կամ իրենք են բավարարում 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները կամ այնքան էլ չեն բավարարում դրանք, սակայն ենթակա են այնպիսի դատական մարմնի կողմից լրացուցիչ հսկողության, որն ունի լիարժեք իրավասություն և ապահովում է 6-րդ հոդվածի 1-ին կետի երաշխիքները» (*Կրեն, Սադաթեյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 20.10.2015 թվականի վճիռը, 39-րդ կետ*): Հետևաբար հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված չէ այնպիսի վարչական մարմին, որն ունի խնդրո առարկա վեճը լուծելու իրավասություն և բավարարում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետից բխող անկախության ու անկողմնակալության պահանջները՝ խնդրո առարկա վեճը ենթակա է դատարանում քննության՝ շահագրգիռ անձի կողմից անմիջականորեն ներկայացվող դիմումի հիման վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը Հաագայի կոնվենցիայի շրջանակներում նախատեսված իրավական կառուցակարգերի միջոցով իրականացնելու համար դատարանը պետք է պարզի այդ կոնվենցիայից բխող նաև հետևյալ հանգամանքները.

1) արդյո՞ք խնդրո առարկա դեպքը գտնվում է Հաագայի կոնվենցիայի գործողության ոլորտում՝ դեպքը վերաբերում է մինչև 16 տարեկան երեխայի նկատմամբ Հաագայի կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով «խնամակալության իրավունքներին» կամ «տեսակցության իրավունքներին»,

2) արդյո՞ք երեխան տեղափոխվել կամ պահվում է Հայաստանի Հանրապետության տարածքում,

3) արդյո՞ք երեխային տեղափոխելը կամ պահելը այդ կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով անօրինական է:

Վերոգրյալի հիման վրա, եթե դատարանը գալիս է եզրահանգման, որ երեխայի տեղափոխումը կամ պահելն անօրինական է, ապա կոնվենցիայի 12-րդ հոդվածի ուժով պարտավոր է կարգադրություն անել երեխային անհապաղ վերադարձնելու մասին: Միննույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ երեխային վերադարձնելու պարտականությունը բացարձակ չէ և ոչ բոլոր դեպքերում է, երբ Հաագայի կոնվենցիայի իմաստով երեխային անօրինական տեղափոխելու կամ պահելու վերաբերյալ հետևություն անելուց հետո, դատարանը պարտավոր է երեխային վերադարձնելու մասին կարգադրություն անել: Մասնավորապես՝ այդ պարտականությունը ենթակա է ժամկետային սահմանափակումների՝ նախատեսված Հաագայի կոնվենցիայի 4-րդ, 12-րդ և 35-րդ հոդվածներով, ինչպես նաև բովանդակային սահմանափակումների՝ նախատեսված նույն կոնվենցիայի 13-րդ և 20-րդ հոդվածներով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արսեն Բաբայանը պահանջել է Արմինե Բաբայանին պարտադրել Արամայիս և Տիգրան Բաբայաններին անհապաղ վերադարձնել Ռուսաստանի Դաշնություն՝ վերականգնելով նրանց կապը իր հետ և (կամ) չխոչընդոտել իր կողմից Արամայիս և Տիգրան Բաբայանների վերադարձմանը՝ հայցի հիմքում նաև դնելով այն, որ երեխաներն առանց իր իմացության և համաձայնության են տեղափոխվել ու պահվում Հայաստանի Հանրապետությունում: Երեխաների 16 տարեկանը չի լրացել: Դատարանի 01.02.2016 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել

է այն հիմքով, որ «Կոնվենցիայով նախատեսված է երեխայի վերադարձն ապահովելուն աջակցելու համար հստակ ընթացակարգ՝ մասնավորապես այն, որ երեխայի առևանգման հետ կապված հարցերը լուծվում են Պայմանավորվող պետության Կենտրոնական մարմնի կողմից, հետևաբար վեճը ենթակա չէ դատարանում քննության»:

Վերաքննիչ դատարանը նույն պատճառաբանությամբ 25.02.2016 թվականին որոշում է կայացրել Արսեն Բաբայանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժելու, և Դատարանի 01.02.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին՝ նաև նշելով, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում որևէ իրավական նորմ նախատեսված չէ, որը անձին հնարավորություն կտա քննել երեխայի առևանգման հետ կապված վեճ»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Տվյալ դեպքում Արսեն Բաբայանը, դիմելով Դատարան, ըստ էության ներկայացրել է իր երեխաների՝ Արամայիս և Տիգրան Բաբայանների հետ վերամիավորվելու պահանջ՝ հիմնվելով նաև Հաագայի կոնվենցիայի վրա, որպիսի պահանջը, ըստ Վճռաբեկ դատարանի կատարած վերլուծությունների, ենթակա է քննության դատարանում, որի իրականացումը ոչ իրավաչափ կերպով Դատարանի կողմից մերժվել է, իսկ Վերաքննիչ դատարանը նշված հանգամանքն անտեսել է:

Միաժամանակ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում որևէ իրավական նորմ նախատեսված չէ, որը հնարավորություն կտա քննել երեխայի առևանգման հետ կապված վեճ, ապա Վճռաբեկ դատարանի վերոգրյալ վերլուծությունից հետևում է, որ Հաագայի կոնվենցիայի իմաստով «առևանգում» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, չի վերաբերում այդ հասկացության քրեաիրավական իմաստին և ընդգրկում է Վճռաբեկ դատարանի կողմից սույն որոշմամբ բացահայտված բովանդակային ծավալը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է վճռաբեկ բողոքի հիմքը՝ կապված Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, Հաագայի կոնվենցիայի 29-րդ և 30-րդ հոդվածները, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը և ՀՀ ընտանեկան օրենսգրքի 3-րդ և 7-րդ հոդվածները խախտելու հետ:

Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.02.2016 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.02.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություն*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/3578/02/16  
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/3578/02/16**  
**2017թ.**

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 23-ին  
քննարկելով «Անելիք բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.11.2016 թվականի որոշման դեմ,

### ՊԱՐԶԵՑ

#### **1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարշալ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԿԴ/0189/02/15 քաղաքացիական գործով 20.08.2015 թվականին կայացված վճռով հաստատված պարտավորության կատարումն ապահովելու համար բռնագանձում տարածել գրավի առարկա՝ Երևանի Դավիթ Բեկի փողոցի թիվ 77 հասցեում գտնվող տան և հողամասի վրա:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 13.10.2016 թվականի որոշմամբ Բանկի կողմից ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.11.2016 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.10.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

#### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.



Վերաքննիչ դատարանը խախտել է մինչև 22.12.2015 թվականը գործող խմբագրությանը ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը (դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ նորմերի մատով նայնարովանդակ է 06.12.2015 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի հետ), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը, մերժելով հայցադիմումի ընդունումը, խախտել է Բանկի դատական պաշտպանության իրավունքը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ սույն գործով ներկայացված հայցի առարկան, հիմքը և հայցապահանջն էականորեն տարբերվում են թիվ ԵԿԴ/0189/02/15 քաղաքացիական գործով ներկայացվածներից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով միակ պատասխանողը Վերծին Սահակյանն է, ում սեփականության իրավունքով պատկանող գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու պահանջ է ներկայացրել Բանկը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 11.11.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան նոր քննության»:

**3. Վճռաբեկ դատարանի պարզապահանջությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, իսկ 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) որոշումներում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաբնության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրևուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրևն, Կրևուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը եզրահանգել է նաև, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում են «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքները, բացարձակ չեն և կարող են ենթարկվել սահմանափակումների, սակայն կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն սահմանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովմամբ (*Կրե՛ս, Այ-Ադասինն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 35763/97 գանգաբով Եվրոպական դատարանի 21.11.2001 թվականի վճիռը, կետ 53, Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի թիվ 34791/97 գանգաբով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, կետ 35, «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի թիվ 21638/03 գանգաբով Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, կետ 44*): Միաժամանակ Եվրոպական դատարանը նշել է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է դատարան դիմելու արդյունավետ իրավունք, այնուամենայնիվ, պետության հայեցողությանն է թողնված նշված նպատակի համար անհրաժեշտ միջոցների ընտրության հարցը (*Կրե՛ս, Էյրին ընդդեմ Իռլանդիայի թիվ 6289/73 գանգաբով Եվրոպական դատարանի 09.10.1979 թվականի վճիռը, կետ 26*):

Անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՄԴՌ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ հայցը կամ դիմումը դատական իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանել դատարան դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների ու ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, ու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքներին, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-րդ կետի համաձայն՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝

- 1) վեճը ենթակա չէ դատարանում քննության.
- 2) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ.
- 3) այլ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ.
- 4) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է արբիտրաժային տրիբունալի վճիռ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժային տրիբունալի վճիռի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու դեպքի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը, նույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, հայցադիմումի ընդունումը մերժելու մասին կայացնում է որոշում՝ հայցադիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում որոշումը, հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը պատշաճ ձևով ուղարկելով հայցվորին:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն երաշխավորելով յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքը, միաժամանակ սպառնչ կերպով ամրագրել է հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, որոնք ենթակա չեն փոփոխման: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայցի ներկայացումը դատարան և դրա հիման վրա քաղաքացիական գործի հարուցումը, առաջ են բերում որոշակի իրավական հետևանքներ: Մասնավորապես, հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու պահից է սկսվում հարուցված քաղաքացիական գործի ընթացքը, իսկ դատական պաշտպանություն հայցած անձն իր հերթին ակնկալում է համապատասխան քաղաքացիատավարական իրավահարաբերությունների առաջացում, այն է՝ և՛ դատարանի, և՛ գործին մասնակցող անձանց մոտ առաջ են գալիս որոշակի դատավարական իրավունքներ և պարտականություններ, որոնց իրականացումը տեղի է ունենում գործի քննության ընթացքում: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ դատարանի կողմից որոշում է կայացվում հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, դատարան դիմած անձի դատական պաշտպանության իրավունքը չի իրացվում՝ դրանից բխող իրավական հետևանքներով: Ընդ որում, եթե հայցադիմումի ընդունումը մերժվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի հիմքով, ապա այդ դեպքում պետք է առկա լինի օրինական ուժի մեջ մտած վճիռ նույն անձանց միջև, միևնույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռի առկայության հիմքով գործի վարույթը կարճելու հիմքին, արձանագրել է, որ գործի վարույթը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, կարող է կարճվել միայն այն դեպքում, երբ նույնն են օրինական ուժի մեջ մտած վճիռով լուծված և տվյալ քաղաքացիական գործերի

1. կողմերը, այսինքն՝ քաղաքացիական վարույթում հակադիր շահերով օժտված անձինք,

2. հայցի առարկան, այսինքն՝ հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը,

3. հայցի հիմքը, այսինքն՝ այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի:

Հետևաբար վերը նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում քաղաքացիական գործի վարույթը կարձվել չի կարող (*տես, ՀՀ Սյունիքի մարզի Ներքին Հանդիսանալիքն ընդդեմ «Գ. Արշակյան» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/0407/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով հայցադիմումի ընդունումը մերժելու և գործի վարույթի կարճման վկայակոչված հիմքի նույնաբովանդակ լինելը, գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումը կիրառելի է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու վերաբերյալ որոշում կայացնելիս:

Սույն գործով Բանկը հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Վերժին Սահակյանի և երրորդ անձ Յուլիաննա Գրիգորյանի՝ գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին (**գ.թ. 4-7**):

Դատարանը, պատճառաբանելով, որ «թիվ ԵԿԴ/0189/02/15 քաղաքացիական գործով 20.08.2015 թվականին կայացված վճռի համաձայն՝ Բանկն ընդդեմ Յուլիաննա Գրիգորյանի և Վերժին Սահակյանի ներկայացրել է գումար բռնագանձելու, տոկոսներ հաշվեգրելու, բռնագանձումը գրավադրված, ինչպես նաև պատասխանողին պատկանող այլ գույքի և դրամական միջոցների վրա տարածելու պահանջների մասին հայցադիմում, որը բավարարվել է, այսինքն՝ տվյալ դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռ», 13.10.2016 թվականին որոշում է կայացրել Բանկի կողմից ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժելու մասին (**գ.թ. 1**):

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «Դատարանը ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժել է իրավացիորեն՝ հաշվի առնելով, որ սույն քաղաքացիական գործով և թիվ ԵԿԴ/0189/02/15 քաղաքացիական գործով գործին մասնակցող անձինք՝ կողմերը, հայցադիմումի առարկան և հիմքերը սույնն են, այն է՝ երկու դեպքում էլ Բանկը հայցադիմում է ներկայացրել նույն անձանց դեմ՝ գումարի բռնագանձումը գրավադրված գույքի վրա տարածելու պահանջի մասին», Բանկի վերաքննիչ բողոքը մերժել է, և Դատարանի 13.10.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողել է օրինական ուժի մեջ (**գ.թ. 78-79**):

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործում առկա՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԿԴ/0189/02/15 քաղաքացիական գործով 20.08.2015 թվականին կայացված **վճռի ներածական մասի** բովանդակության ուսումնասիրությունից հետևում է, որ տվյալ գործով Բանկի կողմից, որպես հայցի առարկա, նշվել է նաև բռնագանձումը գրավադրված, ինչպես նաև պատասխանողին պատկանող այլ գույքի և դրամական միջոցների վրա տարածելը: Մինչդեռ նույն վճռի՝ «**Հայցվորի փաստարկները և իրավական դիրքորոշումը**» բաժնի բովանդակության ուսումնասիրությունը վկայում է, որ նշված գործով Բանկը միայն խնդրել է պատասխանողից բռնագանձել որոշակի գումար և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները, իսկ «բռնագանձումը գրավադրված, ինչպես նաև պատասխանողին պատկանող այլ գույքի և դրամական միջոցների վրա տարածելու մասին» պահանջ Բանկն անգամ գործի քննության ժամանակ չի ներկայացրել: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր հեր-

թին նշված գործով 20.08.2015 թվականին վճիռ է կայացրել միայն գումար բռնագանձելու մասին: Նշված վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով Բանկը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Վերժին Սահակյանի և Երրորդ անձ Յուլիաննա Գրիգորյանի՝ պահանջելով «Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԿԴ/0189/02/15 քաղաքացիական գործով 20.08.2015 թվականին կայացված վճռով հաստատված պարտավորության կատարումն ապահովելու համար բռնագանձում տարածել գրավի առարկա՝ Երևանի Դավիթ Բեկի փողոցի թիվ 77 հասցեում գտնվող տան և հողամասի վրա»:

Այսինքն՝ թեև սույն գործով և թիվ ԵԿԴ/0189/02/15 քաղաքացիական գործով կայացված ու օրինական ուժի մեջ մտած դատական ակտով վեճը եղել է նույն անձանց՝ Բանկի, Վերժին Սահակյանի և Յուլիաննա Գրիգորյանի միջև, այնուամենայնիվ սույն քաղաքացիական գործով ու թիվ ԵԿԴ/0189/02/15 քաղաքացիական գործով հայցի առարկան նույնը չէ: Մասնավորապես, սույն գործով ներկայացված հայցի առարկան օրինական ուժի մեջ մտած վճռով որոշված դրամական պարտավորության կատարումն ապահովելու նպատակով գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու մասին պահանջն է, իսկ թիվ ԵԿԴ/0189/02/15 քաղաքացիական գործով ներկայացված հայցինը՝ գումար բռնագանձելը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացրած հայցի և վերը նշված գործով հայցի առարկաները տարբեր են, այսինքն՝ տվյալ դեպքում բացակայում է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, մերժելով հայցադիմումի ընդունումը, իսկ Վերաքննիչ դատարանը, Դատարանի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ, թույլ են տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի խախտում՝ սահմանափակելով Բանկի՝ դատարան դիմելու և դատարանի մատչելիության իրավունքները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.11.2016 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 13.10.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություն*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
 Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2791/02/13  
 Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան  
 Դատավորներ՝ Ս. Նազարյան  
 Կ. Չիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2791/02/13**  
**2017թ.**

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
 մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
 Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
 Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
 Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
 Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
 Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
 Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի մարտի 24-ին, քննարկելով ըստ հայցի Դոնարա Գրիգորյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն), «Լուսանշան» ՊՈԱԿ-ի՝ համապարտության կարգով 812.000 ՀՀ դրամ պատճառված վնասի գումար բռնագանձելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.06.2016 թվականի «վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Ծառայության ներկայացուցիչ ժիրայր Կարապետյանի վճռաբեկ բողոքը,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Դոնարա Գրիգորյանը պահանջել է Երևանի քաղաքապետարանից, Ծառայությունից և «Լուսանշան» ՊՈԱԿ-ից համապարտության կարգով բռնագանձել 812.000 ՀՀ դրամ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մելքունյան) (այսուհետ՝ Դատարան) 23.02.2016 թվականի վճռով քաղաքացիական գործի վարույթը՝ Երևանի քաղաքապետարանի և «Լուսանշան» ՊՈԱԿ-ի դեմ ներկայացված պահանջի մատով, կարձվել է՝ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով: Հայցը՝ Ծառայությունից 812.000 ՀՀ դրամ պատճառված վնասի գումար բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 27.06.2016 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը վերադարձվել է: Մույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայության ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետը և 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով:  
Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ 29.04.2016 թվականին Դատարանը 23.02.2016 թվականի վճիռն ուղարկել է «ք. Երևան, Թաիրովի 14» հասցեով՝ «Պահպանվող հատուկ տարածք», իսկ Ծառայություն («ք. Երևան, Իսակովի 9») այն մուտքագրվել է 03.05.2016 թվականին: Այսինքն՝ Դատարանը սխալ հասցեով է ուղարկել վճիռը, որի հետևանքով Ծառայությունն այն ուշ է ստացել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 27.06.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետի և 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1) վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը բողոք բերած անձին ուշ հասու լինելու դեպքում բողոք բերելու բաց թողած ժամկետը ենթակա է վերականգնման իրավունքի ուժով (ex jure), թե՛ վերաքննիչ դատարանի հայեցողությամբ.

2) արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավասու է վերադարձնել վերաքննիչ բողոքն այն պայմաններում, երբ որոշման եզրափակիչ մասում որևէ անդրադարձ չի կատարել վերաքննիչ բողոք բերած անձի՝ «Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու մասին» միջնորդությանը և որևէ եզրահանգում չի արել այն բավարարելու կամ մերժելու վերաբերյալ:

1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցած անձանց: Գործի մասնակիցներից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատավարական գործողությունները կատարվում են նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված ժամկետներում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետի հա-

մաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու դեպքում, վերականգնում է բաց թողնված ժամկետը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է դատարանի վճիռն օրենսդրությամբ սահմանված ժամկետում անձին չհանձնելու և բողոքարկման ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքներին: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկանայա ժամկետ: Այդ ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման համար օրենքն ընդհանուր իրավասության դատարանին պարտավորեցնում է վճիռը հրապարակվելուց անմիջապես հետո դրա օրինակը հանձնել գործին մասնակցած անձանց, իսկ նրանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկել նրան: Միաժամանակ այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պարտավոր է իրականացնել՝ հաշվի առնելով նաև անձի՝ սահմանադրական նորմով երաշխավորված դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները (*տես*, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Դանիել Բարսեղյանի և այլոց թիվ ԱՐԼԳ/0716/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2011 թվականի որոշումը):

Այսինքն՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ բողոքարկման իրավունքի իրացման ժամկետի բացթողումը պայմանավորված է ստորադաս դատարանի անգործությամբ, բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու հարցը քննարկելիս վերադաս դատարանը պետք է առաջնորդվի անձի՝ իր իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու և դրա մատչելիության սկզբունքներով:

Ընդ որում, այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր 09.02.2016 թվականի թիվ ՄԴՌ-1254 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրորեն պետք է սահմանվեն անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ դատական ակտը բողոք բերողի կողմից ամբողջությամբ ու ողջամիտ ժամկետում ստանալու և դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իր իրավունքն արդյունավետ իրացնելու համար: Վերը նշվածի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ կայանք այն հանգամանքին, որ դատական ակտերի բողոքարկման ժամկետը, որպես նշան, հաշվարկվում է հրապարակման պահից, այնուամենայնիվ, անհրաժեշտ են օրենսդրական բավարար երաշխիքներ, որոնք կապահովեն անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը:

Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատել է 22.12.2015 թվականի թիվ ՄԴՌ-1249 որոշմամբ արտահայտված այն իրավական դիրքորոշումը, որ երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով (*ex jure*)՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև վերաքննության կարգով բողոքարկման իրավակարգավորումների նկատմամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ըստ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշման՝ բողոքարկման ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք-



քաբերի կողմից ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն և համապատասխան ապացույցներ ներկայացնելը, իսկ վերադաս դատարանի կողմից նշված միջնորդության քննարկումը և ապացույցները գնահատելը, պարտադիր է: Այն դեպքում, երբ պատշաճ ապացուցված է բողոքարկվող դատական ակտը բողոք բերած անձի կողմից իր կամքից անկախ պատճառներով ուշ ստանալու հանգամանքը և բողոքը ներկայացվել է դատական ակտը ստանալու օրվանից հաշված օրենքով սահմանված ժամկետում, վերադաս դատարանը բացթողած ժամկետը պետք է վերականգնի իրավունքի ուժով (ex jure):

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերադարձնելով Ծառայության վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ Դատարանի 23.02.2016 թվականի վճիռ դեմ բողոք կարող էր ներկայացվել մինչև 24.03.2016 թվականը ներառյալ, մինչդեռ բողոք բերած անձը վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանը հանձնել է 03.06.2016 թվականին, այսինքն՝ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Դատարանի 23.02.2016 թվականի վճիռը Ծառայություն մուտքագրվել է 03.05.2016 թվականին, մինչդեռ գործի նյութերից երևում է, որ Ծառայությունն այն ստացել է 29.04.2016 թվականին, ուստի Ծառայության պատճառաբանությունը՝ Դատարանի 23.02.2016 թվականի վճիռը 03.05.2016 թվականին Ծառայություն մուտքագրվելու հետ կապված, անհիմն է, քանի որ այդ օրը վճիռը մակագրվել է Ծառայության աշխատակցին, իսկ Ծառայությունն այն ստացել է 29.04.2016 թվականին:

Մինչդեռ վերը նշվածը հաշվի առնելով և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարան ներկայացված հայցադիմումում որպես Ծառայության հասցե նշված է «ք. Երևան, Թախրովի 14» (**հատոր 1-ին, գ.թ. 4**): Դատարանը 13.03.2014 թվականին, 25.07.2014 թվականին, 16.10.2014 թվականին նշանակված դատական նիստերի ծանուցագրերը Ծառայությանն ուղարկել է «ք. Երևան, Իսակովի 9» հասցեով (**հատոր 1-ին, գ.թ. 47, 91, 102**): Ծառայությունը 07.02.2014 թվականին ներկայացրել է հայցադիմումի պատասխան, որտեղ որպես իր հասցե՝ նշել է «ք. Երևան Իսակովի 9» (**հատոր 1-ին, գ.թ. 58**): Դատարանը 23.02.2016 թվականի վճիռը Ծառայությանն ուղարկել է «ք. Երևան, Թախրովի 14» հասցեով (**հատոր 2-րդ, գ.թ. 80**):

Դատարանի 23.02.2016 թվականի վճիռը «ք. Երևան, Թախրովի 14» հասցեում ստացվել է 29.04.2016 թվականին (**հատոր 2-րդ, գ.թ. 83**): Ծառայությունը վերաքննիչ բողոքը փոստին է հանձնել 06.06.2016 թվականին (**հատոր 2-րդ, գ.թ. 99**), որին կից ներկայացված փաստաթղթի համաձայն՝ Դատարանի 23.02.2016 թվականի վճիռը Ծառայություն մուտքագրվել է 03.05.2016 թվականին (**հատոր 2-րդ, գ.թ. 98**):

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում վերաքննիչ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդության քննության համար էական են սույն քաղաքացիական գործով կայացված վճիռը Ծառայությանը հանձնված լինելու և այն նրա կողմից ստացված լինելու փաստերը, քանի որ և՛ վճռի հանձնումը, և՛ դրա ուղարկումը կողմին նպատակ է հետապնդում վերջինիս տեղեկացնելու դատարանի կողմից կայացված դատական ակտի մասին, և միայն նշված փաստերը պարզելուց հետո Վերաքննիչ դատարանը կարող էր որոշել՝ հարգելի է վերաքննիչ բողոք բերելու ժամկետը բաց թողնելու պատճառը, թե՛ ոչ:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա չէ ապացույց այն մասին, որ Ծառայությունը գործն ըստ էության լուծող դատական ակտը ստացել է հրապարակման օրը: Ավելին, գործում առկա չէ նաև ապացույց այն մասին, թե Դատարանը վճիռը երբ է ուղարկել Ծառայությանը: Դատարանը դատական նիստերի ծանուցագրերը Ծառայությանն ուղարկել է «ք. Երևան, Իսակովի 9» հասցեով, իսկ 23.02.2016 թվականի վճիռն ուղարկել է «ք. Երևան Թախրովի 14» հասցեով, որպիսի հանգամանքները Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ հետազոտման և համարժեք գնահատման չեն արժանացել:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Դատարանի 23.02.2016 թվականի վճիռը Ծառայությունը ստացել է 29.04.2016 թվականին,

ապա այն անհիմն է, քանի որ ըստ Ծառայության վերաքննիչ բողոքին կից ներկայացված գրության՝ Դատարանի 23.02.2016 թվականի վճիռը Երևանի Իսակովի թիվ 9 հասցեում ստացվել է 03.05.2016 թվականին, որը նույն օրը մակագրվել է Ծառայության աշխատակցին: Այսինքն՝ 03.05.2016 թվականը ոչ միայն բողոքարկվող վճիռը Ծառայության աշխատակցին մակագրվելու, այլև Ծառայությունում ստացվելու (մուտքագրվելու) օրն է: Ավելին, Վերաքննիչ դատարանը ևս ընդունել է, որ սույն գործով Ծառայության հասցեն **Երևանի Իսակովի թիվ 9 հասցեն է**, քանի որ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 27.06.2016 թվականի որոշումն ուղարկել է **Երևանի Իսակովի թիվ 9 հասցեով (հատոր 2-րդ, գ.թ. 106):**

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում առկա է բողոքաբերից անկախ պատճառներով դատական ակտը նրան ուշ հասու լինելու հանգամանքը, որպիսի պայմաններում բաց թողնված ժամկետը համապատասխան միջնորդության և պատշաճ ապացույցների առկայության դեպքում ենթակա է վերականգման իրավունքի ուժով (ex jure):

2) Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ բողոք բերողը բաց է թողել բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը և առկա չէ միջնորդություն՝ բաց թողած ժամկետը վերականգնելու մասին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ակտը, որով ըստ էության չի լուծվում գործը, կայացվում է որոշման ձևով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն՝

- 1) դատարանի անվանումը, դատարանի կազմը, գործի համարը, որոշումը կայացնելու ամսաթիվը, վեճի առարկան.
- 2) գործին մասնակցող անձանց անունը (անվանումը).
- 3) հարցը, որի վերաբերյալ որոշում է կայացվում.
- 4) շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքներ և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ.
- 5) եզրահանգումը քննարկվող հարցով.
- 6) որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետը, եթե այն ենթակա է բողոքարկման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվեն բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը, նույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, գործը ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է որոշում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին: Որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր առերևույթ խախտումները:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ բողոքի վերադարձման հիմք է սակ վերաքննիչ բողոքն օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո ներկայացված լինելը և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն չներկայացնելը, կամ այդ միջնորդությունը վերաքննիչ դատարանի կողմից մերժելը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքին կցված է կամ բողոքում ներառված է վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, ապա Վե-

րաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ այդ միջնորդությանը և դրա քննարկման արդյունքում որոշում կայացնելուց հետո միայն որոշել վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ վարույթ ընդունելու հարցը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայությունը Դատարանի 23.02.2016 թվականի վճռի դեմ բերելով վերաքննիչ բողոք՝ միաժամանակ միջնորդել է վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը համարել հարգելի (**հատոր 2-րդ, գ.թ. 96**):

Վերաքննիչ դատարանը, 27.06.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձնելով վերաքննիչ բողոքը և արձանագրելով, որ «բողոք բերողը բողոքին կից ներկայացրել է ժամկետը վերականգնելու միջնորդություն», միաժամանակ նշել է, որ «բողոք բերողը բաց է թողել բողոքը ներկայացնելու ժամկետը և չկա միջնորդություն, հետևաբար վերաքննիչ բողոքն ենթակա է վերադարձման»:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի 27.06.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման մեջ բացակայում է որևէ նշում Ծառայության վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին միջնորդությունը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի 27.06.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը չի պարունակում որևէ եզրահանգում վերաքննիչ բողոքում ներկայացված միջնորդությունը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը որևէ որոշում չի կայացրել միջնորդությունը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ, ինչն անձի դատական պաշտպանության իրավունքի խախտում է: Մասնավորապես՝ շահագրգիռ անձը, իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս, դատավարական օրենքով նախատեսված որևէ միջնորդություն հարուցելով, ակնկալում է իր կողմից բարձրացված հարցի որոշակի լուծում՝ դատարանի կողմից համապատասխան որոշման կայացման ձևով: Այսինքն՝ դատավարության մասնակցի միջնորդություն հարուցելու իրավունքին համապատասխանում է տվյալ հարցով որոշում կայացնելու դատարանի պարտականությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դատարանի որոշմանը ներկայացվող պարտադիր պահանջ է քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան եզրահանգումը, հետևաբար այդպիսի եզրահանգման բացակայության պայմաններում բացակայում է նաև դատարանի որոշումը, ինչի արդյունքում խախտվում է անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության՝ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդության կապակցությամբ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համապատասխան Վերաքննիչ դատարանի կողմից որոշում կայացնելու համար սույն գործը ենթակա է նոր քննության, և միջնորդության քննարկումից ու լուծումից հետո միայն Վերաքննիչ դատարանը պետք է որոշի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-ին հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.06.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություն*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ՍԳ3/0419/02/15**  
դատարանի որոշում **2017թ.**  
Քաղաքացիական գործ թիվ ՍԳ3/0419/02/15  
Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան  
Դատավորներ՝ Ա. Խառատյան  
Ս. Թորոսյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈՒՑՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈՒՑՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի մայիսի 17-ին

քննարկելով ըստ հայցի Լևոն Առաքելյանի ընդդեմ «Միքաձոր» ՍՊԸ-ի (այսուհետ՝  
Ընկերություն)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ  
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.01.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վե-  
րադարձնելու մասին» որոշման դեմ Ընկերության վճռաբեկ բողոքը,

**ՊԱՐՁԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Լևոն Առաքելյանը պահանջել է Ընկերությունից բռնագանձել  
1.412.153 ՀՀ դրամ, որից 782.158 ՀՀ դրամը՝ որպես պայմանագրով նախատեսված՝ 2013  
թվականի չվճարված ամիսների համար վարձավճարի գումար, 188.836 ՀՀ դրամը՝ որպես  
պայմանագրով նախատեսված՝ 2014 թվականի չվճարված ամիսների համար վարձավ-  
ճար, 441.159 ՀՀ դրամը՝ որպես 01.07.2015 թվականի դրությամբ չվճարված վարձավճարի  
գումար, կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը և բռնագանձել նշված  
հոդվածով հաշվարկվելիք բանկային տոկոսները՝ սկսած 25.07.2015 թվականից մինչև  
պարտավորությունների կատարման օրը, ինչպես նաև բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝  
որպես փաստաբանի վարձատրություն, և 28.900 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված  
պետական տուրքի գումար:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Մ. Հովակի-  
մյան) 18.02.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Հ. Ենոքյան, Ս. Մի-  
քայելյան, Գ. Խանդանյան) 08.06.2016 թվականի որոշմամբ ՀՀ Սյունիքի մարզի ընդհա-

նուր իրավասության դատարանի 18.02.2016 թվականի վճռի դեմ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է, ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 18.02.2016 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ի. Բեգլարյան) (այսուհետև՝ Դատարան) 15.11.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Կ. Չիլինգարյան, Տ. Նազարյան, Ա. Պետրոսյան) 26.12.2016 թվականի որոշմամբ Դատարանի 15.11.2016 թվականի վճռի դեմ Ընկերության վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ տրամադրելով երկշաբաթյա ժամկետ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետև՝ Վերաքննիչ դատարան) 26.01.2017 թվականի որոշմամբ Դատարանի 15.11.2016 թվականի վճռի դեմ Ընկերության վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը և 221-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ բողոքաբերի կողմից 05.12.2016 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքով պահանջվել է. «Բեկանել և փոփոխել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 15.11.2016 թվականի թիվ ՄԳ3/0419/02/15 քաղաքացիական գործով կայացրած վճիռը»: Մինչդեռ ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հարցի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանն իր 26.12.2016 թվականի որոշմամբ վերադարձրել է բողոքը այն պատճառաբանությամբ, որ դրանում չի նշվել Վերաքննիչ դատարանի լիազորություններին համապատասխանող ամբողջական պահանջ, որից հետո բողոքաբերը 19.01.2017 թվականին կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ վերացնելով Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված խախտումները, սակայն կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձվել է առանց ժամկետի տրամադրման՝ նույն պատճառաբանությամբ, այն է՝ վերաքննիչ բողոքում չի նշվել Վերաքննիչ դատարանի լիազորություններին համապատասխանող ամբողջական պահանջ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 26.01.2017 թվականի որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վերաքննիչ բողոքի պահանջի ձևակերպման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, 221-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք վերաքննիչ բողոքում ՀՀ օրենսդրությանը վերաքննիչ դատարանին վերապահված լիազորություններին համապատասխան ամբողջական պահանջ չներկայացնելը հիմք է վերաքննիչ բողոքը վերադարձնելու համար, եթե բողոք բերող անձը վերաքննիչ բողոքում նշել է միայն սպորադիկ դատարանի դատական ակտը բեկանելու պահանջը:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված է անձի դատական պաշտպանության իրավունքը, որի կարևոր բաղադրիչներից է դատական ակտերի բողոքարկման իրավունքը: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով գործնականում արդարադատության նպատակների իրականացմանը:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունում սահմանված է դատական եռաստիճան համակարգ, որը գործում է դատական ներհամակարգային աստիճանակարգության հիման վրա, ինչը ենթադրում է վերադաս դատական ատյանի կողմից ստորադաս դատական ատյանի բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայման հնարավորություն: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական շրջանառության մասնակիցներն իրենց բողոքարկման իրավունքն իրացնում են վերադաս ատյաններ՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան և ՀՀ վճռաբեկ դատարան, բողոք ներկայացնելու միջոցով: Վերադաս (տվյալ դեպքում՝ վերաքննիչ) բողոքարկումը ոչ միայն խախտված և վիճարկվող իրավունքների պաշտպանության ու վերականգնման միջոց է, այլև դատական սխալների բացահայտմանն ու վերացմանն ուղղված որոշակի կառուցակարգ է, որն ապահովում է արդարադատության իրականացման ոլորտում օրինականությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, սպա վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը:

Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

3) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը:

4) մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարծում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվեն (...)

բողոք բերող անձի պահանջը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությանը՝ արձանագրելով, որ նշված նորմը ոչ միայն նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտելով ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հակառակ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը կկրի հոչակագրային բնույթ, եթե դատարանները սահմանափակվեն զուտ այդ դրույթին համահունչ վերաքննիչ բողոքի հիմքերը դատական ակտում շարադրելով և չանդադարձնան այդ հիմքերի հիմնավորվածության հարցին: Հետևաբար բողոքում բարձրացված հիմքերը պարտադիր քննության առարկա պետք է դառնան վերադաս դատական ատյանում, և դատարանի կայացրած որոշումը պետք է պարունակի այդ հիմքերի վերաբերյալ եզրահանգումներ *(յրե՛ս, Համայակ Ոսկանյանն ընդդեմ Վոլոդյա Հակոբյանի թիվ ԵԷԴ/1643/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ անդադարձնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ և 221-րդ հոդվածների վերլուծությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածով թվարկված վերաքննիչ դատարանի լիազորությունների կիրառումը պետք է պայմանավորված լինի բացառապես վերաքննիչ բողոքում շարադրված հիմքերի և հիմնավորումների քննարկման և դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ կայացված եզրահանգումներով: Մինևույն ժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ Վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, կաշկանդված չէ բողոքում ներկայացված պահանջով և իր լիազորություններից օգտվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ըստ դատական պաշտպանության իրավունքի իրականացման, դատավարական նպատակահարմարության և արդարադատության արդյունավետության *(յրե՛ս, «ԱՐՄԵՆ-ՕՍՍ» ՍՊԸ-ն ընդդեմ «ՄԱՎԱ ԻՍՊՈՒԼՍ» ՍՊԸ-ի, երրորդ անձ Վարչամ Ղարիբյանի թիվ ԵԱԴԴ/1617/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով և զարգացնելով վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը չի բացահայտել վերաքննիչ բողոքի պահանջի բովանդակությունը՝ դրա մեկնաբանությունը թողնելով իրավակիրառողի հայեցողությանը: Համակարգային վերլուծության ենթարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ և 221-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ, որպես կանոն, վերաքննիչ բողոքի պահանջը ենթադրում է հետևյալ երկու տարրերի միաժամանակյա առկայություն՝ ստորադաս դատարանի դատական ակտի լրիվ կամ մասնակի բեկանում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդ-



վածով վերաքննիչ դատարանին վերապահված որևէ լիազորության հայցում: Ընդ որում, վերը նշված տարրերից առաջնայինը դատական ակտի լրիվ կամ մասնակի բեկանման պահանջն է, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածով վերաքննիչ դատարանին վերապահված այս կամ այն լիազորության հայցումը կրում է ֆակուլտատիվ բնույթ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը կաշկանդված է միայն վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքին ներկայացվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված պայմանը պահպանված կարող է համարվել նաև այն դեպքում, երբ բողոքը բերող անձը միայն ներկայացնի ստորադաս դատարանի դատական ակտը լրիվ կամ մասնակիորեն բեկանելու պահանջ՝ առանց հայցելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածով սահմանված լիազորություններից որևէ մեկը: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ վերաքննիչ բողոքում «բեկանել» եզրույթի կիրառումն արդեն իսկ բավարար է հետևություն անելու այն մասին, որ բողոքաբերը համաձայն չէ ստորադաս դատարանի կողմից կայացված դատական ակտով լուծում ստացած քաղաքացիական գործի ելքի հետ և բողոքարկելով դատական ակտը վերադաս դատական ատյան՝ ակնկալում է բողոքարկվող դատական ակտի վերանայում: Միաժամանակ, ներկայացնելով վերաքննիչ բողոք և դրանում ներառելով այն նյութական և/կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումները, որոնք ըստ բողոքաբերի՝ ազդել են գործի ելքի վրա, բողոքաբերը, պահանջելով ուղղակի բեկանել ստորադաս դատարանի դատական ակտը, պահանջի իրավական հետևանքի կանխորոշումը թողնում է վերաքննիչ դատարանի հայեցողությանը: Վերաքննիչ դատարանն էլ, կաշկանդված լինելով բողոքի հիմքերով և հիմնավորումներով, քննության է առնում դրանից յուրաքանչյուրի հիմնավորվածության հարցը՝ համապատասխանաբար կիրառելով օրենսդրի կողմից իրեն վերապահված լիազորություններից որևէ մեկը: Հետևաբար բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածով սահմանված որևէ լիազորություն կիրառելու պահանջ չներկայացնելը որևէ կերպ չի կարող խոչընդոտել վերաքննության բնականոն ընթացքը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատական ակտի վերանայումը կոնկրետ պահանջի շրջանակներում իրականացնելու սահմանափակում գործող օրենսդրությամբ նախատեսված չէ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 07.12.2016 թվականին Ընկերությունը Դատարանի 15.11.2016 թվականի վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք, որով պահանջել է. «Բեկանել և փոփոխել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 15.11.2016 թվականի թիվ ՍԳ3/0419/02/15 քաղաքացիական գործով կայացրած վճիռը»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, քննության առնելով Ընկերության կողմից 07.12.2016 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը, իր 26.12.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը վերադարձրել է՝ տրամադրելով երկշաբաթյա ժամկետ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար: Ընդ որում, վերոնշյալ որոշմամբ վերաքննիչ բողոքը, ի թիվս այլ հիմքերի, վերադարձվել է նաև այն հիմքով, որ վերաքննիչ բողոքում չի նշվել վերաքննիչ դատարանի լիազորություններին համապատասխան ամբողջական պահանջ:

20.01.2017 թվականին Ընկերությունը, վերացնելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.12.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ արձանագրված թերությունները, կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք, որով պահանջել է. «Բեկանել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 15.11.2016 թվականի թիվ ՍԳ3/0419/02/15 քաղաքացիական գործով կայացրած վճիռը»: Վերաքննիչ դատարանը, քննության առնելով 20.01.2017 թվականին Ընկերության կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը, 26.01.2017 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը վերադարձրել է՝ առանց ժամկետ

տի տրամադրման, այն պատճառաբանությամբ, որ բողոքաբերը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված պահանջը, վերաքննիչ բողոքում դարձյալ չի նշել Վերաքննիչ դատարանի լիազորությունների համապատասխանող ամբողջական պահանջ:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, վերադարձնելով Ընկերության վերաքննիչ բողոքը, հաշվի չի առել, որ Ընկերությունն իր կողմից ներկայացված վերաքննիչ բողոքով պահանջելով բեկանել Դատարանի 15.11.2016 թվականի վճիռը, ըստ էության, ներկայացրել է հստակ ձևակերպված պահանջ, որը չի կարող կախվածության մեջ լինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված Վերաքննիչ դատարանի լիազորություններից: Նշվածը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ յուրաքանչյուր դեպքում վերը նշված հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելիս Վերաքննիչ դատարանը պետք է մատնանշի, թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածով սահմանված կոնկրետ որ լիազորության կիրառումն է ակնկալվում Վերաքննիչ դատարանից, ինչն անընդունելի է, քանի որ դատական ակտի վերանայումը կոնկրետ պահանջի շրջանակներում իրականացնելու սահմանափակում գործող օրենսդրությամբ նախատեսված չէ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, Ընկերության վերաքննիչ բողոքը վերադարձնելով, չի ապահովել ստորադաս դատարանի դատական ակտի վերանայման հնարավորությունը՝ դրանով իսկ սահմանափակելով Ընկերության՝ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241.1-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.01.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազորություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազորություն*

# ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/0100/05/17  
Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ **ՎԳ/0100/05/17**  
**2017թ.**

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի հուլիսի 31-ին

քննարկելով ըստ հայցի ժաննա Միրզոյանի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքի ղեկավարի (այսուհետ՝ Համայնք), երրորդ անձ Պետիկ Ալթունյանի՝ Համայնքի ղեկավարի կողմից 13.09.2016 թվականին տրված թիվ 14 շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 06.05.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշման դեմ ժաննա Միրզոյանի ներկայացուցիչ Սևակ Գևորգյանի վճռաբեկ բողոքը,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ ժաննա Միրզոյանը պահանջել է անվավեր ճանաչել Համայնքի ղեկավարի կողմից 13.09.2016 թվականին Պետիկ Ալթունյանին տրված թիվ 14 շինարարության թույլտվությունը՝ միաժամանակ միջնորդելով վերականգնել հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Մելքունյան) (այսուհետ՝ Դատարան) 15.03.2017 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ ժաննա Միրզոյանի միջնորդությունը բավարարվել է՝ վիճարկման հայց ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնվել է, հայցադիմումն ընդունվել է վարույթ և Պետիկ Ալթունյանը ներգրավվել է դատավարության մեջ որպես երրորդ անձ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.05.2017 թվականի որոշմամբ Պետիկ Ալթունյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է և Դատա-

րանի 15.03.2017 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը քննության առնելու, հայցադիմումը վարույթ ընդունելու և դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելու մասին» որոշումը՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը քննության առնելու՝ միջնորդությունը բավարարելու՝ վիճարկման հայց ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասով, վերացվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ժաննա Միրզոյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Պետիկ Ալթունյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ և 72-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Համայնքի ղեկավարի կողմից 13.09.2016 թվականին տրված թիվ 14 շինարարության թույլտվության մասին ժաննա Միրզոյանն իրագեկվել է միայն 2016 թվականի նոյեմբեր ամսին, երբ թիվ ԿԴՆ/1762/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում ստացել է Պետիկ Ալթունյանի հակընդդեմ հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի օրինակները: Մինչդեռ Պետիկ Ալթունյանի վերաքննիչ բողոքին կից ներկայացված 01.10.2016 թվականի թիվ «RR219795422AM» փոստային առաքման անդորրագրով հաստատվում է միայն թիվ ԿԴՆ/1762/02/16 քաղաքացիական գործով հայցադիմումի պատասխանը ժաննա Միրզոյանին ուղարկված լինելը, այլ ոչ թե վերջինիս կողմից այն ստանալու հանգամանքը: Ընդ որում, ըստ վճռաբեկ բողոքին կից ներկայացված՝ փոստային կապի ազգային օպերատորի համացանցային կայքից արտատված թիվ «RR219795422AM» փոստային առաքանու քաղվածքի, նշված փոստային առաքանին ժաննա Միրզոյանի կողմից ստացվել է 17.11.2016 թվականին:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ թիվ ԿԴՆ/1762/02/16 քաղաքացիական գործով 28.10.2016 թվականին կայացված դատական նիստի ընթացքում Պետիկ Ալթունյանի ներկայացուցիչն ընդամենը բանավոր հայտնել է շինարարության թույլտվության առկայության մասին և դրա օրինակը չի հանձնել ժաննա Միրզոյանի ներկայացուցչին: Հետևաբար նշված դատական նիստի ձայնային արձանագրման կրիչը բավարար չէ հաստատելու համար այն փաստը, որ ժաննա Միրզոյանը վիճարկվող շինարարության թույլտվության մասին տեղեկացել է 28.10.2016 թվականին:

Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված վերոգրյալ խախտումների արդյունքում ժաննա Միրզոյանը զրկվել է իր իրավունքները խախտող վարչական ակտը դատական կարգով վիճարկելու հնարավորությունից:

Բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 06.05.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները**

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ ժաննա Միրզոյանը, թիվ ԿԴՆ/1762/02/16 քաղաքացիական գործով 03.10.2016 թվականին ներկայացված հայցադիմումի պատասխանից և 28.10.2016 թվականի տեղի ունեցած դատական նիստից իրագեկվելով Համայնքի ղեկավարի 13.09.2016 թվականի թիվ 14 շինարարության թույլտվության մասին, որևէ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառով զրկված չի եղել օրենքով սահմանված երկամսյա ժամկետում այն վիճարկելու հնարավորությունից: Հետևաբար Վերաքննիչ դատարանը ժաննա Միրզոյանին չի զրկել դատական պաշտպանության իրավունքից:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վարչական ակտի վերաբերյալ տեղեկացված չլինելու հիմքով վիճարկման հայց ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը, ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՌ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՌ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՌ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՌ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՌ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՌ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչըն-

դոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, ինաստացովել *ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը* կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես *ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում*, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*լրեն, Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետ*): Մինչդեռ Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*լրեն, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետ*): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*լրեն Khalfou v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետ*): Մեկ այլ վճիռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ձկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*լրեն, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

Անդրադառնալով դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումներին՝ Եվրոպական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ներպետական օրենսդրությամբ սահմանված այդպիսի սահմանափակումները հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից: Ըստ Եվրոպական դատարանի՝ նմանատիպ հայցերի դեպքում դժվար կլինի կանխել

անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել հեռավոր անցյալում տեղի ունեցած իրադարձություններ այնպիսի ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Եվրոպական դատարանը գտել է, որ ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*յրեն, Stubbings and others v. The United Kingdom (22083/93;22095/93) գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, 51-րդ և 55-րդ կետեր*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով սահմանելով վարչական դատարանում գործի հարուցման հիմքը՝ համապատասխան հայցը, միաժամանակ, նույն օրենսգրքի 72-րդ հոդվածում նախատեսել է այն ժամկետները, որոնց ընթացքում հայցը կարող է ներկայացվել վարչական դատարան: Օրենսդիրը, ամրագրելով վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները, միաժամանակ, հատուկ նախատեսել է բաց թողնված ժամկետները վերականգնելու իրավական հնարավորությունը համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերի համար ամրագրել, որ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Այսպիսով, օրենքով սահմանված դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը պետք է մեկնաբանվեն և կիրառվեն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված վերոգրյալ հիմնարար իրավունքների լույսի ներքո:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի կիրառելիության և բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնման հարցին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքը թողնելով դատարանների գնահատմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ, երբ ֆիզիկական անձը գրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից երկարատև հիվանդության պատճառով:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարությանը մասնակ-

ցելու և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետները (տե՛ս, Աշոփ Գագիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/9439/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.10.2013 թվականի որոշումը, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Արմենուհի Դալիրայթյանի թիվ ՎԴ/2499/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.12.2014 թվականի որոշումը, Հրայր Գրիգորյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և մյուսների թիվ ՎԴ/1963/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.12.2014 թվականի որոշումը, «ԷԴ» ՓԲԸ-ի տնօրեն Էդգար Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/5086/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.07.2015 թվականի որոշումը, Եղեգնուպի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանման թիվ ՎԴ/0196/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2016 թվականի որոշումը)։ Սույն գործի փաստական հանգամանքներից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

09.01.2017 թվականին փոստային կապի ծառայության միջոցով դիմելով դատարան՝ ժաննա Միրզոյանը պահանջել է անվավեր ճանաչել Համայնքի ղեկավարի կողմից 13.09.2016 թվականին Պետիկ Ալթունյանին տրված թիվ 14 շինարարության թույլտվությունը։ Միաժամանակ ժաննա Միրզոյանը միջնորդել է վերականգնել հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը՝ պատճառաբանելով, որ վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացել է 2016 թվականի նոյեմբերին, այսինքն՝ այն ժամանակ, երբ թիվ ԿԴՆ/1762/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում ստացել է ՀՀ Կոստայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ուղարկված՝ Պետիկ Ալթունյանի հակընդդեմ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հակընդդեմ հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի օրինակները, որոնց շարքում առկա է եղել նաև խնդրո առարկա շինարարության թույլտվությունը **(գ.թ. 4-6, 19, 32)**։

Դատարանը 15.03.2017 թվականի որոշմամբ բավարարել է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին ժաննա Միրզոյանի միջնորդությունը և վերջինիս հայցադիմումն ընդունել է վարույթ՝ պատճառաբանելով, որ «(...) Կոստայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի հակընդդեմ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշման ուսումնասիրությունից պարզվել է, որ այն կայացվել է 31.10.2016 թվականին, իսկ հայցադիմումը ՀՀ վարչական դատարանն առաքելու համար փոստային բաժանմունք է հանձնվել 09.01.2017 թվականին (...)» **(գ.թ. 54-55)**։

Վերաքննիչ դատարանը, 06.05.2017 թվականի որոշմամբ բավարարել է Պետիկ Ալթունյանի վերաքննիչ բողոքը և բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին ժաննա Միրզոյանի միջնորդությունը բավարարելու ու վիճարկման հայց ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասով վերացրել է Դատարանի 15.03.2017 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը քննության առնելու, հայցադիմումը վարույթ ընդունելու և դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելու մասին» որոշումը։ Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ սույն գործում առկա տվյալներից հետևում է, որ ժաննա Միրզոյանը տեղյակ է եղել 13.09.2016 թվականի թիվ 14 շինարարության թույլտվության մասին 31.10.2016 թվականից ավելի վաղ։

Այսպես, ըստ Վերաքննիչ դատարանի, ժաննա Միրզոյանը կարող էր տեղեկանալ վիճարկվող վարչական ակտի մասին 03.10.2016 թվականին, այսինքն՝ այն օրը, երբ թիվ ԿԴՆ/1762/02/16 քաղաքացիական գործով Պետիկ Ալթունյանի կողմից ներկայացվել է հայցադիմումի պատասխան, որում նշված է եղել 13.09.2016 թվականի թիվ 14 շինարարության թույլտվության մասին, և որին կցված է եղել նաև այդ վարչական ակտի պատճենը։ Ուսումնասիրելով վերաքննիչ բողոքին կից ներկայացված՝ 01.10.2016 թվականի թիվ «RR219795422AM» փոստային առաքման անդորրագիրը՝ Վերաքննիչ դատարանը գտել է,



որ թիվ ԿԴՆ/1762/02/16 քաղաքացիական գործով հայցադիմումի պատասխանը և դրան կից փաստաթղթերը Պետիկ Ալթունյանի կողմից ուղարկվել են Ժաննա Միրզոյանին:

Ավելին, Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ Ժաննա Միրզոյանը կարող էր տեղեկանալ վիճարկվող վարչական ակտի մասին 28.10.2016 թվականին, այսինքն՝ այն օրը, երբ թիվ ԿԴՆ/1762/02/16 քաղաքացիական գործով տեղի ունեցած դատական նիստի ընթացքում, որին մասնակցել է նաև Ժաննա Միրզոյանի ներկայացուցիչը, Պետիկ Ալթունյանի ներկայացուցիչը հայտնել է, որ իր վատահորդի կողմից շինարարական աշխատանքներն իրականացվում են Համայնքի ղեկավարի կողմից 13.09.2016 թվականին տրված թիվ 14 շինարարության թույլտվության հիման վրա: Վերոգրյալ փաստը Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել վերաքննիչ բողոքին կից ներկայացված՝ թիվ ԿԴՆ/1762/02/16 քաղաքացիական գործով 28.10.2016 թվականին կայացված դատական նիստի ձայնային արձանագրման կրիչում պարունակվող տեղեկույթի ուսումնասիրության արդյունքում **(գ.թ. 94-107):**

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն վարչական գործը հարուցվել է Ժաննա Միրզոյանի կողմից 09.01.2017 թվականին ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Համայնքի ղեկավարի կողմից 13.09.2016 թվականին Պետիկ Ալթունյանին տրված թիվ 14 շինարարության թույլտվությունը: Այսինքն՝ Ժաննա Միրզոյանը բաց է թողել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը:

Դատարանը հիմնավոր է համարել նշված ժամկետի բացթողնման պատճառը հարգելի համարելու վերաբերյալ Ժաննա Միրզոյանի կողմից ներկայացված միջնորդությանը՝ նշված փաստարկը՝ գտնելով, որ Ժաննա Միրզոյանի միջնորդության մերժման կամ բավարարման հարցը լուծելիս որպես ելակետ պետք է ընդունվի այն օրը, երբ թիվ ԿԴՆ/1762/02/16 քաղաքացիական գործով Պետիկ Ալթունյանի ներկայացրած հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթ, այսինքն՝ 31.10.2016 թվականը, քանի որ Ժաննա Միրզոյանը վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացել է միայն Պետիկ Ալթունյանի ներկայացրած հակընդդեմ հայցադիմումն ու կից փաստաթղթերը ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից իրեն ուղարկվելուց հետո:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը գտել է, որ վիճարկման հայց ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին Ժաննա Միրզոյանի միջնորդության մերժման կամ բավարարման հարցը լուծելիս որպես ելակետ պետք է ընդունվի ոչ թե թիվ ԿԴՆ/1762/02/16 քաղաքացիական գործով Պետիկ Ալթունյանի ներկայացրած հակընդդեմ հայցադիմումը ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթ ընդունվելու օրը՝ 31.10.2016 թվականը, այլ նույն գործով Պետիկ Ալթունյանի կողմից հայցադիմումի պատասխան ներկայացնելու օրը՝ 03.10.2016 թվականը, կամ նույն գործով տեղի ունեցած դատական նիստի օրը՝ 28.10.2016 թվականը:

Անդրադառնալով Ժաննա Միրզոյանի կողմից սույն գործով վիճարկվող շինարարության թույլտվության մասին 03.10.2016 թվականից տեղյակ լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատողության իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

- 03.10.2016 թվականն այն օրն է, երբ թիվ ԿԴՆ/1762/02/16 քաղաքացիական գործով Պետիկ Ալթունյանի հայցադիմումի պատասխանը (որում առկա է եղել նշում Համայնքի ղեկավարի 13.09.2016 թվականի թիվ 14 շինարարության թույլտվության մասին) և դրան կից փաստաթղթերը (որոնց շարքում առկա է եղել նաև վիճարկվող վարչական ակտը) ստացվել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում **(գ.թ. 72-74),**

- սույն գործում առկա է նշված հայցադիմումի պատասխանը և դրան կից փաստաթղթերը Ժաննա Միրզոյանի հասցեով ուղարկելու վերաբերյալ ապացույց՝ թիվ

«RR219795422AM» փոստային անդորրագիրը, որի վրա առկա կնիքը թվագրված է 01.10.2016 թվականով (**գ.թ. 75**),

- սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Ժաննա Միրզոյանը 03.10.2016 թվականին կամ երբևէ ստացել է 01.10.2016 թվականի թիվ «RR219795422AM» փոստային անդորրագրով իրեն ուղարկված թիվ ԿԴԻ/1762/02/16 քաղաքացիական գործով Պետիկ Ալթունյանի հայցադիմումի պատասխանը և դրան կից փաստաթղթերը:

Փաստորեն, սույն գործում առկա ապացույցներով հաստատվում է միայն այն հանգամանքը, որ թիվ ԿԴԻ/1762/02/16 քաղաքացիական գործով Պետիկ Ալթունյանի հայցադիմումի պատասխանը և դրան կից փաստաթղթերը 01.10.2016 թվականին փոստային կապի ծառայության միջոցով ուղարկվել են Ժաննա Միրզոյանին, և չի հաստատվում այն հանգամանքը, որ Ժաննա Միրզոյանը ստացել է այդ փաստաթղթերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, *Հրաչյա Գրիգորյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և մյուսների թիվ ԿԴ/1963/05/14 վարչական գործով 24.12.2014 թվականի որոշմամբ* քննարկելով նմանատիպ իրավիճակում վիճարկվող վարչական ակտի մասին հայցվորի տեղյակ լինելու փաստը հաստատված համարելու կամ չհամարելու հարցը, նշել է. «*մեկ այլ գործով հայցադիմումի պատասխանը, որում առկա է հիշարկում թիվ ԿԴ/1963/05/14 վարչական գործով վիճարկվող վարչական ակտերի վերաբերյալ, 2013 թվականի ապրիլին փոստային կապի ծառայության միջոցով ուղարկվել է թիվ ԿԴ/1963/05/14 վարչական գործով հայցվորին: Հետևաբար թիվ ԿԴ/1963/05/14 վարչական գործով հայցվորը վիճարկվող վարչական ակտերի մասին մեկ այլ գործի քննության շրջանակներում կարող էր ողջանկորեն րտեղյակ լինել դեռևս 2013 թվականի ապրիլ ամսից*»: Փաստորեն, վկայակոչված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վիճարկվող վարչական ակտի մասին հայցվորի տեղյակ լինելու փաստը կարող է հաստատված համարվել նաև այդ վարչական ակտի օրինակը մեկ այլ դատական գործի շրջանակներում հայցվորին ուղարկված լինելը հավաստող ապացույցով:

Հիմք ընդունելով իրավունքի զարգացման միջոցով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառնությունը՝ վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ անհրաժեշտ է համարում զարգացնել վերոգրյալ իրավական դիրքորոշումները: Այսպես, վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն վիճարկվող վարչական ակտի օրինակը հայցվորին փոստային կապի ծառայության միջոցով ուղարկելու վերաբերյալ ապացույցը չի կարող բավարար լինել վիճարկման հայց ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդության մերժման կամ բավարարման հարցը լուծելիս հայցվորի կողմից վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացված լինելու փաստը հաստատելու համար: Նման դեպքերում վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացված լինելու փաստը հաստատելու համար անհրաժեշտ է նաև վիճարկվող վարչական ակտի օրինակը հայցվորի կողմից ստանալու կամ այն հայցվորին հասանելի դառնալու վերաբերյալ համապատասխան ապացույցի առկայություն: Այլ կերպ ասած, հայցվորի կողմից վիճարկվող վարչական ակտի մասին տեղյակ լինելու փաստը պետք է հաստատվի այնպիսի ապացույցների միջոցով, որոնք վկայում են վիճարկվող վարչական ակտի օրինակը հայցվորին ոչ միայն ուղարկված լինելու, այլ նաև որևէ ձևով հասանելի դառնալու վերաբերյալ:

վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքի նման զարգացումը պայմանավորում է այն հանգամանքով, որ իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ անձի դատական պաշտպանության իրավունքը սահմանափակվում է միայն այն հիմքով, որ վիճարկվող վարչական ակտի օրինակն ուղարկվել է տվյալ անձին՝ առանց ձշտելու, թե արդյոք նա ստացել է այդ փաստաթուղթը, կամ արդյոք այն որևէ ձևով հասանելի է դարձել այդ անձին, թե՛ ոչ: Նկարագրված իրավիճակներում դատարանները կիրառելով հայց ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետները բաց թողնելու վերաբերյալ կանոնները, ցուցաբերում են անձի արդար դատաքննության իրավունքը սահմանափակող ավելորդ ձևակառուցություն (ֆորմալիզմ), որի արդյունքում խաթարվում է դատարանի մատչելիության իրավունքը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված նորմերը դադարում են ծառայել

իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և անհիմն կերպով խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը:

Այսպիսով, վերոգրյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո ուսումնասիրելով սույն գործում առկա փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործով չի հաստատվում այն հանգամանքը, որ Ժաննա Միրզոյանը 03.10.2016 թվականին կարող էր տեղեկանալ (տեղեկացված լինել) Համայնքի ղեկավարի 13.09.2016 թվականի թիվ 14 շինարարության թույլտվության մասին՝ 01.10.2016 թվականի թիվ «RR219795422AM» փոստային անդորրագրով իրեն ուղարկված թիվ ԿԴԻ/1762/02/16 քաղաքացիական գործով Պետիկ Ալթունյանի հայցադիմումի պատասխանը և դրան կից փաստաթղթերը ստանալու և ուսումնասիրելու միջոցով (ավելին, համաձայն փոստային կապի ազգային օպերատորի համացանցային կայքից արտատպված թիվ «RR219795422AM» փոստային առաքանու քաղվածքի՝ նշված փոստային առաքանին Ժաննա Միրզոյանի կողմից ստացվել է 17.11.2016 թվականին):

Անդրադառնալով Ժաննա Միրզոյանի կողմից սույն գործով վիճարկվող շինարարության թույլտվության մասին 28.10.2016 թվականից տեղյակ լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատողության իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

- 28.10.2016 թվականն այն օրն է, երբ թիվ ԿԴԻ/1762/02/16 քաղաքացիական գործով տեղի է ունեցել դատական նիստ, որին մասնակցել են թե՛ Ժաննա Միրզոյանի և թե՛ Պետիկ Ալթունյանի ներկայացուցիչները, և Պետիկ Ալթունյանի ներկայացուցիչը հայտնել է, որ վերջինիս վստահորդը շինարարությունն իրականացնում է օրինական հիմունքներով՝ համապատասխան շինարարության թույլտվության հիման վրա,

- թիվ ԿԴԻ/1762/02/16 քաղաքացիական գործով 28.10.2016 թվականին կայացված դատական նիստի ձայնային արձանագրման կրիչում պարունակվող տեղեկույթի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ դատական նիստում Պետիկ Ալթունյանի ներկայացուցիչը չի կատարել որևէ հայտարարություն, որը պարունակում է սույն գործով վիճարկվող վարչական ակտի նույնականացման համար անհրաժեշտ տվյալները, մասնավորապես՝ ընդունման ամսաթիվը և հերթական համարը **(գ.թ. 82)**:

Վերոգրյալը վկայում է այն մասին, որ սույն գործով չի հաստատվում այն հանգամանքը, որ Ժաննա Միրզոյանը 28.10.2016 թվականին կարող էր տեղեկանալ (տեղեկացված լինել) Համայնքի ղեկավարի 13.09.2016 թվականի թիվ 14 շինարարության թույլտվության մասին՝ թիվ ԿԴԻ/1762/02/16 քաղաքացիական գործով տեղի ունեցած դատական նիստի ընթացքում այդ վարչական ակտի մասին իրազեկվելու միջոցով, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ առանց շինարարության թույլտվության նույնականացման համար անհրաժեշտ տվյալները հայտնելու միայն դրա գոյության վերաբերյալ կատարված հայտարարությունը բավարար չէ այնպիսի եզրահանգում կատարելու համար, որ անձը, ում իրավունքներին կամ շահերին ենթադրաբար կարող է առնչվել տվյալ վարչական ակտը, ողջամտորեն համարվում է տեղեկացված այդ վարչական ակտի մասին:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ 03.10.2016 թվականին թիվ ԿԴԻ/1762/02/16 քաղաքացիական գործով Պետիկ Ալթունյանի հայցադիմումի պատասխանը և դրան կից փաստաթղթերը Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում մուտքագրվելը և 28.10.2016 թվականին սույն գործով տեղի ունեցած դատական նիստի ընթացքում Պետիկ Ալթունյանի ներկայացուցիչի կողմից իր վստահորդի մոտ շինարարության թույլտվության առկայության մասին անորոշ հայտարարություն անելը չեն կարող բավարար հիմք հանդիսանալ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ Ժաննա Միրզոյանի միջնորդությունը մերժելու և դատարանի մատչելիության նրա իրավունքը սահմանափակելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկման հայց ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնոր-

դուրսն մերժման կամ բավարարման հարցը լուծելիս ժաննա Միրզոյանի կողմից Համայնքի ղեկավարի 13.09.2016 թվականի թիվ 14 շինարարության թույլտվության մասին տեղեկանելու օրվա առումով որպես ելակետ պետք է ընդունել ժաննա Միրզոյանի ներկայացրած միջնորդությամբ նշված այն փաստարկը, որ վերջինս վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացել է այն ժամանակ, երբ ստացել է թիվ ԿԴՆ/1762/02/16 քաղաքացիական գործով ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ուղարկված՝ Պետիկ Ալթունյանի հակընդդեմ հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի օրինակները: Այդ իրադարձության վրա հասնելու հնարավոր ամենաշուտ պահը 31.10.2016 թվականն է, երբ Պետիկ Ալթունյանի ներկայացրած հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ դատավարական ժամկետի վերջին օրն օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օր է, ապա ժամկետի ավարտման օրը դրան հաջորդող աշխատանքային օրն է (...):

Ժաննա Միրզոյանը Համայնքի ղեկավարի 13.09.2016 թվականի թիվ 14 շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջով փոստային կապի ծառայության միջոցով դատարան է դիմել 09.01.2017 թվականին, որը 31.10.2016 թվականից հաշվարկված երկամսյա ժամկետի ավարտման օրն է, քանի որ 31.12.2016 թվականը ոչ աշխատանքային օր է, իսկ դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը 09.01.2017 թվականն է: Այսպիսով, ժաննա Միրզոյանը Համայնքի ղեկավարի 13.09.2016 թվականի թիվ 14 շինարարության թույլտվության վիճարկման համար օրենքով սահմանված երկամսյա ժամկետը բաց է թողել իր կամքից անկախ պատճառներով, քանի որ չի իմացել նշված վարչական ակտի գոյության մասին: Թիվ ԿԴՆ/1762/02/16 քաղաքացիական գործով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից Պետիկ Ալթունյանի հակընդդեմ հայցադիմումը և կից փաստաթղթերը ստանալու միջոցով ամենաշուտը 31.10.2016 թվականին տեղեկանալով վիճարկվող վարչական ակտի մասին՝ ժաննա Միրզոյանն այդ պահից հաշվարկված երկու ամսվա ընթացքում (09.01.2017 թվականին) ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ վիճարկման հայցով դատարան դիմելու ուղղությամբ:

Հետևաբար վիճարկման հայց ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին ժաննա Միրզոյանի միջնորդությունը ենթակա է բավարարման, և բաց թողնված ժամկետը ենթակա է վերականգնման, քանի որ ժաննա Միրզոյանը Համայնքի ղեկավարի 13.09.2016 թվականի թիվ 14 շինարարության թույլտվության վիճարկման ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, այն է՝ չի իմացել նշված վարչական ակտի գոյության մասին, և այդ պատճառը վերանալուց հետո երկու ամսվա ընթացքում վիճարկման հայցով դիմել է վարչական դատարան: Փաստորեն, սույն գործով 15.03.2017 թվականի որոշմամբ բավարարելով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ ժաննա Միրզոյանի միջնորդությունը և վերականգնելով վիճարկման հայց ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը, Դատարանը կայացրել է իրավաչափ դատական ակտ, ինչը հաշվի չի առնվել վերաքննիչ դատարանի կողմից:

*Նշված պարզաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատրասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Ենելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 06.05.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. ՀՀ վարչական դատարանի 15.03.2017 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը քննության առնելու, հայցադիմումը վարույթ ընդունելու և դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելու մասին» որոշումը՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին ժաննա Միրզոյանի միջնորդությունը բավարարելու՝ վիճարկման հայց ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մատով, թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/6284/05/14

Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան

Դատավորներ՝ Ա. Աբովյան

Ա. Սարգսյան

Գ. Ղարիբյան

Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ/6284/05/14

2017թ.

### ՈՐՈՇՈՒՄ

### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈՒՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈՒՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի փետրվարի 24-ին,

քննարկելով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.01.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելու մասին» որոշման դեմ,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### **1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Հարություն Մարությանը, Արմեն Տեր-Հովհաննիսյանը, Մարիամ Ստեփանյանը, Մառիանա Աղաջանյանը, Նարեկ Սահակյանը և Գայանե Առոյանը հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարության, երրորդ անձինք Երևանի քաղաքապետարանի, Նելլի Հարությունյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Կենտրոն» տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր)՝ ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետը՝ Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտա 48-րդ շենք հասցեում գտնվող թիվ 78 տարածքի մասով, այդ որոշման հիման վրա թիվ 78 տարածքի նկատմամբ կատարած Երևան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցումը, այդ գրանցման հիման վրա Քաղաքապետարանի կողմից 14.06.2012 թվականին հայտարարված աճուրդը և այդ աճուրդի արդյունքում Երևան համայնքի և քաղաքացի Նելլի Հարությունյանի միջև 18.07.2012 թվականին կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին՝ միաժամանակ միջնորդելով վերականգնել նորմատիվ

իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու համար օրենքով սահմանված բաց թողնված դատավարական ժամկետը:

ՀՀ վարչական դատարանի (նախագահող դատավոր՝ Մ. Մելքունյան, դատավորներ՝ Ա. Ավագյան, Կ. Ավետիսյան, Ռ. Խանդանյան, Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 19.11.2014 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժվել են:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.01.2016 թվականի որոշմամբ Հարություն Մարությանի, Արմեն Տեր-Հովհաննիսյանի, Մարիամ Ստեփանյանի, Մարիանա Աղաջանյանի, Նարեկ Սահակյանի և Գայանե Ասոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ որոշվել է Դատարանի 19.11.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴ/6284/05/14 որոշումը մասնակիորեն՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու և հայցադիմումի (դիմումի) ընդունումը՝ ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետը՝ Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտա 48-րդ շենք հասցեում գտնվող թիվ 78 տարածքի մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասով մերժելու մասով վերացնել: ՀՀ վարչական դատարանի 19.11.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴ/6284/05/14 որոշումը մնացած՝ Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտա 48-րդ շենք թիվ 78 տարածքի նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցումը, այդ գրանցման հիման վրա Քաղաքապետարանի կողմից 14.06.2012 թվականին հայտարարված աճուրդը և այդ աճուրդի արդյունքում Երևան համայնքի և քաղաքացի Նելլի Հարությունյանի միջև 18.07.2012 թվականին կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջներով հայցադիմումի (դիմումի) ընդունումը մերժելու մասով, թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հարություն Մարությանի, Արմեն Տեր-Հովհաննիսյանի, Մարիամ Ստեփանյանի, Մարիանա Աղաջանյանի, Նարեկ Սահակյանի և Գայանե Ասոյանի ներկայացուցիչը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետը, խախտել է ՀՀ վարչական դատարանի օրենսգրքի 54-րդ հոդվածը, 192-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 193-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը:*

*Բողոք քերած անձը նշված պնդումը պարզապես և հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու պահանջ ներկայացնելու համար սահմանված են դատավարական ժամկետներ, մասնավորապես՝ այն դեպքում, երբ վիճարկվում է իրենց նկատմամբ չկիրառված նորմատիվ իրավական ակտ, իսկ տվյալ դեպքում վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կիրառված չէ հայցվորների (դիմողների) նկատմամբ, ապա ՀՀ վարչական դատարանի օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դեպքերում չորսամսյա ժամկետը հաշվարկվում է այն օրվանից հետո, երբ վիճարկվող նորմատիվ իրավական ակտը մտել է ուժի մեջ: Այսինքն՝ տվյալ դեպքում հայցվորների (դիմողների) կողմից վիճարկվող նորմատիվ իրավական ակտը մտել է ուժի մեջ 08.06.2009 թվականին, հետևաբար չորսամսյա ժամկետը հաշվարկվում է այդ ամսաթվից և ստացվում է, որ վիճարկման համար վերջնաժամկետ է հանդիսացել 08.10.2009 թվականը: Հետևաբար Վերաքննիչ դատարանի այն հիմնավորումը, որ ժամկետի հաշվարկի սկիզբ պետք է դիտվեր այն օրվա հաջորդ օրը, երբ հայցվորների (դիմողների) պնդմամբ վերջիններս իմացել են վիճարկվող նորմատիվ

ակտի կիրառմամբ անհատական իրավական ակտի՝ վարչական ակտի ընդունման, այն է՝ Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտա 48-րդ շենքի թիվ 78 տարածքի սկստմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքի 08.07.2010 թվականի պետական գրանցման մասին, անհիմն է:

ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանվել է, որ Երևանի ավագանու առաջին ընտրությունից հետո սեփականության իրավունքով անհատույց Երևան քաղաքին համարվել են փոխանցված (հանձնված)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն որոշման համաձայն պետական գրանցման ենթակա՝ Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող ինքնակամ կառույցների կառուցապատման մակերեսի չափերով հողամասերը: Նշված որոշմամբ հստակ հասցեներով չի սահմանվել, թե կոնկրետ որ գույքն է համարվում փոխանցված Երևան քաղաքին, ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշումն ուղղակիորեն դրույթ չի պարունակում Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտա 48-րդ շենք հասցեում գտնվող թիվ 78 տարածքի վերաբերյալ:

Հայցվորները (դիմողները) օբյեկտիվորեն զրկված չեն եղել օրենքով սահմանված ժամկետում դատարան դիմելու իրենց իրավունքն իրացնելու համար իրենցից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից, մինչդեռ դրսևորել են անգործություն, ինչի հետևանքները պետք է կրեն հայցվորները (դիմողները):

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերաքննիչ բողոքը բավարարելու մասով վերացնել Վերաքննիչ դատարանի 08.01.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելու մասին» որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 19.11.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշմանը:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ բողոքին կից ներկայացված են եղել բոլոր փաստաթղթերը, որոնք հիմք են հանդիսացել այն փաստը հաստատված համարելու համար, որ հայցվորները (դիմողները) ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման կիրառման մասին իրագեկվել են 11.08.2014 թվականին, իսկ Կադաստրից համապատասխան փաստաթղթերը հայցվորների (դիմողների) ներկայացուցիչն ստացել է 16.09.2014 թվականին, հետևաբար հայց ներկայացնելու համար սահմանված չորսամսյա ժամկետը պետք է հաշվարկվի 16.09.2014 թվականից, այլ ոչ թե ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման ուժի մեջ մտնելու պահից, այն է՝ 08.06.2009 թվականից: Իրագեկումը 11.08.2014 թվականին տեղի ունենալու, դրա հիման վրա Կադաստրի կողմից 16.09.2014 թվականին անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները տրամադրվելու հանգամանքը հիմք է հանդիսանում ՀՀ վարչական դատավարության 193-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառության համար:

### **3. Վճռաբեկ դատարանի պարձառարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարան դիմելու ժամկետների հաշվարկման հարցի վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական



պրակտիկա ձևավորելու համար: Վճարել դատարանն արձանագրում է նաև, որ սույն վճարել բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի, 192-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 193-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարան դիմելու ժամկետների հաշվարկման առանձնահատկություններին:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վճարել դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքում ձևավորված իրավական դիրքորոշման համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը **բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների**, սակայն կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովմամբ (*լրեն, օրինակ, Ալ-Ադասին ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 35763/97 գանգադրով ՄԻԵԴ-ի 21.11.2001 թվականի վճիռը, պարբ. 53*): Միաժամանակ ՄԻԵԴ-ը նշել է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է դատարանի դիմելու արդյունավետ իրավունք, այնուամենայնիվ, պետության հայեցողությանն է թողնված նշված նպատակի համար անհրաժեշտ միջոցների ընտրության հարցը (*լրեն, Էյրին ընդդեմ Իռլանդիայի թիվ 6289/73 գանգադրով ՄԻԵԴ-ի 09.10.1979 թվականի վճիռը, պարբ. 26*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը. Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ իրավական ակտերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ սույն օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ որևէ անհատական իրավական ակտով, բացառությամբ դատական ակտի, կամ որևէ ռեալ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա

որևէ դրույթով) խախտվել են Սահմանադրության 2-րդ գլխով, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իր իրավունքները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ **իրենց նկատմամբ չկիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա դրույթով) կարող են խախտվել նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված իրենց իրավունքները:**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում վարչական դատարան կարելի է դիմել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) կիրառման վերաբերյալ անհատական իրավական ակտի ուժի մեջ մտնելու կամ դրա կիրառումը (կատարումը) ապահովված գործողության կամ անգործության օրվանից հետո՝ չորսամսյա ժամկետում, **իսկ 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դեպքերում՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո՝ չորսամսյա ժամկետում:**

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել անձին վիճարկելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերը՝ միաժամանակ տարանջատելով այդպիսի հնարավորության ծագման համար հետևյալ հիմքերը.

վիճարկվող նորմատիվ իրավական ակտն անձի նկատմամբ կիրառվել է անհատական իրավական ակտով կամ ռեալ ակտով, ինչի արդյունքում խախտվել են վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իրավունքները,

նորմատիվ իրավական ակտն անձի նկատմամբ չի կիրառվել, սակայն դրանով կամ դրա դրույթով կարող են խախտվել վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իր իրավունքները:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ «անձի նկատմամբ նորմատիվ իրավական ակտի՝ անհատական իրավական ակտով կիրառում» և «նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ ընդունված անհատական իրավական ակտ» հասկացություններն առերևույթ նման լինելով հանդերձ ունեն բովանդակային տարբերություն:

Այսպես, առաջին իրավիճակն առկա է այն դեպքում, երբ նորմատիվ իրավական ակտի գործողությունն ապահովվելու համար անհրաժեշտ է ընդունել որոշակի անհատական իրավական ակտ, այսինքն՝ անհատական իրավական ակտը տվյալ դեպքում հանդիսանում է նորմատիվ իրավական ակտի կիրառման ապահովման միջոցը: Այս դեպքում անձի իրավունքների խախտման պարագայում քննարկման առարկա է հանդիսանում նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը: Մինչդեռ երկրորդ դեպքում անհատական իրավական ակտն ընդունվում է որևէ հարց կարգավորելու նպատակով, որի համար կիրառվում է նորմատիվ իրավական ակտը: Այսինքն՝ այդ դեպքում անհատական իրավական ակտը չի հանդիսանում նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոց, այլ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ է պայմանավորվում այն հարցի լուծումը, որի համար ընդունվում է անհատական իրավական ակտը: Հետևաբար այս դեպքում անձի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված է ոչ թե կիրառված նորմատիվ իրավական ակտի, այլ նորմատիվ իրավական ակտի կիրառման իրավաչափությամբ:

Վերոգրյալի հիման վրա անդրադառնալով նորմատիվ իրավական ակտերի իրա-

վաչափությունը վիճարկելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական ժամկետներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում անձը վարչական դատարան կարող է դիմել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) կիրառման վերաբերյալ անհատական իրավական ակտի ուժի մեջ մտնելու կամ դրա կիրառումը (կատարումը) ապահոված գործողության կամ անգործության օրվանից հետո՝ չորսամսյա ժամկետում, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում, այն է՝ երբ նորմատիվ իրավական ակտն անձի նկատմամբ չի կիրառվել, սակայն դրանով կամ դրա դրույթով կարող են խախտվել վերջինիս իրավունքները, վարչական դատարան դիմելու համար սահմանվել է չորսամսյա ժամկետ՝ **վիճարկվող նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո:**

Միաժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտի (դրա դրույթի) կիրառման վերաբերյալ անհատական իրավական ակտի ընդունման կամ ուժի մեջ մտնելու մասին անձն օրենքով սահմանված կարգով չի իրազեկվել, կամ նա չի իմացել նորմատիվ իրավական ակտի կիրառումը (կատարումը) ապահոված գործողության կամ անգործության մասին, ապա նա կարող է դիմել վարչական դատարան չորսամսյա ժամկետում այն օրվանից հետո, երբ իմացել է կամ պարտավոր էր իմանալ համապատասխանաբար անհատական իրավական ակտի ընդունման կամ ուժի մեջ մտնելու կամ գործողություն կատարելու կամ անգործություն ցուցաբերելու մասին:

Նշված համատեքստում անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանով սահմանված չորսամսյա ժամկետը վերաբերում է այն դեպքերին, երբ վիճարկվող նորմատիվ իրավական ակտն անձի նկատմամբ կիրառվել է անհատական իրավական ակտով կամ ռեալ ակտով, սակայն անձն օրենքով սահմանված կարգով չի իրազեկվել անհատական իրավական ակտի ընդունման կամ ուժի մեջ մտնելու մասին, կամ չի իմացել նորմատիվ իրավական ակտի կիրառումը (կատարումը) ապահոված գործողության կամ անգործության մասին: Այսպիսի դեպքերի համար վարչական դատարան դիմելու չորսամսյա ժամկետը սկսում է հոսել այն օրվանից հետո, երբ անձն իմացել է կամ պարտավոր էր իմանալ համապատասխան անհատական իրավական ակտի ընդունման կամ ուժի մեջ մտնելու կամ գործողություն կատարելու կամ անգործություն ցուցաբերելու մասին: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետները կիրառելի են այն դեպքերի համար, երբ վիճարկվող նորմատիվ իրավական ակտն անձի նկատմամբ կիրառվել է անհատական իրավական ակտի կամ նորմատիվ իրավական ակտի կիրառումը (կատարումը) ապահոված գործողության կամ անգործության միջոցով, սակայն վերջինս անհատական իրավական ակտի կամ գործողության կամ անգործության մասին չի իմացել կամ չի իրազեկվել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի կիրառելիության և բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնման հարցին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքը թողնելով դատարանների գնահատմանը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները:

Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ, երբ ֆիզիկական անձը գրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից երկարատև հիվանդության պատճառով:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարությանը մասնակցելու և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետները (*տե՛ս, օրինակ, Աշոտ Գազիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գազիկ Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/9439/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.10.2013 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշմամբ սահմանվել է Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցվող անհրաժեշտ գույքի ցանկը, մասնավորապես, նշված որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանվել է, որ Երևանի ավագանու առաջին ընտրությունից հետո սեփականության իրավունքով անհատույց Երևան քաղաքին են համարվում փոխանցված (հանձնված)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն որոշման համաձայն պետական գրանցման ենթակա՝ Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող **ինքնակամ կառույցների կառուցապատման մակերեսի չափերով հողամասերը**: ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Կենտրոն» տարածքային ստորաբաժանման կողմից տրված թիվ 2705469 սեփականության իրավունքի գրանցման պետական գրանցման վկայականի համաձայն՝ ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետի հիման վրա 08.07.2010 թվականին Երևանի քաղաքի Մ. Մաշտոցի պողոտայի 48-րդ շենքի թիվ 78 տարածքի նկատմամբ գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 30-32**):

Հարություն Մարությանը, Արմեն Տեր-Հովհաննիսյանը, Մարիամ Ստեփանյանը, Մարիան Աղաջանյանը, Նարեկ Սահակյանը և Գայանե Ասոյանը 12.11.2014 թվականին հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարության, երրորդ անձինք Երևանի քաղաքապետարանի, Նելլի Հարությունյանի, Կադաստրի՝ ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետը՝ Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտա 48-րդ շենք հասցեում գտնվող թիվ 78 տարած-

քի մատվ, այդ որոշման հիման վրա թիվ 78 տարածքի նկատմամբ կատարած Երևան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցումը, այդ գրանցման հիման վրա քաղաքապետարանի կողմից 14.06.2012 թվականին հայտարարված աճուրդը և այդ աճուրդի արդյունքում Երևան համայնքի և քաղաքացի Նելլի Հարությունյանի միջև 18.07.2012 թվականին կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին՝ միաժամանակ միջնորդելով վերականգնել նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու համար օրենքով սահմանված բաց թողնված դատավարական ժամկետը՝ հիմքում դնելով այն պատճառաբանությունը, որ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստի պետական կոմիտեի Կենտրոն սպասարկման գրասենյակի կողմից վիճելի հասցեի վերաբերյալ փաստաթղթերի պատճենները տրամադրվել են 16.09.2014 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 3-9**):

Դատարանը, բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժել է՝ պատճառաբանելով, որ 14.06.2012 թվականին հայտարարված՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքի, այդ թվում՝ Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտայի 48-րդ շենքի թիվ 78 տարածքի օգտագործման տրամադրելու և օտարելու վերաբերյալ աճուրդի մասին հայտարարությունը հրապարակվել է «Ազգ» օրաթերթում, իսկ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով աճուրդի մասին հրապարակային ծանուցման միջոց է հանդիսանում զանգվածային լրատվության միջոցում աճուրդի մասին հայտարարությունը հրապարակումը: Դատարանն արձանագրել է, որ ՀՀ կառավարության վիճարկվող որոշման հիման վրա կատարված՝ խնդրո առարկա անշարժ գույքի նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցման մասին հայցվորները պարտավոր էին իմանալ «Ազգ» օրաթերթի հայտարարությունից, այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածով սահմանված չորսամսյա ժամկետի հաշվարկի սկիզբ պետք է համարել աճուրդի մասին հայտարարությունը «Ազգ» օրաթերթում հրապարակվելու պահից՝ 14.06.2012 թվականից:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելիս պատճառաբանել է, որ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով կարգավորվող իրավահարաբերության մասնակիցների շրջանակը ձևավորվում է հրապարակային սակարկությունների միջոցով օտարվող գույքի, գույքային իրավունքների ձեռք բերման հավակնություն ունեցող անձանց այդ հարաբերություններին մասնակցելու ազատ կամաարտահայտության հիման վրա, և գտել է, որ գույքի, գույքային իրավունքների հրապարակային սակարկություններով օտարելու մասին զանգվածային լրատվության միջոցով հայտարարությունը կարող է վերաբերել այն անձանց շրջանակին, որոնք իրենց ազատ կամաարտահայտության հիման վրա այդ գույքը, գույքային իրավունքը ձեռք բերելու հավակնություն են ունեցել (կարող էին ունենալ) և որևէ կերպ չի կարող կրել համատարած բնույթ: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտել է, որ աճուրդի մասին հայտարարությունը չի կարող վկայել այն մասին, որ աճուրդով օտարվող գույքը, գույքային իրավունքը ձեռք բերելու իր ազատ կամաարտահայտության վրա հիմնված հավակնություն չունեցող անձը պարտավոր էր նման եղանակով գույքը, գույքային իրավունքն օտարելու վերաբերյալ հրապարակված ծանուցման փաստով իմանալ գույքը, գույքային իրավունքն օտարող անձի անվամբ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման՝ վարչական ակտի ընդունման մասին:

Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով, որ անհատական իրավական ակտի հասցեատերը հանդիսացել է Երևան համայնքը, իսկ դիմողները դրա մասին չեն իրազեկվել, գտել է, որ սույն գործով կիրառման ենթակա են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մատվ նախատեսված դատավարական ժամկետները, և եզրակացրել է, որ որպես նորմատիվ իրավական ակտի վիճարկման հիմունք ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մատվ սահմանված չորսամսյա ժամկետի հաշվարկի սկիզբ, պետք է դիտվեր այն օրվան հաջորդող օրը, երբ դիմողների պնդմամբ վերջիններս իմացել են վիճարկվող նորմատիվ ակտի կիրառմամբ անհատական իրավական ակտի՝ վարչական ակտի՝ Երևան քա-

ղաքի Մ. Մաշտոցի պողոտա 48-րդ շենք թիվ 78 տարածքի նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքի 08.07.2010 թվականի պետական գրացման, ընդունման մասին, քանի դեռ հակառակն ապացուցված չէ: Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակից 11.09.2014 թվականին ներկայացված դիմումին ի պատասխան դիմողները Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտայի 48-րդ շենքի թիվ 78 տարածք հասցեի անշարժ գույքի կադաստրային գործի պատճենները ստացել են 2014 թվականի սեպտեմբերի 16-ին, Վերաքննիչ դատարանը գտել է, որ դիմողների կողմից վիճարկվող նորմատիվ իրավական ակտը վիճարկելու նպատակով վարչական դատարան դիմում ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չորսամսյա դատավարական ժամկետը բաց չի թողնվել:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, սույն գործի փաստական հանգամանքները համադրելով վերոգրյալ իրավական վերլուծությունների հետ, գտնում է, որ ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետը դիմողների նկատմամբ չկիրառված նորմատիվ իրավական ակտ է, քանի որ նշված որոշմամբ սահմանվել է Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցվող անհրաժեշտ գույքի ցանկը, իսկ որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետը վերաբերվում է ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 731-Ն որոշմամբ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի նկատմամբ պետության իրավունքները Երևան քաղաքին փոխանցելուն, ընդ որում, հստակ հասցեներով չեն սահմանվել, թե որ հողամասներն են փոխանցվել Երևան քաղաքին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում նաև բողոք բերած անձի այն փաստարկները, որ վիճարկվող որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետը Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտա 48-րդ շենքի հասցեում գտնվող թիվ 78 տարածքի մասով չի պարունակում որևէ դրույթ, որի անվավերությանը կվերականգնվեր դիմողների իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորների կողմից ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշումը վիճարկելու համար նախատեսված չորսամսյա ժամկետը պետք է հաշվարկվի նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում հայցվորների կողմից վիճարկվող նորմատիվ իրավական ակտը մտել է ուժի մեջ 08.06.2009 թվականին, հետևաբար դրա վիճարկման համար վերջնաժամկետ է հանդիսացել 08.10.2009 թվականը:

Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի եզրահանգումը սույն գործով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման վերաբերյալ և ըստ այդմ, սույն գործով դատարան դիմելու ժամկետի հաշվարկի սկիզբն այն օրվա հաջորդ օրը դիտարկելը, երբ հայցվորներն (դիմողները) իմացել են Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտայի 48-րդ շենքի թիվ 78 տարածքի նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքի 08.07.2010 թվականի պետական գրանցման մասին, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետները կիրառելի են այն դեպքերի համար, երբ վիճարկվող նորմատիվ իրավական ակտն անձի նկատմամբ կիրառվել է անհատական իրավական ակտի կամ նորմատիվ իրավական ակտի կիրառումը (կատարումը) ապահոված գործողության կամ անգործության միջոցով, սակայն վերջինս անհատական իրավական ակտի կամ գործողության կամ անգործության մասին չի իմացել: Մինչդեռ տվյալ դեպքում, ինչպես արդեն նշվեց վերը, ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշումը դիմողների նկատմամբ չկիրառված նորմատիվ իրավական ակտ է:

ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշումը դիմողների նկատմամբ չկիրառված նորմատիվ իրավական ակտ լինելու պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բաց թողնված դատավարական ժամկետները վերականգնելու համար վերջիններս պետք է ապացուցեին, որ օրենքով սահմանված՝ վիճարկվող որոշումն ուժի մեջ մտնելուց հետո չորսամսյա ժամկետի ընթացքում ձեռնարկել են իրենից

կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու համար, սակայն իրենց կամքից անկախ պատճառներով բաց են թողել օրենքով նախատեսված դատավարական ժամկետները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև Դատարանը սխալ է պատճառաբանել բաց թողնված դատավարական ժամկետը մերժելու վերաբերյալ իր որոշումը՝ ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման վերաբերյալ հայցվորների իրազեկման հնարավորությունը պայմանավորելով Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտայի 48-րդ շենքի թիվ 78 տարածքն օգտագործման տրամադրելու և օտարելու վերաբերյալ աճուրդի մասին հայտարարությունը «Ազգ» օրաթերթում հրապարակվելու պահով, այն դեպքում, երբ հայտարարությունը նախ տեղեկություն չի պարունակում նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ ընդունված անհատական իրավական ակտի մասին, ավելին՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ հայցվորների կողմից ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշումը վիճարկելու համար նախատեսված չորսամսյա ժամկետը պետք է հաշվարկվի նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո, այդուհանդերձ ճիշտ եզրահանգման է ելել գործի դատավարական ելքի վերաբերյալ՝ նկատի ունենալով նաև այն, որ հայցվորները բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունում չեն ներկայացրել բավարար փաստարկներ և հիմնավորումներ՝ ՀՀ կառավարության նշված որոշումը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար օրենքով սահմանված ժամկետը (քննարկվող նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո չորս ամիս) հարգելի պատճառներով բաց թողնելու վերաբերյալ: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա չեն եղել բավարար հիմքեր Դատարանի 19.11.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու և հայցադիմումի ընդունումը՝ ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետը՝ Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտա 48-րդ շենքի հասցեում գտնվող թիվ 78 տարածքի մասով, անվավեր ճանաչելու պահանջով, մերժելու մասով վերացնելու համար, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

*Վճռաբեկ բողոքի պարտահանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պարզաբանություններով:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.01.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելու մասին» որոշման՝ ՀՀ վարչական դատարանի 19.11.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը մասնակիորեն՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու և հայցադիմումի (դիմումի) ընդունումը՝ ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետը՝ Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտայի 48-րդ հասցեում գտնվող թիվ 78 տարածքի մասով,

անվավեր ճանաչելու պահանջով, մերժելու մասով վերացնելու մասը և կայացնել նոր դատական ակտ՝ ՀՀ վարչական դատարանի 19.11.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու և հայցադիմումի (դիմումի) ընդունումը՝ ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետը՝ Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտայի 48-րդ շենք հասցեում գտնվող թիվ 78 տարածքի մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասով մերժելու մասով թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/3043/05/14  
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան  
Դատավորներ՝ Զ. Մկոյան  
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/3043/05/14**  
**2017թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԻԿՎԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի հունվարի 27-ին,

քննարկելով ըստ հայցի Զարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բաբկեն Տեր-Գրիգորյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ ոստիկանների գործողությունները, այդ թվում՝ կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, միավորումներ կազմելու (խաղաղ հավաքների ազատության), ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության, ձերբակալման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու, նվաստացնող կամ անմարդկային վերաբերմունքից, խտրական վերաբերմունքից զերծ մնալու իրավունքներին միջամտող գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.06.2016 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Զարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բաբկեն Տեր-Գրիգորյանի ներկայացուցիչ Տիգրան Եգորյանի բողոքը,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Զարուհի Հովհաննիսյանը, Արթուր Պետրոսյանը, Օյա Ազատյանը և Բաբկեն Տեր-Գրիգորյանը պահանջել են ոչ իրավաչափ ճանաչել ոստիկանների գործողությունները, այդ թվում՝ կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, միավորումներ կազմելու (խաղաղ հավաքների ազատության), ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության, ձերբակալման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու, նվաստացնող կամ անմարդկային վերաբերմունքից, խտրա-

կան վերաբերմունքից զերծ մնալու իրավունքներին միջամտող գործողությունները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 18.06.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.08.2015 թվականի որոշմամբ Ջարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բաբկեն Տեր-Գրիգորյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Վերաքննիչ դատարանի 07.06.2016 թվականի որոշմամբ Ջարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բաբկեն Տեր-Գրիգորյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ջարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բաբկեն Տեր-Գրիգորյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը և ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը 24.08.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումն ուղարկել է միայն Ջարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բաբկեն Տեր-Գրիգորյանի ներկայացուցչի Տիգրան Եգորյանին: Վերջինս, սակայն, չի ստացել այդ դատական ակտը, մինչդեռ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր Ջարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բաբկեն Տեր-Գրիգորյանի արդար դատաքննության իրավունքն ապահովելու համար նշված որոշումն ի սկզբանե ուղարկել վերջիններին:

Բացի այդ, Ջարուհի Հովհաննիսյանը և Օյա Ազատյանը Վերաքննիչ դատարանի 24.08.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումն ստացել են համապատասխանաբար 07.05.2016 թվականին և 17.05.2016 թվականին, իսկ Բաբկեն Տեր-Գրիգորյանը և Արթուր Պետրոսյանը չեն ստացել այդ որոշումը: Ջարուհի Հովհաննիսյանի և Օյա Ազատյանի կողմից վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու տասնհինգօրյա ժամկետի պահպանմամբ 27.05.2016 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք, որի ընդունումը չէր կարող մերժվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 07.06.2016 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

### **3. Վճռաբեկ դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաքանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. իրավաչափ է արդյոք վերաքննիչ բողոքը վերադարձնելու դեպքում այն կրկին ներկայացնելու համար սահմանված դատա-*

*վարական ժամկետը հաշվարկել ոչ թե բողոք բերած անձանց, այլ նրանց ներկայացուցչի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն սրանալու պահից այն պատագայում, երբ առկա չէ միայն ներկայացուցչին ծանուցելու վերաբերյալ միջնորդություն:*

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման բովանդակությամբ իրավադրույթներ են սահմանված նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում և 63-րդ հոդվածի 1-ին մասում:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...) ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում ընդունելու դեպքում բողոք բերող անձին ուղարկվում են վերաքննիչ դատարանի որոշումը և բողոքին կից ներկայացված փաստաթղթերը (...):

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում առկա սխալները վերացնելու և բողոքը վերադարձնելու մասին որոշումն ստանալուց հետո՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված բողոքով տասնհինգօրյա ժամկետում (...) կրկին բերելու դեպքում բողոքը համարվում է վերաքննիչ դատարանում ընդունված սկզբնական ներկայացման օրը (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե նույն օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում անձը չի վերացրել բողոքում առկա սխալները, որոնց չվերացնելն արգելք է բողոքի քննության համար, կամ բողոքը բերել է նույն օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև նույն օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն դատավարության մասնակիցները (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատավարության մասնակիցներն են (...)՝ կողմերը՝ հայցվորը և պատասխանողը, երրորդ անձինք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 149-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանի դատական ակտերը կայացվում կամ հրապարակվում և դատավարության մասնակիցներին են ուղարկվում վարչական դատարանի դատական ակտերի համար նույն օրենսգրքով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնք կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների

գործնականում իրականացմանը (յոևն, նաև «Ֆասթ Սիլլա» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամտային կոմիսիայի թիվ ՎԳ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (յոևն, *որինսկ, Khalifaoui v. France գործով ՄԻԵԴ-ի 14.12.1999 թվականի վճիռը, 35-36-րդ կետեր, Papon v. France գործով ՄԻԵԴ-ի 25.07.2002 թվականի վճիռը, 90-րդ կետ*):

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ անբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (յոևն, *Stubbings and others v. The United Kingdom գործով ՄԻԵԴ-ի 22.10.1996 թվականի վճիռը, կետեր 51, 55*):

Ավելին, ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքում արտահայտել է դիրքորոշում այն մասին, որ եթե ներպետական օրենսդրությամբ հստակ սահմանված է դատական որոշումը ծանուցելու՝ իրավասու մարմինների պարտականությունը, ապա դիմողի գանգատարկման իրավունքը չի կարող մերժվել, եթե ուշացումների պատճառն իշխանությունների պարտականությունների կատարումն է եղել, նույնիսկ եթե տեսականորեն դիմողն ունեցել է դատարանի որոշման մասին այլ աղբյուրներից տեղեկանալու հնարավորություն (յոևն, *Davran v. Turkey գործով ՄԻԵԴ-ի 03.11.2009 թվականի վճիռը, կետեր 31-47*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի վկայակոչված իրավանքների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը հստակ նախատեսել է այն դատավարական ժամկետը, որի ընթացքում վերաքննիչ բողոք բերած անձը կարող է վերացնել վերաքննիչ բողոքը վերադարձնելու որոշման մեջ նշված թերությունները և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնել վերաքննիչ դատարան: այդ ժամկետը գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի դեպքում տասնհինգ օր է, որը հաշվարկվում է վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոք բերած անձի կողմից ստանալու պահից: Մյուս կողմից օրենսդիրը սահմանել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոք բերած անձին ուղարկելու վերաքննիչ դատարանի պարտականությունը: Ընդ որում, վերը նշված դատավարական ժամկետի խախտման իրավաբանական հետևանքը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հանգում է գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետի խախտմամբ բերված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելուն:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը (...):

Հիմք ընդունելով իրավական ակտում որևէ բառի՝ եզակի կամ հոգնակի թվով կիրառության վերաբերյալ օրենսդրական տեխնիկայի վերոգրյալ կանոնի բովանդակու-

թյունը՝ Վճաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասում նշված «*բողոք բերող անձին*» արտահայտությունը պետք է հավասարապես կիրառելի լինի նաև հոգնակի թվով, եթե վերաքննիչ բողոքը բերվել է մեկից ավելի անձանց կողմից: Այսինքն՝ Վճաբեկ դատարանի գնահատմամբ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոք բերած անձին ուղարկելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված վերաքննիչ դատարանի պարտականության ուժով վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը, որպես ընդհանուր կանոն, պետք է ուղարկվի բողոք բերած բոլոր անձանց:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 14-րդ, 130-րդ, 149-րդ հոդվածների վերլուծության արդյունքում Վճաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոք բերած անձին ուղարկելու ՀՀ վերաքննիչ դատարանի պարտականությունը ենթադրում է, որ այդ որոշումը պետք է ուղարկվի դատավարության մասնակիցներին, քանի որ վերջիններս են օրենսդրորեն օժտված ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունքով, իսկ դատավարության մասնակիցներն են կողմերը՝ հայցվորը, պատասխանողը, և երրորդ անձինք: Հետևաբար, որպես ընդհանուր կանոն, վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է ուղարկվի դատավարության մասնակիցներին:

ՀՀ վճաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ օրենսդիրը դատական ակտը գործին մասնակցող անձի փոխարեն այլ անձի, այդ թվում՝ վերջինիս ներկայացուցչին ուղարկելու հանգամանքը չի նախատեսել որպես դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության այլընտրանք: Հետևաբար ՀՀ վճաբեկ դատարանի գնահատմամբ դատական ակտը գործին մասնակցող անձի ներկայացուցչին ուղարկելը դատարանի հայեցողությունն է, սակայն այն չի կարող դիտարկվել որպես դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության պատշաճ կատարում, եթե գործին մասնակցող անձը նման միջնորդությամբ չի դիմել դատարան (յրես, ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական կենտրոնին ընդդեմ Գայանե Սողոմոնյանի թիվ ՎԴ/8923/05/11 վարչական գործով ՀՀ վճաբեկ դատարանի 14.01.2015 թվականի որոշումը):

Սույն գործով Դատարանի 18.06.2015 թվականի վճռի դեմ առաջին անգամ վերաքննիչ բողոք է բերվել Զարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բարկեն Տեր-Գրիգորյանի ներկայացուցիչ Տիգրան Եգորյանի անունից. բողոքում առկա են Զարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բարկեն Տեր-Գրիգորյանի հասցեները, և ներկայացված չէ որևէ միջնորդություն՝ բողոք բերած անձանց ծանուցելու այլ կարգի վերաբերյալ (**հատոր 2-րդ, գ.թ. 3-13**): Վերաքննիչ դատարանը 24.08.2015 թվականի որոշմամբ վերադարձրել է նշված վերաքննիչ բողոքը՝ ստորագրված չլինելու և բողոքի օրինակը վարչական դատարան ու դատավարության մյուս մասնակցին ուղարկված չլինելու պատճառաբանությամբ (**հատոր 2-րդ, գ.թ. 16-18**):

Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 24.08.2015 թվականի որոշումն ի սկզբանե չի ուղարկվել վերաքննիչ բողոք բերած անձանց, այլ ուղարկվել է միայն վերջիններիս ներկայացուցիչ Տիգրան Եգորյանին (**հատոր 2-րդ, գ.թ. 19-21**):

Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 24.08.2015 թվականի որոշումը Բարկեն Տեր-Գրիգորյանին և Արթուր Պետրոսյանին է ուղարկվել 01.04.2016 թվականին (**հատոր 2-րդ, գ.թ. 30-34, 36**), Զարուհի Հովհաննիսյանին՝ 04.05.2016 թվականին (**հատոր 2-րդ, գ.թ. 45**), իսկ Օյա Ազատյանին՝ 13.05.2016 թվականին (**հատոր 2-րդ, գ.թ. 47**)՝ ի պատասխան վերաքննիչ բողոքի առնչությամբ կայացված որոշման մատչելիությունն ապահովելու խնդրանքի վերաբերյալ վերջիններիս դիմումների (**հատոր 2-րդ, գ.թ. 29, 40, 48**):

Զարուհի Հովհաննիսյանը Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 24.08.2015 թվականի որոշումն ստացել է 07.05.2016 թվականին (**հատոր 2-րդ, գ.թ. 46**): Օյա Ազատյանը Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 24.08.2015 թվականի որոշումն ստացել է 07.05.2016 թվականին (**հատոր 2-րդ, գ.թ. 46**):

րձնելու մասին» 24.08.2015 թվականի որոշումն ստացել է 18.05.2016 թվականին **(հատոր 2-րդ, գ.թ. 51)**:

Սույն գործում առկա չեն Բաբկեն Տեր-Գրիգորյանի և Արթուր Պետրոսյանի կողմից Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 24.08.2015 թվականի որոշումը ստանալու վերաբերյալ ապացույցներ: Զարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բաբկեն Տեր-Գրիգորյանի ներկայացուցչի կողմից Վերաքննիչ բողոքը կրկին ներկայացվել է (փոստային ծառայությանն է հանձնվել) 27.05.2016 թվականին **(հատոր 3-րդ, գ.թ. 15)**:

Վերաքննիչ դատարանի 07.06.2016 թվականի որոշմամբ Զարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բաբկեն Տեր-Գրիգորյանի ներկայացուցչի կողմից կրկին ներկայացված Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վերջինս Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 24.08.2015 թվականի որոշումն ստացել է 28.08.2015 թվականին, իսկ կրկին ներկայացված բողոքը բերվել է (փոստային ծառայությանն է հանձնվել) 27.05.2016 թվականին՝ սահմանված տասնհինգօրյա ժամկետի խախտմամբ: Հետևաբար բողոքաբերի կողմից բաց է թողնվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված բողոքը կրկին ներկայացնելու դատավարական ժամկետը, որը վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմք է **(հատոր 3-րդ, գ.թ. 18-20)**:

Մինչդեռ վերոգրյալ իրավական դիրքորոշումների և փաստական հանգամանքների համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ կերպով չի կատարել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոք բերած բոլոր անձանց ուղարկելու իր պարտականությունը: Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմի նշված խախտման հետևանքով բողոք բերած անձինք ժամանակին չեն ստացել «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 24.08.2015 թվականի որոշումը և հնարավորություն չեն ունեցել վերացնելու այդ որոշմամբ նշված թերություններն ու կրկին ներկայացնել վերաքննիչ բողոք: Այսպիսով, բողոք բերած անձանց ծանուցելու այլ կարգի վերաբերյալ միջնորդության բացակայության պայմաններում դատական ակտը Զարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բաբկեն Տեր-Գրիգորյանի ներկայացուցչին ուղարկելը չի կարող դիտարկվել որպես դատական ակտը վերջիններիս ուղարկելու Վերաքննիչ դատարանի պարտականության պատշաճ կատարում: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում վերաքննիչ բողոքում առկա թերությունները վերացնելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված տասնհինգօրյա ժամկետը չի կարող հաշվարկվել Զարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բաբկեն Տեր-Գրիգորյանի ներկայացուցչի կողմից Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 24.08.2015 թվականի որոշումն ստանալու օրվանից:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տվյալ դեպքում Զարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բաբկեն Տեր-Գրիգորյանի ներկայացուցչիչը, կրկին բերված վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանը հանձնելով 27.05.2016 թվականին, պահպանել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված տասնհինգօրյա ժամկետը (հաշվի առնելով նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնակարգումները): Նման պայմաններում սույն գործով Զարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բաբկեն Տեր-Գրիգորյանի ներկայացուցչի կողմից վերաքննիչ բողոքը կրկին ներկայացվելու ժամկետը խախտված լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն անհիմն է:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Զարուհի Հովհաննիսյանի, Արթուր Պետրոսյանի, Օյա Ազատյանի և Բաբկեն Տեր-Գրիգորյանի

ներկայացուցչի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը ենթակա չէր մերժման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, քանի որ այդ վերաքննիչ բողոքը չի բերվել նույն օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.06.2016 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
վարչական գործ թիվ ՎԴ/0528/05/16  
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

վարչական գործ թիվ **ՎԴ/0528/05/16**  
**2017թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ն.ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 25-ին  
քննարկելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.04.2016 թվականի  
«վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ էրիկ վարդանյանի ներկայացուցիչ  
Դավիթ Ասատրյանի բերած վճռաբեկ բողոքը,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը.**

Դիմելով դատարան՝ էրիկ վարդանյանը պահանջել է պարտավորեցնել ՀՀ ոստի-  
կանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը (այսուհետ՝ Ոստիկա-  
նություն) տրամադրել օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու  
հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու հիմքով հայցվորի վնասը փոխ-  
հատուցելու վերաբերյալ որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 08.02.2016 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 08.04.2016 թվականի որոշմամբ էրիկ վարդանյանի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքը մե-  
րժվել է, և Դատարանի 08.02.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մա-  
սին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել էրիկ վարդանյանի ներկայացուցիչը:  
վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմ-  
նավորումներով.

*վերաքննիչ դատարանը խախտել է 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադ-  
րության 61-րդ, 62-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատու-*



*թյունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը: Բողոքներածանձընշվածպնդումըպարձառաքանելէհետևյալփաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ էրիկ Վարդանյանի իրավունքների նկատմամբ առկա է վարչարարության հետևանքով առաջացած միջամտություն, և սույն գործով դիմելով դատարան՝ էրիկ Վարդանյանը հայցում է ստանալ վարչական մարմնի կողմից իր իրավունքների միջամտության վերացմանն ուղղված ծախսը՝ որպես վարչարարությամբ պատճառված վնաս: Հետևաբար սույն գործով էրիկ Վարդանյանի հայցապահանջը բխում է հանրային իրավահարաբերություններից ծագող վեճից: Մինչդեռ Դատարանը, մերժելով ներկայացված հայցադիմումի ընդունումը, խախտել է էրիկ Վարդանյանի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա պնդելով, որ բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար՝ բողոք բերած անձը պահանջել է «կայացնել նոր դատական ակտ հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ»:

**3. Վճռաբեկ դատարանի պարձառաքանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթ տրամադրելու վերաբերյալ հայցապահանջի առարկայական ընդդատության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին, թե վարչարարությամբ պարձառված վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթ տրամադրելու վերաբերյալ հայցապահանջն ընդդատյա է արդյո՞ք վարչական դատարանին, թե՛ ոչ:*

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանին են ենթակա բոլոր գործերը, բացառությամբ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված գործերի:

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանն ըստ էության քննում է վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընդդատությունը՝ որպես դատավարական ինստիտուտ, դատավարական նորմերի այնպիսի համակցություն է, որոնք կարգավորում են դատարանի քննությանը ենթակա բոլոր գործերի բաշխումը ՀՀ դատական իշխանության առաջին ատյանի կոնկրետ դատարանների միջև:

ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009 թվականի թիվ ՍԴԴ-787 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը:

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներով օրենսդիրը կանխորոշել է ընդհանուր իրավասության դատարանի ընդդատության շրջանակը, որն ընդգրկում է բոլոր գործերը՝ բացառությամբ վարչական դատարանի քննությանը վերապահված գործերի: Իսկ ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներով օրենսդիրը սահմանել է ՀՀ վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որը կազմված է հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերից: Փաստորեն, դատական գործերի տարանջատումը քաղաքացիականի և վարչականի պայմանավորված է այդ գործերով վիճելի իրավահարաբերության բնույթով. կոնկրետ գործի՝ առարկայական ընդդատության հարցը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել այդ գործով վիճելի իրավահարաբերության բնույթը, այսինքն՝ այն հարցը, թե արդյոք տվյալ գործը ծագում է հանրային, թե մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճից:

Այսպիսով, իրավունքների պաշտպանության հայցի կամ դիմումի հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության հարցը որոշվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի (հանրային կամ մասնավոր) իրավահարաբերություններից ծագող վեճից է բխում այդ գործերի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջը (իսկ մի քանի փոխկապակցված հայցապահանջների առկայության դեպքում՝ դրանցից հիմնականը):

ՀՀ վճռաբեկ դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարբերակման և դրա հիման վրա դատական գործերի ընդդատության տարանջատման հարցին: Այսպես, ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի բնորոշման՝ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատա-

րանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյոք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

2. արդյոք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

3. արդյոք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը (յուև, «Վեսար» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/0823/05/14, թիվ ՎԴ/0830/05/14 և թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումները):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել նաև օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը:

Օրենսդիրը, վերոգրյալ իրավանորմում ամրագրելով, որ վարչական դատարանում գործի հարուցման հիմքը հայցն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված գործողության կատարման հայցը, որով հայցվորը կարող է վարչական մարմնին ներկայացնել հետևյալ երկու տեսակի հայցապահանջներից որևէ մեկը.

- կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը,

- օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ն մասի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ «ա» անձի դիմումը, բողոքը (...): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը համարվում է հարուցված՝ համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ

հողվածի 1-ն մասի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի համաձայն՝ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում «ա» վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման նույն օրենքի 7-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասի հատուցման պահանջը ներկայացվում է դիմումի միջոցով, որի նկատմամբ կիրառվում են նույն օրենքի 31-րդ հոդվածի կանոնները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնաս կրած անձը վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է դա բողոքարկել՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու հետ կապված ընդհանուր իրավակարգավորումներն օրենսդիրը սահմանել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով, որը նախատեսում է վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտի՝ օրենքի ուժով ընդունված համարվելու իրավական հնարավորություն: Այսինքն՝ վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտը նշված իրավադրույթի ուժով որոշ դեպքերում կարող է համարվել ընդունված և առաջացնել այդ վարչական ակտին բնորոշ բոլոր իրավաբանական հետևանքները: Տվյալ դեպքում դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական ակտի ընդունման օրենքով սահմանված ժամկետը խախտվելու և օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում գործում է այն ֆիկցիան, որ պահանջվող բարենպաստ վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է օգտվել դիմում ներկայացնելիս իր ակնկալած իրավունքից, որը տրամադրման էր ենթակա ընդունվելիք վարչական ակտով: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկվող իրավական կառուցակարգը բխում է յուրաքանչյուրի՝ վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի՝ որպես 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի բաղադրատարրերից մեկի պաշտպանության անհրաժեշտությունից:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ նշված իրավական կառուցակարգի շրջանակներում վարչական ակտի ընդունված համարվելու դեպքերում այդ վարչական ակտից բխող իրավունքները դրա հասցեատիրոջ կողմից կարող են արդյունավետ կերպով իրացվել, եթե տվյալ անձին տրամադրվի հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունված լինելը հավաստող համապատասխան փաստաթուղթ: Նշված փաստաթուղթը, ըստ էության, հաստատում է իրավական համակարգում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ուժով ընդունված վարչական ակտի ձևական-իրավաբանական գոյությունը և սպառիչ տեղեկություններ

է պարունակում այն կոնկրետ իրավունքի մասին, որը համարվում է անձին տրամադրված տվյալ վարչական ակտով: Այդ իսկ պատճառով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողության կատարման հայցատեսակը նպատակաուղղված է նկարագրված իրավական կառուցակարգի շրջանակներում վարչական ակտի ընդունված համարվելու դեպքերում գործնականում պաշտպանել շահագրգիռ անձի (որպես կանոն՝ վարչական ակտի հասցեատիրոջ) իրավունքները և ապահովել այդ վարչական ակտից բխող իրավունքների երաշխավորված իրացումը: Այդ հայցատեսակի բավարարման արդյունքում շահագրգիռ անձին վերոգրյալ բովանդակությամբ փաստաթուղթ տրամադրվելու դեպքում վերջինս կարող է ձեռնամուխ լինել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ուժով ընդունված համարվող վարչական ակտից բխող համապատասխան իրավունքի գործնական իրականացմանը, ինչպես նաև ազատվել այն պատասխանատվությունից կամ պարտականություններից, որոնք նախատեսված են այդ փաստաթուղթը չունենալու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը մարդու հիմնարար իրավունքների շարքում ամրագրում է նաև վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքը՝ այդ վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանելու իրավասությունը վերապահելով օրենսդրին: Վերջինս վարչարարությամբ հասցված վնասի հատուցման կապակցությամբ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագող հարաբերությունները կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, որի 100-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ վարչարարությամբ հասցված վնասի հատուցման պահանջը դիմումի միջոցով ներկայացվում է այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է այդ վնասը:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անձը պարտավոր է նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադատության կամ դատական կարգով (*տես, Ճորա Սարգսյանն ընդդեմ Երևանի Բանաբեռ-Ջեյթոն թաղապետարանի թիվ ՎԳ/0277/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2009 թվականի որոշումը*):

Ընդ որում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ և 102-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի նկատմամբ կիրառելի են օրենքով վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները, իսկ վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումը վարչական մարմինը քննարկում և լուծում է վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող դիմումների քննարկման համար օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան: Փաստորեն, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումը՝ ուղղված իրավասու վարչական մարմնին (այն վարչական մարմնին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է այդ վնասը), «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով վարչական վարույթ հարուցելու հիմք է:

Վերոգրյալ իրավական վերլուծություններից հետևում է, որ վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտի՝ օրենքի ուժով ընդունված համարվելու իրավաբանական ֆիլիցիան հավասարապես կիրառելի է նաև վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի նկատմամբ: Այսինքն՝ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական մարմնի կողմից չընդունված բարենպաստ վարչական ակտը՝ վնասի

հատուցում տրամադրելու մասին, ևս կարող է համարվել ընդունված, եթե առկա են դրա համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված և սույն որոշմամբ նկարագրված բոլոր պայմանները:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը տրամադրելու վերաբերյալ հայցապահանջը բխում է հանրային իրավահարաբերություններից և ընդդատյա է վարչական դատարանի քննությանը: Այսպես՝

1. վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը տրամադրելու պահանջի վերաբերյալ գործով քննության ենթակա վեճի կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ այն վարչական մարմինը, որի վարչարարության հետևանքով ենթադրաբար պատճառվել է այդ վնասը, և որը ենթադրաբար դրսևորել է ապօրինի անգործություն՝ վնասի հատուցման դիմումի կապակցությամբ օրենքով սահմանված ժամկետում ենթադրաբար չընդունելով որևէ որոշում,

2. վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը տրամադրելու պահանջի վերաբերյալ գործով քննության ենթակա վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ վարչական մարմնի կողմից վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման դիմումի կապակցությամբ օրենքով նախատեսված ժամկետում վարչական ակտ ընդունելու իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը,

3. վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը տրամադրելու պահանջի վերաբերյալ գործով վիճելի իրավահարաբերությունը ծագում է հանրային-իշխանական գործունեության բնագավառում օրենքով սահմանված պատշաճ ընթացակարգերի պահպանման միջոցով մարդու՝ իրեն առնչվող գործերի ողջամիտ ժամկետում քննության և վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հիմնարար իրավունքների պաշտպանությունն ապահովելու հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացման և առարկայացման կապակցությամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, հանգում է այն եզրակացության, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը տրամադրելու վերաբերյալ հայցապահանջներն ընդդատյա են վարչական դատարանին:

### **Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Էրիկ Վարդանյանի գործողության կատարման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է պարտավորեցնել Ոստիկանության օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու հիմքով տրամադրել Էրիկ Վարդանյանին պատճառված վնասը՝ 100.000 ՀՀ դրամի չափով, փոխհատուցելու վերաբերյալ որոշումը: Ընդ որում, ըստ ներկայացված հայցադիմումի՝

վարչարարությամբ ենթադրաբար պատճառված վերը նշված վնասը էրիկ Վարդանյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին Ոստիկանության կողմից ընդունված վարչական ակտը դատական կարգով վիճարկելու վարչական գործի շրջանակներում էրիկ Վարդանյանին մատուցված իրավաբանական ծառայությունների համար վճարված գումարն է, որը տվյալ վարչական գործով կայացված վերջնական դատական ակտով չի ներառվել դատական ծախսերի մեջ և չի լուծվել դրա փոխատուցման հարցը: Իսկ էրիկ Վարդանյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին Ոստիկանության վարչական ակտը ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անվավեր: Էրիկ Վարդանյանը հայցադիմումում նշել է նաև, որ ինքը Ոստիկանության ոչ իրավաչափ վարչարարությամբ առերևույթ պատճառված վնասի հատուցման պահանջով դիմել է այդ վարչական մարմնին, որն իր դիմումի կապակցությամբ օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի ընդունել **(գ.թ. 2-4):**

Դատարանը 08.02.2016 թվականի որոշմամբ մերժել է հայցադիմումի ընդունումը՝ գտնելով, որ Ոստիկանության կողմից իրականացված վարչարարությունը եզրափակվել է վարչական ակտի՝ 10.08.2015 թվականի թիվ 1503448841 որոշման ընդունմամբ, իսկ հետագայում՝ դատական կարգով ակտի վիճարկման փուլում, ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա էրիկ Վարդանյանին պատճառված ենթադրյալ վնասը չի կարող որակվել որպես վարչարարության հետևանքով պատճառված վնաս, քանի որ այն չի ծագել վարչական մարմնի իրականացրած գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում **(գ.թ. 21-24):**

Դատարանի վերը նշված պատճառաբանությունը Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել՝ գտնելով, որ հայցվոր կողմի մատնանշած 100.000 ՀՀ դրամը չի կարող դիտվել որպես վարչական մարմնի կողմից իրականացված վարչարարության հետևանքով հայցվորին հասցված վնաս, քանի որ այն չի ծագել վարչական մարմնի իրականացրած գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում: Դրա առաջացման հիմքը դատական կարգով՝ արդեն իսկ կայացված ակտի վիճարկման ընթացքում հայցվորի և նրա ներկայացուցչի միջև կնքված ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագիրն է, 08.04.2016 թվականի որոշմամբ մերժել է Դատարանի 08.02.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ էրիկ Վարդանյանի բերած վերաքննիչ բողոքը **(գ.թ. 53-62):**

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը դրանք գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվորն ընդդեմ վարչական մարմնի ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հայց է հարուցել Դատարան՝ խնդրելով պարտավորեցնել Ոստիկանությանը տրամադրել օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու հիմքով հայցվորի վնասը փոխհատուցելու վերաբերյալ որոշումը:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ հայցվորին հասցված վնասը չի ծագել վարչական մարմնի իրականացրած գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում, ուստի հայցը ենթակա չի եղել Դատարանում քննության, որպիսի դիրքորոշման արդյունքում սահմանափակել է Դատարանի մատչելիության իրավունքը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտ չընդունվելու հետևանքով այդ վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը տրամադրելու վերաբերյալ հայցապահանջը բխում է հանրային իրավահարաբերություններից և ընդդատյա է վարչական դատարանի քննությանը: Նման պարագայում Դատարանը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճը պետք է ընդունել վարույթ՝ քննարկման առարկա դարձնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթ»

թի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված վարչական մարմինների անգործության իրավական հետևանքի վրա հասնելու նախադրյալների առկայությունը կամ բացակայությունը:

Այսպիսով, վճարել բողոքում նշված հիմքի առկայությունը վճարել դատարանը դիտում է բավարար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 08.04.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ վճարել դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճարել բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.04.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը, կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 08.02.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/1707/05/15  
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԳ/1707/05/15  
2017թ.

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությանը  
մասնակցությանը դարավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՏՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2017 թվականի մարտի 24-ին,  
քննարկելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.05.2016 թվականի «Վերաքննիչ  
բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Արթուր Ավթանդիլյանի ներկայացուցիչ Տիգրան  
Եգորյանի բերած վճռաբեկ բողոքը,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դարավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Արթուր Ավթանդիլյանը, Հայկ Սահակյանը և Թեհմինե Ենոքյանը պահանջել են ոչ իրավաչափ ճանաչել ոստիկանների միջամտող գործողությունները, այդ թվում՝ Արթուր Ավթանդիլյանի, Հայկ Սահակյանի և Թեհմինե Ենոքյանի՝ կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, միավորումներ կազմելու, ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության, ձեռքակալման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու, նվաստացնող կամ անմարդկային վերաբերմունքից, խտրական վերաբերմունքից զերծ մնալու իրավունքներին միջամտող գործողությունները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Մելքունյան) (այսուհետ՝ Դատարան) 15.05.2015 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին Արթուր Ավթանդիլյանի, Հայկ Սահակյանի և Թեհմինե Ենոքյանի միջնորդությունը մերժվել է, և հայցադիմումը վերադարձվել է:

Դատարանի 25.06.2015 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին Արթուր Ավթանդիլյանի, Հայկ Սահակյանի և Թեհմինե Ենոքյանի միջնորդությունը թողնվել է առանց քննության, և հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.05.2016 թվականի որոշմամբ Արթուր Ավթանդիլյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.06.2015 թվականի «Պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդու-

թյունը առանց քննության թողնելու և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արթուր Ավթանդիլյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասը, 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և 107-րդ հոդվածի 3-րդ մասը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը ելել է սխալ եզրահանգման՝ համարելով, որ Դատարանն իրավաչափորեն է գտել, որ հայցադիմումը հստակ չէ, և կրկին ներկայացված հայցադիմումով նույնպես չի հստակեցվել հայցապահանջը: Ավելին, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին 15.05.2015 թվականի միջնորդությունն ամբողջությամբ չի կրկնել նախկինում ներկայացված միջնորդության հիմնավորումները և սահմանափակելով Արթուր Ավթանդիլյանի դատական պաշտպանության իրավունքը՝ չի ապահովվել ՀՀ Սահմանադրությամբ նախանշված նպատակների և այդ նպատակներին հասնելու միջոցի՝ կիրառված սահմանափակման համաչափության ողջամիտ հարաբերակցությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 02.05.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պարձառարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հայցադիմումում բովանդակվող պահանջի ձևակերպման չափանիշների և դրանց չափապանման դատավարական հետևանքների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. իրավաչափ է արդյոք դատարանի մարչելիության իրավունքի սահմանափակումն այն հիմքով, որ ներկայացված հայցապահանջը հստակ չէ, եթե ներկայացված հայցադիմումի բովանդակության ընդհանրական ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ հայցվորի պահանջը ձևակերպված է բավարար հարակրթությամբ, և պահանջի այդպիսի ձևակերպումը գործի քննության համար արգելք չի հանդիսանում:*

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար

հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման բովանդակությամբ իրավադրույթներ են սահմանված նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում և 63-րդ հոդվածի 1-ին մասում:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները (...) ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (...), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները (...):

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն:

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել (...) կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հայցադիմումը բովանդակում է հայցվորի պահանջը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի և 74-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով սահմանված՝ հայցադիմումին առաջադրվող պահանջները (...):

Նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը, կամ նման միջնորդությունը մերժվել է:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցադիմումում թույլ տրված սխալները վերացնելու և որոշումը ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, վարչական դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե նույն օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում հայցվորը չի վերացրել հայցադիմումի այնպիսի սխալները, որոնց չվերացնելն արգելք է գործի քննության համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դա-

տարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքում ձևավորված իրավական դիրքորոշման համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յուն, Ashingdane v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, 57-րդ կետ*):

Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համաձայն՝ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ձկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*յուն, Dumitru Gheorghe v. Romania գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 65-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ վարչական դատարանը ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի պաշտպանությանը ձեռնամուխ է լինում միայն այն դեպքում, երբ շահագրգիռ անձն օրենքով սահմանված կարգով հայց է ներկայացնում դատարան: Փաստորեն, հայցն անձանց սուբյեկտիվ իրավունքների և շահերի դատական պաշտպանության միջոց է, որի էությունը հանգում է հետևյալին. հայցը մի անձի՝ վիճելի նյութական իրավահարաբերությունից բխող և որոշակի իրավաբանական փաստերի վրա հիմնված նյութաիրավական պահանջն է՝ ուղղված պատասխանողին և միաժամանակ վեճը դատավարության օրենքով սահմանված որոշակի կարգով քննելու և լուծելու պահանջն է՝ ուղղված իրավասու դատարանին:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի ուժով հայցադիմումում պետք է նշվի հայցվորի պահանջը, որը կազմում է հայցի առարկան և որի մերժման կամ բավարարման վերաբերյալ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը (հայցի առարկան) հայցադիմումում պետք է շարադրված լինի այն կերպ, որ դատարանի համար առնվազն հասկանալի լինի, թե ինչ է ակնկալում հայցվորը՝ դատական պաշտպանություն հայցելով: Այլ կերպ ասած՝ հայցադիմումը պետք է բովանդակի հայցի առարկան բավարար հստակությամբ, որպեսզի դատարանը հնարավորություն ունենա ներկայացված նյութաիրավական պահանջի կապակցությամբ իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին բավարարող դատական ակտ կայացնելու:

Ասվածը հատկապես կարևոր նշանակություն ունի վարչական դատավարությունում, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքից հստակ սահմանում է այն հայցատեսակները, որոնց միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են վարչական դատարանից հայցել իրենց խախտված իրավունքների և շահերի դատական պաշտպանություն: Ընդ որում, նշված հայցատեսակները միմյանցից առաջին հեր-

թին տարբերվում են հայցի առարկայով, այսինքն՝ այն նյութաիրավական պահանջի բովանդակությամբ, որը ֆիզիկական և իրավաբանական անձինք ուղղում են այս կամ այն վարչական մարմնին: Այսպես, օրինակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածը, որը սահմանում է ճանաչման հայցատեսակի բովանդակությունը, այդ հայցատեսակի շրջանակներում է ներառում նաև վարչական մարմնի՝ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ հայցը: Հետևաբար ճանաչման հայցի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված տվյալ տարատեսակով դատական գործ հարուցելու համար ներկայացված հայցադիմումը պետք է բավարար հստակությամբ նշում պարունակի վարչական մարմնի այն կոնկրետ գործողության կամ անգործության մասին, որի իրավաչափությունը վիճարկվում է հայցվորի կողմից: Տվյալ դեպքում վիճարկվող գործողությունը կամ անգործությունը ճանաչման հայցի քննարկվող տարատեսակի նյութական հիմքն է. այն տվյալ հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է և դատարանի քննությանը հանձնված վեճի նյութական օբյեկտը, որի հստակ և որոշակի ձևակերպումը հայցադիմումում թույլ է տալիս վարչական դատարանին ըստ էության քննության առնել տվյալ վեճը և վերջնական դատական ակտով լուծել հայցը լրիվ կամ մասնակիորեն մերժելու կամ բավարարելու հարցը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի և 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ հայցադիմումում հայցվորի պահանջը չբովանդակելու իրավաբանական հետևանքն այն է, որ այդ դեպքում վարչական դատարանը վերադարձնում է ներկայացված հայցադիմումը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ օրենսդրական կարգավորումը պետք է մեկնաբանվի հետևյալ կերպ. վարչական դատարանը պարտավոր է վերադարձնել հայցադիմումն ինչպես այն դեպքում, երբ հայցադիմումում հայցվորի պահանջն իսպառ բացակայում է, այնպես էլ այն դեպքում, երբ հայցվորի պահանջը բավարար չափով հստակ կամ որոշակի չէ: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ հայցվորի պահանջը կարող է դիտարկվել որպես բավարար չափով հստակ կամ որոշակի չձևակերպված, մասնավորապես, այն դեպքերում, երբ այն հնարավորություն չի տալիս պարզելու հայցի կոնկրետ նյութական օբյեկտը, կամ հայցվորի կողմից ներկայացվող նյութաիրավական պահանջի բովանդակության կապակցությամբ տարակերպ մեկնաբանությունների տեղիք է տալիս և ողջամտորեն անհասկանալի է դարձնում այն՝ դատարանին հնարավորություն չտալով ըստ էության քննության առնել տվյալ վեճը և վերջնական դատական ակտով լուծել հայցը լրիվ կամ մասնակիորեն մերժելու կամ բավարարելու հարցը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասի և 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իրավադրույթները դիտարկելով քննարկվող հարցի համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, մի կողմից, օրենսդիրը հնարավորություն է ընձեռել հայցվորին հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետում վերացնելու հայցադիմումում պահանջի ձևակերպման հետ կապված սխալը և կրկին ներկայացնելու այն վարչական դատարան, որի դեպքում հայցադիմումը համարվում է վարույթ ընդունված սկզբնական ներկայացման օրը: Մյուս կողմից, եթե նշված ժամկետում հայցվորը չի վերացնում հայցադիմումում պահանջի ձևակերպման հետ կապված սխալը և հայցադիմումը՝ նշված թերությունը շտկված վիճակում, կրկին չի ներկայացնում դատարան, ապա վարչական դատարանը որոշում է կայացնում հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, եթե հայցադիմումի տվյալ սխալը չվերացնելն արգելք է գործի քննության համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Արթուր Ավթառդիլյանի, Հայկ Սահակյանի և Թեհմինե Ենթյանի հայցի հիման վրա, որով վերջիններս պահանջել են ոչ իրավաչափ ճանաչել ոստիկանների միջամտող գործողությունները:

Դատարանը 15.05.2015 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձրել է հետևյալ երկու հիմքերով.

1) մերժվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ հայցվորների միջնորդությունը,

2) հայցադիմումով ներկայացված պահանջը հստակ ձևակերպված չէ:

Դատարանի 25.06.2015 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին Արթուր Ավթանդիլյանի, Հայկ Սահակյանի և Թեհմինե Ենոքյանի միջնորդությունը թողնվել է առանց քննության, և կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժվել է: Ըստ Դատարանի որոշման՝ կրկին ներկայացված հայցադիմումում թույլ տրված սխալները չեն վերացվել, մասնավորապես՝ կրկին ներկայացված հայցադիմումը չի պարունակում հստակ պահանջ, իսկ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունն ըստ էության կրկնում է նախկինում մերժված նույնաբովանդակ միջնորդությունը և պետք է թողնվի առանց քննության:

Վերաքննիչ դատարանը 02.05.2016 թվականի որոշմամբ մերժել է Դատարանի «Պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությունը առանց քննության թողնելու և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» 25.06.2015 թվականի որոշման դեմ Արթուր Ավթանդիլյանի վերաքննիչ բողոքը և նշված որոշումը թողել է անփոփոխ: Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ գտել է, որ Դատարանի 25.06.2015 թվականի որոշումը կայացվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ: Այսպես, ըստ Վերաքննիչ դատարանի՝ «(...) կրկին ներկայացված հայցադիմումի պահանջը ներկայացվել է այն նույն բովանդակությամբ, ինչպիսի բովանդակությամբ ներկայացված պահանջը Դատարանը դեռևս 15.05.2015 թվականի որոշմամբ համարել էր ոչ հստակ ձևակերպված: Այսինքն՝ սահմանված ժամկետում Արթուր Ավթանդիլյանը չի վերացրել հայցադիմումի վերադարձման հիմք հանդիսացած թերությունները, իսկ նման թերությունները չվերացնելն արգելք է ներկայացված հայցադիմումի քննության համար (...):» Իսկ ինչ վերաբերում է պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունն առանց քննության թողնելուն, ապա Վերաքննիչ դատարանը փաստել է, որ «(...) պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը քննարկվել է մերժվել է դեռևս 15.05.2015 թվականի (...) որոշմամբ, իսկ այդ որոշումը (...) չի բողոքարկվել, որպիսի պայմաններում Դատարանն իրավացիորեն նախկինում մերժված միջնորդությունը կրկին անգամ քննության չի առել (...):»:

Մինչև ժամանակ հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումն առ այն, որ անձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով Դատարանի 25.06.2015 թվականի որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել, իսկ այնուհետև Վերաքննիչ դատարանի 02.05.2016 թվականի որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկել է հայցվորներից միայն Արթուր Ավթանդիլյանը՝ Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ անդրադառնում է վիճարկվող դատական ակտին միայն Արթուր Ավթանդիլյանի մասով:

**I.** Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Արթուր Ավթանդիլյանի կողմից ներկայացված հայցապահանջի՝ ոչ հստակ լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով Արթուր Ավթանդիլյանի, Հայկ Սահակյանի և Թեհմինե Ենոքյանի կողմից ներկայացված թե՛ սկզբնական հայցադիմումը (**հատոր 1-ին, գ.թ. 3-12**), թե՛ Դատարանի կողմից այդ հայցադիմումը վերադարձնելուց հետո կրկին ներկայացված հայցադիմումը (**հատոր 1-ին, գ.թ. 53-63**) բովանդակում են հետևյալ հայցապահանջը, որը Դատարանի կողմից գնահատվել է որպես ոչ հստակ ձևակերպված. «ոչ իրավաչափ ձևաչափով ներկայացված միջնորդող գործողությունները, այդ թվում՝ հայցվորներ Արթուր Ավթանդիլյանի, Հայկ Սահակյանի և Թեհմինե Ենոքյանի կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, միավորումներ կազմելու (խաղաղ հավաքների ազատության), ազատ փրկաշարժելու, անձնական ազատության և անձեռնմխելիության, ձերբակալման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու, նվաստացող կամ անմարդկային վերաբերմունքից, խտրական վերաբերմունքից զերծ մնալու իրավունքներին միջամտող»:

Սույն գործով ներկայացված վերոգրյալ հայցապահանջի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Արթուր Ավթանդիլյանը, Հայկ Սահակյանը և Թեհմինե Ենոքյանը վարչական դատարան են դիմել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ճանաչման հայցով՝ հայցելով ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ ոստիկանության գործողությունները, որոնք, հայցվորների կարծիքով, միջամտել են իրենց մի շարք հիմնարար իրավունքների և ազատությունների իրացմանը: Սույն գործով ներկայացված հայցապահանջի ձևակերպման կապակցությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև բուն հայցապահանջի բովանդակությունից հստակ չէ, թե հայցվորները վարչական մարմնի կոնկրետ որ գործողությունների իրավաչափությունն են վիճարկում, սակայն հայցադիմումի բովանդակության ամբողջական ուսումնասիրությունը տալիս է այդ հարցի պատասխանը: Այսպես, ներկայացված հայցադիմումի 2-րդ և 3-րդ էջերում «Փաստերը, որոնց վրա հենվում են սույն հայցի պահանջները» վերտառությամբ 2-րդ կետում, հստակ և մանրամասն նկարագրված են ՀՀ ոստիկանության աշխատակիցների այն գործողությունները, դրանց կատարման օրը և ժամը, որոնք, ըստ հայցվորների, պետք է ճանաչվեն ոչ իրավաչափ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Դատարանի կողմից Արթուր Ավթանդիլյանի, Հայկ Սահակյանի և Թեհմինե Ենոքյանի հայցադիմումը վերադարձնելուց հետո կրկին ներկայացված հայցադիմումում պահանջի ձևակերպման հետ կապված սխալը չշտկելը չէր կարող հիմք հանդիսանալ այդ հայցադիմումի ընդունումը մերժելու համար, քանի որ հայցադիմումի տվյալ սխալը չվերացնելն արգելք չէ գործի քննության համար: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն փաստարկը, որ Արթուր Ավթանդիլյանի, Հայկ Սահակյանի և Թեհմինե Ենոքյանի կողմից կրկին ներկայացված հայցադիմումի բովանդակության ամբողջական ուսումնասիրությունը վկայում է, որ տվյալ դեպքում հայցադիմումը բավարար հստակությամբ բովանդակում է հայցվորների պահանջը. հայցադիմումում հստակ և որոշակի ձևակերպված են վարչական մարմնի այն կոնկրետ գործողությունները, որոնց իրավաչափությունը վիճարկվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ճանաչման հայցով: Այսինքն՝ կրկին ներկայացված հայցադիմումում հայցվորների պահանջի ձևակերպումն ինքնին չի խոչընդոտում վարչական դատարանին ըստ էության քննության առնել տվյալ վեճը և վերջնական դատական ակտով լուծել հայցը լրիվ կամ մասնակիորեն մերժելու կամ բավարարելու հարցը:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հայցադիմումում բովանդակվող պահանջի ձևակերպման վերաբերյալ Դատարանի կողմից բարձրացված խնդիրը կարող էր լուծվել նաև հայցադիմումի ընդունելիության փուլի ավարտից հետո՝ գործը դատաքննության նախապատրաստելիս, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նախնական դատական նիստում իրականացվող գործողություններից մեկը հայցի առարկան և հիմքը պարզելն է:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը եկել է սխալ եզրահանգման՝ համարելով, որ Դատարանն իրավաչափորեն է հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու հիմքում դրել այն, որ հայցադիմումում թույլ տրված սխալները չեն վերացվել, մասնավորապես՝ կրկին ներկայացված հայցադիմումը չի պարունակում հստակ պահանջ: Հետևաբար ոչ հստակ պահանջ ներկայացնելու հիմքով Արթուր Ավթանդիլյանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրավաչափ չէ, քանի որ ստորադաս դատարանները, ցուցաբերելով չափազանց ֆորմալ մոտեցում, խախտել են կիրառվող միջոցի ու հետապնդվող նպատակի միջև ողջամիտ հավասարակշռությունը՝ խաթարելով դատարանի մատչելիության իրավունքի բուն էությունը:

**II.** Անդրադառնալով Դատարանի կողմից պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունն առանց քննության թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով պետական տուրքի հետ կապված խնդիրներին, մասնավորապես, փաստել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին պարբերության «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով ելնելով կողմերի գույքային դրությունից, և այդ արտոնությունները ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը, որն ուղղված է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը (տե՛ս, Արմենասկ և Գոյյա Սահակյաններն ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի թիվ 3-734(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի որոշումը):

Եվրոպական դատարանը, Հայաստանի Հանրապետության դեմ կայացրած իր վճիռներից մեկում անդրադառնալով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի և պետական տուրք վճարելու պարտավորության հարաբերակցությանը, նշել է, որ պետական տուրքը վճարելու պարտավորությունը չի կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիության իրավունքի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին ինքնին չհասպատախասնող սահմանափակում: Այնուամենայնիվ, այդ տուրքերի գումարը գնահատելը որոշակի գործի հատուկ հանգամանքների տեսանկյունից՝ ներառյալ դրանք վճարելու դիմումատուի ունակությունը և դատավարության այն փուլը, որում նման սահմանափակումը կիրառվել է, հանգամանքներ են, որոնք էական են որոշելու համար՝ անձն օժտված է եղել դատարանի մատչելիության իրավունքով, թե՛ ոչ: Համապատասխանաբար, Եվրոպական դատարանն այդ գործով անհրաժեշտ է համարել քննել, թե արդյոք պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին դիմումատու ընկերության դիմումը մերժելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հաշվի է առել դիմումատու ընկերության գործի հատուկ հանգամանքները, թե՛ ոչ, և, առաջին հերթին, վճարելու նրա ունակությունը (տե՛ս, «Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, 48-րդ կետ): Վերոնշյալ իրավական դիրքորոշումներից բխում է, որ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը քննելիս էական նշանակություն ունի անձի վճարելու ունակությունը (գույքային դրությունը) պարզելը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Դատարանը 15.05.2015 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ հայցվորների միջնորդությունը մերժել է՝ վերջիններիս գույքային դրությունը հիմնավորված չլինելու պատճառով: Հայցադիմումը վերադարձնելուց հետո կրկին ներկայացված հայցադիմումին կից բերվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ նույնաբովանդակ միջնորդություն: Մինչդեռ Եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի վկայակոչված դիրքորոշումներից բխում է, որ պետական տուրքի վճարումը հետաձգելու դեպքում առանցքային նշանակություն ունի անձի վճարելու ունակությունը (գույքային դրությունը) պարզելը: Հակառակ դեպքում՝ եթե դատարանից չչափանջվի պարզել անձի գույքային դրությունը պետական տուրքի գծով արտոնություն տրամադրելու համար, ապա դատարանը կցուցաբերի չափազանց ձկուն մոտեցում՝ անիմաստ դարձնելով միայն վճարելու ունակություն չունեցող անձանց պետական տուրքի գծով արտոնություններ տալու օրենսդրական պահանջը:

Անդրադառնալով վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ Դատարանը իրավաչափորեն չի քննարկել պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ Արթուր Ավթանդիլյանի, Հայկ Սահակյանի և Թեհմինե Ենոքյանի ներկայացրած պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ կրկին ներկայացված նույնաբովանդակ միջնորդությունը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Դատաքննությունը վարչական դատարանում» վերտառությամբ 17-րդ գլխի 107-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քննարկման ենթակա չէ այն դիմումը կամ միջնորդությունը, որը միայն կրկնում է նախկինում



մերժված նույնաբովանդակ դիմումի կամ միջնորդության հիմնավորումները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածը վերաբերում է գործի դատաքնության փուլի ընթացքում ներկայացվող միջնորդություններին և չի կարող կիրառվել հայցադիմումի ընդունելիության փուլում ներկայացված միջնորդությունների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ Դատարանը պարտավոր էր քննարկել հայցադիմումի ընդունելիության փուլում ներկայացված և պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին նախկին միջնորդության հետ նույնաբովանդակ միջնորդությունը և որոշում ընդունել այդ միջնորդության մերժման կամ բավարարման մասին: Հետևաբար, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը բերել է միայն Արթուր Ավթանդիյանը, սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ Արթուր Ավթանդիյանի մասով ներկայացված միջնորդությունը քննարկելու համար: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ հիմնավոր է բողոք բերած անձի այն պնդումը, որ տվյալ դեպքում ստորադաս դատարանների կողմից խախտվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասը:

Ելնելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծություններից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով հիմնավորվում է բողոքարկվող դատական ակտի կայացման համար հիմք հանդիսացած հանգամանքների ոչ իրավաչափ լինելը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.05.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը, և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 25.06.2015 թվականի «Պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությունը առանց քննության թողնելու և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը՝ Արթուր Ավթանդիյանի մասով և այդ մասով գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Պետական փողոցի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ հայցվորի պահանջներն առանձին դիտարկելը և դրանցից յուրաքանչյուրի համար առանձին պետական տուրք պահանջելը չեն բխում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի իրավակարգավորումներից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 30.01.2017 թվականի «Պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վիճարկման հայցում իրավունքի ուժով ներառվող պահանջի համար դատական ծախսերի գանձման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական խնդրին. վիճարկման հայցով դատարան դիմելիս կամ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնելիս անհրաժեշտ է արդյո՞ք վճարել պետական փողոց նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջանորդ վարչական ակտի վիճարկման պահանջի համար, եթե այդ պահանջն իրավունքի ուժով ներառված է վիճարկման հայցում:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի, 8-րդ կետի «բ» ենթակետի և 9-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների (...), դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար (...) պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. հայցադիմումների (...) համար՝ ոչ գույքային պահանջով՝ բազային տուրքի քառապատիկի չափով, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝ ոչ գույքային բնույթի պահանջի գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով, դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար՝ ոչ գույքային բնույթի պահանջի գործերով՝ բազային տուրքի 20-պատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ (...) բազային տուրքի չափ է սահմանվում 1.000 դրամը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցադիմումին կցվում են՝ օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակը (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

[վերաքննիչ] բողոքին կցվում են պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթերը (...): Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 134-րդ հոդվածի պահանջները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքին կցվում են նաև օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ գույքողվող վարչական ակտի միջամտող դրույթները): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե մինչև վարչական հայց ներկայացնելը միջամտող վարչական ակտը բողոքարկվել է վարչական կարգով, ապա հայցը ներառում է նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական դատավարության շրջանակներում հայցադիմում ներկայացնելու, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ բերելու համար, որպես կանոն, անհրաժեշտ է վճարել պետական տուրք, որի վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի 9-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը դատարան ներկայացվող հայցադիմումների, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափը որոշելիս ելակետային է համարել հայցապահանջների բնույթը, այսինքն՝ պետական տուրքի դրույքաչափը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք ներկայացված հայցապահանջը գույքային բնույթի է, թե՛ ոչ գույքային: Այսպես, ոչ գույքային բնույթի պահանջների հիման վրա հարուցված գործերով դատարան ներկայացվող հայցադիմումների, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափը սահմանված է կայուն դրամական միավորների տեսքով, որոնք հաշվարկվում են բազային տուրքի (1.000 ՀՀ դրամ) հիման վրա և գանձվում են յուրաքանչյուր ոչ գույքային պահանջի համար առանձին: Օրինակ՝ երկու ոչ գույքային պահանջի հիման վրա հարուցված վարչական գործով դատարանի վճիռը վերաքննության կարգով ամբողջությամբ բողոքարկելու համար, որպես ընդհանուր կանոն, անհրաժեշտ է վճարել 20.000 ՀՀ դրամ, այսինքն՝ յուրաքանչյուր ոչ գույքային պահանջի համար 10.000-ական ՀՀ դրամ պետական տուրք:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի ուժով հայցադիմումում պետք է նշվի հայցվորի պահանջը, որը կազմում է հայցի առարկան և որի մերժման կամ բավարարման վերաբերյալ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում (*տես, Արթուր Ավթանդիլյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության թիվ ՎԳ/1707/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.03.2017 թվականի որոշումը*):

Մինչև նույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վարչական գործի հարուցման հիմք հանդիսացող հայցի առարկան երբեմն կարող է իրավունքի ուժով իր մեջ ներառել այնպիսի հայցապահանջ, որը հայցվորի կողմից չի ներկայացվել դատարան: Այսպես, մեկ այլ որոշմամբ անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի բովանդակությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք, վիճարկման հայցով դիմելով վարչական դատարան, հայցում են իրենց իրավունքներին ու օրինական շահերին միջամտող վարչական ակտի վերա-

ցում: Ընդ որում, եթե նախքան տվյալ վարչական ակտի վիճարկման հայցով վարչական դատարան դիմելն այն բողոքարկվել է նաև վարչական կարգով, ապա ներկայացված հայցն օրենքի ուժով ներառում է նաև այդ վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ (տես, *Ալեքսանդր Կարայուն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Փաստորեն, միջամտող վարչական ակտի բողոքարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջն իրավունքի ուժով ներառվում է սկզբնական վարչական ակտի վիճարկման հայցում՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք միջամտող վարչական ակտի վերացման պահանջով դատարան դիմած հայցվորի կողմից այդ վարչական ակտի բողոքարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ ներկայացված է, թե՛ ոչ: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ միջամտող վարչական ակտը բողոքարկվել է վարչական կարգով և այդ բողոքարկման արդյունքում ևս կայացվել է միջամտող վարչական ակտ, ապա սկզբնական միջամտող վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով դատարանը պարտավոր է սկզբնական վարչական ակտի իրավաչափության հարցի հետ մեկտեղ քննել և լուծել նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի իրավաչափության հարցը:

Վերոգրյալ իրավական կարգավորումը համադրելով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ոչ գույքային բնույթի պահանջներով դատարան դիմելու, ինչպես նաև այդպիսի պահանջներով հարուցված գործերի շրջանակներում կայացված դատական ակտերը վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկելու համար սահմանված պետական տուրքի վճարման կառուցակարգի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճարկման հայցով դատարան դիմելիս կամ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնելիս վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջի՝ որպես ոչ գույքային պահանջի, համար պետական տուրք վճարելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ այդ պահանջն իրավունքի ուժով ներառված է վիճարկման հայցում՝ անկախ հայցվորի կողմից ներկայացված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության 23.02.2016 թվականի թիվ ԱԹ-574780 որոշմամբ Լուսինե Ավագյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123-րդ հոդվածի 4-րդ մասով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 30.000 ՀՀ դրամի չափով (**գ.թ. 51**): Լուսինե Ավագյանը վարչական կարգով բողոքարկել է նշված վարչական ակտը. վարչական բողոքի վերաբերյալ Ծառայությունը 25.03.2016 թվականին ընդունել է թիվ 17-2-5514 որոշումը, որով Լուսինե Ավագյանի դիմումը թողնվել է առանց բավարարման, իսկ Ծառայության 23.02.2016 թվականի թիվ ԱԹ-574780 որոշումը թողնվել է անփոփոխ (**գ.թ. 6-7**): Լուսինե Ավագյանը 25.04.2016 թվականին փոստային կապի ծառայության միջոցով դիմել է վարչական դատարան՝ պահանջելով վերացնել Ծառայության 23.02.2016 թվականի թիվ ԱԹ-574780 որոշումը և 25.03.2016 թվականի «Վարչական իրավախախտման գործով գանգատն առանց բավարարման, իսկ որոշումն անփոփոխ թողնելու մասին» թիվ 17-2-5514 որոշումը (**գ.թ. 2-3, 9**):

Դատարանը 28.11.2016 թվականի վճռով բավարարել է Լուսինե Ավագյանի հայցը՝ Ծառայության 23.02.2016 թվականի թիվ ԱԹ-574780 և 25.03.2016 թվականի «Վարչական իրավախախտման գործով գանգատն առանց բավարարման, իսկ որոշումն անփոփոխ թողնելու մասին» թիվ 17-2-5514 որոշումները ձանաչելով անվավեր (**գ.թ. 34-36**):

Ծառայությունը Դատարանի նշված վճռի դեմ 28.12.2016 թվականին փոստային ծառայության միջոցով ներկայացրել է վերաքննիչ բողոք (ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում ստացվել է 09.01.2017 թվականին): Ծառայությունը վերաքննիչ բողոքին կից չի ներկայացրել վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ և միջնորդել է «տարածամկետել» պետական տուրքի վճարումը՝ պատճառաբանելով, որ գանձապետարանի միջոցով վճարումների փոխանցման հետ

կապված առկա են բարդություններ, և անդորրագիրը ստանալուն պես այն կներկայացվի ՀՀ վարչական վերաքննիչ դատարան (գ.թ. 45-46, 52): Այնուհետև, ծառայությունը 30.01.2017 թվականին փոստային ծառայության միջոցով ներկայացրել է վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարման հավաստող փաստաթուղթ՝ 10.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարման հանձնարարագիր (գ.թ. 54-56):

Վերաքննիչ դատարանը 30.01.2017 թվականի որոշմամբ մերժել է պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ ծառայության միջնորդությունը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով վերադարձրել վերջինիս բերած վերաքննիչ բողոքը: Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ սույն գործը հարուցվել է երկու ոչ գույքային պահանջով, հետևաբար Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար վճարման ենթակա պետական տուրքի գումարը կազմում է 20.000 ՀՀ դրամ: Մինչդեռ ծառայությունը վերաքննիչ բողոք բերելու համար վճարել է ընդամենը 10.000 ՀՀ դրամ պետական տուրք և ներկայացնելով պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն՝ չի հիմնավորել գույքային դրության պատճառով պետական տուրքի վճարման անհնարինության հանգամանքը, ուստի այդ միջնորդությունը ենթակա է մերժման (գ.թ. 57-60):

Համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերի ուսումնասիրությունից հետևում է, որ այն հարուցվել է Լուսինե Ավագյանի վիճարկման հայցի հիման վրա, որը ներառում է ինչպես սկզբնական միջամտող վարչական ակտի՝ ծառայության 23.02.2016 թվականի թիվ ԱԹ-574780 որոշման, այնպես էլ այդ վարչական ակտի բողոքարկման վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի՝ ծառայության 25.03.2016 թվականի «Վարչական իրավախախտման գործով գանգատն առանց բավարարման, իսկ որոշումն անփոփոխ թողնելու մասին» թիվ 17-2-5514 որոշման վիճարկման պահանջները: Ընդ որում, Դատարանի վճռով այդ երկու վարչական ակտերն էլ ձանաչվել են անվավեր, և ծառայությունը վերաքննության կարգով բողոքարկել է Դատարանի վճիռն ամբողջությամբ՝ վճարելով ընդամենը 10.000 ՀՀ դրամ պետական տուրք:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անկախ այն հանգամանքից, որ Լուսինե Ավագյանը ներկայացրել է իր վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի՝ ծառայության 25.03.2016 թվականի «Վարչական իրավախախտման գործով գանգատն առանց բավարարման, իսկ որոշումն անփոփոխ թողնելու մասին» թիվ 17-2-5514 որոշման, վիճարկման պահանջ, Դատարանն ամեն դեպքում պարտավոր էր անդրադառնալ նաև այդ վարչական ակտի իրավաչափության հարցին՝ ծառայության 23.02.2016 թվականի թիվ ԱԹ-574780 որոշման վիճարկման հայցի շրջանակներում, ինչը և տեղի է ունեցել: Հետևաբար սույն գործով վերաքննիչ բողոք ներկայացնելիս Լուսինե Ավագյանի վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման ոչ գույքային պահանջի համար պետական տուրք վճարելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ այդ պահանջն իրավունքի ուժով ներառված է վիճարկման հայցում՝ անկախ հայցվորի կողմից ներկայացված լինելու կամ չլինելու հանգամանքից: Այսինքն՝ տվյալ դեպքում ծառայության կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի չափը կազմում է 10.000 ՀՀ դրամ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Հետևաբար Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ ծառայությունը սույն գործով վերաքննիչ բողոք ներկայացնելու համար պարտավոր էր վճարել 20.000 ՀՀ դրամի չափով պետական տուրք:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից 30.01.2017 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը մերժելուն, ապա Վճռաբեկ դատարանն այդ միջնորդությանն անդրադառնալը համարում է առարկայագուրկ, քանի որ ծառայությունը 30.01.2017 թվականին փոստային ծառայու-

թյան միջոցով ներկայացրել է վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ՝ 10.000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարման հանձնարարագիր:

Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործով Ծառայության կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը ենթակա չէր վերադարձման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով, քանի որ Ծառայությունը պահպանել է նույն օրենսգրքի 134-րդ հոդվածի պահանջները: Հետևաբար Վերաքննիչ դատարանի 30.01.2017 թվականի «Պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը ենթակա է վերացման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 30.01.2017 թվականի «Պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԳ/3804/05/15  
Նախագահող դատավոր՝ Գ. Դարիբյան

Վարչական գործ թիվ ՎԳ/3804/05/15  
2017թ.

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դալավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՑԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2017 թվականի մարտի 14-ին,  
քննարկելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.10.2015 թվականի «Վերաքննիչ  
բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Վարուժան Ավետիքյանի ներկայացուցիչ Վարու-  
ժան Վարդանյանի վճռաբեկ բողոքը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### **1. Գործի դալավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Վարուժան Ավետիքյանը պահանջել է անվավեր ձանաչել (վերացնել) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 17.08.2015 թվականի որոշմամբ հայցադիմումը՝ Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը՝ արգելանք դնելու մասով, անվավեր ձանաչելու (վերացնելու) պահանջի մասով, ընդունվել է վարույթ, իսկ նույն որոշումը՝ կատարողական վարույթ հարուցելու մասով անվավեր ձանաչելու (վերացնելու) պահանջի մասով, հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.10.2015 թվականի որոշմամբ Վարուժան Ավետիքյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.08.2015 թվականի «Հայցադիմումի ընդունումը մասով վարույթ ընդունելու, մասով դրա ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարուժան Ավետիքյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:



**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 10-րդ հոդվածը, 35-րդ հոդվածի 1-ին մասը և 80-րդ հոդվածի 1-ին մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Վարուժան Ավետիսյանը Դատարանից պահանջել էր ամբողջությամբ վերացնել Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը, որն ընդունված է եղել մեկ միասնական վարչական ակտի տեսքով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը՝ կատարողական վարույթ հարուցելու մասով, արտաքին ներգործություն ունեցող անհատական իրավական ակտ է, որն ընդունվել է վարչական մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է վարքագծի կանոն սահմանելուն: Այսինքն՝ Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը՝ կատարողական վարույթ հարուցելու մասով, միջամտող վարչական ակտ է, որի վերացման պահանջը ենթակա է դատարանում քննության:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 02.10.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և փոփոխել այն՝ մասնակիորեն՝ Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը կատարողական վարույթ հարուցելու մասով անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասով հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու մասով, վերացնել Դատարանի 17.08.2015 թվականի «Հայցադիմումի ընդունումը մասով վարույթ ընդունելու, մասով դրա ընդունումը մերժելու մասին» որոշումը:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշման՝ դատական կարգով բողոքարկման իրավական կառուցակարգի վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

1. *անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կարարողական վարույթ հարուցելու մասին որոշման բողոքարկման վերաբերյալ հայցապահանջն ընդդատյա է արդյո՞ք վարչական, թե՛ ընդհանուր իրավասության դատարանին,*

2. *արդյո՞ք անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կարարողական վարույթ հարուցելու մասին որոշումը ՀՀ իրավական համակարգում վարչական ակտ է,*

3. *ի՞նչ կանոններով պետք է քննվի անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կարարողական վարույթ հարուցելու մասին որոշումը վերացնելուն ուղղված հայցապահանջը:*

1. 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման բովանդակությամբ իրավադրույթներ են նախատեսված նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններն են ընդհանուր իրավասության դատարանները, վարչական դատարանը:

ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանն ըստ էության քննում է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...):

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանին են ենթակա բոլոր գործերը, բացառությամբ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված գործերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը (...) առաջարկում է ձշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ձիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ գուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել նույն օրենսգրքի 66-68-րդ հոդվածներին համապատասխան:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները, օրենքով սահմանված կարգով, վարչական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պահանջներն են (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջները նույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հարկադիր կատարման ներկայացնելիս վարչական մարմինը ներկայացնում է դրամական պահանջները հավաստող համապատասխան վարչական ակտը, այդ ակտի մասին նույն օրենքով սահմանված կարգով իրազեկելը կամ այլ օրենքներով սահմանված կարգով հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը, ինչպես նաև ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը հավաստող ապացույցները և կատարման վերաբերյալ գրություն (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ (...) նույն օրենքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխին համապատասխան, սահմանում է նաև հանրային իրավական դրամական պահանջների կատարման պայմանները և կարգը՝ այնքանով, որքանով դրա նորմերն իրենց էությամբ (*mutatis mutandis*) կիրառելի են անբողոքարկելի վարչական ակտի կատարման նկատմամբ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարման ենթակա են անբողոքարկելի վարչական ակտերը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31.1-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջներին չհամապատասխանող, ինչպես նաև ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական

պահանջը երկու հարյուր հազար դրամը գերազանցելու (...) դեպքերում ներկայացված փաստաթղթերը հարկադիր կատարողը վերադարձնում է վարչական մարմին:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողը կայացնում է որոշում: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել հարկադիր կատարման ծառայության մարզային ստորաբաժանման գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան կամ վերադատության կարգով որոշումն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշումները վերացվում կամ փոփոխվում են դատարանի վճռի հիման վրա կամ հարկադիր կատարողի վերադասի կողմից:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընդդատությունը՝ որպես դատավարական ինստիտուտ, դատավարական նորմերի այնպիսի համակցություն է, որոնք կարգավորում են դատարանի քննությանը ենթակա բոլոր գործերի բաշխումը ՀՀ դատական իշխանության առաջին ատյանի կոնկրետ դատարանների միջև:

ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009 թվականի թիվ ՄԳՌ-787 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը:

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներով օրենսդիրը կանխորոշել է ընդհանուր իրավասության դատարանի ընդդատության շրջանակը, որն ընդգրկում է բոլոր գործերը՝ բացառությամբ վարչական դատարանի քննությանը վերապահված գործերի: Իսկ ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներով օրենսդիրը սահմանել է ՀՀ վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որը կազմված է հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերից: Փաստորեն, դատական գործերի տարանջատումը քաղաքացիականի և վարչականի պայմանավորված է այդ գործերով վիճելի իրավահարաբերության բնույթով. կոնկրետ գործի՝ առարկայական ընդդատության հարցը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել այդ գործով վիճելի իրավահարաբերության բնույթը, այսինքն՝ այն հարցը, թե արդյոք տվյալ գործը ծագում է հանրային, թե մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճից:

Այսպիսով, իրավունքների պաշտպանության հայցի կամ դիմումի հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության հարցը որոշվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի (հանրային կամ մասնավոր) իրավահարաբերություններից ծագող վեճից է բխում այդ գործերի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջը (իսկ մի քանի փոխկապակցված հայցապահանջների առկայության դեպքում՝ դրանցից հիմնականը):

ՀՀ վճռաբեկ դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարբերակման և դրա հիման վրա դատական գործերի ընդդատության տարանջատման հարցին: Այսպես, ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի բնորոշման՝ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյալ լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

4. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

5. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

6. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը (տե՛ս, «Վեսար» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/0823/05/14, թիվ ՎԴ/0830/05/14 և թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումները):

ՀՀ վճռաբեկ դատարանն անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշման՝ դատական կարգով բողոքարկման իրավական կառուցակարգին անդրադարձել է թիվ ՎԴ/3540/05/14 վարչական գործով 25.05.2016 թվականին կայացված որոշման շրջանակներում: Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը ենթակա է բողոքարկման դատական կարգով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասում օրենսդրի կողմից սահմանված իրավադրույթի ուժով, որի համաձայն՝ հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել հարկադիր կատարման ծառայության մարզային ստորաբաժանման գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում առաջին ատյանի դատարաններ են համարվում ընդհանուր իրավասության դատարանները և վարչական դատարանը: Հետևաբար, ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել պարզել, թե անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ հայցապահանջները և դրանց հիման վրա հարուցված գործերն առաջին ատյանի կոնկրետ ո՞ր դատարանին են ընդդատյա՝ ընդհանուր իրավասության դատարաններին, թե՛ վարչական դատարանին:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ հայցապահանջները բխում են հանրային իրավահարաբերություններից և ընդդատյա են վարչական դատարանի քննությանը: Այսպես՝

4. անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ գործով քննության ենթակա վեճի կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ հարկադիր կատարողը (Ծառայությունը),

5. անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ գործով քննության ենթակա վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ հարկադիր կատարողի (Ծառայության) կողմից հարկադիր կատարման ենթակա իրավական

ակտերի կատարումն ապահովելու իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը,

6. անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները բողոքարկելու վերաբերյալ գործով վիճելի իրավահարաբերությունը ծագում է հարկադիր կատարման ենթակա հանրային իրավական դրամական պահանջների պարտադիրությունն ու կատարելիությունն ապահովելու հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացման և առարկայացման կապակցությամբ:

Այսպիսով, վկայակոչված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման բողոքարկման վերաբերյալ հայցապահանջներն ընդդատյա են վարչական դատարանին:

2. Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը:

Վերոգրյալից հետևում է, որ վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերի քննության ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ներկայացված հայցապահանջի նյութական օբյեկտը վարչական ակտ է, թե՛ ոչ: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված վիճարկման հայցատեսակով որևէ փաստաթուղթ անվավեր ճանաչելու պահանջի քննությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք այդ փաստաթուղթը ՀՀ իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ, թե՛ ոչ:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում վարչական ակտը սահմանված է որպես արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն ունի հստակորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավա-

բանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար (*լրեն, Ռոբերտյ Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար, գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ:

Օրենսդիրը վարչական ակտերով սահմանված հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով: Քննարկվող օրենքները սահմանում են, որ հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու համար հիմք է հանդիսանում օրենքով սահմանված կարգով կազմված և հարկադիր կատարողին ուղարկված դիմումը (գրությունը), որին կից համապատասխան վարչական մարմինը ներկայացնում է նաև հանրային իրավական դրամական պահանջ պարունակող վարչական ակտը, ինչպես նաև այդ վարչական ակտի մասին հասցեատիրոջը պատշաճ ծանուցելը, տվյալ վարչական ակտի ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը հավաստող ապացույցները: Բացի այդ, այն դեպքում, երբ հանրային իրավական դրամական պահանջով պարտապանը ֆիզիկական անձ է, ապա այդ դրամական պահանջը ենթակա է հարկադիր կատարման, եթե այն չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/3540/05/14 վարչական գործով 25.05.2016 թվականի որոշմամբ արձանագրել է, որ վերը նշված պահանջներին համապատասխանող դիմումը (գրությունը) և դրան կցված փաստաթղթերը հարկադիր կատարողին ներկայացնելու դեպքում վերջինս հարուցում է հանրային իրավական դրամական պահանջի կատարմանն ուղղված վարչական վարույթ՝ կայացնելով համապատասխան որոշում: Հակառակ պարագայում, այսինքն՝ այն դեպքում, երբ հանրային իրավական դրամական պահանջ պարունակող վարչական ակտն ընդունված վարչական մարմնի կողմից հարկադիր կատարողին ուղարկված դիմումը (գրությունը) և դրան կցված փաստաթղթերը չեն համապատասխանում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին, կամ եթե պարտապան ֆիզիկական անձից գանձման ենթակա հանրային իրավական դրամական պահանջը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է ներկայացված փաստաթղթերը վերադարձնել համապատասխան վարչական մարմին:

Նշված որոշմամբ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման իրավական բնույթը համադրելով վարչական ակտին բնորոշ հատկանիշների հետ՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

7) հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված

կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն անհատական իրավական ակտ է,

8) հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ընդունվում է վարչական մարմնի՝ հարկադիր կատարողի (Ծառայության) կողմից,

9) հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

10) հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում,

11) հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առջևվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

12) հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն ուղղակի իրավական հետևանքներ չի առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը չի սահմանում, չի փոփոխում, չի վերացնում կամ չի ձանաչում իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար:

Այսպիսով, անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը՝ որպես անհատական իրավական ակտ, օժտված չէ վարչական ակտին բնորոշ այնպիսի կարևոր առանձնահատկությամբ, ինչպիսին է՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար ուղղակի իրավական հետևանքներ առաջացնելու՝ վերջիններիս համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ձանաչելու հատկանիշը: Հետևաբար վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը ՀՀ իրավական համակարգում չի կարող համարվել վարչական ակտ, քանի որ այն օժտված չէ վարչական ակտին բնորոշ վերը նշված հատկանիշով և իր բնույթով ընդամենը վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի՝ որպես իրավական ընթացակարգի, սկիզբն ազդարարող իրավական ակտ է հանդիսանում:

3. Վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

1) մի կողմից՝ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործն ընդդատյա է վարչական դատարանին և պետք է քննվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կանոններին համապատասխան,

2) մյուս կողմից՝ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը չի հանդիսանում վարչական ակտ, և այդ որոշման վերացման պահանջը չի կարող դառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցի առարկա:



ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված խնդրահարույց իրավիճակի առաջացումը պայմանավորված է կատարողական վարույթի վերաբերյալ հարկադիր կատարողի կայացրած որոշումների, այդ թվում՝ նաև՝ վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման դատական կարգով բողոքարկման իրավական կառուցակարգի թերի և հանրային իշխանության մարմինների իրավական ակտերի, գործողությունների ու անգործության դատական կարգով բողոքարկման հարցում ընդհանուր հայեցակարգային մոտեցումներին հակասող օրենսդրական կարգավորումներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 10.02.2015 թվականի թիվ ՍԳՈ-1190 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովելու տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Համաձայն թիվ ՎԳ/3540/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.05.2016 թվականի որոշման՝ գործող օրենսդրությունը պատշաճ կերպով չի ապահովում հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթի շրջանակներում ընդունվող և վարչական ակտ չհանդիսացող անհատական իրավական ակտերի դեմ անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրացումը: Ուստի անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման դատական կարգով վիճարկման հարցում առկա իրավական խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է որպես ելակետ ընդունել այն հանգամանքը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումների ուժով վերը նշված որոշումը ենթակա է բողոքարկման դատական կարգով: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վերագրյալ իրավագործող նորմի կիրառումը չի կարող խաթարվել դատավարական ընթացակարգերի անկատար կամ թերի լինելու պատճառով: Այլ կերպ ասած, օրենքով ֆիզիկական և իրավաբանական անձանց տրված՝ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների վիճարկման իրավական հնարավորությունը պետք է երաշխավորված իրացվի՝ անկախ վարչադատավարական օրենսդրությամբ այդ որոշումների իրավաչափությունը դատական քննության անմիջական առարկա դարձնելու վերաբերյալ պատշաճ կառուցակարգի բացակայության հանգամանքից:

Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների՝ դատական կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն տվող միակ դատավարական կառուցակարգը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցն է: Նշված հայցատեսակի միջոցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը՝ դրանով իսկ, ըստ էության, դատական քննության առարկա դարձնելով վիճելի կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը:

Ամփոփելով վերագրյալ իրավական վերլուծությունները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները վերացնելուն ուղղված հայցա-

պահանջները վարչական դատարանում ենթակա լինեն քննության ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցի կանոններով: Այսինքն՝ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները վերացնելուն ուղղված հայցապահանջի հիման վրա հարուցված վարչական գործերը պետք է քննվեն այն նույն կարգով, որով քննվում են ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործերը: Նման եզրահանգման համար ՀՀ վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն իրավաբանական իրողությունը, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների վերացման նպատակով անձը չի կարող դատարան դիմել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-68-րդ հոդվածներով նախատեսված հայցատեսակներից որևէ մեկով, քանի որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների վերացման հայցապահանջը չի համապատասխանում ո՛չ վիճարկման, ո՛չ պարտավորեցման, ո՛չ գործողության կատարման հայցատեսակներին:

Վերոգրյալ դատողություններից բխում է, որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումները վերացնելուն ուղղված հայցադիմումը չի կարող չընդունվել վարչական դատարանի վարույթ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նման հայցատեսակ նախատեսված չլինելու պատճառաբանությամբ: Հետևաբար, վարչական դատարանը պարտավոր է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ լուծել նշված հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը:

ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նաև հատուկ ընգծել, որ վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը վերացնելուն ուղղված և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցատեսակին համապատասխան ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու արդյունքում հարուցված վարչական գործի շրջանակներում վարչական դատարանը պետք է ստուգի այդ որոշման իրավաչափությունը, այսինքն՝ դրա համապատասխանությունը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին և քննարկվող անհատական իրավական ակտի՝ օրենքի խախտմամբ ընդունված լինելու դեպքում վճիռ կայացնի անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու մասին:

4. Թիվ ՎԴ/3540/05/14 վարչական գործով կայացված 25.05.2016 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի գործող իրավակարգավորումները սահմանում են անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի շրջանակներում հարկադիր կատարողի ընդունած որոշումների, այդ թվում նաև՝ կատարողական վարույթ հարուցելու մասին որոշման, կամ կատարած գործողությունների դեմ անձի իրավունքների և օրինական շահերի իրավական պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ:

Այսպես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարձում է, եթե՝

(...)

11) անբողոքարկելի վարչական ակտի կատարման ժամանակ պարզվել է, որ անձը կատարել է իր պարտավորությունը մինչև անբողոքարկելի վարչական ակտը հարկադիր կատարման ուղարկելը.

12) անբողոքարկելի վարչական ակտի կատարման ժամանակ պարզվել է, որ բացակայում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական ակտը անբողոքարկելի դառնալու հիմքը.

13) անբողոքարկելի վարչական ակտի կատարման ընթացքում պարզվել է, որ առկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հարկադիր կատարման սահմանափակումները.

14) անբողոքարկելի վարչական ակտի կատարման ընթացքում պարզվել է, որ հանրային իրավական դրամական պահանջի կատարման վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին չեն համապատասխանում (...):

Ընդ որում, վերոգրյալ իրավադրույթներն ընդունվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-252-Ն ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 09.01.2015 թվականին:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերով նախատեսել է անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման նպատակով հարուցված կատարողական վարույթը կարճելու պարտադիր հիմքերը: Այսինքն՝ վերոգրյալ իրավանորմերի ուժով հարկադիր կատարողը պարտավոր է կարճել անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման նպատակով հարուցված կատարողական վարույթը, եթե կատարողական վարույթի ընթացքում պարզվել են հետևյալ հանգամանքները.

1) անձը կատարել է իր պարտավորությունը մինչև անբողոքարկելի վարչական ակտը հարկադիր կատարման ուղարկելը,

2) բացակայում է վարչական ակտն անբողոքարկելի դառնալու օրենքով սահմանված հիմքը,

3) առկա են անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հարկադիր կատարման օրենքով սահմանված սահմանափակումները,

4) հանրային իրավական դրամական պահանջի կատարման վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին:

Այսպիսով, հարկադիր կատարողը, անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված յուրաքանչյուր կատարողական վարույթի ընթացքում պարզելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերում ամրագրված հանգամանքներից որևէ մեկի առկայությունը, պարտավոր է սեփական նախաձեռնությամբ կարճել հարուցված կատարողական վարույթը:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի կարճման վերոգրյալ իրավական հիմքերից որևէ մեկի առկայության պայմաններում հարկադիր կատարողը սեփական նախաձեռնությամբ չի կարճում հարուցված կատարողական վարույթը, ապա հանրային իրավական դրամական պահանջով պարտապան հանդիսացող անձը կարող է օգտվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ կատարողական վարույթի ընթացքում միջնորդություններ անելու իր իրավունքից՝ միջնորդելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերով ամրագրված համապա-

տասխան հիմքով կարձել հարուցված կատարողական վարույթը: Հարկադիր կատարողի կողմից հանրային իրավական դրամական պահանջով պարտապան հանդիսացող անձի նշված միջնորդությունը մերժվելու դեպքում վերջինս կարող է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայցով դիմել վարչական դատարան՝ պահանջելով ընդունել անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթը կարձելու մասին բարենպաստ վարչական ակտ, որի ընդունումը մերժվել է հարկադիր կատարողի կողմից:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ տվյալ պարագայում անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթը կարձելու մասին բարենպաստ վարչական ակտ ընդունելու հայցապահանջի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում կատարողական վարույթը կարձելու օրենքով նախատեսված իրավական հիմքերի առկայության կամ բացակայության և կատարողական վարույթի՝ կարձման ենթակա լինելու կամ չլինելու հանգամանքները կդառնան դատական քննության առարկա: Հետևաբար վարչական դատարանը, քննարկվող վարչական գործերի քննության ընթացքում պարզելով հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի կարձման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերով նախատեսված համապատասխան հիմքի առկայությունը, կարող է վճիռ կայացնել հանրային իրավական դրամական պահանջով պարտապան հանդիսացող անձի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու, այսինքն՝ կատարողական վարույթը կարձելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու և հարկադիր կատարողին այդ վարչական ակտի ընդունմանը, այսինքն՝ կատարողական վարույթը կարձելուն, պարտավորեցնելու մասին:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում կատարված և 09.01.2015 թվականին ուժի մեջ մտած լրացումներով օրենսդիրը նախատեսել է անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի շրջանակներում հարկադիր կատարողի ընդունած որոշումների կամ կատարած գործողությունների արդյունքում անձի իրավունքների և օրինական շահերի իրավական պաշտպանության լրացուցիչ կառուցակարգ, որը կարող է նույնքան արդյունավետ կերպով ապահովել անձի խախտված իրավունքների գործնական վերականգնումը, որքան վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումների անմիջական բողոքարկումը վարչական դատարան (տե՛ս, Հայկ Ալունյանն ընդդեմ Ճառայության թիվ ՎԴ/3540/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.05.2016 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման՝ վարչական դատավարության կարգով անմիջական բողոքարկման միջոցով շահագրգիռ անձն ըստ էության ձգտում է հասնել հարուցված կատարողական վարույթի ընդհատմանը, վերացմանը կամ այդ վարույթով պայմանավորված՝ միջամտող գործողությունների դադարեցմանը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերում ամրագրված հիմքերից որևէ մեկով կատարողական վարույթը կարձելու իրավական կառուցակարգը ևս կարող է կիրառական լինել շահագրգիռ անձի նշված նպատակին հասնելու համար: Մասնավորապես՝ քննարկվող պարագայում շահագրգիռ անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը տեղի է ունենում անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական

բուն վարույթի շրջանակներում, և կատարողական վարույթը կարճելու հարցը լուծվում է վարչական մարմնի կողմից՝ առանց դատական միջամտության: Նշված հանգամանքն էսպես ազդում է շահագրգիռ անձի խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացման վրա, քանի որ տվյալ դեպքում կատարողական վարույթը կարող է վերանալ (կարճվել) սեղմ ժամկետներում, առանց դատական քննության և դատավարական օրենսդրությունից բխող լրացուցիչ գործողություններ կատարելու անհրաժեշտության: Բացի այդ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերում ամրագրված հիմքերից որևէ մեկով կատարողական վարույթը կարճելու իրավական կառուցակարգի պատշաճ իրացման միջոցով շահագրգիռ անձն ի վերջո հասնում է այն նույն իրավական դրությանը (վիճակին), որը կարող էր վրա հասնել վարչական դատարանի կողմից անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու մասին վճիռ կայացնելու արդյունքում:

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշման համաձայն՝ Ծառայության Երևան քաղաքի վարչական ակտերով բռնագանձումների բաժնի հարկադիր կատարող Կարապետ Քեշիշյանը, ուսումնասիրելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ 6172443 գրությունը, որոշել է հարուցել թիվ 01110791 կատարողական վարույթը՝ Վարուժան Ավետիքյանից 4.500 ՀՀ դրամ և 2.250 ՀՀ դրամ՝ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս, բռնագանձելու մասին, ինչպես նաև 6.750 ՀՀ դրամի չափով արգելանք դնել Վարուժան Ավետիքյանի պատկանող գույքի և դրամական միջոցների վրա **(գործի հավելված, գ.թ. 5):**

Սույն գործով դիմելով դատարան՝ Վարուժան Ավետիքյանը պահանջել է վերացնել Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը: Դատարանը Վարուժան Ավետիքյանի հայցադիմումը՝ վիճարկվող որոշումը՝ արգելանք դնելու մասով, վերացնելու պահանջի մասով, ընդունել է վարույթ, իսկ վիճարկվող որոշումը՝ կատարողական վարույթ հարուցելու մասով, վերացնելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժել է: Դատարանը որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը վարչական ակտ չի հանդիսանում, և Վարուժան Ավետիքյանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի շրջանակներում չունի Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը՝ կատարողական վարույթ հարուցելու մասով, վիճարկելու որևէ իրավական հնարավորություն. այդ մասով ներկայացված հայցը ենթակա չէ դատարանում քննության **(գործի հավելված, գ.թ. 12-14):**

Վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը և Դատարանի «Հայցադիմումի ընդունումը մասով վարույթ ընդունելու, մասով դրա ընդունումը մերժելու մասին» որոշումը թողել անփոփոխ՝ ըստ էության վերահաստատելով Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը՝ կատարողական վարույթ հարուցելու մասով, վերացնելու հայցապահանջը դատարանում քննության ենթակա չլինելու վերաբերյալ Դատարանի դիրքորոշումը **(գործի հավելված, գ.թ. 56-63):**

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախևառաջ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ծառայության 26.06.2015 թվա-

կանի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը՝ կատարողական վարույթ հարուցելու մասով, վերացնելու կամ անվավեր ճանաչելու հայցապահանջն ընդդատյա է վարչական դատարանին, քանի որ անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման բողոքարկման վերաբերյալ հայցապահանջը բխում է հանրային իրավահարաբերություններից ծագող վեճից:

Մինչույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը՝ կատարողական վարույթ հարուցելու մասով, ՀՀ իրավական համակարգում չի հանդիսանում վարչական ակտ, քանի որ հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը՝ որպես անհատական իրավական ակտ, օժտված չէ վարչական ակտին բնորոշ այնպիսի կարևոր յուրահատկությամբ, ինչպիսին է ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար ուղղակի իրավական հետևանքներ առաջացնելու՝ վերջիններիս համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու հատկանիշը, և իր բնույթով ընդամենը վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի՝ որպես իրավական ընթացակարգի սկիզբն ազդարարող իրավական ակտ է հանդիսանում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշման կատարողական վարույթ հարուցելու մասը վարչական ակտ չէ, և անձը չի կարող որոշման այդ մասի վերացման պահանջով հայց ներկայացնել ոչ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման, ոչ նույն օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով՝ նախատեսված՝ պարտավորեցման և գործողության կատարման հայցատեսակներին համապատասխան: Հետևաբար նշված անհատական իրավական ակտի վերացմանն ուղղված հայցադիմումը վարույթ ընդունելու և այդ հայցապահանջը քննության առնելու նկատմամբ պետք է կիրառվեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցի կանոնները:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկը՝ դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքն է, որը նպատակաուղղված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննությանն ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: Վարչադատական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ: Քննարկվող իրավական սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքի համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական

դատարանի պարտականությանը: Այսպես, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկալելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքները՝ ճիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ճիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները: Նշված դեպքերում վարչական դատարանի՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում է ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև՝ անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը բոլոր դեպքերում պատկանում է հայցվորին, և եթե ոչ հստակ կամ ոչ ճիշտ հայցատեսակը հստակեցնելու կամ ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարանի մատնանշումից հետո էլ հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է գործի քննությունն իրականացնել հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Այդ պարագայում դատարանի մատնանշման պարտականությունը համարվում է կատարված (*տրևս, նաև Ալեքսանդր Կարայովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով ամրագրված իրավաճեղճության վերլուծությունից հետևում է, որ որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու վարչական դատարանի՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (“*ex officio*”) պարզելու սկզբունքի էությունից բխող պարտականությունը վարչական դատավարությունում կարող է իրականացվել թե՛ գործի հարուցման, թե՛ գործը դատաքննության նախապատրաստելու, թե՛ դատաքննության փուլերի ընթացքում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական դատավարության վերոգրյալ փուլերի ընթացքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտության և բավարար հիմքերի առկայության պարագայում վարչական դատարանը պարտավոր է ձեռնամուխ լինել այդ գործողությունների կատարմանը: Այլ կերպ ասած, եթե գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (“*ex officio*”) պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող այս կամ այն դատավարական գործողությունը գործի քննության սկզբնական (գործի հարուցման կամ հայցադիմումի ընդունելիության) փուլում կատարելու համար առկա են բավարար իրավական և փաստական հիմքեր, ապա վարչական դատարանը պարտավոր է տվյալ դատավարական պարտականությունը կատարել հենց այդ փուլում՝ ելնելով գործի հետագա քննության արդյունավետությունն ապահովելու նկատառումներից:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական դատարանի կողմից ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ հայցվորին առաջարկ անելու պարտականությունը կարող է կատարվել նաև գործի հարուցման փուլում: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ հայցադիմումի ընդունելիության (գործի հարուցման) փուլում նշված դատավարական գործողությունը պետք է կատարվի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման շրջանակներում: Այսպես՝

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի և 74-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով սահմանված՝ հայցադիմումին առաջադրվող պահանջները (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հայցադիմումը բովանդակում է հայցվորի պահանջը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի ուժով հայցադիմումում պետք է նշվի հայցվորի պահանջը, որը կազմում է հայցի առարկան և որի մերժման կամ բավարարման վերաբերյալ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պատասխանողին ուղղված նյութափրավական պահանջը (հայցի առարկան) հայցադիմումում պետք է շարադրված լինի այն կերպ, որ դատարանի համար առնվազն պարզ լինի, թե ինչ է ակնկալում հայցվորը՝ դատական պաշտպանություն հայցելով: Այլ կերպ ասած՝ հայցադիմումը պետք է բովանդակի հայցի առարկան բավարար հստակությամբ, որպեսզի դատարանը հնարավորություն ունենա ներկայացված նյութափրավական պահանջի կապակցությամբ իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին բավարարող դատական ակտ կայացնել: Ասվածը հատկապես կարևոր նշանակություն ունի վարչական դատավարությունում, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը հստակ սահմանում է այն հայցատեսակները, որոնց միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են վարչական դատարանից հայցել իրենց խախտված իրավունքների և շահերի դատական պաշտպանություն: Ընդ որում, նշված հայցատեսակները միմյանցից առաջին հերթին տարբերվում են հայցի առարկայով, այսինքն՝ այն նյութափրավական պահանջի բովանդակությամբ, որը ֆիզիկական և իրավաբանական անձինք ուղղում են այս կամ այն վարչական մարմնին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի և 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ հայցադիմումում հայցվորի պահանջը չբովանդակելու իրավաբանական հետևանքն այն է, որ այդ դեպքում վարչական դատարանը վերադարձնում է ներկայացված հայցադիմումը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ օրենսդրական կարգավորումը պետք է մեկնաբանվի հետևյալ կերպ. վարչական դատարանը պարտավոր է վերադարձնել հայցադիմումն ինչպես այն դեպքում, երբ հայցադիմումում հայցվորի պահանջն իսպառ բացակայում է, այնպես էլ այն դեպքում, երբ հայցվորի պահանջը բավարար չափով հստակ կամ որոշակի չէ: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ հայցվորի պահանջը կարող է դիտարկվել որպես բավարար չափով հստակ կամ որոշակի չձևակերպված, մասնավորապես այն դեպքերում, երբ այն հնարավորություն չի տալիս պարզելու հայցի կոնկրետ նյութական օբյեկտը, կամ հայցվորի կողմից ներկայացվող նյութափրավական պահանջի բովանդակության կապակցությամբ տարակերպ մեկնաբանությունների տեղիք է տալիս և ողջամտորեն անհասկանալի է դարձնում այն՝ դատարանին հնարավորություն չտալով ըստ էության քննության առնել տվյալ վեճը և վերջնական դատական ակտով լուծել հայցը լրիվ կամ մասնակիորեն մերժելու կամ բավարարելու հարցը:

Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ անձը, իր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով դիմում է վարչական դատարան, ապա վերջինիս իրավունքների և շահերի դատական պաշտպանությունը պետք է իրականացվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հիման վրա հարուցված վարչական գործի ըստ էության քննության և լուծման միջոցով: Այսինքն՝ վարչական դատավարությունում հայցվորի պահանջը պետք է համապատասխանի օրենքով սահմանված այն հայցատեսակին բնորոշ հայցի առարկային, որի միջոցով տվյալ վիճելի իրավահարաբերության շրջանակներում հնարավոր է գործնականում հասնել անձի իրավունքների և շահերի դատական պաշտպանության ապահովմանը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ հայցադիմումի ընդունելիության փուլում առկա են բավարար իրավական հիմքեր առ այն, որ հայցվորը դատարան է դիմել ոչ ճիշտ հայցատեսակով, ապա վարչական դատարանը պարտավոր է գործի քննության հենց այդ սկզբնական փուլում կատարել ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ իր դատավարական պարտականությունը:



Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատարան ներկայացված հայցադիմումում հայցվորի պահանջը տվյալ վիճելի իրավահարաբերությունից բխող և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ճիշտ հայցատեսակին չհամապատասխանող կերպով ձևակերպված լինելը հիմք է հանդիսանում տվյալ հայցադիմումը վերադարձնելու համար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի խախտման հիմքով: Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ հայցադիմումի ընդունելիության փուլում ամկա են բավարար հիմքեր հանգելու այն եզրակացության, որ անձի կողմից վարչական դատարան ներկայացված հայցապահանջը ձևակերպված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հայցի առարկային համահունչ, ապա տվյալ հայցադիմումը ենթակա է վերադարձման՝ որպես բավարար չափով հստակ կամ որոշակի չձևակերպված պահանջ պարունակող հայցադիմում:

Այսպես, օրինակ, դատական պրակտիկայում կարող են հանդիպել այնպիսի իրավիճակներ, երբ անձը, դիմելով վարչական դատարան, ցանկանում է հասնել վարչական ակտ չհանդիսացող անհատական իրավական ակտի վերացմանը և իր իրավունքների և շահերի դատական պաշտպանության համար ընտրել է ոչ ճիշտ հայցատեսակ՝ իր պահանջը ձևակերպելով տվյալ պարագայում ոչ կիրառելի՝ վիճարկման հայցատեսակի հայցի առարկային համապատասխան՝ պահանջելով վերացնել ոչ թե վարչական ակտ, այլ վարչական ակտ չհանդիսացող անհատական իրավական ակտ: Նման պայմաններում հայցվորի իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության համար պատշաճ հայցատեսակի ընտրության իրավական հնարավորության ամկայության դեպքում վարչական դատարանը պարտավոր է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման միջոցով մատնանշել հայցվորին այդ իրավական հնարավորությունը և առաջարկել վերջինիս ներկայացնելու տվյալ վիճելի իրավահարաբերությունից բխող և օրենքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հայցի առարկային բնորոշ հայցապահանջ:

Վճռաբեկ դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը վերացնելուն ուղղված հայցապահանջը չի կարող քննվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայցի շրջանակներում, քանի որ հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը վարչական ակտ չէ: Ըստ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների՝ նշված անհատական իրավական ակտի վերացմանն ուղղված հայցադիմումը վարույթ ընդունելու և այդ հայցապահանջը քննության արձնելու նկատմամբ պետք է կիրառվեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ձանաչման հայցի կանոնները: Հետևաբար հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը վերացնելուն ուղղված հայցապահանջը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայցատեսակին համապատասխան ներկայացված լինելը հիմք է հանդիսանում տվյալ հայցադիմումը վերադարձնելու համար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի խախտման հիմքով: Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման համար կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումը վերացնելուն ուղղված հայցապահանջը ձևակերպված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայցի առարկային համահունչ, ապա տվյալ հայցադիմումը ենթակա է վերադարձման՝ որպես բավարար չափով հստակ կամ որոշակի չձևակերպված պահանջ պարունակող հայցադիմում:

Վերոգրյալ իրավական վերլուծությունները կիրառելով սույն գործի փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վարուժան Ավետիսյանը, Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը վերացնելու կամ անվավեր ձանաչելու պահանջով դիմելով դատարան,

նպատակ է ունեցել իրացնել նաև անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշման՝ դատական կարգով բողոքարկման իր իրավունքը և արդյունավետ դատական պաշտպանության միջոցով հասնել այդ անհատական իրավական ակտի վերացմանը: Հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու դատավարական սկզբունքի ուժով Դատարանը պարտավոր էր առաջարկել (մատնանշել) Վարուժան Ավետիքյանին իր կողմից ներկայացված ոչ ճիշտ հայցատեսակը՝ Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշման՝ կատարողական վարույթ հարուցելու մասը վերացնելու կամ անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ, փոխարինել պատշաճ հայցատեսակով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը՝ կատարողական վարույթ հարուցելու մասով, վերացնելու կամ անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ Վարուժան Ավետիքյանի հայցադիմումի ընդունելիության (գործի հարուցման) փուլում Դատարանը պարտավոր էր հայցվորին մատնանշել պատշաճ հայցատեսակը, այսինքն՝ կատարել ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ Վարուժան Ավետիքյանին առաջարկ անելու (ճիշտ հայցատեսակը մատնանշելու) իր պարտականությունը: Միայն այդ դատավարական գործողությունը կատարելու պայմաններում Դատարանը կարող էր լուծել Վարուժան Ավետիքյանի հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Վարուժան Ավետիքյանի կողմից ներկայացված հայցադիմումը ենթակա էր վերադարձման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի խախտման հիմքով, քանի որ տվյալ հայցադիմումը ներկայացվել է ոչ պատշաճ հայցատեսակով՝ վիճարկման հայցով, և չի բովանդակում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցատեսակին համապատասխան պահանջ: Հետևաբար սույն գործով Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը՝ կատարողական վարույթ հարուցելու մասով, վերացնելու կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ Վարուժան Ավետիքյանի կողմից ներկայացված հայցը ճիշտ հայցատեսակով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ճանաչման հայցով, փոխարինելու վերաբերյալ Վարուժան Ավետիքյանին առաջարկ անելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) Դատարանի դատավարական պարտականության պատշաճ կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ էր վերադարձնել Վարուժան Ավետիքյանի հայցադիմումը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Ծառայության 26.06.2015 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին» որոշումը՝ կատարողական վարույթ հարուցելու մասով, վերացնելու կամ անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ Վարուժան Ավետիքյանի հայցադիմումի ընդունումը չէր կարող մերժվել՝ այդ պահանջի մասով հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով այն պայմաններում, երբ Դատարանը հայցադիմումը վերադարձնելու միջոցով չի կատարել ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ Վարուժան Ավետիքյանին առաջարկ անելու իր դատավարական պարտականությունը: Հետևաբար սույն որոշմանը արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վարուժան Ավետիքյանի հայցադիմումը վերադարձնելու միջոցով պատշաճ հայցատեսակը մատնանշելու համար անհրաժեշտ է վերացնել Վերաքննիչ դատարանի 02.10.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և վերացնել Դատարանի 17.08.2015 թվականի «Հայցադիմումի ընդունումը մասով վարույթ ընդունելու, մասով դրա ընդունումը մերժելու մասին» որոշման՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.10.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. մասնակիորեն՝ Վարուժան Ավետիքյանի հայցադիմումի ընդունումը մերժելու մասով, վերացնել ՀՀ վարչական դատարանի 17.08.2015 թվականի «Հայցադիմումի ընդունումը մասով վարույթ ընդունելու, մասով դրա ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴՅ/0196/05/16  
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴՅ/0196/05/16**  
**2017թ.**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2017 թվականի հունիսի 19-ին  
քննարկելով ըստ հայցի ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն»  
ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ընդդեմ Կարեն Պետրոսյանի՝ գումարի բռնա-  
գանձման պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի  
05.12.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Ծառայության  
բերած վճռաբեկ բողոքը,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը.**

Դիմելով դատարան՝ Ծառայությունը պահանջել է Կարեն Պետրոսյանից բռնագան-  
ձել 225.000 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Պողոսյան) (այսուհետ՝ Դատարան)  
17.10.2016 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.12.2016  
թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 17.10.2016  
թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմ-  
նավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական  
վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ հերկյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված տուգանքը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով այդ տուգանքին ավելացած մասը, որոնց հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը, պետք է դիտարկվեն ամբողջականության մեջ՝ որպես մեկ հանրային իրավական դրամական պահանջ: Ընդ որում, օրենսդիրը տուգանքի չափի ավելացումը սահմանել է որպես ինքնաբերաբար տեղի ունեցող իրադարձություն, այսինքն՝ տուգանքի չափի ավելացման կապակցությամբ վարչական ակտ ընդունելու անհրաժեշտություն առկա չէ: Հետևաբար սույն գործով ներկայացված հանրային իրավական դրամական պահանջը՝ 225.000 ՀՀ դրամի չափով, ենթակա է հարկադիր կատարման դատական կարգով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 05.12.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը:

**3. Վճարել դատարանի պարզապարսպությունները և եզրահանգումը**

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սույն դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հերկյալ իրավական հարցադրումներին.*

1) *անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված գումարի բռնագանձման վերաբերյալ հանրային իրավական դրամական պահանջ պարունակող հայցերը ենթակա են արդյո՞ք դատարանում քննության,*

2) *ի՞նչ նյութաիրավական պայմանների առկայության դեպքում է գործում անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջի՝ դատական կարգով հարկադիր կատարման եղանակը,*

3) *անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված գումարի բռնագանձման վերաբերյալ վարչական մարմնի կողմից ներկայացված հանրային իրավական դրամական պահանջ պարունակող հայցադիմումի ընդունելիության փուլում ի՞նչ որոշում պետք է կայացնի վարչական դատարանը, եթե հանրային իրավական դրամական պահանջը դատական կարգով հարկադիր կատարելու՝ օրենքով սահմանված նյութաիրավական պայմանները բացակայում են,*

4) *հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարումը կարող է արդյո՞ք տեղի ունենալ դատական եղանակով, եթե այդ պահանջի հիմքում ընկած անբողոքարկելի վարչական ակտով ֆիզիկական անձից բռնագանձման ենթակա գումարի չափը չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը, սակայն այդ գումարի և դրա նկատմամբ իրավունքի ուժով ինքնաբերաբար ավելացած մասի հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «բ» և «գ» կետերով նախատեսված պայմանները բացակայում են:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները, օրենքով սահմանված կարգով, վարչական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պե-

տական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պահանջներն են (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ օրինական ուժի մեջ մտած վճռով տրված կատարողական թերթի հիման վրա, եթե՝

ա. անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը,

բ. ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր չէ առանց նրան սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականության) իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձման,

գ. իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջները նույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հարկադիր կատարման ներկայացնելիս վարչական մարմինը ներկայացնում է դրամական պահանջները հավաստող համապատասխան վարչական ակտը, այդ ակտի մասին նույն օրենքով սահմանված կարգով իրագեկելը կամ այլ օրենքներով սահմանված կարգով հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը, ինչպես նաև ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը հավաստող ապացույցները և կատարման վերաբերյալ գրություն (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ (...) նույն օրենքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխին համապատասխան, սահմանում է նաև հանրային իրավական դրամական պահանջների կատարման պայմանները և կարգը՝ այնքանով, որքանով դրա նորմերն իրենց էությանմբ (*mutatis mutandis*) կիրառելի են անբողոքարկելի վարչական ակտի կատարման նկատմամբ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարման ենթակա են անբողոքարկելի վարչական ակտերը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը (...) հարուցվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքերով՝ այդ ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.2-րդ հոդվածի 1-ին մասի համա-

ծայն՝ բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը, ի լրումն նույն օրենսգրքի 73-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, նաև ներառում է տեղեկություններ՝

1) վարչական ակտն ուժի մեջ մտնելու և անբողոքարկելի դառնալու մասին.

2) հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ օրենքով սահմանված որևէ սահմանափակման առկայության մասին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.3-րդ հոդվածի համաձայն՝ բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը, ի լրումն նույն օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված հիմքերի, վերադարձվում է նաև նույն օրենսգրքի 216.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի համաձայն՝ (...) նույն օրենսգրքի 224-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից կամ տուգանքը նշանակելու մասին որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում փաստացի չվճարված տուգանքի չափը ավելանում է 25 տոկոսով: Նույն օրենսգրքի 224-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից կամ տուգանքը նշանակելու մասին որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից 60 օրվա ընթացքում կամ տուգանքը տարածանկետելու մասին դիմումում նշված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում փաստացի չվճարված տուգանքի չափը ավելանում է 50 տոկոսով (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն նույն օրենսգրքի 123-րդ, 123.1-րդ, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ (...), 123.6-րդ, 123.7-րդ, 124-րդ, 124.1-րդ, 124.2-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.6-րդ, 125-րդ, 126-րդ, 128-րդ, 129.2-րդ, 131-րդ, 132-րդ, 135.2-րդ, 140-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների համար՝ ճանապարհային ոստիկանության բաժնի (բաժանմունքի) պետը, բաժնի (բաժանմունքի) պետի տեղակալը, ճանապարհապարեկային ծառայության ստորաբաժանումների հրամանատարները և նրանց տեղակալները, ճանապարհային ոստիկանության վարչական մասի ծառայողները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում «հանրային իրավական» է կոչվում պետական կամ համայնքային բյուջե դրամական գումարներ վճարելու այն պահանջը, որին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1) այդ դրամական գումարները վճարելու կարգը սահմանված է օրենքով,

2) այդ դրամական գումարները վճարելը պարտադիր է,

3) այդ դրամական գումարները վճարելու պարտադիրությունը ծագում է և հաստատվում է վարչական ակտի հիման վրա:

Օրենսդիրը հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման հետ կապված հասարակական հարաբերությունները կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքով նախատեսված համապատասխան իրավական նորմերի միջոցով: Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ գոյություն ունեն հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման երկու տարբեր եղանակներ՝ *դատական և արտադատական*: Ընդ որում, հանրային իրավական դրամական պահանջի՝ *արտադատական կարգով* հարկադիր կատարման եղանակը նախատեսված է որպես ընդհանուր կանոն, իսկ *դատական կարգով* կատարման եղանակը՝ որպես բացառություն ընդհանուր կանոնից:

Այդ ընդհանուր կանոնը սահմանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման անմիջականորեն այդ պահանջի պարտադիրությունը հաստատող անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Քննարկվող օրենքները սահմանում են, որ անմիջականորեն անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու համար հիմք է հանդիսանում օրենքով սահմանված կարգով կազմված և հարկադիր կատարողին ուղարկված դիմումը (գրությունը), որին կից համապատասխան վարչական մարմինը ներկայացնում է նաև հանրային իրավական դրամական պահանջ պարունակող վարչական ակտը, ինչպես նաև այդ վարչական ակտի մասին հասցեատիրոջը պատշաճ ծանուցելը, տվյալ վարչական ակտի ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը հավաստող ապացույցները:

Հանրային իրավական դրամական պահանջների՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակը կիրառվում է միայն այն դեպքում, երբ առկա է հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ օրենքով սահմանված որևէ սահմանափակում. այդ սահմանափակումները, իրենց հերթին, հանդիսանում են այն պայմանները, որոնց առկայությունն անհրաժեշտ է հանրային իրավական դրամական պահանջների՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակի գործողության համար: Վերոնշյալ պայմանները (սահմանափակումները) նախատեսված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասում և հանգում են հետևյալին.

ա) անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը,

բ) ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր չէ առանց նրան սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականության) իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձման,

գ) իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը:

Այսպիսով, նշված իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը կանխորոշում է հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման եղանակը. այդ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում հանրային իրավական դրամական պահանջի՝ *արտադատական կարգով* հարկադիր կատարման եղանակը չի գործում, և գործում է հանրային իրավական դրամական պահանջի՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակը:

Օրենսդիրը հանրային իրավական դրամական պահանջի՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակի հետ կապված դատավարական հարաբերությունները կարգավորել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով՝ ամրագրելով, որ վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք կարող են դիմել վարչական դատարան՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով. անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային



իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը հարուցվում են այդ ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա: Հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը վարչական դատավարությունում քննվում են հատուկ վարույթի կարգով, որի առանձնահատկությունները սահմանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերի վարույթը» վերառառությամբ 29.1-ին գլխում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վերոգրյալ գլխում ամրագրված իրավանորմերը նույն օրենսգրքի համակարգում վերլուծության ենթարկելու արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը ենթակա են դատարանի քննությանը և ընդդատյա են վարչական դատարանին: Հետևաբար անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ հայցադիմումի ընդունումը չի կարող մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով, քանի որ այդ իրավանորմում «*դատարանում*» եզրույթի ներքո օրենսդիրը նկատի է ունեցել Հայաստանի Հանրապետությունում գործող ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարանների: Այսինքն՝ հայցադիմումի ընդունումը կարող է մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով այն դեպքում, երբ դատարան դիմող սուբյեկտը հայց հարուցելու իրավունք առհասարակ չունի, իսկ դատարանն իրավասու չէ լուծել իր առջև բարձրացված տվյալ վեճը: Մինչդեռ հանրային իրավական դրամական պահանջի՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակը գործում է անբողոքարկելի վարչական ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա հարուցված՝ հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ դատական գործի քննության և լուծման միջոցով, ինչի իրավասությունը վերապահված է վարչական դատարանին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործը վարչական դատարանում հարուցվում է անբողոքարկելի վարչական ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա, որը պետք է ներառի տեղեկություններ հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված որևէ սահմանափակման առկայության մասին: Այդ սահմանափակումների առկայությունը հիմք է հանդիսանում հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ վարչական գործի հարուցման, այսինքն՝ հայցադիմումը դատարանի վարույթ ընդունելու համար:

Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասում սպառիչ կերպով թվարկելով հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ դատական գործի հարուցման՝ օրենքով նախատեսված պայմանների բացակայությունը չի դիտարկել որպես հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք: Փոխարենը, օրենսդիրը հատուկ իրավակարգավորում է սահմանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.3-րդ հոդվածում, որի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ դատական գործի հարուցման՝ օրենքով նախատեսված պայմանների բացակայությունը հիմք է հանդիսանում հայցադիմումը վերադարձնելու համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված ընդհանուր և նույն օրենսգրքի 216.3-րդ հոդվածով նախատեսված հատուկ իրավակարգավորումների կիրառման հարցում նախապատվությունը պետք է տրվի հատուկ նորմին, որը վերաբերում է միայն անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրա-

մական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերի վարույթին: Ըստ այդմ, եթե «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված և սույն որոշմամբ նկարագրված իրավաբանական փաստերից որևէ մեկն առկա չէ, ապա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.3-րդ հոդվածի ուժով վարչական դատարանը պարտավոր է վերադարձնել անբողոքարկելի վարչական ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումը:

Փաստորեն, հանրային իրավական դրամական պահանջը դատական կարգով հարկադիր կատարելու օրենքով նախատեսված հիմքերի բացակայության դատավարական հետևանքը հանգում է ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելուն, այլ նույն օրենսգրքի 216.3-րդ հոդվածի հիմքով հայցադիմումը վերադարձնելուն: Այլ կերպ ասած՝ հանրային իրավական դրամական պահանջը դատական կարգով հարկադիր կատարելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված հիմքերի բացակայության պայմաններում վարչական դատարանը պարտավոր է որոշում կայացնել վարչական մարմնի՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձից գումարի բռնագանձման վերաբերյալ հայցադիմումը վերադարձնելու մասին:

Վճարել վատարանը փաստում է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ անբողոքարկելի վարչական ակտով հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման հայցով դատարան դիմած վարչական մարմնի հայցադիմումով պահանջվող դրամական գումարի չափը չի համապատասխանում այդ անբողոքարկելի վարչական ակտով վճարման ենթակա գումարի չափին: Որոշ դեպքերում այդ իրավիճակն առաջանում է օրենսդրական կարգավորումների արդյունքում: Այսպես, օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ օրենսդիրը սահմանել էր, որ որոշակի վարչական իրավախախտումների համար նշանակված տուգանքը 30 օրվա ընթացքում չվճարելու դեպքում փաստացի չվճարված տուգանքի չափը ավելանում է 25 տոկոսով, իսկ 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում՝ 50 տոկոսով: Այդպիսի վարչական իրավախախտումներից են, *inter alia*, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ, 124.1-րդ, 124.2-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.6-րդ, 126-րդ հոդվածներով նախատեսված և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններին ուղղված զանցանքները, որոնց վերաբերյալ գործերի քննության և լուծման լիազորությունը վերապահված է ճանապարհային ոստիկանությանը:

ՀՀ սահմանադրական դատարանը 13.11.2012 թվականին կայացրած թիվ ՄԴՌ-1056 որոշմամբ անդրադարձել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ մինչև 26.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածով նախատեսված այն իրավակարգավորման սահմանադրականության հարցին, որի համաձայն՝ որոշակի վարչական իրավախախտումների համար նշանակված տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում տուգանքի չափը եռապատկվում կամ հնգապատկվում է: Նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական իրավախախտման համար նշանակված տուգանքն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելը չի հանդիսանում վարչական իրավախախտում, հետևաբար տուգանքի չափի եռապատկման և հնգապատկման դեպքում բացառվում է վարչական վարույթի հարուցումը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Տուգանքի չափի եռապատկումը և հնգապատկումը չի հանդիսանում վարչական տույժի տեսակ և վարչական պատասխանատվության միջոց, այլ կոչված է կանխարգելելու օրենքով սահմանված կարգով նշանակված վարչական տույժերը սահմանված ժամկետում չվճարելու հնարավոր դեպքերը և ուղղված է կանխելու նոր իրավախախտումների կատարումը, բարձրացնելու իրավախախտում կատարած անձանց կարգապահությունը՝ պետության առջև ունեցած պարտավորությունների բարելիսիճ կատարման գործում: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարել

այն պնդումները, համաձայն որոնց՝ տուգանքի չափի եռապատկման և հնգապատկման յուրաքանչյուր դեպքը պետք է դիտել որպես նոր պատժամիջոց, և յուրաքանչյուր դեպքում պետք է վարչական վարույթի շրջանակներում ընդունվի վարչական ակտ՝ որոշում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ մինչև 26.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած վերոգրյալ իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ սահմանված կանոնների մեկնաբանման հարցում: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն իրողությունը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ մինչև 26.07.2014 թվականը և 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությունների միջև էական տարբերություններ առկա չեն: Այսպես, եթե որոշակի վարչական իրավախախտումների համար նշանակված տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ մինչև 26.07.2014 թվականը գործող խմբագրությամբ նախատեսվում էր տուգանքի չափի եռապատկման կամ հնգապատկման հնարավորություն, ապա նշված հոդվածի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ այդ նույն դեպքի համար նախատեսվում էր տուգանքի չափի (դրա չվճարված մասի)՝ 25 կամ 50 տոկոսով ավելացման հնարավորություն: Ընդ որում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ թե՛ մինչև 26.07.2014 թվականը գործող խմբագրությամբ նախատեսված տուգանքի չափի բազմապատկումը, թե՛ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ նախատեսված տուգանքի չափի՝ որոշակի տոկոսով ավելացումը կատարվում էին օրենքի ուժով՝ առանց հատուկ վարչական ակտ ընդունելու անհրաժեշտության:

Ընտևաբար Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի վկայակոչված որոշումը, հիմնավոր է համարում այն մոտեցումը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ սահմանված իրավակարգավորումների համատեքստում օրենքով նախատեսված զանցանքների համար նշանակված տուգանքի չափի ավելացումը կատարվում է ինքնաբերաբար, իրավունքի ուժով. տուգանքի չափի այդպիսի ավելացումը չի հաստատվում տվյալ զանցանքի համար անձին ի սկզբանե վարչական պատասխանատվության ենթարկված իրավասու վարչական մարմնի կողմից ընդունված առանձին վարչական ակտով:

Փաստորեն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը հանգում է հետևյալին.

- անձը ենթարկվում է վարչական պատասխանատվության, և նրա նկատմամբ վարչական ակտով նշանակվում է տուգանք,
- տուգանքը որոշակի ժամկետում չվճարելու դեպքում դրա փաստացի չվճարված մասն ավելանում է 25 կամ 50 տոկոսով (տոկոսային տարբերությունը պայմանավորված է տուգանքը չվճարելու ժամկետով),
- տուգանքի փաստացի չվճարված մասի ավելացումը կատարվում է օրենքի ուժով՝ առանց որևէ վարչական ակտ ընդունելու անհրաժեշտության,
- անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտը բովանդակում է միայն վարչական մարմնի կողմից ի սկզբանե նշանակված տուգանքի չափը,
- տուգանքի փաստացի չվճարված մասի՝ 25 կամ 50 տոկոս ավելացման փաստը, ինչպես նաև ավելացված գումարի չափը չի հաստատվում որևէ վարչական ակտով:

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել այն իրավիճակը, երբ վարչական մարմինը, հանրային իրավական դրամա-

կան պահանջով նախատեսված գումարի բռնագանձման հայցով դիմում է դատարան՝ այդ պահանջի հիմքում ունենալով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ, որպես վարչական պատասխանատվության միջոց, տուգանք նշանակելու մասին անբողոքարկելի վարչական ակտ, որով առաջադրված տուգանքի չափը չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը, սակայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով տուգանքի չափն ինքնաբերաբար ավելանալու պայմաններում վարչական ակտով առաջադրված տուգանքի ու դրա ավելացած մասի հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը: Տվյալ դեպքում դատարանի առջև բարձրանում է այն հարցը, թե կարող է արդյոք հանրային իրավական դրամական այդ պահանջի հարկադիր կատարումն իրականացվել դատական կարգով, թե՛ ոչ:

Նշված հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը ելակետ է ընդունում սույն որոշմամբ ձևավորված այն իրավական դիրքորոշումը, որ հանրային իրավական դրամական պահանջի՝ դատական կարգով հարկադիր կատարման համար հիմք է հանդիսանում տվյալ հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված որևէ սահմանափակման առկայությունը: Այսինքն՝ հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործը վարչական դատարանում կարող է հարուցվել միայն օրենքով սպառիչ թվարկված հիմքերից որևէ մեկի առկայության պայմաններում, հակառակ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.3-րդ հոդվածի ուժով վարչական դատարանը պարտավոր է վերադարձնել վարչական մարմնի համապատասխան հայցադիմումը:

Մասնավորապես, անդրադառնալով հանրային իրավական դրամական պահանջների՝ դատական կարգով հարկադիր կատարման եղանակի գործողության համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով սահմանված պայմանի բովանդակության բացահայտմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ իրավական նորմը պետք է մեկնաբանվի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կանոնով, այսինքն՝ դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ առանց փոփոխելու դրանց իմաստը: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով սահմանված իրավանորմի բովանդակությունն իրավակիրառ պրակտիկայում պետք է ընկալվի հետևյալ կերպ. անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական անձին ուղղված դրամական պահանջի հարկադիր կատարումը տեղի է ունենում դատական կարգով, եթե տվյալ վարչական ակտով ֆիզիկական անձից գանձման ենթակա գումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հանրային իրավական դրամական պահանջը հավաստող վարչական ակտով ֆիզիկական անձի նկատմամբ առաջադրված դրամական գումարը, այսինքն՝ բուն վարչական ակտով նախատեսված դրամական գումարը, չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը, ապա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով նախատեսված՝ հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու սահմանափակումը բացակայում է: Այլ կերպ, եթե հանրային իրավական դրամական պահանջի հիմքում ընկած է ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ տուգանք նշանակելու մասին անբողոքարկելի վարչական ակտ, որով առաջադրված տուգանքի չափը չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը, ապա տվյալ դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով սահմանված՝ հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարը դատական կարգով բռնագանձելու հիմքը բացակայում է՝ անկախ այն հանգամանքից, որ անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված տու-

գանքի և դրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով ավելացած մասի հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը: Քննարկվող պարագայում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված՝ հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու մյուս սահմանափակումների բացակայության պայմաններում վարչական դատարանը չի կարող վարույթ ընդունել գումարի բռնագանձման վերաբերյալ վարչական մարմնի հայցադիմումը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.3-րդ հոդվածի ուժով պարտավոր է որոշում կայացնել այն վերադարձնելու մասին, քանի որ բացակայում են հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործի հարուցման օրենքով նախատեսված հիմքերը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ տուգանք նշանակելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարումը չի կարող տեղի ունենալ դատական կարգով հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտով նշանակված տուգանքի չափը չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը,

2) անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված տուգանքի և դրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով ավելացած մասի հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը,

3) հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «բ» և «գ» կետերով նախատեսված սահմանափակումները բացակայում են:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ տուգանք նշանակելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարումը պետք է տեղի ունենա ընդհանուր կանոնի համաձայն, այսինքն՝ արտադատական կարգով: Այլ կերպ ասած, վերը նկարագրված դեպքում հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարումը տեղի է ունենում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված արտադատական եղանակով՝ անմիջականորեն այդ պահանջի պարտադիրությունը հաստատող անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ տուգանք նշանակելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի արտադատական եղանակով հարկադիր կատարումը պետք է ուղղված լինի ոչ միայն անբողոքարկելի վարչական ակտով նշանակված և 200.000 ՀՀ դրամը չգերազանցող տուգանքի գումարի, այլ նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով այդ տուգանքին ավելացած գումարի բռնագանձմանը: Այսինքն՝ տվյալ դեպքում արտադատական եղանակով հարկադիր կատարման ենթակա հանրային իրավական դրամական պահանջը ներառում է ոչ միայն անբողոքարկելի վարչական ակտով նշանակված և 200.000 ՀՀ դրամը չգերազանցող տուգանքի բուն գումարը, այլ նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով այդ

տուգանքին ավելացած գումարը՝ անկախ այն հանգամանքից, որ անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված տուգանքի և դրա ավելացած մասի հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը: Փաստորեն, ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ տուգանք նշանակելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի՝ արտադատական եղանակով հարկադիր կատարման դեպքում ֆիզիկական անձից բռնագանձման ենթակա է ոչ միայն անբողոքարկելի վարչական ակտով նշանակված տուգանքի գումարը, որը չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը, այլ նաև այդ տուգանքի՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով ավելացած մասը՝ անկախ այն հանգամանքից, որ անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված տուգանքի և դրա ավելացած մասի հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը:

### **Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կարեն Պետրոսյանը Ծառայության 29.01.2016 թվականի որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման համար, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 150.000 ՀՀ դրամի չափով և Կարեն Պետրոսյանը նշված վարչական ակտի մասին առձեռն եղանակով իրագեկվել է 29.01.2016 թվականին **(գ.թ. 3)**: Ծառայությունը 11.10.2016 թվականին դիմել է դատարան՝ անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջով Կարեն Պետրոսյանից 225.000 ՀՀ դրամ բռնագանձման հայցով: Ծառայության հայցադիմումով պահանջվող գումարը ներառում է 29.01.2016 թվականի որոշմամբ Կարեն Պետրոսյանի նկատմամբ նշանակված տուգանքը (150.000 ՀՀ դրամ), ինչպես նաև այդ տուգանքի 50 տոկոսը (75.000 ՀՀ դրամ), որն ավելացել է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով **(գ.թ. 1)**:

Դատարանը 17.10.2016 թվականի որոշմամբ մերժել է Ծառայության հայցադիմումի ընդունումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ հայրը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով: Դատարանն իր որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ տվյալ դեպքում բացակայում են անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերի հարուցման իրավական հիմքերը, որոնք նախատեսված են «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով: Դատարանը, մասնավորապես, գտել է, որ սույն գործով վարչական մարմինը չի ներկայացրել 200.000 ՀՀ դրամը գերազանցող դրամական պահանջ պարունակող անբողոքարկելի վարչական ակտ **(գ.թ. 9)**:

Վերաքննիչ դատարանը 05.12.2016 թվականի որոշմամբ մերժել է Ծառայության վերաքննիչ բողոքը և Դատարանի 17.10.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողել է անփոփոխ՝ ըստ էության հիմնավոր համարելով անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործի հարուցման իրավական հիմքերի բացակայության վերաբերյալ Դատարանի դիրքորոշումը **(գ.թ. 37-43)**:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների փաստարկները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Ծառայությունը դիմել է դատարան անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջով Կարեն Պետրոսյանից 225.000 ՀՀ դրամ բռնագանձելու հայցով: Հայցի հիմքում վարչական մարմինը դրել է Կարեն Պետրոսյանին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ, որպես վարչական պատասխանատվության

միջոց, տուգանք նշանակելու մասին ծառայության 29.01.2016 թվականի որոշումը, որով առաջադրված տուգանքի չափը կազմում է 150.000 ՀՀ դրամ, սակայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով տուգանքի չափն ինքնաբերաբար ավելանալու պայմաններում վարչական ակտով առաջադրված տուգանքի ու դրա ավելացած մասի հանրագումարը կազմում է 225.000 ՀՀ դրամ: Փաստորեն, տվյալ դեպքում առկա է հետևյալ իրավիճակը.

1) ֆիզիկական անձին՝ Կարեն Պետրոսյանին, վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտով՝ ծառայության 29.01.2016 թվականի որոշմամբ, նշանակված տուգանքի չափը չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը,

2) անբողոքարկելի վարչական ակտով՝ ծառայության 29.01.2016 թվականի որոշմամբ, առաջադրված տուգանքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով այդ տուգանքի ավելացած մասի հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը,

3) հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «բ» և «գ» կետերով նախատեսված սահմանափակումները բացակայում են:

Վճռաբեկ դատարանն ընգծում է, որ տվյալ դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով սահմանված՝ հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարը դատական կարգով բռնագանձելու հիմքը բացակայում է՝ անկախ այն հանգամանքից, որ անբողոքարկելի վարչական ակտով՝ ծառայության 29.01.2016 թվականի որոշմամբ, առաջադրված տուգանքի և դրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով ավելացած մասի հանրագումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը, քանի որ ծառայության 29.01.2016 թվականի որոշմամբ նախատեսված գումարը չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում ծառայության 29.01.2016 թվականի որոշման վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարումը պետք է տեղի ունենա ոչ թե դատական, այլ արտադատական եղանակով. հանրային իրավական դրամական պահանջի՝ դատական կարգով հարկադիր կատարման համար հիմք է հանդիսանում տվյալ հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով ամրագրված որևէ սահմանափակման առկայությունը, իսկ սույն գործով այդ սահմանափակումները (հանրային իրավական դրամական պահանջի՝ դատական կարգով հարկադիր կատարման եղանակի գործողության համար անհրաժեշտ պայմանները) բացակայում են:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ արձանագրում է, որ ստորադաս դատարաններն իրավացիորեն են եկել այն եզրահանգման, որ սույն գործով անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործի հարուցման իրավական հիմքերը բացակայում են:

Մինչդեռ Դատարանը վերոգրյալ իրավաչափ եզրահանգման դատավարական հետևանքները կիրառելիս հանգել է սխալ հետևության՝ անհիմն կերպով մերժելով ծառայության հայցադիմումի ընդունումը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Այսպես, սույն գործով ձևավորված իրավական դիրքորոշումների համաձայն՝ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը ենթակա են դատարանի քննությանը և ընդդատյա են վարչական դատարանին: Այսինքն՝ անբողոքարկելի վարչական

ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ Ծառայության հայցադիմումի ընդունումը չէր կարող մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով, քանի որ հանրային իրավական դրամական պահանջը դատական կարգով հարկադիր կատարելու օրենքով նախատեսված պայմանների բացակայության դատավարական հետևանքը հանգում է ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելուն, այլ նույն օրենսգրքի 216.3-րդ հոդվածի հիմքով հայցադիմումը վերադարձնելուն: Հետևաբար տվյալ դեպքում Դատարանը պարտավոր էր որոշում կայացնել Կարեն Պետրոսյանից գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ Ծառայության հայցադիմումը վերադարձնելու մասին:

Ելնելով վերոգրյալից՝ Վճարեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Ծառայության հայցադիմումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.3-րդ հոդվածի հիմքով վերադարձնելու դատավարական ընթացակարգի իրացումն ապահովելու համար անհրաժեշտ է վերացնել Վերաքննիչ դատարանի 05.12.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Դատարանի 17.10.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

Այսպիսով, սույն վճարեկ բողոքի հիմքի առկայությունը Վճարեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճարեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճարեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.12.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 17.10.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ3/0224/05/16  
Նախագահող դատավոր՝ Բ. Մկոյան

Վարչական գործ թիվ ՎԴ3/0224/05/16  
2017թ.

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությանը  
մասնակցությանը դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ն. ՏԱՎԱՐԱՑՑԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին

քննարկելով ըստ հայցի ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն»  
ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ընդդեմ Շավարշ Նալբանդյանի՝ գումարի բռ-  
նագանձման պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատա-  
րանի 16.12.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Ծառայու-  
թյան բերած վճռաբեկ բողոքը,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ծառայությունը պահանջել է Շավարշ Նալբանդյանից բռնա-  
գանձել 375.000 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Պողոսյան) (այսուհետ՝ Դատարան) 01.11.2016 թվականի «Հայցադիմումը մասնակի վարույթ ընդունելու մասին» որոշմամբ  
Շավարշ Նալբանդյանից 250.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մատով հայցադի-  
մումն ընդունվել է վարույթ, իսկ նույն թվականի «Հայցադիմումի ընդունումը մասնակի  
մերժելու մասին» որոշմամբ 125.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մատով հայցադի-  
մումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.12.2016  
թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 01.11.2016  
թվականի «Հայցադիմումի ընդունումը մասնակի մերժելու մասին» որոշումը թողնվել է  
անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապարզապես է հերքելով փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված և 200.000 ՀՀ դրամը գերազանցող տուգանքը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով այդ տուգանքին ավելացած մասը պետք է դիտարկվեն ամբողջականության մեջ՝ որպես մեկ հանրային իրավական դրամական պահանջ: Ընդ որում, օրենսդիրը տուգանքի չափի ավելացումը սահմանել է որպես ինքնաբերաբար տեղի ունեցող իրադարձություն, այսինքն՝ տուգանքի չափի ավելացման կապակցությամբ վարչական ակտ ընդունելու անհրաժեշտություն առկա չէ: Հետևաբար սույն գործով ներկայացված հանրային իրավական դրամական պահանջը՝ 375.000 ՀՀ դրամի չափով, ենթակա է հարկադիր կատարման դատական կարգով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 16.12.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պարզապարզությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հանրային իրավական դրամական պահանջների՝ դատական կարգով հարկադիր կատարման համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով սահմանված պայմանի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հերքելյալ իրավական հարցադրմանը. հանրային իրավական դրամական պահանջի հիմքում ընկած անբողոքարկելի վարչական ակտով ֆիզիկական անձի նկատմամբ նշանակված փուզանքի գումարի նկատմամբ իրավունքի ուժով ինքնաբերաբար ավելացած և որևէ վարչական ակտով չամրագրված մասի հարկադիր կատարումը կարող է արդյոք տեղի ունենալ դատական եղանակով, եթե վարչական ակտով ֆիզիկական անձից բռնազանձման ենթակա գումարի չափը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները, օրենքով սահմանված կարգով, վարչական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պահանջներն են (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ օրինական ուժի մեջ մտած վճռով տրված կատարողական թերթի հիման վրա, եթե՝

ա. անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը,

բ. ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր չէ առանց նրան սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականություն) իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձման,

գ. իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը:

«Իատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ (...) նույն օրենքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխին համապատասխան, սահմանում է նաև հանրային իրավական դրամական պահանջների կատարման պայմանները և կարգը՝ այնքանով, որքանով դրա նորմերն իրենց էությունը (*mutatis mutandis*) կիրառելի են անբողոքարկելի վարչական ակտի կատարման նկատմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը (...) հարուցվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքերով՝ այդ ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը, ի լրումն նույն օրենսգրքի 73-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, նաև ներառում է տեղեկություններ՝

- 1) վարչական ակտն ուժի մեջ մտնելու և անբողոքարկելի դառնալու մասին.
- 2) հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ օրենքով սահմանված որևէ սահմանափակման առկայության մասին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի համաձայն՝ (...) նույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից կամ տուգանքը նշանակելու մասին որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում փաստացի չվճարված տուգանքի չափը ավելանում է 25 տոկոսով: Նույն օրենսգրքի 224-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից կամ տուգանքը նշանակելու մասին որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից 60 օրվա ընթացքում կամ տուգանքը տարաժամկետելու մասին դիմումում նշված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում փաստացի չվճարված տուգանքի չափը ավելանում է 50 տոկոսով (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ

մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն նույն օրենսգրքի 123-րդ, 123.1-րդ, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ (...), 123.6-րդ, 123.7-րդ, 124-րդ, 124.1-րդ, 124.2-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.6-րդ, 125-րդ, 126-րդ, 128-րդ, 129.2-րդ, 131-րդ, 132-րդ, 135.2-րդ, 140-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների համար՝ ճանապարհային ոստիկանության բաժնի (բաժանմունքի) պետը, բաժնի (բաժանմունքի) պետի տեղակալը, ճանապարհապարեկային ծառայության ստորաբաժանումների հրամանատարները և նրանց տեղակալները, ճանապարհային ոստիկանության վարչական մասի ծառայողները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում «հանրային իրավական» է կոչվում պետական կամ համայնքային բյուջե դրամական գումարներ վճարելու այն պահանջը, որին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- 4) այդ դրամական գումարները վճարելու կարգը սահմանված է օրենքով,
- 5) այդ դրամական գումարները վճարելը պարտադիր է,
- 6) այդ դրամական գումարները վճարելու պարտադիրությունը ծագում է և հաստատվում է վարչական ակտի հիման վրա:

Օրենսդիրը հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման հետ կապված հասարակական հարաբերությունները կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան իրավական նորմերի միջոցով:

ՀՀ վճռաբեկ դատարանն անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման առանձնահատկությունների վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է արտահայտել ՀՀ *նսփիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունն ընդդեմ Կարեն Պետրոսյանի թիվ ՎԻ3/0196/05/16 վարչական գործով 19.06.2017 թվականի որոշմամբ*: Նշված որոշման շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ընդհանուր առմամբ, հանգում են հետևյալին.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ գոյություն ունեն հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման երկու տարբեր եղանակներ՝ *դատական և արտադատական*: Ընդ որում, հանրային իրավական դրամական պահանջի՝ *արտադատական կարգով* հարկադիր կատարման եղանակը նախատեսված է որպես ընդհանուր կանոն, իսկ *դատական կարգով* կատարման եղանակը՝ որպես բացառություն ընդհանուր կանոնից:

Այդ ընդհանուր կանոնը սահմանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման անմիջականորեն այդ պահանջի պարտադիրությունը հաստատող անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հանրային իրավական դրամական պահանջների՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակը կիրառվում է միայն այն դեպքում, երբ առկա է հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ օրենքով սահմանված որևէ սահմանափակում. այդ սահմանափակումները, իրենց հերթին, հանդիսանում են այն պայմանները, որոնց առկայությունն անհրաժեշտ է հանրային իրավական դրամական պահանջների՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակի գործողության համար: Վերոնշյալ պայմանները (սահմանափակումները) նախատեսված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասում և հանգում են հետևյալին.

ա) անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը,

բ) ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր չէ առանց նրան սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականություն) իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձման,

գ) իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը:

Այսպիսով, նշված իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը կանխորոշում է հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման եղանակը. այդ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում հանրային իրավական դրամական պահանջի՝ *արտադարական կարգով* հարկադիր կատարման եղանակը չի գործում, և գործում է հանրային իրավական դրամական պահանջի՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակը:

Օրենսդիրը հանրային իրավական դրամական պահանջի՝ *դատական կարգով* հարկադիր կատարման եղանակի հետ կապված դատավարական հարաբերությունները կարգավորել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով՝ ամրագրելով, որ վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք կարող են դիմել վարչական դատարան՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով. անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը հարուցվում են այդ ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա: Հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը վարչական դատավարությունում քննվում են հատուկ վարույթի կարգով, որի առանձնահատկությունները սահմանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերի վարույթը» վերառառությամբ 29.1-ին գլխում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վերոգրյալ գլխում ամրագրված իրավանորմերը նույն օրենսգրքի համակարգում վերլուծության ենթարկելու արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը ենթակա են դատարանի քննությանը և ընդդատյա են վարչական դատարանին: Հետևաբար անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ հայցադիմումի ընդունումը չի կարող մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործը վարչական դատարանում հարուցվում է անբողոքարկելի վարչական ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա, որը պետք է ներառի տեղեկություններ հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված որևէ սահմանափակման առկայության մասին: Այդ սահմանափակումների առկայությունը հիմք է հանդիսանում հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ վարչական գործի հարուցման, այսինքն՝ հայցադիմումը դատարանի վարույթ ընդունելու համար: Ընդ որում, հանրային իրավական դրամական պահանջը դատական կարգով հարկադիր կատարելու օրենքով նախատեսված հիմքերի բացակայության դատավարական հետևանքը հանգում է ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելուն, այլ նույն

օրենսգրքի 216.3-րդ հոդվածի հիմքով հայցադիմումը վերադարձնելուն:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ անբողոքարկելի վարչական ակտով հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման հայցով դատարան դիմած վարչական մարմնի հայցադիմումով պահանջվող դրամական գումարի չափը չի համապատասխանում այդ անբողոքարկելի վարչական ակտով վճարման ենթակա գումարի չափին: Որոշ դեպքերում այդ իրավիճակն առաջանում է օրենսդրական կարգավորումների արդյունքում: Այսպես, օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ օրենսդիրը սահմանել էր, որ որոշակի վարչական իրավախախտումների համար նշանակված տուգանքը 30 օրվա ընթացքում չվճարելու դեպքում փաստացի չվճարված տուգանքի չափը ավելանում է 25 տոկոսով, իսկ 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում՝ 50 տոկոսով: Այդպիսի վարչական իրավախախտումներից են, *inter alia*, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ, 124.1-րդ, 124.2-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.6-րդ, 126-րդ հոդվածներով նախատեսված և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններին ոտնձգող զանցանքները, որոնց վերաբերյալ գործերի քննության և լուծման լիազորությունը վերապահված է ճանապարհային ոստիկանությանը:

ՀՀ սահմանադրական դատարանը 13.11.2012 թվականի թիվ ՄԴՈ-1056 որոշմամբ անդրադարձել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ մինչև 26.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածով նախատեսված այն իրավակարգավորման սահմանադրականության հարցին, որի համաձայն՝ որոշակի վարչական իրավախախտումների համար նշանակված տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում տուգանքի չափը եռապատկվում կամ հնգապատկվում է: Նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական իրավախախտման համար նշանակված տուգանքն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելը չի հանդիսանում վարչական իրավախախտում, հետևաբար տուգանքի չափի եռապատկման և հնգապատկման դեպքում բացառվում է վարչական վարույթի հարուցումը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Տուգանքի չափի եռապատկումը և հնգապատկումը չի հանդիսանում վարչական տույժի տեսակ և վարչական պատասխանատվության միջոց, այլ կոչված է կանխարգելելու օրենքով սահմանված կարգով նշանակված վարչական տույժերը սահմանված ժամկետում չվճարելու հնարավոր դեպքերը և ուղղված է կանխելու նոր իրավախախտումների կատարումը, բարձրացնելու իրավախախտում կատարած անձանց կարգապահությունը՝ պետությանն առջև ունեցած պարտավորությունների բարեխիղճ կատարման գործում: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարել այն պնդումները, համաձայն որոնց՝ տուգանքի չափի եռապատկման և հնգապատկման յուրաքանչյուր դեպքը պետք է դիտել որպես նոր պատժամիջոց, և յուրաքանչյուր դեպքում պետք է վարչական վարույթի շրջանակներում ընդունվի վարչական ակտ՝ որոշում:

Վկայակոչված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ մինչև 26.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած վերոգրյալ իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ սահմանված կանոնների մեկնաբանման հարցում: Նշված դատողության համար ՀՀ վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն իրողությունը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ մինչև 26.07.2014 թվականը և 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությունների միջև էական տարբերություններ առկա չեն: Այսպես, եթե որոշակի վարչական իրավախախտումների համար նշանակված տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվա-

ծի՝ մինչև 26.07.2014 թվականը գործող խմբագրությանը նախատեսվում էր տուգանքի չափի եռապատկման կամ հնգապատկման հնարավորություն, սպա նշված հոդվածի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությանը այդ նույն դեպքի համար նախատեսվում էր տուգանքի չափի (դրա չվճարված մասի)՝ 25 կամ 50 տոկոսով ավելացման հնարավորություն: Ընդ որում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ թե՛ մինչև 26.07.2014 թվականը գործող խմբագրությանը նախատեսված տուգանքի չափի բազմապատկումը, թե՛ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությանը նախատեսված տուգանքի չափի՝ որոշակի տոկոսով ավելացումը կատարվում էին օրենքի ուժով՝ առանց հատուկ վարչական ակտ ընդունելու անհրաժեշտության:

Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի վկայակոչված որոշումը, հիմնավոր է համարել այն մտտեցումը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությանը սահմանված իրավակարգավորումների համատեքստում օրենքով նախատեսված զանցանքների համար նշանակված տուգանքի չափի ավելացումը կատարվում է ինքնաբերաբար, իրավունքի ուժով. տուգանքի չափի այդպիսի ավելացումը չի հաստատվում տվյալ զանցանքի համար անձին ի սկզբանե վարչական պատասխանատվության ենթարկված իրավասու վարչական մարմնի կողմից ընդունված առանձին վարչական ակտով:

Փաստորեն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությանը 305-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը հանգում է հետևյալին.

- անձը ենթարկվում է վարչական պատասխանատվության, և նրա նկատմամբ վարչական ակտով նշանակվում է տուգանք.

- տուգանքը որոշակի ժամկետում չվճարելու դեպքում դրա փաստացի չվճարված մասն ավելանում է 25 կամ 50 տոկոսով (տոկոսային տարբերությունը պայմանավորված է տուգանքը չվճարելու ժամկետով),

- տուգանքի փաստացի չվճարված մասի ավելացումը կատարվում է օրենքի ուժով՝ առանց որևէ վարչական ակտ ընդունելու անհրաժեշտության,

- անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտը բովանդակում է միայն վարչական մարմնի կողմից ի սկզբանե նշանակված տուգանքի չափը,

- տուգանքի փաստացի չվճարված մասի՝ 25 կամ 50 տոկոս ավելացման փաստը, ինչպես նաև ավելացված գումարի չափը չի հաստատվում որևէ վարչական ակտով (*լրե՛ս, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունն ընդդեմ Կարեն Պետրոսյանի թիվ ՎՌ3/0196/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.06.2017 թվականի որոշումը*):

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել այն իրավիճակը, երբ վարչական մարմինը հանրային իրավական դրամական պահանջով նախատեսված գումարի բռնագանձման հայցով դիմում է դատարան՝ այդ պահանջի հիմքում ունենալով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ, որպես վարչական պատասխանատվության միջոց, տուգանք նշանակելու մասին անբողոքարկելի վարչական ակտ, որով առաջադրված տուգանքի չափը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը, և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությանը 305-րդ հոդվածի ուժով տուգանքի չափն ինքնաբերաբար ավելանալու պայմաններում վարչական մարմինը պահանջում է ֆիզիկական անձից բռնագանձել ոչ միայն բուն վարչական ակտով առաջադրված 200.000 ՀՀ դրամը գերազանցող տուգանքի գումարը, այլ նաև այդ գումարի՝ իրավունքի ուժով ավելացած մասը: Տվյալ դեպքում էական նշանակություն է ստանում այն հարցը, թե կարող է արդյոք հանրային իրավական դրամական այդ պահանջն ամբողջությամբ (և՛ բուն վարչական ակտով առաջա-

դրված տուգանքի գումարը, և՛ դրա՝ իրավունքի ուժով ավելացած մասը) բռնագանձվել դատական կարգով, թե՛ ոչ:

Նշված հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը ելակետ է ընդունում իր կողմից ձևավորված այն իրավական դիրքորոշումը, որ հանրային իրավական դրամական պահանջի՝ դատական կարգով հարկադիր կատարման համար հիմք է հանդիսանում տվյալ հանրային իրավական դրամական պահանջով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված որևէ սահմանափակման առկայությունը: Մասնավորապես՝ անդրադառնալով հանրային իրավական դրամական պահանջների՝ դատական կարգով հարկադիր կատարման եղանակի գործողության համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով սահմանված պայմանի բովանդակության բացահայտմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ իրավական նորմը պետք է մեկնաբանվի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կանոնով, այսինքն՝ դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ առանց փոփոխելու դրանց իմաստը: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով սահմանված իրավանդումի բովանդակությունն իրավակիրառ պրակտիկայում պետք է ընկալվի հետևյալ կերպ. անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական անձին ուղղված դրամական պահանջի հարկադիր կատարումը տեղի է ունենում դատական կարգով, եթե տվյալ վարչական ակտով ֆիզիկական անձից գանձման ենթակա գումարը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ տուգանք նշանակելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի՝ դատական եղանակով հարկադիր կատարումը պետք է ուղղված լինի ոչ միայն անբողոքարկելի վարչական ակտով նշանակված և 200.000 ՀՀ դրամը գերազանցող տուգանքի գումարի, այլ նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով այդ տուգանքին ավելացած գումարի բռնագանձմանը: Այսինքն՝ տվյալ դեպքում դատական եղանակով հարկադիր կատարման ենթակա հանրային իրավական դրամական պահանջը ներառում է ոչ միայն անբողոքարկելի վարչական ակտով նշանակված և 200.000 ՀՀ դրամը գերազանցող տուգանքի բուն գումարը, այլ նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով այդ տուգանքին ավելացած գումարը: Փաստորեն, ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ տուգանք նշանակելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի՝ դատական եղանակով հարկադիր կատարման դեպքում ֆիզիկական անձից բռնագանձման ենթակա է ոչ միայն անբողոքարկելի վարչական ակտով նշանակված տուգանքի գումարը, որը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը, այլ նաև այդ տուգանքի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով ավելացած մասը, որոնք միասին դիտարկվում են որպես անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա առաջադրված մեկ անբողջական հանրային իրավական դրամական պահանջ:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն գործի փաստերի համաձայն՝ Շավարշ Նալբանդյանը Ծառայության 18.02.2016 թվականի թիվ ԱԹ՝ 583955 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 6-րդ



մասով նախատեսված արարքի կատարման համար, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 250.000 ՀՀ դրամի չափով և Շավարշ Նալբանդյանը նշված վարչական ակտի մասին փոստային առաքմամբ իրազեկվել է 22.02.2016 թվականին **(գործի հավելված, գ.թ. 3, 5)**: Ծառայությունը 28.10.2016 թվականին դիմել է դատարան՝ անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջով Շավարշ Նալբանդյանից 375.000 ՀՀ դրամ բռնագանձման հայցով: Ծառայության հայցադիմումով պահանջվող գումարը ներառում է Ծառայության 18.02.2016 թվականի թիվ ԱԹ 583955 որոշմամբ Շավարշ Նալբանդյանի նկատմամբ նշանակված տուգանքը (250.000 ՀՀ դրամ), ինչպես նաև այդ տուգանքի 50 տոկոսը (125.000 ՀՀ դրամ), որն ավելացել է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով **(գործի հավելված, գ.թ. 1)**:

Դատարանը 01.11.2016 թվականի որոշմամբ մասնակիորեն՝ 125.000 դրամ բռնագանձելու պահանջի մասով, մերժել է Ծառայության հայցադիմումի ընդունումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով: Դատարանը որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով տուգանքի գումարի 50 տոկոսի չափով ավելանալու և գանձման ենթակա լինելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտ (125.000 ՀՀ դրամի մասով) Ծառայության կողմից չի ներկայացվել: Հետևաբար Ծառայության հայցը՝ Շավարշ Նալբանդյանից 125.000 ՀՀ դրամ բռնագանձելու մասով, ենթակա չէ դատարանում քննության **(գործի հավելված, գ.թ. 10-11)**:

Վերաքննիչ դատարանը 16.12.2016 թվականի որոշմամբ մերժել է Ծառայության վերաքննիչ բողոքը և Դատարանի 01.11.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մասնակի մերժելու մասին» որոշումը թողել է անփոփոխ՝ ըստ էության հիմնավոր համարելով Դատարանի արտահայտած դիրքորոշումը **(գործի հավելված, գ.թ. 38-44)**:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների փաստարկները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Ծառայությունը դիմել է դատարան անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջով Շավարշ Նալբանդյանից 375.000 ՀՀ դրամ բռնագանձելու հայցով: Հայցի հիմքում վարչական մարմինը դրել է Շավարշ Նալբանդյանին վարչական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ, որպես վարչական պատասխանատվության միջոց, տուգանք նշանակելու մասին Ծառայության 18.02.2016 թվականի թիվ ԱԹ 583955 որոշումը, որով առաջադրված տուգանքի չափը կազմում է 250.000 ՀՀ դրամ, սակայն վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով տուգանքի չափն ինքնաբերաբար ավելանալու պայմաններում վարչական ակտով առաջադրված տուգանքի ու դրա ավելացած մասի հանրագումարը կազմում է 375.000 ՀՀ դրամ: Փաստորեն, տվյալ դեպքում ֆիզիկական անձին՝ Շավարշ Նալբանդյանին, վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտով՝ Ծառայության 18.02.2016 թվականի թիվ ԱԹ 583955 որոշմամբ, նշանակված տուգանքի չափը գերազանցում է 200.000 ՀՀ դրամը, ուստի նշված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարումը պետք է տեղի է ունենա դատական կարգով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները ոչ իրավաչափորեն են հանգել այն եզրակացության, որ սույն գործով ներկայացված հայցը՝ Ծառայության 18.02.2016 թվականի թիվ ԱԹ 583955 որոշմամբ չնախատեսված և այլ վարչական ակտով չամրագրված 125.000 ՀՀ դրամը բռնագանձելու պահանջի մասով, ենթակա չէ դատարանի քննությանը, քանի որ ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավա-

կան դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը ենթակա են դատարանի քննությանը և ընդդատյա են վարչական դատարանին: Միննույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Ծառայության 18.02.2016 թվականի թիվ ԱԹ 583955 որոշման վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջի դատական եղանակով հարկադիր կատարումը պետք է ուղղված լինի ոչ միայն անբողոքարկելի վարչական ակտով նշանակված և 200.000 ՀՀ դրամը գերագանցող տուգանքի գումարի, այլ նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով այդ տուգանքին ավելացած գումարի՝ 125.000 ՀՀ դրամի բռնագանձմանը: Այսինքն՝ տվյալ դեպքում դատական եղանակով հարկադիր կատարման ենթակա հանրային իրավական դրամական պահանջը ներառում է ոչ միայն Ծառայության 18.02.2016 թվականի թիվ ԱԹ 583955 որոշմամբ նշանակված տուգանքի բուն գումարը՝ 250.000 ՀՀ դրամը, այլ նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ 26.07.2014 թվականից մինչև 30.03.2017 թվականը գործող խմբագրությամբ 305-րդ հոդվածի ուժով այդ տուգանքին ավելացած գումարը՝ 125.000 ՀՀ դրամը: Հետևաբար Դատարանը չէր կարող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով մասնակիորեն՝ 125.000 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասով, մերժել Ծառայության հայցադիմումի ընդունումը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործով Ծառայության կողմից ներկայացված հայցադիմումը պետք է ընդունվեր Դատարանի վարույթ ամբողջությամբ՝ նաև Ծառայության 18.02.2016 թվականի թիվ ԱԹ 583955 որոշմամբ չնախատեսված և որևէ այլ վարչական ակտով չամրագրված, սակայն իրավունքի ուժով տուգանքի ավելացած մասի՝ 125.000 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասով: Հետևաբար վարչական ակտով նշանակված տուգանքի գումարի՝ իրավունքի ուժով ավելացած մասի (125.000 ՀՀ դրամ) բռնագանձման պահանջի մասով մերժելով Ծառայության հայցադիմումի ընդունումը՝ Դատարանը կայացրել է ոչ իրավաչափ դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 16.12.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ: Վերացնել ՀՀ վարչական դատարանի 01.11.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մասնակի մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորագրություններ



Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:  
Ծավալը՝ 62.75 տպ. մանուկ:  
Տպաքանակ՝ 450:

Տպագրված է «**Տիգրան Մեծ**» հրատարակչություն ՓԲԸ տպարանում  
ՀՀ, Երևան, Արշակունյաց 2:  
Հեռ.՝ (374 60) 623-288, 623-219  
Էլ. փոստ՝ [info@tigran-mets.am](mailto:info@tigran-mets.am)